ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

Le PREMIER QUOTIDIEN ARMENIEN en EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction et Administration : 32, Rue de Trévise - PARIS-9e

Fondé en 1925 Téléph. : PRO. 86 - 60
R. C. Seine 57 A 2731 C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա՝	Տար. 50 Ֆ.	Վեցամսեայ՝	27 Ֆ.
Արտասահման՝	Տար. 60 Ֆ.	Հատը	0.30 Ֆ.

ՀԻՆԳՇԱԲԹԻ 1 ՕԳՈՍՏՈՍ

JEUDI 1 AOUT 1963

39րդ ՏԱՐԻ — ԹԻՒ 9671

Fondateur : SCHAVARCH MISSAKIAN

39e ANNÉE — N° 9671

...Ի՞Վ ԱՌԱՋ ՊԻՏԻ ԱՆՑՆԻ...

Կարելի չէ՞ մշակութային եւ գեղարուեստական կեանք ստեղծել այս ափերուն վրայ, — գոնէ Հայութեամբ հոծ թաղամասերու մէջ:

...հարցումը ուղղած ատեն՝ չենք մոռնար, որ արդէն իսկ գոյութիւն ունեցող ...խումբերը, պատահական թատերախաղ խումբերն ու անհատ արուեստագէտները, որոնք պարբերաբար «կ'ոգեւորե՞ն» մեզի, մեր ծարաւը չափով մը յագեցնելու համար:

Մեր խօսքը՝ մնայուն ու տեւական աշխատանքի մասին է: «Շարժում» ղառնալու ընդունակ հետաքրքրութեան եւ զործունէութեան մասին:

Ո՛չ ոք կ'անգիտանայ այլեւս, թէ մշակոյթ եւ գեղարուեստ «վայելք»ներ չեն միայն՝ այսօր:

Քառասուն կամ յիսուն տարի առաջ, «արուեստ»ներ էին երգը, թատրոնը, գրականութիւնը, երաժշտութիւնն ու ...:

Այսօր՝ գոյութեան կռուաններ են առաւելապէս. ամրոցներ՝ հայապահպանումի ճակատին վրայ:

Բոլոր գաղութներուն մէջ ալ, օտար ...տեղական արժէքներ չկա՛ն կան: ...հարհանոշակ համբաւներ. միջազգային փառքի եւ հեղինակութեան տէր ...:

Եթէ պահանջը հոգեկան ըլլար եւ ուզենք վայելել, — ոչ մէկ դժուարութիւն ...:

Ծարաւը՝ ազգային է. Թելադրուած է ...հայրենաշունչ ու տոհմիկ հարստութիւններու հաղորդութեան կարօտէն, ու ...՝ մշակոյթի արուեստի ճամբով մեր ...գութիւնը կենդանի պահելու մտահոգութենէն:

...կը խմբուինք ու կը չորնանք, արդարեւ, եթէ հայ շունչը, թրթռումն ու ապրումը չծաւալի՛ն մեր վրայ՝ հայ խօսքէն, ...երգէն ու բեմէն:

Արդ, կը կրկնենք հարցումը: — Կարելի չէ՞, խնկապէս, յարաբերական ...ու չարժում ստեղծել՝ այս տեսակէտով:

...անապարեր, անվերապահօրէն ...կան հաստատում մը ընելու համար, ...ծանօթ ենք դժուարութիւններուն:

...խմբական նկարագիր ունեցող գործունէութիւն մը (երգչախումբ, թատերախումբ, եւայլն)՝ «հերոսական» ճիգերու կը կարօտի:

...հոգի քով քովի բերելու համար՝ ...կոչը» պիտի ըլլայ: Եւ եթէ յա...՛ բերել, պէտք է տառապիս՝ ...ելու համար: Ո՛վ կը տոկայ փորձե...վարժութեանց, երթեւեկներուն, ...ժամանակը ոսկի՛ է, ու պէտք է հե...ապրելու կամ յաջողելու համար ...մէջ...

...նիւթակա՛ն դժուարութիւնները: ...մանրամասներ, որովհետեւ քիչ ...մէկն մարդ գիտէ, թէ ամէն քայլիդ ...ական մտահոգութիւններն են որ ...կուտան. մա՛նաւանդ՝ երբ սկզբ...փորձերուն մէջ ես:

...ութիւնները՝ տարբեր չարիք: ...ած ես ամէն շրջանի մէջ տեղա...ներու մէկտեղում մը ստեղծել, ...առու ըլլալ ծանրածանր ծախ...եթէ խումբը պիտի տանիս քա...քաղաք:

...ելով հանդերձ «տաժանքի» մը ...ո՛րեւէ նախափորձի, երբեք չենք ...սակայն, որ կարելի է եւ ... է համակերպիլ յոգնու...եթէ խնկապէս հայապահպանումի ...խօսին կը հաւատանք:

...մարզին վրայ եւս՝ տասը պիտի ...մէկ հնձելու համար: Սակայն,

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՏԸ ԿՈԼԻ ԱՍՈՒԼԻՍԷՆ ԵՏՔ

ՔԵՆԸՏԻ – ՏԸ ԿՈԼ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՄԸ ՕԳՏԱԿԱՐ Է

Կ'ԸՍԷ ՆԻՔՍԸՆ

Ամերիկացիք եւ Անգլիացիք հաշտարար ոճ մը կը գործածեն տը Կոլի նոր յայտարարութիւններուն առթիւ եւ կ'առաջարկեն նոյնիսկ որ Ֆրանսայի հաւորդուին ջրածին ռումբին գաղտնիքները: Այս առընչութեամբ, լորտ Հիւմ պատկերասփիւռէն չեշտած է թէ տը Կոլի «ոչ»ը Մոսկուայի դաշնագրին, չի գարմացներ, բայց բան մըն ալ չի պակսեցներ Մոսկուայի համաձայնութեան արժէքէն: Բրիտանացի Արտաքին Նախարարը աւելցուց նաեւ թէ Անգլիա եւ Ամերիկա Ֆրանսայի հետ պէտք է խորհըրդակցին եւ լուծում մը գտնեն որպէսզի Ֆրանսա ի վիճակի ըլլայ այդ դաշնագիրը ստորագրելու: Նախարարը աւելի բան մը չըսաւ, բայց մամուլը աւելի համարձակ է իր արտայայտութիւններուն մէջ: Կուարտիըն կը գրէ թէ տը Կոլ աւելի քան երբեք Կոլիսթ է եւ կ'եզրակացնէ թէ բոլոր հարցերու շուրջ միւսները կրնան իրաւունք ունենալ միայն այն ատեն երբ համակարծիք ըլլան տը Կոլին: Ցատկանշական կը նկատուի Եորքշայր Փոսթին արտայայտութիւնը: Արդարեւ այս ազդեցիկ թերթը կը գրէ թէ տը Կոլ միշտ պատրաստ եղած է «լաւ գինակից մը ըլլալու» բայց, ինչպէս Մաք–Միլըն, կ'ուզէ «միջանկախութիւն մը եւ ոչ ողորմութիւնը որ կրնայ յետադային ջընջուիլ»: Եւ թերթը կ'աւելցնէ.— «Եթէ միայն կարենար ազատիլ իր հիւանդագին թշնամութենէն Մեծն Բրիտանիոյ դէմ, աւելի մօտ կ'ըլլար լուծումին: Եթէ Նախագահ տը Կոլ տարհամոզման եւրոպական ուժ մը կ'ուզէ, պէտք է համաձայնի Մեծն Բրիտանիոյ հետ»:

Ամերիկայի մէջ, Ուոշինկթըն Փօսթն է որ նոյն լեզուն կը գործածէ եւ կը գրէ թէ Միացեալ Նահանգները պէտք է հաւորդեն Ֆրանսայի հիւլէական ծանօթութիւնները որոնք կը պակսին իրեն:

Գերմանական մամուլին կարծիքն այն է որ զօր. տը Կոլ կ'ուզէ իր տեսակէտները պարտադրել: Նոյը Ռուռ Ցայթունկը որ ընդհանրապէս ընդդիմութեան կարծիքը կ'արտայայտէ, կը գրէ. «Այն խօսքերով զորս արտասանեց հօպագործական քաղաքականութեան մասին, տը Կոլ նոր վէրք մը բացաւ»:

Նիքսըն, որ Փարիզ կը գտնուի քանի մը օրէ, յայտարարեց թէ Քենըտի – տը Կոլ հանդիպում մը օգտակար կ'ըլլար եթէ տեղի ունենար Քենըտի – Խրուշչեւ հանդիպումէ մը առաջ: Երեքշաբթի օր, Միացեալ Նահանգներու նախկին փոխնախագահը ճաշի հիւրն ըլլալէ ետք տը Կոլի, յայտարարեց թէ հակառակ կարգ մը տարակարծութիւններու, Ամերիկա ուրախ է որ իբրեւ խօսակից ունի, զօր. տը Կոլի անձով, անկախ մտքի տէր մեծ ղեկավար մը»:

պիտի չյուսահատիս ու դասալիք պիտի չդառնաս:

Եթէ. անհատական նախաձեռնութիւնը բաւարար չէ, ապա ուրեմն հաւաքական գործակցութիւնը կրնայ աղբիւր նպաստ դառնալ մէկուն ու միւսին:

Տեղեակ ենք, օրինակ, թէ Հայ Օգնութեան Միութիւնը 1962ի իր Պատգ. ժողովին մէջ նման բաղձանք մը բանաձեւեց: Եւ եթէ մինչեւ այսօր չկրցաւ գործնական որեւէ քայլ առնել, առնիկա չի նշանակեր թէ նահանջեց կամ հրաժարեցաւ:

Մշակութային կամ գեղարուեստական առումով որեւէ լուրջ նախաձեռնութիւն, որուն իրագործումը կ'իյնայ Միութեան նիւթական եւ բարոյական կարելիութիւններու սահմանին մէջ, անպայման կը գտնէ ՀՕՄի քաջալերութիւնը:

Կարեւորը, ինչպէս ըսինք, գործին լրջութիւնն է՝ երբ մանաւանդ թատերական արուեստի հետ կապ ունի որեւէ նախաձեռնութիւն:

Գիտենք, թէ քիչ մը ամէն տեղ «ճաշակներու հարց» կայ եւ նախասիրութիւններու խնդիր: Սակայն, ժամանակին հետ ու տարիներու ընթացքին կարելի է «մարզել» այդ ճաշակն ալ: Ամէն բան վարժութեամբ կը սկսի: Երբ կը դաստիարակես՝ ինքնաբերաբար կը նըրբանան նաեւ ըմբռնումներն ու պահանջները...

Հիմնական սխալողութիւնը՝ սթափումն է, մանաւանդ հայաշատ կեդրոններու մէջ. եւ՝ անվերապահ գործակցութիւնը: Մասնակի վերապահութիւնները կրնա՞նք մէկդի դնել, — ինքնաբերաբար կը հարթուի ամէն խոչընդոտ:

Համեստ ու սահմանափակ տարողութեամբ, սակայն ազդուո՛վ եւ հաւատքո՛վ պէտք է սկսիլ գործի: Եւ կը տեսնէք՝ թէ Միութիւններ ու ժողովուրդ կը կանգնին նախաձեռնողներու կողքին:

Բերրի հող ունինք այս երկրին մէջ: Պէտք է գիտնանք մշակել: — Մեր ժողովուրդը չի սակարկեր՝ երբ դրական արդիւնք կը տեսնէ:

«ՀԱՅՐԵՆԻՔ»

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՖՐԱՆՍԱՅԻ Գեղարուեստից պատասխանատու Անտրէ Մալրօ Լը Քորպիւզիէի յանձնեց ի. դարու Թանգարանին չինութիւնը Ռոն–Փուէն տը լա Տէֆանս: Տարիներէ ի վեր արդէն, ճարտարապետը կը մտածէր այդ մասին եւ մասնաւոր ու ինքնատիպ ծրագիրներ ունէր: Միւս կողմէ, հանրային շէնքերու կարգին Օփերան ալ կը «լուացուի» եւ ճերմակ երես պիտի ներկայանայ ժողովուրդին, Սեպտեմբերին:

ԻՏԱԼԻՈՅ Հանրապետութեան նախագահը պաշտօնական այցելութեան գնաց Դաշնակցային Հանրապետութիւն: Այս այցելութիւնը կը սկսի Միւնիխէն եւ կը շարունակուի ու կը վերջանայ՝ Պոն:

ԵՄԷՆԻ մէջ մահափորձ մը ձախողած է Նախագահ Սալալի դէմ: Նախարար մը սպաննուած է:

ՄԱՕ-ՑԷ.ԹՈՒՆԿ կ'ուզէ փաստել Քենըտիի որ չի բաւեր Խրուշչեւի հետ համաձայնիլ խաղաղութեամբ ապրելու համար: Այս նպատակաւ առջի օր բռնաբարել տուած է Նօ–մէնս–լանտը որ կը բաժնէ երկու Քորէաները:

ՆԵՀՐՈՒ ճառ մը խօսեցաւ եւ կոչ ըրաւ Հնդիկներուն որ միշտ աչալուրջ մընան չինական վտանգին դէմ: Հնդիկ վարչապետը աւելցուց թէ Չինացիք աւելցուցած են իրենց ուժերը չին–հնդիկ սահմանին վրայ: Միւս կողմէ Լոնտոն հասած լուրերու համաձայն Խորհ. Միութիւնը որոշած է աւելցնել իր օժանդակութիւնը Հնդկաստանի:

ՉԻՆԱՑԻՔ սպառնալիքներ սկսած են ընել ճապոնացիներէն.— «Ամերիկացի աշխարհակալները պէտք է հեռանան հարաւային Քորէայէն, առանց պայմանաժամի»:

ԵՄԷՆԻ միապետական ուժերու պետը՝

«ՅԱՌԱՋ» 30 ՍԱՆԹԻՄ ԱՅՍՕՐՈՒԸՆԷ ՍԿՍԵԱԼ

Ինչպէս գրած էինք, Փարիզեան Մամուլի Ընկերակցութեան որոշումով, օրաթերթերու գինը կը բարձրանան այսօրուընէ սկսեալ: Մինչեւ տարւոյն վերջ սակայն անփոփոխ պիտի պահենք բաժանորդագրութեան մեր պայմանները:

×

COMMUNIQUE

★

Le Syndicat de la Presse Parisienne communique :

Les journaux quotidiens ont dû supporter depuis le 1er Février 1959, date de la précédente fixation de leur prix de vente, une aggravation considérable de leurs dépenses d'exploitation.

La hausse de celles-ci durant les cinq années, due notamment à l'augmentation des salaires, des charges sociales, du coût des transports et des moyens de transmission, dépasse 30 %.

La Presse Quotidienne a retardé autant qu'il lui a été possible, le moment de répercuter sur ses prix de vente, cette majoration de son prix de revient.

Il lui faut assurer l'équilibre de ses recettes et de ses dépenses, gage de son indépendance et du maintien de la diversité des journaux, expression de la liberté d'opinion.

Par décision du Ministère des Finances et des Affaires Economiques, tous les journaux quotidiens ont été autorisés à relever leur prix de vente. En application de cette décision, les quotidiens de Paris et les quotidiens de province seront mis en vente au prix de 30 centimes à partir du Jeudi 1er Août.

Իմամ էլ Պատր յաղթական գեկոյցով մը կը յայտնէ թէ վերջին շաբաթներու ընթացքին 333 Եգիպտացիներ սպաննուած են եւ երեք ռմբաձիգ օդանաւեր վար առնուած են:

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ վարչապետը յայտարարեց թէ երեսփոխանական ընտրութիւնները տեղի պիտի ունենան Նոյեմբ. 3ին:

ՄԱՐՈՔԻ թաղապետական ընտրութեանց մէջ, կառավարական կուսակցութիւնը կրկնակ յաղթանակ մը տարած է, քուէներուն հարիւրին 85ը շահելով: —

ՔՈՒՅԷԹ եւ Սէուտական Արաբիա համաձայնութիւն մը կնքած են բաժնելու համար «չէզոք գօտին» որ գիրենք կը բաժնէ Պարսից Ծոցին երկայնքը:

ՓՐԱՒՏԱ կը գրէ թէ տը Կոլ «կատղածներու կողմը անցած է» այսպէս բացատրելով նախագահին մերժումը Մոսկուայի համաձայնագիրը ստորագրելու:

ՆԱՍԸՐ որոշած է միանալ Մոսկուայի համաձայնութեան, հիւլէական փորձերը արգիլելու համար:

ՓՈՐԹՈՒԿԱԼ ընդունած է նեգրին անկախութիւն շնորհել փորթուկալեան կինէին:

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ երկու փոքրիկ գիւղաքաղաքներու երկրաշարժը 5 մեռեալ եւ ութ վիրաւոր պատճառած է: Սկիւպի մէջ որոշուեցաւ օդը հանել փլատակները որոնց տակ թաղուած դիհեր կը մնան: Նոր բայց թեթեւ ցնցում մը եղաւ առջի օր: Տեղական մամուլը մասնաւոր գովեստով կը խօսի Ֆրանսացիներուն մասին որոնք մեծ աշխատանք կը տանին կեանքեր փրկելու համար աւերակներու տակը:

Ս. ԿԱՐԱՊԵՏ ՎԱՆՔԸ

Կեսարիոյ շրջանը, Էֆքէրէի Սուրբ Կարապետ (Քրիստոսը մկրտող Յովհաննէս – Կարապետ) համբաւաւոր վանքին վերաբերեալ վաւերական գրութիւններու մէջ կը տեսնենք ու կը կարդանք, ականատեսի վկայութեամբ, մենք եւս կը հաստատենք թէ վանքի դերեզմանին մէջ կը գտնուէր տապանաքար մը, որ երկու տարի առաջ (մեր պաշտօնավարութեան միջոցին) երեւան հանուած է վանքը փլչուած ատեն: Տապանաքարին վրայ հետեւեալ արձանագրութիւնը կար երեք տարի առաջ.

Ո՛ջ ջերմեռանդ ըղձիւ սիրոյ առ իս
դիմեն
Եւ որք իբրեւ մտօք լրբին զուրկ եղանեն
Տէր Յովհաննէս Ս. Բաղիշեցի քաջի մօտ
զենման
Եւ իմ պարտոյս սեղ եւ չոր նպաստ
Համայն ախտից շնորհիւ Փրկչին դեղ
գտանեն
Զի չարաչար խնդրեն եւ ոչ առնեն
Ընդ Զիմառացի Յակոբ պետին նոր
նուաստ
Որ Ս. Որդւոյն լիցին վառ առագաստ:

Լքեալ վանքը ծախու առած, փլչուցած եւ տապանաքարը փլատակներուն տակէն դտած է ներկայիս Կեսարիոյ Սէնայի Պէօլ Կէսի կոչուած վայրը քար ծախող Օսման անուն մէկը: Որչափ որ վճարում ընելով տապանաքարը առնել փափաքած ենք, բայց շատ բարձր գին պահանջելուն՝ չենք կրցած առնել: Այժմ փլատակ վանքին տէր կանգնած է տեղւոյն Թանգարանի տնօրէնութիւնը: Մութ գոյն մարմարէ շինուած այս շիրմաքարին երկայնութիւնն է մէկուկէս մեթր, իսկ լայնութիւնը 30 սանթիմեթր:

Ս. Կարապետի Ժառանգաւորաց նշանաւոր վանքը, որ ժամանակին իր յաճախող Թաղերու սենեակներով ուխտաւորներու բնակութեան կը յատկացուէր, երկու տարի առաջ մթերանոցի վերածուած էր: Սակայն չահագրգռուողներու կողմէ ծախուելէ եւ փլչուելէ ետքը, ներկայիս քարակոյտի վիճակ մը կը պարզէ: Երբեմնի պաղ ու յստակ աղբիւրներու ջուրերը, իրենց ընթացքը կորսնցնելով, օձապտոյտ ճամբաներէ կը յառաջանան:

Կը պատմուի թէ վանքը 250 տարի առաջ մատակարարութեան հետեւանքով աղքատ եւ անվճարելի պարտքերու մէջ մնացած ըլլալով, նոյն ատենի վանահայր Մատթէոս եպիսկոպոս Պոլիս կը ղրկէ իր օգնական Ստեփան Վարդապետը, որպէսզի սրտցաւ ազգայիններէ եւ Ամիրաներէ հանգանակութիւն կատարէ վանքին բացը գոցելու համար: Սակայն նկատելով որ այդ ատենները պատրիարքական ընտրութիւն կը կատարուէր, Կեսարացի ազգայիններու ազդեցութիւնը ի դերեւ հանելու համար՝ կը տարածայնուի թէ Ս. Կարապետի վանքին մէջ այդպիսի Մասունք մը գոյութիւն չունի, թէ Ս. Յովհաննէս Կարապետ Մկրտիչ ամբողջութեամբ ամփոփուած է Մշոյ Սուլթան Ս. Կարապետ վանքին մէջ: Այս կերպով հանգանակութեան գործը կը կաղայ եւ իր նպատակին չի ծառայեր:

1733 թուականին, վանքին վանահայր Յովհաննէս Կոլոտ պատրիարքին կողմէ Յակոբ վարդապետ Նալեանը Էֆքէրէի Ս. Կարապետ վանքը կը ղրկուի Մասունքի գոյութիւնը ստուգելու համար: Յակոբ վարդապետ բանալ տալով Ս. Կարապետի դերեզմանը, երկաթէ պզտիկ արկղի մը մէջ կը գտնէ Մասունքը: Ոմանք կ՚ըսեն թէ ատիկա թեւի ոսկոր էր, իսկ ուրիշներ կը պնդեն թէ կոնքի ոսկոր էր: Կը կարծուի նաեւ թէ արկղիկը կնքուած է նոյն ատեն Կեսարիոյ պատրիարք Ղեւոնդիանոսի եւ իր ձեռնադրած Ս. Գրիգոր Լուսաւորչի կնիքներով: Յակոբ վարդապետ ալ իր կնիքով կնքելէ ետք արկղիկը, դարձեալ կ՚ամփոփէ իր տեղը եւ վրան ալ կը զետեղէ տապանաքարը, որու վրայ գրել կուտայ վերոյիշեալ ութ տողնոց ոտանաւորը:

Ոմանք, թէեւ կ՚ըսէ թէ դերեզմանը մասամբ փորուած է, բայց ինք արկղը տեսած չէ, այլ վրայի տապանաքարը միայն առած է: Իսկ մեր վկայութեամբ իբրեւ ականատես, միայն ծեփուած մասը փորուած է, իսկ բազմաթիւ վկաներու հաւաստիքով՝ փոքրիկ սնտուկը երկու մեթրի չափ խորունկ թաղուած է:

1962 Նոյեմբեր 20ին աղերսագրով մը պաշտօնապէս դիմում կատարեցինք, որպէսզի փլատակներու տակէն հանել տանք մեզի համար բարոյական եւ կրօնական կարեւոր նշանակութիւն ունեցող Մասունքը եւ այս նպատակով նոյնիսկ պետական պաշտօնեաներու արտօնութեամբ եւ ներկայութեամբ՝ դերեզմանի յատակագիծը գծել եւ նկարներ հանել տալով եւ Թանգարանի Տնօրէնութենէն ալ տրուած գրութիւն մը կցելով՝ ղրկեցինք Անգարա, Պետական Խորհուրդին, պեղումի հրաման ստանալու համար: Սակայն, 1963 Մարտ 23ին պաշտօնապէս հաղորդուեցաւ մեզի պեղումի արգելքը, զանազան պատճառներով:

Այժմ ապահով ձեռքերու մէջ ի պահ կը մնայ փլատակներու ներքեւ գտնուող Կեսարիոյ նախկին Առաջնորդ Տրդատ Եպիսկոպոս Պալեանի կատարած շինարար գործերը ի յայտ բերող եւ 1889ին Յարութիւն Թաճիրեանի կողմէ իրեն նուիրուած կլոտուածաւոր հողէ աման մը: Վրան իր ձեռամբ գրուած է Թալաս եւ Գայսէրի Թաղերու հաստատման թուականը՝ 1900:

Այս սրուակաձեւ ամանին մէջ կայ ու կը մնայ Ժառանգաւորաց վարժարանի ծրագիր – կանոնագիրը, 1897ին գրուած, նոյնպէս իր համառօտ կենսագրութիւնը, իր ձեռքով գրուած, վանքի շինութեան թուականները, իր գործածած հին թուրքերէն արծաթէ կնիքը, նոյնպէս արծաթեայ ձեռք մը, առանց մասունքի:

Տրդատ եպիսկոպոս իր կենսագրականին մէջ կը գրէ թէ 1887ին, որպէս վարդապետ, առաջնորդ կ՚ընտրուի Կեսարիոյ վիճակին եւ վանահայր՝ Ս. Կարապետ վանքին: 1888ին կը հիմնէ Ժառանգաւորաց բարձրագոյն վարժարանը եւ զայն կ՚օժտէ դասարաններով, թանգարանով ու ննջասենեակներով: 1897ին յարակից բաժանումներու մէջ կը հաստատէ որբանոց մը, գորգագործութեան եւ կահագործութեան արհեստանոցներով, որոնք կը շարունակուին մինչեւ 1930: Միեւնոյն ատեն, վանքը կ՚օժտէ հաւութաբեր կալուածներով, Սարմըսաքլը գետակին վրայ կառուցանել կուտայ «Հէօնքէլի» կոչուած կրկնակի քարերով ջաղացքը, որ այժմ փոխանցուած է այլոց եւ մեծ դեր կը կատարէ:

Տրդատ եպիսկոպոս իր գրութեան մէջ կը յայտնէ թէ իրմէ առաջ պաշտօնավարող վանահայր Եղիա եպիսկոպոսի օրով անհոգ մնացած եւ աւերուած է նշանաւոր Խաս–Պաղչէն կամ Պաղչէի վերածուած է: Սակայն իր ջանաջան աշխատութեանց արդիւնքով՝ դարձեալ Խաս–Պաղչէի վերածուած է այդ գեղածիծաղ ծաղկազարդ պարտէզը, որ կը մնայ տակաւին: Նոյնպէս կանգուն կը մնան դուրս գտնուող Սիւալիկի շէնքերը, որոնց թափուի արձանագրութիւնները վերջերս մասնաւոր արտօնութեամբ քննել տալով, տեղեկացանք թէ վանքին ընդհանուր տարածութիւնը 900 քառ. մեթր է: Այս շէնքերը ժամանակին ամուր քարերով կառուցուած կատարեալ բերդ մը կը կազմէին: Վերջապէս, շրջակայ Էֆքէրէ եւ Կէսի գիւղերով՝ այստեղ ամէն առաւելութիւններով օժտուած դրախտանման ու գրօսաշրջիկային վայր մըն է եղեր, որու ներկայ վիճակը տեսնողներ ալ կը վկայեն այս պարագան:

ՀԱՅԿԱԶՈՒՆ Ա. ՔՀՆՅ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

ԽԱՔԱՆԻ

ԺԲ. դարու պարսկական գրականութեան մեծագոյն դէմքերէն մէկն է Խաքանի: Կը նկատուի ներրողական սեռի անգերազանցելի վարպետ մը: Երգիծանքով քննադատած է իր հայրենիքին աւատապետական կարգերը: Գերութենէ ազատուելու համար կատարած է փախուստի փորձ մը, որուն համար ձերբակալուած է: Բանտարկուած ժամանակ գրած է «Բանտային երգեր» բանաստեղծութիւններուն շարքը, ուր արտայայտուած են մեծ բանաստեղծին մարդասիրական գաղափարները եւ ծաղրանքը՝ տգեղ բարքերուն դէմ: Բանտէն ազատուելէն ետք կը մեկնի անոր տղան, աղջիկը, այնուհետեւ՝ կինը: Հիասթափ՝ կը հեռանայ հայրենիքէն՝ Շիրուանէն, եւ կը ճամբորդէ զանազան երկիրներ ու ի մէջ այլոց Հայաստան, որուն մասին գովասանքով կ՚արտայայտուի:

ՄԷԿ ՖՐԱՆՍԱ՝
ՀԱՐԻՒՐ ՄԻԼԻՈՆ ՖՐԱՆՍԱՑԻ

Փարիզցիները ամառը դիմաւորեցին աւանդական ձեւով: Երիտասարդ զոյգեր գիրկընդխառնուած պտըտեցան Պուլոնի ծառերուն տակ, շրթունքի կպած կեցան Մեթրոյի սանդուխներուն գլուխը, Սէնի գետափին կողք կողքի հանգստացան: Այս բոլորին մէջ սակայն, կար դժբախտ կէտ մը, հակառակ ցայտուն սիրաբանութեան, Ֆրանսացիները պէտք եղած չափով երախաներու ծնունդ չէին տար: Ազգային խորհրդարանին մէջ, Նախկին վարչապետ Միշէլ Տըպրէ, ներկայացնելով նոր օրինագիծ մը, որուն նպատակն է բարելաւել այս կացութիւնը, ազդարարեց.— Շեշտուած եւ անմիջական կապ մը կայ մեր ժողովուրդին աճումին եւ մեր ազգային միջեւ, Եւրոպայի եւ աշխարհի մէջ:

Նախկին վարչապետը կրնար օրինակ բերել պատմական անցեալը: Երբ Նափոլէոնի բանակները տարածուեցան Եւրոպայի բոլոր կողմերը, ասկէ 160 տարի առաջ, Ֆրանսա Եւրոպայի բնակչութեան մէկ հինգերորդը ունէր: Այսօր ունի մէկ քսաներորդը եւ միայն դուրսէն եկած գաղթականներն են, որ թոյլ չեն տար, որպէսզի Ֆրանսա բնակչութեան թիւի անկում ունենայ: 1946էն ի վեր, Ֆրանսայի տարեկան ծնունդի աճումը 18-19 առ հազար եղած է: Թէեւ Միացեալ Նահանգներու ծնունդներու տոկոսէն (23.4) նուազ է, այսուհանդերձ, Ֆրանսա իր դրացիներէն աւելի լաւ վիճակի մը մէջ կը գտնուի ներկայիս:

Վերջին տասը տարիներուն, Արեւմտեան Եւրոպա արձանագրեց ծնունդներու թիւի յարատեւ անկում մը, հաւանաբար յետ–պատերազմեան անապահովութեան, նոր բնակարաններու պակասին, որ ըլլալի է, հակառակ արձանագրուած արտեսական մեծ յառաջդիմութեան եւ վերջապէս՝ նորապսակներուն քիչ թիւով զաւակ ունենալու նախասիրութեան: Ծնունդներու անկումը շատ աւելի շեշտուած է համայնավար երկիրներու մէջ, մասնաւորապէս Լեհաստան եւ Չեխոսլովաքիա, ուր նոյն ժամանակաշրջանին մէջ ծնունդներու տոկոսը 28էն իջած է 22 առ հազարի: Այս երեւոյթին պատճառներէն մէկը՝ համայնավար կառավարութիւններուն վաւերացումն է օրինական վիժումները: Այս ձեւով, մինչ Ասիա, Ափրիկէ եւ Հարաւային Ամերիկա գեղենթակայ կը մնան բնակչութեան յարաճուն բազմացումի վտանգին, Եւրոպա, ընդհակառակն, կը մտահոգուի բնակչութեան թիւին անկումէն:

Ֆրանսա երկար տարիներէ ի վեր կ՚աշխատի առաջքը առնել այս դժբախտ երեւոյթին, բազմամարդ ընտանիքներու

ԶԱՂԱՑՔԻՆ ՃԱՌԸ

«Ընկերներ, գաղափարական պայքարը անհաշտ եւ ոչ – կոմպրոմիսային պայքար է: Հայաստանի համայնավար կուսակցութեան Կենտկոմը այսուհետեւ եւս համբերատար կերպով կը պարզաբանի այն ընկերներին, ովքեր սխալւում եւ մոլորւում են: Բայց միաժամանակ մենք խիստ կը լինենք նրանց նկատմամբ, ովքեր կը յամառին իրենց սխալների մէջ, բստ էութեան կը դառնան մեր դասակարգային թշնամիների գաղափարական ներթակուլակները եւ նրանց ապականիչ գաղափարների տարածողները»:

Այնուհետեւ, Յ. Զարոբեան իրենց անուններով քննադատած է «Հայաստանի աշխատաւորուհի» պարբերաթերթը՝ «ցածր մակարդակի ստեղծագործութիւններ» հրատարակած ըլլալուն համար: Այս առթիւ յայտարարած է նաեւ.— «Մեր մամուլի, ռատիոյի եւ հեռուստատեսութեան գործունէութեան մէջ լուրջ թերութիւններ կան: Շատ թերթեր եւ ժուռնալներ դեռեւս հրատարակւում են ցածր մակարդակով եւ չեն համապատասխանում պարտիայի նոր պահանջներին: Դրանք բաւարար օրակով ու մատչելի կերպով չեն լուսաբանում էքոնոմիկայի եւ կուլտուրայի հարցերը: Քննադատական նիւթերը մի շարք դէպքերում մակերեսային բնոյթ են կրում: Թերթերը, ժուռնալները եւ մանաւանդ գրական մամուլը յաճախ իներտ վերաբերմունք են ցուցաբերում գաղափարապէս ու գեղարուեստօրէն թոյլ ու գորշ առանձին ստեղծագործութիւնների նկատմամբ եւ դրանք սկզբունքային քննադատութեան չեն ենթարկում, իսկ երբեմն գովաբանում են թոյլ ստեղծագործութիւնները»:

Հայաստանի համայնավար կուսակցութեան կեդր. կոմիտէի առաջին քարտուղարը խիստ կերպով քննադատած է «Հայֆիլմ»ի արուեստանոցին եւ մշակութային նախարարութեան ղեկավարութիւնը:

Անդրադառնալով սփիւռքահայութեան հետ ստեղծուած մշակութային եւ այլ կապերուն, Զարոբեան բացատրած է այդ կապերուն բուն նպատակը.— «Վերջին տարիներս ուժեղացել է կապն արտասահմանի առաջադիմական հայկական կազմակերպութիւնների հետ, գրականութեան, արուեստի եւ սպորտային կազմակերպութիւնների ներկայացուցիչներն աւելի յաճախ են մեկնում բազմաթիւ գաղութները, որը նպաստել է արտասահմանի առաջադիմական կազմակերպութիւնների համախմբմանը Դաշնակների և նրանց հակասովետական պրոպագանդայի դէմ մղուող պայքարում»:

Խօսելով ներգաղթի մասին, Զարոբեան դիտել տուած է, թէ «արդէն բազմաթիւ Հայեր են հայրենիք եկել Կիպրոսից, Միացեալ Արաբ Հանրապետութիւնից եւ Իրանից, եւ շատ հազարներ անհամբերութեամբ են վերադառնալու Սով. Հայաստան, որը սփիւռքահայութեան միակ հայրենիքն է: Մենք այսուհետեւ եւս հոգատարութիւն կը ցուցաբերենք օտարութեան մէջ ապրող մեր հայրենակիցների նկատմամբ եւ կը շարունակենք նրանց հայրենադարձութեան կազմակերպումը»:

Շարունակութեան մէջ, Զարոբեան շեշտը դրած է ազգայնականութեան դէմ պայքարը ուժեղացնելու անհրաժեշտութեան վրայ.— Մենք պէտք է էլ աւելի ուժեղացնենք աշխատաւորների սոցիալիստական ինտերնացիոնալիզմի եւ ժողովուրդների բարեկամութեան ոգով դաստիարակելու աշխատանքը, անհաշտ պայքար մղենք տեղայնութեան ազգային սահմանափակուածութեան կամ բացառիկութեան ամէն տեսակ դրսեւորումների դէմ, անցեալի իտէալականացման, ռէակցիոն տրադիցիաների ու սովորութիւնների գովաբանման դէմ:

«Միշտ պէտք է յիշենք, որ սոցիալական տարբեր կարգ ունեցող պետութիւնների խաղաղ գոյակցութիւնը, որի գաղափարը հաստատ ու հետեւողականօրէն պաշտպանում է մեր լենինեան պարտիան, ամենեւին չի նշանակում թուլացնել դասակարգային պայքարը միջազգային ասպարէզում: Մենք մեզ հաշիւ ենք տալիս որ արտասահմանեան ռէակցիոն ուժերը, այդ թւում Դաշնակները, փորձում են զանազան ուղիներով անցկացնել թշնամական գաղափարախօսութիւնը եւ մասնաւորապէս նացիոնալիզմը, որը կապիտալիզմի առաւել կենսունակ մնացուկն է»:

Յ. Զարոբեանի զեկուցումէն ետք խօսք առած են ժողովականներէն շատեր: Հայաստանի համայնավար կուսակցութեան Երեւանի կոմիտէին առաջին քարտուղարը՝ Բ. Մուրադեան քննադատած է «Գրական Թերթ»ը, որ «անբաւարար է պայքարում գրականութեան զարգացման համար», իսկ կուսակցութեան Լենինականի ներկայացուցիչը՝ Գ. Ղարիբջանեան շատ բուռն յարձակումներ ըրած է Դաշնակցութեան դէմ եւ շեշտած «Հայ ժողովրդի երդուեալ թշնամիների՝ Դաշնակների դէմ պայքարն ուժեղացնելու անհրաժեշտութիւնը: Դաշնակները ոչ մի կեղտոտ միջոցի առաջ կանգ չեն առնում զրպարտելու Սով. Հայաստանին, ծանծաղեցնելու հայ ժողովրդի հոյակապ նուաճումները:

(2 Տար.)

ՀԱՅԱՍՏԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Երեւանի մէջ, վերջերս, տեղի ունե– ցաւ Հայաստանի եօթներորդ «սպարտա– կիադ»ը, այլ խօսքով ողիմպիականը: Արդիւնքները քննելով, Խ. Բաղալեան «Սով. Հայաստան»ի մէջ դիտել կու տայ թէ թէեւ մարմնամարզութիւնը, որ իրաւամբ կը նկատուի մարմնամարզի «թագուհին», տարիներէ ի վեր չարու– թեամբ խիստ ետ կը մնայ: Անբարեյոյս վիճակ մը կը ներկայացնեն նաեւ պաս– քեթ-պոլը, վոլէ–պոլը, ջրագնդակը, թենիս-պոլը եւ մասամբ նաեւ հեծե– լանքը:

Ատեն ժամանակ, երբ մեր մարմնա– մարզիկները իրենց փայլուն ելոյթներով հիացմունք էին պատճառում խորհրդա– յին եւ արտասահմանեան խաղապահանջ մրցախաղերին, եւ նրանցից սովո– րում էին շատերը: Անցան տարիներ, նր–

մարզական օժանդակութիւններ սահ– մանելով եւ խիստ պայքար մղելով եւ ... դուրս հռչակելով վիժումը: ... արգիլելով ծնունդները կասե– ցնող դեղերու եւ տեղեկութիւններու հա– ղորդումը:

Խրախուսելու համար միջին հաշուով ... ընտանիքի առնուազն երեք զաւակ ունենալու ծրագիրը, Տըպրէ առաջար– կեց, առաջին՝ բնակարան ունենալու ... մէջ, նախապատուութիւնը տալ ... զաւակ ունեցող զոյգերուն, երկրորդ՝ ... զաւկին ծննդեան տարին՝ տուր– քէ զերծ կացուցանել այդ ընտանիքնե– րը, երրորդ՝ «կառավարական աւելի ... վերաբերում չամուսնացած մայ– րերու հանդէպ»: Կ'ուզէ նաեւ, որ Ֆը– րանսացին հրաժարի ալքոլէն, որովհե– տեւ «ամէն սերունդ կը կորսնցնէ կէս միլիոն հոգի»:

Ընդդիմութիւնը եկաւ ընկերվարական– ներէն եւ համայնավարներէն, որոնք ան– իրագործելի գտան այս ծրագիրը, ցոր– ... ժողովուրդը կը տառապի բնակա– րանի չգոյութենէն: Սակայն Տըպրէ կը ... որ Կոլի քաջալերութիւնը, քանի ... կը յուսայ թէ Ֆրանսայի ներկայ 47 միլիոն բնակչութիւնը 100 միլիոնի պի– տի բարձրանայ դարաշրջանի վերջաւո– րութեան:

Թ. Ա. Թ.

րանք, ցաւօք սրտի, իրենց դիրքերը զի– ջեցին», կ'եզրակացնէ յօդուածագիրը:

ՈՏՆԱԳՆԴԱԿ

Մոսկուայի «Սպարտակ» ոտնագնդակի խումբը 3–0ով պարտութեան մատնած է Երեւանի ամէնէն զօրաւոր «Արարատ» խումբը: Երեւանցիները տկար խաղ մը խաղացած են: Խորհ. Միութեան ոտնա– գնդակի ախոյենական մրցաշարքին ար– դիւնքները, մինչեւ Յուլիս 16, ցոյց կու– տան Հայաստանի խումբին աննախանձելի վիճակը: Քսան խումբերու մէջ, Հայաս– տանի «Արարատ»ը 17րդ դիրքը գրա– ւած է:

ՇԻՇԵՐՈՒ ԽՆԴԻՐ...

Երեւանի մէջ տարեկան կը ծախուին 10–11 միլիոն շիշ հանքային ջուրեր: Անկէ զատ նաեւ գինի, քոնեակ եւայլն: Այս բոլոր շիշերը, ըստ օրէնքի, պէտք է ետ վերադարձուին փոխարժէքը ստանա– լու պայմանով: Դժբախտաբար, առանց այլեւայլի բոլոր գործարաններն ալ դըժ– կամակութեամբ կ'ընդունին ետ վերա– դարձուած շիշերը:

«Այդ ամէնի հետեւանքով առեւտրա– կան կազմակերպութիւններին համար ըս– տեղծւում են լուրջ դժուարութիւններ... այժմ կուտակուած են մօտ երեք միլիոն դատարկ շիշեր»:

ՇԱՐԺԱՐՈՒԵՍՏԸ ԲԱՐԵԼԱՒԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Տարիներէ ի վեր բուռն քննադատու– թեան առարկայ կը դառնան «Հայֆիլմ»ի արտադրութիւնները: Դեռ վերջերս նման խիստ քննադատութիւններ եղան «Հայ– ֆիլմ»ի հասցէին, Հայաստանի համայ– նավար կուսակցութեան Կեդր. Կոմիտէի լիակատար նիստին մէջ:

Հայաստանի շարժարուեստը բարելա– ւելու մտադրութեամբ, պետական մար– մինները պաշտօնական հրամանագիրով մը որոշած են կազմել «Հայկական Ս. Ս. Ռ. Մինստրների սովետի կինեմատո– գրաֆիայի պետական կոմիտէ» մը, ո– րուն նախագահ նշանակուած է Ս. Գաս– պարեան:

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐ ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ՄԷՋ

Շիրվանզադէի «Քաոս»ը, Յ. Պարոն– եանի «Պաղտասար Աղբար»ը եւ Շիլլերի «Սէր եւ խարդաւանք» թատերգութիւն– ները ներկայացուած են Լենինականի մէջ, Թիֆլիսի հայ թատերախումբին կողմէ:

Ա. ԽԱՉԱՏՐԵԱՆ ԿԸ ՄԵԾԱՐՈՒԻ

Վարշաւայի մէջ, ուր, ինչպէս գրած էինք գացած էր իր «Սպարտակ» բեմա– պարը ղեկավարելու, Արամ Խաչատրեան արժանացած է մեծ պատուի: Իր ծնըն– դեան 60ամեակին առթիւ կազմակեր– պուած է երեկոյ մը, որուն ընթացքին խօսած է լեհ ծանօթ երաժշտագէտ մը՝ Եան Վեպէր:

ԱՇՏԱՐԱԿԻ ՄԷՋ

Լեռնային Ղարաբաղի (Ադրբէյջան) հայկական երգի եւ պարի խումբը Աշ– տարակի մէջ համերգ մը տուած է: Այս առթիւ ներկայացուած է Բ. Ուլուբար– եանի «Ղարաբաղեան հարսանիք»ը:

ԳՐԱԽԱՆՈՒԹՆԵՐ

«Գրական Թերթ»ի մէջ երեւցած յօդ– ուածէ մը կը տեղեկանանք, որ Երեւանի մէջ կան 30է աւելի գրախանութներ: Ծրագրուած է շինել երկյարկանի շէնք մը՝ իբրեւ գրախանութ:

ԹԱՏՐՈՆ

Յուլիս 15ին, խորհրդակցական ժողով մը գումարուած է Երեւանի թատրոնին ղեկավարներուն, դերասաններուն եւ թատերագիրներուն մասնակցութեամբ: Քննութեան առնուած է Հայաստանի թատերական կեանքին վիճակը, որ ար– դէն «սկսել է անհանդստութիւն պատ– ճառել» պատասխանատուներուն, քանի որ երկու տարիէ ի վեր հետաքրքրական նոր գործեր չեն հրատարակուած եւ ներ– կայացուած: Ժողովականները անհրա– ժեշտ գտած են ժամանակակից, գաղա– փարական ամուր հիմերու վրայ գրուած թատերգութիւններու ներկայացումը:

ՕՏԱՐ ԳԻՏՆԱԿԱՆԻ ՄԸ ԿԱՐԾԻՔԸ

— Հայ ժողովուրդը կրնայ հպարտա– նալ իր բնախօսներով, ինչպէս Լեւոն Օրբելի, Խաչատուր Կոշտոյեանց, Էզրաս Հասրաթեան, Սիմէոն Սարգիսով, յայ– տարարած է Հայաստան իր այցելութեան առթիւ Նիւ Եորքի համալսարանի փրո– ֆեսէօր Կրեկըրի Ռազրան:

×

Երեւան ժամանած է անգլիացի աստ– ղագէտ՝ Սըր Պեռնարտ Լովել, որ վա– րիչն է Մանչեսթըրի ճոտրըլ–Պէնք մեծ աստղադիտարանին:

ԼՐԱՏՈՒ ԱՐՈՒԵՍՏԻ

ՑՈՒՑԱՍՐԱՀ ՖՐԱՄՈՆ

Շնորհիւ իր այժմու տէր եւ տնօրէն Պ. Գրիգոր Համբարձումեանի «զոյնի եւ գծի հոտառութեան», Փարիզի ձախ ա– փին ամէնէն կենսունակ եւ առաւելաբար արդիական վրձիններ հովանաւորող նը– կարչական ցուցասրահներէն մէկն է Կա– լըրի Ֆրամոն:

Իր հիմնարկութեան ԺԵ. տարեդար– ձին առթիւ, ան կազմակերպած է ի'ր նկարիչներուն «ճղտումը» բնորոշող՝ պաստառներու որակով ու քանակով կա– րեւոր ցուցադրութիւն մը:

Փարիզի մամուլը՝ ծանօթ քննադատ– ներու գրիչով մօտէն հետաքրքրուած եւ գնահատական տողերով արտայայտուած է այնտեղ երեւան եկող «ճղտումին» մասին, զոր «թելադրական» կ'անուանէ Պ. Գր. Համբարձումեան, իր հովանա– ւորեալներուն գործին եւ արուեստի մը– տայնութեան նուիրած նկարացուցակ գրքոյկին ներածութեան մէջ:

Հաղորդական համոզումով եւ արուես– տատէր խորհրդածութիւններով, ներա– ծականին հեղինակը կը պաշտպանէ իր ընտրեալներուն, իր նկարիչներու խում– բին վրձինախօսութիւնը, անոնց անհաշտ եւ ըմբոստ գիծերուն թաքուն իմաստը, անոնց նախասիրած գոյներուն գործա– ծութեան պատճառը եւ տարօրութիւնը: Մէկ խօսքով, անոնց «ճղտումը»՝ ոչ մի– այն չեշտելու տարբերութիւնը, այլեւ փաստելու թէ անցեալն ու ապագան միա– տեղ եւ միաժամանակ համադրելու կոչ– ուած վրձինագիր «Արուեստի Գործը» անչփոթելի պէտք է հանդիսանայ՝ ներ– կան միայն ամփոփող «Արուեստի Առար– կային» հետ:

Այս առթիւ, Ռէյմոն Շարմէ եւ Փիէռ Քապան (Առ), Ժան Շապանոն (Լը Փէճ– թըը), Ժորժ Պեսոն (Լէթըը Ֆրանսէզ), Ժան Ռոլէն (Իւմանիթէ), ինչպէս եւ Քոմպա, Լա Քրուա, Նուվել Լիթերեր թերթերու նկարչական քննադատները նպաստաւոր մօտեցում եւ թեր կարծիք ցոյց կու տան Ֆրամոն Ցուցասրահին մէջ ընդգծուող «թելադրական» ճղտումին, որու ջատագովին իրենց արուեստին ջուրը կը բերեն Զաւարօ, Օթթավիանօ, Ռոժէ տը Քոնինկ, Բիւզանդ Թօփալեան եւ Փօլ Կիրաման:

Ուստի եւ աժան նախատեսութիւն մը չէ մտածելը, թէ վաղուան դասական նկարչութիւնը կրնայ բան մը պարտիլ՝ Ֆրամոն ցուցասրահին այսօրուան «թե– լադրական» ղոնրացէքին:

«ՅԱՌԱՋ»Ի ԹԵՐԹՕՆԸ (193)

ԵՂԼՏՐՋԻ ՊՈՄՊԱՆ

●●●

ՀԱԶԱՐ ԻՆԸ ՀԱՐԻՒՐ ՉՈՐՍ

Թննութեամբ հաստատուեցաւ թէ յիշ– եալ Երուանդ եւ Թաղւոր մեծ գումար– ներ ղրկած են Պոլիս այս տեղի յեղա– փոխական մասնաճիւղին գործերն ու ծը– րագիրները յաջողցնելու համար: Քննութեամբ հաստատուած է նաեւ որ Լիփա Րիփս, իր կինը ենթադրուած Տի– կին Սօֆի Րիփս եւ Ռուպինա Ֆայն հիմա կը գտնուին Զուիցերիոյ Օնքս գիւղաքա– ղաքը, Անէլ Պէրշիէի մօտ: Թրասս Եու– վանովիչ Թորգոմ կամ Արտաշ Գարբու– նեան ալ Ռուսճուգ, Հայկ Մալաքեա– նի քով կը գտնուի, ինչ որ վերջերս իր ընտանիքին ղրկած եւ ձեռք անցուցած նամակէ մը հասկցուած է: Ժօրիսի կինը Աննա Նէլլէնս, ինչպէս Ժօրիս ալ կը խոստովանի, Ֆիլիպպէ Ան– տոն Քոչի քով կը գտնուի:

Կառապան Մկրտիչ Ամերիկա փախած է, ինչպէս հասկցուած է իր կողմէ ամ– բաստանեալ Յովսէփեանի ղրկուած մէկ նամակէն:

Իսկ ձիագարման Երուանդ Ֆրանկիւլ– եան հիմա Վառնա սափրիչ Մկրտիչ Տէր– Խաչատուրեանի քով կը գտնուի, ինչպէս հաստատուած է մօրը ղրկած մէկ նամա– կէն:

Սիլվիօ Րիչչի, այսինքն Վահան, դէպ– քէն օր մը առաջ Պոլսէն Պիրէօ փախած ու յետոյ իր ծննդավայրը Ֆիլիպպէ գա– ցած է:

Անտոն Քոչ եւ Երուանդ Ալաճաճեան Ֆիլիպպէ՝ իսկ Թաղւոր Յակոբեան Սօ– ֆիա կը գտնուին:

Տիկին Անչքօվա, այսինքն Անճօվա, Օտեսա կը գտնուի, ինչ որ հաստատուած է իր մէկ նամակէն:

Փախստականներէն կօշկակար Արշակ Գարեգին եւ Յովակիմ ալ Պուլկարիա փախած են: Արշակի՝ իր ընտանիքին ղրկած մէկ նամակէն հասկցուած է որ անիկա վերջերս Պուքրէշ գացած է: Քառլ Եուվանովիչ Աշոտ, այսինքն բուն անու– նովը Յովհաննէս Եղիկյեանի որդին Կարապետ ալ Պուլկարիա կը գտնուի:

Այս ամբաստանեալներէն՝ Պոլսոյ մէջ կազմած յեղափոխական մասնախումբին միջոցաւ հետապնդել ծրագրած եղեռնա– կան արարքներուն ու անիծապարտ ո– ճիրներուն ծագումն ու գործադրութեան եղանակը ամբողջ մանրամասնութեամբը պարզեցի ու վերլուծեցի: Այժմ կը մնայ գիտնալ եւ ճշդել իւրաքանչիւրին այս եղեռնական գործին մէջ ունեցած մաս– նակցութեան չափը:

Անհատապէս իւրաքանչիւրին եղեռնա– գործութեան մէջ ունեցած առաջնը.—

Օր. Ռուպինա Ֆայն, Լիփա Րիփս, կառապան Ճօրճ Փէթրի Վարչամով եւ ձիագարման Երուանդ Ֆրանկիւլեան ան– ձամբ պայթուցիկ նիւթերը կառքին մէջ դնելով Սէլամլըգի արարողութեան վայ– րը մտցուցած, պայթեցուցած եւ անոր բուն աղդեցութեամբը ծանօթ թուով մարդոց մահուան եւ վիրաւորման պատ– ճառ եղած են:

Սիլվիօ Րիչչի, (այսինքն Վահան), Քարլ Եուվանովիչ Աշոտ (այսինքն Կա– րապետ), Թրասս Եուվանովիչ Թորգոմ (այսինքն Խաչիկի որդի Արտաշ) եւ Սար– գիս Ղարիպեանի զաւակ կառապան Մը– կրտիչ եւս այս անիծապարտ նպատակը յաջողցնելու օժանդակած եւ այդ առթիւ պէտք եղած միջոցները հայթայթած եւ պատրաստութիւնները ամբողջացուցած են: Տիկին Սօֆի Րիփս, Տիկին Աննա Նէլլէնս Ժօրիս եւ Տիկին Անչքօվա եւս այս յեղափոխական մասնաճիւղին մաս– նակցելով՝ անոնց բոլոր խռովարարական գործառնութեանց օժանդակած եւ անոնց կատարելագործուելուն նպաստած են:

Իսկ Պելժիացի ամբաստանեալ Ժօրիս արդէն անիշխանական մըն է եւ իր երկ– րին մէջ ալ այնպէս ճանչցուած ըլլալով, իր գաղափարին եւ կոչումին բերմամբ այդ եսթերեւի անձերուն եղեռնական ու վայրագ ընթացքին հակամէտ գտնուած, եւ զայն կատարելապէս յաջողցնելու հա– մար, զանոնք իր տունը ընդունած է:

Անկէ զատ իր եւ իր կնոջ անուններ իբրեւ հասցէ գործածելով անոնց անի– ծապարտ թղթակցութեանց միջնորդ ե– ղած է, անոնց բոլոր գումարումներուն եւ խորհրդակցութեանց մասնակցելով, իր կարծիքներն ալ մեծ դեր եւ կշիռ ու– նեցած են տրուած որոշումներուն, ինչ– պէս նաեւ այդ որոշումներուն գործա– դրութեան ժամանակը որոշելու խնդրին մէջ. ինքն է որ մէքենիք կոչուած պայ– թուցիկ նիւթը իր տունն ընդունած եւ երկար ատեն պահած էր նոյն եղեռնական նպատակով, եւ վերջապէս ինքն է որ ե– ղեռնական դէպքին դիշերը վերոյիշեալ անձերուն հետ մէկտեղ գտնուելով, տե– ղեկութիւններ հաղորդած, ազդարարու– թիւններ ուղղած, եւ կատարուած դատ– րաստութեանց յաջողապէս ի գլուխ ել– լելուն համար քաջալերած է զանոնք:

Վերջապէս, հոս գործել յանդգնած ե– ղերելի արարքներէն բացայայտ կերպով հասկցուած է թէ Ժօրիս, Պոլսոյ յեղա– փոխական մասնաճիւղին նախագահու– թեան պաշտօնը ստանձնած էր պարզա– պէս, ինչ որ կը հասկցուի գործուած ա– րարքներուն կատարման եղանակէն, ինչ– պէս նաեւ եղեռնական դէպքերէն երկու օր վերջը կոմիտէին կեդրոնին հետ թըղ– թակցելէն. հետեւաբար, անտարակուսե– լի կերպով կը ստուգուի թէ յիշեալը նոյն եղեռնական արարքներուն մէջ ամէնէն կարեւոր դեր կատարող խռովարարներու անիծապարտ պետերէն եւ անոր զօր– ծադրութեան ազդու մէկ միջոցը ե– ղած է:

ՍՄԲԱՏ ԲԻՒՐԱՏ

(Շար.)

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Պ. Ոսկիան Նալպանտեան, Տէր և Տիկ. Յովհաննէս Նալպանտեան, Տէր եւ Տիկին Աշոտ Նալպանտեան, Տէր եւ Տիկին Նշան Քօրդոշեան կը ծանուցանեն թէ հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարեն իրենց կնոջ, մօր եւ զոքանչին

ՏԻԿԻՆ ԽԱԹՈՒՆ ՆԱԼՊԱՆՏԵԱՆԻ

եւ իրենց քրոջ ու հօրաքրոջ

ՏԻԿԻՆ ԹԱԳՈՒՀԻ ՃԱՌԱՅԵԱՆԻ

մահուան քառասունքին առթիւ, այս կիրակի առաւօտ (Օգոստ 4) Լիոնի Ս. Յակոբ եկեղեցիին մէջ:

Կը հրաւիրուին ողբացեալներուն յիշատակը յարգողները:

... ՖՐԱՆՍ 1... ՕԳՈՍՏՈՍ 7...

FRANCE - I

« LES HEURES ARMENIENNES »

ՌՈՒԲԷՆ ՄԵԼԻՔ - ԵՒԱ ԿՐԻԼԻՔԷՋ

պատրաստած են

« Հայկական կէս ժամը »

Չորեքշաբթի՝ Օգոստոս 7, ժ.ը 22.20

Յայտագրին գրական բաժնին մէջ՝ Սայաթ - Նովա, Վարուժան, Զարենց, Թէքէեան...:

Ֆրանսերէն կ'արտասանէ՝

ՍԵՐԺ ՌԵԺԻԱՆԻ

ԺԱՄԸ 22.20... ՕԳՈՍՏՈՍ 7

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Տիկ. Միութեան Որբերու Օգնութեան Մարմինը տրամադիր ըլլալով քանի մը անպաշտպան աղոց հայեցի դաստիարակութիւնը հոգալու, հարկ կը համարի ծանուցանել, որ շահագրգռուողները այժմէն դիմեն իրեն գրասենեակը - Նատեղին, 15 Ռիւ ժան Կուժոն:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Ֆր. Կապոյտ Խաչի Տէսինի դպրոցի Կրթ. Մարմինը շնորհակալութեամբ ըստացած է Տէր եւ Տիկ. Արապեանէ 10 Ֆր. Տիկ. Վարսենիկ Պասմաճեանի (ծընեալ Թուլումպաճեան) դառն մահուան առթիւ:

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

ԼԻՈՆ. — Ֆր. Կապ. Խաչի Օրը կը տօնուի մեծ պատրաստութեամբ, 27 Հոկտ. Մոլիէրի շքեղ սրահին մէջ:

ԴՊՐՈՑԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Դպրոցասէր Տիկնանց վարժարանին 1963 - 1964 տարեշրջանի արձանագրութիւնները սկսած են: Անոնք որոնք կը փափաքին զրկել իրենց զաւակները պէտք է այժմէն իսկ դիմում կատարեն հաստատութեան տնօրէնութեան:

Ա. — ՖՐԱՆՍԱԿԱՆԸ, որ տասնըչի կերպով կը հետեւի պետական լիսէներու արդիական բաժնի պաշտօնական ծրագրին — անգլերէն եւ սպաներէն լեզուներով —:

Բ. — ՀԱՅԿԱԿԱՆԸ, որ կ'օժտէ սաները հայագիտական ծանօթութիւններով, հայ լեզուի, գրականութեան, հայ կրօնքի եւ պատմութեան, Հայաստանի աշխարհագրութեան մարզերուն մէջ:

Աշակերտուհիներ կ'ընդունուին ութ տարեկանէն սկսեալ: Մանրամասնութեանց համար դիմել հաստատութեան տնօրէնութեան:

1, Bd. du Nord, LE RAINCY (S. et O.)
Tél : 927-01-72

Դպրոցասէրի ուսման ծրագիրը կ'ընդգրկէ երկու ուրոյն բաժիններ:

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ



Մատենաշար — ՅԱՌԱՋ — կեդրոնավայր
ԳԻՆ
Ֆրանսա՝ 15 Ֆր.

— Առաւել առաքումի ծախքը —

« ՅԱՌԱՋ »

ՀԱՅ ԸՆԾԱՅԱՐԱՆ

ԲԱՑՈՒԱԾ ԵՆ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ուսումնական 1963–1964 Տարեշրջան

Կ'ընդունուին 10–12 տարեկան բարեկիրթ եւ ուսումնասէր աշակերտներ, որոնք ունին իրենց տարիքին համապատասխան նաեւ ուսումնական աստիճան:

Արձանագրութեան եւ լուսաբանութեանց համար դիմել՝

Direction du Petit Séminaire Arménien
3, Av. de Grandchamp, LE PECQ (S. et O.)
Tél. 963.01.72

ՖՐԱՆՍԱՀԱՅ ԿԱՊՈՅՏ ԽԱՉԻ ՕԴԱՓՈԽՈՒԹԵԱՆ ԿԱՅԱՆ

ՎԵՐԱԴԱՐՁ

Ֆրանսահայ Կապոյտ Խաչի Օդափոխութեան կայանի մանուկներու առաջին խումբի վերադարձը, Օգոստոս չորսին, առաւօտուն ժամը 6.15ին, Կառ տը Լիոնի մէջ հանդիպում ծնողքներու եւ մանուկներու:

×

ՄԵԿՆՈՒՄ

ԼԻՈՆ. — Ֆր. Կապ. Խաչի օդափոխութեան կայանի մանուկները կը մեկնին Օգոստոս 4ի կիրակի օր, հաւաքոյթ ժամը 16ին ՓԷՌԱՇ, կայարանի մուտքի մեծ ժամացոյցին տակ:

×

Մարսէյլի խումբերը կը մեկնին Օգոստոս 4ին: Հաւաքատեղի՝ ԿԱՌ ՍԷՆ-ՇԱՐԼ Լիոնի խումբը կը մնայ նոյն գնացքին՝ իր քաղաքէն:

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Հ. Բ. Ը. Միութեան Տիկնանց յանձնախումբը կը խնդրէ կազմակերպութիւններէն նկատի ունենալ հետեւեալ թուականները.—

ՀՈԿՏԵՄԲԵՐ 1, Երեքշաբթի երեկոյ Տիկնանց յանձնախումբի կազմութեան Գ. տարեդարձին առթիւ գեղարուեստական երեկոյթ:

ՀՈԿՏԵՄԲԵՐ 19, ցուցահանդէս հայ արուեստագէտներու նկարիչ, արձանագործ եւ փորագրիչներու գործերուն:

Հայկական Թանգարանը, 52 Ավընիւ Ֆոշ, (Փարիզ 16):

ԴԵԿՏԵՄԲԵՐ 7, 8, 9, 10, «Բարենպատակ վաճառք»:

Յառաջիկային պիտի տրուին մանրամասնութիւններ:

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Փարիզահայ Տիկնանց Միութեան յիսնամեայ յոբելեանը կը տօնուի Հոկտեմբեր 13ին, Սալ տը լա Շիմի:

ԴԻՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ...

Նկատի ունենալով Յուլիս 21ի եւ Օգոստոս 5ի մեկնումներուն յաջողութիւնը եւ համաձայնելէ ետք ՄՈՍԿՈՒԱՅԻ եւ ԵՐԵՒԱՆԻ ԻՆԹՈՒՐԻՍԹԻՆ հետ, ուրախ ենք յայտարարելու թէ երրորդ մեկնում մը տեղի պիտի ունենայ Սեպտեմբեր 1ին:

Այս ճամբորդութիւնը պիտի կատարուի օդանաւով, ՓԱՐԻԶԷՆ ՓԱՐԻԶ, ՄՈՍԿՈՒԱ - ԵՐԵՒԱՆ ճամբով: Տեւողութիւնն է 15 օր եւ գինը՝ 2.500 ֆրանք մարդ գլուխ:

Տեղերը սահմանափակ թիւով ըլլալով, կը թելադրուի ժամ առաջ արձանագրուիլ:

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ. —

„VOYAZUR"

SECTION ARMENIE

23, Galerie Vivienne (entrée 5, rue de la Banque) - PARIS (2e)
Tél. : CEN. 94-52 Métro : BOURSE

ՀՐԱՆՏ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

51, Rue Monsieur-le-Prince, PARIS - 6e — Chèque Postal : 1278-35

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՇԻՐՎԱՆԶԱԴԷ, Երկերի ժողովածու, 10 հատոր լաթակազմ	70 Ֆր.
ՍՏԵՓԱՆ ԶՈՐԵԱՆ, Երկերի ժողովածու, 7 հատոր, լաթակազմ	56 Ֆր.
ՍՏԵՓԱՆ ԶՈՐԵԱՆ, Պապ թագաւոր, լաթակազմ	10 Ֆր.
ՍՏԵՓԱՆ ԶՈՐԵԱՆ, Հայոց բերդը, լաթակազմ	8 Ֆր.
ՎԱՀԱՆ ՏԷՐԵԱՆ, Երկերի ժողովածու, 2 հատոր լաթակազմ	14 Ֆր.
ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՒԻԹ, մեծադիր, գունաւոր նկարներով, լաթակազմ	10 Ֆր.
Վ. ԱՆԱՆԵԱՆ, Հայաստանի կենդանական աշխարհը, Բ.	8 Ֆր.
ԱՐՍԷՆ ՏԷՐՏԷՐԵԱՆ, Երկեր (Արովեան Պռօշեան, Պարոնեան)	17 Ֆր.
ՄՈՒՐԱՑԱՆ, Պատմուածքներ, գունաւոր նկարներով	5 Ֆր.
ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑԻ մասին յիշողութիւններ. լաթակազմ	7.50 Ֆր.
ՄԻՔ. ՇԱԹԻՐԵԱՆ. Գարունը նորից եկաւ. 296 էջ.	5 Ֆր.
ԱԲԳԱՐԵԱՆ. Մատենադարան (անգլ.) 18 գունաւոր մանրանկարներ	3 Ֆր.
ՀԵՆՐԻԿ ԹՈՒՄԱՆԵԱՆ. Երգի ծնունդը. բանաստեղծութիւններ	3.85 Ֆր.
Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ. Տաղեր, 200 էջ. լաթակազմ	3.50 Ֆր.
ՍՈՎԵՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ. Ա. 800 էջ. լթկզմ.	16 Ֆր.
ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ, Անլռելի զանգակատուն, Պէյրութ, 1963	10 Ֆր.

Առաքման ծախքը գնողին վրայ

ԳՐԱՏՈՒՆՍ ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻՆ Է
ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՁԱՅՆԱԳՐԵԱԼ ԲՈԼՈՐ ԵՐԿԵՐՈՒՆ
ՃՈԽ ՄԹԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԵՒ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆՑ

ԼՈՅՍԸ ԳՈՅՆ Է.... ԳՈՅՆԸ ԼՈՅՍ Է
ՁԵՐ ՏԱՆԸ ԼՈՅՍ ՏՈՒԷ՛Ք.... ԹՈՄԼԱՔԻ ԳՈՅՆ ՏՈՒԷ՛Ք

Ձեր բնակարանը կը լուսաւորուի
Եթէ ներսը եւ դուրսը

ՎԵՐԱՆՈՐՈԳԷՔ - ԶԱՐԴԱՐԷՔ - ՆԵՐԿԷՔ

ԹՈՄԼԱՔ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐՈՎ

PEINTURES THOMLAC

16 bis, Bd. Sébastopol, Paris 4e

Tél. ARC 26-61 – Métro : Halles et Chatelet

136, RUE DES BOURGUIGNONS — ASNIERES - BOIS COLOMBES (Seine)
Tél : GRE. 09-47

11, BD. DE LA REPUBLIQUE — LA GARENNE (Seine)
Tél. : STA. 19-06

ԱՆՄՐՑԵԼԻ ԳԻՆԵՐՈՎ

Ամէնէն արդիական, նուրբ եւ ընտիր ճաշակով պատրաստուած՝ առաջնակարգ ներկեր: Բնական եւ արուեստական բազմերանգ գոյներու մեծ ընտրութիւն: Նորոյթ իւղաներկեր, պատի գեղեցիկ թուղթերու ճոխ ընտրութիւն: Գետնի համար՝ ամէն տեսակ — լինոլէոմ եւ փլասթիք — ծածկոցներ. —

TAPIFLEX — TAPISOM — CARPETTE

Ձեր բնակարաններուն արտաքին եւ ներքին խնամքներուն համար անհրաժեշտ բոլոր նիւթերը:

Ամէն գնորդի կը նուիրուի յատուկ տետրակ մը, որու շնորհիւ կրնայ 10–30 առ հարիւր զեղչ ունենալ:

ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐ

52, RUE CHALON, PARIS 12e — 64, BLD. DE BELLEVILLE, PARIS 20e
166, AV. ARISTIDE BRIAND — PAVILLONS - SOUS-BOIS (Seine)
4 bis, RUE PAUL VAILLANT COUTURIER — ARGENTEUIL (S. et O.)
24, RUE PAUL VAILLANT-COUTURIER — ALFORTVILLE (Seine)
48 bis, RUE DALAVRAC — FONTENAY - SOUS - BOIS (Seine)

IMPRIMERIE SPECIALE DU JOURNAL « HARATCH »

32, Rue de Trévise, PARIS (9e)

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

Le PREMIER QUOTIDIEN ARMENIEN en EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction et Administration : 32, Rue de Trévise - PARIS-9ᵉ

Fondé en 1925 — Téléph. : PRO. 86-60

R. C. Seine 57 A 2731 — C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա՝ Տար. 50 Ֆ. — Վեցամսեայ՝ 27 Ֆ.

Արտասահման՝ Տար. 60 Ֆ. — Հատը 0.30 Ֆ.

ՈՒՐԲԱԹ 2 ՕԳՈՍՏՈՍ

VENDREDI 2 AOUT 1963

39րդ ՏԱՐԻ — Թիւ 9672

Fondateur : SCHAVARCH MISSAKIAN

39e ANNÉE — Nº 9672

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ՄԻՇՏ ՊԱՏՆԷՇԻՆ ՎՐԱՅ

Երեսունեւութ տարեկան է այսօր Յառաջ:

1925 Օգոստոսի սկիզբն է, որ անիկա … աշխարհ կու գար այս լոյս–քաղաքին … իբրեւ յառաջապահն ու առաջնոր– … հայ տարագիր բազմութեանց, որոնց … չուրջ յիսուն հազարի կը հասնէր: … Զարդէ ու բռնագաղթէ ազատած հա– … դներ Զինադադարի խանդավառ օրե– … հալիւ տուն–տեղ եղած եւ նոր բոյ– … չինած՝ կրկին ձեռք էին առեր դաղ– … ցուպը եւ օտար ափերու վրայ … ազատ շունչ առնելու եւ իրենց … կան գոյութիւնը ապահովելու … կարներով բարբառուն:

… Ֆրանսա լայն էր բացած … դուռները Հայերուն առջեւ, որոնք … պանդան շրջաններէն կը … լքելով իրենց հայրենի տու – … անշարժ կալուածներն ու շարժուն … օր մը կրկին դառնալու եւ ա– … տէր դառնալու միամիտ յոյսով:

Օտար, հիւրընկալ հողերու վրայ հաս– … հայկական գաղութները կը … հանդրուաններ դէպի հայրե – … տանող ճամբուն վրայ: Ուստի ան – … էր կազմակերպել դանոնք՝ … համար անոնց հայկական դի– …

…, Հայրենակցական Միութիւն, … քաղաքական, բարեսիրական, … պատանեկան եւ երիտա – … կազմակերպութիւններ կը … այդ նպատակին:

… թերթ մը, որ Ֆրանսայի … կեանքին հայելին ըլլար, … ձեռնարկներուն արձագանգ դառ– … միութեան կապ մը հանդիսանար … երկրի մեծ ու փոքր քաղաքներուն, … եւ ավաններուն մէջ տար– … ցիրուցան Հայերուն միջեւ.

Յառաջ հասաւ ճիշդ իր ժամուն՝ լրա– … համար այդ պակասը ու լիովին … իր առաքելութեան մէջ, ան– … դրնութեանց գնով:

… փոխուած է 38 տարիէ ի վեր: … է մեր Թիւը այսօր: … հետ փոխուած է նաեւ դիմա– … ֆրանսահայ գաղութին: Ժամանա– … հանդրուանը դարձած է կարծես … կայան: Դէպի հայրենիք տանող … ծածկուած են դեռ խու – …

… է նաեւ Յառաջի գործը: … ունինք երկրէն նոր եկած, հա– … ու հայրենադարձ բազմութիւն – … կարդալու եւ հայրենի լու– … կարօտով տոչորուն: Ու– … ազատած եւ որ– … նոր ելած որբերու եւ որ – … սերունդ մը, հայաշունչ … մէջ ապրելու եւ զարգանալու … :

… բոլորը: Դարձաւ … կիսատ ձգելու սխալ – … սերունդի մեր տղոց ու … համար, որոնք հայերէն … չնորհիւ:

… հին սերունդի շարքե– … են: Միջին սերունդի զա– … են իրենց մայրենի լե– … հնարաւորութենէն:

… բոլոր դժնդակ պայմաննե – … անվհատ կը շարունակէ … ճամբով, զոր գծած է իր յա– … հիմնադիր – խմբագիր – … Միսաքեան:

… մի՛շտ պատնէշի վրայ, իբրեւ … անընդհատ անոր կտա– …

ՀՐԱՆՏ-ՍԱՄՈՒԷԼ

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ԱՊԱԶԻՆՄԱՆ ԺՈՂՈՎ

Կ'ՈՒԶԷՆ ՉԻՆԱՑԻՔ

Չինացիք կառավարական յայտարա – րութիւն մը հրատարակեցին առջի օր, 3 կէտերու մէջ կը բացատրեն իրենց տե – սակէտը հիւլէական ապազինման մասին: Այս յայտարարութիւնը մեծ արձագանգ գտած է թէեւ, բայց չինական տեսակէտ– ները ինքնին նորութիւն մը չեն բերեր, այլ պարզապէս կը կրկնեն Խորհրդային Միութեան տեսակէտը, յայտնուած 1960–ին: Ինչ որ նորութիւն կը նկատուի այն է որ առաջին անգամ ըլլալով, այս յայ– տարարութիւնը կը խախտէ չին–խորհըր– դային համախոհութիւնը, վասնզի ա – ռաջին անգամն է որ չին կառավարու – թիւնը նկատի չառնելով գաղափարական հարցերը, Մոսկուայի հետ իր տարա – կարծութիւնը կը տանի դէպքերու եւ ընդհանուր քաղաքականութեան գետնին վրայ:

Այս յայտարարութեան երկրորդ մասը, մանաւանդ բանադրանքի Թուղթ մըն է հերձուածող Խրուշչեւի դէմ, որ կ'ամ – բաստանուի դաւաճանութեամբ իր իսկ ժողովուրդին, ընկերվարական պլոքին եւ աշխարհի բոլոր ժողովուրդներուն դէմ: Եւ վերջապէս, համաշխարհային ապա – զինման կոչ մը ուղղելով ոչ միայն իր մարքսիստ ընկերներուն այլեւ բարի կա – մեցողութեան տէր բոլոր մարդոց, Չի – նաստան այս ձեւով գլուխը կ'անցնի չար– ժումին, ջնջելով պատերազմասէրի իր համբաւը:

Օտար դէտերու կարծիքով Չինաստան չատ անկեղծ է ու նաեւ տրամաբանական իր այս առաջարկին մէջ, նկատի առնելով որ Չինաստան ինք չունի հիւլէական զէնք եւ կ'ուզէ որ ունեցողն ալ այլեւս չունե– նայ: Նոյն կարծիքներուն համաձայն, այս փափաքը կը բաժնեն նաեւ բոլոր այն երկիրները որ զուրկ են հիւլէական զէն– քերէ, ինչ որ կը նշանակէ թէ Փեքինի դիրքը մեծ արձագանգ կրնայ գտնել աշ– խարհի մէջ:

Մոսկուայի մէջ հակաչին պայքարը կը սաստկանայ, տնտեսական եւ քաղաքա – կան հետեւանքներով:

× Ուլպրիխթ յայտարարեց թէ Արե – ւելեան Գերմանիա պիտի ստորագրէ Մոսկուայի դաշնագիրը, տրամադիր է նաեւ դէտեր փոխանակելու Պոնի իշխա– նութեանց հետ եւ կ'եզրակացնէ թէ պէտք է հիմա Պերլինի հարցը կարգադրել:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՍԹԵՖԸՆ ՈՒԱՐԴ յանցաւոր հռչակուե– ցաւ Լոնտոնի դատարանին կողմէ մինչ ինք հիւանդանոց փոխադրուած էր անձ– նասպանութեան փորձէն ետք: Վիճակը ծանր կը նկատուէր եւ կ'ըսուէր թէ նոյն– իսկ եթէ ազատի, յիշողութիւնը կորսըն– ցուցած պիտի ըլլայ:

ԱՏԸՆԱՈՒԸՐ իր հրաժարականը պիտի ներկայացնէ Հոկտեմբերի սկիզբը:

ՄԱՏՐԻՏԻ մէջ, ութ համայնավարներ ձերբակալուած են որովհետեւ քարոզչու– թիւն կ'ընէին Ասթիւրիներու հանքերու բանուորներուն մօտ:

ՆԱԽԱՐԱՐԱՑ Խորհուրդին մէջ քըն – նուած է հանքագործներու վիճակին վե– րաբերեալ տեղեկագիրներուն ուսումնա – սիրութիւնը: Վճռարեկ Ատեանին ընդ – հանուր դատախազը կառավարութեան մօտ խորհրդատու նշանակուեցաւ դատա– կան հարցերու համար:

ԵՐՈՒՍԱՂԷՄԷՆ կը հաղորդեն որ Իս – րայէլի կառավարութիւնը որոշած է ըս– տորագրել Մոսկուայի համաձայնութիւ – նը հիւլէական փորձերու վերաբերեալ:

ՔՈՒՊԱՅԻ մէջ չորս հոգի գնդակա – հարուած է Միացեալ Նահանգներու ի նպաստ լրտեսութեան յանցանքով:

ՀԱՌԻՄԸՆ յայտարարեց Մոսկուայէն վերադարձին որ հոն ստորագրուած հա– մաձայնագրին մէջ ոչ մէկ յօդուած կայ որ արգիլէ Ֆրանսայի հաղորդել հիւլէա– կան գաղտնիքները:

ՄՈՍԿՈՒԱՅԻ ակնոցով աշխարհ երեք մասերու կարելի է բաժնել: Նախ ըն – կերվարական պլոքը զոր կը ղեկավարէ համայնավար կուսակցութիւնը որմէ սա– կայն իրենք զիրենք դուրս կը ձգեն Չի– նացիք, Ալպանացիք, Հիւսիսային Քո – րէացիք եւ զուցէ Հիւսիսային Վիէթնամ– ցիները: Ասոնց մէջ կարելի է հաշուել նաեւ «երրորդ – աշխարհի» ուժերը: Յետոյ կուգան արեւմտեան «խելօք» ու– ժերը եւ առաջին կարգին վրայ՝ Միաց– եալ Նահանգները եւ Անգլիա: Եւ վերջա– պէս «ռազմապաշտները» Փեքինի եւ Փա– րիզի, եւ Պոնի վրէժխնդիրները, ոխերիմ թշնամի խաղաղ համակեցութեան:

ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ութ ձայնով (ոչ մէկ դէմ բայց երեք ձեռն – պահ՝ Ամերիկա, Անգլիա, Ֆրանսա) ափրիկեանական բանաձեւ մը քուէար – կեց «անմիջական կերպով» խնդրելով Փորթուկալէն որ անյապաղ սկսի իր ա– պագաղթականացումը անդրծովեան իր հողամասերէն: Լիզպոնի Արտաքին նա – խարարը խիստ կերպով բողոքեց ձեռք առնուած այս միջոցներուն դէմ:

ՎԱՏԻԿԱՆԻ կիսապաշտօնաթերթը՝ Օս– սեռվաթոռէ Ռոմանօ կը գգուշացնէ Փա– րիզը եւ Փեքինը այն բացասական դիրքին համար զոր որդեգրած են Մոսկուայի համաձայնագրին նկատմամբ:

Օրէ Օրին

ՅԱՌԱՋ ԲՈՅԱԹԵԻ

ՅԱՌԱՋ ԲՈՅԱԼԵԶՈՒ

— Յառաջի հրատարակութեան տարե– դարձն է, լուր կուտայ Արփիկ:

— Քանի՞ տարեկան եղաւ Յառաջը, կը հարցնեմ:

Ծանօթ ամօթխածութիւնը չունի այս թերթը: Կը յայտնէ իր տարիքը: Նոյնիսկ պարծենալով, արդարօրէն:

— Երեսունեւութ տարեկան:

Հայելին կ'առնեմ, ինքզինքս կը դի – տեմ:

— Ո՞վ ես դուն, կը հարցնեմ ես ինծի:

Յառաջ երբ եկաւ աշխարհ, Արփիկ դեռ եկած չէր աշխարհ: Իսկ ես ուսանող էի, երիտասարդ: Մազերս առատ, եբենոսի գոյն, այսօր ալ դեռ սեւ: Բայց, Աստ– ուած–պապա, ինչի՞ կը ծառայեն այս սեւ մազերը, զիս ամչցնելո՞ւ... այս տա– րիքիս մէջ, որպէսզի ըսէի՞ թէ կը նախ– ընտրէի ճերմակ մազերով ծածկուած տեսնել գանկս, քան տաշած քարի պէս լերկ եւ ողորկ:

Թող մազե՛րս ըլլային միայն պակաս: Հապա աչքե՞րս: Հին օրերու Թրքուհի – ներուն նման՝ քօղի մը մէջէն կը նայիմ կարծես, աղօտ ու մշուշոտ: Է՛ր երբեմն, ծո՛ւխ կ'ելլէր աչքերէս, ներքին կրակի մը զօլը, կամ ինչպէս ամրան շողը, որ կը ծածանի հասուն դաշտերու վրայ, գինեւէտ այգիներու վրայ, նման այն ջերմութեան ալիքներուն, որոնք կը թըր– թռան օդին մէջ՝ ծաղիկներ բանալով, երազներ հիւսելով, յաւերժահարսներու ձեւեր ստեղծելով: Աչքերս էին որ քաղ– ցրութիւն մը կուտային կեանքին, նոյն– իսկ առարկաներուն՝ զորս կը տեսնէի շուրջս, կշտացնող բան մը կուտային հոգւոյս, որ կը լեցուէր յագեցումի զգա– յութեամբ: Աչքերս էին որ չէֆ տ'օր – քէսթրի պէս կը թրթռացնէին ամբողջ զգայարանքներս: Կատուի աչքեր որ կը ծակէին՝ խաւարն անգամ: Մութ մա – բազներու մէջ խաղցող աչքեր... արեւին ասեղներուն դիմացող աչքեր... հորի – զոնները մօտեցնող աչքեր... իսկ հիմա՞:

Հիմա աչքերէ՞ս գանգատիմ թէ ծուն– կերէս: Բայց ծունկերս իրե՛նք են որ կը գանգատին ինձմէ: Ճամիներուն շուքը պառկած համալը դարձուցիր մեզ, կ'ը – սեն, մեր վրայ բեռցնելով փոր մը՝ որ մուհասիրի չուվալ կը նմանի, մինչդեռ, է՛ր երբեմն, երբ գողութեան կ'երթա – յինք՝ տանձին ծառէն կը ցատկէինք ու ցանկապատներուն վրայէն դուրս կը նետուէինք՝ ինչպէս կատու մը, (այս թերթին մէջ հրատարակուած առաջին գրութիւնս տանձի գողութեան պատմու– թիւն մըն է,—կը յիշեցնեմ իբրեւ փաստ):

Է՛հ, սիրելի Յառաջ, ի՞նչ էինք, ի՞նչ եղանք:

Շաւարշ կ'ուզէր որ տոմս գրէի, յօդ– ուած գրէի (ուսումնասիրութիւն կամ քննադատութիւն), թարգմանութիւններ կատարէի (հէքեաթ կամ բանաստեղծու– թիւն): Իսկ ես կը գայթակղէի՝ առաջին օրերուն: Գրագէտը ենի ճամիին բակը նստած եաղըճի՞ն է, որ գրէ ամէն ժամ, տարաժամ, առանց իր ծունկերուն վրայ զգուելու իր Մուսան: Գրագէ՞տ կ'ըլլայ միթէ այն որ կը գրէ իրեն չվերաբերեալ նիւթերու մասին, որեւէ գեղարուեստա– կան հետաքրքրութիւն չներկայացնող ե– րեւոյթներու մասին, սոխին ու սխտորին մասին, օրուան անձրեւին մասին, մա – ռախլապատ ձմրան մասին, Աղա խանին կնիկներուն թիւին մասին: Օր մը Շա – ւարշ զիս բանտարկեց խմբագրատան մէկ սենեակին մէջ՝ յայտարարելով որ դուռը կը բանայ այն ատեն միայն, երբ գրած ըլլամ հէքեաթ մը կամ արձակ բանաս – տեղծութիւն մը: Ի՛նչ ամօթ, զօռով բան կ'ըլլա՞յ, ըսի ես ինծի: Եւ սակայն գրե– ցի՛, գրեցի ժամանակէ՛ն առաջ:

— Դուն լաւ խմբագիր մը կ'ըլլաս, ը– սաւ յաղթական:

Ապացոյցը տուեր էի՝ գրելով առանց Մուսայի:

Եղայ խմբագիր:

Եւ ապացոյցը տուի ետքէն՝ յաճախ մինակս խմբագրելով ամբողջ թերթը, երբ կը բացակայէր ինքը՝ խմբագրա – պետը:

Սկիզբը, Շաւարշ, Հրանտ – Սամուէլ եւ ես, կազմած էինք չէֆի մը: Յետոյ Հրանտ – Սամուէլ հեռացաւ, եւ ի վեր– ջոյ խմբագրատան մէջ մնացին երկու Շ.ները, (կարդացէ՛ք՝ ինչպէս որ կ'ու – զէք), այլ բացատրութեամբ՝ մեծ Շան եւ փոքր Շան, — այս վերջինը կրնաք թարգմանել նաեւ կատու: Արդարեւ, լաւ աշխատեցայ իբրեւ կատու, ճանկերս լայն բացած, խէրն անիծելով բոլոր մու– կերուն:

Այդ սովորութենէս դեռ երբեմն բնազ– դային ելոյթներ կ'արթննան մէջս, — է՛յ երիտասարդութիւն:

Հիմա, հայելիին մէջ, ինքզինք կը դի– տէ ձեզի ծանօթ կատուն: Ու չի ճանչ – նար ինքզինք:

Երեսունեւութ տարի է անցեր:

Մինչ մենք կը ծերանանք, Յառաջ կը քալէ յառաջ, շարունակ կ'ընթանայ յա– ռաջ, կ'աշխատի իր դրօշը պարզած եւ վրան արձանագրած՝ Յառա՛ջ:

Ուրեմն, Յառաջ բոցաթեւ, յառաջ բո– ցաշունչ, յառաջ բոցալոյս, յառաջ բո – ցավառ, յառաջ բոցափայլ, յառաջ բոց– արձակ, յառաջ բոցաճաճանչ, յառաջ բոցալեզու:

ԱՐԱԶ

ՄԱՐՔՍԻ ԾՆՆԴԵԱՆ ԴԱՐԱԴԱՐՁԸ

Երկաթէ վարագոյրին ետին տօնուեցաւ Մարքսի ծննդեան 145րդ տարեդարձը: Համայնավար մամուլը պանծացուց յեղափոխականը, մարգարէն, նոր դարու Արիստոտելը՝ «Մարքսի յայտնագործած օրէնքները անժխտելի են»: Մոսկուայի մէջ իր անունով կը պայքարին չինեւռուս աշակերտները, իրար կ՚ամբաստանեն ուղղափառութենէն հեռացած ըլլալու պնդումով: Համակեցութիւնը հակառակ կ՚ընդունուի ուղղափառութեան, տեղերական յեղափոխութիւն տապալելու համար դրամատէր աշխարհը, փոյթ չէ թէ ահաւոր աղէտի մը առջեւ պիտի գտնուի բովանդակ աշխարհը: « Պատմութեան զարգացման օրէնքը դասակարգային պայքար է, նախատեսեց կապիտալիզմի տապալումը, աշխատաւոր դասակարգի ազատագրումը »:

Հակառակորդ աշակերտները կը հաւատան, թէ՛ համակեցութեամբ թէ՛ յեղափոխութեամբ մարքսիզմը կը տիրապետէ երկրագունդի բնակչութեան մեծամասնութեան գիտակցութեանը:

Թութակները կը կրկնեն, ինչ որ սորված են:

Մարքսի վարդապետութիւնը, գիտական ընկերվարութիւն կոչուած, ընդօրինակութիւն մըն է: Շարլ Անտլէր, ընկերվարական ինքն ալ, ցոյց տուաւ փոխառութիւնները: 1829ին Պազար կը ծանօթացնէր Սէն Սիմոնի վարդապետութիւնը, ուր Ֆրանսացին դասակարգային պայքար, չահագործողներ եւ չահագործուողներ կը տեսնէր ընկերութեան մէջ: Երեք տարի վերջ Պլանքի կը յայտարարէր. « Հարուստները տուրք կը գանձեն աշխատաւոր դասակարգէն: Արդէն 1796ին «Հաւասարներ»ու մանիֆեստը կը յայտարարէր. « Մարդոց մեծամասնութիւնը կ՚աշխատի փոքրամասնութեան հաճոյքին համար »: Արհեստաւորներու խումբը կը հրատարակէր 1838ին յայտարարութիւն մը, յար եւ նման Մարքսի հրատարակած մանիֆեստին տասը տարի ետք: Ֆետերասիոն տէ ժիւսթը կը պահանջէր աշխատանքի ընդհանուր պարտաւորութիւն, պարտաւորիչ դաստիարակութիւն ամէն աստիճանի, պրոլետար դասակարգի տիքթաթօրութիւն: 1847 թուին Լոնտոնի մէջ կը գումարուի համայնավարներու ժողովը, որ կը տեւէ 10 օր եւ կ՚որոշուի հրատարակել մանիֆեստ մը, փոխելով Ֆետերասիոն տէ ժիւսթի «Մարդիկ եղբայրներ են»ը «Պրոլետարներ բոլոր երկիրներու, միացէ՛ք»ի: 22 Փետր. 1846ին Քրաքովիի մէջ տեղի կ՚ունենար համայնավար առաջին յեղափոխութիւնը, մեծ ուրախութիւն պատճառելով Մարքսի: Համայնավար կառավարութիւնը կը հռչակէր. «Իւրաքանչիւրը պիտի վայելէ երկրին բարիքները իր կարողութեան եւ արժանիքին համաձայն »: Գիւղացիները ջարդեցին լեհ հողատէրերը: Դրամագլուխի կեդրոնացում փոքրամասնութեան ձեռքը, զանգուածներու աղքատացում, ընկերային յեղափոխութիւն նախատեսուած էին Քոստանթին Փեքէորի «Առեւտուրի Շահերը» գործին մէջ, հրատարակուած 1838ին:

Համայնավարները ցնծութեամբ ողջունեցին գերման աստուածաբան Շթրաուսի «Յիսուսի Կեանքը» գործին երեւումը: Ձեռքէ ձեռք կը փոխանցէին յայտնութիւնը ժխտող, քրիստոնէութիւնը հեղնող գործը: Ժխտելու էր քրիստոնէութիւնը նոր կրօնը հաստատելու համար, որ իսկական ափիոն մը պիտի ըլլար զանգուածները օրօրող երկրային դրախտի մը չինութեամբ: Կը քարոզէին, թէ փոքրամասնութիւնը կը չահագործէ զանգուածները եւ իսկապէս համայնավար փոքրամասնութիւնը յեղափոխութեամբ եւ ոճիրներով ծանրաբեռնուած իշխանութեան պիտի հասնէր մեծամասնութիւնը չահագործելու համար, ջնջելով ամէն ազատ արտայայտութիւն:

Մարքսի վարդապետութիւնը հերքուած է:

Գերման ընկերվարական Պերնչթայն 1899ին հրատարակելով « Ընկերվարութեան վարկածները », կը մերժէր հիմնական տարրերը: Ժորժ Սորէլ կը տարբաղդրէր մարքսիզմը, յայտնելով թէ չկայ պատմական բնորոշականութիւն: « Ընկերային քայքայման տրամը հերոսի մը պէտք ունէր եւ հերոսը պիտի ըլլար պրոլետարը »: Մարքս իրողութիւնները կը ձեւէր կանխակալ գաղափարներուն, Սորէլ Պրոկուսի անկողնին վրայ չէր դներ իրողութիւնները: Լենին իրաւունք տուած էր Սորէլի տեսութեան, թէ Ռուսիա պիտի ըլլայ քաղքենի աշխարհը տապալողը, այսպէս աւելի յստակ կը տեսնէր քան Մարքս, որ չէր հաւատար ռուս յեղափոխութեան մը: Սորէլ մեռաւ 1922ին: Մահէն եօթը տարի ետք Փարիզի իտալական դեսպանը, յետոյ խորհ. դեսպանը, առանց մէկը միւսին ծանօթ ըլլալու, գացին յարգանք ընծայելու Սորէլի գամբանին եւ Թոնիկին առաջարկեցին յուշարձան մը կանգնելու ֆաշական եւ սովետ կառավարութեանց ծախքով: Առաջարկը փափկութեամբ մերժուեցաւ:

1926ին լոյս տեսաւ պելժիկացի ընկերվարական Հանրի տը Մանի «Ընկերվարութեան Հոգեբանութիւնը»: Իրողութեանց վրայ հիմնուելով ընկերվարականը կը ժխտէր դասակարգային պայքարը: «Մարքս աշխատաւորին տուաւ ճնշումի եւ շահագործումի զգացումը: Մեծ աղմուկ հանեց գործը, 75 տարեկան Քաուցքի, կը զարմանար թէ ինչպէս համոզուած մարքսիստ մը կրնար վարպետին վարդապետութիւնը հիմնական քննադատութեան ենթարկել: Դրամագլուխի կեդրոնացում չկայ, զանգուածներու կենցաղի մակարդակը հետզհետէ կը բարձրանայ, բարեկեցութիւնը կը ծաւալի: Պրոլետարներու միութիւն չկայ, ամերիկեան աշխատաւորները կ՚արգիլեն օտար աշխատաւորներու Ամերիկա մուտքը: Ընկերվարական Աւստրալիա կը մերժէ աշխատաւորներ ընդունիլ, թօշակները կախում ունին ճարտարարուեստի զարգացումէն, հում նիւթերու արժէքէն, արտադրութեան սպառումէն: Փաթրոնի եւ բանուորի շահերը հակառակ չեն, նոյն շահերն ունին: Բարեկեցութեան ծաւալումը կը հերքէ Մարքսի նախատեսութիւնը. «Դրամատիրութեան դրութեան մէջ զանգուածները հետզհետէ պիտի աղքատանան»:

×

Վարագոյրին երկու կողմերը կը տարբերին բանուորներու կենցաղի մակարդակը: Պրոլետար տիքթաթուրան բռնի, ոճիրներով սեփականացուց երկիր եւ գործարան, հիմնեց պետական դրամատիրութիւն մը:

Համայնավարը կը պահանջէր հողային սեփականութեան ջնջում. «երկիրը ոչ մէկուն կը պատկանի» կ՚ըսէր Հաւասարներու մանիֆեստը: Ազատ աշխարհի մէջ սեփականատիրութիւնը ընդհանրացած է, մեծ հողատէրեր չկան, արտադրութիւնը կ՚աւելնայ, որովհետեւ երկրագործը հոգածու է մեքենաներուն, ազատ կամքով կ՚աշխատի:

Խորհ. Միութեան մէջ հողագործը ստիպուած է աշխատելու պետութեան համար: Լէոնիտ Իլյիչեւ Կեդր. Կոմիտէի առջեւ կը խոստովանէր. «Միութեան մէջ դրամ, մեքենայ, գործիքներ կը մսխուին, կը քանդուին, կարծես թէ բարբարոսներու արշաւանք մը տեղի ունեցած է: Ոչ մէկ յարգանք կայ խորհրդային հարստութեան հանդէպ: Արտադրութեանց տեսակը յոռի է: Վրաստանի մէջ այս տարուան սկիզբը չատ կարեւոր եւ մեծարժէք մեքենաներ կային, որոնք անգործածելի մնացած են որպէս մեռած դրամագլուխ, չուրջ երեսուն միլիոն տոլար արժէքով: Իրողութիւնը նոյնն է ամէն կողմ»:

Վարագոյրէն ասդին վարիչ եւ բանուոր կը գործակցին արտադրութեան համար: Շուէտի մէջ 17 տարիէ ի վեր գործադուլ չկայ թէեւ արգիլուած չէ, ինչպէս վարագոյրէն անդին: Թօշակներու յաւելում կը կատարուի կարելիութեան սահմանին մէջ: Պետական են երկաթուղի, փոստ, հեռաձայն, մասնաւորին ունի բոլոր ձեռնարկներու մէջ: Տուրքերը ծանր են, կրթութիւնը ձրի է, օրօրոցէն գերեզման անհատին կեանքը ապահովուած է: Նոյն դրութիւնը ամէն կողմ՝ կեանքի ապահովութիւն, վճարուած արձակուրդ, ձրի կրթութիւն, յաջողակներու կրթաթոշակ բարձրագոյն ուսման համար:

Համայնավարութիւնը պատրաստ հող գտաւ յետամնաց երկիրներու մէջ, ուր գիւղացին հողագուրկ էր եւ ճարտարարուեստը խիստ տկար: Համայնավարները յառաջդիմութեան նպաստելու համար հաստատեցին բռնադատեալ վարչաձեւը: Համայնավարութիւնը միջոց մըն է ճարտարարուեստի զարգացման:

Շարլ Անտլէր կը հարցնէ. «Ուրկէ՞ է Մարքսի ժողովրդականութիւնը»: Շատ քիչերը կարդացած եւ հասկցած են իր գործերը: Դասակարգային ատելութիւն քարոզելով աշխատաւորներու զգացումները չահագործեց: Նոր վարիչներու համար համայնավարութիւնը եղաւ ափիոն, զանգուածները քնացնելու եւ բռնի իշխանութեան վրայ մնալու համար:

ԽՈՐԷՆ ԳԱԲԻԿԵԱՆ

ՄԵՏԱՂՆԵՐՈՒ ԺԱՆԳԸ

Խոնաւ օդին մէջ, կարգ մը մետաղներ, մանաւանդ երկաթը, կը ծածկուին ժանգի չերտով մը: Առանձնապէս երկաթն է, որ աւելի կը տուժէ ժանգոտումէն: Ըստ կարգ մը հաշիւներու, 33 տարուան ընթացքին (1890–1923) երկաթի ժանգոտումը, ամբողջ աշխարհի մէջ յառաջ բերաւ 720 միլիոն թոն երկաթի կորուստ մը, որ կը ներկայացնէ այդ ժամանակաշրջանի համաշխարհային արտադրութեան 41 առ հարիւրը:

Նախ, տեսնենք թէ որո՛նք են ժանգոտման պատճառները: Երկաթը կը ժանգոտի խոնաւ օդի, ջուրի եւ ածխաթթու կազին հպումով: Ընդհանրապէս, սակայն, ժանգոտումը բաւական բարդ երեւոյթ մըն է, քանի որ անոր պատճառներէն մէկն ալ մթնոլորտային ելեկտրականութիւնն է: Անգամ մը որ սկսի, ժանգոտումը կը չարունակուի մինչեւ որ երկաթին ամբողջութիւնը վերածուի ժանգի: Ժանգոտում պատճառող վերայիշեալ ազդակներէն զատ, կան ուրիշ պատճառներ ալ, որոնք մեծ թափով կ՚արագացնեն զայն: Այսպէս են բարձր ջերմութիւնը եւ թթուներու ներկայութիւնը օդին մէջ: Ածխաթթու կազի, բորակածինի (ազոթ) եւ ծծումբի (սուլֆր) թթուիտներու (օքսիտ) ներկայութիւնը օդին մէջ, չատ վնասակար է, որովհետեւ ջուրի գոլորշիներու ներկայութեան այս նիւթերը կը կազմեն համապատասխան թթուները, որոնք իրենց կարգին կ՚արագացնեն եւ կը սաստկացնեն ժանգոտումը: Աղերն ալ նոյն ազդեցութիւնը կը գործեն: Երբ մթնոլորտին մէջ գտնուին աղերու մասնիկներ, ժանգոտումը կ՚արագանայ: Ահա թէ ինչու ծովամերձ եւ աղի լիճերու չրջաններուն մէջ ժան-

ՋԱՂԱՑՔԻՆ ՃԱՌԸ

Սակայն ճշմարտութեան ուժը շատ աւելի մեծ է, քան Դաշնակների նողկալի յերիւրանքները: Կարաւան – կարաւանի ետեւից դէպի մայր Հայաստան են գալիս հազարաւոր սփիւռքահայեր, որոնք իրենց շնորհակալութեան առաջին խօսքն են ուղղում կոմունիստական պարտիային, սովետական կառավարութեանը եւ անձամբ ընկ. Խրուշչովին»:

Հայաստանի Երգահաններու Միութեան վարչութեան նախագահը՝ Է. Միրզոյեան «անբաւարար» գտած է օփերայի սեռին արտադրութիւնը: «Ճիշտ է, դիտել տըւած է ան, որ Ա. Յարութիւնեանն աշխատում է «Սայաթ–Նովա» օփերայի վըրայ, բեմադրութեան է պատրաստւում «Արա Գեղեցիկ» մի գործողութեամբ պալէն: Բայց դա մեզ չի կարող բաւաբարել: Մենք պէտք է լուծենք մեր գըլխաւոր խնդիրը՝ արդիական թեմատիկայով օփերայի եւ պալէի ստեղծման խնդիրը»:

Համայնավար երիտասարդական կազմակերպութիւններու անունով խօսք առած է Ջ. Հայրաթեան, որ ի մէջ այլոց յայտարարած է, թէ «մեզանում դեռեւս զգալի թուով երիտասարդներ կոպիտ կերպով խախտում են սոցիալիստական համակեցութեան նորմաները, պարազիտային կեանք են վարում, թոյլ են տալիս զանազան զանցանքներ եւ նոյնիսկ յանցագործութիւններ, նիհիլիստաբար են վերաբերւում մեր իրականութեանը: Փաստերը ցոյց են տալիս, որ այդ հակահասարակական երեւոյթների համար սնուցիչ հող են հանդիսանում գրագիտութեան պակասը, տգիտութիւնը, անկուլտուրականութիւնը, կոմերիտական կազմակերպութիւնների դաստիարակչական թոյլ աշխատանքը:

Բարձրագոյն եւ միջնակարգ մասնագիտական կրթութեան կոմիտէի նախագահը՝ Գ. Հայրեան, դիտել տալէ ետք, թէ «Հասարակական գիտութիւնների ամպիոնները դեռ անբաւարար մասնակցութիւն են ցոյց տալիս ուսանող երիտասարդութեան կոմունիստական դաստիարակութեան գործին», զարմանալի կը գտնէ, որ «ձմեռային պալատը գրոհով նուաճած եւ այնուհետեւ հին աշխարհի փլատակների վրայ նոր կեանք կառուցած, հայրենիքի փառքը աստղերին հասցրած մարդը յաճախ մնում է իր հոյաչէն գործերի ստուերում»:

Հայաստանի Գիտութիւններու Ակադեմիայի պատմութեան կաճառի տնօրէնը՝ Գ. Գալոյեան չեշտած է թէ «Բուրժուական գաղափարախօսութեան դէմ մղուող ընդհանուր գոտեմարտում՝ մենք յատուկ ուշադրութիւն պէտք է նուիրենք Դաշնակցութեան դէմ մղուող պայքարին:

«Դաշնակցութիւնը ապրում է իր հոգեվարքի շրջանը եւ վայրենի ջղաձգութիւնների է դիմում, շարունակում է կատաղի պայքար մղել մեր ժողովրդի դէմ: Նրանք քաջալերւում եւ ֆինանսական օգնութիւն են ստանում իմպերիալիստական կառավարութիւնների եւ, ամէնից առաջ, Մ. Նահանգների կողմից: Դաշնակները կատաղի հակասովետական պրոպագանդա են մղում սփիւռքահայ շըրջանում, ամէն կերպ աշխատում խոչընդոտել հայրենադարձութիւնը Ս. Հայաստան:

«Այս բոլորից հետեւում է, որ անհրաժեշտ է անողոքաբար մերկացնել Դաշնակցութեան այլանդակ, ազգադաւ քաղաքականութիւնը, նրանց մեքենայութիւնները»:

Հայաստանի Լուսաւորութեան նախարարը՝ Հ. Մարգարեան թոյլ գտած է թատերական գործունէութիւնը Հայաստանի մէջ. «Թատրոնների ռեպերտուարը, ներկայացումների գաղափարագեղարուեստական որակը դեռեւս ետ են մնում հանդիսականի էսթետիկական (գեղագիտական) աճող պահանջներից: Թատերախաղերի զգալի մասը շատ թոյլ է պատկերում կոմունիստական հասարակութեան կառուցման թափը, չեն ստեղծւում խոր, էմոցիոնալ հերոսներ, չեն շեշտւում կեանքում ու աշխատանքում այն նոր, տիպական յատկանիշները, որոնք ունեն սովետական մարդիկ: Բեմադրուող թատերախաղերի զգալի մասը գաղափարագեղարուեստական արժանիքների տեսակէտից դեռեւս չի բաւարարում այսօրւայ պահանջները»:

Նախարարը՝ Հ. Մարգարեան քննադատած է նաեւ «Հայֆիլմ»ի գործունէութիւնը. «Ստուդիայի ղեկավարութիւնը, ըստ երեւոյթին, բաւականաչափ լուրջ չի վերաբերուել այն իրաւացի քննադատութեանը, որը բազմիցս արուել է ստուդիայի հասցէին, չի վերակառուցել իր աշխատանքը: Այլապէս ինչո՞վ բացատրել, որ հանդիստ խղճով ծախսելով այն խոշոր գումարները, որոնք յատկացւում են ֆիլմերի թողարկման համար, ստուդիան շարունակում է արտադրել գաղափարական եւ գեղարուեստական տեսակէտից թոյլ, արժէքազուրկ ֆիլմեր»:

(3 եւ վերջ)

ԿԱՐԴԱՑԷՔ ՏԱՐԱԾԵՑԷՔ «ՅԱՌԱՋ»

...աւելի չուտ տեղի կ'ունենայ։ ...ումը ...եցնելով, ըսենք թէ ժանգոտումը ...կուգայ այն պարագային, երբ ...րը կը պարունակէ թթուածին, ...թթուներու գոլորշիներ եւ աղեր։ ...թթուներու ...ական է, որ արդիւնաբերութեան ...մետաղեայ մասերը, որոնք ուղ... այն չփման մէջ են վերոյիշեալ ազդակ... հետ, դատապարտուած են ժան... հետեւաբար կորուստի, եթէ ...ելու միջոցներ ձեռք չառնուին։ ...կրակիսի գործարաններուն, ...գամն սարքաւորումներուն, ...պահարաններուն մէջ յառաջ կու... կարգ մը նիւթեր եւ պայմաններ, ...կ'արագացնեն ժանգոտումը (ծը... գոլորշիներ, բարձր ջերմաստի... եւայլն)։ Եթէ ըսենք նաեւ, որ հա... վերջին տասնեակներուն մեծ թա... յառաջ կը տարուի բացօթեայ գոր... կառուցումը, կը տեսնենք, ...ժանգոտման կանխարգիլումը մեր օ... թէքնիք ամէնէն կարեւոր խնդիր... մէկն է։

Ինչպէս կարելի է արգիլել ժանգո... ...ումը։ Գլխաւոր սկզբունքը այն է, թէ ...թը պէտք է ծածկել տարբեր նիւթէ ...երեսային շերտով մը, որ արգիլէ ...մետաղին հպումը օդին հետ։ Ասոր հա... կան բազմաթիւ ձեւեր, որոնցմէ ...ք հետեւեալները։— մետաղը ծած... հանքային իւղով մը, օրինակ, նաւ... թայով (վազըլին)։ Մետաղը ծածկել ...ով պատրաստուած ներկով մը։ Ու... պարագաներու մէջ երկաթը կը ծած... կարգ մը չժանգոտող մետաղներով, ինչպէս են՝ ոսկին, արծաթը, զինկը, ...ը եւ նիքէլը։ Թիթեղը, որով կը ծածկեն չնքերը, երկաթի բարակ շերտ ...է ծածկուած զինկով։ Իսկ պահածո... տուփերը ծածկուած են անագով։ ...ային գործածութեան ամանները կը ծածկուին արծնիի (էմայլ) շերտով մը։

Ժանգոտումը կանխարգիլող այս եղա... ...ները կրնանք դասական անուանել։ Վերջին տարիներու ընթացքին գործա... ...ուրիշ եղանակ մը, որով երկաթը ...ը ծածկեն արուեստական կերպընկալ ...իւթերով, ինչպէս են՝ վինիլինը եւ փո... ...իէնը։ Ծխնելոյզներու եւ մետաղ... այլ չինութիւններու համար, կ'օգտա... ...ուին նաեւ սիլիքոնային ջնարակներ ...ք կը դիմանան մեծ ջերմութեան (մինչեւ 500 աստիճան)։ Գոյութիւն ու... նաեւ զանազան նիւթեր, որոնք կը ...ման աղի ջուրի եւ որոնք կ'օգտա... ...ուին քիմիական ճարտարարուեստի ...սարքաւորումներուն մէջ։

Մասնագէտներու մտահոգութիւնը այն է թէ նոր նիւթերու յայտնաբերման հետ ...ապնդուի նաեւ այդ նիւթերու գե... ...կագիտական արժէքը։ Այսպէսով նոր ...սարքաւորումները պիտի ունենան աւելի երկար կեանք եւ աւելի պիտի համապա... ...ախանեն գործնական նոր նուաճում... ...րուն եւ պահանջներուն։

Թ. Ա. Թ.

ՁԱՅՆԵՐ ԳԱՒԱՌԷՆ

ՀԵՐՈՍՆԵՐՈՒ ՕՐԸ
ՄԱՐՍԷՅԼԻ ՄԷՋ

ՄԱՐՍԷՅԼ (Յառաջ)։ — Հերոսներու օրուան առիթով կատարուած տարեկան ղաշտահանդէսը, կ'ընծայէ գեղեցիկ առիթը Մարսէյլի Հայութեան, բնութեան ծոցին մէջ ամբողջ օր մը միասին անցընելու եւ միաժամանակ իր յարգանքը ընծայելու, Յուլիսեան լուսաւոր առաւօտ մը Հայոց պատմութեան գեղեցկագոյն էջերէն՝ Խանասորի արշաւանքի կերտիչներուն անմոռաց յիշատակին։

Հակառակ չարաթ օրուան աննպաստ օդին ու անձրեւին, կիրակի օր ունեցանք կապոյտ երկինք մը ու Մարսէյլի յատուկ պայծառ արեւ մը, ու առաւօտ կանուխէն ժողովուրդը հեռաւոր թաղերէն եւ մինչեւ իսկ Ավինեօնէն սկսաւ խուժել դէպի ժամադրավայր, ուր դիրենք առաջին դիմաւորողները կ'ըլլային ֆըրանսական եւ հայկական դոյգ եռագոյնները։ Նոր Սերնդականները կը հսկէին կարգապահութեան ու հայկական երգը կը լեցնէր ամբողջ շրջապատը։

Ամբողջ օրը օտար հիւրերը հիացումով դիտեցին ու յաճախ մասնակցեցան հայկական շուրջպարին ուր միշտ նախաձեռնողներն էին Նոր Սերնդականները, եւ միաժամանակ յեղափոխական երգերով կը թնդացնէին շուրջբոլորը։

Օրուան խօսնակ՝ ընկ. Սեպուհ Ասատուրեան ժամը 4ին բացուած յայտարարեց պաշտօնական բաժինը, հրաւիրելով Նոր Սերնդականները, որպէսզի երգեն «Մշակ բանուոր»ն ու «Կարկուտ տեղաց»ը, որմէ ետք օրուան նախագահը՝ ընկ. Ժիրայր Տէր-Վարդանեան գրաւոր ճառով մը բացատրեց օրուան իմաստը, ծանրանալով Նոր Սերունդի առաքելութեան վրայ։

Ապա՝ արտասանութիւն, նուագ, երգ, ու ներկաները առիթն ունեցան ծափահարելու Սէն-Լուի վերակազմուած Նոր Սերունդի «Սիամանթօ» խումբին պարախումբը, հակառակ որ դեռ սկսնակներ են, արդէն բաւական ճամբայ կտրած են անոնք ու զաղութը կը փափաքի զիրենք միշտ տեսնել հանրային կեանքի բեմին վրայ։

Իր կարգին խօսք առաւ քաղաքապետը, որ ջերմ խօսքերով ողջունեց հայ ժողովուրդը, գնահատելով անոր արժանիքները։

Օրուան գլխաւոր բանախօսն էր ընկ. Վ. Մխաէլ որ խնամուած ու գեղեցիկ ճառով մը զոյգը հիւսեց Դաշնակցական հայդուկին. «Հայդուկը եղաւ այն առասպելական տիպարը, որ կազմաւորուեցաւ Դաշնակցութեան դրօշին տակ եւ որ իր հայրերուն զաղափարական դրօշը բարձր բռնած, հայրենի լեռներուն ու կիրճերուն մէջ իր կեանքը մատաղ ըրաւ հայ ժողովուրդի փրկութեան սուրբ խորանին վրայ։ Ան եղաւ չարը հարուածող արդարութեան բազուկը եւ որուն նմանը քիչ կը տեսնենք ժողովուրդներու պատմութեան մէջ»։

Հայկական ու եւրոպական պարերով շարունակուեցաւ յայտագիրը մինչեւ երեկոյեան ժամը 8ը, երբ ժողովուրդը սկսաւ կամաց կամաց վերադառնալ, ուրախ օր մը անցուցած եւ հերոսներու հանդէպ իր պարտքը կատարած ըլլալու գոհունակութեամբ։

ՆՈՐ ՍԵՐՆԴԱԿԱՆ

×

ԿՈՒԸՆՈՊԼԻ ՄԷՋ

ԿՈՒԸՆՈՊԼԸ (Յառաջ)։— Խանասորի պատմական արշաւանքի 66րդ տարեդարձը տօնուեցաւ Յուլիս 21ին Սէնիզէի հովասուն դաշտին վրայ, նախաձեռնութեամբ Հ. Յ. Դաշնակցութեան Եօթնեղբայրեան կոմիտէին եւ մասնակցութեամբ Նոր Սերունդին եւ Կապոյտ Խաչին։

Հաւատաւոր եւ խուռն բազմութիւն մը եկած էր Կրընոպլէն, հեռաւոր Ռընաժէն եւ Լանսէյէն իրենց յարգանքի տուրքը տալու հայ ազատագրութեան ճամբուն վրայ զոհաբերուող հերոսներու յիշատակին։ Հիւրեր ունէինք Տէսինէն եւ Իրաքէն։

Սովորական դաշտը պահ մը հայացած էր. անընդհատ կ'արձագանգէին Պ. Իւլըիչի բարձրախօսի միջոցաւ մեր սիրելի հայրենիքին խրոխտ եւ անուշ երգերը, ներկաներու հոգիին մէջ հրճուանք եւ խանդավառութիւն ներարկելով։

Կատարեալ ուխտավայրի տեսարան մը կը ներկայացնէր մեր այս եղակի դաշտահանդէսը, որուն պաշտօնական բացումը կատարեց ընկ. Ղ. Թորոսեան, իբրեւ նախագահ որ շեշտեց թէ Խանասորի արշաւանքին կռիւը պատուոյ եւ ինքնապաշտպանութեան պայքար էր. անոնք կռուեցան ու պատնէշի վրայ ինկան, սակայն անոնց անունն ու յիշատակը մեր սրտերուն մէջ պիտի մնայ անջնջելի։

Նոր Սերունդի երգչախումբը մեծ եռանդով երգեց աւանդական «Կարկուտ տեղաց»ը եւ «Յառաջ նահատակ»ը, ղեկավարութեամբ ընկ. Ե. Մարաշլեանի, ապա սկսաւ գեղարուեստական բաժինը։ Յաջողապէս, բարձրախօսի առջեւ ըղդայնութեամբ արտասանեցին եւ մեներգեցին օրիորդներ և ընկերներ Ա. Գէորգեան, Խ. Անտոնեան, Ս. Մարաշլեան, Մ. Օնպաշեան եւ Հ. Սիմոնեան։ Իսկ ընկերուհի Շաքէ Մարաշլեան իր կիրթ եւ քաղցր ձայնով երգեց «Պարգեւ աղբիւր»ը զարձեալ յուզելով մեր հայրենակարօտ սրտերը։ Բոլորն ալ արժանացան բուռն ծափերու։

Իրաքի մեր ընկերներէն Իշխան Մարտիրոսեան ուղերձ մը կարդաց Նոր Սերունդին կողմէ, նուիրուած Խանասորի արշաւանքի հերոսներու յիշատակին։

Ազգային Միութեան անդամներէն Պ. Կարապետ Մառանճեան, որ նոր վերադարձած էր Հայաստանէն, իր տպաւորութիւնները պատմելէ վերջ, երգեց երկու մարտական երգեր։

Օրուան խօսնակ ընկ. Ե. Մարաշլեան, բեմ հրաւիրեց օրուան բանախօսը ընկ. Տիգրան Չէքեան (Լիոնէն), որ նախ յետադարձ ակնարկ մը նետեց 1880-1890ական թուականներու վրայ. աhուսարսափներու մէջ կ'ապրէր խաղաղասէր եւ չինարար հայ ժողովուրդը։ Ամէն օր կրակ կը թափէր հայ գիւղերուն վրայ, ջարդ, հրկիզում, սպանութիւն եւ տանջանք։ Ահա այս մռայլ օրերուն էր որ հրապարակ եկաւ Հ. Յ. Դաշնակցութիւնը։ Անուհետեւ նկարագրեց Պանք Օթոմանի, Սասունի եւ Վանի հերոսամարտերը։ Յետոյ անդրադառնալով մեծ դէպքին, ընկերը ըսաւ թէ.— 1895ին, երբ Պետոյի, Մարտիկի եւ Աւետիսեանի խումբերը Պարսկաստան պիտի անցնէին, սահմանագլուխին վրայ կը պաշարուին քիւրտ աշիրաթապետ Շարաֆ պէկի կողմէ, հերոսական կռուէ մը վերջ բոլորն ալ կը նահատակուին։ Հ. Յ. Դաշնակցութիւնը կ'որոշէ վրէժը լուծելու։ Վրէժխնդրութեան արշաւանքը նոր զոհերու պէտք ունէր, երիտասարդութիւնը իր ծաղիկ կեանքը երբեք չախայեց։ 1897 Յուլիս 25ին 250 ուխտեալներ կը հաւաքուին Հ. Յ. Դաշնակցութեան դրօշին տակ «մահ կամ ազատութիւն» ըսելով, յարձակում կը գործեն Մազրիկ ցեղին վրայ։

Ընկերուհի մը ձեռագործով հիւսած էր Սասունցի Դաւիթի արձանը, զոր նուիրեց Նոր Սերունդին։ Աճուրդի դրուելով 300 ֆրանքի գնուեցաւ Պ. Ա. Ուզուրլեանի կողմէ։

Երեկոյեան ուշ ատեն ժողովուրդը չուզելով բաժնուեցաւ այս հայկական մթնոլորտէն։

Վ. Խ.

ԿԱՐԺԷ ԳԻՏՆԱԼ

Լրագրող մը ամերիկացի միլիոնատէրի մը հետ տեսակցութեան մը ընթացքին կը հարցնէ.

— Գիտեմ թէ դուք ձեր ուշիմութեամբ եւ ճարպիկութեամբ հասած էք ձեր այսօրուան դիրքին։ Կրնա՞ք ինծի ըսել թէ ինչպէս սկսաք ձեր դրամատան ձեռնարկութեան։

— Շատ պարզ էր։ Տանս վրայ կախեցի «Դրամատուն» վերտառութեամբ ցուցատախտակ մը։ Առաջին մէկը եկաւ եւ յիսուն տոլար պահ դրաւ։ Ուրիշ մէկը մըն ալ հարիւր տոլար դրաւ։ Երրորդ ցաւաղար մը երկու հարիւր տոլար պահ դրաւ։ Այլեւս համոզուեցայ թէ գործը լաւ ճամբու մէջ է եւ որոշեցի իմ խնայած երեսուն տոլարս ալ պահ դնել, կը պատասխանէ միլիոնատէրը։

«ՅԱՌԱՋ»Ի ԹԵՐԹՕՆԸ (194)

ԸՂՏԸՋԻ ՊՈՄՊԱՆ

ՀԱԶԱՐ ԻՆԸ ՀԱՐԻՒՐ ՋՈՐՍ

Միւս ամբաստանեալներն ալ նոյն անձնապարտ նպատակը ի գործ դնելու համար ուժը, ուժանակ եւ ուրիշ ահեղի հրանիւթեր ու գործիքներ փոխադրած եւ պահած են, եւ կոմիտէին ալ դեկցութիւնը եւ անդամներուն թիւը աճեցնելու եւ գործառնութիւնները կանոնաւորելու համար զանազան եղանակներով մասնակցած եւ օժանդակած են, եւ յեղափոխական նպատակներու իրագործման միջոցներուն հայթայթումը իրենց համար սկզբունք եւ պարտականութիւն ըրած են։

Անոնք բոլորը յանդգնած են մանրամասնօրէն պատմուած մեծ ոճիրները գործելու, կամ անոնց գործադրութեան մասնակցելու, ինչ որ նիւթապէս կը հաստատուի իրենց խոստովանութիւններով եւ մանրամասն յայտարարութիւններով, պաշտօնական թուղթերով եւ թղթակցութիւններով, բազմաթիւ վկայութիւններով, Պանքայէն հանուած արձանագրութիւններով, իրենց ձեռք բերած պայթուցիկ եւ քանդիչ նիւթերուն եւ գործիքներուն դուրս հանուելովը, կառքին բեկորներուն վրայ կատարուած գիտական քննութեանց տեղեկագրերով եւ դեռ ուրիշ դրական ապացոյցներով։

Պատժական իրաւանց համեմատ բացայայտ է անոնց գործած ոճիրներուն եւ զանազան եպերելի արարքներուն մէջ կապակցութիւն գտնուիլը, որովհետեւ ասոնք իրենց մէջ նախապէս տրուած որոշման վրայ համաձայնութիւն գոյացուցած են, եւ ամէնքն ալ միեւնոյն անխծապարտ նպատակը յաջողցնելու համար ձեռք ձեռքի տալով աշխատած են համագործակցօրէն եւ մէկուն սկսած գործը միւսը ամբողջացուցած է։

Այս զանազան արարքներուն մէջ բոլորն ալ միեւնոյն նպատակին եւ անոր իրականացութեանը կը ձգտէին, հետեւաբար բացայայտ ճշմարտութիւն մըն էր որ այդ բոլորին եղեռնական գործերը մաս կը կազմէին այս անխծապարտ նպատակը իրագործելու ձգտող պայմաններուն։ Բացայայտ է նաեւ որ այս ամբաստանեալները, տեղ տեղ եւ զանազան կողմեր եղեռներ գործելու համար ռումբեր ու ուժանակներ փոխադրած եւ պահած էին, որպէսզի զանոնք պայթեցնելով՝ տուներ քանդեն, եւ բազմաթիւ անձերու սպանումի պատճառ դառնան։

Ուրեմն ասոնք այս կարգի եղեռնական եպերելի նպատակներ հետապնդող վատ անիշխանականներ են։ Ամբողջ աշխարհ գղուանքով կը յիշէ եւ անէծք կը կարդայ այսօրինակ եղեռնագործներուն, որոնք մարդկային ազգին վնասելու վայրագութիւնը ունենալով՝ պատճառ կ'ըլլան բազմաթիւ անձերու սպանման, այնքան ընտանիքներուն անպատսպար եւ անապրուստ թշուառ վիճակի մը ենթարկուելուն։

Գալով սա պարագային թէ իրենց գործած ոճիրը քաղաքական հանգամանք ունի՞ թէ ոչ, ըսենք թէ ճշմարիտ է որ ասոնց կարգ մը յեղափոխական ծրագիրները եւ դիտումները քաղաքական նորօրինակ գոյն մը կը պարզեն, բայց իրողութիւնը այնպէս չէ։ Ամբաստանեալներուն բոլոր խռովարարական դիտումները ծրագրային վիճակի մէջ մնացած են. միակ եղեռնը զոր կրցան գործել, Սելամլըգի արարողութեան վայրը կառքով պայթուցիկ փոխադրել եւ հոն պայթում մը առաջ բերելով ծանօթ թուով անձերու սպանման եւ վիրաւորման պատճառ ըլլալնին է։

Իրենց այդ եղեռնական արարքն ալ մտադրուած խռովայոյզ նպատակը առաջ չէ բերած, եւ շնորհիւ Վեհ. Կայսեր, իրենց այդ անխծապարտ նպատակը ամբողջովին ամուլ մնացած է։ Հետեւաբար ոճիրին բուն հանգամանքը ճշդելու համար նկատի առնուելիք եւ վերլուծուելիք իրաւագիտական կէտը այն քաղաքական տեսակէտը չէ, որ ոճիրին հաւանական հետեւանքը միայն կրնար ըլլալ եւ որ սկզբամբ եւ հիմնովին ծրագրային վիճակի եւ ամբաստանեալներուն երեւակայութեան ու ցնորքին մէջ մնաց։

Ընդհակառակն, բուն ոճիրը այն է որ պայթուցիկ նիւթը Սելամլըգի բարձրագոյն վայրին մօտեցուցած, հոն մղուցած, եւ անոր պայթումին հետեւանքով այնչափ մարդոց մահուան պատճառ եղած են եւ այսպէս ժողովուրդը ահ ու սարսափի մէջ ձգած են ինչ որ անիշխանութեան միակ գետնաքարշ նպատակն է։

Տէ'ր նախագահ, ինչպէս ամէն տեղ, ամէն երկրի օրէնքներուն եւ ընդհանուր օրէնսդէտներուն առջեւ յայտնի է, սխալ եւ ամօթ է քաղաքական նպատակ վերագրել բոլոր Մարդկութեան համար փորձանք եւ մեծ վտանգ մը հանդիսացող տինամիթ-ճիներու, պոմպաճիներու, հըրձիգներու եպերելի եւ վայրագ արարքներուն։

ՍՄԲԱՏ ԲԻՒՐԱՏ

('Շար.)

ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ՏԱՆ

Տէր եւ Տիկին Գարեգին Գէորգեան 30 Ֆրանք կը նուիրեն Մշակոյթի Տան Ս. Թէհլիրեան սրահին, Տէր եւ Տիկին Հրայր Թորոսեանի երկրորդ զաւկին ծննդեան առթիւ։

(Ստանալ «Յառաջ»էն)։

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Պ. Ոսկեան Նալպանտեան, Տէր և Տիկ. Յովհաննէս Նալպանտեան, Տէր եւ Տիկին Աշոտ Նալպանտեան, Տէր եւ Տիկին Նշան Քօրդոշեան կը ծանուցանեն թէ հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարեն իրենց կնոջ, մօր եւ զոքանչին

ՏԻԿԻՆ ԽԱԹՈՒՆ ՆԱԼՊԱՆՏԵԱՆԻ

եւ իրենց քրոջ ու հօրաքրոջ

ՏԻԿԻՆ ԹԱԳՈՒՀԻ ՃԱՌԱՅԵԱՆԻ

մահուան քառասունքին առթիւ, այս կիրակի առաւօտ (Օգոստ 4) Լիոնի Ս. Յակոբ եկեղեցիին մէջ։

Կը հրաւիրուին ողբացեալներուն յիշատակը յարգողները։

ՖՐԱՆՍԱՀԱՅ ԿԱՊՈՅՏ ԽԱՉԻ ՕԴԱՓՈԽՈՒԹԵԱՆ ԿԱՅԱՆ

ՎԵՐԱԴԱՐՁ

’ Ֆրանսահայ Կապոյտ Խաչի Օդափոխութեան կայանի մանուկներու առաջին խումբի վերադարձը, Օգոստոս չորսին, առաւօտուն ժամը 6.15ին, կառ տը Լիոնի մէջ հանդիպում ծնողքներու եւ մանուկներու ։

×

ՓԱՐԻԶԻ ԽՈՒՄԲԻ ՄԵԿՆՈՒՄԸ

Փարիզի խումբը կը մեկնի բուրիսթիք *օթօքառով այս երկուշաբթի առաւօտ, Օգոստոս 5։ ժամադրավայր՝* Սպուառ Մոնթոլոն, *Ռիւ Լաֆայէթ ժամը առաւօտեան 6,30ին։ Խումբը նոյն իրիկունը կայան կը հասնի։*

×

ՄԵԿՆՈՒՄ

ԼԻՈՆ.— Ֆր. Կապ. Խաչի օդափոխութեան կայանի մանուկները կը մեկնին Օգոստոս 4ին կիրակի օր, հաւաքոյթ ժամը 16ին ՓԷՌԱՇ, կայարանի մուտքի մեծ ժամացոյցին տակ։

×

Մարսէյլի *խումբերը կը մեկնին Օգոստոս* 4ին։ *Հաւաքատեղի՝* ԿԱՌ ՍԷՆ-ՇԱՐԼ

Լիոնի խումբը կը մնայ նոյն ընթացքին՝ իր քաղաքէն։

··· ՖՐԱՆՍ 1··· ՕԳՈՍՏՈՍ 7···

FRANCE - I

« LES HEURES ARMENIENNES »

ՌՈՒԲԷՆ ՄԵԼԻՔ – ԽԻԱ ԿՐԻԼԻՔԷՉ

պատրաստած են

« Հայկական կէս ժամը »

Չորեքշաբթի՝ Օգոստոս 7, ժ. ը 22.20

Յայտագրին գրական բաժնին մէջ՝ Սայաթ – Նովա, Վարուժան, Զարենց, Թէքէեան...։

Ֆրանսերէն կ’արտասանէ՝

ՍԵՐԺ ՌԵԺԻԱՆԻ

ԺԱՄԸ 22.20··· ՕԳՈՍՏՈՍ 7

ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ

Կազմակերպուած Փոն տը Շերիի Ազգային Միութեան կողմէ, այս կիրակի, Թրիփլիէ դաշտին վրայ, առաւօտէն մինչեւ երեկոյ։

Առատ կերուխում։ Շամփուրով խորոված։

Մուտքը ազատ է

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

ԼԻՈՆ.— Ֆր. Կապ. Խաչի Օրը կը տօնուի մեծ պատրաստութեամբ, 27 Հոկտ. Մոլիէրի չքեղ սրահին մէջ։

Imprimerie Speciale du Journal « Haratch »
32, Rue de Trévise, Paris (9e)

Լոյս Տեսաւ



Մատենաշար — ՅԱՌԱՋ — կեդրոնավայր

Գին

Ֆրանսա՝ 15 Ֆր.

— Առանձին առաքումի ծախքը —

« ՅԱՌԱՋ »

ՍԱՄՈՒԷԼ ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ՆՈՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Իրենց զաւակները արձանագրել փափաքող ծնողքները պէտք է փութան դիմել տեսչութեան հասցէին ։


COLLÈGE ARMÉNIEN SAMUEL MOORAT
26, Rue Troyon, SEVRES (S. et O.)
Tél. : OBS. 18-28

Եւրոպայի մէջ, հայ մանչերու համար հիմնուած, ֆրանսական եւ հայկական ուսումնական կատարեալ ծրագիրներով օժտուած մեծագոյն եւ ծաղկեալ ուսումնարանն է Սեւրի Սամուէլ Մուրատեան վարժարանը, որուն սեմէն ներս հայ մանուկին հոգին, միտքը եւ մարմինը կը մեծնայ, կը ծաղկի եւ կ’ընդլայնի բաղձալի համեմատութիւններով ։

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Տիկ. Միութեան Որբերու Օգնութեան Մարմինը տրամադիր ըլլալով քանի մը անպաշտպան տղոց հայեցի դաստիարակութիւնը հոգալու, հարկ կը համարի ծանուցանել, որ շահագրգռուողները այժմէն դիմեն իրեն գրաւոր իր կեդրոնատեղին, 15 Ռիւ Ժան Կուժոն։

ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԱՌԹԻՒ
ՅԱՃԱԽԵՑԷՔ



ՃՕՇԿՈՒՆԵԱՆ-ՈՐԴԻ

ՄԱՐՍԷՅԼԻ ԾԱՆՕԹ ՃԱՇԱՐԱՆԸ

Ուր պիտի գտնէք արեւելեան համադամ կերակուրներ եւ մասնաւորաբար

ՏԷՕՆԷՐ – ՔԷՊԱՊ

եւ արեւելեան զանազան խմորեղէններ

RESTAURANT DJOCHGOUN
4. Rue de la Butte, MARSEILLE 2·
(Place Jules Guesde)

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Փարիզահայ Տիկնանց Միութեան յիսնամեայ յոբելեանը կը տօնուի Հոկտեմբեր 13ին, Սալ տը լա Շիմի։

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Հ. Բ. Ը. Միութեան Տիկնանց յանձնախումբը կը խնդրէ կազմակերպութիւններէն նկատի ունենալ հետեւեալ թուականները .—

ՀՈԿՏԵՄԲԵՐ 1, *Երեքշաբթի երեկոյ Տիկնանց յանձնախումբի կազմութեան Գ. տարեդարձին առթիւ դեղարուեստական երեկոյթ ։*

ՀՈԿՏԵՄԲԵՐ 19, *ցուցահանդէս հայ արուեստագէտներու նկարիչ, արձանագործ եւ փորագրիչներու գործերուն ։*

Հայկական Թանգարանը, 52 Ավընիւ Ֆոշ, *(Փարիզ 16)։*

ԴԵԿՏԵՄԲԵՐ 7, 8, 9, 10, *«Բարենպատակ վաճառք»։*

Յառաջիկային պիտի տրուին մանրամասնութիւններ ։

ԴՊՐՈՑԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Դպրոցասէր Տիկնանց վարժարանին 1963 – 1964 *տարեշրջանի արձանագրութիւնները սկսած են ։ Անոնք որոնք կը փափաքին ղրկել իրենց զաւակները պէտք է այժմէն իսկ դիմում կատարեն հաստատութեան տնօրէնութեան ։*

Ա.— ՖՐԱՆՍԱԿԱՆԸ, *որ տառացի կերպով կը հետեւի պետական* լիսէներու *արդիական բաժնի պաշտօնական ծրագրին — անգլերէն եւ սպաներէն լեզուներով — ։*

Բ.— ՀԱՅԿԱԿԱՆԸ, *որ կ’օժտէ սանուհիները հայագիտական ծանօթութիւններով, հայ լեզուի, գրականութեան, հայ կրօնքի եւ պատմութեան, Հայաստանի աշխարհագրութեան մարզերուն մէջ ։*

Աշակերտուհիներ կ’ընդունուին ութ տարեկանէն սկսեալ։ Մանրամասնութեանց համար դիմել հաստատութեան տնօրէնութեան ։

1, Bd. du Nord, LE RAINCY (S. et O.)
Tél : 927-01-72

Դպրոցասէրի ուսման ծրագիրը կ’ընդգրկէ երկու ուրոյն բաժիններ ։

ՀՐԱՆՏ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

51, Rue Monsieur-le-Prince, PARIS - 6e — Chèque Postal : 1278-35

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՇԻՐՎԱՆԶԱԴԷ, Երկերի ժողովածու, 10 *հատոր լաթակազմ*	70 Ֆր.
ՍՏԵՓԱՆ ԶՕՐԵԱՆ, Երկերի ժողովածու, 7 *հատոր, լաթակազմ*	56 Ֆր.
ՍՏԵՓԱՆ ԶՕՐԵԱՆ, Պապ թագաւոր, լաթակազմ	10 Ֆր.
ՍՏԵՓԱՆ ԶՕՐԵԱՆ, Հայոց բերդը, *լաթակազմ*	8 Ֆր.
ՎԱՀԱՆ ՏԷՐԵԱՆ, Երկերի ժողովածու, 2 *հատոր լաթակազմ*	14 Ֆր.
ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՒԻԹ, *մեծադիր, գունաւոր նկարներով, լաթակազմ*	10 Ֆր.
Վ. ԱՆԱՆԵԱՆ, Հայաստանի կենդանական աշխարհը, Բ.	8 Ֆր.
ԱՐՍԷՆ ՏԷՐՏԷՐԵԱՆ, Երկեր (*Արովեան Պռօշեան, Պարոնեան*)	17 Ֆր.
ՄՈՒՐԱՑԱՆ, Պատմուածքներ, գունաւոր *նկարներով*	5 Ֆր.
ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑԻ մասին յիշողութիւններ. *լաթակազմ*	7.50 Ֆր.
ՄԻՔ. ՇԱԹԻՐԵԱՆ. Գարունը նորից եկաւ. 296 էջ.	5 Ֆր.
ԱԲԳԱՐԵԱՆ. Մատենադարան(*անգլ.*) 18 *գունաւոր մանրանկարներ*	3 Ֆր.
ՀԵՆՐԻԿ ԹՈՒՄԱՆԵԱՆ. Երգի ծնունդը. բանաստեղծութիւններ	3.85 Ֆր.
Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ. Տաղեր, 200 էջ. *լաթակազմ*	3.50 Ֆր.
ՍՈՎԵՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ. Ա. 800 էջ. *լթկզմ.*	16 Ֆր.
ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ, Անլռելի զանգակատուն, *Պէյրութ*, 1963	10 Ֆր.

Առաքման ծախքը գնողին վրայ

ԳՐԱՏՈՒՆՍ ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻՆ Է

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՁԱՅՆԱԳՐԵԱԼ ԲՈԼՈՐ ԵՐԿԵՐՈՒՆ

ՃՈԽ ՄԹԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԵՒ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆՑ

ԼՈՅՍԸ ԳՈՅՆ Է.... ԳՈՅՆԸ ԼՈՅՍ Է

ՁԵՐ ՏԱՆԸ ԼՈՅՍ ՏՈՒԷ՛Ք.... ԹՈՄԼԱՔԻ ԳՈՅՆ ՏՈՒԷ՛Ք

Ձեր բնակարանը կը լուսաւորուի

Եթէ ներսը եւ դուրսը

ՎԵՐԱՆՈՐՈԳԷՔ – ԶԱՐԴԱՐԷՔ – ՆԵՐԿԷՔ

ԹՈՄԼԱՔ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐՈՎ

PEINTURES THOMLAC

16 bis, Bd. Sébastopol, Paris 4e

Tél. ARC 26-61 – Métro : Halles et Chatelet

136, RUE DES BOURGUIGNONS — ASNIERES - BOIS COLOMBES (Seine)
Tél : GRE. 09-47

11, BD. DE LA REPUBLIQUE — LA GARENNE (Seine)
Tél. : STA. 19-06

ԱՆՄՐՑԵԼԻ ԳԻՆԵՐՈՎ

Ամէնէն արդիական, նուրբ եւ ընտիր ճաշակով պատրաստուած՝ առաջնակարգ ներկեր ։ Բնական եւ արուեստական բազմերանգ գոյներու մեծ ընտրութիւն։ Նորոյթ իւղաներկեր, պատի գեղեցիկ թուղթերու ճոխ ընտրութիւն։ Գետնի համար՝ ամէն տեսակ — լինոլէոմ *եւ* փլասթիք *— ծածկոցներ. —*

Tapiflex — Tapisom — Carpette

Ձեր բնակարաններուն արտաքին եւ ներքին խնամքներուն համար անհրաժեշտ բոլոր նիւթերը ։

Ամէն գնորդի կը նուիրուի յատուկ տետրակ մը, որու շնորհիւ կրնայ 10–30 առ հարիւր զեղչ ունենալ ։

ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐ

52, RUE CHALON, PARIS 12e — 64, BLD. DE BELLEVILLE, PARIS 20e
166, AV. ARISTIDE BRIAND — PAVILLONS - SOUS-BOIS (Seine)
4 bis, RUE PAUL VAILLANT COUTURIER — ARGENTEUIL (S. et O.)
24, RUE PAUL VAILLANT-COUTURIER — ALFORTVILLE (Seine)
48 bis, RUE DALAVRAC — FONTENAY - SOUS - BOIS (Seine)

ՅԱՌԱՋ

Le PREMIER QUOTIDIEN ARMENIEN en EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction et Administration : 32, Rue de Trévise - PARIS-9e

Fondé en 1925 — Téléph. : PRO. 86 - 60

R. C. Seine 57 A 2731 — C. C. P. Paris 15069-82

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա՝ Տար. 50 Ֆ. — Վեցամսեայ՝ 27 Ֆ.

Արտասահման՝ Տար. 60 Ֆ. — Հատը 0·30 Ֆ.

ՇԱԲԱԹ 3 ՕԳՈՍՏՈՍ

SAMEDI 3 AOUT 1963

39րդ ՏԱՐԻ — ԹԻՒ 9673

Fondateur : SCHAVARCH MISSAKIAN — Le Numero : 0,30 Fr. — 39e ANNÉE — No 9673

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՔԷՆԸՏԻԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

...ԶՕՐԻՆԻ ՖՐԱՆՍԱՅԻ ՀԱՂՈՐԴԵԼՈՒ ՀԻՒԼԷԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔՆԵՐ

Իր հերթական ժամուլի ասուլիսին ըն... Քէնըտի յայտարարեց թէ Ֆրան... հիւլէական պետութիւն կը նկատէ ... համաձայն հիւլէական ուժին վերաբերող ...նքին։ Դէտերը շատ կարեւոր կը նկա... նախագահին այս ակնարկութիւնը ...Մահոնի օրէնքի, յիշեցնելով թէ ...ջին անգամն է որ Միացեալ Նա-հանգներու Նախագահը նման ակնարկու-թիւն մը կ'ընէ։ Արդարեւ ծանօթ է որ, ...նքը այնպէս ինչպէս քուէարկեց եւ ...արելագործեց Խորհրդարանը բարե-փոխումներով, իրաւունք կու տայ ամե-...ական կառավարութեան հիւլէական ...ութիւններ հաղորդելու բարեկամ ...երկիրներու որոնք իրենց փաստերը տը-...ած են, այդ մարզին մէջ։ Բայց Նախա-...ն Քէնըտի աւելի բան մը չէ ըսած այս ...ին եւ ոչ մէկ բան կրնայ կարծել տալ ...է Քէնըտի հիւլէական գաղտնիքներ ...ի տայ Ֆրանսայի։ Հակառակ այս ...ութեամբ եղած հարցումներուն, Քէ-...ի շատ վերապահ մնաց եւ աւելի ...ութիւն չտուաւ այս մասին։ Քէնըտի յայտնեց միայն թէ դրական ա-...րկներ եղած էին Ֆրանսայի Նա-...ի խորհրդակցութեան ատեն (Մաք-...ըն - Քէնըտի) բայց մերժուած էին ...նսայի կողմէ։ Այս առթիւ Ֆիկառոյի ...թակիցը դիտել կու տայ թէ Քէնըտի ...ւանաբար անդիտակցաբար — փոր-... է զօրավարին ոճը առնել երկար եւ ...ուած նախադասութիւններով ո-...ք, կարծէք, կը սպասեն նիւթը, ա-... յաջողելու, որովհետեւ — կ'ըսէ ... Ֆիկառոյի թղթակիցը — Քէնըտիի ...ը արթուն է եւ աւելի լաւ կը յար-...ի արագ պատասխաններու։

Քէնըտի ոչ մէկ ակնարկութիւն ըրած ... կոլի հետ հանդիպումի մը հաւա-...ութեան։ Վերին ժողովի մը գա-...փարն ալ կանխահաս կը թուի Քէնը-...ի որ չիշտեց.— Աշխատանքը շատ լաւ ... կատարուիլ ներկայիս հեռաձայնի ...րդակցութիւնները եւ փորձառու ...կցողները, ինչպէս եղաւ Մոսկուա-...ի մէջ — կը բաւեն։

Քէնըտի յոյս յայտնեց նաեւ թէ Ծերա-... քուէով կը վաւերացնէ Մոս-...ի համաձայնագիրը։

...ոյլ հարցերու մասին, Քէնըտի հաս-...եց Ամերիկայի դիրքը։ Արեւելեան ...երոյ անդամակցութիւնը Մոս-...ի հիւլէական համաձայնագրին չի ...կեր որ Միացեալ Նահանգները սի-...ւնեան Փանքովի կառավարութի-... կը վերաբերի ոչ-յարձակողական ...ք մը Վարշաւայի եւ Ատլանտեան ...րու միջեւ, խորհրդակցութիւններ ... է կատարուին Ամերիկայի եւ իր ...կիցներուն միջեւ։

Քէնըտի չի ծածկեր որ Չինաստան ըս-...ուժ մըն է իր 700 միլիոն բը-...երով որ տարեկան 14-15 միլիո-...ւ կ'աւելնայ։ «Սթալինեան ձեւի ...թիւն մըն է, շրջապատուած եր-...րով որոնք բոլորն ալ — բացի ...տանէն — նուազ տարածուն են եւ ...ւթ է դնեն քաղաքական եւ ընկե-...հարցերու։ Մեր աչքին, սպառնա-...ութիւն մըն է։ Չին ղեկավար-...ղատերազմ կ'ուզեն իբրեւ համայ-...ի յաջողութեան տարր մը։ ...համար, սպառնալիք մըն է»։

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամենապատիւ Պատրիարք Հայոց Թուրքիոյ Տ. Շնորհք Արքեպիսկոպոս, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին ժամանեց շաբաթ 13 Յուլիսի 1963 թ. ժամը 12ին։

Սրբազան Պատրիարքին ուղեկցում էին Տ. Վազգէն վարդապետ Գալուստեանը եւ Պ. Կարպիս Ղազարեանը։

Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգէն Ա. Վեհափառ Հայրապետը Մայր Տաճարում եղբայրական սիրով դիմաւորեց Սրբազան Պատրիարքին, ջերմապէս ողջունելով Նորին Ամենապատուութեան պատմական սոյն այցելութիւնը։ Փրկչի Իջման Սուրբ Սեղանի առաջ Վեհափառ Հայրապետն ու Սրբազան Պատրիարքը վերանորոգեցին իրենց միասնութեան ուխտը եւ միատեղ աղօթեցին Ս. Եկեղեցւոյ հաստատութեան եւ աշխարհի խաղաղութեան համար։

Վեհափառ Հայրապետը եւ Սրբազան Պատրիարքը ունեցան մտերիմ հանդիպումներ եւ միասին քննարկեցին Հայ Եկեղեցու ներկայ կեանքի եւ գործունէութեան հետ կապուած մի շարք հարցեր, լիակատար համաձայնութեամբ։

Տ. Շնորհք Սրբազան Պատրիարք Սուրբ Պատարագ մատուցեց Մայր Տաճարում Յուլիսի 21ին, Տիրոջ Հրաշալի Այլակերպութեան տօնին, եւ տուաւ իր պատգամը բազմահազար հաւատացեալ ժողովուրդին։

Սրբազան Պատրիարքն այցելեց Էջմիածնի, Ս. Հռիփսիմէի, Ս. Գայիանէի, Ս. Շողակաթի, Ս. Գեղարդայ, Ս. Խոր-վիրապի, Հաղբատի, Սանահինի, Սեւանի, Մարմաշէնի եւ Հառիճայ պատմական վանքերը, ինչպէս եւ Երեւանի, Կիրովականի եւ Լենինականի եկեղեցիները։

Սրբազան Պատրիարքն այցելեց նաեւ Օշականի Ս. Մեսրոպի դամբարանը, Երեւանի Մատենադարանը, Պատմութեան Թանգարանը եւ Բիւրականի աստղադիտարանը։

Հայաստանի Գերագոյն Սովետի Նախագահութեան Նախագահ Դոկտ.-Պրոֆեսոր Նագուշ Յարութիւնեանը Յուլիսի 22ին ընդունեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգէն Ա. Հայրապետին եւ Թուրքիոյ Հայոց Պատրիարք Տ. Շնորհք Արքեպիսկոպոսին, որի ընթացքում տեղի ունեցաւ բարեկամական ջերմ զրոյց։

Տ. Շնորհք Պատրիարք եւ իր շքախումբը Յուլիսի 23ին հրաժեշտ տուին Նորին Սրբութեան, իրենց վերադարձի ճանապարհին այցելութիւն տալով Թբիլիսիի եւ Մոսկուայի Հայոց եկեղեցիներին։

ԴԻՒԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻ ԲԱՆԱԿՈՒՄԸ

Սալլը տ'Օլոնէն կը հեռաձայնեն թէ Հ. Յ. Դ. Նոր Սերունդի բանակումին մասնակցողները հանգիստ ճամբորդութենէ մը ետք հասած են բանակավայր։ Ներկայիս արդէն 110 երիտասարդներ հաւաքուած են եւ ամէն օր նորեր կը հասնին։

Մթնոլորտը արդէն խանդավառ է եւ տղաքն ու աղջիկները գոհ տրամադրութեամբ կ'անցընեն իրենց օրերը։ Այսօր իսկ կը սկսին դասախօսական եւ գեղարուեստական երեկոներ որոնք հայկական դրոշմ մը կ'ապահովեն բանակումին, ինչպէս ամէն տարի։

Մանրամասնութիւնները յետագային։

«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԵՐԸ»

Ստորեւ, Յուլիս 24ի ՖՐԱՆՍ-1 կայանի յայտագրին մէջ պատահածին համար՝ յաջորդ օրն իսկ մեր գրած նամակին հայերէն թարգմանութիւնը եւ Ֆ. Զ. Պ.ի Տնօրէնութեան պատասխանին օրինակը.—

Պատուարժան Տնօրէնութիւն
Ֆրանսական Ձայն – Պատկերասփիւռի
Փարիզ

Պարոն Տնօրէն,

Ֆրանսական Ձայն – Պատկերասփիւռը՝ հանրային ազդագրութեամբ եւ մամուլի հաղորդագրութեամբ ծանուցած էր թէ Չորեքշաբթի, Յուլիս 24, ժամը 22,20, *Ֆրանս* 1 – *Փարի Էնթէր* կայանի յայտագրին կատարումով, պիտի սփռուէր « ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԵՐԸ » փաստագրութիւնը, որով պիտի բացուէր « Հորիզոններ Անցնողներու » խորագրով ութերկրեայ մշակութային շարք մը, զոր պատրաստած են Տիկին Եւա Կրիլիքէզ եւ Պ. Ռուբէն Մելիք, արտասանութիւն՝ Սերժ Ռեժիանի։

Արդարեւ, որոշեալ ժամուն, յայտագիրը տեղի ունեցաւ. բայց « Հայկական ժամերը» պարզապէս փոխանակուած էին « Թրքական ժամերով », առանց՝ ըստ պատշաճի բացատրութեան կամ ներողամտութեան դոյզն խօսքի մը «գործադրութեան պատահարին» համար, որ պատճառ եղած էր նման սխալի մը։

Վստահաբար բացատրութեան չէք կարօտիր թէ ինչո՛ւ, յատկապէս վրդոված են ծագումով Հայ՝ Ֆրանսացի ունկնդիրները, « ժամերու » այդ չարաղէտ սխալանքին համար։

Անկէ ի վեր բուռն բողոքներ կը հասնին մեր խմբագրութեան, ծագումով Հայ՝ մեծ թիւով Ֆրանսացիներուն կողմէ, ընթերցող մեր օրաթերթին, որ սիրայօժար եւ ամէնէն ծաւալուն կերպով յայտարարած էր խնդրոյ առարկայ յայտագիրը։

Ուստի՝ մե՛ր ընթերցողներուն, ձե՛ր ունկնդիրներուն, տալու համար պարտադիր բացատրութիւնը, որուն իրաւամբ կը սպասեն անոնք ձեզմէ եւ մեզմէ, ձեր անմիջական պատասխանը երախտապարտ պիտի թողու զմեզ։

Այդ սպասումով եւ կանխայայտ շնորհակալութեամբ, հաճեցէք ընդունիլ, Պ. Տնօրէն՝ մեր խորին յարգանաց հաւաստիքը։

«ՅԱՌԱՋ»

Փարիզ, 25 *Յուլիս* 1963

×

DIRECTION DE FRANCE 1
PARIS INTER

Paris, le 30 Juillet 1963

M. le Directeur du Journal
HARATCH
32, Rue de Trévise
PARIS - 9

M. le Directeur,

En réponse à votre lettre du 25 Juillet dernier et en confirmation à notre conversation téléphonique du 26 Juillet, j'ai l'honneur de vous informer que l'émission de Rouben MELIK et Eve GRILIQUEZ consacrée à l'Arménie dans la série « PASSEURS D'HORIZONS » sera diffusée le 7 Août prochain à 22 h. 20.

La diffusion normalement prévue le 24 Juillet n'a pu avoir lieu par suite d'une erreur de manipulation des bandes magnétiques. Vous voudrez bien transmettre à vos lecteurs nos excuses pour cet incident matériel.

Recevez, M. le Directeur, l'assurance de mes sentiments distingués.

ROBERT PROT
Adjoint au Directeur de
France 1 Paris Inter

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԱՆԱՍՏԱՍ ՄԻԿՈՅԵԱՆ կրկին հիւանդանոց մտած է, երիկամունքներու անհանգստութեան պատճառաւ։ Առաջին անգամ հիւանդանոց մտած էր, անցեալ Ապրիլին, երբ Սուրմանուքէն վերադարձած էր, ուր գացած էր Ֆիտէլ Քասթրօն դիմաւորելու։

ՓՕԼ ԱՌՈՒԸՐ որ Փարիզի Հունգարիոյ նախկին դեսպանն էր, յայտարարեց թէ Խրուշչեւի առաջարկած ոչ – յարձակողական Արեւելք – Արեւմուտք դաշնագիրը կը ձգտի միայն յաւիտենականացնելու Խորհ. Միութեան կողմէ ճնշուած ժողովուրդներու գերութիւնը։

ՓԵՔԻՆԻ մէջ հակախորհրդային մեծ հանրաժողով մը տեղի ունեցած է ձաղկելու համար Մոսկուայի համաձայնութեան «խաբէութիւնը» եւ Խրուշչեւի « անձնատուր » ըլլալը։ Փրաւտայի եւ Թաս գործակալութեան թղթակիցները ձգած գացած են։ Արդարեւ ճառախօսներէն մէկը ըսած էր նոյնիսկ.— այդ մարդիկը որոնք կը յաւակնին իսկական մարքսիստներ ըլլալ, չե՞ն ամչնար»։

ՏՈՔԹ. ՈՒՄԱՐՏ միշտ ծանր վիճակի մէջ է, հոգեվարքը կը շարունակուի։ Արուեստական միջոցներով է որ ողջ կը պահուի։

ԱՐԺԱՆԹԻՆԻ նախագահ ընտրուեցաւ Տոքթ. Արթուրօ Իլլիա, ծնած գարուն հետ։ Գաւառացի բժիշկ մըն է, Քոմոյէն զաղթած իտալացի ծնողքէ։ 1962ին Քորտոպայի նահանգին կառավարիչ էր։

ՊԱՂՏԱՏԷՆ հասած լուրերու համաձայն, գնդակահարութիւնները կը շարունակուին նոյն թափով։ Քոմպա կը գրէ թէ բացաւիկ ատեաններ նախնական գնդակահարութիւններու կը դատապարտեն Քիւրտերը եւ բոլոր հոսանքներու դեմոկրատները, որոնք դէմ են Պաասական վարչակարգին։ Զինուորական կառավարիչին մէկ ղեկոյցը կը յայտարարէ թէ 21 հոգի գնդակահարուած են։ Թերթը կ'աւելցնէ.— «Այս արիւնոտ ձեռքեր ունեցող վարչակարգն է զոր Մեծն Բրիտանիա կը պաշտպանէ նոր «Հընթըր» օդանաւեր ղրկելով»։

ԱՐԱԲ Մ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ կը վստահեցնէ որ կաղ չէ գործածած Եմէնի մէջ։

ՆԻՔՍԸՆ յայտարարեց Ֆրանսական պատկերասփիւռէն որ Միացեալ Նահանգները պէտք է տան իրենց հիւլէական գաղտնիքները Ֆրանսայի։

ՄԱՐՍԷՅԼԻ նաւահանգիստին մէջ 12 հազար ճամբորդներ մէջտեղ մնացած են նաւաստիներու գործադուլին պատճառաւ, որ հաւանաբար շաբաթ վերջանայ։

ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՀԱՍՏԱՏՈՒՄՆԵՐ

ՀԱՅՈՑ ԱԶԳԻՆ ԴԷՄ ԴԱՒԱԴՐՈՂ

ՉՈՐՍ ՑԵՂԱՍՊԱՆ ՓԱՇԱՆԵՐ

Ա.

Սուլթան Ապտիւլ Համիտի 33 տարուան արիւնոտ բռնակալութեան շրջանին յաջորդող տասնամեակի ընթացքին՝ տիրապետող Թուրք փաշաներն ու պէյերը նո՛յնքան եւ աւելի վայրագ ու արիւնարբու եղան հայ ազգին հանդէպ:

Համիտ «Կարմիր Սուլթան» եւ «Մեծ Մարդասպան» կոչուեցաւ:

Անոր անկումէն ետք սուլթանական գահին ետեւ կար բանակի ուժին կռթնած փաշաներու եւ փոշաներու փաղանգ մը, որ հաւաքաբար շարունակեց իր ոխրագործութիւնները եւ նոյնիսկ գերազանցեց Համիտը՝ հայաջինջ քաղաքականութեան մէջ: Այդ բռնաւորները, քաղաքային թէ զինուորական, Իթթիհատական էին, որոնք գերման նացիներէն շատ աւելի վայրագ, արիւնարբու եւ հակամարդկային եղան:

Այդ մարդակեր ցեղասպաններէն էին, հարիւրաւորներու կարգին, նա՛եւ Խալիլ պէյ կոչուածը, որ յետոյ փաշա դարձաւ, Քեազիմ պէյը, որ յետագային փաշա եղաւ, ինչպէս նաեւ Նուրի եւ Ֆախրի փաշաները: Այս բռնեններըիրենց արարքներով նսեմացուցին Ճենկիզ Խաները եւ Լենկթիմուրները:

Եւրոպացի կամ ամերիկացի ընդասպետ Տէյվիսները կամ նմանները թող ի զուր հազար ջանք թափեն՝ ըսելու համար, թէ Թուրք բանակը բաժին չէ ունեցած Արեւմտահայերու բնաջնջման եղեռնական արարքներուն մէջ:

Ի՛նչ միամտութիւն եւ տգիտութիւն…

Վերեւ յիշուած Խալիլ փաշան հօրեղբայրն էր Էնվէրի, իսկ Նուրի փաշան՝ Էնվէրի կրտսեր եղբայրը: Էնվէրի եւ Թալաաթի ազգականներն ալ, իրենց նման, եղեռնագործներ էին: Էնվէրի փեսան՝ Վանի Ճեւտէթն էր. իսկ Թալաաթի կնոջ եղբայրը՝ Պիթլիսի, ապա Հալէպի կառավարիչ՝ Մուսթաֆա Ապտիւլ Խալիդ կոչուած հրէշն էր:

«Սոյով – սինսիլէով», եղեռնագործներու վոհմա՛կ մը:

Էնվէրի նախահայրերը Սերպովին կը կոչուէին Պոսնա Սերայի մէջ, եւ մահմետականացած Սերպեր էին: Էնվէրը մօր կողմէ ալպանացի էր, իսկ հայրը՝ կամրջագլուխի մը վրայ հասարակ պահապան էր:

Սխալ է կարգ մը պատմագիրներու այն կարծիքը, թէ Էնվէր փաշա մահմետականացած լեհ էր: Այդ մահմետականացած լեհը ուրիշ, տարիքով ալ մեծ Էնվէր փաշա մըն էր:

Էնվէրը, 1908ին, միայն քանի մը ամիս, մակեդոնացի հրոսակներու հետ լեռ բարձրացած էր եւ Թրքական Բ. Սահմանադրութեան օրերուն «ազատութեան հերոս» անունով փառաբանուեցաւ ալպանացի (բոսնէցի) զինուորական Նիազի պէյի հետ:

Առաջին Համաշխարհային պատերազմի նախօրեակին, Էնվէր, ինքն իրեն «զօրավար»ի աստիճան տալով, պատերազմական նախարար դարձաւ, Իթթիհատի Կեդրոնին մէջ, գաղտնի խորհրդակցութենէ մը ետք, այդ պաշտօնը խլելով մառեշալ Ահմէտ Իզզէթ փաշայէն, որ կարող զինուորական մըն էր եւ լաւ ճանչցած էր իթթիհատական ղեկավարներուն բարոյական սնանկութիւնը:

Էնվէր, ցեղասպանութեան նպատակով, հայկական նահանգները ղրկեց իր գործակատարները, ազգականներն ու մտերիմները: Այդ ատեն, Վանի շրջանը ղրկուած էր հազարապետ Քէօփրիւլի Քեազիմը, որ յետոյ Քեմալի եւ Իսմէթի օրով փաշա եղած էր եւ նոր անունով կոչուած էր Քեազիմ Խօզալփ: Իսմէթի նախագահութեան օրերուն, եղած էր Անգարայի «Ազգային Մեծ Ժողով»ի նախագահ 1927–35: Քեազիմ փաշա հպարտութեամբ յայտարարած էր, որ իր ձեռքով մեռցուցած էր 500 Հայեր (տես Նոկալէս, էջ 88): Այդ Քեազիմն էր, որ ոտիկանազօրաց զօրաբաժնի ղեկավար Խալիլ պէյի ուժերուն հետ Պիթլիսի, Մուշի եւ Սղերդի սպանդները կատարած էր՝ Յունիս 5–18 (1915), (տե՛ս «Մահիկի տակ», էջ124): Երկու շաբթուան եղեռնագործութեանց ընթացքին, Պիթլիսի շրջանէն 15 հազար եւ Մուշի շրջանի 119 գիւղերէ մօտ 50 հազար Հայեր կոտորուած էին:

Քէօփրիւլի Քեազիմի հրամանին տակ գտնուող ուժերը Ջարդերու համար բաւարար չէին, ուստի Էնվէր հրահանգած էր իր հօրեղբօր՝ Խալիլ պէյին, Վան եւ Ուրմիա երթալ: Խալիլ այդ տարին Մոսուլ կը գտնուէր եւ հրամանատարն էր Թրքական 6րդ բանակաթեւին (գոլ օրտու): Խալիլ Ռեւանտուզի վրայով եկած հասած էր Վանի շրջանը, միանալու Քեազիմի ուժերուն՝ 1914ի վերջերը, միասնաբար կազմած էին «արշաւանքի բանակ մը», նախ փճացնելու համար Ուրմիոյ եւ Սալմաստի շրջանի Հայերն ու Ասորիները, ապա՝ ըստ ծրագրի եւ աստիճանաբար կոտորելու Վասպուրականը եւ Տարօնը:

Այդ եղեռնագործութեանց աջակից էին

արիւնարբու Ջերքէզ Ահմէտ պէյը, իր չէթէներու հազարեակով (թապուր) եւ «Հարիւրապետ Բեշիտ» կոչուած հրէշը՝ իր Լազերու թապուրով: Այդ Բեշիտը՝ Ճեւտէթի գաղտնի հրահանգները գործադրողն էր: Ասոնցմէ զատ՝ կային նաեւ երկու թապուր (2000) Քիւրտեր եւ յաւելեալ պաշըպոզուքներ, որոնք կ'ընկերանային վերոյիշեալ ուժերուն՝ սպանդի եւ մասնաւորաբար կողոպուտի համար:

Հարիւրապետ Բեշիտի մասնագիտութիւնն էր սպաննել թոյնով, պարանով կամ ընդակով: Վանի շրջանի գիւղերը բնաջնջելու գործը յանձնուած էր Ջերքէզ Ահմէտ պէյի, որ կ'այրէր ու կը փճացնէր գիւղերը՝ 1915 Ապրիլ 6–19 թուականով ղրկուած ծածկագիր հեռագիրներու համաձայն (տե՛ս «Չորս տարի Մահիկին տակ», էջ 60, 75 եւ 80):

Սակայն, Խալիլի եւ Քեազիմի միացեալ ուժերը պարտուեցան Ուրմիոյ հիւսիսը՝ Դիլմանի առջեւ, Նազարբէգեանի եւ Անդրանիկի հերոսական յարձակումներուն հետեւանքով ցրուեցան, կամ սրընթաց նահանջեցին Վանի հարաւը՝ լեռնային շրջանէն դէպի արեւմուտք, եւ մարախի նման մտան Պիթլիս, ուր ձերբակալեցին նախ այրերը, յետոյ՝ յիսունական խումբերով սպաննեցին լճեղեաց վայրերու մէջ, ոմանց դիակներն ալ նետելով Վանայ լիճը:

Խալիլի եւ Քեազիմի ուժերուն օժանդակած էր նաեւ Վանէն նահանջող Ճեւտէթի ուժերուն մէկ մասը: Պիթլիսի Հայերուն սպանդէն ետք, սկսան աւերել Մուշի, Սղերդի եւ Սասնոյ գիւղերու շրջանները:

Այս եղեռնը կը կատարուէր Թուրք պետական եւ զինուորական բոլոր միջոցներով, թնդանօթներով ու ռազմամթերքով:

Խալիլի եւ Քեազիմի այս արարքներուն ականատես եղած է Ռաֆայէլ Նոկալէս՝ վենեզուէլացի սպան, որ դանոնք կը կոչէ «յովազ» կամ «բորենի»:

Խալիլի արեան ծարաւը յագեցած չէր սակայն, եւ համաթուրանական նպատակներու համար կ'ուզէր բնաջնջել նաեւ Կովկասահայութիւնը:

1918ին եւ 1920ին Խալիլ կը գտնուէր Կովկասի ճակատին վրայ:

ՀԱՅԿԱԶՆ Գ. ՂԱԶԱՐԵԱՆ

ԵՐԿՈՒ ԿՇԻՌ, ԵՐԿՈՒ ՉԱՓ

Քաղաքական աշխարհի միջազգային ներկայ եռուզեռին եւ թոհուբոհին մէջ, երբ մէկ կողմէ գաղափարակից նկատուող երկու մեծ պետութիւններու միջեւ խրամատը կը լայննայ, գրեթէ անանցանելի դառնալու աստիճան ու, միւս կողմէ, գաղափարական գետնի վրայ հակոտնեայ երկու ճակատներ խաղաղ գոյակեցութեան մը ուղիները կը փնտռեն, գրեթէ աննշմար անցաւ երեւոյթ մը փոքր, այլ սակայն խորքին մէջ շատ ուշագրաւ դէպք մը, որ ցոյց կուտայ ոչ միայն «դարուն ոգին», այլեւ արեւմտեան աշխարհի մտայնութեան մէջ արմատացած հիմնական բարեշրջում:

Մեքսիկա երբեք չէր ներած հիւսիսի իր մեծ դրացիին, որ Ռիօ Կրանտէ գետի ուղղութեան յանկարծական փոփոխութեամբ՝ 1880ին խլած էր 300 հեկտար տարածութեամբ հողամաս մը՝ Շամիզալ:

1911ին՝ վէճը միջազգային իրաւարարութեան յանձնուեցաւ, որուն վճիռը, ի նպաստ Մեքսիկայի, մերժուեցաւ Մ. Նահանգներու կողմէ:

Այս վերջինը, սակայն, անցեալ շաբաթ, իր նախագահին՝ Քենըտիի միջոցաւ պաշտօնապէս ընդունեցաւ ետ վերադարձնել վիճելի հողամասը: Համաձայնագիրը արդէն իսկ ստորագրուած է երկու երկիրներուն միջեւ եւ, շատ հաւանաբար, մինչեւ տարեվերջ վաւերացուի զոյգ երկիրներու խորհրդարաններուն կողմէ:

Ուշագրաւ երեւոյթ մըն է այս, երբ նկատի ունենանք, որ հողային զիջում կատարողը ներկայ դարու երկու հզօրագոյն եւ ուժեղագոյն պետութիւններէն մէկն է, եթէ ոչ ամէնէն հզօրը եւ ուժեղը: Միւսը՝ զինուորական եւ քաղաքական զոյգ տեսակէտներով երրորդական, նոյնիսկ չորրորդական գիծի վրայ կուգայ: Ուշագրաւ է նաեւ այն իմաստով, որ համաձայնող կողմերը պատկանելով հանդերձ քաղաքական եւ գաղափարական նոյն ճակատին, այնուամենայնիւ հեռու են «եղբայրական ռեսպուբլիկաներ» կոչուելէ եւ իբրեւ այդպիսին ալ դաւանելէ:

Աշխարհի երկու հզօրներէն մէկուն ոչ թէ դրացին, այլ իսկական քաղաքացին դարձած ենք, աւա աւելի քան քառասնամեակէ մը ի վեր: Իսկական քաղաքացի ըլլալով հանդերձ, հողային պահանջներ ունինք նոյն այդ կայսրութեան հպատակ երկու այլ պետութիւններէ՝ Վրաստան եւ Ազրբէյջան: Եւ, ինչ որ կարեւոր է, մեր հողային պահանջները չեն հիմնուած գետի մը ուղղութեան յանկարծական փոփոխութեան հետեւանքով կա

ՇԱՌԼ ՊՕՏԼԷՐ

ԵՒ ԻՐ

ԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԴՐԱԽՏՆԵՐԸ

—o—

Փոքրիկն Շառլ, որ հազիւ եօթը տարեկան է, չի հասկնար — երբեք ալ պիտի չուզէ հասկնալ — այն ողբերգութիւնը, որ յանկարծ կը պայթի իր դեռատի կեանքին մէջ՝ 1828ի Նոյեմբեր ամսուն: Ո՞վ է խստադէմ այս բարձրահասակ պարոնը, ո՞վ է ուրեմն այս հրամանատարը՝ Օփիք, որ Նէօյիի իրենց սիրուն, սպիտակ փոքրիկ տան մէջ սպրդած է իր ու իր սիրելի մօր միջեւ:

Այդ տան մէջ է, արդարեւ, որ Տիկին Պօտլէր, այրիանալէն ի վեր, ապաստան գտած էր իր զաւկին եւ Մարիէթի — «մեծհոգի սպասուհի»ին հետ:

— Հայրիկը երկինք գացած է… Այլեւս պիտի չտեսնես զինքը… ըսած են Շառլին:

Տղան շատ լաւ հասկցած չէր: Անշուշտ լացած էր սպիտակ մազերով, նորաձեւութենէ դադրած հագուստներով, արծաթեայ զարդօղակներ ունեցող կօշիկներով այդ ծերունիին ետեւէն: Բայց, խորքին մէջ, միշտ ալ զարմանք պատճառած էր իրեն՝ քաղաքավարի, 18րդ դարու ապաժամ շնորհալիութեամբ տարիքոտ այդ մարդուն ներկայութիւնը՝ սիրուն ու երիտասարդ սա կնոջ կողքին, որ իր մայրն էր…

Վաթսունամեայ այդ բարեկեցիկ մարդը, Շուազէօլ-Փրալէն դուքսին տան նախկին գաստիարակը, կնութեան առած էր աղքատիկ երիտասարդ որբուհի մը: Կնոջմէն 35 տարու մեծ, աւելի հայր մըն էր անոր համար, քան ամուսին… Բանաստեղծը, իր կեանքին ամբողջ տեւողութեան, գաղտնաբար պիտի տառապէր, որովհետեւ անսէր զոյգի մը զաւակը եղած էր:

Ամբողջ ժամանակը դծագրութեամբ անցընող եւ իր հայրը եղող քաղաքավարի եւ կիրթ այդ մարդուն «դէպի երկինք երթալէն» վերջ, փոքրիկն Շառլ իր ամբողջ սէրն ու գուրգուրանքը կեդրոնացուցած էր իր երիտասարդ ու սիրուն մօր վրայ:

Խելառ, տենդագին, անսահման կիրք մըն էր, զոր երախան զգացած էր մօրը հանդէպ, որ այժմ մի՛ միայն իրեն կը պատկանէր:

— Ինծի համար թէ՛ կուռք եւ թէ՛ ընկեր մըն էր միեւնոյն ատեն — պիտի ըսէր երեսուն տարի ետք:

Սակայն այդ կուռքը պիտի փլէր, ընկերը՝ ձեռքէն պիտի խլուէր: Երբ կ'անդրադառնայ, որ հազիւ երկու տարուան այրիութենէ ետք, մայրը պիտի վերամուսնանայ, որ այլեւս վերջացա՛ւ «երկու հոգիով իրենց երջանկութիւնը», Շառլ կ' անէծանայ: Ատելութիւն կը զգայ անմիջապէս այդ հրամանատար Օփիքի հանդէպ, բարձրահասակ ու գեղադէմ, պարկեշտ ու բծախնդիր երեսունութ տարեկան այդ մարդուն հանդէպ, որուն մուգ կապոյտ աչքերը յաջողած էին գրաւել իր մայրը, զայն հեռացնել իրմէ՝ խեղճ երախայ, որ այժմ մէս մինակ է աշխարհիս երեսին…:

×

— Պէտք է որ Շառլը գիշերօթիկ դնենք: Գօլէճականի առողջ եւ առնական կեանքը զինք կը կայտառացնէ:

Լիոնի մռայլագոյն մթնոլորտին մէջ, ուր պաշտօնի յառաջացումով կոչուած է աշխատելու, փոխ-ընդապետ Օփիք, որ դէշ մարդ չէ, այլ՝ մէկ կտորէ շինուած զինուորական, որ բնաւ չըմբռներ փոքրիկ Շառլի նկարագիրը, իր խորթ զաւկին բարիքը միայն կը մտածէ:

Քարոլին տրամարանութեան առջեւ ու նաեւ՝ գեղադէմ զինուորականին իր վրայ ունեցած ազդեցութեան առջեւ տեղի կուտայ: Բանաստեղծը այս պարագան երբեք պիտի չներէ իր մօրը… «Երբ մէկը ինծի պէս զաւակ ունի, — հպարտօրէն կ'ըսէ յետագային — զայն երեսի վրայ չի՛ թողուր, ու մանաւանդ՝ այլեւս չամուսնանար»:

Եթէ խեղճ ու գեղանի Քարոլին Պօտլէր չէ կրցած հասկնալ թէ իր զաւակը որքան գերզգայուն է, Շառլն ալ, իր կարգին, երբեք չէ ուզած ընդունիլ, թէ իր մօրը առաջին ամուսնութիւնը, որուն պտուղն է ինք, պատշաճից ամուսնութիւն մըն էր, եւ թէ այս երկրորդ ամուսնութիւնն է, որմէ ինք այնքան կը տառապի, որ սիրոյ ամուսնութիւն էր:

Լիոնի տխուր ձմեռն է: Առաւօտեան ժամը հինգուկէսին արթնցած՝ արքայական Գօլէճի թմբուկին ձայնէն, որ գիշերօթիկ է, Պօտլէր, սառն ջուրով լուացուած պահուն չի կրնար չմտածել Նէօյիի երջանիկ օրերուն մասին: Խստադէմ հսկիչի մը փոխարէն՝ այնտեղ կը վայելէր կնոջական անուշ ներկայութիւններ. Մարիէթի ներկայութիւնը, այդ սպասուհիին, զոր պիտի անմահացնէ իր ամէնէն գեղեցիկ քերթուածներէն մէջ. ու մանաւանդ՝ իրմէ առյաւէտ խլուած իր մօրը ներկայութիւնը…:

Բանաստեղծին հիւանդագին եւ արհամարհոտ զգայնութիւնը արդէն իսկ ձեւ առնել սկսած է: Եւ, արքայական Գօլէճին սերտողութեան սրահին մէջ, քերթողական արդէն իսկ սկսած է մոգին մէջ սանձահարել առաջին չափածոները, որոնք աւելի ուշ պիտի կազմեն «Չարիքին ծաղիկները» քերթուածաշարքին առաջին տողերը.

«Երբ գերագոյն ուժերու որոշումովը վիճակին

Կը յայտնըւի բանաստեղծն այս աշխարհի մութ սէրին,

Սարսափահար աչքերով, եւ անէծքով բռունցքն իր

Մայրը կ'ուղղէ առ Աստուած, որ կը խղճայ՝ գթալիր:

(Շար. – 1)

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ-ԷՋՄԻԱԾԻՆ

Արարատեան դաշտի կեդրոնը, ուր Մասիսներու հայեացքներուն ներքեւ, ...Մեծամօրի ափին, փռուած է Հայաստան աշխարհի շէն ու ...ներէն մէկը, պատմական Վաղարշապատը, այսօրուան Էջմիածինը։

...չ, ո՞ր հին է այս քաղաքին պատմութիւնը։

Ո՞չ ոք կրնայ վստահ ըսել, թէ առաջին ...մարդիկ ե՞րբ բնակութիւն հաստատած են այստեղ։ Անյիշատակ ժամանակներէն, այս շէնին երդիքներէն բարձրացած է ծուխը, վկայելով մարդկային կեանքի մը գոյութիւնը։

Շատ ջուրեր հոսած են Մեծամօրի հունէն, բազում խորշակներ տեսած է Արարատեան դաշտը, ասպատակուած եւ աւերուած են հայկական բոլոր գիւղերը, եւ սակայն վերստին աւերակներուն մէջէն բարձրացած են անոնք, վառած են իրենց օճախները, նորէն ու նորէն կառչած են կեանքին՝ մշակել հողը, երազել, տենչալ եւ ապրիլ։

Պատմական առաջին տեղեկութիւնները կը հաղորդեն, որ շատ հին ատենները Վաղարշապատի վայրին մէջ եղած է ուրիշ աւան մը կամ քաղաք մը, որ կոչուած է Արտեմէտ, յունական դիցաբանութեան Արտեմիս կուռքին անունով, որ սկիզբները որսի, իսկ յետագային ողջախոհութեան չաստուածն էր, ինչպէս հին Հռոմէացիներուն քով՝ Տիանան։

Պատմարաններուն գործերուն մէջ հաստատ տեղեկութիւններ չկան, թէ ինչո՞ւ այդ քաղաքակը Արտեմէտ կոչուած է։ Խորենացին թէպէտեւ կը յիշատակէ այս քաղաքը, սակայն չըսեր թէ ո՞ւր-տեղէն առնուած է այդ անունը եւ ո՞վ շինած է զայն։ Ան Արտեմէտ քաղաքը կապելով Հայոց Վարդգէս իշխանին անունին հետ, կը գրէ «հզօր աւան Վարդգէսի», որ «հատուած գնացեալ Վարդգէս մանուկն ի Տուհայ գաւառէն, եկեալ նստաւ դՇրէշ բլրով, զԱրտիմէտ քաղաքաւ, զՔասաղ գետով, կռել կոփել զդուռն Երուանդայ արքայի» (Բ. գիրք, ԿԵ.)։

Պատմարանները կը վկայեն, թէ Վարդգէս իշխանը, որ քեռայրն էր Երուանդ արքային, Քրիստոսէն դեռ հինգ-ուկէս դար առաջ, հիմնապէս կը նորոգէ Արտեմէտը, որ, հաւանաբար, աւերակ վիճակի մը մէջ կը գտնուէր, եւ բնակութիւն կը հաստատէ հոն։

Ըստ մեր պատմարաններուն, Արտեմէտին տեղը կառուցուած Վարդգէս աւանը Արտաշէս Մեծի եւ Տիգրան Բ.ի օրով կը դառնայ արքունի ձմեռանոց եւ կը մնայ այդպիսին երկար ժամանակ։ Յետագային քաղաքը կը զարգանայ, կը մեծնայ, կը դառնայ վաճառաշահ առեւտրական կեդրոն մը՝ շնորհիւ, մանաւանդ հրեայ գաղթականութեան, որ Տիգրան Մեծ բերել տուած էր Երուսաղէմէն։ Այս մասին Խորենացի կը գրէ. «...Յայնժամ եղեւ քաղաքագեղօղ վաճառօք... Իսկ թագաւորն Հայոց Տիգրան զգերութիւն Հրէիցն նստուցեալ յԱրմաւիր եւ յաւանին Վարդգէսի որ ի վերայ Քասաղ գետոյ» (Բ. գիրք, ԿԵ, ԺԶ)։

Այսպէս, որոշ է, որ հին ատենները Վաղարշապատին տեղը եղած է քաղաք մը կամ աւան մը, որ կրած է սկիզբները Արտեմէտ, իսկ ետքը՝ Վարդգէս անունները։

Իսկ ե՞րբ ստացած է իր բուն անունը՝ Վաղարշապատ։

Մեր թուականութեան երկրորդ դարու վերջերուն, 197ին, Տիգրան Մեծի որդին՝ Վաղարշ Արշակունի թագաւորը՝ կը պարսպապատէ Վարդգէս աւանը եւ կը վերամկրտէ՝ Վաղարշապատ։

Պատմահայր Խորենացի այս առթիւ կը գրէ. «Այժմ այս Վաղարշ պատեաց պարսպաւ եւ հզօր պատուարաւ զԱւանն Վարդգէսի որ ի վերայ Քասաղ գետոյ, եւ անուանեաց Վաղարշապատ, որ եւ Նոր քաղաք» (Բ. գիրք, ԿԵ.)։

Յետագային Վաղարշապատը կը դառնայ թագաւորանիստ քաղաք եւ այդպէս ալ կը մնայ մինչեւ Արշակունեաց թագաւորութեան անկումը։

Վաղարշապատ հաստատած է իր գահը Հայոց Տրդատ թագաւորը, որուն օրով քրիստոնէութիւնը պետական կրօնք հռչակուեցաւ Հայաստանի մէջ (301) եւ որ Ս. Գրիգոր Լուսաւորչին թելադրութեամբ շինել տուած է Ս. Էջմիածնի Մայր Տաճարը։

Թագաւորական պալատը շինուած է քաղաքին կեդրոնը, Մայր Տաճարին քով։ Յետագային Սիմէոն կաթողիկոս Երեւանցի այդ վայրին մէջ շինել կուտայ Թուղթի գործարան մը, որուն հիմերը փորած ատեն կը յայտնաբերուին պատուհաններու եւ դուռներու մարմարեայ բեկորներ, որոնք, հաւանաբար, եղած են արքայական պալատին մնացորդները։

Այսուհանդերձ, Արշակունեաց այս ոստանը հազիւ թէ անուանի դառնար եւ յիշուէր մեր ամբողջ պատմութեան ընթացքին, եթէ Ս. Գրիգոր Լուսաւորչին պայծառ տեսիլքով չհիմնուէր Ս. Էջմիածնի Տաճարը (303), հայ ժողովուրդին սրբութեանց սրբոցը եւ անոր ազգային գոյատեւութեան խորհրդանիշներէն մէկը։

Քաղուած «Էջմիածին» Ամսագրէն

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

Այս էջերուն մէջ պարբերաբար հրատարակած ենք ազգագրական նօթեր, քաղուած հայ կամ օտար աղբիւրներէ։ Այսօր կը հրատարակենք քիչ մը աւելի ընդարձակ տեսակը՝ պատրաստուած՝ աշխարհի շրջած անգլիացի բանաստեղծ Անթընի Փորսթի կողմէ, որ չէ մոռցած նաեւ մեզ՝ Հայերս։

×

Մէկ Անգլիացի՝ տխմար մը, երկու Անգլիացի՝ ակումբ մը, երեք Անգլիացի՝ գաղթավայր մը։

×

Մէկ Ամերիկացի՝ զօրծ մը, երկու Ամերիկացի՝ անանուն ընկերութիւն, երեք Ամերիկացի՝ թրըսթ մը։

×

Մէկ Գերմանացի՝ զինուորական բարեկամ մը, երկու Գերմանացի՝ գարեջրատուն մը, երեք Գերմանացի... պատերազմ մը։

×

Մէկ Գնչու՝ հաւատարիմ բարեկամ մը, երկու Գնչու՝ երկու շրջուն վաճառական, երեք Գնչու՝ կարաւան մը։

×

Մէկ Եգիպտացի՝ մտածում մը, երկու Եգիպտացի՝ երկու գող, երեք Եգիպտացի՝ յեղափոխութիւն։

×

Մէկ Թուրք՝ խոնարհութիւն մը, երկու Թուրք՝ երկու խոնարհութիւն, երեք Թուրք՝ դաւադրութիւն մը։

×

Մէկ Իտալացի՝ մէկ երգ, երկու Իտալացի՝ իրար մազ քաշել, երեք Իտալացի՝ պարտութիւն մը։

×

Մէկ կարմրամորթ Հնդիկ՝ կասկած մը, երկու կարմրամորթ Հնդիկ՝ կասկած մը, երեք կարմրամորթ Հնդիկ՝ մաքրագործում մը։

×

Մէկ Հայ՝ բարեկամ մը, երկու Հայ՝ երկու վաճառական, երեք Հայ՝ ընթարկում մը։

×

Մէկ Հելլէն՝ մէկ Հելլէն, երկու Հելլէն՝ երկու Հելլէն, երեք Հելլէն՝ երեք Հելլէն։

×

Մէկ Հնդիկ՝ մէկ մանուկ, երկու Հնդիկ՝ երկու եղբերդ, երեք Հնդիկ՝ բարեկամութիւն մը։

×

Մէկ Հրեայ՝ տասը վաճառական, երկու Հրեայ՝ հարիւր դաւադրութիւն, երեք Հրեայ՝ հազար չարիք...

×

Մէկ Ճափոն՝ մէկ լռութիւն, երկու Ճափոն՝ երկու լռութիւն, երեք Ճափոն՝ մէկ պայթում։

×

Մէկ Շուէտացի՝ մէկ երախայ, երկու Շուէտացի՝ մարզանք մը, երեք Շուէտացի՝ խաղաղութիւն մը։

×

Մէկ Չինացի՝ մէկ կասկած, երկու Չինացի՝ ժողով մը, երեք Չինացի՝ անակընկալ յարձակում։

×

Մէկ Ռուս՝ մէկ ժպիտ, երկու Ռուս՝ մէկ երգ, երեք Ռուս՝ պաշտպանութիւն մը։

×

Մէկ Սպանացի՝ մէկ պար, երկու Սպանացի՝ դաշոյն մը, երեք Սպանացի՝ սէր մը։

×

Մէկ Ֆրանսացի՝ մէկ մենախօսութիւն, երկու Ֆրանսացի՝ խորհրդաժողով մը, երեք Ֆրանսացի՝ քապարէ մը։

Ա. Օ.

...ուած անորդութեան մը վրայ, ...պատմական, աշխարհագրական եւ, ...Նախիջեւանի շրջանէն, նաեւ բնակչութեան հիմունքներու վրայ։

Միեւնոյն ատեն, մեր այս հողային պահանջները զուտ ՆԵՐՔԻՆ բնոյթ կը կրեն, երբ նկատի ունենանք, որ վիճելի հողերը եւ չհաշտրդուող երեք պետութիւնները կը պատկանին ու մաս կը կազմեն Խորհ. Միութեան։ Եւ իբրեւ այդպիսին՝ իրենք զիրենք կը նկատեն «եղբայրական ռեսպուբլիկաներ»։

Այս «եղբայրութիւնը» այնքա՞ն ցայտուն է, որ դեռ վերջերս կազմուեցաւ Անդրկովկասեան Բիւրօն, գաղափարական, տնտեսական եւ մշակութային համաձայն ու միատեսակ գործունէութիւն ունենալու համար, թէեւ իրականութեան մէջ՝ ճարպիկ ձեւ մըն է երեք հանրապետութիւններուն ունեցած ներքին թէ շատ իրաւասութիւնները սահմանափակելու եւ կեդրոնի ձայնը աւելի եւս ...ու եւ զգալի դարձնելու։

...նանք, սակայն, մեր նիւթին։ Ահա ...տարիներէ ի վեր, Թրքահայ ...պահանջին առընթեր, սահման... յայտնի պահանջ կը ...«ՆԵՐՔԻՆ» հողերու հարցը։ Դեռ վերջերս, Հայաստանի խորհրդայնացման 40 ամեակին առթիւ հրապարակ ...ուեցաւ վերոյիշեալ հարցը եւ, մին ...խոկ... յոյներ կապուեցան Խրուշ...ի Երեւան այցելութեան հետ։

...նք արդիւնքը։

...կատակը զարմանալի պիտի ըլլար։ ...ները եւ տարազները, մասնաւորապէս քաղաքական աշխարհի մէջ, սահ...ուած են դառն իրողութիւններ մը...նելու, ժողովուրդները սին յոյսերով ...րելու եւ քաղաքական չիւ հաշիւներ ...գործելու։

Այսպէս, եղբայրական կամ ոչ՝ Հա...ստան վարձահատոյց դարձած պիտի ըլլար։

«Զաղատադրուած» Մեքսիկան աւելի ...աւոր եղաւ այս ուղղութեամբ։

Ժ. ՄԻՐԻՃԵԱՆ

«ՅԱՌԱՋ»ի ԹԵՐԹՕՆԸ (195)

ԵՐԼՏՐՁԻ ՊՈՄՊԱՆ

ՀԱԶԱՐ ԻՆԸ ՀԱՐԻՒՐ ՉՈՐՍ

Յետեւաբար, ասոնց գործած վատ եղանակ հասարակ ոճիրներու եւ ստորին ...գործութեանց կարգէն ըլլալով, ...օրէնքի պարտականութիւնն կը համարէ այդ կէտին վրայ հրաւիրել Պատկառելի Մարմնոյդ ուշադրութիւնը, եւ յանուն հանրային իրաւանց, կը պահանջեմ որ ամբաստանեալներուն իւրաքանչիւրը ...ուի, վկաները լուեն, եւ միւս ...ներուն քննութեամբ դատավարութիւնը կատարուի։

ԺԵ.

Ընդհանուր դատախազ Նէճմէտտին ...ին արտասանած ճառը, համիտական ...ին արդարութեան (՛) արժանի գլուխ գործոց մըն էր, քաղուած՝ Երլտըզի Քննիչ Յանձնաժողովին կատարած քննութիւններէն։

Այդ ճառին լուծումը թողլով յառաջիկային, հարեւանցի կ'ըսենք միայն թէ Պելժիացի Ժօրիսին, ինչպէս նաեւ միւս ամբաստանեալներուն հարցաքննութիւնները խեղաթիւրուած ու ձեւուած են վերէն բխած հրամաններուն վրայ, եւ կ'անցնինք յիշեալ ամբաստանեալներէն ներկաներուն եւ բացականերուն դատավարութեան վերջին նիստին, որ տեղի ունեցաւ Դեկտեմբեր 4ին։

ՎԵՐՋԻՆ ՆԻՍՏ

Եղեռնական արարքին հեղինակներուն վերջին դատավարութիւը տեղի ունեցաւ Եղեռնադատ Ատեանին առջեւ։ Դատարանին կը նախագահէր Հիլմի պէյ, ներկայ անդամներն էին Նիյմէթուլլահ, Գաբրիէլ, Եահեա եւ Ճէմիլ պէյերը։ Ընդհ. Դատախազի պաշտօն կը վարէր Նէճմէտտին պէյ, իսկ քարտուղարութեան պաշտօն կը վարէին Սիւլէյման, Սուպհի, Ֆէրիտ եւ Սրտղի պէյերը։ Դատարանի Ա. քարտուղար Րիֆաթ պէյ կը հսկէր արձանագրիչներուն վրայ։ Իրենց յատուկ տեղերը նստած էին պելժ հիւպատոսարանի թարգման Մ. Մարքէվիչ, Հելլէն քանչիլերիայի թարգման Մ. Զիքուրա, փաստաբաններ՝ Խնդիր Սիմոն եւ Թընկըր Սիմոն, Եարտանաքի, Գրիգոր Գալայճեան, Եանքօ Գաեա էֆէնտիները եւ Հիւանի ու Սաատէտտին Ֆէրիտ պէյերը։

Դատաւորները ժամը 4ին մտան դատասրահ։ Ամբաստանեալ էտուար Ժօրիս Թուրքերէնի հմուտ չըլլալով, թարգմանի պաշտօն կը վարէր Առեւտրական եւ Հանրօգուտ շինութեանց նախարարութեան Արուեստից ճիւղին տնօրէնի օգնական Վասիլ էֆէնտի։

Բացի այն պաշտպան փաստաբաններէն, որ արդէն խօսած էին Ը. դատավարութեան ժամանակ, մնացեալ փաստաբանները խօսեցան իրենց պաշտպանողականները։ Այն ատեն, նախագահը ծանոյց թէ դատավարութիւնը վերջ գտած է, եւ դատաւորները ժամը 7ին մտան խորհրդակցութեանց սրահը։ Խորհրդակցութիւնը չորս ժամ տեւեց։ Ժամը 11ին դատաւորները մտան դատասրահ, եւ նախագահին կողմէ տրուած հրամանին վրայ, քարտուղար Սուպհի պէյ կարդաց հետեւեալ որոշումը, որ կը հաստատէ ամբաստանեալներու յանցապարտութեան աստիճանը։

ՈՐՈՇՈՒՄ ՅԱՆՑԱՊԱՐՏՈՒԹԵԱՆ

Ներկայ տարւոյ Յուլիս 8ին, ուրբաթ օր Սէլամլըգի Արարողութենէն վերջ, Վեհ. Կայսեր կառք նստած միջոցին, մինչ Կայս. զօրքերը կը պատրաստուէին բարեւի կենալ, Մարզարանի հրապարակին վրայ եղեռնական պայթում մը յառաջ եկաւ։ Մեր սիրեցեալ օգոստափառ Կայսրը ազատ մնաց շնորհիւ Աստուածային Աջոյն։ Այս պայթումին քանդիչ ազդեցութեան պատճառաւ մեռան 26 հոգի եւ ծանրապէս վիրաւորուեցան 58 հոգի։ Քննութիւն կատարուեցաւ այս դէպքին վրայ, եւ հասկցուեցաւ թէ այս անիծապարտ արարքին համար ի ներկայութեան եւ ի բացակայութեան ամբաստանեալներէ փախստական Լիփս Ռիփս, այլ անուամբ Սաֆօ, այլ անուամբ Թավրուսեան, բուն անուամբ Կոստանդին Գապուլեան, օրիորդ Ռուպինա Ֆայն, կառապան Ծորճ Փէթրի Վարշամովիչ, բուն անուամբ Գրիգոր Վարշամ, ձիադարման Երուանդ Ֆրանկիւլեան անուն չորս անձինք մտադրեցին այս անիծապարտ եղեռնը, եւ գիտնալով որ Աստուծոյ արարածներ զոհ պիտի երթան, յատկապէս Վիէննայէ բերել տրուած կառքին մէջ երկաթ սնտուկ մը դնելով, անոր մէջ լեցուցին քանդիչ նիւթեր, եւ այս կառքը, ի գործադրութիւն իրենց անիծեալ մտադրութեան, տարին Սէլամլըգի Արարողութեան վայրը, հոն պայթեցուցին զայն, եւ այս պայթումին ցաւալի հետեւանքին զոհ գացին 26 հոգի եւ վիրաւորուեցան 58 հոգի, ահռելի չարչարանքներու դատապարտուելով։

ՍՄԲԱՏ ԲԻՒՐԱՏ

(Շար.)

ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ

Կազմակերպուած Փոն տը Շերիւի Ազգային Միութեան կողմէ, այս կիրակի, Թրիփլէէ դաշտին վրայ, առաւօտէ մինչեւ երեկոյ:

Առատ կերուխում: Շամփուրով խորոված:

Մուտքը ազատ է

ՆՈՒԷՐ

Տէր եւ Տիկին Տոքթ. Նազարեան իրենց հօր եւ աներհօր Տէր Հայկազուն Քհնյ. Ոսկերիչեանի վախճանման առթիւ 50 ֆ. կը նուիրեն Յառաջի բարգաւաճման:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Կապ. Խաչի Կոռնոյլի մասնաճիւղը շնորհակալութեամբ ստացած է Օր. Անժէլ Պիչաքճեանի ամուսնութեան առիթով հետեւեալ նուէրները՝ դպրոցի ֆոնտին.— Տէր եւ Տիկ. Պիչաքճեան, Տէր եւ Տիկին Միքայէլեան 50ական ֆրանք: Տէր եւ Տիկին Աւագեան 25 ֆր., Այրի Տիկին Նոյեմի Աւագեան, Պ. Մարտիրոս Աւագեան, Պ. Կղեմէս Գասպարեան 10ական ֆր., Տէր եւ Տիկ. Տօլմաճեան 5 ֆ.:

Յուլիս 7ի դաշտահանդէսի դպրոցի մրցանակաբաշխութեան առթիւ եղած նուիրատուութեան մէջ պէտք է աւելցնել ընկերուհի Տիկ. Զարուհի Սպէնճեանի նուէրը դպրոցի ֆոնտին՝ 10 ֆրանք:

×

ԼԻՈՆ.— Ֆր. Կապ. Խաչի Լիոնի մասնաճիւղը շնորհակալութեամբ ստացած է 100 ֆր. Փափազեան ընտանիքէն, փոխան ծաղկեպսակի՝ Գ. Սողոմոնեանի մահուան առթիւ:

ՖՐԱՆՍԱՀԱՅ ԿԱՊՈՅՏ ԽԱՉԻ ՕԴԱՓՈԽՈՒԹԵԱՆ ԿԱՅԱՆ

ՓԱՐԻԶԻ ԽՈՒՄԲԻ ՄԵԿՆՈՒՄԸ

Փարիզի խումբը կը մեկնի թուրիսթիք օթոքառով այս երկուշաբթի առաւօտ, Օգոստոս 5: Ժամադրավայր՝ Սպուառ Մոնթոլոն, Ռիւ Լաֆայէթ ժամը առաւօտեան 6,30ին: Խումբը նոյն իրիկունը կայան կը հասնի:

×

ՎԵՐԱԴԱՐՁ

՚ Ֆրանսահայ Կապոյտ Խաչի Օդափոխութեան կայանի մանուկներու առաջին խումբի վերադարձը, Օգոստոս չորսին, առաւօտուն ժամը 6.15ին, Կառ տը Լիոնի մէջ հանդիպում ծնողքներու եւ մանուկներու:

×

ՄԵԿՆՈՒՄ

ԼԻՈՆ.— Ֆր. Կապ. Խաչի օդափոխութեան կայանի մանուկները կը մեկնին Օգոստոս 4ին կիրակի օր, հաւաքոյթ ժամը 16ին ՓԷՌԱՇ, կայարանի մուտքի մեծ ժամացոյցին տակ:

×

Մարսէյլի խումբերը կը մեկնին Օգոստոս 4ին: Հաւաքատեղի՝ ԿԱՌ ՍԷՆ–ՇԱՐԼ

Լիոնի խումբը կը մնայ նոյն գնացքին՝ իր քաղաքէն:

... ՖՐԱՆՍ 1... ՕԳՈՍՏՈՍ 7...

FRANCE - I

« LES HEURES ARMENIENNES »

ՌՈՒԲԷՆ ՄԵԼԻՔ – ԵՒԱ ԿՐԻԼԻՔԷՋ

պատրաստած են

« Հայկական կէս ժամը »

Չորեքշաբթի՝ Օգոստոս 7, ժ.ը 22.20

Յայտագրին գրական բաժնին մէջ՝ Սայաթ – Նովա, Վարուժան, Զարենց, Թէքէեան...:

Ֆրանսերէն կ՚արտասանէ՝

ՍԵՐԺ ՌԵԺԻԱՆԻ

ԺԱՄԸ 22.20... ՕԳՈՍՏՈՍ 7

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

ԼԻՈՆ.— Ֆր. Կապ. Խաչի Օրը կը տօնուի մեծ պատրաստութեամբ, 27 Հոկտ. Մոլիէրի շքեղ սրահին մէջ:

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Այրի Տիկին Արտեմիս Թեւանեան, իր ողբացեալ ամուսնոյն Գրիգոր Թեւանեանի մահուան տարեդարձին առիթով երկու հարիւր ֆրանք կը նուիրէ Փարիզի Ս. Յովհաննէս–Մկրտիչ եկեղեցւոյ, յատկացուելու համար եկեղեցւոյ կրթական ձեռնարկներուն:

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Փարիզահայ Տիկնանց Միութեան յիսնամեայ յոբելեանը կը տօնուի Հոկտեմբեր 13ին, Սալ տը լա Շիմի:

×

ԴԵԿՏԵՄԲԵՐ 7, 8, 9, 10, «Բարենպատակ վաճառք»:

Յառաջիկային պիտի տրուին մանրամասնութիւններ:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Տիկ. Միութեան Որբերու Օգնութեան Մարմինը տրամադիր ըլլալով քանի մը անպաշտպան տղոց հայեցի դաստիարակութիւնը հոգալու, հարկ կը համարի ծանուցանել, որ շահագրգռուողները այժմէն դիմեն իրեն գրասենեակին, 15 Ռիւ Ժան Կուժոն:

ՀԱՅ ԲՈՅԺ

ԺՈՂ. ԱՄՍԱԹԵՐԹ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ

խմբագիր՝ Շ. ՆԱՐԴՈՒՆԻ

—o—

Խմբագրին երկար բացակայութեան պատճառաւ, լոյս տեսած չեն ՀԱՅ–ԲՈՅԺի 1962 եւ 1963 տարիներու թիւերը:

Խմբագիրը, որ նոր վերադարձաւ Ամերիկայէն, գործի ձեռնարկած է արդէն: Ծրագրած է հրատարակել երկու բացառիկ թիւեր, իւրաքանչիւրը 150 էջ: Առաջինը պիտի կրէ 1962 թուականը, երկրորդը՝ 1963 թուականը: Այս երկուքը մէկ տարի հաշուելով՝ անոնք որ վճարած են 1962, վճարած կ՚ըլլան նաեւ 1963 տարին:

Այս ձեւով, խմբագիրը կը խորհի ՀԱՅ-ԲՈՅԺի հրատարակութիւնը ամբողջացնել եւ կանոնաւորել մինչեւ յառաջիկայ տարի, եւ 1964 տարուան թիւերը լոյս ընծայել ամսէ ամիս՝ Յունուարէն սկսեալ:


Ամերիկայի նոր բաժանորդները եւս, որոնք վճարած են այս տարուան համար (1963), պիտի ստանան ՀԱՅ–ԲՈՅԺի 1962 եւ 1963 թիւերը:

Այն բաժանորդները, որոնք յետնեալ պարտք ունին, թող բարի ըլլան իրենց վճարումը հասցնել մինչեւ տարեվերջ: Հին պարտքերուն հետ՝ ներկայ տարին եւս վճարողներն են միայն, որ պիտի ստանան ՀԱՅ – ԲՈՅԺի բացառիկները, խմբագրուած բժշկական, գրական, պատմական, շատ հետաքրքրական եւ ճոխ բովանդակութեամբ,— արդէն տպագրութեան յանձնուած:

Այս առթիւ շնորհակալութիւն այն հաւատարիմ բաժանորդներուն, որոնք ՀԱՅ-ԲՈՅԺի հրատարակութիւնը ընդհատուած ըլլալով հանդերձ՝ խմբագրին բացակայութեան պատճառաւ, վճարումները կատարած են օրը օրին ի վկայութիւն իրենց բարեկամութեան եւ վստահութեան:

Կը խնդրուի Հայրենիք, Ասպարէզ, Արմենիա, Ազատ Օր, Յուսաբեր, Ազդակ, Այգ, Ալիք թերթերու խմբագրութիւններէն, ինչպէս և Սիոն, Հասկ, Հայ Կեդրոն, Կիլիկիա, Հայաստանեայց եկեղեցի պարբերականներէն, որ հրատարակեն այս յայտարարութիւնը գէթ 2 – 3 անգամ:

IMPRIMERIE SPECIALE
DU JOURNAL « HARATCH »
32, Rue de Trévise, PARIS (9e)



ՀԱՅ ԸՆԾԱՅԱՐԱՆ

ԲԱՑՈՒԱԾ ԵՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ուսումնական 1963–1964 Տարեշրջան

Կ՚ընդունուին 10–12 տարեկան բարեկիրթ եւ ուսումնասէր աշակերտներ, որոնք ունին իրենց տարիքին համապատասխան նաեւ ուսումնական պատրաստութիւն:

Արձանագրութեան եւ լուսաբանութեանց համար դիմել՝

Direction du Petit Séminaire Arménien
3, Av. de Grandchamp, LE PECQ (S. et O.)
Tél· 963.01.72

ԴՊՐՈՑԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Դպրոցասէր Տիկնանց վարժարանին 1963 – 1964 տարեշրջանի արձանագրութիւնները սկսած են: Անոնք որոնք կը փափաքին ղրկել իրենց զաւակները պէտք է այժմէն իսկ դիմում կատարեն հաստատութեան տնօրէնութեան:

Ա.— ՖՐԱՆՍԱԿԱՆԸ, որ տասնըմէկ տարեկան կը հետեւի պետական լիսէներու արդիական բաժնի պաշտօնական ծրագրին — անգլերէն եւ սպաներէն լեզուներով —:

Բ.— ՀԱՅԿԱԿԱՆԸ, որ կ՚օժտէ սաներու հինները հայադիտական ծանօթութիւններով, հայ լեզուի, գրականութեան, հայ կրօնքի եւ պատմութեան, Հայաստանի աշխարհագրութեան մարզերուն մէջ:

Աշակերտուհիներ կ՚ընդունուին ութ տարեկանէն սկսեալ: Մանրամասնութեանց համար դիմել հաստատութեան տնօրէնութեան:

1, Bd. du Nord, LE RAINCY (S. et O.)
Tél : 927-01-72

Դպրոցասէրի ուսման ծրագիրը կ՚ընդգրկէ երկու ուրոյն բաժիններ:

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Հ. Բ. Ը. Միութեան Տիկնանց յանձնախումբը կը խնդրէ կազմակերպութիւններէն նկատի ունենալ հետեւեալ թուականները.—

ՀՈԿՏԵՄԲԵՐ 1, Երեքշաբթի երեկոյ Տիկնանց յանձնախումբի կազմութեան Գ. տարեդարձին առթիւ գեղարուեստական երեկոյթ:

ՀՈԿՏԵՄԲԵՐ 19, ցուցահանդէս հայ արուեստագէտներու նկարիչ, արձանագործ եւ փորագրիչներու գործերուն:

Հայկական Թանգարանը, 52 Ավընիւ Ֆոշ, (Փարիզ 16):

ՀՐԱՆՏ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ


51, Rue Monsieur-le-Prince, PARIS - 6e — Chèque Postal : 1278-35

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՇԻՐՎԱՆԶԱԴԷ, Երկերի ժողովածու, 10 հատոր լաթակազմ	70 Ֆր.
ՍՏԵՓԱՆ ԶՕՐԵԱՆ, Երկերի ժողովածու, 7 հատոր, լաթակազմ	56 Ֆր.
ՍՏԵՓԱՆ ԶՕՐԵԱՆ, Պապ թագաւոր, լաթակազմ	10 Ֆր.
ՍՏԵՓԱՆ ԶՕՐԵԱՆ, Հայոց բերդը, լաթակազմ	8 Ֆր.
ՎԱՀԱՆ ՏԷՐԵԱՆ, Երկերի ժողովածու, 2 հատոր լաթակազմ	14 Ֆր.
ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՒԻԹ, մեծադիր, գունաւոր նկարներով, լաթակազմ	10 Ֆր.
Վ. ԱՆԱՆԵԱՆ, Հայաստանի կենդանական աշխարհը, Բ.	8 Ֆր.
ԱՐՍԷՆ ՏԷՐՏԷՐԵԱՆ, Երկեր (Արուեան Պռօշեան, Պարոնեան)	17 Ֆր.
ՄՈՒՐԱՑԱՆ, Պատմուածքներ, գունաւոր նկարներով	5 Ֆր.
ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑԻ մասին յիշողութիւններ. լաթակազմ	7.50 Ֆր.
ՄԻՔ. ՇԱԹԻՐԵԱՆ. Գարունը նորից եկաւ. 296 էջ.	5 Ֆր.
ԱԲԳԱՐԵԱՆ. Մատենադարան (անգլ.) 18 գունաւոր մանրանկարներ	3 Ֆր.
ՀԵՆՐԻԿ ԹՈՒՄԱՆԵԱՆ. Երգի ծնունդը. բանաստեղծութիւններ	3.85 Ֆր.
Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ. Տաղեր, 200 էջ. լաթակազմ	3.50 Ֆր.
ՍՈՎԵՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ. Ա. 800 էջ. լթկզմ.	16 Ֆր.
ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ, Անլռելի զանգակատուն, Պէյրութ, 1963	10 Ֆր.

Առաքման ծախքը գնորդին վրայ

ԳՐԱՏՈՒՆՍ ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻՆ Է
ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՁԱՅՆԱԳՐԵԱԼ ԲՈԼՈՐ ԵՐԿԵՐՈՒՆ
ՃՈԽ ՄԹԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԵՒ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆՑ



ՃԱՇԱՐԱՆ

ԵԱՐ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԹԵՒԱՆԵԱՆ

Եւրոպական, հայկական եւ կովկասեան ընտիր ճաշեր:

Առաջնակարգ կովկասեան խորոված ներ:

ՀԱՃԵԼԻ ՄԹՆՈԼՈՐՏ

AU CŒUR MÊME DES CHAMPS-ÉLYSÉES

4, RUE ROBERT-ESTIENNE
(coin Rue Marbeuf) PARIS-8e
Téléph. : BAL. 31-21 et 30-84
Métro : F. D. Roosevelt

ՅԱՌԱՋ
ՕՐԱԹԵՐԹ
Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

Le PREMIER QUOTIDIEN ARMENIEN en EUROPE
HARATCH
Directrice : ARPIK MISSAKIAN
Rédaction et Administration : 32, Rue de Trévise - PARIS-9e
Fondé en 1925 — Téléph. : PRO. 86-60
R. C. Seine 57 A 2731 — C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա՝	Տար. 50 Ֆ.	Վեցամսեայ՝	27 Ֆ.
Արտասահման՝	Տար. 60 Ֆ.	Հատը	0.30 Ֆ.

ԿԻՐԱԿԻ 4 ՕԳՈՍՏՈՍ
DIMANCHE 4 AOUT 1963
LE NUMERO : 0,30 FR.

39րդ ՏԱՐԻ — Թիւ 9674
Fondateur : SCHAVARCH MISSAKIAN
39e ANNÉE — No 9674

Մեր Մաշտոցի Մասին (*)

(Բ. ՄԱՍ)

...ենք միշտ ունէինք,
...էր ցաւը մեր,
...ցաւած սիրտը ուզում է խօսել,
...երում բանտուած գետերի նման,
...ում է շաչել, ուզում ընդվզել:
... բացուած լոյսով քո արեւագուն,
...տուած հանճարիդ ոսկէ կնիքով,
...արառեց, խօսեց,
...եց մեր լեզուն
... հանճարափայլ ոսկեղենիկով:
...եց, բարբառեց,
... թէեւ փոքր ենք մենք որպէս ածու,
... Հայկն ապստամբ իր զօրքը վարեց
... կամքը փշրեց բիրտ Բաբելացու...
... թէեւ փոքր ենք մենք որպէս ածու,
... կորովն ունենք վահագն աստծու,
...ենք փորձութեան ու դաւի ժամին
... լինել նենգ Շամիրամին...
... թէեւ փոքր ենք մենք որպէս ածու,
... մեր սխրութեան ոգին թեւածում
... Տիգրան Մեծի շառաչիւն սրով
... պահպանել մեր սուրբ հայրենին
... նաւաարդեան առաւօտը զով,
... վարդավառը, մեր հացն ու գինին,
...ութիւնը Արարատ լերան,
...թիւնը մայրացող վազի,
... օջախների կրակն հուրհրան
... բացկլտումը մեր տաք երազի:

... այնպէս, ինչպէս լեռները մեր սէգ
ու ձիւնապսակ
... հասակն են չափում Գեղամայ
կապոյտ հայելում,
... պատմութեան մէջ մեր վեհութիւնը
մենք նորից տեսանք
... մեր հասակը տեսանք վայելուչ:
... մենք բարձրացանք, շտկեցինք նորից
մէջքերը մեր կոր,
... կամքը նորից սրեցինք որպէս
եռաթեւ մի տէգ,
... երբ ոսոխը բարբառեց հեռուից
որոտով մի զոռ,
... հարկ է թողնէք լեզու եւ հաւատ
ու իմը պաշտէք,
... ամենչելի լոյսի վարդապետ,
... աստուածային ուխտաւոր բանի,
... շուրթով դու ի պատասխան
գոչեցիր՝ երբեք,
... յաւիտեան եւ ոչ էլ մինչեւ մահն
յաւիտեանի...
... Ամարայրում,
... խօսում էին երկաթ ու արիւն,
... բախտը Հայոց աշխարհի,
... բանի, լոյսի վարդապետ արի,
... Վարդանի հետ, Վարդանի կողքին,
... էիր, սուրում անկապան,
... թական քո սրի շողքից
... էին պարսիկ ու բաբան:
... Աւարայրում,
... խօսում էին երկաթ ու արիւն,
... Վարդանը մահով իմացեալ,
... քաջերը մահով գեղեցիկ,
... այն ապրեց լեզուն մեր պայծառ,
... մենք ապրեցինք:

...եց մեր լեզուն,
...ենիկը մեր մեսրոպազուն,
...եց ոսկեղէն այն ծաղկի կեանքով
... է քաղում ապառաժ քարից,
... արմատների, նուրբ արմատների
խոր տառապանքով
... է քամու, հողմի հետ վայրի,
... օրէն փշրում է ժայռը, փշրում
ու ձեւում,
... ջուրն ու հող ու սերմ է տալիս
ու յարատեւում:
...եց մեր լեզուն,
... ճամբամերձ այն վազի նման,
... մրգների կոխան է դառնում,
... տուելուց լալիս է կամաց,
... այն լացով,

Ա՜խ, ԱՅՍ ՄԱՍԻՍԸ...

Ա՜խ, այս Մասիսը...
Որից փափկո՜ւմ են սրտերը բոլոր՝
Երբ ինքը... քար է:

Որ ջերմացնո՜ւմ է սրտերը մոլոր՝
Երբ ինքը... սա՜ռն է:

Որ աշխարհներից, հեռաւոր–հեռու,
Բոլոր Հայերին այստե՜ղ է բերում
Երբ ինքն... այստեղ չէ:

Որ միասնութեան քարո՜զ է կարդում
Աշխարհում ցրուած Հայերին անտուն,
Երբ... երկնեղքուած է:

Որ մեծ սիրոյ պէս
Ո՛չ հեռանում է,
Ո՛չ էլ գալիս է...
Ա՜խ այս Մասիսը:

ԳԷՈՐԳ ԷՄԻՆ

Որից յարութեան ընձայքն է յառնում,
Եւ հրաշագործ գինի պարգեւող ողկոյզ է
դառնում:
Ապրեց մեր լեզուն,
Շողաց, հուրհրաց նա բոցի նման,
Ու երբ շուրջ բոլոր մռայլը մութի շատ
էր խտանում
Բոցն այդ առաւել բորբոք էր դառնում:
Քանզի ցասումի փայլակն էր գալիս
ձուլւում այդ բոցին,
Ատելութիւնն իր շանթերն էր տալիս
նրա հնոցին,
Սէրն իր շիկնանքն էր նրա մէջ վառում,
Յոյսն իր շողերն էր նրան գումարում,
Իր մաքրութիւնն էր տալիս արցունքը,
Քրտինքն՝ իր լոյսը,
Խունկն՝ իր բուրմունքը,
Նետն՝ իր սլացքը,
Եւ սուրն՝ իր շողը,
Խոփն՝ իր ցոլանքը,
Մուրճն՝ իր կորովը
Իսկ մեր արիւնը, իսկ մեր արիւնը
Տալիս էր նրան իր տաք աւիւնը
Եւ անմահութեան զաղտնիքն էր տալիս:
Մենք միշտ ունէինք,
Բայց եւ ունէինք
Մենք ստեղծումի սրբազան մի հուր,
Որ պիտի խօսէր,
Պիտի ընդվզէր,
Ծառանար պիտի մինչ գահն աստծու,
Մինչ յաւերժութեան ոլորտը մաքուր:
Ու խօսեց լեզուն,
Ոսկեղենիկը մեր ոսկէդրուագ,
Ու մեր վանքերի, դպրանոցների
կամարների տակ,
Այրերն այն ճարտար լոյսի տակ մոմի,
Կամովին տրուած պասի ու ծոմի,
Արշալոյսների բոնկում էին սրտերից
հանում
Ու մագաղաթի վրայ սերմանում:
Եւ ի հեճուկս բախտի դժնդակ ու ցուրտ
ձմեռուայ,
Տժգոյն մագաղաթն ասես հրաշքով
դառնում էր այգի,
Զարդագիր դարձած սոխակն էր այնտեղ
գեղգեղում գերուած
Ու սիրամարգն էր ծածանում իր ճոխ
ու շքեղ ագին:
Այնտեղ լեռնային մեր եղնիկների սլացքն
էր ճկուն,
Ապրիլին ծաղկած դեղձենիների բոցը
շառագոյն,
Արշալոյսների շէկ հրախաղը երկնքում
ծաւի,
Աստծու հետ խօսող Գեղամայ ծովի
լաջվարդը թաւիշ,
Այնտեղ լոյս, լոյսի անմահ երազանք:
վարդավառ ու բոցի նազանք,
Այնտեղ լոյս, լոյսի անմահ երազանք:

ՎԱՀԱԳՆ ԴԱՒԹԵԱՆ

1) Ա. մասը տես «Յառաջ», Յունիս 23:

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ԳԵՐՄԱՆԻԱ ՄՏԱՀՈԳ

ՎԱԽ ԿԱՅ ՈՐ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԳԵՐՄԱՆԻԱ ՃԱՆՉՑՈՒԻ

Դաշնակցային Հանրապետութիւնը խորհրդակցութեան մէջ է Անգլիոյ եւ Ամերիկայի հետ որպէսզի յայտարարու – թեան բանաձեւ մը գտնուի, որով Ուա – շինկթըն եւ Լոնտոն վճռական կերպով ապահովութիւն տան որ Արեւելեան Գերմանիոյ անդամակցութիւնը Մոսկուայի հիւլէական համաձայնութեան պէտք չէ նշանակէ թէ Ամերիկա ու Անգլիա տրամադիր են ճանչնալու Փանքովի կառա – վարութիւնը իրաւական կերպով:

Այս ուղղութեամբ խօսակցութիւնները կը շարունակուին Պոնի մէջ, Արտաքին նախարարին եւ Անգլիոյ եւ Ամերիկայի դեսպաններուն միջեւ: Այս վերջիններուն ներկայացուցած բանաձեւերը անբաւա – բար նկատուեցան Գերմանացիներուն կողմէ, բայց գերմանական թելադրանք – ներն ալ մերժուած են Անգլիացիներուն եւ Ամերիկացիներուն կողմէ:

Մամուլի աղբիւրին ընթացքին, քե – նըտի կարգ մը ապահովութիւններ տը – ւաւ անշուշտ, բայց գոհացուցիչ չէին նը – կատուեր:

Պոնի կառավարութեան համար միայն վարկի հարց չէ: Կ'ուզեն շատ ճշգրիտ կերպով կարգադրել Ժողովրդավար Գերմանիոյ յետագայ կանոնադրը, իբրեւ ստորագրող Մոսկուայի Դաշինքին: Գա – լով Փանքովի կառավարութեան, միայն վարկի հարց չէ իրեն համար քանի որ այս համաձայնութիւնը ստորագրողները բաւական լայն իրաւասութիւններ կը ստանան: Այս խնդիրը բաւական վէճի նիւթ դարձած է որովհետեւ հարց է թէ, Անգլիացիք եւ Ամերիկացի խորհա՞ծ էին այս մասին երբ կը նշանագրէին համա – ձայնութիւնը:

Ոմանց կարծիքն այն է թէ Հաուիմըն եւ Լորտ Հէյլշըմ անմիջապէս չեն անդրա – դարձած համաձայնագրի բնագրին ծու – ղակներուն: Ըստ ուրիշներու Անգլիացին եւ Ամերիկացին գիտակցաբար որոշած են նման «ճկուն» քաղաքականութիւն մը:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՏՈՔԹ. ՈՒԱՐՏ միշտ հիւանդանոցի մէջ է: Իր վերջին բարեկամուհին՝ Ճուլի Կը – լիվըռ յայտարարեց թէ դատավարու – թենէն դուրս մնացող մարդոց անունները պիտի տայ եթէ Ուարտ մեռնի:

ԻՏԱԼԻՈՅ Հանրապետութեան Նախա – գահը՝ Սէննի վերջացուց իր գերմանա – կան ճամբորդութիւնը եւ Հռոմ վերա – դարձաւ:

ՓՐԱՆՍԱՅԻ կառավարութիւնը խիստ կերպով կը դատապարտէ չինական դիր – քը Մոսկուայի համաձայնութեան նը – կատմամբ:

ԱԼԺԵՐԻՈՅ պիւտճէին բացը 770 միլիոն Ֆրանքի հասած է:

ԷՀՐԸՆՊՈՒՐԿ պաշտօնական պատուի – րակներէն մէկը պիտի ըլլայ եւրոպացի գրագէտներու համագումարին որ շուտով կը բացուի Լենինկրատի մէջ: 60 գրա – գէտներ եւ քննադատներ պիտի մասնակ – ցին այդ համագումարին:

ԻԶՎԵՍՏԻԱ խիստ յարձակում մը կ'ը – նէ տը Կոլի եւ Ֆրանսական քաղաքակա – նութեան վրայ: Անհաւատալի կը նկատէ նախատինքները Խորհ. Միութեան դէմ «մարդու մը բերնին մէջ, որ ուրիշ ժա – մանակներ չէր խնայեր իր գովեստները Խ. Միութեան հանդէպ որ փրկեց Ֆրան – սան եւ Եւրոպան հիթլերական լուծէն»:

Օրէ Օր

ՏՂՄՈՒՏԻ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԻՒՆ

Սովետերէն լեզուով գրողներու մօտ վէճ է ծագած այն մասին թէ «ե՞րբ է գետը կոչւում ազատ»:

Հետաքրքրական է վէճը, մանաւանդ անոնց համար՝ որոնք կ'ուզէին գիտնալ թէ ազա՞տ է Արաքսը, այս փառաւոր գետը, որ ժամանակին իր ուսերուն վրայ բարձրացուց հայկական արքունական բազմաթիւ պալատներ, եւ խորտակեց քանդեց հռովմէական կամուրջները:

Ի՞նչպէս կը հասկնան, սակայն, գետի մը ազատութիւնը կամ գերութիւնը, ա – նոնք որ, այսօր, կ'ապրին Արաքս գե – տին ափերուն վրայ: Մտիկ ըրա՞ծ են, հասկցա՞ծ են «կամրջընկէց» յաւիտենա – կան եւ հայարժան գետին լեզուն:

Բայց Լենինի տիրացուներուն բարձրա – գոռ ճառճռուքին մէջ կարելի՞ է միթէ լսել գետին յաւերժական ալիքներուն մրմունջը: Ուստի, զարմանալի չէ եթէ նոյն տիրացուները, սովետական իմաս – տութեամբ յագեցած, պատասխանեն ձեր հարցումին. «Իրօք, գետը ազատ է կոչ – ւում այն ժամանակ, երբ լեռներից իջ – նելուց եւ քարերն իրար խփելուց յետոյ՝ հրաժարւում է իր ազատ վազքից, են – թարկւում է մարդու կամքին, գնում է կարկաչելու այգիներում ու դաշտե – րում»:

Լաւ կ'ըլլար որ մեր սովետաբանները տարբեր ուղղութիւն մը տային իրենց վէճին, տարբեր *դիալեկտիկա* մը գործածէին, կամ առնուազն տարբեր պատկեր մը ներկայացնէին՝ պանծացնելու համար սովետական ազատութեան գաղափարը: Իրենց բերած պատկերը կամ տուած բացատրութիւնը կ'առնէ այն իմաստը թէ աւանակը ազատ չէ՝ երբ դեռ ցիռ է, այսինքն վայրի էշ, ընդհակառակն ազատ է՝ երբ «ենթարկւում է մարդուն եւ բեռ է կրում» առտու–իրկուն: Ի՞նչ հարկ խօսելու ազատ կամ գերի անասուններուն մասին:

Սովետ բանաստեղծը այսպէս կը բա – ցատրէր գետին ազատութիւնը: « Ազատ է կոչւում գետը »,

Երբ չի մնում իր հին խուլքին,
Որ չոր թողած արտն ու այգին՝
Ազատ հոսի ուր ուզենայ,
Ջուր պղտորուի ու լճանայ,
Եւ գուերում օտար ու մութ՝
Դառնայ ճահիճ, դառնայ տղմուտ:

Կը թուի թէ Արաքսի ափերուն վրայ, «արդի մոդեռնիստները հէնց այդ «*Տըղ – մուտի Փիլիսոփայութեան* դիրքերից՝ փորձում են ժխտել սոցիալիստական ռէալիզմի գրականութեան հոսանքը: Ա – հա թէ ինչո՛ւ ներողամտութիւնն ամէն արատի, այլանդակի նկատմամբ, կամայ թէ ակամայ, տանում է դէպի արուեստի հոգեւոր լճացում»:

«Տղմուտի փիլիսոփայութեան» դիրքե – րուն կապուած են, կ'ըսեն մեր *պրո – գրեսիստ*ները, այն գրագէտները՝ որոնք կը պնդեն թէ «այլեւս չկան Պրոմեթէոս – ներ, Ֆաուստներ ու Դաւիթներ, թէ հա – մատարած մի գորշութիւն է իջել աշխար – հին ու մարդկանց, չկան ո՛չ վեհ երա – զանքներ, ոչ էլ մեծ երազողներ»:

Այսինքն, խեղօքցած է գետը՝ «լեռնե – րից իջնելուց եւ քարերն իրար խփելուց յետոյ», մոռցած իր ազատ վազքը՝ կազ – մեր է ճահիճ, կազմեր է ճախճախուտ, գարշահոտ տղմուտ: Իր փիլիսոփայու – թի՞ւնը, — վերջ դնել բոլոր ազատ գե – տերուն, կամրջընկէց ու փրփրադէզ ջու – րերուն: Ի՞նչ փոյթ թէ կազմուեր է տղմուտ, բորբոսն է նստեր ջուրերուն վրայ, գարշահոտութիւնն է տարածուեր շրջակայքը ու մինչեւ հեռակայքը:

ԱՐԱԶ

ԱՐՍԷՆԸ ԱՐՍԷՆԻՆ ԴԷՄ

—o—

Քաջք ընդ քաջս ելեալ···։

ԵՂԻՇԷ

Գ.

Վերստին սահմանենք վէճը, — անհրաժեշտ՝ արգիլելու համար որեւէ չեղում, մոռացում կամ չփոթութիւն, — որ կը զբաղեցնէ մեզ.—

Արդի հայերէնը, մեր աշխարհաբարը, կ'ընդունի՞ էջի փոխել է տառը որ փակ կը մնայ բառերու վերջավանկին մէջ, ինչպէս ամէն բառին մէջ, հոլովման պարագային: Կրնա՞նք գրել ամենէն՝ ընդունելով որ ուղղական հոլովն է ամէն:

Թաշեան վկայութիւն տալու կոչեց Ղազիկեան Հ. Արսէնը:

Մեր ամպրոպաշուռ վարդապետը, որ «քրէիքուր ոճիր» կը համարի գրել ամեն, ու կը պարտադրէ գրել ամէն, «ոճիր» կը գործէ ինք իր կարգին՝ երբ կը գրէ ամենէն՝ հոլովման մէջ:

Ընթերցողը տեսաւ թէ ո՛ւրկէ ծագում կ'առնէ այդ «ոճիրը». — Շփոթութիւն գրաբար եւ աշխարհաբար հոլովման ձեւերու, ճնշում դասական լեզուի աւանդութեանց, մանաւանդ կոյր հետեւողութիւն ձեռագրական վկայութեանց:

Գիտական, հայկաբանական որեւէ պատճառաբանութիւն չբերաւ Ղազիկեան:

Թաշեան վկայութեան կոչած էր նաեւ միւս Արսէնը, Բագրատունին: Բայց աշխարհաբարեան չէ եռամեծ այս քերականագէտը, ընդհակառակն կը մնայ հետեւորդ ոչ պակաս եռամեծ հայկաբան երից վարդապետաց աւանդութեան, եւ այն սովորութեամբ որ կը թելադրէ «յաճախել զօրինական ի վկայութիւն»՝ կը գրէ ամէն եւ ամեն (Ի պէտս, էջ 354), արդարացումով մը թէ երկու գրչութիւններն ալ կարելի է գտնել հին ձեռագիրներու մէջ: Այլեւս ի՞նչ կ'արժէ իր վկայութիւնը, երբ կը գրէ ամէնէն կամ ամենէն:

Բայց սակայն հայկաբանութիւն չէ: Ասիկա··· որձեւէգութիւն է քերականութեան մէջ: Կարելի չէ, վերջապէս, ըսել թէ սատանկ ալ գրուած է, անանկ ալ գրուած է:

Անշուշտ Բագրատունին Բագրատունի է, հի՛ն գինի, թանկագին գինի. «գովեսջիր զհին գինի» կ'ըսէ Պինդար, զոր թարգմանած է ինքը՝ Արսէնն Բագրատունի: Բայց սիրելի է ինծի՝ զովել «եւ զնորագոյն երգոց ծաղիկս»:

Ահա թէ ինչո՛ւ կը յանդգնիմ ըսել թէ գոհացում չի տար այս Արսէնը եւս, որովհետեւ, գրէ կամ ոչ՝ թէ ամէն բառը, է տառով, հոլովման պարագային կ'առնէ ամենէն ձեւը, էջի փոխելով է տառը, չի բացատրեր փոփոխման պատճառը:

Վկայութեան կոչելէ առաջ երրորդ Արսէնը, զոր պիտի ներկայացնեմ այս վէճին մէջ իբրեւ ընդդիմամարտ ոսոխ (անթակոնիսթ), մանաւանդ իբրեւ ախոյեան աշխարհաբար լեզուի, հարկ կը համարիմ յիշեցնել թէ «արեւմտահայ աշխարհաբարեան դպրոցը, որ ծնաւ անցած դարու երկրորդ քառորդին, կանոն դրաւ՝ որ արդի լեզուին մէջ բառերն անփոփոխ պահեն իրենց ուղղական ձեւը հոլովման մէջ, եւ աղով ուղեց դիւրացնել անոնց ուղղագրութիւնը»:

Հ. Վարդան Հացունին է որ կը կատարէ այս պատմական հաստատումը, (Ուղղ. էջ 327), իսկ նոյն աշխարհաբարը զայն կը վաւերացնէ հոլովման պարզ ձեւով, որ յատուկ է էն վերջաւորութեամբ հարիւրաւոր գոյականներու, ածականներու, մակբայներու, նոյնիսկ անձնանուններու.— Պարէն – պարէնէ, Արսէն – Արսէնէ, եւ ուրեմն ամէն – ամէնէն:

Արդարեւ, կորուսման եւ ձայնափոխութեան կանոններուն յեղաշրջումով՝ բոլորովին նոր կերպարանք մը ստացաւ արդի հայերէն աշխարհաբարը: «Ինչպէս ընդհանրապէս ամէն նոր լեզուաց, նոյնպէս նոր հայերէն լեզուին հետզհետէ կազմութեանը մէջ ամենայն ինչ միակերպ պարզութեան եւ որոշ բացայայտութեան դիմած է» (Քնն. Քեր. էջ 69):

– Սակայն, այս կանոնը, լեզուին այս ընթացքը խոր ընդվզում պատճառած է Հ. Վարդան Հացունիին, միակ հայկաբանը, որ ոչ միայն քաջաբար կը ճակատի աշխարհաբարացումի այս ձեւերուն դէմ, այլեւ կ'աշխատի, գիտական գոյն տալով, բացատրել թէ ինչո՛ւ ամէն (ուղղական հոլով է տառով) կանոնագրուած է գրել ամենէն կամ ամենուն (հոլովման հետ՝ էջի փոխելով է տառը):

Հացունի ապաւէն չի փնտռեր ձեռագիրներու մէջ, չի կռթնիր եռամեծ կամ քառամեծ հայկաբաններու: Ճամբայ կ'ելլէ քաջութեամբ, իր սեփական պրպտումներուն ապաւինած: Կը սիրեմ կռիւի երթը ա՛յս ձեւով, աղեղն ուսընդկախ, նետն ի ձեռին: Մինչեւ այժմ մեր հայկաբանները, ամէնքը, ամէն բառ առած հոլոված են ըսելով.— Այսպէս գրած է պարոն Այրը, այսպէս հոլոված է պարոն Բենը: Ոչ ոք մօտեցած է հարցին՝ Հացունիի քաջութեամբ եւ պատճառաբանութեամբ, չեմ ըսեր հմտութեամբ: Վերապահութիւնս անոր համար որ Հ. Վարդան Հացունի երբեմն··· կը բորբոսի հին հացի պէս:

Արդարեւ, Հացունի այնքան կը խորշի նոր ձեւերէն, այնքան կ'ախորժի հին ձեւերէն, որ հրապարակ կ'իջնէ վերահաստատելու համար, աշխարհաբարի մէջ, ոչ միայն ձայնափոխութեան կանոնը՝ ամենայն խստութեամբ, այլեւ կորուսման կանոնը՝ անողոք ջարդի մը ենթարկելով ձայնաւորները: Օրինակ.— Գրաբարի մէջ, եան վերջավանկով բառերը կը կորսնցնեն իրենց այբը՝ հոլովման պարագային: Մատեան կ'ըլլայ մատենի, ուր չկայ այբ, ջարդուած է, կորսուած: Հացունի այբերու նոյն ջարդը կը կատարէ մեր հայկական մկրտարանի (հին ու նոր) եաներուն մէջ եւս, — այսպէս, Զօհրաբեան, Տէրտէրեան, Մաթոսեան եւ ամէն Հայ՝ առանց բացառութեան՝ զոհ կուտան Հայու քիթը կամ պոչը, հռչակաւոր այբը: Հ. Արսէն գահավէժ հոլովումէն դուրս կ'ելլէ մականունովը անճանաչելի, — Ղազիկենի (մեր գիտցած ձեւով՝ Ղազիկեանի): Կամ Մանուկ Աբեղեանը, քիթ-բերանը անյայտ, կը դառնայ Աբեղենի (մեր գիտցած ձեւով՝ Աբեղեանի): Բարեբախտաբար, Հացունի նետած է թրքաբառ Սօմունճեան մականունը, այլապէս պիտի չճանչնար ինքզինք՝ երբ դառնար Սօմունճենի: Զկարծէք թէ տանձենի, կեռասենի կամ նման ծառանուններ են Ղազիկենին, Աբեղենին կամ Սօմունճենին, այլ հոլովման ձեւեր են՝ ըստ հին հայկական կանոններուն:

Մեր հայկաբանը կրնայ առարկել թէ Խորենացին ալ նման··· ծառանուններու վերածած է մեր հին մականունները:

Արդարեւ, Խորենացիի Հայոց Պատմութեան մէջ կը գտնեմ. «Խոցոտեալ ի Մուշեղայ որդւոյ Վասակայ Մամիկոնենի» (Գ. 37): «Աշխարհայայ Դիմաքսենի գըտեալ ժամ պատեհ» (Գ. 45): «Անապարեալ Սամէլի Մամիկոնենի» (Գ. 46):

Եթէ չվախնայի երկարելէ, կ'արձանագրէի իմ մէկ դիտողութիւնս, հիմնուած՝ Վահան Առաւեղեան անուան վրայ (Գ. 43), յետոյ Առաւեղենի (Գ. 45), այն չփոթութեամբ որ կը ծագի Առաւեղէն ձեւէն (=Առաւեղեան):

Հացունի կը չարունակէ իր այս անհաշտ ընթացքը ընդդէմ աշխարհաբարին, կորուսման կանոնէն անցնելով ձայնափոխութեան կանոնին, կերպարանափոխելով մեր ուղղագրութիւնը: Այսպէս կը հասնի էն վերջաւորութեամբ բառերու հոլովման, որ շատ կը հետաքրքրէ մեր վէճին հետեւողները: Հացունի հայերէն բառը կը հոլովէ հայերենի, եւ առանց ընկրկելու՝ ամէն-ամենի կամ ամենէն:

Եւ ահա կը շահինք հակառակորդ մը եւս, — դաշնակից՝ Թաշեանի:

Սակայն, ի՞նչ հիմերու վրայ կը դնէ Հացունի՝ քերականական իր այս գիտութինը, ա՛յդ է կարեւորը կամ հետաքրքրականը:

«Այս հիմնական եւ բոլոր լեզուին վերայ տարածուող օրէնքը», (ասոնք Այտընեանի բառերն են, զորս փոխ կ'առնէ Հացունի), իր ուժը կը ստանայ··· կանոնէն:

Ա լա պոնէօր: Վերջապէս հիմա պիտի խօսինք գիտութեա՛ն մասին: Վերջացան պատճառաբանութիւնները, «պարոն Այրը այսպէս կը գրէ», «հին ձեռագիրները այսպէս կ'աւանդեն» ու նման բանասիրական պըլըֆներ:

Ահա թէ ի՛նչ կը գրէ Հացունի.— «Ականջը մէկ օրէնք ունի, ոչ երկու» (Ուղղ. էջ 328): Ականջը երկուք, օրէնքը մէկ: Ու մեկնելով այս օրէնքէն, իրողութիւն՝ թէ հոլովումներու մէջ (աշխարհաբար) չի գործադրուիր փոփոխման կանոն՝ կը համարի հետեւանք «արեւմտեան հայուն խաթարուած ականջին»: Այլ խօսքով, երբ կը գրենք ամէն, բայց հոլովման պարագային՝ չենք գրեր ամենէն, հետեւանք է հայ ականջներու խաթարման:

Ձիս շատ կը հետաքրքրէ ականջը: Դրօշակի պէս պլլուն աջն ու ձախը բացուող այս երկու գործարանները մեծ դեր ունին լեզուներու պատմութեան մէջ: Գրիչին օժանդակ, զրպանքին օգնական՝ այս փառաւոր գործիքը այնքան շարժած է հետաքրքրութիւնս, որ միշտ փնտռած եմ այն գիրքերը, որոնք նուիրուած են ականջին հոգեբնախօսական ուսումնասիրութեան: «Զգայարանք եւ զգաստութիւն» երկարաշունչ աշխատութեան մէջ, որու միայն քիթին գլուխը, այն ալ մասամբ, հրատարակած եմ դեռ (տես Զուարթնոց), երկա՛ր քննութեան կ'առնուի ականջին դերը՝ լեզուին կազմութեան, յեղաշրջումին եւ երաժշտական արտայայտութեան տեսակէտով: Թէ լըսողութեան գործարանը անուրանալի դեր մը ունի լեզուին կեանքին մէջ՝ ոչ ոք կը պնդէ հակառակը: Բայց Հացունի կը մոռնայ նաեւ թէ լեզուին կեանքին մէջ ամէնէն էական, ամէնէն վճռական դերը խօսքի գործարա՛նն է որ կը կատարէ, — ըսել կ'ուզեմ՝ ականջը ստորադաս է հագագին:

Ի՛նչ աղուոր, ի՛նչ ակադեմական հրատարակութիւններ խօսքի գործարանի մասին, յարաբերաբար լեզուի պատմութեան:

Սակայն, ուսումնասիրել հայկական ականջը, ինչպէս հայկական հագագը, խոստանամ մըն է որ մեզ կը տանի··· [illegible] վէպ ծով»: Լաւ կ'ըլլայ որ կանգ առնենք ծովեզերքը եւ տեսնենք թէ ի՛նչ կը [illegible] Հացունի, տապալելու համար ամէնէն եռքը՝ աշխարհաբարի ախոյեանը, Այտընեան Հ. Արսէն:

Շ. ՆԱՐԴՈՒՆԻ

ՇԱՌԼ ՊՕՏԼԷՐ ԵՒ ԻՐ ԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԴՐԱԽՏՆԵՐԸ

—o—

Շառլ, որ տասներեք տարեկան է այժմ, կ'ապաստանի Լամարթինի եւ Հիւկոյի տենդագին ընթերցանութեան մէջ. երկու երիտասարդ բանաստեղծներ, որոնց երկերը գաղտնի կերպով կը շրջին դրասեղանէ դրասեղան: Արինալի դէպք մը զինք պիտի խլէ իր բանաստեղծական երազանքներէն: 1834ի սկիզբները, Լիոնի բանուորները կ'ապստամբին: Հինգ օր շարունակ, կատաղի կռիւներ տեղի կ'ունենան Քրուա-Ռուսի թաղամասի փողոցներուն մէջ: Բնագաղաբար, Շառլ խըռովարարներու կողմը կը բռնէ: Չէ՞ որ ասոնք կ'ուզեն իրենց շղթաները փշրել. եւ ինքն իսկ շղթայուած մը չէ՞: Աւելին կայ. դեր-գնդապետ Օփիքն է, որ կը ղեկավարէ ապստամբութիւնը ջախջախելու պաշտօն ունեցող զինուորական ուժերը···

Հեռուէն հրացանաձգութեան աղմուկը լսելով, տղան չի կրնար սա սրբապիղծ ուխտը չընել.— «Աստուած իմ, այնպէս ըրէք որ մեռնի··· Աստուած իմ, այնպէս ըրէք որ սպաննեն զայն···»:

Դեր-գնդապետ Օփիք ո՛չ միայն ողջառողջ դուրս կուգայ այս բոլորէն, այլ նաեւ, իր ցոյց տուած խստութեան համար կը ստանայ գնդապետի աստիճան: Ամէն չարիքէ բարիք կը ծնի.— Օփիք պաշտօնի կը կանչուի Փարիզի զինուորական կառավարիչին սպայակոյտին մէջ: Լուի-լը-Կրան լիսէն քիչ մը նուազ խստամբեր է քան Լիոնի արքայական Գոլէճը: Բայց, հակառակ 1837ի ընդհանուր Մրցումին մէջ լատիներէն ոտանաւորի երկրորդ մրցանակը շահելուն, Պօտլէր այնքան անկարգապահ է, որ 1839ի Ապրիլին, երբ տասնըութ տարեկան է, կը վտարուի դպրոցէն:

×

Կարգ-կանոնը սիրող մարդ, գնդապետ Օփիք մինչեւ իսկ կը խօսի «Ուղղիչ տան» մասին: Բայց, Քարոլին Պօտլէր, ինչպէս միշտ՝ այս անգամ ալ երկու սուրի մէջ ինկած է, հաւասարապէս սիրած այս երկու անձերուն միջեւ, որոնք զինք երկու կողմէն կը քաշեն: Շառլի ի նըպաստ կը միջամտէ. տղան ուսումը պիտի շարունակէ փիլիսոփայութեան իր ուսուցչին հսկողութեան տակ: Բարեբախտաբար, առաջին անգամէն կը յաջողի պաքալորէային: Այժմ եւ այնուհետեւ ի՞նչ պիտի ընէ:

Զօրավար Օփիք (դարձեալ պաշտօնի բարձրացում ունեցած է), զինուորական ասպարէզը նկատի չունի տղուն համար. բայց կը թելադրէ որ դիւանագէտ ըլլայ: Նեղը մնացած, որոշում մը տալու պարտաւորուած, Շառլ ի վերջոյ կը խոստովանի անխոստովանելին.— կ'ուզէ գրագէտ ըլլալ, կ'ուզէ բանաստեղծ ըլլալ, կ'ուզէ գրել···

Այս բոլորը՝ դեռ ոչինչ, եթէ Պօտլէր ընտանեկան յարկէն չնախընտրէր Սէնի ձախ ափի սրճարանները, ուր ձերմակ գինիին հանդէպ ունեցած հակումը կը սկսի վախ պատճառել խեղճ Քարոլինի: Գրեթէ միշտ բացակայ է տունէն, կամ ալ, եթէ պահ մը երեւայ զօրավարին կազմակերպած ընդունելութեանց (Օփիք նշանակուած է սպայակոյտի Դպրոցի հրամանատար), անպատկառ ու նոյնիսկ անհաճոյ ելոյթներ ունենալու համար է միայն: Իրիկուն մը, պաշտօնական ճաշի մը ընթացքին, գայթակղութիւնը կը պայթի: Շառլի անտեղի մէկ խօսքին վրայ, զօրավարը զայն խստօրէն կը յանդիմանէ: Հիւրերը, շատ անյարմար կացութեան մէջ, կը լռեն: Պօտլէր, նուաստացած, ոտքի կ'ելլէ եւ միշտ քաղաքավար՝ նոյնիսկ սաստիկ բարկութեան մէջ.

— Պարո՛ն, կ'ըսէ իր խորթ հօր, զիս ծանր վիրաւորեցիք: Ասիկա դաս մը կ'արժէ, եւ ձեզ խեղդելու պատիւը պիտի ունենամ:

Սակայն, զօրավարն է որ վերջին խօսքը կ'ըսէ. կ'ապտակէ Պօտլէրը, որ ջըղային տագնապի մը մէջ գետին կը փըռուի՝ վար ինկող աթոռներու աղմուկին մէջ:

Այս դէպքէն յաջորդող ընտանեկան ժողովը — կնքահայր, քանի մը հեռաւոր ազգականներ — որոշեց Փարիզէն հեռացնել տղան՝ իր «վատահամբաւ յարաբերութիւններէն» հեռացնելու համար: Քարոլին Օփիք, սիրտը ճմլուած, համակերպեցաւ:

— Գոնէ լաւ ճամբորդութեան մը ղրկենք, խնդրեց: Միտքը կը թարմանայ···

Ծիծաղն ըսելով, պատիժը շատ ալ խիստ չէր: Զօրավար Օփիքը խնդրել [illegible] ըլլալուն համար, Պօտլէր, 1841 Յունիսի 9ին Հարաւային Ծովերու Նաւով կը մեկնէր դէպի Կալկաթա:

×

Բեռնատար այն նաւերէն էր, որոնք քանի մը ճամբորդի ալ տեղ կ'[illegible]: Բայց բանաստեղծական ոչ մէկ [illegible] ունեցող այլ ճամբորդներէն — մեծ մասամբ բաղկացած առեւտրականներէ եւ գաղութային բանակի սպաներէ — Պօտլէր կը նախընտրէ նաւաստիներուն ընկերութիւնը: Նաւապետ Սօր, որուն զօրավար Օփիք յանձնած է, թէեւ [illegible] շատ մեծ յոյսի, իր պաշտօնը [illegible] եւ գաղութային բերքերու առեւտուրի մէջ մտնելու խորհուրդ տալու պաշտօնը [illegible], լաւ մարդ մըն է, որ շատ աւելի լաւ [illegible] տէ դալել ծովու փոթորիկները [illegible] «դանկի մը փոթորիկները»:

(Շար. – 2)

ՀԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՀԱՍՏԱՏՈՒՄՆԵՐ

ՀԱՅՈՑ ԱԶԳԻՆ ԴԷՄ ԴԱՒԱԴՐՈՂ
ՉՈՐՍ ՅԵՂԱՍՊԱՆ ՓԱՇԱՆԵՐ

Բ.

Քեազիմ Գարապեքիր փաշա նախապէս ...ալիթ Երդ Գոլ օրտուի սպայակոյտին ...պետ եղած էր եւ գործիք էր Խալիլի ...ձեռքը: Երբ Գարապեքիր Էրզրում կը ...նուէր, Խալիլ Գանձակէն անոր հետ ...յարաբերութեան մէջ մտած էր:

Մեր ականատես օտար վկան կը յայտ...նէ, որ Խալիլ եւ Քեազիմ չորս վաշտերէ ...բաղկացեալ 6000 հայ գործաւոր-զին - ...ւորներուն 4000ը սպաննած էին դաւադ...րութեամբ, զինուորական միջոցներով եւ նա...ւորէն, զինուորական միջոցներով եւ նա... ...հաւաքուած այդ հայ «գործաւոր-զին - ...ւորներուն» դիակները տեսած էր՝ փո...սերը ուռած վիճակի մէջ:

Խալիլ, Մուսուլ երթալէ առաջ, Պոլիս ...կը գտնուէր: Եղած էր, քանի մը ամիս ...զինուորական կառավարիչ եւ անդամ էր ...«Մասնաւոր Կազմակերպութիւն» կոչ - ...ուած (Թեշքիլաթը Մախսուսէ) ջարդա - ...րար կեդրոնական Մարմնին եւ Պրուսա..., Իզմիթի, Ատափազարի, մասամբ ...եւ Քասթեմոնիի եւ Քէօթահիայի շըր...ջաններու բանտարկեալներէն կազմած էր ...խմբեր եւ 100ական եւ 200ական խումբերով, Նոյեմբեր ամսուն (1914ին) ղըր...կած էր զանոնք Սամսոն, Տրապիզոն եւ ...երկրին ներսերը, աւերելու համար հայ ...գիւղերը:

Հայաստանի Հանրապետութեան յաղ...թարութենէն ետք, Էնվէրի փոքր եղ...բայրը՝ Նուրի, եւ հօրեղբայրը՝ Խալիլ ...կը հրամայէին Կովկասի Թուրք եւ Թա - ...թար բանակներուն:

1918 Օգոստոսին, Թուրք բանակին Պա...քու մուտքէն առաջ, խուլ պայքար մը ...տեղի կ՚ունենար գերման զինուորական ...իշխանութեան եւ Թուրք հրամանատա - ...րութեան միջեւ: Թուրք - Թաթար խառ...նական այդ ուժերուն վերին հրամանա - ...տարն էր Նուրի փաշա, իբրեւ բանակ...խումբի հրամանատար. Խալիլի զինուոր...ներն ալ ենթակայ էին Նուրիին: Նուրիին ...գործքը Կէօրինկի նման, զարդարուած ...էր շքանշաններով եւ ան սոնքալով կ՚ու...զէր բնաջինջ ընել Պաքուի Հայութիւնը, ...երբ Թուրք բանակը 1918 Սեպտեմբերի ...սկիզբը մտնէր Պաքու: Նուրիի սպայա - ...կոյտին պետն էր գերման գնդապետ Փա...ռաքուին: Ան լաւ դեր մը կատարեց Միրսալ փաշա - ...յէն՝ Թուրքերու ջարդի ծրագիրներուն ...մասին եւ Թուրք բանակներուն Պաքու ...մտնելէն առաջ, ծրագրուած հաւանական ...ջարդերը արգիլելու համար կազմած էր ...պաշտպանողական ծրագիր մը, Թրքական զօրա...մասերը զետեղելու որոշ կէտերու վրայ, ...հանրային ապահովութեան տեսակէտով: ...Պաքուի ջարդի նախօրեակին՝ սպան - ...նուած էին քանի մը օտարականներ, — շուէտացի եւ գերմանացի: Եւ գնդապետ Փառաքուին ծանր դիտողութիններ ըրած էր այդ մասին Նուրիին եւ Խալիլին: Թուրք երկու ջարդարար փաշաները ղըրաւոր հրամանագրով մը պաշտօնանկ եղան: Ջարդարար Թաթար խուժանը, քաջալերութեամբը Թուրք եւ ազէրի զինեալ ուժերուն, երեք օրուան մէջ կոտորած էին 30.000 պաքուցի Հայեր: Նիւթական կորուստը կը հասնէր 470.000.000 ռուբլի:

Բացի տուներու եւ խանութներու կողոպուտէն, բռնաբարութիւններ տեղի կ՚ունենային, եւ ջարդարար փաշաները, Գուբպան Պայրամի պատրուակով, խընջո՛յք կը սարքէին ջարդի ժամանակ:

1918 Հոկտ. 30ի զինադադարէն ետք, Խալիլ Կ. Պոլսոյ մէջ ձերբակալուած էր:

Գնդապետ Փառաքուին մանրամասն տեղեկագիր մը գրկած էր Պաքուի անցուդարձերուն մասին՝ գերման զինուո - րական առաքելութեան պետ զօրավար Հանս Ֆոն Զեքթի (1918 Սեպտ. 13-26): Ֆոն Զեքթ նախապէս եղած էր ռուսա - կան ճակատին դէմ գործող մարեշալ Ֆոն Մաքենզէնի բանակին մէջ, անոր սպայակոյտի պետն էր, եւ գրաւած էր Ռումանիան: Ֆոն Զեքթ Գերմանիա վերադարձաւ: Էնվէր փաշա փախաւ Գեր - մանիա. Խալիլ փաշա ժամանակ մը մնաց Թրքական պատերազմական նախարարութեան զինուորական բանտին մէջ եւ Թուրք բժիշկներու սուտ տեղեկագրով, իբր կեղծ «հիւանդ», փոխադրուեցաւ Կիւլհանէի հիւանդանոցը, ուրկէ Իթթիհատական ղեկավարներու հետ անցաւ Անատոլու, 1919 Օգոստ. 14ին, իրեն հետ ունենալով նաեւ ուրիշ յեղասպան մը՝ Քիւչիւք Թալաաթ կոչուածը, քեմալա - կան ուժերու հետ գործակցելու համար ընդդէմ Հայաստանի Հանրապետութեան:

Խալիլ անցաւ Գանձակ եւ համաձայնեցաւ բոլշեւիկ ուժերուն հետ, միասնա - բար կործանելու համար Հայաստանի Հանրապետութիւնը:

Իսկ Նուրի փաշա, զոր Պաթումի մէջ Անգլիացիները ձերբակալած էին, փա - խաւ (աւելի ճիշդ՝ Անգլիացիները փախցուցին զինք): Լորանս Ծօ Մուր կը հաղորդէ, «Էժիա» պարբերաթերթին մէջ (Յունիս, 1922, էջ 476), որ Էնվէրի եղբայրը՝ Նուրի փաշա «Անգարա եկաւ, երդում ըրաւ Քեմալականներուն հետ ազգային դատին ի նպաստ աշխատելու»:

ՀԱՅԿԱԶՆ Գ. ՂԱԶԱՐԵԱՆ

ՖՐԱՆՍ. ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

LE CARNAVAL DES REGENTS (1)

Ժիւլիէն Շըվեռնի այս գրքով կը ջա - նայ վերլուծել եւ բացատրել քաղաքական ներկայ կացութեան ամէնէն փափուկ հարցը, որ իշխանութեան տեսակ մը «այլասերում»ն է եւ հեռացումը՝ ժողովրդավար սկզբունքներէ:

Երբ երկրի մը զինուորական ուժերը սա կամ նա ձեւով կը միջամտեն ներքին կառավարական գործերուն, փոխանակ զոհանալու երկրին արտաքին վտանգներուն դէմ միայն մէջտեղ ելլելու, ար - դիւնքը կ՚ըլլայ տեսակ մը բռնատիրու - թիւն: Բազմաթիւ երկիրներու մէջ, ըստ հեղինակին իշխանութեան գլուխ գըտ - նուողները բանակին ուժով կը մնան ի - րենց դիրքերուն վրայ: Պետական հար - ուածները գրեթէ միշտ զինուորական ուժին միջամտութեամբ տեղի կ՚ունենան:

Մալափառթէի համբաւաւոր «Պետա - կան հարուածի թեքնիքը» գրքէն երեսուն տարի ետք իսկ այս ուսումնասիրութիւնը չահեկան է միայն նոր ժամանակներէ իր բերած կարգ մը վկայութիւններով: Առաւելապէս նախագահ տը Կոլի կառա - վարչական դրութեան դէմ է հեղինակը, որ ամէնէն ծանր ամբաստանութիւննե - րով հրապարակ կ՚իջնէ միայն քննադատելու համար:

LE GLUAU (2)

Ամերիկացի Ճոն Հոքսի այս դժուա - րամարս վէպը, զոր Անտա Կոլէմ ֆրանսերէնի թարգմանած է, պատմութիւնն է երեք «անհաւասարակշիռ» մարդոց որոնք ձի մը կը գողնան: Նիւթը ոչինչ է գրեթէ: Ինչ որ հեղինակը կը փորձէ եւ իրմէ առաջ շատեր փորձած են, պատմելու կերպ մըն է որ կը կայանայ երազը, երեւակայութիւնը եւ իրականութիւնը իրարու խառնելու եւ եղածին պէս ընթերցողին երեւին նետելու մէջ: Աւելորդ է ըսել որ երբ հանճարի կայծ մը ունենայ հեղինակը, այս խառնափնթոր բառակոյտերը տարբեր իմաստ մը կը ստա - նան: Այս հանճարի կայծը չի տեսնուիր Հոքսի այս չորրորդ վէպին մէջ:

Դժուար է կարդալ գիրքը, որովհետեւ երբ ընթերցողը սովորականէն աւելի մեծ ճիգ մը կ՚ընէ հետեւելու համար հեղի - նակին խօսքերուն, պատմութեան եւ դաուանցանքին, կը փափաքի դրական դոհացում մը ունենալ, մոռնալու համար իր յոգնութիւնը:

Թերեւս ամերիկերէն բնագիրը աւելի ինքնարուխ եղած ըլլայ, բայց Ֆրանսերէն թարգմանութեան մէջ ծանրութիւն, խառնաշփոթութիւն եւ արուեստական ճիգ մը կայ ամէն բան տարբեր ձեւով ըսելու:

Նորութեանց հետեւողները պէտք է կարդան այս գիրքը ճանչնալու համար ամերիկացի երիտասարդ սերունդի մէկ ներկայացուցիչը, որ բազմաթիւ հետ - ցողներ ունի Նոր Աշխարհին մէջ:

PARLE-MOI, DIS-MOI QUELQUE CHOSE (3)

Մանլիօ Քանքոնիի առտին, ընթացիկ կեանքը դրական վէպի մը պատմուածով տալու փորձ մը կ՚ընէ, ինչպէս հանճա - րեղ իր պղպակիցներէն ոմանք շարժա - նկարի աշխարհին մէջ հիանալի գործեր տուին նոյն ուղղութեամբ: Բայց անոնք հանճարեղ էին, մինչ ինք որոշ տաղան - դով եւ «հիմուր»ով գրող մըն է առանց տպաւորիչ, մեծ անհատականութեան:

Շատ հաճելի է կարդալ այս իտալական վէպը, բայց իբրեւ զուարճալի ժամանց:

Պէտք է ըսել որ շարժանկարի մէջ ալ Իտալացիները չմնացին այն բարձրու - թեան վրայ, ուր Վիթթորիօ տէ Սիքայի պէս խորապէս մարդկային երգիծաբան - ներ կը փայլէին տասնեակ մը տարիներ առաջ: Առտնին կեանքի մանրամասնու - թիւնները ուրիշ նիւթերու պէս արժանի են անշուշտ դրական չահագրգռութեան, բայց կարեւորը նիւթը չէ միշտ, արուեստով տալն է:

Մ. ՀԱՃԵԱՆ

1) Julien Cheverny :

2) John Hawkes :

3) Manlio Cancogni : Editions Julliard, Paris 1963.

ՀԱՅԱՍՏԱՆ

ՆԵՐԳԱՂԹ

Վերջին ինը ամիսներու ընթացքին հայրենիք ներգաղթած են 1936 հոգի, կը հաղորդէ Հայաստանի Հեռագրական Գործակալութիւնը:

ՀԱՇՈՒԱԿԱՆՆԵՐՈՒ ՊԱՀԱՆՋ

Հայաստանի արդիւնաբերական ձեռ - նարկութիւններուն մէջ աշխատող 417 գլխաւոր հաշուապահներէն բարձրագոյն կրթութիւն ունին միայն 41ը, իսկ չինարարութեան մէջ աշխատող 207էն՝ 18: Մնացեալները փորձառութեամբ տէր դարձած են իրենց մասնագիտութեան:

Այս պարագան բացասական անդրա - դարձում կ՚ունենայ գործարաններու եւ գրասենեակներու հաշուական գործու - նէութեան վրայ, կը գրէ Վ. Սաղաթէլեան «Ս. Հայաստան»ի Յուլիս 19ի թի - ւին մէջ:

«ՅԱՌԱՋ»ի ԹԵՐԹՕՆԸ 196

ԵՐԼՏՐՁԻ ՊՕՄՊԱՆ

ՀԱԶԱՐ ԻՆԸ ՀԱՐԻՒՐ ՉՈՐՍ

Փախստական Սիլվիօ Րիչչի, այլ ան...ուամբ Ճաղատ Արիսթիտի, այլ անուամբ ...Նօյօ, այլ անուամբ Ալֆոնս Վոլկան, բուն ...անուամբ Կարապետ Յովհաննէսեան. ...Թրաստ Եուվանովիչ, այլ անուամբ Թոր...գոմ, բուն անուամբ Արտաշ Խաչիկ Գա...բուտեան, կառապան Մկրտիչ Ղարիպ...եան, որդի Սարգիսի՝ նոյն վայրադ դի...տաւորութեամբ, պատրաստեցին, բերել ...տուին այն պայթուցիկ եւ քանդիչ նիւ - ...թերը, որ պատճառ եղան յիշեալ անձե...րու սպանման եւ վիրաւորման: Յիշեալ ...Լիֆա Րիֆսի կինը՝ փախստական Սոֆի ...Րիֆս, այլ անուամբ Մարի Զայց, ձեր - բակալեալ Էտուար Ժօրժ, որդի Ժիրարի, գործակցեցան եղեռնական արարքը կազմակերպող եւ ոճրագործ անձերուն, եւ այս անիծեալ դիտաւորութիւնն ի գործ դրուելու օժանդակելու համար պայթուցիկ եւ քանդիչ նիւթեր հայթայթեցին: Ժօրժի կինը, փախստական տիկին Աննա Նէյլէնս, ձերբակալեալ Մա - նուկ Իսմէտեան, սրճարար Նշան Յով - հաննէսեան, Առաքել Նահապետեան մասնակցած են այս անիծապարտ ձեռնարկին եւ մարդիկ սպաննելու գործին, Օսմ. երկիրներ ուժանակ ներմուծեցին, ըն - դունեցան եւ պահեցին՝ խռովարարական դիտումով:

Յովսէփ Թօփալեան, Ֆրօ Պաղտոյեան, Յովհաննէս Ղարիպեան, փախստական Յովակիմ, կօշկակար Արշակ, այլ ան - ուամբ Արտաշ, Գարեգին Միհրանեան, այս անիծապարտ խռովարար անձանց ձեռնարկին մասնակցելու համար՝ զոր - ծեր տեսան եւ պատրաստութիւններ ը - րին, եւ այս կերպով անդամակցեցան խռովարարական կոմիտէին:

Մանուկ Կէչեան, Պօղոս Կէչեան, Մա - նուկ Օթոյեան թէեւ մասնակցութիւն չունեցան եղեռնական պայթման գործին մէջ, բայց խռովարարական նպատակներու ծառայելու համար պայթուցիկ գործիքներ պատրաստեցին: Փախստական տիկին Անչքովա, այլ անուամբ Անճոլա, Անտոն Գոչ, այլ անուամբ Ամուճա Ալաճաճեան, Երուանդ Ալաճաճեան, Թադէոս Յակոբեան՝ Ֆիլիպէի եւ Սոֆիայի մէջ խորհրդակցութիւններ ըրին, եւ որոշեցին որ ի գործ դրուի եղեռնական այս արարքը:

Միջնորդ Մաթէօ, Միխալ, բերուած կառքը պարզ կառք կարծելով՝ միջնորդեցին եւ մաքսատունէն հանեցին, երկաթագործ Մանոլ եւ Միլթօ, առանց գիտնալու թէ եղեռնական արարքին պիտի գործածուի այն երկաթ սնտուկը, որուն մէջ դրուեցան պայթուցիկ նիւ - թերը, ի փոխարէն վարձքի շինեցին զայն եւ նորոգեցին:

Ձերբակալեալները՝ հարցաքննութեան եւ դատավարութեան պահուն իրենց ը - րած խոստովանութիւններով եւ յայտարարութիւններով, հարցաքննութեան թուղթերով եւ քննութեանց եւ վերլուծմանց տեղեկագիրներով, իրենց քովէն գտնուած վնասակար լրագիրներով, նամակներով եւ այլ թուղթերով եւ որոշ ապացոյցներով յանցապարտ հռչակուեցան իբր յիշեալ արարքները գործող եւ կազմակերպող, բացի միջնորդ Մաթէոյէ եւ Միխալէ, երկաթագործ Մանոլէ եւ Միլթոյէ, որոնցմէ առաջինները մաքսատունէն հանած են կառքը, իսկ վերջին երկուքը շինած են երկաթ սնտուկը, անգիտակցաբար:

Գալով ամբաստանեալ Երուանդ Յով - հաննէսեանի, Եղիա Գահուէճեանի եւ Խա - չիկ Պլոյեանի, հաստատուած չըլլալով թէ անդամ են խռովարարական ընկերութեան եւ մասնակից անոր գործերուն եւ մտադրութիւններուն, որոշուեցաւ ան - պարտ արձակել զանոնք:

Յանցապարտութեան այս վճիռը կար - դացուելէ վերջ՝ ոտքի ելաւ ընդհ. դա - տախազ Նէճմէտտին պէյ, եւ պահանջեց որ ամբաստանեալները դատապարտուին ըստ պատժական օրէնքի հետեւեալ տրամադրութեանց.—

Փախստական Լիֆա Րիֆս, Ռուպինա Ֆայն, Երուանդ Ֆրանկիւլեան, Ճորճ Փեթրի Վարշամով, — 55րդ յօդուածին եւ 174րդ յօդուածին վերջին հատուածին:

Փախստական Սիլվիօ Րիչչի, Քարլ Եուվանովիչ, Թրասս Եուվանովիչ եւ Մկրտիչ Ղարիպեան. — 58րդ յօդուածին Ա. յաւելուածին Ա. հատուածին:

Փախստական Սոֆի Րիֆս, եւ ձերբակալեալ Էտուար Ժօրժ. — 45 եւ 55րդ յօդուածներուն եւ 58րդ յօդուածին Ա. յաւելուածին Ա. հատուածին:

Փախստական Աննա Նէյլէնս Ժօրժ եւ ձերբակալեալ Մանուկ Իսմէտեան, Նշան Յովհաննէսեան, Առաքել Նահապետեան, 58րդ յօդուածին Բ. յաւելուածին վերջին հատուածին:

ՍՄԲԱՏ ԲԻՒՐԱՏ

(Շար.)

ՅԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

ՇԱԻՒԼ.— Կապ. Խաչի Շաւիլի մաս-նաճիւղի ընկերուհիները ցաւակցութիւն կը յայտնեն ընկերուհի այրի Տիկին Շնորհիկ Փափազեանին եւ իր ընտանե-կան պարագաներուն, իրենց եղբօր եւ ազգականին

ՄԻՆԱՍ ՍԷՅԻՍԵԱՆԻ

մահուան առթիւ:

×

Հ. Յ. Դ. Նոր Սեբունդի Շաւիլի խում-բը ցաւակցութիւն կը յայտնէ ընկ. Սար-գիս Սէյխեանի, ընկերուհի Լիլիան Փա-փազեանի եւ իրենց ընտանեկան պարա-գաներուն, իրենց հօր եւ մօրեղբօր

ՄԻՆԱՍ ՍԷՅԻՍԵԱՆԻ

մահուան առթիւ:

ՆՈՒԷՐ

Իրենց Թոռնիկի ԱՆՆԱյի ծննդեան ու-րախ առթիւ Տէր եւ Տիկին Ն. Ցարէթ-նազովեան Մշակոյթի Տան Ս. Թէհլիր-եան սրահին կը նուիրեն 50 ֆր., «Հա-յաստան» թերթին՝ 30 ֆր.: (Մշակոյթի Տան գումարը ստանալ «Յառաջ»էն):

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

ORIENT

Եռամսեայ պարբերական ամբողջովին նուիրուած Միջին Արեւելքի երկիրներու անցուդարձին:

Բ. եռամսեայ 1963 — թիւ 26

Շահեկան բովանդակութիւն

114, Champs-Elysées, PARIS

ՖՐԱՆՍԱՀԱՅ ԿԱՊՈՅՏ ԽԱՉԻ ՕԴԱՓՈԽՈՒԹԵԱՆ ԿԱՅԱՆ

ՓԱՐԻԶԻ ԽՈՒՄԲԻ ՄԵԿՆՈՒՄԸ

Փարիզի խումբը կը մեկնի թուրիսթիք օթոքառով այս երկուշաբթի առաւօտ, Օգոստոս 5: Ժամադրավայր՝ Սպուսռ Մոնբոլոն, Ռիւ Լաֆայէթ ժամը առա-ւօտեան 6,30ին: Խումբը նոյն իրիկունը կայան կը հասնի:

×

ՎԵՐԱԴԱՐՁ

’ Ֆրանսահայ Կապոյտ Խաչի Օդափոխու-թեան կայանի մանուկներու առաջին խումբի վերադարձը, Օգոստոս չորսին, առաւօտուն ժամը 6.15ին, Կառ տը Լիոնի մէջ հանդիպում ծնողքներու եւ մանուկ-ներու:

×

ՄԵԿՆՈՒՄ

ԼԻՈՆ.— Ֆր. Կապ. Խաչի օդափոխու-թեան կայանի մանուկները կը մեկնին Օգոստոս 4ին կիրակի օր, հաւաքոյթ ժա-մը 16ին ՓԷՌԱՇ, կայարանի մուտքի մեծ ժամացոյցին տակ:

×

Մարսէյլի խումբերը կը մեկնին Օգոս-տոս 4ին: Հաւաքատեղի՝ ԿԱՌ ՍԷՆ-ՇԱՐԼ

Լիոնի խումբը կը մեկնայ նոյն գնաց-քին՝ իր քաղաքէն:

... ՖՐԱՆՍ 1... ՕԳՈՍՏՈՍ 7...

FRANCE - I

« LES HEURES ARMENIENNES »

ՌՈՒԲԷՆ ՄԵԼԻՔ - ԵՒԱ ԿՐԻԼԻՔԷՋ

պատրաստած են

« Հայկական կէս ժամը »

Չորեքշաբթի՝ Օգոստոս 7, ժ.ը 22.20

Ցայտագրին գրական բաժնին մէջ՝ Սայաթ - Նովա, Վարուժան, Զա-րենց, Թէքէեան...:

Ֆրանսերէն կ'արտասանէ՝

ՍԵՐԺ ՌԵԺԻԱՆԻ

ԺԱՄԸ 22.20... ՕԳՈՍՏՈՍ 7

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

ԼԻՈՆ.— Ֆր. Կապ. Խաչի Օրը կը տօն-ուի մեծ պատրաստութեամբ, 27 Հոկտ. Մոլիէրէի չքեղ սրահին մէջ:

ԴՊՐՈՑԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Դպրոցասէր Տիկնանց վարժարանին 1963 - 1964 տարեշրջանի արձանագրու-թիւնները սկսած են: Անոնք որոնք կը փափաքին ղրկել իրենց զաւակները պէտք է այժմէն իսկ դիմում կատարեն հաստա-տութեան տնօրէնութեան:

Ա.— ՖՐԱՆՍԱԿԱՆԸ, որ տառացի կեր-պով կը հետեւի պետական լիսէններու արդիական բաժնի պաշտօնական ծրա-գրին — անգլերէն եւ սպաներէն լեզու-ներով —:

Բ.— ՀԱՅԿԱԿԱՆԸ, որ կ'օժտէ սանու-հիները հայագիտական ծանօթութիւննե-րով, հայ լեզուի, գրականութեան, հայ կրօնքի եւ պատմութեան, Հայաստանի աշխարհագրութեան մարզերուն մէջ:

Աշակերտուհիներ կ'ընդունուին ութ տարեկանէն սկսեալ: Մանրամասնու-թեանց համար դիմել հաստատութեան տնօրէնութեան:

1, Bd. du Nord, LE RAINCY (S. et O.)

Tél : 927-01-72

Դպրոցասէրի ուսման ծրագիրը կ'ընդ-գրկէ երկու ուրոյն բաժիններ:

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Փարիզահայ Տիկնանց Միութեան յիս-նամեայ յոբելեանը կը տօնուի Հոկտեմ-բեր 13ին, Սալ տը լա Շիմի:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Տիկ. Միութեան Որբերու Օգնութեան Մարմինը տրամադիր ըլլալով քանի մը անպաշտպան տղոց հայեցի դաստիարա-կութիւնը հոգալու, հարկ կը համարի ծանուցանել, որ շահագրգռուողները այժմէն դիմեն իրեն գրաւոր իր կեդրո-նատեղին, 15 Ռիւ Ժան Կուժոն:

ՀԱՅ ԲՈՅԺ

ԺՈՂ. ԱՄՍԱԹԵՐԹ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ

խմբագիր՝ Շ. ՆԱՐԴՈՒՆԻ

Խմբագրին երկար բացակայութեան պատճառաւ, լոյս տեսած չեն ՀԱՅ-ԲՈՅԺի 1962 եւ 1963 տարիներու թիւերը:

Խմբագիրը, որ նոր վերադարձաւ Ամե-րիկայէն, գործի ձեռնարկած է արդէն: Ծրագրած է հրատարակել երկու բացա-ռիկ թիւեր, իւրաքանչիւրը 150 էջ: Ա-ռաջինը պիտի կրէ 1962 թուականը, երկ-րորդը՝ 1963 թուականը: Այս երկուքը մէկ տարի հաշուելով՝ անոնք որ վճա-րած են 1962, վճարած կ'ըլլան նաեւ 1963 տարին:

Այս ձեւով, խմբագիրը կը խորհի ՀԱՅ-ԲՈՅԺի հրատարակութիւնը ամբողջա-ցնել եւ կանոնաւորել մինչեւ յառաջիկայ տարի, եւ 1964 տարուան թիւերը լոյս ընծայել ամսէ ամիս՝ Յունուարէն սկըս-եալ:

Ամերիկայի նոր բաժանորդները եւս, որոնք վճարած են այս տարուան համար (1963), պիտի ստանան ՀԱՅ-ԲՈՅԺի 1962 եւ 1963 թիւերը:

Այն բաժանորդները, որոնք յետնեալ պարտք ունին, թող բարի ըլլան իրենց վճարումը հասցնել մինչեւ տարեվերջ: Հին պարտքերուն հետ՝ ներկայ տարին եւս վճարողներն են միայն, որ պիտի ստանան ՀԱՅ - ԲՈՅԺի բացառիկները, խմբագրուած բժշկական, գրական, պատմական, շատ հետաքրքրական եւ ճոխ բովանդակութեամբ,— արդէն տը-պագրութեան յանձնուած:

Այս առթիւ շնորհակալութիւն այն հա-ւատարիմ բաժանորդներուն, որոնք ՀԱՅ-ԲՈՅԺի հրատարակութիւնը ընդհատուած ըլլալով հանդերձ՝ խմբագրին բացակա-յութեան պատճառաւ, վճարումները կա-տարած են օրը օրին ի վկայութիւն ի-րենց բարեկամութեան եւ վստահու-թեան:

Կը խնդրուի Հայրենիք, Ասպարէզ, Արմենիա, Ազատ Օր, Յուսաբեր, Ազ-դակ, Այգ, Ալիք թերթերու խմբագրու-թիւններէն, ինչպէս և Սիոն, Հասկ, Հայ Կեդրոն, Կիլիկիա, Հայաստանեայց եկե-ղեցի պարբերականներէն, որ հրատարա-կեն այս յայտարարութիւնը գէթ 2 - 3 անգամ:

ԴԷՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ...

Նկատի ունենալով Յուլիս 21ի եւ Օգոստոս 5ի մեկնումներուն յաջողութիւնը եւ համաձայնելէ ետք ՄՈՍԿՈՒԱՅԻ եւ ԵՐԵՒԱՆԻ ԻՆԹՈՒՐԻՍԹԻՆ հետ, ուրախ ենք յայտարարելու թէ երրորդ մեկնում մը տեղի պիտի ունենայ Սեպտեմբեր 1ին:

Այս ճամբորդութիւնը պիտի կատարուի օդանաւով, ՓԱՐԻԶԷՆ ՓԱՐԻԶ, ՄՈՍԿՈՒԱ - ԵՐԵՒԱՆ ճամբով: Տեւողութիւնն է 15 օր եւ գինը՝ 2.500 ֆրանք մարդ գլուխ:

Տեղերը սահմանափակ թիւով ըլլալով, կը թելադրուի ժամ առաջ արձանագրուիլ:

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ.—

„VOYAZUR"

SECTION ARMENIE

23, Galerie Vivienne (entrée 5, rue de la Banque) - PARIS (2e)

Tél. : CEN. 94-52 Métro : BOURSE

ՀՐԱՆՏ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

51, Rue Monsieur-le-Prince, PARIS - 6e — Chèque Postal : 1278-35

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՇԻՐՎԱՆԶԱԴԷ, Երկերի ժողովածու, 10 հատոր լաթակազմ	70 Ֆր.
ՍՏԵՓԱՆ ԶՕՐԵԱՆ, Երկերի ժողովածու, 7 հատոր, լաթակազմ	56 Ֆր.
ՍՏԵՓԱՆ ԶՕՐԵԱՆ, Պապ թագաւոր, լաթակազմ	10 Ֆր.
ՍՏԵՓԱՆ ԶՕՐԵԱՆ, Հայոց բերդը, լաթակազմ	8 Ֆր.
ՎԱՀԱՆ ՏԷՐԵԱՆ, Երկերի ժողովածու, 2 հատոր լաթակազմ	14 Ֆր.
ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՒԻԹ, մեծադիր, գունաւոր նկարներով, լաթակազմ	10 Ֆր.
Վ. ԱՆԱՆԵԱՆ, Հայաստանի կենդանական աշխարհը, Բ.	8 Ֆր.
ԱՐՍԷՆ ՏԷՐՏԷՐԵԱՆ, Երկեր (Մուրեան Պռօշեան, Պարոնեան)	17 Ֆր.
ՄՈՒՐԱՑԱՆ, Պատմուածքներ, գունաւոր նկարներով	5 Ֆր.
ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑԻ մասին յիշողութիւններ. լաթակազմ	7.50 Ֆր.
ՄԻՔ. ՇԱԹԻՐԵԱՆ. Գարունը նորից եկաւ. 296 էջ.	5 Ֆր.
ԱԲԳԱՐԵԱՆ. Մատենադարան(անգլ.) 18 գունաւոր մանրանկարներ	3 ֆր.
ՀԵՆՐԻԿ ԹՈՒՄԱՆԵԱՆ. Երգի ծնունդը. բանամտեղծութիւններ	3.85 Ֆր.
Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ. Տաղեր, 200 էջ. լաթակազմ	3.50 Ֆր.
ՍՈՎԵՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ. Ա. 800 էջ. լթկզմ.	16 Ֆր.
ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ, Անլռելի զանգակատուն, Պէյրութ, 1963	10 Ֆր.

Առաքման ծախքը գնողին վրայ

ԳՐԱՏՈՒՆՍ ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻՆ Է

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՁԱՅՆԱԳՐԵԱԼ ԲՈԼՈՐ ԵՐԿԵՐՈՒՆ

ՃՈԽ ՄԹԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԵՒ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆՑ

ԼՈՅՍԸ ԳՈՅՆ Է.... ԳՈՅՆԸ ԼՈՅՍ Է

ՁԵՐ ՏԱՆԸ ԼՈՅՍ ՏՈՒԷ՛Ք.... ԹՈՄԼԱՔԻ ԳՈՅՆ ՏՈՒԷ՛Ք

Ձեր բնակարանը կը լուսաւորուի

Եթէ ներսը եւ դուրսը

ՎԵՐԱՆՈՐՈԳԷՔ - ԶԱՐԴԱՐԷՔ - ՆԵՐԿԷՔ

ԹՈՄԼԱՔ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐՈՎ

PEINTURES THOMLAC

16 bis, Bd. Sébastopol, Paris 4e

Tél. ARC 26-61 – Métro : Halles et Chatelet

136, RUE DES BOURGUIGNONS — ASNIERES - BOIS COLOMBES (Seine)

Tél : GRE. 09-47

11, BD. DE LA REPUBLIQUE — LA GARENNE (Seine)

Tél. : STA. 19-06

ԱՆՄՐՑԵԼԻ ԳԻՆԵՐՈՎ

Ամէնէն արդիական, նուրբ եւ ընտիր ճաշակով պատրաստուած՝ առաջնա-կարգ ներկեր: Բնական եւ արուեստական բազմերանգ գոյներու մեծ ընտրու-թիւն: Նորոյթ իւղաներկեր, պատի գեղեցիկ թուղթերու ճոխ ընտրութիւն: Գետնի համար՝ ամէն տեսակ — լինոլէոմ եւ փլասթիք — ծածկոցներ. —

TAPIFLEX — TAPISOM — CARPETTE

Ձեր բնակարաններուն արտաքին եւ ներքին խնամքներուն համար անհրաժեշտ բոլոր նիւթերը:

Ամէն գնորդի կը նուիրուի յատուկ տետրակ մը, որու շնորհիւ կրնայ 10–30 առ հարիւր զեղչ ունենալ:

ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐ

52, RUE CHALON, PARIS 12e — 64, BLD. DE BELLEVILLE, PARIS 20e

166, AV. ARISTIDE BRIAND — PAVILLONS - SOUS-BOIS (Seine)

4 bis, RUE PAUL VAILLANT COUTURIER — ARGENTEUIL (S. et O.)

24, RUE PAUL VAILLANT-COUTURIER — ALFORTVILLE (Seine)

48 bis, RUE DALAVRAC — FONTENAY - SOUS - BOIS (Seine)

IMPRIMERIE SPECIALE DU JOURNAL « HARATCH »

32, Rue de Trévise, PARIS (9e)

ՅԱՌԱՋ

Օ Ր Ա Թ Ե Ր Թ
Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

Le PREMIER QUOTIDIEN ARMENIEN en EUROPE
HARATCH
Directrice : ARPIK MISSAKIAN
Rédaction et Administration : 32, Rue de Trévise - PARIS-9e

Fondé en 1925 Téléph. : PRO. 86 - 60
R. C. Seine 57 A 2731 C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա՝ Տար. 50 Ֆ. Վեցամսեայ՝ 27 Ֆ.
Արտասահման՝ Տար. 60 Ֆ. Հատը 0·30 Ֆ.

ԵՐԵՔՇԱԲԹԻ
6
ՕԳՈՍՏՈՍ
MARDI
6 AOUT
1963

LE NUMERO : 0,30 FR.

39րդ ՏԱՐԻ — Թիւ 9675 Fondateur : SCHAVARCH MISSAKIAN 39e ANNÉE — Nº 9675

«ԵՂԲԱՅՐՈՒԹԵԱ՞Ն» ՓԱՍՏԸ...

... Բովանդակ Անդրկովկասի մէջ, բնակչութեան խտութեան տեսակէտէ, առաջին կը հանդիսանայ մեր փոքրիկ Հայրենիքը: Արդարեւ, Հայաստանի մէջ իւրաքանչիւր քառ. քիլոմեթրի վրայ կ'ապրին 58,5 հոգի, մինչ այս համեմատութիւնը 46,6 է Վրաստանի եւ 37,2՝ Ազրպէյճանի մէջ:

Ո՛չ նուազ կարեւոր է նաեւ այն փաստը, որ Անդրկովկասի միւս ժողովուրդները գրեթէ սփիւռք չունին ո՛չ ներսը՝ Խ. Միութեան մէջ, ո՛չ ալ մանաւանդ դուրսը՝ արտասահմանի մէջ: Նոյնը չէ պարագան մեզի՝ Հայերուս համար. մենք սփիւռք ունինք թէ ներսը՝ Խ. Միութեան մէջ եւ դուրսը՝ ցաղթաշխարհի մէջ: Խորհրդային Մեծ Հանրագիտարանը մէկ միլիոն 200 հազար կը հաշուէ հայկական «ներքին» սփիւռքը, գարձեալ մէկ միլիոն 200 հազար, «արտաքին» սփիւռքը:

Այս բոլորը իրարու վրայ գումարելով — եւ բացառաբար խորհրդային վիճակագրական թիւերը միայն նկատի առնելով — այսօր, 1963ին, մեր համրանքը կ'ըլլայ շուրջ ՉՈՐՍ ՄԻԼԻՈՆ ՀԱՐԻՒՐ ՎԱԹՍՈՒՆԸՀԻՆԳ ՀԱԶԱՐ: Մօտաւոր հաշուով՝ 1979ին մեր մոլորակին վրայ պիտի ապրին ուրեմն շուրջ ՀԻՆԳՈՒԿԷՍ ՄԻԼԻՈՆ ՀԱՅԵՐ:

Ո՞ւր պիտի երթան բնակիլ այս 4 միլիոն 162·000 Հայերը ԱՅՍՕՐ. իսկ 5·500 հազար Հայերը՝ ՎԱՂԸ, 1979ին: Երեսուն հազար քառ. քիլոմեթրի վրայ: Պէտք պիտի ըլլար, այդ պարագային, Սեւանայ լիճը ցամաքի վերածել, իսկ լեռները հարթավայրի...

Ի դէպ անցողակի արձանագրենք Խորհրդային Մեծ Համայնագիտարանի վկայութիւնը Հայաստանի հողային տարածութեան մասին՝ ՆԱԽԱԽՈՐՀՐԴԱՅԻՆ շրջանին:

«Դաշնակներու Հայկական Հանրապետութիւնը դաշնակիցներէն ստացաւ Կարսի շրջանը, 1918ին Երեւանէն խլուած Երեւան նահանգի մասերը եւ այլ հողեր, որոնք Հայաստանի հողային տարածութիւնը հասցուցին 17·000 անգլիական մղոնի (աւելի քան 45·000 քառ. քիլոմեթր), մէկ միլիոն 500 հազար բնակիչներով, որոնցմէ 795·000ը՝ հայ» (Հատ. Գ., էջ 437):

Այս տարածութեամբ Հայաստան, 1920էն առաջ, մենք այլեւս չունեցանք: Կուզանք կը հասնինք Հայկ. Դատի ո՛չ իրաւական, այլ իրաւական կէտին:

Ծանօթ է ամէնուս, որ այսօրուան մեր սահմաններուն մէջ ամփոփուած Հայաստանը հողային պահանջներ ունի իր «ներքին» հարեւաններէն: Հարցը կը վերաբերի այն չորս ընդարձակ գաւառներուն, որոնք այլեւս մաս չեն կազմեր մեր Հայրենի հողերուն:

Այս չորս գաւառներն են.

ա) ԱԽԱԼՔԱԼԱՔ, 2400 քառ. քիլմ. տարածութիւն եւ 120 հազար բնակիչ (75 առ հարիւրը՝ Հայ):

բ) ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂ, 4600 քառ. քիլմ. տարածութիւն եւ 165·000 բնակիչ (95 առ հարիւրը՝ Հայ):

գ) ԼԵՌՆԱՅԻՆ ԳԱՆՁԱԿ, 5000 քառ. քիլմ. տարածութիւն եւ 80·000 բնակիչ (98 առ հարիւրը՝ Հայ):

դ) ՆԱԽԻՋԵՒԱՆ, 5400 քառ. քիլմ. տարածութեամբ հողամաս մը, որ 1921ի Մոսկուայի դաշնագրով նոյնպէս անջատուեցաւ Հայաստանէն, իսկ բնակիչները ցիրուցան եղան:

Գիծ մը քաշենք հոս եւ գումարենք թիւերը, կը ստացուի 17·400 քառ. քիլմ. տարածութեամբ հայապատկան ու հայաբնակ հող՝ 450·000 բնակիչներով: Այս կը նշանակէ՝ մեր երկրի տարածութեան կէսէն աւելի, իսկ բնակչութեան կէսէն քիչ պակաս: Զուտ ազգային ստացուածք՝ ազգագրական «առողջ հիմունք»ով՝ այս չորս գաւառները մեզմէ բռնօրէն խլուած եւ կցուած են այլ Ռեսպուբլիկաներու:

Կը հարցնենք.— Արդա՞ր է այս անջատումը երկրի մը համար, որ կը տառապի հողի սակաւութենէ եւ որ չի կրնար իր մէջ ամփոփել թէ գերաճող բնակչութիւնը եւ թէ իր «ներքին» ու «արտաքին» սփիւռքները:

Զանոնք՝ այդ չորս հայարնակ ու հայապատկան գաւառները իրենց բուն իրաւատիրոջ վերադարձնելու համար մեծագոր Ռուսաստանը պատերազմելու պէտք չունի, խաղաղ ու անարիւն ձեւով եւ մէկ հատիկ բառով կրնայ վերահաստատել արդարութիւնը եւ դարմանել անիրաւութիւնը:

Մոսկուա այս «մէկ հատիկ բառ»ը ըսաւ անցած տարի.— Մենք չենք խառնուիր Ռեսպուբլիկաներու ներքին գործերուն:

Այս... գործը «ներքին գործ» է այսօր, երբ 17·000 քառ. քիլմ. տարածութեամբ եւ շուրջ 450 հազար բնակիչներով այդ հողերը մաս չեն կազմեր մեր հայրենիքին: Բայց «արտաքին գո՞րծ» էր ուրեմն երէկ, երբ բռնօրէն կը խլուէին մեզմէ (իբր թէ արտախորհրդային երկիր մը ըլլար խլողը) եւ կը կցուէին հարեւան Ռեսպուբլիկաներուն:

Անշուշտ, մենք իրաւունք չունինք ըսպասելու կամ պահանջելու, որ Խորհ. Միութիւնը մեզի համար չպանակներ հանէ կրակէն, օրինակ՝ գրաւէ Վանը, Մուշը, Կարինը կամ Պիթլիսը եւ նուէր ընէ մեզի. ո՛չ: Բայց իրաւունք ունինք սպասելու, որ մեզ «խորթ զաւակ»ի վիճակի մէջ չդնէ եւ ձեռք գտնէ դարմանելու անիրաւութիւն մը, որ գործուած է մեր հայրենիքին հանդէպ՝ անոր հողային սահմանափակուածութիւնը ներկայացնելով իբրեւ... ազգային սահմանափակուածութիւն:

Պարզ է, որ մենք բթաչափ իսկ հող չենք ուզեր հարեւան կամ ոչ-հարեւան Ռեսպուբլիկաներէն, — ո՛չ Կարելօ-Ֆիննական ՍՍՌ.էն, որ իր տարածութեամբ վաթսուն անգամ մեծ է մեր երկրէն եւ երեք անգամ նուազ՝ բնակիչներու թիւով, ո՛չ Վրաստանէն, որ երկուքուկէս անգամն է Հայաստանի, ո՛չ ալ Ազրբէջանէն, որ շուրջ երեք անգամ աւելի ընդարձակ է մեր «փոքր ածու»էն:

Պէտք կա՞յ կրկնելու, որ այս «եղբայրական Ռեսպուբլիկա»ները չեն տառապիր հողային սահմանափակուածութենէ եւ, ինչպէս կը յուսանք, չեն տառապիր նոյնպէս ազգային սահմանափակուածութենէ: Ասկէ զատ, — յիշենք ու յիշեցնենք անգամ մը եւս, — ո՛չ «արտաքին», ոչ ալ գրեթէ «ներքին» սփիւռք ունին մեզի պէս:

Առ այժմ խօսք չի կրնար ըլլալ այն մասին, թէ մենք հողային պահանջներ ունինք նաեւ Թուրքիայէն:

Բայց Թուրքիան մաս չի կազմեր Խորհ. Միութեան: Արտաքին հարց է անկէ հողեր պահանջել, մինչ ներքին հարց է Ռեսպուբլիկաներու հողային վէճերը քննել եւ տրամաբանական, արդար լուծում մը գտնել:

Մոսկուա, թէ՛ յանուն Խ. Միութեան եւ թէ յանուն Հայաստանի, պաշտօնապէս հրաժարած է հողային ամէն պահանջէ՝ Թուրքիոյ նկատմամբ: Ո՛չ միայն հրաժարած է, այլեւ նոյնիսկ հողային զիջումներ ըրած է, թէեւ ամէն մարդու պէս մենք ալ գիտենք, թէ 1915ի ռուսեւթուրք սահմաններուն վերահաստատումը, թէ զիջուած եւ թէ պահանջուած հողամասերուն վերադարձման հարցը մաս կը կազմէ Խ. Միութեան ազգային ուխտին:

«ՅՈՒՍԱԲԵՐ»

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՌՈՒՍԵՐԸ ԿԸ ՊԱՏԱՍԽԱՆԵՆ ՉԻՆԱՑԻՆԵՐՈՒՆ
ԵՒ ԲԱՌԵՐԸ ՉԵՆ ԾԱՄԾՄԵՐ

Խորհրդային կառավարութիւնը երկար եւ խիստ պատասխան մը հրատարակեց ուր այլեւս բնաւ չի խնայեր չին ընկերներուն: Նշանակալից կը նկատուի նաեւ որ այս երկար պատասխանը կը հրատարակուի Իզվեստիայի մէջ եւ կը տարածուի նաեւ Թաս գործակալութեան միջոցաւ ճիշդ այն օրը երբ Տին Ռըսք եւ Լորտ Հիւմ Մոսկուա կը ժամանեն ստորագրելու համար հիւլէական երրեակ համաձայնութիւնը: Այս փաստաթուղթին մէջ նախ խորհրդային կառավարութիւնը կը հերքէ Խորհ. Միութեան արտաքին քաղաքականութեան վերաբերեալ Չինացիներուն կողմէ հնարուած մտադրութիւնները: Մոսկուա կ'ըսէ թէ Չինաստանի հրաւէրը հիւլէական զէնքերը արգիլելու կոչուած համագումարի մը կը ձգտի միայն ծածկելու չին մերժումը Մոսկուայի համաձայնութեան միանալու: «Խորհրդային կառավարութիւնը կը գտնէ որ չին կառավարութեան յայտարարութիւնը աննախընթաց դէպք մըն է, խորապէս ցաւալի: Չին կառավարութեան այս ընթացքը ցայտուն հակասութեան մէջ է ընկերվարական երկիրներու քաղաքականութեան ընթացքին հետ: Չին քաղաքականութիւնը դէմ է խաղաղ համակեցութեան լենինեան քաղաքականութեան»: Քիչ անդին, շարունակելով իր յարձակումները Չինաստանի վրայ, խորհրդային կառավարութիւնը կը շեշտէ թէ Չինաստան — Յուլիս 31ի իր յայտարարութեան մէջ — ընդունելի մէկ հատ պատճառաբանութիւն չի ներկայացներ արդարացնելու համար իր ժխտական դիրքը հիւլէական համաձայնութեան հանդէպ: «Չին կառավարութեան տեսակէտները յուսահատութիւն եւ յոռետեսութիւն կը բուրեն: ... Բացի խաղաղութեան ոխերիմ թշնամիներէն, աշխարհակալ պետութեանց մէջ, ամէն մարդ կ'ընդունի որ այդ համաձայնութիւնը (իմա՛ հիւլէական փորձերու արգիլման) լաւ նշան մըն է ապագային համար: Եւ յանկարծ Չինաստան հակառակը կը պնդէ, ուրեմն ամբողջ աշխարհ սխալի մէջ է եւ միայն Չինաստա՞նն է որ ճշմարտութեան մէջ է»:

Մոսկուայի համար զարմանալի չէ որ Միացեալ Նահանգներու, Դաշնակցային Գերմանիոյ եւ Ֆրանսայի «կարգ մը ռազմապաշտներ եւ խելագար աշխարհակալներ» դէմ ըլլան այդ քաղաքականութեան «բնական է, բայց երբ համայնավարներ եւ մանաւանդ համայնավարներ որոնք ընկերվարական երկիր մը կը ղեկավարեն, դէմ կ'արտայայտուին հիւլէական փորձերը արգիլող դաշնագրին, ատիկա չի կրնար ընդհանուր զարմանք չպատճառել»:

Խորհրդային փաստաթուղթը կ'աւելցնէ.— «Չինացիներուն դիրքը կը համապատասխանէ հաշակելու որ եթէ հիւլէական զէնքը բաժնուէր ամբողջ աշխարհի մէջ, եթէ արեւմտեան գերմանացի վրէժխնդիրներուն տրուէր զայն ունենալու կարելիութիւնը, եթէ պայթումներու շարք մը միւսին հետեւէր եւ եթէ այդ պայթումները կատարուէին տասնեակ մը կառավարութիւններու կողմէ, այն ատեն պիտի չնշանակէր «անձնատուր ըլլալ աշխարհակալներուն առջեւ»:

«Արդպէս չէ, կ'ըսէ խորհրդային կառավարութիւնը, պէտք է իրականութեանց իմաստը բոլորովին կորսնցուցած ըլլաս մէջտեղ դնելու համար սա երկընտրանքը «ամէն բան կամ ոչինչ», երբ հարցը կը վերաբերի խաղաղութեան եւ միլիոնաւոր կեանքերու ճակատագրին հետ:

Աւելի խիստ ոճ մը գործածելով, խորհրդային կառավարութիւնը կ'աւելցնէ.— «Նոյնիսկ կարելի չէ հասկնալ թէ ի՞նչ բան կը տիրապետէ.— քաղաքական անպատասխանատուութի՞ւնը թէ բարկութիւնը մարդոց որոնց հաշիւները խաղի եկած են իրականութեան առջեւ: Ո՞վ իրաւունք տուաւ չին կառավարութեան խորհրդային ժողովուրդին անունով խօսելու: Ո՞վ խնդրեց իրմէ որ ընկերվարական միւս երկիրներուն անունով խօսի: Կը թուի թէ այս յայտարարութեան հեղինակներուն ջիղերը թուլցած են քանի որ կը փորձեն խորհրդային ժողովուրդը հանել իր կառավարութեան դէմ: Միայն անոնք որոնք մարդկութեան յոյսերէն եւ մտահոգութիւններէն բաժնուած են վարդապետական դրդապատճառներով, կրնան չնշմարել (կամ փորձել չնշմարել) այն հսկայ փոփոխութիւնները, որոնք տեղի ունեցած են մեր մոլորակին վրայ... Չին կառավարութիւնը կը փորձէ հակասութիւններ գտնել Խորհ. Միութեան դիրքերուն մէջ, բայց արուեստական մէջբերումներ փնտռելով եւ բառերով խաղալով, մէկ բան կը մոռնայ. — կեանքը դէպի առաջ կ'երթայ, գիտութիւնը եւ թեքնիքը կը յառաջդիմեն: Եւ ինչ որ երէկ անընդունելի կը թուէր, կրնայ այսօր օգտակար ըլլալ, նոյնիսկ շատ օգտակար:

Այս փոխասացութեան մէջ խօսքը կը պատկանի՝ Չինացիներուն:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՊԱՐՍԿԱԿԱՆ Քիւրտիստանի մէջ ժանտախտի համաճարակ մը ծագած է եւ արդէն 14 մեռեալ կայ թրքական սահմանի վրայ: Ապահովութեան բոլոր միջոցները ձեռք առնուած են կ'ըսէ Առողջապահական Նախարարութեան մէկ դեկոյցը:

ՏՈՔԹ. ՈՒԱՐՏ մեռաւ շաբաթ օր: Կը թուի թէ այս ձեւով գոնէ Փրոֆումօ գայթակղութեան գլխաւոր մեղաւորը որ իբրեւ շատ ապաբարոյ անձ մը ներկայացուած էր, բոլորովին ալ զուրկ չէ սկզբունքներէ եւ իր մահը գրեթէ ճենթըլմէնի մը մահն է: Ուրիշ յայտնութիւններ մէջտեղ կ'ելլեն եւ կը կարծուի որ կարգ մը վկաներ ստած են: Հարցը փոխանակ փակուելու, կրնայ նոր ծալքեր բանալ:

ՍՈՒՐԻՈՅ վարչապետը՝ Սալահ Պիթար հրաժարեցաւ առջի օր բայց կրկին իրեն յանձնուեցաւ նոր դահլիճը կազմելու պաշտօնը:

... ՖՐԱՆՍ 1 ... ՕԳՈՍՏՈՍ 7 ...
Grandes-Ondes
FRANCE - I
« LES HEURES ARMENIENNES »

ՌՈՒԲԷՆ ՄԵԼԻՔ – ԵՒԱ ԿՐԻԼԻՔԷՉ
պատրաստած են
« Հայկական կէս ժամը »
Չորեքշաբթի՝ Օգոստոս 7, ժ. ը 22·20
Ցայտագրին գրական բաժնին մէջ՝
Սայաթ – Նովա, Վարուժան, Զարենց, Թէքէեան...:
Ֆրանսերէն կ'արտասանէ՝
ՍԵՐԺ ՌԵԺԻԱՆԻ
ԺԱՄԸ 22·20 ... ՕԳՈՍՏՈՍ 7

ՀԱՅԿ. ԱՅԲՈՒԲԵՆԻ «Պ» ՏԱՌԸ

Մաշտոցի Այբուբենը եւ տառերու ձեւերը

1962 տարին նուիրուած էր Մաշտոցի ծննդեան 1600 ամեակին։ Այս առթիւ հանդէսներ տեղի ունեցան եւ յօդուածներ ու գրքոյկներ հրատարակուեցան թէ Հայաստանի եւ թէ արտասահմանի մէջ՝ իրաւամբ փառաբանելով Հայոց մեծագոյն գիւտարարը մշակութային մարզին մէջ՝ Սուրբ Մաշտոցը։

Վերագնահատման ենթարկելով Մաշտոցի գործը, ամէն Հայ եկաւ այն եզրակացութեան թէ հայ ազգին ամենաթանկագին մշակութային հարստութիւններէն մէկն է հայկական այբուբենը, որ գործածութեան մէջ է մօտաւորապէս 1560 տարիէ ի վեր։

Անշուշտ այս երկար ժամանակամիջոցին ընթացքին՝ Մաշտոցի մշակած տառերու նախաձեւերը փոփոխութիւններու ենթարկուած են ըստ ժամանակի գրչական առարկաներու եւ ըստ գեղագիտական ըմբռնումներու։ Այս փոփոխութիւնները երբեմն այնքան հիմնական են որ, եթէ Մաշտոց այսօր ողջնար եւ ձեռք առնէր հայերէն թերթ մը կամ գիրք մը, դժուարութիւն պիտի քաշէր կարդալու զանոնք, բացի գլխագրերէն, որոնք իր հնարած երկաթագրերուն կը նմանին։ Իսկ եթէ ձեռք առնէր ձեռագիր նամակ մը, հաւանաբար բոլորովին չկարենար կարդալ զայն։

Հայկական տառերու փոփոխակները, երկաթագիրը, բոլորագիրը եւ նոտրագիրը, իրենց փոխանցման միջանկեալ շրջաններով այնքան բազմակողմանի պատկեր մը կը ներկայացնեն, որ մասնագիտութիւն դարձած է տառերու ձեւերու ուսումնասիրութիւնը եւ կարելի է յատուկ յօդուածներ գրել իւրաքանչիւր տառի ձեւին ծագման եւ փոփոխման մասին, ինչպէս ըրած են արդէն Աճառեան եւ Մարկուարտ։

Սխալագիր Պ տառը

Ինքնին հասկնալի է որ անցած տասնհինգուկէս դարերու ընթացքին սխալ գրելակերպեր ալ ստեղծուած են եւ մեր տառերուն նախաձեւերը այլանդակուած։

Ահա՛ այս տեսակ սխալագրութիւն մըն է բոլորագիր կոչուած պ տառը, որ գոյութիւն ունի Ժ. դարէն ի վեր և որ հայերէն առաջին տպագրեալ գրքին (1512) բոլորագիր տառերով շարուած ըլլալուն հետեւանքով՝ ընդհանրացած է եւ գործածութեան մէջ է մինչեւ այսօր։

Պ. տառին ծագումը եւ իսկական ձեւը

Մաշտոց, երբ իր տքնաջան պրպտումներէն եւ երկու տարուան յոգնաջան բայց անյաջող փորձերէն ետք, որոշեց յունական այբուբենը առնել իբրեւ հիմ, ստիպուեցաւ նոր տառեր ստեղծել յարմարցնելու համար յունական այբուբենը հայկական առողանութեան, որ տարբեր է յունականէն։

Պ տառը կը պատկանի բուն յունական այբուբենէն առնուած տառերուն։

Եթէ յունական «պի» տառը դրէք, պիտի տեսնէք իսկոյն թէ յունական տառին երկու ուղղահայեաց ուղիղ գիծերը մնացած են հայկականին մէջ բայց վրան աւելցուած է երրորդ ուղղահայեաց ուղիղ գիծ մը որ ուրիշ բան չէ՝ եթէ ոչ յունական տառին գործածուած վերեւի ողորկ գծին ձախ ծայրի մասը, որ հայերէնի մէջ ուղիղ գիծ մը դարձած է։ Փոփոխակներու մէջ կը տեսնուի դեռ կոր ձեւն ալ։ Տառին այս պատկերը կը գտնենք տպագրեալ գլխագիր Պ տառին մէջ, որ անաղարտ մնացած է մինչեւ այսօր։

Սպասելի էր որ երկաթագիր «Պ»ին բոլորագրի վերածուած ատեն, որուն տառերը հակառակ անունին բոլորակաձեւ չեն՝ այլ անկիւնաւոր, երեք ուղղահայեաց գիծերը, ըսենք ակռաները, դէպի վար նայէին եւ հորիզոնական ուղիղ գիծը վերէն քաշուած ըլլար։ Մինչդեռ կը տեսնենք որ բոլորագիր տպագրական փոքր տառին ակռաները վեր կը նային եւ զանոնք իրար կապող հորիզոնական ուղիղ գիծը տակէն քաշուած է եւ վերածուած է պ ձեւին, հաւանաբար նմանողութեամբ ա տառին գրչութեան։

Ակներեւ է որ այս ձեւը բացարձակ սխալագրութիւն մըն է։

Առաջարկ

Տպագրական պ փոքր տառը, ըլլայ բոլորագիր կամ արամեան, պէտք է փոփոխել այնպէս որ տառին երեք ուղղահայեաց գիծերը գագաթներէն իրարու կապուին հորիզոնական ուղիղ գիծով մը կամ արամեան տառաձեւին մէջ՝ երեք ուղիղ գիծերուն կապի բոլորակները, գծերուն գագաթները, իրար կապեն։

Այս փոփոխութիւնը չի փոխեր պ տառին հայկական նկարագիրը, ընդհակառակն կը տանի դէպի Մաշտոցեան հարազատ ձեւին։

Տպագրական նոր տառեր գնելու պարագային, տպարանատէրերը պէտք է իրենց ձուլարանին յայտնեն իրենց պահանջը, չնչին վճարումով կամ առանց բացառիկ ծախքի կրնայ գոհացուիլ։ Նոյնը պէտք է ընել գրամեքենաներ գնելու ժամանակ։

Ինչ կը վերաբերի ձեռագրին, հասկնալի է որ առաջարկուած ձեւով պէտք է գրել սորվեցնել դպրոցներուն մէջ։

ՏԻՐԱՅՐ ՖՐՈՒՆՃԵԱՆ

ԳԻՏՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՃԻՒՂ ՄԸ

ՌԱՏԻՈՄԻՆ ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ ԲՈՅՍԵՐՈՒ ԵՒ ԿԵՆԴԱՆԻՆԵՐՈՒ ՎՐԱՅ

Շողարձակումներու յայտնաբերումը մեծ ազդեցութիւն գործեց զանազան գիտութիւններու վրայ, բանալով նոր հեռանկարներ եւ հետազօտական ուղիներ։ Այսպէս, յառաջ եկաւ կենսաբանութեան նոր ճիւղ մը, — ռատիօ–սերողականութիւնը (ռատիօժենեթիք), որ կ'ուսումնասիրէ շողարձակումներու օգտագործումը բոյսերու եւ կենդանիներու ժառանգականութեան փոփոխութեան համար։

Եթէ բոյսի որեւէ մէկ մասը գտնուի շողարձակումներու ազդեցութեան տակ, այդ բոյսին մէջ կը կատարուին փոփոխութիւններ, որոնք կը փոխանցուին անկէ յառաջ եկած բոյսերուն։ Այս ուղղութեամբ մեծ նշանակութիւն կը ներկայացնէ շողարձակումներու քանակը, եթէ շողարձակ ճառագայթները ըլլան փոքր քանակութեամբ, անոնք կը գրգռեն բոյսերու զարգացումը, հետեւաբար բերքը կ'ըլլայ առատ։ Բայց եթէ շողարձակումներու քանակը մեծ ըլլայ, բոյսը չի կազմեր բազմացման օրկաններ եւ շատ փոքր կը մնայ, ուստի բնական է, որ բոյսերու այս փոփոխութիւնները որեւէ օգտակարութիւն չեն ներկայացներ։ Ուրեմն իւրաքանչիւր բոյսի համար պէտք է հաստատել շողարձակումներու յարմարագոյն քանակը, որով բոյսերուն մէջ կատարուին տնտեսութեան համար կարեւորութիւն ներկայացնող փոփոխութիւններ, որոնք ազդելով բոյսի բջիջներուն եւ հիւսուածքներուն վրայ, ժառանգական բնոյթ կը ստանան, այսինքն կը փոխանցուին յաջորդ սերունդներուն։ Այս ձեւով կարելի է ձեռք բերել աւելի մեծ բերքատուութիւն ունեցող բոյսեր, որոնք տարրալուծարաններու մէջ ստացուած են արուեստական կերպով։

Այս նպատակով, սովորաբար կ'օգտագործուին քոպալթ 60ի արձակած շողարձակումները, արագ եւ ջերմային նէօթրոններ եւ իքս ճառագայթներ։ Այս ճառագայթներուն քանակը կախում ունի բոյսի տեսակէն։ Մինչ բոյսերէն ոմանք կը դիմանան օրական մինչեւ 50–100 ռէօնտգենի (եգիպտացորենը, ծխախոտը, ոլոռները) ուրիշ բոյսեր կը դիմանան օրական մինչեւ 6000 ռէօնտգենի (վուշը, լուբիան)։ Շողարձակումներու քանակը կապուած է նաեւ բոյսի տարբեր մասերուն հետ — օրինակ, սերմը աւելի քիչ զգայուն է քան բոյսին միւս մասերը։ Եթէ բոյսի մասերը ազդուած ըլլան յիշեալ ճառագայթներէն, այդ բոյսէն ստացուած սերմերը կը կրեն փոփոխութիւններ, որոնք կը փոխանցուին անոնցմէ յառաջ եկած բոյսերուն։

Այս փորձարկումները կը կատարուին կարգ մը երկիրներու մէջ։ Այսպէս Խորհ. Միութեան մէջ սկսած 1935էն, Սաֆեկին, Վավիլով, Կարապետեան եւ այլ գիտնականներ ստացան տարեկան աւելի մեծ բերք ունեցող մշակելի բոյսեր — լոլիկ, ցորեն, եւայլն։ Միացեալ Նահանգներու մէջ ստացուած են նոր յատկութիւններով բոյսեր, որոնք կը տարբերին հիւանդութիւններու եւ վնասակար միջատներու հանդէպ ցուցաբերած իրենց դիմացկունութեամբ, իրենց մեծութեամբ, պտուղներու որակով, ծաղիկներու գոյներով (ծաղկամշակութեան մէջ) եւայլն։ Շողարձակումներու միջոցով ստացուեցան եւ այժմ կը մշակուին ոլոռի եւ պիստակի նոր տեսակներ։ Շուէտի մէջ, մասնագէտները աշխատած են յատկապէս գարիի վրայ, ստանալով նոր տեսակ մը, որուն յատկութիւնները — մեծութիւն, դիմացկունութիւն, բերքատուութիւն — շատ աւելի բարձր են։ Նման աշխատանքներ կը կատարուին նաեւ Գերմանիոյ, Եուկոսլաւիոյ, Չինաստանի, Հնդկաստանի, Ճափոնի եւ այլ երկիրներու մէջ։ Ռումանիոյ մէջ այսպիսի փորձեր կատարուած են եգիպտացորենի եւ արեւածաղիկի վրայ։

Ստացուած արդիւնքները ցոյց կու տան, թէ օգտագործելով արագ եւ ջերմային նէօթրոններ, ինչպէս նաեւ ռատիօիզոթոփներ, ձեռք կը բերուին բոյսերու փոփոխութիւններ, որմէ ետք, զտման եւ այլ եղանակներու միջոցաւ յառաջ կու գան նոր յատկութիւններ ունեցող բոյսեր։

Իրենց գործնական կարեւորութենէն զատ, ռատիօսերողականութեան բնագաւառին մէջ կատարուող աշխատանքներու միջոցաւ կարելի պիտի ըլլայ ճշգրիտ կերպով հաստատել թէ ինչո՛ւ կենդանի էակներու յատկութիւնները կը ժառանգուին իրենց յաջորդներէն եւ ինչպէս կարելի է փոխել այդ ժառանգականութիւնը։

Դ. Հ.

ՕՐԷՆՔԸ ՕՐԷՆՔ Է

Եոհաննեսպուրկի թաղերէն մէկուն մէջ դատի կանչուեցաւ մարդ մը որ իր տան մէջ թունաւոր օձեր կը բազմացնէր։ Ոստիկանութիւնը իր ամբաստանագիրը պատրաստած էր նկատի առնելով Հարաւային Ափրիկէի Հանրապետութեան մէկ օրէնքը, որ կ'արգիլէ «վտանգաւոր գազաններ» պահել խիտ բնակչութիւն ունեցող շրջաններուն մէջ։ Սակայն բոլորին համար անակնկալ մը եղաւ, երբ դատաւորը անպարտ արձակեց ամբաստանեալը։ Դատարանը նկատի առած էր, որ օձերը սողուններ են եւ ոչ թէ գազաններ, եւ օրէնքին մէջ օձերու մասին բան մը չէ ըսուած։

ՇԱՌԼ ՊՕՏԼԷՐ ԵՒ ԻՐ ԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԴՐԱԽՏՆԵՐԸ

Իր ճամբորդը զբաղեցնելու համար կէսօրէ վերջ մը անոր ցոյց կու տայ կայմերուն բոլորտիքը թռչող մրրկահաւերու (ալպաթրոս) երամ մը։ Կը կրակէ եւ անոնցմէ մէկը կամրջակին վրայ կ'իյնայ։ Սակայն թռչունը միայն թեւէն վիրաւորուած է. եւ նաւաստիները անոր շուրջը կը հաւաքուին, իր երկար թեւերն ու տոտիկները իրարու մէջ անցած՝ վիրաւոր թռչունին քաշկռտուիլը դիտելու հաճոյքին համար։ Ամէն մարդ կը խնդայ, բացի Պօտլէրէն։ Ի վերջոյ կը սպաննեն վիրաւոր մրրկահաւը։ Անով՝ խոհարարապետը համեղ ճաշ մը պիտի պատրաստէր. իսկ Պօտլէր՝ իր առաջին, իր ամէնէն նշանաւոր քերթուածներէն մէկը պիտի գրէր, ուր ինքը՝ քերթողը, ինքզինք պիտի նմանեցնէր «փոթորիկին ընկեր ամպերու իշխանին».—

«Անկեալ յերկիր եւ ընդ մէջ
հայհուչներու անարգել,
Տիտանական իր թեւերն հիմա
թոյլ չեն տար քալել»

Հակառակ իր քէնին Պօտլէր լաւ զգացած էր, որ շնորհիւ այս նոր հորիզոններուն, պատկերներու պաշար մը պիտի ամբարէ ապագային համար։ Սակայն բանաստեղծին համար, որ շուտով քսանմէկ տարեկան պիտի ըլլայ, մօտաւոր ապագան՝ Փարիզն է։ Բարեյուսոյ Հրուանդանէն վերջ երբ կը հասնին Մօրիս կղզին, ուր նաւը պէտք է ատեն մը կանգառնէ նորոգութիւններու համար, կը յայտնէ նաւապետ Սօրի, թէ այլեւս չուզեր ճամբան շարունակել. այնտեղ պիտի սպասէ զինք Ֆրանսա վերադարձնող առաջին նաւուն։ Նաւապետը ի զուր կը ջանայ տարհամոզել զինք։ Երբ, Հոկտեմբերին, «Հարաւային Ծովերու Նաւը» կը շարունակէ իր ճամբան դէպի Պէնկալ՝ Պօտլէր նաւուն վրայ չէ այլեւս։ Դէպի Պոռտօ գացող նաւու մը վրայ կը գտնուի։ Իրեն հետ կը տանի խռովիչ, մղձաւանջ դարձած պատկեր մը. պատկեր մը, որ գրգռած է դիւրայոյզ երիտասարդի իր զգայարանքները եւ որ զինք պիտի հետապնդէ իր ամբողջ կեանքը.— եփենոսեայ մարմնով, արձանային կազմով սեւամորթուհիի մը պատկերն է, որ հրապարակաւ կը մտրակուէր հողատէրի մը կողմէ՝ չնչին գողութեան մը համար, հակառակ անոր որ ստրկութիւնը վերցուած էր։

1842 Ապրիլին Շառլի վերադարձը Փարիզ, մինչ զինքը Հնդկաստան կը կարծէին, ռումբի ազդեցութիւն կը գործէ Օփիքներու խստամբեր տան մէջ։ Երեւակայուածէն շատ աւելի ուժգին, շատ աւելի անսպասելի ռումբ մը։ Արդարեւ, երիտասարդ բանաստեղծը դիպուածով չէ որ վերադարձած է. քանի մը օրէ ի վեր չափահաս է եւ կը պահանջէ հօրմէն մնացած ժառանգութեան իր բաժինը։ Զօրավար Օփիք որ մինչեւ այդ, իր օրինաւոր խնամակալն էր, տեղի տալէ զատ ուրիշ ելք չունի։ Ահա ուրեմն Պօտլէր, այն ատենուան 75.000 Ֆրանք նախանձելի գումարի մը տէր։ Հիմակուհիմա, «անիծեալ բանաստեղծը» ուրիշ բան չէ եթէ ոչ բարեկեցիկ ընտանիքի մը զաւակը։ Սակայն միտքը դրած է առաւելագոյն չափով օգտուիլ այս նոր հարստութենէն եւ ազատութենէն։ Ժառանգութեան տիրանալուն յաջորդ օրն իսկ, Պօտլէր փախուստ կու տայ զօրավար Օփիքի հեղձուցիչ բնակարանէն։

×

Թռչունը — ալպաթրոսը — փախուստ տուած է։ Որպէս բոյն ընտրած է Սէն-Լուի կղզին մէջ, Պէթիւնի գետեզերեայ փողոցին վրայ, ընդարձակ աշխատանոց մը։ Կը խորհի, թէ այնտեղ պիտի կարենայ աշխատիլ, դառնալ այն մեծ բանաստեղծը, գրչի այն մեծ մարդը, որուն ծնունդը կը զգայ իր մէջ։ Քսանմէկ տարեկան է միայն, եւ արդէն իսկ գրած է մի քանի այն չափածոներէն, որոնք պիտի կազմեն դարուն քերթողական ա[...]մէնէն հարուստ, ամէնէն [...] հունձքը, որ ամբողջ աշխարհին [...] ճանչցուի «Չարիքի Ծաղիկներ»ը անուան տակ։ Սակայն մտահոգ, հոգեկան [...]խերով լեցուն էակ մըն է, որ [...]փով կը համակուի սպիտակ թուղթի առջեւ...։

Կայ եւ դրամին եւ ազատութեան [...]ձութիւնը։ Պօտլէր աւելի շատ ժամանակ կ'անցընէ Քարթիէ Լաթէնի [...]րաններուն սեղաններուն առջեւ, իր նոր բարեկամներէն Թէոտոր տը Պանվիլի [...] Ժէրար տը Ներվալի հետ, քան թէ Սէն-Լուի կղզիի իր աշխատասենեակին [...]։ Ամէն բանէ առաջ՝ տանտի մըն է, [...] սուր պոչաւոր սեւ բաճկոն, [...]պակ շապիկ, փուլարէ ձեւով թոյլ [...]ուած փողկապ — որ հագուելու իր [...]նակը կ'առնէ Պրիւմելէն։

Բայց շուտով, աւելի ծանրակշիռ [...]ներ ալ տեղի պիտի ունենան։

Իրիկուն մը, Օտէոնի հրապարակին վրայ գտնուող Թատրոնի սրճարանը [...] թրեւէ ետք Ժէրար տը Ներվալի հետ, որ ճաշէն յետոյ զինքը կը լքէ, իր [...]նակ եւ մելամաղձոտ թափառումներէն մէկը կատարելու համար՝ [...] Փարիզին մէջ — Պօտլէր [...] կանգ կ'առնէ Պանթէոնի թատրոնին [...]ջեւ։

(Շար. – 3)

ՏԵՐՈՒՆԻ

ՀԱՅԿԱԶՈՒՆ ԱԻԱԳ ՔՀՅ. ՈՍԿԵՐԻՉԵԱՆ

«Յուսաբեր»էն ցաւով կ'իմանանք թէ Աղեքսանդրիոյ նախկին հոգեւոր հովիւը, Հայկազուն աւագ քհյ. Ոսկերիչեան վախճանած է Յուլիս 26ին, յառաջացեալ տարիքի մէջ։

Երուսաղէմցի եւ բազմերախտ քահանան ծնած է Զէյթուն։ Աւազանի անունով՝ Գալուստ։ Մօրմէ որբ մնացած է մանուկ հասակին մէջ։ Դեռ պատանի, ղրկուած է Երուսաղէմ, ուր կ'աւարտէ Ժառանգաւորաց վարժարանը։ Յետոյ Վանքին կողմէ կը ղրկուի Փարիզ, ուսանելու՝ նախ էքոլ Նորմալ Սիւփերիէօրանը՝ յետոյ Քոլէճ տը Ֆրանսի (1907-1911)։

Վերադառնալով Երուսաղէմ, մէկ տարի կը դասաւանդէ վանքին մէջ։ Յետոյ կ'ամուսնանայ եւ կը մեկնի Մարաշ, Այնթապ, ուսուցիչ ֆրանսերէն լեզուի կամ տնօրէն հայ վարժարաններու։ Տեղահանութեան շրջանին, կը յաջողի անցնիլ Երուսաղէմ, ուր կը գործէ իբրեւ ուսուցիչ եւ դպրապետ Ս. Յակոբ մայրավանքին։ Թորգոմ պատրիարք, գնահատելով Ոսկերիչեանի արժէքը, քահանայ կը ձեռնադրէ՝ նշանակելով հոգեւոր հովիւ Աղեքսանդրիոյ Պօղոս-Պետրոս եկեղեցիին։ Յետագային՝ առաջնորդական փոխանորդ։

Բայց Ոսկերիչեան ծնած էր ուսուցիչ, այնպէս որ իր հոգեւոր եւ ազգային պաշտօններուն զուգընթաց՝ կը ստանձնէ նաեւ ուսուցչական աշխատանքներ տեղական հայկական վարժարանին մէջ։

1924ին, մանկավարժ-ուսուցիչի կոչումը եւ Հայու հոգին իրեն կը թելադրեն հիմնել իր սեփական վարժարանը, Հայկազեան Կրթարան, մանկապարտէզ եւ նախակրթարան բաժիններով, — այսօր իրենց հայեցի դաստիարակութիւնը ստացած են հարիւրաւոր Հայորդիներ, ուսուցիչ-քահանային, Զէյթունցի մըտաւորականին, համալսարանական դաստիարակին ջերմ շունչին տակ։ Հայկազեան Կրթարանը եւ հայրենասէր ուսուցիչը գնահատուած է Ալիանս Ֆրանսէզին, ֆրանսական հիւպատոսարանին, ինչպէս եւ եգիպտահայ գաղութին կողմէ։ Այսպէս ընտրուած է անդամ թեմական եւ քաղաքական ժողովներու, նախագահ դատաստանական Խորհուրդի։

Եգիպտահայ գաղութը տօնած է իր ուսուցչական գործունէութեան 40 ամեակը եւ քահանայութեան 25 ամեակը։ Իր վարժարանը փակուած է 1953ին՝ առողջական պատճառով։

Օծման եւ թաղման կարգը կատարուած է 27 Յուլիսին, առաւօտուն։ Ազգային յուղարկաւորութիւնը՝ նոյն օրը՝ յետ միջօրէին։

× Ոսկերիչեան քահանայ հեղինակած է նաեւ երեք գիրքեր կրօնա-բարոյական բովանդակութեամբ.—

1) Ամուսնական խաղաղ կեանքի խորհուրդն ու բանալին։ 2) Աստուածատիպ մարդը (2 հատոր)։ 3) Վերընծայում։

ՀԱՅԱՍՏԱՆ

ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

«Ռեսպուբլիկայի պարտիկաճ – տընտեսական ակտիւի խորհրդակցութեան» ընթացքին քննութեան առնուած է երկրին տնտեսութեան վիճակը եւ զայն կատարելագործելու միջոցները։

Այս ժողովին խօսք առած են Հայաստանի Նախարարներու Խորհուրդի նախագահը՝ Ա. Քոչինեան, Հայաստանի Համայնավար կուսակցութեան Կեդր. Կոմիտէի առաջին քարտուղար՝ Յ. Զարոբեան, Ժողովրդական տնտեսութեան նախագահ Գ. Զոլախեան, պետպլանի նախագահը՝ Լ. Խաչատրեան եւ ուրիշներ։

Ա. Քոչինեան իր զեկուցումին մէջ քննադատած է Հայաստանի «Պետպլան»ը եւ «Ժողտնտխորհ»ը «որոնք անհրաժեշտ ուշադրութիւն չեն դարձնում հեշտութեամբ եւ կարճ ժամանակում իրականացուելիք եւ մեծ ծախսումներ չպահանջող միջոցառումների վրայ»։

«Ժողտնտխորհ»ի նախագահը յայտարարած է, թէ սխալ ծրագիրներու եւ նիւթական յատկացումներու թերի օգտագործման պատճառով եւս կը մնան չինանիւթերու եւ քիմիական արդիւնաբերութիւնները։

Ծրագիրներու մշակման եւ աշխատանքներու մէջ լուրջ թերութիւններ գըտած է նաեւ՝ Յ. Զարոբեան։

ԵՐԵՒԱՆԻ ԿԼԻՄԱՆ

Յուլիս ամսուան ընթացքին համեմատաբար քիչ քանակութեամբ անձրեւ կուգայ։ Այսուհանդերձ, այս տարի Երեւանի մէջ Յուլիս ամսուան անձրեւին քանակը 15 միլիմեթր եղած է, իսկ Հայաստանի այլ շրջաններու մէջ՝ միջինէն 200-400 տոկոսով աւելի։

Վերջին օրերու ընթացքին արեւադարձային տաք օդեր խուժած են Հայաստան։

Յուլիս 19ին՝ 37,1 եղած է ջերմութեան աստիճանը Երեւանի մէջ։

Վ. ԲՐՈՒՍՈՎ

Բանաստեղծ Վալէրի Բրուսովի ծնընդեան 90ամեակը Հայաստանի մէջ պիտի տօնուի Դեկտեմբեր ամսուան ընթացքին։ Այս առիթով կազմուած է յանձնախումբ մը։

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՆՇԱՆԱՒՈՐ ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԸ

Պատմութեան արձանագրած հաշմանդամներուն մէջ ամէնէն հինը աչազուրկ Հոմերոսն է։ Հոմերոս, ծերութեան օրերուն, իր բանաստեղծութիւնները արտասանելով կը մուրար։

× Համաշխարհային գրականութեան մէջ հռչակաւոր է անգլիացի բանաստեղծ Միլթըն, որ կոյր էր։ Բանաստեղծ Միլթըն, Քրոմուէլի քարտուղարը ըլլալով, անոր մեռնելէն ետքը լքուեցաւ եւ կուրանալով մեռաւ թշուառութեան մէջ, գրեթէ անօթի։

× Միլթըն ունի հիանալի տաղերգութիւն մը, «Դրախտ Կորուսեալ», զոր կոյր կոյր վիճակին մէջ գրել տուաւ կընոջը եւ աղջիկներուն։

× Աբու Լալա Մահարի, որ ազատախոհ արեւելքցի հին բանաստեղծ մըն էր, եօթը տարեկանին մէջ ծաղկախտի բըռնուելով կուրցաւ։ Հակառակ այդ վիճակին, գիտական կեդրոններ այցելեց եւ շատ մեծ ուսում ձեռք բերաւ։

× Կոյրերու ամէնէն մեծ ծառայութիւն ընողը Պրայ անունով Ֆրանսացի մըն է։ Այս անձը որ երեք տարեկանին կուրցաւ եւ կոյրերու հիւանդանոցը դրուեցաւ հոն աշխատեցաւ եւ մթութեան մէջ լուսաւորուեց իր աչքերով պատրաստեց կոյրերու յատուկ այբենարանը, որ ձեռքի շօշափումով կը կարդացուի։

× Պատմութիւնը կը յիշէ նշանաւոր միականիներու անուններ։ Ասոնցմէ մէկն էր Ֆրանսայի Լուտովիկոս ԺԶ. թագաւորին խնամակալ Օրլէանի դուքսը, որ շռայլ էր եւ մսխող։ Այս նախանձոտ իշխանին պատճառով, մեծ վիշտերու են– թարկուեցաւ Վոլթէր։

—× Աշխարհի մեծագոյն մարդոցմէ մէկը, Էտիսըն, խուլ էր։ Եւ խուլ ըլլալուն համար գոհ էր, որովհետեւ այդ կերպով ազատած էր անպէտ ու յիմար խօսքեր լսելէ եւ խաղաղ մտքով կ'աշխատէր իր գործերուն վրայ։

— Էտիսըն խուլ ըլլալուն պատճառով ձայնագիրը հնարած ատեն տկար ձայները խարուելու սխալը չգործեց։ Բայց մեծ երգահան Պեթհովըն շատ նեղուեցաւ իր խլութենէն։ Խլութիւնը, որ խորունկ մտածումով զբաղող մարդոց վնաս չի պատճառեր, շատ մեծ զըրկանք էր Պեթհովէնի համար, որուն հոգին ականջին միջոցաւ միայն պիտի խօսէր։ Այս մեծ երգահանը իր վերջին օրերուն բնաւ չլսեց եւ չկրցաւ վայելել իր իսկ պատրաստած եղանակները ու մեռաւ այդ վիճակին մէջ։

× Պատմութեան ամէնէն նշանաւոր կաղը անկասկած Լենկթիմուրն էր։ Այս աշխարհակալը իր երիտասարդութեան ատեն ստացած մէկ հարուածէն կաղ մընաց եւ ասոր հետեւանքով լէնկ (կաղ) կոչուեցաւ։

× Անգլիացի բանաստեղծ Պայրըն ի ծնէ կաղ էր, իր ամբողջ կեանքին մէջ ատով տառապեցաւ։ Օր մը երբ Պայրըն սպասուհիին հետ պտոյտ կ'ընէր, կին մը զայն տեսնելով ըսաւ. «Ի՜նչ աղուոր տղեկ է»։ Կնոջ այս խօսքին վրայ սպասուհին աւելցուց. «Աղուոր է, բայց մեղք որ կաղ է»։

Պայրըն կ'ըսէ, թէ այդ օրուընէ սկսեալ իր կեանքի ընթացքին ըմբոստ վիճակ մը ունեցաւ։

ՁԱՅՆԵՐ ԳԱՒԱՌԷՆ

ԼԸ ՖՈՅԻ ԲԱՆԱԿԱՎԱՅՐԻՆ ՄԷՋ

ԿՌԸՆՈՊԼ.— Ծանուցուած էր թէ կիրակի Յուլիս 14ին տեղի պիտի ունենար բացումը Գ. Կիւլպէնկեան ննջարանին՝ Լը Ֆոյի բանակավայրին մէջ։ Այդ օրը բացումը տեղի չունեցաւ Պ. Ռ. Կիւլպէնկեանի անհանգստութեան պատճառաւ։ Սակայն բանակումին փոքրիկները կազմակերպած էին հետաքրքրական հանդէս մը, որուն ներկայ եղան մօտաւոր կամ հեռաւոր քաղաքներէ եկած Հայեր։

Բանակումին տնօրէն Վեր. Յ. Հելվաճեան հակիրճ կերպով բացատրեց իրենց կազմակերպութեան (Ժէօնէս Է Աֆսիոն) նպատակը, որ է հայ մանուկները Հայ պահել եւ անոնց աւանդել մեր նախահայրերուն հաւատքը, ըստ եղանակին՝ անոնց ընծայելով բացօթեայ կեանքին բարիքները։

Ուրբաթ, Յուլիս 19ին, Տէր եւ Տիկին Կիւլպէնկեան այցելեցին Լը Ֆօ։ Յիշատակի արձանագրութիւնը կրող մարմարեայ քարը ծածկող շղարշը վերցուց Պ. Ռ. Կիւլպէնկեան, իսկ ննջարանի մուտքի դրան ժապաւէնը կտրեց շնորհալի Տիկ. Ռ. Կիւլպէնկեան։ Յետոյ փոքրիկն Լիտիա Գասպարեան գեղեցիկ ծաղկեփունջ մը յանձնեց Տիկ. Կիւլպէնկեանի, մինչ տղաքը կ'երգէին հայկական երգեր։

Այցելուները իրենց գոհունակութիւնը յայտնեցին եւ շնորհաւորեցին բանակումին ղեկավարները։

Վեր. Յ. Հելվաճեան Միութեան կողմէ շնորհակալութիւն յայտնեց Գ. Կիւլպէնկեան Հիմնարկութեան, որու օժանդակութեամբ շինուեցաւ այս ննջարանը ուր 50 հայ մանուկներ կը պառկին։

Սեղանի ընդունելութենէն ետք՝ հիւրերը մեկնեցան գոհ սրտով, տղոց զուարթ երգերուն եւ ծափահարութիւններուն տակ։

Ա. ԴԱԻԻԹԵԱՆ

«ՅԱՌԱՋ»Ի ԹԵՐԹԸ (197)

ԵՐԼՏՐՋԻ ՊՈՄՊԱՆ

ՀԱԶԱՐ ԻՆԸ ՀԱՐԻՒՐ ՉՈՐՍ

Յովսէփ Թօփալեան, Ֆրօ Պաղտոյեան, Յովհաննէս Ղարխլեան, փախստական Յովակիմ, Գարեգին, Արշակ, Անտոն Գոչ, Երուանդ Ալաճաճեան, Թադէոս Յակոբեան, Տիկին Անչքուլա, 58րդ յօդուածին Ա. հատուածին։

Մանուկ Օթոյեան, Պօղոս Կէչեան, Մանուկ Կէչեան, 58րդ յօդուածին Ա. պարբերութեան վերջին հատուածին։

Նէճմէտտին պէյ պահանջեց, որ անպատասխանատու հռչակուին Միխալ, Մաթէօ, Մանոլ, Միլթօ։

Պահանջեց որ անպարտ արձակուին՝ Երուանդ Յովնանեան, Եղիա Գահուճ-եան, Խաչիկ Պլոյեան։

Նախագահը հարցուց պաշտպան փաստաբաններուն թէ ուրիշ ըսելիք մը ունի՞ն։ Երբ անոնք ո՛չ պատասխանեցին, այն ատեն Հիլմի պէյ ըսաւ թէ դատավարութիւնը վերջ գտած է։ Դատաւորները դարձեալ քաշուեցան խորհրդարան, եւ ժամը 12ին մօտ վերադառնալով՝ նախագահը մէկիկ մէկիկ կարդաց Պատժական Օրէնքին յիշեալ յօդուածներն եւ յաւելուածները, եւ հրապարակաւ ծանոյց դատապարտութեան հետեւեալ վճիռները.—

ՎՃԻՌ

Մահուան դատապարտուեցան՝

Փախստական ամբաստանեալ Լիփա Րիփս, Ռուպինա Ֆային, Երուանդ Ֆըրանկիւլեան, Ճօրճ Փեթրի Վարշամով, այլ անուամբ Գրիգոր Վարշամ, ըստ Պատժ. Օրէնքի 58րդ յօդուածին և 174րդ յօդուածին վերջին հատուածին տրամադրութեանց։

Փախստական Սիլվիօ Րիչչի, այլ անուամբ Քէօսէ Արիսդիտի, բուն անուամբ Վահան, Քար Եուվանովիչ, Թրասս Եուվանովիչ, Մկրտիչ Ղարխլեան, ըստ Պատժական Օրէնքի 58րդ յօդուածին Ա. յաւելուածին Ա. հատուածին տրամադրութեանց։

Փախստական Տիկին Սօֆի Րիփս, այլ անուամբ Մառի Զայց, ձերբակալեալ Էտուարտ Ժօրիս, ըստ Պատժ. Օրէնքի 45րդ եւ 55 յօդուածներուն եւ 58րդ յօդուածին Ա. յաւելուածին Ա. հատուածին տրամադրութեանց։

Փախստական Աննա Նէլլէնս Ժօրիս, ձերբակալեալ Մանուկ Իւմէտեան, Նշան Յովհաննէսեան, Առաքել Նահապետեան, ըստ Պատժ. Օրէնքի 174րդ յօդուածին եւ 58րդ յօդուածին Բ. յաւելուածին Ա. հատուածին տրամադրութեանց։

Ցկեանս բերդարգելութեան՝

Ձերբակալեալ Յովսէփ Թօփալեան, Ֆրօ Պաղտոյեան, Յովհաննէս Ղարխլեան, փախստական Յովակիմ, Գարեգին Արշակ, այլ անուամբ Արտաշ, Անտոն Գոչ, այլ անուամբ Ամուճա Ալաճաճեան, Երուանդ Ալաճաճեան, Թադէոս Յակոբեան, Տիկին Անչքուլա, այլ անուամբ Անճուլա, ըստ Պատժ. Օրէնքի 58րդ յօդուածին Ա. հատուածին տրամադրութեան։

15 ամեայ թիապարտութեան՝

Ձերբակալեալ Մանուկ Օթոյեան, Պօղոս Կէչեան, Մանուկ Կէչեան, ըստ Պատժական Օրէնքի 58րդ յօդուածին Ա. յաւելուածին վերջին հատուածին տրամադրութեան։

Փախստականները զրկուեցան քաղաքացիական իրաւունքներէ, եւ իրենց գըրաւեալ ինչքերը պիտի մատակարարուին ըստ օրէնի, ըստ Պատժ. Օրէնքի 31րդ յօդուածին։

Անպատասխանատու հռչակուեցան՝

Յանձնակատար Միխալ եւ Մաթէօ, երկաթագործ Միլթօ եւ Մանոլ, ըստ Պատժ. Օրէնքի 298րդ յօդուածին տրամադրութեան։

Անպարտ արձակուեցան՝

Իպլէմէճի Երուանդ Յովնանեան, դրամատէր Եղիա Գահուճեան եւ Սէրքլ տ'Օրիանի ծառայ Խաչիկ Պլոյեան։

ԺԶ

Պէտք է մեր ընթերցողները գիտնան թէ վերեւ յիշուած բոլոր հարցաքննութիւնները, ինչպէս նաեւ ընդհանուր դատախազ Նէճմէտտին Մոլլա պէյի համբաւաւոր ճառը, գիտումնաւոր խեղաթիւրումներով լեցուն, չեն ներկայացներ իրականութիւնը։

Նախ, Ելտըզի մէջ, տեղի կ'ունենային Քէնիչ Բարձրագոյն Յանձնաժողովին գիշերային գումարումները եւ հոն, գեհենային խոշտանգումներու, ծեծի, չարչարանքի եւ մահուան սպառնալիքի տակ, բռնի կը կորզուէին խոստովանութիւններ՝ ձերբակալուածներուն բերնէն, որոնց մեծագոյն մասը տեղեկութիւն իսկ չունէր Դէպքին գոյութենէն։

ՍՄԲԱՏ ԲԻՒԲԱՏ

(Շար.)

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ

Ֆրանսահայ Կապ. Խաչի օգափոխութեան կայանին՝ իրենց այցելութեան առթիւ.—

Տէր եւ Տիկին Սուճուքճեան (Փարիզ) 100 ֆր., Տէր եւ Տիկին Թ. Կարապետեան (Փարիզ) 70, Տիկին Նոյեմի Մաթէոսեան (Փարիզ) 25, Տիկին Քիւրէլեան (Փարիզ) եւ Տէր եւ Տիկին Խայինեան (Փարիզ) 20ական, Տէր եւ Տիկին Մութաֆեան (Կրընոպլ) 30, Տիկին Գօստիքեան (Կրընոպլ) եւ Տիկին Վ. Օնպաշեան (Կրընոպլ) 20ական, Տէր եւ Տիկին Միքայէլեան (Կրընոպլ), Տիկին Քիւրճճեան (Կրընոպլ), Տիկին Արապեան (Կրընոպլ), Պ. Խաչիկ Մուրատեան (Կրընոպլ) 15ական, Տիկին Քիւրքչեան (Կրընոպլ), Պ. Յակոբեան (Կրընոպլ), Տէր եւ Տիկին Սինանեան (Կրընոպլ), Կրընոպլի հայ ուսանողներ, Տիկին Երանոսեան (Կրընոպլ), Տիկին Աքաքեան (Կրընոպլ), Տիկին Եղիսաբէթ Նիքոլա (Կրընոպլ) 10ական, Տիկին Շ. Օհանեան (Կրընոպլ), Տիկին Հալաճեան (Կրընոպլ) 5ական ֆր.: Զանազաններ (Կրընոպլ) 165 ֆրանք: Գումար 610 ֆրանք:

×

Փոքրիկն Ֆրէտի Մաթոսեան 18,50 ֆր. դրադարանի ճոխացման:

Կրընոպլի Կապ. Խաչի մասնաճիւղը նուիրած է 5 քիլօ պոնպոն:

Տէր եւ Տիկին Մաթոսեան 3 քիլօ լոխում:

Տէր եւ Տիկին Եղնիկեան (Լա Կարէնէն) 10 քիլօ շաքար:

Տէր եւ Տիկին Տէվէճեան (Անիէռէն) 10 ծրար փէն տ'էփիս եւ 10 թապլէթ շոքոլա:

Փոքրիկն Աստղիկ Տէվէճեան 7,50 ֆր. գրադարանի ճոխացման:

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

ORIENT

Եռամսեայ պարբերական ամբողջովին նուիրուած Միջին Արեւելքի երկիրներու անցուդարձին:

Բ. եռամսեայ 1963 — թիւ 26

Շահեկան բովանդակութիւն

114, Champs-Elysées, PARIS

Լոյս Տեսաւ



Մատենաշար — ՅԱՌԱՋ — Կեդրոնավայր

Գին

Ֆրանսա՝ 15 Ֆր.

— Առանձին առաքումի ծախքը —

«ՅԱՌԱՋ»

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

ԼԻՈՆ.— Ֆր. Կապ. Խաչի Օրը կը տօնուի մեծ պատրաստութեամբ, 27 Հոկտ. Մոլիէրէի շքեղ սրահին մէջ:

×

Փարիզահայ Տիկնանց Միութեան յիսնամեայ յոբելեանը կը տօնուի Հոկտեմբեր 13ին, Սալ տը լա Շիմի:

ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ ՆԻՍԻ ՄԷՋ

ՀԵՐՈՍՆԵՐՈՒ ՕՐՈՒԱՆ ԱՌԹԻՒ

Խանասորի 66րդ տարեդարձը կը տօնուի նախաձեռնութեամբ Հ. Յ. Դ. Գէորգ Զաւուշ խումբին, հովանաւորութեամբ Մարսէյլի Շրջ. Կոմիտէին, այս կիրակի ամբողջ օրը Լա Թոլ Սիւր Լու գետեզերքը – անտառին մէջ:

Հաճելի օր մը (գետի լոգանք կարելի է):

Կը նախագահէ ընկ. Յ. ՇԻՇԼԻԵԱՆ

Կը բանախօսէ ընկ. Յ. ՆԻԿՈՂՈՍԵԱՆ

Ծանօթ.— Մասնաւոր օթօքար մը վարձուած է: Առաւօտուն ժամը 8,30ին ճամբայ կ'ելլէ Փլաս Մասէնայէն–Ալպէր Ա. պարտէզէն (Քազինօ Մունիսիփալին դիմացը): Նոյն օթօքարը կը հասնի Մատըլէն ժամը 9ին:

Ժամը 9,30ին կուգայ Մանեան Սքատին (ծովը ազբիւրին մօտ սպասել) զայն առնելու համար:

Իսկ անձնական կառքով եկողներուն համար, երկու քիլոմեթր է Թոլ Սիւր–Լու գիւղէն – Կրասի ճամբուն վրայ: Անկինը Ճաշարան–Պառ–Պաքիւսէն աջ դառնալ եւ մտնել անտառը գետեզերքը:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Տիկ. Միութեան Որբերու Օգնութեան Մարմինը տրամադիր ըլլալով քանի մը անպաշտպան տղոց հայեցի դաստիարակութիւնը հոգալու, հարկ կը համարի ծանուցանել, որ շահագրգռուողները այժմէն դիմեն իրեն գրասենեակին, 15 Ռիւ Ժան Կուժոն:

ՀԱՅ ԲՈՅԺ

ԺՈՂ. ԱՄՍԱԹԵՐԹ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ

խմբագիր՝ Շ. ՆԱՐԴՈՒՆԻ

Խմբագրին երկար բացակայութեան պատճառաւ, լոյս տեսած չեն ՀԱՅ – ԲՈՅԺի 1962 եւ 1963 տարիներու թիւերը:

Խմբագիրը, որ նոր վերադարձաւ Ամերիկայէն, գործի ձեռնարկած է արդէն: Որոշած է հրատարակել երկու բացառիկ թիւեր, իւրաքանչիւրը 150 էջ: Առաջինը պիտի կրէ 1962 թուականը, երկրորդը՝ 1963 թուականը: Այս երկուքը մէկ տարի հաշուելով՝ անոնք որ վճարած են 1962, վճարած կ'ըլլան նաեւ 1963 տարին:

Այս ձեւով, խմբագիրը կը խորհի ՀԱՅԲՈՅԺի հրատարակութիւնը ամբողջացնել եւ կանոնաւորել մինչեւ յառաջիկայ տարի, եւ 1964 տարուան թիւերը լոյս ընծայել ամէն ամիս՝ Յունուարէն սկսեալ:

Ամերիկայի նոր բաժանորդները եւս, որոնք վճարած են այս տարուան համար (1963), պիտի ստանան ՀԱՅ–ԲՈՅԺի 1962 եւ 1963 թիւերը:

Այն բաժանորդները, որոնք յետնեալ պարտք ունին, թող բարի ըլլան իրենց վճարումը հասցնել մինչեւ տարեվերջ: Հին պարտքերուն հետ՝ ներկայ տարին եւս վճարողներն են միայն, որ պիտի ստանան ՀԱՅ – ԲՈՅԺի բացառիկները, խմբագրուած բժշկական, գրական, պատմական, շատ հետաքրքրական եւ ճոխ բովանդակութեամբ,— արդէն տըպագրութեան յանձնուած:

Այս առթիւ շնորհակալութիւն այն հաւատարիմ բաժանորդներուն, որոնք ՀԱՅԲՈՅԺի հրատարակութիւնը ընդհատուած ըլլալով հանդերձ՝ խմբագրին բացակայութեան պատճառաւ, վճարումները կատարած են օրը օրին ի վկայութիւն իրենց բարեկամութեան եւ վստահութեան:

Կը խնդրուի Հայրենիք, Ասպարէզ, Արմենիա, Ազատ Օր, Յուսաբեր, Ազդակ, Այգ, Ալիք թերթերու խմբագրութիւններէն, ինչպէս և Սիոն, Հասկ, Հայ Կեդրոն, Կիլիկիա, Հայաստանեայց եկեղեցի պարբերականներէն, որ հրատարակեն այս յայտարարութիւնը դէթ 2 – 3 անգամ:

ՀԱՅ ԸՆԾԱՅԱՐԱՆ

ԲԱՑՈՒԱԾ ԵՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ուսումնական 1963–1964 Տարեշրջան

Կ'ընդունուին 10–12 տարեկան բարեկիրթ եւ ուսումնասէր աշակերտներ, որոնք ունին իրենց տարիքին համապատասխան նաեւ ուսումնական աստիճան:

Արձանագրութեան եւ լուսաբանութեանց համար դիմել՝

Direction du Petit Séminaire Arménien

3, Av. de Grandchamp, LE PECQ (S. et O.)

Tél· 963.01.72

IMPRIMERIE SPECIALE

DU JOURNAL « HARATCH »

32, Rue de Trévise, PARIS (9e)

ԴՊՐՈՑԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆ

Դպրոցասէր Տիկնանց վարժարանին 1963 – 1964 տարեշրջանի արձանագրութիւնները սկսած են: Անոնք որոնք կը փափաքին ղրկել իրենց զաւակները պէտք է այժմէն իսկ դիմում կատարեն հաստատութեան տնօրէնութեան:

Ա.— ՖՐԱՆՍԱԿԱՆԸ, որ տառացի կըրպով կը հետեւի պետական լիսէներու արդիական բաժնի պաշտօնական ծրագրին — անգլերէն եւ սպաներէն լեզուներով —:

Բ.— ՀԱՅԿԱԿԱՆԸ, որ կ'օժտէ սանուհիները հայագիտական ծանօթութիւններով, հայ լեզուի, գրականութեան, հայ կրօնքի եւ պատմութեան, Հայաստանի աշխարհագրութեան մարզերուն մէջ:

Աշակերտուհիներ կ'ընդունուին ութ տարեկանէն սկսեալ: Մանրամասնութեանց համար դիմել հաստատութեան տնօրէնութեան:

1, Bd. du Nord, LE RAINCY (S. et O.)

Tél : 927-01-72

Դպրոցասէրի ուսման ծրագիրը կ'ընդգրկէ երկու ուրոյն բաժիններ:

ՀՐԱՆՏ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

51, Rue Monsieur-le-Prince, PARIS - 6e — Chèque Postal : 1278-35

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՇԻՐՎԱՆԶԱԴԷ, Երկերի ժողովածու, 10 հատոր լաթակազմ	70 Ֆր.
ՍՏԵՓԱՆ ԶՕՐԵԱՆ, Երկերի ժողովածու, 7 հատոր, լաթակազմ	56 Ֆր.
ՍՏԵՓԱՆ ԶՕՐԵԱՆ, Պապ թագաւոր, լաթակազմ	10 Ֆր.
ՍՏԵՓԱՆ ԶՕՐԵԱՆ, Հայոց բերդը, լաթակազմ	8 Ֆր.
ՎԱՀԱՆ ՏԷՐԵԱՆ, Երկերի ժողովածու, 2 հատոր լաթակազմ	14 Ֆր.
ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՒԻԹ, մեծադիր, գունաւոր նկարներով, լաթակազմ	10 Ֆր.
Վ. ԱՆԱՆԵԱՆ, Հայաստանի կենդանական աշխարհը, Բ.	8 Ֆր.
ԱՐՍԷՆ ՏԷՐՏԷՐԵԱՆ, Երկեր (Արովեան Պռօշեան, Պարոնեան)	17 Ֆր.
ՄՈՒՐԱՑԱՆ, Պատմուածքներ, գունաւոր նկարներով	5 Ֆր.
ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑԻ մասին յիշողութիւններ. լաթակազմ	7·50 Ֆր.
ՄԻՔ. ՇԱԹԻՐԵԱՆ. Գարունը նորից եկաւ. 296 էջ.	5 Ֆր.
ԱԲԳԱՐԵԱՆ. Մատենադարան(անգլ.) 18 գունաւոր մանրանկարներ	3 Ֆր.
ՀԵՆՐԻԿ ԹՈՒՄԱՆԵԱՆ. Երգի ծնունդը. բանաստեղծութիւններ	3·85 Ֆր.
Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ. Տաղեր, 200 էջ. լաթակազմ	3·50 Ֆր.
ՍՈՎԵՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ. Ա. 800 էջ. լթկզմ.	16 Ֆր.
ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ, Անլռելի զանգակատուն, Պէյրութ, 1963	10 Ֆր.

Առաքման ծախքը գնողին վրայ

ԳՐԱՏՈՒՆՍ ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻՆ Է

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՁԱՅՆԱԳՐԵԱԼ ԲՈԼՈՐ ԵՐԿԵՐՈՒՆ

ՃՈԽ ՄԹԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԵՒ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆՑ

ԼՈՅՍԸ ԳՈՅՆ Է.... ԳՈՅՆԸ ԼՈՅՍ Է

ՁԵՐ ՏԱՆԸ ԼՈՅՍ ՏՈՒԷ'Ք.... ԹՈՄԼԱՔԻ ԳՈՅՆ ՏՈՒԷ'Ք

Ձեր բնակարանը կը լուսաւորուի

Եթէ ներսը եւ դուրսը

ՎԵՐԱՆՈՐՈԳԷՔ – ԶԱՐԴԱՐԷՔ – ՆԵՐԿԷՔ

ԹՈՄԼԱՔ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐՈՎ

PEINTURES THOMLAC

16 bis, Bd. Sébastopol, Paris 4e

Tél. ARC 26-61 – Métro : Halles et Chatelet

136, RUE DES BOURGUIGNONS — ASNIERES - BOIS COLOMBES (Seine)

Tél : GRE. 09-47

11, BD. DE LA REPUBLIQUE — LA GARENNE (Seine)

Tél. : STA. 19-06

ԱՆՄՐՑԵԼԻ ԳԻՆԵՐՈՎ

Ամէնէն արդիական, նուրբ եւ ընտիր ճաշակով պատրաստուած՝ առաջնակարգ ներկեր: Բնական եւ արուեստական բազմերանգ գոյներու մեծ ընտրութիւն: Նորոյթ իւղաներկեր, պատի գեղեցիկ թուղթերու ճոխ ընտրութիւն: Գետնի համար՝ ամէն տեսակ — լինոլէոմ եւ փլասթիք — ծածկոցներ.—

TAPIFLEX — TAPISOM — CARPETTE

Ձեր բնակարաններուն արտաքին եւ ներքին խնամքներուն համար անհրաժեշտ բոլոր նիւթերը:

Ամէն գնորդի կը նուիրուի յատուկ տետրակ մը, որու շնորհիւ կրնայ 10–30 առ հարիւր զեղչ ունենալ:

ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐ

52, RUE CHALON, PARIS 12e — 64, BLD. DE BELLEVILLE, PARIS 20e

166, AV. ARISTIDE BRIAND — PAVILLONS - SOUS-BOIS (Seine)

4 bis, RUE PAUL VAILLANT COUTURIER — ARGENTEUIL (S. et O.)

24, RUE PAUL VAILLANT-COUTURIER — ALFORTVILLE (Seine)

48 bis, RUE DALAVRAC — FONTENAY - SOUS - BOIS (Seine)

ՅԱՌԱՋ

Օ Ր Ա Թ Ե Ր Թ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

Le PREMIER QUOTIDIEN ARMENIEN en EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction et Administration : 32, Rue de Trévise - PARIS-9e

Fondé en 1925 — Téléph. : PRO. 86 - 60

R. C. Seine 57 A 2731 — C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա՝ Տար. 50 Ֆ. — Վեցամսեայ՝ 27 Ֆ.

Արտասահման՝ Տար. 60 Ֆ. — Հատը 0.30 Ֆ.

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 7 ՕԳՈՍՏՈՍ

MERCREDI 7 AOUT 1963

LE NUMERO : 0,30 FR.

39րդ ՏԱՐԻ — Թիւ 9676

Fondateur : SCHAVARCH MISSAKIAN

39e ANNÉE — Nº 9676

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՊԱՏՄԱԿԱՆ ԺԱՄԵՐ ԿՐԵՄԼԻՆԻ ՄԷՋ

ԽՐՈՒՇՉԵՒԻ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆԸ ՇԱՏ ԲԱՐՁՐ Է

ՀԻՒԼԷԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ՍՏՈՐԱԳՐՈՒԵՑԱՒ

Մոսկուայի մէջ Տին Ռըսք իր ամերիկեան պատուիրակութեան հետ, Լորտ Հիւմ իր բրիտանական պատուիրակութեան գլուխը զոհ տրամադրութեամբ ժամանած են Կրեմլին ուր իրենց կը սպասէր Նիքիթա Խրուշչեւ: Խորհրդային վարչապետը շատ լաւ տրամադրուած էր եւ իր հիւրերը առաջնորդեց Կրեմլինի պատմական Կատարինէ սրահը զոր Կատարինէ Բ. կայսրուհին կառուցանել տուած էր 1770ին: Ութ մեթր երկարութեամբ սեղանին առջեւ կարգով նստած են՝ Տին Ռըսք, Լորտ Հիւմ եւ Անտրէյ Կրոմիքօ: Խրուշչեւ «բեմին» ետին կը մնայ մինչեւ այն վայրկեանը երբ կը գրուի վերջին ստորագրութիւնը: Առաջ՝ ծափահարութիւններ եւ կարգով խօսք կ'առնեն Արտաքին Նախարարները: Խորհրդային Նախարարը կը շեշտէ թէ ստորագրելով այս համաձայնագիրը կ'ուզէ իր գոհունակութիւնը յայտնել նշելով որ այս հարցը լուծուած է: Խորհրդային կառավարութիւնը հոն կ'ուզէ տեսնել խաղաղութեան եւ խաղաղութեան քաղաքականութեան յաղթանակը: Եւ իր ճառը եզրակացնելով, Կրոմիքօ բաժակ մը կ'առաջարկէ խմել խաղաղութեան եւ բոլոր ժողովուրդներու միջեւ բարեկամութեան կենացը:

Տին Ռըսք իր կարգին յայտնեց թէ առաջին քայլ մըն է միայն, ամբողջական բան մը չէ: Վերջը չէ այն ամէն ինչին որ կրցաւ սպառնալ մարդկութեան: Ամերիկացին ալ իր կ'ընէ Կրոմիքոյի բաժակը եւ կը խմէ խաղաղութեան համար:

Անգլիացի նախարարը աւելի խանդավառ է. կը շեշտէ թէ մեծ դէպք մըն է, որովհետեւ ամէն ընտանիք պիտի կարենայ այլեւս քնանալ առանց վախի ծնողներուն համար: Լորտ Հիւմ որ նախորդ օրն իսկ ակնարկած էր «ծիծեռնակին որ գարունը կը բերէ», ոգեկոչած է նապաստակին եւ կրիային առակը. «այս վերջինին որ հասաւ իր նպատակին»:

Ու Թանթ ալ քանի մը խօսք ըսելու հրաւիրուած ըլլալով, կը յայտնէ թէ թէեւ այս համաձայնագիրը չի վերցներ պատերազմի վտանգները, բայց կարեւոր քայլ մըն է խաղաղութեան ճամբուն վրայ եւ ՄԱԿի ընդհ. քարտուղարը կը վերջացնէ.— «Այսօր՝ խաղաղութիւնն է յաղթականը վրայ»:

Այս առթիւ պաշտօնական զեկոյց մըն ալ հրատարակուած է ուր կ'ըսուի թէ Օգոստոս 5ին, Կրեմլինի մէջ Խորհ. Միութեան, Մեծն Բրիտանիոյ եւ Միացեալ Նահանգներու Արտաքին Նախարարները համաձայնագիր մը ստորագրած են որ կ'արգիլէ հիւլէական զէնքերու փորձառական պայթումները օդին մէջ եւ ջուրերուն տակ:

Արեւմտեան Գերմանիոյ մէջ մտադիր են ներկայիս ստորագրելու այդ համաձայնագիրը: Չեն ուզեր որ համաձայնագիրը օգտագործուի ամրապնդելու համար Արեւելեան Գերմանիոյ դիրքը:

Խրուշչեւ յայտարարեց, մեծ ընդունելութեան մը ընթացքին որ տրուած էր այս առթիւ, որ յաջորդ հանդրուանը պէտք է ըլլայ ոչ-յարձակողական դաշինք մը:

Օրէ Օրին

ԼԱ՛Ց ՄԵԾԱՍՔԱՆՉ, ԼԱ՛Ց...

Քանի մը ձեռքի մատներու վրայ կարելի է համրել այսօր, Մեծասքանչի նուիրեալները՝ Հայրենիքի մէջ եւ անկէ դուրս:

Անոնք օրհնեա՛լ պահակներն են մեր լեզուին: Երդուեալ թշնամիները օտար բառերու օտա՛ր տարազով մուտքին՝ մեր Մայրենիքին մաշտոցափառ պալատին մէջ: Աչալուրջ հսկողները անոր դրան վրայ, անոր պատուհաններուն վրայ, որպէսզի դոնէն աքացիով վտարուածը՝ պատուհանէն ներս չմտնէ ժպիտով:

Անոնք օրն ի բուն կը տքնին, որպէսզի չորնալիք գրիչներու կամայ թէ ակամայ մեղքով, առաջնորդութեամբ կամ մեղսակցութեամբ չշնայ «Մայր մեր», չնսեմանայ Մեծասքանչը մեր, չհարճանայ թագուհի բարբառը մեր:

Արաքսի ձախ ափին, մեղաւորը «սովետացած» Հայն է, մամուլը, գիրն ու գրականութիւնը: Աջին՝ աշխարհի չորս ծագերուն, «օտարացած» Հայը:

Այսուհանդերձ, եթէ քառասնամեայ բաղդատութիւնը ընենք մեր «հզօր» Հայրենիքին եւ «հլու» հայ Սփիւռքին միջեւ, մեր լեզուի օտարամուտ բառերու մահացու մեղաւորները՝ անհամեմատ թիւով Արաքսէն անդին են քան թէ ասդին:

Ժողովրդական իմաստութեամբ եւ ասութեամբ, մեղքեր կան որոնք արքայութիւն կը տանին: Անշո՛ւշտ: Բայց ո՛չ Մեծասքանչին արքայութիւնը:

Հայրենախիղ, մեղքեր կան որ ներելի են «օտարացած» Հայուն: Ըսե՛նք: Բայց չէ՞ որ օտարացած Հայ չկայ... «սովետացած» Հայաստանի մէջ:

Մե՛նք, Արարատի շուքէն, Արաքսի օրորէն, Երեւանի ոսկի աշունէն, հայրենի գինիէն, նայիրեան աղջիկներու սեւ-սաթ աչքերէն, մեր աշխարհագրական Հայրենիքէն հեռու ծնած Հայերս: Մե՛նք, մեր հօրն ու մօրը լեզուն օտարութեան մէջ ազատ ու ճակատաբաց գրող Հայերս, կ'արգահատինք հայրենի հողին վրայ նոյնը չընող «սովետացած» Հայերուն:

Արաքսէն անդին՝ մե՛նք, քառասնամեայ տարագիր, մեր լեզուին անմահութեան հաւատացող «օտարացած» Հայերս, մեր հօրն ու մօրը պէս գետնախնձոր կ'ուտենք՝ ո՛չ «կարտոֆիլ», ռակեխնձոր՝ ո՛չ «պոմիդոր», թանապուր՝ ո՛չ...

Անդի՞ն: Ճաշակեցէ՛ք եւ տեսէ՛ք զի՛ դառն է... Երեւանի «Տերմինաբանական» կոմիտէի կերած ապուրը, զոր նոյնութեամբ, իր քացխած ուղղագրութեամբ, կը հրամցնենք մեր ընթերցողներուն՝ օտարութեան մէջ եօթը պորտ Հայ մնացողներուն: Որպէսզի տեսնեն թէ Արաքսէն անդին, այդ սրտխառ ապուրին մէջ ինկած մազերը — «եւրոպական և ռուսական փոխառեալ բառերը» — փոխանակ դուրս հանելու եւ նետելու, ինչպէս մենք կ'ընենք ասդին, «կոմիտէն ՈՐՈՇՈՒՄ է» լեզուաբար դգալելու ձեւը փոխել միայն ... հայաբար կուլ տալու համար:

Սեւ սրտի կարմիր մխիթարանք: Կրեմլինի փողը փչող, Երեւանի թմբուկը զարնող բանգէտները կ'ըսեն ու կը կենան՝ թէ խորհրդային վերին իշխանութիւնը ոչ մէկ կլանիչ նշում կը բանեցնէ Միութենական Հանրապետութեանց վրայ, անոնց «ազգային» լեզուն եւ մշակոյթը ռուսացնելու համար: Մեզ չեն կրնար համոզել: Բարեբախտաբար: Այլապէս յուսահատական պիտի ըլլար տեսնել Երեւանի «ազատ» եւ կամաւոր լեզուական ստրկութիւնը:

Ո՛չ: Հազար անգամ ո՛չ:

Քառասնամեայ եւ յաւիտեա՛ն պիղծ այդ ուղղագրութիւնը մեր դարաւոր լեզուն կը յօշոտէ:

Քառասնամեայ եւ յաւիտեա՛ն օտար այդ բառամթերքը մեր մշակոյթը կը խոցէ:

Մէկն ու միւսը քառասնամեայ եւ յաւիտեա՛ն անհարազատ, մեր Հայրենիքին ու Մայրենիքին անցեալը կը քանդեն, ներկան կ'այլասերեն, ապագան կը մըթագնեն:

Մօրենակա՛ն լեզու, Կայսերակա՛ն լեզու, տես թէ կարմիր պատմուճանին ծալքերուն տակ, դաշոյնը ձեռքին մէջ, Արաքսի ո՛ր մէկ ափին վրայ է՝ դարաւոր հայրասպանը Բրուտոս:

Վիրաւոր է «սովետացած» մեր լեզուն: Արիւնը վէրքէն կաթի՛լ կաթի՛լ կը հոսի:

Արցունքի կայլակը արեան կաթիլը չի լուար: Գիտե՛նք: Գոնէ վէրքին ցաւը կ'ամոքէ:

Լա՛ց Մեծասքանչ, լա՛ց...

ՇԱՀԷՆ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՊԱՂՏԱՏԻ ձայնասփիւռը կը հաղորդէ որ քրտական դիմադրութիւնը բոլորովին փլած է եւ կարեւոր վայրեր գրաւուած են: Մարդկային վնասներու համար բան մը չէ ըսուած:

ՍՈՒՐԻՈՅ նոր դահլիճը կազմուեցաւ Պիթարի կողմէ: 18 նախարարներու 15ը՝ Պաասական են: Պաշտպանութեան նախարար նշանակուած է զինուորական մը՝ զօր. Զիատէհ որ հաւատարիմ կողմնակից մըն է Հաֆէզի, Յունիս 18ին Նասրական շարժումը ճզմողը:

ԱՄԵՐԻԿԵԱՆ Նիւզ-Ուիք պարբերականին համաձայն զօր. տը Կոլ կ'ուզէ անձնական ներկայացուցիչ մը ունենալ Պոնի մէջ եւ այդ պաշտօնին համար Մօրիս Շումանի մասին կը մտածէ:

ՍՈՖԻԱՅԻ մէջ բացուած է էսփերանթոյի միջազգային 45րդ համագումարը, 3400 հոգի կը մասնակցին եւ առաջին անգամ ըլլալով ափրիկեցի պատուիրակներ ալ եկած են:

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ ցորենի, բրինձի եւ ծխախոտի ձեւին տակ փոխատուութիւն մը ըրած են Իրաքի: Ոչ մէկ մանրամասնութիւն տրուած է այս փոխատուութեան արժէքին մասին:

ՖՐԱՆՍԱՀԱՅ ԿԱՊՈՅՏ ԽԱՉԻ ՕԴԱՓՈԽՈՒԹԵԱՆ ԿԱՅԱՆ

Շրջանային Վարչութիւնը կը տեղեկացնէ թէ Ֆրանսահայ Կապ. Խաչի Պելֆոնթէնի օդափոխութեան կայանի 2րդ խումբի երախաները որոնք Փարիզէն մեկնած էին օթօքարով, շատ հաճելի ճամբորդութիւն մը ընելէ յետոյ, հասած են իրենց տեղը, շատ հանգիստ:

ՏԻԿԻՆ ԺՈՐԺ ՊԻՏՕ ծուլիօ Զեզառէ Նաւով դէպի Պրազիլ մեկնեցաւ իր ամուսնին մօտ որ իր քաղաքական «աքսորը» կ'ապրի Պրազիլի մէջ քանի մը ամիսէ ի վեր: Տիկին Պիտօ վերջին շաբաթները կ'ապրէր իր բարեկամուհիին՝ փաստաբան Սիւզան Պլումի մօտ, Նիսէն 20 քիլոմեթր հեռու: Նախկին վարչապետին կինը այլեւս դիւանագիտական անցագիր չունի եւ կը ճամբորդէ իբրեւ սովորական գրօսաշրջիկ:

ՏԵՐՄԻՆԱԲԱՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՈՒՄ

ՀԱՅԵՐԵՆԻՆ ԱՆՑԱԾ ՕՏԱՐ ԲԱՌԵՐՈՒՄ Օ (Ո) ՁԱՅՆԱՎՈՐԻ ԳՐՈՒԹՅԱՆ ՈՒ ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նոր շրջանի եվրոպական եւ ռուսական փոխառյալ բառերում օ (ո) ձայնավորի գրության եւ արտասանության մասին տերմինաբանական կոմիտեի դեռեւս 30ական թվականներից գործող որոշման խախտման հետեւանքով հայերենում առաջացել են կոստյում-կաստյում, կոնֆետ-կանֆետ, պոմիդոր-պամիդոր, միկրոֆոն-միկրաֆոն, դիրեկտոր-դիրեկտր, Ռոստով-Ռաստով, Նապոլեոն-Նապոլեոն, Խարկով-Խարկըվ արտասանական զուգահեռ ձեւերը: Սրանցում միօրինակություն սահմանելու նպատակով տերմինաբանական կոմիտեն ՈՐՈՇՈՒՄ Է՝

Ա. Հայերենի նորագույն փոխառությունների գրության ու արտասանության մեջ միասնականություն պահպանելու համար, սրանցում Օ (Ո) ձայնավորի Ա կամ Ը արտասանությունը համարելով ընդունված արտասանական կանոնների խախտում, այդ բառերում շարունակել գրել եւ արտասանել Օ (Ո), այն է՝ ԱԿՈՐԴԵՈՆ, ԿՈՍՏՅՈՒՄ, ԿՈՆՖԵՏ, ԿՈՆՍՏԻՏՈՒՑԻԱ, ՄԻԿՐՈՖՈՆ, ՄՈՆՏՅՈՐ, ՍՈՐԱԼ, ՊՈՄԻԴՈՐ, ՊՐՈՊԱԳԱՆԴԱ, ՍՈՎԵՏ, ԲՈԼՇԵՎԻԿ, ՍՈՎԽՈԶ, ԴԻՐԵԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ, ՏՐԱԿՏՈՐ, ՌԵԿՏՈՐ եւ ոչ թե՝ ակարդեոն, կաստյում, կանֆետ, կանստիտուցիա, միկրաֆոն, մանտյոր, մարալ, պամիդոր, պրապագանդա, սավետ, բալշեվիկ, սավխոզ, դիրեկտըր, պրոֆեսըր, տրակտըր ռեկտըր եւայլն:

Բ. Նույն կանոնը պահպանել նաեւ հատուկ անունների գրության ու արտասանության մեջ. գրել ու արտասանել՝ ՆԱՊՈԼԵՈՆ, ՎԻԿՏՈՐ, ՎԻԼՍՈՆ, ՏՈԼՍՏՈՅ, ՎՈՐՈՇԻԼՈՎ, ԿՈԶԼՈՎ, ԿՈՍԻԳԻՆ, ՄՈՍԿՎԱ, ՌՈՍՏՈՎ, ՎՈՐՈՆԵԺ, ԽԱՐԿՈՎ, ՍԵՎԱՍՏՈՊՈԼ, ԵԼԻԶԱՎԵՏՈՊՈԼ, եւ ոչ թե՝ Նապալեոն, Վիկտըր, Վիլսըն, Տալստոյ, Վարաշիլով, Կազլով, Կասիգին, Մասկվա, Ռաստով, Վարոնեժ, Խարկըվ, Սեւաստապոլ կամ Սեւաստոպըլ, Ելիզավետապոլ եւայլն:

14 Յուլիս 1963 «ԵՐԵՒԱՆ»

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ՝ ՄԱԿ-ԻՆ ԱՌՋԵՒ 1965ԻՆ

« ԱՅԳ »ի Յուլիս 28ի թիւին մէջ կը կարդանք.—

Լեհ հայասէր գրող՝ Պոկտան Կենպարսքի, իր գրչի գործը կեանքի գործքի վերածելով, հայկական իրաւունքները պաշտպանելու համար (այսինքն՝ Թրքահայ հողերու վերադարձը), դիմած է Խորհ. Միութեան Վարչապետ Նիքիթա Խրուշչեւին եւ Հնդկաստանի Վարչապետ Նեհրուին, անոնց գործնական օժանդակութիւնը պահանջելով:

Հնդկաստանի Վարչապետ Նեհրու պատասխանած է Կենպարսքիի, յայտնելով թէ համաձայն է, եւ Հայկական Եղեռնի յիսնամեակին առթիւ, 1965 թուին, անձամբ հարցը պիտի ներկայացնէ ՄԱԿին եւ պիտի պաշտպանէ:

ԱՐԱԲ ԳՐՈՂՆԵՐ
ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

Արաբները Հայաստանը գրաւեցին շատ հին ժամանակներէն, 640էն սկսած անոնց տիրապետութիւնը մասնակի կերպով շարունակուելով մինչեւ Ժ. դարը: Այնուամենայնիւ 885ին Աշոտ Ա. Բագրատունին յաջողեցաւ միաւորել Հայաստանի կեդրոնական շրջանները եւ հիմնել անկախ Բագրատունեաց Թագաւորութիւնը, զոր ան կազմակերպեց արաբական լուծէն ազատագրելով, այսպէս, Հայաստանի գէթ մէկ մասը: Աշոտ Ա. Բագրատունիի մահէն ետք, անոր յաջորդեց Սմբատ, որ Խալիֆայի տեղակալին՝ Եուսուֆի կողմէ խաբէութեամբ կանչուեցաւ Դուին, ուր եւ սպաննուեցաւ: Սմբատի տղան, Աշոտ Բ. գահ բարձրանալով քալեց Արաբներուն վրայ եւ իր տարած յաղթանակներով ծանր հարուածներ տուաւ Արաբներու գոռոզութեան, արժանանալով Աշոտ Երկաթ անուանումին: Այնուամենայնիւ մինչեւ անոր մահը Հայաստան աւերումներու բեմ դարձաւ Արաբներու դէմ մղուած պատերազմներուն հետեւանքով: Այդ երեք դարերու ընթացքին, 640էն մինչեւ 928, հայկական մշակոյթը կանգ առաւ: Հայ ժողովուրդը բազմաթիւ անգամներ ոտքի կանգնեցաւ արաբական հարստահարութիւններու դէմ, ըմբոստութիւններ, որոնց կը յաջորդէին պատիժներ, թալան եւ աւերումներ: Այս ժամանակաշրջանի մասին չունինք հայկական աղբիւրներէ պատմագրութիւններ, կամ շատ անբաւարար են մեր ունեցածները: Է. դարուն ունինք միայն հին պատմագիր մը՝ Սեբէոս, իսկ Ը. դարուն՝ Ղեւոնդ վարդապետը: Այսպէս, մեծ արժէք կը ներկայացնեն արաբ գրողներու տուած տեղեկութիւնները, ուր պատմական եւ աշխարհագրական տուեալներ կը գտնենք Հայաստանի մասին, նոյնիսկ եթէ այդ տեղեկութիւնները հեռու են առարկայական ըլլալէ:

1903–1909ի տարիներուն, հայր Հաւաքէչ «Հանդէս Ամսօրեայ»ի մէջ հրատարակեց շարք մը ուսումնասիրութիւններ Հայաստանի մասին արաբական տեղեկութիւններու վերաբերեալ: Շատերու ծանօթ է գիտնական Բ. Խալաթեանցի 150 էջերով «Արաբացի մատենագիրներ Հայաստանի մասին» (Վիէննա, 1919) աշխատութիւնը, ուր հեղինակը կը քննէ արաբ գրողներ Ալ–Պալատուրիի, Իպն Միսքավէյհի, Թապարիի, Ալ–Եաքուպիի, Իպն Ալ–Աթիրի տեղեկութիւնները Հայերու եւ Արաբներու կողմէ Հայաստանի հպատակեցման մասին եւ ուր վերոյիշեալ արաբ հեղինակները կը ներկայացնեն Հայաստանի պատմութենէն որոշ ժամանակաշրջաններ: Այսպէս, օրինակ Ալ–Պալատուրի, իր «Երկիրներու նուաճման գիրք» խորագրած աշխատութեան մէջ կու տայ Հայաստանի պատմական ուրուագիծը արաբական տիրապետութեան նախորդող ժամանակաշրջանի մասին, Իպն Միսքավէյհ մանրամասն կը ներկայացնէ Հայերու պատմութիւնը 851ին, Տարօնի մէջ, մինչ Իպն Ալ–Աթիր Հայաստանի մէջ արաբական տիրապետութեան համառօտ պատկերը կը ներկայացնէ երկու դարու շրջանի մը մէջ: Անտարակոյս արաբ պատմագիրները չէին կրնար իրենց ուշադրութենէն վրիպեցնել Հայերը, որոնք միջնադարին կարեւոր դեր կը խաղային միջազգային առեւտուրին մէջ եւ շփման մէջ մտած էին Արեւելքի բազմաթիւ ժողովուրդներուն հետ, իրողութիւն մը, զոր անշուշտ պիտի նըշէին արաբ պատմագիրները:

Վերջերս մեր ձեռքը անցաւ լեհ արեւելագէտ Թադէուս Լեվիցկիի «Սլաւներու պատմութեան վերաբերեալ արաբական աղբիւրները» խորագրուած մէկ գիրքը (Քրաքովիա, 1956), ուր արաբ պատմագիրներու բազմաթիւ տեղեկութիւններ կան Հայաստանի մասին, թէեւ Թ. Լեվիցկի արաբ հեղինակներու գործերէն ընտրած է անոնք, որոնք կը վերաբերին յատկապէս սլաւական երկիրներու: Այս գիրքէն կը ներկայացնենք այն պատմական կամ աշխարհագրական տեղեկութիւնները, որոնք կը վերաբերին Հայաստանին:

Տասներորդ դարու առաջին տարիներու արաբ աշխարհագէտ մը, Իպն Խուրտատպեհ, գրած է «Ճամբորդութիւններու եւ թագաւորութիւններու գիրք» խորագրով աշխատութիւն մը, ուր նշուած են նաեւ Հայաստանի հողամասերը: Խօսելով Յուստինիանոս կայսեր ժամանակ Հայերու կողմէ բնակուած շրջաններու մասին, որոնք կազմակերպուած էին այսպէս կոչուած Թեմա Արմենիէոն անուան տակ, ան այդ շրջանները կ'անուանէ Ալ–Արմանիաք եւ կ'ըսէ, թէ ան կը կառավարուի բիւզանդական կայսրութեան 12 կառավարիչներէն մէկին կողմէ: Հայերու դրացիները, Վրացիները, Խուրտատպեհի կողմէ նշուած են Կուրզան կոչուած շրջանին մէջ, զոր ուրիշ արաբ գրող մը, Ալ–Մասուտի, — «Արաբներու Հերոդոտոսը» — կ'անուանէ «Կ. ր. գի–ժա» (Կուրջիա):

Վրաստանը Արաբներու կողմէ գրաւուեցաւ 645 թուականին, բայց Իպն Խուրտատպեհ կը հաստատէ, թէ ան մաս կը կազմէ Հայաստանի: Ալ–Մասուտի եւս կը գրէ, թէ Արաբներու տիրապետութեան ենթարկուած Հայաստանի մայրաքաղաքն է Թիֆլիսը եւ կը բովանդակէ նաեւ Վրաստանը:

Արաբները Վրաստանի մէջ զօրացան Է. դարու վերջաւորութեան, բայց Ը. դարուն, Հայաստանի, Վրաստանի եւ Աղուաններու երկրին մէջ զօրացաւ ապստամբական շարժումը, որ չդադրեցաւ այլեւս եւ առաւ աւելի վճռական բնոյթ, թէեւ Արաբները անխնայ կը ճընշէին ապստամբ ժողովուրդները: Ինչպէս Իպն Խուրտատպեհ եւ Ալ–Մասուտի, արաբ պատմագիր Իպն Քութայպա եւս Անդրկովկասը կ'անուանէ Հայաստան:

884ին, Իպն Քութայպա, իր «Պատմութեան դասագիրք» աշխատութեան մէջ կը գրէ աշխարհի պատմութիւնը եւ այս առթիւ համառօտ կերպով կը գրէ նաեւ Հայաստանի մասին:

Հայաստանի մասին ամէնէն աւելի շատ տեղեկութիւններ կը գտնենք Ալ–Պալատուրի մօտ, պատմաբան մը, որ ապրած է Իպն Քութայպայի դարաշրջանին: Ան բարեկամն էր Ալ–Մութավաքքիլ խալիֆային, որ Հայաստանի տիրած է Թ. դարուն: Ալ–Պալատուրիի «Երկիրներու նուաճման գիրք»ը կը խօսի Արաբներու կողմէ Փոքր Ասիոյ բոլոր շրջաններու գրաւման մասին, որոնց մաս կը կազմէր նաեւ Հայաստան, բայց ան կը գրէ մանաւանդ Հայաստանի տնտեսական եւ մըշակութային բնագաւառներու մասին եւ կու տայ Հայաստանի արաբ վարիչներու լիակատար ցանկը: Ք. Ա. Պեքեր, «Իսլամական Համայնագիտարան»ին մէջ (Ա. էջ 636) կը հաստատէ, թէ Ալ–Պալատուրիի այս աշխատութիւնը կը ներկայացնէ արաբական արշաւանքներու մասին գրըուած ամենակարեւոր աղբիւրներէն մէկը: Տէ Կոէժէի լիակատար հրատարակութիւնը՝ «Հաւընտիր արաբ աշխարհագրական գրականութենէն» (Լէյտըն, 1907), կը բովանդակէ աւելի ընդարձակ տեղեկութիւններ, քան Թ. Լեվիցկիի գիրքը, բայց դժբախտաբար մենք մեր ձեռքին տակ չունինք Տէ Կոէժէի այդ գիրքը:

ՓՐՈՖ. ՎԼԱՏ ՊԸՆԸՅԵԱՆՈՒ

(Մնացեալը յաջորդով)

ԱՀԱՒԱՍԻԿ
ԱՅՍՕՐՈՒԱՆ ՌՈՒՍԻԱՆ

Ահաւասիկ այսօրուան Ռուսիան:

Երկիր մը՝ ուր մարդիկ ընտրութեանց ընթացքին կը կաշառուին, հակառակ անոր, որ քուէարկելիք մէկ թեկնածու կայ միայն: Ու նաեւ երկիր մը՝ ուր իշխողները լաւագոյն բաները «կը վերցնեն» իրենց համար եւ կը ստիպեն, որ ռուս տանտիկինները գողնան ինչ որ իրենց անհրաժեշտ է ապրելու համար:

Ռուսական կեանքի այս քողազերծող պատկերը տուողը ամերիկացի քարոզիչ մը չէ սակայն, այլ ռուս գրագէտ Ֆեոտոր Ապրամով: Գրութիւնը՝ Պ. Խրուշչեւի գրաքննիչներու հաւանութեամբ հրատարակուած է Լենինկրատի մէկ պարբերականին՝ «Վոլգա»յի մէջ: Եւ այս օրերս այդ գրութիւնը, գրքի ձեւով, առաջին անգամ ըլլալով հրապարակ կ'ելլէ Անգլիոյ մէջ, «Ֆլեկոն Փրէս եւ Անթընի Պլոնտ Հրատարակչական»ին կողմէ:

Ահաւասիկ քանի մը հատուածներ, որոնք առաջին անգամ ըլլալով՝ ներքին մեզի կը պարզեն թէ ի՛նչ կեանք ապրելու ստիպուած է ռուս ժողովուրդը:

Ապրամով կը նկարագրէ ամենօրեայ նեղութիւնները Անանիա Եկորովիչի, որ հարաւային Ռուսիոյ մէջ, տեղ մը, հաւաքական ագարակի մը նոր նախագահն է:

«Այնպէս կ'երեւի թէ երկար ատենէ ի վեր, ագարակին մէջ սովորութիւն կար, որ ընտրութեանց նախօրեակին, ամէն մէկ քուէարկուի տասը – տասներհինգ ռուպլի բաժնուէր:

Երբ նախագահը գիւղացիներուն կը յայտնէ թէ այնուհետեւ դրամ պիտի չստանան, անոնք իրեն կը յայտարարեն. «Շատ լաւ, եթէ մեզի դրամ չտաս, մենք ալ չենք քուէարկեր»:

Նախագահը հարցը կը լուծէ՝ գիւղի կեդրոնական դրասենեակէն փոխ դրամ առնելով: Եւ Ապրամով կ'աւելցնէ. «Ընտրութիւնները տեղի ունեցան սովորական կերպով»:

Սակայն այնպէս կը թուի թէ Ռուսիոյ մէջ, — ուր կ'ըսեն թէ տէրեր չկան, — տէրերը անոնք են, որ ամէն բանի լաւագոյնը ունին:

«Առաջին ակնարկով կրնաս զանազանել տունը այն մարդուն, որ կառավարութեան մէջ է կամ — գիւղի մէջ ըսուածին պէս — «դրամի վրայ է»: Այդպիսի տուն մը՝ միշտ աւելի վայելուչ կ'ըլլայ: Պատուհանները լաւ ներկուած կ'ըլլան եւ բնականաբար, երդիքին վրայ ձայնասփիւռի ձող գոյութիւն կ'ունենայ:

×

Ուրիշ ռուս գրագէտ մը, Ալեքսանդր Սոլժենիցին, կը պատմէ թէ միջակորեայ Ռուսը ինչպէս կը տառապի համայնավար վարչութեան տակ: «Մաթրիոնայի տունը» խորագրով իր նոր պատմուածքին մէջ կը նկարագրէ թէ ռուս տանտիկինները ինչպէս կը ստիպուին գիւղի մթերանոցէն հանքածուխ գողնալ՝ ռուսական երկարատեւ ձմեռը դիմագրաւելու համար: Սակայն, «տէրերը» եւ անոնց բարեկամները իրենց ուզածին չափ հանքածուխ ունին:

×

Ֆեոտոր Ապրամով կ'ըսէ թէ կեանքը դժուար է ռուս գիւղացիին համար: Համագործակցական ագարակները կեդրոնական վարչութենէն անմիտ հրահանգներ կը ստանան եւ չեն կրնար անոնց [illegible] ելլել: Այսպէս, լաւ չվարձատրուող բանուորները իրենց կեանքը տանելի դարձնելու համար կը դիմեն անհատական ձեռնարկի — որ խստօրէն արգիլուած է:

Երբ իր արարքին համար համագոր-[illegible]

ՇԱՌԼ ՊՕՏԸԼԷՐ
ԵՒ ԻՐ
ԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԴՐԱԽՏՆԵՐԸ

Երգախառն վոտըվիլ մը կը ներկայացնեն. «Հօրեղբօրս սիստեմը» անունով: Մասնաւոր ընելիք մը չունի. ուրեմն ներս կը մտնէ ժամանակ անցնելու համար, ու մանաւանդ զուարճացած՝ կատակերգութեան վերնագրին ապուշութենէն: Սրահը կիսով պարապ է: Ներկաները շատ քիչ կը խնդան: Պօտըլէր կը պատրաստուի ներկայացումը կէս ձգել ու մեկնիլ, երբ յանկարծ կարծէք կը շլանայ: Բեմին վըրայ մուտք կը գործէ սուպրէթ մը, որ միայն մէկ–երկու բառ արտասանելիք ունի: Խառնածին կին մըն է: Բանաստեղծին մտքին մէջ մղձաւանջ պատկեր մը կը ցայտէ, Մօրիս կղզիի սեւամորթուհիին պատկերը: Այս մէկը նոյնքան հրապուրիչ է: Բարձրահասակ, մէջքը շատ բարակ, կոնքերը՝ լայն, տարածուն, լկտի: Աւելի դեղին քան սեւ գոյն մորթ մը. պզտիկ, ուղիղ, հազիւ ծայրը ճըղմուած քիթ մը. մուտ շրթունքներ, «հառաչանքներու նման» խորունկ աչքեր. առատ, գանգուր, մուգ կապոյտ մազեր:

Յայտագրին վրայ Պօտըլէր աճապարանքով կը փնտռէ այս անսպասելի երեւոյթին անունը. Ժաննը Տիւվալ: Անուն մը, որ ամբողջ կեանքին տեւողութեան անբաժան պիտի մնայ իրմէ: Այդ երեկոյ, որպէս տանտի, որ գիտէ կենցաղավարութեան օրէնքները, կը բաւականանար փունջ մը ծաղիկ ուղարկելով եւ երկտողով մը ժամադրութիւն մը կը խնդրէր յաջորդ երեկոյեան համար:

Ժաննը Տիւվալ անմերձենալի գեղուհի մը չէ, ընդհակառակն: Քիթը շուտով հոտ կ'առնէ, թէ այս տարօրինակ երիտասարդը ոչ միայն դրամ ունի, այլ նաեւ առատաձեռն ըլլալ գիտէ. եւ ինքն իսկ է, որ կարճ կապել կու տայ բանաստեղծին շռայլութեան ու բարդ դարպասումը: Երբ առաւօտ մը, բաւական ուշ, Պօտըլէր դուրս կ'ելլէ կնոջ բնակած Սէն Ժորժ փողոցի փոքր սենեակէն, երկաթեայ շղթաներէ աւելի ամուր անտեսանելի կապով մը միացած է այլեւս այս բարբարոս Վէնիւսին:

Պօտըլէր կ'ուզէ որ հմայիչ ու խորհրդաւոր իր գեղուհին աւելի մօտ ըլլայ իրեն: Սէն Լուի կղզիին Ֆամ սան թէթ (Առանց գլխու կինը) փողոցին մէջ փոքր յարկաբաժին մը կը վարձէ անոր համար... Ժաննը Տիւվալ այլեւս բոլորովին կը պատկանի քսաներկու տարեկան այս սուլթանին, որ դրամատան մէջ կարեւոր գումար մը ունի: Ասիկա պատճառ չըլլար, սակայն, որ իր գեհիկ ախորժակները կորսնցնէ եւ զօրաւոր խմիչքները չսիրէ: Այս կնոջ հետ, Պօտըլէր, որ արդէն բնական հակում ունէր, չափէն աւելի կը սկսի խմել:

×

Ապա, կը սկսի թմրեցուցիչներ ալ առնել, որոնք բացառիկ զգայնութիւններ ու պատկերներ կ'արթնցնեն իր մէջ: Նախ՝ լօտանում, ապա՝ օփիոմ, բայց մանաւանդ երթալով ա՛լ աւելի հաշիշն է որ կը գործածէ հանրածանօթ «Հաշիշեաններու Ակումբ»ին մէջ որ, դժբախտ զուգադիպութեամբ, իր բնակարանէն երկու քայլ անդին կը գտնուի: Արդարեւ, որպէս բնակարան ընտրած է հին Փարիզի ամէնէն շքեղ տուներէն մին՝ Փիմոտան ապարանքը (*), զոր կը կահաւորէ շատ նուրբ ճաշակով: Մեծ գումարներ կը մսխէ յայտնի նկարիչներու իւղաներկներ գնելով: Այն մարդը, որմէ կը գնէ իր նկարները, Արոնտէլ, լաւ ծանօթ է իր երիտասարդ յաճախորդին նիւթական վիճակին: Շատ նեղը չի դներ զայն՝ վճարումները ստանալու համար եւ բնականաբար ընդհանուր հաշիւ ալ չի ներկայացներ կատարուած գնումներուն համար: Երբ Պօտըլէրի աչքերը վերջապէս պիտի բացուին, պահ մը գլխապտոյտ պիտի ունենայ իր ոտքերուն տակ իր իսկ ձեռքով բացուած փոսին ի տես: Մինչ այդ, կը շարունակէ շքեղօրէն ընդունիլ գրական նոր շարժումին՝ «Իրապաշտութեան» պարագլուխները եւ սոված հետեւորդները, ինչպէս եւ արդէն իսկ [illegible]րական հռչակի տիրացածներու [illegible] սիրելի Թէոֆիլ Կոթիէի առաջնորդութեամբ:

— Ինծմէ փախար, տունէն փախ[illegible] տուիր խաղաղութեամբ աշխատելու պատրուակով, եւ ո՛չ խաղաղութիւն [illegible] ես, ո՛չ ալ կ'աշխատիս, — մեղմօրէն կը յանդիմանէ իրեն Քարոլին Օփիք՝ [illegible] գաղտնի տեսակցութիւններէն մէկուն ընթացքին:

Արդարեւ, ինչպէս Շառլ չուզեր [illegible] տունը երթալ՝ դէմ առ դէմ չգտնուելու համար իր մօր ամուսնին հետ, [illegible] ալ մայրը չուզեր զաւկին տունը երթալ՝ քիթ քթի չգալու համար տղուն [illegible] նուհիին հետ... Ուրեմն, մայրն ու [illegible] մեծ երախան, գիրար տեսնելու համար ստիպուած են սիրահարներու [illegible] դրութիւն տալ իրարու, ձմեռը՝ [illegible] սրահներուն մէջ, ամառը՝ [illegible] պարտէզներու մէջ...: Յաճախ [illegible] կալի ժամադրութիւններ: Այս [illegible] պատահած պիտի չըլլար, կը կրկնէ [illegible] շարունակ, եթէ իր մայրը ամուսնացած չըլլար զօրավար Օփիքի հետ:

(Շար. – 4)

(*) Այժմու Լօզէօնի ապարանքը:

ՁԱՅՆԵՐ ԳԱՒԱՌԷՆ

ԽԱՆԱՍՈՐԻ 66ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ

վիէն (Յառաջ).— Եթէ տարին մէկ անգամ կը յիշենք Մեծ Եղեռնի զոհերը, բնական է որ յիշենք եւ պանծա- ցնենք նաեւ մեր հերոսները:

Տարագիր Հայութեան վզին պարտքն է ... եւ գրեթէ աւանդութիւն դարձած որ Յուլիս ամսուն մէջ դաշտահանդէսով ... տօնէ «Հերոսներու Օր»ը:

կազմակերպուած Հ. Յ. Դ. Անի կո- միտէի կողմէ, Յուլիս 28ին, կիրակի օ- րը, շատ նպաստաւոր օդով, Փոնթէվէքի ... դաշտին վրայ, հոծ բազմութեամբ «յի- շեցինք նուիրական այս մեծ օրը»:

...վիէնի Հայութիւնը իր պատահական ...հիւրերով եւ ճոխ սեղաններով, շատ գե- ...ցիկ եւ յիշատակելի օր մը անցուց ...փ ձայն բարձրախօսի»: Հայկական երգն ...ու պարը հնչեցին առանց դադարի մին- ...ւ ուշ ատեն:

Ժամը 4,30ին միայն, բարձրախօսին ...րէ հաւաքուած, ընկերներ եւ բարե- ...ամներ մէկէն թնդացուցին «Կարկուտ տեղաց»ը իբրեւ դաշտահանդէսի պաշտօ- նական քայլերգ, ապա ընկեր Կ. Յովա- կիմեան (Լիոնէն) ընդհանուր ակնարկով մը յիշեց արշաւանքի դրդապատճառները եւ անոր գործած մեծ ազդեցութիւնը մեր ազգային կեանքին վրայ:

Մեր յարգելի նախագահը իր յստակ եւ կորովի ձայնով կրցաւ հասցնել ամէ- նուն ականջին սա իրողութիւնը թէ «Խա- նասորը կարելի է կոչել հայ ազատա- գրութեան աւազանը»:

Եւ այսպէս, բացման խօսքին խանդա- վառ տպաւորութեան վրայ, գործադրը- ուեցաւ գեղարուեստական բաժին մը, ո- րուն մասնակցեցան ընկ. Հ. Զաքարեան (արտասանութիւն), Տիկին Անժէլ Սու- քիասեան (մեներգ), Պ. Յ. Մաթոսեան (արտասանութիւն), Տիկին Ս. Կարա- պետեան (Վալանսէն՝ մեներգ), ընկեր- ներ Ալ. Մաղաքեան եւ Յովհ. Ուզուն- եան (զուգերգ) եւ Տիկին Վ. Ռատիկեան (մեներգ): Բայց ո՞ւր են երիտասարդ- ները, կը հարցնէին շատեր...:

Ներկայ հայրենակիցներէն ոմանք, խանդավառուած արտասանուած կտոր- ներէն եւ երգերէն, Անի կոմիտէին ըրին սրտաբուխ նուէրներ (Մ. Նաճարեան, Ալթուն Մուրատեան, Տիկին Յովակիմ- եան, Յ. Թօփալեան):

Ընկեր Կ. Յովակիմեան վերջացած յայ- տարարելով գեղարուեստական բաժինը, այս անգամ, հրաւիրեց ընկեր Մ. Միր- զէն (Լիոնէն) որ իր խօսքն ըսէ Խանա- սորի արշաւանքի 66րդ տարեդարձի առ- թիւ. «Հայրենակիցներ, գոչեց մեր սի- րելի բանախօսը, Խանասորը պարզապէս կազմակերպուեցաւ ցոյց տալու համար, թէ Հայը գիտէ կռուիլ, զարնել, զար- նուիլ, վրէժ լուծել. եւ այս նպատակով տարին մէկ անգամ կուգանք Խանասորի տարեդարձը տօնելու եւ յիշելու 250 հե- րոսները»: Մեր յարգելի ընկերը, իր խօսքը շարունակելով, յիշեցուց երիտա- սարդներուն, իրենց պարտականութիւն համարիլ, Հայութեան կապուիլ աւելի մօտէն, սերտօրէն եւ գիտակցօրէն: Ա- ղաղակեց բարձրաձայն եւ չեշտակի «Վա՜յ այն սերունդին որ իր անցեալը կը մոռնայ: Մեզի համար Խանասորը մէկ իմաստ ունի. ամէն մարդ իր տան տէրն ըլլայ. մենք ալ նոյնը կ'ուզենք. դեռ ա- ւելի, մէ՛կ ժողովուրդ ենք եւ մէ՛կ հայ- րենիք ունինք: Պայման է որ Հայ ըլլանք եւ Հայ մնանք: Փառք մեր հերոսներուն եւ այն երիտասարդներուն որոնք յանձն կ'առնեն հետեւիլ մեր անմահ կտրիճնե- րուն»:

Այս կրակոտ խօսքերը ողջունուեցան խանդավառ ծափերով:

Կազմակերպիչները խորհած էին նաեւ աճուրդի մը մասին. խորոված հաւ մը եւ շիշ մը անուշ գինին դրուած էին սե- ղանին վրայ:

Ներկայ հասարակութիւնը առատա- ձեռն կերպով մասնակցեցաւ, բայց, ի վերջոյ, բախտը ժպտեցաւ նորածին Զա- պէլ Մուրատեանի, մեր ողբացեալ Կարա- պետ Մուրատեանի թոռնիկին:

Աճուրդը ձեռնհասօրէն վարեց ընկեր Յովհ. Ուզունեան, որմէ գոյացաւ 245 ֆրանքի գումարը:

Եւ մինչ սեղանները հետզհետէ կը բաց- ուէին հայրենի առատ կերակուրներով, աղին, ընկ. Հ. Զաքարեան սկսաւ գոր- ծադրել գեղարուեստական երկրորդ բա- ժին մը, որուն սիրայօժար մասնակցե- ցան հիւրեր եւ մեր գաղութէն կարող ուժեր: Իսկ խմբական գեղջկական պա- րերը իրարու յաջորդեցին, անընդհատ, մինչեւ որ բարձրախօսին ուժեղ ձայնը մէկէն լռեց եւ խաղաղութիւն պատեց հովասուն առուակին եւ դաշտին վրայ:

Կ. Տ.

...ծակցական ապարակի նախագահը գինք ...կը յանդիմանէ, կին մը կը պատասխանէ. «Ամբողջ ամառը դաշտերը աշխատե- ...ցայ եւ ի՞նչ չահեցայ: Տղաք ունիմ որ ...ատով դպրոց պիտի երթան եւ հագուստ ...ու կօշիկ չունին: Գոնէ խանութին մէջ ...թէ մարդ սակառ մը սունկ ծախէ, տու- ...ն քիչ մը դրամ կ'ունենայ»:

×

Նախագահը երբ ուրիշ գոյղի մը գի- ...ակցութեան պակասի մասին կը խօսի, ...նհատական պզտիկ ձեռնարկ մը ունե- ...նալուն համար, ան կը պատասխանէ. ...խանութին մէջ մեր գիտակցութիւնը չեն ...ռներ — դրամ կ'ուզեն»:

Ի վերջոյ, ապարակին նախագահը գիւ- ...ղացիներու թոշակները եռապատկելով ...անոնք կը համոզէ որ աշխատին:

...Ռուս քննադատները, նախապէս թէեւ ...գոված էին Ապրամովի գիրքը, բայց հի- ...մա, իշխանութիւնները զայն կը դատա- ...պարտեն:

Ապրամով, որ 43 տարեկան է, Լոն- ...տոնի իր հրատարակիչին գրած է որ, ...այդ գրութիւնը չհրատարակէ, որովհե- ...տեւ բասծ է թէ կրկին կոխող մը պիտի ...երթայ, աւելի լաւ ձեւով գրելու համար: ...Լոնտոնի հրատարակիչը՝ Ալեք Ֆլեկոն ...կը կարծէ թէ անոր ստիպած են որ գրէ ...հրատարակութիւնը յետաձգելու մասին: ...Սակայն, վստահ է որ ան կ'ուզէ որ գիր- ...քը Անգլիոյ մէջ հրատարակուի եղածին ...պէս:

Քաղեց ՎԱԶՐԻԿ

ՀԱՅԱՍՏԱՆ

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻՆ ՆՈՐ ՁԵՌԱԳԻՐՆԵՐԸ

Երեւանի Մատենադարանը հարստա- ցաւ Ժ.-ԺԹ. դարերուն պատկանող Թուրքիայէն, Արաբ Միացեալ Հանրապե- տութենէն, Սուրիայէն, Ռումանիայէն, Միացեալ Նահանգներէն եւ այլ գաղութ- ներէն ղրկուած ծիսական, գիտական- պատմական, աստուածաբանական նիւ- թեր շօշափող ձեռագիրներով: Ղրկուած ձեռագիրներուն մէջ կան Արիստոտէլի «Բնազանցութիւնը» գործին հայերէն թարգմանութիւնը, որ լատիներէ՝ «Ետ ասելոց բնականաց» վերտառութեամբ 1675ին թարգմանած է Ստեփանոս Լեհա- ցին:

Ներկայիս Մատենադարանը ունի 10 հազար 836 հին ձեռագիրներ, որոնց 10 հազար 103ը՝ հայերէն, 733ը՝ արաբե- րէն, պարսկերէն, յունարէն, վրացերէն, հին սլաւերէն, լատիներէն, եբրայերէն, եւայլն:

ՈՏՆԱԳՆԴԱԿ

Թունուսի ոտնագնդակի ազգ. խումբը Երեւանի մէջ հանդիպում մը ունեցած է Հայաստանի ամէնէն զօրաւոր «Արարատ» խումբին հետ:

Մրցումը վերջացած է հաւասար ար- դիւնքով՝ 2-2:

ՆՈՐԵՐ ՈՐ ԿԸ ՀԱՍՆԻՆ

Աստղիկ – Ժաքլին Փափազեան, Մար- սէյլէն, ստացած է Ընդհանուր Գրական Ուսմանց (արդիական) վկայական, էքսի Գրականութեան եւ Մարդկային Գիտու- թեանց համալսարանէն:

Կ'ԱՐԺԷ ԳԻՏՆԱԼ

ԳՐՊԱՆԻ ՁԱՅՆԱՍՓԻՒՌ

Ջեխոսլովաքիոյ մէջ շինած են գրպանի ձայնասփիւռ մը, որ գործելու անհրա- ժեշտ իր ելեկտրական ուժը կը ստանայ արեւէն:

×

ԽՈՐՀՈՒՐԴ ՊԱՐՏԻԶՊԱՆԻՆ

Պտղատու ծառերու եւ հատապտուղ- ներու տունկերը ընտրելու ժամանակ, պէտք է նկատի ունենալ, որ բոլոր սոր- տերն ալ ամէն տեղ չեն աճիր: Արդարեւ, այն շրջաններուն մէջ, որոնք իրենց կլի- մայով չեն համապատասխաներ այս կամ այն սորտին տեսակին, տնկիկները կը ցրտահարին: Որով պէտք է սորտերը առնել այն տնկարաններէն, որոնք մօտ են տնկուող պարտէզին վայրին:

Միեւնոյն ատեն պէտք է ուշադրու- թիւն դարձնել սորտին բերքատուու- թեան, պտուղներուն եւ հատապտուղնե- րուն համով, ինչպէս նաեւ անոր դիմաց- կունութեամբ՝ հիւանդութիւններու եւ վնասատուներու դէմ:

×

Գերմանացի ճարտարարուեստագէտ Ֆրետօ Նեսթլէր հնարած է ինքնագործ հեռաձայն – թարգման մը, որուն շնոր- հիւ, մօտ ատենէն, ոեւէ մէկը պիտի կա- րենայ խօսիլ Անգլիացիի մը, Գերմանա- ցիի մը եւ կամ Ռուսի մը հետ, առանց բառ իսկ գիտնալու անգլերէն, գերմա- ներէն կամ ռուսերէն լեզուներէն:

Նեսթլէրի գիւտով՝ կարելի պիտի ըլ- լայ հեռաձայնային խօսակցութիւնները անմիջապէս թարգմանել, հեռաձայնային կեդրոնը դտնուող թարգմանի մը միջո- ցով:

Օրինակի համար, երբ Արեւմտեան Գերմանիոյ մայրաքաղաք Պոնէն բնակիչ մը ուզէ հեռաձայնով խօսակցիլ Լոնտոնի բնակիչներէն մէկուն հետ եւ ինք անգլե- րէն ու միւսն ալ գերմաներէն չգիտնան, հեռաձայնային մասնաւոր կեդրոնին լուր պիտի տայ եւ խօսակցութիւնը անմիջա- պէս տեղի պիտի ունենայ գերմանագէտ եւ անգլիագէտ թարգմանի միջոցով:

×

Կը կարծուէր թէ սփիտակամրջիւնները (թերմիտ) կը գտնուին միայն արեւա- դարձային շրջանները: Իրականութեան մէջ, սակայն, անոնք տարածուած են Եւրոպայի մէջ եւս: Այսպէս ԺԸ. դարու ընթացքին սպիտակամրջիւնները կ'ապ- րէին Ֆրանսայի Լուառ եւ Կառոն շըր- ջաններուն մէջ: Այստեղ անոնք մեծ վը- նասներ պատճառեցին: Ամբողջ տուներ եւ թաղեր աւերակի վերածուեցան այս միջատներուն պատճառով: Լա Ռոշէլ քա- ղաքին մէջ վնասուած են աւելի 30.000 բնակարաններ: Ռոշֆորի մէջ պանդոկ մը հիմնայատակ քանդուեցաւ, որովհետեւ սպիտակամրջիւնները ոչնչացուցին շէն- քին փայտէ յատակամասերը:

«ՅԱՌԱՋ»Ի ԹԵՐԹՕՆԸ (198)

ԵՐԼՏՐՋԻ ՊՈՄՊԱՆ

ՀԱԶԱՐ ԻՆԸ ՀԱՐԻՒՐ ՁՈՐՍ

...Սակայն, արդար ըլլալու համար պէտք է յայտարարել թէ ծիծաղելի չափազան- ...ցութիւններով եւ նոյնիսկ յերիւրուած ...կազմուած էին կարգ մը յօդուածներ, ո- ...րոնցմով լեցուեցան թերթերուն սիւնակ- ...ները, Յուլիսեան Օսմանեան Սահմանա- ...դրութեան հռչակման վաղորդայնին:

...Բարձրագոյն Քննիչ Յանձնաժողովը, ...որուն կը նախագահէր, ինչպէս կը յիշեն ...թերցողները, Ապտիւլ Համիտի սիրա- ...կան պալատականներէն Նէճիպ Մէլհամէ ...փաշան, զարմանալի հոտառութեամբ եւ ...անզիճելի ձեռնհասութեամբ մը յաջողած ...էր արդէն երեւան հանել դաղտնիքներուն ամէնէն կարեւորները, Մահափորձի կառքէն սկսեալ, մինչեւ դաւադիրներուն ինքնութիւնն ու իրենց մութին մէջ գլուխ հանած պատրաստութիւնները, եւ սակա ինքնին կը բաւէ հաստատելու Նէճիպ Մէլհամէի արտակարգ ընդունակութիւն- ները:

Իրաւ է թէ, ինչպէս Օսմ. Սահմանա- դրութեան առաջին օրերուն մէջ յաճախ խօսուեցաւ ու գրուեցաւ, Երլտըզի Յանձ- նաժողովի քրիստոնեայ նախագահը — Նէճիպ Մէլհամէ — հակամարդկային, բարբարոսային միջոցներ ի գործ դնել տալէ չէ խուսափած՝ խոստովանութիւն- ներ կորզելու համար անմեղ բանտարկ- եալներու բերնէն, եւ նոյնիսկ, — եթէ ամբոխին մէջ մինչեւ ցարդ շրջող զրոյցի մը հաւատք ընծայենք, այդ բանտարկ- եալներէն մէկ քանիները ծեծի ու խոշ- տանգումներու տակ սպաննել տուած եւ մէկ քանիներն ալ ինքնասպանութեան մը- ղած է ան, ինչպէս, օրինակի համար, Սվազցի խոհարար Հաճի Նշան Մինաս- եանի պարագան. սակայն, այսօր հաս- տատուած իրողութիւն մըն է թէ այդ քրիստոնեայ սուրիացի փաշան, գիտակ- ցօրէն թէ անգիտակցօրէն, չենք գիտեր մենք, փութկոտ գործունէութիւն մը ցոյց տուած է Երլտըզի Պոմպայի Դէպ- քին հակահարուածը հեռացնելու, բո- վանդակ հայ ազգին գլխէն, Ապտիւլ Հա- միտի վրէժխնդրութիւնը յագեցնելու սահմանուած քանի մը տասնեակ անմեղ- ներու մահավճիռը միայն ձեռք բերելով, եւ այսպէս, ժամանակի որոշ ընթացքի մը մէջ, յաջողած է պաղեցնել ու փակել խնդիրը:

Գալով ընդհանուր դատախազ Նէճմէտ- տին մոլլա պէյի համբաւաւոր (՚) ճա- ռին, սակա պիտի մնայ պատմութեան մէջ, ինչպէս ըսինք անգամ մը, համիտ- եան արդարութեան (՚) գլուխ գործոց մը, մանաւանդ որովհետեւ, այդ ընդհա- նուր դատախազը, իր ճառը դատարանին մէջ արտասանելէ ճիշդ չորս տարի վեր- ջը, Նոր Թուրքիոյ Սահմանադրական կա- ռավարութեան Արդարութիւնը պիտի ներկայացնէր, Հաղդը փաշայի դահլի- ճին մէջ, գրաւելով Դատական Գործերու Նախարարի աթոռը, եւ երբ այն, իր պերճաշուք պտոյտը պիտի ընէր Արեւ- մուտքի գլխաւոր վայրաններուն մէջ, ընդունելով այցելութիւնները խմբագիր- ներու, թղթակիցներու, որոնց մէջ ան- իշխանականներ (՚), անխծապարտ արար- քի հեղինակներէն, որոնց մահուան դա- տապարտութիւնը պահանջած էր ինք, ինչպէս քիչ առաջ յիշուեցաւ, Եղեանա- կան Ատեանէն...:

Ոչ նուազ ծիծաղելի են այն շրջանի սորուկ մամուլին հրատարակութիւննե- րը, Ժորիսի եւ միւս բանտարկեալներու խոստովանութիւնները բոլորովին խեղա- թիւրուած, համիտական դրաքննութեան մասնաւոր խնամքով:

Ժորիս, դատավարութեան ընթացքին, մեծ թիւով ունկնդիրներու եւ դեսպա- նական թարգմաններու ներկայութեան, խիստ անուանարկիչ բառեր գործածած է Համիտեան Բռնապետութեան հաս- ցէին, խարանելով անտանելի դարձած վարչակարգը, որ հազարաւոր անմեղնե- րու կեանքին, պատիւին եւ ինչքին բռ- նաբարումովը միայն կ'արդարացնէր իր գոյութիւնը.

— Տէ՛ր նախագահ, գոռաց յանկարծ ցցուելով Հիլմի պէյի դէմ, դուք արդա- րութի՛ւնը կը ծախէք, անմեղութի՛ւնը կը չարչարէք եւ իրաւո՛ւնքը կը ծաղրէք:

Նախագահին սպառնական ազդարա- րութեան վրայ, Ժորիս, փոխանակ լռե- լու, ա՛լ աւելի բռնկած, կը պոռթկայ.

— Դուք լռեցէ՛ք, պարոն նախագահ, դուք եւ ձեր խորհրդական դատաւորնե- րը, ահաւասիկ, տեղեկական խղճմտան- քին առջեւ կը յայտարարեմ, եւ բարձր- աղաղակ կը հռչակեմ իմ դաւանանքս, մտիկ ըրէ՛ք ուրեմն, ո՛վ դուք, բռնա- կալներուն ամէնէն անարգին եւ ամէնէն անգութին քղանցքը համբուրող ու անոր ոտքերը լփող արբանեակներ...

Եւ ունկնդիր բազմութիւնը, երկիւղած լռութեան եւ պատկառանքոտ դիրքի մը մէջ ելքին կը սպասէր:

ՍՄԲԱՏ ԲԻՒՐԱՏ

(Շար.)

Պ. Յարութիւն Փափազեան, Տէր եւ Տիկին Գրիգոր Փափազեան եւ զաւակը Անի, Տէր եւ Տիկին Արթաքի Գալայճեան եւ զաւակները, Տէր եւ Տիկին Պատրիկ Քիւլչէեան եւ զաւակները, Այրի Տիկին Շառլոթ Քիւլչէեան եւ զաւակները, Այրի Տիկին Շնորհիկ Փափազեան, Այրի Տիկին Ռեբեկա Աճէմեան, Տէր եւ Տիկին Սարգիս Թիւթիւնճեան եւ զաւակը, Տէր եւ Տիկին Թաթուլ Կիրակոսեան եւ զաւակները (Հայաստան), Տէր եւ Տիկին Ալպէր Կիրակոսեան եւ զաւակները (Հայաստան), Տէր եւ Տիկին Շառլ Ֆըվրիյէ եւ զաւակները, Օր. Լիլիան Փափազեան, Տէր եւ Տիկին Եսայի Եսայեան (Յունաստան), Տէր եւ Տիկին Սահակ Կէնճեան, Տէր եւ Տիկին Յովհաննէս Յակոբեան եւ զաւակները, ինչէս նաեւ Եախզարտաշեան, Ուզունեան, Անդրէասեան, Տոտաքեան, Սուճուքեան, Տէր-Մէրկէրեան, Օհանեան, Գույումճեան, Կառավարեան, Պետիկեան, Սէյխեան, Յակոբեան, Զոլաքեան եւ Կատայեան ընտանիքները ցաւով կը ծանուցանեն մահը իրենց կնոջ, մօր, մեծ-մօր, քրոջ, ներոջ, հարսին, զարմուհիին եւ ազգականին

ՏԻԿԻՆ ԱՆՆԻԿ ՓԱՓԱԶԵԱՆԻ

որ տեղի ունեցաւ Օգոստոս 4ին, կիրակի օր:

Յուղարկաւորութիւնը կը կատարուի այս հինգշաբթի, Օգոստոս 8 ժամը 16ին Շաւիլի Հայոց եկեղեցին, 4 Ռիւ տէ Թռուա Շանթիէ:

Կը խնդրուի ծաղկեպսակ չղրկել:

Մահազդ չստացողներէն կը խնդրուի ներկայս իբր այդ նկատել:

ՅԱՌԱՋ.— Մեր ցաւակցութիւնները:

ԱՆԾԱՆՕԹ ԶԻՆՈՒՈՐԻՆ ԲՈՑԸ

Յաղթական Կամարի Բոցի Կոմիտէն Հայ Նախկին Ռազմիկներու եւ Կամաւորներու Միութեան յանձնած է Անծանօթ Զինուորին բոցը արծարծել այս կիրակի ժամը 18,30ին:

Հաւաքոյթ՝ ժամը 18ին էթուալի Թէռփլէնին վրայ, սովորական մուտքին որ դէպի Յաղթական Կամար կ'առաջնորդէ:

Անդամներն ու բարեկամները իրենց ընտանիքներով կը հրաւիրուին մասնակցելու այս արարողութեան, աւելի հանդիսաւոր փայլ մը տալու համար անոր:

Լոյս Տեսաւ



Մատենաշար — ՅԱՌԱՋ — Կեդրոնավայր
Գին
Ֆրանսա՝ 15 Ֆր.

— Առանձ առաքումի ծախքը —

«ՅԱՌԱՋ»

IMPRIMERIE SPECIALE
DU JOURNAL « HARATCH »
32, Rue de Trévise, PARIS (9e)

ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ ՆԻՍԻ ՄԷՋ

ՀԵՐՈՍՆԵՐՈՒ ՕՐՈՒԱՆ ԱՌԹԻՒ

Խանասորի 66րդ տարեդարձը կը տօնուի նախաձեռնութեամբ Հ. Յ. Դ. Գէորգ Չաւուշ խումբին, հովանաւորութեամբ Մարսէյլի Շրջ. Կոմիտէին, այս կիրակի ամբողջ օրը Լա Քոլ Սիւր Լու գետեզերքը — անտառին մէջ:

Հանելի օր մը (գետի լոգանք կարելի է):

Կը նախագահէ ընկ. Յ. ՇԻՇԼԻԵԱՆ

Կը բանախօսէ ընկ. Յ. ՆԻԿՈՂՈՍԵԱՆ

Ծանօթ.— Մասնաւոր օթօքար մը վարձուած է: Առաւօտուն ժամը 8,30ին ճամբայ կ'ելլէ Փլաս Մասէնայէն-Ալպէր Ա. պարտէզէն (Քազինօ Միւնիսիփալին դիմացը): Նոյն օթօքարը կը հասնի Մա տըլէն ժամը 9ին:

Ժամը 9,30ին կուգայ Մանեան Սթատին (քովը ազբիւրին մօտ սպասել) զայն առնելու համար:

Իսկ անձնական կառքով եկողներուն համար, երկու քիլոմեթր է Քոլ Սիւր-Լու գիւղէն - Կրասի ճամբուն վրայ: Անկէ ձախ դառնալ «Ճաշարան-Պառ-Պաքիւսէ»ն աջ դառնալ եւ մտնել անտառը գետեզերքը:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Տիկ. Միութեան Որբերու Օգնութեան Մարմինը տրամադիր ըլլալով քանի մը անպաշտպան տղոց հայեցի դաստիարակութիւնը հոգալու, հարկ կը համարի ծանուցանել, որ շահագրգռուողները այժմէն դիմեն իրեն գրաւոր իր կեդրոնատեղին, 15 Ռիւ Ժան Կուժոն:

ՍԱՄՈՒԷԼ ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ՆՈՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Իրենց զաւակները արձանագրել փափաքող ծնողքները պէտք է փութան դիմել տեսչութեան հասցէին:

COLLÊGE ARMÉNIEN SAMUEL MOORAT
26, Rue Troyon, SEVRES (S. et O.)
Tél.: OBS. 18-28

Եւրոպայի մէջ, հայ մանչերու համար հիմնուած, ֆրանսական եւ հայկական ուսումնական կատարեալ ծրագիրներով օժտուած մեծագոյն եւ ծաղկեալ ուսումնարանն է Սեւրի Սամուէլ Մուրատեան վարժարանը, որուն սեմէն ներս հայ մանուկին հոգին, միտքը եւ մարմինը կը մեծնայ, կը ծաղկի եւ կ'ընդլայնի բաղձալի համեմատութիւններով:

ԱՆՆԱԽԸՆԹԱՑ

ՀԱՅԿԱԿԱՆ ՈՍԿԻ ՇՔԱՆՇԱՆ

Modèle Deposé

Թանկագին ու Մնայուն

Ամէնէն Սիրուն Նուէրը



Պարզ ձեւ՝	Շրջանակով
200 Ն. Ֆ.	300 Ն. Ֆ.

Գնելու համար դիմել՝

EDOUARD KHEDERIAN
66, Rue Lafayette.
PARIS (9e)
Tél.: PRO. 11-63
Expédition contre-remboursement

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

ORIENT

Եռամսեայ պարբերական ամբողջովին նուիրուած Միջին Արեւելքի երկիրներու անցուդարձին:

Բ. եռամսեայ 1963 — թիւ 26

Շահեկան բովանդակութիւն

114, Champs-Elysées, PARIS

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

ԼԻՈՆ.— Ֆր. Կապ. Խաչի Օրը կը տօնուի մեծ պատրաստութեամբ, 27 Հոկտ. Մոլիրէի շքեղ սրահին մէջ:

×

Փարիզահայ Տիկնանց Միութեան յիսնամեայ յոբելեանը կը տօնուի Հոկտեմբեր 13ին, Սալ տը լա Շիմի:

ԴՊՐՈՑԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Դպրոցասէր Տիկնանց վարժարանին 1963 – 1964 տարեշրջանի արձանագրութիւնները սկսած են: Անոնք որոնք կը փափաքին ղրկել իրենց զաւակները պէտք է այժմէն իսկ դիմում կատարեն հաստատութեան տնօրէնութեան:

Ա.— ՖՐԱՆՍԱԿԱՆԸ, որ տառացի կերպով կը հետեւի պետական լիսէներու արդիական բաժնի պաշտօնական ծրագրին — անգլերէն եւ սպաներէն լեզուներով —:

Բ.— ՀԱՅԿԱԿԱՆԸ, որ կ'օժտէ սաներ հինները հայադրոշական ծանօթութիւններով, հայ լեզուի, գրականութեան, հայ կրօնքի եւ պատմութեան, Հայաստանի աշխարհագրութեան մարզերուն մէջ:

Աշակերտուհիներ կ'ընդունուին ութ տարեկանէն սկսեալ: Մանրամասնութեանց համար դիմել հաստատութեան տնօրէնութեան:

1, Bd. du Nord, LE RAINCY (S. et O.)
Tél: 927-01-72

Դպրոցասէրի ուսման ծրագիրը կ'ընդգրկէ երկու ուրոյն բաժիններ:

ՀՐԱՆՏ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

51, Rue Monsieur-le-Prince, PARIS - 6e — Chèque Postal: 1278-35

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՇԻՐՎԱՆԶԱԴԷ, Երկերի ժողովածու, 10 հատոր լաթակազմ	70 Ֆր.
ՍՏԵՓԱՆ ԶՕՐԵԱՆ, Երկերի ժողովածու, 7 հատոր, լաթակազմ	56 Ֆր.
ՍՏԵՓԱՆ ԶՕՐԵԱՆ, Պապ թագաւոր, լաթակազմ	10 Ֆր.
ՍՏԵՓԱՆ ԶՕՐԵԱՆ, Հայոց բերդը, լաթակազմ	8 Ֆր.
ՎԱՀԱՆ ՏԷՐԵԱՆ, Երկերի ժողովածու, 2 հատոր լաթակազմ	14 Ֆր.
ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՒԻԹ, մեծադիր, գունաւոր նկարներով, լաթակազմ	10 Ֆր.
Վ. ԱՆԱՆԵԱՆ, Հայաստանի կենդանական աշխարհը, Բ.	8 Ֆր.
ԱՐՍԷՆ ՏԷՐՏԷՐԵԱՆ, Երկեր (Արուեստ Պոռչեան, Պարոնեան)	17 Ֆր.
ՄՈՒՐԱՑԱՆ, Պատմուածքներ, գունաւոր նկարներով	5 Ֆր.
ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑԻ մասին յիշողութիւններ. լաթակազմ	7·50 Ֆր.
ՄԻՔ. ՇԱԹԻՐԵԱՆ. Գարունը նորից եկաւ. 296 էջ.	5 Ֆր.
ԱԲԳԱՐԵԱՆ. Մատենադարան (անգլ.) 18 գունաւոր մանրանկարներ	3 Ֆր.
ՀԵՆՐԻԿ ԹՈՒՄԱՆԵԱՆ. Երգի ծնունդը. բանաստեղծութիւններ	3·85 Ֆր.
Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ. Տաղեր, 200 էջ. լաթակազմ	3·50 Ֆր.
ՍՈՎԵՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ. Ա. 800 էջ. լթկզմ.	16 Ֆր.
ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ, Անլռելի զանգակատուն, Պէյրութ, 1963	10 Ֆր.

Առաքման ծախքը գնողին վրայ

ԳՐԱՏՈՒՆՍ ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻՆ Է
ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՁԱՅՆԱԳՐԵԱԼ ԲՈԼՈՐ ԵՐԿԵՐՈՒՆ
ՃՈԽ ՄԹԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԵՒ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆՑ

ԼՈՅՍԸ ԳՈՅՆ Է.... ԳՈՅՆԸ ԼՈՅՍ Է
ՁԵՐ/ՏԱՆԸ ԼՈՅՍ ՏՈՒԷ'Ք.... ԹՈՄԼԱՔԻ ԳՈՅՆ ՏՈՒԷ'Ք

Ձեր բնակարանը կը լուսաւորուի
Եթէ ներսը եւ դուրսը

ՎԵՐԱՆՈՐՈԳԷՔ – ԶԱՐԴԱՐԷՔ – ՆԵՐԿԷՔ

ԹՈՄԼԱՔ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐՈՎ

PEINTURES THOMLAC

16 bis, Bd. Sébastopol, Paris 4e

Tél. ARC 26-61 – Métro : Halles et Chatelet

136, RUE DES BOURGUIGNONS — ASNIERES - BOIS COLOMBES (Seine)
Tél : GRE. 09-47

11, BD. DE LA REPUBLIQUE — LA GARENNE (Seine)
Tél. : STA. 19-06

ԱՆՄՐՑԵԼԻ ԳԻՆԵՐՈՎ

Ամէնէն արդիական, նուրբ եւ ընտիր ճաշակով պատրաստուած՝ առաջնակարգ ներկեր: Բնական եւ արուեստական բազմերանգ գոյներու մեծ ընտրութիւն: Նորոյթ խաւաներկեր, պատի գեղեցիկ թուղթերու ճոխ ընտրութիւն. — Գետնի համար՝ ամէն տեսակ — լինոլէոմ եւ փլասթիք — ծածկոցներ. —

TAPIFLEX — TAPISOM — CARPETTE

Ձեր բնակարաններուն արտաքին եւ ներքին խնամքներուն համար անհրաժեշտ բոլոր նիւթերը:

Ամէն գնորդի կը նուիրուի յատուկ տետրակ մը, որու շնորհիւ կրնայ 10-30 առ հարիւր զեղչ ունենալ:

ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐ

52, RUE CHALON, PARIS 12e — 64, BLD. DE BELLEVILLE, PARIS 20e
166, AV. ARISTIDE BRIAND — PAVILLONS - SOUS-BOIS (Seine)
4 bis, RUE PAUL VAILLANT COUTURIER — ARGENTEUIL (S. et O.)
24, RUE PAUL VAILLANT-COUTURIER — ALFORTVILLE (Seine)
48 bis, RUE DALAVRAC — FONTENAY - SOUS - BOIS (Seine)

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

Le PREMIER QUOTIDIEN ARMENIEN en EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction et Administration : 32, Rue de Trévise - PARIS-9e

Fondé en 1925 — Téléph. : PRO. 86-60

R. C. Seine 57 A 2731 — C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա՝ Տար. 50 Ֆ. — Վեցամսեայ՝ 27 Ֆ.

Արտասահման՝ Տար. 60 Ֆ. — Հատը 0.30 Ֆ.

ՀԻՆԳՇԱԲԹԻ 8 ՕԳՈՍՏՈՍ

JEUDI 8 AOUT 1963

Le Numero : 0,30 Fr.

39րդ ՏԱՐԻ — Թիւ 9677

Fondateur : SCHAVARCH MISSAKIAN

39e ANNÉE — N° 9677

Իր ԽՕՍՔԸ

ՄԵՆՔ ՄԵՐ ԹԵՒԵՐՈՎ

...հաւուր լոյսերէն շլացած աչքեր, ան...արժութենէ ըթացած միտքեր կան որոնք ...ձ տեսներ, չեն ըմբռներ կարդ մը տար...րական ճշմարտութիւններ:

...նա թէ ինչո՛ւ անհրաժեշտ է լայն եւ ...ւա ճակատ մը կազմել: Դիրք ճշդել: ...ն բանէ առաջ՝ պաշտպանելու համար ...յկական Արտասահմանի մտաւոր վաս...ակը: Ինչպէս եւ տեսակէտներն ու ...ձնչերը:

«Արտասահմանեան Հայաստա՞ն»: Կամ ...կաղրութի՞ւն Երեւանի: Մրցո՞ւմ: Ազ...ցութեան պայքա՞ր:

Զարամիտներ եւ ծանծաղամիտներ ...րան իրենց ուզած մեկնութիւնը տալ, ...իտք եւ արիւն պղտորելու համար: Ինչ...պէս որ կ՚ընեն արդէն:

Կարճ է մեր պատասխանը եւ հատու, — ինքնապաշտպանութիւն: Եթէ կ՚ուզէք ...ակատ՝ արժեցնելու համար մեր հիմնա...կան իրաւունքները եւ արդար յաւակնու...թիւնները: Պարկեշտօրէն: Արիաբար: ...իրաբար:

Մանաւանդ որ, «սովետական» կառա...վարութիւնը ճակատ յարդարած է ար...դէն, իր իշխանասաստ կարգուսարքով եւ ...ու-նպատակ ակադեմիաներով, կա...ռաններով ու «ֆակուլտատ»ներով:

«Հարկս հարկաւորաց եւ պատիւս ար...ժանաւորաց»:

Մեր միտքէն չանցնիր թերագնահատել ...րեւն կատարուած աշխատանքը, կամ ...նդարել անոր ընթացքը:

Նիւ, ամենօրեայ մարդանքներուն փառքն ...ւ պարծանքը, անձեռնմխելի մենաշնոր...հը կը թողունք իրենց:

Մենք ուզենք, արտադրել, ստեղծագոր...ծել կ՚ուզենք մեր սեփական թեւերով: Եւ նոյն թեւերով ալ պաշտպանել այն ...բազմակողմանի, թանկագին ժառանգու...թիւնը զոր ստացած ենք մեր հայրերէն:

Մենք այդ պարտականութիւնը պիտի ...կատարենք հակառակ ներսէն եւ դուրսէն ...ւրուած դաւերու: Հակառակ դաս մը ...ատակներու ճամարտակութեանց, եւ ...րիչներու անփառունակ դասալքու...թեան:

Գիտնալով հանդերձ որ, մեր գլուխ...ները քարերու պիտի զարնուին եւ մեր ...ները պիտի մրկին աւաղէն, ցիրուցան ...ուած ըլլալով եօթն անգամ եօթանա...սուն ցամաքներու վրայ:

Եթէ մեր համրանքը, մեզի պէս մտա...ծողներու բազմութիւնը այնքան պակսի ...որ վանական Միաբանութեան մը վե...րածուինք, դարձեալ ոչ մէկ նահանջ կամ ...դասալքութիւն:

Պիտի մնանք վերջին պահնորդները ...գաւոր, ինքնուրոյն, անփոխարինելի ...արժէքներու ամրոցներուն: Աւելի քան ...մուր կանգնած՝ պատնէշին վրայ: Ծա...ռայաբար:

Ոչ թէ հաւատածական մոլեռանդութե...նէ մղուած, այլ մեր լուսաղբիւրին վը...ճիտ, անմահական ջուրն ալ հոսեցնելու ...համար հայրենի ստեղծագործութեանց ...աւազանին մէջ:

Այս առաջադրութեամբ ալ, կը հրաւի...րենք մեր գաղափարակիցները, ուղեկից...ները եւ տարագիր մշակոյթին հաւատա...ցողները՝ համախմբուիլ Միութեան մը ...շուրջը:

Պատրաստ ենք ծրագիրն ալ մշակելու: Այդ կազմակերպութիւնը պիտի ունե...նայ մէկ դաւանանք.—

Թոյլ չտալ որ քաղաքական — կուսակ...ցական խեղկատակութիւններ անտիրու...թեան մատնեն Հայկ. Արտասահմանի ...ինքնուրոյն մշակոյթը:

Պայքարիլ, որպէսզի զանազան գլխ...ներ, Նորընծաներ եւ հոպիտներ չհամար...

ՕՐՈՒԱՆ ԴԵՊՔԵՐԸ

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԵՆԷՆ ԵՏՔ

ՏԸ ԿՈԼ ԿԸ ՊԱՏԱՍԽԱՆԷ ՔԵՆԸՏԻ

«Երեք»ները կը շարունակեն իրենց սիրալիր զրոյցները խորհրդային մայրաքաղաքին մէջ: Այս առթիւ խորհրդային ղեկավարները նորոգեցին իրենց առաջարկները ոչ-յարձակողական դաշինք մըստորագրելու համար Ատլանտեան եւ Վարշաւայի Ուխտերուն միջեւ: Մասնաւոր օրակարգ մը չկար, աջի առաւօտեան նիստին իւրաքանչիւր Արտաքին նախարար իր տեսակէտը պարզեց եւ իրը պարզելու առենն էր որ Անտրէյ Կրոմիքօ կրկնեց խորհրդային առաջարկը:

Կրոմիքօ չեշտած է թէ առաջին համաձայնութենէ մը ետք պէտք է յառաջդիմել: Միացեալ Նահանգներու Արտաքին Նախարարը՝ Տին Ռըսք յայտնած է այս առթիւ թէ ամերիկեան կառավարութիւնը ներկայիս կը խորհրդակցէր իր զինակիցներուն հետ եւ ուրեմն ինք ի վիճակի չէր բանակցութիւններ վարելու այդ ուղղութեամբ: Կը կարծուի թէ Կրոմիքօ այլեւս չէ պնդած: Յաջորդ նիստին ընթացքին, Տին Ռըսք անգամ մը եւս պարզած է արեւմտեան տեսակէտը Պերլինի մասին եւ խօսած նաեւ Լաոսի շուրջ:

Նոյն իրիկունը Միացեալ Նահանգներու Մոսկուայի դեսպանը՝ Ֆօյ Քոհլըր փայլուն ընդունելութիւն մը տուած է իր բնակավայրին մէջ, որու ընթացքին Կրոմիքօ, Լորտ Հիւմ եւ Տին Ռըսք առանձին խօսակցութիւններ ունեցած են մօտ 20 վայրկեան, հիւրասրահին մէկ անկիւնը: Բոլորին տրամադրութիւնը շատ բարձր էր ըստ արեւմտեան թղթակիցներուն: Ընդունելութեան ներկայ եղած են նաեւ ՈՒ Թան եւ այլ բարձրաստիճան անձնաւորութիւններ, բայց Խրուշչեւ հոն չէ եղած: Կը թուի թէ արձակուրդի մեկնած է Ղրիմ: Բացակայ եղած է նաեւ Հանրապետութեանց Միութեան Նախագահը՝ Բրեժնեւ: Նոյն օրը Խորհրդային իշխանութիւնները ճաշ մը տուած էին ամերիկեան պատուիրակութեան ի պատիւ Ընդունելութեանց Պալատին մէջ, Լենին բլուրին վրայ:

Տին Ռըսք Մոսկուայէն Լենինկրատ մեկնած է չորեքշաբթի առաւօտ իբրեւ պարզ զբօսաշրջիկ, հինգշաբթի օր պիտի մնայ Խրուշչեւի, Ղրիմի մէջ եւ հաւանաբար Մոսկուայէն մեկնի շաբաթ օր:

Միւս կողմէ, բրիտանական եւ խորհրդային պատուիրակութիւնները երկկողմանի խօսակցութիւններ կ՚ունենան Մոսկուայի մէջ, տրուած ըլլալով որ երկու երկիրները մասնաւոր պատասխանատուութիւններ ունին Լաոսի նկատմամբ:

× 90 երկիրներ կ՚ուզեն ստորագրել հիւլէական համաձայնութիւնը, բայց Պոնի մէջ մթնոլորտը լարուած է եւ արձակուրդները կէս ձգելով Ուաշինկթընի գերման դեսպանը որ Գերմանիա էր, մեկնած է Ուաշինկթըն «բացատրութիւն» ուղելու համար: Հրատապ հարց մը դարձած է Դաշնակցային Գերմանիոյ մասնակցութիւնը Մոսկուայի Համաձայնութեան: Ձեւ մըն ալ կը փնտռուի որ իր անդամակցութեամբ, Արեւելեան Գերմանիա չճանչցուի իրաւական կերպով: Շատ կը խօսուի նաեւ Արեւմտեան Գերմանիոյ անդամակցութեան մասին, բայց քաղաքական բոլոր հոսանքներն ալ անհրաժեշտ չեն նկատեր այդ մասնակցութիւնը:

× Փարիզի մէջ լուր մը տարածուեցաւ ըստ որուն տը Կոլ պատասխանած է Քենըտիի եւ Մաք Միլընի Յուլիս 25ին ղըրկած նամակին առթիւ, Մոսկուայի համաձայնութեան շուրջ:

Այս բոլոր գիրերուն բովանդակութիւնը գաղտնի կը մնայ, բայց ըստ ոմանց կարծիքին, տը Կոլ յայտնած է թէ ոչ մէկ պայման կ՚ընդունի հիւլէական գաղտնիքներու փոխարէն:

× Հաւիմըն յայտարարեց թէ Ֆրանսա երբեք հիւլէական մեծ պետութիւն մը պիտի չըլլայ, բայց շատ աւելի կարեւոր է տեսնել որ Ջինաստան կրնայ հիւլէական պետութիւն մը դառնալ:

× 1945 Օգոստոս 6ին, ժամը 8,15ին հիւլէական ամերիկեան առաջին ռումբը կ՚իյնար Հիրոշիմայի վրայ, քանի մը երկվայրկեանի մէջ աւելի քան 260 հազար հոգի սպաննելով:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՖՐԱՆՍԱՅԻ Վարչապետութիւնը կը հերքէ Նիւզուիքի այն լուրը, ըստ որուն տը Կոլ Մորիս Շումանը Պոն պիտի ղրկէ իբրեւ իր անձնական ներկայացուցիչը:

ՍՈՒՐԻՈՅ վարչապետը՝ Սալահ Պիթար Պաղտատ գացած է անսպասելի կերպով: Կը կարծուի թէ երկու կառավարութիւնները պիտի խորհրդակցին միացեալ քաղաքականութիւն մը պատրաստելու համար Նասրեան քարոզչութեան դէմ:

ԵՐԿՈՒ ԽԵԼԱՑԻ ԻՏԱԼԱՑԻՆԵՐ Հռոմի հռչակաւոր Քոլիզէն... ծախած են ամերիկացի զբօսաշրջիկի մը որ նման պիզնէս մը ձեռքէն չփախցնելու համար 200 հազար լիռ կանխավճար տուած է: Ամերիկացին շատ տրամաբանական գտած է Իտալացիներուն ըսածը՝ Հռոմի Թաղապետութիւնը նիւթական նեղ կացութեան մատնուած ըլլալով 30 տարուան համար կ՚ուզէ ծախել Քոլիզէն: Ամերիկացին շատ խանդավառուած է, սկսած է արդէն երազել այն սնաք-պառին վրայ զոր հոն պիտի շինէ եւայլն, եւայլն: Բայց մարդը միշտ կը սպասէ որ Հռոմի քաղաքապետը ժամադրութեան գայ: Մնաց որ «ծախողներուն» հետքն ալ չկայ...:

ԺԻ ՄՈԼԷ կը գրէ Էսփուար շաբաթաթերթին մէջ թէ տակաւին ո՞րքան ատեն Ֆրանսա պիտի յաւակնի «դերիշխան մնալ իր կղզիացման» մէջ:

ՌՈՊԵՐ ՇՈՒՄԱՆԻ առողջական վիճակը անյոյս կը մնայ: Պապը առաքելական մասնաւոր օրհնութիւն մը ղրկած է:

ՄԱԿ-ի խառն յանձնախումբը կ՚ամբաստանէ Իսրայէլը որ բռնաբարած է եգիպտական օդային սահմանը:

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ մէջ ընդհանուր ընտրութիւններ տեղի պիտի ունենան Սեպտեմբեր 17ին: Ծանօթ է որ Խորհրդարանը լուծուած է 1961էն ի վեր:

ԹԻԹՈՎ խորհրդային Թիւ 2 տիեզերագնացը յայտարարեց թէ հայր պիտի ըլլայ ի մօտոյ: Երկու տարի առաջ կատարեց իր անջրպետային շրջապտոյտը: Այսօր 28 տարեկան է, կինն ալ՝ 25:

Օրէ Օրին

ՄԱՀԱԶԴ

Տեսակներն կան մահազդի: Տխուր յայտարարութիւններ են ատոնք, որ կը դրուին գէթ *Յառաջ*ի մէջ, չորրորդ էջը: Այս մէկը այն տարբերութիւնն ունի, որ առաջին էջը կը դրուի:

Այս մէկն ալ կը խօսի մահուան մասին, բայց այս մահը ոչ արկածի հետեւանք, ոչ հիւանդութեան մը վախճանն է:

Բայց աւելի լաւ է, տանք պատմութիւնը:

«Երջանիկ» անունով տարեգիրք մը կը տպուի Պոլսոյ մէջ: Այս տարուան հատորին մէջ կը կարդանք.

«Հինէն մնացած բազմավաստակ հայերէն գրաշար աշխատաւորներու յաջորդական մահերով ու ծերութեամբ, *լուրջ տագնապ մը կ՚անցընէ, ներկայիս, հայ մամուլը*:

Ստիպուեցան դադրիլ *Նոր Դար*, *Սուրբ Ցակոբ*, *Հանդէս Մշակոյթի* պարբերաթերթերը: Նոյն տխուր կացութեամբ՝ *Սան*, *Քուլիս*, *Սուրբ Փրկիչ*, *Պարտէզ*, *Արշաւ*, *Կավռօշ* լոյս կը տեսնեն առաւել կամ նուազ յապաղումներով, հակառակ անոր որ անոնցմէ ոմանք կը հրատարակուին 17 տարիներէ ի վեր:

Ամէնէն տարեցը, *Երջանիկ* տարեգիրքը եւս որ 33 տարիներէ ի վեր կանոնաւոր լոյս կը տեսնէր, այս տարի *վեց ամսուան յապաղումով միայն կրցաւ հրատարակուիլ*, եւ շատ մեծ դժուարութիւններով:

Եթէ մեր 5–6 տպարանատէրերը չմիանան (տագնապը) ըմբռնող ազգայիններու հետ, ու չկարենան հայթայթել մէկ կամ երկու տողաշար մեքենայ, հաւանական է որ (Պոլսոյ) մեր զոյգ օրաթերթերը միայն ունենանք այլեւս, իբր հայերէն լեզուով հրատարակութիւն:»

Հասկցաք թէ ի՛նչ մահուան, որո՛ւ մահուան մասին է խօսքը:

Հայ մամուլն է որ կը մեռնի:

Քանի մը տարի առաջ, հայերէն գրական պարբերաթերթ մըն էր որ, Ամերիկայի մէջ, հրատարակեց իր մահազդը: Նոյն տագնապը դեռ կը սպառնայ անոնք որ, Ամերիկայի մէջ, դեռ կը փորձեն ոտքի վրայ կանգուն մնալ: Այս տողերը գրողը տեսաւ մահուան դողերը, այնտեղ:

Կ՚արժէ ոչ թէ տոմս մը, այլ յօդուած մը նուիրել այս տխուր կացութեան, որու մասին խօսելով՝ սարդոնական ծիծաղ մը ցոյց կուտան, հեզնախառն ուրախութեան կանչ մը կ՚արձակեն անդին, Երեւանի մէջ:

ԱՐԱՉ

ՄԱՔՄԻԼԸՆ Հելսինքի կը գտնուի, ուր չորս օրուան պաշտօնական այցելութիւն մը պիտի կատարէ:

ԵՄԷՆԻ մէջ եգիպտական յարձակում մը ետ մղուած է Սանաայի շրջանին մէջ: 12 եգիպտացի զինուոր սպաննուած են:

ՀԱՅԻԹԻԻ հիւսիսը ցամաքահանում մը կատարուած է քանի մը հարիւր ընդդիմադիրներու կողմէ:

ՍԱՅԿՈՆԻ մէջ երկրորդ պոնզ մը ողջող ինքզինքը այրած է: 40 ուրիշներ, այր թէ կին պատրաստ են նոյն վերադոյն զոհողութեան՝ Պուտտայականութեան դատին համար:

ԻՍՐԱՅԷԼԻ համայնավար կուսակցութեան երկու պարագլուխները դիմում կատարած են Մոսկուա, որպէսզի Խորհ. Միութիւնը դադրի Եգիպտոսի տուած զէնքերուն քանակը:

ձակին մոլորեցնել անոր ստեղծագործութեան բնական ուղին: Կամ անոր երկունքը խաթարել կեղծ պիտակներով եւ պատուաստաներով:

Անկարելին փորձել, իրապէս մտաւոր — ոչ թէ դաւանափոխական — յարաբերութիւններ հաստատելու համար Երեւանի հետ:

Մեղքը իրենց ճիտը, եթէ կը նախընտրեն նոր փշաթելեր հաստատել, ականջ դնելով բոլշեւիկեան զառանցանքներու:

Հայրենիքին օդն ու ջուրը իրաւունք չեն տար Ռէս Մնոյի խաղեր սարքելու տարագիր բազմութեանց գլխուն:

1949 Շ.

ԱՐԱԲ ԳՐՈՂՆԵՐ
ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

(Բ. եւ վերջին մաս)

Արաբ պատմագիր Ալ–Պալատուրի, արաբական արշաւանքներու մասին գրած իր գիրքով մեզի կը հաղորդէ, թէ սլաւական ծագում ունեցող Սալման Իպն Րապիայի կազմակերպած եւ ղեկավարած այս արշաւանքները ուղղուած էին Իրաքի, Բիւզանդիոնի եւ Հայաստանի դէմ: Սլաւական ծագումով ուրիշ արաբ հրամանատար մըն էր՝ Ջիժատ, որ Հայաստանի մէջ Տիարպեքիրի եւ Մալաթիոյ միջեւ կառուցանեց «Հիշն Ջիժատ» կոչուած բերդը: Ալ–Պալատուր պատմաբան կը գրէ Հայաստանի գրաւման մասին, 640–645 թուականներուն, Հապիպ Իպն Մասլամի կողմէ, Ութման Իպն Աֆֆան Խալիֆայի (644–656) հրամանով: Հապիպ Իպն Մասլամ իր բանակներով հասաւ մինչեւ Էրզրում, ուր մնաց քանի մը ամիս: Այս շրջանին մէջ տեղի ունեցան կռիւներ Բիւզանդական Արմենիաքոն մարզի կառավարիչին բանակներուն դէմ, որոնց կ'օժանդակէին Օսեթներու, Ապհազներու եւ Խազարներու զօրաբանակները: Պատմագիրը կը խօսի նաեւ Հայաստանի եւ Միջագետքի կառավարիչ Մուհամմէտի մասին, Օմայեաններու գերդաստանէն, ինչպէս նաեւ անոր տղուն՝ Մարուան Բ. Խալիֆայի մասին, որ ատեն մը եղած էր Հայաստանի եւ Ազրբեջանի կառավարիչ (ոստիկան): Ան կը գրէ նաեւ Արաբներու կողմէ հիմնուած քաղաքի մը՝ Պայլաքարի մասին, Արրան նահանգին մէջ, զոր Հայերը կ'անուանէին Փայտակարան: Ըստ Զախաուի, Զ. դարուն այստեղ գոյութիւն ունեցած է հայ եպիսկոպոս մը:

Գիրքին գլուխներէն մէկին մէջ Ալ–Պալատուրի մանրամասն կը խօսի Պուղա Ալ–Քապիրի մասին, որ Հայաստանի Ազրբեջանի ոստիկանն էր Ալ–Մութաւաքքիլ Խալիֆայի ժամանակ (847–861): Պուղա կառավարիչն էր նաեւ Շիմշատ քաղաքին, հնադարեան Արսամոսաթան, Տիարպէքիրի հիւսիսակողմը: Ան էր, որ 854–855ին վերաշինեց Շամքոր քաղաքը, ուր բնակեցուց Կովկասէն փախած Խազարները, որոնք այնտեղ կը հետապնդուէին իրենց մահմետական կրօնքին պատճառով, ինչ որ կը նշանակէ, թէ Խազարներէն մաս մը իսլամացած էր Թ. դարուն: Շամքոր քաղաքը աւերուած էր մաճառ ցեղախումբի մը կողմէ, զոր բիւզանդացի գրող Կոնստանդին Փորֆիրոճենէթ կ'անուանէ Սապարթոյ եւ որու մասին ան կը հաւաստէ, թէ Ը. դարուն ան բաժնուեցաւ մաճառ ժողովուրդէն զանգուածէն եւ հաստատուեցաւ Կովկասի մէջ: Բ. Փորճենէթի այս սապարթոյներուն համար կը գտնենք հայկական սեւորդիք անունը (տես նաեւ Ց. Մանանդեանի «Հայաստանի առեւտուրն ու քաղաքները» աշխատութիւնը, Երեւան, 1954, էջ 197): Ալ–Պալատուրի պատմաբանը իր «Երկիրներու նուաճման գիրք» աշխատութեան մէջ ունի մասնաւոր գլուխ մը, ուր կը խօսի Հայաստանի նուաճման» մասին: Այս գլուխին մէջ ան ցոյց կուտայ նաեւ այն աղբիւրները, զորս օգտագործած է, պաշտօնական փաստաթուղթերը, պատմական աշխատութիւնները, ինչպէս նաեւ բերանացի տեղեկութիւնները, զորս ունեցած է իր տրամադրութեան տակ:

Մեծ կարեւորութիւն ունեցող ուրիշ պատմագիր մը եղած է Ալ–Եաքուպի, որ մինչեւ 905 թուականը ապրեցաւ Հայաստանի, Խորասանի, Հնդկաստանի եւ Եգիպտոսի մէջ, ուր մեռաւ: Ան գրեց «Քիթապ ալ–պուլտան»ը (Երկիրներու գիրք) եւ «Թարիհ»ը (Պատմութիւն), որոնք պահուած են, մինչ բիւզանդական կայսրութեան մասին Հայաստանի մէջ գրուած գիրքը կորսուած է: Հետաքրքրական է այն եղելութիւնը, որ Ալ–Եաքուպի, իր «Թարիհ» աշխատութեան մէջ կը զբաղի արեւելեան հնադարեան ժողովուրդներու, Ասորեստանի, Բաբելոնի, Հնդկաստանի, Չինաստանի, Եգիպտոսի, Յունաստանի եւ Բիւզանդիոնի պատմութիւններով: Խօսելով Թոկարմա ժողովուրդին նախահայրերուն մասին, ան կը նշէ Ալ–Արմանը (Հայերը), բայց կը հաւաստէ, թէ Խազարները գրաւեցին Հայաստանի ամբողջ հողամասը, այսինքն Անդրկովկասը, քանի որ Հայաստան ըսելով, ան կը հասկնար նաեւ Կուրանը (Վրաստան): Ան կը խօսի նաեւ Հայաստանի ոստիկան Սայիտ Իպն Սալիմի մասին, որ 789–99 թուականներուն Հարուն էլ Րաշիտ խալիֆային կողմէ կառավարիչ նշանակուեցաւ Հայաստանի հողամասին վրայ: Ան կը գրէ նաեւ Հայաստանի ոստիկան Պուղա Ալ–Քապիրի մասին եւ կը պատմէ անոր մղած կռիւը Տաղստանի դէմ, զոր կ'անուանէ Ալ–Սանարիա եւ որ հայկական աղբիւրներու մէջ անուանուած է Ցանարք:

Այս յօդուածը նպատակ չունի ներկայացնելու Հայաստանի մասին արաբ պատմագիրներու տուած բոլոր տեղեկութիւնները, որոնք դեռ չեն օգտագործուած լիովին: Բ. Խալաթեանց քանի մը նմուշներ միայն ըրաւ հինգ արաբ պատմագիրներէ: Ուրիշ հեղինակներ եւս, որոնք զբաղեցան Հայաստանի պատմութեամբ, ինչպէս Կ. Պատմաճեան (Հայաստանի արդիական պատմութիւն), Ժաք տը Մորկան եւ ուրիշներ, օգտագործեցին արաբական աղբիւրները, թէեւ փոքր համեմատութիւններով: Յ. Մանանդեան իր «Քննական տեսութիւն հայ ժողովուրդի պատմութեան», ինչպէս նաեւ «Հայաստանի առեւտրի եւ քաղաքների մասին» աշխատութիւններուն մէջ կ'օգտագործէ արաբական աղբիւրները:

Ներկայ յօդուածով նպատակ ունեցանք հաւաքելու քանի մը մանրամասնութիւններ Հայաստանի մէջ արաբական տիրապետութեան խաւար շրջանէն, որ բարձրացուց հայ ժողովուրդի դիմադրական ուժը ընդդէմ հարստահարիչներու եւ շեշտել անհրաժեշտութիւնը աւելի լայնօրէն օգտագործելու արաբ պատմաբաններու աղբիւրները, ինչ կը վերաբերի արաբական տիրապետութեան շրջանի Հայաստանի պատմութեան, աշխատութիւն մը, զոր կարելի պիտի ըլլայ պատրաստել Հայաստանի արաբագէտներու ջանքերով:

ՓՐՈՖ. ՎԼԱՏ ՊԸՆԸՅԵԱՆՈՒ

ԶՐՈՅՑ
ՓՈԼ ՄԷՕՐԻՍԻ ՀԵՏ

Վերջին երկու տարիներու ընթացքին, բարեպատեհ զուգադիպութեամբ մը ու մանաւանդ բարերար միջամտութեամբ մը մուտք գործեցի ֆրանսական շարժանկարի ասպարէզէն ներս, ուր, հետզհետէ մասնակցեցայ ժապաւէններու, առաջինը՝ «Հորաս 62», երկրորդը՝ «Գաղտնիք Փարիզու», իսկ երրորդն ու վերջինը՝ «Ամէն տեսակէտով լաւ Պարոն մը»:

Բացի նիւթական առաւելութենէն որ կ'ընծայէ «Եօթներորդ արուեստ»ը իր ծառայողներուն, պէտք է խոստովանիմ որ շարժանկարը, ճիշդ հակառակը բեմական արուեստին, երբեք առիթ չընծայեր արուեստագէտին ապրելու այն խոր յուզումները զորս շռայլօրէն կը պարգեւէ բեմը դերասաններուն:

Շարժանկարի ասպարէզին մէջ ոեւէ մէկը մէկ օրէն միւսը կը դառնայ վըտէք: Մինչ թատրոնը՝ հոն ծառայող դերասանին համար փորձադաշտ մըն է, ցաւի ու երկունքի, յղացման ու ստեղծագործական թռիչքի վայր մը, ուր բարձունքներու հասնելու համար հարկաւոր են տարիներու անդուլ աշխատանք, վերելք ու անկում, պայքար ու կամք:

Այս խորհրդածութիւնները կ'ընեմ ըսելու համար որ շարժանկարի միջավայրը յուսալքում առաջացուց իմ մէջս ու չկրցաւ երբեք ինծի պարգեւել հոգեկան այն անփոխարինելի հրճուանքն ու հաճոյքը, գեղարուեստական այն անապակ խռովքներն ու յոյզերը զորս երկար տարիներէ ի վեր տուած է ինծի բեմը:

Տարբերութի՞ւնը բեմին եւ պաստառին միջեւ... այդ չէ այսօրուան իմ յօդուածիս նիւթը: Ընդարձակ է այդ նիւթը եւ արժանի՝ առանձին ուսումնասիրութեան մը: Ինչ որ կ'ուզեմ շեշտել այսօր, այն է թէ շարժանկարը, հակառակ իր անհրապոյր ու խորթ հանգամանքին, առիթը ընծայեց ինծի ծանօթանալու անձերու, որոնց հետ ունեցած եմ մտերմական խօսակցութիւններ, անոնց հետ փոխանակած կարծիքներս անգամ մը եւս արմատացուցին իմ մէջս շարժանկարին հանդէպ սնուցած բացասական կարծիքս:

Բազմաթիւ ֆրանսացի դերասաններ ճանչցայ՝ Ռէյմոն Փելըկրէն, Ժան Մարէ, Ժան Լըրուլէն, Փիէր Մոնտի: Ասոնցմէ ոմանց հետ ունեցայ մտերմական խօսակցութիւններ ուր խնդրոյ առարկայ եղաւ միշտ բեմին ու պաստառին տարբերութեան հարցը, եւ միշտ ալ բեմին առաւելութիւնը՝ շարժանկարին վրայ, մնաց առաջնութեան գծին վրայ:

Արդար ըլլալու համար պէտք է խոստովանիմ թէ ֆրանսացի դերասաններու հետ ունեցած ծանօթութիւններուս լաւագոյնը եղաւ մեծանուն դերասան, բեմի ու շարժանկարի ծանօթ աստղ՝ Փոլ Մէօրիս:

Վերջին ժապաւէնիս (որուն գլխաւոր դերակատարն է ինք Տիկիններ Տանիէլ Տարիոյի եւ Միշէլ Մորկանի կողքին) պատկերահանման ընթացքին ծանօթացայ անոր հետ:

Փոլ Մէօրիս որքան շարժանկարի փայլուն աստղ, նոյնքան եւ աւելի տաղանդաւոր բեմական ստեղծագործ մըն է: Ֆրանսական թատրոնի անցեալ տարեշրջանին անուանի դերասանը մեծ նուաճում մը կատարեց «Իւրլիւպէրլիւ»ով, իսկ անկէ առաջ կատարեալ յաղթանակ մը եղած է «Մի ոմն Ցուղա» թատերակին մէջ իր ստեղծած տիպարը:

Արտաքին երեւոյթով անհաղորդ, առաջին իսկ ակնարկին հակակրելի տպաւորութիւն մը ձգող այս մարդը, մտերմական խօսակցութեան ընթացքին, կարծես հրաշիւք իմն, կ'այլափոխուի, կը դառնայ հաճելի, գրաւիչ, ու իր լեցուն միջուկ մը ունեցող խօսքերը ընկերացած իր այնքա՜ն քնարական ձայնին կը գերեն ու խորապէս կը տպաւորեն խօսակիցը:

Այդպէս պատահեցաւ ինծի: Մեր աշխատանքի առաջին օրը, որ անցաւ միայն իր ու իմ մասնակցութեամբս խաղցուած տեսարանի մը նկարահանումով, դադարի մը պահուն, երբ անկիւն մը ծուարած կը խոկայի, յանկարծ Փոլ Մէօրիս մօտենալով ինծի, յաջորդ տեսարանին մասին բացատրութիւն մը տուաւ, աւելցնելով որ իր այդ փոքր ցուցմունքը պիտի կրնար դիւրացնել աշխատանքը:

Մեծ հաճոյքով մտիկ ըրի զինքը ու ապահովցուցի թէ կէտ առ կէտ պիտի հետեւէի իր ցուցմունքին, եւ աւելցուցի.

— Ներողամիտ եղէք. նորեկ եմ շարժանկարի աշխարհին մէջ, երրորդ ժապաւէնն է որ կը դարձնեմ...

— Իրա՞ւ... սակայն, հակառակ ձեր նորեկութեան, ինչպէս դուք կ'ըսէք, վարժ կ'երեւիք «արհեստ»ին:

— Որովհետեւ, քառասուն տարիէ ի վեր թատրոնով կը զբաղիմ:

— Ի՞նչպէս գտաք շարժանկարի աշխարհը: Սիրեցի՞ք:

ՇԱՐԼ ՊՕՏԼԷՐ
ԵՒ ԻՐ
ԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԴՐԱԽՏՆԵՐԸ

Երբ լաւ ընտանիքի զաւակ մը անխնայ կը մսխէ ունեցածը, օրինական միջոց մը կայ իր այս մսխումները սանձելու. ի՛ր իսկ շահուն համար՝ դատական խորհրդական մը նշանակել տալն է: 1844 Սեպտեմբերին, Տիկին Օփիքի պահանջին վրայ, անշուշտ դրդուած զօրավարէն, որ իմացած էր թէ երկու տարուան մէջ Շառլի հօրենական ժառանգութեան կէսը հալած էր, դատարանը կ'որոշէ դատական խորհրդական մը նշանակել, որ ճըշտապահութեամբ Շառլին պիտի վճարէ ժառանգութենէն մնացածին եկամուտը, առանց մայր գումարին դպչելու կարելիութեան:

Բանաստեղծը կրցածին չափ կը բողոքէ, կ'աղաչէ, բայց ի զուր: Գերագոյն անարգանքն է, յանցանքը որ պէտք չէր գործել: Անմոռանալի նախատինքը՝ կատարուած յանուն բարի նպատակներուն եւ առաքինի ընկերութեան:

Դրամական տեսակէտով ալ՝ Պօտլէր մէկ օրէն միւսը նեղութեան մէջ է: Կացութիւնը մտահոգիչ էր, մանաւանդ որ բացի դերձակին, ճաշարանատիրոջ, հաշիշի հայթայթիչին ունեցած պարտքերէն, նկարի վաճառական Արոնտէլին ստորագրած պարտամուրհակներուն ալ վճարումները իրենց ժամկէտին կը հասնէին: Գոնէ յետնեալ պարտքերը պէտք է վճարէ անմիջապէս, որպէսզի կարենայ քիչ մը համբերել տալ պարտատէրերը: Տիկին Օփիք, որպէս կին եւ որպէս մայր, միշտ երկու «պարտականութեանց» միջեւ նեղը մնացած, կը ջանայ դատարան դիմած ըլլալուն հետեւանքները մեղմացնել, եւ զօրավարէն գաղտնի՝ կ'օգնէ Շառլին: Սակայն ասիկա անբաւարար է: Բանաստեղծը յուսահատութեան սեմին է: Իրիկուն մը, Րիշըլիէօ փողոցի գրօսավայրերէն մէկուն մէջ կը փորձէ անձնասպան ըլլալ՝ կուրծքին մէջ դանակ մը մխրճելով: Վէրքը ծանր չէ, եւ ըսողներ կան թէ ձեւացուցած է:

Լուր կը տրուի Տիկին Օփիքի: Զաւակը կը տեսնէ դեռ արիւնաթաթախ: Իրար կ'անցնի, ամուսնոյն կը պաղատի՝ որ անհրաժեշտը ընէ: Զօրավարը չար մարդ մը չէ. իր կնոջը պաղատանքին առջեւ տեղի կուտայ: Ամէնէն անյետաձգելի պարտքերը կը վճարուին: Վանտոմ հրապարակի իր գեղեցիկ, քաղքենի յարկաբաժնին մէջ, ուր ապաստան տուած է իր ապաքինող զաւկին, Քարոլին կը պաղատի, որ Շառլ իրենց մօտ ապրի: Բայց իրարմէ այնքան տարբեր այս երեք էակներուն համակեցութիւնը անկարելի է: Նոր վէճեր կը ծագին:

Հազիւ ապաքինած, Պօտլէր դարձեալ կը փախչի տունէն: Մէկ ելք ունի միայն. Ֆամ–սան–թէք փողոցի տունը, վերադառնալ այն ինչ որ տակաւին կը մնայ ազատ կեանքի իր պատրանքէն, որուն գերին է արդէն, եւ որուն թիապարտը պիտի դառնայ շուտով:

— Ընտանիքս դարձեալ հեռաձայ: Մօրս տան մէջ միայն Պոստոյի գինի կը խմեն, իսկ ես՝ չեմ կրնար առանց Պուրկոնեի գինիի ապրիլ — կ'ըսէ պճնամոլ շուրջքայլով մը՝ Թէօֆիլ Կոթիէի:

Բայց այս բոլոր խրադարձութեանց մէջ ի՞նչ վիճակի մէջ է մեծ բանաստեղծը, ստեղծագործողը, յառաջընթացը: Հիւանդագին զգայնութեան տէր՝ այս մըտատանջ մարդուն մէջ, այս անառակ, հաշիշամոլ եւ խաբարային մէջ, ո՞ւր է յաւիտենական Պօտլէրը: Կը շարունակէ «դուրս գալ» յամրօրէն, կարելի է ըսել՝ գաղտնօրէն, իր մոլորումներուն եւ անհոգութեանց ընդմէջէն:

1845 Ապրիլին, «Անուղղայ Արուեստագէտը» անունով կիսածանօթ պարբերականի մը մէջ լոյս կը տեսնեն Շ. Պ. սկզբնատառերով ստորագրուած երկու բանաստեղծութիւններ — Տօն Ժուան Դըժոխաց մէջ եւ Առ Հնդկուհի մը: Ասիկա խայծն է շուտով լոյս տեսնելիք Չարիքի Ծաղիկները հաւաքածոյին: Սկսած է կանոնաւոր աշխատիլ: Առանձին հատորներով հետզհետէ լոյս կը տեսնեն 1845ի Սալոնը եւ 1846ի Սալոնը, որոնց մէջ [illegible] յայտ կը բերէ ճաշակի եւ մտքի անսովոր հասունութիւն՝ նկարչութեան մարզին մէջ: Պօտլէր ոչ միայն արդիական [illegible] ծագոյն բանաստեղծն է, այլ նաեւ՝ արուեստի առաջին մեծ քննադատը:

1848ի յեղափոխութիւնը զինք [illegible] խլէ իր երազանքներէն ու ոսկերէն՝ [illegible] քը գործունէութեան մղելու համար: Մանկութեան օրերուն Լիոնի բանուորներու ապստամբութեան յիշատակը [illegible] միջապէս կը վերակենդանանայ իր մէջ: Արհամարհոտ եւ ազնուապետական [illegible] տաճատին կը բռնէ փողոցներու կողքին: Իր գաղափարներուն յատկանիշն՝ [illegible] րինի գոյն փողկապ մը վզին, [illegible] կ'անցընէ հրացան մը եւ փամփուշտակալ մը: Պիւսիի քառուղիին վրայ, [illegible] հանուր աղմուկին մէջ, կը լսուի [illegible] մը, որ յանկերգի մը նման կը կրկնէ [illegible]

— Պէտք է երթալ հրացանազարկ ընել զօրավար Օփիքը:

Եթէ չի յաջողիր համոզելու իր ընկերները որ այդ առաջարկը գործադրեն, [illegible] մասնակցի պատնէշներու կռիւներուն [illegible] գոնէ՝ ըստ իր հաստատումին:

(Շար. – 5)

Մեծանուն դերասանին այս հարցումը ...ւարումի կը մատնէ զիս: Ի՞նչպէս ...ստովանիմ իրեն թէ չեմ սիրեր սինե-մա, թէ կը նախընտրեմ թատերարուես-տը, թէ այս երկուքին միջեւ ահագին տարբերութիւն մը գոյութիւն ունի: Վի-րաւորած պիտի չըլլա՞մ իր չարժանկարի ...ազդի արժանապատուութիւնը: Ծանօթ ...մ իր նախընտրութեան:

Փոլ Մէօրիս կը նկատէ շփոթութիւնս:

— Զգաստախանեցէք հարցումիս: Կը ...րէ՞ք սինեման:

— Կ'ուզէ՞ք որ անկեղծ ըլլամ:

— Այո՛:

— Սինեմայի եւ բեմի միջեւ տարբե-րութիւնը մեծ է: Երկու արուեստներուն միջեւ համեմատութեան եզր գոյութիւն ...չունի: Կը նախընտրեմ թատրոնը ու կը ...խորհիմ թէ արուեստագէտին համար ըս-...տեղծագործումի դաշտը աւելի ընդար-...ձակ է ու արգաւանդ բեմին վրայ, քան ...թէ սինեմայի սթիւտիօներուն մէջ:

— Իրաւունք ունիք, կը պատասխանէ Փոլ Մէօրիս, արդարեւ մեծ տարբերու-թիւն կայ երկու արուեստներուն միջեւ: ...Եւ աւելին, եթէ կ'ուզէք, թատրոնն ու չարժանկարը երկու հակոտնեայ բեւեռ-ներ են: Առաջինը պիտի մնայ միշտ իբր ...զօրաւոր արուեստի մը արժանաւոր ներ-կայացուցիչը, մինչ երկրորդը՝ երբեք պիտի չկրնայ հասնիլ անոր բարձրու-թեան ու պիտի մնայ ճարտարարուեստի ...ջլագիծին մէջ:

Ակնյայտնի կ'երեւէր որ Փոլ Մէօրիս, ֆրանսական չարժանկարի համբաւաւոր ...այս դերասանը, ինք եւս չէր սիրեր չար-ժանկարի արուեստը, աւելի յախուռն ու ...անոր կարծիքներ պիտի յայտնէր, եւ սա-կայն զուսպ եղաւ ան ու այսքանով վեր-ջացուց: Կը խորհիմ թէ այս կերպով ու-զեց չյուսահատեցնել զիս իմ նոր «սա-...պրէզ»իս մէջ:

Դադարը վերջացած էր: Առաջին օր-...ուան մեր խօսակցութիւնը կանգ առաւ ...այստեղ: Գոհ էի որ մեծանուն դերասա-նը կը բաժնէր կարծիքս:

×

Բարեկամներ եղած էինք Փոլ Մէօրիսի ...հետ: Երկրորդ օրուան մեր խօսակցու-թիւնը, ցերեկուան ճաշի պահուն, եղաւ աւելի երկար, բոլորովին տարբեր նիւթի ...մը շուրջ:

Այս անգամ առաջին հարցումը ես ...տուի.

— Պ. Մէօրիս, կը ճանչնա՞ք Հայերը, ...գաղափար ունի՞ք Հայութեան մասին:

— Չեմ կրնար ըսել թէ լայն ծանօթու-թիւններ ունիմ հայ ժողովուրդի մասին, ...եւ սակայն, չեմ ալ կրնար ըսել թէ բնաւ ...չեմ ճանչնար Հայութիւնը: Գիտեմ որ ...հինաւուրց քաղաքակրթութեան ու մշա-...կոյթի տէր ժողովուրդ մըն էք, ամուր ...փարած ձեր դարաւոր բարքերուն եւ ա-...ւանդութիւններուն: Գիտեմ թէ հարուստ լեզու մը եւ գրականութիւն ունիք եւ թէ Աստուածաշունչի առաջին թարգմանու-թիւնը կատարուած է հայերէն լեզուով: Պիտի զարմանաք թէ ձեր ժողովուրդի մասին լայն ծանօթութիւններ չունեցող մը ուրկէ՞ կրցած է տեղեկանալ այս բո-լորին: Դուք երկրորդ Հայն էք որ ճանչ-նալու պատիւը կ'ունենամ: Առաջինը՝ Կրէկուառ Ասլանն էր, տաղանդաւոր դե-րասան ու ազնիւ մարդ մը, լայն զար-գացումի տէր, որուն հետ պատիւը ու-նեցած եմ խաղընկեր ըլլալու «Մի ոմն Ցուգա» թատերակին մէջ: Կրէկուառ Աս-լանն է որ տուած է ինծի այս ծանօթու-թիւնները: Բարեկամս աւելցուցած էր թէ հայ ժողովուրդը բարեպաշտ է ու եկե-ղեցասէր եւ տեղեկացուցած էր ինծի թէ իր հանգուցեալ հայրը Հայոց եկեղեցիի հողաբարձութեան նախագահն էր եղած երկար տարիներ:

Ու սիրուն ժպիտ մը դէմքին, Փոլ Մէօ-րիս աւելցուց.

— Հիմա, կարգը ձերն է ինծի յաւել-եալ մանրամասնութիւններ տալու ձեր մասին: Անշուշտ լաւ է որ ձեր ժողո-վուրդը եկեղեցասէր է, բայց կը խորհիմ թէ հինաւուրց քաղաքակրթութեան ու մշակոյթի տէր ազգ մը պէտք է նաեւ թատերասէր եղած ըլլայ: Այդպէ՞ս է, Հայերը թատերասէ՞ր են...

— Անշուշտ: Եւ ուրիշ կերպ չէր կըր-նար ըլլալ: Հայոց թատրոնը երկու հա-զար տարուան կեանք ունի, այն օրերէն սկսեալ, հեթանոսական շրջաններէն, երբ մեր Արտաւազդ թագաւորը իր արքունի-քին մէջ կը ներկայացնէր իր իսկ գրած թատերակները: Հազարամեակներու ժա-ռանգ Հայոց թատրոնը, հարիւր տարի առաջ, 1860ական թուականներուն, խա-ւարակուռ երկրի մը մէջ, ուր Բարին ու Գեղեցիկը հալածանքի էին ենթարկուած բռնակալ իշխանութեան մը ճիրաններուն ներքեւ, Մոլիէր թարգմանած է ու ներ-կայացուցած: Ու դարձեալ, միշտ հաւա-տարիմ հազարամեայ աւանդութեան, այսօր ալ, Հայոց թատրոնը կը գործէ Փարիզի մէջ, ներկայացնելով ֆրանսա-կան դասական եւ ժամանակակից վար-պետներու գործերը, որոնց մէջ Մոլիէր ի պատուի է միշտ:

Փոլ Մէօրիս ակնյայտնի հրճուանքով մը մտիկ ըրաւ զիս: Ապա, ձեռքը ուսիս դնելով, մտերմիկ շեշտով մը, աւելցուց.

— Կը տեսնէ՞ք, ամէն տարիքի ու ա-մէն պայմաններու մէջ, քանի կ'ապրինք ու կը շնչենք, ամէն օր բան մը սորվելու տակ ենք: Ձեր խօսքերը ինծի նոր ծա-նօթութիւններ տուին Հայոց մասին, ո-րուն համար շնորհակալ եմ:

Երեք օրուան մեր հաճելի աշխատան-քէն ետք, երբ հրաժեշտ առի մեծանուն դերասանէն, վստահ էի թէ մեր ժողո-վուրդը թանկագին ու նոր բարեկամ մը գտած էր յանձին ֆրանսացի այս մեծ դերասանին:

ԱՐՏԱՇԷՍ ԳՄԲԷԹԵԱՆ

ԻՆՉՊԷՍ ԿԸ ԳՈՐԾԷՆ...

Ֆրանսահայ Կապոյտ Խաչի Պելփոնթէնի կազդուրման կայանի առաջին խումբը Փարիզ վերադարձաւ կիրակի ա-ռաւօտ, Օգոստոս 4ին, լաւագոյն պայ-մաններու մէջ:

Կայարան փութացած էին ծնողքներ, դիմաւորելու համար իրենց երախաները: Հոն էին նաեւ Շրջանային Վարչութեան ներկայացուցիչները:

Ուրախալի էր տեսնել կայտառ հայ մանուկներու այս ժամանումը: Անոնց դէմքերուն վրայ արդէն կարելի էր նըշ-մարել կայանի թողած կազդուրիչ ազդե-ցութիւնը: Բոլորն ալ ուրախ ու զուարթ, հակառակ անոր որ անքուն գիշեր մը ան-ցուցած էին շոգեկառքին մէջ:

Շնորհաւորելի է իսկապէս Կապ. Խա-չը իր այս ձեռնարկին համար, ու գնա-հատելի ամէն կերպով:

Ծնողքներու շնորհաւորական արտա-յայտութիւնները որոնց ականջալուր ե-ղայ, իսկական դրուատականներ են, որ գործը ինքնին արժանացած է ոչ միայն գնահատութեան, այլեւ հիացումի:

Իսկապէս, դժուարին պայմաններու մէջ եւ հսկայ աշխատանքի գնով է որ կը կազմակերպուի կայանի գործը, եւ տար-ուէ տարի կատարելագործուելով միշտ լաւագոյնին հասնելու կը ձգտի:

Երկու հարիւր հոգիի փոխադրութիւն, սնունդ, կարգապահութիւն, ապահովու-թիւն, առողջապահութիւն, ապահովա-գրութիւն, աշխատանքներ են զորս պէտք է գլուխ հանել պահանջուած պայմաննե-րու տակ:

Պելփոնթէնի կայանը ունի իր տնօրէ-նուհին, բժշկուհին, առաջնորդուհիները, խոհարարը, օգնականները եւ աշխատող տիկիններ: Բացի այդ, Շրջ. Վարչու-թեան անդամուհիները պարբերական այ-ցելութիւններով մօտէն կը հետեւին տար-ուած աշխատանքին:

Մայրիկներու անտառներու մաքուր օ-դը ծծելով եւ առատ սննդառութեամբ ե-րախաները լաւագոյն կերպով կը կազ-դուրուին այնտեղ, մանաւանդ կ'ապրին հայկական առողջ մթնոլորտի մէջ:

Յաճախակի են նաեւ ծնողքներու այցե-լութիւնները, որոնք իրենց աչքերով կ'ուզեն տեսնել կայանի կեանքը, կարգ-ուսարքը եւ գոհ սրտով կը վերադառնան նիւթական նուէր մըն ալ թողլով հաս-տատութեան:

Յուլիս ամսոյ մէջ Կապ. Խաչի Կըր-նոպլի մասնաճիւղը գեղեցիկ գաղափարը յղացած էր օթօքար մը վարձել եւ իր անդամուհիները փոխադրել Պելփոնթէն, որպէսզի անոնք տեղւոյն վրայ ծանօթա-նան կայանի գործին ականատեսի աչ-քերով: Եւ այս առթիւ իրենց տպաւորու-թիւնները արտայայտող տեղեկագիր-նամակ մը ուղղած են Շրջ. Վարչու-թեան, Փարիզ, հետեւեալ բովանդակու-թեամբ.—

«Անմոռանալի օր մը անցուցինք ան-ցեալ կիրակի, այցելելով խմբովին Պել-փոնթէնի կայանը: Կատարեալ է ընդու-նելութիւնը, ամէն կողմ կը ծփար մաք-րութեամբ, այցելեցինք յարկաբաժիննե-րը: Մեզի ի պատիւ կազմակերպեցին հանդէս մը, գեղարուեստական բաժին մը արժանի գովասանքի, ուր նշմարեցինք տղոց հայերէն յստակ առոգանութիւնը»:

«Աւա՜ղ, ժամերը արագ կ'անցնէին, պէտք էր վերադարձի մասին մտածել, ստիպուած էինք բաժնուիլ: Նկարագրել բոլորին գոհունակութիւնը կարելի չէր մէկ բառով բացադանչեցին անոնք, կեց-ցէ՛ Ֆրանսահայ Կապ. Խաչը»:

Անուրանալի է որ նման այցելութիւն-ներ իրենց որոշ օգուտը կ'ունենան, գոր-ծը մօտէն ծանօթացնելու հանրութեան, հետեւաբար շնորհաւորելի է Կապ. Խա-չի Կրընոպլի վարչութիւնը իր այս նա-խաձեռնութեան համար: Լաւ կ'ըլլար որ շրջակայ քաղաքներու մասնաճիւղերը ու ազգայիններ եւս հետեւէին անոնց օ-րինակին:

Կապոյտ Խաչը ունի մէկ ուրիշ շատ կարեւոր ձեռնարկ եւս: Պէյրութի ճե-մարանը ուսանողուհիներ ղրկելով զար-գացած կարող ուժեր պատրաստել:

Այս մասին Յառաջի մէջ տրուած է յայտարարութիւն եւ թեկնածու օրիորդ-ներ կը փնտռուին, յառաջիկայ Հոկտեմ-բերին Պէյրութ, Փալանճեան ճեմարան ղրկուելու համար Միութեան ծախքով:

Վստահ ենք որ յարմարագոյն ընտրու-թիւն մը պիտի կատարուի եւ ի մօտոյ առիթը պիտի տրուի մեզի ծափահարե-լու նաեւ այս գեղեցիկ ձեռնարկին յա-ջողութիւնը:

Ապրի՛ ուրեմն Ֆրանսահայ Կապոյտ Խաչը:

Գ. ՋՊՈՒԽՃԵԱՆ—

Կ'ԱՐԺԷ ԳԻՏՆԱԼ

Հողագէտ Էրիխ Կիրլինկ, Պալթիկ Ծո-վի շրջանին մէջ յայտնաբերեց հանքա-նիւթեր, որոնք ըստ իր կարծիքին, հինգ միլիառ տարուան հնութիւն ունին: Եթէ յիշեալ գիտնականին կարծիքը հաստատ-ուի, կը նշանակէ թէ մեր երկրագունդին տարիքը ոչ թէ 3,5 միլիառ, ինչպէս կը կարծուէր ցարդ, այլ 5 միլիառ տարի է:

×

Ցորդանանի մէկ քարայրին մէջ, վեր-ջերս գտնուեցան 300 կմախքներ: Կ'են-թադրուի, որ անոնք կմախքներն են Սա-մարիա քաղաքի բնակիչներուն, որոնք Ք. Ա. չորրորդ դարուն զոհ գացին Մեծն Աղեքսանդրի զօրքերուն:

«ՅԱՌԱՋ»Ի ԹԵՐԹՕՆԸ (199)

ԵՐԼՏՐՋԻ ՊՕՄՊԱՆ

●●●

ՀԱԶԱՐ ԻՆԸ ՀԱՐԻՒՐ ՋՈՐՍ

— Այո՛ կը յայտարարեմ, շարունակեց ...Փօրեն, ես յեղափոխական մըն եմ, եւ ...ընկերվարական յեղափոխական մը. այն ...օրէն ի վեր, երբ եւրոպական մաքուր ...եւ անկաշառ գիտակցութիւնները թարգ-...մանող թերթերու մէջ կարդացի Հայկա-...կան Զարչարանքները, այն սեւ Թուակա-...նէն ի վեր երբ աղեխարշ աղաղակները ...լսեցի մարտիրոս ժողովուրդի մը, որ Ա-...զատութեան համար կը մարտնչէր, եւ ...որ պատճառով կը զրկուէր իր ինչքէն, ...իր պատիւէն ու իր կեանքէն, երբ ակա-...նատես եղայ շահամոլ Եւրոպայի դիւա-...նագիտական խաղերուն, որ անխիղճ պա-տաւի մը պէս կը ծաղրէր եւ յաճախ կը շահագործէր հողեմարքի գալարումները բնաջնջուող ցեղի մը, որ Արեւելքի մէջ Արեւմուտքը կը ներկայացնէր, ահա՛ կ'ըսեմ, այդ օրէն ի վեր ուխտեցի մար-տնչիլ անանուն ոճիրներու հեղինակնե-րուն դէմ. այո՛, Հայաստանի մէջ հոսած ու հեղեղներ կազմած արիւնը խօսեցաւ, եւ ես անոր ձայնին անսալով է որ մտայ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան խումբին մէջ եւ գործեցի իրենց հետ, մէկ նպատակի շուրջը.

— Ըսէք նայիմ, ի՛նչ նպատակի շուրջ էր որ գործեցիք, հարցուց Հիլմի պէյ ընդմիջելով.

— Նպատակներէն վեհագոյնին, պա-տասխանեց Իտուառ Ժորիս:

— Պարզ խօսեցէք...

— Չարիքը վերցնելու մէջտեղէն, պա-տասխանեց Իտուառ:

— Ո՞ր չարիքը...

— Մեծ չարիքը, յարեց Պելժիացին, Մեծ մարդասպանին գոյութի՛ւնը:

— Ո՞վ է Մեծ Մարդասպանը, հարցուց նախագահը:

— Այս երկրին դահի՛ճը, պատասխա-նեց Պելժիացին, Կլատսթոնի Մեծ Մար-դասպա՛նը:

— Ո՞վ է...

— Ձեր Օգոստափառ տէրը, պատաս-խանեց Պելժիացին:

Դատարանը պահ մը խորունկ, ահաւոր լռութեան մը մէջ թաղուեցաւ. դատա-ւորները գետնի զորգերուն կը սեւեռէին իրենց ապշահար նայուածքները, մինչ ունկնդիր ամբոխին մէջ փսփսուքը կ'ա-ւելնար:

— Անամօ՛թ, չարագո՛րծ, լի՛րբ անիշ-խանական, մռնչեց նախագահը, ի՞նչ-պէս կը յանդգնիս ընելու դատարանիս մէջ այդ լեզուագարութիւնները:

Դատավարութեան միջոցին մէկէ աւելի նման միջադէպեր տեղի ունեցան նախա-գահին եւ ամբաստանեալներուն միջեւ, այնպէս որ նախագահը պարտաւորուե-ցաւ ի վերջոյ համառօտել հարցաքննու-թիւնները:

Ինչպէս կը յիշեն ընթերցողները, վեր-ջին նիստին մէջ, ընդհանուր դատախա-զին պահանջագիրը, նաեւ ամբաստան-եալներուն փոխանորդ փաստաբաններուն պաշտպանողականները, լոկ ձեւակեր-պութեան համար լսուելէ յետոյ, դա-տաւորները նախագահին առաջնորդու-թեամբ խորհրդակցութեան առանձնա-սենեակը քաշուեցան, ուր մնացին չորս ժամ:

Եղեռնագործ առեւտրի անդամներուն միջեւ կարծիքները կը տարբերէին, մէկ քանիները կը պնդէին թէ իսկական յան-ցաւորները, մահափորձին բուն հեղինակ-ները, որոնք յղացած, պատրաստած ու գործադրած են զայն, յաջողած են փախ-չիլ եւ արտասահման ապաստանիլ, եւ թէ կղպանքի տակ առնուած բանտարկ-եալներուն մեծագոյն մասը խեղճ ողոր-մելի խոհարարներէ, սրճարաններէ եւ կամ խաղաղ արհեստաւորներէ կը բաղ-կանայ, որոնք թերեւս երբեք տեղեկու-թիւն չունին գործէն: —Սակայն, միւս կողմը, որոնց գլուխը կը գտնուէր նա-խագահ Հիլմի էֆէնտին, Ընդհանուր Դատախազ Նէճմէտտին մոլլա պէյի կար-ծիքէն էին, որովհետեւ գիտէին թէ Եըլ-տըզի Վեհափառին (՛) կամքը կ'արտա-յայտէր այն կարծիքը:

— Էֆէնտինե՛ր, կ'ըսէր նախագահը, դառնալով իրեն տարակարծիք անդամ-ներուն, ճիշդ է, բուն յանցաւորները, հեղինակները փախած են, եւ մէկ քանի աննշան, երկրորդական, թերեւս երրոր-դական կարեւորութիւն ունեցողները մի-այն կը գտնուին Արդարութեան ձեռքին մէջ, սակայն, վերջապէս, մեր վրայ պարտականութիւն կը ծանրանայ:

— Ի՞նչ պարտականութիւն, կը հար-ցնէր Նիյմէթուլլահ էֆէնտին:

— Երեւոյթները փրկել, շարունակեց նախագահը, ահա՛ մեր պարտականու-թիւնը, ինչ որ կը նշանակէ արդէն մեր Սիրեցեալ Վեհափառ Սուլթանին բար-ձրագոյն կամքին գործադրութիւնը:

ՍՄԲԱՏ ԲԻՒՐԱՏ

(Շար.)

Տէր եւ Տիկին Բարգէն Պոտոսեան եւ զաւակները, Տէր եւ Տիկին Զաւէն Պոտոսեան եւ զաւակները (Պուէնոս Այրէս), Տէր եւ Տիկին Եփրեմ Պոտոսեան եւ զաւակները (Պուէնոս Այրէս) եւ ազգականները սրտի խոր կսկիծով կը ծանուցանեն մահը իրենց հօր եւ ազգականին՝

ՕՆՆԻԿ ՊՈՏՈՍԵԱՆ
(Պարտիզակցի)

որ տեղի ունեցաւ Պուէնոս Այրէս (Արժանթին), Յուլիս 25ին:

ՅԱՌԱՋ.— Մեր ցաւակցութիւնները:

Պ. Յարութիւն Փափազեան, Տէր եւ Տիկին Գրիգոր Փափազեան եւ զաւակը Անի, Տէր եւ Տիկին Արթաքի Գալայճեան եւ զաւակները, Տէր եւ Տիկին Պաղտիկ Քիւլչէեան եւ զաւակները, Այրի Տիկին Շաւարթ Քիւլչէեան եւ զաւակները, Այրի Տիկին Շնորհիկ Փափազեան, Այրի Տիկին Ռեբեկա Աճէմեան, Տէր եւ Տիկին Սարգիս Թիւթիւնճեան եւ զաւակը, Տէր եւ Տիկին Թաթուլ Կիրակոսեան եւ զաւակները (Հայաստան), Տէր եւ Տիկին Ալպէր Կիրակոսեան եւ զաւակները (Հայաստան), Տէր եւ Տիկին Շառլ Ֆըվրիյէ եւ զաւակները, Օր. Լիլիան Փափազեան, Տէր եւ Տիկին Եսայի Եսայեան (Յունաստան), Տէր եւ Տիկին Սահակ Կէնճեան, Տէր եւ Տիկին Յովհաննէս Յակոբեան եւ զաւակները, ինչպէս նաեւ Եոխգարտաշեան, Ուզունեան, Անդրէասեան, Տոտաքեան, Սուճուքեան, Տէր-Մէրկէրեան, Օհանեան, Գույումճեան, Կառավարեան, Պետիկեան, Սէյխեան, Յակոբեան, Զոլաքեան եւ Կատայեան ընտանիքները ցաւով կը ծանուցանեն մահը իրենց կնոջ, մօր, մեծ-մօր, քրոջ, ներոջ, հարսին, զարմուհիին եւ ազգականին

ՏԻԿԻՆ ԱՆՆԻԿ ՓԱՓԱԶԵԱՆԻ

որ տեղի ունեցաւ Օգոստոս 4ին, կիրակի օր:

Յուղարկաւորութիւնը կը կատարուի այս հինգշաբթի, Օգոստոս 8 ժամը 16ին Շաւիլի Հայոց եկեղեցին, 4 Ռիւ տէ Թոռուա Շանթիէ:

Կը խնդրուի ծաղկեպսակ չղրկել:

Մահազդ չստացողներէն կը խնդրուի ներկայ իբր այդ նկատել:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Տէր եւ Տիկին Պերճ Մավեան եւ զաւակները, Տէր եւ Տիկին Տոքթ. Բարսեղ Խրիմեան եւ զաւակները, Պ. Խաչատուր Մավեան եւ ընտանեկան պարագաները կը ծանուցանեն թէ հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի այս կիրակի առաւօտ Փարիզի Ս. Յովհաննէս-Մկրտիչ եկեղեցին իրենց մօր եւ մեծ-մօր

ՍԻՐԱՆՈՅՇ ՄԱՎԵԱՆԻ

մահուան քառասունքին առթիւ:

Կը հրաւիրուին ողբացեալին յիշատակը յարգողները:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Լիոնի եւ շրջաններու Հայ Ազգ. Միութիւնը շնորհակալութեամբ ստացաւ հետեւեալ նուէրները, փոխան ծաղկեպսակի, Գարեգին Սողոմոնեանի մահուան առթիւ.—

Տէր եւ Տիկին Մուրատեան 50 փրանք, Պ. Աբրահամեան, Պ. Պետրոսեան, Պ. Նշան Պետրոսեան 20ական փր., Պ. Համբեան 50, Պ. Սողոմոնեան 20 փրանք:

Տէր եւ Տիկին Զատիկեան, վասն պայծառութեան եկեղեցւոյ, 100 փրանք, Տիկին Պզտիկեան եւ Տիկին Եալընըզեան (Փարիզ), վասն պայծառութեան եկեղեցւոյ 50ական փրանք:

×

Ալֆորթվիլի Տիկնանց Միութիւնը շնորհակալութեամբ ստացաւ Տիկին Ալթուն Բարսեղեանէ 20 փր. իր ամուսնոյն մահուան քառասունքին առթիւ: Պ. Տօնիկեանէ 10 փր. իր փոքրիկին մկրտութեան առթիւ: Պ. Աբրահամեանէ 20 փր. իր աներհօր, Հանգուցեալ Սողոմոնեանի հոգւոյն ի հանգիստ:

Շ. ՄԻՍԱՔԵԱՆ

Օրեր եւ Ժամեր

ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ ՆԻՍԻ ՄԷՋ

—o—

ՀԵՐՈՍՆԵՐՈՒ ՕՐՈՒԱՆ ԱՌԹԻՒ

Խանասորի 66րդ տարեդարձը կը տօնուի նախաձեռնութեամբ Հ. Յ. Դ. Գէորգ Չաւուշ խումբին, հովանաւորութեամբ Մարսէյլի Շրջ. Կոմիտէին, այս կիրակի ամբողջ օրը Լա Քոլ Սիւր Լու գետեզերքը – անտառին մէջ:

Հաճելի օր մը (գետի լոգանք կարելի է):

Կը նախագահէ ընկ. Յ. ՇԻՇԼԻԵԱՆ

Կը բանախօսէ ընկ. Յ. ՆԻԿՈՂՈՍԵԱՆ

Ծանօթ.— Մասնաւոր օթօքար մը վարձուած է: Առաւօտուն ժամը 8,30ին ճամբայ կ'ելլէ Փլաս Մասէնայէն-Ալպէր Ապարտէյէն (Քազինօ Միւնիսափալին դիմացը): Նոյն օթօքարը կը հասնի Մաթըլէն ժամը 9ին:

Ժամը 9,30ին կուգայ Մանեան Սթատին (ծովը ազբիւրին մօտ սպասել) զայն առնելու համար:

Իսկ անձնական կառքով եկողներուն համար, երկու քիլոմեթր է Քոլ Սիւր-Լու գիւղէն – Կրասի ճամբուն վրայ: Անկիւնը ճաշարան-Պառ-Պաքիւսէն աջ դառնալ եւ մտնել անտառը գետեզերքը:

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ



Մատենաշար — ՅԱՌԱՋ — Կեդրոնավայր

ԳԻՆ

Ֆրանսա՝ 15 Ֆր.

— Առանձին առաքումի ծախսը —

«ՅԱՌԱՋ»

ԱՆԾԱՆՕԹ ԶԻՆՈՒՈՐԻՆ ԲՈՑԸ

—o—

Յաղթական Կամարի Բոցի Կոմիտէն Հայ Նախկին Ռազմիկներու եւ Կամաւորներու Միութեան յանձնած է Անծանօթ Զինուորին բոցը արծարծել այս կիրակի ժամը 18,30ին:

Հաւաքոյթ՝ ժամը 18ին էթուալի Թէոփլէնին վրայ, սովորական մուտքին որ դէպի Յաղթական Կամար կ'առաջնորդէ:

Անդամներն ու բարեկամները իրենց ընտանիքներով կը հրաւիրուին մասնակցելու այս արարողութեան, աւելի հանդիսաւոր փայլ մը տալու համար անոր:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Տիկ. Միութեան Որբերու Օգնութեան Մարմինը տրամադիր ըլլալով քանի մը անպաշտպան տղոց հայեցի դաստիարակութիւնը հոգալու, հարկ կը համարի ծանուցանել, որ շահագրգռուողները այժմէն դիմեն իրեն գրասենեակին, 15 Ռիւ Ժան Կուժոն:

ՀԱՅ ԸՆԾԱՅԱՐԱՆ

ԲԱՑՈՒԱԾ ԵՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ուսումնական 1963-1964 Տարեշրջան

Կ'ընդունուին 10-12 տարեկան բարեկիրթ եւ ուսումնասէր աշակերտներ, որոնք ունին իրենց տարիքին համապատասխան նաեւ ուսումնական աստիճան:

Արձանագրութեան եւ լուսաբանութեանց համար դիմել՝

Direction du Petit Séminaire Arménien
3, Av. de Grandchamp, LE PECQ (S. et O.)
Tél. 963.01.72

IMPRIMERIE SPECIALE
DU JOURNAL « HARATCH »
32, Rue de Trévise, PARIS (9e)

ՀՐԱՆՏ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

51, Rue Monsieur-le-Prince, PARIS - 6e — Chèque Postal: 1278-35

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՇԻՐՎԱՆԶԱԴԷ, Երկերի ժողովածու, 10 հատոր լաթակազմ	70 Ֆր.
ՍՏԵՓԱՆ ԶՕՐԵԱՆ, Երկերի ժողովածու, 7 հատոր, լաթակազմ	56 Ֆր.
ՍՏԵՓԱՆ ԶՕՐԵԱՆ, Պապ թագաւոր, լաթակազմ	10 Ֆր.
ՍՏԵՓԱՆ ԶՕՐԵԱՆ, Հայոց բերդը, լաթակազմ	8 Ֆր.
ՎԱՀԱՆ ՏԷՐԵԱՆ, Երկերի ժողովածու, 2 հատոր լաթակազմ	14 Ֆր.
ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՒԻԹ, մեծադիր, գունաւոր նկարներով, լաթակազմ	10 Ֆր.
Վ. ԱՆԱՆԵԱՆ, Հայաստանի կենդանական աշխարհը, Բ.	8 Ֆր.
ԱՐՍԷՆ ՏԷՐՏԷՐԵԱՆ, Երկեր (Աբովեան Պռօշեան, Պարոնեան)	17 Ֆր.
ՄՈՒՐԱՑԱՆ, Պատմուածքներ, գունաւոր նկարներով	5 Ֆր.
ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑԻ մասին յիշողութիւններ. լաթակազմ	7.50 Ֆր.
ՄԻՔ. ՇԱԹԻՐԵԱՆ. Գարունը նորից եկաւ. 296 էջ.	5 Ֆր.
ԱԲԳԱՐԵԱՆ. Մատենադարան (անգլ.) 18 գունաւոր մանրանկարներ	3 ֆր.
ՀԵՆՐԻԿ ԹՈՒՄԱՆԵԱՆ. Երգի ծնունդը. բանաստեղծութիւններ	3.85 Ֆր.
Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ. Տաղեր, 200 էջ. լաթակազմ	3.50 Ֆր.
ՍՈՎԵՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ. Ա. 800 էջ. լթկզմ.	16 Ֆր.
ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ, Անլռելի զանգակատուն, Պէյրութ, 1963	10 Ֆր.

Առաքման ծախսը գնողին վրայ

ԳՐԱՏՈՒՆՍ ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻՆ Է
ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՁԱՅՆԱԳՐԵԱԼ ԲՈԼՈՐ ԵՐԿԵՐՈՒՆ
ՃՈԽ ՄԹԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԵՒ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆՑ

ԼՈՅՍԸ ԳՈՅՆ Է.... ԳՈՅՆԸ ԼՈՅՍ Է
ՁԵՐ ՏԱՆԸ ԼՈՅՍ ՏՈՒԷ՛Ք.... ԹՈՄԼԱՔԻ ԳՈՅՆ ՏՈՒԷ՛Ք

Ձեր բնակարանը կը լուսաւորուի
Երբ ներսը եւ դուրսը

ՎԵՐԱՆՈՐՈԳԷՔ – ԶԱՐԴԱՐԷՔ – ՆԵՐԿԷՔ

ԹՈՄԼԱՔ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐՈՎ

PEINTURES THOMLAC

16 bis, Bd. Sébastopol, Paris 4e

Tél. ARC 26-61 – Métro : Halles et Chatelet

136, RUE DES BOURGUIGNONS — ASNIERES - BOIS COLOMBES (Seine)
Tél : GRE. 09-47

11, BD. DE LA REPUBLIQUE — LA GARENNE (Seine)
Tél. : STA. 19-06

ԱՆՄՐՑԵԼԻ ԳԻՆԵՐՈՎ

Ամէնէն արդիական, նուրբ եւ ընտիր ճաշակով պատրաստուած՝ առաջնակարգ ներկեր: Բնական եւ արուեստական բազմերանգ գոյներու մեծ ընտրութիւն: Նորոյթ խաւաներկեր, պատի գեղեցիկ թուղթերու ճոխ ընտրութիւն. – Գետնի համար՝ ամէն տեսակ — լինոլէոմ եւ փլասթիք — ծածկոցներ. –

TAPIFLEX — TAPISOM — CARPETTE

Ձեր բնակարաններուն արտաքին եւ ներքին խնամքներուն համար անհրաժեշտ բոլոր նիւթերը:

Ամէն գնորդի կը նուիրուի յատուկ տետրակ մը, որու շնորհիւ կրնայ 10-30 առ հարիւր զեղչ ունենալ:

ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐ

52, RUE CHALON, PARIS 12e — 64, BLD. DE BELLEVILLE, PARIS 20e
166, AV. ARISTIDE BRIAND — PAVILLONS - SOUS-BOIS (Seine)
4 bis, RUE PAUL VAILLANT COUTURIER — ARGENTEUIL (S. et O.)
24, RUE PAUL VAILLANT-COUTURIER — ALFORTVILLE (Seine)
48 bis, RUE DALAVRAC — FONTENAY - SOUS - BOIS (Seine)

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

Le PREMIER QUOTIDIEN ARMENIEN en EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction et Administration : 32, Rue de Trévise - PARIS-9e

Fondé en 1925 — Téléph. : PRO. 86-60

R. C. Seine 57 A 2731 — C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա՝ Տար. 50 Ֆ. — Վեցամսեայ՝ 27 Ֆ.

Արտասահման՝ Տար. 60 Ֆ. — Հատը 0·30 Ֆ.

ՈՒՐԲԱԹ 9 ՕԳՈՍՏՈՍ

VENDREDI 9 AOUT 1963

LE NUMERO : 0,30 FR.

39րդ ՏԱՐԻ — ԹԻՒ 9678 — Fondateur : SCHAVARCH MISSAKIAN — 39e ANNÉE — N° 9678

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ՉԵ՛ՆՔ ՀՐԱԺԱՐԻՐ

...։ Չե՛նք հրաժարիր երբեք միջազգա... մուրհակէն, որ կը կոչուի Սեւրի ...գիր, ստորագրուած քառասուն - ... տարի առաջ, 10 Օգոստոս 1920ին, ...եան արուարձան Սեւրի յախճա - ...ներու թանգարանին մէջ։

Չե՛նք հրաժարիր, որովհետեւ ազգերու ...թեան բախտորոշ մէկ դարձակէ...ն, յաղթական մեծ դաշնակիցները, ...կը գծէին աշխարհի նոր քարտէսը, ...մը չէ որ կ'ընէին մեզի, այլ կը ...ցանէին իրենց պարտքը հանդէպ ...ժողովուրդին, «փոքրիկ դաշնա - ...ին, որ իր համրանքէն կէսը զոհ էր ...իրենց դատին համար։ Պարզապէս ...յարգէին մեծ պատերազմի դժնդակ ...րուն իրենց ըրած հանդիսաւոր խոս...ները։ Արդարութեան գովելի գործ ...կը կատարէին։

Զախջախիչ պարտութեան ենթարկուած ...Թուրքիոյ քայքայման դատավճիռը կը ...ստորագրուէր այդ օրը։ Անհուն տարա...թեամբ հողամասեր ընդմիշտ կը խըլ...էին ջարդարար ցեղի ձեռքէն։ Օսման...կայսրութեան փլատակներուն մէջէն ...ներ կը կոչուէին ազատագրուած ազ...։

Արդար էր, որ Հայերն ալ ստանային ...իրենց բաժինը։ Արդարութիւն կը պա - ...էին մեր մէկ միլիոն նահատակները։ Առաջին անգամ ըլլալով 1920 Օգոստոս ...ին Մեծերը ճանչցան մեր իրաւունքը։ Սեւրի դաշնագրի 88րդ յօդուածով ...կրագործեցին Հայաստանի անկախու...թիւնը եւ զայն պարտադրեցին Թուրքիոյ։ 89րդ յօդուածով Թուրքիոյ չորս նա...հանգներէն հողամասեր ստանալու իրա - ...ւունք տուին մեզի։ Վաւերացուցին Մի...ացեալ Հայաստանը։

...Անհարոնեան, հայկական պատ...ուիրակութեան անման երգիչը, յանուն Հա...յաստանի Հանրապետութեան ստորագրեց ...դաշնագիրը՝ մեծ դաշնակիցներու ...կողքին, արդար հպարտութեամբ կանգ...նած գիծագրը պարտուած Թուրքիոյ երեք ...պատուիրակներուն, որոնք ամօթահար ...գլխիկոր կը համակերպէին միջազգա...յին դատարանի մահավճիռին։

Սեւրէն երեքուկէս ամիս վերջ, 1920 Նոյեմբեր 22ին Միացեալ Նահանգներու Նախագահ Ուտրօ Ուիլսըն, իրեն յանձ...նուած պարտականութիւնը աւարտելով, ...դաշնակիցներու ժողովին ներկայացուց ...իր իրաւարարական վճիռը, որով Հա - ...յաստանի Հանրապետութեան պէտք է ...տրուէին Վանի, Պիթլիսի, Էրզրումի եւ ...Տրապիզոնի նահանգներէն որոշ մասեր։ ...Վերականանար Հայուն դարաւոր ե - ...րազը, — անկախ Հայաստան՝ իր պապե...նական պատմական հողերուն միացումով։

...Երկար պիտի չտեւէր երազը։ ...Դժբախտ իրականութիւնը անգամ մը ...եւս պիտի գար հաստատելու թէ դըժ...բախտ աստղի տակ է ծնած հայ ազգը։ ...Ուիլսընի վճիռէն չաբաթ մը վերջ կար...միր ճապիկ կը հագնէր Հայաստան։ ...Թուրքն ու բոլշեւիկը ձեռք ձեռքի տը...ւած կը խեղդէին մեր նորաստեղծ հայ - ...րենիքը։

...Մեծ դաշնակիցները կ'օգտուէին առի - ...թէն՝ չվաւերացնելու համար Սեւրի դաշ...նագիրը։

...կը մոռնային «փոքր դաշնակից»ը։ ...Ուրանային մեր դատը։ Զէին յարգեր ...իրենց ստորագրութիւնը։ Անվճար կը ...մնար մուրհակը։

...Բայց մենք երբե՛ք չենք դադրիր պա...հանջելէ անոր վճարումը։

ՀՐԱՆՏ - ՍԱՄՈՒԷԼ

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՌԸՍՔ ՊՈՆՆ Կ'ԵՐԹԱՅ

ՆԱԽԱՊԷՍ ԽՐՈՒՇՉԵՒԸ ՊԻՏԻ ՏԵՍՆԷ

Յանկարծական կերպով, ամերիկացի Արտաքին նախարարը որոշեց Պոն եր - թալ չաբաթ օր, ինչպէս կ'երեւի Ատը - նաուըրի «սիրտը առնելու» համար։ Տա - րակոյս չկայ որ Տին Ռըսք կ'ուզէ նախ հանդստացնել Արեւմտեան Գերմանիոյ բոլոր վարիչները հիւլէական հա - մաձայնագրին առթիւ, զոր ստորագրե - ցին Արեւելեան Գերմանիոյ ղեկավարնե - րը։ Պոնի իշխանութիւնները չեն ուզեր նոյն սատիճանի վրայ դրուիլ Փանքովի իրենց կարմիր հայրենակիցներուն հետ եւ այս մասին Ուաշինկթընի եւ Լոնտոնի տուած ապահովութիւնները բաւարար չեն նկատուիր։ Պոնի կառավարութիւնը քաջ գիտէ որ Արեւմուտք - Արեւելք բա - նակցութեանց գլխաւոր նիւթը կը կազմէ գերմանական հարցը, որու լուծման հա - մար Պոն եւ Ուաշինկթըն տարբեր տեսա - կէտներ ունին։

Դաշնակցային Հանրապետութիւնը նախ գոհունակութեամբ ընդունեցաւ Մոս - կուայի համաձայնագիրը, տրուած ըլլա - լով որ Գերմանիոյ համար ոչ մէկ դըժ - ուարութիւն կար զայն գործադրելու, վասնզի Գերմանիա հանդիսաւորապէս հրաժարած էր հիւլէական եւ ջրածին զէնքեր շինելէ, շատ առաջ։

Ներկայիս մէջտեղ կ'ելլէ որ այս դաշ - նագիրը ամէնէն խրթին կացութիւնը ըս - տեղծեց նոյնինքն Գերմանիոյ համար։ Յարդ միայն Դաշնակցային Գերմանիան էր որ իրաւունք ունէր խօսելու Գերմա - նացիներուն անունով եւ Գերմանիոյ վե - րամիացումը միջազգային քաղաքակա - նութեան մէկ հրամայականն է։ Արդ, Գերմանիոյ ղեկավարներու մտահոգու - թիւնը կը ծագի Մոսկուայի համաձայ - նութեան թիւ 2 եւ 3 յօդուածներէն.— Բոլոր ինքնիշխան պետութիւնները կըր - նան անդամակցիլ այս համաձայնու - թեան, իւրաքանչիւր ստորագրող կրնայ առաջարկել փոփոխութիւններ մտցնել եւ ատ-հոք (այդ նպատակաւ) ժողով մը հրաւիրել եթէ անդամներու մէկ երրորդը համաձայնի։ Ինչպէս կը պարզուի, վե - թոյի ոչ մէկ հարց կայ, մինչ առոր վը - րայ կըթնած՝ Գերմանացիք որոշ յոյս մը ունէին, որովհետեւ Լոնտոն եւ Ուաշինկ - թըն քանիցս կրկնած էին թէ պիտի չճանչնան Արեւելեան Գերմանիան։ Իրաց այս կացութեան մէջ, Քենըտիի տուած ապահովութիւնները չեն կրնար բաւարար նկատուիլ։

Անկէ զատ սակայն, Պոնի բոլոր քա - ղաքական հոսանքները նոյն տեսակէտը չունին ինչ կը վերաբերի այն ընթացքին զոր Դաշնակցային Գերմանիա պէտք է ընտրէ այս համաձայնագրին նկատմամբ։

Ատընաուըր նախապէս նպաստաւոր կարծիք ունէր, իսկ հիմա սպասողական դիրքի մէջ է։ Կ'ըսուի թէ Արտաքին նա - խարարը անդամակցութեան կողմնակից է, իրեն համար նախ եւ առաջ պէտք է պահպանել արեւմտեան համերաշխու - թիւնը։ Վաղուան վարչապետ՝ Էրհարտին կարծիքը, ցարդ ծանօթ չէ։

Ամէն պարագայի մէջ, Դաշնակցային Հանրապետութեան համար կարեւոր է իրատես կերպով ապահովել գերմանա - կան ներկայութիւնը եւ խուսափիլ որ Գերմանիա խաղի զայ յետադային։

Տին Ռըսք նախքան Պոն երթալը, Սեւ Ծովի ափին պիտի տեսնուի Խրուշչեւի հետ։

ԲԱՆԱԿՈՒՄԻՆ ԲԱՑՈՒՄԸ

ԽՈՒԱԳՈՅՆԸ ԱՏԼԱՆՏԵԱՆԻ ԱՓԻՆ

ՕԼՈՆ (Յառաջ).— Հ. Յ. Դաշնակցու - թեան Նոր Սերունդի բանակումին պաշ - տօնական բացումը տեղի ունեցաւ Օգոս - տոս 6ին։

Բացման այս արարողութեան կը մաս - նակցէին բոլոր բանակողները, երկու հարիւրէ աւելի երիտասարդ - երիտա - սարդուհիներ, բանակումի վարիչները, միւս աշխատանքներուն մասնակցողները, վերջապէս՝ բոլորը։

Առաջին հերթին, ինչպէս աւանդու - թիւն է, պարզուեցան հայկական եւ ֆը - րանսական դրօշակները։ Երկու եռագոյն - ներու բարձրացման հետ՝ բանակողները արտաբուխ պոռթկումով մը յաջորդաբար երգեցին «Մարսէյէզ»ը եւ «Մշակ Բանւոր»ը։ Ապա խօսք առաւ բանակումին ընդհանուր վարիչ՝ ընկ. Նուպար Նիկո - ղոսեան, որ վարակիչ ապրումով մը ան - դրադարձաւ մեր դրօշակին խտացուցած իմաստներուն, թափած արեան, անմեռ յոյսին, տեղծագործ ճիգին եւ այդ ամէ - նուն շնորհիւ ծնունդ առած մեր պատ - մական ու մշակութային արժէքները ընդ - գծելով՝ թելադրեց որ երիտասարդները մտնեն մեր ժողովուրդի ծառայութեան մէջ ու խանդով ու հաւատքով շարունա - կեն ճամբան։

Ընկ. Նուպար հազիւ աւարտած իր խօսքը, տղաքը իրենց պատրաստակամու - թիւնը արտայայտող երգով մը պատաս - խանեցին անոր կոչին, թնդացնելով «Մենք անկեղծ զինուոր ենք»ը։

Խօսք առաւ նոյնպէս Պ. Անապեան, որ պատմելով Հայոց Արշակ Բ. Թագաւորին հետ կապուած հայկական հողի խորհըր - դանշական հէքեաթը ըսաւ.— Ընենք այն - պէս, որ մեր սրբազան դրօշակին հովա - նիին տակ այս պզտիկ հողի կտորը վե - րածուի մեզ թարմացնող, մեզ զօրացնող հայկական հողի մը։

Բացման այս հանդէսը վերջ գտաւ «Մեր Հայրենիք»ով։

ԲԱՆԱԿՈՂ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ Նախագա - հին կինը որ զաւակ կը սպասէր Սեպ - տեմբերին համար, կանխահաս կերպով ծնունդ տուաւ մանչու մը որ շնչառու - թեան դժուարութիւններ ունի։ Երկու քիլօ 100 կրամ կը կշռէ եւ անհրաժեշտ նկատուեցաւ անմիջապէս Պոսթընի մաս - նագիտական մէկ հիւանդանոցը փոխա - դրել ուր նորածինը թթուածինի վրանի մը տակ դրուած է։ Ինչպէս իր նախորդ երկու զաւակներուն համար, այս անգամ ալ, Տիկին Քենըտի սեզարիէնի գործո - ղութեամբ ունեցած է զաւակը։

ՊԱՂՏԱՏԷՆ կը հաղորդեն որ 242 Քիւր - տեր անձնատուր եղած են։

ՀԱՅԻԹԻԻ կառավարութիւնը կը հաս - տատէ թէ ըմբոստներու մէկ մասը ձա - խողութեան մատնուած է։

ՊՈՒԼԿԱՐԻՈՅ Վարչապետը յայտարա - րեց թէ գինի կը ծախեն ամէնուն, նոյն - իսկ Ֆրանսայի, որ տեղական անունի տակ կը ծախէ։ Ֆրանսացին զարմանքով պիտի լսէ թէ պուլկարական գինի սկսած է խմել...։

ՄՈՍԿՈՒԱՅԻ մէջ, Կրոմիքօ եւ Լորտ Հիում խօսակցութիւններ ունեցած են ոչ-յարձակողական դաշինքին շուրջ։ Իսկ Ու. Թան Քոփէնհակըն հասնելով յայ - տարարած է թէ լաւատես մթնոլորտ մը կը տիրէ։

«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԵՐ»Ը

ԳՆԱՀԱՏԵԼԻ ԱՇԽԱՏԱՆՔ ՄԸ

Ինչպէս Ֆրանսական Ձայնասփիւռի տնօրէնութիւնը պաշտօնական նամակով հաղորդած էր Յառաջի խմբագրութեան, անհամ միջադէպէ մը ետք, Օգոստ 7ին կրցանք լսել Ռուբէն Մելիքի եւ Էվ Կոխ - լիքէզի պատրաստած հայկական կէս ժամը։

Յայտագիրը պատրաստուած էր մաս - նաւոր խնամքով եւ նուրբ ճաշակով։ Դժուար աշխատանք է կէս ժամուան մէջ խտացած ձեւով ներկայացնել հայկական մշակոյթի մէկ պատկերը եւ այդ իսկ պատճառաւ, յայտագրին պատասխանա - տուները մասնաւոր գնահատանքի ար - ժանի են։ Ռուբէն Մելիքի «Հայկական Հէքեաթը» (ֆրանսերէն) որ բանաստեղ - ծական նուրբ ոճով կը պատմէ հայկ. ողբերգութիւնը, կը կազմէր յայտագրին հիմը եւ մէջ ընդ մէջ կ'ընդմիջուէր հայ - կական երգերով, պարերով եւ Վարու - ժանէն, Զարենցէն, Իսահակեանէն ու Սայաթ-Նովայէն կտորներով ֆրանսերէ - նի թարգմանուած։

Սերժ Ռեժիանի եւ միւս մեկնաբանուհե - րը զգացումով եւ ապրումով արտասա - նեցին բոլոր քերթուածները։ Լսուեցաւ նաեւ Կ. Ափրիկեան եկեղեցական երա - ժըշտութեան սալին մէկ կարճ մասը։

Որքան փափաքելի պիտի ըլլար որ այս «կէս-ժամը» յաճախ նորոգուէր, լաւա - գոյն առիթը տալով տեղացիներուն ծա - նօթանալու՝ Հայկական Հէքեաթին։

ԹՐՔԱՊԱՏՈՒՄ

ՍՏԵՓԱՆ ԱՐԱԹԵԱՆ ՍՏԱՆՁՆԱԾ Է ՄԶԿԻԹԻՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

Հիւրրիյէթ կը գրէ.—

Հաճը Նիմէթ (Ապլա) որ 32 տարիէ ի վեր վիճակահանութեան տոմս կը ծախէ Էսէնթէփէի մէջ, կը կառուցանէ կեդր. ջեռուցումով 1000 հոգինոց մզկիթ մը։

— Ինչո՞ւ մզկիթ եւ ոչ թէ վարժարան։

— Որովհետեւ կը հաւատամ թէ մըզ - կիթն ալ վարժարանի չափ օգտակար է քաղաքի մը համար։

Նիմէթ Ապլայի այս մզկիթը կը գրաւէ 2800 քառակուսի մեթր տարածութիւն մը թէեւ ներքնապէս արդիական, բայց ար - տաքին տեսքով կը յիշեցնէ ճարտարա - պետ Սինանի Ֆընտըքլըլ Զէլէպի մզկի - թը։ Նոր մզկիթին ճարտարապետն է Հայ մը՝ Ստեփան Արաթեան անունով։

Նիմէթ Ապլայի երբ կը հարցնենք թէ ինչո՞ւ մահմետական աղօթատեղի մը Հայու մը կառուցանել կուտայ, ան հե - տեւեալ կերպով կը բացատրէ.

— Մեր մահմետական ճարտարապետ - ները այդ գործին համար մեծ գումար - ներ պահանջեցին։ Հակառակ անոր որ ըսի թէ բարեսիրական գործ մըն է, կա - րեւորութիւն չտուին. մինչդեռ այս ան - ձը ձրի կը կառուցանէ։

Կ'ենթադրուի թէ մզկիթի շինութիւնը պիտի աւարտի երկու տարիէն եւ պիտի արժէ չորս միլիոն ոսկի։

«Մարմարա» կը գրէ այս առթիւ.—

Պ. Ստեփան Արաթեան ծանօթ է մեր մէջ իբրեւ մասնագէտ ճարտարապետ եւ բազմարեղուն ուսուցիչ։

Պ. Արաթեան իր մասնակցութիւնը բե - րած է համայնքի բազմաթիւ շինութիւն - ներու։ Ան կը կազմէ Ղալաթիոյ եկե - ղեցւոյ շինութեան յանձնախումբին եւ պատրաստած է եկեղեցւոյ ծրագիրները։

ԲԱԿՈՒՆՑԻ ՀԵՏ

(ՄԱՀՈՒԱՆ 25 ԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻՒ)

Կից սենեակում էր աշխատում, «Մաճկալի» խմբագրատանը: Մի պատ էր բաժանում մեզ, մի բարակ միջնորմ. ես «Աւանգարդ»ի գիւղբաժինն էի ղեկավարում, նա՝ «Մաճկալ»ի: Լոյս էին տեսել իր առաջին ակնարկներն ու չքնաղ պատմուածքները եւ միանգամից գերել մեզ, ուստի եւ ակնածանքով էինք խօսում հետը, թէեւ «միջին պաշտօնեայ» էր հաբեւան թերթում:

Յետագայում՝ 1929ին, ինձ տեղափոխեցին պատի միւս կողմը, սկսեցի խմբագրել «Մաճկալ»ը, թէեւ պաշտօնապէս Ե. Զուբարն էր խմբագիրը, իսկ ես տեղակալն էի համարւում:

Ակսելը շարունակում էր վարել թերթի գիւղատնտեսական բաժինը, երկար, կոշտ թղթերի վրայ իր գեղեցիկ ձեռագրով գիւղատնտեսական յօդուածներ էր գրում արագ, անճիգ եւ Ալ. Ստեփանեան ստորագրելով յանձնում էր ինձ:

— Ցրիչին տուր, թող տպարան տանի, ինչի՞ ես ինձ տալիս, — շփոթմունքով բողոքում էի ես:

Դէ՛ ես ինկի կը համարձակուէի՞ նրա մի տառը փոխել. մեծ էր նրա հմայքը:

— Չէ՛, դու մի գիւղացու աչքով մտիկ արա, — պնդում էր նա:

Իրաւունք ունէր. նոր էի եկել գիւղից, վաղուց չէր, որ բաց էի թողել արօրի մաճը: Իսկ նա սիրում ու յարգում էր հողի մարդկանց:

Երբեմն նստում էր դիմացս ու խօսեցնում մեր սարերից, տաւարածների կեանքից: Ու լսում էր թաքուն համակրանքով, եւ ես զգում էի դա:

— Քեզանից հողի հոտն եմ առնում, — մի օր ասաց ինձ կամաց եւ ես թախիծ նկատեցի նրա աչքերում:

Ես ափսոսում էի նրա ոսկի ժամանակը, որ ծախսում էր կիսագրագէտ թղթակցութիւնների վրայ: Խնդրեցի, որ աշխատանքի դայ շաբաթական միայն երկու օր, քանի ժամով: Համաձայնեց դժկամութեամբ:

— Սա էլ փոքր գործ չի, գիւղատնտեսներ չունենք, — պատասխանեց նա:

Արագ ուղղում էր թղթակցութիւնները ու խնդրում խմբագրութեան ոճաբան Աթ. Խնկոյեանին.

— Բաժնի համար մի համով լողունգ հնարիր:

Ու Խնկօ-Ապէրը հնարում էր իւրաքանչիւր բաժնին իր յարմար «ընաբան»ը, որոնցից այս մէկն է մնացել յիշողութեանս մէջ՝ «Կովին տուէք ճակնդեղ, որ ստանաք փթով եղ...»:

Այո՛, թէեւ արդէն կազմաւորուած էր որպէս մեծ գրող, բայց ժամանակ էր գտնում զբաղուելու վիկի, ճակնդեղի, կորնգանի մշակութեան հարցերով, գիւղատնտեսութեան մէջ մշակոյթ մտցնելու հարցերով: Ափսո՜ս, ինձ չվիճակուեց երկար աշխատել այդ հմայիչ մարդու հետ:

«Մաճկալ»ի փոխարէն 1931ին սկսեց հրատարակուել ծաւալով աւելի մեծ՝ « Սոցիալիստական Գիւղատնտեսութիւն » թերթը, որի խմբագրութիւնը տեղաւորուած էր Հողժողկոմատում: Ակսելը արդէն արհեստով գրող էր, բայց կապը չէր կտրում գիւղացիական թերթի հետ. կարծում եմ մեզ այցելում էր այն պատճառով, որ մայրաքաղաքի մէջ գիւղը իր բնութեամբ մենք էինք ներկայացնում:

Ապակէ սրուակի փոխարէն կուլայ էին դրել գրասեղանին, իսկ յետոյ, անյարմար գալով, ջրով լիքը այդ կաւէ ամանը թաքցնում էի սեղանիս տակ, ոտքերիս արանքում:

Ներս էր գալիս ամառուայ շոգին, գրասենեակիս դուռը յետեւից փակում ու թախանձում էր երեխայի անմիջականութեամբ.

— Ինչ կը լինի մի կլկլէն խմիր կարօտս առնեմ... մեր գիւղի կարօտը...

Կուլան գլուխս էի քաշում, կլկլէն խմում, իսկ նա լուռ թախիծով ինձ էր նայում. երեւի այդ պահերին իր սիրած լեռնաշխարհից պոկուած ու հանգամանքների բերումով քաղաք ընկած մի ժայռաբեկոր էի նրա համար...:

— Օխա՜յ... — սրտանց ասում էր նա ու վեր կենում:

Ռուսից վերադառնալուց յետոյ սիրով պատմում էի տեսածս, հաղորդում էի իրեն ստացածս տպաւորութիւնները բնութիւնից եւ, կարծում եմ, դա միակ հոգեկան կապն էր մեր մէջ. իրար հասկանում էինք, որովհետեւ բնութեան սիրահար էր նա, եւ սիրտը գեղջկական կեանքի կարօտով լի:

Մի բուռն ժողովից էր եկել դառնացած. իր «Միրանի փողը» պատմուածքի համար «ձախլիկները» դգել էին եւ այդ գործը ազգայնական յայտարարել. ո՞նց թէ դու երազես վերադառնալ Սասո՞ւն...

Այդ մասին ոչինչ չասաց, ես էլ չուզեցի վէրքը նորոգել:

— Ա՛խ, ուրիշ բան չեմ ուզում, քեզ հետ ձիերից իջնէինք Իշխանասարի անմահական աղբիւրներից մէկի մօտ, ծաղիկների վրայ փռէինք մեր նախունջիներն ու չոքէինք խմէինք քչքչացող զուլալ ջուրը...:

Արցունքներ երեւացին կապոյտ աչքերում: Ես ցնցուած էի. վա՜հ, այսքան էլ կարօ՞տ...:

Երբեմն այնքան յախուռն կերպով էր արտայայտւում հայրենի բնութեան սէրը դէպքերի բերումով մայր բնութիւնից կտրուած եւ քաղաքում ապրող այդ մարդու մէջ, որ նայելով նրան՝ զգացւում էի խորապէս:

Իր «Մթնաձորը» ուռա - յեղափոխականներից ոմանց մէջ այն մակերեսային կարծիքն էր ստեղծել, որ Ակսելը անցնող հնի մասին մորմոքով է խօսում: Մենք, նրան մօտ կանգնած մարդիկս, սակայն, տեսնում էինք, որ նորը, յեղափոխութիւնը նա ընկալում է ոգեւորութեամբ:

Մի անգամ հարցրեց.

— Իսկի չութի (արօր) մաճ բռնած կա՞ս...:

— Ինչպէս չէ, — պատասխանեցի. — մենք մի հին չութ ունէինք, նրանով շատ եմ վար արել:

Լռեց, աչքերը կկոցեց ու մի տեսակ վերացաւ, կարծես գնաց Զանգեզուրի լեռնալանջերը զարդարող կարկատահանման հողերը, որոնք միայն արօրով էին հերկւում:

— Քխ՛կ... քխ՛կ... ոնց որ բուի կըռինչ... մենաւո՜ր... չարագուշա՜կ...:

— Ի՞նչը, — հարցնում եմ ես:

— Մենակ մարդը... անտառի եզրին իր հողակտորը արօրով վարելիս... Բաբու չի, ինչ է, կանչում է՝ «քխ՛կ, քխ՛կ, այ գահրումա՜ր...»:

Նա ողջունեց նորի մուտքը գիւղ, ոգեւորուեց գիւղի մեծ յեղաշրջմամբ: Ես մասնակցել էի Փոքր Շարիարի կոլտնտեսութեան կազմակերպմանն ու նկարագրել, թէ ինչպէս այնտեղ հայ, ռուս, ասորի, հրեայ գիւղացիները միասին են հերկում նոր ստեղծուած «Ինտերնացիոնալ» կոլտնտեսութեան հողերը: Ակսելը ոգեւորուել էր:

— Ակնարկդ դրի դասագրքիս մէջ... Ա՛յ, հիանալի օրինակ, չորս ազգութեան պատկանող մարդիկ միասին հող են մշակում...

Ակսելը ազգերի համերաշխութեան ջերմ ջատագով էր, որ երեւում է նաեւ նրա « Եղբայրութեան ընկուզենիները » հիանալի գործից:

Նա նաեւ մեծ մարդասէր էր: Յիշում եմ, հանդիպեց Նալբանդեան փողոցում, կանգնեցրեց: Երեւումէկ թուականի գարնանն էր:

— Այ տղայ, փոքր եղբայրս գիշերը չքնեց, գիրքդ էր կարդում: Ասի տեսնեմ ինչի է տարուել երեխան, ես էլ սկսեցի՝ գնա՜ց: Էգուց կը վերջացնեմ: Լաւ է, սրտով ես գրել, բայց...

Խօսքն իմ «Կրակէ օղակի մէջ» վիպակի մասին էր:

Շփոթուած կանգնել եմ առաջը, սպասում եմ դիտողութիւններին:

Ժպտաց:

— Այ տղայ, քո հերոս Ծուտիկը էն զինուորին ինչի՞ է սպանում:

— Դէ զինուորը մաուզերիստների զօրքից էր, թալանել էր մեր գիւղացիներից մէկի մեղուանոցը, — փորձեցի արդարանալ ես:

Ներողամտաբար ժպտաց:

— Գուցէ իրօք այդպիսի դէպք տասնինը թուին եղել է ձեր գիւղում, բայց գրելու կարիք չկայ:

— Ինչո՞ւ, — զարմացայ ես, քանի որ իմ մէջ թարմ էին քաղաքացիական կռիւների տպաւորութիւնները:

— Այ տղայ, — ասաց — էն զինուորը գուցէ մի աղքատ կնոջ միհնուճար որդին է, դու ինչո՞ւ ես սիրտդ հովացնելով նկարագրում նրա սպանութիւնը... էն էլ մի շրջանակ մեղրի համար...:

Պղտորուեցի, մտածմունքի մէջ ընկայ: Եւ երկրորդ վերամշակուած հրատարակութեան մէջ, որ 1936ին լոյս տեսաւ «Քարանձաւի բնակիչները» խորագրով, այդ եղեռնը արդէն տեղի չի ունենում: Անկերեւաբար ես ազդուած էի ակսելեան մարդասիրութիւնից:

ՎԱԽԹԱՆԳ ԱՆԱՆԵԱՆ

(Մնացեալը յաջորդով)

ՀԱՅ ԱՐԻՆԵՐԸ ՀԱՍԱՆ ՄԱՐԱԹՈՆ

ՃԷՄՊՈՐԻԻՆ ԲԱՑՈՒՄԸ

ԱԹԷՆՔ (Յատուկ). — Ցանաստանի ճէմպորիին մասնակցող հայկ. խումբը Յուլիս 29ի երեկոյեան հասաւ յունական նաւահանգիստը՝ Բաթրաս, ուր կը սպասէին հայ գաղութին անդամները, բարի գալուստ մաղթելու հայ Արիներուն: Մեր տղաքը հիւրասիրուեցան, եւ պտըտեցան քաղաքը, վայելելով մեր հայրենակիցներուն սիրալիր ընդունելութիւնը:

Նոյն երեկոյեան հասան Աթէնէ կայարանը, ուր կը սպասէին յունական սկաուտներու ընդունելութեան խումբը, հայկական գաղութի եւ կազմակերպութեանց ներկայացուցիչները, ինչպէս նաեւ հայ սկաուտներ եւ բարեկամներ: Բոլորն ալ ուրախ էին ընդունելու հայկական պատուիրակութիւնը, եւ խանդավառ ցոյցերով ողջագուրեցին մեր տղաքը: Աթէնքի մէջ գիշերեցին հայ Արիները եւ յաջորդ առաւօտ առաջնորդութեամբ ընդհ. պետ Բժ. Գ. Մեծատուրեանի, մտան բանակավայր:

14.000 սկաուտներ 86 երկիրներէ, հաւաքուած են հսկայական բանակավայրի մը մէջ: Զարդարուն եւ գունաւոր ամէն լեզու կը լսուի: Մանուկներու միջազգային քաղաք մըն է կազմուած:

Ճէմպորիին պաշտօնական բացումը կատարուեցաւ Օգոստոս 1ին, գահաժառանգ Կոնստանդին իշխանին կողմէ, ներկայութեամբ հազարաւոր այցելուներու, որոնց մէջ կային շատ մը Հայեր:

Հայկական բանակավայրը կազմուեցաւ եւ մեր տղաքը շինեցին պզտիկ Հայաստան մը, զարդարուած հայկական եւ սկաուտական դրօշակներով:

Օգոստոս 2ին, գահաժառանգ իշխանը ընդունեցաւ խումբերու պետերը, մասնաւոր հետաքրքրութեամբ տեղեկութիւն-

ՇԱՌԼ ՊՕՏԼԷՐ

ԵՒ ԻՐ

ԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԴՐԱԽՏՆԵՐԸ

Իր բարեկամին՝ Շանֆլէօրիի հետ կը հիմնէ թերթ մը — «Հանրային Փրկութիւնը», որ միայն երկու թիւ լոյս կ'ըլլէ: Էնոր նահանգին մէջ թերթի մը խմբագիր կ'ըլլայ: Բայց իր հակասութիւնները կը գայթակղեցնեն իր պաշտօնակիցները եւ աշխատակցութիւնը կարճ կը տեւէ: Դեկտեմբեր 2ի պետական հարուածը, որ իշխանութեան գլուխը կը բերէ Նափոլէոն Գ.ը, վերջ պիտի դնէ զօրագրեալ լրագրողի իր փորձերուն: «Պոնափարթ մը ե՛ւս: Ի՜նչ ամօթ» — կը նշէ իր գրպանի տետրակին մէջ: Ըստ իր բացատրութեան՝ քաղաքականութենէն ընդմիշտ հեռացած է:

Միշտ իր բարեկամ Շանֆլէօրի հետ ի զուր կը փորձէ ձեռնարկել զուտ արուեստագիտական կամ գրական հանդէսներու հրատարակութեան — «Թատերական Շաբաթը», «Փիլիսոփայ Բուն». հազիւ քանի մը շաբթուան կեանք կ'ունենան, եւ կամ ծրագրի վիճակէն դուրս չեն ելլեր: Ոչ ոք կ'ուզէ հրատարակել իր քերթուածները, որոնք չուարումի կը մատնեն եւ կամ կը գայթակղեցնեն: Զանոնք հրատարակուած տեսնելու եւ քչիկ մը դրամ շահելու համար, գրածները կը յանձնէ քանի մը աննշան թերթերու՝ լոկ «սինակի ծակ» գոցելու ակնկալութեամբ: Այսպէս Մարդասպանին Գինին լոյս կը տեսնէ «Գինիի Վաճառականնե-րու Արձագանգ»ին, իսկ Սիրահարներուն մահը՝ « Խորհրդարանի Տեղեկաբեր »ին մէջ: Պարտատէրերուն ձեռքէն օձիքը ազատելու համար ս տիպուած է անվերջ բնակարան փոխել: 1852ի եւ 1855ի միջեւ քաներկու անգամ կահաւորուած սենեակ կամ պանդոկ կը փոխէ: Այլեւս չի կրնար եւ ոչ իսկ ապաւինիլ, իր մօրը նիւթական կամ բարոյական օժանդակութեան. մայրը զոր, հակառակ իրեն հանդէպ կատարած «դաւաճանութեան», պիտի ուզէր տակաւին սիրել:

×

Ժաննի ներկայութիւնն ալ հետզհետէ աւելի անտանելի կը դառնայ: «Սեւ Վէնիւս»ը, որ տարիներու ընթացքին հասունցած է, ալքոլամոլ սեւամորթուհի մըն է միայն: Բանաստեղծին խիղճը չի ներեր սակայն, որ կապը խզէ իր ընկերուհիին հետ: Տասը տարուան կենակցութենէ մը ետք, կը մտածէ թէ ա՛լ այդ իրաւունքը չունի: Սովորութեան կապերն ալ, թերեւս, կարծածէն աւելի արդելք կը հանդիսանան բաժանման՝ հակառակ իր ընկերուհիին անդարմանելի գռեհկութեան եւ ամէն կարգի դաւաճանութեանց:

Ժաննի մէջ ամէնէն աւելի զինք ջղայնացնող կէտերէն մէկն այն է մանաւանդ, որ սեւամորթուհին իր վրայ չի հիանար, նոյնիսկ կրակը կը նետէ մէկ քանին այն հնչեակներէն, զորս ոչ ոք կ'ուզէ հրատարակել, եւ որոնցմով չի կրնար նոյնիսկ գնել փափաքած զարդարանքները: Այո՛, Ժաննն ալ զայն կը նկատէ վրիպած մը, եւ մտածածն ալ անխնայ կ'ըսէ անոր, քանի որ ալքոլը, դէմքին նման՝ անոր սիրտն ալ տգեղցուցած է: Ծածկամիտ եւ ճարտար չարութեամբ լեցուն կին մըն է: Կը թունաւորէ կատուն, որուն խաղերը կը զուարճեցնէին ու կը ներշնչէին Պօտլէրը: Բայց փոխարէնը՝ տան մէջ ապաստան կուտայ շուներու, որովհետեւ գիտէ թէ բանաստեղծին համար անտանելի են անոնք: Երբեմն, երկուքն ալ քիչ մը շատ գինի կամ թմրեցուցիչ խմելէ ետք՝ բուռն վէճեր կը ծագին:

— Սատանայի ծնունդ ես... ես զքեզ պիտի մեռցնե՛մ, կը պոռայ Պօտլէր իրիկուն մը:

Զարմանալին այն է, որ սկսած էր տեղի տալ խելացնորումին. — ջահ մը խլելով՝ բազուկը բարձրացուցած եւ ուժգին զարկած էր: Բարձր աթոռով կը ծածկուի:

Այս դժոխքին մէջ միակ մխիթարութիւն մը — Պօտլէր վերջապէս գտած է գաղափարակից եղբայր մը: Բայց այս վերջինը Ֆրանսացի չէ եւ արդէն հինգ տարի կ'ընէ, որ մեռած է: «Րըվիւ տը տէօ Մոնտ»ի մէջ հրատարակուած թարգմանութի մը մէջ է, որ Պօտլէր կարդացեր քաղուածքներ կարդացած էր Էտկար Փօյի պատմուածքներէն: Իր իսկ բացատրութեամբ՝ «տարօրինակ ցնցում մը» զգացած էր անոնց ընթերցումէն: Անա վերջապէ՛ս այնքան փնտռած եղբայրը: Փօյի կեանքը աններեւակայելի նմանութիւններ կը ներկայացնէ իր կեանքին հետ.— թշուառութիւնը, ալքոլը... եւ նաեւ՝ հանճարը, կը մտածէ Պօտլէր:

×

Ի չգոյէ ի'ր հանճարը պարտադրելու կարելիութեան, փայլուն կերպով պիտի օգտագործէ բանաստեղծութեան ու գեղարուեստական քննադատութեան մէջ իր երկրորդ եսին հանճարը, որուն մարմնացումն է ամերիկացի գրագէտը՝ Էտկար Փօ:

Կրկին կը ձեռնարկէ անգլերէն լեզուն սորվելու, զոր բաւական լաւ գիտէր արդէն մանկութենէն իսկ, եւ ... տենօք. եւ զաղիր ու ցուրտ սենեակներու մէջ, Ժանն Տիւվալի կծու յանդիմանութեանց տարափին տակ, ամբողջութեամբ կը թարգմանէ Էտկար Փօյի գործերը:

(Շար. - 6)

ԱՖՂԱՆԻՍՏԱՆԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Տարածութիւն՝ 250·966 քառակուսի մղոն, բնակչութիւն 13 միլիոն 800·000, — բիւշթու –60·5 առ հարիւր, Տաճիկ 30·7 առ հարիւր, Իւզպէք 5 առ հարիւր, Խառ–մոնկոլ եւ այլք 3·8 առ հարիւր: Խտու–թիւն 55·0 խառքանչիւր քառ. մղոնի վրայ:

Կառավարիչ՝ Մուհամէտ Զահիր Շահ:
Վարչապետ՝ Ալի Մուհամէտ Տաուտ:
Գլխաւոր քաղաքներ՝ Քապուլ (310 հազար) մայրաքաղաք, Գանտահար (195 հազար), — առեւտրական կեդրոն, — Հերաթ՝ (150·000), երկրագործական կեդրոն:
Դրամանիշ՝ աֆղանի:
Լեզուներ՝ բաշթօ — պաշտօնական — պարսկերէն: Կրօնք՝ մահմետական, — սիւննի 90 առ հարիւր, շիի՝ 10 առ հարիւր:

ԴԻՐՔԸ ԱՇԽԱՐՀԻ ՄԷՋ

Աֆղանիստան կը հետեւի չէզոք քաղաքականութեան Արեւելք – Արեւմուտք մրցակցութեան մէջ եւ այս քաղաքակա–նութիւնը կը հիմնուի հետեւեալ ազդակներուն վրայ.— Աֆղանիստան բազմա–թիւ տարիներէ ի վեր կռուախնձոր դարձած է Անգլիոյ եւ Ռուսիոյ միջեւ, անոր աշխարհագրական դիրքը, Խորհ. Միու–թեան հետ ունեցած 1250 մղոն սահմա–նը, Փաքիստանի հետ ունեցած սահմա–նային հարցերը: Ասիոյ միւս թերաճ եր–կիրներուն նման կը ստանայ ամերիկեան եւ սովետական օժանդակութիւն իր տըն–տեսական զարգացման համար: Վերջին գնահատումներու համաձայն, Աֆղանիս–տան մինչեւ հաշուով 161 միլիոն տոլարի օժանդակութիւն ստացած է (փոխառու–թիւն եւ վարկ) Խորհ. Միութենէն, ներ–առեալ 25 միլիոն զինուորական օժանդա–կութիւնը, Մ. Նահանգներու 59 միլիոն օժանդակութեան դէմ (փոխառութիւն եւ վարկ):

Ժողովուրդին մեծագոյն դժուարու–թիւններէն մէկն է ճամբաներու չգոյու–թիւնը: Կան քանի մը գործածելի ջուրի ճամբաներ: 1958ին Փաքիստան եւ Աֆ–ղանիստան ստորագրեցին տարանցիկի համաձայնագիր մը: Փաքիստանի տըր–ուած ամերիկեան օժանդակութիւն մը կարելի պիտի դարձնէ ճամբու մը շինու–թիւնը մինչեւ սահման: Խորհ. Միութիւ–նը օգտագործեց 1950ի պայքարը, Աֆ–ղանիստանի հետ կնքուելիք երկար շըր–ջանի պայմանագրութեան մը առընչու–թեամբ, եւ այդ ժամանակներէն սկսաւ աւելի ճիգ թափել թափանցելու երկրէն ներս: Աֆղանիստան ստացած է 70 մի–լիոն տոլարի զինուորական օժանդակու–թիւն, ինչպէս նաեւ 60 ռազմական ինք–նաթիռ եւ 12 ռմբակոծիչ օդանաւ:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԵՒ ՊԵՏՈՒԹԻՒՆ

Աֆղանիստան իր անկախութիւնը ստա–ցաւ միայն 1747ին: Նախապէս եղած է արաբ իշխանութեան ենթակայ կամ բաժ–նուած է Հնդկաստանի, Պարսկաստանի եւ Իւզպէքներու միջեւ:

1880ին Մեծն Բրիտանիա ընդունեցաւ Ալտուլ Ռահման Խանը իբրեւ էմիր: 1919 Օգոստոս 8ին ստորագրուեցաւ դաշինք մը Աֆղանիստանի եւ Մեծն Բրիտանիոյ միջեւ, որուն համաձայն Աֆղանիստան ազատ կը կացուցուէր անգլիական հա–կակշիռէն: Համաշխարհային Բ. պատե–րազմին Աֆղանիստան փարեցաւ չէզո–քութեան, ապա՝ 1946ին ընդունուեցաւ ՄԱԿի մէջ:

1932ի Սահմանադրութեան յայտարա–րութեամբ իշխանութիւնը բաժնուած է ընդմէջ Թագաւորին եւ Խորհրդարանին, որ ունի Ծերակոյտ մը՝ 50 անդամներէ բաղկացեալ, նշանակուած՝ Թագաւորին կողմէ ցկեանս, և Ազգային Ժողով մը 171 ընտրուած անդամներով: Գործադիր հե–ղինակութիւնը կը կիրարկուի Թագաւո–րին եւ դահլիճին կողմէ, գլխաւորու–թեամբ վարչապետին:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿ

Տարածութեան միայն հինգ առ հա–րիւրը մշակուած է, երկրին մեծագոյն մասը ըլլալով լեռնային եւ ժայռոտ: Երկրագործութիւնը սահմանափակուած է բերրի հովիտներուն եւ դաշտերուն մէջ: Ընդհանրապէս տարեկան երկու անգամ հունձք կը հասնի: Կարեւոր ար–տադրութիւնները կը կազմեն պտուղնե–րը, ընկոյզը, լուբիան, արմտիքը, ծխա–խոտը, մետաքսը եւ բանջարեղէնները: Ցորենը արտածելի ապրանք է: Իսկ ար–ջառը կ՚ապահովէ միսը եւ զգեստեղէնը:

Ճարտարարուեստը իր նախնականու–թեամբ կը բնորոշուի: Կը պատրաստուին մետաքսեայ եւ բրդեղէն զգեստներ, օ–ճառ, լուցկի, ճակնդեղ, շաքար եւ կահ–կարասի:

Արտածումի գլխաւոր ապրիւր են կա–շին, բամպակը, բուրդը, կապերտը, հա–մեմներն ու չորցուած պտուղները: Վա–ճառականութիւնը կը կատարուի ընդ–հանրապէս Փաքիստանի մէջէն: Բամպա–կը եւ բուրդը կը գնէ Խորհ. Միութիւնը: Առեւտուրը 50 առ հարիւրով Խորհ. Մի–ութեան հետ է: Աֆղանիստան առեւտրա–կան կապեր ունի նաեւ Հնդկաստանի, Միացեալ Նահանգներու, Մեծն Բրիտա–նիոյ եւ Լեհաստանի հետ:

Աֆղանիստան երկաթուղի չունի, ո՛չ ալ նաւարկելի ջրանցքներ: Ուղտերը եւ ձիերը կը գործածուին իբրեւ փոխադրու–թեան միջոց ընիկներուն կողմէ:

Հանքային եւ անտառային հարստու–թիւնները կը մնան չշահագործուած: Կան Պերիլիումի, Քումիթի, հանքածուխի, պղինձի, ոսկիի, երկաթի, քարիւղի, ար–ծաթի հանքեր:

ԲՆՈՒԹԻՒՆԸ

Աֆղանիստան, գրեթէ Թեքսաս նա–հանգին մեծութեամբ, արեւելքէն արեւ–մուտք բաժնուած է Հիմալայեան, Հին–տու քուշ լեռնաշղթայով: Բացի հարաւ–արեւմտեան շրջանէն, երկիրը ծածկուած է բարձր, ձիւնածածուկ լեռներով եւ խոր ձորերով:

ՀԱՅԱՍՏԱՆ

Ց. ԶԱՐՈԲԵԱՆԻ ՃԱՌԸ

«Սով. Հայաստան» Յուլիս 23ի թիւով հրատարակած է Հայաստանի համայնա–վար կուսակցութեան կեդրոնական կոմի–տէի առաջին քարտուղար՝ Ց. Զարոբեա–նի մէկ ճառը, որ նախապէս լոյս տեսած էր «Փրաւտա»յի Յուլիս 22ի թիւին մէջ:

Հայաստանի, ինչպէս Խորհ. Միու–թեան բոլոր շրջաններուն մէջ տարիներէ ի վեր կը գործեն կուսակցական – պետա–կան վերահսկողութեան կոմիտէներ, ո–րոնց թիւը Հայաստանի մէջ 35 է: Այս կոմիտէներուն նպատակն է հսկել գոր–ծարաններու, կոլտնտեսութիւններու աշ–խատանքները եւ ցոյց տալ թերութիւն–ները, յափշտակութեան երեւոյթները, եւայլն:

Վերահսկողութեան կոմիտէներու «ըս–տուգումները պարզեցին, որ լուրջ թե–րութիւններ կան ցանքի, բերքահաւաքի գործին մէջ», յայտարարած է Ց. Զա–րոբեան:

Միեւնոյն ատեն լուրջ թերութիւններ գտնուած են երկաթուղիներով ապրանք–ներու փոխադրութեան աշխատանքներուն մէջ: «Առանձնապէս վատ վիճակումն էր հանքային պարարտանիւթերի, շինանիւ–թերի եւ որոշ այլ բեռների փոխադրման գործը»:

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Կեդրոնական Վիճակագրական Վար–չութիւնը կազմած է այս տարուան ա–ռաջին վեցամսեայի տնտեսական վիճա–կագրութիւնը:

Արդիւնաբերութեան արտադրութիւնը կատարուած է 102,8 տոկոսով եւ ան–ցեալ տարուան առաջին վեցամսեային համեմատութեամբ՝ 10,3 տոկոսով աւե–լի: Այսուհանդերձ, թերակատարուած են պղինձի, լուսաքուղի, երկաթակաղմ կրազիւսի, հրուշակեղէնի, ձէթի ար–տադրութեան կիսամեայ ծրագիրը են.:

Գիւղատնտեսական բոլոր մշակութիւն–ներու ցանքի տարածութիւնը եղած է 4·127·000 հեկտար, անցեալ տարուան բաղդատմամբ նուազած է 202·000 հեկ–տարով: Այս երեւոյթը կը բացատրեն կլիմայական աննպաստ պայմաններով:

Եղջերաւոր անասուններու թիւը աւել–ցած է 24·000 ով: Կովերունը՝ 4,900: Միսի արտադրութիւնը աւելցած է 6 տոկոս, կաթին եւ հաւկիթինը՝ 8 եւ բուրդինը՝ 9 տոկոս:

Վերջին կիսամեակին բանուորներուն եւ պաշտօնեաներուն թիւը եղած է 525 հազար, անցեալ տարուան բաղդատմամբ աւելցած է 43·000ով:

Հայաստանի բնակչութեան թիւը, նախ–նական տուեալներով, առաջին կիսամ–եակին բազմացած է 35·000ով եւ 1963 Յուլիս 1ին կազմած՝ աւելի քան 2 մի–լիոն 42·000:

նը ուղեց հայ Արիներու մասին, եւ Բժ. Տ. Մեծատուրեանին յայտնեց իր ջերմ համակրանքը հայկական սկաուտական շարժումին: Յառաջիկայ շաբթուան ըն–թացքին հրաւիրած է ամէն ազգի պզտիկ սկաուտ մը, որոնց մէջ կայ նաեւ հայ Արի մը:

Զանազան երկիրներու պատուիրակու–թեանց մէջ կան շատ մը հայ սկաուտներ Լիբանանէն, Սուրիայէն, Կիպրոսէն, Իս–րայէլէն եւ Յունաստանէն: Բոլորն ալ լաւ կազմակերպուած, համակրելի եւ սկաուտական ոգիով օժտուած պետեր եւ սկաուտներ: Շատ սիրալիր յարաբերու–թիւն ստեղծուեցաւ հայ Արիներուն հետ:

Ուրբաթ երեկոյ Լիբանանի պատուի–րակութեան մէջ գտնուող հայկ. սկաու–տական խումբը բանակումի կրակ մը պատրաստած էր, ի պատիւ հայ Արինե–րու Միութեան ընդհանուր պետին, ո–րու ընթացքին խօսեցան պետերը եւ սկաուտները երգեցին ու պարեցին:

Յառաջիկայ շաբթուան ընթացքին պի–տի հաւաքուին դարձեալ Ճէմպորիին մէջ գտնուող բոլոր հայ սկաուտները: Այս հաւաքոյթը կը խոստանայ շատ յաջող եւ օգտակար ըլլալ:

Երեքշաբթի օր Յունաստանի Թագաւո–րը պիտի այցելէ Ճէմպորին, եւ յաջորդ օրը իր պալատին մէջ պիտի ընդունի պատուիրակութեանց պետերը:

Իսկ այսօր, կիրակի, Աթէնքի հայ գա–ղութը պիտի այցելէ հայկական բանա–կավայրը:

Ճէմպորին լաւ սկսաւ, կազմակերպու–թիւնը լաւ է, սնունդը լաւ, օդը տաք եւ պայծառ, վստահ ենք թէ բոլոր տղաքն ալ ուրախ են եւ երջանիկ:

ՀԱՅ ԱՐԻ

«ՅԱՌԱՋ»Ի ԹԵՐԹՕՆԸ (200)

ԵՐԼՏՐՋԻ ՊՈՄՊԱՆ

ՀԱԶԱՐ ԻՆԸ ՀԱՐԻՒՐ ՁՈՐՍ

— Խնդիրը կը փոխուի ուրեմն, յարեց խորհրդականներէն մէկը, քանի որ կայ–սերական իրատէ մը կայ այդ մասին, ա–մէնէն լաւ է այլեւս տոր հակառակը ըըն–դել. ի՞նչ կը հրամայէ Վեհափառը:
— Մահուան դատապարտել բանտար–կուածներուն մեծագոյն մասը, պատաս–խանեց Նախագահը:
— Իսկ փախստականնե՞րը, հարցուց Նէյմէթուլլահ էֆէնտին:
— Բոլո՛րը, բոլո՛րը դատապարտել կախաղանի, պատասխանեց Նախագահը:
Սակայն, եղան մէկ քանի անդամներ, որոնք բաւարար չէին նկատեր Նախագա–հին այս բացատրութիւնները, եւ մինչեւ վերջը կը պնդէին իրենց կարծիքին վը–րայ. ծիծաղելի է, կ՚ըսէին ատոնք, հա–սարակ խոհարարի մը կամ միամիտ ար–հեստաւորի մը վերագրել, անոր կարո–ղութենէն ու ընդունակութենէն վեր գոր–ծեր, որոնք կը վերաբերին միայն մտա–ւորականներու, մասնաւորապէս գիտուննե–րու, եւայլն:
Ի վերջոյ, չորս ժամ անընդհատ վիճա–բանութենէ ետք, հազիւ կարելի եղաւ մեծամասնութիւն մը գոյացնել, Ապտիւլ Համիտի Վեհագոյն (՟) կամքին համա–պատասխան դատապարտութիւններ ար–ձակելու համար:

ԺԷ.

Երլտըզի բարձրագոյն Քննիչ Յանձնա–ժողովին ու Եղեռնագատ Ատեանի հե–տապնդած ընթացքին միջեւ ներքին, գաղտնի կապակցութիւն մը կար, ինչպէս որ յայտնուեցաւ վերջին խորհրդակցու–թեանց միջոցին:

Այս կապակցութեան գոյութեան դրա–կան ապացոյցը տուած ըլլալու համար, Եղեռնագատ Ատեանի վճիռներէն ետքը, որոնց տեղեկացան արդէն մեր ընթեր–ցողները, չահեկան կը գտնենք այս էջե–րուն մէջ զետեղել նաեւ Երլտըզի Յանձ–նաժողովին երակացութիւնները, որոնց վրայ հիմնուած էր արդէն Ընդհանուր Դատախազ Նէճմէտտին մոլլա պէյի ճա–ռը:

Ահաւասիկ այդ եզրակացութեանց ման–րամասնութիւնները կարգով.—

1. Քրիստափոր Միքայէլեան (վախ–ճանեալ), Պաքուցի Հայ մը, ռուս կա–ռավարութենէն աքսորուած, ծանօթ՝ իբրեւ հիմնադիր «Դրօշակ» թերթին, Ժընեւի մէջ, համանուն հայ յեղափոխա–կան կոմիտէին օրկանը. ինք է որ Սա–մուէլ Ֆայն ծածկանունին տակ, Պոլսոյ եղեռնական ձեռնարկներուն ծրագիրը յղացած եւ պատրաստութիւնները ղեկա–վարած է:

2. Կոստանդին Գապուլեան կամ Տաւ–րոսեան (փախստական) բնիկ Պաքուցի Հայերէն, այդ քաղաքին մէջ բանտէն փախած, հայ յեղափոխական կոմիտէին մէջ ճանչցուած Սաֆօ անունով, յանցա–պարտ է, որովհետեւ ինք է որ Լիփա Րիփս կեղծանունին տակ, յղացած, ու–սումնասիրած եւ կազմակերպած է Կ. Պոլսոյ եղեռնական ձեռնարկներուն ծրա–գիրը, իր բոլոր մանրամասնութեանց մէջ պատրաստած եւ ի գործ դրած է վերջին 8 Յուլիսի մահափորձը, մասնաւորապէս վարելով Կ. Պոլսոյ կոմիտէի անդամնե–րուն բոլոր նիստերը, երկու անգամ ներ–կայ գտնուելով Սէլամլըքի արարողու–թեան, օտարականներուն վերապահուած տաղաւարին մէջ. եւ տասներկու անգամ կառքով հոն երթալով, հանդէսին ամե–նամանր պարագաներն ուսումնասիրելու համար. երթալով Սոֆիա, ներկայ ըլլա–լու համար ռումբեր նետելու փորձե–րուն. յետոյ այդ դրութիւնը մէկդի ձը–գելով, որդեգրած է կառքի մը մէջ զե–տեղուած դժոխային մեքենայի մը գոր–ծածութիւնը. գացած է Վիէննա ինք ան–ձամբ գնելու համար այդ մասնաւոր կառքը, շինել տուած է երկաթէ արկղը, որ իր պատրաստած պայթուցիկին յատ–կացուած էր. յետոյ պայթեցնել տուած է դժոխային մեքենան յանցապարտ Ռու–պինա Ֆայնի հետ:

Եւ այս ոճիրները նախատեսուած են Պատժական Օրէնքի 55րդ յօդուածով եւ 58րդ յօդուածին երկրորդ յաւելուածին առաջին հատուածովը:

ՍՄԲԱՏ ԲԻՒՐԱՏ

(Շար.)

ԿԱՐԺԷ ԳԻՏՆԱԼ

Ըստ կարգ մը հաշիւներու, եթէ 30 լե–զուներու ծանօթ բազմալեզուագէտ քի–միագէտ մը, Յունուար մէկին սկսի կար–դալ քիմիագիտութեան վերաբերեալ գիր–քերը, աշխատելով շաբաթական 40 ժամ, ժամը 4 գիրքեր կարդալով, ան մէկ տարուան ընթացքին պիտի յաջողի կար–դալ հրատարակուած աշխատութիւննե–րուն հազիւ տասաներորդ մասը:

ՓՈԽԱՆ ԾԱՂԿԵՊՍԱԿԻ

Տէր եւ Տիկին Անուշաւան Շըռիկեան, Տիկին Աննիկ Փափազեանի կսկծալի մահուան առթիւ 200 Ֆր. կը նուիրեն Մշա-կոյթի Տան:

(Ստանալ «Յառաջ»էն):

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Պ. Արամ – Ֆիլիփ Սէմէրճեան, Այրի Տիկին Բ. Պախթիարեան, Տէր եւ Տիկին Յ. Տամլամեան եւ զաւակները, Օր. Ս. Պախթիարեան, իրենց շնորհակալութիւնները կը յայտնեն ամէն անոնց որոնք անձամբ, նամակով կամ նուիրատուու-թեամբ մասնակցեցան իրենց սիրելի մօր, զաւկին եւ քրոջ՝

ԱՅՐԻ ՏԻԿԻՆ ՅԱԿՈԲ ՍԷՄԷՐՃԵԱՆԻ (ՖԷՊԻՒՍ)

(Ծնեալ Ալիս Պախթիարեան)

մահուան սուգին:

×

Այրի Տիկին Փարիս Սէյխեան, Այրի Տիկին Լօժէնի Սէյխեան, Այրի Տիկին Շնորհիկ Փափազեան եւ ընտանեկան պարագաները շնորհակալութիւն կը յայտնեն Կապ. Խաչի Շաւիլի մասնաճիւղին եւ Հ. Յ. Դ. Նոր Սերունդի Շաւիլի մասնաճիւղին եւ բոլոր անոնց որոնք «Յառաջ»ի միջոցաւ եւ անձամբ կամ նամակով ցաւակցութիւն յայտնեցին իրենց զաւկին, ամուսնոյն եւ եղբօր՝

ՄԻՆԱՍ ՍԷՅԽՍԵԱՆԻ

յանկարծական մահուան առթիւ:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

ԿԱՌՏԱՆ.— Այրի Տիկին Նաւոյեան եւ զաւակները կը ծանուցանեն թէ հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի այս երկուշաբթի օր (Օգոստ. 12) Կառտանի եկեղեցւոյ մէջ իրենց ամուսնոյն եւ հօր՝

ԱՐԱՄ ՆԱՒՈՅԵԱՆԻ

մահուան տարելիցին առթիւ:

Կը պատարագէ Գերապայծառ Յովհ. Ծ. Վ. Զուհաճեան:

Կը հրաւիրուին ողբացեալին յիշատակը յարգողները:

ՄԱՐՍԷՅԼԻ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

Շնորհակալութեամբ ստացած է Սամուէլեան – Թարթաքեան ամուսնութեան առթիւ, Տիկին Տէլի–Պօյաճեանէ 50 Ֆր. եկեղեցւոյ պայծառութեան:

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Հ. Բ. Ը. Միութեան Տիկնանց յանձնախումբը կը խնդրէ կազմակերպութիւններէն նկատի ունենալ հետեւեալ թուականները.—

ՀՈԿՏԵՄԲԵՐ 1, Երեքշաբթի երեկոյ Տիկնանց յանձնախումբի կազմութեան Գ. տարեդարձին առթիւ գեղարուեստական երեկոյթ:

ՀՈԿՏԵՄԲԵՐ 19, ցուցահանդէս Հայ արուեստագէտներու նկարիչ, արձանագործ եւ փորագրիչներու գործերուն:

Հայկական Թանգարանը, 52 Ավընիւ Ֆոշ, (Փարիզ 16):

ԴԵԿՏԵՄԲԵՐ 7, 8, 9, 10, «Բարենպատակ վաճառք»:

Յառաջիկային պիտի տրուին մանրամասնութիւններ:

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

ORIENT

Եռամսեայ պարբերական ամբողջովին նուիրուած Միջին Արեւելքի երկիրներու անցուդարձին:

Բ. եռամսեայ 1963 — թիւ 26

Շահեկան բովանդակութիւն

114, Champs-Elysées, PARIS

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

ԼԻՈՆ.— Ֆր. Կապ. Խաչի Օրը կը տօնուի մեծ պատրաստութեամբ, 27 Հոկտ. Մոլիէրէի չքեղ սրահին մէջ:

×

Փարիզահայ Տիկնանց Միութեան յիսնամեայ յոբելեանը կը տօնուի Հոկտեմբեր 13ին, Սալ տը լա Շիմի:

Շ. ՄԻՍԱՔԵԱՆ

Օրեր եւ Ժամեր

ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ ՆԻՍԻ ՄԷՋ

ՀԵՐՈՍՆԵՐՈՒ ՕՐՈՒԱՆ ԱՌԹԻՒ

Խանասորի 66րդ տարեդարձը կը տօնուի նախաձեռնութեամբ Հ. Յ. Դ. Գէորգ Զաւուշ խումբին, հովանաւորութեամբ Մարսէյլի Շրջ. Կոմիտէին, այս կիրակի ամբողջ օրը Լա Քոլ Սիւր Լու գետեզերքը – անտառին մէջ:

Հաճելի օր մը (գետի լոգանք կարելի է):

Կը նախագահէ ընկ. Յ. ՇԻՇԼԻԵԱՆ

Կը բանախօսէ ընկ. Յ. ՆԻԿՈՂՈՍԵԱՆ

Ծանօթ.— Մասնաւոր օթօքար մը վարձուած է: Առաւօտուն ժամը 8,30ին ճամբայ կ'ելլէ Փլաս Մասէնայէն–Ալպէր Ա. պարտէզէն (Քազինօ Մունիսիփալին դիմացը): Նոյն օթօքարը կը հասնի Մա. տըլէն ժամը 9ին:

Ժամը 9,30ին կուգայ Մանեան Սքա-տին (քովը աղբիւրին մօտ սպասել) զայն առնելու համար:

Իսկ անձնական կառքով եկողներուն համար, երկու քիլոմեթր է Քոլ Սիւր–Լու գիւղէն – Կրասի ճամբուն վրայ: Անկինը Ճաշարան–Պառ–Պաքիւսէն աջ դառնալ եւ մտնել անտառը գետեզերքը:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Տիկ. Միութեան Որբերու Օգնութեան Մարմինը տրամադիր ըլլալով քանի մը անպաշտպան տղոց հայեցի դաստիարակութիւնը հոգալու, հարկ կը համարի ծանուցանել, որ չահագրգռուողները այժմէն դիմեն իրեն գրաւոր իր կեդրոնատեղին, 15 Ռիւ Ժան Կուժոն:

ԱՐՋԱԿՈՒՐԴԻ ԱՌԹԻՒ ՅԱՃԱԽԵՑԷՔ



ՃՕՇԿՈՒՆԵԱՆ-ՈՐԴԻ

ՄԱՐՍԷՅԼԻ ԾԱՆՕԹ ՃԱՇԱՐԱՆԸ

Ուր պիտի գտնէք արեւելեան համադամ կերակուրներ եւ մասնաւորաբար

ՏԷՕՆԷՐ – ՔԷՊԱՊ

եւ արեւելեան զանազան խմորեղէններ

RESTAURANT DJOCHGOUN

4. Rue de la Butte, MARSEILLE 2e

(Place Jules Guesde)

IMPRIMERIE SPECIALE

DU JOURNAL « HARATCH »

32, Rue de Trévise, PARIS (9e)

ԴՊՐՈՑԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Դպրոցասէր Տիկնանց վարժարանին 1963 – 1964 տարեշրջանի արձանագրութիւնները սկսած են: Անոնք որոնք կը փափաքին ղրկել իրենց զաւակները պէտք է այժմէն իսկ դիմում կատարեն հաստատութեան տնօրէնութեան:

Ա.— ՖՐԱՆՍԱԿԱՆԸ, որ տառացի կերպով կը հետեւի պետական լիսէներու արդիական բաժնի պաշտօնական ծրագրին — անգլերէն եւ սպաներէն լեզուներով —:

Բ.— ՀԱՅԿԱԿԱՆԸ, որ կ'օժտէ սանուհիները հայագիտական ծանօթութիւններով, հայ լեզուի, գրականութեան, հայ կրօնքի եւ պատմութեան, Հայաստանի աշխարհագրութեան մարզերուն մէջ:

Աշակերտուհիներ կ'ընդունուին ութ տարեկանէն սկսեալ: Մանրամասնութեանց համար դիմել հաստատութեան տնօրէնութեան:

1, Bd. du Nord, LE RAINCY (S. et O.)

Tél : 927-01-72

Դպրոցասէրի ուսման ծրագիրը կ'ընդգրկէ երկու ուրոյն բաժիններ:

ՍԱՄՈՒԷԼ ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ՆՈՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Իրենց զաւակները արձանագրել փափաքող ծնողքները պէտք է փութան դիմել տեսչութեան հասցէին:

COLLÈGE ARMÉNIEN SAMUEL MOORAT

26, Rue Troyon, SEVRES (S. et O.)

Tél.: OBS. 18-28

Եւրոպայի մէջ, հայ մանչերու համար հիմնուած, ֆրանսական եւ հայկական ուսումնական կատարեալ ծրագիրներով օժտուած մեծագոյն եւ ծաղկեալ ուսումնարանն է Սեւրի Սամուէլ Մուրատեան վարժարանը, որուն սեմէն ներս հայ մանուկին հոգին, միտքը եւ մարմինը կը մեծնայ, կը ծաղկի եւ կ'ընդլայնի բաղձալի համեմատութիւններով:

ԱՆԾԱՆՕԹ ԶԻՆՈՒՈՐԻՆ ԲՈՑԸ

Յաղթական Կամարի Բոցի Կոմիտէն Հայ Նախկին Ռազմիկներու եւ Կամաւորներու Միութեան յանձնած է Անծանօթ Զինուորին բոցը արծարծել այս կիրակի ժամը 18,30ին:

Հաւաքոյթ՝ ժամը 18ին Էթուալի Թէ-փլէնին վրայ, սովորական մուտքին որ դէպի Յաղթական Կամար կ'առաջնորդէ:

Անդամներն ու բարեկամները իրենց ընտանիքներով կը հրաւիրուին մասնակցելու այս արարողութեան, աւելի հանդիսաւոր փայլ մը տալու համար անոր:

ՀԱՅ ԲՈՅԺ

ԺՈՂ. ԱՄՍԱԹԵՐԹ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ

Խմբագիր՝ Շ. ՆԱՐԴՈՒՆԻ

Խմբագրին երկար բացակայութեան պատճառաւ, լոյս տեսած չեն ՀԱՅ-ԲՈՅԺի 1962 եւ 1963 տարիներու թիւերը:

Խմբագիրը, որ նոր վերադարձաւ Ամերիկայէն, գործի ձեռնարկած է արդէն: Ծրագրած է հրատարակել երկու բացառիկ թիւեր, իւրաքանչիւրը 150 էջ: Առաջինը պիտի կրէ 1962 թուականը, երկրորդը՝ 1963 թուականը: Այս երկուքը մէկ տարի հաշուելով՝ անոնք որ վճարած են 1962, վճարած կ'ըլլան նաեւ 1963 տարին:

Այս ձեւով, խմբագիրը կը խորհի ՀԱՅ-ԲՈՅԺի հրատարակութիւնը ամբողջացնել եւ կանոնաւորել մինչեւ յառաջիկայ տարի, եւ 1964 տարուան թիւերը լոյս ընծայել ամսէ ամիս՝ Յունուարէն սկսեալ:

Ամերիկայի նոր բաժանորդները եւս, որոնք վճարած են այս տարուան համար (1963), պիտի ստանան ՀԱՅ-ԲՈՅԺի 1962 եւ 1963 թիւերը:

Այն բաժանորդները, որոնք յետնեալ պարտք ունին, թող բարի ըլլան իրենց վճարումը հասցնել մինչեւ տարեվերջ: Հին պարտքերուն հետ՝ ներկայ տարին եւս վճարողներն են միայն, որ պիտի ստանան ՀԱՅ – ԲՈՅԺի բացառիկները խմբագրուած բժշկական, գրական, պատմական, շատ հետաքրքրական եւ ճոխ բովանդակութեամբ, — արդէն տպագրութեան յանձնուած:

Այս առթիւ շնորհակալութիւն այն հաւատարիմ բաժանորդներուն, որոնք ՀԱՅ-ԲՈՅԺի հրատարակութիւնը ընդհատուած ըլլալով հանդերձ՝ խմբագրին բացակայութեան պատճառաւ, վճարումները կատարած են օրը օրին ի վկայութիւն իրենց բարեկամութեան եւ վստահութեան:

Կը խնդրուի Հայրենիք, Ասպարէզ, Արմենիա, Ազատ Օր, Յուսաբեր, Ազդակ, Այգ, Ալիք թերթերու խմբագրութիւններէն, ինչպէս և Սիոն, Հասկ, Հայ Կեդրոն, Կիլիկիա, Հայաստանեայց եկեղեցի պարբերականներէն, որ հրատարակեն այս յայտարարութիւնը դէթ 2-3 անգամ:

ՀՐԱՆՏ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

51, Rue Monsieur-le-Prince, PARIS - 6e — Chèque Postal : 1278-35

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՇԻՐՎԱՆԶԱԴԷ, երկերի ժողովածու, 10 հատոր լաթակազմ	70 Ֆր.
ՍՏԵՓԱՆ ԶՕՐԵԱՆ, երկերի ժողովածու, 7 հատոր, լաթակազմ	56 Ֆր.
ՍՏԵՓԱՆ ԶՕՐԵԱՆ, Պապ թագաւոր, լաթակազմ	10 Ֆր.
ՍՏԵՓԱՆ ԶՕՐԵԱՆ, Հայոց բերդը, լաթակազմ	8 Ֆր.
ՎԱՀԱՆ ՏԷՐԵԱՆ, Երկերի ժողովածու, 2 հատոր լաթակազմ	14 Ֆր.
ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՒԻԹ, մեծադիր, գունաւոր նկարներով, լաթակազմ	10 Ֆր.
Վ. ԱՆԱՆԵԱՆ, Հայաստանի կենդանական աշխարհը, Բ.	8 Ֆր.
ԱՐՍԷՆ ՏԷՐՏԷՐԵԱՆ, Երկեր (Արովեան Պռօշեան, Պարոնեան)	17 Ֆր.
ՄՈՒՐԱՑԱՆ, Պատմուածքներ, գունաւոր նկարներով	5 Ֆր.
ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑԻ մասին յիշողութիւններ. լաթակազմ	7.50 Ֆր.
ՄԻՔ. ՇԱԹԻՐԵԱՆ. Գարունը նորից եկաւ. 296 էջ.	5 Ֆր.
ԱԲԳԱՐԵԱՆ. Մատենադարան(անգլ.) 18 գունաւոր մանրանկարներ	3 Ֆր.
ՀԵՆՐԻԿ ԹՈՒՄԱՆԵԱՆ. Երգի ծնունդը. բանաստեղծութիւններ	3.85 Ֆր.
Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ. Տաղեր, 200 էջ. լաթակազմ	3.50 Ֆր.
ՍՈՎԵՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ. Ա. 800 էջ. լթկզմ.	16 Ֆր.
ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ, Անլռելի զանգակատուն, Պէյրութ, 1963	10 Ֆր.

Առաքման ծախքը գնողին վրայ

ԳՐԱՏՈՒՆՍ ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻՆ Է

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՁԱՅՆԱԳՐԵԱԼ ԲՈԼՈՐ ԵՐԿԵՐՈՒՆ

ՃՈԽ ՄԹԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԵՒ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆՑ

Le PREMIER QUOTIDIEN ARMENIEN en EUROPE

ՅԱՌԱՋ
HARATCH

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

Directrice : ARPIK MISSAKIAN
Rédaction et Administration : 32, Rue de Trévise - PARIS-9e

Fondé en 1925 — R. C. Seine 57 A 2731
Téléph. : PRO. 86 - 60 — C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա՝	Տար. 50 Ֆ.	Վեցամսեայ՝	27 Ֆ.
Արտասահման՝	Տար. 60 Ֆ.	Հատը	0.30 Ֆ.

ՇԱԲԱԹ 10 ՕԳՈՍՏՈՍ — SAMEDI 10 AOUT 1963

Le Numero : 0,30 Fr.

39րդ ՏԱՐԻ — Թիւ 9679 — Fondateur : SCHAVARCH MISSAKIAN — 39e ANNÉE — No 9679

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ՊԱՀԱՆՋԱՏԷՐ ԿԸ ՄՆԱՆՔ

Երկու գլխաւոր թշնամի ունէր Սեւրի դաշնագիրը, — Թուրքն ու բոլշեւիկը: Թուրքերին հասկնալի էր Թուրքին թշնամութիւնը: Կտոր կտոր կ'ըլլար երբեմնի «հզօր» օսմանեան կայսրութիւնը, որուն սահմանները կ'երկարէին Թրակիայէն մինչեւ արաբական Թերակղզին ու Պարսից ծոց:

Ալեքսանտրէթ – Մուսուլ ուղիղ գիծին հարաւը գտնուող արաբախօս հողամասերը ամբողջովին կ'անջատուէին, յետագային ատրճանաբար անկախ պետութիւններ կազմելու համար:

Հայաստանի Հանրապետութեան պիտի կցուէին Վանի, Պիթլիսի, Էրզրումի եւ Տրապիզոնի նահանգներուն որոշ մասերը, ըստ Ուիլսընի իրաւարարական վճիռին:

Դաշնագրի 62 – 64րդ յօդուածներով ինքնավարութիւն կը խոստացուէր Թուրքիոյ Քիւրտերուն, առանց վերջնապէս ճշդելու ինքնավար Քիւրտիստանի սահմանները Հայաստանի եւ Թուրքիոյ հետ:

Կրճատեալ Թուրքիան պիտի ամփոփուէր կեդրոնական Անատոլուի նեղ սահմաններուն մէջ:

Յաղթական դաշնակիցները 1918 Հոկտեմբեր 30ին Մուտրոսի զինադադարը կնքելով պարտուած Թուրքիոյ հետ, լրիւ ապահովէր էին իրենց շահերը: Գրաւած էին բացի արաբական երկիրներէն՝ Կիլիկիան, Պոլիսը եւ Պոնտա–Ատալիա շըրջանը: Չէին մտածած գրաւել եւ կամ ազատագրել հայկական վեց նահանգները:

Նոր չանցած հելլէն բանակը կը մղէին գրաւելու Իզմիրը եւ յառաջանալու դէպի Սաքարիա գետը՝ սպառնալով Անգարայի:

Միաժամանակ Մուսթաֆա Քէմալը կը դրկէին Սամսոն՝ իբրեւ քննիչ բանակի:

Վերջին երկու դէպքերու մղիչ ուժն էր եղած Անգլիա, որուն խօսքը վճռական դեր կը խաղար այդ օրերուն Զօրս Մեծերու ժողովներուն մէջ:

Դաւադրութեան բոլոր ծալքերը չեն բացուած դեռ: Օր մը պիտի յայտնուի անշուշտ թէ ի՛նչ տխուր դեր խաղաց Նենգամիտ Ալպիոն քէմալական շարժման զարգացումին մէջ:

Իտալիա եւ Ֆրանսա նոյնպէս աջակցեցան Մ. Քէմալին: Առաջինը աչք ունէր Իզմիրի եւ խեթիւ կը դիտէր հելլէն բանակի յառաջխաղացումը: Արիսթիտ Պրիան ... կը պարզէր՝ թոյլ չտալու համար որ Թուրքիա բոլորովին իյնայ բոլշեւիկներու գիրկը:

Զո՛ւր պատրանք: Մուսթաֆա Քէմալ արդէն «եղբայրական» դաշինք էր կընքած «ընկեր Լենին»ի հետ, միասին պայքարելու համար արեւմտեան «իմպերիալիզմին» դէմ: Մոսկուա առանց հաշուելու զէնք, ռազմամթերք եւ ոսկի կը հասցնէր Քէմալին:

Հայաստանի Հանրապետութիւնը աչքի փուշ էր սիրակցորդ երկու դաշնակիցներուն համար: Անհրաժեշտ էր քանդել ... «իմպերիալիզմ»ի այդ «միջնաբերդ»ը: Լենին ու Քէմալ ձեռք ձեռքի տուած հասան իրենց նպատակին: Սեւրի դաշնագրէն քառասուն օր վերջ, Քեազիմ Գարապէքիրի բանակները յարձակեցան Հայաստանի վրայ, առանց պատերազմ յայտարարելու:

Արդիւնքը յայտնի է:

Ազգերու Դաշնակցութիւնը խուլ ականջ ... Հայաստանի օգնութեան կոչերուն:

Մոսկուա հասաւ իր նպատակին: Քաղաքական պահանջած էր Հայաստանի կառավարութենէն, որ հրաժարի Սեւրի դաշնագրէն: Նոյն պահանջը աւելի չեշտուած կերպով ներկայացուց Լեւոն Շանթի պատուիրակութեան:

Կրեմլին կը հակառակէր Սեւրի դաշնագրին՝ պարզապէս արգիլելու համար Թուրքիոյ անդամահատումը:

Դաշնակիցները ուրացան Սեւրը եւ իրենց նիւթական ու բարոյական աջակցութեամբ ողջնցուցին մեռած Թուրքիան, առաւելագոյն շահեր ապահովելու յետին նպատակով:

Վայելելով Խ. Միութեան, Մեծն Բրիտանիոյ, Ֆրանսայի եւ Իտալիոյ աջակցութիւնը՝ Մ. Քէմալ ծով թափեց Հելլէնները Իզմիրի մէջ 1922 Սեպտեմբերին: Սեւրը փոխարինուեցաւ Լօզանով, ուր յաղթական Թուրքին գարպասեցին բոլորը:

Մինչ Սեւր կը նուիրագործէր Անկախ եւ Միացեալ Հայաստանը, 1923 Յուլիս 24ի Լօզանի դաշնագիրը Հայուն եւ Հայաստանին անունն անգամ չի յիշեր: Թրքահայ դատը բոլորովին ուրացուեցաւ բարեկամին ու թշնամիին կողմէ:

Ազատատենչ Հայութեան համար Սեւրի դաշնագիրը կը շարունակէ մնալ միջազգային մուրհակ մը, որ ենթակայ չէ ժամանցումի:

Պիտի գայ օրը, երբ գայն ստորագրողները պիտի յարգեն իրենց գրաւոր, հանդիսաւոր յանձնառութիւնները:

Մինչ այդ ազգովին պահանջատէր կը մնանք:

ՀՐԱՆՏ – ՍԱՄՈՒԷԼ

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ԳԵՐՄԱՆԻԱ ՊԻՏԻ ՍՏՈՐԱԳՐԷ

ՄՈՍԿՈՒԱՅԻ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ

Եթէ նոր անակնկալ մը չպատահի, շատ հաւանական է որ Դաշնակցային Գերմանիա ստորագրէ Մոսկուայի Դաշինքը, որոշ երաշխաւորութիւններով իր անգլեւամերիկեան դաշնակիցներէն: Այլ խօսքով՝ Անգլիա եւ Ամերիկա ամէն ապահովութիւն պիտի տան Ատընաուըրի որ որեւէ վախ չկայ Արեւելեան Գերմանիան իրաւական կերպով ճանչնալու:

Գերմանական դահլիճին այս որոշումը (դաշնագիր ստորագրելու) փաստ մըն է որով Պոն կ'ուզէ ապացուցանել իր բարեկամեցողութիւնը: Ինք որ երբեք չէ ուզած հիւլէական զէնք չինել, կը գտնէ որ Մոսկուայի համաձայնագիրը առաջին քայլ մըն է դէպի ապազինում եւ թէ Արեւմուտքը համերաշխ է: Այս փաստը կ'ուզէ տալ մանաւանդ Տին Ռըսքի ժամանման նախօրեակին իսկ:

Կը կարծուի թէ Գերմանիոյ անդամակցութիւնը կրնայ կատարուիլ մինչեւ ամսոյս վերջ:

× Ամերիկեան Ծերակոյտին վաւերացումը կասկածէ դուրս է եւ քաղաքական շրջանակները մասնաւոր կերպով գնահատեցին Նախագահ Քենըտիի կեցուածքը: Արդարեւ, հակառակ իր նորածին զաւկին պատճառած մտահոգութեանց, Նախագահը իր ճառը արտասանած էր Ծերակոյտին առջեւ եւ թուած այն տասը պատճառաբանութիւնները որոնք կը թելադրեն ծերակուտականներուն ստորագրել համաձայնագիրը: Նախագահը եզրակացուց. — «Կը յանձնարարեմ Ծերակոյտին որ տայ իր ըտվայզ էնտ քոնսէնթ»ը:

× Քենըտիի երրորդ զաւակը՝ Փաթրիք որ կանխահաս ծնունդ մը ունեցած էր, մեռաւ ուրբաթ առաւօտ: Փոքրիկին սիրտը չէր դիմացած այն բոլոր խնամքներուն որոնք կատարուեցան փրկելու համար երախան ու շնչառութեան դժուարութենէ կը տառապէր:

ՊՈԼՍՈՅ ՊԱՏՐԻԱՐՔ ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՎԻԷՆՆԱՅԻ ՄԷՋ

ՎԻԷՆՆԱ (Յառաջ). — Դէպի Հայաստան ըրած այցելութենէ վերադարձին՝ Վիէննա հասաւ ամսոյս 2ին Շնորհք Արք. Գալուստեան, Պատրիարք Թրքահայոց: Երկար ատենէ ի վեր առաջին անգամ է որ Վիէննայի Հայութիւնը բարեբախտութիւնը կ'ունենայ իր մէջ ողջունելու Թուրքիոյ Հայոց Պատրիարք մը:

Վիէննայի փոքրիկ հայ գաղութը, գըլխաւորութեամբ իր վարչական Մարմնին եւ տեղական Առաջնորդ Գեր. Մեսրոպ վ. Գրիգորեանի՝ դիմաւորեց բարձրաստիճան հիւրը օդակայանի մէջ եւ առաջնորդեց քաղաքին առաջնակարգ պանդոկներէն մին, ուր կարճ հանգիստէ մը վերջ՝ Պատրիարքը փափաք յայտնեց քաղաքին տեսարժան վայրերը այցելել:

Յաջորդ օրը առաջնորդուեցաւ Մխիթարեան Միաբանութեան վանքը, ուր զինքը դիմաւորեց Ընդհ. Աբբայ Արհ. Հ. Մեսրոպ Արք. Հապոզեան՝ շըրջապատուած բազմաթիւ միաբան Հայրերէ: Սրբազանը հիւրասիրուեցաւ ըմպելիքով ու սուրճով: Արհ. Հապոզեանի ողջոյնի խօսքերուն պատասխանելով Ս. Պատրիարքը ըսաւ. «Ս. Էջմիածնէն վերադարձիս բախտաւորութիւնը կ'ունենամ այցելելու նաեւ Վիէննական Մխիթարեան այս Տունը եւ վայելելու Գեր. Աբբահօրդ եւ Միաբանութեանդ հիւրասիրութիւնը: Կը մեկնիմ՝ տանելով հետս լաւագոյն տպաւորութիւններ ազգային եւ կրօնական ու մշակութային այս մեծ Հաստատութենէն»:

Պատրիարքը ուզեց տեսնել վանքի եկեղեցին, մատենադարանը եւ թանգարանը եւ գոհունակ տպաւորութեամբ հըրաժեշտ առաւ Գեր. Աբբահօրմէն եւ Հայրերէն:

Իրիկունը (3 Օգոստ.) ի պատիւ Պատրիարքին կոչունք տուաւ գաղութին վարչութիւնը, որուն հրաւիրուած էր նաեւ Գեր. Հապոզեան Աբբահայրը եւ գաղութին մեծ մասը: Պատրիարքը խօսեցաւ մին իր լաւագոյն ճառերէն:

Այսօր (Օգոստ. 4), հայ մատուռին մէջ պատարագեց Մեսրոպ վարդապետ, իսկ Պատրիարքը քարոզեց: Համեմատութիւն մը տեսնելով Քրիստոսի Վերջին Ընթրիքի վերնատունին եւ հայ գաղութին մատուռի վերնատունին միջեւ՝ ըսաւ թէ այս հին վերնատունը միանգամայն վայրը եղած էր, ուր Առաքեալները քրիստոնէական կրակով մկրտեցան եւ դարձան դիւցազնական առաքեալներ քրիստոնէական հաւատքի. «Թո՛ղ, ըսաւ, այս վերնատունն ալ կայք ըլլայ փոքրիկ գաղութիդ, ուր յաճախ միանալով՝ լսէք, տեսնէք եւ ապրիք հայ նուիրական երգերն ու շարականները եւ մնաք Հայ՝ ոգիով, սրտով եւ միութեամբ»: Յետ քարոզին, Պատրիարքը օրհնեց բոլոր ներկաները, որոնք պատարագէն վերջ աջահամբոյրի մօտեցան, մտերմական խօսակցութիւն ունեցաւ անոնց հետ:

Երկուշաբթի, 5 Օգոստոս, կէսօրին Պատրիարքը Պոլիս մեկնեցաւ, իր ախորժ վայելելով համակրանքի եւ մեծարանաց ջերմ զգացումը Վիէննայի հայ գաղութին:

ԹՂԹԱԿԻՑ

×

ՊԱՏՐԻԱՐՔԸ ՊՈԼԻՍ ԺԱՄԱՆԵՑ ՕԳՈՍՏՈՍ 5 ԻՆ

Պոլսոյ Շնորհք Պատրիարքը Պոլիս հասած է անցեալ երկուշաբթի օր եւ օդակայանը դիմաւորուած Եգիպտահայոց Առաջնորդ Մամբրէ Արք.ի եւ Պոլսոյ կրօնական ու քաղաքային անձնաւորութեանց կողմէ:

Պատրիարքը կարճ ճառով մը յայտնած է թէ 45 օրուան իր ճամբորդութիւնը շատ լաւ անցած է: Պատմեց թէ նախ յանուն Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան ներկայ եղած է Աթոսի հազարամեակի հանդիսութեանց, ապա այցելած է Միլան, Լոնտոն, Մոսկուա, Երեւան, Ժընեւ, Լիզպոն, հուսկ՝ Վիէննա:

Պատրիարքը յայտնած է նաեւ թէ ինչ նպատակաւ Ամենայն Հայոց Վազգէն Կաթողիկոսը քանի մը օր է Փրակա կը գտնուի:

Հայրապետը մօտ երբեք չարաթ պիտի մնայ Փրակա անձամբ զբաղելու համար Էջմիածնի վեհարանի կահաւորման գործով, որուն համար մեծարժէք ապսպրանքներ եղած են չեխ հաստատութիւններուն:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՊՕԺՈՆ հիւանդանոցի ներքին բժիշկները անճոռնի կատակ մը ըրած են առջի գիշեր, հեռաձայնելով Փարի–Ժնթէռի եւ Լիւքսէմպուրկի ձայնասփիւռի կայաններուն եւ թղթակիցներու տեղեկացնելով որ շատ մեծ գործողութիւն մը կը կատարուի հիւանդանոցին մէջ: Շեշտած են որ այդ աննախընթաց գործողութիւնը կոչուած է պատմական ըլլալու ֆրանսական վիրաբուժութեան համար: Արդարեւ կը յայտնէին որ մեռած մէկուն ոտքը պիտի պատուաստուի մէկուն վրայ որ անդամահատուած էր: Ամէն ինչ կարգին ըլլալով երբ թղթակիցները հիւանդանոց ժամանած են, կրցած են տեսնել հիւանդ մը պառկած սպիտակ սաւանով մը ծածկուած որ կը տքար: Վիրաբուժներ գըլխուն կեցած, ոչ մէկ բան կրնար կարծել տալ թէ ամէն բան կեղծ է...: Այս մասին մանրամասն հաղորդում մը պիտի ըլլար քիչ ետք երկու ձայնասփիւռներու ալիքներուն վրայ եւ հարցաքննուած վիրաբուժն ալ մասնագիտական նկարագրութիւնը պիտի ընէր գործողութեան: Աւելի ուշ պիտի պարզուէր թէ ամէն ինչ սուտ էր եւ թէ Պօժոնի ներքին բժիշկները բեմադրած էին այդ «գործողութիւնը» ծաղրելու համար իրենց վիրաբոյժը: Քննութիւն բացուած է թէեւ շատ խիստ ու անմիջական միջոցներ նման «բժիշկներու» նկատմամբ աւելի տեղին կ'ըլլար:

ԱՆԳԼԻՈՅ մէջ իսկական ուեսթեռն մը տեղի ունեցած է առջի օր: Ճիշդ ինչպէս ամերիկեան այդ անունը կրող ժապաւէններուն մէջ կը կատարուի: Մօտ երեսուն աւազակներ ծպտուած, յարձակած են Կլազկօ–Լոնտոն թղթատարական ճեպընթացին վրայ եւ արտակարգ արագութեամբ, յաջողած են գայն կեցնել տալէ ետք, կողոպտել: Կը կարծուի թէ մօտ մէկ միլիոն անգլիական ոսկիի կը հասնի եղած գողութիւնը, ըստ Անգլիոյ Թըղթատարական Նախարարութեան առաջին զեկոյցին: 1838էն ի վեր այս թղթատարական կառախումբը կը բանի եւ առաջին անգամն է որ նման բան մը կը պատահի:

ԿԱՍԹՈՆ ԺԵԼԻՍ, լրագրող եւ թղթակից, որու կինը երկար տարիներ օտար Մամուլի Ընկերակցութեան քարտուղարուհին եղած է, կառքի արկածի մը զոհ գացած է առջի օր: 58 տարեկան էր:

ՄՈՍԿՈՒԱՅԻ մէջ, Ուղղափառ Եկեղեցւոյ Սինոդոսը, երկու որոշում տուած է: Նախ Մետրոպոլիտի պատիւին բարձրացուած է Գեր. Նիկոտիմը (Ռոսթովի արքեպիսկոպոս) եւ ստեղծած է տնտեսական յատուկ յանձնախումբ մը անոր նախագահութեան տակ:

ԲԱԿՈՒՆՑԻ ՀԵՏ

(ՄԱՀՈՒԱՆ 25 ԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻՒ)

(Բ. եւ վերջին մաս)

Մի այլ դէպք:

Համայնացման եւ կուլակաթափման խառն օրերին մտաւ խմբագրութիւն: Բաց գոյնի թարթիչներին փոշի էր նըշմարւում, ճամբից էր գալիս՝ էջմիածնի գիւղերից:

— Իսկական յեղաշրջում, — բացականչեց նա:

— Ագքատները ամէն տեղ կուլակների ունեցուածքը խլում, համայնական սեփականութիւն են դարձնում...

— Իսկ իրենց քշում են գիւղից, — ծիծաղելով աւելացրի ես:

— Այո, սայլերի շարանը Սարդարաբադից ձգւում է մինչեւ Երեւանի տակ...

— Լաւ է, լաւ է, — ձեռքերս շփում էի ես:

Նայեց ինձ յանդիմանանքով ու թախիծով:

— Իսկ գիտե՞ս, որ թացի հետ չորն էլ են վառում... Ամեղներ էլ կան. երեխաներ... կանայք... Գնամ Աղասու մօտ:

Ու վեր կացաւ: Գնում էր Կենտկոմ, Խանջեանին զանգատուելու, որ «ձախ ճեալագէօզները» տեղերում «թացի հետ չորն էլ են վառում...»:

Իր մեծ սրտով սիրում էր յեղափոխութեան շնորհիւ յառաջ եկող նոր բարձրացող մարդկանց: Մի անգամ վերադարձել էր Արթիկից ու խմբագրատանն իր տպաւորութիւններն էր պատմում.

— Շարքային քար կտրողներից մէկը դարձել է Պրոֆմիութեան նախագահ: Գրասենեակում թղթերը կնքելիս ես դրա ձեռքին էի նայում: Բարձրացնում էր կոշտ բռունցքը պեչատը մէջը հուպ տըւած ու ցած էր բերում սեղանին մուրճի նման՝ չը՛խկ, չը՛խկ, — կարծես քար էր կտրում: Մուրճի սովոր ձեռք է է՛, հա դու նրա մատների արանքը գրիչ խօթիր:

Ի՞նչ համակրանքով էր խօսում նա, այդ առաջ քաշուած քարհատի մասին: Մի ուրիշ անգամ այսպիսի մի պատմութիւն արաւ ինձ. ասում է՝ Խարկովում սովորելիս կիսաքաղց էինք: Ամէն ազգի տղաներ միասին ապրում էինք հանրակացարանում, միասին էլ ուտում այն կէս փունտ հացն ու կէս փունտ տառեխը, որ տալիս էին մեզ իւրաքանչիւրիս «ռազմական համայնավարութեան» այդ դժուարին օրերին: Բաղցից յուսահատուած ոմանք նոյնիսկ հայհոյում էին իշխանութեանը: Հետներս մի հարուստի տըղայ էլ կար, որ չէր խառնւում վէճերին, ոչնչով չէր արտայայտում իր դժգոհութիւնը: Մի անգամ միայն, երբ մի քանի տաքգլուխներ որոշեցին գնալ քաղաքի Ցեկոմ եւ բողոքել, այդ տղան եւս մի թոյլ ձայնակցեց նրանց, կարծեմ մի թեթեւ յիշոց արձակեց: Այդ ժամանակ մի զարմանալի բան կատարուեց. վրայ թափուեցին ու սկսեցին ծեծել դրան, թէ՝ մեր իշխանութիւնն է՝ կը հայհոյենք էլ, տեղը նեղացած ժամանակ կը պաշտպանենք էլ... Իսկ դո՞ւ ինչու ես մէջ ընկնում, ա՛յ կուլակի լակոտ...

Մի տեսնէիք, թէ ինչպիսի սրտահովութեամբ էր պատմում Ակսելն այդ դէպքը:

Նոյն կերպ իր ջերմ համակրանքը մեր կողմն էր՝ սկսնակ գրողներիս, որ ջանք էինք թափում նոր կարգերի գովքը անել, բայց դեռ կարգին գրագէտ չէինք, չէինք տիրապետում խօսքի մշակոյթին: Սիրտ ունէինք, յեղափոխութեան հրով վառուած սիրտ, բայց դեռեւս զուրկ էինք գրական վարպետութիւնից:

Իսկ ինքը մեծ մշակոյթի տէր մարդ էր եւ սիրով օգնում էր մեզ իր խորհուրդներով: Մի անգամ հետս զրուցելիս ասաց.

— Կարդում եմ գրածներդ ու հաստատ կ՚ասեմ, որ չես թողնում անելիքդ հասունանայ գլխիդ ու սրտիդ մէջ: Երբ գրիչ ես վերցնում, դեռ նիւթդ լրիւ պատրաստ չի լինում, այն բոլորը, որ գրել ես, եկել է գրելու ընթացքում...

Ես զարմացած էի. այդ ի՞նչպէս է հասկացել, ախր ես ոչ իրեն, ոչ ուրիշի ոչինչ չեմ ասում իմ գրելու մասին, իբր թէ այդ մասին խօսելն ամօթ է:

Իսկ նա դէմս կանգնած կարծես կարդում է ներսս, նոյնիսկ գիտի, թէ ինչպէս եմ գրում: Առարկութեան չհանդիպելով, շարունակեց.

— Հիմի իմ գրելու եղանակը տես, գուցէ քեզ պէտք կայ: Նիւթը իմ մէջ հասունանում է օրերի, շաբաթների, երբեմն ամիսների ընթացքում: Թող հասունանայ, դեռ գրիչ չեմ վերցնում: Գծագրւում է նիւթը, հետզհետէ պարզւում են կերպարները, նրանց բնաւորութեան մանրուքը: Մտքումս նոյնիսկ գրում եմ այն խօսակցութիւնները, որ տեղի ունեն իմ հերոսների միջեւ: Եւ երբ իմ մէջ արդէն լրիւ գրուած է պատմուածքը իր բոլոր մանրամասնութիւններով ու երբ էութիւնս լրիվին լցուած է նրանով, նոր միայն ես գրիչ եմ վերցնում: Այդ դէպքում, հասկանալի է, գրիչ չվերցնել, նըշանակում է աշխարհ չբերել այն, որով յղի ես, ուրեմն եւ տառապել, ինչպէս տառապում են այն օրերին, երբ չի ծընւում արդէն ծննդի պատրաստ զաւակը..:

Նրա այդ խորհուրդը յետագայում ինձ շատ հարկաւոր եկաւ:

Բակունցը խիստ բծախնդիր էր իր տըպագիր խօսքի նկատմամբ: Յիշում եմ այսպիսի մի դէպք: Զարենցը հիւրանոցի իր համարում նստած՝ խմբագրում էր «Հոկտեմբեր — Նոյեմբեր» ստուար ժողովածուն՝ նուիրուած Խորհ. Հայաստանի տասնամեակին: Դա 1930 թուականին էր: Այն օրը, երբ աշխատում էր Հայաստանի գիւղի մասին իմ գրած ակնարկի վրայ, ներս մտաւ Բակունցը եւ սեղանին դրեց ժողովածուի այն մամուլը, ուր իր նկարն էր ու պատմուածքը:

— Եղիչ, խայտառակութիւն — յուզուած ցոյց տուեց նա: — Տպել են «Մուրոյի զրոյցը»:

— Ի՞նչ կայ որ, — զարմացաւ Զարենցը:

— Զրուցը, ոչ թէ զրոյցը: Հասկանո՞ւմ ես տարբերութիւնը: Սասունցիք զրուց, աւանդութիւն են հնարել Լենինի մասին եւ ոչ թէ զրոյց են արել ինձ հետ:

— Հա՛, — գլխի ընկաւ Զարենցը: — Ես չեմ ուղղել, Ակսել, հաւատա՛, երեւի սրբագրիչն է շտկել քեզ: Ու ժպտաց մըխիթարող, հանգստացնող:

Բայց Բակունցն այնպէս թեւաթափ դուրս եկաւ հիւրանոցի համարից, որ կարծես պղծել էին իր ստեղծագործութիւնը:

Ակսել Բակունցի մասին յիշողութիւններ գրող ընկերները նրան պատկերացրել են գերազանցապէս զգայուն ու թախծոտ մարդ: Իմ ճանաչած Բակունցը նաեւ ուրախ էր, կենսախինդ, լաւատես եւ յաճախ էր զուարճանում, թէեւ խմիչքները գործ էր ածում չափաւոր: Յիշում եմ, կարծեմ դա 1933 թուականի աշնանն էր, — Զարենցն ու Բակունցը մի օր «Ջգրացրին» ինձ, թէ՝

— Որսորդ եմ հա, որսորդ ու մի օր որսդ չտեսանք:

Ասացի՝

— Լաւ, հէնց այս երեկոյ գնում եմ Լոռի, երկու օրից յետոյ թէ որ կխտարը շալակիս քաղաք չմտայ, էն ժամանակ իրաւունք ունէք ինձ ձեռ առնելու...

Ասացի ու ճամբայ ընկայ դէպի Լոռի: Լուսադէմին ընկերներիս հետ բարձրացայ Լալվարի ծերպերը, եղնիկ խփեցինք ու երբ իջնում էինք Սանահին կայարան, ձայն տուի այդ օրուայ որսի մասնակիցներին՝ Ամօջի եւ Ուզունլարի որսորդներին.

— Տղե՛րք, գնանք Երեւան, ձեզ ծանօթացնեմ Ակսել Բակունցի եւ Եղիշէ Զարենցի հետ:

Շատ ուրախացան, բայց քաշւում էին:

— Այտա, բաշլըխներով, փափախներով գնանք էդ մեծ մարդկանց հետ սեղան նստե՞նք:

Ասացի՝

— Գնանք, շատ կ՚ուրախանան Թումանեանի նկարագրած Լոռեցիներին տեսնելով:

Էլ չթողեցի, որ գիւղ գնան, դրանց կայարան տարայ եւ մտցրի ամենաշքեղ վակոնը:

Յաջորդ օրը մեծ խնջոյք կազմակերպեցի մեր տանը եւ լոռեցի որսորդները անմոռանալի մի երեկոյ անցկացրին խորհրդահայ արձակի եւ քերթուածի երկու գագաթների հետ: Շատ կատակներ արաւ այդ երեկոյ Ակսելը, շատ սրամիտ ու խելացի բաներ ասաց, բայց բնաւորութեամբ կազմակերպուած մարդ լինելով, չափի զգացումը չէր կորցնում նոյնիսկ «կատաղի խնջոյքների» ժամանակ: Իր այդ բնաւորութեամբ զսպում էր Զարենցի յախուռն բռնկումները եւ նրա համար մի տեսակ սրտակից «զսպանակի» դեր էր ստանձնել: Այսպէս, օրինակ, այդ երեկոյ ես նկատեցի, որ հէնց սկզբից նա ուշադիր հետեւում է Զարենցին, աչքով-ունքով ինձ հասկացնում է, որ չափից աւելի [illegible] հասկացնում, որ Զարենցի գաւաթը [illegible] սատ լցնեմ, որովհետեւ մեր սիրելի [illegible] նաստեղծը թուլակազմ էր եւ շատ [illegible] ազդւում էր ոգելից խմիչքներից: Զգալով, որ Զարենցը «տաքանում» է, Ակսելը ինձ գաղտնի պատուիրեց սեղանի վրայից աննկատելիօրէն հաւաքել եւ թաքցնել կոնեակի շշերը, — Զարենցը միայն կոնեակ էր գործածում: Ապա [illegible] կերոջ թեւն ընկաւ, միւս թեւն էլ ես, [illegible] մինչ քէֆը շարունակւում էր, նա [illegible] զրուցելով ընկերոջը տարաւ հիւրանոց եւ պառկեցրեց. ես զգացի, որ նա [illegible] դում է Զարենցի առողջութեան համար:

Սկսուեցին 1936 — 1937 թուականների «խառն ժամանակները», եւ ես այլեւս չտեսայ նրան: Մոսկուայում էր, [illegible] գրով կանչել էին: Զգալով [illegible] մարդկանց սարքած որոգայթը, Ակսե[լը] [illegible] փայլում իջել էր գնացքից, հեռագրել [illegible] նոջը, որ երեխային բերի Թիֆլիս: Այն[illegible] տեղ, իմ հայրենիքում մեծ գրողը վերջին անգամ տեսնում է իր ընտանիքը, պատուիրաններ է տալիս իր միակ [illegible] զուն՝ Սեւադային: Պատուիրաններ [illegible] վերջին հրաժեշտը...:

Այլեւս մեզնից ոչ ոք չտեսաւ [illegible] եայ հողու տէր այդ մարդուն: Մի [illegible] անց ես միայն նրա ձեռագրերը [illegible] բանտի մեկուսացուած սենեակի մէջ [illegible] անկիւնում:

Չոքեցի երեսով դէպի պատը, [illegible] առայ աչքերիս մէջ եւ լուռ ողբացի [illegible] ընկերոջ, իմ ուսուցչի ողբերգական [illegible] վախճանը: Կսկծացի կախարդական [illegible] հաւի համար, որ արիւն տալով [illegible] թաղուեց անյայտութեան մէջ...:

ՎԱԽԹԱՆԳ ԱՆԱՆԵԱՆ

«Սով. Գրականութիւն»
Թիւ 7

ԵՐԵՔ ՊԱՂ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐ

ԱՐԵՒԵԼՔ՝ ԱՐԵՒՄՈՒՏՔԻ, ԱՐԵՒԵԼՔ՝ ԱՐԵՒԵԼՔԻ ԱՐԵՒՄՈՒՏՔ՝ ԱՐԵՒՄՈՒՏՔԻ ԴԷՄ

Տրուած ըլլալով որ աշխարհ զբաղուած է միաժամանակ մղուող երեք պաղ պատերազմներով եւ տրուած ըլլալով որ, անոնք անքակտելի կերպով կապուած են իրարու, անոնցմէ մէկը առաւել կամ նուազ չափով վատթարանալու պարագային, անմիջական հակազդեցութիւն կ'ունենայ միւս երկուքին վրայ:

Բոլորս տհաճօրէն ընտելացած ենք Արեւելք — Արեւմուտքի պաղ պատերազմին, բայց անով ա՛յնքան կը տառապինք որ շատ անգամ թոյլ կու տանք շուքի մէջ ձգել միւս երկու կենսական հակամարտութիւնները:

Առաջինը՝ Արեւելք — Արեւելքի դէմ պաղ պատերազմն է, որուն մէջ Ռուսաստան եւ Չինաստան իրարու դէմ կը պայքարին միջազգային համայնավարութեան հակակշռին համար:

Երկրորդը՝ Արեւմուտք — Արեւմուտքի դէմ պաղ պատերազմն է, որուն մէջ Ֆրանսա կը պայքարի անգլիախօս աշխարհին դէմ, Եւրոպայի ապագայ ձեւակերպման շուրջ:

Պաղ պատերազմը երբեք չպառակտեց Ատլանտեան Ուխտը եւ ինչպէս Քուպայի տագնապի ընթացքին որոշ կերպով հասկցուեց, թէ տագնապի մը պարագային,

ՇԱՌԼ ՊՕՏԼԷՐ ԵՒ ԻՐ ԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԴՐԱԽՏՆԵՐԸ

Յաջողութիւնը շատ մեծ է: Առաջին անգամն ըլլալով, բայց ուրիշի մը միջնորդութեամբ, վերջապէս համբաւի կը տիրանայ եւ քիչ մըն ալ դրամ կը շահի:

Սակայն իր անդարմանելի ջղագարութիւնը օրէ օր աւելի կը սաստկանայ: Ամէն տարի, մանաւանդ աշնանամուտին, վտանգաւոր համեմատութիւններու կը հասնի: Մահը, մահուան գաղափարը կը հալածեն զինք առանց դադարի: Մանաւանդ իրիկնամուտի այն պահերուն, երբ հագուած ու անշարժ կ'երկննայ պանդոկի մը սենեակին անկողնին վրայ: Յաճախ կը մտաբերէ Մարիէթը, զօրավար Օփիքի շրջանէն առաջ իր երջանիկ օրերու ծեր սպասուհին, «մեծասիրտ սպասուհի»ն, որ մեռած էր երբ Պօտլէր տասը տարեկան էր, եւ յանկարծ իրեն կը թուի թէ ծեր կինը, «սենեակին մէկ անկիւնը կծկտած» զինք կը դիտէ ու կուլայ:

Սակայն իր կեանքին մէջ նորեկ մը, գէթ մերթ ընդ մերթ, զինք կը խլէ իր ուրուականներէն: Որքան Ժաննը սեւ մորթ ու սեւ մազեր ունի, այս մէկը այնքան խարտեաշ է ու վարդագոյն: Այնքան կիրթ է՝ որքան միւսը տգէտ է: Իր սալոնը կը յաճախեն Կոթիէ, Միւսէ, Սէնթ-Պէօվ, Ֆլոպէր: Հարուստ եւ գեղանի այրի մըն է Տիկին Սապաթիէ, որուն բարեկամները զինք մականուանած են՝ «Նախագահուհին»: Անկասկած՝ Ժաննի հետ ներկայացուցած հակասութիւնն է որ գրաւած է Պօտլէրի սիրտը: Ամբողջ հինգ տարի, դպրոցականի մը ամչկոտութեամբ եւ խորհրդապաշտին դողերով, Պօտլէր խէժալ պաշտամունք մը պիտի ունենայ անոր հանդէպ, նախ՝ անստորագիր եւ մինչեւ իսկ իր դիրը կեղծած երկտողներ յղելով, ապա՝ ոտանաւորներ, պաղատելով որ զանոնք մարդու ցոյց չտայ:

Բացի Ժաննի նման թեթեւաբարոյ արարածներէն, Պօտլէր կիներու հանդէպ միշտ ալ ունեցած է եւ պիտի ունենայ գրեթէ հիւանդագին երկչոտութիւն մը:

Այս սէրը, որ կրնար զինք փրկել գեղխութենէն ու Ժաննի ճանկերէն, դժբախտաբար պիտի մնայ պղատոնական, մասամբ՝ ի՛ր իսկ յանցանքով:

— Կինը զոր չես վայելեր՝ սիրած կինդ է, պիտի ըսէ ան օր մը, Թէօֆիլ Կոթիէի:

Մեծ ամօթխածութիւն մը — մխիթարութիւն՝ որուն կը սպասէր այնքան երկար ատենէ ի վեր, պիտի ցրուէ իր բոլոր դառնութիւնները: Վերջապէս գտած է հրատարակիչ մը, որ համաձայնած է լոյս ընծայել իր բանաստեղծութեանց հատորը, զոր նախապէս կոչած էր Լիմպոսները, իսկ հիմա, ցոփ կեանքի իր ընկերներէն մէկուն՝ Հիփոլիթ Պապուի խորհուրդին վրայ, որոշած է կնքել՝ Չարիքի Ծաղիկները:

Փարիզի բոլոր հրատարակիչները, յաջորդաբար մերժած էին հրատարակել այս հաւաքածոն: Պատնէշներու օրերուն ծանօթացած բարեկամ մը, Փուլէ-Մալասի (զոր Պօտլէր չարաճճի սիրալիութեամբ Քօքօ-Մալփէրշէ կը կոչէ), կ'որոշէ այդ ռիսքը առնել: Յունիսեան ապստամբութեան մասնակցած ըլլալուն համար, Մալասի երկրէն դուրս վտարուած էր, սակայն իր հօր մահէն քիչ ժամանակ առաջ՝ ներման արժանացած էր: Հայրը, զաւկին ժառանգութիւն ձգած էր Ալանսոնի մէջ փոքրիկ տպարան մը: Հըրատարակչի ասպարէզին մէջ իր առաջին քայլին համար, Մալասի ընտրած էր բանաստեղծութեանց հաւաքածոյ մը, զոր ոչ ոք կ'ուզէր եւ որ ամբողջ աշխարհի մէջ ամէնէն շատ կարդացուած գիրքերէն մէկը պիտի ըլլար:

1857ի Յունիսի վերջերուն է որ լոյս տեսան Շառլ Պօտլէրի Չարիքի Ծաղիկները, աւելի քան տասնըհինգ տարուան աշխատանքի պտուղ, գրուած՝ «կատաղութեամբ եւ համբերութեամբ»: Շանթահարիչ յաջողութիւն մը, որ միեւնոյն ատեն կ'ըլլայ գայթակղութեան յաջողութիւն մը: Օրուան մամուլը այնքան բուռն է, որ կայսերական իշխանութիւն[illegible] կ'այլայլի: Պատժական ատեանին [illegible] Պօտլէր կը դատապարտուի՝ հանրա[illegible] բարոյականին եւ բարի վարուց դէմ [illegible] ծած ըլլալու ամբաստանութեամբ: [illegible] տարանը կը վճռէ հաւաքածոյէն վեց [illegible] տորները ջնջել: Հեղինակը պարտի [illegible] 300 ֆրանքի տուգանք մը:

(Շար. — 7)

...ըստ Ալը որ կոլ միշտ պէտք է նկատի ...առնուի: Բայց, Քուպայի տագնապէն ի վեր միջազգային լարուածութեան մեղ- ...ումը եւ Նատոյի համաձայնութիւ- ...նը, զինք համոզեցին թէ Եւրոպայի մէջ ..., զինք ... Ամերիկեան ազդեցութիւնը պակ- ...եցնելու առենը եկած է:

ՄՈՍԿՈՒԱ ԵՒ ՓԵՔԻՆ

...Արեւելք – Արեւելքի դէմ պաղ պատե- ...րազմը երեք տարիէ ի վեր կը սաստկա- ...նայ: Իր գագաթնակէտին հասաւ, Մարք- ...սիզմը բաժնելով երեք հերձուածներու եւ ...ստեղծելով քրիստոնէութեան, իր երեք ...ճիւղերով.— Կաթողիկէութիւն, Օր- ...թոտոքսութիւն եւ Բողոքականութիւն: ...Համայնավարութեան համար, Մոս- ...կուան «Հռոմ»ն է, Փեքինը՝ Կոստանդ- ...նուպոլիսը եւ Պելկրատը՝ Բողոքականու- ...թեան կեդրոնը:

Բայց, երբ Խրուշչեւ հաստատեց եւ ...մենք ալ կասկածեցանք թէ Չինաստանի ...հետ տարակարծութիւնը կը վատթարա- ...նար, արդիւնքը՝ Արեւելք – արեւմուտքի ...եւ Արեւմուտք – Արեւմուտքի պաղ պա- ...տերազմներուն անմիջական մեղմացումը ...եղաւ: Իսկապէս, արեւմտեան ներքին ...հակամարտութիւնը իր գագաթնակէտին ...հասաւ ճիշդ այն պահուն, երբ չինեւ- ...խորհրդային հերձուածը անդարմանելի ...դարձաւ: Եւ Չինաստանի հետ իր վէճի ...խորացման պահուն, Ռուսաստան տագ- ...նապներ ստեղծեց Պերլինի Պատին ու ...Քուպայի մէջ:

Այս իրողութիւնները չեն հերքեր երեք ...պաղ պատերազմներու միջեւ գոյութիւն ...ունեցող կապը, բայց մեզի կը յիշեցնեն ...թէ քաղաքական ճակատի վրայ վէճի ...սաստկացումը՝ ինքնաբերաբար չեն ան- ...դրադառնար միւսներուն վրայ: Խրուշ- ...չեւ թերեւս Պերլինի եւ Քուպայի մէջ ...այդ յանդգնութիւնը ընտրեց, Չինաստա- ...նի ցոյց տալու համար թէ Արեւմուտքի ...հանդէպ մեղմ պիտի չըլլայ:

Այսուհանդերձ, նշաններ կան, թէ Խը- ...րուշչեւ ներկայիս անկեղծօրէն կը փա- ...փաքի Արեւմուտքի հետ լարուածութիւնը ...մեղմացնել, Ռուսաստանի ստպառաղին- ...ման մեծ ծախքերը պակսեցնելու, իր ...տնտեսական վիճակը բարելաւելու եւ ...համայնավարութեան հակակշռի երկա- ...րատեւ պայքարին նախապատրաստուելու ...համար: Աւելի չի նշանակեր թէ աշխար- ...հի վերջնականապէս տիրելու յոյսը կը ...լքէ: Ոչ ալ կը նշանակէ թէ էական բան ...մը զիջելու տրամադիր է: Եթէ չարու- ...նակուող բանակցութեանց մէջ իրեն ներ- ...կայացուած պայմաններուն չհաւնի, կրը- ...նայ ստանձնել նոր վտանգներ — միշտ ...ալ կորիզային պատերազմի տեսակի:

Արեւմուտք – Արեւմուտք աւելի պատ- ...րաստ պաղ պատերազմի զարգացումները ...կապ ունին Մոսկուայի խօսակցութեանց ...հետ:

ԱՆԿԱՅՈՒՆՈՒԹԻՒՆ

Երեք պայքարներուն մէջ հասարակաց ...դրդիչը անկայունութիւնն է: Շողշողուն բառերը սիրող համայնավարները, իրենց նախկին միակտուրութեան պառակտումը կը կոչեն «բազմակեդրոնացում»: Մեր գաղափարաբանական սահմաններուն մէջ կոլեան շարժումը տեսակ մը ըմբոստա- ցում է կորիզային զէնքերու եւ ռազմա- վարութեան ամերիկեան ամբողջական հակակշռին դէմ: Եւ մինչ ասիկա սկըր- թուկ կը պատճառէ, բայց էական բա- րեկամութիւնը չի խորտակեր, անհաւա- նական է որ չինեւխորհրդային հակա- մարտութեան վատթարացումին կամ նոյնիսկ Արեւելք – Արեւմուտք կասկա- ծամտութեանց նուազագոյն սատիճանի հասնելուն պատճառով տը Կոլ փոխէ իր հիմնական գաղափարները:

Այսուհանդերձ, Միացեալ Նահանգները Եւրոպայի մէջ զօրացուցին իրենց դիրքը՝ ապահովելով Արեւմտեան Գերմանիոյ ա- ջակցութիւնը: Մօտ ատենէն իշխանու- թեան գլուխ գալիք Ատընաուըրի յա- ջորդները կը պահանջեն որ Ֆրանսա իր նաւատորմը պահէ «ՕԹԱՆ»ի հրամանին տակ, — ինչ որ կը մերժէ տը Կոլ — ու Մեծն Բրիտանիոյ եւ ցամաքային Եւրո- պայի յարաբերութիւնները բարելաւ- ուին:

Խոր անկայունութիւն մը կայ խմբակ- ցութեանց մէջ ու միջեւ: Չինացիք աւե- լի քիչ առեւտուր կ'ընեն միւս համայ- նավար երկիրներուն հետ եւ աւելի շատ՝ Արեւմուտքի հետ: Ու կը ջանան Ռու- սիոյ դիրքը խախտել ափրիկեան եւ ա- սիական համայնավար կուսակցութեանց միջեւ, «ճերմակ» պետութիւն: Նմանա- պէս, Եւրոպական բազմաթիւ ազգեր կը ջանան մեկուսացնել Միացեալ Նահանգ- ները, իրենց առեւտուրը թէ Ռուսիոյ եւ թէ չինական խմբակցութեան հետ ընդ- լայնելու արշաւի մը ձեռնարկելով:

Պատերազմէն ու չինական յեղափոխու- թենէն ետք երկար ատեն աշխարհը սա- ռեցնող սառնակոյտը կը փշրուի եւ երեք պաղ պատերազմներէն ամէն մէկը մաս ունի խորտակումի ձեւակերպութեան մէջ: Բայց, տակաւին շատ կանուխ է նշմարելու համար թէ հոսանքները ո՞ր ուղին կը հետեւին:

Քաղեց՝ Վ.ԱԶՐԻԿ

ՁԱՅՆԵՐ ԳԱՒԱՌԷՆ

ԽԱՆԱՍՈՐԻ ՏԱՐԵԴԱՐՁԸ ՏԷՍԻՆԻ ՄԷՋ

ՏԷՍԻՆ (Յառաջ).— Յուլիս 28ի կիրա- կին ուրախութեան բացառիկ օր մը ե- ղաւ մեր գաղութին համար: Օդը պայ- ծառ, երկինքը կապոյտ, տրամադրու- թիւնները վառ: Խանասորի արշաւանքին 66րդ տարեդարձն էր որ կը տօնուէր բացօթեայ հանդէսով մը, նախաձեռնու- թեամբ Հ. Յ. Դ. տեղւոյն Կոմիտէին ու մասնակցութեամբ Հ. Յ. Դ. Նոր Սե- րունդի «Դրօ» մասնաճիւղին: Որքան հո- գեպարար է տեսնել մեր երիտասարդու- թիւնը երգելու կողքին, այնքան հա- ւատաւոր, ձեռներէց ու գիտակից: Պէտք էր գիտել մեր սիրելի տղոց մեղուաջան աշխատանքը:

Առաւօտէն, ձայնասփռուած հայկական երգերն ու եղանակները եթերն ու մեր հոգիները կ'ողողէին թովչական ալիք- ներով: Կարգադիր յանձնախումբը ար- դէն աշխոյժով գործի լծուած է՝ ազան- դերներու պատրաստութեան եւ շամփրը- ուած միսը խորովելու:

Երեկոյեան ժամը 4ին, ընկ. Մովսէս Կարապետեան պաշտօնապէս բացաւ հան- դէսը: Եւ ահա Նոր Սերունդի խումբը ներդաշնակութեամբ երգեց «Կարկուտ տեղաց»ը:

Ընկեր նախագահը իր բացման խօսքով դրուատեց ետք արշաւանքի հերոսներու անձնուիրութիւնը, ոգեկոչեց անոնց քաջըր յիշատակը: Արշաւանքը, ըսաւ, յաղթանակն էր Հ. Յ. Դաշնակցութեան, որուն գաղափարաբանութիւնը ահա 66 տարիներ ետքն ալ արմատացած է ներ- կայ սերունդին սրտին մէջ:

Գեղարուեստական պատշաճ յայտագիր մը գործադրուեցաւ: Յաջողութեամբ ար- տասանեցին Գէորգ Պառաւեան, ընկ. Պետրոս Թուլթլեան, Լիոնի Նոր Սերուն- դէն Վարուժան Սարգիսեան եւ փոքրիկն Յակոբեան:

Մեներգեցին Յակոբ Սեւեան, Վալան- սէն Յակոբ Քէչէճեան եւ Տիկին Մառի Կարապետեան: Բոլորն ալ արժանացան ջերմ գնահատութեան: Կրկնակի ծափեր խլեցին Գ. Պառաւեան, Պ. Թուլթլեան եւ Տիկին Մառի Կարապետեան:

Իսկ սեղաններէն յեղափոխական եր- գերու զօռ ալիքներ աւելի կը բարձրա- ցնէին տրամադրութիւնները: Աւելորդ է ըսել որ գինին ալ կը ներգործէր ու կը հրահրէր ոգեւորութիւնը:

Օրուան բանախօսն էր ընկ. Պօղոս Տէր- Պօղոսեան որ բեմ հրաւիրուեցաւ: Մեր սիրելի ընկերը շատ գեղեցիկ կերպով վերլուծեց օրուան տօնին նշանակութիւ- նը: Պատմականը ընելով արշաւանքին, ըսաւ թէ իր հիմնադրութենէն միայն եօ- թը տարի ետքը, Հ. Յ. Դաշնակցութիւնը յաջող կերպով կազմակերպեց արշաւան- քը արիւնարբու Շարաֆ պէկի դէմ, ոչ միայն սանձ մը դնելու համար համիտ- եան հորդաներու վայրագ գործունէու- թեան, այլ եւ ստեղծելու հոգեկան նը- պաստաւոր տրամադրութիւն մը հայ ժո- ղովուրդին բարոյական ընկճուած վիճա- կին մէջ, թափ տալով անոր յեղափոխա- կան ոգիին ու ազգային արժանապատ- ուութեան:

Խանասորը, ապացոյց մը եղաւ որ Հայն ալ գիտէ կռուիլ, թօթափել բռնա- տիրական լուծը ու արհամարհել մահը: Մեր յեղափոխութիւնը, շնորհիւ Հ. Յ. Դաշնակցութեան եւ հերոսներու անձ- նուիրութեան նուիրագործուեցաւ Մայիս 28ի Հայաստանի անկախութեամբ:

Անդրադառնալով ներկայ պայմաննե- րուն, յարգելի բանախօսը վերջացուց իր խօսքը, իր գոհունակութիւնը յայտնեց որ Նոր Սերունդը նոյն յեղափոխական ոգիով թրծուած՝ դրօշակիրը կը հանդի- սանայ Հ. Յ. Դաշնակցութեան գաղա- փարաբանութեան:

Ապա խօսք տրուեցաւ Լիոնի Ազգ. Միութեան նախկին քարտուղար Պ. Յա- կոբ Վարժապետեանի, որ ջատագովեց հայ ժողովուրդին առաքինութիւնները, անոր տոկունութեան ու յարատեւման ուժը, մշակոյթի բարձր մակարդակը եւ ներկայիս գիտական թէ այլ մարզերու մէջ անոր արձանագրած վերելքը: Դրուատա- լից խօսքեր ուղղեց նաեւ Նոր Սերունդին, որ օտար երկիրներու մէջ, հակառակ ազգային աննպաստ պայմաններու, կը ջանայ պահել իր Հայու իւրայատուկ դի- մագիծը:

Զգացումով արտասանեց Պ. Բագրատ Խոստիկեան:

Խօսք տրուեցաւ նաեւ Փոն տը Շէրիի մեր ընկերներէն Աշոտի, որ մաղթեց ազ- գային իտէալներու իրականացումը՝ հա- մերաշխութեամբ ու համագործակցու- թեամբ:

Վիճակահանութեան պահարաններ շու- տով սպառեցան կոկիկ շահ մը ապահո- վելով: Այս առթիւ շնորհակալութիւններ Տէսինի առեւտրականներուն որոնք իրենց նուիրած առարկաներով նպաստեցին պա- հարաններու պատրաստութեան:

Այնուհետեւ դարձեալ խրախճանքը շա- րունակուեցաւ, ազգային ու յեղափոխա- կան երգերով համեմուած, մինչեւ որ մութը եկաւ իր կամքը պարտադրելու եւ վերջ տալու այս յիշատակելի օրուան: Ապրի՛ Նոր Սերունդը որ ահա կանգնած է պատնէշի վրայ: Անշուշտ կը հրճուին Շաւարշներու ոգիները ի տես այս գա- ղափարական երիտասարդութեան, որոնց պաշտպանն ու դաստիարակը հանդիսա- ցան:

ՆԵՐԿԱՅ ՄԸ

×

Ֆ. Կապ. Խաչի Տէսինի Ազգային դըպ- րոցի ամավերջի հանդէսը տեղի ունեցաւ Յուլիս 7ի կիրակի կէսօրէ ետքը՝ Հ. Յ. Դ. Տան մէջ, ղեկավարութեամբ ուսու- ցիչ Պր. Թրադօշի: Հրաւիրուած էր նաեւ տեղւոյն Հովիւ Տէր Վարագ քհնյ. Աւագ- եան:

Եղան արտասանութիւններ, խմբերգ- ներ, ինչպէս նաեւ բարոյալից, ազգային ու զաւեշտական թատերախաղեր: Բո- լորն ալ յաջող էին ու ջերմօրէն ծափա- հարուեցան: Դժբախտաբար ներկաներուն թիւը խղճալի էր: Անշուշտ ամէն ոք իր հաճոյքներուն անձնատուր՝ նախընտրեց բնութեան ծոցը, սրահէն: Անտեսելով տարուած աշխատանքը եւ մեր փոքրիկ- ները քաջալերելու անհրաժեշտութիւնը:

Դպրոցին եւ հայեցի դաստիարակու- թեան կարեւորութեան մասին խօսեցան Պր. Թրադօշ եւ Տէր Հայրը, որոնք կոչ ըրին ծնողքներուն անտարբեր չըլլալ ի- րենց զաւակներուն մայրենի լեզուի ու- սուցման հանդէպ:

Արժան. Տէր Հայրը ղեկուցում մը տը- ւաւ նաեւ դպրոցին աշակերտութեան իր աւանդած կրօնական դասընթացքի մա- սին: Տէր Հօր պահպանիչով եւ ներկանե- րուն մասնակցութեամբ երգուած «Հայր մեր»ով հանդէսը վերջ գտաւ:

ԳԻՄ

«ՅԱՌԱՋ»Ի ԹԵՐԹՕՆԸ (201)

ԵՐԼՏՐՁԻ ՊՕՄՊԱՆ

ՀԱԶԱՐ ԻՆԸ ՀԱՐԻՒՐ ՉՈՐՍ

3. Ռուպինա Ֆայն, նաեւ կը կոչուի Աղջիկ Ռօլֆ եւ Նատէժտա Տաթալեան (փախստական), ընիկ Կովկասի Հայուհի- ներէն, որուն իսկական անունը կարելի չեղաւ դեռ հաստատել, յանցապարտ է այս ծածկանուններուն տակ մասնակցած ըլլալով Պոլսոյ մէջ, յեղափոխական կո- միտէին եղեռնական ձեռնարկներուն պատրաստութեանը, ի՛նչ կանխամտա- ծած ու գործադրած է վերջին 8 Յուլիսի մահափորձը, մասնաւորապէս ներկայ ե- ղած է կոմիտէի անդամներուն խորհըր- դակցութիւններուն, եւ իբրեւ ներշնչեալ կոյս մը, ոճիրի կազմակերպիչներու փորձերուն մէջ ալ նետած է ինքզինք, իրեն յարողները շատցնելու, յեղափո- խական գաղափարները վերարծարծելու եւ կոմիտէի անդամներուն գործունէու- թեանը զարկ տալու համար հրանիւթե- րու փորձերուն անձամբ եւ գործնակա- նապէս մասնակցած է, դժոխային մեքե- նան ուսումնասիրած ու պատրաստած է, ի՛նչ է պայթեցուցեր այդ ռումբը՝ մա- հափորձի կառքին մէջ, նախորդ յանցա- պարտին ընկերակցութեամբ:

Այս ոճիրները նախատեսուած են Պատ- ժական Օրէնքին 55րդ յօդուածով եւ 58րդ յօդուածին երկրորդ յաւելուածին առա- ջին հատուածովը:

4. Մառի Զայձ, նաեւ կոչուած Սոֆի Արաշօ (փախստական), Կովկաս ծնած գերման հօրմէ, յանցապարտ է, որովհե- տեւ Սոֆի Րիփս կեղծանունին տակ եւ ինքզինք այդ կեղծանունը կրող ոճրա- գործին կինը ցոյց տալով, հայ յեղափո- խական կոմիտէի եղեռնական ձեռնարկ- ներուն կազմակերպութեան եւ պատրաս- տութեան եւ վերջին Յուլիս 8ի մահա- փորձին զանազան հանդերձանքներուն մասնակցած է, այս նպատակով ինքզինք տրամադրելով կոմիտէին. իր գործօն մասնակցութիւնը դրած է իր կարծեցեալ էրկան բոլոր արարքներուն մէջ, ի՛նչ է որ ընտրած եւ իրեն ետեւէն ձգած է այս ձեռնարկներուն ծառայելու համար, ոճ- րագործուհի Ռուպինա Ֆայնը:

Այս ոճիրները նախատեսուած են Պատ- ժական Օրէնքի 55րդ յօդուածով եւ 58րդ յօդուածի երկրորդ յաւելուածին առաջին հատուածովը:

5. Վռամշապուհ Քէնտիրեան (փախ- ճանեալ), ընիկ Կ. Պոլսեցի Հայ մը, Սին- կըրի Ընկերութեան գրասենեակներու պաշտօնեաներէն, հայ յեղափոխական կոմիտէին մէջ Վաղարշակ անունով ծա- նօթ, ուսումնասիրած եւ կազմակերպած էր Պոլսոյ եղեռնական ձեռնարկներուն ծրագիրը:

6. Վահան (փախստական), ընիկ Ֆիլի- պէցի Հայ մը, յանցապարտ ճանչցուած է, Սիլվիօ Րիչչի, Արիստիտի, Քառլ Րատնէր, Ալֆոնս, Վոկան, Գոչօ եւ Քրիս ծածկանուններուն տակ մասնակցած է Կ. Պոլսոյ եղեռնական ձեռնարկներուն, ծրագրի կազմակերպութեան պատրաս- տութեան, ինչպէս նաեւ վերջին Յուլիս 8ի մահափորձին զանազան պատրաստու- թիւններուն, մասնաւորապէս ներկայ ըլ- լալով Կ. Պոլսոյ կոմիտէի անդամներուն հաւաքոյթներուն. ի՛նչ մեղուցած է Ֆրանսա գնուած եւ Բիրէա ղրկուած մելինիթը, անկից Վառնա եւ այս վեր- ջին քաղաքէն Պոլիս, ֆրանսական նամա- կատան մէջ տուփ մը վարձած է Րատնէր ծածկանունով եւ այդ հասցէով ընդու- նած է Եղեռնակառքին մաքսաթուղթերը, մաքսատունէն դուրս հանած եւ առաջ- նորդած է այս կառքը Շիշլիի ախոռը, պատրաստելով դժոխային մեքենային կազմաւորումը, եւ այս նպատակին հա- մար ձեռք բերած է չոր փիլեր Կ. Պոլսոյ ելեկտրական գործիքներու վաճառատու- նէ, պայթուցիկ նիւթեր եւ առարկաներ փոխադրած է իր վարձած սենեակին մէջ, իր նշանած Մառի Սարկոլոկոյի, հօրա- քրոջ տունը, ինչպէս նաեւ ամբաստան- եալներուն, ինչպէս Ժորիսի, Ճոնս յար- կաբաժնի դռնապան Մանուկի, Աւըս- տրիական հիւանդանոցին դռնապան Ա- ռաքելին եւ Յովհաննէս Ղարիպեանի եւ իր քեռորդի Յովսէփ Թօփալեանի քով, ինչպէս նաեւ ուրիշ տեղեր:

Այս ոճիրները նախատեսուած են Պատ- ժական Օրէնքի 55րդ յօդուածով եւ 58րդ յօդուածին երկրորդ մասին –առաջին հատուածովը:

ՍՄԲԱՏ ԲԻՒՐԱՏ

(Շար.)

ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ

Ս. ՅԱԿՈԲ (ԼԻՈՆ)

Շաբաթ (17 Օգոստոս), Նախատօնակ երեկոյեան ժամը 5ին։ Կիրակի (18 Օգոստ.), սկիզբն. ժամերգթ. առաւօտ ժամը 7,30ին։ Պատարագ ժամը 10ին։ Խաղողօրհնէք 11ին, Հոգեհանգիստ ժամը 11,30ին։

Լիոնի եւ Շրջ. Հայ Ազգային Միութեան Վարչութիւնը կը հրաւիրէ շրջանի բարեպաշտ հայ ժողովուրդը ներկայ ըլլալու 18 Օգոստոսին Ս. Աստուածածնայ տօնի առթիւ կատարուելիք արարողութեանց։ Յաւարտ պատարագի տեղի պիտի ունենայ նաեւ խաղողի եւ մատաղի աւանդական օրհնութիւնը։

ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ՏԱՆ

Տիկին Աննիկ Փափազեանի կսկծալի մահուան առթիւ փոխան, ծաղկեպսակի Հայ Մշակոյթի Տան նուիրած են.

Պ. Ստեփան Էլչիբեկօֆ 25 Ֆր.
Պ. Պետրոս Չպուքճեան 25 Ֆր.

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

ԿԱՌՏԱՆ.— Այրի Տիկին Նաւոյեան եւ զաւակները կը ծանուցանեն թէ հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի այս երկուշաբթի օր (Օգոստ. 12) Կառտանի եկեղեցւոյ մէջ իրենց ամուսնոյն եւ հօր՝

ԱՐԱՄ ՆԱՒՈՅԵԱՆԻ

մահուան տարելիցին առթիւ։

Կը պատարագէ Գերաշնորհ Յովհ. Ծ. Վ. Զուհաճեան։

Կը հրաւիրուին ողբացեալին յիշատակը յարգողները։

ՍԱՄՈՒԷԼ ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ
ՆՈՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Իրենց զաւակները արձանագրել փափաքող ծնողքները պէտք է փութան դիմել տեսչութեան հասցէին։

COLLÈGE ARMÉNIEN SAMUEL MOORAT
26, Rue Troyon, SEVRES (S. et O.)
Tél. : OBS. 18-28

Եւրոպայի մէջ, հայ մանչերու համար հիմնուած, ֆրանսական եւ հայկական ուսումնական կատարեալ ծրագիրներով օժտուած մեծագոյն եւ ծաղկեալ ուսումնարանն է Սեւրի Սամուէլ Մուրատեան վարժարանը, որուն սեմէն ներս հայ մանուկին հոգին, միտքը եւ մարմինը կը մեծնայ, կը ծաղկի եւ կ'ընդլայնի բաղձալի համեմատութիւններով։

ՀԱՅ ԸՆԾԱՅԱՐԱՆ
ԲԱՑՈՒԱԾ ԵՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ուսումնական 1963–1964 Տարեշրջան

Կ'ընդունուին 10–12 տարեկան բարեկիրթ եւ ուսումնասէր աշակերտներ, որոնք ունին իրենց տարիքին համապատասխան նաեւ ուսումնական աստիճան։

Արձանագրութեան եւ լուսաբանութեանց համար դիմել՝

Direction du Petit Séminaire Arménien
3, Av. de Grandchamp, LE PECQ (S. et O.)
Tél· 963.01.72

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Հ. Բ. Ը. Միութեան Տիկնանց յանձնախումբը կը խնդրէ կազմակերպութիւններէն նկատի ունենալ հետեւեալ թուականները.—

ՀՈԿՏԵՄԲԵՐ 1, Երեքշաբթի երեկոյ Տիկնանց յանձնախումբի կազմութեան Գ. տարեդարձին առթիւ գեղարուեստական երեկոյթ։

ՀՈԿՏԵՄԲԵՐ 19, ցուցահանդէս հայ արուեստագէտներու նկարիչ, արձանագործ եւ փորագրիչներու գործերուն։

Հայկական Թանգարանը, 52 Ավընիւ Ֆոշ, (Փարիզ 16)։

ԴԵԿՏԵՄԲԵՐ 7, 8, 9, 10, «Բարենպատակ վաճառք»։

Յառաջիկային պիտի տրուին մանրամասնութիւններ։

Շ. ՄԻՍԱՔԵԱՆ

Օրեր եւ Ժամեր

ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ ՆԻՍԻ ՄԷՋ
ՀԵՐՈՍՆԵՐՈՒ ՕՐՈՒԱՆ ԱՌԹԻՒ

Խանասորի 66րդ տարեդարձը կը տօնուի նախաձեռնութեամբ Հ. Յ. Դ. Գէորգ Զաւուշ խումբին, հովանաւորութեամբ Մարսէյլի Շրջ. Կոմիտէին, այս կիրակի ամբողջ օրը Լա Թոլ Սիւր Լու գետեզերքը – անտառին մէջ։

Հաճելի օր մը (գետի լոգանք կարելի է)։

Կը նախագահէ ընկ. Յ. ՇԻՇԼԻԵԱՆ

Կը բանախօսէ ընկ. Յ. ՆԻԿՈՂՈՍԵԱՆ

Ծանօթ.— Մասնաւոր օթօքար մը վարձուած է։ Առաւօտուն ժամը 8,30ին ճամբայ կ'ելլէ Փլաս Մասէնայէն–Ալպէր Ա. պարտէզէն (Քազինօ Միւնիսիփալին դիմացը)։ Նոյն օթօքարը կը հասնի Մատըլէն ժամը 9ին։

Ժամը 9,30ին կուգայ Մանեան Սթատին (քովը աղբիւրին մօտ սպասել) զայն առնելու համար։

Իսկ անձնական կառքով եկողներուն համար, երկու քիլոմեթր է Թոլ Սիւր–Լու գիւղէն – Կրասի ճամբուն վրայ։ Անկիւնը Ճաշարան–Պառ–Պաքիւսէն աջ դառնալ եւ մտնել անտառը գետեզերքը։

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Տիկ. Միութեան Որբերու Օգնութեան Մարմինը տրամադիր ըլլալով քանի մը անպաշտպան տղոց հայեցի դաստիարակութիւնը հոգալու, հարկ կը համարի ծանուցանել, որ շահագրգռուողները այժմէն դիմեն իրեն գրաւոր իր կեդրոնատեղին, 15 Ռիւ Ժան Կուժոն։

ԴՊՐՈՑԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Դպրոցասէր Տիկնանց վարժարանին 1963 – 1964 տարեշրջանի արձանագրութիւնները սկսած են։ Անոնք որոնք կը փափաքին ղրկել իրենց զաւակները պէտք է այժմէն իսկ դիմում կատարեն հաստատութեան տնօրէնութեան։

Ա.— ՖՐԱՆՍԱԿԱՆԸ, որ տասացի կերպով կը հետեւի պետական լիսէներու արդիական բաժնի պաշտօնական ծրագրին — անգլերէն եւ սպաներէն լեզուներով —։

Բ.— ՀԱՅԿԱԿԱՆԸ, որ կ'օժտէ սանուհիները հայագիտական ծանօթութիւններով, հայ լեզուի, գրականութեան, հայ կրօնքի եւ պատմութեան, Հայաստանի աշխարհագրութեան մարզերուն մէջ։

Աշակերտուհիներ կ'ընդունուին ութ տարեկանէն սկսեալ։ Մանրամասնութեանց համար դիմել հաստատութեան տնօրէնութեան։

1, Bd. du Nord, LE RAINCY (S. et O.)
Tél : 927-01-72

Դպրոցասէրի ուսման ծրագիրը կ'ընդգրկէ երկու ուրոյն բաժիններ։

IMPRIMERIE SPECIALE
DU JOURNAL « HARATCH »
32, Rue de Trévise, PARIS (9e)

ԱՆԾԱՆՕԹ ԶԻՆՈՒՈՐԻՆ ԲՈՑԸ

Ցաղթական Կամարի Բոցի Կոմիտէն Հայ Նախկին Ռազմիկներու եւ Կամաւորներու Միութեան յանձնած է Անծանօթ Զինուորին բոցը արծարծել այս կիրակի ժամը 18,30ին։

Հաւաքոյթ՝ ժամը 18ին էթուալի Թէփլէնին վրայ, ուսկից սովորական թափօրը պիտի դէպի Ցաղթական Կամար կ'առաջնորդէ։

Անդամներն ու բարեկամները իրենց ընտանիքներով կը հրաւիրուին մասնակցելու այս արարողութեան, աւելի հանդիսաւոր փայլ մը տալու համար անոր։

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

ԼԻՈՆ.— Ֆր. Կապ. Խաչի Օրը կը տօնուի մեծ պատրաստութեամբ, 27 Հոկտ. Մոլիերէի շքեղ սրահին մէջ։

×

Փարիզահայ Տիկնանց Միութեան յիսնամեայ յոբելեանը կը տօնուի Հոկտեմբեր 13ին, Սալ տը լա Շիմի։

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

ORIENT

Եռամսեայ պարբերական ամբողջովին նուիրուած Միջին Արեւելքի երկիրներու անցուդարձին։

Բ. եռամսեայ 1963 — թիւ 26
Շահեկան բովանդակութիւն
114, Champs-Elysées, PARIS

ՀՐԱՆՏ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

51, Rue Monsieur-le-Prince, PARIS - 6e — Chèque Postal : 1278-35

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՇԻՐՎԱՆԶԱԴԷ, Երկերի ժողովածու, 10 հատոր լաթակազմ	70 Ֆր.
ՍՏԵՓԱՆ ԶՕՐԵԱՆ, Երկերի ժողովածու, 7 հատոր, լաթակազմ	56 Ֆր.
ՍՏԵՓԱՆ ԶՕՐԵԱՆ, Պապ թագաւոր, լաթակազմ	10 Ֆր.
ՍՏԵՓԱՆ ԶՕՐԵԱՆ, Հայոց բերդը, լաթակազմ	8 Ֆր.
ՎԱՀԱՆ ՏԷՐԵԱՆ, Երկերի ժողովածու, 2 հատոր լաթակազմ	14 Ֆր.
ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՒԻԹ, մեծադիր, գունաւոր նկարներով, լաթակազմ	10 Ֆր.
Վ. ԱՆԱՆԵԱՆ, Հայաստանի կենդանական աշխարհը, Բ.	8 Ֆր.
ԱՐՍԷՆ ՏԷՐՏԷՐԵԱՆ, Երկեր (Արովեան Պռօշեան, Պարոնեան)	17 Ֆր.
ՄՈՒՐԱՑԱՆ, Պատմուածքներ, գունաւոր նկարներով	5 Ֆր.
ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑԻ մասին յիշողութիւններ. լաթակազմ	7·50 Ֆր.
ՄԻՔ. ՇԱԹԻՐԵԱՆ. Գարունը նորից եկաւ. 296 էջ.	5 Ֆր.
ԱԲԳԱՐԵԱՆ. Մատենադարան(անգլ.) 18 գունաւոր մանրանկարներ	3 Ֆր.
ՀԵՆՐԻԿ ԹՈՒՄԱՆԵԱՆ. Երգի ծնունդը. բանաստեղծութիւններ	3·85 Ֆր.
Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ. Տաղեր, 200 էջ. լաթակազմ	3·50 Ֆր.
ՍՈՎԵՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ. Ա. 800 էջ. լթկզմ.	16 Ֆր.
ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ, Անլռելի զանգակատուն, Պէյրութ, 1963	10 Ֆր.

Առաքման ծախքը գնողին վրայ

ԳՐԱՏՈՒՆՍ ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻՆ Է
ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՁԱՅՆԱԳՐԵԱԼ ԲՈԼՈՐ ԵՐԿԵՐՈՒՆ
ՃՈԽ ՄԹԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԵՒ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆՑ

ԼՈՅՍԸ ԳՈՅՆ Է.... ԳՈՅՆԸ ԼՈՅՍ Է
ՁԵՐ ՏԱՆԸ ԼՈՅՍ ՏՈՒԷ՛Ք.... ԹՈՄԼԱՔԻ ԳՈՅՆ ՏՈՒԷ՛Ք

Ձեր բնակարանը կը լուսաւորուի
Եթէ ներսը եւ դուրսը

ՎԵՐԱՆՈՐՈԳԷՔ – ԶԱՐԴԱՐԷՔ – ՆԵՐԿԷՔ

ԹՈՄԼԱՔ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐՈՎ

PEINTURES THOMLAC

16 bis, Bd. Sébastopol, Paris 4e
Tél. ARC 26-61 – Métro : Halles et Chatelet

136, RUE DES BOURGUIGNONS — ASNIERES - BOIS COLOMBES (Seine)
Tél : GRE. 09-47
11, BD. DE LA REPUBLIQUE — LA GARENNE (Seine)
Tél. : STA. 19-06

ԱՆՄՐՑԵԼԻ ԳԻՆԵՐՈՎ

Ամէնէն արդիական, նուրբ եւ ընտիր ճաշակով պատրաստուած՝ առաջնակարգ ներկեր։ Բնական եւ արուեստական բազմերանգ գոյներու մեծ ընտրութիւն։ Նորոյթ խղանկեր, պատի գեղեցիկ թուղթերու ճոխ ընտրութիւն։ Գետնի համար՝ ամէն տեսակ — լինոլէոմ եւ փլասթիք — ծածկոցներ. —

TAPIFLEX — TAPISOM — CARPETTE

Ձեր բնակարաններուն արտաքին եւ ներքին խնամքներուն համար անհրաժեշտ բոլոր նիւթերը։

Ամէն գնորդի կը նուիրուի յատուկ տետրակ մը, որու շնորհիւ կրնայ 10–30 առ հարիւր զեղչ ունենալ։

ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐ

52, RUE CHALON, PARIS 12e — 64, BLD. DE BELLEVILLE, PARIS 20e
166, AV. ARISTIDE BRIAND — PAVILLONS - SOUS-BOIS (Seine)
4 bis, RUE PAUL VAILLANT COUTURIER — ARGENTEUIL (S. et O.)
24, RUE PAUL VAILLANT-COUTURIER — ALFORTVILLE (Seine)
48 bis, RUE DALAVRAC — FONTENAY - SOUS - BOIS (Seine)

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

Le PREMIER QUOTIDIEN ARMENIEN en EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction et Administration : 32, Rue de Trévise - PARIS-9e

Fondé en 1925 — Téléph. : PRO. 86-60

R. C. Seine 57 A 2731 — C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա՝ Տար. 50 Ֆ. — Վեցամսեայ՝ 27 Ֆ.

Արտասահման՝ Տար. 60 Ֆ. — Հատը 0.30 Ֆ.

ԿԻՐԱԿԻ 11 ՕԳՈՍՏՈՍ

DIMANCHE 11 AOUT 1963

LE NUMERO : 0,30 FR.

39րդ ՏԱՐԻ — ԹԻՒ 9680

Fondateur : SCHAVARCH MISSAKIAN

39e ANNÉE — N° 9680

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ԽՐՈՒՇՉԵՒ - ՏԻՆ ՌԸՍՔ ՄԻՐԱՒԻՐ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

...ատրեան տաքութեան տակ, Խրուշ-...ւ եւ Տին Ռըսք քաղաքական հարցերով ...ցեկէ առաջ, պատմիչերը խաղացած ...ն եւ Խրուշչեւ յաղթած է։

...նդհանուր մթնոլորտը շատ սիրալիր ...ւ բեկանեկան եղած է, Կակրայի մէջ, ...ու Սեւ Ծովու կիզիչ արեւին տակ, շըր-...ջապատուած իր թոռնիկներով, Նիքիթա ...Խրուշչեւ արձակուրդը կ'անցընէ, գու-...նաւոր շապիկներ հագած (ուկրայնական ...տարազի...)։ Ի տես այս մտերմիկ ...մթնոլորտին, Տին Ռըսքն ալ բաճկոնը ...հանած է եւ շապիկով սկսած է խօսիլ ...ծերացած վարչապետին հետ։

...յս խօսակցութեանց առթիւ հրատա-...րակուած ղեկոյցը կը յայտնէ միայն թէ ...մայցը տեղի ունեցած է անկեղծ եւ սի-...րալիր մթնոլորտի մը մէջ։

X Հիւսիսային Վիէթ-Նամը դէմ է ...ական դաշնագրին։ «Նան Տան»ը որ ...պաշտօնաթերթն է Հիւսիսային Վիէթ-...նամի բանուորներուն, կը գրէ իր խմբա-...գրականին մէջ թէ Մոսկուայի մէջ կըն-...քուած համաձայնագիրը չի կրնար ար-...գիլել համաշխարհային պատերազմի ...պայթիլը, այլ զինաթափման համար...։

...մանիա որոշած է անդամակցիլ այս ...գիրքին։ Կը հաղորդուի թէ որոշումը ...տուած է Նախարարաց Խորհուրդին ...կողմէ, որու կը նախագահէր զօրավար ...Ֆրանքօ։

...րդ 45 երկիրներ ստորագրած են ...ական համաձայնագիրը։

...ԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

...ՈՒՐԻԱՅ եւ Իսրայէլի սահմանին վը-...րայ կացութիւնը յանկարծ ծանրացած ...։ ՄԱԿի պատուիրակութիւնը, որ Դա-...մասկոս գացած էր երեք Իսրայէլացինե-...րու արձակումը ուզելու համար, ձախո-...ղած է։ Իսրայէլ սկսած է սպառնալ։ Այս ...թիւ ձերուզալէմ փութ կը գրէ.— ...Պոր միայն Սուրիա է որ կը շարունա-...կէ ...իրներ կատարել Իսրայէլի բնակիչ-...ներուն եւ ինչքերուն դէմ։ Կասկած չկայ ...թէ ...հանել մը պիտի ունենայ տալիք»։

...ՐԱՔ եւ Սուրիա միացեալ ղեկոյց մը ...հրապարակած են ուր կ'ըսեն թէ պէտք է ...ազատագրել Պաղեստինը։

...ՖԻՆԼԱՆՏԱՅԷՆ վերադարձին Մաքմի-...լան եւ Լորտ Հիւմ պաշտօնական այցե-...լութեան մը համար Շուէտ ժամանած են։

...ՄՈՍԿՈՒԱՅԻ մէջ գործատան մը տնօ-...րէնը մահուան դատապարտուած է, ո-...րովհետեւ ուրիշ գործատուներէ գինի ...գնած է. երբեւ կաշառք։ Այդ գինիին ...մեծ մասը իր արտադրութեան մէկ մասը ...եղած էր որպէսզի միւս գործատուները ...կորուստ չունենան, եւ մնացած ըլլա-...յին իրենց արտադրութեան մէջ։

...ՖՐԱՆՔԵՒ ԹՈՒՆՈՒԶԵԱՆ երեք համա-...ձայնութիւններ ստորագրուեցան Փարիզի ...մէջ։ Ֆրանսա 190 միլիոն պիտի տայ ...Թունուզի։

...ԲԵՆ ՊԵԼԼԱ Լիպերիա հասած է ուր-...բաթ օր։ Այս այցելութեամբ Ալժերիոյ ...նախագահը կը վերջացնէ իր ափրիկեան ...պտոյտը։

...ՆԱԽԱԳԱՀ ՔԵՆԸՏԻԻ երրորդ զաւկին ...վիրահատութիւնը կատարուեցաւ ...Պոսթընի մէջ։ Նորածինը ...երկու օր ապրած է, ճիշդ՝ 39 ...ժամ։ Երախան անմիջապէս մկրտուած

ԱՍՔ ՄԱՇՏՈՑԻ ՄԱՍԻՆ (*)

(Գ. եւ վերջին մաս)

Խօսեց մեր լեզուն,
Ոսկեղենիկը մեր ոսկեբարբառ,
Որ Շիրակացի մի կորովամիտ ու ըմբոստ
մի այր
Իր խաւար դարի խաւար երկնքից
հրաշքներ պեղի,
Անշէջ հրի պէս մատեաններում յաւէտ
անթեղի
Խորհուրդն աստղերի, խորհուրդը նիւթի,
Անմահ խորհուրդը յաւերժ պտոյտի,
Խորհուրդներ, որոնք
Ցած էին բերում աստծուն իր գահից
Ու մարդուն տալիս գահն այդ աստղային։
Խօսեց մեր լեզուն,
Հոգուն թեւ դարձաւ ու հանճարին սիւն,
Խօսեց, որ մի այր խաւար խցի մէջ
Նարեկայ վանքի
Իր հոգին բանայ մի աստուածային
վսեմ ճախրանքի,
Կապոյտ աղօթքով մրրկի ինչպէս
ծովակը Վանայ,
Սրբուի, մաքրուի,
Մերձենայ աստծուն,
Ոչ... աստուածանայ։

Մենք վիշտ ունէինք,
Մեր ցանգատն էր մեծ,
Լռել չէր կարող
Լեզուն մեր անեղծ,
Նա պիտի խօսէր,
Պիտի ընդվզէր,
Որ մի տառապած ու հէզ ժողովուրդ,
Կանգնած լեռներում բարձրաբերձ
ու լուրթ,
«Ֆրկան ասացեալ» շանթակերպ խօսքով
Անարդար աստծու ճակատը խանձի,
Թէ մէկն ինչո՞ւ է ծովանում ոսկով,
Միւսը չունի փող մի պղնձի։
Մենք վիշտ ունէինք,
Բայց եւ ունէինք անպարտ մի սէր,
Եւ պիտի ապրէր եւ պիտի խօսէր
Մեր ոսկեղենիկ ու ճարտար լեզուն,

Որ սիրուց գինով մի Աղթամարցի
Աշխարհի առաջ իր սիրտը բացի
Եւ խոստովանի, որ ալ կրակ կայ
Իր վանականի սեւ սքեմի տակ,
Որ մի հանճարեղ, զուարթ մի Քուչակ
Իր սիրեցեալի ներմակ ծոցիկը
ժամատուն անի
Եւ իր սուրբ մեղքերն արդ խորանի դէմ
լոկ խոստովանի,
Որ դժբախտ ու մեծ մի Սայաթ-Նովա
Ասի աշխարհին, թէ ի՛նչպէս գիտենք
մենք սիրահարուել
Եւ ի՛նչպէս գիտենք սիրոյ մէջ այրուել..

Սակայն մեր սիրոյն միշտ տառապանքի
հողմն էր ուղեկից,
Մեր գլխի վրայ միշտ ատելութեան
մրրիկն էր վայում,
Մեր սիրտն էր խոցուել սրից ու տէգից
Ու դժնի, դժնի գիշեր էր իջել Հայոց
աշխարհում։
Իջել էր մի սեւ, զարհուրիկ խաւար,
Ու ողջը աւեր ու ողջը աւար,
Հայոց յոյսերը՝ պատառ-պատառիկ,
Հայոց կոյսերը՝ հարէմին գերի,
Կիսալուսինը՝ շիկացած չարիք,
Բարիքն էր հնձում Հայոց արտերի։

Մենք վիշտ ունէինք,
Խորունկ էր այնպէս վէրքն Հայաստանի,
Ու պիտի ապրէր, խօսէր մեր լեզուն,
Որ մի հանճարեղ, ըմբոստ պատանի
Արարատ լերան կատարից անեղծ
Արձակէր անզուսպ, խրոխտ մի գոչիւն,
— Այդ ո՞ւմ վրայ էք ձեր սուրը հանել,
Հայոց մեծ ազգին դուք չէ՞ք ճանաչում։

Ու շատրուանեց նորից մեր լեզուն,
Մրրկեց ըմբոստ, թախծեց երազուն,
Շողաց, հուրհրաց նա բոցի նման,
Ու երբ շուրջ բոլոր մռայլը մութի
շատ էր խտանում,
Բոցն այդ առաւել պայծառ էր դառնում,
Քանզի ցասումի փայլակն էր գալիս,
ձուլւում այդ բոցին՝
Արդար բողոքն իր շանթերն էր տալիս
նրա հնոցին,
Սէրն իր շիկնանքն էր նրա մէջ վառում,
Յոյսն իր շողերն էր նրան գումարում,
Իսկ մեր արիւնը, իսկ մեր արիւնը
Նրան տալիս էր իր տաք աւիւնը
Եւ անմահութեան գաղտնիքն էր տալիս..

Մենք վիշտ ունէինք,
Մենք դատ ունէինք,
Բայց որ մեր վիշտը չասենք աշխարհին,
Չկարողանանք մենք չարին դատել,
Ոսոխն ուզում էր հատել մեր լեզուն,
Արմատից հատել...
Օ, Տէր-Զօր, Տէր-Զօր, դու Հայոց շիրիմ
Առա՞ջ էլ արդեօք անապատ էիր,
Թէ հայ մայրերի ողբից չորացար։
Զգւում է տխուր մահապարտների,
Ուրուականների կարաւանն անծայր...
Ու պառաւ մի կին,
Մի մամիկ, մի մայր, մի մայր
Հայաստան
Իր թոռնիկներին շուրջը հաւաքած,
Մոռացած անգամ տառապանք ու քաղց,
Սրբազան մի լոյս խորշոմած դէմքին,
Աւազի վրայ գրում է դանդաղ,
Դողդոջ մատներով գրում՝ Այբ-Բեն-Գիմ,
Աւազի՞ վրայ...
Ո՛չ, գրում է նա
Իր թոռնիկների երազի վրայ...

Մենք վիշտ ունէինք,
Ցասում ու բողոք,
Սիրել գիտէինք,
Գիտէինք ատել,
Ու ոչ մի բազուկ
Բիրտ ու անողոք
Չկարողացաւ
Մեր լեզուն հատել։
Եւ անագորոյն իր ճանապարհին
Հերքելով չարը, հաստելով բարին,
Եկաւ նա, հասաւ
Մրրիկով, արեամբ ու լոյսով յղի
Այս ահեղ դարին
Գիշեր է զարնան։
Եթերում երգն է ահեղ դարի,
Եւ ալիքւում է իմ հայրենախօս
Երեւանը հոծ...
Բայց հրա՞շք է սա...
Հայոց երկնքի կապոյտ պաստառին
Հրէ տառերով գրուած է «Մաշտոց»։
Հրէ՛ տառերով...
Այն նոյն տառերով,
Որ դու, վարդապետ, տեսար պաղ որմին
քո քարէ խցի,
Երբ արարչական այն սուրբ տեսիլքն էր
եկել քեզ այցի։
Հրա՞շք է նորից...
Ո՛չ, հրաշք չկայ։
Այն շէնքի վրայ,
Ուր պահ ենք տուել մեր գանձերն անգին,
Դարերից բերած մատեանները հին,
Եւ որին քո սուրբ անունն ենք ձօնել,
«Մաշտոց» է գրել լոյսը Նէօնէ...
Նէօնէ... օ, ոչ...
Այդ տառապանքն է վառւում դարերի,
Դարեր շառաչող ցասման փայլակն է
ձուլուել այդ բոցին,
Արդար բողոքն իր շանթերն է տուել
նրա հնոցին,
Սէրն իր շիկնանքն է նրա մէջ վառել,
Յոյսն իր շողերն է նրան գումարել,
Իր մաքրութիւնն է տուել արցունքը,
Քրտինքը՝ իր լոյսը,
Խունկն՝ իր բուրմունքը,
Նետն՝ իր սլացքը
Եւ սուրն՝ իր շողը,
Խոփն՝ իր ցոլանքը,
Մուրճն՝ իր կորովը,
Մեր երազանքն՝ իր կապոյտ անհունը,
Մեր ալ դրօշը՝ իր շառագոյնը,
Իսկ մեր արիւնը,
Իսկ մեր արիւնը
Նրան տուել է իր տաք աւիւնը
Եւ անմահութեան գաղտնիքն է տուել...։

1962 — ՎԱՀԱԳՆ ԴԱՒԹԵԱՆ

(*) Ա. եւ Բ. մասերը տես Յունիս 23 եւ Օգոստոս 4։

...էր եւ Կարդինալ Քուշինկն է որ տուած է վերջին օծումը։

ԳԱՀԻՐԷԻ «Ալ Ահրամ»ին համաձայն, նոր մահափորձ մը ձախողած է Յորդանանի Հիւսէյն Թագաւորին դէմ։

ՀՌՈՄԻ մէջ մամուլի ասուլիս մը տալով, Եմէնի Իմամ Էլ Պատրի հօրեղբայրը՝ իշխան Ապտուռահման յայտարարած է թէ հակառակ եգիպտական յարձակումներուն, միապետական ուժերը Եմէնի կէսին տէրն են։

ՍՔՈԹԼԱՆՏ ԵԱՐՏԸ զօրաշարժի են - թարկած է անգլիական ամբողջ ոստիկանութիւնը Կլազկոյի կառախումբին աւազակները գտնելու համար։ Ժամէ ժամ կը յայտնուի թէ եղած կողոպուտը շատ աւելի կարեւոր է քան ինչ որ կը կարծուէր նախապէս։ Դրամատուները քննութիւններէ ետք կը հաստատեն թէ իրենց կորուստները շատ աւելի մեծ են։ Վերջին թիւերը չորսուկէս միլիառ հին ֆրանքի կը հասնին։ Էնթէրփոլն ալ գործի անցած է, կ'ըսուի թէ աւազակները յատուկ օդանաւով մը Ֆրանսա կամ Սպանիա անցած են իրենց աւարով։

ՖՐԱՆՍԱՅԻ ճամբաներուն վրայ Յուլիս 31էն Օգոստ 3, 133 հոգի մեռած են եւ 3704 հոգի վիրաւորուած կառքի արկածներու հետեւանքով։

ՕՌԼԻԻ մէջ ձերբակալուած են թմրեցուցիչի երկու Քանատացի մաքսանենգներ որոնք 4 քիլօ հերոյին կը փորձէին անցընել։

ՇԱՌԼ ԹՐԷՆԷ «Երգող խենթը», ինչպէս ծանօթ է, միշտ բանտն է։ Ծանօթ է որ Յուլիս 14ին Էքս-ան-Փրովանսի մէկ խցիկին մէջ կ'երգէր Ֆրանսական փառերգը փոխանակ Տօվիլի քաղինոյին, վարքի խնդրի մը համար։ Ամբաստանուած էր որ անչափահաս տղաք կը հրաւիրէր իր ապարանքը յատուկ նպատակներով։ Յարդ մերժած է վճարել երաշխաւորագինը առժամեայ ազատութեան համար, այդ պատճառաւ իր արձակումը յետաձգուած է։

ՀԱՅԻՆ գինը կը բարձրանայ երկուշաբթի օր։ Պակէթը պիտի արժէ 0,44 փոխանակ 0,42ի եւ «խոշոր հացը» 0,72 փոխանակ 0,69ի։ Այս յաւելումը հետեւանքն է ալիւրի գինին յաւելման։

ՀՆԿԱՍՏԱՆԷՆ հասած կարգ մը լուրերու համաձայն, Նեհրու կրնայ հրաժարիլ եւ բոլորովին նուիրուիլ Խորհրդարանի կուսակցութեան վերակազմութեան։ Զարմանալի կը թուի սակայն թէ այնպիսի ժամանակ երբ Հնդկաստան սպառնալիքներու տակ է, Փանտիտ նման բան մը մտածէ։ Արդարեւ, իր հեռացումը մեծ շփոթութիւն մը կրնայ ստեղծել։

ՏՈՔԹ. ՈՒԱՐՏԻ մարմինը այրուեցաւ Լոնտոնի Քոլմպարիումին մէջ իր ընտանեկան պարագաներու ներկայութեան։

ՀԱՅԻԹԻԻ մէջ կացութիւնը միշտ շփոթ է։ Կռիւները կը շարունակուին։

ԱՐՄԷՆԸ ԱՐՄԷՆԻՆ ԴԷՄ

Դ.

Քաջք ընդ քաջս ելեալ…
ԵՂԻՇԷ

Քերականութի՛ւն մը կար… քերականութենէն առաջ:

Ատիկա ուղղախօսութիւնն էր, այլ անուամբ՝ ուղղասացութիւն: Երբ եկաւ գիրը, միացուցին այս երկու ուսումները, բայց քերականութիւնը (1), որ տառեր գծելու վարժութիւն մըն էր միայն՝ ըստ ստուգաբանութեան, դարձաւ նոյն տառերը կարդալու արուեստը, — այս ձեւով աչքը միջամտեց այն գիտութեան, որ «կոկորդիւ» (Դաւիթ Անյաղթ) կը ծառայէր «ձայներու ընտրութեան»՝ արտայայտելու համար մեր մտածումները եւ յուզումները:

Հ. Արսէն Բագրատունի քերականութիւն բառին կուտայ լաւագոյն սահմանումը. «Արուեստ ուղղախօսութեան (2) ձայնիւ կամ գրով՝ ըստ իւրաքանչիւր լեզուի»: Այս սահմանումը, սակայն, կ'երկձղէ, երկուքի կը բաժնէ լեզուն, «ի ձայնաւոր եւ ի գրաւոր», այնպէս որ «քերականութիւն յերկուս հատանի ընդհանուր մասունս, մին ճառէ զբանէ կամ գխօսից, միւսն զգրութենէ նորին»:

Այս «միւսն» է որ կը կազմէ աչքին կալուածը, — ընդարձա՜կ կալուած, ուր ուսումնասիրութիւնը կը հաստատէ թէ ոչ մէկ լեզու կը դիմանար ժամանակին թշնամութեանց՝ առանց աչքին բերած նպաստին: Մեծ է աչքին դերը, որքան բառերու կրած խաթարումներուն մէջ, նոյնքան անոնց ստուգաբանական հետազօտութեանց մէջ: Բայց միայն ա՞յդքան, — լեզուն ինչե՛ր կը պարտի աչքին՝ ուղղագրութեան համար, որ ստոկ ձայնի խնդիր չէ:

Նախ քան գիրը, երբ դեռ ուղղասացութիւնն էր լեզուին միակ պահապանը կամ խնամակալը, մարդոց հաղաղը ենթակայ էր կլիմայական եւ աշխարհագրական ներգործութեանց, (պարզ է հարցը, դաշտաբնակը եւ լեռնաբնակը չէին կրնար ունենալ նոյն առոգանութիւնը): Երկար պիտի ըլլար ներկայացնել լեզուի պատմութեան այն շրջանը, ուր մանաւարաբար քուրմերուն տրուած էր յաւերժացնել կամ արձանացնել ուղղախօսութեան աւանդութիւնները, ձայներուն ընծայելով «աստուածահաճոյ» առաքինութիւններ, բառերուն տալով «սրբազան» գործածութեան պայմաններ, վերջապէս վանկերուն շնորհելով ամանակի կանոնադրութիւնը, (թէ ժողովուրդն է որ լեզու կը շինէ՝ բորբոսած տեսութիւն է այլեւս, կարդալ Վանտրիէս), սակայն կ'ուզեմ շեշտել թէ ձայնափոխութեան եւ կորուստի հարցը յատկապէս արտաքին ներգործութեանց ժառանգութիւն չէ, լոկ լսողութեան գործարանի պահանջ չէ, ոչ ալ կարելի է ընդունիլ թէ ականջը պահած է մինչեւ մեր օրերը՝ ինչ միջամտութիւն որ կատարած է լեզուին յեղաշրջման եւ բարեշրջութեան տեսակէտով:

Գիտեմ թէ լեզուներու բաղդատական ուսումնասիրութեանց, մէկ բառով՝ լեզուաբանութեան ամէնէն էական բանալին է որ կը խորտակուի այս տեսութեամբ, բայց ատիկա հետեւութիւնն իսկ է այն իրողութեան թէ լեզուն ուսում է, ուսուցման առարկայ մըն է, ուրեմն արուեստական հագուստ ունի:

Այսպէս կը հասնինք այն կէտին թէ ինչո՛ւ բերան եւ գերան բառերը, նոյն կազմութիւնն ունենալով հանդերձ (առաջին տա՛ռը միայն կը տարբերի), կը քալեն հոլովման երկու տարբեր ուղիներու մէջ, ստամբակելով ականջին օրէնքներուն դէմ, — բերան կ'ըլլայ բերնի, իսկ գերան կ'ըլլայ գերանի: Հոլովման այս զանազանութիւնը՝ աշխարհաբարի մէջ: Ահա օրինակ եւս գրաբարի մէջ, — նետ կ'ըլլայ նետի, իսկ գետ կ'ըլլայ գետոյ:

Ո՞ւր պէտք է փնտռել այս ստամբակութեան պատճառը, — միայն ներդաշնակութեան պահանջքի՞ն մէջ, թէ նաեւ շփոթութիւն չստեղծելու անհրաժեշտութեան մէջ: Արդարեւ, որեւէ շփոթութիւն բառնալու եւ ուղղագրութիւնը դիւրացնելու համար է որ Դաւիդ անձնանունը գրուած է Դաւիթ, ինչպէս կը գրուի գաւիթ, ծղրիթ, ճանճախարիթ, եւայլն: Հնչաբանական պահանջը, ականջին տիրակալութիւնը չէ, ոչ ալ տառերու խորհրդաւոր ափինիթէն, որ այդպէս կանոնադրել կը հրամայէ: Դարձեալ, ուղղագրութիւնը դիւրացնելու համար է որ կանոնադրուած է Շ տառէն ետք Տ գրել, — ինչպէս միշտ, հեշտ, դաշտ, տաշտ, աշտարակ, եւայլն: Վերջապէս, ուղղագրութիւնը դիւրացնելու համար է որ կանոնադրուած է, ականջի պահանջ չէ, գրել էն՝ երբ բառը կը վերջանայ Ն տառով ու այսպէս շփոթութիւն կը տիրէ Է կամ Ե տառերու ընտրութեան ժամանակ, ինչպէս պարէն, ծուէն, կապէն, ժապաւէն, եւ ամէն:

Այժմ ժամանակ է հարցնելու թէ ի՛նչ պատճառ կայ, որ ամէն բառը ձայնափոխութիւն կատարէ հոլովման ժամանակ եւ գրուի ամենէն:

Գրաբարի մէջ, որոշ է, բառավերջի բաղաձայնէ մը առաջ գրուած ամէն ե տառ ձայնափոխութիւն կը կրէ, — աղուէս կ'ըլլայ աղուեսու, երկրորդ՝ պարտէզ կ'ըլլայ պարտիզի, երրորդ՝ հրէշ կ'ըլլայ հրէշի կամ ուղէշ կ'ըլլայ ուղէշի, (բառարանները կը գրեն նաեւ ուղեշ եւ ուղեշի, — ո՛չ, բարդութեամբ ունինք ուղիշաքերձ, ուրեմն չի կրնար գրուիլ ուղեշ):

Կրնա՞նք գրաբարի այս կանոնին կապել ինչ որ կը պահանջէ Հ. Վարդան Հացունի, որ կը պնդէ թէ «հայերէնի ներդաշնակութեան համար» պէտք է «ամփոփել ձայնաւորները», այսինքն սղել երկար ձայնաւորները: Ամէն բառին մէջ երկար է փակ Է տառը, զոր պէտք է, ուրեմն, կարճեցնել հոլովման ժամանակ՝ ձայնափոխութեամբ, Ե դնելով Է տառին տեղ, այսպէս ամէն–ամենէն:

Բացատրութիւն.— «Հայ բառից շեշտն ընդհանրապէս կը գտնուի վերջին վանկին վրայ: Այս պատճառաւ հայ բերանն հեշտեաւ կ'անցնի կարճ վանկէն կարճին եւ կարճէն երկարին, որոնք դիւրաւ յաջորդելով իրարու, թոյլ կուտան որ բերանը շուտով հասնի շեշտին (վերջին վանկին) ու հոն հանգչի: Ասոր համար կ'ուզէ որ երկար ձայնաւորն եթէ կայ, գտնուի վերջին վանկին մէջ, որպէսզի խոչընդոտ չլինի: Իսկ երբ բառն հոլովմամբ երկարի, կը ստիպէ որ ներս մնացած նախկին երկար վանկը կարճնայ»:

Ուրեմն, ըստ Հացունի վարդապետին՝ ամէն բառին մէջ ոչ միայն երկար է վերջին ձայնաւորը, այլ եւ վերջավանկի աւանդական շեշտն առնելու ընդունակ: Այնպէս որ հոլովման ժամանակ՝ երբ վանկի յաւելում կ'ըլլայ, վերջավանկի՛ն մէջ փոխադրելու համար երկար ձայնաւորը եւ շեշտը, կը հրամանագրէ գրել ամենէն:

Բոնազբօսիկ բացատրութիւն:

Ինչո՞ւ պարտէզ բառը հոլովել Ի տառով՝ որ երկամանակ է, եւ ոչ Ե տառով՝ որ սուղ է: Եւ ինչո՞ւ հրէշ բառը հոլովել … առանց ձայնափոխութեան:

Եթէ միայն ամէն բա՛ռն ըլլայ, զոր Հացունի կը հոլովէ ամենէն ձեւով: Ամէն բառ էն վերջավանկով կը փոխէ ենի եւ այսպէս հայերէն բառը կ'ըլլայ հայերենի:

Այս պատգամը, որ անթերի չի գործադրուիր նոյնիսկ գրաբարի մէջ, կը համարիմ ստամբակութիւն աշխարհաբարի դէմ:

Անշուշտ, սխալ բացատրութիւններ են աշխարհաբար եւ գրաբար տարազները (3):

Աշխարհաբար ըսելով կը հասկնամ լեզուի քերականական օրէնքներու պարզացում: Հոլովներուն մասին խօսելով, (ինչ որ կը կազմէ մեր վէճին առարկան), հետեւողութեամբ նոր լեզուներու, որոնք բառերու թաւալում չեն կատարեր, աշխարհաբարը կը պահանջէ բառը պահել իր ուղղական ձեւին մէջ, կանգուն եւ ամբողջ, ու հոլովել վերջադիր մասնիկներով կամ անջատ նախադրութիւններով:

Ահա այս ընդհանուր աշխարհաբարեան կանոնով, ամէն կը հոլովենք ամէնէն, ամէնուն:

Շ. ՆԱՐԴՈՒՆԻ

(1) Հայերէն «քերականութիւն» բառը թարգմանութիւն է յունարէնէ, կը նշանակէ քերել, (գիրը նախապէս կը գրուէր փորագրելու ձեւով, քերոցով): Ուրեմն քերականութիւն (կրամաթիքա) կը նշանակէր միայն գրել (գրականութիւն), յետոյ՝ գրել ու կարդալ: Անկէ՝ ակրամաթոս=ադէտ, որ չի գիտեր գրել ու կարդալ:

Հիները կը կարծէին թէ Հոմերոս է որ հնարած է գիրը: Այսպէս, Թրակացի (իր թարգմանիչը) կը գրէ. «Գրեալ քերեալ ասիւր առ նախնեաւքն որպէս ի Հոմերոսին.— «Եւ գրեալ իմ գոտին՝ այժմ զքո զարշապար՝ ունայն պանծաս»: Թրակացիի հայ թարգմանիչին հետեւողութեամբ, Արսէն Դպիր եւս կը գրէ. «Հոմերոս որ գտողն է քերականութեան զգրելն քերել ասացեր է եւ զքերելն գրել, որպէս թէ ծայր գրչին ի գրելն քերելով ընթանայ զերեսն թղթին»: Անկէ՝ քերթող (Դաւիթ Անյաղթ կը գրէ՝ գիրթող) կը նշանակէ քերական, այժմ բանաստեղծ:

Թրակացիի բերած օրինակին թարգմանութեան մէջ՝ Արսէն Բագրատունի կը գործածէ, « գրել » բառին փոխարէն, « գծել », (Իլ. ԺԱ. 388): Համբարձումեանի թարգմանութիւնը (տպ. Երեւան) «քերծել»: Հոմերոս ունի ուրիշ գործածութիւն մըն ալ (Իլ. Զ. 168), ուր Բագրատունի համապատասխան կը գրէ «դրոշմել», իսկ Համբարձումեան՝ «գծել»: Այս վերջին տողն է որ առարկայ դարձած է երկար վիճաբանութեանց ընդմէջ բանասէրներու, որոնք Հոմերոսի կուտան յունական տառերու գիտութ. (ինչպէս կ'աւանդեն նաեւ մեր մատենագիրները), այլք կը մերժեն արդարօրէն (ինչպէս Վոլֆ):

Փիլոն այդ պատիւը կուտայ Կադմոսի, նոյնպէս վինելի:

(2) Ուղղասացութիւն բառը, ինչպէս եւ ուղղախօսութիւն, կը նշանակէ երբեմն արտախօսութիւն՝ մեր դասական լեզուով: Քրմական բարբառի մէջ՝ աստուածք համաձայն ներդաշնակութեան վայելչութեան, այլ մանաւանդ սրբազան աւանդութեանց:

(3) «Գրաբար բառն, կը գրէ մեծ հա-

ՇԱՐԼ ՊՕՏԼԷՐ
ԵՒ ԻՐ
ԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԴՐԱԽՏՆԵՐԸ

Մէկ օրէն միւսը՝ Պօտլէր « անիծեալ բանաստեղծ », կը դառնայ երիտասարդներու կուռքը, որոնք Տիվանի կամ Թորթոնի սրճարանը իր խօսածները կը լսեն:

Զարիֆի Ծաղիկներուն հրատարակութենէն երեք ամիս առաջ, զօրավար Օփիք, որ Մատրիտի դեսպան նշանակուած էր, կը մեռնի: Վերջապէ՜ս, հին օրերուն նման, իր մայրը՝ ի՛րն է միայն:

«Նէօյիի օրերը պիտի վերակենդանացնենք», կը գրէ Պօտլէր իր մօրը, որ Հոնֆլէօրի մէջ քաշուած կեանք մը կ'ապրի: Այն ամէն ինչ, որ մինչեւ այդ ինքզինքին թոյլ տուած էր ընելու — անհոգութիւն, եսասիրութիւն, անկրթութիւն, բրտութիւն (կը գրէ նոյն ինքն Պօտլէր), այս բոլորը այլեւս անմատչելի պիտի ըլլան իրեն: Կը դառնայ զուրգուրոտ զաւակ: Ինքը, որ չէր կրնար ապրիլ իր սիրելի Փարիզէն հեռու, երկար այցելութիւններ կը կատարէ Հոնֆլէօր:

Զարիֆի Ծաղիկներուն գտած յաջողութիւնը չէ փոխած Պօտլէրի նիւթական վիճակը: Վաշխառուները գրաւել տուած են գրեթէ իր ամբողջ կահկարասին: Ժաննի առողջութիւնը («իմ անդամալոյծս» կը կոչէ զայն այժմ) հետզհետէ կը վատթարանայ: Պօտլէր Ժաննի համար փոքրիկ տուն մը կը վարձէ Նէօյիի մէջ, ուր սեւամորթուհին բնաւ չի բաժնուիր ռոմի իր յաւերժական շիշէն:

Այժմ՝ Պօտլէր կ'աշխատի աւելի կանոնաւոր կերպով: 1859ին եւ 1860ին լոյս կը տեսնեն Նոր Սալոն մը, Արուեստական Դրախտները եւ առաջին Արձակ Բանաստեղծութիւնները, որոնց կը յաջորդէ Զարիֆի Ծաղիկներու վերհրատարակութիւն մը, ճոխացած՝ երեսունըհինգ նոր քերթուածներով:

Սակայն առողջութիւնը կը վատթարանայ: Երկար ատենէ ի վեր զինք տառապեցնող փսխումներէն զատ, անքնութենէ ալ կը տառապի այժմ: Լուսածագին, երբ կը յաջողի մրափել քիչ մը, մղձաւանջային երազներ կը տեսնէ, շնչահեղձութիւն եւ սրտի բաբախումներ ունի. ընդոստ զարթումներ՝ պաղ քրտինքներու մէջ եւ խոր անձկութիւններով:

« Բայց եւ այնպէս՝ կ'ուզեմ ապրիլ, եւ պիտի ուզէի քիչ մը ապահովութիւն, փառք ու պատիւը, ինքզինքէս գոհ ըլլալու գոհունակութիւնը: Սարսափելի ձայն մը կ'ըսէ՝ երբե՛ք, բայց ուրիշ ձայն մը կ'ըսէ՝ փորձէ՛», կը գրէ Պօտլէր իր օրագրութեան մէջ:

Գլուխը դնելիք անկիւն մը իսկ չունի: Ժաննի հիւանդանոց փոխադրուած է, եւ Ժաննի եղբայրը, Սէն-Տոմէնկէն եկած՝ հակայակագմ խառնածին մը, Նէօյիի բնակարանին բոլոր կահկարասիները ծախած է: Շառլ կը մերժէ նիւթական օժանդակութիւն ստանալ մօրմէն, որ պատրաստ է իր զաւկին համար ամէն զոհողութիւն ընելու:

Այս շրջանին է — իր կեանքին ամէնէն դժուարին շրջանը — որ աչք կը տնկէ Ֆրանսական Ակադեմիային մէջ Հայր Լակորտէրի թափուր ձգած աթոռին: Սէնթ-Պէօվ կը յաջողի տարհամոզել զինք «Ակադեմիան իր եղած վիճակին ձգեցէք», կը գրէ Սէնթ-Պէօվ խոհեմութեամբ:

1866ի սկիզբը, Տըլաքրուայի մասին շրջուն դասախօսութեանց վերջաւորութեան, Պօտլէր գլխապտոյտ մը կ'ունենայ Նամիւրի մէջ, կը տատանի եւ գետին կ'իյնայ: Զինք կը փոխադրեն Պրիւսէլ՝ աջ կողմը անդամալոյծ վիճակի մէջ: Արդէն իսկ ըսած խօսքերը անհասկնալի են:

Տիկին Օփիքի լուր կը հասցնեն՝ կարելի զգուշաւորութեամբ: Հակառակ իր 73 տարիներուն, անմիջապէս կը մեկնի Պրիւսէլ՝ շոգեկառքով: Զաւկին վիճակը երբ կը տեսնէ՝ յուսահատութեան կը մատնուի. Պօտլէր կորսնցուցած է խօսելու կարողութիւնը: Սակայն մօրը համար ատիկա մեծագոյն վիշտը չէ: Կը զգայ, որ իր ներկայութիւնը աւելի եւս կը ծանրացնէ հիւանդին վիճակը: Բժիշկներն իսկ խորհուրդ կուտան իրեն, որ հեռանայ հիւանդէն. «Բանաստեղծի մը կազմը այնքա՛ն տարբեր է միւս մարդոց կազմէն» մեղմօրէն կը բացատրէ Մալասի: Բանաստեղծ, զերազանց միտք, հանճար…: Տիկին Օփիք այս բառերը միայն կը լսէ իր զաւկին սնարին մօտ: Առաջին անգամն ըլլալով, իր տեսողութիւնը կորսնցնող քօղը կը քակուի աչքերուն վրայէն: Զաւակը առյաւէտ կորսնցնելու պահուն, ահաւոր յայտնութիւնը կ'ունենայ, թէ զայն բնաւ չէ ճանչցած: Կարծած էր զայն սրտագին սիրել, ճիշդ է, սակայն ամբողջ կեանքը անոր զլացած էր նոյնիսկ անկեալ … ոճրագործ մարդուն անհրաժեշտ գթութ… զոյն ապաւէնը. — մօր մը հասկացողութիւնը:

Պօտլէրը կը փոխադրեն Փարիզ, ուր կ'ընդունուի Շայոյի մէջ՝ Տոքթ. Տիւվալի դարմանատունը: Բարեկամներուն միջամտութեան շնորհիւ, կրթական նախարարութիւնը կը տրամադրէ հողալ … ւանդանոցին ծախքերը: Բարեկամները զինք երբեք առանձին չեն ձգեր: … նկարիչ Մանէի կինը կուգայ … նուագելու՝ Պօտլէրի սենեակին մէջ:

Կը թուի թէ Պօտլէր չի տառապիր այլեւս: Դադրած է պայքարելէ: Երկար … վրայ աքսորեալ բանաստեղծ՝ արդէն … հասած է իր բո՛ւն հայրենիքը, այդ … բօրինակ, անիմանալի, ներկայէն … այդ աշխարհը, որուն ձգտած էր … «Այնտեղ՝ ամէն ինչ կարգուկանոն է … գեղեցկութիւն, ճոխութիւն, հանդարտութիւն եւ հեշտանք…»:

Ցամք եւ լուռ հոգեւարքը դեռ երկար ամիսներ պիտի տեւէ:

Ի վերջոյ, 1867 Օգոստոս 31ին, … ոգջերու այս աշխարհին կապող … շունչն ալ կը մարի:

Մահուան պահուն, իր վրայ հսկող… ները կը յուզուին եւ խորապէս … դուին՝ տեսնելով այլակերպութիւնը … նիծեալ բանաստեղծին» դէմքին, … մահուամբ սրբագործուած, … եւ յաղթական կ'երեւէր:

Շառլ Պօտլէր, արուեստական … րախտներու մարդը՝ անմահ քերթող … դառնար:

(8 եւ վերջ)

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՆՈՐԱՎԷՊ

ՀԱՅ ՖԱՆԹՈՄԱՍ

Եւրոպական ոստիկանութիւնները տեն-գոյին կ'աշխատէին ձերբակալելու հա-մար արտասովոր զոյգ մը, որ ութ ամիս-ներէ ի վեր կը կողոպտէր գոհարավաճա-ռներու ցուցափեղկերը եւ արկղները: Տելարանի փողոցին վրայ գտնուող մեծ գոհարավաճառներու կողոպուտէն վերջ, ոստիկանութեան տնօրէնը իր մօտ կանչեց իր ամէնէն ճարպիկ գաղտնի ոս-տիկանը եւ ըսաւ անոր.

— Քեզի վստահելիք պաշտօնս շատ դժուար եւ նուրբ է, սակայն վստահ եմ քու ճարպիկութեանդ վրայ: Արդ՝ հաս-տատեցինք թէ գոհարավաճառներու գո-ղութիւնը կը կատարէ լեհ զոյգ մը՝ Կորի Վէնեսկին եւ իր արտակարգօրէն գեղե-ցիկ, գրաւիչ եւ գգլխիչ կինը՝ Օլինկան, որ կը բնակի Մոնթէ Քարլոյի Միրամա-ր պանդոկը, առանց իր ամուսնոյն: Քեզի պաշտօն ունիս փնտռելու եւ գտնե-լու Վէնեսկին, որ կատարեալ Ֆանթոմա մը եղած է: Եթէ յաջողիս, աստիճանի բարձրացում պիտի ունենաս, դրամական պարգեւով մը:

×

Այս խօսակցութենէն շաբաթ մը վերջը, Փարիզէն Մոնթէ Քարլօ սուրացող ճե-պընթացի Ա. կարգի թիւ 3 խցիկին մէջ կը ճամբորդէին երկու վայելուչ անձեր: Առաջինը՝ հայ հանրածանօթ մեծ առեւ-տրական Մաքսուտ Լալասեանն էր, թը-խադէմ, սեւ աչքերով, աչքառու քիթով ու բերանով, լուրջ դիմագիծով եւ լաւատես երեւոյթով անձ մը: Երկրորդը՝ դերկոմս Ռաուլ տը Փօլինեաքն էր, վայելուչ, երիտասարդ եւ համակրելի աշխարհիկ տիպար մը, որ Մոնթէ Քարլօ կ'երթար իր բախտը հարիւրերորդ անգամ փորձելու:

Մասնաբաժնին մէջ առանձին ըլլալով, իրարու ներկայացան եւ սկսան խօսիլ զանազան նիւթերու շուրջ:

— Որքա՞ն ատենէ ի վեր կը բացակայիք Մոնթէ Քարլոյէն, հարցուց Մաքսուտ Լալասեան դերկոմսին:

— Գրեթէ երկու ամիսէ ի վեր, պատասխանեց դերկոմսը, կրնաք երեւակայել թէ որքան երջանիկ եմ որ Մոնթէ Քարլօ կը վերադառնամ: Վերջին անգամ ծանօթացայ ամուսնացած կնոջ մը, գգըլխիչ, խիստ գեղեցիկ եւ տաքարիւն սիրուհի մը:

— Ես ալ շատ գոհ եմ որ կնոջս մօտ կը վերադառնամ, ան ալ Մոնթէ Քարլօ կը բնակի: Երեք ժամէն հոն կը հասնինք:

— Երե՞ք ժամէն, հարցուց դերկոմսը, անկարելի է: Հինգ ժամէն աւելի կանուխ չենք հասնիր:

— Մի՛ պնդէք, ըսաւ Լալասեան, ես շատ ճամբորդած եմ այս գծին վրայ. գրաւ կը դնեմ որ երեք ժամէն կը հասնինք:

— Ի՛նչ հարկ կայ վիճելու, ըսաւ Փօլինեաք: Ժամանակացոյցը նայինք:

Եւ մինչ գրպանէն պզտիկ առաջնորդ-ցուցակ մը կը հանէր, անուշադրու-թեամբ լուսանկար մը գետին սահեցաւ: Պ. Լալասեան տեսաւ լուսանկարը, ու-զեց տեղեկացնել դերկոմսին, սակայն ոժգունեցաւ յանկարծ, երբ ճանչցաւ իր կնոջ դէմքը: Պզտիկ շարժումով մը ոտքը պատկերին վրայ դրաւ, աչքերը գոցեց, չափազանց յուզուած եւ սկսաւ խորհիլ: Այո՛, ճիշդ էր, ինքն ալ երեք ամիս է, որ Մոնթէ Քարլոյէն կը բացակայէր: Ուրեմն, իր պաշտած կինը՝ Օլինկան, զինքը կը խաբէր եւ սիրուհին դարձած էր այս աշխարհիկ Ֆրանսացիին: Կարե-լի՞ բան էր որ Լալասեան մը հանդուր-ժէր այս անպատուութեան:

— Ահաւասիկ, ըսաւ դերկոմսը յաղ-թանակի ձեւեր առնելով. հոս ցոյց կու-տայ թէ հինգ ժամէն Մոնթէ Քարլօ կը հասնինք:

— Ի՞նչպէս, հա՛, այո՛, ըսաւ Լալասեան մտացրիւ եւ աչքերը պիշ-պիշ սե-ւեռած դերկոմսին վրայ:

Նախանձէն խելագարած, Մաքսուտ Լա-լասեան որոշում մը տուաւ: Օլինկան իր գրկին մէջ վայելող այս մարդը պէտք է մահուամբ իր պատիժը կրէր:

×

Մինչ այդ, մէկ քանի վայրկեանէն կա-ռախումբը պիտի անցնէր մութ փապու-ղիէ մը (Թիւնէլ): Դերկոմսը կը գովա-բանէր Մոնթէ Քարլոյի իր սիրուհիին պարգեւած վայելքները, սիրակէզ համ-բոյրները, գգուանքները եւ սիրային հա-ճոյքները:

— Անգտանելի եւ անմոռանալի սիրու-հի մըն է այդ կինը, կը շարունակէր մե-նախօսել դերկոմսը:

Բոպէ մը վերջ, կառաշարը մութ փա-պուղին կը մտնէր: Բոլորովին այլայլած, Լալասեան ոտքի ելաւ, դաշոյն մը հանեց իր գրպանէն եւ յարձակեցաւ դերկոմսին վրայ: Այս վերջինը՝ դէպի աջ շարժում մը ընելով, Լալասեանի դաշոյնը մխր-ճուեցաւ նստարանին թաւիշին մէջ: Դեր-կոմսը ճարպիկութեամբ անոր բազուկը սեղմեց եւ Լալասեան զինաթափ եղաւ:

Կառաշարը հիմա անցած էր փապու-ղիէն եւ լոյսին մէջ կը սուրար:

— Քեզի պէս շարագործ մը ա՛յքան նախանձոտ պէտք չէ ըլլար, ըսաւ դեր-կոմսը Լալասեանին, որ ուրիշ մէկը չէր, եթէ ոչ հռչակաւոր Ֆանթոմասն՝ Կորի Վէնեսկին: Ամիսներով քեզ կը փնտռէինք եւ վերջապէս յաջողեցանք քեզ ձերբակա-լել կնոջդ լուսանկարին միջոցաւ, զոր չեմ ճանչնար:

— Բայց դուն ո՞վ ես, հարցուց Կորի Վէնեսկին, մինչ դերկոմսը ձեռնակապե-րը կ'անցընէր անոր ձեռքերուն:

— Ես պարզ գաղտնի ոստիկան մըն եմ, պատասխանեց կեղծ դերկոմսը: Ինչպէս որ դուն կեղծ Լալասեան եղար, ես ալ կեղծ դերկոմս եղայ: Շնորհակալ եմ, որ քու պատճառաւդ, աստիճանի բարձրա-ցում պիտի ունենամ եւ գանձելիք դրա-մական պարգեւս պիտի ամուսնանամ խօսեցեալիս՝ Լիւսիէնին հետ:

ՏԷՅՎԻՏ ՊԷՅՑ

ՊԱՐՍԻԿ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԽԵԼԱՑԻ ԳԻՒՂԱՑԻՆ

Ժամանակին մի աղքատ գիւղացի է լինում, որ շատ զաւակներ է ունենում: Այս գիւղացու ամբողջ հարստութիւնը մի սպիտակ սագ է լինում, որին գիրա-ցնելու համար լաւ խնամում էին:

Գիւղացին շատ դժուարութեամբ էր իր ընտանիքի ծախսը հանում: Շատ անգամ էլ նրա երեխաները սոված էին քնում:

Պատահեց, մի օր նրանք ուտելու ո-չինչ չունէին: Այս կողմ ընկան, այն կողմ ընկան, ուտելու բան չգտան: Ստիպուած սագը մորթեցին, փետրեցին, կինը կրակի վրայ խորովեց եւ ամէնքով նստեցին սփռոցի շուրջը ուտելու: Տե-սան՝ ոչ միայն հաց չկայ, այլեւ մինչեւ անգամ աղ էլ չունէին, որ մսի վրայ ցանէին:

Խեղճ մարդը կնոջն ասաց.

— Միսը առանց հացի եւ աղի ի՞նչպէս կը լինի ուտել: Աւելի լաւ է, այս սագը տանեմ Խանին նուէր տամ, վստահ եմ, որ նա ինձ լաւ կը վարձատրի:

— Ա՛յ մարդ, ինչպէս յարմար ես դա-տում, այնպէս էլ արա, ես ի՞նչ գիտեմ:

Մարդը վերցրեց սագը, գնաց Խանի պալատը եւ ասաց.

— Աղա՛, ես ձեզ համար մի հատ սագ եմ նուէր բերել եւ խնդրում եմ, դուք էլ ինձ, որ շատ զաւակների տէր եմ, մի ողորմութիւն արէք:

— Բարի՛ մարդ, — ասաց աղան, — շնորհակալ եմ քեզանից քո բերած նուէ-րի համար: Բայց դու որ այս սագը բե-րել ես ինձ համար երեւի դրա բաժանե-լու ձեւն էլ իմանում ես: Ուրեմն կտրա-տիր ու մեր տան անդամների մէջ բա-ժանիր: Ինչքան ճիշդ կատարես բաժա-նումը, այնքան լաւ կը վարձատրուես ինձանից:

Խանը մէկ կին, երկու աղջիկ եւ երկու տղայ ունէր:

Գիւղացին դանակը վերցրեց, մի քիչ մտածեց եւ սագի գլուխը մարմնից բա-ժանելով տուեց աղային եւ ասաց.

— Աղա ջան, սագի գլուխը ձեզ կը հասնի, որովհետեւ դուք այս տան գը-լուխն էք եւ տան բոլոր գործերը պէտք է ձեր գիտութեամբ եւ հաւանութեամբ կատարուեն:

Յետոյ սագի տակը կտրեց եւ տուեց տիկնոջն ու ասաց.

— Սա էլ ձեզ կը հասնի, մե՛ծ տիկին, որ տանը նստէք եւ տան աշխատանքները կատարէք:

Թեւերն էլ տուեց աղջիկներին եւ ա-սաց.

— Ամէն մէկ թեւը ձեր ամէն մէկին, որ շուտ թեւ առնէք, թռնէք գնաք ձեր ամուսինների տները:

Վերջապէս սագի ոտները տղաներին եւ ասաց.

— Սրանք էլ ձեզ, որ միշտ աղայի գործերից ետեւից վազէք: Իսկ ես, որ բաժանողի պաշտօնն եմ կատարել, մնա-ցածն էլ ինձ կը հասնի:

Խանը մի կուշտ ծիծաղեց եւ նրան մէկ պարկ լիքը ցորեն տուեց: Գիւղացին ու-րախ-ուրախ վերադարձաւ տուն:

Այս գիւղացին մի հարուստ դրացի ու-նէր, երբ սա լսեց այս պատմութիւնը, ասաց.

— Եթէ Խանը մէկ սագի համար մի պարկ ցորեն է նուէր տալիս, հապա ու-րեմն հինգ սագի համար նա մի քսակ արծաթ կը տայ. ուստի պատուիրեց, որ կինը հինգ սագ մորթի, տապակի եւ նա տանի Խանի պալատը:

Խանը շնորհակալ եղաւ նրանից իր բե-րած սագերի համար.

— Հիմա դու պէտք է այս սագերը մեր տնեցիների մէջ հաւասար բաժանես: Ե-թէ ճիշդ բաժանես, լաւ կը վարձատրեմ քեզ:

Ագահ հողագործը մտածեց, մտածեց, խելքը բան չկտրեց: Իսկ Խանի համբե-րութիւնը հատել էր. ուղարկեց առաջին հողագործի ետեւից:

Երբ խելացի գիւղացին ներկայացաւ Խանին եւ աչքն ընկաւ սագերին, իմացաւ բանն ինչումն է եւ անմիջապէս անցաւ գործի:

Առաջին սագը տուեց Խանին եւ ասաց.

— Այս մէկը քեզ եւ տիկնոջ, այս հաշուով դուք կը դառնաք երեք:

Երկրորդը տուեց աղայի տղաներին եւ ասաց.

— Սա էլ ձեզ, պզտիկ աղաներ, որով դուք էլ դարձաք երեք:

Վերջապէս երրորդն էլ երիտասարդ աղջիկներին տալով ասաց.

— Ուրեմն այս մէկն էլ ձեզ, դուք էլ դարձաք երեք:

Մնացած երկուսն էլ դրեց իր թեւի տակ եւ ասաց.

— Այս հաշուով մենք էլ դարձանք երեք:

Աղան այս տեսնելով լիաթոք ծիծաղեց եւ ասաց.

— Ճշմարիտ որ շատ խելացի եւ ճար-պիկ մարդ ես: Լաւ բաժանեցիր սագերը եւ չմոռցար քո բաժինն էլ վերցնելու:

Յետոյ պատուիրեց, նրան մի քսակ արծաթ տուին: Իսկ հարուստ գիւղա-ցին, որ ձեռքից տուել էր իր հինգ սա-գերը, դատարկ ձեռքով, գլուխը քորե-լով հեռացաւ Խանի պալատից:

Թարգմ. Թ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

յագէտը՝ Ա. Գարագաշեան, եթէ առ-նենք իբրեւ գրաւոր կամ գրոց լեզու, այնչափ կը յարմարի հին որչափ արդի լեզուին՝ որ զարդիս գրաւոր լեզու է հա-սարակ հնոյն: Իսկ աշխարհաբար բառին մէջ աշխարհ բառը չունի ամենեւին ի-մաստ, միթէ բոլոր աշխա՞րհ կը խօսի այս լեզուն: Ապա եթէ աշխարհ պիտի հասկնանք ռամիկ, դարձեալ չունի ի-մաստ, քանզի հիմա ոչ ռամիկը միայն, այլեւ գիտունք կը խօսին եւ կը գրեն այս լեզուաւ:

Հին եւ արդի բառերը կը պատասխանեն Եւրոպական *անտիկ* եւ *մոտեռն* բառերուն, որ կը տրուին ոչ միայն հա-յերէնի, այլ եւ ուրիշ լեզուաց՝ որ ունին հին եւ նոր ձեւ, ինչպէս յունարէնն եւ այլք: Արդի լեզուին տարբերութիւնն ի հնոյն է ի ձեւս ինչ քերականութեան եւ բացատրութեան, որ համեմատութեամբ նոր են, եւ ոչ թէ վասնզի միովն կը գրը-ուի եւ միւսովն կը խօսուի, կամ վասնզի մին գիտնոց է եւ միւսը՝ ռամկին»:

Շ. Ն.

«ՅԱՌԱՋ»Ի ԹԵՐԹՕՆԸ (202)

ԵԸԼՏԸԶԻ ՊՈՄՊԱՆ

ՀԱԶԱՐ ԻՆԸ ՀԱՐԻՒՐ ՉՈՐՍ

7. Էտուարտ Ժորիս (բանտարկեալ), պելժիական հպատակ, Անվէրս ծնած, Սինկըրի ընկերութեան գրասենեակնե-րուն պաշտօնեաներէն, յանցապարտ է, որովհետեւ մասնակցած է պատրաստու-թեան Կ. Պոլսոյ եղեռնական ձեռնարկ-ներուն, ինչպէս նաեւ վերջին Յուլիս 8ի մահափորձի զանազան հանդերձանքնե-րուն. մասնաւորապէս ներկայ եղած է Կ. Պոլսոյ հայկական յեղափոխական կոմի-տէի անդամներուն խորհրդակցութեանց. ինքնին իր բնակարանին մէջ այդ ան-դամներուն հաւաքոյթը կազմակերպած է, եւ իր տունը բնակեցուցած է Քրիս-տափոր Միքայէլեան ու Ռուպինա Ֆայն ամբաստանեալները, անոնց համար, իր հասցէին ընդունած եւ իր սեփական նա-մակատուփը դրած է կասկածելի նա-մակներ, խմբագրած է նամակներ եւ հե-ռագիրներ, որոնք մասնաւորապէս կը վերաբերէին մահափորձի կառքին. իբրեւ աւանդ իր տունը պահած է պայթուցիկ ապրանքներ ու նիւթեր. դժոխային մե-քենային համար յանձնարարած է գլո-բատ տը բոդասի գործածութիւնը, մելի-նիթը պայթեցնել տալու հարկաւոր բա-բախանութիւնը ձեռք բերելու համար, ինք է որ ընդունել տուած է երկաթէ սնտուկի մը գործածութիւնը, ռումբի շինութեան համար իր անցագիրը փոխ տուած է Վռամշապուհ Քէնտիրեանի, ռումբը նետելու փորձերուն համար, ա-ւոր ճամբորդութեան միջոցին դէպի Սո-ֆիա, ուր գտաւ ան իր մահը, դիւրա-ցուցած է իր կնոջ փախուստը, մահա-փորձէն տաս օր առաջ մեկնած, եւ անոր տուած է իր տան բոլոր թանկագին իրե-ղէնները. մահափորձէն նախօրեակին իսկ այցելած է ոճրագործներուն, որոնք պի-տի պայթեցնէին դժոխային մեքենան, այս վերջիններուն ալ փախուստը դիւ-րացուցած է, մէկ խօսքով՝ իր բոլոր միջոցներով սատարած է մահափորձին յաջողութեան եւայլն:

Այս ոճիրները նախատեսուած են Պատ-ժական Օրէնքի 55րդ յօդուածով եւ 58րդ յօդուածի երկրորդ յաւելուածին առաջին հատուածովը:

8. Աննա Նէլլէնս (փախստական), Պել-ժիացի, Անվէրս ծնած, Ժորիսի կինը, յանցապարտ է մասնակցած ըլլալով Կ. Պոլսոյ հայկական յեղափոխական կոմի-տէի եղեռնական արարքներուն պատ-րաստութեան, ինչպէս նաեւ վերջին Յու-լիս 8ի մահափորձին զանազան հանդեր-ձանքներուն, եւ այս եղեռնական գործին մէջ իր էրկան կողմէ ի գործ դրուած դե-րերուն մեծագոյն մասը լրացուցած է ինք անձամբ:

Այս ոճիրները նախատեսուած են Պատ-ժական Օրէնքի 55րդ յօդուածով եւ 58րդ յօդուածի երկրորդ յաւելուածի առաջին հատուածովը:

9. Կարապետ (Աշոտ) Յովհաննէսեան (փախստական), բնիկ Կ. Պոլսեցի Հայ մը, յանցապարտ ճանչցուած է, Գառլ Եուվանովիչ եւ Աշոտ ծածկանուններով մասնակցած է Կ. Պոլսոյ հայ յեղափո-խական կոմիտէի եղեռնական ձեռնարկ-ներուն, ինչպէս նաեւ վերջին Յուլիս 8ի մահափորձին զանազան պատրաստու-թեանց:

ՍՄԲԱՏ ԲԻՒՐԱՏ

(Շար.)

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Արկածի մը հետեւանքով այրած հայ տարաբախտ աղջնակը Յառաջի միջոցաւ կ'ուզէ շնորհակալութիւն յայտնել բոլոր անոնց՝ կազմակերպութիւն թէ անհատ, որոնք նիւթապէս թէ բարոյապէս օգտակար եղան իրեն։

ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

Հ. Յ. Դ. Արեւմտեան Եւրոպայի Կեդրոնական Կոմիտէն ցաւակցութիւն կը յայտնէ ընկ. Գրիգոր Փափազեանի և ընտանիքին, իր մօր դառնաղէտ մահուան առթիւ։

×

Հ. Յ. Դ. Նոր Սերունդի Կեդր. Վարչութիւնը ցաւակցութիւն կը յայտնէ ընկ. Գրիգոր Փափազեանի եւ ընտանիքին իր մօր՝ կսկծալի կորուստին առթիւ։

ՍԱՄՈՒԷԼ ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ
ՆՈՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Իրենց զաւակները արձանագրել փափաքող ծնողքները պէտք է փութան դիմել տեսչութեան հասցէին :

COLLÈGE ARMÉNIEN SAMUEL MOORAT
26, Rue Troyon, SEVRES (S. et O.)
Tél.: OBS. 18-28

Եւրոպայի մէջ, հայ մանչերու համար հիմնուած, ֆրանսական եւ հայկական ուսումնական կատարեալ ծրագիրներով օժտուած մեծագոյն եւ ծաղկեալ ուսումնարանն է Սեւրի Սամուէլ Մուրատեան վարժարանը, ուրուն սեմէն ներս հայ մանուկին հոգին, միտքը եւ մարմինը կը մեծնայ, կը ծաղկի եւ կ'ընդլայնի բաղձալի համեմատութիւններով :

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Հ. Բ. Ը. Միութեան Տիկնանց յանձնախումբը կը խնդրէ կազմակերպութիւններէն նկատի ունենալ հետեւեալ թուականները .—

ՀՈԿՏԵՄԲԵՐ 1, Երեքշաբթի երեկոյ Տիկնանց յանձնախումբի կազմութեան Գ. տարեդարձին առթիւ դեղարուեստական երեկոյթ :

ՀՈԿՏԵՄԲԵՐ 19, ցուցահանդէս հայ արուեստագէտներու նկարիչ, արձանագործ եւ փորագրիչներու գործերուն : Հայկական Թանգարանը, 52 Ավընիւ Ֆոշ, (Փարիզ 16):

ԴԵԿՏԵՄԲԵՐ 7, 8, 9, 10, «Բարենպատակ վաճառք »:

Յառաջիկային պիտի տրուին մանրամասնութիւններ :

Լոյս Տեսաւ



Մատենաշար — ՅԱՌԱՋ — Կեդրոնավայր
Գին
Ֆրանսա՝ 15 Ֆր.
— Առաւել առաքումի ծախքը —

Շ. ՄԻՍԱՔԵԱՆ

Օրեր եւ Ժամեր

ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ

—o—

Ս. ՅԱԿՈԲ (ԼԻՈՆ)

Շաբաթ (17 Օգոստոս), Նախատօնակ երեկոյեան ժամը 5ին : Կիրակի (18 Օգոստ.), սկզբն. ժամերգթ. առաւօտ ժամը 7,30ին: Պատարագ ժամը 10ին: Խաղողօրհնէք 11ին, Հոգեհանգիստ ժամը 11,30ին :

Լիոնի եւ Շրջ. Հայ Ազգային Միութեան Վարչութիւնը կը հրաւիրէ շրջանի բարեպաշտ հայ ժողովուրդը ներկայ ըլլալու 18 Օգոստոսին Ս. Աստուածածնայ տօնի առթիւ կատարուելիք արարողութեանց : Յաւարտ պատարագի տեղի պիտի ունենայ նաեւ խաղողի եւ մատաղի աւանդական օրհնութիւնը:

×

ՏԷՍԻՆ

Ուրբաթ, Աղի օրհնութիւն եւ մատաղի զենում կէսօրէ վերջ ժամը 3ին:

Շաբաթ, Հսկումի արարողութիւն կէսօրէ վերջ ժամը 6ին:

Կիրակի(18 Օգոստ.),Տօն Աստուածածնայ. սկիզբ ժամերգութեան ժ.ը 8,30ին, հանդիսաւոր պատարագ ժ.ը 10ին, մասնակցութեամբ տեղւոյն երկսեռ երգչախումբին, ղեկավարութեամբ Պ. Գ.Մարտիրոսեանի. երգեհոն եւ մեներգ Օր. Անժէլ Կարապետեան, խաղողօրհնէք եւ մատաղի բաշխում:

ՀԱՅ ԸՆԾԱՅԱՐԱՆ
ԲԱՑՈՒԱԾ ԵՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ուսումնական 1963–1964 Տարեշրջան

Կ'ընդունուին 10–12 տարեկան բարեկիրթ եւ ուսումնասէր աշակերտներ, որոնք ունին իրենց տարիքին համապատասխան նաեւ ուսումնական աստիճան :

Արձանագրութեան եւ լուսաբանութեանց համար դիմել՝

Direction du Petit Séminaire Arménien
3, Av. de Grandchamp, LE PECQ (S. et O.)
Tél. 963.01.72

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
ORIENT

Եռամսեայ պարբերական ամբողջովին նուիրուած Միջին Արեւելքի երկիրներու անցուդարձին:
Բ. եռամսեայ 1963 — թիւ 26
Շահեկան բովանդակութիւն
114, Champs-Elysées, PARIS

FOURRURES
Roger YOPIAN

PRIX INTERESSANTS
NEUF et REPARATION

84, Boulevard de Stalingrad, 84
— CHOISY-LE-ROI (Seine) —

Autobus : de la Porte de Choisy, descendre 3 Communes ou Rue du Docteur-Roux.

Imprimerie Speciale
du Journal « Haratch »
32, Rue de Trévise, Paris (9e)

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

ԼԻՈՆ.— Ֆր. Կապ. Խաչի Օրը կը տօնուի մեծ պատրաստութեամբ, 27 Հոկտ. Մոլիէրի շքեղ սրահին մէջ:

×

Փարիզահայ Տիկնանց Միութեան յիսնամեայ յոբելեանը կը տօնուի Հոկտեմբեր 13ին, Սալ տը լա Շիմի:

ԴՊՐՈՑԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆ

Դպրոցասէր Տիկնանց վարժարանին 1963 – 1964 տարեշրջանի արձանագրութիւնները սկսած են : Անոնք որոնք կը փափաքին ղրկել իրենց զաւակները պէտք է այժմէն իսկ դիմում կատարեն հաստատութեան տնօրէնութեան :

Ա.— ՖՐԱՆՍԱԿԱՆԸ, որ տասացի կերպով կը հետեւի պետական լիսէներու արդիական բաժնի պաշտօնական ծրագրին — անգլերէն եւ սպաներէն լեզուներով — :

Բ.— ՀԱՅԿԱԿԱՆԸ, որ կ'օժտէ սանուհիները հայադիտական ծանօթութիւններով, հայ լեզուի, գրականութեան, հայ կրօնքի եւ պատմութեան, Հայաստանի աշխարհագրութեան մարզերուն մէջ :

Աշակերտուհիներ կ'ընդունուին ութ տարեկանէն սկսեալ: Մանրամասնութեանց համար դիմել հաստատութեան տնօրէնութեան :

1, Bd. du Nord, LE RAINCY (S. et O.)
Tél : 927-01-72

Դպրոցասէրի ուսման ծրագիրը կ'ընդգրկէ երկու ուրոյն բաժիններ :

ՀՐԱՆՏ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

51, Rue Monsieur-le-Prince, PARIS - 6e — Chèque Postal : 1278-35

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՇԻՐՎԱՆԶԱԴԷ, Երկերի ժողովածու, 10 հատոր լաթակազմ	70 Ֆր.
ՍՏԵՓԱՆ ԶՕՐԵԱՆ, Երկերի ժողովածու, 7 հատոր, լաթակազմ	56 Ֆր.
ՍՏԵՓԱՆ ԶՕՐԵԱՆ, Պապ թագաւոր, լաթակազմ	10 Ֆր.
ՍՏԵՓԱՆ ԶՕՐԵԱՆ, Հայոց բերդը, լաթակազմ	8 Ֆր.
ՎԱՀԱՆ ՏԷՐԵԱՆ, Երկերի ժողովածու, 2 հատոր լաթակազմ	14 Ֆր.
ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՒԻԹ, մեծադիր, գունաւոր նկարներով, լաթակազմ	10 Ֆր.
Վ. ԱՆԱՆԵԱՆ, Հայաստանի կենդանական աշխարհը, Բ.	8 Ֆր.
ԱՐՍԷՆ ՏԷՐՏԷՐԵԱՆ, Երկեր (Արովեան Պռօշեան, Պարոնեան)	17 Ֆր.
ՄՈՒՐԱՑԱՆ, Պատմուածքներ, գունաւոր նկարներով	5 Ֆր.
ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑԻ մասին յիշողութիւններ. լաթակազմ	7.50 Ֆր.
ՄԻՔ. ՇԱԹԻՐԵԱՆ. Գարունը նորից եկաւ. 296 էջ.	5 Ֆր.
ԱԲԳԱՐԵԱՆ. Մատենադարան(անգլ.) 18 գունաւոր մանրանկարներ	3 Ֆր.
ՀԵՆՐԻԿ ԹՈՒՄԱՆԵԱՆ. Երգի ծնունդը. բանաստեղծութիւններ	3.85 Ֆր.
Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ. Տաղեր, 200 էջ. լաթակազմ	3.50 Ֆր.
ՍՈՎԵՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ. Ա. 800 էջ. լթկզմ.	16 Ֆր.
ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ, Անլռելի զանգակատուն, Պէյրութ, 1963	10 Ֆր.

Առաքման ծախքը գնողին վրայ

ԳՐԱՏՈՒՆՍ ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻՆ Է
ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՁԱՅՆԱԳՐԵԱԼ ԲՈԼՈՐ ԵՐԿԵՐՈՒՆ
ՃՈԽ ՄԹԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԵՒ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆՑ

ԼՈՅՍԸ ԳՈՅՆ Է.... ԳՈՅՆԸ ԼՈՅՍ Է
ՁԵՐ ՏԱՆԸ ԼՈՅՍ ՏՈՒԷ՛Ք.... ԹՈՄԼԱՔԻ ԳՈՅՆ ՏՈՒԷ՛Ք

Ձեր բնակարանը կը լուսաւորուի
Եթէ ներսը եւ դուրսը

ՎԵՐԱՆՈՐՈԳԷՔ - ԶԱՐԴԱՐԷՔ - ՆԵՐԿԷՔ

ԹՈՄԼԱՔ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐՈՎ

PEINTURES THOMLAC

16 bis, Bd. Sébastopol, Paris 4e

Tél. ARC 26-61 – Métro : Halles et Chatelet

136, RUE DES BOURGUIGNONS — ASNIERES - BOIS COLOMBES (Seine)
Tél : GRE. 09-47

11, BD. DE LA REPUBLIQUE — LA GARENNE (Seine)
Tél. : STA. 19-06

ԱՆՄՐՑԵԼԻ ԳԻՆԵՐՈՎ

Ամէնէն արդիական, նուրբ եւ ընտիր ճաշակով պատրաստուած՝ տաւշնակարգ ներկեր : Բնական եւ արուեստական բազմերանգ գոյներու մեծ ընտրութիւն: Նորոյթ խղանէրկեր, պատի դեղեցիկ թուղթերու ճոխ ընտրութիւն: Գետնի համար՝ ամէն տեսակ — լինոլէոմ եւ փլասթիք — ծածկոցներ. —

Tapiflex — Tapisom — Carpette

Ձեր բնակարաններուն արտաքին եւ ներքին խնամքներուն համար անհրաժեշտ բոլոր նիւթերը :

Ամէն գնորդի կը նուիրուի յատուկ տետրակ մը, որու շնորհիւ կրնայ 10–30 առ հարիւր զեղչ ունենալ :

ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐ

52, RUE CHALON, PARIS 12e — 64, BLD. DE BELLEVILLE, PARIS 20e
166, AV. ARISTIDE BRIAND — PAVILLONS - SOUS-BOIS (Seine)
4 bis, RUE PAUL VAILLANT COUTURIER — ARGENTEUIL (S. et O.)
24, RUE PAUL VAILLANT-COUTURIER — ALFORTVILLE (Seine)
48 bis, RUE DALAVRAC — FONTENAY - SOUS - BOIS (Seine)

Le PREMIER QUOTIDIEN ARMENIEN en EUROPE

ՅԱՌԱՋ
HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction et Administration : 32, Rue de Trévise - PARIS-9e

Fondé en 1925 — Téléph. : PRO. 86-60
R. C. Seine 57 A 2731 — C. C. P. Paris 15069-82

ՕՐԱԹԵՐԹ
Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա՝ Տար. 50 Ֆ. — Վեցամսեայ՝ 27 Ֆ.
Արտասահման՝ Տար. 60 Ֆ. — Հատը 0.30 Ֆ.

ԵՐԵՔՇԱԲԹԻ 13 ՕԳՈՍՏՈՍ
MARDI 13 AOUT 1963

LE NUMERO : 0,30 FR.

39րդ ՏԱՐԻ — Թիւ 9681

Fondateur : SCHAVARCH MISSAKIAN

39e ANNÉE — No 9681

ԱՐԵՒՄՈՒՏՔԻ ՀԱԿԱՍՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Եթէ չըլլար դարաւոր հակասութիւնը Արեւմուտքի խօսքին ու գործին միջեւ, գաղափարին ու մարդկութիւնը այսօր թերեւս գտնուէին աւելի հաշտ ու նախանձելի վիճակի մէջ:

Անշուշտ, ներկայ միջազգային շփոթ կացութեան միակ պատասխանատուն Արեւմուտքը չէ: Սակայն, որոշ չափով, թերեւս ի՛նքն է գլխաւոր պատասխանատուն:

Արեւելքը եղած է աղբիւրը իմացականութեան, գիտութեան եւ կրօնքներու:

Սակայն, երբ կը մօտենանք պատմութեան յետ քրիստոնէական շրջանին, ուսումնասիրութեան եւ գնահատութեան կեդրոնը կը փոխադրուի եւրոպական երկիրներ, որոնք աստիճանաբար, Հիւսիսային Ամերիկայի հետ միասին, կը դառնան «Արեւմուտք»:

Արդ, անուրանալի է այն դերը, զոր քաղաքակրթութեան — այս բառին ամենախոր ու վաւերական իմաստով — զարգացման մէջ կատարած է Արեւմուտքը:

Ան եղած է օրրանը պատմարժէք գիւտերու: Այս գիւտերէն շատեր ուղղակի յեղաշրջած են մարդկային յատկապէս նիւթեղէն իրականութիւնը: Ծնունդ տուած է արուեստի եւ մշակոյթի այնպիսի գլուխգործոցներու ու բարձր ստեղծագործութեան, որ ատեն մը կը թուէր նոյնիսկ, որ այս մարզերը իր մենաշնորհը դարձուցած է: Իր հնագոյն փիլիսոփաներէն մինչեւ ներկայ դարու իմաստասէրները՝ հարստացուցած է մարդկային իմացական աշխարհը եզակի խորութեամբ եւ բարձրագոյն գաղափարներու հասնող արդիւնքներով:

Այս բոլորէն դուրս — թերեւս այս բոլորէն վե՛ր նոյնիսկ — եղած է սերմնացանը մեծ գաղափարներու, մարդկային իրականութեան հիմքն իսկ հանդիսացող անմեռ խտէալներու:

Յստակապէս ու գիտակցօրէն գլխագրով գրուած Ճշմարտութեան, Եղբայրութեան, Արդարութեան, Հաւասարութեան, Ազատութեան, Խաղաղութեան իտէալներուն եթէ ոչ միակ մայրը, ապա իտէալներուն ու անոնց ըմբռնումը կատարելագործութեան հասցնողը եղած է Արեւմուտքը:

Եւ մեծ, անչափելի կերպով բախտորոշ պատմական եղած պիտի ըլլար դերը Արեւմուտքին, եթէ փորձած ըլլար այս գաղափարները խօսքէն գործի վերածել ոչ միայն իրեն, այլեւ բոլորին, համայն մարդկութեան համար:

Մենք կրնար ըսել, թէ Արեւմուտքը կատարելապէս անտես առած է իրմէ դուրս գտնուող աշխարհն ու անոր բնակիչները: Սակայն ինչ որ ըրած է, եթէ բացառաբար, ապա գերազանցօրէն իրեն համար ըրած է:

Ինչ իր բանաձեւածը արտասանած է խօսքով, կարծես խօսքը կը վերաբերէր ամենքը բոլորին, խօսքը գործի վերածած ատեն, դուրս եկած է, որ այդպէս չէ:

Երբ խաղաղութիւն հետապնդած է, անիկա ըրած է իրեն համար միայն: Այսպէս, իրենք իրենց համար խաղաղութիւն պահած՝ փոյթ ըրած չէ բնաւ, որ ուրիշներ հուր ու սուր գործածեն այլ ցամաքամասերու վրայ բնակող ժողովուրդներու դէմ:

Նմանապէս, արդարութեան գործադրութիւնը հետապնդող եւրոպական ազգերը կատարելագործած են մարդկային յարաբերութեանց օրէնքները, օրէնսդրութիւններն ու [illegible], իրաւական բարձրակէտի հասցուցած են դատարանները, խստօրէն բնորոշած են ո՛վ եւ ի՛նչպէս օրէնքի մեկնաբանութեան: Այս ամէնը, սակայն, ըրած են առաւելաբար իրե՛նց երկիրներուն եւ իրե՛նց ժողովուրդներուն համար:

Եւ վերջապէս, երբ կարգը եկած է իտէալներու թագուհիին, անո՛ր, որ թերեւս վեհագոյնն է մարդակերտ բոլոր գաղափարներուն՝ Ազատութեան, Արեւմուտքը իր բովանդակ հանճարը ի գործ դրած է որպէսզի որքան մարդկայնօրէն հնարաւոր է, խօսքը կատարելագործուած ձեւով իրականութեան վերածուի:

Տարաբախտաբար, հոս եւս Արեւմուտքը եղած ու մնացած է կարճատես եւ եսակեդրոն: Հոս եւս գերազանցօրէն ինք իրեն վերապահած է իր անգնահատելի նուաճումներուն արդիւնաւորումը:

Ո՞ւր որոնել այս առեղծուածի բանալին: Ո՞ւր գտնել պատասխանը, որ հասկնալի պիտի դարձնէր, թէ ինչո՛ւ գաղափարապաշտ մարդիկ, որոնք մեր նըշած արժէքները գլխագրով միայն կ'ըմբռնէին, այնուամենայնիւ մեծապէս նըսեմացուցին զանոնք գաղափարի ապիրատ գործադրութեամբ:

Կը կարծենք, որ պատասխանը կրնայ գտնուիլ այն իրողութեան մէջ, թէ Արեւմուտք այս վերացական արժէքները գլխագրով ըմբռնելէ առաջ, հասկցած եւ իւրացուցած պէտք է ըլլար գլխագիր ըմբռնումը Մարդուն:

Կը կարծենք, որ բոլոր գլխագրերուն գլխագիրը մարդն է:

Երբ Ազատութիւնը մարդկութեան մէկ մասին համար է, մինչ անկէ զուրկ է մէկ այլ, նոյնիսկ փոքրագոյն մասը, ապա անազատ է բովանդակ մարդկութիւնը, որովհետեւ անազատ է Մարդը:

Նշուած իտէալները արժէք են միայն այն ատեն, երբ մի են եւ անբաժանելի, երբ կը վերաբերին ճիշդ հաւասար չափով՝ հզօրին եւ տկարին, հարուստին եւ չքաւորին եւ այս կամ այն ցեղին, ազգին ու ժողովուրդին պատկանող ոեւէ անդամին:

Եւ միթէ հոս չէ՞ ակն ու աղբիւրը այն քաշողութեան ու հմայքին, որ ունեցաւ համայնավարութիւնը աշխարհի հինգ ցամաքամասերուն վրայ:

Տասնամեակներով, անհաշուելի ամբոխներու համար, էականը համայնավարութեան գործը չեղաւ երբեք, էականը եղաւ ու մնաց այն, որ ան ըսաւ.

— Մինչ ազատութեան, արդարութեան ու եղբայրութեան մասին ցարդ խօսողները այս բառերը կը վերապահէին բացառաբար իրե՛նց, ես այս բառերը կը խոստանամ բոլորին: Եւ կ'ըսեմ. ազատութիւն՝ բոլորի՛ն, արդարութիւն՝ բոլորի՛ն, եղբայրութիւն՝ բոլորի՛ն:

Ներկայ պատմաշրջանն ալ եթէ ոչ նոյն, ապա նման «մեղք»եր չգործելու համար պէտք է միշտ յիշէ, որ իտէալները իրենց նպատակին հասած պիտի ըլլան, երբ ծառայեն ոչ թէ մարդոց — որքան ալ պատկառելի ըլլայ անոնց որակն ու թիւը — այլ համայն մարդկութեան, այն է՝ յաւերժական Մարդուն:

«ՅՈՒՍԱԲԵՐ»

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՌԸՍՔ ՀԱՄՈԶԵՑ ԱՏԸՆԱՈՒՐԸ

104 ԵՐԿԻՐՆԵՐ ՆՊԱՍՏԱՒՈՐ ԵՆ ԴԱՇՆԱԳՐԻՆ

Ռըսքին Պոն հասնելէն առաջ ալ յայտնի էր որ Դաշնակցային Գերմանիա պիտի ստորագրէր Մոսկուայի դաշինքը, բայց Միացեալ Նահանգներու Արտաքին Նախարարին այցելութիւնը վարկի հարց մըն էր Ատընաուըրին համար: Արդարեւ, այս ձեւով, Միացեալ Նահանգները ցոյց կուտան թէ մասնաւոր կարեւորութիւն մը կ'ընծայեն Դաշնակցային Գերմանիոյ:

Գերմանիոյ այս ընթացքը ցոյց կուտայ նաեւ, անգամ մը եւս, թէ Ֆրանքեւգերմանական դաշնագիրը ճակատագրական դեր մը չի խաղար Դաշնակցային Հանրապետութեան համար: Այս կէտը կը մատնանշուի ֆրանսական բոլոր խմբագիրներուն կողմէ, վասնզի նկատի առնելով Ֆրանսայի ժխտական դիրքը Մոսկուայի դաշնագրին նկատմամբ, կը սպասուէր որ Ատընաուըր աւելի կարեւորութիւն տար իր ֆրանսացի ընկերոջ: Բայց այս առթիւ շատ յստակ կերպով պարզուեցաւ որ Պոշինկթընի եւ Փարիզի միջեւ ընտրութեան մը պարտաւորութեան պարագային, Ատընաուըրի կառավարութիւնը չի վարանիր երբեք: Ճիշդ է որ Ֆրանսա «տեղեակ պահուած է» Դաշնակցային Հանրապետութեան որոշումէն, բայց Ֆրանսայի դիրքը ոչ մէկ դեր խաղացած է այդ ուղղութեամբ: Ռոժէ Մասիփ, Ֆիկառոյի մէջ ցաւով կ'անդրադառնայ այս պարագային եւ կը շեշտէ թէ Մեծն Բրիտանիոյ Հասարակաց Շուկայի անդամակցութեան վերաբերեալ տարակարծութիւններէն ետք, ինչ որ կը պատահի Մոսկուայի դաշնագրին առթիւ, ցոյց կուտայ թէ ո՛րքան դժուար է իսկական եւրոպական հասարակաց քաղաքականութիւն մը մէջտեղ դնել:

Միացեալ Նահանգներու Արտաքին նախարարին տուած պատճառաբանութիւնները նոր չէին: Անգամ մը եւս վստահեցուց որ Միացեալ Նահանգները պիտի չճանչնան Արեւելեան Գերմանիան, բայց եթէ Պոն չանդամակցի Մոսկուայի դաշնագրին, Գերմանիոյ միակ ներկայացուցիչը՝ Արեւելեան Գերմանիան պիտի ըլլայ: Պարզ է որ եթէ Ատընաուըր եւ գերմանական կառավարութիւնը դիւրութեամբ համոզուած են, պատճառն այն է որ արդէն տրամադիր էին համոզուելու եւ եղածը միայն ձեւական բնոյթ ունէր: Ռըսք ըսած է նաեւ թէ վաղը Չինաստան ալ կրնայ անդամակցիլ այդ դաշնագրին ինչ որ չի նշանակեր թէ Միացեալ Նահանգները պիտի ճանչնան համայնավար Չինաստանը: Ռըսք ութ ժամ խօսած է Գերմանիոյ ղեկավարներուն հետ, իր մեկնումէն անմիջապէս ետք, Պոնի Արտաքին Նախարարութիւնը հեռագրած է Փարիզի իր դեսպանին, որպէսզի այս վերջինը տեղեակ պահէ ֆրանսական կառավարութիւնը, գերմանեւամերիկեան խօսակցութիւններուն:

Ներկայիս 104 երկիրներ կան որոնք լաւ տրամադրուած են Մոսկուայի դաշնագրին հանդէպ: Ցարդ Ֆրանսայէն զատ իրենց ընդդիմութիւնը յայտնած են՝ համայնավար Չինաստան, Ալպանիա եւ Հիւսիսային Վիէթ-Նամ:

Փեքինի «Ժողովուրդի Օրաթերթ»ը կը գրէ նոյնիսկ թէ Մոսկուայի հիւլէական համաձայնագիրը կ'աւելցնէ պատերազմի վտանգները:

Ուաշինկթընի մէջ երկուշաբթի օր տեղի կ'ունենար Ծերակոյտի նիստը նուիրուած դաշնագրին վաւերացման: Նիւ Եորքի կառավարիչը՝ Նելսըն Ռոքֆելլեր նպաստաւոր կարծիք յայտնելով հանդերձ շեշտեց թէ պէտք է զգոյշ ըլլալ եւ միշտ ուշադիր, որպէսզի Խորհ. Միութիւնը նորէն խաղի չբերէ: Ռոքֆելլեր աւելի քան 3000 բառերէ կազմուած յուշագիր մը հրատարակած է ամերիկեան Արտաքին քաղաքականութեան գլխաւոր հարցերուն վերաբերեալ, որու մէջ կը շեշտէ զանազան կէտեր.— ա) Ծերակոյտը պէտք է մատնանշէ թէ դաշնագիրը չարգիլեր որ հիւլէական զէնքեր գործածուին եւ մղելու համար յարձակում մը ո՛ւր որ տեղի ունենայ:

բ) Կառավարութիւնը պէտք է հարկ եղած միջոցները ձեռք առնէ որպէսզի ամերիկեան ուժերը կարենան ետ մղել որեւէ յարձակում ազատ աշխարհի դէմ:

գ) Կառավարութիւնը պէտք է անմիջական միջոցներ ձեռք առնէ ամրապնդելու համար Ատլանտեան զինակցութիւնը աւելի տկարացած այն ձեւէն որով տարուած են համաձայնագրին վերաբերող բանակցութիւնները:

դ) Միացեալ Նահանգները պէտք է այնպէս ընեն որ անակնկալի չգան, ինչպէս 1961ին երբ Խորհ. Միութիւնը խզեց համաձայնագիրը:

ե) Ծերակոյտը պէտք է մատնանշէ որ այդ համաձայնագիրը չարգիլեր հիւլէական պայթումներ խաղաղ նպատակներու համար:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԽՐՈՒՇՉԵՒ Թիթոյի հիւրը պիտի ըլլայ Օգոստոս 20էն սկսեալ: Այս առթիւ հրատարակուած զեկոյցը կը շեշտէ թէ «արձակուրդի» ճամբորդութիւն մըն է, բայց իրականին մէջ, Խրուշչեւի օրակարգը շատ ծանրաբեռնուած է: Պիտի այցելէ նաեւ՝ Սկիւպ որ խորհրդային լայն օժանդակութիւն մը վայելեց վերջին աղէտին առթիւ:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ծերակուտական Քեֆաուվըր, որ դէմոկրատ թեկնածու եղած էր Միացեալ Նահանգներու նախագահութեան, յանկարծամահ եղաւ առջի օր: 60 տարեկան էր:

ՄԱՐԱԹՈՆԻ մէջ վերջացած է ճեմպորին որու կը մասնակցէին աւելի քան 13 հազար սկաուտներ՝ աշխարհի բոլոր կողմերէն:

ՆԻԺԵՐԷՆ արտաքսուած է ֆրանսացի լրագրող մը որ Ֆրանս-Փրէս գործակալութեան թղթակիցն էր:

ԱՄԵՐԻԿԱՅԻ մէջ ցեղային կռիւները չեն դադրած: Բազմաթիւ սեւեր ձերբակալուած են մինչ 14 տարեկան սեւ աղջնակ մը սպաննուած է Ճերզի-Սիթիի մէջ:

ԴԱՄԱՍԿՈՍԷՆ կը հաղորդեն թէ զօր. Աթասի միշտ Սուրիա կը գտնուի: Այն լուրը, ըստ որուն երկրէն հեռացած էր, որեւէ հիմ չունի:

ՄԱՐՈՔԻ մէջ Իսթիքլալ կուսակցութիւնը կ'ուզէ որ թաղապետական ընտրութիւնները ջնջուին:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ Ռուսաստանի Գերագոյն Ատեանը դատած է 43 հոգի որոնք կերպասեղէնի մեքենաներու առուծախի ցանց մը ստեղծած էին, որ կը տարածուէր մինչեւ Կովկաս եւ Ղազախիստան: Մէկ հոգի մահուան դատապարտուած է, միւսները բանտի զանազան պատիժներու:

ՍԻՈՒՆԵՐՈՒ պետը՝ Տոն Ջեպրէ կ'ուզէ խաղաղութեան ծխափողը ծխել տը Կոլի հետ: Այս ուղղութեամբ նամակ մը գրած է Ֆրանսայի Հանրապետութեան Նախագահին, շեշտելով թէ նման բան մը կրնայ բարելաւել Ֆրանսայի եւ Միացեալ Նահանգներու յարաբերութիւնները: Տոն Ջեպրէ (բուն անունով՝ Ուոլթըր Համիլթըն) ընտանիքի մը կը պատկանի որ ծանօթ է նման առաքելութիւններով: Արդարեւ իր մեծ հայրը 1884ին Ֆրանսա եկած է 50 Հնդիկներու պատուիրակութեան մը գլուխը: Բայց տը Կոլ չի ծըխեր...:

ԱԼԺԵՐԻՈՅ «Ընկերվարական Յեղափոխութիւն» գաղտնի կուսակցութեան համաձայն, 30 ձերբակալութիւններ կատարուած են, որոնց մէջ 10՝ Ֆրանսացի:

ՇԱՌԼ ԹՐԷՆԷ բանտէն ելաւ առջի օր, վճարելէ ետք երաշխաւորագինը առժամեայ ազատութեան համար:

ՀԱՄԱՅՆԱՎԱՐ ԱՇԽԱՐՀԻՆ ՄԷՋ

Արեւմուտքի եւ Արեւելքի պաղ պատերազմին կ'ընկերանայ չին-խորհրդային պատերազմը։ Մոսկուայի հանդիպումը լուծում մը չգտաւ երկամեայ վէճերուն, որոնք երբեմն բուռն եղան, երբեմն լռելեայն։ Խորհ. Միութեան Համայնավար կուսակցութեան Կեդրոնական Կոմիտէն հրատարակեց երկարապատում Նամակ մը, որով կը պնդէր, թէ երկու Համայնավար երկիրները անհամաձայն գտնուեցան 1960 Ապրիլին «երբ չին ընկերները հրապարակով յայտնեցին իրենց տարակարծութիւնները միջազգային համայնավար շարժումի՝ մասին»։

Տարակարծութիւնը հին էր, 1960 Ապրիլին աւելի սուր հանգամանք ստացաւ։ Մաօ կ'ամբաստանէր Խորհ. Միութեան վարիչները իբրեւ մարքսիստ ուղղափառութենէ հեռացողներ, համակեցութեան յարողներ, մինչդեռ պատերազմը անխուսափելի է դրամատիրական եւ համայնավար աշխարհներու միջեւ։ Քանդելու է դրամատէրներու աշխարհը եւ հաստատելու համաշխարհային պրոլետարական տիրապետութիւնը ամէն գնով, «եթէ երբեք հարիւր միլիոն Չինացիներ զոհուին, մնացողները կը բաւեն Չինաստանի համար»։

Մաօյի զայրոյթ պատճառեց Խրուշչեւ-Այզընհաուըր հանդիպումը 1959 Սեպտեմբերին։ Մոսկուա տեղի տուաւ Ամերիկայի՝ Քուպայի առջեւ, օգնեց Հնդկաստանի, եւ կանչեց մասնագէտներ, որոնց այնքան պէտք ունէր համայնավար Չինաստան։ Մաօ քանհինգ կէտերէ բաղկացած նամակով կը մերժէր Մոսկուայի ղեկավարութիւնը, կը պահանջէր հաւաքական ղեկավարութիւն, որովհետեւ «ոչ մէկը իրաւունք ունի միւսները ղեկավարելու»։ Չինաստանի իշխանապետը կը դատապարտէր Սթալինի դատապարտութիւնը, թէեւ Սթալին միշտ հակառակ գտնուեցաւ չին համայնավարութեան։

Չիները մարքս-լենինիզմ կը հոլովեն բայց Մարքսի անբաժանելի ընկերը, Էնկելս, կ'առաջարկէր խուսափիլ պատերազմէն, որովհետեւ քանդող պիտի ըլլար, ոչ մէկ պետութիւն կրնար նախատեսել, թէ յաղթական պիտի ըլլար։ «Եւրոպա կը խաղայ, եթէ Ռուսիա հրաժարի երազներէն, միջազգային տիրապետութեան ձգտումէն»։ Լենին եւ Սթալին ալ համաձայն էին համակեցութեան, մինչեւ որ Խորհ. Միութիւն պատրաստ ըլլար ղիմագրաւելու դրամատէր աշխարհը։ Սթալին կը հաւատար, որ Արեւմուտք պիտի քանդուէր ներքին հակամարտութիւններով։ Բայց այդ օրերուն հիւլէական ռումբը չկար։ Մաօյի համար ատիկա «թուղթէ վագր» մըն է եւ չհասկնար Չինաստանը։ Խորհրդային եւ ամերիկեան պատերազմ մը փափաքելի է չին ղեկավարին համար, երկու երկիրներն ալ քարուքանդ կ'ըլլան հիւլէական ռումբերով եւ Չինաստան կը մնայ առաջին համայնավար երկիրը, որուն առջեւ խոնարհելու են ասիական պետութիւնները, ենթարկուելով իր ազդեցութեան կազմելու են ասիական միութիւնը՝ ճակատելու համար տկարացած սպիտակ ցեղին։

Խորհ. Միութիւնը ասիական պետութիւն մըն է Սիպերիայով եւ դրացին Չինաստանի։ Գաղափարախօսական պայքարները երեւոյթներ են։ Ռուսական ամէն յառաջացում դէպի Խաղաղական վրդովում կը պատճառէր չինական շրջանակներուն։ Ռուսիա կ'երկարէր դէպի Արեւելք, չինական կայսրութիւնը կը յառաջանար դէպի հիւսիս, Մանչուներու եւ Ռոմանոֆներու հակամարտութիւնն էր Ամուրի ափերուն։ Խորհ. Միութիւնը հաւատայ, թէ հարցը լուծուած կը նկատուի Չինաստանի համայնավարացումով։ Օժանդակեց ընդարձակածաւալ կայսրութեան ճարտարարուեստի զարգացման։ Երբ տարակարծութիւնը սկսաւ, խորհրդային վարիչները տեսան թէ հակառակորդ մը զօրացուցած են, որ կը սպառնայ ոչ միայն ընկերոջ, այլ աշխարհի։ Ընկերները համոզուած են համայնավարութեան ծաւալման, խորհրդային խաղաղութեան մէջ, Չինը՝ պատերազմով։ Չին նամակը կը յուսայ. «Քանդուած դրամատիրական աւերակներուն վրայ յաղթական համայնավարութիւնը պիտի ստեղծէ հազար անգամ բարձր քաղաքակրթութիւն մը»։ Խորհ. Միութիւնը կը հարցնէ. «Ի՞նչպիսի աւերակներ պիտի մնան հիւլէական պատերազմէն ետքը»։ Չինաստանի Կեդր. Կոմիտէին համար կարեւորութիւն չունի աւերակներուն կուտակումը, որքան ահաւոր ըլլայ, այնքան փափաքելի, կարեւորն է դեղին ցեղին համաշխարհային տիրապետութիւնը։ Սխալ է կարծել, թէ «հիւլէական պատերազմին իսկական բնոյթին ըմբռնումն է, որ երկու պլոքներու միջեւ կը ստեղծէ հակառակութիւն»։ Քուպայի միջադէպին առիթով Խրուշչեւ Չիներուն ներկայացուց փաստեր, երբ կ'ամբաստանուէր խոնարհող Քենըտիի սպառնալիքին առջեւ, բայց Մաօյի ընկերները համոզիչ չգտան։

«Մենք ալ կը փափաքինք համայնավարութեան ծաւալումը, բայց խաղաղ համակեցութեամբ» կը գրէ խորհրդային պատասխանը։ Մոսկուայի վարիչները համոզուած են, թէ համայնավարութիւնը ձգողական ուժ ունի եւ հետզհետէ իրեն պիտի ձգէ դրամատիրական աշխարհի բոլոր աշխատաւորները։ Արեւմուտքի մէջ ալ վստահ են, թէ արեւմտեան քաղաքակրթութեան մագնիսական ձգողութիւնը պիտի ուժեղանայ հետզհետէ, երբ պատերազմի սպառնալիքը վերջ գտնէ, երկու կողմէն լաւատեսութիւն։ Խրուշչեւ արեւելեան Պերլինի մէջ կը հաւաստէր.— «Տերունի դրամատիրութիւնը պիտի պարտուի երիտասարդ ընկերվարութենէն, դրամատիրութիւնը կը քալէ դէպի գերեզման։ Այո՛, պիտի թաղուի դրամատիրութիւնը, միայն թէ դիաթաղները պիտի ըլլան իւրաքանչիւր երկրի աշխատաւոր դասակարգը, իւրաքանչիւր երկիր իր պրոլետարներու ուժով։ Հարկ չկայ պատերազմելու ընկերվարութիւնը պարտադրելու համար, ատիկա ներքին գործ մըն է իւրաքանչիւր երկրի համար»։

Խրուշչեւի մտահոգութիւնը չինական յոխորտանքին հանդէպ կը սկսի 1955ին՝ Ատենաուըրի յայտարարութեան համաձայն։ Մոսկուայի հանդիպումը համաձայնութեան եզր մը գտնելու համար աւելորդ էր, բայց փորձ մըն էր երեւոյթները փրկելու համար։ Արեւելեան վտանգը Խորհ. Միութիւնը կը մղէ Արեւմուտք, համաձայնութեան նախադուռը կը բացուի հիւլէական փորձերու առկախումով։ Մոսկուա պէտք ունի նուազեցնելու զինուորական ծախքերը բնակչութեան կենցաղի մակարդակը բարձրացնելու համար։

Մոսկուա առաջարկած էր ոչ-յարձակման դաշինք կնքել Վարշաւայի եւ Ատլանտեան Ուխտի միջեւ։ Առաջարկը քննութեան մէջ է եւ մտահոգութիւն կը պատճառէ Արեւմտեան Գերմանիոյ վարիչներուն։ Ընդունիլ դաշինքի մը կնքումը կը նշանակէ ճանչնալ անուղղակի Արեւելեան Գերմանիան եւ յետաձգել միութիւնը։ Քենըտիի գրաւոր հաւաստիքը վստահութիւն չի ներշնչեր գերման մամուլին։ Փանքովի հանրապետութիւնը Հոկտեմբերին պիտի կատարէ ընտրութիւններ եւ կ'ուզէ որ արեւելեան Պերլինի բնակչութիւնն ալ մասնակցի քուէարկութեան, մինչդեռ արեւմտեան Պերլինի բնակիչները չեն մասնակցած Պոնի հանրապետութեան ընտրութիւններուն, որովհետեւ հակառակ է Փոցտամի համաձայնութեան։ Պոնի վարիչները պիտի աշխատին արգիլել համայնավար քուէարկութիւնը եւ բնականօրէն աւելի մերձենալով Ֆրանսայի։

Արեւմտեան Գերմանիա անհրաժեշտ էր որպէս պատնէշ, երբ Խորհ. Միութիւն կը սպառնար։ Երբ ամերիկեա-խորհրդային համաձայնութեամբ վտանգը վերջ գտնէ՝ պատնէշը նախկին կարեւորութիւնը կը կորսնցնէ եւ Պոն նոր ուղի մը պիտի փնտռէ։

ԽՈՐԷՆ ԳԱԲԻԿԵԱՆ

ՉՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ ՁԵՌԱԳԻՐՆԵՐԸ ՉԵՆ ՎԵՐԱԴԱՐՁՈՒԻՐ ։

ԽՈՏԱՍՊԱՆ ՆԻՒԹԵՐԸ

Անցեալ դարու վերջաւորութեան մասնագէտները նկատեցին, որ կարգ մը քիմիական նիւթեր չափազանց վնասակար են բոյսերու համար եւ կը մեռցնեն զանոնք. այսպէս են՝ պղինձի որոշ բաղադրութիւնները, ծծմբաթթուն, եւայլն։ Աւելի ուշ՝ 1932ին, գտնուեցան ուրիշ նիւթեր, որոնք սկսան օգտագործուիլ ցորենազգի բոյսերով մշակուած դաշտերու վրայ։ Այս նիւթերը կ'ոչնչացնէին միայն այդ դաշտերուն վրայ գտնուող մոլախոտերը, ոչ մէկ ազդեցութիւն ունենալով ցորենի կամ մշակուած այլ բոյսի վրայ։ 1944ին յայտնագործուեցան խոտասպան նիւթերու այլ ընտանիք մը՝ կազմուած փենոքսիասեթիք թթուի բաղադրութիւններէ, որ շատ աժան եւ ազդեցիկ ըլլալով, սկսաւ օգտագործուիլ լայնօրէն։ Այս խումբին պատկանող նիւթերը կը տարածուին 0,5–2 քիլօ իւրաքանչիւր հեկտարի վրայ եւ կուտան հեկտար գլուխ մինչեւ 400 քիլ. բերքի աւ... մը, շնորհիւ մոլախոտերու ոչնչացման, որ կը հասնի մինչեւ 96 առ հարիւրի։

Մոլախոտերու վրայ ազդող նիւթերը կրնանք բաժնել երկու մեծ խումբերու։ Այսպէս կան կարգ մը նիւթեր, որոնք կ'ազդեն ուղղակի հպումով, օրինակ՝ ծծմբաթթուն, հանքային իւղերը, օրկանական բաղադրութիւնները, եւայլն։ Այս նիւթերը կ'ազդեն միայն իրենց հպման մասին վրայ (տերեւ, ցօղուն եւայլն) եւ կ'ոչնչացնեն այդ մասը միայն, ձգելով որ բոյսին արմատը շարունակէ աճիլ։ Խոտասպան նիւթերու երկրորդ խումբը շատ աւելի ազդեցիկ է. անոնք կը թափանցեն բոյսի անօթներուն մէջ եւ կը շրջին բոլոր մասերուն մէջ, որով ամբողջ բոյսը կ'ենթարկուի ոչնչացման։ Այս նիւթերը աւելի շատ կը սփռուին օդանաւերու միջոցաւ եւ կամ ցանելով զանոնք հողին վրայ։

Ի՞նչպէս կը բացատրուի խոտասպան նիւթերու ազդեցութիւնը։ Յայտնի է, որ ըստ իրենց սերմի կազմութեան, բոյսերը կը պատկանին երկու մեծ խումբերու — այն բոյսերը, որոնց սերմը մէկ բլթակ ունի, եւ կը կոչուին միաբլթակ բոյսեր եւ ուրիշներ, որոնց սերմերը երկբլթակ են։ Առաջին խումբին մաս կը կազմեն ցորենազգի բոյսեր, իսկ երկրորդին՝ լուբիան, ոլոռը, արեւածաղիկը, եւայլն։ Երբ կայ տարածութիւն մը, որ մշակուած է ցորենով, անոր վրայ գտնուող մոլախոտերը մեծ մասամբ երկբլթակ բոյսեր են, մինչ ցորենը միաբլթակ է։ Հետեւաբար կ'օգտագործուին երկբլթակներ ոչնչացնող խոտասպան նիւթեր։

Կան սակայն բացառութիւններ ալ։ Վերջին տարիներու ընթացքին յայտնաբերուեցան շատ մը նիւթեր, ինչպէս օ-մազին եւ աթրազին կոչուածները, ...

ՀԱՄԱՅՆԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԴԵՐԸ

ՌՈՒՍԵՒԹՈՒՐՔ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆՑ ՄԷՋ

1919–1922

ԽՄԲ.— Կը ներկայացնենք լրիւ թարգմանութիւնը դասախօսութեան մը, զոր Կոթհարտ Եաշքէ տուած է Փարիզի Համալսարանին Թրքական Ուսմանց Կաճառին մէջ՝ 1963 Ապրիլ 26ին։ Դասախօսութիւնը ամբողջութեամբ հրատարակուած է ՕՐԻԱՆ (Արեւելք) պարբերաթերթին մէջ (թիւ 26, 1963ի երկրորդ եռամսեայ)։ «Orient», Revue Trim. II, No 26, 1963, Paris.

Առաջին աշխարհամարտի պարտեալներուն մէջ են Ռուսիան եւ Թուրքիան։ Այս երկու երկիրները, յաղթականներուն կողմէ զատուեցան մարդոց իրաւունքներէն զրկեալներ։ Այս անհեռատես քաղաքականութիւնը զանոնք վերածեց «բնական դաշնակիցներ»ու, պատրաստակամ՝ իրենց զարաւոր թշնամութիւնը մոռնալու։ Այնպէս կը թուի սակայն, որ ոչ մէկը եւ ոչ միւսը շատ յստակ պատկերացում ունեցած են իրենց բուն նպատակներուն մասին, որոնք բաւականին տարբեր էին իրարմէ։ Մինչ Լենին պարզած էր համաշխարհային ընկերվարութեան յեղափոխութեան դրօշը, Մուսթաֆա Քէմալ կը բաւականանար պահանջելով Թուրքիոյ բացարձակ անկախութիւնը, այսինքն՝ քայքայուած օսմանեան կայսրութեան թրքական մասերուն անկախութիւնը։ Համայնավարութեան դիմաց էր, որ այս երկու նպատակակէտերուն միջեւ գոյութիւն ունեցած տարբերութիւնը երեւան պիտի գար։

Խորհրդային Ռուսիոյ մէջ Պետութեան եւ Համայնավար կուսակցութեան սերտ միաւորումը յստակ կերպով պարզուեցաւ Գ. Միջազգայինի մէջ, եւ պաշտօնապէս հաստատուեցաւ 1919 Մարտին։ Իբրեւ այս Միջազգայինի ականաւոր անդամներ, ռուս պետական մարդիկը, իրենց ջերմ ճառերով եւ հրավառ հրատարակութիւններով, յարմար առիթ գտան քարոզելու համար, թէ մօտալուտ է մեծամասնական (պոլշեւիկ) գաղափարներու յաղթանակը՝ ամբողջ աշխարհի մէջ։ Կարելի՞ էր Թուրքիան դուրս ձգել այս ընդհանրացումէն։

Բայց եւ այնպէս, դժուար թէ գտնուէր երկիր մը, որ Թուրքիայէն աւելի անթափանցելի ըլլար համայնավարական քարոզչութեան։ Նոյն ինքն Մուսթաֆա Քէմալ կը նշէր այս պարագան՝ ամերիկացի զօրավար Ճէյմս Հարպորտի հետ ունեցած իր մէկ տեսակցութեան ընթացքին (1).— «Ինչ կը վերաբերի համայնավարութեան, յաջողելու ոչ մէկ հաւանականութիւն ունի այս վարդապետութիւնը՝ մեր երկրին մէջ, տրուած ըլլալով մեր կրօնքն ու բարքերը, ինչպէս նաեւ մեր ընկերային կազմակերպութիւնը. առոնք արգելք են, որ համայնավարութիւնը թափանցէ մեր մէջ։ Ո՛չ դրամատէրներ կան Թուրքիոյ մէջ, ոչ ալ միլիոնաւոր բանուորներ։ Հողային հարցն ալ մասնաւոր մտահոգութեան առարկայ չէ։ Ընկերային տեսակէտէ, մեր կրօնական սկզբունքները մեզ զերծ կը կացուցանեն համայնավարութիւնը իւրացնելէ։ Թուրք ազգը նոյնիսկ պատրաստ է պայքարելու համայնավարութեան դէմ, եթէ պէտք ըլլայ»։

Մուսթաֆա Քէմալ, համոզուած, որ այս տեսակէտէն, շատ հաստատուն հողի վրայ կանգնած է, կրնար բաւական առաջ երթալ իր ճարպիկ խաղին մէջ, քանի որ շատ լաւ կը գիտակցէր համայնավար կուսակցութեան կարեւորութեան՝ Խորհ. Ռուսիոյ հետ բարեկամութիւն հաստատելու նպատակին իրագործման մէջ. բարեկամութիւն, որ անհրաժեշտ կը նկատէր ամէն գնով անկախութեան տիրանալու պայքարին մէջ՝ Եւրոպայի միւս երկիրներէն անջատուած Թուրքիոյ համար։

Միւս կողմէ, Մուսթաֆա Քէմալի կը մասին խօսիլ տալու սկսելէն առաջ իսկ, Մոսկուայի մէջ նկատի առնուած էր Թուրքիան խորհրդային քաղաքականութեան ռեմին վրայ քաշելու հաւանականութիւնը։ Կ'ըսեն նոյնիսկ, որ տակաւին 1919ին, երբ Էնվէր փաշա իբր աքսորական Պերլին կը գտնուէր, Րատէք անոր առաջարկած էր խորհրդայիններու օգնութիւնը՝ Անգլիացիներու դէմ։ Էնվէր մերժեց, բայց եւ այնպէս, Մոսկուա գնաց միայն 1920 Օգոստոսի կէսերուն, երբ ռուսեւ-թուրք յարաբերութիւնները արդէն իսկ ուղղակի հաստատուած էին։

Եւրոպայի մէջ շատ գերազնահատուեցաւ Ռուսիոյ եւ Թուրքիոյ միջեւ առկայ, Էնվէրի ... ծուած կապին առընչութեամբ Էնվէր փաշայի խաղացած դերը։

1920 Օգոստոս 26ին Մուսթաֆա Քէմալին գրած իր նամակը, որ վերջերս հրատարակուեցաւ զօրավար Ալի Ֆուատ փաշայի կողմէ, հիմնական նորութիւններ չէր պարունակեր (2)։

(1 – Շար.)

1) Տես «Ամերիկեան Ծերակոյտի վաւերաթուղթեր», 66րդ Քոնկրէս, հատոր 15, թիւ 266։

2) Զօր. Ալի Ֆուատ Ճէպէսօյ. Մոսքովա Հաթըրալարը, Պոլիս, 1955, էջ 52–55։

ՎԵՐԱԴԱՐՁ

ՆԻԿՈՍԻԱ.— Յուլիս 25ի երեկոյ։ Նի– կոսիոյ Հայ Երիտասարդաց Միութեան ակումբի դալար տանիքը խմբուած են երիտասարդներ եւ անոնց հպար– տութեամբ մը ժպտուն ծնողքներ։ Հայ Երիտասարդաց Միութիւնը, որ շուրջ 29 տարիներ, Կիպրահայ երի– տասարդութեան կեդրոնը ըլլալով, եղած է նաեւ ազգային ոգիով տոգորող ա– յեանը, իր դռները լայն բացած էր վեց երիտասարդներու.— Աւօ Մանկոյ– եան, Գէորգ Մահտեսեան, Արման Պալ– եան, Յարութիւն Պէտէլեան, Սե– թեան, Տէր-Աւետիսեան եւ Ստեփան Գրգ– ճաշարեան, բոլորն ալ ուսանող ի Լոն– տոն։ Անոնք վերադարձած էին իրենց ծննդավայրը, ամառուան արձակուրդը ծնողքներու հետ անցընելու նպատակաւ։

Հայ Երիտ. Միութեան վարչութիւնը կը պատուէր իր հարազատներուն վերա– դարձը։

Ճաշը սկսաւ ժամը 8,45ին։ Ներկայ էին, Կիպրոսի Թեմի կաթողիկոսական փոխանորդը՝ Երուանդ վրդ. Աբելեան, կիրակնօրեայ դպրոցներու վարիչ–տնօ– րէն՝ Վարդան վրդ. Տէմիրճեան — որ հիւրաբար Կիպրոս կը գտնուէր, — Հայ Երիտ. Միութեան վարչական կազմը եւ կարգ մը անդամներ։

Հաճելի էր մթնոլորտը։ Կիպրական քնեակն ու գարեջուրը առատօրէն կը հոսէին, մինչ խորովածը ախորժակ կը գրգռէր։ Հին բարեկամներ իրար գտած ըլլալով, հին յիշատակները կը նորոգ– ուէին ու մանաւանդ նոր քաջալերծու– թիւններ հպարտօրէն կը պատմուէին։

Կատակներ ամէն կողմ։ Ոչ ոք գիտցաւ թէ պնակները ինչո՞ւ այդչափ շուտ պար– պուեցան։ Երբ այլեւս ամէն մարդ ձմե– րուկէն ժառանգ մնացած կուտերը սկսած էր... կրծել, ոտքի ելաւ Միութեան ա– տենապետը՝ Անանիա Մահտեսեան։

Մահտեսեան, շնորհաւորելէ ետք երի– տասարդները, աւելցուց թէ անոնք իրենց ծնողքներուն առջեւ պէտք է ցոյց տային թէ Անգլիա երթալով միայն քուիսք պա– րել չէ որ սորված էին, այլ եւ զարգա– ցուցած այլ ձիրքեր։ Այս ըսելով, ատե– նապետը օրուան Թամատայի դերը ըս– տանձնելով հրաւիրեց տղերս զրոյը, որ արտասանեց Արմէն Անուշի «Դաշնակցա– կան Երդորդութեանը»։ Արտասանութե– նէն ետք, մեներգեցին Գ. Մահտեսեան եւ Օր. Անահիտ Դուրեան։

Ապա խօսք տրուեցաւ մեր բոլորին սի– րելի եւ ծանօթ մտաւորական՝ Տոքթ. Ռուբէն Թագւորեանի, որ ըսաւ թէ Յու– լիս 25ը Խանասորայ արշաւանքի Օրը ըլլալով, պիտի չշարունակէր իր խօսքը մինչեւ որ «Կարկուտ տեղաց»ը չերգուէր ներկաներու կողմէ։ Ահա բոլորը միա– սին, մեծ խանդավառութեամբ կատարե– ցին ըժիշկին խնդրանքը։

Տոքթ. Թագւորեան, շարունակելով իր խօսքը, ըսաւ երիտասարդներուն թէ 1963 Թուականը հարիւրամեակն է նաեւ Հայ– կական Սահմանադրութեան։ Եւ աւել– ցուց.— Մեր ժողովուրդը պայքարեցաւ թէ միտքով, թէ բազուկով։ Սիրելի ե– րիտասարդներ, դուք գացիք զարգացնե– լու ձեր միտքը, ու զօրացնելու ձեր բա– զուկները։ Բայց եթէ այդ ուժը ի սպաս չդնէք ձեր հայ ժողովուրդին, այն ատեն բանաստեղծին խօսքերը կ'ըսեմ ձեր ուս– ման համար։

Յետոյ Գրըգեաշարեան արտասանեց «Գուլք Հայաստանի»ն եւ Գ. Մահտեսեան մեներգեց «Իմ այրող վշտիս»ը։

Անանիա Մահտեսեան ապա խօսքը տը– ւաւ Վարդան վրդ. Տէմիրճեանի։ Հայր

...րանք կ'աճին թէ երկրլթակ եւ թէ միա– մեթակ բոյսերու վրայ։ Անոնք կ'օգտա– գործուին եղիպտացորենով մշակուած տարածութիւններու վրայ, որովհետեւ այս բոյսը կը պարունակէ հակազդեցիկ այնպիսի նիւթեր, որոնք կը չէզոքացնեն խոտասպան նիւթը, իսկ միւս բոլոր բոյ– սերը ոչնչացման կ'ենթարկուին։ Վերո– յիշեալ երկու նիւթերը կը մտնեն բոյսին մէջ արմատէն եւ կամ տերեւներէն եւ երբ հետեւանք՝ տերեւները կը դեղնին, կը թառամին եւ բոյսը կը մեռնի։ Այս նիւթերը կը տարածուին իւրաքանչիւր հեկտարի վրայ 2–3 քլ. քանակութեամբ, ցանքէն առաջ կամ ցանքի ընթացքին։ Իբր հետեւանք՝ բերքը կ'աճի մինչեւ 14 առ հարիւր։ Նկատուած է նաեւ, որ մշակուած ցորենի կամ եղիպտացորենի հատիկները ունին բարելաւուած բաղա– դրութիւն մը, ընդհանրապէս պարունա– կելով օսլայի եւ իւղերու աւելի մեծ քա– նակութիւն մը։

Խոտասպան նիւթերը մոլախոտերու վրայ կը ներգործեն՝ փոփոխութիւններ կատարելով բոյսի քիմիական, բջիջային, եւ իր բուսական ընդհ. կազմին մէջ։ Առ այս՝ շարք մը բջիջներ կը զարգա– նան արագ եւ անկանոն կերպով, ինչ որ կ'առաջացնէ ուռուցքներ, մինչ ուրիշ բջիջներու զարգացումը կ'ընդհատուի։ Կան սակայն կարգ մը տուեալներ ալ, զորս պէտք է նկատի առնել խոտասպան նիւթերու օգտագործման մէջ, ինչպէս են հողի բաղադրութիւնը, խոնաւութիւ– նը, տեղացած անձրեւին քանակը եւայլն։ Այսպէս, աւելի չոր հողի վրայ, խոտա– սպան նիւթերը կ'ազդեն մինչեւ 18 ամիս, մինչ խոնաւ հողի վրայ միայն 2–9 շա– բաթ։

Խոտասպան նիւթերու միջոցաւ մոլա– խոտերու ոչնչացման եղանակը ունի մեծ առաւելութիւններ։ Անոր շնորհիւ բեր– քատուութիւնը կ'աճի եւ միաժամանակ կը կատարուի ձեռական աշխատանքի մեծ խնայողութիւն։

Դ. Ղ.

ՀԱՅԱՍՏԱՆ

ՆՈՐ-ԱՅՐԻ ՄԷԿ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Կիրովական քաղաքի համայնավար կուսակցութեան կոմիտէի լիակատար նիստին խօսք առած է նաեւ գրագէտ Նոր–Այր, որ «Սով. Հայաստանի Թըղ– թակիցին համաձայն, «Նա (Նոր–Այրը) միաժամանակ ինքնաքննադատաբար ա– սաց, որ իր «Վերադարձ դէպի կեանք» պատմուածքում իրօք խտացուած են մեր կեանքի ստուերոտ կողմերը եւ ինքը ճիշդ հետեւողութիւն է անում իր հաս– ցէին եղած քննադատութիւնից»։

ԳՈՎԵԼԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԻՒՆ

Սոֆիայի մէջ Օգոստոս 3ին բացումը կատարուեցաւ «էսփերանթոյի» միջազ– գային 48րդ խորհրդաժողովին, որուն աշխատանքները պիտի տեւեն մինչեւ Օ– գոստոս 10։

Համագումարի ընթացքին, Գուրգէն Սեւակ, որ Հայաստանի Գիտութիւններու Ակադեմիայի Թղթակից – անդամ է եւ կը մասնակցի այս խորհրդաժողովին, էսփե– րանթերէն լեզուով գրուած յատուկ զե– կուցումներ պիտի տայ Սայաթ–Նովայի կեանքին եւ գործին մասին։

ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ ԽՄԵԼՈՒ ՋՈՒՐԻ ՏԱԳՆԱՊ

«Երեւան մտած գործող ջուրին քա– նակը չի բաւարարեր բնակչութեան պա– հանջները», գիտել տրուած է Հայաստա– նի համայնավար կուսակցութեան Երե– ւան քաղաքի կոմիտէի նիստին մէջ։ Ջու– րի այս տագնապը ամէն տարի հրատապ բնոյթ մը կը ստանայ ամառուան այս եղանակին։ Այս ուղղութեամբ դարման մը գտնելու համար, 1962ի ընթացքին քաղաքին ջուրին քանակը աւելցուած էր վայրկեանը 610 լիթր։

Այսուհանդերձ, բնակելի շէնքերուն, գործարաններուն, եւ պաշտօնատունե– րուն ջրամատակարարման ներքին ցան– ցին եւ առողջապահական հանգոյցներուն «անսարքութեան», այլ խօսքով անկազ– մակերպ վիճակին պատճառով ջուրին կորուստը մեծ քանակութեան կը հասնի, որուն հետեւանքով խմելու ջուրին պա– կասը զգալի դարձած է, յատկապէս շէն– քերու վերին յարկերու բնակիչներուն համար։

Միեւնոյն ատեն, ժողովականները դի– տել տուած են, թէ գործարաններու եւ աշխատանոցներու համար 51 հորեր նա– խատեսուած էր փորել, սակայն դեռ մինչեւ այսօր «30է աւելի հորեր դեռ չեն փորուած, իսկ փորուածներուն կէսէն աւելին ալ՝ դեռ չեն օգտագործուիր»։

Ժողովը կտրուկ միջոցներ ձեռք ա– ռած է։

Տ. ՊԵՏՐՈՍԵԱՆ՝ ԱԽՈՅԵԱՆ

Լոս–Անճելըսի ուժերու մրցաշարքին մէջ, Տիգրան Պետրոսեան յաղթեց իր մրցակից բոլոր ախոյեաններուն եւ առա– ջին հանդիսացաւ, կը գրեն արդար հը– պարտութեամբ Երեւանի թերթերը։

Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆԻ ՏԵՍԱԿԷՏԸ

Հայաստանի «Գիտելիք» ընկերութեան վարչութեան նախագահի հանգամանքով՝ ակադ. Վ. Համբարձումեան անբաւարար գտած է հակակրօն քարոզչութիւնը։ «Թէեւ անցեալ տարի եւ այս տարուան վեց ամիսներուն ընթացքին Հայաստանի քաղաքներուն եւ գիւղերուն մէջ գիտա– կան եւ հակակրօնական նիւթերով կար– դացուած են աւելի քան 2800 դասախօ– սութիւններ, գործած են գիտական–հա– կակրօնական 5 համալսարաններ եւ լսա– րաններ, հրատարակուած են 8 գրքոյկ– ներ, բայց այս բոլորը դեռ հեռու են բա– ւարար նկատուելէ»։

ՄԱՆԿԱԿԱՆ ՄԱՀՃԱԿԱԼ ՉԿԱՅ

Կիրովականցի Գ. Անանեան երկար ժա– մանակ մանկական մահճակալ փնտռելէ եւ չգտնելէ ետք, բաց նամակ մը ուղ– ղած է «Սով. Հայաստան» թերթին (Յու– լիս 27)։

ՀՆԵԱԲՐԲՐԱԿԱՆ ՅԱՅՏՆԱԳՈՐԾՈՒՄ ՄԸ

Վերջերս, Կարմիր Բլուրի պեղումնե– րուն ժամանակ գտնուած է անագապղին– ձէ պատուանդան մը, որուն վրայ դրոշ– մուած է հետեւեալ սեպագիր արձանա– գրութիւնը.— «Խալդ աստծուն, տիրոջն իմ, Մենուայի որդի Արգիշտին պատ– րաստեց այս առարկան, երբ կառուցե– ցաւ Էրեբունին»։ Այս անշուք անագա– պղինձէ պատուանդանը ցոյց կուտայ Էրեբունի (իմա՛ Երեւան) հիմնադրու– թեան Թուականը, որուն 2750 ամեակը պիտի նշուի 1968ին։

Սուրբը չէչտեց հայ եկեղեցւոյ դերը ազ– գապահպանման պայքարին մէջ, եւ կոչ ուղղեց երիտասարդութեան որ միշտ կառչած մնան Հայաստանեայց Եկեղեց– ւոյ։

Վարդապետէն ետք Գրըգեաշարեան հիւր երիտասարդներու կողմէ շնորհա– կալութիւն յայտնեց Հայ Երիտասարդաց Միութեան եւ իր վարչութեան։

Հացկերոյթը, որ այլեւս խնջոյքի մը վերածուած էր, վերջ գտաւ Երուանդ վարդապետի օրհնութեամբ։

Իսկապէս հայկական շունչով տողոր– ուած երեկոյթ մըն էր։

ԳՐԳԵԱՇԱՐԵԱՆ

«ՅԱՌԱՋ»Ի ԹԵՐԹՕՆԸ (203)

ԵՐԼՏՐՁԻ ՊՈՄՊԱՆ

ՀԱԶԱՐ ԻՆԸ ՀԱՐԻՒՐ ՋՈՐՍ

10. Արտաշ Խաչիկ Գաբուտանեան (փախստական), բնիկ Պոլսեցի Հայ, յանցապարտ ճանչցուած է, Թորգոմ եւ Եուվանովիչ ծածկանուններով մասնակցած է Կ. Պոլսոյ Հայ յեղափո– խական կոմիտէի եղեռնական ձեռնարկ– ներուն եւ վերջին Յուլիս 8ի մահափոր– ձին պատրաստութեանց։

Անոնք երկուքն ալ, իրենք գնած են մեքենայի կառքին յատկացուած ձիերը. ի– րենք ապրած են երկաթագործներուն մօտ, երկաթէ արկղը, երկուքն ալ յեղափոխական քարոզչութեամբ ալ պա– րապած են, «Դրօշակ»ի թիւեր եւ ուրիշ յեղափոխ. գրուածքներ տարածած են, զա– նազան անձերու պայթուցիկ առարկաներ ու նիւթեր բաշխած են, մէկ խօսքով, ամէն միջոցներով սատարած են կոմի– տէի եղեռնապարտ գործին յաջողու– թեանը։

Այս ոճիրները նախատեսուած են Պատ– ժական Օրէնքի 55րդ յօդուածով եւ 58րդ յօդուածի երկրորդ յաւելուածին առաջին հատուածովը։

11. Մկրտիչ Ղարիպեան (փախստա– կան), բնիկ Սվազցի Հայերէն, յանցա– պարտ ճանչցուած է մասնակցած ըլլալով Կ. Պոլսոյ մէջ հայ յեղափոխական կոմի– տէի եղեռնական ձեռնարկներուն եւ վեր– ջին Յուլիս 8ի մահափորձին դանազան պատրաստութեանց, մասնաւորապէս վարձելով կառատուն – ախոռ, ոճիրին կառքին համար, այս կառքը մաքսատու– նէն յիշեալ կառատունը փոխադրելով, կեղծ կառապան Զօրճին սորվեցնելով Համիտիյէ հրապարակը տանող փողոց– ները, սատարելով պայթուցիկ առարկա– ներուն եւ նիւթերուն բաշխումին, նոյն– պէս աջակցելով կառքին մէջ դժոխային մեքենային տեղաւորումին, յատկապէս կառապանութիւն ընել ընդունելով՝ մաս– նակցելու համար մահափորձի պատ– րաստութեան. մէկ խօսքով, իր կարո– ղութեան ներած բոլոր միջոցներովը սա– տարելով կոմիտէին եղեռնական գործին յաջողութեան, ինք ըլլալով անոր ամէնէն գործօն անդամներէն մէկը։

Այս ոճիրներն ալ նախատեսուած են Պատժական Օրէնքի 55րդ յօդուածով եւ 58րդի երկրորդ յաւելուածին առաջին հատուածովը։

12. Գրիգոր Վարշամ (փախստական), բնիկ Կովկասահայ(՞) յանցապարտ ճանչ– ցուած է, մասնակցած ըլլալով Ճորճ եւ Բէթրի Վարշամովիչ կեղծանուններով, Կ. Պոլսոյ մէջ հայ յեղափոխական կո– միտէին եղեռնական ձեռնարկներուն, ինչպէս նաեւ վերջին Յուլիս 8ի մահա– փորձին պատրաստութեանց, մասնաւո– րապէս լքած է իր ուսումները, պարզա– պէս երկաթագործութիւն սորվելու եւ իր ստացած արհեստի ծանօթութիւնները կոմիտէի ի սպաս դնելու նպատակով, յե– տոյ կառապանութեան արհեստին ինք– զինքը վարժեցուցած է մահափորձին կառքը վարելու համար. սատարած է ռումբը կառքին մէջ տեղաւորելու. մէկ խօսքով, իր ձեռքի բոլոր միջոցներովը, իր պատկանած կոմիտէին եղեռնական գործին յաջողութեան աջակցած է։

Այս ոճիրներն ալ Պատժական Օրէնքին 55րդ յօդուածով 58րդի երկրորդ յա– ւելուածովը նախատեսուած են։

13. Երուանդ Ֆրանկիւլեան (փախստա– կան), բնիկ Կ. Պոլսեցի Հայերէն, յան– ցապարտ ճանչցուած է, մասնակցած ըլ– լալով Կ. Պոլսոյ մէջ հայ յեղափոխական կոմիտէի եղեռնական ձեռնարկներուն եւ վերջին Յուլիս 8ի մահափորձի զանազան պատրաստութիւններուն, մասնաւորա– պէս այդ նպատակին համար ձիավար– մանի արհեստը յանձն առնելով. այդ հանգամանքով բռնած է ոճիրի կառքին կառատուն–ախոռը, Մկրտիչին հետ, այդ կառքը մաքսատունէն տարած է կառա– տունը, սատարած է ռումբը կառքին մէջ տեղաւորելու. մահափորձին օրը, կառքի նստարանին վրայ ընկերացած է անոր, աշխատած է յեղափոխական գրուածք– ները տարածելու, մէկ խօսքով, իր բո– լոր միջոցներով օգնած է իր պատկանած կոմիտէի եղեռնական գործին յաջողու– թեան։

Ոճիրները նախատեսուած են Պատժա– կան Օրէնքի 55րդ յօդուածով եւ 58րդի երկրորդ յաւելուածին առաջին հատ– ուածովը։

14. Մառի կամ Թերէզ Անչքովա (փա– խըստական), Թիֆլիսցի Հայուհի մը, ո– րուն բուն անունը կարելի չեղաւ հաս– տատել, յանցապարտ ճանչցուած է մաս– նակցած ըլլալով իր պատկանած հայ յե– ղափոխական կոմիտէի եղեռնական ձեռ– նարկներուն պատրաստութեան, մասնա– ւորապէս օգնելով կոմիտէի անդամներուն իրենց միջեւ թղթակցութեան։

Ոճիրները նախատեսուած են Պատժա– կան Օրէնքի 65րդ յօդուածով եւ 58րդի երկրորդ յաւելուածին առաջին հատ– ուածովը։

ՍՄԲԱՏ ԲԻՒՐԱՏ

(Շար.)

Գերյարգելի Տէր Միքայէլ Ծ. Վ. Մումճեան, Այրի Տիկին Մարի Մում – ճեան, Տէր եւ Տիկին Ժաք Տաքէսեան եւ զաւակները, Տէր եւ Տիկին Ժան Մում–ճեան եւ զաւակը, Տէր եւ Տիկին Գառնիկ Մումճեան եւ զաւակները, Տէր եւ Տիկին Գաբրիէլ Մումճեան եւ զաւակները, Տէր եւ Տիկին Ժաք Մումճեան եւ զաւակը եւ բոլոր ազգականները սրտի խոր կսկիծով կը ծանուցանեն մահը իրենց հօրեղբոր – որդւոյն, ամուսնոյն, հօր, մեծ հօր եւ ազգականին՝

ՅԱԿՈԲ ՄՈՒՄՃԵԱՆ
(Մարաշցի)

որ տեղի ունեցաւ Օգոստոս 10ին, 79 տա–րեկանին:

Յուղարկաւորութիւնը կը կատարուի այս Չորեքշաբթի՝ Օգոստոս 14, ժամը 10,30ին, Փարիզի Ս. Խաչ Եկեղեցւոյ մէջ (10 պիս, Ռիւ Թուէն):

Մասնաւոր մահազդ չստացողներէն կը խնդրուի ներկայ իբրեւ այդ նկատել:

ՆՈՒԷՐՆԵՐ

Տէր եւ Տիկին Սահակ Կէնճեան եւ Տէր եւ Տիկին Յովհաննէս Յակոբեան իրենց սիրելի հօրաքրոջ աղջկան՝ Տիկին Աննիկ Փափազեանի ցաւալի մահուան առթիւ, փոխան ծաղկեպսակի 30ական Ֆր. նուիրած են Կապ. Խաչի Շաւիլի մասնաճիւ–ղին:

×

Այրի Տիկին Շնորհիկ Փափազեան իր ներոջ՝ Տիկին Աննիկ Փափազեանի ցաւա–լի մահուան առթիւ, փոխան ծաղկեպսա–կի 25ական Ֆրանք նուիրած է Շաւիլի դպրոցին եւ Կապոյտ Խաչին:

×

Շաւիլէն Տէր եւ Տիկին Պաղտիկ Քիւ–չէեան իրենց քրոջ՝ Աննիկ Փափազեանի ցաւալի մահուան առթիւ, փոխան ծաղ–կեպսակի 50 Ֆր. կը նուիրեն Փարիզի Մշակոյթի Տան: (Ստանալ «Յառաջ»էն):

ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

Շաւիլի Հ. Յ. Դ. «Արղութեան» խում–բի ընկերները ցաւակցութիւն կը յայտնեն ընկերներ Գրիգոր Փափազեանի եւ Պաղ–տասար Քիւլչէեանի, իրենց մօր եւ քրոջ Տիկին Աննիկ Փափազեանի կսկծալի մահուան առթիւ:

×

Կապոյտ Խաչի Շաւիլի մասնաճիւղի ընկերուհիները կ'ողբան մահը ընկերուհի Աննիկ Փափազեանի, ցաւակցութիւն կը յայտնեն ողբացեալի ընտանեկան պարա–գաներուն եւ փոխան ծաղկեպսակի 30ա–կան Ֆր. կը նուիրեն Շաւիլի դպրոցին եւ Փարիզի Մշակոյթի Տան (Մշակոյթի Տան գումարը ստանալ «Յառաջ»էն):

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Այրի Տիկին Եսթեր Կարապետեան եւ զաւակները, Տէր եւ Տիկին Առաքելեան եւ զաւակները (Ամերիկա), Այրի Տիկին Սաթենիկ Միքայէլեան եւ զաւակները (Ամերիկա), Տէր եւ Տիկին Հ. Քիւրտօղլու (Պոլիս), Տէր և Տիկին Սար–գիս Պաղտասարեան եւ զաւակները, Պօ – ղոս Գալուստեան եւ զաւակները, ինչպէս նաեւ իրենց բոլոր ընտանեկան պարագա–ները (Եգիպտոս եւ Ամերիկա), Տէր եւ Տիկին Նշան Պետրոսեան եւ զաւակները, Տէր եւ Տիկին Օհաննէսեան եւ զաւակնե–րը, Տէր եւ Տիկին Կարապետ Կարապետ–եան եւ զաւակները (Ամերիկա), շնոր – հակալութիւն կը յայտնեն բոլոր անոնց որոնք անձամբ, գրաւոր եւ ծաղկեպսա – կով ցաւակցութիւն յայտնեցին իրենց ամուսնոյն, հօր, եղբօր, փեսին և ազգա–կանին՝

ԽԱԶԻԿ ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ

կսկծալի մահուան առթիւ (Օգոստոս 5, Լիոն):

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Հ. Բ. Ը. Միութեան Տիկնանց յանձ – նախումբը կը խնդրէ կազմակերպութիւն–ներէն նկատի ունենալ հետեւեալ թուա – կանները.—

ՀՈԿՏԵՄԲԵՐ 1, Երեքշաբթի երեկոյ Տիկնանց յանձնախումբի կազմութեան Գ. տարեդարձին առթիւ գեղարուեստական երեկոյթ:

Շ. ՄԻՍԱՔԵԱՆ

Օրեր եւ Ժամեր

ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ

Ս. ՅԱԿՈԲ (ԼԻՈՆ)

Շաբաթ (17 Օգոստոս), Նախատօնակ երեկոյեան ժամը 5ին: Կիրակի (18 Օգոստ.), սկիզբն. ժամերգութ. առաւօտ ժամը 7,30ին: Պատարագ ժամը 10ին: Խաղողօրհնէք 11ին, Հոգեհանգիստ ժա–մը 11,30ին:

Լիոնի եւ Շրջ. Հայ Ազգային Միու – թեան Վարչութիւնը կը հրաւիրէ շրջանի բարեպաշտ հայ ժողովուրդը ներկայ ըլ–լալու 18 Օգոստոսին Ս. Աստուածածնայ տօնի առթիւ կատարուելիք արարողու – թեանց: Յաւարտ պատարագի տեղի պի–տի ունենայ նաեւ խաղողի եւ մատաղի աւանդական օրհնութիւնը:

×

ՇԱՒԻԼԻ ՄԷՋ

Պատարագ եւ աւանդական խաղողօրհ–նութիւն այս կիրակի առաւօտ:

×

ՏԷՍԻՆ

Ուրբաթ, Այգի օրհնութիւն եւ մատաղի զենում կէսօրէ վերջ ժամը 3ին:

Շաբաթ, Հսկումի արարողութիւն կէս–օրէ վերջ ժամը 6ին:

Կիրակի (18 Օգոստ.), Տօն Աստուածած–նայ. սկիզբ ժամերգութեան ժ.ը 8,30ին, հանդիսաւոր պատարագ ժ.ը 10ին, մաս – նակցութեամբ տեղւոյն երկսեռ երգչա – խումբին, ղեկավարութեամբ Պ. Գ. Մար–տիրոսեանի. երգեհոն եւ մեներգ Օր. Անժէլ Կարապետեան, խաղողօրհնէք եւ մատաղի բաշխում:

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

ԼԻՈՆ.— Ֆր. Կապ. Խաչի Օրը կը տօ–նուի մեծ պատրաստութեամբ, 27 Հոկտ. Մոլիէրի շքեղ սրահին մէջ:

×

Փարիզահայ Տիկնանց Միութեան յիս–նամեայ յոբելեանը կը տօնուի Հոկտեմ – բեր 13ին, Սալ տը լա Շիմի:

ԴՊՐՈՑԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Դպրոցասէր Տիկնանց վարժարանին 1963 – 1964 տարեշրջանի արձանագրու – թիւնները սկսած են: Անոնք որոնք կը փափաքին ղրկել իրենց զաւակները պէտք է այժմէն իսկ դիմում կատարեն հաստա–տութեան տնօրէնութեան:

Ա.— ՖՐԱՆՍԱԿԱՆԸ, որ տասացի կըր–թութիւն կը հետեւի պետական լիսէներու արդիական բաժնի պաշտօնական ծրա–գրին — անգլերէն եւ սպաներէն լեզու–ներով —:

Բ.— ՀԱՅԿԱԿԱՆԸ, որ կ'օժտէ աշակե–րտները հայագիտական ծանօթութիւննե–րով, հայ լեզուի, գրականութեան, հայ կրօնքի եւ պատմութեան, Հայաստանի աշխարհագրութեան մարզերուն մէջ:

Աշակերտուհիներ կ'ընդունուին ութ տարեկանէն սկսեալ: Մանրամասնու–թեանց համար դիմել հաստատութեան տնօրէնութեան:

1, Bd. du Nord, LE RAINCY (S. et O.)
Tél : 927-01-72

Դպրոցասէրի ուսման ծրագիրը կ'ընդ–գրկէ երկու ուրոյն բաժիններ:

ՀՐԱՆՏ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

51, Rue Monsieur-le-Prince, PARIS - 6e — Chèque Postal : 1278-35

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՇԻՐՎԱՆԶԱԴԷ, Երկերի ժողովածու, 10 հատոր լաթակազմ	70 Ֆր.
ՍՏԵՓԱՆ ԶՕՐԵԱՆ, Երկերի ժողովածու, 7 հատոր, լաթակազմ	56 Ֆր.
ՍՏԵՓԱՆ ԶՕՐԵԱՆ, Պապ թագաւոր, լաթակազմ	10 Ֆր.
ՍՏԵՓԱՆ ԶՕՐԵԱՆ, Հայոց բերդը, լաթակազմ	8 Ֆր.
ՎԱՀԱՆ ՏԷՐԵԱՆ, Երկերի ժողովածու, 2 հատոր լաթակազմ	14 Ֆր.
ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՒԻԹ, մեծադիր, գունաւոր նկարներով, լաթակազմ	10 Ֆր.
Վ. ԱՆԱՆԵԱՆ, Հայաստանի կենդանական աշխարհը, Բ.	8 Ֆր.
ԱՐՍԷՆ ՏԷՐՏԷՐԵԱՆ, Երկեր (Աբովեան Պռօշեան, Պարոնեան)	17 Ֆր.
ՄՈՒՐԱՑԱՆ, Պատմուածքներ, գունաւոր նկարներով	5 Ֆր.
ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑԻ մասին յիշողութիւններ. լաթակազմ	7.50 Ֆր.
ՄԻՔ. ՇԱԹԻՐԵԱՆ. Գարունը նորից եկաւ. 296 էջ.	5 Ֆր.
ԱԲԳԱՐԵԱՆ. Մատենադարան (անգլ.) 18 գունաւոր մանրանկարներ	3 Ֆր.
ՀԵՆՐԻԿ ԹՈՒՄԱՆԵԱՆ. Երգի ծնունդը. բանաստեղծութիւններ	3.85 Ֆր.
Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ. Տաղեր, 200 էջ. լաթակազմ	3.50 Ֆր.
ՍՈՎԵՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ. Ա. 800 էջ. լթկզմ.	16 Ֆր.
ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ, Անլռելի զանգակատուն, Պէյրութ, 1963	10 Ֆր.

Առաքման ծախքը գնողին վրայ

ԳՐԱՏՈՒՆՍ ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻՆ Է
ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՁԱՅՆԱԳՐԵԱԼ ԲՈԼՈՐ ԵՐԿԵՐՈՒՆ
ՃՈԽ ՄԹԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԵՒ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆՑ

Լոյս Տեսաւ



Մատենաշար — ՅԱՌԱՋ — կեդրոնավայր
ԳԻՆ
Ֆրանսա՝ 15 Ֆր.
— Առանձել առաքումի ծախքը —
« ՅԱՌԱՋ »

ԼՈՅՍԸ ԳՈՅՆ Է.... ԳՈՅՆԸ ԼՈՅՍ Է
ՁԵՐ ՏԱՆԸ ԼՈՅՍ ՏՈՒԷ՛Ք.... ԹՈՄԼԱՔԻ ԳՈՅՆ ՏՈՒԷ՛Ք

Ձեր բնակարանը կը լուսաւորուի
Եթէ ներսը եւ դուրսը
ՎԵՐԱՆՈՐՈԳԷՔ – ԶԱՐԴԱՐԷՔ – ՆԵՐԿԷՔ

ԹՈՄԼԱՔ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐՈՎ

PEINTURES THOMLAC

16 bis, Bd. Sébastopol, Paris 4e

Tél. ARC 26-61 – Métro : Halles et Chatelet

136, RUE DES BOURGUIGNONS — ASNIERES - BOIS COLOMBES (Seine)
Tél : GRE. 09-47
11, BD. DE LA REPUBLIQUE — LA GARENNE (Seine)
Tél. : STA. 19-06

ԱՆՄՐՑԵԼԻ ԳԻՆԵՐՈՎ

Ամէնէն արդիական, նուրբ եւ ընտիր ճաշակով պատրաստուած՝ առաջնա – կարգ ներկեր: Բնական եւ արուեստական բազմերանգ գոյները մեծ ընտրու–թիւն: Նորոյթ իւղաներկեր, պատի գեղեցիկ թուղթերու ճոխ ընտրութիւն: Գետնի համար՝ ամէն տեսակ — լինոլէոմ եւ փլաստիք — ծածկոցներ. —
TAPIFLEX — TAPISOM — CARPETTE

Ձեր բնակարաններուն արտաքին եւ ներքին խնամքներուն համար անհրաժեշտ բոլոր նիւթերը:

Ամէն գնորդի կը նուիրուի յատուկ տետրակ մը, որու շնորհիւ կրնայ 10–30 առ հարիւր զեղչ ունենալ:

ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐ

52, RUE CHALON, PARIS 12e — 64, BLD. DE BELLEVILLE, PARIS 20e
166, AV. ARISTIDE BRIAND — PAVILLONS - SOUS-BOIS (Seine)
4 bis, RUE PAUL VAILLANT COUTURIER — ARGENTEUIL (S. et O.)
24, RUE PAUL VAILLANT-COUTURIER — ALFORTVILLE (Seine)
48 bis, RUE DALAVRAC — FONTENAY - SOUS - BOIS (Seine)

IMPRIMERIE SPECIALE
DU JOURNAL « HARATCH »
32, Rue de Trévise, PARIS (9e)

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

Le PREMIER QUOTIDIEN ARMENIEN en EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction et Administration : 32, Rue de Trévise - PARIS-9e

Fondé en 1925 — Téléph. : PRO. 86-60

R. C. Seine 57 A 2731 — C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա՝ Տար. 50 Ֆ. Վեցամսեայ՝ 27 Ֆ.

Արտասահման՝ Տար. 60 Ֆ. Հատը 0.30 Ֆ.

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 14 ՕԳՈՍՏՈՍ

MERCREDI 14 AOUT 1963

Le Numero : 0,30 Fr.

39րդ ՏԱՐԻ — Թիւ 9682

Fondateur : SCHAVARCH MISSAKIAN

39e ANNÉE — No 9682

ՆԵՐԿԱՅ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԻՐ ԱՐԴԻՒՆՔԸ

(Ըստ Հ. Հ. Գործակալութեան տուեալների)

—o—

1962 Թուի Յունուարի առաջին օրը մի խումբ սփիւռքահայ երիտասարդ ուսանողներ, որոնք ընդունուած էին Երեւանի պետական համալսարանում ուսանելու, շնորհեցին վարչապետ Ա. Քոչինեանին Նոր Տարուայ շնորհաւորանքի համար, ըստ հայրենական սովորութեան:

«Հայկական ռեսպուբլիկայի» մինիստրների սովետի նախագահը մեծ բաւականութեամբ ընդունեց նրանց: Շնորհաւորական փոխանակուող խօսքերի ժամանակ, ի ներկայութեան այլ այցելուների, քաջալերանքի նորանոր մաղթանքներ անելուց յետոյ, բացայայտեց լիբանանցի հայ ուսանողներին, թէ ներկայ Նոր Տարին նշանաւորուելու է այն բանով, որ 1962 թուականը հանդիսանալու է որպէս մասսայական հայրենադարձութեան տարի, որ շարունակական պիտի լինի յետագայ տարիների համար: Մեր կառավարութիւնը եւ պարտիան համապատասխան որոշում ունեն այդ մասին եւ սա կը հանդիսանայ լաւագոյն նուէր, որով կը դիմաւորում ենք այս Նոր Տարին:

Այս վարչապետ Ա. Քոչինեանի բացայայտած մասսայական հայրենադարձութեան այս բերկրանք պատճառող լուրին հետեւեցին գործնական միջոցառումներ. այն է՝ 1962 թուականից սկսեալ զանգուածային հայրենադարձութիւնը կամ ներգաղթը եւ այն շարունակական դարձնելու գալիք տարիների համար:

Վարչապետ Քոչինեանի բերնով խօսում էր Երեւանի պաշտօնական իշխանութիւնը եւ պարտիան նմանապէս:

Նրա հանդիսաւոր կերպով ծանուցած աւետաբեր լուրը կարճ ամիսներից յետոյ, իր արձագանքը գտաւ սփիւռքի հայ համայնքի մէջ: Մասնաւորաբար «յառաջդիմական» ճակատի բերան հանդիսացող թերթերը շնդալից աւետիսներով ողջունեցին լուրը կամ երեւանեան կառավարութեան առած քայլը, ի մասին հայրենադարձութեան: Հայոց համախմբման յարգանքի գործին ի նպաստ, զանգուածօրէն կատարուելու խոստումով:

Ցետ այնօրինակ որոշ տեղեկութիւններ սփռեցին հրջան առնել, որ այս եւ այն երկիր արդէն մեկնել են հայրենադարձութիւնը մասսայօրէն կազմակերպելու մասնակալներ կամ պատասխանատու գործիչներ: Շատ պարագաներում յայտարարում էին այդ առաքելութեամբ եկողների անունները եւայլն: Այս բանին հետեւեցին մի տեսակ անհանդարտ ցուցադրական համախմբումներ եւ այլ կարգի ծանուցումներ կամ լուրեր, միշտ սկսուելիք ներգաղթի կապակցութեամբ:

Այնու ամենայնիւ այս անդամուայ ծանուցուած հայրենադարձութիւնը զուրկ էր զանգուածային լինելուց նաեւ ժողովրդային խոր հետաքրքրութեան խորք հանելուց: Ինչպիսին մասամբ նկատելի էր 1947 թուին տեղի ունեցած ներգաղթի ամիսներին, որի արդիւնքով, մէկ տարուայ հրջանին 125.000ի մօտ մի համայնք ներգաղթեց Հայաստան, իր թե կազմակերպութեամբ նոյնքան թերիներով կատարուած տեղաւորման խնդիրների շուրջ մայր երկրում:

Ներկայ հայրենադարձութիւնը, իր իրականութեան պատկերով, պիտի չհամարել զանգուածային: Մասնաւորապէս գաղութներ եւ այլուրեք տեսնուածները չեն համապատասխաներ այն պոռոտ յայտարարութեանը, ըստ որում Պ. Զարոբեանը կատարել է իրենց կենտկոմի լիակատար նիստին, մատնանշելով հայրենադարձութեան իրագործութիւնը, որպէս նըշանակալից երեւոյթի սփիւռքի մէջ:

Ցարդ կատարուած հայրենադարձութիւնը իբրեւ թիւ կամ քանակ ճղճիմ է: Իսկ որակական տեսակէտից չափազանց թշուառ ու աղքատիկ:

Այսօր անցել է լրիւ մէկ եւ կէս տարի:

Այժմս եղած արդիւնքը մեր աչքի առաջ է եւ իւրաքանչիւր բանիմաց հայ մարդ կարող է անկաշկանդօրէն գնահատել կատարուածը, որ մի աննշան քանակ լինելով, տկարամտութիւն կը լինի որակել այն որպէս զանգուածային կամ մասսայական ինչպէս չարաշահում են Երեւանցիները պաշտօնական բերաններով:

Ինն ամսուայ ընթացքին, այն է 1962 թիւ Հոկտեմբեր 7ից մինչեւ 1963 թիւ Յուլիս 15ը հայրենադարձութեան գծով Հայաստան են մտել 1936 Հայեր:

Երեւանի հեռագրական գործակալութիւնն է, որ պաշտօնականօրէն հաղորդում է այն, ինչ որ կասկածի կամ տարակուսանքի տեղիք տալ չի կարող:

Այդ կապակցութեամբ հեռ. գործակալութեան հաղորդագրութիւնը տպուած կարելի է տեսնել «Սով. Հայաստան» պաշտօնաթերթի թիւ 169 Յուլիս 19 թուի մէջ:

Հարազատօրէն այն ներկայացնենք մեր ընթերցողներին:

«... Այժմ Սովետական Հայաստան է վերադառնում միջին հաշուով օրական եօթ մարդ:

«1962 թուականի Հոկտեմբերի 7ին «Գրուզիա» նաւը խարիսխ ձգեց Բաթումի նաւահանգստում: Նաւի վրայ էին 336 կիպրոսահայեր: Դրանով սկսուեց զանգուածային հայրենադարձութիւնը: (Ընդգծումն իմ կողմից):

«Անցած ինն ամսում հայրենիք են վերադարձել 1936 Հայեր: Սովետական «կառավարութիւնը հայրենադարձութիւնը կատարում է կազմակերպուած»: «Հայրենադարձութիւնը շարունակւում է» եւայլն:

Հաղորդագրութիւնից պարզւում է Հայերի հայրենադարձութիւնը կատարւում է Իրանից, Կիպրոսից, Արաբական Միացեալ Ռեսպուբլիկայից եւ Յունաստանից: Կատարողն է սովետական կառավարութիւնը:

Ըստ նախատեսման՝ արտասահմանից վերադարձող Հայերի ընդունման եւ տեղաւորման կոմիտէի նախագահ Գ. Գէորգեանի, մինչեւ ներկայ տարուայ Դեկտեմբեր 31ը հայրենադարձների թիւը շուրջ 3000 հոգիի կարող է հասնել:

Այս է ահա արդիւնքը մեծ թմբկահարութեամբ յայտարարուած հայրենադարձութեան: Ինն ամսուայ մէջ 1936 Հայեր են վերադարձել Հայաստան:

Թուական այս փաստը գալիս է ապացուցելու, որ զանգուածային ներգաղթը կարմիր պատրանք է միայն: Շատ եւ շատ հեռո՜ւ իրականութիւնից:

Քանի Հայաստանի դռները պնդօրէն կողպուած կը մնան, քանի ներգաղթը փորձւում է կատարել սովետական մաղից անցկացուածներով, ապա արդիւնքը աւելի չի լինելու, քան այն, որ վերեւում տեսնուեց: Քանակական խեղճութիւն միայն:

Ինն ամսում 1936 մարդ:

«Ալիք» ԱՐԱՄԱՅԻՍ

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ԱՐԵՒՄՈՒՏՔԷՆ ԱՐԵՒԵԼՔ ԽԱՂԱՂ ՀԱՄԱԿԵՑՈՒԹԻՒՆ

—o—

ԱՄԵՐԻԿԱՑԻՔ ԾՈՒՂԱԿԷ ԿԸ ՎԱԽՆԱՆ

Ծերակոյտը երեք շաբաթ պիտի քննէ Մոսկուայի համաձայնագիրը վաւերացնելէ առաջ: Տին Ռըսք, հաւ Ուոշինկթըն հասած, անմիջապէս Ծերակոյտ ժամանած է բանալու համար հիւլէական համաձայնագրին նուիրուած նիստը: Արտաքին նախարարը յոգնած է կատարած ճամբորդութենէն՝ Մոսկուայէն Կակրա, ուր «ծեծ կերած է» Խրուշչեւէն պատմինթըն խաղալով, ապա՝ Պոն Ատընաուըր համոզելու եւ վերջապէս՝ Ուոշինկթըն իր հայրենակիցները համոզելու եւ մանաւանդ բացատրելու որ Մոսկուայի հիւլէական համաձայնագիրը ծուղակ մը չէ զոր Խրուշչեւ պատրաստած է Ամերիկացիներուն համար: Ամէն պարագայի մէջ, ծերակուտականներու քննութիւնը շատ մանրամասն պիտի կատարուի: Անձնաւորութեանց պատկառելի ցանկ մը պատրաստուած է: Ասոնք բոլորն ալ հրաւիրուած են իրենց կարծիքը տալու: Հարցաքննուելիք վկայի դերին մէջ է Տին Ռըսք:

Ծերակուտականները կ'ուզեն ապահով ըլլալ կարգ մը գլխաւոր կէտերու շուրջ. — հիւլէական մարզին մէջ, ամերիկեան գործունէութեան ազատութիւնը պիտի պահպանուի՞: Որեւէ անակնկալի դէմ Ամերիկա պատսպարուա՞ծ է: Կարելի՞ է բոլորովին վստահ ըլլալ որ Ռուսերը ի վիճակի չեն գաղտնի փորձեր ընելու: Եւ վերջապէս, Միացեալ Նահանգներու ձեռք ձգած առաւելութիւնը հաւասա՞ր է թէ նուազ Խորհ. Միութեան առաւելութենէն: Մէկ խօսքով Ամերիկացիները, անգամ մը եւս, խորհրդային ծուղակը ինկա՞ծ են թէ ոչ:

× Պոնի մէջ, Նախարարաց Խորհուրդը միաձայնութեամբ որոշած է որ Դաշնակցային Գերմանիա պիտի ստորագրէ Մոսկուայի համաձայնագիրը: Բայց Դաշնակցային Հանրապետութեան Պաշտպանողական նախկին նախարարը յայտարարեց թէ Արեւմուտքը ոչ մէկ բան ձեռք ձգած է հիւլէական փորձերու դադարման համար, բայց ընդհակառակն՝ ամէն բան տուած է: «Արեւելք ամէն բան ձեռք ձըգեց եւ ոչինչ տուաւ»:

× Փրաւտա կը գրէ թէ Չինաստան փափաքելի կը գտնէ հիւլէական պատերազմը. — «Չին ղեկավարները համաձայն չեն Խրուշչեւի տեսակէտներուն հետ, բայց մենք եւ բոլոր իրաւ համայնավարները, համաձայն են այս վերջինին հետ, որովհետեւ ճիշդ մեկնութիւն մը տուաւ Մարքսիզմ-Լենինիզմի եւ անոր գործադրութեան միջազգային քաղաքականութեան մարզին մէջ, ներկայ իրականութիւնները նկատի առնուած»: Ֆինլանտիոյ համայնավար կուսակցութեան քաղաքական Բիւրոյի անդամ՝ Տիկին Քուլինէնն է որ կը ստորագրէ վերոյիշեալ տողերը Մոսկուայի համայնավար պաշտօնաթերթին մէջ:

× Լոնտոնի Թունուզեան դեսպանը ստորագրած է հիւլէական համաձայնագիրը եւ լուր կը տարածուէր որ նոյնը պիտի ընէ Ալժերիա: Այս ուղղութեամբ հարկ եղած հրահանգները տրուած են Պէն Պելլայի կողմէ: Ալժերիոյ անդամակցութիւնը Մոսկուայի դաշնագրին, այլապէս շահեկան բնոյթ ունի, որովհետեւ տը Կոլի «ոտքին տակ խոտը կը կտրէ» այդ ձեւով: Արդարեւ Ալժերիա ստորագրելով Մոսկուայի համաձայնագիրը, արգելք կը հանդիսանայ Ֆրանսական հիւլէական ծրագիրներուն:

Այս համաձայնութեան իր մասնակցութիւնը բերելով, Պէն Պելլա կ'ամրապնդէ իր դիրքը ներքին եւ արտաքին ճակատներու վրայ: Այս գործին մէջ Խրուշչեւ ալ նպաստաւոր դիրք մը կը շահի «երբորդ-աշխարհին» մէջ ուր միշտ կ'ուզէ դիրք գրաւել ի վնաս Չինաստանի:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՄՈՍԿՈՒԱ — Պելկրատ մերժեցումը որ տեղի կ'ունենայ Խրուշչեւի ճամբորդութեան նախօրեակին, կատարուած է գըլխաւորաբար երեք պատճառներով: Նախ որոշ ազատական յեղաշրջում մը տեղի կ'ունենայ Խորհ. Միութեան մէջ, յետոյ կան խաղաղ համակեցութիւնը եւ չինական տագնապը:

ՊԵՐԼԻՆ հանդիսաւոր լռութեամբ մը ոգեկոչած է «ամօթի պատին» Բ. տարեդարձը: 1961 Օգոստոս 13ին էր որ արեւելեան — Պերլինի կառավարութիւնը 45 քիլոմեթրի վրայ պատ մը կը բարձրացնէր երկուքի բաժնելով Գերմանիոյ նախկին մայրաքաղաքը: Անկէ ի վեր զոհերու թիւը 200 մեռեալի եւ 2000 վիրաւորի կը հասնի:

ՊԱՂՏԱՏԷՆ կը հաղորդեն որ իրաքեան եւ քրտական պատուիրակութեանց միջեւ բանակցութիւնները խզուած են եւ կռիւները կը շարունակուին Քիւրտիստանի մէջ: Իրաքի պատուիրակը նոր պայմանաժամ մը տուած է Պարզանիի, որպէսզի զէնքերը վար դնէ: Այս թուականը՝ Օգոստ. 30, մերժուած է քիւրտ պարագլուխին կողմէ որ զայն վերջնագիր մը կը նկատէ:

ԻՐԱՔԻ իշխանութիւնները շփումի մէջ մտած են քարիզային ընկերութեանց հետ: Այս կիսապաշտօնական խօսակցութեանց նպատակն է՝ լուծում մը գտնել երկու կողմերու միջեւ առկախ մնացած հարցերուն:

ՍԱԼԱԶԱՐ յայտարարած է Փորթուկալի ձայնասփիւռէն որ մինչեւ վերջ պիտի պաշտպանեն անդրծովեան իրենց հողամասերը: 1962էն ի վեր, Փորթուկալի վարչապետին առաջին ճառն է. — «Բարձր-բարձր ձայներով արտասահմանի մէջ կը լսուի «անկախութիւն Անկոլայի», բայց Անկոլա փորթուկալեան ստեղծագործութիւն մըն է եւ գոյութիւն չունի առանց Փորթուկալի: Արմատ նետած ազգային գիտակցութիւնը որ կայ՝ փորթուկալեան է ոչ՝ անկոլեան»:

ԼԻԼ-ՆԻՍ օդանաւը փոթորիկի հանդիպած է երբ կը պատրաստուէր իջնել Լիոնի օդակայանը: 16 ճամբորդներ մեռած են, ինչպէս նաեւ երիտասարդ մը որ կ'աշխատէր այն ագարակին մէջ որու վրայ ինկած է էռ-էնթէռի վիմանը:

ԹՐՔԱԿԱՆ կառավարութիւնը պատասխանելով խորհրդային յուշագրին, կ'ըսէ թէ երբեք չէ միջամտած Իրաքի ներքին հարցերուն: Այս ձեւով Անգարա կը պատասխանէ խորհրդային այն ամբաստանութեան, ըստ որուն Թուրքերը կ'օգնէին Իրաքի քրտական ըմբոստութիւնը ճզմելու համար:

ՆԱՍԸ ճառ մը խօսած է Աղեքսանդրիա, Եմէնէն եգիպտական զօրախումբի մը վերադարձին առթիւ եւ այդ առթիւ նորոգած է իր յարձակումները Սուրիոյ Պաաս կուսակցութեան դէմ: «Այս կուսակցութիւնը, շեշտած է Ռայիսը, սկըսած է աշխարհակալութեան եւ յետադիմութեան ձեռքը գործիք ըլլալ»: —

ՖՐԱՆՍԱՅԻ կառքերու գիները մինչեւ 3 առ հարիւր յաւելում պիտի կրեն աշնան: Սիթրոյէնէն ետք՝ Փէօժօ, Ռընօ եւ Սիմքա ընկերութիւնները հրապարակեցին իրենց նոր գիները:

ՖՐԱՆՍԱ դժգոհ է Դաշնակցային Գերմանիոյ Հանրապետութենէն որ առանց Ֆրանսայի կարծիքն առնելու, համաձայնութիւն մը կնքած է Ամերիկայի հետ հրասայլի մը շինութեան համար: Ըստ Ֆրանքեւզերման դաշինքին, Պոնի կառավարութիւնը պէտք է տեղեակ պահէր Ֆրանսան, թէեւ Գերմանացիք կ'առարկեն որ շատ մը կէտերու մէջ, ցարդ Ֆրանքեւզերման դաշինքը չի գործադրուիր:

ԱՐԴԻ ԳՐԱԿԱՆ ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷՆԸ

Գրական լեզու մը, որուն ճակատագիրը յանձնուած չէ պաշտօնապէս իրաւասու մարմնի մը, դատապարտուած է բազմաթիւ փոփոխութիւններ կրելու՝ հետեւելով թէ՛ խօսակցական լեզուին եւ թէ՛ գրողներուն:

Արեւմտահայ աշխարհաբար գրական լեզուն բառացանկով, ուղղագրութեամբ, քերականութեամբ եւ արտայայտութեան ձեւերով յարատեւ փոփոխութիւններ կրած է, կը կրէ եւ պիտի կրէ մինչեւ այն օրը՝ երբ պաշտօնապէս իրաւասու մարմնի մը յանձնուի խնամքը:

Սփիւռքի բազմաթիւ գաղութներու պարագան նկատի առնելով, կարելի՞ է արդեօք ակնկալել որ Սփիւռքը հիմնէ պաշտօնապէս իրաւասու հաստատութիւն մը, որուն որոշումներուն հնազանդին գրական լեզու գործածող Հայերը:

Օր չանցնիր որ մեր մամուլին մէջ չհրատարակուին լեզուական վէճեր ուղղագրական ու քերականական տարբերութիւններու մասին: Հակառակ վէճերու եւ վիճաբանողներու առատութեան, հակառակ վկայութեան կանչուած յարգելի կամ գիտուն անուններու, այս լեզուական վէճերը գրեթէ ոչ մէկ շօշափելի արդիւնքի կը հասնին: Կարելի է լոյսի պէս պայծառ փաստերով ցոյց տալ թէ սա ինչ բառը «է»ով պէտք է գրել փոխանակ «ե»ով գրելու: Գրեթէ ոչ ոք կը փոխէ իր «ե»ը:

Խնդրին ամէնէն աւելի մխիթարական կողմը սա է թէ վիճաբանողները չեն վհատիր, միշտ այն յոյսով որ օր մը իրենց բերած փաստերը ճշմարտապէս բանի մը պիտի ծառայեն:

Ի՞նչ է ուրեմն մեր գրական լեզուին վիճակը:

Ամէն գրող, որ իր գրածը առանց «սրբագրութեան» հրատարակել տալու տեղ մը գտած է, վստահ է թէ իր գրած արեւմտահայերէնն է ճիշդը:

Ամէն խմբագիր, որ իրաւունք ստացած է «սրբագրելու» իրեն յանձնուած ձեռագիրները, վստահ է թէ իր գրածն ու գիտցածը ամէնէն ճիշդն են:

Ամէն գրող, որուն գրածները «սրբագրուած» ձեւով կը հրատարակուին, անհելութեամբ կը նայի սրբագրող խմբագրին, «կ՚արհամարհէ» սրբագրութիւններ եւ կը շարունակէ իր գիտցածին պէս գրել, այն վստահութեամբ որ օր մը այլեւս պիտի դադրին սրբագրելէ իր «ճիշդ» հայերէնը:

Ամէն ուսուցիչ որ մեր դպրոցներուն մէջ հայերէն կը դասաւանդէ, համոզուած է թէ անքննելի են իր դասաւանդած ուղղագրութիւնն ու քերականութիւնը, որոնք յաճախ տարբեր են ուրիշ ուսուցչի մը դասաւանդածներէն:

Ամէն Հայ, որ քիչ կամ շատ լեզուաբանութեան կը հետեւի եւ բանասիրական հրապարակագրութիւն կ՚ընէ, յաճախ կը գործածէ ուղղագրական կամ քերականական հին ու մոռցուած ձեւեր:

Երբ այս է կացութիւնը, գրող մը, որքան ալ համեստ ըլլայ, իրաւունք ունի խորհելու թէ չի կրնար յաւիտենապէս սպասել, որպէսզի ամէն Հայ համաձայնի բառի մը ուղղագրութեան շուրջ: Ու կը գրէ այնպէս ինչպէս վարժուած է առանց շուրջը նայելու:

Արդարեւ, վարժութեան պարագան է կարեւորը: Ի վերջոյ վէճի առարկայ բառերը այնքան ալ շատ չեն: Եւ յետոյ, մեր քերականական օրէնքները անքննադատելի մասնագէտներու կողմէ չեն ճշդուած:

×

Լեզուական վէճերու մասնակցողները, որոնց եռանդն ու ջանքերը վեր են ամէն գնահատանքէ, առհասարակ օրինակներով եւ վկայութիւններով կը խօսին: Տրուած օրինակներն ու վկայութիւնները գրեթէ միշտ չափազանց հին են: Անհասկնալի է սա պարագան որ առհասարակ վկայութեան կը կանչուին հին դէմքեր, որոնք մեր այսօրուան գրական եւ խօսակցական լեզուներէն բաւական հեռու եւ տարբեր լեզուով մը կը գրէին: Մեզի ամէնէն մօտիկ դէմքը եթէ Հայր Ա. Ղազիկեանն է, պէտք չէ մոռնալ թէ բոլորովին տարբեր աշխարհաբար մը կը գործածէր: Անկարելի է այսօր գրել այն արուեստական, յերիւրածոյ հայերէնով, զոր գործածած է բազմարդիւն այս Մխիթարեան Հայրը դասական գործերու թարգմանութեանց համար: Հարկ չկայ օրինակներ շարելու:

Պէտք չէ մոռնալ թէ լուռ համաձայնութեամբ մը, այսօրուան Սփիւռքի լաւագոյն գրողները կը գործածեն Վարուժաններու, Մեծարենցներու եւ Թէքէեաններու լեզուներուն վրայ հիմնուած եւ նորութիւններով ճոխացած արեւմտահայերէն մը, որ բոլորովին տարբեր է լեզուական հեղինակութիւն նկատուած դէմքերու հայերէնէն:

Հոս կը ճշդուի հարցը:

Ո՞ր կը նախընտրէք: Արուեստով, գրական շնորհով, բարախուն շունչով ստեղծուած գրականութի՞ւնը, թէ ոչ գրաբարապաշտ, հնապաշտ գիտուններու խրատները եւ հրապարակագրական գործունէութիւնը:

Ո՛չ, ժամանակը կը քալէ: Գրական լեզուն չի կրնար միայն հինը շարունակել:

Անխախտութիւնը երեւութական է յաճախ: Միայն ուղղագրութեամբ ու քերականութեամբ գրական լեզու կարելի չէ ունենալ: Գրական լեզուն արուեստագէտ գրողներու լեզուն է պարզապէս: Մեր արեւմտահայերէն գրական լեզուն Պետրոս Դուրեանով ու Յակոբ Պարոնեանով սկսաւ և ոչ թէ գիտուն լեզուաբաններով, որոնց օգտակարութիւնը չեմ ժխտեր:

Մ. ՀԱՃԵԱՆ

ԶՐՈՅՑ ԲԱՐՍԵՂ ԿԱՆԱՉԵԱՆԻ ՀԵՏ

ԽՄԲ.— «Ազդակ»էն արտատպելով կը հրատարակենք այս զրոյցը, այնպէս շահեկան իր առաջին մասին մէջ ուր Բ. Կանաչեան արդար եւ տեղին դիտողութիւններ կ՚ընէ: Մեզի շատ կը զարմացնէ սակայն մեր կողմէ ընդգծուած այն մասը ուր մեծ վարպետը ըսած ըլլայ թէ Կոմիտասէն ետք «ամէնէն լաւ երգերը որ կան իր գրածներն են...»: Մեծ վարպետ մը չի կրնար նման բան ըսել իրեն մասին, որքան ալ գիտակից ըլլայ իր արժէքին եւ փորձէ նոյնիսկ կեղծ համեստութիւն ծախել: Կ՚ուզենք խորհիլ որ մեր պաշտօնակիցը սխալ արձանագրած է ծերունի Կանաչեանի ըսածը, վասնզի տաղանդաւոր խմբավարը գիտէ թէ նրման վճիռներ միայն պատմութիւնը կրնայ տալ:

ՊԷՅՐՈՒԹ.— Երկուշաբթի, Յուլիս 29ին, մօտ երկու ժամ տեւող տեսակցութիւն մը կ՚ունենանք, անմահ Կոմիտաս վարդապետի արժանաւոր աշակերտներէն երաժիշտ–երգահան եւ մեծանուն խմբավար Բարսեղ Կանաչեանի հետ, իր մեծ աղջկան, Տէր եւ Տիկին Նշան Թիւյսիւզեանի բնակարանին մէջ:

Շրջապատուած իր զաւակներով ու թոռներով, իր կեանքին ամէնէն երջանիկ օրերն է որ կ՚ապրի: «Եօթը թոռներու հետ նկարեցին», անխառն ապրումով յայտնեց իր հոգեկան անսահման հրճուանքը:

Վարպետը կը պահէ իր համակրելի ու զուարթախօս բնաւորութիւնը, քաջառողջ է ու տրամադրութիւնը տեղին: Միայն, դժբախտաբար, տեսողութիւնը աւելի տկարացած է:

Սիրալիր կարճ խօսակցութենէ մը ետք, յարմար անկիւն մը կ՚առանձնանանք:

Հետաքրքրութեանս գոհացում տալու համար անհամբեր, անմիջապէս կ՚ուղղեմ առաջին հարցումս:

ՀԱՐՑՈՒՄ.— Պ. Կանաչեան, ի՞նչ նոր հեղինակութիւններ գրեցիք Պաղտատ ձեր բնակութեան տարիներուն:

ՊԱՏԱՍԽԱՆ.— Մասնաւոր նորութիւն մը չունիմ: Սակայն, մանկական ծանօթ երգերէն «Մրնկըլը»ն ընդարձակեցի մեծ խմբերգի համար: Երգերուս մէջ կրնամ ըսել, լաւագոյններէն է:

«Պաղտատ հաստատուելուս առաջին տարին, բազմաթիւ զիմումներու գոհացում տալու համար, Կարօ Քէշիշեանի տուած համերգին, յայտագրի երկու մասերը ես վարեցի: Երգչախումբը մեծ յաջողութեամբ երգեց «Մրնկըլը»ն:

«Մշակած եմ նաեւ «Կամներդ»ն ու «Խաղաղ գիշեր»ը: Նոր բան չէի կրնար գրել: Ասոնք արդէն Պէյրութ գտնուած վերջին տարիներուս պատրաստած էի:

Պաղտատի մէջ բան չեմ գրած: Համերգ ալ չտուի:

Հ.— Ի՞նչ կարծիք ունիք մեր երիտասարդ խմբավարներուն մասին:

Պ.— Անունս եղած է չհանող: Հիմակուան երիտասարդ խմբավարները դժբախտաբար, պատրաստուած մարդիկ չեն: Ինչ որ լսած են անիկա կը սորվեցնեն: Յաճախ, լաւ ալ չեն սորվեցներ:

«Տարիներ առաջ, Պէյրութի մէջ, ներկայ էի համերգի մը: «Ձի՛գ դու, քաշիր»ը օրինակ, այնպէս ուժգին երգեցին: Մինչդեռ, պէտք է նախ ըմբռնել, թէ ի՛նչպէս երգելու է: Մեր դեղձուկները միշտ սիրաշահելով, անուշութեամբ մօտեցած են իրենց եղներուն:

Հ.— Լաւատե՞ս էք Սփիւռքի մեր երաժշտութեան նկատմամբ:

Պ.— Սփիւռքի համար լաւատես չեմ: Բոլոր խմբավարներն ալ ընդօրինակողներ են:

Հ.— Ի՞նչ խորհուրդ ունիք տալիք մեր խմբավարներուն:

Պ.— Լաւ երգչախումբ կազմելը անպատճառ բազմամարդ ըլլալուն մէջ պէտք չէ փնտռել: Խմբավարները ուշադրութիւն չեն դարձներ, թէ երգչախումբի մաս կազմել ուզողը կրնա՞յ երգել, լաւ ականջ ունի՞: «Գուսան» երգչախումբը երբեք 70 հոգին չէմ անցուցած: Ամէնէն կարեւորը ձայն բռնելն է:

«Երաժշտութիւնը գիտութիւն է: Արուեստը կը կարծուի, թէ գիտութեան պէտք չունի: Մինչդեռ, երաժշտութիւնը գիտութեան ալ պէտք ունի:

Հ.— Ի՞նչ պիտի ըլլայ ըստ ձեզի մամուլին դերը:

Պ.— Դժբախտաբար, ամէն թերթ իր մարդը կը գովէ: Եթէ քաջալերութիւն է սխալ, ըստ ինծի քաջալերութիւն չէ: Եթէ պակասութիւն մը կայ, պէտք է ըսել, որպէսզի քիչ մը ինքզինքնին գտնեն:

Հ.— Ի՞նչ է ձեր կարծիքը Հայաստանի երգչախումբերուն եւ երգահան–խմբավարներուն մասին:

Պ.— Հակառակ անոր որ շատ երգահաններ կան Հայաստանի մէջ, Թաթուլ Ալթունեանի երգերն են որ միշտ կը լսենք: Գրեթէ հիմա, հոն ալ նոր բան չկայ:

«Հայաստանի մէջ, դժբախտաբար, կը կարծեն թէ արտասահմանի մէջ մարդ չկայ: Մինչդեռ իրենք ալ ընդօրինակողներ են: Կանոնաւոր խումբեր ալ չունին: Ալթունեանի խումբն է միայն լաւը, անոր երգերն ալ գրուած են պարի համար:

«Հայաստանի մէջ ալ լաւ չեն երգեր: Հոն ալ ձայն չեն պահեր: Կոմիտասի երգերը աղաւաղուած են: «Գնա՛, գնա՛, հետիդ եմ հա՛, հա՛, հա՛»ն, յանկարծ թեթեւօրէն կը վերջացնեն:

Հ.— Որեւէ կապ կը պահէ՞ք Հայաստանի երաժիշտներուն հետ: Ձեզմով կը հետաքրքրուի՞ն:

Պ.— Քանի մը տարիներ առաջ Հայաստան էի, յետոյ Եգիպտոս գացի: Պաղտատ վերադարձիս, Հայաստանէն նամակներ

ՀԱՄԱՅՆԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԴԵՐԸ

ՌՈՒՍԵԻԹՈՒՐՔ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆՑ ՄԷՋ

1919–1922

Միւս կողմէ, յայտնի է այն պաշ վերաբերմունքը, որուն արժանացաւ Էնվէր փաշա՝ 1920 Սեպտ. 4ին Պաքուի մէջ կազմակերպուած Արեւելեան ժողովուրդներու Համագումարին մէջ:

Նոյն տարուան Հոկտեմբեր ամսուան վերջը, Էնվէր փաշա դարձեալ Պերլին գնաց՝ Ալի Պէյ ծածկանունին տակ, Անատոլուի բանակներուն համար զէնք գնելու նպատակաւ (1): Աւելի ուշ, 1920ի աշնան, ջանաց Պաթումի ճամբով Անատոլու անցնիլ՝ Թրքական ազգային բանակը դէպի յաղթանակ առաջնորդելու մտադրութեամբ, եթէ, ինչպէս ինք խոստպէս համոզուած էր, Մուսթաֆա Քէմալ պարտուէր Սաքարիայի վրայ: Թիւրքիստանի մէջ, Պասմաչիներու մօտ սկըսած իր վերջին գործունէութիւնը աւարտեցաւ իր մահով՝ 1922 Օգոստ. 4ին: Ամբողջ իր կեանքը կազմող արկածախնդրութեանց շղթային վերջին օղակը եղաւ անիկա:

Աւելի լուրջ են Թուրքիոյ հետ կապ հաստատելու նպատակաւ Մուսթաֆա Սուպհիի կատարած փորձերը: Ինք է, որ 1918 Յուլիս 25ին Մոսկուայի մէջ հիմնեց Թուրք համայնավար կուսակցութիւնը, բաղկացած Թուրք ռազմագերիներէ, որոնց շրջանակին մէջ շատ բուռն քարոզչութիւն ըրած էր, տեղի տալով օսմանեան ղեսպան Կալիպ Քէմալ փաշայի բազմիցս կրկնուած բողոքներուն: Համայնավար Էնթէրնասիոնալի առաջին համագումարին համար Արեւելեան ժողովուրդներու Կեդրոնական Բիւրոյի պատգամաւոր ընտրուած, 1919ի Ապրիլին Խրիմի մէջ կազմակերպեց մահմետական Բիւրօ մը, «Միւսբիւրօ» (Միւսլիմաններու Բիւրօ). եւ ապարդիւն կերպով ջանաց այնտեղէն յարաբերութեան մէջ մտնել Մուսթաֆա Քէմալի հետ: Ասիկա արգելք չեղաւ, որ 1919 Մայիս Մէկին առթիւ հրատարակուած Գ. Միջազգայինի մանիֆեստը հաստատէ, թէ յեղափոխութիւն մը «պայթելու վրայ է Թուրքիոյ մէջ»(2): Իրաւունք ունինք ենթադրելու, որ զարմանք պատճառող այս յայտարարութիւնը, ինչպէս նաեւ 1919 Սեպտեմբեր 13ին «Թուրքիոյ բանուորներուն եւ գիւղացիներուն» ուղղուած Նարքոմինտէլի կոչը, կը բացատրուին այն յոյսերով, որոնք այդ շրջանին կը սնուցուէին Մոսկուայի մէջ, եւ որոնք հիմնաւորուած կը նկատուէին Մուսթաֆա Սուպհիի կողմէ Անատոլու ղրկուած համայնավար գործակալներու ստեղծած զրզռութեանց շնորհիւ:

Ատրպէյջանի խորհրդայնացումէն ետք, Սուպհի անցաւ Պաքու, ուրկէ 1920 Յունիս 15ին նամակ մը ղրկեց Մուսթաֆա Քէմալին, որուն մէջ այս վերջինէն կը խնդրէր, որ բարեհաճի դիւրութիւններ ընծայել՝ Անատոլուի մէջ Թուրք համայնավար կուսակցութեան գործունէութեան ծաւալման համար: Շնորհիւ Քեազըմ Քարապէքիր փաշայի յուշերուն, գիտենք այսօր, թէ Անգարա անցնելու արտօնութիւնը չնորհուեցաւ Մուսթաֆա Սուպհիի, ինչպէս, իրմէ առաջ, շնորհուած էր ուրիշ համայնավարներու: Սակայն, Մուսթաֆա Քէմալ զայն զգուշացուց «անտեղի» գործունէութեանց ներկայացուցած վտանգէն: Մուսթաֆա Սուպհի անտեսեց այս զգուշացումը եւ ինք իր ձեռքով պատճառ դարձաւ Տրապիզոնի աղէտին, որուն մասին պիտի խօսինք քիչ անդին:

Բոլշեւիկներուն հետ շփման մէջ մըտնելու առաջին պաշտօնական հրահանգը տրուեցաւ Մուսթաֆա Քէմալի կողմէ՝ Պոլսոյ իր բանտէն փախած զօրավար Հալիլ փաշայի: Հալիլ փաշա, 1919 Սեպտեմբերի վերջ Սվազէն Պաքու անցաւ՝ «Տէմիր Ալի» կեղծ անունին տակ: Մուսթաֆա Քէմալ հետեւեալ ձեւով սահմանած էր անոր առաքելութիւնը (3)—

«Ուրախ պիտի ըլլանք օգտուիլ Արեւելքի հարցերուն մէջ ձեր ունեցած փորձառութենէն. օրինակի համար՝ բոլշեւիկներուն հետ յարաբերութիւններ ստեղծելու եւ, աւելի ուշ՝ զէնքերու, զինամթերքի և դրամի առաքումներու առընչութեամբ: 1918ին, Կովկասեան ճակատին վրայ մեր բանակներուն գործողութիւնները վարեցիք և այդ շրջանին մօտէն ճանչցաք բոլշեւիկները: Որով, այս հարցին վերաբերմամբ Անատոլուի մէջ ձեր բերելիք օժանդակութիւնը աւելի կարեւոր է, քան որեւէ ուրիշ ծառայութիւն որ կրնայիք մատուցանել: Այս առաքելութիւնը յանձն առնելով, կրնաք մեզ լուսաբանել Արեւելքի կացութեան մասին, եւ, յաջողութեան պարագային, մեզի համար ապահովել ծայր աստիճան կարեւոր օժանդակութիւն մը»:

(2 – Շար.)

1) Վիփէրթ փոն Պլիւխէր. Տէօյչլանտ Վէկ Նախ Ռափալլօ, Վիսպատըն, 1951, էջ 133:

2) Ինթըրնէյշընըլ Քոնսիլիէյշըն, թիւ 149, էջ 180:

3) Ալի Ֆուատ Ճէպէսօյ, Մոսքովա Հաթըրլարը, էջ 134:

...ուցեր էի: Պատասխանեցի բոլորին ալ: ...րականան մեծահատոր հրատարա– ...թեան մը համար նոր հեղինակու– ...թիւններէս ուզեր էին: Ըսուեցաւ թէ չեն ...ացած: Մասնաւո՞ր ըսին, չեմ գիտեր: ...ինծի այցելողներ ալ եղան: Բոլորն ...ըսին, թէ հայրենիքի վերելքին հա– ...որ գրածներդ լաւ են:

...Հայաստանի Հայերը մաքուր Հայեր ...հայրենասէր: Դժբախտաբար կ'ապ– ...րեն խրաւակարգի մը տակ, որ կը կաշ– ...ինչ իրենց արտայայտութեան ազա– ...ութիւնը: Վախ մը ունին:

...վերջերս, երգահաններու ժողովի նա– ...խագահութենէն նամակ մը ստացայ: Գրած ...էր, թէ այս տարի, դաշնակի յատուկ ...ձայնագործութիւններով մեծահատոր ...գիրք մը պիտի հրատարակեն: Անտիպ ...գործ մը, կամ գրուածքներ ուզեր էր: ...երկու կտոր ղրկեցի: Աւելի ճիշդը տոին ...մէջէս: Վստահ չեմ թէ հասա՞ւ:

Հ.— Ձեր ամբողջական հեղինակու– թիւնները առնե՞նք ուղարկուա՞ծ են Հա– յաստան:

Պ.— Գարեգին Կաթողիկոսի օրով Հա– յաստան ուղարկուած են երգերս, նոյն– պէս Վեհափառի կողմէ: Օր մը սակայն ...երգեցին: Կը սպասեմ: Միայն «Օրօր»ը ...ողներ եղած են:

...իմ երգերս, Կոմիտասէն ետք, ամէնէն ...լաւ երգերն են որ կան: Ունին յառաջա– ...բան եւ վերջաբան:

...երաժիշտը նախ երգին մօթիֆը կը ...նուագէ, յետոյ մէջը կը մտնէ եւ վերջա– ...բանին կը զարգացնէ: Նոյնն է որ կը ...տեսնեմ հիմա Հայաստանի մէջ: Անկաս– ...կած, կ'օգտագործեն հեղինակութիւն– ...ները»: (Ընդգծումը մեր կողմէ՝ Յառաջ):

Այնուհետեւ, մեր խօսակցութիւնը շա– ...րունակուեցաւ Պ. Նշան Թիւյիւզեանի ...ներկայութեան:

Հաճելի էր ունկնդրել վարպետը, վաս– ...տակաւոր երաժիշտը, որ այնքան ազ– ...նուօրէն կը խօսէր հայ երաժշտութեան, ...երգահաններու եւ անոնց ստեղծագոր– ...ծութիւններուն մասին:

Վերյիշեցինք «Գուսան»ի օրերը: Հա– ...ճելի յիշատակներ ու չարութիւններ ...պատմուեցան:

Իր կարգին պատմեց հետեւեալը.

— Օր մը, Կոմիտասի փորձին ուշացեր ...էի: Իբրեւ թէ առանց նկատուելու ծա– ...ծուկ տեղս՝ անցայ: Քիչ յետոյ, վարդա– ...պետը ժամացոյցը հանեց, երկու ձեռքե– ...րով գլխուն վրայ բռնեց եւ սկսաւ եր– ...գել. «Կանաչ-կարմիր դուն ո՞ւր էիր»: ...Այսուհետ, կատակ մը, խօսք մը կ'ողե– ...ւորէ խումբը: Կարող, գիտակից ու փոր– ...ձառու խմբավարի մը համար ասոնք ան– ...հրաժեշտ են:

Տաղանդաւոր վարպետին հետ քանի մը ...ժամ ըլլալու վայելքը ապրելով, հրա– ...ժեշտ առնելէ առաջ, շնորհակալութիւն ...յայտնեցինք իր տուած տեղեկութիւննե– ...րուն համար:

«ԱԶԴԱԿ»

ՅԱՆՈՒՅՐԻ ՀԱՅԵՐ

Ա.

Թղթակցութեանս հետեւող «Յառաջ»ի ընթերցողները անշուշտ կը յիշեն նա– խորդ գրութեանս վերջին հանգրուան գիւղը, — Ֆէյզէն: Բայց դեռ չվերջա– ցաւ, սիրելի ընթերցող, ձեռնարկած շըր– ջագայութիւնս: Այս գիւղէն դէպի արե– ւելք կ'ընթանայ նեղ եւ երկրորդական խճուղի մը, դէպի քաղաքներու Թագու– հին, Կրընօպլը, որ միանգամայն Իզէր նահանգի կուսակալանիստ քաղաքն է:

Բանուկ ու մաքուր ճամբայ մը: Հա– ղարաւոր ինքնաշարժեր սրընթաց կը յա– ռաջանան դէպի արձակուրդի օդաւէտ վայրեր, դէպի Էքս–լէ–Պէնի հանքային ջուրերը եւ այլուր:

Ռոն նահանգի սահմանակից փոքր քա– ղաք մըն է Վենիսիէօն, գործարաններու ցանցով շրջապատուած՝ բանուորական ոստան քաղաքը: Ֆէյզէնէն հազիւ եր– կու քիլոմեթր հեռու:

Պատահական ո՛ր ճամբորդին միտքէն կ'անցնէր թէ այդ աննշան քաղաքին մէջ կան մոռացուած հայ խլեակներ:

Ես, անգորդ մը, հետաքրքրութիւնն ու ցանկութիւնը ունեցայ մանրամասն պըր– պտում մը կատարել գտնելու համար ցրուած հայ հայրենակիցներ: Բախտը ժպտեցաւ, այցելութիւնս չանցաւ ապար– դիւն: Պատահաբար հանդիպեցայ վաղե– մի բարեկամի մը, որ հասկնալով մտա– դրութիւնս՝ լիուլի գոհացում տուաւ ինծի:

Ըստ բարեկամիս տուած տեղեկու– թեանց, այստեղ մնայուն ու խոշոր գա– ղութ չենք ունեցած: Բազմաթիւ Հայեր եկեր գացեր են, դէպի մեծ ու վաճառա– շահ քաղաքներ, ուր որ ասպարէզ կայ դրամ շահելու, գիրք շինելու, սեփական գործի եւ տունի տէր դառնալու:

Ներկայիս ունինք 5–6 տուներէ բաղ– կացած փոքրիկ գաղութ մը: Մեր այս հայրենակիցներուն մէկ մասը գործարա– նային բանուորներ են: Իսկ մնացածնե– րը, բանուորութենէ շրջանաւարտ, ա– ռեւտրականներ, շրջուն վաճառորդ– ներ եւայլն: Ազգային հաւաքական հա– մախմբում չկայ, ոչ ալ եռուզեռ: Ցրուած են զանազան թաղերու մէջ: Հազուադէպ պարագաներու մէջ միայն իրար տեսնե– լու, իրար բարեւելու առիթը կ'ունենան: Զմտնում նշելու թէ տանտէր Հայեր ալ կան: Խաղաղ, բարեկեցիկ, համեստ գա– ղութ մը վերջապէս:

Այս քաղաքը ունի շատ բանուկ տօնա– վաճառ մը (մարշէ), ուր կարելի է տես– նել զանազան շրջաններէ եկած հայ ա– ռեւտրականներ, շրջուն վաճառորդ– պտղավաճառներ:

Գոհունակ սրտով կը մեկնիմ այս գիւ– ղաքաղաքէն ու կեդրոնական ընդարձակ պողոտան խաչաձեւելով կը յառաջանամ դէպի նոր հորիզոններ: Խճուղին կ'անցնի հայաշատ Տէսինէն, ճեղքելով քաղաքը:

Բայց ես չուզեցի մտնել քաղաք, ուր «Յառաջ» ունի իր թղթակից – աշխատա– կիցը:

Տէսինէն մինչեւ Փոն–տը–Շէրիւ մօտա– ւորապէս քան քիլոմեթր ճամբայ է: Մեքենան կը սուրայ: Կ'անցնիմ գիւղերէ եւ քաղաքներէ, ուր հայ գաղութ չու– նինք, բայց մեծ թիւով հայ առեւտրա– կաններ կը շրջին այս ճամբաներուն վրայ եւ կանգ կ'առնեն ուր տօնավաճառ կայ:

Հաճելի է ճամբորդել Տէսինէն մինչեւ Շարվիէօ երկարող խճուղիով: Խաղաղ ու ամայի է ճամբան: Այնքան բանուկ չէ: Ինքնաշարժերու խճողում եւ արկածի վտանգ չկայ:

Երկրորդ հանգրուանս եղաւ Շարվիէօ – Փոն–տը–Շէրիւ միացած զոյգ քաղաք– ները, հարթ դաշտավայրի մը վրայ տա– րածուած:

Առաջինը, Շարվիէօ, գրեթէ հայկական չէն գիւղ մըն է: Բնակչութեան հարիւրին 80 տո՛կոսը Հայեր են, Թուրքիոյ զանա– զան շրջաններէն, բայց Սեբաստացիները մեծամասնութիւն կը կազմեն: Հայ գա– ղութը կը բաղկանայ 70–80 ընտանիք– ներէ: Շատերը ունին սեփական գործ ու բնակարան: Անոնց կողքին ընդարձակ պարտէզ – բանջարանոցներ, զորս կը փո– րեն, կը ցանեն եւ արդարօրէն կը վայե– լեն իրենց քրտինքին արդիւնքը, սոխն ու լոլիկը, վարունգն ու սմբուկը, մին– չեւ անգամ դժուարաբոյս պամիան:

Փոն–տը–Շէրիւ.— Նոյնքան հայ գա– ղութ մը ունինք այս քաղաքին մէջ: Եր– կար նկարագրելու պէտք չկայ Հայոց կենցաղը, ամէն կողմ համանման գոր– ծաւոր, առեւտրական, արհեստաւոր, խանութպան: Զմոռնամ ըսելու թէ հայ գործաւորները կ'աշխատին Կրամոն Քապլը կոչուած ընկերութեան գործա– րաններուն մէջ ու կը բնակին ընկերու– թեան միայարկ ու երկյարկ բնակարան– ներուն մէջ:

Ազգային կեանք.— Այս երկու միացած գաղութները, Շարվիէօ եւ Փոն–տը–Շէ– րիւ, սկիզբէն ի վեր ունեցած են Ազգ. Միութիւն մը, որ կը շարունակէ ազգա– յին եռուզեռ ստեղծել իր կազմակերպած հանդէս – երեկոյթներով: Երկու տարիէ ի վեր փոխուած է այդ Միութեան վար– չութիւնը նոր անդամներով: Վարչու– թեան պատասխանատու անդամներէն մէ– կուն տուած տեղեկութեանց համաձայն, իրենց գլխաւոր խէթան է միասնականու– թիւն, համերաշխ գործակցութիւն ամէն մարզի մէջ: Երրորդ՝ կառուցանել նա– խորդ վարչութենէն ժառանգ մնացած հողամասին վրայ փոքր մատուռ մը: Ցե– տոյ, աւելի կարեւորը, ժամանակէ մը ի վեր փակուած ծաղկոցին փակ դռները վերաբանալ, հաւաքելով թաղերուն հայ երկսեռ մանուկները, անոնց սորվեցնել Մեսրոպեան տառերը:

Կրօնական.— Առ այժմ գաղութը սե– փական մատուռ չունի: Մատուռի տեղ ունին գործարանատիրոջ կողմէ յատ– կացուած փոքր սենեակ մը, որու ճակա– տը խորան մը, վերեւը խաչափայտ մը, երկու կողմը Յիսուս Մանուկին ու Մայր Աստուածածինին նկարները ու քանի մը այլ նկարներ: Մատուռ մը, մասնաւորա– բար տարեց հայ մամիկներու ու պապիկ– ներու համար:

Մամուլ.— Արեւմտեան Եւրոպայի մի– ակ օրաթերթը, «Յառաջ», ունի իր գոր– ծակալը, տեղացի դրավաճառ մը: Կան նաեւ անհատ բաժանորդներ: Այս չէն գաղութը հազիւ յիսուն օրինակ «Յառաջ» կը սպառէ: Մինչդեռ իւրաքանչիւր Հա– յու տան սեղանին վրայ կամ դրպանը կը տեսնես տեղական թերթ մը: Նոյնիսկ բառ մը Ֆրանսերէն չգիտցող Հայու մը ձեռքը անպայման տեղական թերթ մը կայ:

Մոռացութեան չտանք Տէսինի Հոգեւոր Հովիւը, Աւագեան քահանան, որ իբրեւ այցելու, պարբերաբար կրօնական արա– րողութիւններ կը կատարէ:

Երրորդ հանգրուանս շատ հեռու չէ. հազիւ տասը քիլոմեթր՝ դէպի արեւելք, Իզէր նահանգին հեռաւոր գիւղաքաղաք– ներէն մին՝ բլուրի մը շուքին տակ, — Քրեմիէօ:

ԱՆՑՈՐԴ

ԳՐԱԳԷՏԸ՝ ԽՈՀԱՐԱՐ

Ալեքսանդր Տիւմայի (հայր) վերջին գործը հրատարակուած է գրագէտին մա– հէն ետք: Գիրքին խորագիրն է՝ «Խոհա– րարագիտական մեծ բառարան»:

Ալ. Տիւմա խոհարարական արուեստի մէջ մասնագէտ մը եղած է: Արդարեւ իր գործին մէջ ներկայացուցած է կերա– կուրներու տեսակներ, խոհարարութեան արուեստը, բազմաթիւ ծիծաղաշարժ մանրավէպեր եւ ակնարկներ խոհարա– րութեան պատմութենէ, խոհանոցի բա– պասներու ցանկեր, գիներու, զանազան ըմպելիներու եւ բամատեսակ խորտիկնե– րու ցուցակներ:

Տիւմա կը յիշատակէ որ «դորտին մի– սը» դիւրամարս է, օգտակար է տարի– քոտ մարդոց ընդհանրապէս եւ բոլոր կի– ներուն՝ առանձնապէս, որովհետեւ «վարդագոյն կը դարձնէ այտերը» կամ, որ ծիրանը օրավար Լուկուլլոսի միջո– ցաւ բերուած է Հայաստանէն Հռոմ եւ անկէ ալ անցած՝ Ֆրանսա:

Ալ. Տիւմա շատ ճամբորդած է եւ ամէն երկիրներէն նիւթեր հաւաքած է: 1858ին գացած է Ռուսաստան եւ այցելած Կով– կաս: Մանրամասն նկարագրելով հայկ. խորովածին պատրաստութիւնը, Տիւմա կը գրէ.—«Խորովածը արժանի է միսնա– լու ֆրանսական խոհանոցին»:

Գրագէտին մտերիմ ընկերը եւ հրատա– րակիչը՝ Ալֆոնս Լըմէր «Բառարան»ի յառաջաբանին մէջ գրած է. «Ալեքսանդր Տիւմա այս գիրքին մէջ ուտելու արուես– տը ի սպաս կը դնէ մարդու կեանքին եւ առողջութեան»:

«ՅԱՌԱՋ»ի ԹԵՐԹՕՆԸ (204)

ԵՐԼՏՐՋԻ ՊՈՄՊԱՆ

●●●

ՀԱԶԱՐ ԻՆԸ ՀԱՐԻՒՐ ԶՈՐՍ

15. Ամուճա Անտոն, Ֆիլիպպեցի Հայ ...մը, կոմիտէին մէջ Անտոն Քօչ անունով ...ճանչցուած, յանցապարտ է մասնակցած ...ըլլալով Կ. Պոլսոյ մէջ հայ յեղափոխա– ...կան կոմիտէին եղեռնական ձեռնարկնե– ...րուն եւ վերջին Յուլիս 8ի մահափորձին ...պատրաստութեան, ներկայ գտնուելով ...յեղափոխական կոմիտէին, որ անիշխա– ...նական ձեռնարկները վճռած էր իր բնա– ...կարանը կոմիտէի անդամներուն համար ...ժամադրավայրի մը վերածելով, ընդու– ...նելով մահափորձին հեղինակները, որոնք ...եկան Կ. Պոլսէն, ծառայելով իբրեւ ...միջնորդ թղթակից այդ եղեռնագործնե– րուն ու կոմիտէին միջեւ, այս վերջինն ամէնէն զօրծօն անդամներէն ըլլալով ինք եւ զայն ներկայացնելով Ֆիլիպպէի մէջ:

Ոճիրները նախատեսուած են Պատժա– կան Օրէնքի 58րդ յօդուածին առաջին հատուածովը:

16. Երուանդ Ալաճաճեան, Սոֆիա բը– նակող Հայ մը, նախապէս միեւնոյն ե– ղեռնական մասնակցութեամբ յանցա– պարտ ճանչցուած է:

17. Թադէոս Ցակոբեան, Սոֆիա բնա– կող Հայ մը, նախորդին նման, միայն եղեռնական մասնակցութեամբ յանցա– պարտ ճանչցուած:

Այս վերջին երկուքն ալ իրենց պատ– կանած հայ յեղափոխական կոմիտէի ան– դամներուն օգնած են, ձեռնարկին դրա– մական մասին մէջ կարեւոր դեր մը ըս– տանձնելով:

Ասոնց ոճիրներն ալ Պատժական Օրէն– քի 58րդ յօդուածին առաջին հատուածո– վը նախատեսուած են:

18. Մանուկ Իւմէտեան (բանտարկ– եալ), Սվազցի գիւղացիներէն, Բերա, Ձոնս յարկաբաժնի դռնապան, յանցա– պարտ ճանչցուած է մասնակցած ըլլալով Կ. Պոլսոյ մէջ իր պատկանած հայ յե– ղափոխական կոմիտէի եղեռնական ձեռ– նարկներուն, մասնաւորապէս անձամբ օժանդակելով խուլաբարական գաղա– փարներուն տարածումին, կեղծ հասցէի մը տակ իրեն ուղղել տալով «Դրօշակ»ի օրինակներ եւ այդ տեսակէ ուրիշ գըր– ուածքներ, զանոնք ցրուելով, իր դռնա– պանի խշտիկը յատկացնելով ժամադրա– վայր կոմիտէի անդամներուն, որոնց ա– մէնէն զօրծօններէն մին է. նաեւ ի՛նք ո– րոշած է զանազան ոճրագործներուն ի– րենց դերը. մահափորձէն մէկ քանի օր առաջ ռումբեր ու պայթուցիկ հրանիւ– թեր ընդունած է, զորս բաշխած է Նշան եւ Եղիա յանցապարտներուն, որպէսզի զանոնք գործածեն առաջին նշանին:

Այս ոճիրները նախատեսուած են Պատ– ժական Օրէնքի 55րդ յօդուածով և 58րդի երկրորդ յօդուածին առաջին հատուա– ծովը:

19. Նշան Ցովհաննէսեան (բանտարկ– եալ), բնիկ Սվազի Հայ մը, պանդոկ Քրէօքըրի նախկին սպասաւոր, այժմ սրճարար. յանցապարտ ճանչցուած է Կ. Պոլսոյ մէջ եղեռնական ձեռնարկներու պատրաստութեան մասնակցած ըլլալով եւ մանաւանդ ընդունելով տասներկու ռումբեր, զոր այդ պանդոկին մէջ պա– հեց, եւ մեծ քանակութեամբ մելինիթ, զոր, կը պնդէ թէ Մանուկին ազդարա– րութեան վրայ, ծեմիշ նետած է:

Այս ոճիրները նախատեսուած են Պատ– ժական Օրէնքի 55րդ յօդուածով և 58րդի յաւելուածին առաջին հատուածովը:

20. Տաճէս Նահապետեան (բանտարկ– եալ) Առաքել կոչուածը, բնիկ Սվազցի, Կ. Պոլսոյ Աւստրիական հիւանդանոցին դռնապանը, յանցապարտ ճանչցուած է մասնակցած ըլլալով միեւնոյն եղեռնա– կան ձեռնարկներու պատրաստութեան, իր ձեռքին տակ ունեցած բոլոր միջոց– ներով սատարելով իր պատկանած հայ յեղափոխական կոմիտէի դաւադրու– թիւններուն, մանաւանդ ընդունելով եւ իր հիւանդանոցին մէջ պահելով պայթու– ցիկ նիւթեր ու ռումբեր:

Այս ոճիրները նախատեսուած են Պատ– ժական Օրէնքի 55րդ յօդուածով և 58րդի երկրորդ յաւելուածին առաջին հատ– ուածովը:

21. Հաճի Նշան Մինասեան, Թաթուլ եւ Պարութ ըսուածը (անձնապան (՛), բը– նիկ Սվազցի, Հնչակեան յեղափոխական կոմիտէի մասնաճիւղի նախկին նախա– գահը, զօրծօն դեր մը կատարած էր յե– ղափոխական կոմիտէի եղեռնական ձեռ– նարկներուն պատրաստութեան մէջ, եւ մինչ ցարդ այդ կոմիտէին ամէնէն զօր– ծունեայ անդամներէն էր. ընդունած եւ պահած է պայթուցիկ նիւթեր, զոր յե– տոյ ոչնչացուցած է, յանցապարտ Արտաշ Գարուտանեանի հետ Բերա – Ղալաթիա հանրակառքին դէմ ոճրափորձի ծրագրի մը զործադրութեան նախնական միջոց– ները ձեռք առած է, իր քով հաւաքել տալով կոմիտէին անդամները, եւայլն:

ՍՄԲԱՏ ԲԻՒՐԱՏ

(Շար.)

ՆՈՒԷՐՆԵՐ

Ֆ· ԿԱՊՈՅՏ ԽԱՉԻ ԿԱՑԱՆԻՆ

Յովհաննէս եւ Րաֆֆի Էթեմէզեան 50ական ֆր· կը նուիրեն Կապոյտ Խաչի կայանին իրենց քրոջ՝ Սիլվիի ծննդեան առթիւ:

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ Ս. ԽԱՉ ԵԿԵՂԵՑԻ

10 bis, Rue Thouin, PARIS

Այս կիրակի Վերափոխումն Տիրամօրն: Ձայնաւոր պատարագ ժամը 10,30ին եւ Խաղողօրհնէք:

Պիտի պատարագէ

Գերպ· ԿԻՒՐԵՂ ԵՊՍ· ԶՈՀՐԱՊԵԱՆ

Յունաստանի եւ Ճէզիրէի նախկին Առաջնորդը:

Երկուշաբթի Մեռելոց: Ձայնաւոր պատարագ ժամը 10,30ին հանգիստ ննջեց - եալներուն հոգիներուն համար:

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Կապոյտ Խաչի Վիէնի մանկական տարեկան դաշտահանդէսը տեղի կ'ունենայ Սեպտեմբեր 1ին, առաւօտէն մինչեւ երեկոյ «Ի-Է-Ա·»ի մարզադաշտին վրայ (Թանըրիին քով):

Գեղարուեստական ճոխ բաժին: Բանախօսութիւն, երգ, արտասանութիւն եւ հայկական պարեր:

Ճոխ պիւֆէ· աղանդերներ եւ չամիչ - րով խորոված:

Մուտքը կը հրաւիրուի պաղութի Հա - յութիւնը:

ԿԵԱՆՔԻ ՈՒՂԻՆԵՐՈՎ

Գ· Հատոր

Շուտով լոյս կը տեսնէ Ս· Վրացեանի ԿԵԱՆՔԻ ՈՒՂԻՆԵՐՈՎ (Գ· Հատորը), շուրջ 300 էջ, պատկերազարդ եւ լաթա - կազմ:

Երրորդ հատորը կը բովանդակէ Ս· Վրացեանի յուշերը կամաւորական շարժ - ման, ինչպէս նաեւ դէմքեր, դէպքեր եւ տպաւորութիւններ՝ մօտիկ անցեալէն:

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ



Մատենաշար — ՅԱՌԱՋ — կեդրոնավայր

Գին

Ֆրանսա՝ 15 Ֆր·

— Առանձ առաքումի ծախսը —

« ՅԱՌԱՋ »

ՀԱՅ ԸՆԾԱՅԱՐԱՆ

Կը փնտռուի հայ տիկին մը Հաստա - տութեանս մէջ իբր խոհարարի օգնական: Մանրամասն տեղեկութիւններու համար դիմել գրաւոր կամ անձամբ՝

École Apostolique Arménienne
3, Av. de Grandchmp
LE PECQ (S. et O.) Tél. 963-01-72

IMPRIMERIE SPECIALE
DU JOURNAL « HARATCH »
32, Rue de Trévise, PARIS (9e)

Շ. ՄԻՍԱՔԵԱՆ

Օրեր եւ Ժամեր

ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ

Ս· ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻՉ (ՓԱՐԻԶ)

Այս կիրակի, Տօն Վերափոխման Սուրբ Աստուածածնի: Այս առթիւ Փարիզի Ս· Յովհաննէս-Մկրտիչ եկեղեցւոյ մէջ պի - տի մատուցուի հանդիսաւոր պատարագ եւ պիտի տրուի աւուր պատշաճի քարոզ:

Յաւարտ պատարագի պիտի կատարուի խաղողի օրհնութիւն:

Այս երկուշաբթի, Մեռելոց: Պիտի մա - տուցուի պատարագ եւ պիտի կատարուի հոգեհանգիստ մեր ազգի բոլոր ննջեց - եալներուն ի հանգիստ: Պատարագը կը սկսի ժամը 10ին:

×

Ս· ՅԱԿՈԲ (ԼԻՈՆ)

Շաբաթ (17 Օգոստոս), Նախատօնակ երեկոյեան ժամը 5ին: Կիրակի (18 Օգոստ·), սկիզբն· ժամերգթ· առաւօտ ժամը 7,30ին: Պատարագ ժամը 10ին: Խաղողօրհնէք 11ին, Հոգեհանգիստ ժա - մը 11,30ին:

Լիոնի եւ Շրջ· Հայ Ազգային Միու - թեան Վարչութիւնը կը հրաւիրէ շրջանի բարեպաշտ հայ ժողովուրդը ներկայ ըլ - լալու 18 Օգոստոսին Ս· Աստուածածնայ տօնի առթիւ կատարուելիք արարողու - թեանց: Յաւարտ պատարագի տեղի պի - տի ունենայ նաեւ խաղողի եւ մատաղի աւանդական օրհնութիւնը:

×

ՇԱՒԻԼԻ ՄԷՋ

Պատարագ եւ աւանդական խաղողօրհ - նութիւն այս կիրակի առաւօտ:

×

ՏԷՍԻՆ

Ուրբաթ, Աղի օրհնութիւն եւ մատաղի զենում կէսօրէ վերջ ժամը 3ին:

Շաբաթ, Հսկումի արարողութիւն կէս - օրէ վերջ ժամը 6ին:

Կիրակի (18 Օգոստ·), Տօն Աստուածած - նայ· սկիզբ ժամերգութեան ժ·ը 8,30ին, հանդիսաւոր պատարագ ժ·ը 10ին, մաս - նակցութեամբ տեղւոյն երկսեռ երգչա - խումբին, ղեկավարութեամբ Պ· Գ·Մար - տիրոսեանի· երգեհոն եւ մեներգ Օր· Անժէլ Կարապետեան, խաղողօրհնէք եւ մատաղի բաշխում:

×

ԱՒԱՆԴԱԿԱՆ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ ԷՔՍ – ԼԷ – ՊԷՆԻ ՄԷՋ

ԱՅՍ ԿԻՐԱԿԻ, Ս· Աստուածածնայ Տօնակատարութեան առթիւ

Օթօքառները ժամը 9էն սկսեալ կը մեկնին Փառքին քովէն եւ կայարանէն: Իջնել լարուղիի (թելեֆերիք) կայանը, հոն Լա Շօմիէռ սրճարանի յարակից դաշտերու վրայ, պաղ ջուրի մօտ:

Ժամը 10ին կը սկսի պատարագ եւ խա - ղողօրհնէք: Ճաշէն ետք՝ բացում դաշ - տահանդէսի: Օրուան նշանաբան՝ «ՀԱՅԸ ՀԱՅ ՊԱՀԵԼ»:

Օգոստ· 17ին կը կատարուի Շողակա - թի տօնի եւ Օգոստ· 19ին Մեռելոցի պա - տարագներ՝ մատուցմամբ Օշին վարդա - պետի, մասնակցութեամբ Փարիզի եկե - ղեցւոյ դպիրներու:

ԴՊՐՈՑԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆ

Դպրոցասէր Տիկնանց վարժարանին 1963 – 1964 տարեշրջանի արձանագրու - թիւնները սկսած են: Անոնք որոնք կը փափաքին ղրկել իրենց զաւակները պէտք է այժմէն իսկ դիմում կատարեն հաստա - տութեան տնօրէնութեան:

Ա.— ՖՐԱՆՍԱԿԱՆԸ, որ տասացի կեր - պով կը հետեւի պետական լիսէներու արդիական բաժնի պաշտօնական ծրա - գրին — անգլերէն եւ սպաներէն լեզու - ներով —:

Բ.— ՀԱՅԿԱԿԱՆԸ, որ կ'օժտէ սանու - հիները հայադիտական ծանօթութիւններ - րով, հայ լեզուի, գրականութեան, հայ կրօնքի եւ պատմութեան, Հայաստանի աշխարհագրութեան մարզերուն մէջ:

Աշակերտուհիներ կ'ընդունուին ութ տարեկանէն սկսեալ: Մանրամասնու - թեանց համար դիմել հաստատութեան տնօրէնութեան:

1, Bd. du Nord, LE RAINCY (S. et O.)
Tél : 927-01-72

Դպրոցասէրի ուսման ծրագիրը կ'ընդ - գրկէ երկու ուրոյն բաժիններ:

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

ԼԻՈՆ.— Ֆր· Կապ· Խաչի Օրը կը տօն - ուի մեծ պատրաստութեամբ, 27 Հոկտ· Մոլիէրի շքեղ սրահին մէջ:

×

Փարիզահայ Տիկնանց Միութեան յիս - նամեայ յոբելեանը կը տօնուի Հոկտեմ - բեր 13ին, Սալ տը լա Շիմի:

ՀՐԱՆՏ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

51, Rue Monsieur-le-Prince, PARIS - 6e — Chèque Postal : 1278-35

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՇԻՐՎԱՆԶԱԴԷ, Երկերի ժողովածու, 10 հատոր լաթակազմ	70 Ֆր·
ՍՏԵՓԱՆ ԶՕՐԵԱՆ, Երկերի ժողովածու, 7 հատոր, լաթակազմ	56 Ֆր·
ՍՏԵՓԱՆ ԶՕՐԵԱՆ, Պապ թագաւոր, լաթակազմ	10 Ֆր·
ՍՏԵՓԱՆ ԶՕՐԵԱՆ, Հայոց բերդը, լաթակազմ	8 Ֆր·
ՎԱՀԱՆ ՏԷՐԵԱՆ, Երկերի ժողովածու, 2 հատոր լաթակազմ	14 Ֆր·
ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՒԻԹ, մեծադիր, գունաւոր նկարներով, լաթակազմ	10 Ֆր·
Վ· ԱՆԱՆԵԱՆ, Հայաստանի կենդանական աշխարհը, Բ·	8 Ֆր·
ԱՐՍԷՆ ՏԷՐՏԷՐԵԱՆ, Երկեր (Արովեան Պռոշեան, Պարոնեան)	17 Ֆր·
ՄՈՒՐԱՑԱՆ, Պատմուածքներ, գունաւոր նկարներով	5 Ֆր·
ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑԻ մասին յիշողութիւններ· լաթակազմ	7·50 Ֆր·
ՄԻՔ· ՇԱԹԻՐԵԱՆ· Գարունը նորից եկաւ· 296 էջ·	5 Ֆր·
ԱԲԳԱՐԵԱՆ· Մատենադարան(անգլ·) 18 գունաւոր մանրանկարներ	3 Ֆր·
ՀԵՆՐԻԿ ԹՈՒՄԱՆԵԱՆ· Երգի ծնունդը· բանաստեղծութիւններ	3·85 Ֆր·
Մ· ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ· Տաղեր, 200 էջ· լաթակազմ	3·50 Ֆր·
ՍՈՎԵՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ· Ա· 800 էջ· լթկզմ·	16 Ֆր·
ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ, Անլռելի զանգակատուն, Պէյրութ, 1963	10 Ֆր·

Առաքման ծախքը գնողին վրայ

ԳՐԱՏՈՒՆՍ ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻՆ Է

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՁԱՅՆԱԳՐԵԱԼ ԲՈԼՈՐ ԵՐԿԵՐՈՒՆ

ՃՈԽ ՄԹԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԵՒ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆՑ

ԼՈՅՍԸ ԳՈՅՆ Է···· ԳՈՅՆԸ ԼՈՅՍ Է

ՁԵՐ ՏԱՆԸ ԼՈՅՍ ՏՈՒԷ՛Ք···· ԹՈՄԼԱՔԻ ԳՈՅՆ ՏՈՒԷ՛Ք

Ձեր բնակարանը կը լուսաւորուի

Եթէ ներսը եւ դուրսը

ՎԵՐԱՆՈՐՈԳԷՔ – ԶԱՐԴԱՐԷՔ – ՆԵՐԿԷՔ

ԹՈՄԼԱՔ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐՈՎ

PEINTURES THOMLAC

16 bis, Bd. Sébastopol, Paris 4e

Tél. ARC 26-61 – Métro : Halles et Chatelet

136, RUE DES BOURGUIGNONS — ASNIERES - BOIS COLOMBES (Seine)
Tél : GRE. 09-47

11, BD. DE LA REPUBLIQUE — LA GARENNE (Seine)
Tél. : STA. 19-06

ԱՆՄՐՑԵԼԻ ԳԻՆԵՐՈՎ

Ամէնէն արդիական, նուրբ եւ ընտիր ճաշակով պատրաստուած՝ առաջնա - կարգ ներկեր: Բնական եւ արուեստական բազմերանգ գոյներու մեծ ընտրու - թիւն: Նորոյթ իւղաներկեր, պատի գեղեցիկ թուղթերու ճոխ ընտրութիւն: — Գետնի համար՝ ամէն տեսակ — լինոլէոմ եւ փլասթիք — ծածկոցներ· —

TAPIFLEX — TAPISOM — CARPETTE

Ձեր բնակարաններուն արտաքին եւ ներքին խնամքներուն համար անհրաժեշտ բոլոր նիւթերը:

Ամէն գնորդի կը նուիրուի յատուկ տետրակ մը, որու շնորհիւ կրնայ 10–30 առ հարիւր զեղչ ունենալ:

ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐ

52, RUE CHALON, PARIS 12e — 64, BLD. DE BELLEVILLE, PARIS 20e
166, AV. ARISTIDE BRIAND — PAVILLONS - SOUS-BOIS (Seine)
4 bis, RUE PAUL VAILLANT COUTURIER — ARGENTEUIL (S. et O.)
24, RUE PAUL VAILLANT-COUTURIER — ALFORTVILLE (Seine)
48 bis, RUE DALAYRAC — FONTENAY - SOUS - BOIS (Seine)

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

Le PREMIER QUOTIDIEN ARMENIEN en EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction et Administration : 32, Rue de Trévise - PARIS-9e

Fondé en 1925 — Téléph. : PRO. 86-60

R. C. Seine 57 A 2731 — C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա՝ Տար. 50 Ֆ. Վեցամսեայ՝ 27 Ֆ.

Արտասահման՝ Տար. 60 Ֆ. Հատը 0·30 Ֆ.

ՀԻՆԳՇԱԲԹԻ 15 ՕԳՈՍՏՈՍ

JEUDI 15 AOUT 1963

Le Numero : 0,30 Fr.

39րդ ՏԱՐԻ — ԹԻՒ 9683

Fondateur : SCHAVARCH MISSAKIAN

39e ANNÉE — N° 9683

...ր ԽՕՍՔԸ

ԵՐԿՈՒ ԱՌԱՋ, ՄԷԿ ԵՏ

...ժողովրդական պարի մը եղանակը չէ ...որ կը յիշեցնենք: Ոչ ալ բառախաղ մը կը ...փորձենք:

...Գործապէս նշանախօսք մը, որ կը բխի ...օրեան պահանջներէն: Մանաւանդ Հայ- ...ական Արտասահմանի ներկայ պայման- ...ներէն:

...Անձարկ մը դէպի ետ, եւ երկու քայլ ...առաջ:

...Ահա ուղեգիծը բոլոր անոնց որ կը յա- ...ւակնին դեր մը կատարել տարագիր բազ- ...մութեանց փրկութեան ճամբուն վրայ:

...Այս պիտի ըլլայ ձգտումը մասնաւորա- ...պէս Դաշնակցական երիտասարդութեան, ...եթէ կ'ուզէ արդարացնել իր կոչումը:

...Անձարկ մը դէպի ետ՝ իբրեւ ներշընչ- ...ման աղբիւր: Զափելով ամենի փոքրո- ...գիծներուն եւ պայքարներուն խորութիւ- ...նը: Նիւթ եւ աւիշ քաղելով:

...Բայց, առանց տառին կառչելու: Միշտ ...պատրաստ՝ անցեալ փառքերով թմրելու, ...լճացումի, քարանալու փորձութենէն:

...Նոյն կը մաշի, կը սպառի որեւէ ժա- ...ռանգութիւն, եթէ յաջորդները չկարենան ...քայլ մը աւելի յառաջ նետուիլ: Արժանիք ...ը, աշխատանք մը աւելի բարդել եղա- ...ծին վրայ:

...Ով պիտի կրնար ժխտել թէ՝ ամբողջ ...ազգային դրամագլուխն է որ կը մաշի, ...մը ծիւրի օտարութեան մէջ:

...Ահա, օրինակ, մտաւոր ուժերը:

...Որակին հետ, քանակն ալ պակսեցաւ, ...— կը պակսի — տարիներու ընթացքին: ...անոնց դաւանանքի, սեռի եւ տարիքի ...խորութեան: Եւ բոլոր ճակատներու ...վրայ:

...Հարեւանցի ակնարկով մը, կրնանք առ- ...նուազն 150 հաշուել մահացածներուն թի- ...ւը՝ վերջին պատերազմէն ի վեր: Ար- ...ուեստագէտներ, արժանիքներ, որոնք չեշտ եւ ...դրոշմ կուտային հանրային կեանքին: ...Դէմքեր՝ որոնք ոչ միայն պաշար ու- ...նէին, այլեւ կամք եւ եռանդ՝ վարու- ...ելու, չարունակելու:

...Եւ դեռ ուրիշ արժէքներ, արժանիք- ...ներ, որոնք թէեւ կանգուն են, բայց դա- ...դարած՝ ուժասպառ ըլլալու:

...Այո, քանակին հետ որակն ալ:

...Եւ բնականաբար, երբ կը պակսի ճիգը՝ ...պակասը ամբարելու յարատեւօրէն: Ան- ...ընդհատ՝ հերկելու եւ նորոգելու, նո- ...րոգուելու:

...Եթէ հարիւրէն գոնէ երկուքը ճիտի ...կարենային լրացնել այս պակասը… ...Անշուշտ համաձայն իրենց կոչումին եւ ...կարողութեանց:

...Միայն մեր գաղութին մէջ ո՛րքան ...երիտասարդներ: Ընդունակ՝ զարգանալու: ...Կան որ կէս ճամբան մնացած են կամ- ...ովին անկախ պատճառներով, — անձնական ...կամ վիճակներ:

...Ուրիշներ ալ կը տառապին հաւատքի, ...կազմակերպութեան պակասէն, ինչ որ ի ...վերջոյ կը յանգի ծուլութեան եւ պար- ...տուողականութեան:

...Իսկ հարթիչ գլանը անընդհատ կը բա- ...նի, նոյնիսկ իրենց գլխուն վրայ… ...Եւ միջակութիւնը թեւատարած կ'իշխէ ...մտաւոր անդաստանին, ինչպէս քա- ...ղաքական ասպարէզին մէջ:

...Երբ այլ ամբարտաւան մարզանք- ...ներ ամէն ճակատի վրայ: Խժալուր կան- ...չեր, ոստոստումներ եւ մնացեալը:

...Այս ընթացքով, փոխանակ երկու քայլ ...առաջ նետուելու, տասը քայլ ետ պի- ...տի կ'ըլլանք:

...Ցակաւին այսօր ալ, տեսակէտներ կան ...որ փոսուն տարրուան բոլորը կը հոտին: ...Եւ կամ օր-պակաս գլխեկլիքներ են:

...Զարաշար կը սխալին անոնք որ կը կարծեն թէ ճակատագրական է այս նըքը, օտար ափերու վրայ:

Երէկ այդքան խեղճացած չէին մարդիկ, իրապէս դժոխային պայմաններու տակ: Անշուշտ անոր համար որ, լըջօրէն կը հաւատային իրենց կոչումին: Եւ կը ջանքէին, զայն արժեցնելու համար:

Այն ատեն ալ իրար կը խաչաձեւէին զանազան հոսանքներ եւ գլխեկլիքներ:

Այն ատեն ալ, առատուն կանուխ ար- թընցողը թուղթ կը մրոտէր, առանց աջ- ձախ նայելու:

Եւ սակայն, արթուն էին « հաւա- տացեալները »:

Անոնք ճամբան կը հարթէին տքնաջան աշխատանքով: Միտք, սիրտ կը մշակէին անվհատ:

1949 Շ.

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՖՐԱՆՍԱ ՅԱՏՈՒԿ ԴԻՐՔԻ ՄԷՋ Է

Կ'ԸՍԷ ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐԸ

Նախարարաց Խորհուրդէն ետք հրա- տարակուած զեկոյցը կը յայտնէր թէ Ար- տաքին նախարարը զեկուցում մը կատա- րած է միջազգային կացութեան վրայ, մինչ գործակցութեան հարցերով զբա- ղող նախարարը տեղեկութիւններ տուած է Քամըրունի, Կեդրոն. Ափրիկէի, Տա- հոմէի եւ Թոկոյի ղեկավարներուն հետ ունեցած խօսակցութեանց մասին:

Կառավարութեան բանբերը, սակայն զանազան հարցումներու պատասխանած է, մանաւանդ Մոսկուայի հիւլէական դաշինքին վերաբերեալ: Ալէն Փէյրըֆիթ յայտնած է միայն թէ բնական էր որ Ռուսերն ու Ամերիկացիները դադրեցնեն հիւլէական այդ փորձերը զորս արդէն մեծ թիւով կատարեցին եւ որոնց այլեւս պէտք չունին: «Միակ երկիրն ենք որ կը ձեռնարկէ հիւլէական ուժի մը տեղաւոր- ման, զարմանալի չէ որ յատուկ կացու- թեան մը մէջ ըլլանք»: Ֆրանքեւզերմա - նական յարաբերութեանց մասին եղած հարցումին պատասխանելով, նախարա - րը ըսած է.— սքանչելի են: Կարգ մը մանրամասնութիւններ ալ տրուեցան Ծարտարարուեստի նախարարին կողմէ ձմեռուան ածուխի համար: Մօրիս-Պո - քանովսքի կացութիւնը պարզած է զոր- ծադուլներու վաղորդայնին: Ածուխի պահեստը պէտք է վերակազմուի:

Արդարութեան նախարարին առաջար - կին վրայ, կարգ մը անհատական որո- շումներ տրուած են:

×

ՏԱԳՆԱՊ ԱԼԺԵՐԻՈՅ ՄԷՋ

Պեն Պելլա յայտարարեց թէ Ալժերիա կը ստորագրէ Մոսկուայի հիւլէական համաձայնութիւնը: Ինչպէս կը սպաս - ուէր, Ալժերիոյ այս որոշումը մեծ դեր կրնայ խաղալ Ֆրանսայի համար: Ար - դարեւ, ըստ Էվիանի համաձայնու - թեանց, Ֆրանսա հինգ տարի կրնար օգ- տագործել Սահարան իր հիւլէական փոր- ձերուն համար, բայց անդամակցելով Մոսկուայի դաշնագրին, Պեն Պելլա կըր- նայ այլեւս առարկել թէ չի կրնար Ֆը - րանսական կառավարութեան տրամա - դրութեան տակ դնել Սահարան հիւլէա- կան փորձերու համար երբ ինք՝ Ալժե- րիա, հաւանութիւն տուած է որ այդ փորձերը դադրին:

Ասկէ զատ, երկիրը տագնապի օրեր կ'ապրի եւ շատ հաւանական կը նկատ - ուի որ Ֆերաթ Ապպաս ի վերջոյ իղէ Պեն Պելլայի վարչակարգին հետ եւ հրա- ժարի Խորհրդարանի նախագահի իր պաշտօնէն: Կը կարծուի թէ այս հրա - ժարումը պիտի հրապարակուի ուրբաթ օր:

Իր ճառին մէջ, Պեն Պելլա ընդունած է որ ամէն բան վարդագոյն չէ: Խոստովա- նած է թէ Քապիլիոյ մէջ մաքի մը գո - յութիւն ունի զոր մէջտեղ հանած են վերջերս: Ֆրանսացի թղթակիցները կը յայտնեն թէ այդ մաքին ծանօթ էր շա - բաթներէ ի վեր, բայց Ալժերիոյ լրա - տուութեան յատուկ օրէնքները թոյլ չէին տար որ հարցը հրապարակուէր: Այսօր, երբ Պեն Պելլա կը խօսի ատոր մասին, կարելի կ'ըլլայ այլեւս բացէ ի բաց խօ- սիլ:

Պեն Պելլա ըսած է նաեւ թէ բազմա - թիւ Ֆրանսացիներ ձերբակալուած են, չեշտելով «պատճառ չկայ որ քանի մը Ֆրանսացիներ որոնք մեզի օգնած են պա- տերազմի ատեն, մեր առջեւը կենան ու ըսեն «ահա ի՛նչ ուղղութիւն պէտք է առ- նել»: Ծանօթ է որ Ընկերվարական Յե- ղափոխութեան կուսակցութեան մէկ լու- րին համաձայն Էֆ. Էլ. Էն.ի ղեկավար- ներ եւ բամաթիւ Ֆրանսացիներ ձերբա- կալուած էին վերջերս:

Վերջապէս, վարչապետը պաշտօնապէս թաղած է «առանց բանտի յեղափոխու - թիւն» փորձին վերջը: «Պատրանք մըն է, յայտարարած է, մեր յեղափոխութիւնը կատարեցինք առանց կախաղան բարձրա- ցնելու ամէն փողոցի անկիւն: Կը պնդեմ թէ Պուտիաֆ իշխանավայել վարմունք կը վայելէ եւ իր բարեկամները չեն չարչար- ուիր: Խեմիսթիին ոճրագործն իսկ չենք դատած: Բայց ատիկա ըսել չէ թէ կրա- ւորական պիտի մնանք»:

Օրը Օրին

ՎԱ՛Յ ՔԵԶ…

Իմաստուն խօսքերը կարկուտին հետ երկինքէն չեն տեղար, անձրեւին տակ հողէն չեն բուսնիր, սալորին ծառը թըր- վելով չեն թափիր, դդմենին ջրելով չեն ծաղկիր:

Անոնց երկինքը, հողը, ծառը եւ ջու- րը՝ մարդկային բարձր իմացականու - թիւնն է: Դիտող աչք, դատող միտք ու- նեցող մարդոց խորհրդածութիւններ են, որոնցմէ ամէն ժողովուրդ ունի իր սե - փական գանձարանը:

Ականջի օղ ըրէ՛ք ի՛նչ գոհարներ կան այնտեղ: Անոնցմէ է ժողովրդի ադա - մանդեայ ափսոսանքը.— «Վա՛յ քեզ քա- ղաք, որոյ թագաւոր քո մանուկ է»:

Հնագոյն Աշխարհի տեսս իշխանին հա- մար ըսուած սողոմոնեան այդ խօսքը տեղին է կրկնել այսօր՝ Նոր Աշխարհի տկլոր քաղաքացիին խելքին վրայ.— վա՛յ քեզ…:

Եղելութիւնը պարզ է եւ իրական, թէեւ անհաւատալի մեր դարուն:

Անշուշտ, անցեալին ո՞վ չէ գնած Փա- րիզի էյֆէլ աշտարակը, չէ ծախած Լոն- տոնի ամրոցը. ո՞վ չէ գնած Պրիւսէլի Ջրվթան-Արձանիկը, չէ ծախած Աղեք - սանդրիոյ փարոսը. ո՞վ չէ գնած Կրեմլի- նի բամբ զանգակը, չէ ծախած Քէոփսի բուրգը. Պոլսոյ բացուող կամուրջին մէկ կէսը ո՞վ չէ գնած, միւս կէսը չէ ծա - խած…: Այս մտացածին առեւտուրին անխելք զոհը կայ անցեալին, բայց նմա- նը տեսնել մե՛ր օրերուն, ա՛յս օրերուն, պարզապէս անհաւատալի է:

Լուրը Հռոմէն է եւ մամուլի միջազ - գային գործակալութիւններէն հաստատ - ուած:

Վերջերս, ամերիկացի այցելու մը Հռոմի պատմական յուշարձաններու հըս- կային, կայսերական կրկէսին՝ Քոլոս - սէումի դրան առջեւ կեցած, ափիբերան կը դիտէ եւ աչքերը գոց կ'երազէ:

Ի՞նչ կը դիտէ: Հաւանաբար ոչի՛նչ: Հարիւրամեայ երկրի մը զաւակ, հազար- ամեայ այդ քարը իրեն չի խօսիր:

Ի՞նչ կ'երազէ: Վստահաբար ոչի՛նչ: Հռոմէական անհաս պատմութիւնը երա- զելու համար, աչքերը գոցել չի բաւեր:

Տկլոր Ամերիկացիին միտքէն ի՞նչ կ'անցնէր: Վերը Աստուած գիտէր… վա- րը՝ արթուն իտալացի անցորդ մը կը գուշակէ:

Ժամ չանցուցած, նոյն օրն իսկ Իտա- լացին կ'երթայ Ամերիկացիին պանդոկը եւ պաշտօնապէս, յանուն Հռոմի քաղա - քապետին՝ կ'առաջարկէ Քոլոսսէումը ի- րեն վարձել:

Միամիտ Ամերիկացին՝ ի ծնէ վարժ, սորված, համոզուած թէ ամէն ինչ ծա- խու է եւ գնելի այս աշխարհիս վրայ, առանց այլեւայլի կ'ընդունի առաջարկը եւ կը համաձայնի ծախու գինին համար: Աւելի՛ն: Գործը չփախցնելու համար, վրան ունեցած չունեցած հինչուն դրամը, 200.000 լիրը կուտայ իբրեւ կանխա - վճար, թախանձագին խնդրելով միջնոր- դէն որ գործը ուրիշին չառաջարկէ: Եր- կուստեք ուրախ են, կը ժամադրուին՝ նոյն երեկոյեան Հռոմի քաղաքապետա - րանի դրան առջեւ, պայմանագրութիւնը պաշտօնապէս ստորագրելու համար:

Իտալացին ձեռքերը շփելով կը մեկնի, Ամերիկացին աչքերը շփելով կ'երազէ՛…

Կ'երազէ՛ իր պայծառ բախտին: Կ'երա- զէ կայսերական հին կրկէսը վերածել շտապ-ըմպարանի մը՝ նորաշխարհեան «սնաք-պառ»ի: Եւ հո՛ն, ուր անցեալին Ներոնն իր օթեակին մէջ նստած՝ գա - զաններու թափած արեան հոսիլը կը դի- տէր, վաղը՝ ինքը անոր տեղը բազմած, այցելուներուն խմած « քոքա-քոլա »յին հոսիլը պիտի դիտէր, դրամին հոսիլը պիտի դիտէր, տոլար պիտի դիզէր…:

Հին Աշխարհի պատմութիւնը իր նամ - բով, Նոր Աշխարհի առեւտուրը իր նամ- բով:

Ժամադրութիւնը եւ բախտը չկորսըն- ցնելու համար, երազը չաւարտած, շուն- չը հատած՝ վազելով քաղաքապետարա - նին դրան առջեւ կը հասնի: Անխելք Ամե- րիկացին դեռ կը սպասէ, աչքը բաց Ի- տալացին դեռ պիտի գայ:

Օրերով սպասելէ ետք, տկլոր Ամերի- կացին՝ բախտն անիծելով, իր երկիրը կը վերադառնայ: Այնտեղ, դուռ դրացիին գլխուն եկածը պատմելով, կ'ըսէ ու կը կենայ թէ Եւրոպացին՝ առ հասարակ, Իտալացին՝ մասնաւորաբար, հօրմէ որդի գողեր են: Ամէնուն առջեւ կը գանգատի թէ բախտ չունի:

Կեանքի մէջ է եղեր՝ թէ թըթախաղի, կորսնցնողին ափսոսանքի յանկերգը մի՛շտ նոյնն է: Ամէն մարդ իր բախտէն կը գանգատի, ոչ ոք իր խելքէն: Քար - թէզեան իմաստուն խօսք մըն ալ, ա՛յս մէկը:

Վա՛յ քեզ…:

ՇԱՀԷՆ

Աստուածածնայ տօնին առթիւ, Յառաջ լոյս չի տեսներ վաղը՝ ուրբաթ: Մեր յաջորդ թիւը Շաբաթ Օգոստ 17: Խմբ- բագրատունը փակ է Հինգշաբթի:

ԴԷՊԻ ԽԱՂԱՂ ՀԱՄԱԿԵՑՈՒԹԻՒՆ

Պաղ պատերազմէն կազմուած սառոյցին մէկ կողմը հալիլ սկսաւ, կը մնայ սպասել հոսանքին ուղղութեան: Հիւլէական համաձայնութիւնը գոհունակութեամբ ողջունուեցաւ, որպէս մխիթարութիւն չինեւխորհրդային անհամաձայնութեան: Մարքսի աշակերտներուն երկուստեք անզիջողութիւնը նոր սառնակոյտի մը կազմութիւն կը պատճառէ: Վերջին պահուն Միկոյեան անակնկալ միջամտութիւն մը կատարեց, Խրուշչեւ զինք առաջ կը մղէ գորդեան հանգոյցներ լուծելու, բայց անօգուտ: Թղթակից մը զինք կը նմանցնէր քահանայի մը, որ կը փութայ մահամերձին վերջին հաղորդութիւնը տալու: «Ստոյգ է, որ Միկոյեան ուսում առած էր Էջմիածնի հայ դպրեվանքին մէջ եւ կրնար քահանայի պաշտօն կատարել, բայց մահամերձը այս անգամ չինեւխորհրդային խաղաղութեան բանակցութիւնն էր, որ պէտք չունէր հաղորդութեան»:

Հիւլէական համաձայնութեամբ երեք պետութիւնները կը յուսան արգիլել ուրիշներու հիւլէական պետութիւն մը ըլլալը: Խորհրդայինը պէտք է վախնայ Չինէն, որովհետեւ կը պատրաստուի հիւլէական փորձեր կատարելու, այն ատեն աւելի բարձր պիտի խօսի, աւելի պահանջկոտ պիտի դառնայ, աւելի վտանգաւոր: Հաւանական է, որ Խորհ. Միութեան վարիչները զղջացած ըլլան, որովհետեւ Փեքինի օգնած են: Ստալին Վրաստանի հին թագաւորներուն նման կը մտածէր. «Ջախջախէ օձը հաւկիթին մէջ»: Եւ սակայն տարօրինակ պիտի ըլլայ ընկերներու միջեւ պատերազմը, հակադրութիւնը զօրաւոր, կան համակիրներ եւ հակակիրներ երկու երկիրներու հանդէպ եւրոպական համայնավարութեան եւ հարաւ-ասիական համայնավարներու մէջ:

Հիւլէական Ակումբի անդամները բաւական մթերք ունին իրար քանդելու համար: Զօր. Կալուայի տեսութեան համաձայն, «հիւլէական մեծ պետութեան մը դիմադրելու համար անհրաժեշտ չէ նոյնքան հիւլէական ուժ ունենալ: Դանիա եթէ ընդծովեայ մը ունենայ՝ Փոլարիսով զինուած, կրնայ անդամալուծել Խորհ. Միութիւնը, որ կրնայ գրաւել եւ կործանել փոքրիկ երկիրը, բայց ան ալ կրնայ տասը քաղաք ոչնչացնել»: Հիւլէական ռումբերով զինուած ռազմանէր Փեքինը կրնայ յիսուն միլիոն Ռուսեր սպաննել եւ երեք հարիւր միլիոն կորուստ ունենալ, մնացածը կը բաւէ դէպի հիւսիս արշաւելու համար:

Չինաստան կը հեռանայ Խորհ. Միութենէն, Մոսկուա աւելի կը մօտենայ արբանեակներուն, որպէսզի չվարակուին չինական համաճարակով: Պելկրատէն ետք Պուքրէշ ալ անկախութիւն կը փորձէ, Մոսկուա կը ջանայ տնտեսական աւելի սերտ միութիւն հաստատել, արեւելեան հասարակաց շուկան ամրացնելով:

Արեւմտեան շուկան մաքսային դրութեամբ իրեն կրնայ ձգել արբանեակներու արտածումները, աւելի օժանդակութիւն կրնայ բերել չէզոքներուն, բարեկեցութեան ծաւալումով Արեւմուտքի մէջ կը տկարանայ համայնավարութիւնը: Մոսկուա կը տեսնէ Մարքս-Լենինեան սկզբունքներու ժխտումը՝ զանգուածներու ստախօսնական ազգատացումը, ներքին անբուժելի հակասութիւնները:

Խրուշչեւ կ'ընդունէր Հասարակաց Շուկայի յաջողութիւնը: Արեւելեան Գերմանիոյ Երիտասարդական Միութեան թերթի վարիչ Կերհարտ Էյսլեր կը յայտարարէր, թէ որդեգրելու է «դրամատիրական մեթոտներ», որովհետեւ եօթնամեայ ծրագիրը չէ իրականացած: Իշխանապետն ալ, Ուոլթըր Ուլպրիխթ, կ'ընդունէր, որ երկրագործութեան եւ ճարտարարուեստի մէջ ետ մնացած են, վարչաձեւը ստիպուած է դիմելու դրամատիրական մեթոտներու:

Դրամատիրական եւ համայնավարութեան սկզբունքները հակադիր են, բայց երկուքն ալ կը հոլովեն, մէկը դէպի ձախ, միւսը դէպի աջ: Իրականութեան մէջ գոյութիւն չունի հարիւր առ հարիւր դրամատիրութիւն, որովհետեւ բազմաթիւ ձեռնարկներ պետականացած են, ընկերային ապահովութիւնը ընդունուած, կայ անհատական սեփականութեան յարգանք, թոյլտուութիւն անհատական ձեռներէցութեան, բայց տուրքերու համեմատական դրութեամբ ազգային եկամուտի աւելի արդար բաշխում հաստատուած է:

Համայնավար աշխարհին մէջ ալ աւելի ազատութիւն կը պահանջեն: «Պէտք է ընդլայնել ճարտարարուեստական ձեռնարկներու իրաւունքները», կը գրէ տնտեսագէտ Լիպերման: Մասնագէտներ ալ առաջարկեցին ճարտարարուեստի համար ապակեդրոնացում, բայց մերժուեցան առանց դատապարտուելու Մալենքովի նման: Համոզուած են, թէ հաւաքական արդիւնաբերութիւնը անկարելի է: Շատ տեղեր գիւղային անհող է հունձքի ատեն, վարիչներ դաշտերը կը դրկեն բանուորներ եւ ուսանողներ: Չկայ գործակցութիւն տեղական վարչութեան եւ կեդրոնական իշխանութեան միջեւ: Կը միջամտէ տեղական կոմիտէն, պաշտօնեաները միջամուխ կ'ըլլան ամէն գործի, յայտնի չէ թէ ո՛վ է պատասխանատուն:

Երկու դրութիւնները շարունակելով իրենց ուղիները, հետզհետէ կը մերձենան եւ հաւանաբար հաւասարակշռութիւնը հաստատուի Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ: Խորհրդային քաղաքացին աւելին կը պահանջէ, կենցաղի մակարդակի բարձրացում կը յուսայ, երկրագործը դրամագլուխ կ'ուզէ: Խրուշչեւ կ'առարկէ, թէ ազգային եկամուտը յատկացնելու է սպառազինումի, միանգամայն կը խոստանայ արտադրութիւնը աւելցնել, Ամերիկայի մակարդակին հասնիլ: Ապազինումը կը թեթեւցնէ զինուորական պիւտճէն, բայց արտադրութիւնը աւելցնելու համար դիմելու է ստիպողաբար «դրամատիրական մեթոտներ»ու, երկրագործը սեփական հող ունենալու է, բանուորը աւելի լայն բաժին ճարտարարուեստի վարչութեան: Առով մէկտեղ անկարելի պիտի ըլլայ Ամերիկայի մակարդակին հասնիլ: 1960ին Խորհ. Միութիւնը երկու հարիւր տասնեւչորս միլիոն բնակչութեամբ 235 միլիառ տոլար ազգային եկամուտ ունեցաւ, մինչդեռ Ամերիկա հարիւր ութսուն միլիոն բնակչութեամբ 504 միլիառ տոլար: Ամերիկեան յառաջդիմութիւնը աւելի արագ է, մրցելու համար մրցակցին մեթոտները որդեգրելու է, փոխելու է դրութիւնը: Ֆրանսայի Նախագահը մերժելով մէկտեղ տնտեսական ազատականութեան սկզբունքը, կ'ընդունէր անհատական սեփականութեան եւ նախաձեռնութեան յարգումը: Զինուորական ծախքերու նուազումով աւելի դրամագլուխ յատկացնել երկրագործութեան, բաւարար չէ արտադրութիւնն աւելցնելու համար: Երկրագործին ազատ աշխատանքը, մեքենային ու հունձքին հողածութիւնը անհրաժեշտ է: Այս է որ կը շեշտեն մասնագէտներ եւ նոյնիսկ համոզուած ուղղափառներ:

Խորհրդային քաղաքացիին բարոյական մակարդակը աւելի վար իջած է, գեղծումները սովորական են, անհատներ կը հարստանան, քաղաքացիներ՝ որոնք պարկեշտութիւն կ'ուզէին տեսնել համայնավար վարչակարգին տակ, յուսախաբ եղած են մառեշալ Թիթոյի երկրին մէջ: Հաւաքական սեփականութեան դաստիարակութիւնը պաշտօնէութեան համար կեղծիք մըն է: Թիթօ գաւազանը ձեռք առած կը շրջի գրասենեակէ գրասենեակ, քննելու համար պաշտօնեաներու եկամուտները, բնակարաններու կահաւորումը: «Պաշտօնեաներ ճշդապահ չեն, յաճախ կը բացակային եւ ամսուան վերջին օրերը գրասենեակ կը հանդիպին՝ թոշակներ գանձելու համար: Ամերիկեան տոլարները փոխանցուեցան Իտալիոյ, Գերմանիոյ՝ ինքնաշարժ, սառնարան, հեռատեսիլ ստանալու համար»: Մառեշալը ամբաստանեց դրութիւնը, ամբաստանեց մարդը: Վերջինը փոխելու համար կը մտադրէ փոխել առաջինը, մերձենալ արեւմտեան դրութեան: Այն ատեն վարիչները փոխուելու են, այդ ալ անկարելի կը թուի, որովհետեւ յամառօրէն կառչած են աթոռներու պրոլետարներու իշխանութիւնն ապահովելու համար:

ԽՈՐԷՆ ԳԱԲԻԿԵԱՆ

ՇԻՄՈՆ ՀՈԼՈՇԻ

Անիի կործանումէն ետք հայ բազմաթիւ ընտանիքներ երկար դեգերումներէ յետոյ իրենք զիրենք գտան Խրիմ եւ Մոլտովիա, այնտեղէն ալ անոնց մէկ մասը ԺԷ. դարուն հաստատուեցաւ Թրանսիլվանիա: Այստեղ անոնց շնորհուած առեւտրական արտօնութիւնները հնարաւորութիւն տուին շատերուն հասնելու բարեկեցիկ վիճակի մը:

Այդ ընտանիքներէն մէկին մեծ հայրը 1736ի ծնունդներու տոմարին մէջ արձանագրուած է՝ «Խաչիկ Օրոպոնճէր անունին տակ եւ՝ «Ալեքս Խրիստափորուս Կօրբուլ» անունով: Այս երեւոյթը կարելի է բացատրել հետեւեալ ձեւով, այն որ հայկական կենցաղը եւ սովորութիւնները, անունները եւ լեզուն պահպանած այդ ընտանիքին անդամները, իրենց միւս ազգակիցներուն հետ միասին, ինչպէս այդ ժամանակ ընդունուած սովորութիւն էր, կ'առնէին նաեւ լատինաձեւ անուն-մականուն: Հարիւր տարի ետք սովորութիւն դարձաւ լատինաձեւ անուն-մականունները թարգմանել հունգարերէնի եւ այդպէսով՝ Կօրբուլը (Քորպիլլի=ագռաւ) դարձաւ՝ Հոլոշի (Ագռաւեան):

Այդ ընտանիքին յետնորդներէն էր Շիմոն, որ արդուզարդի խանութ մը ունէր Մարամարոշսիգէտ քաղաքին մէջ: 1857ին կը ծնի Շիմոնի որդին, որուն կու տան իր հօր՝ Շիմոն անունը: Ահա այս Շիմոնն է, որ յետագային կը դառնայ հանրածանօթ նկարիչ մը, հունգարական երփնագիրի ամէնէն ինքնատիպ ներկայացուցիչներէն մէկը:

Հայրը փոքրիկ Շիմոնը կ'ուղարկէ մայրաքաղաք, որպէսզի ուսանի: Այնտեղ ան կ'ընդունուի նկարչական դպրոց, բայց տարի մը ետք, ուսումը կէս ձգած, կը վերադառնայ տուն: Բարեբախտաբար, չի հրաժարիր իր սիրած արուեստէն: 1878ին կը մեկնի Միւնիխ, ուր կը մտնէ Բազմարուեստից ակադեմիան եւ հինգ տարի ետք կ'աւարտէ: Հունգարացի ծանօթ արուեստաբան Լայոշ Նեմեթ, որ լաւագոյն ծանօթ է Հոլոշիի կեանքին եւ գործունէութեան, նկարիչին նուիրուած իր մենագրութեան մէջ, հրատարակուած Փեշտ 1956ին, կը գրէ, թէ ակադեմիան աւարտելէ ետք հայածին նկարիչը կամ պէտք է ընտրէր արդէն մաշած ակադեմական պատմանկարչութեան ուղին, կամ կենցաղային երփնագիրեր (մանրավէպերու վերարտադրութիւն), եւ կամ ալ այն ժամանակուան ընտրոշումով՝ բնապաշտութեան, որ Ֆրանսայէն Միւնիխ եկած էր, եւ որուն ներկայացուցիչները համախմբուած էին Աստ Բեմ գերմանական ընկերութեան եւ Թատերագիր Կերհարտ Հաուփթմանի շուրջ:

ՀԱՄԱՅՆԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԴԵՐԸ

ՌՈՒՍԵՒԹՈՒՐՔ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆՑ ՄԷՋ

1919–1922

Պաքուի մէջ Հալիլ փաշայի գործունէութիւնը դրոշմուեցաւ հետաքրքրական երկդիմութեամբ մը: Արդարեւ, Մուսաւաթ կուսակցութեան կառավարութեան հետ հաստատած կիսապաշտօնական յարաբերութիւններէն անկախաբար (անոնցմէ փոխառութիւն մը խնդրեց Մուսթաֆա Քէմալի անունով), միեւնոյն ատեն Պաքուի մէջ շփումներ ունեցաւ համայնավարներու խափանարարական շարժման հետ:

Ինչ կը վերաբերի այս վերջին գործունէութեան, պիտի տեսնենք, որ Հալիլ փաշա արձանագրեց նուազ յաջողութիւն, քան Տոքթ. Ֆուատ Սապիթ, որ իրմէ առաջ հասած էր Պաքու՝ 1919ի Հոկտեմբեր ամսուան կէսերուն: Իր առաջին տեղեկագրին մէջ կը կարդանք, որ պոլշեւիկները իմանալով եւ անդրադառնալով թէ Անատոլուի խորհրդայնացումը պիտի հանդիպի ընկերային եւ տնտեսական հանգամանք ունեցող արգելքներու, ինչպէս նաեւ Թուրք ժողովուրդին աւանդութիւններուն, իրեն խոստացած են դրամական օժանդակութիւն:

Դենիկինի կամաւորական բանակին պարտութենէն ետք, Հալիլ փաշայի եւ Ֆուատ Սապիթի անջատ խումբերը, որոնք մինչ այդ անջատաբար գործած էին, միացան իրարու, եւ խառն ժողովի մը մէջ տուին հետեւեալ որոշումները(1).

1.— Վար առնել «Մուսավաթ»կուսակցութեան կառավարութիւնը եւ կազմել կառավարութիւն մը, որ լեզու պիտի գտնէր պոլշեւիկներուն հետ:

2.—Կազմել ընդհանուր գործունէութեան կոմիտէ մը, ռազմական գործողութեանց, լրտեսութեան եւ քարոզչութեան գործերով զբաղող երեք ենթաբաժանումներով:

3.— Խնդրել Կարմիր Բանակէն, որ Պաքուն գրաւէ միայն՝ Թուրք համայնավար կուսակցութեան պահանջին վրայ:

Մասնաւորաբար անյետաձգելի կը նկատէին պոլշեւիկ Խորհուրդին, այսինքն՝ Սովնարկոմի հետ համաձայնութիւն կնքելը եւ Թուրք դիւանագիտական ներկայացուցիչի մը առաքելութիւնը Մոսկուայի մէջ:

Քեազըմ Քարապէքիր փաշա այս տեղեկագրին վրայ հիմնուեցաւ՝ խմբագրելու համար հետեւեալ յանձնարարութիւնը, որ կը կրէ 1920 Ապրիլ 18 թուականը, եւ որ պիտի տրուէր Մոսկուա ուղարկուելիք զինուորական լիազօր պատուիրակութեան (2).

1.— Համաձայն ենք պոլշեւիկներուն հետ գործակցելու աշխարհակալ կառավարութեանց դէմ գործողութեանց եւ այս վերջիններուն կողմէ ճնշուած ժողովուրդները ազատագրելու համար:

2.— Այն պարագային, որ պոլշեւիկեան զինուորական ուժեր գործողութեան անցնին Վրաստանի դէմ, կամ եթէ իրենց քաղաքականութեամբ ու բանեցուցած ազդեցութեամբ պատճառ դառնան որ Վրաստան ամբողջովին ընդունի պոլշեւիկեան վարչաձեւը եւ պոլշեւիկներու հետ դաշինք կնքելով՝ զինուորական գործողութեանց ձեռնարկէ անգլիական ուժերուն դէմ, զանոնք երկրէն վտարելու առաջադրութեամբ, Թուրք կառավարութիւնն ալ, իր կարգին, յանձն կ'առնէ զինուորական գործողութեանց սկսիլ աշխարհակալ Հայկական կառավարութեան դէմ, եւ պարտադրել Ատրպէյճանի կառավարութեան, որ ամբողջովին ընդունի պոլշեւիկեան սկզբունքներն ու հետապնդած նպատակները, եւ յարի պոլշեւիկեան պետութիւններու խումբին: Ահա թէ ինչու անհրաժեշտ չենք նկատեր ռուսեւպոլշեւիկեան զինուորական միջամտութիւնը՝ Ատրպէյճանի դէմ:

3.— Թուրք զինուորական ուժերը պիտի գրաւեն այժմ Հայկական կառավարութեան վարչակարգին ներքեւ գտնուող մահմետական մեծամասնութիւն ունեցող շրջանը եւ զինուորական ուժեղ կազմակերպութեան մը շնորհիւ, պիտի որոշեն այդ շրջանին վարչական դրութիւնը:

4.— Ապահովելու համար աշխարհակալ կառավարութեանց դէմ լուռ պոլշեւիկեան սկզբունքներու եւ ծրագրի ձեռնարկուելիք գործողութիւնները, Թուրքիա պոլշեւիկեան կառավարութենէն կը պահանջէ նուազագոյն օգնութիւն՝ դրամական, սննդանիւթերու եւ ռազմամթերքի տեսակէտէն:

5.— Այլ հարցերու մասին բանակցութեանց եւ դաշինքի մը ստորագրման իրաւասութիւնը կը պատկանի Անգորայի Կոմիտէին կողմէ ներկայացուցչական Մոսկուա ուղարկուելիք լիազօր պատգամաւորութեան մը:

Թէեւ փոփոխութեանց ենթարկուած, Քեազըմ Քարապէքիրի այս ծրագիրն է, որ Մուսթաֆա Քէմալ իբր հիմ առաւ, 1920 Ապրիլ 26 թուակիր իր նամակին, որ ուղղուած էր Լենինի՝ որպէս Սովնարկոմի նախագահ (3):

(Շար. – 3)

1) Քեազիմ Քարապէքիր, Իսթիքլալ Հարպիմիզ, Պոլիս, 1960, էջ 610:

2) Քեազիմ Քարապէքիր, նոյն գիրքը, էջ 633–634:

3) Տի Վէլթ տէս Իսլամս, հատոր 6, էջ 205:

Հոլոշին կ՚ընտրէ այս վերջին ուղղու-թիւնը:

Երիտասարդ նկարիչը իր ծննդավայրին պատկերութիւնները կը պատկերացնէ իր տեսութեան մէջ: Արդարեւ, Քարփաթեան լեռնաշխարհի գունեղ տեսարանները, ո-րոնք շատ կը սիրէր ինք, իր արուեստին մէջ բերին լճարին ոճը, կրքոտ եւ յա-տուկ գոյնաւորումներ, իսկ ամէնէն աւելի՝ իր դէպի մարդը: Խառնուածքով գնչու էր, բայց միեւնոյն ատեն անոր մէջ գո-յ էր պատուախնդրութեան զգա-ցում, որ ժառանգած էր հօրենական գեղէն:

Միեւնոյն ատեն շատ լաւ դաստուոր էր: Զգացուեցաւ, որ իրեն համար ալ ան-հրաժեշտ՝ Հոլոշին դարձաւ երիտասարդ նը-կարիչներու, մասնաւորապէս Գերմանիա ուսանող Հունգարներու առաջնորդը: Նկարիչներու այդ խումբը, 1880էն սկըս-եալ, կը ճանչցուին իբրեւ «Հոլոշիի դըպ-րոց», «բնապաշտութեան դպրոց», «Հունգարական կազմաւորուող բնա-պաշտական դպրոցի կեդրոն» անուննե-րուն տակ:

Այդ դպրոցին ոճը լաւագոյն ձեւով ար-տայայտուած է նկարիչին սկիզբի շըր-ջանի գործերուն մէջ՝ «Գլխաշորով աղ-ջիկը», «Այր մարդու դիմանկար» եւ մանաւանդ անոր առաջին մեծագիր գոր-ծին՝ «Եգիպտացորենի կեղեւահանը»

Տասնըեօթը տարի Հոլոշին կ՚ապրի, կը մնայ անխախտ կապերով կապուած իր հունգարական հայրենիքին, անոր քաղաքական, ընկերային յուզող հարցե-րուն: Այս պարագան առանձնապէս նկա-տելի կը դառնայ, երբ դիտենք հունգա-րական գրականութեան եւ պատմութեան նիւթեր շօշափող անոր գործերը, որ ստեղծուած են իր Հունգարիա վերա-դառնալէն անմիջապէս յետոյ, 1895ին:

«Իրինյիի դրոհը» կտաւին մէջ պատկե-րացուած է Հունգարիոյ պատմութեան մէկ կարեւոր դրուագը: Բոլոր այն կռիւ-ներէն, որ հունգար ժողովուրդը 150 տարի անընդհատ մղած է Թուրք հրոսա-կներու տիրապետութեան դէմ, անտարա-կոյս ամէնէն դիւցազնականը Սիկետուար բերդին պաշտպանութիւնն է, զօրավար Միքլոշ Իրինյիի գլխաւորութեամբ: Այդ պաշտպանութիւնը յետագային անմահա-ցուած է զօրավարին համանուն Թոռը իր «Սիկետի պաշարումը» երկին մէջ:

Հոլոշի Հունգարիա վերադարձաւ յա-տուկ պատճառներով: Տնարոյծ նկարիչ-ներու ազմկոտ թոհուբոհը կը սպառնար ժառացութեան մատնել արտասահմանի մշակութային կեդրոններու մէջ Հուն-գարիան ներկայացնող նկարիչներու ամ-բողջ սերունդի մը ուսուցիչ արուեստա-գէտը: Ու մինակ չվերադարձաւ: Իրեն հետ վերադարձան նաեւ իր աշակերտնե-րը, բոլոր անոնք, որոնք կը կազմէին «Հոլոշիի շրջանը»:

Բոլորն ալ հաստատուեցան Նաթփանիա քաղաքը եւ շարունակեցին Միւնիխի մէջ իրենց սկսած գործը: Սկսաւ «Նաթփան-եան դպրոցի» սուր պայքարը ընդդէմ Փեշտայի «Կերպարուեստի Ընկերու-թեան», որ դրեթէ հաստատած էր իր մենաշնորհը Հունգարիոյ մայրաքաղաքին գեղարուեստական կեանքին մէջ: Դըժ-բախտաբար, իր աշակերտներէն շատերը փնտռեցին օգտակար շահեր եւ այս ի-մաստով յարաբերութեան մէջ մտան Փեշտայի զօրաւոր Ընկերութեան հետ, որուն նկատմամբ, սակայն, ինքը՝ Հոլո-շին մնաց միշտ անհաշտ դիրքի մը մէջ:

Ընտանեկան կեանքի մէջ ալ դժբախտ եղած է:

Հակառակ անոր, որ իր հիմնած դըպ-րոցը հունգարական թեւատարած բնու-թիւնը լաւագոյն ձեւով ներկայացնող ե-ղաւ, ու այդ իրողութիւնը միշտ կապ-ուած մնաց իր անունին հետ, այսուհան-դերձ իր կեանքին վերջը անցուց մինակ ու լքուած:

Հոլոշի, հայ նախնիքներու այդ ժա-ռանգորդը, որ դարձաւ հունգար կերպ-արուեստի ամէնէն ինքնատիպ ներկայա-ցուցիչներէն մէկը, ձգած է հարուստ ժառանգութիւն մը:

Ծագումով Հայ, բայց հայերէնին ար-դէն չտիրապետող արուեստագէտը ան-տարակոյս կը պատկանի հունգար նկա-րիչներու ընտանիքին, սակայն այնքան անտարակուսելի է, որ անոր անունը պէտք է իր տեղը ունենայ պատմութեան դժբախտ բերումով տարագրուած հայոր-դիներու յիշատակը յաւերժացնող յիշա-տակարանին մէջ:

ՏՑԵՐԴ ՌԱՏՕ

(Հունգարացի գրագէտ)

ԿԱՐԺԷ ԳԻՏՆԱԼ

Իրենց տեսքով, սարդերը ունին նող-կալի երեւոյթ մը. անոնք, մեծ կամ փոքր — բացառութիւն ըլլալով եղիպ-տական ապուշեպէկ կոչուած թունաւոր սեւ սարդը — ոչ միայն անվնաս, այլ նաեւ շատ օգտակար կենդանիներ են:

Իւրաքանչիւր սարդ, տարեկան միջին հաշուով կ՚ուտէ 10.000–12.000 ճանճ (օ-րական 30–40 հատ): Հետեւաբար հիւան-դութիւններու եւ անհանգստութեան աղ-բիւր հանդիսացող ճանճերը փճացնելու միջոց մըն է:

Սարդերու օգտակարութիւնը կը տես-նենք նաեւ երկրագործութեան մէջ, ուր անոնք կը հալածեն ու կ՚ոչնչացնեն բու-սականութեան վնասող բազմաթիւ մի-ջատներ: Անոնք կը սպաննեն վնասակար միջատներու զանգուածներ, որոնք եթէ ապրէին, աղէտ պիտի ըլլային երկրա-գործութեան համար:

Սարդերու ծանօթ տեսակներուն թիւը 400էն աւելի է: Անոնք կրնան տոկալ շատ երկար ծոմապահութեան եւ բազմաթիւ տեսակներ կ՚ապրին երկար տարիներ:

ԱՆՀԵՏԱՑՈՂ ՍԵՐՈՒՆԴԸ

Յանձին ընկեր Լեւոն Թաշճեանի հա-ւատաւոր Դաշնակցական մը եւս յաւէտ բաժնուեցաւ մեզմէ:

Ծնած էր Սեբաստիոյ Իշխան գիւղը, բարեկեցիկ ընտանիքի մը մէջ: Խառ-նուածքով ըմբոստ, պատանի տարիքէն իսկ բախումներ եւ ընդհարումներ կ՚ու-նենայ իր տարեկից Թուրքերու հետ, ո-րոնք այս ու այն առիթներով կը խոչ-տանգէին իր համագիւղացի ընկերները:

Հօրը պնդումներուն վրայ, 1914ին կը ձգէ հայրենի գիւղը եւ կը մեկնի Մ. Նա-հանգներ, ուր եւ կը մտնէ Դաշնակցու-թեան շարքերը: Առաջին համաշխարհա-յին պատերազմին կը մեկնի Կովկաս եւ 1916ին մեծ զրկանքներով կը հասնի Եր-զնկայ, ուր Սեբաստիոյ տխուր դաւա-կը՝ Մուրատ կենաց եւ մահու զուպարի մէջ էր: Իր յանդուգն կեցուածքին եւ քաջութեան շնորհիւ ուշադրութիւնը կը գրաւէ Սեբաստացի կորիւնին եւ կը դառ-նայ անոր անբաժանելի եւ վստահելի զի-նակիցը: Նահանջի դժնդակ օրերուն, Երզնկայէն մինչեւ Կովկաս Լեւոն մեծ նուիրումով եւ կորովով միշտ կը մնայ կռուի առաջին գիծերուն վրայ: Կովկասի մէջ կ՚անցնի Անդրանիկի զօրագունդը:

Հայաստանի խորհրդայնացման հետե-ւանքով ստեղծուած գեհենը, պատճառ կը դառնայ, որ Լեւոն հեռանայ հայրենիքէն եւ Պոլսոյ ու Պուլկարիոյ ճամբով, մեծ դժուարութիւններով հաստատուի Ֆրան-սա՝ Լասիօթա ծովահայեաց քաղաքը: Մեր տարաբախտ ընկերը հոս եւս կը նուիրուի ազգային եւ կուսակցական օ-րինակելի աշխատանքներու: Առաւելա-բար իր ջանքերով կը հիմնուի տեղւոյն եկեղեցին եւ Դաշնակցութեան կազմը:

Այս քանի մը տողերը իբրեւ փունջ մը ծաղիկ իր յիշատակին:

Ա. ԱՐՄԱՂԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐԵԱՆ ԼՈՆՏՈՆ ՊԻՏԻ ԵՐԹԱՅ

Անգլիոյ մէջ տեղի պիտի ունենայ ռու-սական երաժշտութեան նուիրուած փա-ռատօն մը: Այս առթիւ Սեպտեմբեր 16ին Անգլիա պիտի երթայ նաեւ Արամ Խաչա-տրեան ղեկավարելու համար Մոսկուայի համանուագախումբը:

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԵՐԿՈՒ ՄՐՑԱՆԻՇԵՐ

Ծանրութիւն վերցնելու երկու համաշ-խարհային մրցանիշեր հաստատեցին եր-կու երիտասարդներ՝ Հայաստանցի Վլա-տիմիր Կիզողեան եւ Լիթվանիա ապրող՝ Եդուարդ Մկրտումեան: Միջին ծանրու-թեան ճիւղին մէջ առաջինը վերցուցած է 132,5 քիլօ, իսկ երկրորդը՝ 135 քիլօ:

ԳԱՂՈՒԹԷ ԳԱՂՈՒԹ

ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ ՄԸ ՊԵՐԼԻՆԻ ՄԷՋ

Պերլինի հայ գաղութը այցելութիւնը վայելեց Փարիզէն մայրաքաղաքս եկած Պ. Վ. Մելիքեանի: Շաբաթ Օգոստոս 3ին երեկոյեան տեղի ունեցաւ հայկ. հաւա-քոյթ մը, ուր խօսեցաւ մեր հիւրը լայնօ-րէն վերլուծելով գաղութներու կազմա-կերպութեան հարցը, եւ մասնաւորապէս պատկերացնելով Փարիզի հայ գաղութին կեանքը:

Զանազանելով մանաւանդ Եւրոպացի-ներու գաղութարարական հին շարժում-ները, պէտք է, ըսաւ, գաղութ բառին իմաստը լաւ ըմբռնել հայկական տեսա-կէտով: Հայերը տեղահանուած եկած են օտար երկիրներ եւ իրենց գոյութիւնը կ՚ուզեն պահել իբր համայնք:

Բանախօսը ծանօթացուց ներկաները Փարիզի հայ ազգային ամբողջ կազմին հետ, իր եկեղեցիներով, դպրոցներով, մշակութային միութիւններով, բարենը-պատակ հաստատութիւններով, ծերանո-ցով, մամուլով, Կարմիր Խաչերով եւ նոր սերունդի պահպանման զանազան կազմերով, ճամբարներով եւայլն: Որ-քան ալ անբաւարար ըլլայ արդիւնքը՝ թափուած ջանքերուն եւ կարիքին նկատ-մամբ, դարձեալ պէտք է գոհ ըլլալ եւ գովել գործունէութիւնը, որ կայ Փարի-զի Հայութեան մէջ, ըլլան անոնք չէզոք, կուսակցական կամ իրերօգնութեան ուղ-ղութիւններով: Անոնք ամէնքը իրենց գործունէութեան դաշտը ունին եւ օգ-տուողը վերջ ի վերջոյ ցանուցրիւ Հա-յութեան բեկորներն են:

Պ. Մելիքեան թելադրեց կապ հաստա-տել Փարիզի հետ, նոյնիսկ փոխադարձ այցելութիւններով: Գէթ փոքր խումբե-րով նոր սերունդի պատկանող տղաք կամ օրիորդներ իրարու մօտեցնել եւ այս կերպով ազգային ոգեւորութեան մղում տալ:

Այս բանախօսութիւնը, որ հակիրճ Հայոց պատմութեան վերլուծումով մը համեմուած էր, վերջ գտաւ նաեւ տըր-ուած հարցումներու պատասխաններով, բայց շատեր Պ. Մելիքեանի հետ նախա-պէս ալ ծանօթ ըլլալով, մտերմական տեսակցութիւն ունեցան անոր հետ, որ Պերլինի գաղութին գործօն անդամներէն եղած էր (1921–1937) մինչեւ իր Փարիզ հաստատուիլը:

Ց.

ՉՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ ՁԵՌԱԳԻՐՆԵՐԸ ՉԵՆ ՎԵՐԱԴԱՐՁՈՒԻՐ:

«ՅԱՌԱՋ»Ի ԹԵՐԹՕՆԸ (205)

ԵՐԼՏԸՐՁԻ ՊՕՄՊԱՆ

ՀԱԶԱՐ ԻՆԸ ՀԱՐԻՒՐ ՁՈՐՍ

22. Մանուկ Ութունեան (բանտարկ-եալ) ընիկ Վանեցի, Բերայի մէջ, Սէրգ-լը տ՚Օրիանի գոնապանը, յանցապարտ ճանչցուած է մասնակցած ըլլալով միեւ-նոյն եղեռնական ձեռնարկներու պատ-րաստութեան, ընդունելով եւ ակումբի յենքին յարկերուն մէջ պահելով երկու ռումբեր, որոնք անտարակոյս հայ յե-ղափոխական կոմիտէին կողմէն սահման-ուած էին օգը հանելու այդ շէնքը. քա-ղաքութիւն ըրած եւ դրամ հանգանակած էր պատկանած կոմիտէին համար:

Այս ոճիրները նախատեսուած են Պատ-ժական Օրէնքի 55րդ յօդուածով և 58րդի երկրորդ յաւելուածին առաջին հատ-ուածովը:

23. Յովհաննէս Ղարիպեան (բանտարկ-եալ), ընիկ Սվազցի, Բերա, Կոավլիյէ-տան դռնապանը.

24. Յովսէփ Թոփալեան (բանտարկ-եալ), ընիկ Սվազցի:

Ասոնցմէ իւրաքանչիւրը, կառապան Մկրտիչին եղբայրն ու քեռորդին, յան-ցապարտ ճանչցուած են, մասնակցած ըլ-լալով միեւնոյն եղեռնական ձեռնարկնե-րուն պատրաստութեան. գործադրած են յանցապարտ Մանուկ Իսմէտեանի զանա-զան հրամանները. օրերով պահած են տուներու մէջ — որոնց պահպանութիւնը յանձնուած էր իրենց, — պայթուցիկ ռումբերն ու հրանիւթերը, զոր Վահան եւ Մկրտիչ յանցապարտները յանձնած էին իրենց եւ զոր Յովսէփ յետոյ փոխա-դրեց Մանուկին քով, ամէն միջոցներով օգնելով կոմիտէին անիշխանական գա-ւադրութիւններուն:

Այս ոճիրները նախատեսուած են Պատ-ժական Օրէնքի 55րդ յօդուածով եւ 58րդ յօդուածի երկրորդ յաւելուածին առաջին հատուածովը:

25. Պօղոս Կէչեան (բանտարկեալ), Պիթլիսցի.

26. Խաչիկ Պլօյեան (բանտարկեալ), Պիթլիսցի.

27. Մանուկ Կէչեան (բանտարկեալ), Պիթլիսցի.

Այս երեքն ալ Բերա, Սէրքլը տ՚Օրիանի մէջ սպասարկուներ, յանցապարտ ճանչ-ցուած են, որովհետեւ մասնակցած են հայ յեղափոխական կոմիտէի եղեռնական ձեռնարկներուն, օգնած են նոյն ակում-բի դռնապան յանցապարտ Մանուկին, պահելու պայթուցիկ ռումբերը, որոնք իրենց յանձնուած էին, եւայլն:

Ոճիրները նախատեսուած են Պատժա-կան Օրէնքին 58րդ յօդուածին առաջին հատուածովը:

28. Ֆրօ Պաղտոյեան (բանտարկեալ), ընիկ Պիթլիսցի, նախկին սպասեակ պան-դոկ Քրէօքըրի, արդէն անգամ մը դա-տապարտուած՝ հայկական յեղափոխա-կան գործողութիւններու մասնակցած ըլ-լալուն պատճառով եւ յետոյ ներուած, յանցապարտ կը ճանչցուի, որովհետեւ դարձեալ մասնակցած է միեւնոյն եղեռ-նական ձեռնարկներու պատրաստու-թեան, շարունակ պատկանելով կոմի-տէին եւ ընդունելով ռումբեր, զորս պա-հած էր պանդոկին մէջ, եւայլն:

Այս ոճիրները նախատեսուած են Պատ-ժական Օրէնքի 55րդ յօդուածով և 58րդի յաւելուածին առաջին հատուածովը:

29. Եղիա Գահվէճեան (բանտարկեալ), ընիկ Մշեցի, գրավաճառ, յանցապարտ կը ճանչցուի, որովհետեւ մասնակցած է նոյն եղեռնական ձեռնարկներու պատ-րաստութեան, ընդունելով եւ պահելով իր ձեռքով պայթուցիկ հրանիւթեր, զորս յետոյ փճացուցած է յանցապարտ Մա-նուկ Իսմէտեանէն իր ընդունած ազդա-րարութեան վրայ:

Ոճիրը նախատեսուած է Պատժական Օրէնքին 58րդ յօդուածին առաջին հատ-ուածովը:

30. Ատէլ Պէրշիյէ, Օնքսի մէջ (Զուի-ցերիա) հաստատուած.

31. Արթաքի Արթաքեան, Վառնա, Պապքինոս գրավաճառատան սեփականա-տէր.

32. Հայկ Մելիքեան, բնակեալ Ռուս-ճուք:

Այս երեքն ալ յանցապարտ կը ճանչ-ցուին, որովհետեւ իրենց պատկանած հայ յեղափոխական կոմիտէին եղեռնա-կան ձեռնարկներուն պատրաստութեան մասնակցած եւ Կ. Պոլսոյ կոմիտէին ու Պուլկարիոյ եւ Ժընեւի անդամներուն մի-ջեւ հաղորդակցութիւնները դիւրացու-ցած են:

33. Երուանդ Յովնանեան (բանտարկ-եալ), Կ. Պոլիս հաստատուած.

34. Արշակ (փախստական), կօշկակար, բնակեալ Կ. Պոլիս, Կէտիկ փաշա թաղը.

35. Յովակիմ (փախստական), Կ. Պոլ-սոյ կայսերական անասնաբուժական վարժարանի աշակերտ, Գում Գաբուի բնակիչներէն.

ՍՄԲԱՏ ԲԻՒՐԱՏ

(Շար.)

ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

Հ. Յ. Դաշնակցութեան Մարսէյլի Շրջ. Կոմիտէն ցաւակցութիւն կը յայտնէ Պ. Յարութիւն եւ ընկ. Գր. Փափազեանի, ինչպէս նաեւ ընտանեկան բոլոր պարագաներուն, իրենց կնոջ, մօր եւ ազգականին՝

ԱՆՆԻԿ ՓԱՓԱԶԵԱՆԻ

կսկծալի մահուան առթիւ:

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ Ս. ԽԱՉ ԵԿԵՂԵՑԻ

10 bis, Rue Thouin, PARIS

Այս կիրակի Վերափոխումն Տիրամօրն: Ձայնաւոր պատարագ ժամը 10,30ին եւ Խաղողօրհնէք:

Պիտի պատարագէ
Գերպ. ԿԻՒՐԵՂ ԵՊՍ. ԶՕՀՐԱՊԵԱՆ
Յունաստանի եւ Ճէզիրէի նախկին Առաջնորդը:

Երկուշաբթի Մեռելոց: Ձայնաւոր պատարագ ժամը 10,30ին համօրէն ննջեցեալներուն հոգիներուն համար:

ԿԵԱՆՔԻ ՈՒՂԻՆԵՐՈՎ

Գ. Հատոր

Շուտով լոյս կը տեսնէ Ս. Վրացեանի ԿԵԱՆՔԻ ՈՒՂԻՆԵՐՈՎ (Գ. Հատորը), շուրջ 300 էջ, պատկերազարդ եւ լաթակազմ:

Երրորդ հատորը կը բովանդակէ Ս. Վրացեանի յուշերը կամաւորական շարժման, ինչպէս նաեւ դէմքեր, դէպքեր եւ տպաւորութիւններ՝ մօտիկ անցեալէն:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Ս. Թադէոս եկեղեցւոյ Թաղականութիւնը շնորհակալութեամբ ստացած է հետեւեալ նուէրները՝ հանգուցեալ Տիկին Արմենուհի Ղարիպեանի մահուան առթիւ, փոխան ծաղկեպսակի, եկեղեցւոյ պայծառութեան.— Պ. Իսրայէլ Ղարիպեան, Եղբարք Ղարիպեան 100ական ֆր.: Դանիէլեան եղբայրներ 50 ֆր., Արմենակ Փափազեան 40 ֆր., Ղազարոս Ղարիպեան եւ Երեմիա Ղուկասեան 20ական ֆրանք: Այս առթիւ առթիւ Թաղականութիւնը իր խորին ցաւակցութիւնը կը յայտնէ հանգուցեալի պարագաներուն եւ նուիրատուներու:

ՆՈՒԷՐՆԵՐ

Ֆ. ԿԱՊՈՅՏ ԽԱՉԻ ԿԱՑԱՆԻՆ

Իրենց այցելութեան առթիւ հետեւեալ նուէրները բրած են.—

Տէր եւ Տիկին Ա. Տօլպաճեան (Մարսէյլ)՝ սառնարան մը (220 լիթր): Բժիշկ Բ. Խրիմեան (Փարիզ)՝ 20 քիլօ դեղօրայք: Տիկին Մ. Գասեան՝ 25 քիլօ ճաւար: Տիկին Տ. Սերէնկիւլեան 100 ֆր.: Տէր եւ Տիկին Պ. Յարութիւնեան (Փարիզ) 50 ֆր.: Տէր եւ Տիկին Պալեան (Տէսին) եւ Տէր եւ Տիկին Շէհիրլեան (Լիոն) 25ական ֆրանք:

ՆՈՒԷՐՆԵՐ

Տէր եւ Տիկին Սահակ Կէնճեան եւ Տէր եւ Տիկին Յովհաննէս Յակոբեան իրենց սիրելի հօրաքրոջ աղջկան՝ Տիկին Աննիկ Փափազեանի ցաւալի մահուան առթիւ, փոխան ծաղկեպսակի 50ական ֆր. նուիրած են Կապ. Խաչի Շաւիլի մանկամսուրին: (Սխալմամբ 30ական յայտարարուած էր):

ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ

Կապոյտ Խաչի Վիէնի մասնաճիւղի տարեկան դաշտահանդէսը տեղի կ'ունենայ Սեպտեմբեր 1ին, առաւօտէն մինչեւ երեկոյ «Իւ-Էս-Ա.»ի մարզադաշտին վրայ (Թանըրիին քով):

Գեղարուեստական ճոխ բաժին: Բանախօսութիւն, երգ, արտասանութիւն եւ հայկական պարեր:

Ճոխ պիւֆէ. աղանդերներ եւ շամփուրով խորոված:

Սիրով կը հրաւիրուի գաղութի Հայութիւնը:

IMPRIMERIE SPECIALE
DU JOURNAL « HARATCH »
32, Rue de Trévise, PARIS (9e)

Շ. ՄԻՍԱՔԵԱՆ

Օրեր եւ Ժամեր

ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻՉ (ՓԱՐԻԶ)

Այս կիրակի, Տօն Վերափոխման Սուրբ Աստուածածնի: Այս առթիւ Փարիզի Ս. Յովհաննէս-Մկրտիչ եկեղեցւոյ մէջ պիտի մատուցուի հանդիսաւոր պատարագ եւ պիտի տրուի աւուր պատշաճի քարոզ:

Յաւարտ պատարագի պիտի կատարուի խաղողի օրհնութիւն:

Այս երկուշաբթի, Մեռելոց: Պիտի մատուցուի պատարագ եւ պիտի կատարուի հոգեհանգիստ մեր ազգի բոլոր ննջեցեալներուն ի հանգիստ: Պատարագը կը սկսի ժամը 10ին:

×

ՎԱՐԱԳԱՅ Ս. ԽԱՉ (ԱՌՆՈՒՎԻԼ)

Այս կիրակի հանդիսաւոր պատարագ Աստուածածնայ տօնին առթիւ: Կը պատարագէ Ներսէս վարդապետ Փապուճեան: Յաւարտ պատարագի, աւանդական խաղողօրհնէք:

×

Ս. ՅԱԿՈԲ (ԼԻՈՆ)

Շաբաթ (17 Օգոստոս), Նախատօնակ երեկոյեան ժամը 5ին: Կիրակի (18 Օգոստ.), սկիզբ. ժամերգթ. առաւօտ ժամը 7,30ին: Պատարագ ժամը 10ին: Խաղողօրհնէք 11ին, Հոգեհանգիստ ժամը 11,30ին:

Լիոնի եւ Շրջ. Հայ Ազգային Միութեան Վարչութիւնը կը հրաւիրէ շրջանի բարեպաշտ հայ ժողովուրդը ներկայ ըլլալու 18 Օգոստոսին Ս. Աստուածածնայ տօնի առթիւ կատարուելիք արարողութեանց: Յաւարտ պատարագի տեղի պիտի ունենայ նաեւ խաղողի եւ մատաղի աւանդական օրհնութիւնը:

×

ՇԱՒԻԼԻ ՄԷՋ

Պատարագ եւ աւանդական խաղողօրհնութիւն այս կիրակի առաւօտ:

×

ՏԷՍԻՆ

Ուրբաթ, Աղի օրհնութիւն եւ մատաղի զենում կէսօրէ վերջ ժամը 3ին:

Շաբաթ, Հսկումի արարողութիւն կէսօրէ վերջ ժամը 6ին:

Կիրակի (18 Օգոստ.), Տօն Աստուածածնայ. սկիզբ ժամերգութեան ժ.ը 8,30ին, հանդիսաւոր պատարագ ժ.ը 10ին, մասնակցութեամբ տեղւոյն երկսեռ երգչախումբին, ղեկավարութեամբ Պ. Գ. Մարտիրոսեանի. երգեհոն եւ մեներգ Օր. Անժէլ Կարապետեան, խաղողօրհնէք եւ մատաղի բաշխում:

×

ԱՒԱՆԴԱԿԱՆ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ ԷՔՍ–ԼԷ–ՊԷՆԻ ՄԷՋ

ԱՅՍ ԿԻՐԱԿԻ, Ս. Աստուածածնայ Տօնակատարութեան առթիւ

Օթոքառները ժամը 9էն սկսեալ կը մեկնին Փառքին քովէն եւ կայարանէն: Իջնել լարուղիի (թելեֆերիք) կայանը, հոն Լա Տօմիէռ սրճարանի յարակից դաշտերու վրայ, պաղ ջուրի մօտ:

Ժամը 10ին կը սկսի պատարագ եւ խաղողօրհնէք: Ճաշէն ետք՝ բացում դաշտահանդէսի: Օրուան նշանաբան՝ «ՀԱՅԸ ՀԱՅ ՊԱՀԵԼ»:

Օգոստ. 17ին կը կատարուի Տօղակաթի տօնի եւ Օգոստ. 19ին Մեռելոցի պատարագներ՝ մատուցմամբ Օշին վարդապետի, մասնակցութեամբ Փարիզի եկեղեցւոյ դպիրներու:

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Մարսէյլի մէջ Դաշնակցութեան Օրը կը տօնուի Հոկտեմբերի 5ին Սալոն Ալհամպրա:

ՀԱՅ ԸՆԾԱՅԱՐԱՆ

Կը փնտռուի հայ տիկին մը Հաստատութեանս մէջ իբր խոհարարի օգնական: Մանրամասն տեղեկութիւններու համար դիմել գրաւոր կամ անձամբ՝

École Apostolique Arménienne
3, Av. de Grandchmp
LE PECQ (S. et O.) Tél. 963-01-72

ՀԱՅ ԸՆԾԱՅԱՐԱՆ

ԲԱՑՈՒԱԾ ԵՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ուսումնական 1963–1964 Տարեշրջան

Կ'ընդունուին 10–12 տարեկան բարեկիրթ եւ ուսումնասէր աշակերտներ, որոնք ունին իրենց տարիքին համապատասխան նաեւ ուսումնական աստիճան:

Արձանագրութեան եւ լուսաբանութեանց համար դիմել՝

Direction du Petit Séminaire Arménien
3, Av. de Grandchamp, LE PECQ (S. et O.)
Tél. 963.01.72

ՍՏԱՑԱՆՔ

ԻՆՉՊԷՍ ՏԵՍԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԸ

(Տպաւորութիւններ)

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Գրեց՝
Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

ՆԿԱՐՆԵՐՈՎ ՃՈԽԱՑԱԾ ԱՅՍ ԳՐՔՈՅԿԸ Կ'ԱՐԺԷ ՄԻԱՅՆ 3 Ն. Ֆ.

Առաքումով՝ 4 Ն. Ֆ.

Դիմել՝
« ՅԱՌԱՋ »

ՄԱՐՍԷՅԼԻ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

Մայր Եկեղեցիի վարչութիւնը կը ծանուցանէ թէ այս կիրակի, Ս. Աստուածածնի Վերափոխման տօնը պիտի կատարուի օրուան յատուկ հանդիսաւոր արարողութեամբ. ինչպէս նաեւ Խաղողօրհնէք եւ Մեռելոցի Հոգեհանգիստ ընդհանուր ննջեցեալներու յիշատակին:

× Ողբացեալ Տիկին Սաթենիկ Փափազեանի (ծն. Պօյաճեան) յուղարկաւորութեան առիթով փոխան ծաղկեպսակի վարչութիւնը շնորհակալութեամբ ստացած է հետեւեալ նուէրները.— Պ. Սարգիս Իյնէճեան 20 ֆր., Տէր եւ Տիկին Հայկազուն Պետալեան 10, Տորումեան եղբ. 20, Պ. Գրիգոր Տորումեան 10, Այրի Տիկին Լափաճեան 20: Սէն-Ժերոմի Հայ Կապոյտ Խաչէն՝ Պ. Վարդան Փափազեան 20, Տէր եւ Տիկին Րաֆֆի Սըվաճեան 10: (Աւանդ գումարները ստանալ եկեղեցիին Քարտուղարութենէն):

× Կը փնտռուի Սեբաստացի Այրի Տիկին Խաթուն Գարագաշեան (ծն. Շահինեան), Պոլիսէն Փարիզ գացած: Կը խնդրուի տեղեկացնել եկեղեցիին:

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Հ. Բ. Ը. Միութեան Տիկնանց յանձնախումբը կը խնդրէ կազմակերպութիւններէն նկատի ունենալ հետեւեալ թուականները.—

ՀՈԿՏԵՄԲԵՐ 1, Երեքշաբթի երեկոյ Տիկնանց յանձնախումբի կազմութեան Գ. տարեդարձին առթիւ գեղարուեստական երեկոյթ:

ՀՈԿՏԵՄԲԵՐ 19, ցուցահանդէս հայ արուեստագէտներու նկարիչ, արձանագործ եւ փորագրիչներու գործերուն:

Հայկական Թանգարանը, 52 Ավընիւ Ֆոշ, (Փարիզ 16):

ԴԵԿՏԵՄԲԵՐ 7, 8, 9, 10, «Բարեպաշտակ վաճառք»:

Յառաջիկային պիտի տրուին մանրամասնութիւններ:

×

ԼԻՈՆ.— Ֆր. Կապ. Խաչի Օրը կը տօնուի մեծ պատրաստութեամբ, 27 Հոկտ. Մոլիէրէի շքեղ սրահին մէջ:

×

Փարիզահայ Տիկնանց Միութեան յոբելեանը կը տօնուի Հոկտեմբեր 13ին, Սալ տը լա Շիմի:

FOURRURES
Roger YOPIAN
PRIX INTERESSANTS
NEUF et REPARATION
84, Boulevard de Stalingrad, 84
— CHOISY-LE-ROI (Seine) —
Autobus : de la Porte de Choisy, descendre 3 Communes ou Rue du Docteur-Roux.

ՀՐԱՆՏ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

51, Rue Monsieur-le-Prince, PARIS - 6e — Chèque Postal : 1278-35

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՇԻՐՎԱՆԶԱԴԷ, Երկերի ժողովածու, 10 հատոր լաթակազմ	70 ֆր.
ՍՏԵՓԱՆ ԶՕՐԵԱՆ, Երկերի ժողովածու, 7 հատոր, լաթակազմ	56 ֆր.
ՍՏԵՓԱՆ ԶՕՐԵԱՆ, Պապ թագաւոր, լաթակազմ	10 ֆր.
ՍՏԵՓԱՆ ԶՕՐԵԱՆ, Հայոց բերդը, լաթակազմ	8 ֆր.
ՎԱՀԱՆ ՏԷՐԵԱՆ, Երկերի ժողովածու, 2 հատոր լաթակազմ	14 ֆր.
ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՒԻԹ, մեծադիր, գունաւոր նկարներով, լաթակազմ	10 ֆր.
Վ. ԱՆԱՆԵԱՆ, Հայաստանի կենդանական աշխարհը, Բ.	8 ֆր.
ԱՐՍԷՆ ՏԷՐՏԷՐԵԱՆ, Երկեր (Արովեան Պռօշեան, Պարոնեան)	17 ֆր.
ՄՈՒՐԱՑԱՆ, Պատմուածքներ, գունաւոր նկարներով	5 ֆր.
ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑԻ մասին յիշողութիւններ. լաթակազմ	7.50 ֆր.
ՄԻՔ. ՇԱԹԻՐԵԱՆ. Գարունը նորից եկաւ. 296 էջ.	5 ֆր.
ԱԲԳԱՐԵԱՆ. Մատենադարան (անգլ.) 18 գունաւոր մանրանկարներ	3 ֆր.
ՀԵՆՐԻԿ ԹՈՒՄԱՆԵԱՆ. Երգի ծնունդը. բանաստեղծութիւններ	3.85 ֆր.
Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ. Տաղեր, 200 էջ. լաթակազմ	3.50 ֆր.
ՍՈՎԵՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ. Ա. 800 էջ. լթկզմ.	16 ֆր.
ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ, Անլռելի զանգակատուն, Պէյրութ, 1963	10 ֆր.

Առաքման ծախսը գինին վրայ

ԳՐԱՏՈՒՆՍ ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻՆ Է
ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՁԱՅՆԱԳՐԵԱԼ ԲՈԼՈՐ ԵՐԿԵՐՈՒՆ
ՃՈԽ ՄԹԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԵՒ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆՑ

ՅԱՌԱՋ

Օ Ր Ա Թ Ե Ր Թ
Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

Le PREMIER QUOTIDIEN ARMENIEN en EUROPE
HARATCH
Directrice : ARPIK MISSAKIAN
Rédaction et Administration : 32, Rue de Trévise - PARIS-9e

Fondé en 1925 — Téléph. : PRO. 86 - 60
R. C. Seine 57 A 2731 — C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա՝ Տար. 50 Ֆ. — Վեցամսեայ՝ 27 Ֆ.
Արտասահման՝ Տար. 60 Ֆ. — Հատը 0.30 Ֆ.

ՇԱԲԱԹ 17 ՕԳՈՍՏՈՍ
SAMEDI 17 AOUT 1963
LE NUMERO : 0,30 FR.

39րդ ՏԱՐԻ — Թիւ 9684
Fondateur : SCHAVARCH MISSAKIAN
39e ANNÉE — Nº 9684

ԽՕՍՔԸ

ԿՈՒԺ ԿՈՏՐԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ ՉԷ

Ինչպէս նախընթաց երկու փոթորիկներուն առթիւ, այս անգամ ալ կը գտնուինք ...աշխարհի խաչուղիներուն վրայ: Մանաւանդ այս անգամ:

Ցիրուցան՝ ի սփիւռս աշխարհի, մեր ...ժին համրանքը ենթակայ է վտանգի: ...ուղղակի կամ անուղղակի:

Միւս կողմէ, անմիտ խմբակի մը, ուէ ...ուրթի արարքը կրնայ անդրադառնալ ...ողջ բազմութեանց վրայ, այս կամ ...յն շրջանին մէջ:

Թշնամի թէ բարեկամ ուշադրութեամբ կը հետեւին մեր քայլերուն: Յաճախ առանց զգացնելու: Նոյնիսկ ժպտելով մեր երեսին: Կամ թմրեցնելով մեր գիտակցութիւնը:

Անհրաժեշտ չէ սաւառնիլ բարձր դիւանագիտութեան ոլորտներուն մէջ, ըմբռնելու համար դէպքերուն իմաստը:

Ոչ վայրերան կանչեր, ոչ ալ չարագուշակ մարգարէութիւններ: Պարզապէս զգօնութիւն եւ սրատեսութիւն:

Այս երկու տարրական պահանջները կրնան լուսաւորել մեր ճամբան, չարն ու բարին զանազանելու համար:

Նոր ցնցումներ պատահին թէ ոչ, հարկադրուած ենք լրջօրէն, լայնօրէն մտածել՝ տարագիր բազմութեանց ապահովութեան, պաշտպանութեան մասին:

Հայրենիքը բաղկացուցիչ մասնիկն ըլլալով հսկայական եւ միահեծան իշխանութեան մը, իր ճակատագիրը կապած է անոր հետ: Եւ չի կրնար արտաքին օգնութեան:

Որեւէ միջամտութիւն՝ դուրսէն, պիտի նշանակէր հասարակ արկածախնդրութիւն:

Որեւէ թշնամական ձեռնարկ՝ համազօր պիտի ըլլայ ինքնասպանութեան:

Նոյն տրամաբանութիւնը կը թելադրէ որ Երեւանը կարճ կապէ իր խելացնոր ...րչուր՝ յանուն «ռեւոլուցիոն» արկածախնդրութեանց:

Ոչ միայն կարճ կապէ, այլեւ զգաստութեան հրաւիրէ իր յայտնի թէ գաղտնի գործակալները: Իր երեւութապէս բարեմիտ ուղեկիցներն ու ինքնակոչ, խարդախ փաստաբանները:

Չափազանց երկար տեւեցին Հայկական Արտասահմանի ջախջախիչ մեծամասնութեան դէմ ուղղուած ստոր ին դաւերը: Արհեստական ճեղքեր բանալու, հակաճակատներ ստեղծելու տնաքանդ մարզանքները:

Եթէ այդ բոլորը տեղի կ'ունենան հակառակ իրենց կամքին, դերիշխան ուժի մը թելադրութեամբ, աւելի գէշ:

Որ օրուան համար են իրենք, արժեցնելու համար իրենց դիրքն ու յաւակնութիւնները: Մանաւանդ իրենց վարկը՝ երբեւ հաւասարազօր անգամ Խորհ. Միութեան:

Իրենք փորձառաբար գիտեն թէ Դաշնակցութեան դէմ սարքուած որեւէ դաւ կը մնայ ոչ թէ վաթսունամեայ կազմակերպութեան, այլ բուն իսկ հայ ժողովուրդի հիմնական շահերուն:

Գիտեն, դարձեալ, թէ իրենք ամէն բան ...ին: Թէ շատ քիչ բան ձգուած է իրենց հայեցողութեան եւ ինքնագործունէութեան:

Գիտեն, վերջապէս, թէ ի վիճակի չեն թիզ մը հող աւելցնելու հայրենիքի սահմաններուն վրայ: Ոչ ալ անցագիր տալու ...եւէ տարագրի: Ոչ իսկ անարգել գործածելու բառարանին բառերը:

Հետեւաբար, իրենց շահն ալ կը թելադրէ ականջ դնել ոչ թէ խոպոտ, խարդախ կանչերու, այլ ջախջախիչ, գործօն մեծամասնութեան ազատ եւ հարազատ ձայներուն:

Կուժ կոտրելու ժամանակ չէ:

Վերադնահատում, լրջութիւն, հեռատեսութիւն կը թելադրեն այս բախտորոշ, ճակատագրական օրերը: Անշուշտ ամէնէն առաջ՝ օրուան վարիչներուն:

Ծիշդ այն պահուն երբ դղրդալին ցոյցեր կը կատարուին յանուն խաղաղութեան, մի մոռնաք թէ մանաւորապէս փոքր եւ անճար ժողովուրդները կը կարօտին նաեւ ներքին խաղաղութեան:

Ո՛վ որ որոմ, պառակտում կը սերմանէ, չի կրնար բարեկամ ըլլալ ոչ խաղաղութեան եւ ազատութեան, ոչ ալ ճշմարիտ յեղափոխութեան:

Օրն ի բուն ջուր եւ արիւն պղտորել՝ կը նշանակէ խնդացնել թշնամին:

1950 — Շ.

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՏԱԳՆԱՊ ՊՐԱԶԱՎԻԼԻ ՄԷՋ

ՖՈՒԼՊԵՐ ԵՈՒԼՈՒ ՀՐԱԺԱՐԱԾ Է

Առջի օր կարգ մը միջադէպեր կը սկսէին նախկին Ֆրանսական Քոնկոյի մէջ եւ շատ արագ կը ծաւալէին եւ կը ստիպէին Հանրապետութեան Նախագահը՝ Աբբայ Ֆիւլպէր Եուլուն, որ հրաժարի: Իշխանութիւնը բանակին կը յանձնուէր սպասելով նոր կառավարութեան մը կազմութեան:

Ամէն բան սկսած էր կարգ մը բախումներով ոստիկաններու եւ ցուցարարներու միջեւ, որոնց հետեւանքով հինգ մեռեալ եւ քանի մը տասնեակ վիրաւորներ կային: Հինգշաբթի օր, ցուցարարները «Եուլո՛ւ, հրաժարէ» կը պոռային Նախագահական պալատին առջեւ եւ Եուլու խորհրդակցելէ ետք իր խորհրդականներուն հետ, ընդդիմադիրները հրաւիրած էր իր գրասենեակը: Խորհրդակցութիւնները բաւական տեւած են եւ բանակին պատկանող հինգ անդամներ ալ միջամտած են: Ասոնց միջամտութիւնը տեսակ մը վերջնագրի բնոյթ առած է եւ ստիպած են Հանրապետութեան Նախագահին որ հրաժարի: Այդ պահուն Եուլու յայտարարած է.— «Չեմ վախնար մեռնելէ: Եթէ կ'ուզէք գլխ ամբոխին ձեռքը տալ, ըրէ՛ք: Բայց ձգեցէք որ վերջին անգամ մը իմ ծերունի մայրս համբուրեմ»: Բայց կը թուի թէ զինուորականները այդքան ալ գէշ տրամադրուած չէին քանի որ Աբբան քիչ ետք կը ճաշէր անոնց հետ: Ներկայիս հաղորդակցութիւնները ընդմիջուած են Պրազավիլի հետ:

Ծնած 1917ին, Պրազավիլի մօտ, Ֆիւլպէր Եուլու, 1946 Յունիսին քահանայ ձեռնադրուած է եւ Պրազավիլի Սէն-Ֆրանսուա եկեղեցւոյ ժողովրդապետ եղած յետագային: 1946ին կախակայուած է եպիսկոպոսին կողմէ եւ կը պարտուի ֆրանսական երեսփոխանական ընտրութեանց, բայց Պրազավիլի քաղաքապետ կ'ընտրուի: 1957ին Գիւղատնտեսութեան նախարար է: 58ին «Այո»ի կողմնակից է եւ պայքար կը տանի Հանրաքուէին առթեն: Այդ առեն վարչապետ կ'ըլլայ: 1961ին Հանրապետութեան Նախագահ է:

Իրաց ներկայ կացութեան մէջ, ծայրայեղ ձախ մամուլը սարսափելի յարձակում մը սկսած է «ափրիկեցի Սալազար», «կապայով բռնատէր» որակելով Եուլուն: Այս առթիւ Ֆիկառօ կը գրէ. «Ձեր պալալայքաներուն ձայները ներդաշնակեցէք», յիշելով թէ մինչ Իւմանիթէ եւ Լիպերասիոն այս ոճը կը գործածեն, անդին Խրուշչեւ շնորհաւորած էր արբայ Եուլուն Քոնկոյի Հանրապետութեան Գ. տարեդարձին առթիւ:

ԲԱՆԱԿՈՒՄ

ԱՐԴԻՒՆԱՒՈՐ ԽԱՆԴԱՎԱՌՈՒԹԻՒՆ

ՕԼՈՆ (Յառաջ).— Օգոստոս 3ին, երբ զանազան շրջաններէ հասած բանակողներուն թիւը հարիւրը կ'անցնէր, ոգեւորութիւնը սկսաւ բանակավայրին մէջ:

Նոյն գիշերը, երգի, պարի ու դասախօսութիւններու յատկացուած մասնաւոր սրահին մէջ խմբուեցան Նոր Սերնդականները ու հայերէն երգերով, պարերով եւ արտասանութիւններով ստեղծեցին ջուարթ մթնոլորտ մը:

Յաջորդ օրը, առաւօտեան ժամը 9ին բանակումի վարիչները հանդիպում մը ունեցան բանակողներուն հետ եւ հաղորդեցին անոնց իրենց մէկ ամսուան յայտագիրը՝ դասերու, դասախօսութիւններու եւ յարակից խնդիրներու վերաբերեալ: Խօսք տրուեցաւ նաեւ տղոց, որպէսզի անոնք եւս արտայայտեն իրենց կարծիքներն ու պահանջները, եթէ աւելցնելիք կամ պակսեցնելիք բաներ ունին, աւելցնեն ու պակսեցնեն, գործի սկսելէ առաջ: Մէկուկէս ժամ տեւող այս զրոյցին ընթացքին արտայայտուեցան շատ շահեկան կարծիքներ բանակումի բուն նպատակին, ի նպաստ հայկական բաժնին:

Այդ զրոյցին ընթացքին բանակումի վարչութիւնը յայտարարեց թէ հայերէն լեզուի դասընթացք մը հաստատած է եւ կոչ ըրաւ տղոց, որ իրենց ժամանակին մէկ մասը օգտագործեն ի խնդիր մայրենի լեզուին: Մօտ քսան հոգի անմիջապէս ընդառաջեցին այդ կոչին եւ աւելի ուշ, երբ նոր բանակողներ եկան, այդ թիւը աւելի բարձրացաւ: Ամէն օր, կանոնաւորաբար, տեղի կ'ունենան հայերէնի այս դասերը եւ այդ ուղղութեամբ տարուած աշխատանքը օր ըստ օրէ աւելի խանդավառութիւն կը ստեղծէ:

Ինչ կը վերաբերի դասախօսութիւններուն՝ չորքէն երեքը տեղի ունեցան արդէն Օգոստոս 5ին, 7ին եւ 11ին: Առաջինը իբրեւ նիւթ ունէր մեր ժողովուրդին ծագումը սկիզբէն մինչեւ քրիստոնէութիւն: Այլ խօսքով՝ մինչեւ Արտաշիսեան Հարստութեան անկումը: Երկրորդը՝ մեր պատմութեան երեք Հարստութիւններու եւ օտար իշխանութիւններու օրով մեր ժողովուրդի կեանքը, զուգընթաց՝ ծանօթութիւններ մեր հայրենիքին մասին: Իսկ երրորդը կ'ընդգծէր Հայաստանի աշխարհագրութիւնը, հին ու նոր շրջաններով, եւ կը ծանրանար առաւելաբար Հայկական Հարցին կենսական խնդիրներուն վրայ:

Այս դասախօսութիւններէն իւրաքանչիւրը կը վերջանար մեր գրականութենէն վերցուած համապատասխան ընթերցումով մը: Յարդ կարդացուած են «Արարատին» (Ա. Իսահակեան), «Մի խառնէք մեզ» (Վ. Տէրեան), «Հայը եւ Հա՛յը» (Ու. Սարոյեան) եւ «Ամէն բանէ վեր» (Շ. Նարդունի):

Իւրաքանչիւր դասախօսութենէ ետք, տղաքը խօսք կ'առնէին: Անոնց հետաքրքրութիւններուն գոհացում կը տրուէր լրացուցիչ բացատրութիւններով:

Օգոստոս 8ին ունեցանք շատ հետաքրքրական պահ մը: Նախ կարդացուեցաւ երգիծական կտոր մը, «Ազգիս Բարերարները» (Ա. Արփիարեան), ապա վէճի նիւթ դարձաւ զրութիւն գործող անձինքը, մէկ կողմը՝ պահպանողականը, միւս կողմը յեղափոխականը ու անոր միտքերը, դիտուած մեր ժողովուրդին օգտակար ըլլալու տեսանկիւնէն: Նոր Սերնդական բազմաթիւ երիտասարդներ եւ երիտասարդուհիներ խօսք առին եւ հետաքրքրական եզրակացութիւններ հանելով՝ ստեղծեցին յիշատակելի օր մը:

Ասոնցմէ զատ, բանակումի վարչութեան մէկ որոշումով, երկու գիշերներէն մէկը, առանց բացառութեան, կը նուիրուի զուտ հայկական յայտագիրի մը գործադրութեան, որ հոս կը ճանչցուի «Հայկական ժամ» անունով: Այդ օրը միա՛յն հայերէն երգ կ'երգուի, կը պարեն միա՛յն հայկ. պարեր ու կ'ուտասանուին հայ բանաստեղծներէն կտորներ: Այս յայտագիրը կը կիրարկուի ամենայն բծախնդրութեամբ ու այս բծախնդրութիւնը՝ անհրաժեշտ է չեշտել այս պարագան՝ հաճոյք կը պատճառէ բանակողներուն:

Մարզական կեանքը նոյնպէս եռուզեռ մը ցոյց կուտայ: Ամէն օր տեղի կ'ունենան փինկ-փոնկի եւ վոլէ-պոլի մրցումներ: Օգոստոս 10ին, Օլոնի քաղաքապետարանի դաշտին մէջ տեղի ունեցաւ ֆութպոլի մրցում մը Փարիզի եւ Տէսինի Նոր Սերնդականներուն միջեւ: Սկիզբը Տէսինը մէկի դէմ երկուքով յաղթական էր, երբ խաղի վերջաւորութեան քառորդ մնացած՝ Փարիզի տղոց մէկուն ուժեղ մէկ հարուածէն պայթեցաւ գնդակը: Խաղին այս փախճանը թէ՛ խաղացողներուն եւ թէ հանդիսատես բանակողներուն մօտ ստեղծեց ընդհանուր ուրախութիւն մը: Արդիւնքը յայտարարուեցաւ՝ «ոչ յաղթական, ոչ պարտեալ»:

ԲԱՆԱԿՈՂ

«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԵՐԸ»

ԽՄԲ.— Զայնասփիւռի Տնօրէնութեան բացատրական նամակէն ետք (Յառաջ, Օգոստ. 3), ստորեւ կը հրատարակենք Տեղեկատուութեան նախարարին մեզի տուած պատասխանը, «Հայկական ժամերու» ծանօթ միջադէպին առթիւ:

×

MINISTERE DE L'INFORMATION

Paris, le 10 Août 1963

Journal HARATCH
Direction
32, Rue de Trévise
PARIS

Monsieur le Directeur,

Par votre lettre du 26 Juillet, vous avez bien voulu me faire part des réactions d'un grand nombre d'auditeurs d'ascendance arménienne lors de la diffusion le 24 Juillet des « HEURES TURQUES » à la place de l'émission des « HEURES ARMENIENNES ».

Je déplore vivement ce regrettable incident et j'ai donné des instructions nécessaires pour que semblable contretemps ne se reproduise plus à l'avenir.

Cependant, j'espère que l'émission « LES HEURES ARMENIENNES » retransmise le 7 Août aura donné satisfaction à ceux dont vous êtes le porte-parole.

Je vous demande de croire, Monsieur le Directeur, à l'assurance de ma considération distinguée.

ALAIN PEYREFITTE.

ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՀԱՍՏԱՏՈՒՄՆԵՐ

ՀԱՅՈՑ ԱԶԳԻՆ ԴԷՄ ԴԱՒԱԴՐՈՂ ՉՈՐՍ ՋԱՐԴԱՐԱՐ ՓԱՇԱՆԵՐ

Գ.

ԽՄԲ.— Այս յօդուածաշարքին Ա. եւ Բ. մասերը հրատարակած էինք Օգոստոս 3ի եւ 4ի մեր թիւերուն մէջ: Ստորեւ կը հրատարակենք Գ. եւ վերջին մասը:

ՖԱԽՐԻ ՓԱՇԱ

Նոր անունով՝ զօր. Ֆախրի Աթէշ Ալփ, Զէյթունի եւ Ուրֆայի Հայութեան յաւիտենաս անիծեալ դահիճն եղաւ:

Ֆախրի փաշա համաշխարհային առաջին պատերազմի ընթացքին կը գտնուէր Հալէպ եւ Ճեմալ փաշայի չորրորդ բանակի սպայակոյտի պետին օգնականն էր:

Յետոյ, Ճեմալի հրամանով, 1915 Մարտ 16–29ին, երկու գունդ զինուորով, երեք թնդանօթներով եւ չերքէզներով, ղրկուած էր Մարաշ եւ Զէյթուն, պետական բոլոր միջոցներով ընկճելու համար Զէյթունի ժողովուրդը, բանտարկելու, տարագրելու եւ բնաջնջելու:

Թուրքիոյ մէջ բանակային իրաւասութեանց սահմանագծումը հետեւեալն էր.— Տիգրանակերտի նահանգի հարաւային սահմանէն վար՝ Հալէպի նահանգը, (Ատանայի նահանգն ալ մէջը) Ճեմալ փաշայի զինուորական իրաւասութեան տակ էր: Այդ մասերէն հիւսիս՝ հայկական նահանգները եւ Տրապիզոն, զինուորապէս կ'իյնար Էրզրումի Երրորդ բանակի (զօրավար Մահմուտ Քեամիլ) իրաւասութեան սահմանին մէջ, Հայերու բնաջնջման գործողութեանց համար:

Հանրածանօթ գնդապետ Լորէնս, «Իմաստութեան Եօթը Սիւները» գրքին մէջ (էջ 53) գրած է. «Ֆախրի փաշան արիւնարբու մարդոցմէն է որ մաքրագործեց Զէյթունի եւ Ուրֆայի Հայերը»:

Իսկ Հալէպի գերման հիւպատոս Ռէօսլէր՝ գրած է հետեւեալը.

Պատերազմի սկիզբը (1914 Հոկտեմբեր 15–28), զօրավար Ֆախրի փաշա, հակառակ Հալէպի կուսակալ Ճելալ պէյի հրամանին, Զէյթունէն դուրս հանեց ջոկատ մը զինուոր եւ հոն ղրկեց այնպիսի ժանտարմաներ, որոնք թշնամի էին Զէյթունցիներուն: Եւ Մարտ 18ին՝ Զէյթունը արդէն տեղահան եղած էր: Զէյթուն ղրկուած ժանտարմաները բանտէն արձակուած ոճրագործներ էին: Զէյթունի շրջանէն տեղահան եղած էին 30 հազար Հայեր»:

Իսկ հիւպատոս Հոֆման տեղեկագրած էր, որ «Ֆախրի թնդանօթներով խորտակեց Ուրֆան: Ֆախրի՝ 1915 Սեպտեմբեր 21ին (հին Տոմար) Ուրֆա բերած էր 1000 զինուոր, 1915 Սեպտ. 22ին՝ 2000 զինուոր եւս: Սեպտեմբեր 29ին՝ ընդամէնը 4000 զինուորով, Ուրֆան աւերեց 12 սանթիմնոց թնդանօթով, նաեւ քանդեց Հայոց եկեղեցին: Իսկ 1916 Յունուար 4ին, Ֆախրի խոլամացուց հայ որբերը եւ թլփատել տուաւ զանոնք»:

Լորտ Պրայս յայտնած է, որ Զէյթուն ղրկուած էին 8000 զինուոր եւ Ուրֆա՝ 6000 զինուոր: Ուրֆայի կռիւները տեւած էին 10 օր:

Ֆախրիի գործած արարքները պակաս չեն եղած նացիներու գործած անգթութիւններէն, Տախաուի կամ Աուշվիցի մէջ:

Ֆախրի, ջարդարարական իր գործերը գլուխ հանելէ ետքը, Ճեմալ փաշայի կողմէ ղրկուեցաւ Մետինէ (1916 Յունիսին), զսպելու համար արաբ ապստամբները: Իրաւ ալ, Ֆախրի, Մեքքէի հարաւ–արեւելքը, Թայիֆի մէջ, թնդանօթով եւ զինուորներով ջարդեց 3000 Արաբ:

Յետոյ, երբ Կարմիր Ծովի ճամբով՝ Ճիտտէ, Եէնպօ ծովեզերեայ քաղաքներու խողովակով անգլիական զէնքեր, դրամ եւ ռազմամթերք հասան Ֆէյսալի եւ Հիւսէյին Թագաւորի միւս զաւակներուն՝ Ալիին եւ եղբօրը, այս անգամ Ֆախրի իր ուժերով կղզիացած մնաց Մետինէի մէջ եւ կրցաւ դիմադրել արաբ յարձակումներուն մինչեւ զինադադար եւ պաշտպանողական կռիւ մղեց՝ առանց յառաջանալու, որովհետեւ Ամմանէն մինչեւ Մետինէ քաղաքը երկարող երկաթուղին քանի մը կէտերու վրայ կտրուած էր եւ կամուրջներ խորտակուած էին Արաբներու եւ գնդապետ Լորէնսի հետեւորդներուն կողմէ:

Զինադադարին՝ Ֆախրի անձնատուր եղած էր Արաբներուն եւ Անգլիացիներուն: Անգլիացիներ Մալթա տարած էին զինք: Եւ յետոյ, առաջին խումբին հետ, (Սայիտ Հալիմի, Հաճի Ադիլի, Ֆեթհիի, Աղայեվի եւ այլոց հետ) ազատ ձգուած էր նաեւ այդ ցեղասպան հրէշը:

Այդ եղեռնագործները պետութիւններու եսասիրական շահերուն եւ ձգտումնաւոր քաղաքականութեան հետեւանքով, պատիժէ ազատ մնացին, բայց մարդկային պատմութեան անաչառ դատաւճիռէն չեն կրնար ազատ մնալ:

Պատմութեան անկողմնակալ վճիռները անյեղլի եւ տեւական են:

Ազգերու պատմութեանց մէջ ոճրագործները դամուած են անպատուութեան սիւնին:

ՀԱՅԿԱԶՆ Գ. ՂԱԶԱՐԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ

ԵՐԵՒԱՆ Կ'ԱՃԻ ԵՒ ԿԸ ԳԵՂԵՑԿԱՆԱՅ

Վերջերս կարեւոր խորհրդակցութիւն մը կատարուած է Երեւանի մէջ՝ մայրաքաղաքին բարեկարգութեան եւ բարեզարդութեան նոր ծրագիրներու մասին:

Այս խորհրդակցութեան ընթացքին՝ Գ. Հասրաթեան տուած է զեկուցում մը: Քաղենք գլխաւոր մասերը.—

Անցեալ տարի 147 հազար քառակուսի մեթր բնակելի տարածութիւն յանձնուած է օգտագործման, — ըստ ծրագրի՝ նախատեսուած էր 134 հազար քառակուսի մեթր: Շնորհիւ բնակարանային շինարարութեան այս նուաճումներուն, Հրազդանի աջ ափին վրայ գտնուած քաղաքամասը ստացած է 30.000 բնակչութեամբ փոքր քաղաքի մը տեսքը: Նոր բարեկարգ թաղամասեր ստեղծուած են նաեւ Զարբախի եւ Նոր Զէյթունի մէջ: Գալով 1964–1965 տարիներու շինարարական ծրագիրներուն, 1964ին Երեւանի կեդրոնական մասին մէջ պատրաստ պիտի ըլլայ 100.000 քառակուսի մեթր բնակելի տարածութիւն, 1965ին՝ 120.000: Պիտի ձեռնարկուի Կոնդ թաղամասի, Մոսկովեան փողոցի եւ Հրազդանի աջ ափի թաղամասերուն վերակառուցման, այդ տեղերուն մէջ բարձրացնելով 10–14 յարկանի տուֆ քարէ շինուած բնակարաններ: Յառաջիկայ աշնան զարկ պիտի տրուի կանանչ տարածութեանց ընդարձակման: Երեւանի զանազան մասերուն մէջ պիտի տնկուին 40.000 վարդի թուփեր:

Երեւանի նոր տեսք տալու եւ զայն աւելի գեղեցկացնելու համար, մեծ նշանակութիւն ունի քաղաքին արտաքին լուսաւորութիւնը: Վերջերս զետեղուեցան հազար սնդիկային լամբեր, որոնք երեք անգամ աւելի լոյս կուտան՝ 5.000 քիլովաթ ժամ ելեկտրական ուժի խնայողութեամբ: Ընթացիկ տարուան մէջ քաղաքին բոլոր փողոցները պիտի ողողուին լոյսով:

Հրազդանի կիրճին ջուրի քանակութիւնը եւ խորութիւնը աւելցնելու համար՝ պատնէշներ պիտի կառուցուին գետին աջեւ: Կիրճին մէջ պիտի հիմնուին արձարաններ, սնունդի տաղաւարներ: Պիտի կազմակերպուի կանոնաւոր երթեւեկութիւն, որպէսզի շրջանը իր ամբողջ երկարութեամբ դառնայ ինքնատիպ հանգստավայր մը: Լենինի պողոտայէն, մանկական երկաթուղիի փապուղիէն մինչեւ Շահումեան այգին կապ պիտի հաստատուի: Այգիին մէջ պիտի հիմնուին պարենաւորման կէտեր, երախաներու խաղավայրեր ու թատրոն:

Հեռու չէ այն օրը, — Հասրաթեան վերջացուց իր զեկուցումը,—երբ մայրաքաղաքը պիտի գեղեցկանայ «Երեւանեան ծովով», ջուրի եւ կանանչութեան առատութեամբ եւ նոր կամուրջներով:

ՍԱՐԵՐԸ ԿԸ ՍԱՍԱՆԻՆ

Անդունդի եզրին կառչած վանք մը կայ, կը գրեն Ժ. Զրբաշեան եւ Կ. Աղաբեան: Հազար տարուան կեանք ապրած, հազար դար Արփա գետակին վշշոցին ունկնդիր շինութիւն մը, որ արհաւիրքի տարիներուն՝ պատսպարուեր են, իսկ Վարդավառի տօներուն՝ խրախճանք են կատարեր Սիւնեաց մեծատունները: Անցած դարերու, անցած փառքերու [illegible] վկային մամռոտ պատին վրայ այսօր ալ տակաւին կարելի է կարդալ Սմբատ Իշխանի յիշատակութիւնը.

« Վայոց ձորը մի մատանի է, կառուցելով այս վանքը՝ ես դրեցի նրա ակը » (մատանիին թանկագին քարը):

Այժմ Վայոց ձորին մէջ նորակառոյց ճարտարապետական սքանչելիքները կը զուգորդուին բնութեան վայրի գեղեցկութեանց հետ, բայց վանքը մնացեր է մինակ, նմանելով գետին անկողինէն դուրս նետուած որձաքարի: Վայոց ձորի մատանիին իսկական քարը նոր է որ կը դրուի, մեր օրերուն՝ Կեչուտ գիւղի մօտ, (գիւղն իր անունը կը ստանայ կեչի կոչուած ծառերու անտառէն): Ա[illegible]տեղ, ճարտարագէտները կ'աշխատին սանձել Արփա գետակը, ընթացքը ուղղելու համար դէպի կապուտակ Սեւանը, այն ծրագրով որ իր անկողինին շրջակայքը ափեն վարդեր ու զարոն:

Մեծ, նոր օրերու վայել գործ է այս ձեռնարկը:

Ահա չափանիշերը.—

40 մեթր բարձրութեամբ ամբարտակ, Ջրամբարի հայելին պիտի ունենայ 10 հեկտար երես, իսկ տարողութիւնը՝ 5 միլիոն խորանարդ մեթր, ու ջուրի փապուղի մը, 47,6 քիլոմեթր երկար, որ մէկ վայրկեանի մէջ Սեւան պիտի թափէ 18 խորանարդ մեթր ջուր: Յետոյ իր ճամբուն վրայ՝ համախմբելով լեռնային վտակները եւ առուակները, Սեւանը պիտի հարստացնէ 8 խորանարդ մեթր:

Գ. Հախվերդեան, այս շինարարութեան պետը, որ իր տաղանդը ցոյց տուաւ Գիւմիւշի, Արզնիի, Երեւանի ջրաելեկտրակայաններու կառուցման մէջ, կ'երազէ կարծես թերթատելով շինութեանց ծրագիրը, ու կ'ըսէ.

— Մենք, Կեչուտից մեկնողներս եօթը տարի ետքը Վարդենիսի լեռներում կը հանդիպենք Սեւանից եկողներին »:

Ի հարկէ, հիմակ ալ կը հանդիպին [illegible] գիտեն թէ ի'նչով զբաղած են Արփա–Սեւան գծին հակառակ ծայրը աշխատողները, — փապուղի կը փորեն: Սակայն

ՀԱՄԱՅՆԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԴԵՐԸ ՌՈՒՍԵՒԹՈՒՐՔ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆՑ ՄԷՋ

1919–1922

Նախորդ օրը, Ազգային Մեծ Ժողովը ընտրած էր իր առաջին առժամեայ կառավարութիւնը: Յաջորդ օրը, Համայնավար կուսակցութիւնը Պաքուի մէջ կ'անցնէր իշխանութեան գլուխ:

Այսպէս, «Թուրքիոյ Ազգային Մեծ Ժողովին կողմէ Մոսկուայի խորհրդային կառավարութեան յղուած առաջին առաջարկութիւն»ին մէկ մասը (այս էր Մուսթաֆա Քէմալի նամակին պաշտօնական վերնագիրը) արդէն իր առաքման պահուն իսկ ապաժամ դարձած էր դէպքերու թաւալգլոր ընթացքով: Նամակը իր տիրոջ՝ Լենինի հասաւ միայն 1920 Յունիս 1ին: Լենին հրահանգեց, որ Չիչէրին յաջորդ օրն իսկ պատասխան մը գրէ: Մինչ այդ, Հալիլ փաշա եւ Ֆուատ Սապիթ հասած էին Մոսկուա, ուր արժանացած էին ջերմ ընդունելութեան: Այս վերաբերմունքին իբր գլխաւոր պատճառ պիտի նկատուի Ֆուատ Սապիթի բռնած շատ ճարտար ընթացքը, որ Մոսկուայի Մեծ Օփերային մէջ Թրէյտ Իւնիոններու մէկ պատգամաւորութեան ի պատիւ տրուած ընդունելութեան առթիւ՝ խելայեղ ծափերու արժանացած ճառ մը խօսեցաւ Թուրք գիւղացիներու եւ բանուորներու անունով, եւ որուն մէջ կը բացագանչէր (1).—

«Ընկերնե՛ր, աշխարհի ամէնէն զզուելի ողբերգութեան զոհ դարձած են Անատոլուի գիւղացիներն ու բանուորները: Եւրոպայի դրամատէրերը կ'անդրադառնան, թէ պիտի չկրնան կանգուն մնալ՝ հանրային կարծիքին պատճառաւ, եւ իրենց երկիրներու բանուորներուն զարթօնքին հետեւանքով: Ահա թէ ինչո՛ւ կը ջանան իրենց համար աշխատցնել Թուրք պրոլետարիատը: Իրենց դրամագլուխին շահերուն համաձայն Թուրքիան բաժնած են շրջաններու, եւ զանոնք գրաւած: Իրենց իսկական նպատակները պահելով իրաւական արտաքին պիտակի մը ետին, պատրուակ կը բռնեն Հայերու եւ Յոյներու հարցերը. իսկ Հայերն ու Յոյները ուրիշ բան չեն եթէ ոչ միջազգային դրամատիրութեան գործակալները: Թուրք բանուորներն ու գիւղացիները կ'ակնկալեն, որ ամբողջ աշխարհի բանուորները, եւ ի մասնաւորի՝ Ռուսիոյ բանուորները, իրենց չզլանան եղբայրական աջակցութիւն՝ յանուն անկախութեան իրենց մղած պատերազմին մէջ»:

1920 Մայիս 24ին յանձնուած եւ «Խորհուրդներուն» վերտառութիւնը կրող իր տեղեկագրին մէջ, Ֆուատ Սապիթ կը նշէր (2).—

«Արտաքին թշնամիին հաշուեյարդարէն ետք ծայր պիտի տան միջ–կուսակցական պայքարներ, եւ, վստահ եմ, ռուսական յեղափոխութեան գործած ազդեցութիւնը շատ աւելի զօրաւոր պիտի ըլլայ, քան՝ Ֆրանսական Յեղափոխութեան ազդեցութիւնը Եւրոպայի մէջ»:

Հալիլ փաշա, իր կարգին, հետեւեալ բովանդակութեամբ նամակ մը կը գրէր Մուսթաֆա Քէմալին (3).

« Ձեր եւ ձեր կացութեան մասին խօսակցութիւններ ունեցանք Գարախանի, Չիչէրինի եւ Կամենեւի հետ: Սովնարկոմը որոշած է օգնել Թրքական ազգային շարժման, առանց սակայն այս օժանդակութիւնը հրապարակելու: Պատերազմական ժողովրդային Կոմիսարութիւնը, այսինքն՝ Թրոցքի, հրահանգ տուած է զէնքեր եւ զինամթերք ուղարկել անմիջապէս: Մեզի տեղեկացուցին թէ պէտք է հրաժարինք Հայաստանի դէմ ուղղուած գործողութիւններէն՝ տրուած ըլլալով իրենց եւ մեր կացութիւնը: Անհամբերութեամբ կը սպասուի Ազգային Մեծ Ժողովին կողմէ պատուիրակութեան մը գալուստին: Ապա՝ ձեր կառավարութիւնը պիտի ճանչցուի եւ բոլշեւիկեան պատուիրակութիւն մը պիտի ուղարկուի Անգարա»:

Թուրք համայնավարներու շատ թանկագին ծառայութիւնը, որմէ Մուսթաֆա Քէմալ կրցաւ օգտուիլ խորհրդային կառավարութեան հետ բարեկամական յարաբերութեանց ստեղծման ատեն, որ առթիւ հասաւ իր գագաթնակէտին եւ միեւնոյն ատեն ալ վերջ գտաւ: [illegible] օրուընէ սկսեալ, արդարեւ, Թուրք համայնավարներու գործունէութիւնը [illegible] դժգոհութիւն պատճառեց Անգարայի, եւ նոյնիսկ Մոսկուայի: [illegible] անհամաձայնութեան աւելի եւս [illegible] պատճառ մը հանդիսացաւ հայկական հարցը, որուն մասին բոլորովին կը տարբերէին Անգարայի եւ Մոսկուայի տեսակէտները:

(Շար. – 4)

1) Ք. Քարապէքիր Իսթիքլալ Հարպիմըզ, էջ 789, 793:

1) Նոյն գիրքը, էջ 790–792:

3) Նոյն գիրքը, էջ 799–800:

...ոտքե՛ր պիտի ըլլայ հանդիպումը, եօ-թը տարի ետքը:

— Տօն կը լինի, յաղթանակի տօն, ...ջրվէժի սրտից ջուր կը խմենք, կը ...րէ տեղակալ Գ. Վարդանեանը, որ ...րծակասէր մարդ է:

Այսօր երկունքի մէջ է հսկան: Փորող մեքենաները հողին մէջ կը մխրճեն իրենց ժանիքները: Գետին ձախ ափին վրայ ...կ հորատող մեքենան: Դէս ու դէն մեքենաներ կ'երթան ու կուգան: Միւս ...ողմէ գաշտակայանին վրայ կը բարձրա-...ան երկյարկանի օթեւաններ: Կը հիմ-...ուին ժամանակաւոր հիւանդանոցներ, ճաշարաններ, պարենաւորման կա-...աններ՝ շինարարութեան կապուած աշ-խատաւորներուն համար: Նման աշխա-տանքներ՝ Կարմրաշէնի եւ Գիւլիդուզի մէջ:

«Սով. Հայաստան»ի Թղթակիցները, որոնց անունը տուինք, կ'աշխատին խօ-սեցնել համեստ բանուորներն ու տաղան-դաւոր վարպետները, ոմանք «ուրրաթա-խօս», ոմանք ալ Արփա–Սեւան մեծ ձեռ-նարկին նուաճումովը խանդավառ, կը խօսին Հսկային ապագայ տեսքին մա-սին, մինչ վայրը ձորը կը թնդայ եւ սա-րերը կը սասանին:

ԿԱՐՄԻՐ ՓՈՂԿԱՊԱՒՈՐՆԵՐԸ

Այսպէս կը կոչուին Հայաստանի պա-տանիները, Երեւանեան բառով՝ պիոնէր-ները, արտասահմանեան բառով՝ արինե-րը, որոնք ամրան իրենց արձակուրդը կ'անցընեն Ծաղկաձորի մէջ:

Ծաղկաձո՞ր:

Յուլիս 31ին, առաւօտուն կանուխ եռ-ուզեռի մէջ էին այս պատանիները: Ծաղ-կաձորի բնութեան գեղեցկութեամբ ներ-շնչուած, տօնական տրամադրութեամբ համակուած, կ'երգէին, կը պարէին եւ իրենց ճամբարը կը զարդարէին:

Հազարաւոր պատանիներ, որոնք ան-ընդհատ կը շարժին, կը վազեն, կը ցատ-կեն:

Նոյն օրը, իրիկնադէմին, երբ արեւին ամենէն շողերը հազիւ կը լուսաւորէին ծառերուն կատարները, յանկարծ ձորն ամբողջ արձագանգեց շեփորներու եւ թմբուկներու ձայնէն: Անտառը կը թըն-դար փողային նուագախումբին ձայնե-րէն: Լեռնալանջերէն, հեռաւոր ու մօտիկ բացատներէն դէպի Ծաղկաձորի հրապա-րակը կը հոսէր մանուկներու ալիքը: Անոնք իրենց ձեռքերուն մէջ ունէին ան-համար ծաղկեփունջեր, կարմիր դրօշ-ներ, կանանչ ոստեր:

Այսպէս անցան անոնք, «Փարուն» ճամ-բարի տղաքը, «Մեսրոպ Մաշտոց» ճամ-բարին պատանիները, «Հրաչեայ Ներսիս-եան» ճամբարին երախաները, «Փարվա-նա» ճամբարին արիները: Զանոնք ծա-փահարութիւններով կ'ընդունէին Ծաղ-կաձորի բնակչութիւնը եւ հիւրեր, պաշ-տօնական անձնաւորութիւններ, — կու-սակցութեան կեդր. կոմիտէին Բ. քար-տուղարը, Բաղդասարեան, երիտասար-դութեան կեդր. կոմիտէի քարտուղար-ներ Փօղոսեան եւ Հայրաթեան, եւայլն:

— Զգա՛ստ:

Նարասխենին ղեկավարն է որ կը հրա-մայէ: Շեփորահարները գործի կը սկսին՝ հնչեցնելով հայ արիներու քայլերգը: Յետոյ կ'երգեն բոլորը միաձայն: Կը խօսին հիւրերը: Ի վերջոյ, Ծաղկաձորի մէջ հանգստանալու եկած Լատվիացի դպրոցականներու խումբին կողմէ կը խօ-սի ներկայացուցիչը, Տանիա Բայ: Կը սկսի շքերթը: Նուագախումբի եւ ներ-կաներու բուռն ծափահարութիւններուն տակ՝ կ'անցնին ամպիոնի առջեւէն:

Արեւը լերան թիկունքն է անցած ար-դէն, բայց մանկական այս քաղաքը կը շարունակէ իր տօնը, — ճամբարային հանդէսը: Կը վառին խարոյկները, կը սկսին պարերը, ու Ծաղկաձորը եւս կը պարէ ու կ'երգէ պատանիներուն հետ՝ արձագանգ տալով անոնց ուրախութեան:

«ԱՄԲՈՂՋ ԿԵԱՆՔԻՍ ՄԷՋ ՄԻՇՏ ՊԻՏԻ ՅԻՇԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԸ»

Օտարներ, յաճախ պետական մարդիկ, պարբերաբար այցի կ'երթան Հայաստան: Վերջերս Երեւան այցելած է Քամպոճի պետութեան վերադոյն դատաւորը, Բոսս Սամիտ:

Հայաստանի հեռագրական գործակա-լութեան ներկայացուցիչին հետ խօսե-լով՝ հետեւեալ յայտարարութիւններն է ըրած.

ՅԱՆՈՒՅՐԻ ՀԱՅԵՐ

(Բ. եւ վերջին մաս)

Քրեմիէօ.— Խաղաղ եւ անդորր քաղաք մը: Փողոցներու մէջ չկայ եռուզեռ, ոչ ալ խճողում: Կարծես թէ քաղաքը գի-շերային քունի մէջ է: Այդ մեռապաղաղ խաղաղութիւնը կը խանգարուի դէպի Պուրկուէն ընթացող քանի մը ինքնա-շարժերու ժխորով: Աղմուկէն չախորժող բարեկամներու համար յանձնարարելի հանգիստ օթեւան:

Այստեղ հինգէն վեց ընտանիքներէ բաղկացած հայ գաղութ մը կայ, գրեթէ բոլորն ալ առեւտրական, արհեստաւոր, խանութպան: Խանութի մը վրայ արձա-նագրուած Հայու անուն կարդալով՝ ներս կը մտնեմ: Տարեց կին մը սիրով կ'ըն-դունի զիս հայերէն խօսելով: Ո՜վ բարե-բախտ զուգադիպութիւն, 12–14 տարե-կան երկու Հայկակներ հայերէն կը խօ-սէին: Վերջէն իմացայ որ իրենց մայրը երկրորդական ուսում ստացած բանիմաց Հայուհի մըն է:

Ժամը 11,30: Ես դեռ ունիմ քանի քի-լոմեթր ճամբայ՝ հասնելու համար շըր-ջագայութեանս վերջին կայանը:

Ճամբան հարթ–հաւասար, բաւական լայն, ինքնաշարժերու շարան ու խճո-ղում չկայ: Մեքենան սրընթաց կ'ընթա-նայ, ու ես «Յառաջ»ի հանդէպ ունեցած պարտականութիւնս կատարողի անհուն գոհունակութեամբ, պահ մը չորս տաս-նեակ տարիներ ետ երթալով, կը վերյի-շեմ Մասիսի քղանցքին տակ, Անկախ Հայաստանի մէջ անցուցած երկու տար-ուան պետական սեմինարիայի ուսանողի երջանիկ կեանքս, եւ կը սկսիմ Արտվեան երգել: Հին յիշատակներու մէջ այնքան խորասուզուած էի, որ չիմացայ թէ ար-դէն հասած էի վերջին հանգրուանս:

Պուրկուէն.— Դէպի Կրընոպլ երկարող մայր խճուղիին վրայ տարածուած նո-րակերտ փոքր քաղաք մըն է, հրաշալի տեսարաններով եւ անտառներով: Այս մաքուր ու կոկիկ քաղաքին մէջ, տասնե-հինգ տուներէ բաղկացած փոքր գաղութ մը ունինք: Ուրֆացի, Այնթապցի, Պօ-լսեցի, Իզմիտցի, Բաբերդցի, Իզմիրցի, Ատանացի՝ իրար խառնուած: Փոքրիկ հաւաքականութիւն մը համերաշխ մըթ-նոլորտի տակ: Ամէն ոք զբաղած իր անհատական գործերով: Ազգային կեան-քով հետաքրքրուող անհատներ կան, բայց ոչ խմբակցութիւններ: Քաղաքը կը բաժնուի երկու մասերու, վարչական տեսակէտով: Բուն քաղաքը ու անոր կից Մալիեռ կոչուածը: Հայերը կը բաժ-նուին երկու երեք դասակարգերու, — գործաւորներ, արհեստաւորներ, առեւ-տրականներ: Բանուորները կ'աշխատին Տէտրիշ ընկերութեան գործարաններուն մէջ: Անոնցմէ շատեր կը բնակին նոյն հաստատութեան բնակարաններուն մէջ: Երեք հոգի կը զբաղին չրջուն վաճառոր-դութեամբ, երեք հոգի՝ արհեստներով: Եղեսիացի Արմենակ Եօթնեղբայրեան տիկնոջ հետ կը զբաղի լուսանկարչու-թեամբ ու կանանց վարսայարդարու-թեամբ: Գ. Պըչաքճեան (Այնթապցի), կօշիկի առեւտուրով եւ միեւնոյն ատեն հիներու նորոգութեամբ: Երրորդ մը դարձեալ վարսայարդար, այրերու եւ կանանց: Կիլիկեցի դերձակ մը, որ ա-միսներ առաջ անձնասպան եղած է:

Ահա ամփոփ պատկերը Իզէռ Նահանգի քանի մը հայաշատ մեծ ու պզտիկ քա-ղաքներու ու գիւղերու:

Հայը ամէն տեղ ունի տնտեսական նա-խանձելի վիճակ, իսկ ազգային գետնի վրայ՝ քառապատիկ վայրէջք: Մխիթա-րական նշանները հետզհետէ կը նուազին: Արդ, տեղին է նօթագրել անոնցմէ մի քանիները:

Տօնավաճառի մը մէջ Հայեր գտնելու մտադրութեամբ՝ երբ կը շրջէի ընդար-ձակ հրապարակին վրայ, աչքիս զարկաւ ինքնաշարժներու շարան մը: Գտայ 25 կառք եան վերջացող հայ անուններով: 15 ուրիշներ, յօրինած էին չինծու ու խորթ մականուններ: Նաեւ տասնեակ մը կրճատեալ մականուններով: Օրինակ, Տօլմաճեան եղած էր Տօլմակ:

Հանդիպեցայ նաեւ հայ մեծ վաճառա-կաններու, որոնք հպարտութեամբ իրենց խանութներու վրայ, մեծ տառերով, հա-յերէն եւ ֆրանսերէն արձանագրած են իրենց իսկական անունն ու մականուն-ները:

Հայ դերձակի մը խանութէն ներս կը մտնեմ: Ներսը չորս հոգի կար: Վարպե-տը զբաղած էր յաճախորդի մը չափը առնելով, իսկ երկու հոգի կ'աշխատէին:

— Բարեւ ձեզ, կ'ըսեմ: Հազիւ թէ ար-տասանած էի, մէկը թեւէս քաշելով, կամաց մը կը փսփսայ ականջիս.

— Մի խօսիր հայերէն:

Զայրոյթս հասաւ իր գագաթնակէտին: Օտար մարդ մը զգալով ընդվզումս, բա-ցաւ բերանը եւ ըսաւ խանութպանին... մաքուր հայերէնով.

— Պարո՛ն, հոս Թուրքիա չէ, ամէն մարդ ազատ է իր գիտցած լեզուով ար-տայայտուելու:

Ինծի ֆրանսացիութիւն ծախող Հայը խեղճացաւ: Զզուանքով դուրս ելայ խա-նութէն: Ետքը իմացայ թէ այդ լուսա-միտ մարդը Ֆրանսացի հանգստեան կոչ-ուած բարձր անձնաւորութիւն մըն է, երկար տարիներ ապրած ըլլալով Թուր-քիա, Հայերու հետ շփում ունենալով՝ սորված է հայերէն խօսիլ ու գրել: Հա-յուհիի մը հետ ամուսնացած ու տղան եւս ամուսնացած է Հայու հետ:

Շրջագայութեանս ընթացքին առիթը ունեցայ ներկայ ըլլալու երկու հայկա-կան դաշտահանդէսներու: Մին տեղի կ'ունենար Շասի մէջ, իսկ միւսը հեռա-ւոր շրջանի մը մէջ: Շասի Հաճնոյ երի-տասարդաց նորակազմ Միութիւնը ձեռ-նարկած էր այս դաշտահանդէսը: Խումբ մը նորահաս երիտասարդներ, առանց աղմուկի, մեզի ընծայեցին հայրենա-շունչ ու հաճոյալի օր մը. հայերէն եր-գեր, արտասանութիւն, պար, զաւեշտ, նուագ: Նոյնիսկ երիտասարդ մը փորձեց բացման խօսք արտասանել հայերէն լեզ-ուով: Հանդէսը անցաւ շատ յաջող: Քա-ջալերական երկու համեստ խօսք ըրի նաեւ ես: Եղան նուիրատուութիւններ ու ժողովուրդը լայն չափով մասնակցեցաւ:

Զուտ հասոյթ 1650 նոր ֆրանք գոյացաւ, աննախընթաց յաջողութիւն մը:

Ներկայ եղայ նաեւ Փօն–տը–Շէրիւիի Ազգ. Միութեան դաշտահանդէսին, ուր բացակայ էր... հայկական դրօշը:

Խառն ամուսնութիւնները հետզհետէ կը ստանան լայն ծաւալ: Հայ օրիորդը, ամուսին ընտրելու մէջ հիմա խտրութիւն չի դներ նաեւ սեւին ու ճերմակին միջեւ:

Հանդիպեցայ մէկ ընտանիքի. չորս քոյ-րեր ամուսնացած են օտար երիտասարդ-ներու հետ: Եւ չորսն ալ ներկայիս ե-րեսի վրայ ձգուած են, ամուսինները ա-ներեւութացած են, մէկ–մէկ երախայ յիշատակ ձգելով: Բարեբախտաբար ու-րախութիւն, հպարտութիւն պատճառող պարագաները նուազ չեն:

Բոլոր Հայերը բարեկեցիկ են եւ ունե-ւոր: Հպարտ եմ յայտարարելով թէ կա-րօտ Հայու չհանդիպեցայ:

ԱՆՑՈՐԴ

«ՅԱՌԱՋ»Ի ԹԵՐԹՕՆԸ (206)

ԵԸԼՏԸԶԻ ՊՈՄՊԱՆ

ՀԱԶԱՐ ԻՆԸ ՀԱՐԻՒՐ ՉՈՐՍ

36. Գարեգին (փախստական), նոյն վարժարանի աշակերտ, Կէտիկ փաշայի բնակիչներէն:

37. Մանուկ (վախճանեալ), Կ. Պոլսոյ կայսերական Բժշկական Համալսարանի դեղագործութեան ուսանող:

Այս հինգն ալ յանցապարտ կը ճանչ-ցուին, որովհետեւ իրենց պատկանած հայ յեղափոխական կոմիտէին եղեռնա-կան ձեռնարկներուն պատրաստութեան մասնակցած են, զանազան դերեր կատա-րած են, եւ կոմիտէին խռովարարական գաղափարներու տարածումին սատարած են:

Ոճիրները նախատեսուած են Պատժա-կան Օրէնքին 58րդ յօդուածին առաջին հատուածովը:

38. Միխալ, Նիքոյի որդի (բանտարկ-եալ), մաքսէն ապրանք հանող, Կ. Պոլիս:

39. Մաթթէօ, Սերգէյի որդի (բան-տարկեալ), մաքսէն ապրանք հանող, Կ. Պոլիս:

Երկուքն ալ ամբաստանեալ են, որով-հետեւ իրենք մաքսէն հանել տուած են մահափորձին կառքը. իրենց յանցաւո-րութիւնը կամ անպարտութիւնը տարա-կուսելի է:

40. Միլթօ (բանտարկեալ), երկաթա-գործ, բնակեալ Կ. Պոլիս:

41. Մանոլ (բանտարկեալ), երկաթա-գործ, բնակեալ Կ. Պոլիս:

Երկուքն ալ մեղապարտ են, որովհե-տեւ իրենց աշխատութիւնը նուիրած են պատրաստելու արկղը, ինչպէս նաեւ ի-րենք շինած են դժոխային մեքենան. սակայն, իրենց յանցաւորութիւնը կամ անմեղութիւնը կրնայ նոյնպէս կասկածի տակ դրուիլ:

Ցանձնաժողովը կը հրաժարի մեղա-պարտ հռչակելէ.

1. Մառի Փասքալ Սարկոլոկօն, որուն հաճոյակատարութիւնը օգտագործած էր յանցապարտ Վահանը, անոր ձեռքով կրել տալով պայթուցիկ նիւթերու ծրար-ներ Առաքել բռնած Տաքէս Նահապետ-եանին՝ աւստրիական հիւանդանոցին քով:

2. Մառի Նահապետեանը, Առաքելին աղջիկը, զոր իր հայրը զրկած էր հիւան-դանոցի մայրապետին վստահութիւնը խաբելու և իր վախցած խուզարկութենէն դերծ կացուցանելու համար պայթուցիկ առարկաներն ու հրանիւթերը, զորս ինքը կը պահէր այդ հաստատութեան ղարանի մը մէջ:

Այս երկու աղջիկներէն առաջինը, Մա-ռի Փասքալը, անպարտ կը նկատուի, ո-րովհետեւ իր բարեմտութիւնը հաստատ-ուած է: Գալով երկրորդին, Մառի Նա-հապետեանին, նկատի առնուած է անոր դեռահաս տարիքը, նաեւ այն պարագան թէ իր կթասիրտ զգացումներէն դրդուե-լով է որ ան գործած է այդ արարքները: Աւելորդ է յիշել թէ Եըլտըզի Քննիչ յանձնաժողովը, աւարտելէ յետոյ իր քննութիւնները, արդիւնքը նախ հաղոր-դած էր Հիւնքեարին, որ, իր կարգին, կայսերական իրատէով մը, հրամայած էր խնդիրը վերաքննել դատական իշխա-նութեան ձեռքով:

Ահա այդ հիման վրայ է որ քննու-թեանց բոլոր թուղթերը ղրկուած էին Դատական Նախարարութեան, ընդարձակ տեղեկագրով մը, ուր յանցապարտ հըռ-չակուած բանտարկեալ թէ փախստական անձերուն պատիժները զատ զատ նշա-նակուած էին, ինչպէս տեսանք. պատիժ-ներ, որոնք նոյնութեամբ ընդունուեցան Եղեռնադատ Ատեանին կողմէ:

ՍՄԲԱՏ ԲԻՒՐԱՏ

(Շար.)

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Մարսիլիոյ մեր ընկերներէն Տոքթ. Ա. Շահպազեան եւ իր տիկինը, Յառաջի խմբագրատունը այցելելով, այս առթիւ հետեւեալ նուիրատուութիւնները ըրին.—

Մշակոյթի Տան Շ. Միսաքեան սրահին, Ս. Թէհլիրեան սրահին, Հ. Յ. Դ. Թանգարանին, Յառաջին, Հայ-Բոյժին տասնական ֆրանք:

Այս նուէրները ստանալ Յառաջի խմբագրութենէն:

Ընկեր Շահպազեան, իր հիւանդութեան առիթով Կապոյտ Խաչի ընկերուհիներուն կողմէ տրուած այցելութեան իբրեւ շնորհակալութիւն, տասնեւհինգական ֆրանք կը նուիրէ Կ. Խաչի Մարսիլիոյ մասնաճիւղին եւ Օգափոխութեան կայանին, տասը ֆրանք՝ կայանին համար ուսուցչուհիներ պատրաստելու ֆոնտին, ինչպէս եւ իբրեւ հայրենակցական նուէր՝ տասը ֆրանք Վարագ Թերթին բարգաւաճման: Շնորհակալութիւն բոլոր այցելուներուն եւ Վասպուրականի Հայրենակցական Միութեան:

Այս նուէրները ստանալ Կ. Խաչի վարչութենէն:

Շ. ՄԻՍԱՔԵԱՆ

Օրեր եւ Ժամեր

ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻՉ (ՓԱՐԻԶ)

Այս կիրակի, Տօն Վերափոխման Սուրբ Աստուածածնի: Այս առթիւ Փարիզի Ս. Յովհաննէս-Մկրտիչ եկեղեցւոյ մէջ պիտի մատուցուի հանդիսաւոր պատարագ եւ պիտի տրուի աւուր պատշաճի քարոզ: Յաւարտ պատարագի պիտի կատարուի խաղողի օրհնութիւն:

Այս երկուշաբթի, Մեռելոց: Պիտի մատուցուի պատարագ եւ պիտի կատարուի հոգեհանգիստ մեր ազգի բոլոր ննջեցեալներուն ի հանգիստ: Պատարագը կը սկսի ժամը 10ին:

×

ՎԱՐԱԳԱՅ Ս. ԽԱՉ (ԱՌՆՈՒՎԻԼ)

Այս կիրակի հանդիսաւոր պատարագ Աստուածածնայ տօնին առթիւ: Կը պատարագէ Ներսէս վարդապետ Փափուճեան: Յաւարտ պատարագի, աւանդական խաղողօրհնէք:

×

Ս. ՅԱԿՈԲ (ԼԻՈՆ)

Շաբաթ (17 Օգոստոս), Նախատօնակ երեկոյեան ժամը 5ին: Կիրակի (18 Օգոստ.), սկզբն. ժամերգթ. առաւօտ ժամը 7,30ին: Պատարագ ժամը 10ին: Խաղողօրհնէք 11ին, Հոգեհանգիստ ժամը 11,30ին:

Լիոնի եւ Շրջ. Հայ Ազգային Միութեան Վարչութիւնը կը հրաւիրէ շրջանի բարեպաշտ հայ ժողովուրդը ներկայ ըլլալու 18 Օգոստոսին Ս. Աստուածածնայ տօնի առթիւ կատարուելիք արարողութեանց: Յաւարտ պատարագի տեղի պիտի ունենայ նաեւ խաղողի եւ մատաղի աւանդական օրհնութիւնը:

×

ՇԱՒԻԼԻ ՄԷՋ

Պատարագ եւ աւանդական խաղողօրհնութիւն այս կիրակի առաւօտ:

×

ՏԷՍԻՆ

Ուրբաթ, Աղի օրհնութիւն եւ մատաղի զենում կէսօրէ վերջ ժամը 3ին:

Շաբաթ, Հսկումի արարողութիւն կէսօրէ վերջ ժամը 6ին:

Կիրակի (18 Օգոստ.), Տօն Աստուածածնայ. սկիզբ ժամերգութեան ժ. ը 8,30ին, հանդիսաւոր պատարագ ժ. ը 10ին, մասնակցութեամբ տեղւոյն երկսեռ երգչախումբին, ղեկավարութեամբ Պ. Գ. Մարտիրոսեանի. երգեհոն եւ մեներգ Օր. Անժէլ Կարապետեան, խաղողօրհնէք եւ մատաղի բաշխում:

×

ԽՆԴԱԿԱՆ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ ԷՔՍ - ԼԷ - ԲԷՆԻ ՄԷՋ ԱՅՍ ԿԻՐԱԿԻ, Ս. Աստուածածնայ Տօնակատարութեան առթիւ

Օթոքառները ժամը 9էն սկսեալ կը մեկնին Փառքին քովէն եւ կայարանէն: Իջնել լարուղիի (թելեֆերիք) կայանը, հոն Լա Շոմիէռ սրճարանի յարակից դաշտերու վրայ, պաղ ջուրի մօտ:

Ժամը 10ին կը սկսի պատարագ եւ խաղողօրհնէք: Ճաշէն ետք՝ բացում դաշտահանդէսի: Օրուան նշանաբան՝ «ՀԱՅԸ ՀԱՅ ՊԱՀԵԼ»:

Օգոստ. 17ին կը կատարուի Տողակաթի տօնի եւ Օգոստ. 19ին Մեռելոցի պատարագներ՝ մատուցմամբ Օշին վարդապետի, մասնակցութեամբ Փարիզի եկեղեցւոյ դպիրներու:

ՄԱՐՍԷՅԼԻ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

Մայր Եկեղեցիի վարչութիւնը կը ծանուցանէ թէ այս կիրակի, Ս. Աստուածածնի Վերափոխման տօնը պիտի կատարուի օրուան յատուկ հանդիսաւոր արարողութեամբ. ինչպէս նաեւ Խաղողօրհնէք եւ Մեռելոցի Հոգեհանգիստ ընդհանուր ննջեցեալներու յիշատակին:

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Մարսէյլի մէջ Դաշնակցութեան Օրը կը տօնուի Հոկտեմբերի 5ին Սալոն Ակամպրա:

ՀԱՅ ԸՆԾԱՅԱՐԱՆ

Կը փնտռուի հայ տիկին մը Հաստատութեանս մէջ իբր խոհարարի օգնական: Մանրամասն տեղեկութիւններու համար դիմել գրաւոր կամ անձամբ՝

École Apostolique Arménienne
3, Av. de Grandchmp
LE PECQ (S. et O.) Tél. 963-01-72

ԿԵԱՆՔԻ ՈՒՂԻՆԵՐՈՎ

Գ. Հատոր

Շուտով լոյս կը տեսնէ Ս. Վրացեանի ԿԵԱՆՔԻ ՈՒՂԻՆԵՐՈՎ (Գ. Հատորը), շուրջ 300 էջ, պատկերազարդ եւ լաթակազմ:

Երրորդ հատորը կը բովանդակէ Ս. Վրացեանի յուշերը կամաւորական շարժման, ինչպէս նաեւ դէմքեր, դէպքեր եւ տպաւորութիւններ՝ մօտիկ անցեալէն:

ՓՈԽԱՆ ԾԱՂԿԵՊՍԱԿԻ

Շաւիլի եկեղեցւոյ վարչութիւնը Տիկին Անիկ Փափազեանի ցաւալի մահուան առթիւ փոխան ծաղկեպսակի շնորհակալութեամբ ստացած է Տէր եւ Տիկին Եէտիգարտաշեանէ 30 եւ Պ. Տիրան Զոլաքեանէ 50 ֆրանք:

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Հ. Բ. Ը. Միութեան Տիկնանց յանձնախումբը կը խնդրէ կազմակերպութիւններէն նկատի ունենալ հետեւեալ թուականները .—

ՀՈԿՏԵՄԲԵՐ 1, Երեքշաբթի երեկոյ Տիկնանց յանձնախումբի կազմութեան Գ. տարեդարձին առթիւ գեղարուեստական երեկոյթ:

ՀՈԿՏԵՄԲԵՐ 19, ցուցահանդէս հայ արուեստագէտներու նկարիչ, արձանագործ եւ փորագրիչներու գործերուն:

Հայկական Թանգարանը, 52 Ավընիւ Ֆոշ, (Փարիզ 16):

ԴԵԿՏԵՄԲԵՐ 7, 8, 9, 10, «Բարենպատակ վաճառք»:

Յառաջիկային պիտի տրուին մանրամասնութիւններ:

×

ԼԻՈՆ.— Ֆր. Կապ. Խաչի Օրը կը տօնուի մեծ պատրաստութեամբ, 27 Հոկտ. Մոլիէրի շքեղ սրահին մէջ:

×

Փարիզահայ Տիկնանց Միութեան յիսնամեայ յոբելեանը կը տօնուի Հոկտեմբեր 13ին, Սալ տը լա Շիմի:

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ Ս. ԽԱՉ ԵԿԵՂԵՑԻ

10 bis, Rue Thouin, PARIS

Այս կիրակի Վերափոխումն Տիրամօրն: Ջայնաւոր պատարագ ժամը 10,30ին եւ Խաղողօրհնէք:

Պիտի պատարագէ
Գերպ. ԿԻՒՐԵՂ ԵՊՍ. ԶՈՀՐԱՊԵԱՆ
Յունաստանի եւ Ճէզիրէի նախկին Առաջնորդը:

Երկուշաբթի Մեռելոց: Ջայնաւոր պատարագ ժամը 10,30ին համօրէն ննջեցեալներուն հոգիներուն համար:

ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ


Կապոյտ Խաչի Վիէնի մասնաճիւղի տարեկան դաշտահանդէսը տեղի կ՚ունենայ Սեպտեմբեր 1ին, առաւօտէն մինչեւ երեկոյ «Իւ-Էս-Ա.»ի մարզադաշտին վրայ (Թանըրիին քով):

Գեղարուեստական ճոխ բաժին: Բանախօսութիւն, երգ, արտասանութիւն եւ հայկական պարեր:

Ճոխ պիւֆէ. աղանդերներ եւ շամփուրով խորոված:

Սիրով կը հրաւիրուի գաղութի Հայութիւնը:

ՃԱՇԱՐԱՆ
ԵԱՐ



ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԹԵՒԱՆԵԱՆ

Եւրոպական, հայկական եւ կովկասեան ընտիր ճաշեր:

Առաջնակարգ կովկասեան խորովածներ:

ՀԱՃԵԼԻ ՄԹՆՈԼՈՐՏ

AU CŒUR MÊME DES CHAMPS-ÉLYSÉES
4, RUE ROBERT-ESTIENNE
(coin Rue Marbeuf) PARIS-8e
Téléph. : BAL. 31-21 et 30-84
Métro : F. D. Roosevelt

ԼՈՅՍԸ ԳՈՅՆ Է.... ԳՈՅՆԸ ԼՈՅՍ Է
ՁԵՐ ՏԱՆԸ ԼՈՅՍ ՏՈՒԷ՛Ք.... ԹՈՄԼԱՔԻ ԳՈՅՆ ՏՈՒԷ՛Ք
Ձեր բնակարանը կը լուսաւորուի
Եթէ ներսը եւ դուրսը
ՎԵՐԱՆՈՐՈԳԷՔ - ԶԱՐԴԱՐԷՔ - ՆԵՐԿԷՔ

ԹՈՄԼԱՔ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐՈՎ

PEINTURES THOMLAC
16 bis, Bd. Sébastopol, Paris 4e
Tél. ARC 26-61 – Métro : Halles et Chatelet

136, RUE DES BOURGUIGNONS — ASNIERES - BOIS COLOMBES (Seine)
Tél : GRE. 09-47
11, BD. DE LA REPUBLIQUE — LA GARENNE (Seine)
Tél. : STA. 19-06

ԱՆՄՐՑԵԼԻ ԳԻՆԵՐՈՎ

Ամէնէն արդիական, նուրբ եւ ընտիր ճաշակով պատրաստուած՝ առաջնակարգ ներկեր: Բնական եւ արուեստական բազմերանգ գոյներու մեծ ընտրութիւն: Նորոյթ իւղաներկեր, պատի գեղեցիկ թուղթերու ճոխ ընտրութիւն: Գետնի համար՝ ամէն տեսակ — լինոլէոմ եւ փլասթիք — ծածկոցներ.—
TAPIFLEX — TAPISOM — CARPETTE

Ձեր բնակարաններուն արտաքին եւ ներքին խնամքներուն համար անհրաժեշտ բոլոր նիւթերը:

Ամէն գնորդի կը նուիրուի յատուկ տետրակ մը, որու շնորհիւ կրնայ 10-30 առ հարիւր զեղչ ունենալ:

ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐ

52, RUE CHALON, PARIS 12e — 64, BLD. DE BELLEVILLE, PARIS 20e
166, AV. ARISTIDE BRIAND — PAVILLONS - SOUS-BOIS (Seine)
4 bis, RUE PAUL VAILLANT COUTURIER — ARGENTEUIL (S. et O.)
24, RUE PAUL VAILLANT-COUTURIER — ALFORTVILLE (Seine)
48 bis, RUE DALAVRAC — FONTENAY - SOUS - BOIS (Seine)

IMPRIMERIE SPECIALE
DU JOURNAL « HARATCH »
32, Rue de Trévise, PARIS (9e)

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

Le PREMIER QUOTIDIEN ARMENIEN en EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction et Administration : 32, Rue de Trévise - PARIS-9e

Fondé en 1925 Téléph. : PRO. 86-60
R. C. Seine 57 A 2731 C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա՝ Տար. 50 Ֆ. Վեցամսեայ՝ 27 Ֆ.
Արտասահման՝ Տար. 60 Ֆ. Հատը 0·30 Ֆ.

ԿԻՐԱԿԻ 18 ՕԳՈՍՏՈՍ
DIMANCHE 18 AOUT 1963

Le Numero : 0,30 Fr.

39րդ ՏԱՐԻ — Թիւ 9685 Fondateur : SCHAVARCH MISSAKIAN 39e ANNÉE — N° 9685

Իր ԽՕՍՔԸ

ՕՐԵՐԸ Կ'ԱՆՑՆԻՆ, ՏՂԱ՛Ք

Երկու դասեր ունինք աչքի առջեւ, երբ կը յիշեցնենք երիտասարդութեան պարտականութիւնները՝ տարագիր բազմութեանց ինքնապաշտպանութեան պայքարին մէջ։

Առաջին՝ անոնք որ թեւ կուտան 25էն 35։ Երկրորդ՝ անոնց անմիջական յաջորդները, 15էն 25 տարեկան։

Առաջին չարքէն ունինք բաւական կարևոր համրանք մը՝ հայկական պատրաստութեամբ։

Շատերը սորված են մայրենի լեզուն գրել-կարդալ, ինչպէս եւ ժողովներ վարել։ Նոյնիսկ ճառ խօսիլ։

Հ. Յ. Դ. Նոր Սերունդը մասնաւոր ուշադրութիւն կ'ընծայէ այս թեւին, որպէսզի կէս ճամբան չմնան։

Եթէ նոյն մտահոգութիւնը տիրէ ամէն տեղ, առանց ընկերային կամ քաղաքական դաւանանքի խտրութեան, անշուշտ բաւական ճամբայ կտրած կ'ըլլանք, նոր ուժեր պատրաստելու համար։

Ձեռք բերուած յաջողութիւնը արձանագրելով հանդերձ, մեր պարտականութիւնն է միշտ յիշեցնել թէ դեռ աւելին կը սպասենք այս դասէն, որպէսզի դառնան իրապէս «շրջանաւարտ»։

Վկայականները մենք չէ որ պիտի տանք, այլ իրենք պիտի խլեն, քայլ մը յառաջ նետուելով։ Միշտ նոր նուաճումներ կատարելով։

Եւ այս՝ ամէնէն առաջ իրենց իսկ բարիքին համար։ Կէս ճամբան չմնալու, միջակ, գոհացուելի քանակութիւն մը չդառնալու համար։

Օրինակ, ժամանակը անցած չէ տակաւին, որպէսզի նախ իրենք օգտուին բոլոր պատեհութիւններէն, ճոխացնելու համար իրենց մայրենիքն ու միւս հայկական գիտելիքները։

Անոնք երբեք մոռնալու չեն թէ միշտ ալ սորվելիքներ ունին իրենց իսկ սարքած դասախօսութիւններէն։ Եւ պէտք է սորվին իրրեւ իրական ուսանողներ։ Ի հարկին թուղթն ու մատիտը ձեռքի տակ։

Այսպէս միայն կրնան արժեցնել որեւէ աշխատանք՝ իրենց անմիջական յաջորդներուն, 15–25 տարեկաններուն վրայ։ Այսինքն սերունդ հասցնել իրենց կարգին։

Նոյն ճամբով դաստիարակուեցան իրենց երէցներն ալ, տարիներ առաջ։ Հայրենի հողերուն վրայ թէ օտարութեան մէջ։

Այս մտահոգութիւնը պիտի ունենան մանաւանդ անոնք որ կոչում եւ յարմարութիւն կը զգան հանրային գործունէութեան նուիրուելու։

Հ. Յ. Դաշնակցութիւնը լայն պատեհութիւններ կ'ընծայէ իրենց, այս ճակատին վրայ։

Երբ կ'ըսենք՝ օրերը կ'անցնին, յիշեցուցած կ'ըլլանք թէ պատեհութիւններն ալ կը պակսին։

Տարիներուն հետ, հոգերն ալ կը բազմապատկուին։

Ամէն տարիք թոյլ չի տար դասընթացքի մը հետեւիլ նոյն խանդավառութեամբ եւ յարատեւութեամբ։

Իրենց անմիջական նախորդներուն — 35էն 45 տարեկաններուն մէջ ո՜րքան ընդունակ տարրեր կան որ չարաչար կը զղջան այսօր, կորսուած պատեհութեանց համար։

Կը զղջան, վասնզի բաւական սեպեցին իրենց գիտցածը, երբ տարիները կը սահէին եւ տրամադրելի ուժերը կը մաշէին։ Այժմ շատ աւելի վրդովիչ են պարագաները։

Ասոր համար ալ, տեսակ մը ահազանգ է

ՕՐՈՒԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐԸ

ԱԼԺԷ

ԱՊՊԱՍԻ ՀՐԱԺԱՐՈՒՄԷՆ ԵՏՔ

«Այս ամբողջին եւին, Իսրայէլի մատը կայ» յայտարարեց Ալժերիոյ Տեղեկատուութեան Նախարարը մամուլի ասուլիսի մը ընթացքին զոր տուաւ կարգ մը լուսաբանութիւններ հաղորդելու համար վերջին դէպքերուն մասին։

Ֆերհաթ Ապպասի հրաժարականը անմիջական կը նկատուէր արդէն քանի մը օր առաջ։ «ԱՀԱԿ»ի նախկին նախագահը հրապարակած էր իր տարակարծութիւնները Պէն Պէլլայի հետ։ Իր հրաժարումը գլխաւորաբար բողոք մըն է Սահմանադրութեան ծրագրին պատրաստութեան պայմաններուն դէմ, ԷՖ. ԷԼ. ԷՆ.ի քառբերու համագումարին մէջ։ Ֆ. Ապպաս չընդունիր, որ այդ «իրրեւ թէ» քառբերը ժողովուրդին ընտրեալներուն տեղն ու իրաւունքը առնեն։ Արդարեւ, Ազգ. Երեսփոխանական Ժողովն է որ կրնայ այդ ծրագիրը պատրաստել։ Ֆերհաթ Ապպաս կը գտնէ նաեւ թէ Ֆաշիզմի վախ կայ վարչաձեւին համար որ «ընկերնեբու Հանրապետութեան» մը վերածուած է։ Ֆերհաթ Ապպաս հրաժարական իր նամակին մէջ, չեշտած է թէ իր որոշումը անդարձ է։ Ցարդ Սեթիֆի երեսփոխան կը մնայ, բայց այլեւս պիտի չմասնակցի նիստերուն։

Անմիջական հարցն այն է թէ ո՞վ պիտի նախագահէ Ազգ. Ժողովին, այսինքն՝ փոխարինէ Ֆերհաթ Ապպասը։ Առաջին փոխ-նախագահը՝ Հաճ Պէն Ալլան է, երկրորդը՝ Հօճարի Սուլթանն է որ հաւանաբար կերպով կ'երեւայ իսկ երրորդը՝ Եւրոպացի է։ Ամէն պարագայի մէջ, կասկածէ դուրս է որ ընդդիմութիւնը լռութեան պիտի մատնուի։ Տեղեկատուութեան նախարարը բառերը չծամծըմեց։ Կարգաց նաեւ Նախարարաց Խորհուրդի մէկ զեկոյցը որ կը յայտնէ թէ յատուկ հրովարտակ մը արգիլած է քաղաքական բնոյթ ունեցող ընկերութեանց կազմութիւնը։ Աւելի ծանրանալով Քապիլիոյ մէջ երեւան հանուած մաքիին վրայ, յայտնեց թէ ծագումով Սիոնական շարժում մըն է։ «Այս ամբողջին եւին, Իսրայէլի մատը կայ։ Իսրայէլ որ կ'ուզէ ընդդիմանալ մեր յեղափոխութեան յառաջացման։ Պէն Պէլլա երբեք չծածկեց որ Իսրայէլի դէմ էր։ Քանի մը անգամ ալ կրկնեց, որովհետեւ Իսրայէլ աշխարհակալութեան առեղծուածութիւնն է, եւ մեզի համար՝ Իսրայէլ, արաբական Պաղեստինն է»։ Տեղեկատուութեան նախարարը այլ մանրամասնութիւններ ալ տուած է եւ յայտնած է Քապիլիոյ կազմակերպութեան մաս կազմող 30 անդամներու ինքնութիւնը։ Ասոնցմէ 10ը օտար են, մեծ մասամբ Հրեայ։ Ապահովութիւն տուաւ որ Իսրայէլի խաղացած դերը ոչ մէկ արձագանգ պիտի ունենայ Ալժերիա բնակող Հրեաներուն վրայ։

Կարգ մը հարցումներու պատասխանելով, Նախարարը յայտարարած է թէ Պուտիաֆ շատ լաւ էր (կ'ըսէ ըսած էր որ կամաւոր ծոմ կը բռնէ իր ընկերներուն հետ եւ բժշկական ոչ մէկ հսկողութիւն կայ։ Ահազանգ կը հնչեցնէր եւ ալժերիական կառավարութիւնը պատասխանատու կը հռչակէր Պուտիաֆի առողջական վիճակին։ Կ'աւելցնէր որ իր վերջին լուրերը Օգոստոս 1 թուական կը կրէին եւ անկէ ի վեր ոչ մէկ լուր ունի)։

Ապպասին հրաժարելէն ետք Ահմէտ Ֆրանսիս հեռացաւ կառավարութենէն։ Նոյնը պիտի ընէր Ահմէտ Պումէնճէլ որ Մըլէօնի եւ Էվիանի բանակցողն է։ Ներկայիս Հանրային Շինութեանց նախարար, արդիւնաշատ աշխատանք տարած է իր ճիւղին մէջ։

Ն. Ի.

որ կը հնչեցնենք, չմոռնալ արծարծելով ինքնազարգացման պահանջը։

Միայն տարիքը չէ որ պիտի արդարացնէ զանազան յաւակնութիւններ։

Խանդն ու աշխատանքը իրար պիտի լրացնեն, որպէսզի միշտ կարենան ըսել — Ներկա՛յ։

Մեր խօսքը ուղղելով մասնաւորապէս Դաշնակցական, ուղեկից կամ թեկնածու երիտասարդութեան, պիտի թելադրէինք ուշադրութեամբ հետեւիլ Միջին Արեւելքի նոր սերունդին ճիգերուն։

Անոնք ալ, իրենց շատ մը առաւելութիւններուն հետ, ունին բազմապիսի դժուարութիւններ։

Բայց եւ այնպէս կը տոկան։ Եւ կը բազմապատկուին որակով թէ քանակով։

Եթէ երիտասարդութիւնը ամառ է, անշուշտ չի կրնար ճմրան պաշարը ապահովել միայն երգելով ու պարելով։

1950 Շ.

ՊՐԱԶԱՎԻԼ

«ԶՕՐԱՎԱՐ, ՍՏՈՐԱԳՐԵՑԻ»

Խառշիէքըռ Փրէսի համաձայն, Պրազավիլի ցոյցերուն ամէնէն տաք վայրկեաններուն, Ֆիւլպէր Եուլու, ճարահատ հեռաձայնած է Քոլոմպէ՝ զօր. տը Կոլի խնդրելով որ Ֆրանսական զօրքը միջամտէ, բայց զօրավարը «Ո՛չ» պատասխանած է։ Քիչ ետք, Եուլու անձնատուր կ'ըլլար եւ կրկին կը հեռաձայնէ Քոլոմպէ ըսելու համար միայն.— «Զօրավա՛ր, ստորագրեցի»։

Նախկին Ֆրանսական Քոնկօ 349 հազար քառակուսի քիլոմեթր տարածութիւն ունի եւ 800 հազար բնակիչ, որու 10 հազարը՝ Եւրոպացի։ Մայրաքաղաքը՝ Պրազավիլ ունի 100 հազար բնակիչ, գլխաւոր արտադրութիւններն են.— փայտ, շաքարեղէգ, արմաւենի եւ քարիւղ։

Վերջին դէպքերու առթիւ, դիտերու կարծիքն այն է որ զարմանալի բան մը չկայ, Ֆիւլպէր Եուլուի վարչակարգը զոհ գացած է երիտասարդութեան, սենտիքաներուն եւ մանաւանդ իր իսկ սխալներուն։

Անգործութիւն եւ կաշառակերութիւն մեծ վնասներ բերած էին նորանկախ պետութեան։ բազմաթիւ պաշտօնեաներ որոնք համեստ պաշտօններ ունէին երբ Քոնկօ գաղթավայր էր, մէկ օրէն միւսը հասած էին բացառիկ դիրքերու եւ 80 անգամ աւելի կը շահէին քան նախապէս։ Վերջին դէպքերուն պատճառն էր անշուշտ միակ կուսակցութիւն մը ստեղծելու այս ծրագիրը զոր աբբայ Եուլու կ'ուզէր պարտադրել։

Քոնկոյի նոր կառավարութեան գլուխն անցած է Մասենպա–Տէպա։ 42 տարեկան քրիստոնեայ մըն է եւ Լառի ցեղախումբէն է։ Զափաւոր ձախին կը պատկանի։ Ընդդիմադիր էր Եուլուի անհատական քաղաքականութեան եւ արբան զայն հեռացնելու համար Փարիզի դեսպան կարգած էր, բայց Մասեմպա մերժած էր։

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՊՈՒԼԿԱՆԻՆԻ եւ Կաքանովիչի մասին զանազան լուրեր տարածուեցան վերջերս ըստ որոնց առաջինը ծանր հիւանդ էր, իսկ վերջինը ութ ամիս է՝ մեռած։ Մոսկուայի Արտաքին Նախարարութիւնը կը մերժէ որեւէ բան մը ըսել այս մասին։

ՀԱՐԱՒԱՅԻՆ ՔՈՐԷԱ կրնայ վերադառնալ նախկին նախագահը՝ Սինկման Ռի որ 88 տարեկան է եւ աքսորի մէջ կ'ապրի՝ Հոնոլուլու։

ՊԱՂՏԱՏԷՆ հասած լուրերու համաձայն, իրաքեան զօրքը «մաքրած» է Զոբմանի շրջանը, իրաքեւպարսկական սահմանին վրայ եւ համախմբուած Քիւրտերը ցրուած են։

ԹՈՒՐՔԻՈՅ Նախարարաց Խորհուրդը որոշեց առաջարկել Ազգ. Ժողովին, որ երկու ամսով երկարաձգէ պաշարողական վիճակը՝ Անգարա, Իզմիր եւ Պոլիս։ Պաշարողական վիճակը հռչակուած էր Մայիս 20–21ի ձախողած ըմբոստութենէն ետք։ Ժողովը նիստ պիտի գումարէ երկուշաբթի եւ որոշում տայ այդ ուղղութեամբ։

« ՏԷՅԼԻ ՀԵՐԸԼՏ » որ Լոնտոնի կարեւորագոյն թերթերէն մէկն է, կրնայ ի մօտոյ դադրիլ սնանկութեան առաջքն առնելու համար։ Թերթին բաժնեթուղթերուն 49 առ հարիւրը բանուորական ընկերակցութեանց ձեռքն է։ Թերթը մէկ միլիոն 348 հազար տպաքանակ ունի եւ քանի մը տարիէ մեծ բաց։

ԴԱՄԱՍԿՈՍԻ մէջ կը շարունակուի Յուլիս 18ի ձախողած հարուածին պատասխանատուներու քննութիւնը։ Ասոնցմէ մէկը յայտարարած է թէ Նասըր մատ ունէր ապստամբութեան մէջ։

ՔՐՄՈՒՀԻ ՄԸ, հետեւելով երեք քուրմերու, ողջ-ողջ ինքզինքը այրած է Սայկոնի մէջ։ Այս ձեւով Պուտտայականները կ'ուզեն բողոքել կրօնական խտրականութեան դէմ, որով կ'ամբաստանեն Վիէթնամի կաթոլիկ Նախագահը։

ՄԱԹԻԱՍ ՌԱՔՈՇԻ, Սթալինեան բռնակալութեան խորհրդանշան Հունգարիայի ղեկավարը մեռած է Խորհ. Միութեան մէջ ըստ կարգ մը լուրերու, որոնք չեն հաստատուած։ Հոն ապաստանած էր 1956ի ապստամբութեան ժամանակ եւ երբեք արտօնութիւն չէր ստացած Հունգարիա մտնելու։ Մոսկուայէն կ'ըսեն թէ լուրը անհիմն է։

ԴԱՇՆԱԿՑԱՅԻՆ Գերմանիոյ Արտաքին նախարարը՝ Շրէօտէռ խօսակցութիւններ ունեցած է անգլիացի իր պաշտօնակիցին հետ, որպէսզի անկէ ալ ստանայ այն ապահովութիւնները զորս ստացաւ Միացեալ Նահանգներէն։

ԹՈՒՐՔԻԱ

ՁԻՒՆԸ ԿԻՐԱՍՈՆԻ ԼԵՌՆԵՐՈՒՆ ՄԷՋ

Կիրասոնէն կը հեռագրեն թէ վերջին օրերու հեղձուցիչ տաքերէն ետքը, Օգոստոս 12ին յանկարծ կը ցրտէ եւ օդափոխութեան ծանօթ վայրը Եավուզտէրէ գաւառակին Քուշաքքայա սարին վրայ կը սկսի ձիւն տեղալ, կէս ժամ անընդհատ։ Սարը գտնուողները կը վերադառնան քաղաք, իսկ ձիւնը կարօտցողները կը վազեն դաշտ։

ԹԶՈՒԿԻՆ ՁԱՒԱԿԸ

Կաղիանթէպի մէջ 68 սանթիմ հասակով եւ 28 քիլօ ծանրութեամբ Թուրք մը, որ 40 տարեկան է, հայր դարձաւ մանչ զաւկի մը որ 4,5 քիլօ կը կշռէ։

Էրիկ կնիկ շատ հպարտ են։ Նոյնիսկ կնոջ ամուսինը կը յոխորտայ թէ իրեն նման էրիկմարդէ մը այսպիսի մանչ կը ծնի։

ԿԱՏԱՊԱՆԻ ՊԱՏԳԱՄԸ

Էտմոն Շիւց կատապան բառի մասին գերմաներէն յօդուած մը ունի Հանդէս Ամսօրեայի Յոբելենական թիւին մէջ (էջ 515–520):

Պարոնը դիտել կու տայ թէ Հունգարիոյ մէջ՝ 11–13րդ դարերուն՝ կատապանը գործածուած է իբր անձնանուն կամ ա – ռաւելաբար գերդաստանի անուն:

« Կատապանը, կը գրէ Շիւց, բիւզան– դական կատեպանօ տիտղոսն է, որ նահանգապետ կամ կողմնակալ կը նշանակէ: Երբ 11րդ դարու սկիզբը Պուլ– կարիա գրաւուեցաւ, Հունգարիայէն հա– րաւ նոր բիւզանդական նահանգներ կազմուեցան, որոնց կառավարիչները կատեպանօ տիտղոսը կը կրէին եւ դուք– սի աստիճան ունէին:

« Հայ պատմիչներ կը գործածեն կա– տապան փոխարէն կատեպանօի: Ըստ Վարդան Պատմիչի՝ Գագիկ Թագաւորին տեղ Անի ղրկուեցաւ (1043–1045) վստա– հելի անձնաւորութիւն մը... կատապան մը: Ըստ Սամուէլ Անեցիի տարուէ տարի Բիւզանդիոնէն Հայաստան կատապաններ կը ղրկուէին: Մատթէոս Ուռհայեցի կը յիշէ Արճէշ քաղաքը գտնուող բիւզան – դական զօրավար մը, զոր Ստեփան Կա – տապան կը կոչէ: Կը յիշուի նաեւ Պերոզ անուն կատապան մը 1055ին ի Պաղին: Անիի յիշատակարաններէն մէկուն վրայ կը կարդանք Մագիստրոս Թագաւորի մը մասին որ Արեւելից Կատապան կ'ան – ուանուի:

« Գրաբարի մէջ հայերէն բառը կը նը– շանակէ նախանգապետ կամ կողմնակալ: Բիւզանդական տիրակալութեան Հայաս – տանէն հեռացումովը կատապանն ալ հա– յերէնի մէջ գործածութենէ դադրած է, թէեւ կատապանը պան մասնիկով մարզ– պան բառին նմանելով հայերէնի կնիք մը ունի վրան:

« Հակառակ պաշտօնական յունարէնի մէջ կատեպանօ գրուելուն, ուշագրաւ է հունգարական կատապան, ինչպէս եւ յունարէն եւ լատիներէն ժողովրդական կատապանոս յորջորջումը: Կատեպանօին կատապան դառնալը հայերէն բարդու – թեան օրէնքով բացատրել դիւրին է: Գա– լով ոս մասնիկին կորուստին, ուրիշ շարք մը յունարէն բառեր հայերէնի մէջ ոսը կորսնցուցած են, օրինակ՝ պատրիկ, տորատեղատ, եւայլն:

« Տեսակէտիս պաշտպանութեան հա – մար կ'արժէ ակնարկ մը նետել պատմու– թեան: Հայեր պետական մեծ դեր կա– տարած են բիւզանդական կայսրութեան քաղաքական թէ զինուորական մարզե – րուն մէջ: Հանրածանօթ է թէ ժամանակ մը բիւզանդական կայսրութիւնը կառա– վարուած է հայ կայսրերէ ու կայսրու – հիներէ:

« Հայերը քաղաքական եւ ռազմական նպատակներով փոխադրուած են դէպի Թրակիա: Մուշեղ Մամիկոնեան եւ իր զօրամասերը Մօրիկ Հայկազնի կողմէ Աւարներու դէմ կռուելու ղրկուեցան (591–593): Հայ Պաւղիկեաններ (8րդ դար) զանգուածօրէն փոխադրուեցան Թրակիա: Կայսրը 986ին դերի իյնալէ ազատեցաւ հայ հետեւակ գունդերու շը– նորհիւ: Ըստ Ստեփանոս Ասողիկի՝ 991ին կայսրը Գրիգոր Մագիստրոսի եւ այլ հայ ազնուականներու հրամանատարութեան տակ բազմաթիւ հայ զօրք ղրկեց Պուլ– կարներու դէմ:

« Որով 11րդ դարուն Պալքանեան թե– րակղզին հայ զինուորական ու քաղաքա– կան աւազանիով յագեցած կը գտնենք:

« Հունգարացիք, իբր պետութիւն, եր– բեմն Բիւզանդիոնի դաշնակից եղած են, երբեմն՝ թշնամի: Շուրջ 1000 թուակա– նին Հունգարները բիւզանդական կայսրի կողմէ պատերազմելու ղրկուեցան Պուլ – կարներու դէմ: Սակայն, երբ Ռոմանոս Դիոգինէս կայսրը 1071ին Մանազկերտի առջեւ Սելճուկներէն պարտուեցաւ, հունգար – բիւզանդական սահմանագլու– խը փոխադրուած Փեչենէկները Հունգա– րիոյ վրայ յարձակեցան: Հունգարները փոխադարձելով գրաւեցին Բիւզանդիոյ յաջորդ տարին յառաջացան մինչեւ Նիշ:

« Այս տուեալներէն ակներեւ է, որ պատմութեան ընթացքին՝ շատ հաւանա– բար ո՛չ միայն Բիւզանդացիք, այլեւ բիւ– զանդական ծառայութեան մէջ գտնուած Հայեր ալ շփման մէջ մտած են Հուն – գարներու հետ եւ ի վերջոյ Հունգարիա հաստատուած՝ այսպէս կամ այնպէս:

« Բիւզանդական աղբիւրներէ ծանօթ կատապաններու մէջ հայկական անուն մը չենք տեսներ: Սակայն նկատի առնել որ մենք միայն նահանգներու պետական պաշտօնեաները գիտենք: Եթէ նոյն տիտ– ղոսը կը պատկանէր նաեւ կարգ մը ա– ռանձնաշնորհեալ պաշտօնակալներու՝ իբրեւ քաղաքի հրամանատար կամ դա – տաւոր, այն ատեն շատ կարելի է որ Հունգարիա հաստատուած կատապաններ այս տեսակ անձեր եղած ըլլան:

« Յետոյ, պէտք է նկատի ունենալ որ կատապանը ո՛չ հայերէնի եւ ոչ ալ յու– նարէնի մէջ իբր անձնանուն երեւան կու– գայ: Այս փոփոխութիւնը կրնայ հուն– գարերէնի մէջ պատահած ըլլալ, որով – հետեւ հունգարերէնի մէջ շատ հունգա– րական եւ օտար տիտղոսներ կան, որոնք տոհմանուն դարձած են իբր մակդիր կամ անձնանուն գործածուելով »:

Գարամաճեան բառարանը կատապանի դէմ կը գրէ․— (յուն․) կողմնապետ, կուսակալ:

Կատապանը կատեպան ձեւով գոյատե– ւած է Այրարատի մէջ: Արովեան «Վէրք Հայաստանի»ն ունի «մեր այգիի կատե – պանները», ուր տեղւոյն համեմատ թէ՛ մշակ եւ թէ պահապան իմաստն ունի: Սակայն Շիւց կը տեղեկացնէ թէ Մալ – խասեանցի բառարանը կը գրէ թէ կատե– պան կը նշանակէ «այգիի պահապան»: Ըստ իս՝ կը յարմարի նաեւ տնտես ի– մաստը, այսինքն քանի մը մարդիկ, ո– րոնք մեծ այգիի մը ամէն հողը ստանձ– նած են, մշակումը եւ պտուղին ամէն կերպ օգտագործումը: Որով պահապան իմաստն ալ բովանդակած կ'ըլլայ:

Այրարատէն աւելի հարաւ իջնելով, Այնթապի տեղական բարբառի մնացոր – դացին մէջ կը գտնենք երկու բառ, քէյ– ներուն մէջ: Քէյվանը – Քէտպանու հա– ռանձին չի գործածուիր, այլ կ'ըսուի ֆէյվանը ավրաթ, — «փորձառու, վար– պետ կին»: Ինչպէս որ ուրիշ առիթով մըն ալ գրած եմ, ֆէյվանը աղաւաղումն է պարսկերէն ֆէտպանու բառին, որ «տան տիկին» ըսել է պարզապէս: Քէյ– վանը գործածութենէ դադրած, բայց իբր բրածոյ մնացած է Քէյվան Համամը (բաղնիք) եւ Քէյվան աղա (Այնթապէ ընէնէչ հայ գիւղի իշխանը) յորջորջում – ներուն մէջ: Քէյվաէը – Քէտպանու հա– ւասարութիւնը թելադրիչ է Քէյվան, ֆէտպան, կատեպան, կատապան հաւա – սարութեան:

Քէտ, (ֆէտէ, կուտա) գործածական է աքէշֆէտէ (ատրուշան, — կրակատուն) բառին մէջ: Մէյկէտէ եւ մէյխանէ հո – մանիշ են եւ կը նշանակեն «գինետուն»: Հայերէն նաւակատիք բառն ալ ճապէս կը նշանակէ նոր տունի յատուկ:

Կ'արժէ այդ առընչութեամբ նկատի ունենալ պարսկերէն ֆէքխիտա բառը:

Քէքխիտայի համար բառարանը կը գրէ (ռամկօրէն՝ ֆէհեա).— Տան տէր, սպասաւոր, տնօրէն տեղակալ, գործա – կատար:

Կ'արժէ դիտել տալ․ թէ ֆէքխիտան «քէօխվա» ձեւով գործածական է կարգ մը գաւառներու մէջ, իսկ Այնթաբ ունի ֆիյա, որ քէհեային աւելի աղաւաղուած ձեւն է: Քէօխվա եւ ֆիյա կը նշանակեն գիւղապետ, ռէս, մուխթար:

Յունարէն կատեպանօ դրական ձեւը ո՛չ հայ գրականութեան ո՛չ հունգար անուններու եւ ոչ ալ Իտալիոյ մէջ երե– ւան կուգայ: Օրինակ՝ 10րդ դարու վեր– ջաւորութեան մօտ Լոմպարտիոյ կամ հիւսիսային Իտալիոյ կառավարիչը կա– տապանուս տիտղոսը ունէր, ըստ ընդար– ձակ Ուէպսթրի:

Այսուհանդերձ, ինչպէս տեսանք, 19րդ դարուն Արովեան կը գրէ «մեր այգիին կատիպանները», որ յունարէն կատեպա– նօին խիստ մօտ է: Իսկ Այնթապի ֆէյ– վանը կ'ենթադրէ սղուած ըլլալ ֆէքպան կամ կատապան ձեւէ մը:

Մեր կարծիքով, կատապանին պատ – գամը սա՛ է թէ արձանագրական տուեալ– ներու պակասութեան հակառակ՝ բառը պարսկերէն է իր ձեւով եւ իմաստով: Կը համարձակիմ ըսել թէ բառը բիւզանդա– հայ պաշտօնակալներու կողմէ յարմար – ցուած է Պարսիկներու կողմէ գործածա– կան մարզպան բառի հակադրութեամբ իբրեւ կատեպան(օ) եւ ապա պետական հայ պաշտօնատարներու եւ զօրավարնե– րու գործածութեան մէջ դարձած է կա– տապան եւ ծնունդ տուած է յունական ժողովրդական կատապանուսի, լատինե– րէն կատապանուսի, այրարատեան կա– տեպանի եւ Այնթապեան ֆէյվանի:

ՄԱՆՈՒԷԼ ՔԱՍՈՒՆԻ

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՀԻՆ ԴԷՄՔԵՐ

ԳՐԻԳՈՐ ԶՕՊԱՆԵԱՆ

Շատ հին յիշատակ մըն է որ կը քրքը– րեմ այսօր՝ կէս դարու հնութիւն մը:

Հազիւ տասներկու տարեկան պատանի մըն էի, երբ առաջին անգամ ըլլալով ներկայ եղայ Պոլսոյ Շահզատէ-Պաշը Թաղամասին մէջ գտնուող Մնակեան Թա– տերախումբի ներկայացումներէն մէ – կուն:

Շահզատէ-Պաշըի մէջ երեք թատրոններ գոյութիւն ունէին, «Միլլէթ», «Ֆերահ» եւ «Շարք»: Այս երեք բեմերուն վրայ ալ Մնակեան թատրոնը յաճախակի ներ– կայացումներ կու տար, բնականաբար թուրքերէն լեզուով: Աւելորդ է ըսել թէ թուրք ազգային թատրոնի հիմնադիրին բոլոր ներկայացումներուն ներկայ կ'ըլ– լար հոծ բազմութիւն եւ այդ բազմու– թիւնը մեծ յարգանք եւ ակնածանք ունէր «Մնակ էֆէնտի»ի հանդէպ:

Մեր տունին մօտիկ ապրող դրացի մը ունէինք՝ Գրիգոր Ջիլինկիրեան, որ Մը– նակեան Թատերախումբի երրորդական դերասաններէն էր, բեմի անսահման սի– րահար մը, եւ խնդրած էր վարպետէն որ զինքը առնէ իր խումբին մէջ, ուր կ'աշ– խատակցէր անձնուիրաբար ու սիրայօ – ժար կերպով:

Մեր ընտանիքին մօտիկ բարեկամն էր Գրիգոր Ջիլինկիրեան, յաճախ, գրեթէ ամէն օր կ'այցելէր մեզի եւ մենք զինքը ընտանեբար կը կոչէինք «Գրիգոր ա– ղբար»:

Օր մը, ուրեմն, հայրիկիս ու մայր– կիս ալ համաձայնութեամբ, խնդրեցի «Գրիգոր աղբար»էն որ գիշեր մը զիս տանէր իրեն հետ Մնակեանի ներկայա – ցումներէն մէկուն: Բարի մարդը յօժա – րակամ ընդունեցաւ եւ զիս առաջնորդեց թատրոն:

Երբ ներս մտանք թատրոնէն, մեր բա– րեկամը ուզեց սրահին մէջ տեղ մը ապա– հովել ինծի, որպէսզի հոն ներկայա – ցումը դիտէի եւ խաղին վերջաւորութեան զիս դար առնէր ու առաջնորդէր տուն:

Ես սակայն, խնդրեցի «Գրիգոր աղ– բար»էն որ զիս հետը տանէր բեմ, «քու– լիս»ներուն ետեւ եւ հոնկէ էր որ պիտի նախընտրէի դիտել ու լսել ներկայացու– մը: Աղնիւ «Գրիգոր աղբար»ը այդ փա–

ՀԱՄԱՅՆԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԴԵՐԸ ՌՈՒՍԵՒԹՈՒՐՔ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆՑ ՄԷՋ

1919–1922

Ազգային Մեծ Ժողովը ոգեւորութեամբ ողջունեց, 1920 Մայիս 11ին, «Ռուսիոյ եւ Արեւելքի Մահմետականներուն ուղ– ղուած Մանիֆեստ»ին ընթերցումը, ո – րուն մէջ կը յայտարարուէր պատերազ– մական զաղտնի համաձայնութեան խը– զումը (1)․ բայց, անշուշտ չհասկցաւ Հայերու ինքնորոշման իրաւունքին մա– սին այնտեղ եղած յայտարարութեան կարեւորութիւնը: Ազգ․ Մեծ Ժողովը նմանապէս ոչ մէկ տեղեկութիւն ունէր, ի հարկէ, Լենինի եւ Սթալինի թիւ 13 հրամանագրէն, որ յաւելեալ ճշդումնե – րով կ'օժտէր այս իրաւունքը (2): Ահա թէ ինչո՛ւ, Մուսթաֆա Քէմալի 26 Ապրիլ թուակիր նամակին Չիչէրինի տուած պա– տասխանը մեծ ազդանք պիտի պատճա – ռէր Ազգ․ Մեծ Ժողովին, քանի որ այդ նամակին մէջ Չիչէրին կը պահանջէր, որ Հայաստանի, Քիւրտիստանի, Լազիս– տանի եւ Արեւելեան Թրակիոյ մէջ հանրաքուէարկութիւններ կազմակեր – պուին (3):

Անգարայի մէջ աւելի եւս տարօրինակ նկատուեցաւ խորհրդային այն պահան – ջը, թէ Թուրքիա պէտք է հողեր զիջի Հայաստանի: Ցամենայն դէպս, ասոնք են Չիչէրինի կողմէ Ազգ․ Մեծ Ժողովի պաշտօնական պատուիրակ Պէքիր Սամի պէյի ներկայացուած պահանջները, երբ այս վերջինը արկածալի ճամբորդութենէ մը ետք վերջապէս Մոսկուա հասաւ 1920 Յուլիս 19ին: Այսպէս, մինչ մէկ կողմէ պատրաստ էին զինուորական եւ դրամա– կան անմիջական օգնութիւն մը շնորհե – լու Թուրքիոյ, միւս կողմէ՝ բարեկամու– թեան դաշինքի մը կնքումին նախորդող բանակցութիւնները անելի կը մատ – նուէին՝ ռուսեւթուրք սահմանագծին ճշդումին վերաբերող անհամաձայնու – թեան պատճառաւ: Խորհրդային կառա – վարութիւնը կ'ակնկալէր, որ Թուրքիա ոչ միայն հրաժարի Պրէսթ–Լիթովսքի դաշինքով ձեռք ձգած Կարսի շրջանէն, այլ նաեւ կը պահանջէր, որ Վանի եւ Պիթլիսի վիլայէթներուն մէկ մասը կցը– ուի Հայաստանի՝ սպասելով անոր մօտա– լուտ խորհրդայնացումը:

Մուսթաֆա Քէմալ ծայր աստիճանի դժուարին կացութեան մը պիտի մատ – նուէր, եթէ, Պաքուի անկումէն ետք Հա– յաստանի մէջ պայթած համայնավարա – կան ապստամբութիւնը յաջողութեամբ պսակուէր: Իրեն համար բարեբախտա – բար, ռուսեւլեհական պատերազմը սաի– պեց խորհրդային կառավարութիւնը, որ կեցնէ Երեւանի վրայ քալող 11րդ Կարմիր Բանակը, այսպէսով պատճառ դառնալով Ալեքսանդրապոլի ապստամբութեան ձա – խողութեան: Միւս կողմէ, Մուսթաֆա Քէմալ յետաձգեց, Չիչէրինի պատաս – խանին վրայ իր արդէն իսկ արձակած հրամանը՝ Յունիս 23ին արշաւել դէպի Հայաստան: Հայաստանի հարցին շուրջ համաձայնութեան մը հասնելու անկարե– լիութեան համոզումը գոյացնելէն ետք է միայն, որ Քեազըմ Քարապէքիր փա– շայի բանակը Հայաստանէն ներս մըտ – ցուց, նախ՝ մինչեւ Սարըղամըշ եւ ապա՝ մինչեւ Կարս, որ գրաւուեցաւ 1920 Հոկտ․ 30ին: Դաշնակցական կառավա – րութեան հետ սկսած բանակցութիւնները զգաստացուցին խորհրդային կառավա – րութիւնը: Անգարայի կառավարութեան մօտ բացառիկ եւ լիազօր նախարար Պու– դու Մտիվանիի կողմէ համաձայնու – թեան վերջին փորձի մը ձախողութենէն ետք, Լենին եւ Սթալին հրամայեցին, Նոյեմբեր 27ին, որ Հայաստան խորհըր– դայնացուի: Դաշնակցական կառավարու– թիւնը իր հրաժարականը ներկայացուց Դեկտեմբեր 2ին, Գիւմրիի մէջ Թուրքիոյ հետ խաղաղութեան դաշինքը ստորագրե– լու հրամանը տալէ ետք (4):

Նկատի առնելով համայնավար կու – սակցութեան խոստումները հայ ժողո– վուրդին, կարելի չէր տարակուսիլ, թէ հայկական նոր կառավարութիւնը պիտի յաջողէր վերոյիշեալ դաշինքին վերա– բերեալ փոփոխութիւններ ձեռք ձգել: Ճիշդ է, թէ չթերացաւ այդ ուղղու– թեամբ դիմումներ կատարելու Անգարա– յի կառավարութեան մօտ, բայց, բաւա– կան տարօրինակ բան, ոչ մէկ աջակցու– թիւն ստացաւ Մոսկուայի Նարկոմին– տէլէն:

Մտիվանի հրահանգ ստացաւ յայտա– րարելու, թէ թրքական հողամասեր Հա– յաստանին զիջելու պահանջը «թիւրիմա– ցութեան» արդիւնք է: Ասկէ զատ, Ալեք– սանդրապոլի դաշինքը վերաքննութեան ենթարկելու հարցին մէջ որեւէ միջա– մտութենէ խուսափելու ալ հրահանգ ըս– տացաւ: Այս դաշինքով հաստատուած սահմանագիծը Մոսկուայի եւ Կարսի դաշինքներուն․ մէջ ալ փոփոխութեան չենթարկուեցաւ (5):

(Շար․ – 5)

1) Զապրթ Ճէրիտէսի Ա, 1940, էջ 256:

2) Տոքիւմենտի վնեանեժ փոլիթիքի ՍՍՍՌ․ Ա, 1957, թիւ 43:

3) Ռըվիւ տիւ Մոնտ Միւզիւլման, հա– տոր 52, էջ 195, ծէյն Տըկրաս, Սո– վիէթ Տոքիւմէնթց ան Ֆօրէյն փոլիսի, հ․ Ա․ Լոնտոն, 1951, էջ 187:

4) Տի Վէլթ տէս Իսլամս, հ․ 2, էջ 25–37:

5) Անդ, հ․ 17, 1935, էջ 111–115:

...ձեռքիս ալ գոհացում տուաւ ու գլխս աթոռակի մը վրայ նստեցուց բեմին մէկ անկիւնը, ուրկէ լաւագոյնս պիտի կարենայի հետեւիլ խաղին:

«Թուլիս»ներուն ետեւը գտնուելու այս փափաք արդիւնքն էր ներքին մղումի մը որ կը թելադրէր ինծի մօտիկէն ճանչնալ խորհրդաւոր այն աշխարհը որ կը փայլէր բեմ եւ որ գլխս սկսած էր գրաւել արդէն պատանեկութեանս օրերէն: ...մօտէն տեսնել, ճանչնալ այն «խորհրդաւոր» անձերը որոնք անգամ – ...էին բեմական զարմանահրաշ ու ա-...ծուածային այդ ընտանիքին...

Կը ներկայացուէր Փրանսերէնէ թարգմանուած հինաւուրց մելոտրամ մը՝ «Փարիզի աղքատները»:

Առաջին արարի վերջաւորութեան ուշադրութեանս կեդրոնը հանդիսացած էր անձ մը, դերակատար մը, որ իր աշխուժ ու չնչող խաղարկութեամբ, իր արտայայտօրէն համակրելի դիմագիծով ու ժամանակ իր կատակերգակ – դերասանի բացայայտ տաղանդով խռոված էր իմ պատանի հոգիս:

Երբ պահ մը «Գրիգոր աղբար» միջնամասին եկաւ քովս «տպաւորութիւնս» հասկնալու համար խաղին մասին, հարցուցի իրեն, ցոյց տալով մտասեւեռմանս առարկայ եղող անձը.

— Գրիգոր աղբար, ո՞վ է այդ մարդը:

— Ատիկա՞... ատիկա մեր անզուգական քոմիք Գրիգոր էֆէնտին է... Գրիգոր Զօպանեան:

— Ի՜նչ աղւոր կը խաղայ...

Ցաւօրդարար խաղացուեցան միւս վարագոյրները (չորս հատ, եթէ չեմ սխալիր), ու ես, տեղս գամուած, աչքս չէի հեռացներ Գրիգոր էֆէնտի Զօպանեանէն, ամէն անգամ որ ան բեմին վրայ էր ու ծիծաղի ալիքներ կը բարձրացնէր ժողովուրդին մէջ:

Ներկայացման վերջաւորութեան, երբ վարագոյրը պարպուած էր եւ դերասաններն ալ կը պատրաստուէին մեկնելու, խնդրեցի առաջնորդէս որ զիս անպայման Գրիգոր Զօպանեանին քով տանէր:

Գրիգոր Չիլինկիրեան ձեռքէս բռնելով առաջնորդեց զիս բեմին ետեւը գտնուող սենեակ մը, ուր Գրիգոր Զօպանեան զբաղած էր իր երեսին չպարը մաքրելով:

— Գրիգոր էֆէնտի, ըսաւ Չիլինկիրեան զիս առաջ քշելով, աշակերտ պատանի մը որ շատ կը սիրէ թատրոնը, եւ այսօր՝ խենթ կտրած է քեզի համար:

Գրիգոր Զօպանեան տարօրինակ հայեացք մը ուղղեց ինծի, որուն մէջ խառնուած էին գոհունակութեան եւ կշտամբանքի զգացումները: Ձեռքը գլուխիս վրայ դրաւ, ու տրտմաթախիծ շեշտով ըսաւ.

— Պաշխա բան չգտար ալ թատրո՞նը կը սիրես կոր, չօճուխս...

Ու պատուական մարդը, կարծես զգացած որ իր այդ խօսքերով լախտի ծանր հարուած մը իջեցուցած էր իմ պատանի թատերասէրի հոգիիս, եւ կարծես մեղմացնելու համար հարուածին ուժգնութիւնը, աւելցուց.

— Սիրէ՛ ողլում, սիրէ՛, խըյա՛լս բան է թատրոնը...

Ալ այդ օրէն ետք, բազմաթիւ անգամներ տեսայ Գրիգոր Զօպանեանը բեմի վրայ եւ միշտ ալ յափշտակուեցայ թէ՛ իր անձով, եւ թէ մանաւանդ իր պարզ ու անպաճոյճ արուեստով:

×

Տարիներ անցան: Երջանիկ ու խաղաղ օրերուն յաջորդեցին մռայլ օրեր: Պատերազմ, աքսոր, կախաղան ու ջարդ: Չորս տարի անընդհատ զրկուեցանք բեմէ ու թատրոնէ:

Ինչպէս ամէն փոթորիկէ ետք կը հասնի անդորրութիւնը, այնպէս ալ մռայլ օրերուն յաջորդեցին պայծառ օրեր:

Վերստին սկսաւ եռալ թատերական կեանքը:

Զինադադարէն ետք Ֆէլէկեան քոյրերու մէկ ներկայացման մէջ բախտն ունեցայ կրկին հանդիպելու Գրիգոր Զօպանեանին:

Այս անգամ քիչ մը աւելի կը «հասկնայի» թատրոնէն, քանի որ սկսնակ սիրող մըն էի եւ մերթ ընդ մերթ կը մասնակցէի Սկիւտարի եւ Գում-Գափուի մէջ կազմակերպուած սիրողներու ներկայացումներուն:

Իմ «հասկցող» մօքիս առջեւ Գրիգոր էֆէնտի Զօպանեան աւելի մեծցած ու աւելի կատարելագործուած երեւցաւ:

Զմայլելի արուեստագէտը կարծես տիրացած էր նոր ուժի մը, կարծես թէ հակառակ տարիներու թաւալումին, անիկա աւելի եւս երիտասարդացած էր իր արուեստին մէջ:

Ներկայացումէն ետք գացի իր քովը: Առաջին իսկ ակնարկին ճանչցաւ զիս: Ըսի իրեն թէ հիմա ես ալ այլեւս բեմ կ'ելլէի ու «դերասան» էի:

Անուշ ժպիտով մը նայեցաւ երեսիս, գլուխը շարժեց ու մրմնջեց.

— Գիտէի որ ատանկ պիտի ըլլար... Ի վերջոյ դուն ալ եղար տուզախը...:

Այնուհետեւ, ամէն անգամ որ Ֆէլէկեան քոյրերու ներկայացումները տեղի կ'ունենային, միշտ ներկայ կ'ըլլայի, ըմբոշխնելու համար Գրիգոր Զօպանեանի զմայլելի արուեստէն ցայտող գեղարուեստական հաճոյքը:

×

Այսօր կէս դար եւ աւելի անցած է այն օրէն երբ առաջին անգամ տեսայ Գրիգոր Զօպանեանը:

Այս զմայլելի դերասանը երկար տարիներ աշխատեցաւ, իր հոգիէն մեծ բան զոհեց բեմին ու իբրեւ վարձատրութիւն ունեցաւ միայն սեւ մոռացութիւն:

Որեւէ տեղ, թատերական որեւէ տարեգրութեան մէջ յուշագրուած չէ անունը Գրիգոր Զօպանեանի, որ այնքան խանդավառ սիրով կապուեցաւ բեմի տախտակներուն:

Տարօրինակ ճակատագիր: Թրքահայ թատերական գործիչներու լաւագոյն կենսագիրը՝ Շարասան, իր հրատարակած հատորին մէջ («Թրքահայ Բեմը եւ իր գործիչները») ուր կը խօսի Թրքահայ թատրոնի բեմական գործիչներու մասին՝ Ալֆայէն մինչեւ Օմեկա, ոչ մէկ տող ունի Գրիգոր Զօպանեանի համար:

Ու այսօր, երբ կ'ոգեկոչեմ Գրիգոր Զօպանեանի յիշատակը, կը տարուիմ խորհելու թէ դժբախտ արուեստագէտին համար թերեւս կանխազգուշակութիւն մըն էր եղած որ իր չարաչար աշխատանքը, բեմին համար յանձն առած անհամար զոհողութիւնները, զրկանքները օր մը պիտի վարձատրուէին միայն ու միայն դաժան մոռացութեամբ մը:

Ու դարձեալ, կը տարուիմ խորհելու թէ, ճիշդ ատոր համար էր որ Շահզատէ Պաշըի թատրոնի բեմին վրայ, «Փարիզի աղքատները»ի ներկայացման մեր առաջին հանդիպումին, Գրիգոր Զօպանեան ի լուր իմ թատրոնի սիրոյս, ըսած էր.

— Պաշխա բան չգտար ալ թատրո՞նը կը սիրես կոր, չօճուխս...:

ԱՐՏԱՇԷՍ ԳՄԲԷԹԵԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏՆԵՐՈՒ ՓԱՐԻԶԻ ԹԱՆԳԱՐԱՆԸ

Փարիզի ամէնէն հրապուրիչ բայց քիչ ծանօթ թանգարաններէն մէկը Ժողովրդական Արուեստներու եւ Աւանդութեանց Թանգարանն է: Անտես առնուելուն գըլխաւոր պատճառը ա՛յն է, որ գրեթէ կորսուած է Շայոյի պալատի ներքնայարկին մէջ, սահմանափակ վայրի մը մէջ, որ իրեն թոյլ կու տայ, ամէն անգամ շատ քիչ բան ցուցադրել իր հաւաքածոներու 90 հազար առարկաներէն:

Այս կացութիւնը պիտի դարմանուի 1964ի վերջերը, երբ թանգարանը փոխադրուի Պուլոնեի անտառին մէջ ներկայիս կառուցուող մեծ ու շքեղ շէնքը: Մինչ այդ, հասարակութեան կը յիշեցնէ իր գոյութիւնը՝ վերջերս իր ձեռք ձգած առարկաներու չափազանց հաճելի մէկ ցուցահանդէսով:

Իսկապէս ի՞նչ կը ներկայացնէ ժողովրդական արուեստ մը կամ աւանդութիւն մը: Ատիկա պէտք է որոշուի հաւաքածոյ մը կազմելէ առաջ եւ ցուցահանդէսի ամէնէն հետաքրքրական կողմերէն մէկը այն ճարտարութիւնն է, որով թանգարանի վարիչները աւանդութիւնները զատած ու զանոնք դասակարգերու բաժնած են: «Կրակ»ը բազմաթիւ նիւթերէն մէկն է «Տնական պէտքերուն» եւ անոր զանազան ենթաբաժանումները կը պարունակեն զանազան առարկաներ, կրակը պահելու եւ «կենդանացնելու» համար, գործածութիւնը դիւրացնելու, զայն մեկուսացնելու եւ գործածելու համար: Հոն կը տեսնուին ոտքերը տաքցնելու յատուկ ջերմոցներ, ծխամորճը վառելու համար վառած ածուխ մը բռնելու մասնաւոր ունելիներ: Նմանապէս հոն կան զանազան առարկաներ՝ անկողինները տաքցնելու եւ այլնի համար: 19րդ դարուն, ասոնք շատ ժողովրդական նուէրներ էին, նշանուածներուն:

×

Թանգարանի առարկաներուն մեծագոյն մասը երկրագործական Ֆրանսայէն է եւ մանր արհեստներէ, որ կ'անհետանան այսօր: Այսպէս, ցուցահանդէսին մէկ մասը նուիրուած է երդիք շինողներուն եւ կը պարունակէ աղուոր գործիքներ, որ կը գործածէին յարդէ երդիք շինելու համար: Ուրիշ արտասովոր գործիք մը հնարուած է Պիրենեաններու մէկ հողագործին կողմէ ու կը գործածուի թոյլ չտալու համար որ հորթերը անյարմար ժամերու կաթ ծծեն:

Ֆրանսայի մէջ, գրեթէ ընկերային ամէն մէկ դասակարգ ունի իր աւանդութիւններն ու իր պատկերագրութիւնը: Օրինակ՝ «Ընկերները» արհեստագէտներու գաղտնի ընկերութիւն մըն էր, որուն ամէն մէկ նոր անդամի մասնակցութիւնը կը նախատեսէր «Ֆրանսայի շրջափակը» հեծանիւի մրցումներու յղացումէն շատ առաջ: Սակայն, կան նաեւ նըւազ ծանօթ խմբակներ, ինչպէս՝ «Նորակոչները» որոնց Փոլքլորը՝ ցուցահանդէսի ամէնէն զուարճալի մասերէն մէկն է:

Հոն կարելի է տեսնել փոխանորդութեան պայմանագրութիւններ, այն շրջանէն, երբ նորագիրներու համար ապահովագրական ընկերութիւններ կային: Անոնց գործն էր փոխանորդներ գտնել այն զինուորներուն համար, որոնց թիւերը կը քաշուէին եւ որոնք կը հրաժարէին բանակին մէջ ծառայելու:

Անծանօթ պատճառներով «քիյի» խաղը՝ Ֆրանսայի նորակոչին բանակին արձակման խորհրդանիշն էր: Ցուցահանդէսը մեծ թիւ մը կը պարունակէ այս «քիյի»ներէն: Կ'ըսուի թէ զինուորական իշխանութիւնները լաւ աչքով չէին նայեր անոնց:

Ցուցահանդէսին մէջ կը տեսնուի նաեւ «դեղքար»ը որուն համար կը կարծուէր, թէ վէրքերէն կը հանէր օձերու թոյնը եւ ապա հաւաքած թոյնը կը թափէր եթէ կաթի մէջ թաթխուէր: Ցուցահանդէսին հետաքրքրական առարկաներէն մէկն ալ «գիշերուան ամանն» է, որուն մէջ, կատակի համար, սոխապուր կը լեցնէին ու կուտային նորապսակներուն: Այս բոլորը, շատ տարածուած էին 19րդ դարու Ֆրանսայի մէջ:

Քաղեց ՎԷՆ

«ՅԱՌԱՋ»Ի ԹԵՐԹՕՆԸ (207)

ԵԸԼՏԸԶԻ ՊՈՄՊԱՆ

ՀԱԶԱՐ ԻՆԸ ՀԱՐԻՒՐ ՉՈՐՍ

...կը մնար միայն կայսերական վաւերացումը. ...Դատական Գործերու Նախարարը, իրեն հետ ունենալով ընդհանուր դատախազ Նէճմէտտին Մոլլա պէյը, ...Եըլտըզ եւ դատական թուղթերու ծրարը յանձնեց առաջին քարտուղար Թահսին փաշայի:

...Դատախազութեան Դիւանը կը գտնուէր նոյն պահուն Նէճիպ Մէլհամէ եւ կայսերական Բ. քարտուղար Իզզէթ Արապ փաշաները:

...Նորքն, բայց բաւական տաք խօսակցութիւն մը դարձաւ պալատականներուն միջեւ:

Նէճիպ Մէլհամէ փաշան մտատանջ կը թուէր, դեռ նոր դուրս ելած էր Հիւնքեարին առանձնասենեակէն:

— Փաշանե՛ր, ըսաւ Նէճիպ Մէլհամէ, Հիւնքեարը շատ բարկացած է այս պահուս, ես անպատեհ կը գտնեմ ունկնդրութիւն մը խնդրել Նորին Վեհափառութենէն:

— Ի՞նչպէս, հարցուց Դատական նախարարը, ինչո՞ւ բարկացած է, որո՞ւ դէմ:

— Մահափորձի դէպքէն ի վեր, շարունակեց Մէլհամէ, ջղային դարձած է, անտանելի՛:

— Ինչո՞ւ...

— Կ'երեւի թէ, յարեց Մէլհամէ, գոհ չէ մնացեր կատարուած դատավարութեան արդիւնքէն:

— Բայց, ներեցէ՛ք, փաշա՛, առարկեց ընդհանուր Դատախազը, Պալատի Քննիչ Յանձնաժողովին եզրակացութիւնները հաստատեցինք, դատավճիռները գրեթէ նոյնն են, տարբերութիւն մը չկայ բնաւ:

— Ճիշդ է, յարեց Գարա Թահսին, դատավճիռները հաստատուած են Եղեռնագործ ատեանին կողմէ, սակայն Հիւնքեարին փափաքը տարբեր էր:

— Ի՞նչպէս, հարցուց Նախագահը:

— Մահուան դատապարտուածներուն մեծ մասը, շարունակեց առաջին քարտուղարը, փախստականներ են:

— Ի՞նչ կրնայինք ընել, առարկեց ընդհանուր Դատախազը, գիտէ՞ք ո՛րքան աշխատեցայ այս արդիւնքը ձեռք բերել կարենալու համար. դուք ալ գիտէք, բանտարկեալները, գրեթէ առանց բացառութեան, անմեղներ են, բացի Պելճիայի Ժորիսէն, եւ սակայն, մենք, հնազանդելով վերէն բխած հրահանգներուն, յաջողեցանք ասոնցմէ կարեւոր մաս մը դատապարտել տալ մահուան, ուրիշ ի՞նչ կրնայինք ընել:

— Անուրանալի են մեր ընդհանուր Դատախազին ջանքերը, յարեց Դատական նախարարը, եթէ չարտասանէր իր հռչակաւոր ճառը, եւ եթէ մինչեւ վերջը, նոյն դիրքը չպահէր, անկարելի պիտի ըլլար այս արդիւնքը ձեռք բերել:

— Շնորհակա՛լ ենք Նէճմէտտին Մոլլա պէյին ջանքերուն համար, յարեց կայսերական առաջին քարտուղարը, երանի՜ թէ իր եռանդին գոնէ կէսը դնէին այս գործին մէջ, Եղեռնագործ ատեանին անդամները:

— Ինչ որ է, գիտել տուաւ Նէճիպ Մէլհամէ, այսօր կատարուած իրողութեան մը հանդէպ կը գտնուինք, ի՞նչ կ'ըսէք, դատավճիռները պարունակող թղթածրարը պիտի մատուցուի՞ Հիւնքեարին:

— Անշուշտ, պատասխանեց Նախագահը, չէ՞ որ կայսերական վաւերացման պիտի ենթարկուին անոնք:

— Սակայն, առարկեց Նէճիպ Մէլհամէ, վայրկեանը պատեհ չէ, Նորին Վեհափառութիւնը այս պահուս տրամադիր չէ ընդունելու որեւէ այցելութիւն:

— Փաշա՛, գիտել տուաւ նախարարը, այցելութեան հարկ չկայ, Առաջին Քարտուղար փաշան պիտի մատուցանէ թուղթերը, վաւերացման կայսերական իրատէն խնդրելու համար:

— Այո՛, ճիշդ է, իրաւունք ունիք, փաշա, ըսաւ Նէճիպ Մէլհամէ, բայց, ինչպէս քիչ առաջ ըսի, ժամանակը յարմար չեմ գտներ, դուք գիտէք սակայն, եթէ մեր Թահսին փաշան քաջութիւն ունի ներկայանալու:

— Ի՞նչ քաջութիւն, մռլտաց Գարա Թահսին, քանի որ բարկացած է, այդ յիմարութիւնը չե՛մ գործեր երբեք:

Նէճիպ Մէլհամէ շարաճճի ժպիտով մը.

— Գիտե՛մ, գիտե՛մ ըսաւ, կայսերական ապտակին յիշատակը դեռ թա՛րմ է:

Դատական նախարարը պալատէն մեկնեցաւ ընդհանուր Դատախազին հետ, իսկ Նէճիպ Մէլհամէ ու Գարա Թահսին, նոյն օրը մատուցին Հիւնքեարին, մահավճիռները պարունակող թղթածրարը:

Ապտիւլ Համիտ, առանց փոքր առարկութեան մը, անմիջապէս արձակեց կայսերական իրատէն, վաւերացնելով Եղեռնագործ Ատեանին դատավճիռները, միեւնոյն ժամանակ, հրամայելով յետաձգել ասոնց գործադրութիւնը:

ՍՄԲԱՏ ԲԻՒՐԱՏ

(Շար.)

ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ՏԱՆ

Փոխան ծաղկեպսակի նուէրներ Տիկին Աննիկ Փափազեանի ցաւալի մահուան առթիւ.—

Տէր եւ Տիկին Տոտաքեան 100, Տէր եւ Տիկին Սուճուքճեան 100, Տէր եւ Տիկին Թիւթիւնճեան (Քլերմոն - Ֆերրան) 100 եւ ողբացեալին եղբօրորդիներն ու քե - ռորդիները միասին 100 ֆրանք:

(Ստանալ «Յառաջ»էն):

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Հ. Բ. Ը. Միութեան Տիկնանց յանձ - նախումբը կը խնդրէ կազմակերպութիւն-ներէն նկատի ունենալ հետեւեալ թուա - կանները .—

ՀՈԿՏԵՄԲԵՐ 1, Երեքշաբթի երեկոյ Տիկնանց յանձնախումբի կազմութեան Գ. տարեդարձին առթիւ գեղարուեստական երեկոյթ :

ՀՈԿՏԵՄԲԵՐ 19, ցուցահանդէս հայ արուեստագէտներու նկարիչ, արձանա - գործ եւ փորագրիչներու գործերուն :

Հայկական Թանգարանը, 52 Ավընիւ Ֆոշ, (Փարիզ 16):

ԴԵԿՏԵՄԲԵՐ 7, 8, 9, 10, «Բարենպա - տակ վաճառք »:

Յառաջիկային պիտի տրուին մանրա - մասնութիւններ :

×

ԼԻՈՆ.— Ֆր. Կապ. Խաչի Օրը կը տօն-ուի մեծ պատրաստութեամբ, 27 Հոկտ. Մոլիէրի չքեղ սրահին մէջ:

×

Փարիզահայ Տիկնանց Միութեան յիս-նամեայ յոբելեանը կը տօնուի Հոկտեմ - բեր 13ին, Սալ տը լա Շիմի:

ՀԱՅ ԲՈՅԺ

ԺՈՂ. ԱՄՍԱԹԵՐԹ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ

խմբագիր՝ Շ. ՆԱՐԴՈՒՆԻ

Խմբագրին երկար բացակայութեան պատճառաւ, լոյս տեսած չեն ՀԱՅ - ԲՈՅԺի 1962 եւ 1963 տարիներու թիւերը:

Խմբագիրը, որ նոր վերադարձաւ Ամե-րիկայէն, գործի ձեռնարկած է արդէն : Ծրագրած է հրատարակել երկու բացա - ռիկ թիւեր, իւրաքանչիւրը 150 էջ : Ա-ռաջինը պիտի կրէ 1962 թուականը, երկ-րորդը՝ 1963 թուականը: Այս երկուքը մէկ տարի հաշուելով՝ անոնք որ վճա - րած են 1962, վճարած կ'ըլլան նաեւ 1963 տարին :

Այս ձեւով, խմբագիրը կը խորհի ՀԱՅ-ԲՈՅԺի հրատարակութիւնը ամբողջա - ցնել եւ կանոնաւորել մինչեւ յառաջիկայ տարի, եւ 1964 տարուան թիւերը լոյս ընծայել ամսէ ամիս՝ Յունուարէն սկըս - եալ :

Ամերիկայի նոր բաժանորդները եւս, որոնք վճարած են այս տարուան համար (1963), պիտի ստանան ՀԱՅ-ԲՈՅԺի 1962 եւ 1963 թիւերը:

Այն բաժանորդները, որոնք յետնեալ պարտք ունին, թող բարի ըլլան իրենց վճարումը հասցնել մինչեւ տարեվերջ : Հին պարտքերուն հետ՝ ներկայ տարին եւս վճարողներն են միայն, որ պիտի ստանան ՀԱՅ - ԲՈՅԺի բացառիկները, խմբագրուած բժշկական, գրական, պատմական, շատ հետաքրքրական եւ ճոխ բովանդակութեամբ ,— արդէն տը-պագրութեան յանձնուած :

Այս առթիւ շնորհակալութիւն այն հա-ւատարիմ բաժանորդներուն, որոնք ՀԱՅ-ԲՈՅԺի հրատարակութիւնը ընդհատուած ըլլալով հանդերձ՝ խմբագրին բացակա - յութեան պատճառաւ, վճարումները կա-տարած են օրը օրին ի վկայութիւն ի - րենց բարեկամութեան եւ վստահու - թեան :

Կը խնդրուի Հայրենիք, Ասպարէզ, Արմենիա, Ազատ Օր, Յուսաբեր, Ազ - դակ, Այգ, Ալիք թերթերու խմբագրու - թիւններէն, ինչպէս և Սիոն, Հասկ, Հայ Կեդրոն, Կիլիկիա, Հայաստանեայց Եկե - ղեցի պարբերականներէն, որ հրատարա-կեն այս յայտարարութիւնը գէթ 2 - 3 անգամ :

Շ. ՄԻՍԱՔԵԱՆ

Օրեր եւ Ժամեր

Լոյս Տեսաւ



Մատենաշար — ՅԱՌԱՋ — կեդրոնավայր

Գին

Ֆրանսա՝ 15 Ֆր.

— Առանձին առաքումի ծախքը —

« ՅԱՌԱՋ »

ԿԵԱՆՔԻ ՈՒՂԻՆԵՐՈՎ

Գ. Հատոր

Շուտով լոյս կը տեսնէ Ս. Վրացեանի ԿԵԱՆՔԻ ՈՒՂԻՆԵՐՈՎ (Գ. Հատորը), շուրջ 300 էջ, պատկերազարդ եւ լաթա - կազմ :

Երրորդ հատորը կը բովանդակէ Ս. Վրացեանի յուշերը կամաւորական շարժ-ման, ինչպէս նաեւ դէմքեր, դէպքեր եւ տպաւորութիւններ՝ մօտիկ անցեալէն :

ԱՐԶԱԿՈՒՐԴԻ ԱՌԹԻՒ ՅԱՃԱԽԵՑԷՔ



ՃՕՇԿՈՒՆԵԱՆ-ՈՐԴԻ

ՄԱՐՍԷՅԼԻ ԾԱՆՕԹ ՃԱՇԱՐԱՆԸ

Ուր պիտի գտնէք արեւելեան հա-մադամ կերակուրներ եւ մասնաւո-րաբար

ՏԷՕՆԷՐ - ՔԷՊԱՊ

եւ արեւելեան զանազան խմորեղէններ

RESTAURANT DJOCHGOUN

4. Rue de la Butte, MARSEILLE 2e

(Place Jules Guesde)

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Մարսէյլի մէջ Դաշնակցութեան Օրը կը տօնուի Հոկտեմբերի 5ին Սալոն Ալ - համպրա :

ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ

Կապոյտ Խաչի Վիէնի մասնաճիւղի տարեկան դաշտահանդէսը տեղի կ'ունե - նայ Սեպտեմբեր 1ին, առաւօտէն մինչեւ երեկոյ «Իւ-էս-Ա.»ի մարզադաշտին վրայ (Թանըրիին քով):

Գեղարուեստական ճոխ բաժին: Բանա-խօսութիւն, երգ արտասանութիւն եւ հայկական պարեր:

Ճոխ պիւֆէ. աղանդերներ եւ շամփու-րով խորոված:

Սիրով կը հրաւիրուի գաղութի հա - յութիւնը:

ՀԱՅ ԸՆԾԱՅԱՐԱՆ

Կը փնտռուի հայ տիկին մը Հաստա - տութեանս մէջ իբր խոհարարի օգնական: Մանրամասն տեղեկութիւններու համար դիմել գրաւոր կամ անձամբ՝

École Apostolique Arménienne
3, Av. de Grandchmp
LE PECQ (S. et O.) Tél. 963-01-72

IMPRIMERIE SPECIALE
DU JOURNAL « HARATCH »
32, Rue de Trévise, PARIS (9e)

ՀՐԱՆՏ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

51, Rue Monsieur-le-Prince, PARIS - 6e — Chèque Postal : 1278-35

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՇԻՐՎԱՆԶԱԴԷ, Երկերի ժողովածու , 10 հատոր լաթակազմ	70 Ֆր.
ՍՏԵՓԱՆ ԶՕՐԵԱՆ, Երկերի ժողովածու, 7 հատոր, լաթակազմ	56 Ֆր.
ՍՏԵՓԱՆ ԶՕՐԵԱՆ, Պապ թագաւոր , լաթակազմ	10 Ֆր.
ՍՏԵՓԱՆ ԶՕՐԵԱՆ, Հայոց բերդը, լաթակազմ	8 Ֆր.
ՎԱՀԱՆ ՏԷՐԵԱՆ , Երկերի ժողովածու, 2 հատոր լաթակազմ	14 Ֆր.
ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՒԻԹ, մեծադիր, գունաւոր նկարներով, լաթակազմ	10 Ֆր.
Վ. ԱՆԱՆԵԱՆ, Հայաստանի կենդանական աշխարհը, Բ.	8 Ֆր.
ԱՐՍԷՆ ՏԷՐՏԷՐԵԱՆ, Երկեր (Արովեան Պռոշեան, Պարոնեան)	17 Ֆր.
ՄՈՒՐԱՑԱՆ, Պատմուածքներ, գունաւոր նկարներով	5 Ֆր.
ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑԻ մասին յիշողութիւններ. լաթակազմ	7.50 Ֆր.
ՄԻՔ. ՇԱԹԻՐԵԱՆ. Գարունը նորից եկաւ. 296 էջ.	5 Ֆր.
ԱԲԳԱՐԵԱՆ. Մատենադարան(անգլ.) 18 գունաւոր մանրանկարներ	3 Ֆր.
ՀԵՆՐԻԿ ԹՈՒՄԱՆԵԱՆ. Երգի ծնունդը. բանաստեղծութիւններ	3.85 Ֆր.
Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ. Տաղեր, 200 էջ. լաթակազմ	3.50 Ֆր.
ՍՈՎԵՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ. Ա. 800 էջ. լթկզմ.	16 Ֆր.
ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ, Անլռելի զանգակատուն, Պէյրութ, 1963	10 Ֆր.

Առաքման ծախքը գնողին վրայ

ԳՐԱՏՈՒՆՍ ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻՆ Է

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՁԱՅՆԱԳՐԵԱԼ ԲՈԼՈՐ ԵՐԿԵՐՈՒՆ

ՃՈԽ ՄԹԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԵՒ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆՑ

ԼՈՅՍԸ ԳՈՅՆ Է.... ԳՈՅՆԸ ԼՈՅՍ Է

ՁԵՐ ՏԱՆԸ ԼՈՅՍ ՏՈՒԷ՛Ք.... ԹՈՄԼԱՔԻ ԳՈՅՆ ՏՈՒԷ՛Ք

Ձեր բնակարանը կը լուսաւորուի

Երբ ներսը եւ դուրսը

ՎԵՐԱՆՈՐՈԳԷՔ - ԶԱՐԴԱՐԷՔ - ՆԵՐԿԷՔ

ԹՈՄԼԱՔ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐՈՎ

PEINTURES THOMLAC

16 bis, Bd. Sébastopol, Paris 4e

Tél. ARC 26-61 – Métro : Halles et Chatelet

136, RUE DES BOURGUIGNONS — ASNIERES - BOIS COLOMBES (Seine)
Tél : GRE. 09-47

11, BD. DE LA REPUBLIQUE — LA GARENNE (Seine)
Tél. : STA. 19-06

ԱՆՄՐՑԵԼԻ ԳԻՆԵՐՈՎ

Ամէնէն արդիական, նուրբ եւ ընտիր ճաշակով պատրաստուած՝ առաջնա - կարգ ներկեր : Բնական եւ արուեստական բազմերանգ գոյներու մեծ ընտրու-թիւն: Նորոյթ իւղաներկեր, պատի գեղեցիկ թուղթերու ճոխ ընտրութիւն: Գետնի համար՝ ամէն տեսակ — լինոլէոմ եւ փլասթիք — ծածկոցներ. —

TAPIFLEX — TAPISOM — CARPETTE

Ձեր բնակարաններուն արտաքին եւ ներքին խնամքներուն համար անհրաժեշտ բոլոր նիւթերը :

Ամէն գնորդի կը նուիրուի յատուկ տետրակ մը, որու շնորհիւ կրնայ 10-30 առ հարիւր զեղչ ունենալ :

ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐ

52, RUE CHALON, PARIS 12e — 64, BLD. DE BELLEVILLE, PARIS 20e
166, AV. ARISTIDE BRIAND — PAVILLONS - SOUS-BOIS (Seine)
4 bis, RUE PAUL VAILLANT COUTURIER — ARGENTEUIL (S. et O.)
24, RUE PAUL VAILLANT-COUTURIER — ALFORTVILLE (Seine)
48 bis, RUE DALAVRAC — FONTENAY - SOUS - BOIS (Seine)

Le PREMIER QUOTIDIEN ARMENIEN en EUROPE

ՅԱՌԱՋ — HARATCH

ՕՐԱԹԵՐԹ
Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

Directrice : ARPIK MISSAKIAN
Rédaction et Administration : 32, Rue de Trévise - PARIS-9e
Fondé en 1925 — Téléph. : PRO. 86-60
R. C. Seine 57 A 2731 — C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա՝ Տար. 50 Ֆ. — Վեցամսեայ՝ 27 Ֆ.
Արտասահման՝ Տար. 60 Ֆ. — Հատը 0.30 Ֆ.

ԵՐԵՔՇԱԲԹԻ 20 ՕԳՈՍՏՈՍ — MARDI 20 AOUT 1963
LE NUMERO : 0,30 FR.

39րդ ՏԱՐԻ — Թիւ 9686 — Fondateur : SCHAVARCH MISSAKIAN — 39e ANNÉE — N° 9686

ՓՐԿՈՒԹԵԱՆ ԳՈՐԾ

Դժբախտաբար, վաւերական եւ ստոյգ վիճակագրութիւններ չունինք ձեռքի տակ՝ կարենալ ճշդելու համար Սփիւռքի մէջ ապրող Հայերուն, մասնաւորաբար Թուրքիա բնակող մեր հայրենակիցներուն եթէ ոչ ճշգրիտ, գէթ մօտաւոր թիւը:

«Խորհրդային Մեծ Հանրագիտարան»ը երեք հաւասար մասերու կը բաժնէր աշխարհի հինգ ցամաքամասերուն մէջ ցրուած Հայերու թիւը.— 1.200.000՝ բուն Հայաստանի մէջ, 1.200.000՝ Խ. Միութեան այլ հանրապետութեանց մէջ, 1.200.600՝ աշխարհի մնացեալ մասին, այսինքն՝ հինգ ցամաքամասերուն մէջ: Այս երրորդ միլիոնը յատուկ անուն մը ունի, — Սփիւռք:

Այսպէս ուրեմն՝ համայն աշխարհի մէջ կ'ապրէին երեք միլիոն վեց հարիւր հազար Հայեր, ըստ «Խորհրդային Մեծ Հանրագիտարան»ին (1926 տպագրութիւն):

Անկէ ասդին անցած է ճիշդ 37 տարի: Այս 37 տարուան ընթացքին, մեր ժողովուրդի բնական աճը եւ Երկրորդ Աշխարհամարտի հետեւանքով մեր կրած կորուստները հաշուելով, գումարելով եւ հանելով, մեր թիւը այսօր հասած պէտք է ըլլայ վերիվերոյ չորսուկէս միլիոնի: Յաւելում՝ ինը հարիւր հազար:

«Քաղաքագէտի տարեգիրք»ը, որ վստահելի աղբիւր մըն է, 1.394.000 ցոյց կու տայ Խ. Միութեան մէջ ապրող Հայերուն թիւը, 1.514.000՝ Խորհ. Հայաստանի հայ բնակիչներուն թիւը, ըստ 1961 Յունուար 1ի մարդահամարին:

Միւս կողմէ՝ Երեւանի մէջ 1961ին հրատարակուած Հայաստանի Ատլասը աւելի քան 1.500.000 կը նշանակէ Սփիւռքի Հայերուն թիւը:

Հիմա գումարենք այս թիւերը.—

1.394.000 + 1.514.000 + 1.500.000 հաւասար է չորս միլիոն չորս հարիւր ութ հազարի: Ասոր վրայ աւելցնելով հայ ժողովուրդի բնական աճը՝ երեք տարիէ ի վեր, այսօր՝ 1963ին կ'ունենանք չորս միլիոն հինգ հարիւր քառասուն հազար Հայ:

Այժմ մեզ հետաքրքրող հարցը սա՛ է.— Քանի՞ հազար Հայեր կ'ապրին Թուրքիոյ մէջ, Պոլիսէն մինչեւ Տերսիմ, Անգարայէն մինչեւ Կեսարիա:

Յետադարձ ակնարկ մը՝ այս առթիւ: Պոլսոյ Հայոց Պատրիարքարանը 1882ին կազմած էր վիճակագրութիւն մը, որուն համաձայն Արեւմտահայերուն թիւը կը հասնէր 2.660.000ի: Մէկ միլիոն 630 հազարը կ'ապրէին հայկական վեց նահանգներուն մէջ, իսկ մէկ միլիոն 30.000ը՝ Կիլիկիոյ եւ Թուրքիոյ այլ քաղաքներուն մէջ:

Դարձեալ համաձայն Պատրիարքարանի կազմած մարդահամարին, 1912ին (նախորդէն երեսուն տարի ետք, հայկական վեց նահանգներուն մէջ ապրող մեր հայրենակիցներուն թիւը կը հաշուուէր ընդամէնը մէկ միլիոն տասնեւութ հազար: Տարբերութիւնը՝ 1882ի եւ 1912ի միջեւ՝ աննշան չէ, աւելի քան կէս միլիոն, ճիշդը՝ 612.000:

Ու՞ր գացին, ի՞նչ եղան այս վեց հարիւր տասներկու հազար Հայերը: Պատասխանը շատ յստակ է եւ իր յստակութեան մէջ խիստ ահաւոր: Երեսուն տարուան ընթացքին 612.000 Հայեր կա՛մ ջարդուեցան, կա՛մ գաղթեցին եւ կամ կրօնափոխ եղան:

«Քաղաքագէտի Տարեգիրք»ը ներկայիս երկու միլիոն չորս հարիւր երեսունըվեց հազար ցոյց կու տայ հայկական վեց նահանգներու բնակիչներուն թիւը: Եթէ Հայերը մնացած ըլլային իրենց տեղը, — չաքսորուէին, չջարդուէին, չգաղթէին, — հիմա այդ նահանգներուն մէջ պիտի ապրէին շուրջ հինգ միլիոն հոգի: Անկէ պիտի չահէր երկիրը, պիտի չահէր բնակչութիւնը, պիտի չահէին նաեւ Հայերը: Բայց Թուրքիան այն միակ երկիրն է, որ կը կարծէ թէ ջարդելը ստեղծել է, քանդելը շինել է, աւերելը կառուցանել է եւ արտաքսելը ներմուծել է:

Կը հարցնենք.— Ի՞նչ կը մնայ այսօր 1882ին երկու միլիոն վեց հարիւր վաթսուն հազար Հայերէն, որոնք կ'ապրէին Թուրքիոյ մէջ մեզմէ ճիշդ ութսունըմէկ տարի առաջ:

Այս հարցումին պատասխանը մէկ չէ, երեք է.—

ա) Ըստ ոմանց՝ այսօր Թուրքիոյ մէջ բնակող մեր հայրենակիցներուն թիւը կը հասնի շուրջ 125.000ի:

բ) Ըստ ուրիշներու՝ 200.000ի:

գ) Ըստ Հայաստանի Ատլասին՝ աւելի քան 250.000ի:

Զենք կրնար երաշխաւորել այս թիւերուն ճշդութիւնը: Զգալի տարբերութիւն մը կայ (գրեթէ կէս առ կէս) առաջին ենթադրութեան (125.000) եւ երրորդ ենթադրութեան (250.000) միջեւ:

Սակայն, տրուած թիւերը բաժնելով երեքի՝ կ'ունենանք միջինը, — աւելի քան հարիւր իննսուն հազար: Ուրեմն, 1963ին բովանդակ Թուրքիոյ մէջ կ'ապրին 190.000 Հայեր: Մեզի կը թուի, թէ այս միջինը եւս նոյնքան անճիշդ է, որքան յիշատակուած երեք թիւերը առանձին առանձին: Կրնանք ըսել, թէ վերի վերոյ 100–120.000 Հայեր կան հիմա Թուրքիոյ մէջ, 65–70.000ը՝ Պոլսոյ, մնացեալ 35–50.000ը գաւառներու մէջ:

1882ի երկու միլիոն վեց հարիւր վաթսուն հազարէն մնացած է միայն հարիւր-հարիւր քսան հազար Պակաս՝ երկու միլիոն հինգ հարիւր քառասուն հազար: Եզրակացութիւնը պարզ է, — 1882էն մինչեւ 1962, ութսուն տարուան ընթացքին, Թուրքիա բնակող Հայերուն երկու միլիոն հինգ հարիւր քառասուն հազարը «հալեցաւ», ուրիշ խօսքով՝ տարագրուեցաւ, ջարդուեցաւ, հաւատափոխ եղաւ կամ հոս ու հոն գաղթեց:

Սակայն մէկ կողմ դնենք հիմա անցեալը եւ խօսինք ներկայի մասին:

Ի՞նչ պիտի ըլլայ ճակատագիրը այսօր, 1963ին, Թուրքիոյ մէջ ապրող մեր 100–120.000 հայրենակիցներուն: Պատասխանը երկուք չէ, մէկ է: Սերունդ մը — երկու սերունդ ետք, այս հարիւր հազարէն պիտի մնայ միայն ափ մը մոխիր...

Մենք քանակով փոքրերէն ենք նոյնիսկ փոքրերուն մէջ, բայց ունինք այն ներելի յաւակնութիւնը, թէ որակով փոքրերէն չենք՝ նոյնիսկ մեծերուն մէջ:

Քանակը միայն նկատի առնելով՝ պիտի ըսենք, թէ մեզի համար մէկ Հայը ընտանիք մըն է, մէկ ընտանիքը սերունդ մըն է, մէկ սերունդը ազգ մըն է:

«ՅՈՒՍԱԲԵՐ»

ՕՐՈՒԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐԸ

ՍԱՅԿՈՆ

ԿԱՑՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԾԱՆՐԱՆԱՅ

Վիէթ-Նամի մէջ օրէ օր կացութիւնը կը ծանրանայ եւ կրօնական մոլեռանդութիւնը կը շարունակէ ծայրայեղութիւններու տանիլ պուտտայականները: Ամէն բան սկսաւ ամիս քանի մը չորսաթ առաջ երբ պուտտայականներու մէկ տողանցքը արգիլուեցաւ կաթոլիկէ Նախագահին կողմէ: Անկէ ի վեր բողոքելու համար կրօնական խտրականութեան դէմ, պուտտայական քուրմեր եւ քրմուհիներ սկսան իրենք զիրենք զոհել ողջ-ողջ այրուելով հրապարակին վրայ: Ներկայիս ցոյցերն ու բողոքները սկսած են մեծ համեմատութիւններ ստանալ եւ Ամերիկա շատ մտահոգ է, նկատի առնելով որ ոչ մէկ տեղ այնքան օգնութիւն բերած է որքան Վիէթ-Նամ:

Առջի օր, արարողութենէ մը ետք, որ տեղի կ'ունենար Քսալոյա կոտտան մէջ (փակոտ) ի յիշատակ այն քուրմերուն, որոնք իրենք զիրենք զոհած էին, 10.000 պուտտայականներ որոշած են կամաւոր ծոմ պահել 12 ժամ: Քուրմ մը ճառ խօսած է ցուցարարներուն ըսելով.— «Եթէ այս կացութիւնը շարունակուի, մարդկային նոր զոհողութիւններ տեղի պիտի ունենան: Այն պատճառը որու համար այս տագնապը կը տեւէ այն է որ պուտտայականները չեն ուզեր ենթարկուիլ բռնատիրութեան: Ծոմապահութիւն ըրէք, բոլորդ ալ»:

Ապա, պուտտայականները հաւաքուած են կոտտան շուրջ եւ սկսած են բարձրաձայն աղօթել, աւելի ուշ ցրուած են առանց միջադէպի:

Հիւէի մէջ ալ ցոյցեր կատարուած են ուսանողներու կողմէ գլխաւորաբար համալսարանի տեսուչին տան առջեւ: Տեսուչին փոփոխութիւնը արդէն իսկ նախատեսուած է: Համալսարանի ուրիշ 40 դասախօսներ որոշած են հրաժարիլ բողոքելու համար տեսուչին հեռացումին դէմ: Տեսուչը կաթոլիկէ է եւ կը մեղադրուի իշխանութեանց կողմէ որ չէ արգիլած ուսանողներու ցոյցերը: Ի տես այս կացութեան, կառավարութիւնը որոշած է յետաձգել համալսարանական վերամուտը:

Կաթոլիկէ Եկեղեցին որ ցարդ չէր միջամտած, ստիպուեցաւ խզել իր լռութիւնը՝ Վատիկանի ճնշումին վրայ: Սայկոնի արքեպիսկոպոսը՝ Գերապայծառ Փօլ Նկույէն Վան Պինհ հովուական թուղթ մը ուղղած է իր հաւատացեալներուն, որու մէջ ընդհանուր ձեւով կը հերքէ որ կաթոլիկները բռնութիւն բանեցուցած ըլլան պուտտայականներուն վրայ, որոնց հետ «կը շարունակեն ապրիլ բարեկամաբար, հակառակ Հիւէի եւ Սայկոնի միջադէպերուն»: Արքեպիսկոպոսը կը շեշտէ թէ աւելի քան երբեք ստիպողական է, նպաստելու համար Վիէթ-Նամի խաղաղութեան ու գթութեան գործել հանդէպ անոնց որոնք Կաթոլիկէ Եկեղեցւոյ չեն պատկանիր: Թուղթին վերջաւորութեան մէջ, առաջնորդը ազդարարութիւն մը կ'ընէ կառավարութեան անոր յիշեցնելով իր պատասխանատուութիւնները պուտտայական հարցին մէջ եւ այն «պարտադրանքը զոր Եկեղեցին կ'ընէ իրեն, համերաշխելու հասարակաց շահուն պահանջները անհատներու իրաւունքներուն եւ շահերուն հետ»:

Վատիկանէն եկած լուրերու համաձայն, Պապը դիւանագիտական խողովակով անհատական նամակ մը գրկած է Նախագահ Տիէմի, որպէսզի աւելի հանդուրժողական ոգի ցոյց տայ պուտտայականներու հանդէպ:

ՄՈՍԿՈՒԱ

ԳՐԱԿԱՆ ՆՈՐ ԴԷՊՔ

Իզվեստիա երկար բանաստեղծութիւն մը հրատարակած է որ շատ ակնարկութիւններ կը պարունակէ սթալինեան վարչակարգին: Ալեքսանդր Տվարդովսկի որ ստորագրած է այդ կտորը, նախապէս դայն կարդացած է Խրուշչեւի: Խորագիրն է՝ «Տերկին միւս աշխարհին մէջ» եւ Իզվեստիայի երեք էջերը կը գրաւէ: «Միւս աշխարհը» ուր կը հասնի Տերկին, շատ կը նմանի Սթալինի աշխարհին: Հեղինակը կը նկարագրէ «յատուկ բաժանմունք մը» որ կը գրաւէ ոճրագործներով եւ զոր կը ղեկավարէ ամենազօր անձ մը որ ամբողջ կեանքը Կրեմլին ապրած է եւ նոյնիսկ հոն կառուցանել տուածէ իր գերեզմանը: Ի վերջոյ Տերկին իրապէս մեռած չէ եւ երկիր կը վերադառնայ ուր «տակաւին հարիւր տարի պիտի ապրի»:

Այս հրատարակութիւնը իսկական գրական դէպք մըն է ինչպէս եղած է Եւտուշենկոյի «Սթալինի Ժառանգորդները» եւ մանաւանդ նախրագործումն է Տվարդովսկիի որու «Նովի Միռ» պարբերականը ծանր յարձակումներու ենթարկուած էր ծայրայեղներու կողմէ, տարւոյս սկիզբը:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՑՈՒՐՏ - ԶՄԵՌ եւ անձրեւ կը շարունակուին բովանդակ Ֆրանսայի վրայ: Երբեք ջերմաչափը այսքան ցած չէր իջած Օգոստոսին Փարիզի մէջ, ուր 15 էր կիրակի օր: Ձիւնած է 2000 մեթրէն սկսեալ բոլոր լեռներուն վրայ եւ ըստ ամերիկեան Թիրոս արբանեակին, դէշ օդը տակաւին ամիս մը պիտի տեւէ, այլ խօսքով մինչեւ աշուն...:

ՍՊԱՆԱՅԻ երկու անիշխանականներու կեանքին խեղդակապով վերջ տրուեցաւ, գնդակահարութեան պատիւին արժանի նկատուած չըլլալով: Կ'ամբաստանուէին որ ռումբերով ահաբեկումներ կատարած են Սպանիոյ մէջ: Իտալացի կարգ մը անձնաւորութիւններ որոնց մէջ՝ ծուղիփփէ Սառակաթ բողոքած են, «բարբարոս ոճիր մը» նկատելով եղածը:

ԴԱՄԱՍԿՈՍԻ Արտաքին Նախարարութեան բանբերը կ'ըսէ թէ իսրայէլեան ուժերը հաւաքուած են սահմաններուն մէջ:

ԹԵՀՐԱՆԻ մէջ հինգ մահապատիժներ տրուեցան Յունիս 5ի եւ 6ի խռովարարներու դատավարութեան ընթացքին:

ԸՆԿԵՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ բացը կը մեծնայ եւ կրնայ 250 միլիառ հին Ֆրանքի հասնիլ մինչեւ 1965: Սակերը բարձրացնելն ալ ելք չի նկատուիր, որովհետեւ գործատուները արդէն շատ ծանրաբեռնուած են ընկերային տուրքերով:

ԺՈՐԺ ՊԻՏՈՅԻ կինը հասած է Պրազիլ: Նախկին վարչապետը յայտարարած է որ այդ չի նշանակեր թէ վերջնականապէս հոն պիտի հաստատուի, ընդհակառակն՝ «կարօտը չեմ քաշեր իմ երկրիս, որովհետեւ գիտեմ թէ շուտով Ֆրանսա պիտի վերադառնամ: Կառավարութիւնը գրեթէ թաղուած է եւ շատ բարեկամներ ունիմ ըլլայ Ֆրանսա, ըլլայ արտասահման: Ան որ կը կասկածի տակաւին թէ ի՛նչ զառիվարի վրայ կը գտնուի տը Կոլ, թող միջազգային մամուլ կարդայ»: Նախկին վարչապետին այս յայտարարութիւնը կրնայ պատճառ դառնալ որ արտաքսուի երկրէն, վասնզի քաղաքական ապաստան կը վայելէ պայմանաւ որ քաղաքականութեամբ չզբաղի:

ՖԵՐԱԹ ԱՊՊԱՍԻ հրաժարումէն ետք, Հաճ Պէն Ալլա պիտի նախագահէ Ազգ. Ժողովին: Ցարդ փոխ-Նախագահ էր:

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ՈՐԴԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայ մեծ հումանիստ բանաստեղծի կեանքի ու գործունէութեան տարեգրութեան շատ էջեր, անհրաժեշտ նիւթերի սակաւութեան պատճառով, դեռեւս չեն լուսաբանուած: Հետեւապէս, նոր, առաջին հայեացքից «մանրուք» թուացող փաստերի հաւաքումն ու հրատարակումը, եթէ նոյնիսկ մասնակի նոր բան աւելացնեն կամ պարզեցում մտցնեն Սայաթ-Նովայի կեանքի տարեգրութեան մէջ, չահեկան են: Այս մղումները մեզ առիթեցին Սայաթ-Նովայի ծննդեան 250-ամեակի առթիւ անդրադառնալ մի նորայայտ փաստի: Դա վերաբերում է Սայաթ-Նովայի որդիների՝ Օհաննէսի եւ Մելիքսէթի գործունէութեանը Մոզդոկում:

Հայ հռչակաւոր բանաստեղծ-գուսանի առաջին հրատարակիչ և կենսագիր Գէորգ Ախվերդեանը դեռեւս 1852 թուականին «Սայաթ-Նովա» ժողովածուի յառաջաբանում, պատումների հիման վրայ, գրել է, որ Սայաթ-Նովան, լսելով Վրաստանի սահմաններին Աղա-Մահմէդ-խանի զօրքերի մօտենալու լուրը, գալիս է Թիֆլիս եւ այնտեղից իր երկու որդիներին ու երկու աղջիկներին ուղարկում Մոզդոկ: Յետագայում առանձին բանասէրներ կարծիք յայտնեցին, թէ իբր Գ. Ախվերդեանի տեղեկութիւնները «պատմագիտական ստոյգ աղբիւր չեն կարող համարուել»: Այժմ Գ. Ախվերդեանի՝ «Սայաթ-Նովա» գրքի հրատարակութիւնից 110 տարի յետոյ, Մեսրոպ Մաշտոցի անուան մատենադարանում առաջին անգամ յայտնաբերուած միանգամայն վստահելի գրաւոր փաստը միանգամ ընդմիշտ հաստատում է առաջին հրատարակիչ-կենսագրի հաղորդած տեղեկութիւնները, եւ հնարաւորութիւն է տալիս այդ փաստի հետ առնչուող միւս պատմական նիւթերի օգնութեամբ որոշելու նաեւ Սայաթ-Նովայի որդիների Մոզդոկում ապրած ժամանակի եւ հայ գաղութի կեանքին նրանց ունեցած մասնակցութեան հարցերը:

Այս նորայայտ գրաւոր ստոյգ վկայութիւնը գտնւում է մատենադարանում պահուող «Օրինակք գրութեանց եւ նամակաց...» խորագիրը կրող թիւ 2214 ձեռագիր-մատեանում: Այդ ձեռագիր-մատեանին յետագայում միացուած են նաեւ մի շարք այլ նիւթեր, որոնք անմիջական առնչութիւն ունեն Սայաթ-Նովայի որդիների հետ, ուստի եւ դրանք մեր ուշադրութիւնը գրաւեցին: Այդ վաւերագրերը ջերմ հայրենասիրութեամբ շնչող, թւով հինգ մահաարներ են (համարներ), գրուած 1809-1810 թուականներին, Պետերբուրգ, Մոսկուա, Աստրախան, Իզլար ու Մոզդոկ քաղաքներում ապրող հայ բնակչութեան կողմից եւ հասցէագրուած են Հայաստանում ապրող, պարսկաթուրքական լծի տակ տառապող հայազգի հոգեւոր հայրերին ու աշխարհական բոլոր եղբայրներին:

Մահաարների հեղինակները գրել են, որ իրենք ապրում են Ռուսաստանում, բայց երբեք չեն մոռանում հայրենիքը եւ ականջալուր են Հայաստանում ապրող ազգայինների ցնցող ձայնին, ազգայիններ, որոնք յարատեւում են իրենց գոյութիւնը մրրիկների թանձրացած մթնոլորտում ու քաջ գիտեն, որ թշնամիները ձգտում են խորտակել բովանդակ Հայութեան «հաւատոյ նաւը»: Նրանք Հայաստանում թշնամիների դէմ մաքառողներին յորդորում էին. «Մնացէք դուք հաստատուն ի վերայ ճշմարտութեան եւ մերժեցէք զրնաւորս...», հաւատով յուսադրում, որ Հայերի վրայ էլ արդարութեան արեւը կը ծագի ու փրկութիւն կը լինի: Պատմական այդ կարեւոր վաւերագրերն ստորագրել են հայ համայնքների 624 աչքի ընկնող ներկայացուցիչներ՝ Ռուսաստանում բնակուող բազմահազար Հայերի անունից:

1810 Մայիս 26ին Մոզդոկում ապաստանած Հայերից 134 մարդ նոյնպէս ստորագրել են Հայաստան ուղարկուող մահաարը: Նրանց թւում էին նաեւ Սայաթ-Նովայի երկու որդիները՝ Օհաննէսն ու Մելիքսէթը: Նրանք մահաարն ստորագրել են 120 եւ 121 հերթական համարների տակ: Ուշագրաւն այն է, որ երկու եղբայրներից Օհաննէսը մաքուր հայերէնով գրել է՝ «Յօհաննէս դի Սայաթնով», այսինքն՝ Օհաննէս որդի Սայաթնովի: Միւս եղբայրը՝ Մելիքսէթը, Օհաննէսից մի համար ներքեւ, նոյնպէս իր ձեռքով, բայց վրացերէն տառերով գրել է իր անուն-ազգանունը, իսկ դիմացը հայերէն տառերով տրուած է նրա թարգմանութիւնը՝ «Մելիքսէթ Սայաթնով»:

Սակայն այս գրաւոր նորայայտ փաստը եւս լրիւ չի պարզում, թէ Մելիքսէթն ու Օհաննէսը ինչքան ժամանակ են ապրել Մոզդոկում և, բացի վերեւում նշուածից, ուրիշ ինչպիսի հանրօգուտ ու հայրենասիրական գործերի են մասնակից եղել, չխօսելով արդէն նրանց անձնական ընտանիքի ու ընտանեկան կեանքի մասին:

Այդուհանդերձ, սրանով յայտնի է դառնում, որ Սայաթ-Նովայի որդիները դեռ 1810 թուականի Մայիս 26ին ապրում էին Մոզդոկում եւ տեղի հայ համայնքի կողմից ճանաչուած էին որպէս մեծ երգչի արժանաւոր զաւակներ, որոնք իրենց հօրից ժառանգել էին, ի թիւս շատ այլ բարեմասնութիւնների, նաեւ ջերմ հայրենասիրութիւն:

Հ. ԽԱՉԱՏՐԵԱՆ

Բ. ԿԱՆԱՉԵԱՆԻ ՃՇԴՈՒՄԸ

ԽՄԲ.— Օգոստոս 14ի մեր թիւին մէջ հրատարակած էինք այն գրոյցը, զոր «Ազդակ» ունեցած էր Բ. Կանաչեանի հետ եւ այդ առթիւ մատնանշած էինք թէ ծերունի վարպետին մէկ յայտարարութիւնը հարազատ չի թուիր մեզի: Այսօր ստացանք «Ազդակ»ի Օգոստ. 13ի թիւը, ուր հրատարակուած է Բ. Կանաչեանի ճշդումը: Ուրախ ենք որ մենք իրաւունք ունէինք եւ անմիջապէս յայտնած էինք մեր վերապահութիւնը, Կանաչեանի «Նամակ խմբագրութեան» իսկ առաջ: Կը ցաւինք սակայն որ Պէյրութի մեր պաշտօնակիցը այս կէտը չճշդած հրատարակած էր գրոյցը, վասնզի յօդուածէն ետք հրատարակուած ճշդումը կրնայ անտես անցնիլ եւ Կանաչեանի բերանը կը մնան պատասխանատու անհարազատ խօսքեր:

×

НАМАК

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Յարգելի Խմբագրութիւն «Ազդակ» օրաթերթի

Ձեր արօրուտ օրաթերթի 7 Օգոստոսի թիւին մէջ, հրատարակած էիք ձեր թղթակցին մէկ տեսակցութիւնը ինծի հետ, որուն համար շնորհակալ եմ:

Դժբախտաբար սակայն, կարգ մը հարցումներու տրուած իմ պատասխաններս թիւրիմացաբար սխալ մեկնաբանուած են, մասնաւորաբար վերջին հարցումին վերաբերեալ իմ արտայայտութիւններս հարազատօրէն չեն տրուած:

Կը փափաքիմ որ կատարէք անհրաժեշտ ճշդումը: Ստորեւ կուտամ վերոյիշեալ հարցումին իմ ճշգրիտ պատասխանս.

«Իմ երգերս նոր ձեւ մը առած են, ժողովրդական եղանակը իբրեւ թեմա գործածելով: Սկիզբը անմիջապէս կուտամ թեման, ապա կը զարգացնեմ եւ վերջաւորութեան նախկին մոթիվը ցոյց տալով, կը վերջացնեմ իբրեւ եզրակացութիւն: Որով եղանակի վերջաւորութիւնը որոշ կերպով յայտնի կ'ըլլայ: Կը խորհիմ, թէ այս ձեւը, ժողովրդական երգերու մշակումին համար, լաւագոյն ձեւերէն մէկն է: Յառաջիկային կը յուսամ, որ նոր հեղինակները նկատի կ'ունենան այդ ձեւը»:

Գալով 6րդ հարցումին տրուած պատասխանիս, հոն եւս անհարազատ կարծիքներ կան, որոնք չեն համապատասխաներ իմ մտածումիս: Իմ կարծիքս այն է՝ որ Հայաստանի մէջ ալ, Կոմիտասի երգերը հարազատ կերպով չեն ներկայացուիր:

Բ. ԿԱՆԱՉԱԱՆ

ՖՈՐՏԻ ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿԸ

ՄԱՐԴԸ՝ ՈՐ ԱՆԻՒՆԵՐ ՈՒՆԷՐ ԳԼԽՈՒՆ ՄԷՋ

Հարիւր տարի առաջ 1863 Յուլիս 30ին, ծնաւ տղայ մը, որ գլխուն մէջ անիւներ ունէր եւ հանճար մը, որ յեղափոխութիւն յառաջացուց աշխարհի քաղաքակիրթ երկիրներու կեանքին մէջ: Ծնողքը հողագործներ էին եւ կը կոչուէին Ուիլեըմ եւ Մերի Ֆորտ: Տղան կոչեցին Հէնրի:

Այս տարի, Ամերիկայի եւ այլ երկիրներու մէջ պիտի տօնուի հարիւրամեակը այդ մարդուն, որ հնարեց ինքնաշարժ, գործնական առաջին ինքնաշարժը, զարկ տուաւ զանգուածային արտադրութեան եւ հիմնեց՝ Ֆորտ համաշխարհային ընկերութիւնը, որ ներկայիս կը գրաւէ մօտաւորապէս հարիւր տասը հազար գործաւորներ: Հէնրի Ֆորտ մեռաւ 1947ին:

Ամերիկայի մէջ, ընկերութիւնը պիտի ձուց ժապաւէն մը, «Հէնրի Ֆորտի աշխարհը» խորագրով, անգլերէն եւ ուրիշ բազմաթիւ լեզուներով բացատրութիւնով (պատմումով): Այս ժապաւէնը առաջին անգամ ներկայացուեցաւ Յուլիսի ընթացքին:

Ինքնաշարժներու յառաջապահին կեանքէն կը պատրաստուին ուրիշ երկու ժապաւէններ ալ եւ Տիթրոյիթի մօտիկը գտնուող ծննդավայրին մէջ տեղի պիտի ունենան մասնաւոր արարողութիւններ: Հէնրի Ֆորտի մասին, այս տարի պիտի հրատարակուին շատ մը գիրքեր:

Ֆինլանտայի մէջ պետական ձայնասփիւռի կայանը յայտագիր մը կը պատրաստէ Հէնրի Ֆորտի կեանքի մասին: Նման յայտագրեր կը պատրաստեն Փորթուկալի եւ Հարաւային Ռոտեզիոյ ձայնասփիւռի կայանները, իսկ Անգլիոյ, Գերմանիոյ եւ Իտալիոյ պատկերասփիւռի կայանները զանազան մանրամասնութիւններ պիտի ներկայացնեն Ֆորտի կեանքէն:

Պրազիլի Սան Փաւլօ քաղաքին մէջ պիտի կանգնուի Հէնրի Ֆորտի անդրին, իսկ Արժանթինի մայրաքաղաք Պուէնոս Այրէսի եւ Փորթուկալի Ալամէյտա քաղաքին մէջ իր անունը պիտի տրուի փողոցներու: Արժանթին եւ Շիլի յիշատակի նամականիշներ պիտի հրատարակեն:

Քանատայի Ֆորտ ընկերութիւնը հինգ հազար տոլարնոց հինգ կրթաթոշակներ պիտի յատկացնէ հարիւրամեակի ուսումնասիրութեանց համար, քանատական հինգ համալսարաններու կողմէ մէկն տարի ներկայացուելիք ուսանողներու:

Այսուհանդերձ, շատ մը թղթակցներէ եւ նախագահներէ աւելի հանրածանօթ դարձած այս մարդը՝ ըմբոստ մըն էր, զոր շատ քիչեր հասկցան:

ՀԱՄԱՅՆԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԴԵՐԸ ՌՈՒՍԵՒԹՈՒՐՔ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆՑ ՄԷՋ

1919-1922

Խորհրդային կառավարութիւնը ոչ միայն տեղի տուաւ հայկական հարցին մէջ, այլ նաեւ Մուսթաֆա Քէմալի հետ համաձայնութեան եկաւ համայնավար քարոզչութեան շուրջ: Այս վերջինը համայնավար կուսակցութեան հանդէպ ներողամիտ վերաբերում ցոյց տուած էր 1920 տարուան ամբողջ տեւողութեան: Թէեւ գործունէութեան լայն ազատութիւն շնորհած չէր, հակառակ խորհրդային առժամեայ կառավարութեան ներկայացուցիչ Ուփմալ-Անկարսքիի պահանջին, սակայն լռելեայն կը հանդուրժէր «հինգերորդ զօրասիւն»ի սահմաններուն մէջ շարժում մը, տրուած ըլլալով որ այդքանը վտանգաւոր չէր կրնար դառնալ՝ բոլշեւիկեան գաղափարներու դէմ թուրք գիւղացիին անտարբերութեան պատճառով: Ձերբէկ ետհէմի դաւաճանութենէն վերջ է միայն, (երբ Թուրքիոյ համայնավար կուսակցութիւնը վարկաբեկուեցաւ), որ Մուսթաֆա Քէմալ ստիպուեցաւ խիստ միջոցառումներու դիմել: Իր ձեռք առած միջոցներուն պատճառաբանութիւնը տուաւ 1921 Յունուար 8ի իր ճառին մէջ՝ հետեւեալ բառերով (1).—

«Այս դաւաճանները իրենց համայնավար գոյնով, ձեւով եւ տարազով կը համարձակին խաբել Մոսկուայի մեր բարեկամները, միեւնոյն ատեն ձեւացնելով որ հրաբխային անմիջական յեղափոխութիւն մը կարելի է մեր երկրին մէջ: Բայց եւ այնպէս բոլշեւիկները հասկցան թէ այդ մարդիկը պարզապէս արհեստամոլներ են զորս պէտք չէ լրջօրէն նկատի առնել»:

Քիչ մը վերջ, տեսակցութեան մը ընթացքին, Մուսթաֆա Քէմալ սապէս պատասխանած է՝ Համայնավարութիւնը եւ Թուրքեւռուս բարեկամութիւնը չօշափող հարցումի մը (2).—

«Համայնավարութիւնը կապ ունի ընկերային հարցին հետ: Մեր երկրին ընկերային պայմանները, իմ կարծիքով, նպաստաւոր չեն մեր մէջ բոլշեւիզմի կիրարկումին համար: Վերջերս մեր երկրին մէջ կազմակերպուած համայնավար կուսակցութիւններն իսկ ըմբռնեցին այս ճշմարտութիւնը իրենց փորձով, որ համոզեց զիրենք թէ պէտք է վերջ տան իրենց գործունէութեան: Ռուս մտաւորականներն իրենք ալ ճանչցան այս ճշմարտութիւնը, որուն մասին մենք կասկած չունինք: Ասոր համար է, որ Ռուսերու հետ մեր ունեցած յարաբերութիւններն ու մեր բարեկամութիւնը հաստատուած են միայն՝ երկու անկախ պետութեանց միջեւ ըմնակցութեան մը հիման վրայ»:

Այսպէս, 1921 Մարտ 16ի բարեկամութեան ու եղբայրակցութեան դաշինքին 4րդ յօդուածը կը պայմանագրէր (3).—

«Ստորագրող երկու կողմերը, հաստատելով Արեւելքի ժողովուրդներու ազգային ու ազատագրական շարժումներուն եւ ընկերային նոր կարգի մը հաստատման համար Ռուսիոյ աշխատաւորներուն պայքարին միջեւ չարունակութեան գոյութիւնը, բացարձակ կերպով կը հաստատեն այս ժողովուրդներուն ազատութեան եւ անկախութեան իրաւունքը, ինչպէս եւ իրենց իրաւունքը, իրենք զիրենք կառավարելու իրենց փափաքած կառավարական ձեւով»:

Այս դաշինքը Մուսթաֆա Քէմալի ապահովեց միջազգային իրաւական երաշխաւորութիւն մը, Թուրքիոյ մէջ համայնավար քարոզչութիւնը մէջտեղէն վերցնելու համար: Անգարայի անկախութեան դատարանը 1921 Մայիս 9ին խիստ վճիռ մը տուաւ Թոքատի երեսփոխան Նազըմ պէյի, տեղեկատուութեան եւ մամուլի գրասենեակի պաշտօնեայ Զինէ-թուլլահ Նեվսիրվանիի եւ ուրիշ եօթը անձերու դէմ, այն ամբաստանութեամբ թէ դաւաճան են պետութեան ապահովութեան դէմ: Բայց եւ այնպէս, 1921 Սեպտ. 29ի օրէնքով եւ խորհրդային կառավարութեան կատարած դիմումներուն համաձայն՝ Ներման արժանացան, Սաքարիայի վրայ թրքական բանակին տարած յաղթանակէն ետք: 1921 տարուան վերջերուն, զօրավար Ֆրունզէի Անգարա կատարած այցելութեամբ սկսած, եւ բանակցաց Արալովի առաքելութեան ատեն իրենց դաղաթնակէտին հասած փափագուց սիրալիր յարաբերութեանց շրջանին, Թուրք համայնավար կուսակցութիւնը դարձեալ ազատ ձգուեցաւ, բայց ոչ պաշտօնապէս:

1922ի Սեպտեմբերի կէսերուն Անգարայի այսպէս կոչուած «համագումարի» գերմանացի անդամ մը կը հաստատէ սակայն, թէ «Այս երկրին մէջ, պրոլետարական իրական յեղափոխութեան ժամը դեռ շա՛տ հեռու է (4):

(Շար. - 6)

1) Աթաթիւրք'ին Սէօյլէվ վէ Տէմէչլէրի, հատոր Ա., էջ 139:

2) Անդ, հ. Գ., էջ 21:

3) Ծշգրիտ բնագրին համար տեսնել Տիւսթիւր, Իւչիւնճիւ Թէրթիպ, հատոր Բ., էջ 102:

4) Լիոնիտ եւ Ա. Ֆրիտրիխ, Անգարա, Պերլին, 1923, էջ 56:

Գեաւոր Հէնրի Ֆորտ հակառակ հողագործի զաւակ ըլլալուն, չէր ուզեր հողը հերկելու, ցանելու եւ կով կթելու գործին: Միայն մեքենաներով կը հետաքրքրուէր եւ անիւները կը հմայէին զինք:

Դպրոցին մէջ, միւս տղաքը կը հետաքրքրուէին իրենց գիրքերէն, որպէսզի հետեւէին իրենց, անիւներ եւ պտուտակներ կ՚ունէին իրեն, ... ած տուեն: Երբեք չկրցաւ անխախտ ... եւ, սահուն կարդալ եւ գրաւոր արտայայտուիլ:

Բայց, մէկ սկիզբէն անմրցելի էր մեքենական տրամաբանութեան մէջ: Մեքենայի մը վրայ աչք մը նետելով՝ կրնար հասկնալ անոր բոլոր մասերուն իրարու հետ ունեցած յարաբերութիւնը:

Դրացիները կ՚ըսէին թէ «գլխուն մէջ անիւներ ունի»:

Իսկ հայրը կ՚ըսէր. «Զեմ գիտեր թէ ինչ պիտի ըլլայ այս տղան»:

Հէնրի 16 տարեկանին հեռացաւ իր գիւղաւանէն եւ իբրեւ աշկերտ մտաւ աշխատանոց մը: Խօսքն ընկերութեան մեքենագէտներու պետ եղաւ եւ յետոյ ամէն ինչ լքեց՝ անկարելի երազի մը համար:

Կ՚ուզէր շինել պարզ, աժան եւ չափաւոր եկամուտով ամէն ընտանիքի մատչելի ինքնաշարժ մը:

Գիշեր-ցերեկ աշխատեցաւ եւ 1893ին, իր առաջին մեքենան գործեց՝ Տիթրոյթի իր տան խոհանոցին մէջ, տաշտի մը մէջ:

Մինչեւ 1896ի գարունը շինեց իր առաջին ինքնաշարժը: Երեք տարի ետք, կազմակերպեց Տիթրոյթի Ինքնաշարժներու Ընկերութիւնը եւ մեքենագէտներու պետ նշանակուեցաւ: Բայց Ընկերութիւնը սնանկացաւ:

Ֆորտ ուրիշ ինքնաշարժներ ալ շինեց, մրցումներու մէջ յաղթեց եւ աջակիցներ գտաւ: 1903 Յունիսին, ինը աջակիցներու հետ 28 հազար տոլարով՝ հիմնեց Ֆորտ Ընկերութիւնը:

Ամիս մը ետք, Ընկերութիւնը ծախեց իր առաջին ինքնաշարժը, երբ դրամատան մօտ պահ դրուած դրամը հազիւ 223 տոլար էր:

Այդ առաջին տարիներուն, Ֆորտ ծախսոտ դատական ճակատամարտ մը մղեց Ճորճ Շելտընի դէմ, որ գիւտարարի վկայական կը պահանջէր ներքին այրումի մեքենայով բոլոր կառքերուն համար: Ֆորտ դատը շահեցաւ: 1908 Հոկտեմբերին, հրապարակ հանեց ինքնաշարժը, որ աշխարհը բարձրացուց անիւներու վրայ – «Թ» մոտէլը, որ «Թին Լիզի» անունով ծանօթ մնաց:

Բայց, այս «Թին Լիզի»ները այնպիսի յաջողութիւն մը գտան, որ Ընկերութիւնը բաւարար չափով արտադրելու չէր հասներ: Ֆորտի լուծումը՝ զանգուածային արտադրութեան սկզբնաւորութիւնն էր:

Սկիզբները՝ «Թ» տիպի ինքնաշարժ մը կազմելու համար 12 ժամ եւ 28 վայրկեան պէտք էր: Ետքէն՝ այդ ժամանակը կրճատուեցաւ եւ եղաւ 5 ժամ 50 վայրկեան եւ աւելի վերջ՝ 93 վայրկեան:

Ֆորտի առարկայական նպատակն էր՝ վայրկեանը մէկ ինքնաշարժ հանել, բայց ի վերջոյ «Թ» տիպի ինքնաշարժները կը կազմուէին տասը երկվայրկեանը մէկ հատ:

1920ին, Ֆորտ եւ իր զաւակը հարիւր միլիոն տոլարէ աւելի վճարելով՝ Ընկերութեան միակ տէրերը դարձան: Խուչէլ՝ յաջորդեց հօրը՝ Ընկերութեան նախագահի պաշտօնին մէջ: Այն ատեն Միացեալ Նահանգներու փողոցներուն մէջ կը շրջէին հինգ միլիոն «Թ» տիպի ինքնաշարժներ: Յետոյ, 10 միլիոն «Թին Լիզի» եւս շինուեցաւ եւ անկէ ետք, 1927ին, ան իր տեղը տուաւ Ա. տիպին (մոտէլ):

Քաղեց Վէն

ՁԱՅՆԵՐ ԳԱՒԱՌԷՆ

ՀԵՐՈՍՆԵՐՈՒ ՕՐԸ ՆԻՍԻ ՄԷՋ

———o———

ՆԻՍ (Յատուկ) — Նիսի փոքրաթիւ գաղութն ալ, ինչպէս ամէն տարի, այս տարի եւս, ոգեկոչեց յիշատակը Խանասորայ արշաւանքին, ասկէ 66 տարի առաջ, իրենց սուրբ արիւնը տուող հերոսներուն:

Ամբողջ օրը կոկիկ բազմութիւն մը լեցուցած էր ծառախիտ ու զով անտառը, որուն կողքին Լու գետը հեզիկ մը ոլորապտոյտ իր գնացքը կը շարունակէ դէպի հեռու ծովը: Հայրենակիցներ կային Լիոնէն, Վալանսէն, Փարիզէն, Ալֆորվիլէն, եւայլն: Հաճելի մթնոլորտի մը մէջ վաղեմի ծանօթներ առիթը ունեցան զիրար ողջագուրելու: Ծոխ սեղաններու շուրջ հաւաքուած, չէն ճաշէ մը վերջ ժամը 15ին հանդէսին պաշտօնական մասը սկսաւ «Կարկուտ տեղաց Խանասորայ դաշտումը» խմբերգով:

Օրուան նախագահն էր գաղութին սիրուած ու յարգուած ընկերը Գարեգին Գէորգեան որ պատկերալից կերպով նկարագրութիւնը ըրաւ Խանասորայ արշաւանքին թէ ի՛նչպէս ու ինչո՛ւ տեղի ունեցաւ այդ արշաւանքը, խօսեցաւ անոր յաջող ելքին եւ ազգած սարսափին մասին քիւրտ Մազրիկ ցեղին վրայ: Այդ օրուընէ սկսեալ հայ ֆետային, քաջերու քաջը դարձաւ Հայը խոշտանգող վայրագ ցեղերու աչքին:

Գեղարուեստական բաժինը, թէպէտ կարճ, բայց խնամեալ էր:

Տիկին Մարգրիտ Կերկայեան յուզումով ու զգացումով արտասանեց Սիամանթոյի «Պարը»:

Օր. Նիլտա Գասպարեան, «Նիսի Սոխակը», որ միշտ ներկայ է մեր հանդէսներուն, եւ իր թանկագին աջակցութիւնը կը բերէ անուշ ձայնով, այս անգամ ալ երգեց մեզ խանդավառելով «Աշուղ լինեմ»ը, «Հայաստանի կարմիր գինին», «Առաւօտուն արշալոյսը», եւ ջերմապէս ծափահարուեցաւ:

Արտասանեցին Օրիորդներ Շաքէ Գաբրիէլեան Թումանեանէն եւ ընկ. Ջօտեան Ահարոնեանի «Յարգանք քեզ»ը:

Հայրենակիցները ոգեւորուած մէջ ընդմէջ երգեցին խմբերգ, ազգային յեղափոխական երգեր:

Կարգը եկած էր օրուան բանախօսին, ընկ. Յարութիւն Նիկողոսեան (Մարսէյլէն): Ընկերը պատմական ու ժամանակագրական դէպքերու պատկերով մը պարզեց հետեւեալը, հոս ամփոփուած հակիրճ կերպով.

— 1375ին, երբ վերջին թագաւորը Լեւոն Զ. գերի տարուեցաւ Եգիպտոս, հայ ժողովուրդը այդ թուականէն սկսեալ գերի ապրեցաւ թրքական լուծին տակ, 543 տարի մինչեւ 1918: Բռնապետական վարչակարգին տակ տանջուած ժողովուրդ մը, հինգուկէս դարեր շարունակ, հրաշքով վերապրած, ու իր գոյութիւնը հրաշքով պահած, այլեւս հատած իր համբերութիւնը, զինուեցաւ: Իր արդար քրտինքին վաստակը իրը չէր, իր ընտանեկան սրբութիւններուն անկարող էր պաշտպանը ըլլալու: Իբր մարդ, ոչ մէկ մարդկային իրաւունքի, կեանքի ու ինչքի տէրը չէր կրնար ըլլալ: Մեծ Հայր՝ Խրիմեան Հայրիկ, իր շերեփի քարոզով պատգամեց իր ժողովուրդին, որ զէնքով կար միայն փրկութիւն: Հայը սկսաւ լրջօրէն մտածել իր վիճակին մասին: Մասնակի ձեռնարկներ ապարդիւն էին: Կազմակերպուած ուժն էր որ կշիռ պիտի ունենար: Քաղաքական կուսակցութիւններ կազմուեցան: Եւ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան վիճակեցաւ մարդել, զինել 250 հոգինոց ընտրեալ Հայորդիներէ, մտաւորական, կրօնաւոր, բժիշկ, ուսանողներ, ֆետայի Հայորդիներ, եւ ղրկել այդ ընտրեալ խումբը քիւրտ Մազրիկ ցեղին վրայ գայն բնաջնջելով անոր տալու լաւ դաս մը, իր արդար պատիժը: Ահա այսօր այդ բուռ մը քաջերու արեան գնով տարուած յաղթանակին յիշատակն է որ կը տօնենք: 66 տարի առաջ տարուած յաղթանակ մը որ Հայուն ճակտէն սրբեց հլու հնազանդ ստրուկի դրոշմուած արատը: Մեր անմահ մարտիկները չխնայեցին իրենց սուրբ արիւնը հայրենիքի ազատագրութեան համար: Մեր բիւրաւոր ծանօթ թէ անծանօթ հերոսներուն ճիգերը ապարդիւն չանցան: Անոնց արեան գինով է որ հինգ դարերէ ի վեր շղթայուած Հայը ունեցաւ իր անկախութիւնը 1918 Մայիս 28ին: Փառք իրենց յիշատակին:

Նախագահը խօսք տուաւ նաեւ փարիզաբնակ Պ. Հայկ Սարգիսեանին որ օրուան տօնին պատշաճ քանի մը խօսք ըրաւ փառաբանելով մեր հերոսներու յիշատակը: Նոյնպէս քանի մը խօսք ըրաւ ընկ. Գեղամ Խոսրովեան իր անցեալ տարուան Հայաստան այցելութեան առնչութեամբ եւ զովքը հիւսեց հայ արուեստագէտներու ժողովուրդին, որ լուռ մնջիկ, իր ձգտումներուն խորթ վարչակարգի մը տակ, կ՚աշխատի իր հայրենիքի վերելքին:

Հանդէսին վերջաւորութեան ափսէ մը թերթանուշ, նուէր Տիկին Գոհար Ալեքսանեանէ, աճուրդի դրուելով, կոկիկ գումար մը գոյացաւ: Շահողն էր փոքրիկն Պաղտասարեան (Ալֆորվիլէն):

Հանդէսը վերջ գտաւ ուշ ատեն, բայց մինչեւ տուն օթօքարին մէջ դեռ ազգային յեղափոխական երգերը շարունակուեցան:

ԹՂԹԱԿԻՑ

ՀԱՅ ԿԵԱՆՔԸ ՓՈՆ-ՏԸ-ՇԵՐԻԻ ՄԷՋ

———o———

Շրջանի Հայ Ազգ. Միութիւնը Օգոստ. 4ին կազմակերպած էր դաշտահանդէս մը, ի նպաստ հայկ. դպրոցին եւ եկեղեցին, Թրիփիէի գեղեցիկ եւ ծառերով շրջապատուած դաշտին վրայ:

Ժամանակէն առաջ խուռներամ բազմութիւն մը եկած էր, մեր այս ձեռնարկը քաջալերելու համար:

Պ. Վազգէն Յովսէփեանի բացման խօսքէն ետքը, կերուխումը սկսաւ: Առատ ուտելիքներ, խորոված, եւայլն:

Ծոխ գեղարուեստական բաժին մը խնամքով պատրաստուած, երգ, արտասանութիւն եւ հայկական պարեր:

Երգեցին Փարիզէն Պարոններ Միրիճան Շիրվանեան եւ ուրիշներ: Փոքրիկն Ժան-Փիէր Ազիկեան ներկաներու ծափահարութեան արժանացաւ իր արտասանութիւններով: Պարոններ Կղեմէս Գասապեան եւ Մ. Շիրվանեան ուտով եւ ջութակով գեղեցիկ հայկական երգեր եւ պարի եղանակներ նուագեցին: Եղան նոյնպէս հայկական եւ կովկասեան պարեր: Տպուած հաւ մը աճուրդի դրուեցաւ կնքահայրութեամբ Պ. Յ. Տէր-Մազարեանի, որ շահեցաւ Լիոնէն Պ. Մովսէս: Աճուրդէն գոյացաւ կոկիկ հասոյթ մը: Ազգ. Միութեան նախագահ Պ. Աշոտ Ազիկեան շատ գեղեցիկ ճառ մը խօսեցաւ, կոչ ըրաւ ներկաներուն համախմբուիլ Ազգ. Միութեան շուրջ, ուժ տալ անոր բոլոր ազգօգուտ ձեռնարկներուն՝ պահպանելու համար մեր եկեղեցին եւ դպրոցը:

Ընկերոջ ճառը ծափահարութիւններու արժանացաւ:

Հանդէսը տեւեց մինչեւ ուշ ատեն: Ժողովուրդը մեկնեցաւ գոհ եւ ուրախ:

Ազգային Միութիւնը իր խորին շնորհակալութիւնը կը յայտնէ բոլոր անոնց, որոնք իրենց բարոյական թէ նիւթական աջակցութիւնը բերին, մասնաւորաբար Տիկիններ Ազատի Մուրատեանի, Փերուզ Յովսէփեանի, Անթառամ Ազիկեանի: Նոյնպէս Տիկին Սթավրուլա Պօյաճեանի, որ յոյն ըլլալով հանդերձ, ամէն ջանք թափեց հանդէսին յաջողութեան համար:

ԱՐՏԱՇԷՍ ՄԵԼՔՈՆԵԱՆ

«ՅԱՌԱՋ» ԹԵՐԹՕՆԸ (208)

ԵՐԼՏՐՂԻ ՊՈՄՊԱՆ

●●●

ՀԱԶԱՐ ԻՆԸ ՀԱՐԻՒՐ ԶՕՐՍ

———o———

Առիկա դիւանագիտական խաղ մըն էր, ուրիշ շատ մը խաղերու պէս, որոնք սովորական էին իրեն: Օսմանցիներուն փադիշահը կ՚ուզէր այս ձեւով, նոր ապացոյց մըն ալ տալ իր անսահման գըթութեան (´) եւ իր բոլոր հպատակներուն հանդէպ իր անուցած հայրական զգացումներուն (´):

Կեղծիքի ու խարէութեան անմրցելի եւ անզուգական հերոս մը, ինչպէս ուրիշ առիթներու մէջ, այս անգամ ալ կը խորհէր Եւրոպայի աչքին փոշի ցանել, ցուցադրելով իր համբաւեալ վեհանձնութիւնը (´):

Աբտիւլ Համիտ լաւ գիտէր թէ կայսերական ներումին արձագանգը շուտով պիտի հասնէր քաղաքակրթեալ աշխարհին կեդրոնները, եւ մամուլը, միահամուռ խանդավառութեամբ մը, պիտի դրուատէր զինքը, տիպար վեհապետ, Արեւելքի ամենողորմած Խալիֆան, միւս կողմէ, գիտէր նաեւ թէ Պելժիացի դեսպանը շուտով պիտի դիմէր Երլտըզ, ժորժի համար մասնաւոր ներում մը խնդրելու:

Մինչ Դահիճը, Որջին մէջ, կարմիր երազներով կ՚օրօրուէր, անդին, Արդարութիւնը, իր վրէժին դաշոյնը կը սրէր մռնչելով.—

«Անպատի՛ժ Մարդասպան, օրերդ համրուած են, ահա՛ կուգամ, հարիւր հազարներու արիւնին ձա՛յնը պատռեց Երկինքը...»:

Եւ ԵՐԼՏՐՂԻ ՊՈՄՊԱՆ, ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ պայթած, պիտի մնայ պատմութեան մէջ, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Վրէժի Կոթողը, Ի. դարու սեմին վրայ...:

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՀԱՄԱՐ

ԺԲ.

Յեղափոխութիւնը կը շարունակէր տակաւին մղել Ազատութեան համար, Բռնապետութեան դէմ անհաւասար կռիւը, թէ՛ Մայր Երկրին ծոցը, եւ թէ Արտասահմանի կեդրոնները:

Հայկական Յեղափոխութիւնը, շնորհիւ Աբտիւլ Համիտի նոր հալածանքներուն, տարուէ տարի կ՚ուռճանար, կը զարգանար ու կը վարակէր Օսմանեան Կայսրութեան միւս բաղկացուցիչ տարրերը:

Դժգոհութեան եւ ընդվզումի նորանոր ցնցումներ զգալի կ՚ըլլային եւ կը սկսէին սարսել Երլտըզի աշխարհին հիմերը: Իսլամ ժողովուրդը, երեսուն երկար տարիներ, անապատի ուղտի մը պէս, համբերութեամբ տանելէ յետոյ Բռնութեան լուծը, ինք ալ կ՚արթննար ու իր տարիներու մթերուած տրտունջները կը պոռթկար անարժան Խալիֆայի երեսին:

Կայսրութեան ամէն կողմերը նոր շարժումներ ու նոր ապստամբութիւններ...:

Աբտիւլ Համիտի մահափորձէն ի վեր անցած էին սուգի, աքսորի, հալածանքի, անանուն ոճիրներու եւ բարբարոսութեան երեք զանգաղ տարիներ, ու Բռնաւորը դեռ կը սոնքար անպատիժ, Խալիֆաներու եւ Փատիշահներու գահին վրայ:

1908 Յուլիսի 8ին էր, Մահափորձին երրորդ տարելիցը:

Երլտըզի մէջ, առտուընէ ի վեր, արտակարգ յուզում մը կը տիրէր, Հինքեարը սենեակէ սենեակ պտտելով, ամբողջ գիշերը զարհուրելի մղձաւանջով մը չարչարուած էր:

Ի՞նչ պատահած էր արդեօք:

Այդ գիշերը, մահափորձին տարեդարձի գիշերը, Աբտիւլ Համիտի աչքերէն քունը փախած էր. իր կայսերական անկողնին մէջ տապլտկելով, եւ հարէմի աշխարհը տակնուվրայ ընելով, մինչեւ առտու հսկած էր: Սեւ նախազգացումէ մը կը տանջուէր ան:

Շուտով պալատը կանչուեցաւ Քիւչիւք Սայիտ փաշա, բան մը, որ պալատականներուն կ՚ազդարարէր թէ կայսրութեան մէջ նոր փոթորիկ մը պիտի պայթէր եւ կամ արդէն պայթած էր:

Զէին խաբուած անոնք, Երլտըզի կամարիլլան, հօտառու քերծէներ, որոնք, Յիսուսի ժամանակակից Փարիսեցինէրուն պէս, մթնոլորտային բներեւոյթներու մասնագէտներ էին, գիտէին գուշակել թէ ի՛նչ պիտի բերէր քաղաքական հորիզոնին վրայ երեւցած ամպի կտորիկ մը, կամ չորս գլխաւոր կողմերուն մէկէն փչող հովիկը:

Իրարանցումը մեծ էր, ինչպէս ըսինք, տարօրինակ, խորհրդաւոր. զարհուրելի բաներ կը դառնային հոն, Երլտըզի որջին մէջ, ուր կամարիլլայի երրորդութիւնը, Գարա Թահսին, Իզզէթ Ալպո ու Նէճիպ Մէլհամէ գլուխ գլխի, տաք բանավէճի մը բռնուած, կոկորդնին կը պատռէին.

ՍՄԲԱՏ ԲԻՒՐԱՏ

(Շար.)

ՍԱՄՈՒԷԼ ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ՆՈՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Իրենց զաւակները արձանագրել փափաքող ծնողքները պէտք է փութան դիմել տեսչութեան հասցէին :

COLLÈGE ARMÉNIEN SAMUEL MOORAT
26, Rue Troyon, SEVRES (S. et O.)
Tél. : OBS. 18-28

Եւրոպայի մէջ, հայ մանչերու համար հիմնուած, ֆրանսական եւ հայկական ուսումնական կատարեալ ծրագիրներով օժտուած մեծագոյն եւ ծաղկեալ ուսումնարանն է Սեւրի Սամուէլ Մուրատեան վարժարանը, ուրուն սեմէն ներս հայ մանուկին հոգին, միտքը եւ մարմինը կը մեծնայ, կը ծաղկի եւ կ'ընդլայնի բաղձալի համեմատութիւններով :

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Հ. Բ. Ը. Միութեան Տիկնանց յանձնախումբը կը խնդրէ կազմակերպութիւններէն նկատի ունենալ հետեւեալ թուականները :—

ՀՈԿՏԵՄԲԵՐ 1, *Երեքշաբթի երեկոյ Տիկնանց յանձնախումբի կազմութեան Գ. տարեդարձին առթիւ գեղարուեստական երեկոյթ :*

ՀՈԿՏԵՄԲԵՐ 19, *ցուցահանդէս հայ արուեստագէտներու նկարիչ, արձանագործ եւ փորագրիչներու գործերուն :*
Հայկական Թանգարանը, 52 Ավընիւ Ֆոշ, (*Փարիզ* 16) :

ԴԵԿՏԵՄԲԵՐ 7, 8, 9, 10, «*Բարենպատակ վաճառք*» :
Ցառաջիկային պիտի տրուին մանրամասնութիւններ :

×

ԼԻՈՆ.— Ֆր. Կապ. Խաչի Օրը կը տօնուի մեծ պատրաստութեամբ, 27 Հոկտ. Մոլիէրի շքեղ սրահին մէջ :

×

Փարիզահայ Տիկնանց Միութեան յիսնամեայ յոբելեանը կը տօնուի Հոկտեմբեր 13ին, Սալ տը լա Շիմի :

ԴՊՐՈՑԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Դպրոցասէր Տիկնանց վարժարանին 1963 – 1964 *տարեշրջանի արձանագրութիւնները սկսած են : Անոնք որոնք կը փափաքին ղրկել իրենց զաւակները պէտք է այժմէն իսկ դիմում կատարեն հաստատութեան տնօրէնութեան :*

Ա.— ՖՐԱՆՍԱԿԱՆԸ, որ տառացի կերպով կը հետեւի պետական լիսէներու *արդիական բաժնի պաշտօնական ծրագրին — անգլերէն եւ սպաներէն լեզուներով — :*

Բ.— ՀԱՅԿԱԿԱՆԸ, որ կ'օժտէ սանուհիները հայագիտական ծանօթութիւններով, հայ լեզուի, գրականութեան, հայ կրօնքի եւ պատմութեան, Հայաստանի աշխարհագրութեան մարզերուն մէջ :

Աշակերտուհիներ կ'ընդունուին ութ տարեկանէն սկսեալ: Մանրամասնութեանց համար դիմել հաստատութեան տնօրէնութեան :

1, Bd. du Nord, LE RAINCY (S. et O.)
Tél : 927-01-72

Դպրոցասէրի ուսման ծրագիրը կ'ընդգրկէ երկու ուրոյն բաժիններ :

ԿԵԱՆՔԻ ՈՒՂԻՆԵՐՈՎ

Գ. Հատոր

Ցուտով լոյս կը տեսնէ Ս. Վրացեանի ԿԵԱՆՔԻ ՈՒՂԻՆԵՐՈՎ (*Գ. Հատորը*), *շուրջ* 300 *էջ, պատկերազարդ եւ լաթակազմ :*

Երրորդ հատորը կը բովանդակէ Ս. Վրացեանի յուշերը կամաւորական շարժման, ինչպէս նաեւ դէմքեր, դէպքեր եւ տպաւորութիւններ՝ մօտիկ անցեալէն :

Շ. ՄԻՍԱՔԵԱՆ

Օրեր եւ Ժամեր

Լոյս Տեսաւ



Մատենաշար — ՅԱՌԱՋ — Կեդրոնավայր
ԳԻՆ
Ֆրանսա՝ 15 Ֆր.
— Առաւել առաքումի ծախքը —

«ՅԱՌԱՋ»

ՀԱՅ ԲՈՅԺ

ԺՈՂ. ԱՄՍԱԹԵՐԹ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ

խմբագիր՝ Շ. ՆԱՐԴՈՒՆԻ

Խմբագրին երկար բացակայութեան պատճառաւ, լոյս տեսած չեն ՀԱՅ – ԲՈՅԺի 1962 *եւ* 1963 *տարիներու թիւերը :*

Խմբագիրը, որ նոր վերադարձաւ Ամերիկայէն, գործի ձեռնարկած է արդէն : Ծրագրած է հրատարակել երկու բացառիկ թիւեր, իւրաքանչիւրը 150 *էջ : Առաջինը պիտի կրէ* 1962 *թուականը, երկրորդը՝* 1963 *թուականը: Այս երկուքը մէկ տարի հաշուելով՝ անոնք որ վճարած են* 1962, *վճարած կ'ըլլան նաեւ* 1963 *տարին :*

Այս ձեւով, խմբագիրը կը խորհի ՀԱՅ-ԲՈՅԺի հրատարակութիւնը ամբողջացնել եւ կանոնաւորել մինչեւ յառաջիկայ տարի, եւ 1964 *տարուան թիւերը լոյս ընծայել ամսէ ամիս՝ Յունուարէն սկսեալ :*

Ամերիկայի նոր բաժանորդները եւս, որոնք վճարած են այս տարուան համար (1963), *պիտի ստանան ՀԱՅ-ԲՈՅԺի* 1962 *եւ* 1963 *թիւերը :*

Այն բաժանորդները, որոնք յետնեալ պարտք ունին, թող բարի ըլլան իրենց վճարումը հասցնել մինչեւ տարեվերջ : Հին պարտքերուն հետ՝ ներկայ տարին եւս վճարողներն են միայն, որ պիտի ստանան ՀԱՅ – ԲՈՅԺի բացառիկները, խմբագրուած բժշկական, գրական, պատմական, շատ հետաքրքրական եւ ճոխ բովանդակութեամբ,— արդէն տպագրութեան յանձնուած :

Այս առթիւ շնորհակալութիւն այն հաւատարիմ բաժանորդներուն, որոնք ՀԱՅ-ԲՈՅԺի հրատարակութիւնը ընդհատուած ըլլալով հանդերձ՝ խմբագրին բացակայութեան պատճառաւ, վճարումները կատարած են օրը օրին ի վկայութիւն իրենց բարեկամութեան եւ վստահութեան :

Կը խնդրուի Հայրենիք, Ասպարէզ, Արմենիա, Ազատ Օր, Ցուսաբեր, Ազդակ, Այգ, Ալիք *թերթերու խմբագրութիւններէն, ինչպէս և* Սիոն, Հասկ, Հայ Կեդրոն, Կիլիկիա, Հայաստանեայց եկեղեցի *պարբերականներէն, որ հրատարակեն այս յայտարարութիւնը գէթ* 2 – 3 *անգամ :*

ՀԱՅ ԸՆԾԱՅԱՐԱՆ

Կը փնտռուի հայ տիկին մը Հաստատութեանս մէջ իբր խոհարարի օգնական : Մանրամասն տեղեկութիւններու համար դիմել գրաւոր կամ անձամբ՝

École Apostolique Arménienne
3, Av. de Grandchmp
LE PECQ (S. et O.) Tél. 963-01-72

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

*Մարսէյլի մէջ Դաշնակցութեան Օրը կը տօնուի Հոկտեմբերի 5ին Սալոն Ալ*համպրա :

ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ

Կապոյտ Խաչի Վիէնի մասնաճիւղի տարեկան դաշտահանդէսը տեղի կ'ունենայ Սեպտեմբեր 1ին, առաւօտէն մինչեւ երեկոյ «Ի–էս–Ա.»ի մարզադաշտին վրայ (Թանըրիին քով) :

Գեղարուեստական ճոխ բաժին : Բանախօսութիւն, երգ, արտասանութիւն եւ հայկական պարեր :

Ճոխ պիւֆէ. աղանդերներ եւ շամփուրով խորոված :

Սիրով կը հրաւիրուի գաղութի հայութիւնը :

IMPRIMERIE SPECIALE
DU JOURNAL « HARATCH »
32, Rue de Trévise, PARIS (9e)

ՀՐԱՆՏ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

51, Rue Monsieur-le-Prince, PARIS - 6e — Chèque Postal : 1278-35

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՇԻՐՎԱՆԶԱԴԷ, Երկերի ժողովածու, 10 *հատոր լաթակազմ*	70 Ֆր.
ՍՏԵՓԱՆ ԶՈՐԵԱՆ, Երկերի ժողովածու, 7 *հատոր, լաթակազմ*	56 Ֆր.
ՍՏԵՓԱՆ ԶՈՐԵԱՆ, Պապ թագաւոր, լաթակազմ	10 Ֆր.
ՍՏԵՓԱՆ ԶՈՐԵԱՆ, Հայոց բերդը, *լաթակազմ*	8 Ֆր.
ՎԱՀԱՆ ՏԷՐԵԱՆ, Երկերի ժողովածու, 2 *հատոր լաթակազմ*	14 Ֆր.
ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՒԻԹ, *մեծադիր, գունաւոր նկարներով, լաթակազմ*	10 Ֆր.
Վ. ԱՆԱՆԵԱՆ, Հայաստանի կենդանական աշխարհը, Բ.	8 Ֆր.
ԱՐՍԷՆ ՏԷՐՏԷՐԵԱՆ, Երկեր (*Արուլեան Պռօշեան, Պարոնեան*)	17 Ֆր.
ՄՈՒՐԱՑԱՆ, Պատմուածքներ, գունաւոր *նկարներով*	5 Ֆր.
ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑԻ մասին յիշողութիւններ. *լաթակազմ*	7·50 Ֆր.
ՄԻՔ. ՇԱԹԻՐԵԱՆ. Գարունը նորից եկաւ. 296 *էջ.*	5 Ֆր.
ԱԲԳԱՐԵԱՆ. Մատենադարան(*անգլ.*) 18 *գունաւոր մանրանկարներ*	3 Ֆր.
ՀԵՆՐԻԿ ԹՈՒՄԱՆԵԱՆ. Երգի ծնունդը. բանաստեղծութիւններ	3·85 Ֆր.
Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ. Տաղեր, 200 էջ. *լաթակազմ*	3·50 Ֆր.
ՍՈՎԵՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ. Ա. 800 *էջ. լթկզմ.*	16 Ֆր.
ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ, Անլռելի զանգակատուն, *Պէյրութ*, 1963	10 Ֆր.

Առաքման ծախքը գնողին վրայ

ԳՐԱՏՈՒՆՍ ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻՆ Է
ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՁԱՅՆԱԳՐԵԱԼ ԲՈԼՈՐ ԵՐԿԵՐՈՒՆ
ՃՈԽ ՄԹԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԵՒ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆՑ

ԼՈՅՍԸ ԳՈՅՆ Է.... ԳՈՅՆԸ ԼՈՅՍ Է
ՁԵՐ ՏԱՆԸ ԼՈՅՍ ՏՈՒԷ՛Ք.... ԹՈՄԼԱՔԻ ԳՈՅՆ ՏՈՒԷ՛Ք

Ձեր բնակարանը կը լուսաւորուի
Եթէ ներսը եւ դուրսը

ՎԵՐԱՆՈՐՈԳԷՔ - ԶԱՐԴԱՐԷՔ - ՆԵՐԿԷՔ

ԹՈՄԼԱՔ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐՈՎ

PEINTURES THOMLAC

16 bis, Bd. Sébastopol, Paris 4e

Tél. ARC 26-61 – Métro : Halles et Chatelet

136, RUE DES BOURGUIGNONS — ASNIERES - BOIS COLOMBES (Seine)
Tél ; GRE. 09-47

11, BD. DE LA REPUBLIQUE — LA GARENNE (Seine)
Tél. : STA. 19-06

ԱՆՄՐՑԵԼԻ ԳԻՆԵՐՈՎ

Ամէնէն արդիական, նուրբ եւ ընտիր ճաշակով պատրաստուած՝ առաջնակարգ ներկեր : Բնական եւ արուեստական բազմերանգ գոյներու մեծ ընտրութիւն : Նորոյթ իւղաներկեր, պատի գեղեցիկ թուղթերու ճոխ ընտրութիւն : Գետնի համար՝ ամէն տեսակ — լինոլէոմ *եւ* փլաստիք *— ծածկոցներ. —*

TAPIFLEX — TAPISOM — CARPETTE

Ձեր բնակարաններուն արտաքին եւ ներքին խնամքներուն համար անհրաժեշտ բոլոր նիւթերը :

Ամէն գնորդի կը նուիրուի յատուկ տետրակ մը, որու շնորհիւ կրնայ 10–30 առ հարիւր զեղչ ունենալ :

ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐ

52, RUE CHALON, PARIS 12e — 64, BLD. DE BELLEVILLE, PARIS 20e
166, AV. ARISTIDE BRIAND — PAVILLONS - SOUS-BOIS (Seine)
4 bis, RUE PAUL VAILLANT COUTURIER — ARGENTEUIL (S. et O.)
24, RUE PAUL VAILLANT-COUTURIER — ALFORTVILLE (Seine)
48 bis, RUE DALAVRAC — FONTENAY – SOUS – BOIS (Seine)

ՅԱՌԱՋ
ՕՐԱԹԵՐԹ
Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

Le PREMIER QUOTIDIEN ARMENIEN en EUROPE
HARATCH
Directrice : ARPIK MISSAKIAN
Rédaction et Administration : 32, Rue de Trévise - PARIS-9ᵉ
Fondé en 1925 — Téléph. : PRO. 86 - 60
R. C. Seine 57 A 2731 — C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա՝ Տար. 50 Ֆ. — Վեցամսեայ՝ 27 Ֆ.
Արտասահման՝ Տար. 60 Ֆ. — Հատը 0.30 Ֆ.

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 21 ՕԳՈՍՏՈՍ
MERCREDI 21 AOUT 1963
LE NUMERO : 0,30 FR.

39րդ ՏԱՐԻ — Թիւ 9687
Fondateur : SCHAVARCH MISSAKIAN
39e ANNÉE — Nº 9687

...ր ԽՕՍՔԸ

ՈՉ ԻՍԿ ՊԱՏՈՒՀԱՆԷՆ...

Ամէն անգամ որ պարտաճանաչութեան ...ոց մը կ'ուղղենք Հայկական Արտասահ-մանի գրոց-բրոցներուն, միշտ աչքի առ-ջեւ ունինք հիմնական խնդիրներ:

Ոչ միայն ամենօրեայ ելեւէջը, այլեւ ...ատուոր ապագան արթնութեան կը հրա-ւիրեն բոլոր պիտանի ուժերը: Առանց ...սիրէք եւ զաւանանքի խորութեան:

Այդ հիմնական խնդիրներէն մէկն է՝ ...ազ. մշակոյթի պաշտպանութեան եւ ...պրգացման հողը:

Գիտենք որ այս ճակատին վրայ եւս ...անցքեր բացուած են, իբրեւ հետեւանք ...յատար իմաստակութեանց եւ քարա-ցած նախապաշարումներու:

Հայրենասիրութեան սեւ չուկայինները ...ալ աւուրին ջուրերն ալ պղտորած են, ...յանկցարար փակելով իրենց աչքերը՝ ...նորոգ իրականութեան հանդէպ:

Միւս կողմէ, կան բազմաթիւ բարե-...ձեւներ, որոնք ոչ իսկ պատուհանէն կը ...նային, անցուդարձը դիտելու եւ անոր ...համեմատ խորհելու, գործելու համար:

Եւ այս՝ ոչ միայն Արարատեան հորի-...զոնին վրայ, այլեւ գաղութէ գաղութ:

Տարիներէ ի վեր անոնք իրերը կը դա-...սեն, գիրքեր կը ճշդեն չքեղ մեկուսա-...ցումով: Հանդիստ նստած՝ բազմոցին ...անկիւնը:

Եւ ընդհանրապէս ծուռ կը նային, կամ ...աչքերը չփելով կը յօրանջեն, եթէ փոր-...ձեն խռովել իրենց երանաւէտ թմրու-...թիւնը:

Աւելի՛ ուշ ժողովուրդի մէջ մահացու ...մեղք պիտի համարուէր այս չքեղ մեկու-...սացումը կամ թիւրատեսութիւնը: Մա-...սամբ երկտասարդութեան համար:

Եթէ Երեւանը ամուր փակած է դուռ-...պատուհան, ըլլալով ենթակայ՝ մինեւ-...ւոյն դաժան կարգուսարքին, այդ չի ...նշանակեր թէ «անելիք չունինք»:

Թող հեռուէն լսեն աղատ մտաւորակա-...նութեան ձայնը, հոգ չէ թէ անմիջական ...արդիւնք չունենայ:

Թող իմանան թէ իրենք ամէն բան չեն, ...անհրաժեշտաբար իրաւունք չունին իրենց ու-...ժով կամ պարտադրուած կաղապարին ...մէջ ձուլելու հայկական մշակոյթը: ...Յաղթանակի վերածելու դրականութիւ-...նը եւ արուեստը: Լեզո՛ւն:

Մենք վստահ ենք որ երբ օր մը ամէն ...պատուար խորտակուի հայրենիքին եւ ...Հայկական Արտասահմանի միջեւ, Երե-...ւանը ինք պիտի դատապարտէ մեր ան-...տարբերութիւնը եւ ապիկարութիւնը:

Պիտի ըսէ.— Իմ ձեռքերս եւ լեզուս ...կապուած էին. իսկ դուք ի՞նչ կը բանէիք ...անսահմանափակ ազատութեան մէջ, յանուն ...մշակոյթի անկախութեան:

Աւելի բարձրացնելով ձայնը, պիտի ...ըսէ.— Դո՛ւք ալ մեղսակիցներն էք ...ստրկութեան եւ տգիտութեան գործիքնե-...րուն, քանի որ չուզեցիք տէր դառնալ ...Հայրենաւոր վաստակին:

Եւ վերջապէս, — Դուք չէ՞ք որ կապ-...կըլէն ընդառաջ երթալով, արտասահ-...ման փոխադրեցիք ուղղագրական, լեզ-...ուական խառնիճաղանճը, իբրեւ թէ հայ-...րենիքի շահերուն ծառայելու համար: Եւ ...թերթ-խենթ ձեւացաք, երբ քարերն ան-...կ'աղաղակէին:

Ազատ Արտասահմանի գրոց-բրոցներու ...անգիտակցութեան, ապիկարութեան մէկ ե-...րեսն է այս:

Նոյնքան վրդովիչ է անոնց դիրքը՝ ...գաղութէ գաղութ:

Այս ճակատին վրայ եւս, ոչ իսկ պա-...տուհանէն կը նային: Կամ եթէ բարեհա-...ճին ակնարկ մը նետել, օտարոտի նոյ-...նութ մը կը մատնեն անմիջապէս:

...նա հատերը գաղափար անգամ չու-

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ ԹՈՒՐՔԻՈՅ ԾԱՅՐԱՅԵՂ ԱՋ ԵՒ ՁԱԽ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒ ՄԷՋ

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ

Վերջին 48 ժամուան ընթացքին, Թըր-քական ոստիկանութիւնը քանի մը հա-րիւր հոգի ձերբակալած է եւ խուզար-կութիւններ կատարած ծայրայեղ աջ եւ ծայրայեղ ձախ շրջանակներուն մէջ: Կի-րակի օր տեղւոյն մամուլը լուռ կը մնար սպասելով դրաքննութեան հրահանգնե-րուն: Ներքին Նախարարութիւնը կը հա-ղորդէր որ 172 հոգի հարցաքննուած են, որմէ ետք 16 հոգի ձերբակալուած են Պոլսոյ մէջ, 19՝ Անգարայի եւ 3՝ երկրին միւս մասերուն մէջ: Ձերբակալուած կամ հարցաքննուած անձնաւորութեանց մէջ կը յիշուին Տիկին Փերիհան Ջամպէլ որ ծանօթ է իբրեւ մասնագէտ հանրային առողջապահական հարցերուն եւ Նախ-կին տնօրէնուհի Անգարայի խլիրդի հե-տազօտութեանց կեդրոնին, Փրոֆ. Արէն, ծանօթ դէմք մը Անգարայի Համալսարա-նին, Այկի Նեգին որ մեծ գրագէտ կը նկատուի եւ իրաւաբան Ալի Այպար, նա-խագահ Բանուորական կուսակցութեան: Այս վերջինը Ֆրանսական դաստիարա-կութիւն ստացած է եւ երկար տարիներ Փարիզ ապրած է: Երբ Թուրքիա վերա-դարձած է երկրորդ աշխարհամարտի վաղորդայնին, նեղութիւններ ունեցած է հակաֆաշիստ իր գործունէութեան հա-մար: 1960 Մայիս 27ի պետական հար-ուածէն ետք, ընկերակցական քանի մը ընկերներու հետ, հիմնած էր Բանուորա-կան կուսակցութիւնը:

Պաշտպանութեան նախարարը որ կը փոխարինէ այս միջոցին Ներքին Նախա-րարը (Պարսկաստան գացած) յայտարա-րած է Խորհրդարանին առջեւ թէ կազ-մակերպութիւն մը երեւան հանուած է, որ թռուցիկներ կը բաժնէր Մամաքի ամ-բաստանեալներուն ի նպաստ: Ծանօթ է որ հոն կը գտնուին Մայիս 20-21 ձախո-ղած հարուածին պատասխանատուները:

Միւս կողմէ Խորհրդարանը մեծամաս-նութեամբ վաւերացուց կառավարութեան առաջարկը եւ երկու ամսով երկարա-ձգեց պատերազմական վիճակը Պոլսոյ, Իզմիրի եւ Անգարայի մէջ:

Թէեւ հիմա, ինչպէս միշտ, Թուրքիոյ անցուցած տագնապները գլխաւորաբար տնտեսական են: Հնգամեայ ծրագրին գործադրութիւնը թերի է, նախատես-ուած տուրքերը այս նպատակաւ, անբա-ւարար եղան եւ երկիրը պէտք է յառա-ջիկայ երեք տարիներու ընթացքին վե-րադարձնէ 950 միլիոն տոլար (դրամա-գլուխ և տոկոս) իր արտաքին պարտքէն:

Այս տագնապալի օրերուն, այն տպա-ւորութիւնը կայ նաեւ որ բանակը կա-ռավարութեան կողքին չէ, այլ կը սպա-սէ, խնայելով իշխանութիւնները:



ՏՈՔԹ. Հ. ՔԷՔԼԻԿԵԱՆ և Շ. ՆԱՐԴՈՒՆԻ
(վիրաբուժապետը եւ իր... օգնականը.
(Կարդալ Բ. էջ)

ՆԱՄԱԿ ՇԻՐԱԶԷՆ

Պէյրութի «Ազդ»ի աշխատակցուհի Շա-հանդուխտ, նամակ մը ստացած է Հա-յաստանի վաստակաւոր բանաստեղծ Յովհաննէս Շիրազէն, որմէ հաճոյքով կը տեղեկանանք, թէ յառաջիկայ աշնան, Սայաթ Նովայի ծննդեան 250 ամեակին առթիւ, Շիրազ կը մտադրէ արտասահ-ման գալ:

Ստորեւ կուտանք նամակը ամբողջու-թեամբ:

Սիրելի Սանդուխտ Հայուհիս,

Ստացայ ձեր սրտաբուխ նամակը. շատ շնորհակալ եմ բարի խօսքերի համար, — սուրբ Հայաստանի կարօտից է, որ իմ մի ծաղիկը մի ծաղկեփունջ է թւում ձեզ, մի աստղս՝ մի աստղաբոյլ. գնծում եմ, որ հազարաւիրտ սրտով էք պաշտում Հայրենիքը եւ Հայոց մայր լեզուն այդ-քան մաքուր ու անմար էք պահում: Սի-րեցի ձեր ոգին, այո, այս Աշնանը գա-լու եմ մեծ Սայաթ Նովայի ծննդեան փառատօնը ձեզ հետ, գրուած Հայու-թեանս հետ թնդացնելու եւ կսկուծ համ-բուրելու բոլոր այն հայ Հայերի հոգի-ները՝ իրենց շուրթերի վրայ, որոնք եր-բեք չեն դաւաճանել մայրենի լեզուի յա-ւիտենական սրբութեանը... ինչպէս եմ պաշտել խորհրդաւոր Մասիսն: Պիտի գամ եւ պիտի ձեզ համբոյրներ բերեմ ծաղկող Երեւանիս ամէն մի ծաղկաբոյր շրթունքից... որոնք բուրում են ազգա-հաւաքի եւ հայապահպանման խորհրդա-բոյրով: Իմ ողջոյնս բուրվառէք՝ կան-խաւ հոգեհամբուրովս, իր գրուածքները վերատպողներին. այլեւս ոչ թէ խմում, այլ աղօթում եմ աշխարհի մարմարէ խաղաղութեան մշտատեւութեան համար, եւ ամէնից առաջ Հայոց լեզուի չմեռ-նելու, գրուած բոլոր ու բոլոր Հայերիս մէկտեղուելու համար...

Որտեղ Հայ կայ՝ բերէք սեղմեմ
իմ սրտին,
Թէ Սփիւռքն է՝ վիշտը մեղմեմ
իմ սրտին,
Թէ Մասիսն է՝ ինձ Մասիսն
կը թաղէք,
Որ յաւիտեան սարս սեղմեմ.
իմ սրտին:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՇԻՐԱԶ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՖՐԱՆՍԱ կը գրէ թէ պարենաւորման ծանր թերիներ կան խորհրդային գանա-զան քաղաքներու մէջ: Մինչ ծրագիրը 5 միլիոն թոն (պտուղ, բանջարեղէն, գետ-նախնձոր) յանձնում կը նախատեսէ, մի-այն 14 առ հարիւրը կատարուած է:

ԽՐՈՒՇՉԵՒ Պելկրատ հասաւ երեքշաբ-թի: Պիտի այցելէ նաեւ Սկիւպ:

ՓԱԹՐԱՍԻ մէջ (Յունաստան) երկրա-շարժ մը պատահած է եւ խուճապ ստեղ-ծած է բնակիչներուն եւ զբօսաշրջիկնե-րուն մօտ:

ՎԻԷԹ-ՆԱՄԻ մէջ, 16 մեռեալ եւ 19 վիրաւորներ կան կառավարական ուժե-րուն մէջ, համայնավարները յարձակած ըլլալով զինուորական եւ ռազմական կա-յաններու վրայ:

ՄԵՐ ԱՅՑԵԼՈՒՆԵՐԸ

Այս վերջին շաբաթներու ընթացքին, մեր խմբագրատունը այցելեցին.—

1. Կիւրեղ եպս. Զոհրապետեան, Հայ Կաթողիկէ նախկին Առաջնորդ Յունաս-տանի եւ Ճեզիրէի, որ յատուկ առաքե-լութեամբ եկած է Հռոմէն, այցելելու համար Ֆրանսայի Կարմելեանները:
2. Պ. Մանուկեան, լրագրող, Պէյրու-թէն:
3. Տիկին Ազատուհի Դանիէլեան և Օր. Դանիէլեան, Յունաստանէն:
4. Պ. Յովհաննէս Տապանեանեան, Հալէպէն, ուսուցիչ տեղւոյն Մխիթար-եան վարժարանը:
5. Տէր եւ Տիկին Խանպէկեան, Պաղ-տատէն:
6. Կարօ Աւագեան եւ Վրէժ Ապանեան, Աթէնքէն:
7. Պ. Յակոբեան, Պաղտատէն:

նին, օրինակ թէ ի՛նչ հերոսական աշխա-տանքներ կը կատարուին Միջին Արեւել-քի մէջ, վառ պահելու համար մշակոյթի ճրագը:

Ծիգեր՝ ոչ միայն եղածը պահելով, այլեւ բազմապատկելով: Ստեղծագոր-ծութեան շունչը տարածելով երբեմնի արհամարհանք ճամբաներուն վրայ:

Շատերուն հորիզոնը կը սկսի ու կը վերջանայ իրենց շրջապատին մէջ:

1950 — Ծ.

ՏՈՔԹ. Հ. ՊԷՔԼԻԿԵԱՆ

Վայրի սո՛խ:

Բնիկներու լեզուով՝ այսպէս կը կոչուի քաղաքը, Շիքակօ, (թարգմանի՝ վայրի սոխ), ուր կը մտնեմ Մարտ 16ին, գարնան դռներէն, ձմրան ձիւնը տակաւ ձգած:

Բայց ի՛նչ սոխ, բայց ի՛նչ սոխ:

Երկրորդ Նիւ Եորք մըն է այս քաղաքը, Միչիկընի աւազանին հարաւ-արեւմըտեան անկիւնը, 50 քիլոմեթր երկարած՝ լիճին եզերքն ի վեր եւ 511 քառակուսի քիլոմեթր տարածութեամբ, մօտ չորս միլիոն բնակչութեամբ, արուարձաններով՝ եօթը միլիոն: Ութ տիտանեան կառոյցներ կը կազմեն Շիքակոյի սիրտը, զոր տեղացիք կը կոչեն լուփ, թարգմանի՝ օղակ, ըստ այլոց՝ հանգոյց, աւելի ճիշդ՝ փոր, որովհետեւ այդտեղ կեդրոնացուած են Շիքակոյի առեւտրական բովանդակ հարստութիւնն ու կենդանութիւնը:

Լիճին շրթներուն վրայ, հրթիռի պէս դէպի երկինք նետուած այդ կառոյցները, Շիքակոյի երկինքը քերող ամպահարեան այդ հիմնարկները գեղեցի՛կ է դիտել գիշերը, երբ, կարծես, հազար ու մէկ գիշերներու նորագոյն պատմութեանց գիրք մը կը բացուի առջեւդ:

Հարիւր տարի առաջ, այստեղ, տասնեակ մը հիւղակներ միայն կային՝ լիճէն նոր դուրս ելած կրիաներու նման: Այսօր՝ աշխա՛րհ մը իր ամպամերձ չօչափուկներով, իբրեւ քաղաք՝ չորրորդը աշխարհի մեծագոյն քաղաքներու դասաւորման մէջ, իսկ երկրորդը՝ Միացեալ Նահանգներու մէջ:

Հարիւր տարի առաջ՝ սոխի նման բուսած խրճիթներ միայն: Այսօր դէպի աստուածութիւն բարձրացող սանդուղներ: Բոլորովին ամերիկեան նախասիրութեամբ, բոլորովին ամերիկեան ըմբռնողութեամբ քաղաք մը, որ կը մատնէ ճարտարարուեստի եւ առեւտուրի տեղացի վարիչներուն յաւակնութիւնը, — հիմնել վիթխարին, առեղծել տիտանեանը, ամէն ձեռնարկ կազմել մեծագոյն ու բարձրագոյն չափերով:

Ունի հինգ համալսարան եւ բազմաթիւ բարձրագոյն վարժարաններ: Հարուստ մատենադարաններ, (ինծի անակնկալ մը եղաւ կեդրոնական մատենադարանին մէջ գտնել իմ հրատարակութիւններս): Եւ հարուստ թանգարաններ:

Ահա այս քաղաքին մէջ գտայ մեր սիրելի եւ հռչակաւոր վիրաբոյժը, Տօքթ. Համբարձում Բէքլիկեան:

Զինք տեսեր էի, առաջին անգամ, Պէյրութի մէջ: Գիտէի թէ կ'ապրէր եւ կը գործէր Շիքակոյի մէջ:

Երբ հանդիպեցանք լուփի մէջ, ուր գացեր էի իր քլինիքը՝ բարեւ մը ըսելու իրեն, թոյլ չտուաւ այլեւս որ մեկնիմ:

— Հեռախօսով փնտռեցի քեզ աջ ու ձախ, հիմա որ գտայ՝ ալ չես կրնար մեկնիլ:

Մէկ ամբողջ օր անցուցինք քաղաքին մեծագոյն հիւանդանոցին մէջ, որուն վիրաբուժապետն է, — այնտեղ հանդիպեցայ նաեւ Մեքսիկայի մեր սիրելի ընկերոջ՝ Քերոբէ Առաքելեանի, որ յատկապէս եկած էր Շիքակօ, վիրաբուժական գործողութեան մը համար, հաւատք չունենալով ուրիշ վիրաբոյժի վրայ, ընդունելով միայն՝ վերը Աստուած, վարը՝ Տօքթ. Բէքլիկեան: Այդպէս կը մտածէ նաեւ մեր երիտասարդ գրողներէն՝ Զարեհ Զարդուն, այժմ ի Լոս Անճելըս, որ բախտ ունեցաւ իր կոր քամակը շտկելու՝ շնորհիւ Տօքթ. Բէքլիկեանի նշդրակին, եւ... Երից Վարդապետաց հաղուպլիտ բառարանն ալ իբրեւ նուէր ընդունելու՝ ի նշան շնորհապարտ բժիշկին վեհանձնութեան:

Յաջորդ օրերուն, ներկայ եղայ իր մէկ դասախօսութեան, — վիրաբոյժներու համագումար մը կար Շերաթոն Օթէլի մէջ: Ուշացեր էի: Երբ սրահ մտայ, Տօքթ. Բէքլիկեան կը խօսէր արդէն: Մարած էին լոյսերը եւ լուսապատկերով ցոյց կուտար ոտքի մատներու վիրաբուժական պարագաներ: Բարձրախօսին առջեւ կանգնած՝ կը դոռացնէր սրահը: Քիչ ետք բացուեցաւ լոյսը: Ընդարձակ սրահը լեցուած էր բժիշկներու բազմութեամբ: Սկսան հարցումները: Հպարտութիւն կը զգայի՝ երբ Տօքթ. Բէքլիկեան կը պատասխանէր սրամտութիւններով, հեգնելով, նոյնիսկ զուարճանալով: Դասախօսութենէն ետք՝ երիտասարդ բըժիշկներ պաշարեցին զինք, այնքան մեծ էր իր հեղինակութիւնը: Հազիւ ազատելով ինքզինք բժիշկներու այդ հանդոյցէն, առաւ մեզ ու, կէս-օրին, գացինք... չինական ճաշարան մը, — ինքը, ես ու Զարեհ քհն. Մարոնեան, որ կիկերոնս էր (ամբողջ Ամերիկայի մէջ՝ առաւելապէս մեր վարդապետներն ու քահանաներն եղան, որ առաջնորդեցին զիս, իրենց կառքերով պտըտցուցին եւ երբեք մինակ չթողուցին):

Շիքակօ հոծ գաղութ ունի լեհական, գերմանական, իտալական, ֆրանսական, սքանտինաւեան, յունական, ռուսական, ճափոնական, չինական, մեքսիկեան, նոյնիսկ արաբական, — խճանկար ազգերու, որոնք ունին իրենց ինքնայատուկ ճաշարանները: Տօքթ. Բէքլիկեան կը սիրէ արեւելեան ճաշարանները:

— Հոս մնայիր ժամանակ մը, Շիքակօ ֆրանսական մշակոյթի ճաշակ ունի, յաճախ խումբեր կուգան Փարիզէն ու ներկայացումներ կուտան, — կ'երթանք միասին ու կարօտդ կ'առնես:

— Անկարելի է, օրերս բաժնուած են ամերիկեան քաղաքներու վրայ:

Այսուհանդերձ, առիթը գտանք եւ առաւօտ մըն ալ գացի հիւանդանոց՝ իբրեւ «սախթան» իր կատարած գործողութեան: Երկար տարիներէ ի վեր ձգած եմ սպիտակ շապիկը, վերջին անգամ՝ Ամիէնի հիւանդանոցը, (այդ կեանքէն ունիմ վիպերգութիւն մը, Սպիտակ Շապիկով, կիսաւարտ):

— Այսօր վերադարձիր հին սէրերուդ:

Եւ, հագուած իբրեւ հիւանդանոցին մէկ նոր վիրաբոյժը (ճերմակ շապիկ մը միայն կը ծածկէ մեր մերկութիւնը, թողլով միայն գուլպաները իբրեւ «թանկագին իրեղէններու պահարան»), մտանք գործողութեան սրահ: Երիտասարդ աղջիկ մըն էր, որուն ողնայարը վնասուած էր խորհրդաւոր պարագաներու տակ: Տօքթէօրը քթթեց աչքերը՝ ինծի հասկցնելու համար այդ խորհրդաւորութիւնը, եւ սկսաւ բանալ ողնոսկրերը, գօտիէն վար:

Ես չեմ տեսած վիրաբոյժ մը, որ ցոյց տուած ըլլայ այս աստիճան ինքնավըստահութիւն ու միաժամանակ հանդարտութիւն՝ գործողութեան ընթացքին: Ուսանողութեանս շրջանէն կը յիշեմ Օմպրետանը, Մաթիէօն, Մոնտորը, Տըլոնէն: Մասնաւորաբար այս վերջինը ձեռքի որեւէ առարկայ կը նետէր օգնականին կամ հիւանդապահուհիին՝ երբ ժամանակին չստանար նշդրակը կամ մկրատը, — ծայր աստիճան ջղային էր եւ անհամբեր, «մսագործ» կը կոչէին զինք՝ հիւանդանոցին մէջ. շարքով եւ ժամանակի հաշիւով կը քնացնէին գործողութեան ենթարկուելիքները եւ Տըլոնէ մէկը հազիւ լրացուցած՝ կ'անցնէր միւսին:

Տօքթ. Բէքլիկեան կարծես կը գրօսնու, հանդարտ է նշդրակը ձեռքին մէջ եւ այնքան զուարթ, որ... կ'երգէ միաժամանակ: Բայց ի՞նչ, — բարձրաձայն կ'երգէ Սայաթ-Նովա կամ հայ ժողովըրդական երգ մը, եւ յանկարծ կ'արտասանէ Զարենց, մինչ ձեռքերը կը շարժին արեան մէջ: Շուրջինները վարժուած են հայերէն երգին ու բառերուն, ժպտալին կը հետեւին իր շարժումներուն եւ հրամաններուն: Դուրը կը զետեղէ, մուրճը կը զարնէ, ոսկորը կը ճայթէ, մինչ հայկական երգը կշռոյթ կուտայ կարծես այս արեան պատարագին: Ահա ողնածուծը մէջտեղն է, մատովը կը շօշափէ, դուրով քիչ մը եւս կը լայնցնէ ողնոսկրին բացուածքը, մինչ ես կը դողամ որ կը վնասուի ողնածուծը:

— Մի՛ վախնար, ողնածուծին լարը ուժով է, կ'ըսէ:

Այս գործողութենէն ետքը նկարուեցանք միասին՝ գործողութեան սրահին մէջ, յետոյ մեր վիրաբուժապետը շարունակեց իր գործը, — աղջկան մը թերակազմ ձեռքին մատները ամբողջացուց, երիտասարդի մը ջախջախուած թեւը կարգի դրաւ, եւ ի վերջոյ պտոյտ մը կատարեցինք սրահէ սրահ՝ հիւանդներուն մօտ: Ամբողջ օր մը այսպէս, հիւանդանոցին մէջ:

Երեկոյին, երբ պիտի մեկնէինք, նոր հիւանդ մը բերին եւ Տօքթէօրը մնաց դարձեալ հիւանդանոցին մէջ: Ոչ ցերեկ ունի, ոչ գիշեր: Իր կեանքը կ'անցընէ հիւանդանոցին մէջ:

Բայց բժշկութիւնը չէ միայն, որ կը հետաքրքրէ զինք: Գրագէտի խմոր ունի: Ունի գրական ուսումնասիրութիւններ: Նաեւ բժշկական անգլերէն հրատարակութիւններ:

Տօքթ. Համբարձում Բէքլիկեան ծնած է Հաճըն, 1900ին: Մեծ Եղեռնէն ետք, ջարդէն ազատած, Պոլիս է անցած: կը մտնէ Ռոպէրթ Քոլէճ: 1920ին՝ կ'անցնի Ամերիկա, ուր կը վերջացնէ միջնակարգ ուսումը ու կը մտնէ Համալսարան: Բժիշկի վկայականը ստանալէ ետք՝ կը նուիրուի վիրաբուժութեան: Շուտով մասնագէտ կը դառնայ ոսկրային հիւանդութեանց վիրաբուժութեան: Այժմ դասախօս Շիքակոյի Համալսարանին, վիրաբուժապետ քաղաքին մեծագոյն հիւանդանոցին, իբրեւ հեղինակութիւն, ըլլայ Ամերիկայի մէջ, ըլլայ արտասահմանի մէջ, ծանօթ է իր անունը Տօքթ. Բէք. (Ամերիկա մտած օրերուն՝ իր անուան երկրորդ Բ. տառը պակաս գրուած ըլլալով, կը կոչուի Տօքթ. Բէքլիկեան, ասկէ՝ մտերմական Տօքթ. Բէք):

Ահաւասիկ մասնագէտ մը, որով կրնայ հպարտանալ Հայութիւնը, (Հայաստանի Գիտութեանց ակադեմիան զինք հրաւիրեց, վերջերս, Երեւան՝ շարք մը դասախօսութիւն տալու համար):

Տ. ՆԱՐԴՈՒՆԻ

ՄԱՐԴԿՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

ՄԷԿ ՄԻԼԻՈՆ ՏԱՐԻԷ Ի ՎԵՐ

Մեր մոլորակին վրայ ապրած առաջին մարդիկը՝ փոքրաթիւ էին եւ շատ քիչ բան ունէին ձգելիք յետագայ հնագէտներուն: Հետեւաբար, անոնց ընկերային ու կրօնական կեանքին մասին բաւածներէն ու գրուածներէն շատեր՝ պարզ ենթադրութիւններ են:

Այսուհանդերձ, հակառակ անխուսափելի բացերուն, շատ քիչ պատմական գիրքեր ունին լրջութիւնն ու պերճութիւնը «Մարդկութեան Պատմութիւնը» խորագիրը կրող վեցհատոր գիրքին, որուն առաջին հատորը լոյս տեսաւ վերջերս, Իւնեսքոյի հովանաւորութեան տակ:

Այս հատորը կ'ընդգրկէ ժամանակի հսկայ տարածութիւն մը, երկրագունդի վրայ առաջին մարդուն երեւումէն մինչեւ Քրիստոսէ առաջ 1200 թուականը մօտաւորապէս — աւելի քան մէկ միլիոն տարի: Յաջորդ հատորները պիտի վեր-

ՀԱՄԱՅՆԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԴԵՐԸ

ՌՈՒՍԵԻԹՈՒՐՔ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆՑ ՄԷՋ

1919–1922

Իսկական համայնավարական քարոզչութեան ջուրը իր ջաղացքին տանելու համար, Մուսթաֆա Քէմալ առաջարկեց իր բարեկամ Թէֆիք Ռիւշտիի, որ հիմնէ համայնավար պաշտօնական կուսակցութիւն մը: Այս կուսակցութիւնը կը յաւակնէր թէ մահմետական կրօնքը իր մէջ կը պարունակէր ընկերվարութեան բոլոր տարրերը, ասով իսկ փաստելով թէ համայնավարութիւնը կրօնական եւ բարոյագիտական առաքինութիւն մըն է: Սակայն, Թուրք ժողովուրդը պիտի չկարենար ընդունիլ համայնավարութեան ամբողջական ծրագիրը՝ կրօնական պատճառներով: Շատ ժամանակի պիտի կարօտէր: Այժմ՝ կրնար միայն վնասակար ըլլալ: Որովհետեւ Թուրք զինուորը այլեւս առաւ պիտի չելլար իր հայրենիքը պաշտպանելու, եթէ ըսէր թէ հայրենիք չկայ: Արիւնալի յեղափոխութեան անհրաժեշտութիւն պիտի չըլլար համայնավարութիւնը իրագործելու համար: Մաղթելի էր աստիճանաբար զարգացում մը: Մահմետականութիւնը ինքնին պիտի հասնէր համայնավարութեան: Այդ տարուան աշնան, Թէֆիք Ռիւշտի յանդգնութիւնը ունեցաւ խնդրելու, որ իր կուսակցութիւնը ընդունուի Գ. Միջազգայնականին մէջ: Աւելորդ է ըսել, թէ մերժուեցաւ, որովհետեւ չէր լրացներ Գ. Միջազգայնականի 21 հանրածանօթ պայմանները: Մոսկուայի մէջ կը ճանչնէին համայնավարութեան ծաղրական նմանութիւնը որակուած այս կուսակցութիւնը (1):

Մուսթաֆա Քէմալ շատ լաւ գիտէր, թէ խորհրդային կառավարութիւնը որքան կարեւորութիւն կ'ընծայէր Գ. Միջազգայնականին՝ 1920ին: Ահա թէ ինչո՛ւ առատօրէն կը բաշխէր կարմրագոյն բարեկամական յայտարարութիւններ՝ հիացմունք յայտնելով ընկերային նոր կարգի մը հաստատման համար ռուս բանուորներու մղած պայքարին: Ամէնէն ցայտուն օրինակը 1920 Նոյեմբեր 29ին Չիչէրինի ուղղած իր հեռագիրն է, որուն մէջ «մարդկութեան ազատագրման համար ռուս ազգի յանձն առած զոհողութեանց վեհութեան» մասին իր հիացումը կը յայտնէ: Հեռագիրը կը վերջանար հետեւեալ բառերով (2).—

«Բոլոր ազգակիցներուս հետ խորապէս համոզուած եմ, որ բուրժուազիայի ուժը յօդս պիտի ցնդի այն վայրկեանին, երբ Արեւմուտքի աշխատաւորներն ու Ափրիկէի եւ Ասիոյ ճնշուած ժողովուրդները հասկնան, թէ միջազգային դրամատիրութիւնը չարաչար կը շահագործէ իրենց համբերութիւնը, միայն իրենց տէրերուն ի շահ՝ զիրենք ստրկացնելու նպատակաւ, եւ այն վայրկեանին որ գիտակցին թէ գաղութային քաղաքականութեան վնասաբեր ազդեցութիւնը սկսած է թափանցել աշխատաւոր բազմութիւններուն սրտէն ներս: Եւրոպայի բանուորներուն վրայ խորհրդային Ռուսիոյ կառավարութեան ունեցած բարոյական բարձր հեղինակութիւնն ու Թուրք ազգին հանդէպ մահմետական աշխարհի ունեցած կապը այն ապահովութիւնը կուտան մեզի, թէ մեր անկեղծ դաշնակցութիւնը բաւարար պիտի ըլլայ Արեւմուտքի աշխարհակալներուն դէմ ի մի հաւաքելու բոլոր անոնք, որոնք, անհոգութեան եւ տգիտութեան հետեւանք եղող իրենց ստրկամտութեամբ, մինչեւ այսօր յենարան դարձած են աշխարհակալներու իշխանութեան»:

Այս բառերը շատ լաւ տպաւորութիւն գործեցին Մոսկուայի մէջ եւ անկասկած պատճառ դարձան, որ խորհրդային կառավարութիւնը աւելի դիւրաւ հանդուրժէ թրքական բանակին մինչեւ Արաքս յառաջխաղացումով տուած հարուածին ծանրութեան, եւ յայտարարէ թէ պատրաստ է Անգարայի կառավարութեան հետ բարեկամական դաշինք մը կնքելու՝ Թուրքերու առաջարկած սահմանային ճշդումի հիման վրայ (բացի Պաթումէն):

Եթէ խորհրդային կառավարութիւնը շուտով ըմբռնեց Անատոլուի մէջ համայնավար քարոզչութեան ապարդիւն ըլլալը եւ պատրաստակամութիւն յայտնեց հրաժարելու այդ քարոզչութենէն (ինչպէս ցոյց կուտայ Մոսկուայի դաշինքը), պարագան նոյնը չեղաւ սակայն Գ. Միջազգայնականի գործակալներուն համար, որոնք, բնականաբար, աւելի ժամանակ դրին այս իրողութիւնը ըմբռնելու համար: Բայց եւ այնպէս, նոյնինք ասոնք, առաջին մէկ օրէն, [illegible] շատ դրին Անգլիոյ դէմ մղուած թրքական անկախութեան պայքարին վրայ, եւ Թուրքիոյ մէջ աշխարհակալներու դէմ մղուելիք պայքարին տուին երկրորդական կարեւորութիւն:

Թոյլ տուէք, որ քանի մը բառով ցոյց տանք մտքերու զարգացումին մէջ տիրող շփոթութիւնը:

Ահա քանի մը հիմնական որոշումներ, որոնք քուէարկուեցան համայնավար Միջազգայնականի Բ. համագումարին, 1920 Յուլիս 28ին, որոնք կը վերաբերին [illegible] ազգութիւններու եւ գաղութներու հարցին հետ (3).—

(Շար. – 7)

1) Տի Վէլթ տէս Իսլամս, հ. 20, 1938, էջ 112, 124:

2) Տօքիւմէնթի, հ. Գ., 1959, էջ [illegible]:

3) Տէր Ցվայթէ Քոնկրէս տէր Քոմ. Ինթերն., Համպուրկ, 1921, էջ 224–225:

...ումեն Անապատլինձի Դարաշրջանէն ...ային պատահածները։ Ուշագրաւ է, որ գործին վերջերորդ հա...տորին խորագիրն է «Աշխարհ Քսաներորդ Դարուն»։

ԳՈՐԾԻՆ ՈՒՂՂՈՒԹԻՒՆԸ

Մարդկութեան պատմութեան նորա – գոյն փուլերուն կարելի եղածին չափ ...ատ տեղ յատկացնելու հակումը, որուն ...ծրագրով կ'երեւի գործի առաջին հատո – րին։ Առաջին մասին 356 էջերը մէջ կը ...տանին Հին Քարէ Դարուն, Միջին Քարէ Դարուն եւ Նոր Քարէ Դարուն ընդմէ – ջէն, մինչ երկրորդ մասի 517 էջերը նը-...ւիրուած են Անապատլինձի Դարու փոք-րաթիւ դարերուն։

Այս գործը հանդիպեցաւ բազմաթիւ ու մերթ ողբերգական արկածներու։ Առաջին անգամ, գրելու գաղափարը յղացաւ Ալտուս Հաքսլէյ, 1946ին, իսկ յաջորդ տարիներուն, մինչեւ 1950, Իւնեսքոյի մասնաւոր յանձնախումբ մը ըն – տանեց նախապատրաստական աշխա – տանքը եւ մշակումի գործը. 1950ին, ծանօթ գիտնականներու եւ բանասէրներու միջազգային յանձնախումբ մը, Իւնեսքոյի կողմէ նշանակուելով՝ ստանձնեց գործին բովանդակութեան պատասխանա-տուութիւնը։

Առաջին հատորին իբրեւ հեղինակ ու հրատարակիչ ապահովուեցան Ժաքէթ Հոքս եւ Փրոֆեսէօր Հենրի Ֆրանքֆորթ։ 1954ին, երբ Փրոֆեսէօր Ֆրանքֆորթ մեռաւ, Սըր Լէօնարտ Վուլլէյ շարու-նակեց եւ գլուխ հանեց անոր գործը։ Սկզբնական բնագիրը ենթարկուեցաւ բազմաթիւ մասնագէտներու, որոնց դի-տողութիւնները շատ մը պարագաներու մէջ կցուեցան սկզբնական բնագրին, որ վերաքննուեցաւ պատշաճօրէն։

Պիտի ենթադրուի, թէ «թխսումի» այս երկար շրջանը եւ յաճախ, այնքան հա – կադիր տեսակէտներ ներդաշնակելու ճի-գը՝ գիրքը զրկած են իր մտքերու թար-մութենէն։ Սակայն, շնորհիւ հրատարա-կիչներու ճարտար գործին ու նաեւ բազ-մաթիւ նոթերուն, պատմումը սահուն ընթանայ եւ հեղինակները կը յաջողին ներկայացնել իրենց անձնական համո – զումները։

Իսկապէս, Ժաքէթ Հոքս կը ներկայա-ցնէ իր շատ մը տեսակէտներն ու կար-ծիքները, զորս փոքրաթիւ մարդագէտ – ներ կամ պատմագէտներ նախապատ – րաստուած են ընդունելու եւ զորս ուրիշ մասնագէտներ կը մերժեն գործին ընկե-րացող նոթագրութեանց մէջ։

Այսպէս, օրինակի համար, ներկայ դա-րաշրջանի հոգեկան արտայայտութեանց հետ նախապատմական մարդու մտքի կա-պերու քննութեան մէջ, հեղինակը Եունկի «նախատիպարներուն» առջեւ խոնար – հելով կը յայտարարէ. «... Մարդկային ...ները կը ծնին կարգ մը բնածին հո-գեկան երեւոյթներով, որոնք ստեղծուե-ցան տեսակներու զարգացման փորձա – ռութեամբ։ Ժառանգուեցան՝ ինչպէս կը ժառանգուին մարմնին նոյն ձեւով զար-գացող մասերը, բայց, որովհետեւ հո-գեկան բնոյթ կը կրեն, կը միտին ար-տայայտուիլ հոգեկան ձեւերով, գլխա – ւորաբար կրօնական առասպելներու մէջ, որոնք արտաքին երեւոյթով թէեւ կը տարբերին նոյն քաղաքակրթութեան չէշտերէն, սակայն, յաճախ այնպէս կը թուի թէ ունին ներքին միութիւն մը, որ շատ լայնածաւալ է եւ անժամանակ»։

«Բայց մինչ նախապատմական դարա-շրջաններու վերաբերեալ կարգ մը են-թադրութիւններ միամիտ են, ուրիշներ՝ խորամիտ ու լուսաբանիչ կը թուին»։ Հեղինակը կը նշմարէ երկու հակադիր հակումներ, որոնք յառաջ կուգան մար-դուն մտային զարգացումէն եւ ինքնա – գիտակցութենէն։ Առոնցմէ մէկը՝ գոր-ծիքներ շինելու եւ շրջապատը իրեն են-թարկելու շահադրգռութիւնն է, իսկ միւսը՝ հակումը միանալու ընդհանրա – կան ձեւի մը մէջ, ուրկէ զինք հեռացու-ցած է իր գիտակցութիւնը։ Այս երկրորդ հակումը կ'առաջնորդէ կրօնքին, ար – ուեստին ու փիլիսոփայութեան։

«Հրատարակութեանց այս շարքին եւ այս գրքին առարկայական գլխաւոր նը-պատակներէն մէկն է՝ տալ մարդուն քա-ղաքակրթական ու գիտական զարգացման մէկ պատմութիւնը։ Գիտակցաբար, քիչ կարեւորութիւն տրուած է քաղաքական, տնտեսական ու զինուորական ազդակնե – րու։ Իւնեսքոյի ընդհանուր տնօրէնի յա-ռաջաբանին համաձայն, գիրքին նպա – տակն է սրբագրել մարդու անցեալի մա-սին սովորական տեսակէտը։

Սակայն եւ այնպէս, հակառակ բարե-միտ այս մարդոց ազնիւ ճիգերուն, քա-ղաքականութիւնը չի դադրիր նեղացու – ցիչ կերպով ինքզինք պարտադրելէ։ Կը բաւէ նայիլ Երկաթեայ Վարագոյրի եր-կիրներու մասնագէտ գիտնականներու ներկայացուցած նոթագրութեանց, նկա-տելու համար, թէ անոնք որոշած են պատմութիւնը կրկին գրել, այն յար – մարցնելու համար կուսակցական գծին ու մարքսեան տեսաբանութեան։

Այսպէս, Լենինկրատի Արեւելեան Հիմ-նարկութենէն Փրոֆեսէօր Տիակոնով՝ Սըր Լէօնարտ Վուլլէյի գործածած «քաղ-քենի քաղաքակրթութիւն» տարազին տեղ պիտի գործածէր «դասակարգային ընկերութիւն» նախադասութիւնը, եւ Մոսկուայի Ազգագրական Հիմնարկու – թեան Փրոֆեսէօր Տիմպէչ միշտ պատ – րաստ է յայտարարելու թէ «աշխատանքը աւելի հին է քան արուեստը եւ կը հան-դիսանայ անոր ծագման հիմը»։

Գիրքին ուրիշ մէկ նպատակն ալ ի՛սկա-պէս «միջազգային» է, այսինքն՝ հարկ եղած շեշտը տալ կարգ մը կարեւոր զար-գացումներու, որ կերպով մը նպաստե – ցին համաշխարհային քաղաքակրթու – թեան պատմական ընթացքին։ Այսպէս, Չինաստան եւ Հնդկաստան, ինչպէս նաեւ Եգիպտոս ու Միջագետք, կը գրաւեն այն դիրքը, որ իրենց կը պատկանի քաղաքա-կրթութեանց զարգացման քննութեան մէջ։

Հետեւաբար, գիրքը ունի ապշեցուցիչ եւ հրապուրիչ համաչափութիւն մը եւ ծաւալ մը եւ այս գրքի հրատարակութե-նէն ետք, դժուար պիտի ըլլայ պատմու-թիւնը գրել զուտ արեւմտեան տեսան – կիւնէ կամ ազգային հասկացողութեամբ։

Քաղեց ՎԷՆ

ՀԱՅԱՍՏԱՆ

ԵՐԵՒԱՆԵԱՆ ՋՈՒՐԵՐ

Խօսքը կը վերաբերի ոչ միայն հան-քային ջուրերու, այլ եւ պտղաջուրերու, որոնք կը ծախուին շիշերու մէջ՝ ինչպէս այստեղ, Փարիզ։

Երեւանի պատմութեան թանգարանի վարիչներէն մին, Ա. Բաբայեան, կը գրէ «Երեւան» թերթին մէջ (8 Օգոստ.).—

Հայաստան փառաբանուած է իր հան-քային եւ բուժական ջուրերով, ինչպէս Արզնին, Ջերմուկը, Դիլիջանը, Սեւանը, եւ այլ ջուրեր, որոնք բուժական համբաւ ունին ու ծանօթ՝ Խորհ. Միութեան եւ արտասահմանի մէջ։

Հայկական ջուրերը ծանօթ էին հին ժամանակներէ ի վեր, բայց օգտագործ-ուած չէին։

1892ին Քրիստափոր Գիլանեան (Լասսօ մականուամբ) գործարան մը հիմնած էր Երեւանի մէջ, պատրաստելու համար զո-վացուցիչ ջուրեր՝ թարմ պտուղներու հիւթով։ Վերջերս Երեւանի պատմու – թեան թանգարանին նուէր տրուեցան կարգ մը փաստաթուղթեր եւ անձնական իրեղէններ, որոնք կը վերաբերին այդ գործարանին։

Ք. Գիլանեանի զաւակները, Մարգա – րիտ եւ Հայկ, կարեւոր տեղեկութիւններ հայթայթեցին այդ գործարանին աշխա – տանքներուն մասին, միաժամանակ պատ-մեցին թէ գործարանը կը պատրաստէր զովացուցիչ ջուրեր զանազան անուննե – րով.—

Կոֆէյնի լիմոնադ, Սիտրօ, Սիֆոն, ինչպէս եւ «սեւ հաղարջի» ջուրեր, բու-ժական հանքային ջուրեր՝ սոդա, սել-դերեան եւ Կադզբադ (Կարլովիվար), ա-ղերը Չեխոսլովաքիայէն բերուած։

Գործարանը քանիցս մասնակցած է գիւղատնտեսական ցուցահանդէսներուն եւ մրցանակի արժանացած։ 1897ին, Քիեւի համառուսական ցուցահանդէսին մէջ Երեւանի այս արտադրութիւնները արժանացած են գովասանական վկայա – թուղթերու։ 1898ին, Փրակայի համաշ – խարհային գիւղատնտեսական ցուցահան-դէսին, որու կը մասնակցէին բազմաթիւ արտասահմանեան երկիրներ, Երեւանի արտադրութիւնները գրաւած են առաջ – նութիւնը եւ ստացած ոսկեայ շքանշան։ Այժմ բոլոր այս իրեղէնները եւ վաւերա-թուղթերը կը գտնուին Երեւանի թանգա-րանը՝ համապատասխան բաժնին մէջ։

ՌՈՄԷՆ ՌՈԼԱՆ ԵՒ ՀԱՅ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆԸ

«Ինոստրաննայա Լիտերատուրա» ամ – սագիրը (Մոսկուա) իր վերջին թիւով հրատարակած է Ռոմէն Ռոլանի մէկ քա-նի նամակները, ցայժմ անտիպ։ Այդ նամակներէն մէկուն մէջ հիացումով կը խօսուի հայ երաժշտութեան մասին.—

«Հինգշաբթի օրերը համերգներու շարք մը կազմակերպեցի տնտեսական բարձրա-գոյն գիտութեանց դպրոցին մէջ, իսկ անցեալ շաբաթ իմ մօտս՝ հայկական, վրացական, ռուսական, պարսկական ե-րաժշտութեան շատ հետաքրքրական հա-մերգ մը։ Ադկէ քանի մը օր առաջ, Փա-րիզի «Կովկասեան Միութիւնը» գիս հրա-ւիրած էր երաժշտական համերգի փոր-ձի, եւ ես այնքան ցնցուեցայ որ իրենցմէ խնդրեցի գալ ինծի մօտ եւ նուագել նոյն գործերը։ Եւ խումբով երգեցին հայկա-կան, վրացական եւ ռուսական երգեր։ Պարսիկ մը կը նուագէր թառի վրայ, (թառը կը նմանի երկար կոթով կիթա-ռի)։ Երաժշտութեան մէջ վառ կերպով կը յայտնուէին ազգային նկարագիրները։ Հայը խորախորհուրդ, ողբերգական եւ առնական է նոյնիսկ իր երգկոտութեան մէջ։ Վրացին պարզ է եւ արեւոտ, հա – մարեա Իտալացի։ Ռուսը շարժուն է, յա-րափոփոխ եւ մեղմ։ Այս ի՛նչ հրաշալի երաժշտութիւն է։ Այս ժողովուրդները կարծես թէ ուրի՛շ շնորհքներով օժտուած են երաժշտութեան մէջ քան մենք։ Եւ ես համոզուած եմ թէ եւրոպական արուես-տը ուշ կամ կանուխ անպայման կը կրէ այս արուեստին ազդեցութիւնը։ Այս արուեստը արդէն սկսած է ոգեւորել մեր երաժիշտները»։

ԿԱՐԺԷ ԳԻՏՆԱԼ

Էգ ճանճ մը՝ իր կեանքին 8րդ օրէն սկսեալ կրնայ օրական ածել 160 ձետուկ եւ այս թիւը կ'աճի օրէ օր։ Ճանճերը ձետուկներէ դուրս կ'ելլեն 18 օրէն։ Այս հաշուով, միայն հինգ ամիսներու ըն – թացքին, ճանճ մը կրնայ ծնունդ տալ 100 միլիոն ճանճերու։ Եթէ մէկ ճանճէն ծը-նած ճանճերը գլուխ-գլխի շարենք երկ-րագունդին վրայ, այդ գիծը կը բռնէ ամբողջ երկրին շրջանը եւ դեռ կ'աւելնայ ալ։

Ի՞նչ կ'ըլլան ճանճերու այս անթիւ բա-նակները։

Շատերը կը մեռնին աննպաստ պայ – մաններուն հետեւանքով, մնացեալները կեր կ'ըլլան միլիոնաւոր թռչուններու, սարդերու եւայլն։

«ՅԱՌԱՋ»Ի ԹԵՐԹՕՆԸ (209)

ԵԸԼՏԸԶԻ ՊՈՄՊԱՆ

●●●

ՀԱԶԱՐ ԻՆԸ ՀԱՐԻՒՐ ԶՈՐՍ

— Ի՞նչ պիտի ընենք, ի՞նչ, կը հեծ – ...կլտար Իզզէթ Ափիտ, եթէ ստուգուի ...ւրը։

— Լուրը ստուգուա՛ծ է, կը յարէր Նէ-ճիպ Մէլհամէ, հեռագիրները չտեսա՞ք։

— Տեսա՛նք, տեսա՛նք, կը թոթովէր Գարա Թահսին, բայց...

— Գիտէ՞ք, ընկերնե՛ր, գոչեց յան – կարծ Իզզէթ Ափիտ, մեր կեանքը վտան-գի մէջ է, ժա՛մ առաջ մեր գլխուն ճա՛րը տեսնենք։

— Մի՛ հափշտակուիք, մի՛, կշտամբեց Նէճիպ Մէլհամէ, սպասեցէ՛ք քիչ մը, տեսնենք ի՛նչ դիրք պիտի բռնէ Սայիտ փաշան։

— Չէ՞ք ճանչնար այդ աղուէսը, ընդ-միջեց Գարա Թահսին, տարակոյս չկայ թէ զօրաւորին փողարը պիտի ըլլայ։

— Ի՞նչպէս, ի՞նչպէս, չհասկցայ, հար-ցուց Նէճիպ Մէլհամէ։

— Դուք շա՛տ լաւ կը հասկնաք, յա-րեց Թահսին ժպտելով, Սայիտ փաշան ծեր աղուէս մըն է, կը տեսնէք, Հինք-եարին խորհուրդ պիտի տայ տեղի տալ, առանց որեւէ ընդդիմութեան։

— Ես ալ նոյնը կը մտածեմ, աւելցուց Իզզէթ Ափիտ, Երիտասարդ Թուրքերուն գաղտնի գործակալը չէ՞ ինքը. անշո՛ւշտ առոնց դատը պիտի պաշտպանէ, մանա – ւանդ, ներկայ պարագային, երբ պիտի տեսնէ թէ ամբողջ բանակը թունաւոր – ուած է։

— Ճիշդ է, յարեց Նէճիպ Մէլհամէ, գիտէ՞ք ի՛նչ պիտի ընէ Սայիտ փաշան։

— Ի՞նչ պիտի ընէ, հարցուցին երկու եղբայրակիցները։

— Հիմա պիտի գայ, շարունակեց Նէ-ճիպ Մէլհամէ, նախ պայման պիտի դնէ, պիտի պարտադրէ Սուլթանին առանձին, բոլորովին առանձին տեսակցութիւն մը, որուն մէջ, իր առաջին գործը պիտի ըլ-լայ թունաւորել Նորին Վեհափառութեան ուղեղը, կը տեսնէք, Մանաստրէն քաշ-ուած հեռագրին վրայ, պիտի առաջար-կէ Հինքեարին, դերադրգռուած միտ – քերը հանդարտեցնելու պատրուակով, եւ աժամաբար երեւոյթները փրկելու հա-մար, պիտի ստիպէ Եըլտըզը մաքրագոր-ծելու։

— Ի՞նչ կ'ուզէ Եըլտըզէն, ընդմիջեց Գարա Թահսին։

— Հը՛մ, հը՛մ, մոլտաց Նէճիպ Մէլ – համէ, Եըլտը՞զ... բովանդակ կայսրու – թեան մը եւ միլիոնաւոր ժողովուրդնե – րուն ճակատագիրը հոս կը վճռուի, հո՛ս, ի՛նչ կը կարծէք, առաջին հարուածը մենք պիտի կրենք, մե՛նք...։

Եւ երեք եղբայրակիցները պահ մը ապ-շահար, գիրար սկսան գննել։

Նոյն պահուն կառք մը ներս մտաւ Եըլ-տըզի շրջափակէն։

Սայիտ փաշան էր, վար իջաւ կառքէն եւ արարողապետ Ֆայիզ պէյի թեւը մը-տած, առաջնորդուեցաւ կայսերական դահլիճը, ուր Ապտիւլ Համիտ զինք կըս-ղար անհանդարտ քայլերով։

Ֆայիզ պէյ, Քիւչիւք Սայիտ փաշան Հինքեարին հետ առանձին ձգելէ ետք, աճապարեց դէպի Քարտուղարութեան Դիւանը, ուր դեռ կը խօսակցէին երեք պալատականները, եւ առոնց ազդարարեց նախկին եպարքոսին ներկայութիւնը պա-լատին մէջ։

— Մինա՞կ էր, հարցուց Նէճիպ Մէլ – համէ, հետաքրքիր շարժուձեւով մը։

— Մէս-մինակ, պատասխանեց արարո-ղապետ Ֆայիզ պէյ։

Եւ մեկնեցաւ։

Քիչ յետոյ վերադարձաւ ու մտաւ Քարտուղարութեան Դիւանը։

— Թահսի՛ն փաշա, ըսաւ հապճեպով մը, Հինքեարը ձեզ կ'ուզէ տեսնել։

— Ի՞նչ պիտի ընէ զիս, արտնջաց Գա-րա Թահսին։

— Մանաստրէն հասած վերջին հե – ռագիրը հետը թող բերէ ըսաւ, շարունա-կեց Ֆայիզ պէյ։

Առաջին քարտուղարը շուտով ընկերա-ցաւ արարողապետին եւ Սուլթանին ներ-կայանալով իրեն յանձնեց հեռագիրը։

Ապտիւլ Համիտ, Սայիտ փաշայի ակ-նարկը կարդալով, իր առաջին քարտու-ղարին ազդարարեց հեռանալ, առանձին թողլով զիրենք։

Եւ սկսաւ ունկնդրութիւնը։

— Է՛, Սայի՛տ, ըսաւ Ապտիւլ Համիտ, առէք անգամ մը կարդացէք նայիմ, կը քաշուի՞ այսպիսի հեռագիր մը։

Քիւչիւք Սայիտ, ակնոցը քթին, սկսաւ կարդալ հեռագիրը։

Մանաստրէն էր, Նիազի եւ Էնվէր պէյերը, կայսերական բանակի սպանե – րէն, ապստամբութեան դրօշ պարզած, իրենց յարած հարիւրաւոր զօրքերով լեռը քաշուած են. ահա՛ իմաստը հեռագրին, որ անհելի ջղաձգումներու մատնած էր Հինքեարը։

ՍՄԲԱՏ ԲԻՒՐԱՏ

(Շար.)

Տէր եւ Տիկին Ժիրայր Փափազեան եւ զաւակները, Պ. Կարպիս Փափազեան, Տէր եւ Տիկին Կարպիս Պետրոսեան եւ զաւակները, Տէր եւ Տիկին Վարդեվառ Տուվալեան եւ զաւակները (Հայաստան), Տէր եւ Տիկին Յովակիմ Կարապետեան եւ զաւակները (Պուլկարիա) խոր կսկի – ծով կը ծանուցանեն մահը իրենց մօր, մեծ-մօր եւ քրոջ՝

ԱՅՐԻ ՏԻԿԻՆ ՀԻՊԵՐԻԿ ՓԱՓԱԶԵԱՆ

Յուղարկաւորութիւնը կը կատարուի այս հինգշաբթի ժամը 16ին, Փարիզի Ս. Յովհաննէս-Մկրտիչ եկեղեցւոյ մէջ:

Մահազդ չստացողներէն կը խնդրուի ներկայ իբրեւ այդ նկատել:

5, Ալէ տ'Անժու, Նուազի-լը-Սէք (Սէն)

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Յակոբիկ եւ Ժաքլին Կարապետեան եւ իրենց ընտանեկան բոլոր պարագաները (Ամերիկա եւ Պոլիս), Տէր եւ Տիկին Սարգիս Պաղտասարեան եւ զաւակները (Լքս), Տէր եւ Տիկին Նահապետ եւ Գրիգոր Տէր-Գրիգորեան եւ զաւակները (Ամերիկա), Պօղոս եւ Վարդէր Գալուստ – եան եւ զաւակները, նաեւ իրենց ընտանեկան բոլոր պարագաները (Ամերիկա եւ Եգիպտոս), Տէր եւ Տիկին Տիրան Օհաննէսեան եւ զաւակները (Սէն-Մօրիս), Տէր եւ Տիկին Կարապետ Կարապետեան եւ զաւակները (Ամերիկա), Տէր եւ Տիկին Նշան Պետրոսեան եւ զաւակները կրկին շնորհակալութիւններ կը յայտնեն ամէն անոնց որոնք անձամբ, գրաւոր եւ ծաղկեպսակով ցաւակցութիւն յայտնե – ցին իրենց մօր, քրոջ, քրոջ աղջկան, հօրեղբօր աղջկան, հարսին եւ ազգակա – նին՝

ԵՍԹԵՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ
(Ծնեալ Գալուստեան)

կսկծալի մահուան առթիւ, որ տեղի ունեցաւ իր ամուսնոյն՝ Խաչիկ Կարապետեանի մահէն եօթը օր վերջ, կիրակի, Օգոստոս 11ին, իրենց բնակարանին մէջ Լիոն:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ՀԱՄԱԽՄԲԲՑ. Հայր. Միութեան Մարսէյլի մասնաճիւղի ընդհ. անդամական ժողովը այս չաբաթ ժամը 21ին, սովո – րական հաւաքատեղին: Օրակարգ՝ տեղւոյն վրայ:

Վարչութիւնը կը խնդրէ իր բոլոր անդամներէն ներկայ գտնուիլ տարւոյս վերջի այս կարեւոր ժողովին:

ՀԱՅ ԸՆԾԱՅԱՐԱՆ
ԲԱՑՈՒԱԾ ԵՆ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ուսումնական 1963–1964 Տարեշրջան

Կ'ընդունուին 10–12 տարեկան բարեկիրթ եւ ուսումնասէր աշակերտներ, որոնք ունին իրենց տարիքին համապատասխան նաեւ ուսումնա – կան ստաիճան:

Արձանագրութեան եւ լուսաբանութեանց համար դիմել՝

Direction du Petit Séminaire Arménien
3, Av. de Grandchamp, LE PECQ (S. et O.)
Tél· 963.01.72

ԿԵԱՆՔԻ ՈՒՂԻՆԵՐՈՎ

Գ. Հատոր

Շուտով լոյս կը տեսնէ Ս. Վրացեանի ԿԵԱՆՔԻ ՈՒՂԻՆԵՐՈՎ (Գ. Հատորը), շուրջ 300 էջ, պատկերազարդ եւ լաթա – կազմ:

Երրորդ հատորը կը բովանդակէ Ս. Վրացեանի յուշերը կամաւորական շարժման, ինչպէս նաեւ դէմքեր, դէպքեր եւ տպաւորութիւններ՝ մօտիկ անցեալէն:

Շ. ՄԻՍԱՔԵԱՆ

Օրեր եւ Ժամեր

Լոյս Տեսաւ



Մատենաշար — ՅԱՌԱՋ — Կեդրոնավայր
ԳԻՆ
Ֆրանսա՝ 15 Ֆր.
— Առաւել առաքումի ծախքը —

« ՅԱՌԱՋ »

ՀԱՅ ԲՈՅԺ

ԺՈՂ. ԱՄՍԱԹԵՐԹ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ
խմբագիր՝ Շ. ՆԱՐԴՈՒՆԻ

Խմբագրին երկար բացակայութեան պատճառաւ, լոյս տեսած չեն ՀԱՅ – ԲՈՅԺի 1962 եւ 1963 տարիներու թիւերը:

Խմբագիրը, որ նոր վերադարձաւ Ամերիկայէն, գործի ձեռնարկած է արդէն: Ծրագրած է հրատարակել երկու բացա – ռիկ թիւեր, իւրաքանչիւրը 150 էջ: Առաջինը պիտի կրէ 1962 թուականը, երկրորդը՝ 1963 թուականը: Այս երկուքը մէկ տարի հաշուելով՝ անոնք որ վճա – րած են 1962, վճարած կ'ըլլան նաեւ 1963 տարին:

Այս ձեւով, խմբագիրը կը խորհի ՀԱՅ-ԲՈՅԺի հրատարակութիւնը ամբողջա – ցնել եւ կանոնաւորել մինչեւ յառաջիկայ տարի, եւ 1964 տարուան թիւերը լոյս ընծայել ամսէ ամիս՝ Յունուարէն սկսե – եալ:

Ամերիկայի նոր բաժանորդները եւս, որոնք վճարած են այս տարուան համար (1963), պիտի ստանան ՀԱՅ-ԲՈՅԺի 1962 եւ 1963 թիւերը:

Այն բաժանորդները, որոնք յետնեալ պարտք ունին, թող բարի ըլլան իրենց վճարումը հասցնել մինչեւ տարեվերջ: Հին պարտքերուն հետ՝ ներկայ տարին եւս վճարողներն են միայն, որ պիտի ստանան ՀԱՅ – ԲՈՅԺի բացառիկները, խմբագրուած բժշկական, գրական, պատմական, չատ հետաքրքրական եւ ճոխ բովանդակութեամբ, — արդէն տպագրութեան յանձնուած:

Այս առթիւ շնորհակալութիւն այն հաւատարիմ բաժանորդներուն, որոնք ՀԱՅ-ԲՈՅԺի հրատարակութիւնը ընդհատուած ըլլալով հանդերձ՝ խմբագրին բացակա – յութեան պատճառաւ, վճարումները կատարած են օրը օրին ի վկայութիւն ի – րենց բարեկամութեան եւ վստահու – թեան:

Կը խնդրուի Հայրենիք, Ասպարէզ, Արմենիա, Ազատ Օր, Յուսաբեր, Ազ – դակ, Այգ, Ալիք թերթերու խմբագրու – թիւններէն, ինչպէս և Սիոն, Հասկ, Հայ Կեդրոն, Կիլիկիա, Հայաստանեայց եկե – ղեցի պարբերականներէն, որ հրատարակեն այս յայտարարութիւնը գէթ 2 – 3 անգամ:

ՆՆԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Մարսէյլի մէջ Դաշնակցութեան Օրը կը տօնուի Հոկտեմբերի 5ին Սալոն Ալ – համպրա:

ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ

Կապոյտ Խաչի Վիէնի մասնաճիւղի տարեկան դաշտահանդէսը տեղի կ'ունենայ Սեպտեմբեր 1ին, առաւօտէն մինչեւ երեկոյ «Իւ-էս-Ա.»ի մարզադաշտին վրայ (Թանըրիին քով):

Գեղարուեստական ճոխ բաժին: Բանախօսութիւն, երգ, արտասանութիւն եւ հայկական պարեր:

Ճոխ պիւֆէ. աղանդերներ եւ չամփուրով խորոված:

Սիրով կը հրաւիրուի գաղութի հա – յութիւնը:

ՀԱՅ ԸՆԾԱՅԱՐԱՆ

Կը փնտռուի հայ տիկին մը Հաստա – տութեանս մէջ իբր խոհարարի օգնական: Մանրամասն տեղեկութիւններու համար դիմել գրաւոր կամ անձամբ՝

École Apostolique Arménienne
3, Av. de Grandchmp
LE PECQ (S. et O.) Tél. 963-01-72

Imprimerie Speciale
du Journal « Haratch »
32, Rue de Trévise, Paris (9e)

ՀՐԱՆՏ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

51, Rue Monsieur-le-Prince, PARIS - 6e — Chèque Postal : 1278-35

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՇԻՐՎԱՆԶԱԴԷ, Երկերի ժողովածու, 10 հատոր լաթակազմ	70 Ֆր.
ՍՏԵՓԱՆ ԶՕՐԵԱՆ, Երկերի ժողովածու, 7 հատոր, լաթակազմ	56 Ֆր.
ՍՏԵՓԱՆ ԶՕՐԵԱՆ, Պապ թագաւոր, լաթակազմ	10 Ֆր.
ՍՏԵՓԱՆ ԶՕՐԵԱՆ, Հայոց բերդը, լաթակազմ	8 Ֆր.
ՎԱՀԱՆ ՏԷՐԵԱՆ, Երկերի ժողովածու, 2 հատոր լաթակազմ	14 Ֆր.
ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՒԻԹ, մեծադիր, գունաւոր նկարներով, լաթակազմ	10 Ֆր.
Վ. ԱՆԱՆԵԱՆ, Հայաստանի կենդանական աշխարհը, Բ.	8 Ֆր.
ԱՐՍԷՆ ՏԷՐՏԷՐԵԱՆ, Երկեր (Արովեան Պռոշեան, Պարոնեան)	17 Ֆր.
ՄՈՒՐԱՑԱՆ, Պատմուածքներ, գունաւոր նկարներով	5 Ֆր.
ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑԻ մասին յիշողութիւններ. լաթակազմ	7.50 Ֆր.
ՄԻՔ. ՇԱԹԻՐԵԱՆ. Գարունը նորից եկաւ. 296 էջ.	5 Ֆր.
ԱԲԳԱՐԵԱՆ. Մատենադարան (անգլ.) 18 գունաւոր մանրանկարներ	3 Ֆր.
ՀԵՆՐԻԿ ԹՈՒՄԱՆԵԱՆ. Երգի ծնունդը. բանաստեղծութիւններ	3.85 Ֆր.
Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ. Տաղեր, 200 էջ. լաթակազմ	3.50 Ֆր.
ՍՈՎԵՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ. Ա. 800 էջ. լթկզմ.	16 Ֆր.
ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ, Անլռելի զանգակատուն, Պէյրութ, 1963	10 Ֆր.

Առաքման ծախքը գնողին վրայ

ԳՐԱՏՈՒՆՍ ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻՆ Է
ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՁԱՅՆԱԳՐԵԱԼ ԲՈԼՈՐ ԵՐԿԵՐՈՒՆ
ՃՈԽ ՄԹԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԵՒ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆՑ

ԼՈՅՍԸ ԳՈՅՆ Է.... ԳՈՅՆԸ ԼՈՅՍ Է
ՁԵՐ ՏԱՆԸ ԼՈՅՍ ՏՈՒԷ՛Ք.... ԹՈՄԼԱՔԻ ԳՈՅՆ ՏՈՒԷ՛Ք

Ձեր բնակարանը կը լուսաւորուի
Եթէ ներսը եւ դուրսը

ՎԵՐԱՆՈՐՈԳԷՔ – ԶԱՐԴԱՐԷՔ – ՆԵՐԿԷՔ

ԹՈՄԼԱՔ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐՈՎ

PEINTURES THOMLAC
16 bis, Bd. Sébastopol, Paris 4e
Tél. ARC 26-61 – Métro : Halles et Chatelet

136, RUE DES BOURGUIGNONS — ASNIERES - BOIS COLOMBES (Seine)
Tél : GRE. 09-47
11, BD. DE LA REPUBLIQUE — LA GARENNE (Seine)
Tél. : STA. 19-06

ԱՆՄՐՑԵԼԻ ԳԻՆԵՐՈՎ

Ամէնէն արդիական, նուրբ եւ ընտիր ճաշակով պատրաստուած՝ առաջնա – կարգ ներկեր: Բնական եւ արուեստական բազմերանգ գոյներու մեծ ընտրութիւն: Նորոյթ իւղաներկեր, պատի դեղեցիկ թուղթերու ճոխ ընտրութիւն: Գետնի համար՝ ամէն տեսակ — լինոլէոմ եւ փլասթիք — ծածկոցներ. —

Tapiflex — Tapisom — Carpette

Ձեր բնակարաններուն արտաքին եւ ներքին խնամքներուն համար անհրաժեշտ բոլոր նիւթերը:

Ամէն գնորդի կը նուիրուի յատուկ տետրակ մը, որու շնորհիւ կրնայ 10–30 առ հարիւր զեղչ ունենալ:

ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐ

52, RUE CHALON, PARIS 12e
64, BLD. DE BELLEVILLE, PARIS 20e
166, AV. ARISTIDE BRIAND PAVILLONS - SOUS-BOIS (Seine)
4 bis, RUE PAUL VAILLANT COUTURIER — ARGENTEUIL (S. et O.)
24, RUE PAUL VAILLANT-COUTURIER — ALFORTVILLE (Seine)
48 bis, RUE DALAVRAC — FONTENAY - SOUS - BOIS (Seine)

ՅԱՌԱՋ

Le PREMIER QUOTIDIEN ARMENIEN en EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction et Administration : 32, Rue de Trévise - PARIS-9e

Fondé en 1925 Téléph. : PRO. 86-60
R. C. Seine 57 A 2731 C. C. P. Paris 15069-82

ՕՐԱԹԵՐԹ
Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա՝ Տար. 50 Ֆ. Վեցամսեայ՝ 27 Ֆ.
Արտասահման՝ Տար. 60 Ֆ. Հատը 0.30 Ֆ.

ՀԻՆԳՇԱԲԹԻ
22
ՕԳՈՍՏՈՍ
JEUDI
22 AOUT
1963

LE NUMERO : 0,30 FR.

...ՏԱՐԻ — ԹԻՒ 9688 Fondateur : SCHAVARCH MISSAKIAN 39e ANNÉE — No 9688

ԿԱՐԵՒՈՐԸ ԳՈՐԾՆ Է

...ատներու, ինչպէս նաեւ հաւաքա–
...ութեանց համար, խօսքէն աւելի
...ն է կարեւորը:
...ելը յաճախ անպատասխանատու
...թիւն մըն է. մինչ գործելը
...նձնել պատասխանատուութիւն:
...կէ՝ վարանոտ կեցուածքը անոնց,
...ն կ'ուզեն կեանքի մէջ ձեռնարկով մը
...ի բանալ:
...քը ցեխեցիկ կամ ոչ, ծրագիր մըն
...ցանկութիւններու կամ թելադրու–
...ներու խուրձ մը զոր մարդ կը պար–
... իր շուրջիններուն, առանց պատաս–
...տուութիւնը ստանձնելու անոր ձա–
...նքին. մինչ գործը կ'ենթադրէ նիւ–
...կան եւ բարոյական ուժերու շահար–
...ում:
...ջին պարագային ենթական ոչինչ
...կ կորսնցնելիք, մինչ երկրորդ պա–
...յին, կրնայ ձեռքէ հանել տարինե–
... իր վաստակն ու համբաւը:
...քի ասպետներ են բոլոր անոնք, որ
... կ'ըլլան, ջոհողութեան կը հրաւի–
... ուրիշները, կուտան դասեր, բայց
... իրենք կ'ըլլան իրենց քարոզածնե–
... միջի հակառակը:
...թէ խօսքը միշտ ազդեցութիւն չի
...ներ, պատճառը այն է որ ճառողնե–
... կը պակսի իրենց ըսածը կեանքի
... իրականացնելու խիզախութիւնն ու
...քը:
...քը, ուրեմն, առանց կենդանի օրի–
..., դատապարտուած է մեռած տառ
...լու:
...րոնները մինչեւ տեղ մը կը քալեն
...ն անոնց, որ իրենց խօսքին համա–
... կախարդած են զիրենք:
...այ ատեն, որ անոնք կ'ուզեն տես–
... ուղիղ կամ սխալ՝ զիրենք սխրալի ե–
...ներու մօտ առաջնորդներու մօտ
...ութիւն եւ խոյանք: Երբ կը պակ–
... անոնք խօսողին մօտ, զանգուածնե–
... հաւատքը խախտի տեղի կուտայ հի–
...թափութեան:
...քը առանց գործի, կը դառնայ ան–
...էք:
...ումները չիրականացած խօսքերու
...ներ են:
...կուածին փնտռածը խոստում չէ,
... կենդանի գործ:
...է ըլլայ ան, բայց ըլլայ իրականու–
...ն:
...այ շօշափելի արարք, որմէ կրնայ
... շրջապատը:
...եցիկ ծրագիրները չէ որ յաղթա–
... ապահոված են դանոնք յղացողնե–
..., այլ կենդանի գործերը, որոնց կայ–
... պէտք է ըլլայ զոհողութիւնն ու
... գործողներուն:
...ւեստի, գիտութեան եւ մտաւորա–
... ամէն մարզերու մէջ մարմնաւոր
...գործութիւններ են որ արժէք կը
...յացնեն:
...ւեստագէտի մը պատրաստութիւնը
... անզամ անխուսելի, դեռ եւս տար–
... արժանի չնորհ մը չէ, երբ ան
...ելի գործով մը չի դրսեւեր հիա–
... շուրջիններուն:
... հանդէպ մեր յարգանքը պայմա–
... է իր տուած կենդանի եւ մը–
... ստեղծագործութիւններով: Նոյնն
... գիտունին:
...երեցէք հարցը ընկերային զոր–
...թեան որեւէ մարզի վրայ եւ ար–
... կամ արժէքչափը պիտի գործէ
... ձեւով: Անհատներու եւ մարմիննե–
... գործերով չենք կրնար ու–
... իրենց ներկայ անցեալին տեղ–
..., եթէ այդպիսին են անոնք:
... կ'ըսենք գործը աւելի կ'արժէ խօս–
... կ'ուզենք, որ ամէն վայրկեան
... մեզ պիտի չափեն մեր կատարած
... եւ կենդանի գործերով:

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ԽՐՈՒՇՉԵՒ ՊԵԼԿՐԱՏ ՀԱՍԱՒ

ՋԵՐՄ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ

Եօթներորդ հանդիպումն է վարչապետ Խրուշչեւի եւ մարեչալ Թիթոյի: Թնդանօթի 21 հարուածներ ողջունած են խորհրդային վարչապետը, որուն կ'ընկերանան իր ընտանիքին անդամները: Ցանուն Եուկոսլաւիոյ մարեչալ Թիթօ իր ուրախութիւնը յայտնեց որովհետեւ կըրնայ փոխադարձել այն ջերմ հիւրասիրութիւնը զոր վայելած էր ինը ամիս առաջ երբ Մոսկուա գացած էր:

Իր պատասխանին մէջ, Խրուշչեւ եուկոսլաւ ժողովուրդին փոխանձեց խորհրդային բանուորներուն ջերմ ողջոյնը:

Պելկրատի մէջ, չքախումբը խանդավառ ընդունելութիւն վայելած է ժողովուրդին կողմէ: Բոլորը կը գնահատեն Խրուշչեւի քաղաքականութիւնը սթալինեան վարչակարգի սեւ տարիներէն ետք: Ժողովուրդէն զատ, ղեկավարներն ալ նոյն համակրութիւնը ունին Խրուշչեւի հանդէպ, բայց կ'ըսուի թէ Խրուշչեւ պիտի չառաջարկէ Եուկոսլաւիոյ, որ անդամակցի Վարշաւայի Ուխտին, Արեւելեան Հասարակաց Շուկային (Քոմեքոն), ոչ ալ որեւէ ձեւով մաս կազմէ խորհրդային պլոքին:

Երկու ղեկավարները 10 օր ունին քաղաքական եւ միջազգային բոլոր հարցերը ծեծելու համար:

× Միացեալ Նահանգներու մէջ չատ սուր պայքար մը սկսած է Մոսկուայի հիւլէական դաշինքին դէմ: «Հ» ռումբին հայրը՝ Տոքթ. Թիլըր յայտարարեց որ զայն վաւերացնել պիտի նշանակէր մէկ քայլ ետ երթալ եւ ողբերգական սխալ մը պիտի ըլլար: Նոյն վերապահութիւնը կայ բանակին մէջ, բայց Քենըտի վճռապէս կը պատասխանէ բոլոր յարձակումներուն եւ կը պաշտպանէ դաշինքը:

ՊԱՊԻՆ ԿՈՉԸ
ԱՐԵՒԵԼԵԱՆ
ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՆ

Կոռթթա Ֆեռաթթայի Բիւզանդական Աբբայարանի մէջ, Պապը «տիեզերական ողջոյնները» ուղղեց բոլոր հաւատացեալներուն (Կաթողիկէ թէ Ուղղափառ) որոնք կ'ապրին արեւելք կամ արեւելեան Եւրոպա: Պօղոս Զ. չեշտեց պլխաւորա–

(Շար.ը կարդալ 4րդ էջ)

ԲԱՆԱԿՈՒՄ

ԵՌՈՒՋԵՌԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ

ՕԼՈՆ (Յառաջ). — Երկուշաբթի, Օգոստոս 12ին, բանակումի վարչութիւնը դրօսապտոյտ մը կազմակերպած էր դէպի Նուարմութիէ, յատկապէս տեղատուութեան եւ մակընթացութեան հետաքրքրական երեւոյթին ականատես դարձնելու համար բանակողները:

Առաւօտեան ժամը 8.30ին, մօտաւորապէս հարիւր հոգի երկու օթոքառներով ճամբայ ելան: Ճամբան, օթոքառները Սէն-Ժան-տը-Մոն եւ Ֆրոմանթէն ծովափնեայ գիւղաքաղաքներուն մէջ մէկական ժամ կանգ առին եւ ժամը երկուքէն առաջ խումբը հասաւ Նուարմութիէի հանդիպակաց ափը:

Ծովը մակընթացութեան մէջ էր ու Նուարմութիէ տանող ճամբան՝ ջուրին մէջ: Ճաշ: Ժամը երեք: Տեղատուութիւն: Անցք: Հոն երկու մասի բաժնուեցան տըղաքը, մէկ խումբը այցելեց 11րդ դարէն մնացած դղեակ մը, իսկ միւս խումբը ծով իջաւ: Վերադարձ ժամը 6ին, մակընթացութենէն քիչ մը առաջ, մակընթացութիւնը դիտելով: Զբօսաշրջիկ այս խումբը երեկոյեան ժամը 8.30ին բանակավայր հասաւ երգելով, ինչպէս առաւօտեան նոյն ժամուն, մեկնած էր երգելով:

ԵՐԵՔՇԱԲԹԻ

Երեքշաբթի վիճէր Տէսինի եւ Փարիզի խումբերուն միջեւ տեղի ունեցաւ մըրցումներու չարք մը, հետեւեալ կէտերուն չուրջ.—

1. Որոշ հեռաւորութեան մը վրայ հեծելանիւով առաւելագոյն թիւով անձեր փոխադրել:

2. Նոյն հեռաւորութիւնը հեծելանիւով կտրել ամէնէն դանդաղ ընթացքով:

3. Հեծելանիւի վրայ, երեք վայրկեանէն, առաւելագոյն թիւով կոլ նշանակել պասքէթի մէջ:

4. Խումբին կողմէ հնարուած երգ մը երգել:

5. Պարանաձգութիւն:

6. Հայոց պատմութենէն առնուած երկուական հարցում իւրաքանչիւր խումբին:

7. Բարակ կոճղի մը վրայ հաւասարակշռութիւնը պահելով հագուստը հագնելու փորձ:

Եօթը կէտերէ բաղկացած այս յայտագիրը գործադրուեցաւ խիստ բծախնդրութեամբ, ստեղծելով զուարթ աշխուժութիւն մը բանակողներուն մէջ:

Այս մրցաշարքին մէջ Տէսինի խումբը յաղթեց Փարիզի խումբին 1–0 արդիւնքով:

ՀԻՆԳՇԱԲԹԻ

Այս տարի բանակավայրը հայաշատ կեդրոններէ հեռու գտնուելուն պատճառով՝ Նոր Սերունդին Փառատօնը փոխանակ հրապարակային ձեւով մը կատարելու, տօնեցինք ներքին հանդէսով մը: Այդ օրը մեր մէջ կը գտնուէին ընկ. Հ. Սամուէլ, Նոր Սերունդի Կեդր. Վարչութեան երկու անդամները եւ քանի մը ուրիշ բարեկամ հիւրեր, ամէնքն ալ իրենց ընտանիքներով:

Որոշուած էր ճաշը ընել քովընտի բակին մէջ, ուր բանակողներուն հրամցուեցաւ աւանդական չամփուրով խորովածը, պատրաստուած՝ Տէսինի խումբին կողմէ: Այս առիթով բանակումին ընդհանուր վարիչը, ընկ. Ն. Նիկողոսեան, քանի մը խօսք ուղղեց տղոց եւ ներկայացնելէ ետք հիւրերը՝ հրաւիրեց ընկ. Հ. Սամուէլը, որ իր խօսքը ըսէ:

— Հին սերունդը, կեանքի բնական օրէնքով, կը բաժնուի կեանքէն, ըսաւ ընկեր Սամուէլ, ձեզի կտակելով երկու բան. չահուած հսկայ հարստութիւն մը նախ յեղափոխական ու գրական մարզերուն մէջ, յետոյ պարտք մը՝ «Ի խնդիր մեր սրբազան Դատին»:

Երեկոյեան, սրահին մէջ հաւաքուելով, տղաքը չարունակեցին Փառատօնին գեղարուեստական բաժինը, գործադրելով զուտ հայկական յայտագիր մը:

ԿԻՐԱԿԻ

Օլոնի տեղական խումբին եւ Նոր Սերնդականներու միջեւ կազմակերպուած էր ֆութպոլի մրցում մը, որ տեղի ունեցաւ կիրակի (Օգոստոս 18) կէսօրէ առաջ, Օլոնի քաղաքապետարանի դաշտին վրայ: Մրցումին ներկայ էին բոլոր բանակողները, թիւով երկու հարիւր տասը հոգի: Խաղին սկիզբէն մեր տղաքը տիրապետեցին դաշտին եւ եօթներորդ վայրկեանին նշանակեցին առաջին կէտը: Տասը վայրկեան ետք կէտ մը եւս: Երկրորդ կիսախաղին Նոր Սերնդականները նորէն յարձակողականի անցան եւ ետեւէ ետեւ չորս կէտ եւս չահեցան: Խաղը վերջացաւ 6–2 արդիւնքով:

×

Բանակումի դաստիարակչական բաժինը կը չարունակուի իր առաջին թափով: Հայերէնի դասերը կը դասաւանդուին ամէն օր կանոնաւորաբար, իսկ դասախօսութիւնները տեղի կ'ունենան երկու օրը անգամ մը, առանց բացառութեան:

Անցեալ չաբթուան ընթացքին ունեցանք դասախօսական երեք հանդիպում: Առաջին դասախօսութիւնը կը վերաբերէր մեր ժողովուրդին հետ կապուած պատմական, գրական եւ յեղափոխական նշանակալից թուականներուն, երկրորդը նիւթ ունէր Հայոց լեզուն, անոր կտրած ճամբան պատմութեան մէջ ու պատմական իմաստը, իսկ երրորդը վիճաբանութեան դրուած այժմէական խնդիր մըն էր, — Կ'արժէ՞ Հայ մնալ:

Հետաքրքրական պիտի ըլլար այս առիթով յայտնած Նոր Սերնդականներուն կարծիքները եւ իրենց տուած ամուր պատճառաբանութիւնները քով քովի բերել, բայց ատիկա առանձին նիւթ մըն է եւ տեղեկատու այս տողերուն սահմանէն դուրս կ'իյնայ: Կարեւորը այն է, որ մեր տղաքը ապրումով միայն Հայ չեն, այլ եւ մտածումով գիտեն հաստատել իրենց Հայ ծնած ըլլալու հպարտութիւնը: Այս եզրակացութեան եկան վիճաբանութեան ներկաները:

ԲԱՆԱԿՈՂ

Անցեալին եթէ լաւ գործեր տեսեր ու կատարեր ենք, իսկ այսօր կը բաւականանանք միայն անպատասխանատու խոստումներ եւ կոչեր ընելով, կը նշանակէ դադրեր ենք այլեւս գործնական քայլեր առնելէ: Մեռած է մեր մէջ երբեմնի խիզախութիւնն ու հաւատքը:

Կարճ. մարդոցմէ սպասուածը կենդանի եւ շինարար գործ է:

Ան որ կամք ունի եւ հաւատք, գործելէ չի վախնար:

Կը ստանձնէ ըրածին պատասխանատուութիւնը ու կ'իջնէ ասպարէզ:

Ստեղծագործելու կամք ունեցող բոլոր մեծութիւնները ընթացեր են այս ուղիով: Անոնք, երբ պահանջը զգացեր են հանրօգուտ կամ ազգօգուտ գործի մը, նետուեր են հրապարակ:

Թերինե՞ր եղած են իրենց գործին մէջ, տուածնին եղած է պակասաւո՞ր, — կրնայ ըլլալ, բայց ըրած են վերջապէս բան մը որ խօսքէն միշտ աւելի կ'արժէ:

Հիւանդին եւ անօթիին խնդրածը խօսք ու խրատ չէ, այլ դեղ ու պատառ մը հաց:

Այս մէկն է որ կը մոռցուի յաճախ անոնց կողմէ, որ հանրութիւնը կը փորձեն կշտացնել խօսքերով ու խոստումներով, մինչ աւելի լաւ պիտի ընէին, եթէ շօշափելի գործերով աշխատէին օգտակար ըլլալ իրենց չուրջիններուն:

Եղաւ ժամանակ, մեր ընդյատակեայ յեղափոխութեան շրջանին, ուր նուիրեալներ այնքան գործեցին, որ խօսիլը գրեթէ մոռցած էին:

Գործի տենդոտ այդ շրջանին է որ մենք ունեցանք հերոսներ եւ տուինք կրակի ճամբէն անցնող մեծութիւններ:

Այժմ կ'ապրինք տեղատուութեան օրեր, ուր կը տիրէ խօսքի ասպետներուն ժխորը եւ մատի վրայ կը համրուին լըռութեան մէջ երկունքի նստող իրական մեծութիւններ:

Գտնելու համար մեր որդեգրելիք ուղիղ ճանապարհը՝ դէպի հին օրերը յետդարձ մը կը դառնայ պահանջ:

Այդպէս է որ պիտի բիւրեղանայ մեր կեանքը եւ ճաճանչէ:

Գործ, գործ եւ միշտ գործ. ահա կարեւորը, ահա հրամայականը, որուն այնքան պէտք ունինք այսօր ամէն մարզի վրայ:

«ԱՐՄԵՆԻԱ»

ԿԻԼԻԿԵԱՆ ՅՈՒՇԵՐ

ԱՏԱՆԱ (ՀԱՅԱՍՏԱՆ)

Կիլիկիոյ գրաւման ժամանակ ֆրանսական օրաթերթ մը՝ «Պոնսուար»՝ 1920 Հոկտեմբեր 9ին հրատարակեց Ժան Փիօ ստորագրութեամբ երկար յօդուած մը այս խորագրով՝ «Մեր քաղաքականութիւնը Արեւելքի մէջ.— Ֆրանսացի Գնդապետի մը գործառումները Կիլիկիոյ մէջ»:

Հեղինակը կը գրէր թէ Կիլիկիայէն յոյժ հետաքրքրաշարժ նամակ մըն էր ստացած՝ լաւատեղեակ թղթակիցէ մը, որ կը պարզէր թէ ֆրանսական քաղաքականութիւնը տեղական ժողովուրդներու ոչ համակրութիւնը եւ ոչ յարգանքը շահելու ուղղութիւն ընտրած էր:

Կը մէջբերենք կարեւոր հատուածները.

« Ատանայի մէջ, Կիլիկիոյ մայրաքաղաքը, կը գրէր «Պոնսուար», գոյութիւն ունէր ճշմարիտ բռնակալ մը, Գնդապետ Պ... (1): Տխմար քաղաքականութիւն մը բռնաւ, Հայկական Լեգէոնին Հայոց ըսպաննել տալով մահմետականները, թոյլ տալով որ այս վերջիններուն ինչքերը յանիրաւի յափշտակուին, առանց պատճառի նպաստաւորելով Ատանայի Հայ Պատրիարքը, եւայլն»:

« Մէկ տարի շարունակ Ատանայի մէջ չգործադրուեցան ոչ ֆրանսական օրէնքը, ոչ ալ թրքականը: Պարոն Պ...ի կամքը օրէնքի զօրութիւն ունէր: Այդ քաղաքականութիւնը մեզի բերաւ է՛ւ Հայ է՛ւ Թուրք բնակչութեան ատելութիւնը: Երեք կամ չորս հազար ֆրանսացի զինուորներու մահուան պատճառ եղաւ Կիլիկիոյ եւ Հիւսիսային Սուրիոյ մէջ»:

Քաղաքականութենէն ետք, յօդուածագիրը կը խօսի Գնդապետին անձնական արբելակերպին վրայ, առանց խնայելու անոր կինը եւ պատանի աղջիկը:

Իբր թէ արժանահաւատ երկրորդ թղթակիցի մը նամակէն քաղելով, կը գրէ.—

« Ատանայի նահանգին մէջ հանրային կարծիքը կ՚ամբաստանէ Գնդապետ Պ..., թէ Հայերէն խոշոր գումարներ ստացած է: Նոյնպէս թէ որոշ թիւով Թուրքեր իրեն մեծամեծ փրկագիններ վճարած են: Օրինակ՝ Սուպհի փաշա, Ատանայի Թուրք երեւելի մը, ստիպուեցաւ իր քսակը բանալ: Օսման էֆէնտի, հրետագօրայ տեղակալ, մահուան դատապարտուեցաւ իբրեւ լրտես (զինադադարէն տասը ամիս վերջ) եւ հազիւ ազատեցաւ 7000 ոսկի վճարելով: Այսուհանդերձ, այդ փրկագինի վճարումէն անմիջապէս ետքը, իր ամբողջ ընտանիքը կոտորուեցաւ՝ ֆրանսական զինուորի հագուստ կրող Հայերու կողմէ:

« Բոլոր Թուրքերը, որոնք Հայերու ցուցմամբ զինուորական գրաւման համար վտանգաւոր կամ տեղահանութեան մասնակից կը նկատուէին, մահուան ենթարկուեցան առանց որեւէ ուրիշ դատական ձեւակերպութեան: 15.000է աւելի է մահմետականներու թիւը, որոնք դատապարտուեցան, սպաննուեցան կամ ջարդուեցան հայկական հրոսախումբերու ձեռքով, որոնք Գնդապետ Պ.ի հրամանին տակ կը գտնուէին:

« Անոնց փոխարէն վիլայէթին մէջ հաստատուեցան աւելի քան 50.000 կամ 60.000 Հայեր, որոնք կանխաւ որեւէ կապ չունէին այդ նահանգին հետ »:

« Թուրքերը կը յուսան թէ Պ. Միլըրանի կառավարութիւնը որ, ըստ երեւոյթին, կը փափաքի կատարուած սխալները ուղղել եւ Թուրքիոյ հետ վերահաստատել Ֆրանսայի աւանդական յարաբերութիւնները, պիտի չգոհանայ պաշտօնանկ ընելով Գնդապետ Պ...ն, որ բոլորովին փճացուց Ֆրանսայի բարոյական հմայքը Կիլիկիոյ մահմետականներու միջեւ » (2):

Երբ «Պոնսուար»ի այդ յօդուածը Ատանա իմացուեցաւ, նախկին Լեգէոնականներու Ատանայի Նորակազմ Միութիւնը Փարիզ ուղղեց հետեւեալ հեռագիրը Պատերազմական Նախարարին.—

1921 Յունուար 1

« Զօրարձակուած Լեգէոնականներ խորապէս յուզուած Հայկական Լեգէոնի դէմ հրատարակուած զրպարտութիւններէն Փարիզի «Պոնսուար» օրագրի խմբագրականին մէջ, 9 Հոկտեմբեր 1920 թուականին, յարգանօք կը խնդրեն որ դատի ենթարկել տալ պատասխանատու հեղինակները 1881 Յուլիս 29ի օրէնքին 30 եւ 47 յօդուածներու հիման վրայ: — Բարեկամական Միութիւն Հայկական Լեգէոնի նախկին լեգէոնականներու »:

Մօտ երեք ամիս հեռագիրը անպատասխան մնաց: Միութիւնը՝ 1921 Ապրիլ 28ին նամակով խնդրեց Նախարարէն, որ իմացնէր թէ ի՛նչ արդիւնք ունեցած էր իր բողոքը:

Նախարարը, Յուլիս 30 թուակիր նամակով մը յայտնեց թէ օրագրին հրատարակումէն ի վեր աւելի քան երեք ամիս անցած ըլլալով, խնդիրը իրաւազուրկ դարձած էր: Նախարարի պատասխանի հասցէն շարադրուած էր այսպէս.— Տիար Նախագահ, Հայ Նախկին Լեգէոնականներու Բարեկամական Միութեան, ԱՏԱՆԱ (ՀԱՅԱՍՏԱՆ):

Հեռաւոր սուրբը կրնայ կարճատես ըլլալ...:

Վ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

1) Իմա՛ Պռեմոն:

2) Աւելորդ է ըսել թէ «Պոնսուար»ի պատուածքները շինծու սուտեր են: Դժուար չէ անոնց աղբիւրը գուշակել: Տեսնել «Լա Փասիոն տը լա Սիլիսի», Փարիզ 1937, էջ 222 (–): Ընթերցողը գիտէ թէ Գնդապետ Պռեմոն ոչ միայն պաշտօնընկէց չեղաւ, այլ զօրավարի աստիճան ըստացաւ: — Վ. Փ.

ՊԵՂՈՒՄՆԵՐԸ ՈՂՋԱԲԵՐԴԻ ՄԷՋ

Քրիստոնէութիւնը պաշտօնապէս ճանչցուեցաւ Հայաստանի մէջ, չորրորդ դարու սկիզբը: Այս հանգամանքը երկրին շինարարներուն առջեւ, եկեղեցիներու շինութեան ասպարէզի նոր խնդիրներ դրաւ: Սկիզբի շրջանին քրիստոնէական ժամերգութեան համար կրնային օգտագործել համատարած աւերներէն ետք անվնաս մնացած հեթանոսական տաճարները: Բայց, ի հարկէ, ատիկա ժամանակաւոր միջոց էր եւ շուտով սկսան եկեղեցական յատուկ շէնքեր շինել:

Մինչեւ վերջերս հայկական ճարտարապետութիւնը ուսումնասիրողները կը կարծէին թէ առաջին եկեղեցիները կը ներկայացնէին կամ պզտիկ երկարաւուն սրահներ՝ արեւելեան մասին մէջ ունեցած զոհասեղանով կամ այսպէս կոչուած պազիլիքներ, որոնց ներսի տարածութիւնը քառասիւներու երկու շարքով բաժնուած էր երեք երկայնական նաւու: Անոնք գմբէթներ չունէին եւ ծածկուած էին փայտով կամ պարզ գլանաձեւ կամարներով: Սակայն, ինչպէս ցոյց տուին Ողջաբերդի մէջ մեր կատարած պեղումները (1960–1961), հայ ճարտարապետները միաժամանակ կ՚աշխատէին իրականացնել գաղափարը աւելի յիշատակարանային ձեւի եկեղեցիի, որ պսակուած ըլլար գմբէթով: Եւ ատիկա հասկնալի է, չէ՞ որ իրենց հայրենի երկրին մէջ, իւրաքանչիւր գիւղակի տուներու տանիքները կը յիշեցնէին գմբէթը: Անոնք կարծես գերաններով կառուցուած «վրան» ըլլային, որու կեդրոնը բացուած էր երդիքը:

Բոլոր հետազօտողները մեծ հետաքրքրութիւն ցոյց տուած են հայկական ճարտարապետութեան մէջ գմբէթային յօրինուածքներու ծագումին եւ զարգացման հարցին, նկատելով որ անոնց հիմը քառակուսի յատակագիծ ունեցող շէնքն է, որ կը պսակուի գմբէթով: Մինչեւ Ողջաբերդի պեղումները՝ Հայաստանի մէջ ո՛չ աշխարհիկ ճարտարապետութեան ո՛չ ալ վաղ քրիստոնէական ժամանակաշրջանին՝ գտնուած չէին նման պարզագոյն ձեւի գմբէթաւոր շէնքեր եւ գիտնականներուն կը մնար գոհանալ ենթադրութիւններով: Միջնադարեան հայ ճարտարապետութեան պատմութեան մէջ այդ պակսող օղակը գտնուած է այժմ:

Ողջաբերդ գիւղը կը գտնուի Գառնիի խճուղիին վրայ, Երեւանէն մօտաւորապէս 17 քիլոմեթր հեռու: Այդ բլուրէն դէպի արեւմուտք, որու վրայ կը գտնուի գիւղը, ընկուզենիի ծառաստանէն դէպի վար ինկած վարելահողին բնակիչները 1960ին մեզի ցոյց տուին պատ կազմած քանի մը խոշոր, լաւ յղկուած քարեր, որոնք կարծել կու տային թէ գետնին տակ պահուած են հինաւուրց շէնքի աւերակներ: Մոմերու հետքերը զորս հաւատացեալները փակցուցած էին քարերուն, կը վկայէին թէ այստեղ եկեղեցի գոյութիւն ունեցած է:

Մեր առաջարկին վրայ, Հայկ. Խորհ. Հանրապետութեան գիտութիւններու կաճառի հնագիտութեան եւ ազգագրութեան հաստատութեան ձեռնարկած պեղումները մէջտեղ հանեցին պզտիկ եկեղեցիի մը փլատակները: Այս հնութիւնը կը ներկայացնէր ուղիղ քառակուսի մը, որու կողմնակի երկարութիւնը 4,08 մեթր է: Զոհասեղանը (կիսակլոր, ինչպէս ընդհանրապէս), կը գտնուի արեւելեան կողմը:

Պատերու հիմերը դուրսէն զանգուածեղ երեք աստիճաններ կը կազմեն. բացառութիւն կը կազմէ զոհասեղանը. այստեղ, հողը բարձր ըլլալուն պատճառով, երկու աստիճան կայ միայն: Ճարտարապետական բնոյթով — դուրս ցցուող կոզակ (ապսիտ), պատերու աստիճանաւոր հիմերը — յայտնաբերուած եկեղեցին շատ նման է 1958 թուականին յիշեալ վայրին մօտերը՝ Զուէժի գերեզմանատան մէջ մեր պեղած եկեղեցիին, որ հիմ կու տար կարծելու թէ երկու յուշարձաններն ալ կառուցուած են միաժամանակ (Ե. դարու): Սակայն, ի տարբերութիւն Զուէժի եկեղեցւոյ եւ առհասարակ վաղ շրջանի եկեղեցիներու, որոնք նման են արեւմուտքէ արեւելք ձգուած սրահի, Ողջաբերդի եկեղեցին քառակուսի յատակագիծ ունի: Այդ կը նշանակէ, որ կառուցուածքը պսակուած է եղած գմբէթով: Բայց առաջին տարուան աշխատանքներէն ետք այդ առթիւ լոկ ենթադրութիւններ կարելի էր հանել, քանի որ կամարներու ոչ մէկ քար չէր գտնուած:

1961 թուականին պեղումները շարունակուեցան շէնքի շուրջը եւ լիովին հաստատեցին գմբէթի վերաբերեալ ենթադրութիւնները: Գտնուեցան երկու ոչ մեծ քարեր, որոնք ունէին կիսակոնաձեւ փորակներ, այսպէս կոչուած կամարափողեր (թրոմփ): Ճիշդ նման կամարափողեր կը դրուէին քառակուսիի անկիւններուն՝ որպէս անցում «թմբուկին», որու վրայ կը հանգչէր գմբէթը: Սակայն կամարափողերու ոչ մեծ չափերը թոյլ չեն տար աւարտել շէնքը ճիշդ կիսագունդի ներքին մակերեսով եւ կառուցողը [illegible] լուծում գործադրեց: Մեր կարծիքով [illegible] եկեղեցին աւարտեց փակ կամարով կամարափողերու վրայ հատուած անկիւններով: Այդ ոչ թմբուկային գմբէթ [illegible]նեցող եկեղեցին՝ Հայաստանի առաջին [illegible] դէպքն է, որ կը վերաբերի շատ [illegible] ժամանակներու (դուցէ Դ. դարու): Արդէն Զ. դարուն, եկեղեցական բոլոր գմբէթաւոր շէնքերը ունէին միանգամայն [illegible]

ՀԱՄԱՅՆԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԴԵՐԸ

ՌՈՒՍԵԻԹՈՒՐՔ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆՑ ՄԷՋ

1919–1922

4.— Ազգութիւններու եւ գաղութներու հարցերուն մէջ, Համայնավար Միջազգայինի ընդհանուր քաղաքականութեան հիմ պէտք է առնել բոլոր ազգերու եւ բոլոր երկիրներու պրոլետարներուն եւ աշխատաւոր զանգուածներուն միութիւնը՝ ի տես մեծ հողատէրերու եւ բուրժուազիայի անկման համար մղուած հասարակաց յեղափոխութեան:

.

12.— Բոլոր երկիրներու մէջ, Համայնավար պրոլետարիատը, իր դասակարգին գիտակցութիւնը ունենալով, ստիպուած է մասնաւոր նախազգուշութիւններ ձեռք առնել ազգային զգացումներու հանդէպ, որոնք ապաժամ դարձած են, բայց եւ այնպէս պէտք է կարգ մը զիջումներ ընել՝ աւելի շուտ չէզոքացնելու համար այս նախապաշարումները:

Պաքուի մէջ գումարուած Արեւելեան Ժողովուրդներու Համագումարին, Զինովիեւ հետեւեալը յայտարարեց 1920 Սեպտեմբեր 1ի բացման նիստին (1).—

« Համբերատարութեամբ թիկունք կը կանգնինք այն խմբակցութեանց, որոնք տակաւին մեզի հետ չեն եւ որոնք, նոյնիսկ որոշ պարագաներու մէջ, մեզի դէմ են: Պարագան այս է, զոր օրինակ, Թուրքիոյ պարագան, ուր, ինչպէս ձեզի յայտնի է, ընկերներ, խորհրդային կառավարութիւնը իր աջակցութիւնը կու տայ Քէմալ փաշային: Մտքէ չենք հաներ, որ անոր ղեկավարած շարժումը համայնավար շարժում մը չէ: Գիտենք այդ...: Սակայն մեր պարտականութիւնն է ըսել այս համագումարին.— « Քէմալ փաշայի կառավարութիւնը, Թուրքիոյ մէջ, թիկունք կանգնած է սուլթանին իշխանութեան. այդ պէտք չէ ընէք... Պէտք է ժամանակը կանխէք եւ թոյլ չտաք որ ձեզ տանին դէպի անցեալը... Ձեզի կ՚իյնայ քանդել սուլթանին հանդէպ հաւատքը եւ կառուցանել իսկական սովետներ: Ռուս գիւղացիներն ալ մեծ վստահութիւն ունէին ցարին վրայ: Բայց այս հաւատքը անհետ կորսուեցաւ երբ պայթեցաւ ժողովրդական իսկական յեղափոխութիւնը: Թուրքիա եւ ամբողջ Արեւելքի մէջ միեւնոյն բանը պիտի պատահի, երբ սկսի գիւղացիական իսկական յեղափոխութիւնը: Այն ժամանակ, ժողովուրդները շուտով պիտի կորսնցնեն իրենց տէրերուն հանդէպ ունեցած իրենց հաւատքը»: Հետեւաբար, կը կրկնենք՝ Թուրքիոյ ժողովրդական կառավարութեան քաղաքականութիւնը համայնավար Միջազգայինի քաղաքականութիւնը չէ: Մեր քաղաքականութիւնը չէ: Այսուհանդերձ, կը յայտարարենք, թէ պատրաստ ենք օժանդակելու բրիտանական կառավարութեան դէմ ուղղուած որեւէ յեղափոխական պայքարի»:

Խե՛ղճ Զինովիեւ, տասնըվեց տարի ետք Սթալինի կողմէ մաքրագործուա՛ծ: Չէր գիտեր թէ Մուսթաֆա Քէմալ շատ հեռու էր «սուլթանի իշխանութեան թիկունք կանգնելէ», բայց այդ շրջանին ստիպուած էր զգուշութեամբ մօտենալ հարցին, տրուած ըլլալով Թուրք գիւղացիին ծայր աստիճան պահպանողական դիրքը:

Էնվէր փաշայի եւ Ազգ. Մեծ Ժողովի անպաշտօն ներկայացուցիչ Իպրահիմ Թալի պէյի յայտարարութեանց ընթերցումը լսելէ ետք, համագումարը քուէարկեց հետեւեալ բանաձեւը (2).—

« 1.— Համագումարը իր համակրանքը կը յայտնէ համաշխարհային աշխարհակալութեան եւ ի մասնաւորի՝ Արեւելքի ժողովուրդները ճնշող ու շահագործող անգլօֆրանսական աշխարհակալութեան յելուզակներուն դէմ պայքարող բոլո՛ր Թուրք մարտիկներուն...

2.— Համագումարը կը հաստատէ սակայն, որ Թուրքիոյ մէջ ազգային–յեղափոխական շարժումը ուղղուած է միայն օտար բռնաբարողներուն դէմ եւ թէ անոր յաջողութիւնը պիտի չնշանակէր գիւղացիներուն եւ բանուորներուն ազատագրութիւնը բռնատիրումէն եւ առհասարակ շահագործումէն...:

3.— Համագումարը կը խորհի թէ անհրաժեշտ է շատ մեծ շրջահայեցութիւն ցոյց տալ այս շարժման ղեկավարներուն հանդէպ... Թուրքիոյ եւ ամբողջ Արեւելքի աշխատաւոր զանգուածները հրաւիրելով հանդերձ, որ ուժ տան ազգային յեղափոխական շարժման, Համագումարը խորհուրդ կու տայ Թուրք բանուորներուն եւ գիւղացիներուն, որ խմբուին անկախ կազմակերպութեանց մէջ, պատրաստ գտնուին մինչեւ վերջ հետապնդելու ազատագրութեան գործը շարունակելու եւ ոչ մէկ պարագայի թոյլ չտան որ [illegible] տար աշխարհակալները օգտուին երկրին ունեւորներուն, հարուստ գիւղացիներուն, բիւրոկրատներուն եւ զօրավարներուն (փաշաներ, տէրէպէյիներ, եւայլն) հետ ունեցած իրենց յարաբերութիւններէն եւ անոնց վրայ ունեցած [illegible] ազդեցութենէն: Այս գնով՝ Թուրքիոյ աշխատաւոր ժողովուրդը կրնայ ազատիլ բոլոր բռնաբարողներէն ու շահագործողներէն. այս գնով է միայն, որ հողը, գործարանները, հանքերը եւ ընդհանուր առմամբ՝ երկրին բոլոր հարստութիւնները պիտի օգտագործուին ի շահ աշխատաւորներուն եւ միա՛յն աշխատաւորներուն »:

(Շար. – 8)

1) Լը Փրըմիէ Քոնկրէ տէ փէօփլը տը լ՚Օրիան, Պետրոգրատ, 1920, էջ [illegible]

2) Անդ, էջ 112–113:

ՀԱՅԵՐԸ ՄԱՌԱԹՈՆԻ ՃԱՄԲԱՐԻՆ ՄԷՋ

ԱԹԷՆՔ (Յառաջ). — Քանի օրերը անցան, միջազգային ճամբարը աւելի խանդավառ մթնոլորտի մը մէջ էր:

Հայկական բանակավայրը շատ լաւ տպաւորութիւն մը թողուց բոլոր այցելողներուն վրայ: Ամէն օր տասնեակներով Հայ հայրենակիցներ այցելեցին Հայկական բանակավայրը, բոլորն ալ հպարտ եւ ուրախ:

Կիրակի, Օգոստոս 4ին Հայկական բանակավայրին մէջ տեղի ունեցաւ պարահանդէս մը, մեր տղաքը իրենց հայկական պարերով մեծ յաջողութիւն ունեցան: Օգոստոս 11ին Հայկական բանակավայրին մէջ տեղի ունեցաւ եկեղեցական արարողութիւն մը, որ կատարեց Յունաստանի առաջնորդ Սահակ եպ. Այվազեան: Առաջնորդը նոյնպէս քանիցս այցելեց Հայկական բանակավայրը, ներկայ եղաւ նաեւ բանակումի կրակին:

Այս բոլոր հաւաքոյթներուն կը մասնակցէին նաեւ Լիբանանի, Սուրիոյ եւ Կիպրոսի խումբերուն հայ սկաուտները: Բոլոր հայ սկաուտները ստեղծեցին շատ սիրալիր եւ եղբայրական մթնոլորտ մը:

Հինգշաբթի երեկոյ տեղի ունեցաւ բանակումի մեծ կրակը, որուն ներկայ եղան հարիւրաւոր Հայեր Աթէնքէն եւ շրջաններէն: Ներկայ էին ճամբարին բանակումի պետերը, Սահակ եպիսկոպոս եւ բազմաթիւ անձնաւորութիւններ:

Խօսեցաւ Հայ Արիներու ընդհ. պետ Տոքթ. Գուրգէն Մեծատուրեան, շեշտելով անգամ մը եւս այն բացառիկ դերը, զոր կը կատարեն Հայ Արիները, մասնակցելով իրր ազգութիւն միջազգային ճամբարին:

Բանակումի կրակին պարեցին եւ երգեցին Լիբանանի եւ Սուրիոյ հայ սկաուտները: Հայ Արիներու պատուիրակութեան միացան նաեւ Միութեան Մարսէյլի մասնաճիւղին հինգ Արիները եւ երեք Գայլիկ խմբապետուհիներ, ինչպէս նաեւ Եգիպտոսէն Հայ Արի մը, 25 Հայ Արիներ Ֆրանսայէն լաւ խումբ մը կազմեցին ճամբարին մէջ:

Հայկական բանակավայրը այցելեց նաեւ գահաժառանգ իշխան Քոնսթանթին, որ մէկիկ մէկիկ այցելեց հայկական վրանները, խոհանոցը եւ շնորհաւորեց Հայ Արիները իրենց գործունէութեան համար:

Յունաստանի Թագաւորը իր պալատին մէջ ընդունեցաւ 86 մասնակցող ազգերու ընդհանուր պետերը, որոնց կարգին հայ Արիներու Միութեան ընդհ. պետ՝ Գ. Մեծատուրեան: Ամէն ազգէ մէկ սկաուտ հիւր եղաւ Թագաւորին, Հայերուն կողմէ ներկայ էր 13 տարեկան սկաուտ՝ Ժիրայր Աւագեան:

Ճամբարը մեծ խանդավառութիւն ստեղծեց հայկական գաղութին մէջ. բոլորն ալ հպարտ են Հայ Արիներու մասնակցութեան համար, ոչ մէկ բարեկամական ցոյց պակսեցաւ: Ճամբարը վերջացաւ Օգոստոս 11ին: Հայ Արիները մեկնեցան Աթէնք, ուր պիտի մնան 10 օր հայկական գպրոցը, պիտի ունենան զանազան հանդէսներ եւ պտոյտներ, իբրեւ հիւրեր Աթէնքի հայկական գաղութին: Երեք պետերու պատուիրակութիւն մը մեկնեցաւ Հռոդոս կղզին, մասնակցելու համաշխարհային սկաուտական ԺԹ. համաժողովին (Օգոստոս 12–18), որուն կը մասնակցին 86 ազգեր: Այս Համագումարին տրուած որոշումներուն հիման վրայ, յաջորդ ընդհանուր ժողովը՝ Ի. Համագումարը տեղի պիտի ունենայ Մեքսիկա, 1965ին, եւ ԺԲ. Ճէմպորին, 1967ին, Միացեալ Նահանգներու մէջ:

Մառաթոնի ճամբարը վերջացաւ մեծ յաջողութեամբ: Միջազգային այս գեղեցիկ եղբայրական մթնոլորտին մէջ 14 հազար սկաուտներու հետ Հայ Արիները անգամ մը եւս արժեցուցին իրենց վրայ դրուած վստահութիւնը:

ՀԱՅ ԱՐԻ

գրգռած «Թմբուկ»:

Առաջին նայուածքով կրնայ անսովոր թուիլ գմբէթի տանիքին կլորաւուն ձեւը, բայց այդ կը բացատրուի անով, որ այստեղ օգտագործուած է կղմինտր, որու բեկորները գտնուած են պեղումներու ատեն: Գմբէթներու սրածայր գագաթները երեւան եկան միայն այն ատեն, երբ կղմինտրին փոխարինեցին քարասալերը:

Դժբախտաբար, մէջտեղ չեն եկած ճարտարապետական այն տեսակ մանրամասնութիւններ, ինչպէս են քիւը եւ պատուհաններու շրջաքարերը, որոնք հնարաւորութիւն կուտան դատելու կառուցուածքի գեղարուեստական արժանիքներու մասին եւ անհրաժեշտ են ժամանակաշրջանը որոշելու համար: Շքամուտքի մօտ գտնուած սիւնախարիսխին բեկորը հին ուրուագիծ ունի, զոր կարելի է բացատրել Գառնիի յայտնի տաճարի մերձաւորութեամբ:

Եւ այսպէս, Ողջաբերդ կատարուած պեղումներու արդիւնքները հաստատեցին հետազօտողներու ենթադրութիւնները Հայաստանի գմբէթային կառուցուածքներու նախասկզբնական ձեւերու մասին: Այս իրողութիւնը գիտական առանձնայատուկ արժէք կուտայ Ողջաբերդի ճարտարապետական համեստ յուշարձանին:

Ն. ՏՈՆԱՐՍԿԻ

ԳԱՂՈՒԹԷ ԳԱՂՈՒԹ

ՀԱՅ ԳՐԱԳԻՏՈՒՀԻ ՄԸ ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԷՋ

ԱՐԺԱՆԹԻՆԻ եւ Լատին Ամերիկայի գրական – գեղարուեստական շրջանակներուն մէջ համբաւաւոր Տիկին Էմէ Տէ Ռամոս Մեհիա (ծնեալ Արփինէ Շահպարոնեան) երկար տարիներէ ի վեր բազմաթիւ յօդուածներ գրած է Արժանթինի եւ այլ Լատին Ամերիկեան երկիրներու թերթերուն, հայ ժողովուրդի բարօրութեան ու պատմական անցեալի մասին: Արժանթինի պետական ճայնասփիւռէն միշտ կուտայ բանախօսութիւններ հայ ժողովուրդի գիտական, գրական ու գեղարուեստական արժէքները ծանօթացնելով տեղացի ժողովուրդին: Կ'աշխատակցի նաեւ ամերիկեան ամսաթերթերուն, ուր գրած է շատ ընդարձակ յօդուած մը Տիկին Էլէանոր Ռուզվելթի մասին, որուն անձնական բարեկամը եղած է: Անցնող տարւոյ Ապրիլ 6ին, Նիւ Եորքի Հայ Գրականութեան Բարեկամներու Միութեան նախաձեռնութեամբ սարքուած երեկոյթի ընթացքին խօսած է իր հրայրքոտ արտայայտութեամբ, «Արուեստագէտի մը խոհերը Գաղութահայ Իրականութեան շուրջ» հետաքրքրական բանախօսութիւն մը: Լայն շրջանակ ունեցող այս ազդեցիկ Տիկինը համակրութիւնը գրաւած է Հայոց ու Ամերիկացիներուն:

ԹՈՒՐՔԻՈՅ ԳԱՒԱՌԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՀՈԳԵՒՈՐ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Պոլսոյ «Երջանիկ» տարեգիրքէն կը քաղենք. —

Ներկայիս Թուրքիոյ Պատրիարքութեան հովանիին տակ կը ծառայեն երեք կուսակրօն հոգեւորականներ, որոնց մէկը անդամ է Երուսաղէմի Ս. Յակոբեանց Միաբանութեան, միւսը՝ Կիլիկիոյ Միաբանութեան ու երրորդն ալ՝ Թուրքիոյ Պատրիարքութեան: Այժմու մեր 33 քահանաներէն հինգը՝ յառաջացեալ տարիքի մէջ, կոչուած են հանգստեան: Ուշադրութեան առնուեցաւ գաւառի մէջ ցրուած մեր համայնքին հոգեւոր մատակարարութիւնը: Իբր այցելու հովիւ Անգարա ու Եոզկատի շրջանները գրկուեցան Տ. Մովսէս քահանան (Էլազըղ, Մալաթիա եւ Արաբկիր), Տ. Յարութիւն քահանայ Հալաճեան (Գասթէմունի), Տ. Վահան քահանայ Պիլիեան (Սվազ եւ Ամասիա) Տիարպաքըրի ու շրջաններուն իբր այցելու հովիւի պարտականութիւնը լրաւ Տ. Շաւարշ քահանայ Պալըմեան:

ԿԱՐԺԷ ԳԻՏՆԱԼ

Երբ Յովհաննէս Թումանեանի հանճարը հանդիպեցաւ Արմէն Տիգրանեանի բիւրեղի պէս յստակ, ջերմ եւ հոգեբուխ մեղեդիին, ծնունդ առաւ յաւերժ անթառամ «Անուշ» օփերան: «Անուշ»ը առաջին անգամ սիրողներու ուժերով բեմադրըուեցաւ 1912 Օգոստոս 4ին՝ Ալեքսանդրապոլի մէջ եւ այնուհետեւ մնաց ամէն մէկ Հայուն սրտին եւ շրթունքներուն վրայ: Յետագային, 11 տարի ետք՝ 1923ին, Երեւանի օփերային մէջ եւս բեմադրըուեցաւ «Անուշ»ը:

Սակայն մասնագիտական ձեւով, մասնագէտ արուեստագէտներու ուժերով «Անուշ» օփերան առաջին անգամ հնչեց Երեւանի օփերայի շէնքին մէջ 1935 Մարտ 27ին: Այդ օրէն անցած է 28 տարի եւ օփերան բեմադրուած է 700 անգամէն աւելի:

×

Ներկայ գիտութեան տուեալները թոյլ կուտան եզրակացնելու, որ հին աշխարհի ամէնէն մեծ քիմիագէտները եղած են Եգիպտացիները, նոյնիսկ «քիմիա» բառը, կարգ մը գիտնականներու կարծիքով, ծագում առած է Եգիպտոսի մէջ:

Ինչի՞ վրայ հիմնուած են այդ ենթադրութիւնները: Այսօրուան քիմիագէտները իրենց տրամադրութեան տակ ունին հարիւր հազարաւոր բնական եւ արհեստական նիւթեր: Բայց անոնց օգնութեամբ չեն կրցած պատրաստել այնպիսի մոմիաներ, որոնք կը պատրաստուէին Փարաւոններու օրով: Մինչեւ այսօր ալ չէ գտնուած գիտնականներու կողմէ Եգիպտացիներու արուեստին գաղտնիքը:

Եգիպտացի քիմիագէտներուն հնարած երկնագոյն, կապոյտ, կանաչ գոյներով ներկերը այսօր ալ, երբ անցած է 4000 տարի, պահած են իրենց թարմութիւնը եւ տոկունութիւնը:

Հին Եգիպտոսի մէջ զարգացած էր նաեւ անուշահոտութեան արուեստը: Արտադրած են զանազան անուշահոտ իւղեր եւ քսուքներ, օծանելիքներ, յօնքերուն քըսելու սեւ ներկ եւայլն: Անոնց պատրաստած ջնարակը, սափորը եւս այնքան բարձրորակ եղած են, որ պահպանուած են հազարաւոր տարիներէ ի վեր: Հին Եգիպտացիները գիտէին պատրաստել քացախ, գինի եւ գարեջուրի նմանող խմիչք մը:

×

Չինաստանի ամէնէն մեծ ջրանցքը՝ պիտի վերաշինուի: Այս ջրանցքը սկսած են շինել Ք. Ա. չորրորդ դարուն եւ աւարտած են Ք. Ե. տասներմէկերորդ դարուն: Ջրանցքին երկարութիւնը 1700 քիլոմեթր է:

«ՅԱՌԱՋ»Ի ԹԵՐԹՕՆԸ (210)

ԵՐԼՏՐՁԻ ՊՈՄՊԱՆ

ՀԱԶԱՐ ԻՆԸ ՀԱՐԻՒՐ ՁՈՐՍ

Սայիտ, հեռագիրը քաղելէ յետոյ, մօրուքը ձեռքին մէջ, մտատանջ դէմքով մը, գլուխը ճօճելով.

— Վեհափա՛ռ տէր, լսաւ, ասիկա ծանրակշիռ է, ծանրակշի՜ռ, բանակը թուլացած է, կայսերական բանակը, որ երկիրը պիտի պահպանէր, օ՜, սոսկալի է ասիկա:

— Ի՞նչ կ'ուզեն ինէ այդ դաւաճանները, հարցուց Հիւնքեարը թախծոտ ձայնով մը:

— Սահմանադրութի՛ւնը, Վեհափա՛ռ տէր, պատասխանեց Սայիտ փաշա, հեռագիրը ձեռքին մէջ:

— Բայց իրենք ինչո՞ւ կը խառնուին պետական գործերուս, բողոքեց Ապտիւլ Համիտ, զօրքերը պէտք է միշտ հեռու մնան քաղաքականութենէն, պէտք չէ տարուին հոսանքներէ, չէ՞:

— Այո՛, Վեհափա՛ռ տէր, հաստատեց Սայիտ փաշա, պէտք չէ խառնուին, բայց անգամ մը թունաւորուա՛ծ են:

— Որոնցմէ՞....:

— Երիտասարդ Թուրքերէն, Վեհափա՛ռ տէր, շարունակեց Քիւչիւք Սայիտ, եւ ասիկա չի նմանիր Հայկական Դէպքերուն, ոչ ալ Եմէնի, Տիւրզիներու, Մակեդոնիոյ կամ Եգիպտոսի խնդիրներուն. ասիկա, Օգոստափա՛ռ փատիշահ, երկրին հիմունքը սարսեցնող երկրաշարժի մը կը նմանի. բանակին ապստամբութիւնը. թող չիմանա՜ն պալատին անձնապահ գունդերը, գզո՜յշ...:

— Ի՞նչ պիտի կրնան ընել, հարցուց Հիւնքեարը, հիմա կը հրամայեմ մէկ երկու փաշաներ արձակել այդ անխտապարտ աւազակներուն վրայ եւ մէկ բոպէի մէջ խեղդել ապստամբութիւնը, չե՞մ կրնար ընել:

— Կրնա՛ք, ինչո՞ւ չէ, պատասխանեց Սայիտ փաշա մեքենաբար, սակայն հետեւա՞նքը:

— Ի՞նչ ըսել կ'ուզէք, կշտամբեց Համիտ, ի՞նչ պիտի ըլլայ հետեւանքը:

— Ապստամբութեան ծաւալումը, Վեհափա՛ռ տէր, պատասխանեց Սայիտ փաշան, ես կը վախնամ, կը սոսկա՛մ զինուորական շարժումներէն:

— Ի՞նչպէս....:

— Ենթադրենք թէ, շարունակեց Սայիտ փաշա, կայսերական վեհագոյն իրատէին համաձայն, քանի մը փաշաներ ղըրկուեցան այդ ապստամբ աւազակներուն վրայ. եթէ, Տէ՛ր մի՛ արասցէ, այդ ղըրկուած փաշաներն ալ միանան անոնց, այն ատե՞ն...

— Չըսէ՞ք որ ընդհանուր է ապստամբութիւնը, Սայիտ փաշա, գոռաց Ապտիւլ Համիտ, եթէ բան մը գիտէք, պարզ խօսեցէք. ունի՞ք լուր մը, շուտով յայտնեցէք:

— Վեհափա՛ռ տէր, կմկմաց Սայիտ փաշա, ես ի՞նչ կրնամ գիտնալ, ապարանքս քաշուած, մեկուսի կեանք մը կ'անցընեմ, գիտէք, այնքան ժամանակ է, ձեռքս քաշած եմ քաղաքականութենէն, եւ միայնութեան մէջ, կը պարապիմ ընթերցումներով եւ կ'աղօթեմ Բարերար Փատիշահիս արեւշատութեան եւ իր Մեծազօր Տէրութեան փառքին համար...:

— Սայի՛տ, Սայի՛տ, կրկնեց Հիւնքեարը մտերմիկ շեշտով մը, աղօթքը չի փրկեր կացութիւնը. հիմա ի՞նչ կ'ըսէք, ի՞նչ պատասխանենք այս հեռագրին:

— Չեմ գիտեր, Վեհափա՛ռ տէր, ի՞նչպէս խօսիմ, ի՞նչ կրնամ ըսել, խնդիրը բա՛րդ է, կնճռո՛տ, փափո՛ւկ, դիւրին չէ անմիջապէս պատասխանել, եւ...

— Բայց վերջապէս, ընդմիջեց Հիւնքեարը, լուծել պէտք է այս խնդիրը, չէ՞:

— Այո՛, լուծել պէտք է, յարեց Սայիտ փաշա, գլխի ճօճումով մը:

— Ի՞նչպէս,,, չըսէ՞ք, հրամայեց Հիւնքեարը, ի՞նչպէս լուծելու է:

— Վեհափա՛ռ տէր, ըսաւ Քիւչիւք Սայիտ, ես առանձին չեմ կրնար պատասխան մը տալ, լուրջ խորհրդակցութեան մը կը կարօտի այս խնդիրը. եւ յետոյ, այս հեռագրին մէջ ուրիշ վտանգ մըն ալ կը նշմարեմ:

— Ի՞նչ...:

— Արտաքին թշնամիներու մատը, պատասխանեց Սայիտ փաշա:

— Որի՞ն մատը կը կարծէք թէ ըլլայ այս գործին մէջ, հարցուց Ապտիւլ Համիտ անձկոտ շարժուձեւով մը:

— Միայն մէկ հատ չէ, մէկ քանի թշնամիներու մատը կայ կ'ըսեմ այս շարժումին մէջ:

— Ինչո՞ւ չէք խօսիր ուրեմն, Սայիտ, չխօսի՞ք, եթէ բան մը գիտէք, որո՞նք են, որո՞նք, ըսէ՛ք:

— Որո՞նք պիտի ըլլային, Վեհափա՛ռ տէր, շարունակեց Քիւչիւք Սայիտ, Օսմանեան յաւերժական տէրութեան դարաւոր, անհաշտելի թշնամիները...:

— Որո՞նք, որո՞նք...:

— Ռուսիան, Աւստրիան, պատասխանեց Սայիտ փաշա, որոնք մեր հողերուն վրայ բացին Պալքանեան Վէրքերը...:

ՍՄԲԱՏ ԲԻՒՐԱՏ

(Շար.)

բար ․— Թո՛ղ ըլլան այն պատուարները, որոնք զմեզ կը բաժնեն ։ Բացատրենք վարդապետական այն կէտերը որ տա - րակարծութեանց դուռ կը բանան տա - կաւին ։ Փորձենք հասարակաց եւ համե - րաշխ դարձնել մեր «Հաւատամքը» ։ Ո՛չ ձուլել, ոչ ալ մեռցնել կ՚ուզենք արեւել- եան Եկեղեցիներու այս ծաղկող ամբող- ջութիւնը, բայց կ՚ուզենք որ պատուաս- տուին Քրիստոսի միասնականութեան միակ ծառին վրայ» ։

Պապը հարց տուած է նաեւ թէ բոլոր քրիստոնեաներու համախմբման յապա - ղումին պատճառը Կաթողիկէներու ան - հասկացողութեա՞ն կուգայ թէ պատմա - կան ու վարդապետական փոխադարձ հարցերու անկատար ծանօթութենէն ։ «Բոլորս ալ քիչ մը խուլ ենք, քիչ մը համր ենք» ։

Շատ նշանակալից կը նկատուի նաեւ Պապին յատուկ ողջոյնը յոյն Ուղղափառ- ներուն, վասնզի յոյն Ուղղափառ Եկեղե- ցին միակ քրիստոնեայ կարեւոր եկեղե- ցին էր որ դէտ չէր ղրկած Տիեզերական Ժողովի առաջին նստաշրջանին ։

———o———

ԻԼԻԱ ԷՀՐԸՆՊՈՒՐԿԻ մէկ յօդուածը հրատարակուեցաւ « Լիթերաթուռնայա Կազեթա »յի մէջ ։ Վեց ամիսէ, առաջին անգամն է որ խորհրդային գրագէտին մէկ յօդուածը կը տպուի ։ Արդարեւ, խստօրէն քննադատուած էր անցեալ Մար- տին, մանաւանդ Խրուշչեւի կողմէ, այն ճառին մէջ զոր խորհրդային վարչապետը արտասանած էր Մարտ 8ին ։

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Պ․ Յարութիւն Փափազեան, Տէր եւ Տիկին Գրիգոր Փափազեան, Տէր եւ Տի- կին Պաղտիկ Քիւլչէեան եւ ընտանեկան պարագաները շնորհակալութիւն կը յայտնեն բոլոր անոնց որոնք անձամբ, նամակով, հեռագրով ու փոխան ծաղկե- պսակի նուիրատուութիւններով, մաս - նակից եղան իրենց սուգին՝ իրենց կնոջ, մօր եւ քրոջ՝

ԱՆՆԻԿ ՓԱՓԱԶԵԱՆԻ

կսկծալի մահուան առթիւ ։

ՍԱՄՈՒԷԼ ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

———o———

ՆՈՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Իրենց զաւակները արձանագրել փափա- քող ծնողքները պէտք է փութան դիմել տեսչութեան հասցէին ։

COLLÊGE ARMÉNIEN SAMUEL MOORAT

26, Rue Troyon, SEVRES (S. et O.)
Tél. : OBS. 18-28

Եւրոպայի մէջ, հայ մանչերու համար հիմնուած, ֆրանսական եւ հայկական ուսումնական կատարեալ ծրագիրներով օժտուած մեծագոյն եւ ծաղկեալ ուսում- նարանն է Սեւրի Սամուէլ Մուրատեան վարժարանը, որուն սեմէն ներս հայ մա- նուկին հոգին, միտքը եւ մարմինը կը մեծնայ, կը ծաղկի եւ կ՚ընդլայնի բաղ - ձալի համեմատութիւններով ։

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ՀԱՄԱԽԱՐԲՑ․ Հայր․ Միութեան Մար- սէյլի մասնաճիւղի ընդհ․ անդամական ժողովը այս շաբաթ ժամը 21ին, սովո - րական հաւաքատեղին ։ Օրակարգ՝ տեղ- ւոյն վրայ ։

Վարչութիւնը կը խնդրէ իր բոլոր ան- դամներէն ներկայ գտնուիլ տարւոյս վերջի այս կարեւոր ժողովին ։

ԿԵԱՆՔԻ ՈՒՂԻՆԵՐՈՎ

Գ․ Հատոր

Շուտով լոյս կը տեսնէ Ս․ Վրացեանի ԿԵԱՆՔԻ ՈՒՂԻՆԵՐՈՎ (Գ․ Հատորը), շուրջ 300 էջ, պատկերազարդ եւ լաթա - կազմ ։

Երրորդ հատորը կը բովանդակէ Ս․ Վրացեանի յուշերը կամաւորական շարժ- ման, ինչպէս նաեւ դէմքեր, դէպքեր եւ տպաւորութիւններ՝ մօտիկ անցեալէն ։

Շ. ՄԻՍԱՔԵԱՆ

Օրեր եւ Ժամեր

Լոյս Տեսաւ



Մատենաշար — ՅԱՌԱՋ — Կեդրոնավայր
Գին
Ֆրանք՝ 15 Ֆր․
— Առաքել առաքումի ծախքը —

« ՅԱՌԱՋ »

ՀԱՅ ԲՈՅԺ

ԺՈՂ․ ԱՄՍԱԹԵՐԹ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ

խմբագիր՝ Շ․ ՆԱՐԴՈՒՆԻ

Խմբագրին երկար բացակայութեան պատճառաւ, լոյս տեսած չեն ՀԱՅ - ԲՈՅԺի 1962 եւ 1963 տարիներու թիւերը ։

Խմբագիրը, որ նոր վերադարձաւ Ամե- րիկայէն, գործի ձեռնարկած է արդէն ։ Ծրագրած է հրատարակել երկու բացա - ռիկ թիւեր, իւրաքանչիւրը 150 էջ ։ Ա- ռաջինը պիտի կրէ 1962 թուականը, երկ- րորդը՝ 1963 թուականը ։ Այս երկուքը մէկ տարի հաշուելով՝ անոնք որ վճա - րած են 1962, վճարած կ՚ըլլան նաեւ 1963 տարին ։

Այս ձեւով, խմբագիրը կը խորհի ՀԱՅ- ԲՈՅԺի հրատարակութիւնը ամբողջա - ցնել եւ կանոնաւորել մինչեւ յառաջիկայ տարի, եւ 1964 տարուան թիւերը լոյս ընծայել ամսէ ամիս՝ Յունուարէն սկըս - եալ ։

Ամերիկայի նոր բաժանորդները եւս, որոնք վճարած են այս տարուան համար (1963), պիտի ստանան ՀԱՅ-ԲՈՅԺի 1962 եւ 1963 թիւերը ։

Այն բաժանորդները, որոնք յետնեալ պարտք ունին, թող բարի ըլլան իրենց վճարումը հասցնել մինչեւ տարեվերջ ։ Հին պարտքերուն հետ՝ ներկայ տարին եւս վճարողներն են միայն, որ պիտի ստանան ՀԱՅ - ԲՈՅԺի բացառիկները, խմբագրուած բժշկական, գրական, պատմական, շատ հետաքրքրական եւ ճոխ բովանդակութեամբ ,— արդէն տը- պագրութեան յանձնուած ։

Այս առթիւ շնորհակալութիւն այն հա- ւատարիմ բաժանորդներուն, որոնք ՀԱՅ- ԲՈՅԺի հրատարակութիւնը ընդհատուած ըլլալով հանդերձ՝ խմբագրին բացակա - յութեան պատճառաւ, վճարումները կա- տարած են օրը օրին ի վկայութիւն ի - րենց բարեկամութեան եւ վստահու - թեան ։

Կը խնդրուի Հայրենիք, Ասպարէզ, Արմենիա, Ազատ Օր, Յուսաբեր, Ազ - դակ, Այգ, Ալիք թերթերու խմբագրու - թիւններէն, ինչպէս և Սիոն, Հասկ, Հայ Կեդրոն, Կիլիկիա, Հայաստանեայց եկե - ղեցի պարբերականներէն, որ հրատարա- կեն այս յայտարարութիւնը գէթ 2 – 3 անգամ ։

ՀԱՅ ԸՆԾԱՅԱՐԱՆ

Կը փնտռուի հայ տիկին մը Հաստա - տութեանս մէջ իբր խոհարարի օգնական ։ Մանրամասն տեղեկութիւններու համար դիմել գրաւոր կամ անձամբ՝

École Apostolique Arménienne
3, Av. de Grandchmp
LE PECQ (S. et O.) Tél. 963-01-72

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Մարսէյլի մէջ Դաշնակցութեան Օրը կը տօնուի Հոկտեմբերի 5ին Սալոն Ալ - համպրա ։

ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ

Կապոյտ Խաչի Վիէնի մասնաճիւղի տարեկան դաշտահանդէսը տեղի կ՚ունե - նայ Սեպտեմբեր 1ին, առաւօտէն մինչեւ երեկոյ «Իւ–խս–Ա․»ի մարգագետին վրայ (Թանըրիին քով) ։

Գեղարուեստական ճոխ բաժին ։ Բանա- խօսութիւն, երգ, արտասանութիւն եւ հայկական պարեր ։

Ճոխ պիւֆէ․ աղանդերներ եւ շամփու- րով խորոված ։

Սիրով կը հրաւիրուի գաղութի հա - յութիւնը ։

Անձրեւի պարագային «Խաժակ» սրահը ։

IMPRIMERIE SPECIALE
DU JOURNAL « HARATCH »
32, Rue de Trévise, PARIS (9e)

ՀՐԱՆՏ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

51, Rue Monsieur-le-Prince, PARIS - 6e — Chèque Postal : 1278-35

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՇԻՐՎԱՆԶԱԴԷ, Երկերի ժողովածու, 10 հատոր լաթակազմ	70 Ֆր․
ՍՏԵՓԱՆ ԶՕՐԵԱՆ, Երկերի ժողովածու, 7 հատոր, լաթակազմ	56 Ֆր․
ՍՏԵՓԱՆ ԶՕՐԵԱՆ, Պապ թագաւոր, լաթակազմ	10 Ֆր․
ՍՏԵՓԱՆ ԶՕՐԵԱՆ, Հայոց բերդը, լաթակազմ	8 Ֆր․
ՎԱՀԱՆ ՏԷՐԵԱՆ, Երկերի ժողովածու, 2 հատոր լաթակազմ	14 Ֆր․
ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՒԻԹ, մեծադիր, գունաւոր նկարներով, լաթակազմ	10 Ֆր․
Վ․ ԱՆԱՆԵԱՆ, Հայաստանի կենդանական աշխարհը, Բ․	8 Ֆր․
ԱՐՍԷՆ ՏԷՐՏԷՐԵԱՆ, Երկեր (Արովեան Պռօշեան, Պարոնեան)	17 Ֆր․
ՄՈՒՐԱՑԱՆ, Պատմուածքներ, գունաւոր նկարներով	5 Ֆր․
ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑԻ մասին յիշողութիւններ․ լաթակազմ	7·50 Ֆր․
ՄԻՔ․ ՇԱԹԻՐԵԱՆ․ Գարունը նորից եկաւ․ 296 էջ․	5 Ֆր․
ԱԲԳԱՐԵԱՆ․ Մատենադարան (անգլ․) 18 գունաւոր մանրանկարներ	3 Ֆր․
ՀԵՆՐԻԿ ԹՈՒՄԱՆԵԱՆ․ Երգի ծնունդը․ բանաստեղծութիւններ	3·85 Ֆր․
Մ․ ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ․ Տաղեր, 200 էջ․ լաթակազմ	3·50 Ֆր․
ՍՈՎԵՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ․ Ա․ 800 էջ․ լթկզմ․	16 Ֆր․
ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ, Անլռելի զանգակատուն, Պէյրութ, 1963	10 Ֆր․

Առաքման ծախքը գնողին վրայ

ԳՐԱՏՈՒՆՍ ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻՆ Է
ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՁԱՅՆԱԳՐԵԱԼ ԲՈԼՈՐ ԵՐԿԵՐՈՒՆ
ՃՈԽ ՄԹԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԵՒ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆՑ

ԼՈՅՍԸ ԳՈՅՆ Է․․․․ ԳՈՅՆԸ ԼՈՅՍ Է
ՁԵՐ ՏԱՆԸ ԼՈՅՍ ՏՈՒԷ՛Ք․․․․ ԹՈՄԼԱՔԻ ԳՈՅՆ ՏՈՒԷ՛Ք
Ձեր բնակարանը կը լուսաւորուի
Եթէ ներսը եւ դուրսը
ՎԵՐԱՆՈՐՈԳԷՔ - ԶԱՐԴԱՐԷՔ - ՆԵՐԿԷՔ

ԹՈՄԼԱՔ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐՈՎ

PEINTURES THOMLAC

16 bis, Bd. Sébastopol, Paris 4e

Tél. ARC 26-61 – Métro : Halles et Chatelet

136, RUE DES BOURGUIGNONS — ASNIERES - BOIS COLOMBES (Seine)
Tél : GRE. 09-47

11, BD. DE LA REPUBLIQUE — LA GARENNE (Seine)
Tél. : STA. 19-06

ԱՆՄՐՑԵԼԻ ԳԻՆԵՐՈՎ

Ամէնէն արդիական, նուրբ եւ ընտիր ճաշակով պատրաստուած՝ առաջնա - կարգ ներկեր ։ Բնական եւ արուեստական բազմերանգ գոյներու մեծ ընտրու- թիւն ։ Նորոյթ իւղաներկեր, պատի գեղեցիկ թուղթերու ճոխ ընտրութիւն ։ Գետնի համար՝ ամէն տեսակ — լինոլէոմ եւ փլասթիք — ծածկոցներ․ —

TAPIFLEX — TAPISOM — CARPETTE

Ձեր բնակարաններուն արտաքին եւ ներքին խնամքներուն համար անհրաժեշտ բոլոր նիւթերը ։

Ամէն գնորդի կը նուիրուի յատուկ տետրակ մը, որու շնորհիւ կրնայ 10–30 առ հարիւր զեղչ ունենալ ։

ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐ

52, RUE CHALON, PARIS 12e — 64, BLD. DE BELLEVILLE, PARIS 20e
166, AV. ARISTIDE BRIAND — PAVILLONS - SOUS-BOIS (Seine)
4 bis, RUE PAUL VAILLANT COUTURIER — ARGENTEUIL (S. et O.)
24, RUE PAUL VAILLANT-COUTURIER — ALFORTVILLE (Seine)
48 bis, RUE DALAVRAC — FONTENAY - SOUS - BOIS (Seine)

ՅԱՌԱՋ

Le PREMIER QUOTIDIEN ARMENIEN en EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction et Administration : 32, Rue de Trévise - PARIS-9e

Fondé en 1925
R. C. Seine 57 A 2731

Téléph. : PRO. 86-60
C. C. P. Paris 15069-82

ՕՐԱԹԵՐԹ
Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա՝ Տար. 50 Ֆ. Վեցամսեայ՝ 27 Ֆ.
Արտասահման՝ Տար. 60 Ֆ. Հատը 0.30 Ֆ.

ՈՒՐԲԱԹ 23 ՕԳՈՍՏՈՍ
VENDREDI 23 AOUT 1963

LE NUMERO : 0,30 FR.

39րդ ՏԱՐԻ — ԹԻՒ 9689
Fondateur : SCHAVARCH MISSAKIAN
39e ANNÉE — Nº 9689

ՆԵՐԳԱՂԹԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

(Ինչ կը գրեն ՀԱՅԱՍՏԱՆԻ... ԴԺՆԱՊԱՆՆԵՐԸ)

Ներգաղթը նիւթ մըն է ապագահաւաքումի: Շատ բան կը գրուի, քիչ գործ կը կատարուի: Առաջին օրերուն, մեծ սխալներ ալ կատարուեցան, ամրան անձրեւին ուրախացնելով... սըմսարները: Այդ թիւ երեւցան նաեւ քննադատութիւններ, որոնք ծուռ միտքով մեկնաբանուեցան, այն պատճառով որ յօղուածագիրները... գանձապան չէին:

Այժմ գանապաններուն մօտ ալ սկսան դժգոհութիւններ լսուիլ, բայց՝ երկչոտութեամբ, չչնջալով, նոյնիսկ մեղր ու լեղի միասին հոսեցնելով:

Տեսնենք իբրեւ նիւթ պատմութեան:

«Պայքար» երեք խմբագրական նուիրած է ներգաղթին (Օգոստոս 8, 9, 10), ուր կը ներկայացնէ «ներգաղթին առաւելութիւններն ու անպատեհութիւնները», ծածուկ, դժգոհութեան մը արտայայտութեամբ, որ կը մնայ Թափանցիկ:

«Ներգաղթի պատուիրակներուն յայտարարութիւններէն գիտենք, կը գրէ Պայքար, թէ այս տարի ներգաղթ տեղի պիտի ունենայ, բայց Իրանէն, Յունաստանէն, Կիպրոսէն եւ Եգիպտոսէն»: Կ՚ուզէ թէ ներգաղթ պիտի չկատարուի Իրանէն, բայց պիտի կատարուի Յունաստանէն, Կիպրոսէն եւ Եգիպտոսէն:

Ուրիշ նոյն պատմութիւնը: «Այս տարի ներգաղթ պիտի ըլլայ, պիտի չըլլայ»: «այս տարի Յունաստանէն պիտի ըլլայ, Եգիպտոսէն պիտի չըլլայ»: Ցերեւոյ կը պատահի որ ներգաղթ տեղի չունենայ Յունաստանէն ալ, Եգիպտոսէն ալ:

Երբ «գիտենք» կ՚ըսէ Պայքար, այդ գրողն ալ գիտէ անշուշտ: Ահա՝ դժգոհութիւնը, զոր չի ծածկեր, բայց կ՚անուշցնէ:

Ու այժմ հետեւինք պատմութեան:

(Ներգաղթի) «Պատուիրակները, կը շարունակէ Պայքար, արդէն իսկ ճամբայ ելած եւ գրեթէ բոլորն ալ հասած են իրենց նոր պաշտօնավայրը: Այսպէս, ըստ քաղած տեղեկութեանց համաձայն, ներգաղթի ընդունման եւ տեղաւորման կոմիտէի նախագահ՝ Գ. ...եան, լման քառասուն օր Թեհրան մնալէ ետք, Յուլիս 15ին վերադարձած է Երեւան: Այժմ Աթէնք կը գտնուին պատուիրակներ Զամչեան եւ Մելքոնեան: ... ժամանեցին վերջերս պատուիրակներ Եղիշէ Յովհաննիսեան եւ Հայկ ...եան: Եգիպտոսի ներգաղթի պատուիրակներէն մին՝ Ռուբէն Թումանեան անմիջապէս հասած է Գահիրէ, մինչ միւսը՝ Աշոտ Նանագիւլեան, ճամբան, ...անալով, Վառնա մնացած է»:

Այս տեղեկատուութենէն ետք, Պայքար «...» կը համարի «Թելադրութիւններ ... հայրենի պատկան իշխանութեանց, պատուիրակներու ինքնութեան եւ ժամանման թուականներու վերաբերեալ»:

Որո՞նք են այդ «Թելադրութիւնները»:

«Ուշադիր ընթերցողը դժուարութիւն չունենար անտարակոյս նկատելու թէ ներգաղթի պատուիրակները յաճախ փոփոխութեան կ՚ենթարկուին: Այսպէս, զոր օրինակ, անցեալ տարի Շահինեան եւ ...եան Գահիրէ գտնուեցան, ներկայացուցիչի հանգամանքով: Որոշ է թէ անոնք ժամանակին հետ միայն փորձառութիւն ձեռք ձգեցին: Արդարեւ անհրաժեշտ պայման էր ծանօթանալ Եգիպտահայութեան բացառիկ կացութեան»:

Կը նշանակէ թէ Հայաստան պատուիրակ կը ղրկէ արտասահման նախ «ժամանակին հետ փորձառութիւն ձեռք ձգելու համար»:

Շարունակենք.—

«Արդ, այս տարի ուրիշ պատուիրակներ — Թումանեան եւ Նանագիւլեան — կոչուած են այդ աշխատանքը կատարելու: Նորեր ըլլալով, անոնք եւս հարկադրաբար կը կարօտին փորձառութեան շրջանի մը, որ ձեւով մը ժամանակի կորուստ պիտի նշանակէր»:

Առաջին պատուիրակներուն փորձառութիւնը «ժամանակին հետ» կ՚ըլլար, սոյնը՝ «ժամանակի կորուստ»: Ի՞նչ յանդգնութիւն այսպիսի դիտողութիւն ընելու, նման դժգոհութիւն յայտնելու: Քիչ մնայ՝ Պայքար պիտի առաջարկէ «ներգաղթի փորձառութեան սովետական ինստիտուտ» մը Երեւանի մէջ:

Յանդգնութիւնը յանդգնութիւն կը բերէ: Քիչ մը աւելի քաջութիւն գտնալով՝ Պայքար կը շարունակէ. «Իրաւամբ կ՚ակնկալուի որ հայրենի ներկայացուցիչներու յայտարարութիւնները ոչ միայն հակասական չըլլան իրարու, այլ (եւ) ամբողջացնեն զիրար: Արդարեւ, մեզի հասած տեղեկութեանց համաձայն, անցեալ տարի, Անդրանիկ Շահինեան խոստացած էր որ այս տարի ներգաղթի երկու կարաւաններ ճամբայ ելլեն Եգիպտոսէն, առաջինը՝ Մայիսին, իսկ երկրորդը՝ Սեպտեմբերին: Այժմ Օգոստոսի մէջ ենք եւ միակ լուրը այն է թէ պատուիրակներէն մին՝ Ռուբէն Թումանեան Գահիրէ ժամանած է»: Եւ յանկարծ կը պարծենայ Պայքար թէ «կը պահէ իր ամբողջական ազատութիւնը եւ չի՛ վարանիր Թելադրութիւններ, դիտողութիւններ ալ ընելու ուր որ անկ է»:

Կը փախնայ դժգոհութիւն ըսելէ հոն ուր պէտք է ըսել: Տեսէք թէ ո՛րքան զգոյշ է Պայքար իր «դիտողութեանց» մէջ:

«1946–1948ին տեղի ունեցած ներգաղթը, կը շարունակէ Պայքար, մէկէ աւելի հայահոծ գաղութներէ, ակնկալուած յաջողութիւնը չունեցաւ»:

Այս խրողութեան մասին Դաշնակցական մամուլն ալ արտայայտուեցաւ ժամանակին, բայց Դաշնակցականի վայել ձեւով, առանց ձայնը մարած, մէջքը կոտրած ձեւով: «Տխրահռչակ մամուլ մը, կը շարունակէ բարեհռչակ մամուլին բերանը, այդ տագնապին վերաբերմամբ՝ հաղարումէկ պատմութիւններ շրջան ընել տալու, այն տպաւորութիւնը Թողելու համար թէ աշխարհի մէջ ո՛չ մէկ տեղ այդպիսի տագնապ կայ, բացի Հայաստանէն»:

Եւ դեռ, այսօր, իրենք ալ կը խօսին այն մասին թէ «ակնկալուած յաջողութիւնը չունեցաւ» ներգաղթը, վախնալով որ այս անմեղ բառերն ալ մեզ կը համարուին, անմիջապէս վկայութեան կը կանչուի «նոյնինքն հայրենի ղեկավարութեան վկայութիւնը», այսինքն խոստովանութիւնը: Սակայն ի՞նչ էր պատճառը, որ «ակնկալուած յաջողութիւնը չունեցաւ»: Հարկ չկայ պրպտելու, քննելու եւ Թաքուն մեղքեր երեւան հանելու: Վերջապէս ռամկական մամուլն է խօսողը: «Այդ ձախողութիւնը, հայրենիքի թէ արտասահմանի մէջ, կը վերագրուի հայրենադարձի պանդուխտային բնոյթին»:

Հասկցուեցաւ, յանցաւոր չկայ մէջտեղը:

«Այդ վերագրումը, եթէ նոյնիսկ բոլորովին ճիշդ չըլլայ, իր մէջ կը պարունակէ ճշմարտութեան ակնբախ բաժին մը, զոր կարելի չէ ուրանալ եւ զոր արդէն ոչ ոք կ՚ուրանայ»:

Ի՞նչ կ՚ըսէ:

«Այդ տարիներուն՝ հայրենիք ներգաղթած մեր ազգակիցները առաւելապէս բնակարանային տագնապի մատնուեցան»:

Կրնայի՞ք մեզի նկարագրել այդ տագնապը, — ողբերգութիւնը, որ կատարուեցաւ ներգաղթողներու կեանքին մէջ: Եւ ըսել թէ որո՞նք են մեղաւորները:

Կը բացուին բերանները եւ օր մը կը պատմուի մեզի թէ ո՛րքան զոհեր խլեց այդ տագնապը:

Դեռ ուրիշ բաներ ալ կ՚ըսէ Պայքար:

ՕՐՈՒԱՆ ԴԵՊՔԵՐԸ

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՎԻՃԱԿ ՎԻԷԹ-ՆԱՄԻ ՄԷՋ

ԱՄԵՐԻԿԱՑԻՔ ԴԺԳՈՀ ԵՆ

Վիէթնամի կաթողիկէ նախագահը փոխանակ հետեւելու Վատիկանի Թելադրանքներուն, յարձակողականի անցած է եւ գրաւել է ոտք կռատուները, ձերբակալած է բազմաթիւ քուրմեր:

Նախագահին հաստատած պատերազմական վիճակը ամբողջ երկիրը կը դնէ զինուորականներու հակակշռին ներքեւ: Ժողովուրդին ըրած իր յայտարարութեան մէջ, նախագահ Տիէմ շեշտեց թէ կրօնական տագնապը քաղաքական փտանգաւոր բնոյթ մը ստացած է եւ կը շահագործուի ընդդիմութեան եւ համայնավարներուն կողմէ: Կը դատապարտէ քաղաքական շահագործողներու փքրամանութիւնը որ կրօնական մակդիրին տակ ապօրէն գործունէութեան մը ձեռնարկած է եւ խռովարար վիճակ մը ստեղծած: Պատերազմական վիճակի հռչակումին հետ միասին հետապնդումներ սկսած են պուտտայական պարագլուխներու դէմ: Բանակը գրաւած է բազմաթիւ կռատուներ եւ իշխանութիւնները կը յայտարարեն թէ ձեռք դրած են ռազմամթերքի, տպարանի կազմածի, ձայնասփիւռի եւ այլ առարկաներու վրայ: Կը պնդեն թէ ոչ մէկ կերպով կ՚ուզեն վնասել պուտտայականներու կրօնական ազատութեան իրաւունքին, բայց դէմ են անոնց՝ որոնք անոնց գործունէութիւնը քաղաքական նպատակներու կ՚առաջնորդեն:

Անձկութեամբ կը սպասուի դէպքերու ընթացքին, Ուաշինկթընի քաղաքական շրջանակները թէ՛ դժգոհ են եւ թէ մտահոգ: Արտաքին նախարարութեան մէկ յայտարարութիւնը կը շեշտէ թէ Տիէմի կառավարութեան ձեռք առած միջոցները կը բռնաբարեն նախապէս տրուած ապահովութիւնները, ըստ որոնց հաշտարար քաղաքականութիւն մը պիտի տանէին պուտտայականներու հետ: Միացեալ Նահանգներու նոր դեսպանը՝ Քապոթ Լոճ հրահանգ ստացաւ անմիջապէս Սայկոն մեկնելու:

Վիէթնամի կառավարութիւնը կ՚ուզէ ամէն ձեւով համոզել թէ կատարուած գործողութիւնը միայն քաղաքական նպատակներ կը հետապնդէ, գլխաւորաբար համայնավարներու դէմ:

Վիէթնամի նախագահը՝ Նկօ Տին Տիէմ Հիւէ բարձր պաշտօնեայի մը զաւակն է: 62 տարեկան:

ԿԱՐԴԻՆԱԼ ԱՂԱՃԱՆԵԱՆԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

«ԵԿԵՂԵՑԻՆ ՉԻ ՇՓՈԹՈՒԻՐ ԱՐԵՒՄՈՒՏՔԻ ՀԵՏ»

Ֆիկառօ արձագանգ կը հանդիսանայ այն ճառին, որ Կարդինալ Աղաճանեան արտասանած է Միլանոյի Կաթողիկէ Համալսարանի մշակութային կատարելագործման 35րդ դասին: Հաւատոյ Տարածման Ժողովին նախագահը ի մէջ այլոց ըսած է.—

«Հակառակ անոր որ իրը ըրած է Արեւմուտքի մշակութային եւ գեղարուեստական արժէքները, Եկեղեցին չի շփոթուիր անոր հետ եւ պիտի չփոթուի «երրորդ աշխարհին» հետ: Իր առաքելութիւնը փրկագործութեան առաքելութիւն մըն է.— կը ձգտի միայն ժողովուրդ ընել բոլոր ժողովուրդները: Այս ճանաչումը զոր նոր պետութիւններ ըրին Եկեղեցւոյ, ջնջեց գաղթատիրութեան հետ մեղսակից ըլլալու մեղադրանքը որ կ՚ըլլար: Գումարը կարդինալներու եւ եպիսկոպոսներու ներկայութիւնը տիեզերական ժողովին, յստակ արտայայտութիւնն է Եկեղեցւոյ ընդհանրականութեան, եւ ցայտուն փաստ մը այն արդիւնաւէտ աշխատանքին, որ կատարուած է ըստ գահակալներու լուսաւոր Թելադրանքներուն»:

ՏԽՐՈՒՆԻ

ԶԱՐԵՀ ՊԷՅ ՆՈՒՊԱՐ

Ցաւով կ՚իմանանք թէ Օգոստոս 19ին, Ժընեւի մէջ մեռած է Պօղոս Նուպար փաշայի զաւակը՝ Զարեհ Պէյ Նուպար:

Յուղարկաւորութիւնը կը կատարուի այս շաբաթ Ժընեւի մէջ, նախագահութեամբ Կաթող. Պատուիրակ Սերովբէ Արքեպիսկոպոսի:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԵՄԷՆԻ նախագահը՝ Սալալ երեք շաբաթ հիւանդանոց պիտի մնայ: Թէեւ կ՚ըսուի թէ ստամոքսի խանգարումներ ունի, բայց կարգ մը աղբիւրներու համաձայն, վիրաւորուած է Եմէնի մէջ:

ԻՍՐԱՅԷԼԻ եւ Սուրիոյ միջեւ շատ լարուած կացութիւն մը կը տիրէ: Երուսաղէմէն կը շեշտեն թէ Իսրայէլ ինքնիրեն իրաւունք կուտայ իր պաշտպանութիւնը ապահովելու եթէ ՄԱԿը վերջ չդնէ սուրիական յարձակումին: Իսրայէլեան մամուլը կը դրուատէ կառավարութիւնը այս կացութեան շարունակուելուն դէմ, յայտնելով թէ ան արդիւնք է գլխաւորաբար Դամասկոսի կառավարութեան ներքին դժուարութեանց:

ՊԱՂՏԱՏԷՆ կը յայտնեն թէ իրաքեան բանակը Սուրիոյ Յեղափոխութեան հրամանատարութեան տրամադրութեան տակ է: Միւս կողմէ եգիպտական ուժերն ալ պատրաստ են դէմ դնելու համար Իսրայէլեան յարձակման Սուրիոյ դէմ, կը հաղորդէ «Միջին-Արեւելք» մամուլի գործակալութիւնը:

ԽՐՈՒՇՉԷՎ այցելելով Յուգոսլաւիայի ինքնաշարժներու գործատունը, Ս. Գիրքին ապաւինելով յայտարարած է բանուորներուն, որպէսզի աւելի աշխատին.— «Աստուած վերէն մեզի ուտելի՞ք պիտի ղրկէ: Կ՚ըսեն թէ Քրիստոս 40.000 հոգի (սիֆ, կ՚աւելցնէ Ֆիկառօ, այսինքն ճիշդ այդպէս ըսած է) կերակրած է հացի մէկ կտորով, բայց ոչ ոք ըսած է թէ այդ մարդիկը կշտացա՞ծ են: Եթէ բաւած ըլլար, Պաղեստինը ձգած հեռացած չէին ըլլար»:

ԳՐԱԿԱՆ ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷՆԸ ԵՒ ՇՓՈԹՈՒԹԻՒՆՆԵՐ

Ամէն ապրող լեզուի նման հայերէնն ալ ենթակայ է հնչական փոփոխութեանց: Ժամանակի ընթացքին գիրերը կը փոխեն իրենց հնչումը: Այս փոփոխութեանց կը հետեւին ուղղագրական փոփոխութիւն – ներ, որոնք կ՚որոշուին պաշտօնապէս բրաւասու հաստատութեանց կամ հեղի– նակաւոր դէմքերու կողմէ:

Արեւմտահայ գրական եւ խօսակցական լեզուներուն այսօրուան կացութիւնը մե– գի թոյլ կուտայ պնդելու թէ այբուբենի իւրաքանչիւր տառ իր յատուկ ու որոշ հնչումը ունի այսօր: Անդին կայ արեւե– լահայերէնը, որուն տառերուն կարեւոր մէկ մասը տարբեր հնչում ունի: Ու տա– կաւին չեմ խօսիր գրաբարի մասին, որ մեր եկեղեցիներուն մէջ կը հնչուի ա– րեւմտահայ աշխարհաբարին պէս (եթէ Եզնիկ կամ Խորենացի լսէի՛ն մեր կրօ – նաւորներու գրաբարը...):

Ո՛չ բանասէր եմ, ո՛չ լեզուաբան: Պար– զապէս Հայ մըն եմ, արեւմտահայ գրա– կան եւ խօսակցական լեզուները կը գոր– ծածեմ, ինչպէս Սփիւռքի բոլոր գրող – ներն ու գրական լեզուով արտայայտուող Հայերը: Ո՛չ ոք այլեւս իրաւունք ունի պնդելու որ մեր այս լեզուին մէջ Բ եւ Փ, Գ եւ Ք, Ց եւ Ձ, Օ եւ Ո, Ջ եւ Ճ, Դ. եւ Թ, Ե եւ Է տառերը իրարմէ տարբեր ձե– ւով կը հնչուին: Անտարակոյս հին ատեն այս տառերը տարբեր հնչումներ ունէին: Անտարակոյս չատ մը գաւառաբարբառ – ներու մէջ այս տառերը իրարմէ տարբեր ձեւով կը հնչուէին, բայց այսօրուան կա– ցութիւնը որոշ ու յստակ է: Ո՛չ մեր գրողները եւ ոչ ալ մաքուր հայերէն խօ– սողները ոչ մէկ տարբերութիւն կը դնեն «Բ»ի եւ «Փ»ի, «Գ»ի եւ «Ք»ի, եւ մնաց– եալ զոյգ տառերու հնչումներուն մէջ: Եթէ այսօր թատերական արուեստի դըպ– րոց մը բանանք, տարբեր տեսակ հնչում չենք կրնար սորվեցնել: (Միշտ արեւ – մըտահայ գրական լեզուին մասին է խօսքս):

Եթէ կը կարծէք թէ ճշմարտութիւն չէ այս հաստատումը, հաճեցէք ուշադրու – թեամբ մտիկ ընել ճառախօսները, քա – րոզիչները, դերասանները եւ այն Հա – յերը, որոնք որոշ զարգացում ունին եւ բծախնդրութիւն ցոյց կուտան մաքուր հայերէն խօսելու համար:

Այս հաստատումէն մեկնելով կարելի է սրբագրել կարգ մը սխալներ, որոնք կը գործուին մեր մամուլին մէջ:

Երբ օտար բառ մը կամ նոր անուն մը հայերէնով կը գրուի, յաճախ նկատի կ՚առնուին տառադարձութեան հին գրա– բար ձեւերը կամ Արեւելահայոց հնչում– ները: Սխալ է անշուշտ:

Երբ Արեւելահայոց կողմէ հայացուած օտար բառ մը կամ անուն մը կը փոխա– դրուի արեւմտահայերէնի մէջ, առհա – սարակ կը պահուի արեւելահայերէն տա– ռադարձութիւնը: Այս պարագային Արեւ– մըտահայերու մեծ մասը օտար բառը չի հնչեր այնպէս՝ ինչպէս կը հնչեն Երեւա– նի մէջ: Օրինակի համար տենդենցիա, ինտելիգենտ, կուլտուրա, կոմունիզմ, պարտիա եւ անհամար նորաբոյս բառեր Արեւմտահայերու կողմէ կը կարդացուին ըստ արեւմտահայերէնի հնչումներուն: Այսինքն չեն կարդացուիր թէնտենցիա, ինթէլիկէնթ, ֆուլթուրա, փարթիա եւլն: Երկրորդ սխալ մը:

Խօսինք այս սխալներուն մասին:

Հին տառադարձութիւնը հին հայերէնի յատուկ է: Եթէ մինչեւ այսօր կը շարու– նակենք գրել Սոկրատ, Պղատոն, Ապո – ղոն, պատճառը այն է որ հայացած կը նկատենք այս անունները՝ ինչպէս հայա– ցած են Պանթէոն, Կեսար, Ցակոբ, տրի– բուն, արքայ, Պենտեկոստէ, եւայլն: Ա– մէն լեզուի մէջ կան հինէն մնացած ձե– ւեր: Ո՛չ մէկ պատճառ կայ փոխելու այս բառերուն ուղղագրութիւնը, որով– հետեւ Արեւմտահայը Սոկրատ անունին վարժուած է, ինչպէս Իտալացին վար – ժուած է Փառիճի կոչել Փարիզն ու Ֆրանչիա՝ Ֆրանսան: Անշուշտ Արեւելա– հայը Սոքրաթ կը կարդայ: Թո՛ղ կար– դայ, քանի որ բաւական տարբեր լեզու մը ունի:

Նոր օտար բառերու հայերէն տառա – դարձութեան մէջ Արեւմտահայուն հա – մար մէկ տրամաբանական օրէնք կայ, — գրել այնպէս մը որ օտարին հնչումը նոյնութեամբ վերարտադրուի: Տեմօֆ – ռաթ, տեմոգրատ, տեմօֆռատ, տեմոֆ – քաթ եւ դեռ քանի մը ձեւեր ֆրանսերէն տեմոկրատ բառին հնչումը կը վերար – տադրեն Արեւմտահայուն համար: Մեզի համար, բոլորովին անիմաստ եւ անըմ – բռնելի է դեմոկրատ գրել՝ արեւելահա– յերէնի ուղղագրութեամբ կամ ինչպէս պիտի տառադարձէինք մակէ տասնեւհինգ դար առաջ: Ընթերցողը կրնայ գիրաւ գտնել բազմաթիւ ուրիշ օրինակներ: Միակ հարցը որ կրնայ ծագիլ՝ սա է.— «ք»ի տեղ «գ» գրե՞նք, «օ»ի տեղ «ո» գործածե՞նք թէ ոչ, երկուքն ալ հաւա – սար իրաւունք ունին: Սովորութեամբ կը հարթուի հարցը:

Արեւելահայերէնի մէջ մտած օտար բառերը երբ արեւմտահայերէնի մէջ ալ կը հիւրընկալենք, պէտք է գրենք մեր հնչումներուն համաձայն, որովհետեւ ա– րեւմտահայերէնը տարբեր լեզու է: Պէտք չէ գրենք բուրժուա, երբ կ՚ուզենք պուր– ժուա կարդալ:

Աւելորդ է մանրամասնութեանց մէջ մտնել, բայց վերջացնելէ առաջ անհրա– ժեշտ է պնդել թէ բոլոր այս թիւրիմա – ցութիւնները մէկ աղբիւր ունին: Շատեր անհրաժեշտ կը կարծեն որ արեւմտահա– յերէն, արեւելահայերէն, գրաբար եւ բազմաթիւ գաւառաբարբառ հայերէններ նոյն անխախտ, անյարիր լեզուն են: Մինչեւ որ ամէն մէկուն առանձին տեղը չճանչցուի, շփոթութիւնը չի վերնար, քանի որ մէկը միւսին պիտի խառնուի անփութօրէն, առանց որեւէ շահու:

×

«Ու» կը գրենք իբրեւ համազօր ֆրան– սերէն իւզիւռ բառին ձայնաւորներուն, բայց դպրոցներուն մէջ սորված ենք որ «յու» հնչումը ունի այս երկբարբառը: Մեզի միշտ կրկնած են թէ պէտք է հըն– չենք իւրաքանչյուր, առյուծ, հարյուր, յուղ, որովհետեւ գրաբարի մէջ այդպէս կը հնչէին: Ասկէ կը հետեւի որ ֆրան – սերէն «իւզաժ» բառին առաջին ձայնա – ւորը չկայ հայերէնի մէջ, ինչպէս չկայ իտալերէնի եւ սպաներէնի մէջ: Շա՛տ բարի, բայց տարիներէ ի վեր ինչո՞ւ ու– րեմն ֆրանսերէն եւ թրքերէն անուններ ու բառեր կը հայացնենք «իւ» գործածե– լով եւ Ֆրանսացիներու ու Թուրքերու պէս ճիշդ նոյն ձայնաւորը հնչելով: «Վիքթոր Հիւկօ» երբ գրենք յուկօ՞ կը կարդանք, Կիւլիզարը Կյուլիզա՞ր կը կարդանք: (Պէտք է նշել որ կարգ մը գաւառացիներ «կյուլ»ի մօտեցող հնչում մը գործածած են ժամանակին): Երբ կը գրենք Կիւլպենկեան, Սիւրմէեան, Պիւլ– պիւլեան, Տիւլմէճեան, Տիւռան, Տիւ – փոն, յո՞ւ կը կարդանք արդեօք:

Ուրեմն «իւ»ն երկո՞ւ հնչում ունի ար– դեօք: Թերեւս ալ լեզուաբան մը վճռած է թէ կարգ մը բառերու մէջ «յու» կը հնչուի եւ երբեմն ալ «պիւլպիւլ»ին ձայ– նաւորներուն պէս կը հնչուի: Չի կրնար ըլլալ:

Իրականութիւնը այն է թէ արեւմտա– հայ գրական լեզուին մէջ այս «իւ» երկ– բարբառը «պիւլպիւլ»ին ձայնաւորին հըն– չումը ունի, բայց տակաւին սովորութիւն է քանի մը հին բառերու մէջ «յու» հըն– չել: Այս սովորութիւնը աչքառու կեր – պով կ՚անհետանայ հետզհետէ, որ թարգ– մանի՝ իրաւունք չունինք այլեւս սխալ նկատելու իւղ, առիւծ կամ հարիւր բա– ռերու ֆրանսերէն «իւ»ով հնչումները, որոնք կ՚ընդհանրանան: Պիտի բսուի թերեւս որ գրաբար կարդացողները դըժ– ուարութեան պիտի մատնուին, բայց քանի որ ամէն կրօնաւոր եւ աշխարհա – կան վերէն վար սխալ կը հնչէ գրաբարը, երկբարբառ մըն ալ աւելի թող գտնուի ցանկին մէջ: (Տէրտէրներուն ուշադրու– թիւնը կը հրաւիրեմ չքնաղ սխալի մը վրայ, — յաճախ կ՚երգեն «բանիւք այսո– քիւք» միշտ «իւ»երը հնչելով «պիւլպիւ– լ»ին ձայնաւորներուն պէս: Ուղղիաբար կը կրկնեմ որ պէտք է կարդան «բանիվք այսոքիվք», որովհետեւ գործիական հո– լով է եւ «ւ»ը բաղաձայն է: Ուրիշներ ալ բսած են, բայց մտիկ ընող չկայ):

Ֆրանսերէն կամ թուրքերէն ու ձայնա– ւորը չունէինք: Երբ հարկ տեսնուեցաւ աւելցնել զայն մեր այբուբենին վրայ, նախընտրելի էր նոր գիր մը հնարել, բայց «յու» հնչումով երկբարբառին տը– ւին այդ պաշտօնը: Եղածը եղած է, բայց ժողովուրդը ատաիճանաբար կը հարթէ խնդիրը մոռնալով «յու» հնչումը:

«Զ» գիրը խիկապէս զարմանալի երե – ւոյթ է մեր լեզուին մէջ:

Որոշ կերպով կը տեսնուի որ ատեն մը «ս»ի հնչում ունեցած է եւ ատոր համար ալ կը շարունակենք «ըսգեստ», «ըսգեստ– նել», «ըսբաղիլ» հնչել զգեստը, զգեստ – նելն ու զբաղիլը: Ատոր համար է զար– ձեալ որ ֆրանսերէն «իսմ» վերջաւորու– թեամբ բառերը երկար ատեն գրած ենք եւ յաճախ կը գրենք «իզմ»․ ռոմանտիզմ, ֆէմինիզմ, եւայլն: Թերեւս Բարիզ կամ Փարիզ բառին վերջին գիրն ալ այդ սո– վորութենէն կը բխի:

Մեքսիկօ　　　　Մ. ՀԱՃԵԱՆ

ԽԱՓՇԻԿԵԱՆ ԱՌԱԾՆԵՐ

— Լեզուդ առիւծ է, եթէ ազատութիւն տաս, քեզ կը յօշոտէ:

— Խոստումը՝ պարտք է:

— Վրան փայտ աւելցնելով կարելի չէ խարոյկը մարել:

— Փոքր կացինը կրնայ մեծ ծառ տա– պալել:

— Իմաստունն ալ ամէն բան չի գիտեր:

— Կոյրին համար բոլոր գոյները միեւ– նոյնն են:

ԲԱՐԻՔՆԵՐ ՈՒ ԿԱՐԻՔՆԵՐ ՋԵՐՄՈՒԿՈՒՄ

— Դեռ այսքան գեղեցիկ անկիւն չեմ տեսել:

Առաջին անգամ եկողի հիացումի խօս– քըն է սա:

Իսկ Ջերմուկ ամէն տարի գալիս են հազարներ Ադրբեկովից, որի հետ կապ– ուած է ամենակարճ թելով, եւ Սախա– լինից, Եակուտիայից, Կամչատկայից, որոնցից հազարաւոր կիլոմետրերով հե– ռու է: Գալիս են ու տեսնում, որ կառու– վարութիւնը միլիոններ է ծախսել, որ– պէսզի Ջերմուկն աւելի ջերմ ընդամենը աշխատաւորին, որ նրա վարարուն ու տաք աղբիւրներն ամբայնդեն մարդու համար ամենաթանկը՝ առողջութիւնը:

Պողպատերանգ բազալտից ու վարդա– գոյն տուֆից կերտուած կոթողները պատկանում են 4 առողջարանների, ո– րոնք մէկ հերթում բուժում, կազդուրում են 550 աշխատաւորների: 25 մահճակալ է դրուած մանկական առողջարանում: Հոյակապ է մշակոյթի պալատը: Այցե– լուներին հիացմունք է պատճառում կա– մարակապ ու սիւնաշար ըմպարահը, որ ծորում են տեղի հանքային բուժիչ ջրե– րի բոլոր տեսակները:

— Յառաջիկայ երկու տարում աւելի կ՚արուի, քան կայ մինչեւ այժմ, — յայտնում է քաղաքի առողջարանների վարչութեան պետ Բ. Աբրահամեանը, — կը կառուցուեն 4 նոր առողջարաններ 1030 ընդհանուր տեղով: Շուտով օգտա– գործման կը յանձնուի նոր պոլիկլինի – կան, իր ջրաբուժական 40 լողարանով ու ցեխաբուժական 10 մահճակալով:

ՑԵՆԱԿԸ ՀԱՐԿԱՒՈՐ ՉԷ

Լաւ բան է նամակ ստանալը, շնորհա– կալակա՛ն նամակ: Գրել էին Արտաշէս եւ Անժիկ Շահինեանները Երեւանից: Չգրել չէին կարող. ծնողի սիրտ է: Երեք տա– րեկան Գագիկին Ջերմուկ են ուղարկել չորեքթաթ, լեզուն «կապուած» գրու– թեամբ: Բայց ահա տղան թոթովում է, քայլում:

Սահմանափակուենք երկրորդ փաստով: Ննջասենեակներից մէկում փոքրիկ ցե– նակ է դրուած:

— Ո՞ւմն է:

— Երեւանցի Հոփսիկ Իշխանեանինը: Երկու յենակով է եկել: Համոզուած ենք, որ երկրորդն էլ դէն կը նետի:

Միւս առողջարաններից էլ կարելի է տալ անունները բազմաթիւ այն մարդ – կանց, ովքեր առողջարանում յենակներ են թողել, մէջքի, ոտքերի, աղեստամոք– սային գործարանների ցաւերը յանձնել վաղող ջրերին ու հեռացել՝ մի հատիկ բառ արտասանելով կամ գրելով յուշա – գրքում.

— Շնորհակալութի՛ւն:

ՀԱՄԱՅՆԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԴԵՐԸ
ՌՈՒՍԵՒԹՈՒՐՔ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆՑ ՄԷՋ
1919–1922

Սեպտեմբեր 5ի նիստին, Թուրքիոյ վե– րաբերեալ հարցերու համար Գ. Միջազ– գայինի ղեկավար գործակալ Փաւլովիչ յայտարարեց իր կողմէ (1).—

« Ինչ՞ պիտի յանգի վերանորոգուած եւ ուժովցած Թուրքիոյ մը կամութիւ – նը, եթէ իշխանութիւնը շարունակէ մը– նալ հարուստներուն, շահագործողներուն եւ հողատէրերուն ձեռքերուն մէջ...: Ազգային յեղափոխական շարժումը կըր – նայ բարելաւել աշխատաւոր զանգուած– ներուն վիճակը միայն այն պարագային, երբ ըլլայ ընկերվարական մեծ շարժ – ման մը վճռական հանգրուաններէն մին: Այս պատերազմը յաջողութեամբ կրնայ պսակուիլ այն պարագային միայն, երբ մղուի երկու ճակատի վրայ — օտար դրամատիրութեան դէմ եւ ազգային բուրժուազիային դէմ: Որպէսզի Արեւել– քի յեղափոխական զանգուածները կարե– նան այս պայքարը մղել, պէտք է որ կազմակերպուին գիւղացիական սովետ – ներով (Խորհուրդ), աշխատաւորական Սովետներով...: Արեւելքի ժողովուրդ – նե՛ր, ոտքի՛: Գ. Միջազգայինը սրբազան պատերազմի կը կանչէ ձեզ՝ դրամատէր յէլուզակներուն դէմ...: Կեցցէ՛ Արեւել– քի եւ Արեւմուտքի աշխատաւոր զանգ – ուածներու յարձակողական դաշնակցու – թիւնը: Կեցցէ՛ աշխատանքի միջազգային խորհրդային հանրապետութիւնը, ուր պիտի չըլլան ոչ բռնաբարուած ժողո – վուրդներ, ո՛չ ստրուկ ժողովուրդներ: Կեցցէ՛ Սովետներու իշխանութիւնը »:

Բանուոր զանգուածներու չգոյութեան պատճառաւ, Անատոլուի մէջ ստեղծելի միայն գիւղացիական Սովետներու կազ– մակերպութիւնը լաւ ճամբու մէջ դնելու համար, Մուսթաֆա Սուպհի, լաւ պատ– րաստուած տասնըչորս գործակալներու ընկերակցութեամբ մեկնեցաւ Կարս, ուր զինքը ընդունեցան Քեազըմ Քարապէքիր եւ Ալի Ֆուատ փաշա: Այս վերջինը իր յուշերուն մէջ Սուպհին կը նկարագրէ որպէս խոհեմ, պարզուն, եւ իր նպա– տակը ուժգին հետապնդող մարդ: Ք. Քարապէքիր զայն լրիւ վերահասու ըրաւ թրքական բանակին մէջ համայնավար բջիջներու ստեղծման վտանգին: Քարա– պէքիրն է, որ խորհրդային առժամեայ կառավարութեան առաջին պատուիրակ Ռիփթալ Անկարաքիի բսած էր արդէն (2). « Եթէ Ռուսիա եւ Թուրքիա համաձայն գտնուին՝ ամբողջ մահմետական աշխար– հը իրենց կողմը պիտի բանէ, բայց եթէ քառասյին վիճակ մը ստեղծուի Անատո– լուի մէջ, Թուրքիայէն ոչ մէկ շահ պի– տի քաղէք »:

Հարց է, թէ ինչո՞ւ Մոսկուայի նոր ներկայացուցիչը՝ Պուտու Մտիվանի բաժնուեցաւ Մուսթաֆա Սուպհիէն, որ մինակը իր ընկերներուն հետ անցաւ Էր– զրում, ուր ձերբակալուեցան բոլորը: Այնտեղէն Տրապիզոն փոխադրուելէ ետք, 1921 Յունուար 28ին՝ դէպի Ռուսաստան ճամբուն վրայ, բաց ծովուն վրայ բոլորն ալ մահացան: 1921 Մայիսին, փակուե– ցաւ այս «ոճրագործութեան» համար մօտաւոր վրէժի սպառնալիք ըրաւ Թուրք բուրժուազիային: Այսուհանդերձ եւ միաժամանակ, յանձնարարեց շարու– նակել օգնել Թուրքիոյ՝ միջազգային աշ– խարհակալներուն դէմ մղած իր պայքա– րին համար:

1921 Յունիս – Յուլիսի համայնավար Միջազգայինի Գ. Համագումարին վիճա– բանութիւններն ալ յանգեցան միեւնոյն եզրակացութեան: Թուրք համայնավար կուսակցութեան պատգամաւոր Սիւլէյ– ման Նուրի հետեւեալ յայտարարութիւնը ըրաւ (3).—

(Շար. – 9)

1) Անդ, էջ 143, 145, 149:

2) Ք. Քարապէքիր, Անդ, էջ 884:

3) Պիլլիոթէք տէր Կոմ. ինթէրն. ծգ. Համպուրկ, 1921, էջ 299:

…ւր գնահատական առողջարանին, որի …զօտնութիւնը ջրերի բուժիչ զօրու–թեանը խառնել է սրճացու վերարեր–ման ու մարդուն տուել լիարիւն կեան–քով ապրելու հնարաւորութիւն :
Սակայն ջերմուկեան բարիքների կող–քին կան նաեւ կարիքներ, որոնք մտա–հոգութեան առիթ են տալիս : Դրանք վե–րացնել, նշանակում է հարթել առողջա–րանի լաւից դէպի կատարեալը գնալու ճանապարհը :

ԻՆՉՈ՞Ւ ԷՔ ԼՌՈՒՄ…

Կարագանդացի բանուոր Սողեկովի'ն եւ Մեղրեցի ուսուցիչ Ղարիբեա'ն, ին–չո՞ւ չէք հարցնում Թիւ 1 առողջարանի վերակարգերին ․
— Ո՞ր մեղքի համար ենք մենք գիշե–րում ֆիզիոկաբինետում : Ինչո՞ւ լողանք–ներ ընդունելուց յետոյ «հանգստանում» ենք ծառերի հովի տակ եւ անկողին մըտ–նելու իրաւունք ստանում միայն գիշե–րայ կէսին : Չէ՞ որ առողջարան ենք ե–կել բուժուելու եւ ոչ տուժուելու :
Լռո՞ւմ էք, հաւանաբար, վստահ չլի–նելով, որ ձեզ կը լսեն, հաստատ իմա–նալով, որ մենակ չէք · ձեր բախտակից–ներից երկուսն էլ գիշերում են բուժքոյ–րերին յատկացուած սենեակում :
— Ուրիշ ելք չկայ, — ասացին առող–ջարանների վարչութիւնում, — ննջա–սենեակներում ճեղքուածք է : Ջրաբու–ժարանի, առողջարանների եւ հանգըս–տեան տների վարչութիւնը միայն Թիւ 1 առողջարան սահմանուածից 16 մարդ ա–ւելի է ուղարկել :
Լիքն են բնակեցուած նաեւ միւս ա–ռողջարանները : Շատ ննջասենեակներում 3 ժահճակալի փոխարէն դրուած են 4 : Լիքն բնակութեան փաստն առողջապահա–կան ոչ մի կանոնով չի արդարացւում :

ՈՄԱՆՔ ԷԼ ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ ԵՆ… ՇՈՒԿԱՅԻՑ

Ժողովրդական դարձուածքն է՝ ամէն օր նոյն կերակուրը չի ուտուի : Բայց առա Ջերմուկի առողջարաններին մա–տակարարող առեւտրական կազմակեր–պութիւնը գործնականում «ապացուցում» է, որ դա ամենեւին էլ ճիշդ չէ : Ականջի ետեւ գցելով գժգոհութեան շշուկները, նա ճաշարաններին հրամցնում է մշտա–պէս նոյն մթերքները՝ բրինձ, հնդկացո–րեն, գդմաճ, թթու դրած կաղամբ, չո–րացրած գաղար եւ սոխ : Եթէ այս հաս–տատուն ցանկին աւելացնենք պատրաստ–ուող ճաշատեսակների ոչ հաստատուն ո–րակը, ապա պարզ կը դառնայ, թէ ին–չու Թիւ 1 եւ առողջարաններում բու–ժուողներ երբեմն վերադառնում են սնուել հասարակական ճաշարաններում : Առի–թից օգտուելով նշենք, որ այդ ճաշա–րաններից մէկը պարզապէս ճանճարան է, իսկ միւսում՝ Թիւ 1ում, խախտւում են առեւտրի ու սպասարկման կանոննե–րը, ինչպէս ասում են՝ այդտեղ սպա–սարկողին մի աչքը հերիք է, սպասարկ–ուողին հազարն էլ քիչ է :
Սակայն շարունակենք :
Բուժուողներից ոմանց էլ կարելի է տեսնել չուկայից վերադառնալիս : Իրենց հետ նրանք ննջասենեակներ են տանում մրգեր ու բանջարեղէն, որովհետեւ ա–ռատութեան այս օրերին դրանցից չեն գտնում Ջերմուկեան ոչ մի առողջարա–նում : Չեն գտնում, որովհետեւ «պետա–ռի» ընկերները հանդստութիւնը գերա–դասում են խղճմտանքից :

ՀԻՆԸ, ԱՌԱՅԺՄ «ԱՆԲՈՒԺԵԼԻՆ»

Առողջարանի ջրերի հրաշքի մօտ բու–ժիչ յատկութիւնները չեն ներգործում միայն մի «հիւանդութեան» վրայ : Աւելի ճիշդ՝ բորբոքում են այդ չարիքը : Դա բժիշկների եւ միջին որակի բուժաշխա–տողների մեծ հոսունութիւնն է :
Այս տարուայ Մայիսի 20ից յետոյ 3 բժիշկ է փոխուել Թիւ 2 առողջարանում : Ներկայումս Թիւ ում 4ի փոխարէն աշ–խատում են միայն երկուսը : Նրանցից մէկն էլ Օգոստոսի վերջերին, առողջա–րանի բոլոր բուժքոյրերի հետ, գնալու է Երեւան :
Ինչո՞ւմն է Գաղտնիքը : Նրանում, որ առողջարանը չունի մշտական բուժաշ–խատողներ, մասնագէտների մեծ « հա–մալրումներ » են կատարւում ամրան սկզբներին, երբ Երեւանում սկսւում են շոգերը : Ջերմուկում աշխատանքի են անցնում մայրաքաղաքի առողջապահա–կան հիմնարկների այն մարդիկ, որոնք հերթական եւ իրենց հաշուին վերցրած արձակուրդի մէջ են : Առողջարան են չտապում ընտանիքով… եւ, երկու ամիս չանցած, «մնաս բարով» ասում :
Այս երեւոյթը նոր չէ : Առողջապահու–թեան նախարարութիւնը եւս գիտէ թէ Ջերմուկի բժիշկներից ու բուժքոյրերից շատերը հովեկներ են : Բայց թէ ինչո՛ւ տանում են, ներում այդ կարգի մարդ–կանց, երբեմն էլ սիրաշահում, անհաս–կանալի է :

Ժ · ՋՐԲԱՇԵԱՆ
Կ · ԱԶԱՐԵԱՆ

(Մնացեալը յաջորդով)

ՈՒՍՈՒՄԸ
ԱՅՍՕՐՈՒԱՆ ՖԻՆԼԱՆՏԱՅԻ ՄԷՋ

Զարգացումը՝ անհաւատալի չափերու հասած է Ֆինլանտայի մէջ : Կալուածա–տէրեր եւ հովիւներ ծանօթ են ոչ միայն իրենց երկրի գրականութեան՝ այլ նաեւ եւրոպականին : Սակայն, ի՞նչ բանի ար–դիւնք է ասիկա :
Այն բանին, որ յաղթահարուած է ան–գրագիտութիւնը : Ճշգրիտ ըլլալու հա–մար պէտք է ըսել, թէ անգրագէտներու թիւը հազիւ 0,03 առ հարիւրի կը հասնի : Եւ պէտք է նկատի ունենալ, թէ դեռ անցեալ դարու վերջերը, Ֆինլանտա քա–ղաքակիրթ երկիրներու ցանկին գլուխը չէր գտնուեր, այլ՝ ամենավերջը :
Սակայն, իրողութիւն է թէ Ֆինլան–տայի մէջ, կրթութեան պայքարը միշտ միասին ընթացած է երկրի ազատութեան պայքարին հետ : Ֆինլանտական լեզուի պաշտպանութիւնն ու տարածումը՝ վըճ–ռական գործօն հանդիսացան՝ ռուս դեր–իշխողի դէմ ազգային գոյութեան ամրա–պնդման համար :
Բնականաբար, առարկայական այս նը–պատակը խրախուսեց առաջին աշ–խարհամարտէն : Անկէ ետք է որ ըմբռնե–ցին, թէ ազգային ապահովութեան ամ–րապնդումը կապ ունի ազգային դաս–տիարակութեան հետ եւ ատոր համար, ուսումը պետութեան թիւ մէկ հարցը դարձաւ :

ՄԻԱԿԸ՝ ԱՇԽԱՐՀԻ ՄԷՋ

Եւ ասիկա կը նկատենք, երբ նայուածք մը նետենք կրթարաններուն վրայ — քա–ղաքին մէջ ըլլանք թէ ամենափոքր գիւ–ղին, լաւագոյն շէնքը՝ վարժարանն է : Իր ճարտարապետութեամբ հռչակաւոր այս երկրին մէջ, ամէնէն անուանի ար–ուեստագէտները շինած են վարժարան–ներ, որոնց նմանը չկայ ամբողջ աշխար–հի մէջ :
Ֆինլանտացի տղաքը նախակրթարանը յաճախել կը սկսին եօթը տարեկանին : Ֆինլանտայի մէջ այս տարիքը կը նախ–ընտրեն անոր համար, որ կը կարծեն թէ տղաքը պէտք է կարելի եղածին չափ ուշ ստանձնեն իրենց պարտականութիւնները կեանքին հանդէպ եւ թերեւս նաեւ անոր համար, որ Ֆինլանտայի մէջ, տղու մը դպրոց յաճախելը կը նշանակէ, թէ քա–նի մը քիլոմեթր պէտք է երթայ քալե–լով կամ սահնակով : Ութ տարուան պար–տադիր ուսման ընթացքին, առանց բա–ցառութեան, հարուստ թէ աղքատ, բո–լորը, կէսօրին ձրի տաք ճաշ կ'ուտեն վարժարանին մէջ եւ միշտ ձրի կը ստա–նան գիրքերը, բժշկական խնամք եւ եթէ պէտք ունին՝ հագուստ ու կօշիկ ալ : Վարժարանէն հինգ քիլոմեթրէ աւելի հեռու բնակող տղոց համար, պետու–թիւնը պարտադրաբար կը ստանձնէ ա–նոնց փոխադրութիւնը եւ հիւրընկալու–թիւնը :
Սակայն, վարժարանական շէնքերու գեղեցկութենէն եւ աշակերտներուն հա–մար այլազան կերպերով արտայայտուող ընկերային հոգատարութենէն զատ, այս երկրին մէջ կրթութիւնը աչքի կը զարնէ գլխաւորաբար ուսուցիչի տնտեսական եւ ընկերային դիրքով : Բոլորս ալ գիտենք, թէ ո՛րքան փոքր ամսական կը ստանայ ուսուցիչը կարգ մը երկիրներու մէջ : Ֆինլանտայի մէջ, որ բարձր թոշակներու երկիր չէ եւ ուր թոշակները գործաւո–րին համար 2500ի եւ վարպետ արհեստա–գէտին համար՝ 5000ի միջեւ կը տարու–բերին, ուսուցիչը առաջին անգամէն 5000 ամսականով կը սկսի : Շատ մը տեսա–կէտներով ալ, ընկերային նուիրապետու–թեան մէջ անոնց դիրքը կը համապա–տասխանէ այն դիրքին, զոր Իտալիոյ մէջ կը տրուի դատաւորներուն : Առանց իր հաւանութեան, կամ առանց իր մէկ օրի–նազանցութիւնը ապացուցուած ըլլալու՝ ուսուցիչ մը չի կրնար պաշտօնով ուրիշ տեղ դրկուիլ :

ՔԱՂԱՔԱՑԻԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ

Բնականաբար, իր կատարած այս կա–րեւոր դերը՝ կը պահանջէ նաեւ մասնա–գիտական յաւելեալ աշխատանք : Հելսին–կիի մէջ, կարգ մը երիտասարդ ուսուցիչ–ներ ինծի ըսին · « Մեր երկրի քաղաքա–կան եւ աշխարհագրական դիրքը նկատի առնելով, մենք մեր դասաւանդութիւն–ներէն դատ պարտաւոր ենք սկիզբէն պատրաստել նաեւ Ֆինլանտացի քաղա–քացին : Եթէ կ'ուզենք խորհրդային մեր դրացիներուն ապացուցանել որ մեր ժո–ղովրդավարական կամ՝ իրենց ըսածին պէս դրամատիրական դրութիւնը աւելի լաւ է, պէտք է մեր տղոց մէջ ամրապըն–դենք այն բացարձակ համոզումը, թէ նախ եւ առաջ պէտք է կատարեն պետու–թեան հանդէպ իրենց տնտեսական պար–տաւորութիւնները :
Խօսակիցներս աւելցուցին ·
« Միայն Աստուած գիտէ թէ տուրքերը ո'րքան ծանր են Ֆինլանտայի մէջ : Ամ–սական 6000 եկամուտ ունեցող մը, 20 առ հարիւրը պետութեան կուտայ : Ու–րիշ մը որ 10·000 եկամուտ ունի, 24 առ հարիւրը կուտայ : Մեր միակ սփոփանքը այն է, որ, ամէն տեղ յառաջդիմութիւն կ'արձանագրուի եւ ոչ ոք տուրքէ խոյս կուտայ, կամ դժուար ըլլալուն համար եւ կամ՝ անոր համար, որ ամէնքը կը խորհին թէ տուրքերը պէտք է վճար–ուին : Ուսուցիչը, նման համոզում մը կը ներմուծէ դեռատի Ֆինլանտացիի հո–գիին մէջ եւ այդ համոզումը անվթար կը մնայ հոն, անոր ամբողջ կեանքի ըն–թացքին : Եւ ասիկա մէկ օրինակն է այն բանին, զոր ուսուցիչներս աւելի կարե–ւոր կը նկատենք քան լաւ շարադրութիւն մը կամ խնդրի մը ճշգրիտ լուծումը » :
Ծանօթ է թէ Պիսմարք կ'ըսէր, որ բրուսիական կայսրութեան համար կա–րեւորը բրուսիացի զինուորը չէ, այլ՝ ուսուցիչը :
Այսօր, ճիշդ այդպէս է այս երկրին համար, որ ընկերային յառաջդիմութեան տեսակէտով՝ յառաջապահի դիրք ունի քաղաքակիրթ ժողովուրդներու մէջ :

Քաղեց ՎԱԶՐԻԿ

«ՅԱՌԱՋ»Ի ԹԵՐԹՕՆԸ (211)

ԵՐԼՏԸՁԻ ՊՈՄՊԱՆ

ՀԱԶԱՐ ԻՆԸ ՀԱՐԻՒՐ ԶՈՐՍ

Ապտիւլ Համիտ այս յայտնութեան առ–ջեւ պահ մը լռեց, իր մտքին մէջ իրա–ւացի կը գտնէր Սայիտ փաշայի դատե–լակերպը · ճիշդ է, կ'ըսէր ինքնիրեն, Ա–նգլիա եւ Ռուսիա դաշնակցած, Ռու–սիոյ նահանգներս պիտի յափշտակեն անշուշտ : Բայց միւս կողմէ կը խորհէր թէ այս զինուորական ապստամբութեան մէջ երրորդի մըն ալ անտեսանելի, խորհըր–դաւոր, անհօշակելի մատը կար, Անգ–լիոյ մատը, սակայն Սայիտ փաշան անհամաձայնէր մարդ, կ'ըսէր Ապտիւլ Հա–միտ ինքնիրեն, այդ մատը պիտի չուզէր երեւան հանել :
— Սայիտ փաշա, ըսաւ յանկարծ, ես ալ ձեզի պէս կը խորհիմ, գիտեմ թէ Ռուսիոյ եւ Աւստրիոյ կողմէն դրդուած են, բայց կը մոռնա՞ք Անգլիոյ դերը… :
— Ի՞նչպէս, կմկմաց Քիւչիւք Սայիտ :
— Կը մոռնա՞ք Ռէվալի տեսակցութիւ–նը, շարունակեց Հինքեարը, հոն չհիւս–ուեցա՞ւ դուլպան, հոն չվճռուեցա՞ւ կայսրութեանս ճակատագիրը, Էտուարտ Է · եւ Նիքոլա Բ ·, այս երկուքին աղե–տալի մերձեցումը չէ՞ր որ յեղաշրջեց քաղաքականութիւնը :
— Ձեմ մոռնար Ռէվալը, յարեց Քիւ–չիւք Սայիտ, ընդհակառակն՝ աւելի քան երբեք կը յիշեմ այդ հռչակաւոր տեսակ–ցութիւնը, որ ինչպէս ա՛յնքան իրաւացի կերպով յայտնեց Ձեր Օգոստափառու–թիւնը, սահմանուած է յեղաշրջելու ե–րոպական հաւասարակշռութիւնը · իրաւ է, այդ երկու վեհապետներու միջեւ խիստ կարեւոր, եւ մեր երկրին հետ կապ ունեցող կենսական խնդիրներ յուզուած են անշուշտ, եւ այդ օրէն ի վեր է որ կը նշմարուի խլրտում մը զինուորական աշ–խարհին մէջ · ահաւասիկ թէ ո'ւրկէ ծա–գում առած է Մանասթըրի ապստամբու–թիւնը եւ միեւնոյն ժամանակ…
— Ի՞նչպէս, ի՞նչպէս, ընդմիջեց Հինք–եարը, լաւ չմըռնեցի · կրկնեցէք, Սայիտ փաշա :
— Մանասթըրի ապստամբութիւնը, շարունակեց նախկին մեծ եպարքոսը, ծագում առած է, եթէ չեմ սխալիր եւ եթէ ստոյգ են իմ ստացած տեղեկու–թիւններս, Երիտասարդ Թուրքերէն · հայրենիքին սպառնացող վտանգին հան–դէպ, վերջին գերագոյն փորձ մը կ'ընեն անոնք :
— Սայիտ փաշա, կշտամբեց Հինքեա–րը, այսօր շատ խորհրդաւոր կը խօսիք, քիչ առաջ կ'ըսէիք թէ Մանասթըրի ա–պըստամբութեան մէջ օտար թշնամինե–րու մատը կայ, եւ հիմա ելեր Երիտա–սարդ Թուրքերուն կը վերագրէք զայն, ո՞րը ճիշդ է :
— Երկուքն ալ, Վեհափա'ռ տէր, պա–տասխանեց Սայիտ փաշա, թէ' ներքին եւ թէ արտաքին են պատճառները, ներ–սէն Երիտասարդ Թուրքերը, իսկ դուր–սէն, մեր դարաւոր թշնամիները :
Այս տեսակցութիւնը տակաւին պիտի տեւէր, եթէ կայսերական առաջին քար–տուղարը, արարողապետին ընկերացած, դահլիճ չմտնէր :
— Ի՞նչ է ան, հարցուց Ապտիւլ Հա–միտ, դառնալով Գարա Թահսինի, որ հոն, դահլիճին մէջտեղը, բարեւ բռնած կը սպասէր :
— Վեհափա'ռ տէր, պատասխանեց ա–ռաջին քարտուղարը, նոր հեռագիր մը :
— Ի՞նչ հեռագիր է, յարեց Ապտիւլ Համիտ, բերէք նայիմ :
Գարա Թահսին, ձեռքի հեռագիրը Հինքեարին երկնցուց, որ զայն սկսաւ արագօրէն աչքէ անցընել : Յանկարծ վեր ցատկեց տեղէն եւ գոռաց ·
— Աս ի՞նչ է, կատղեցա՛ն :
— Որո՞նք, որո՞նք, հարցուց Սայիտ փաշա, հանդարտեցէք, Վեհափա'ռ :
— Օ՜… բացագանչեց Ապտիւլ Հա–միտ, սկսան մարդ սպաննել, աս ի՞նչ է :
— Որո՞նք, Վեհափա'ռ տէր, կ'աղա–չե՛մ, որո՞նք են, կը պաղատէր Սայիտ փաշա :
— Ձեր Երիտասարդ Թուրքերը, պա–տասխանեց Համիտ կճող հեգնանքով մը, անոնք որ կայսրութիւնը պիտի փրկէին :
Սայիտ փաշա լռեց :
Յետոյ, նոյն թափով շարունակելով ·
— Սրիկանե՛րը, հայհոյեց Համիտ, օ–տարին ձեռքը գործիք են եղեր, եւ երկ–րիս անդորրութիւնը կը վրդովեն :
— Ո՞վ է սպաննուեր, ո՞վ, Վեհափա'ռ, հարցուց Սայիտ փաշա :
— Օսման փաշա՛ն, Օսմա՛ն փաշան, պատասխանեց Հինքեարը :
— Խնդիրը լուրջ է ուրեմն, Վեհափա'ռ, յարեց Սայիտ փաշա :
— Լո'ւրջ… կշտամբեց Հինքեարը, զինուորական ապստամբութիւն մըն է ա–սիկա, փաշա :
— Այո', յարեց Սայիտ փաշա մեքենա–կանօրէն, զինուորական ապստամբու–թիւն մըն է, բանակին մէջ մուտք գտած է համաճարակը :

ՍՄԲԱՏ ԲԻՒՐԱՏ

(Շար ·)

Հ. Բ. Ը. Մ.ի Եւրոպայի Յանձնաժողովը խոր ցաւով կը ծանուցանէ իր Նախագահին՝

ԶԱՐԵՀ ՊԷՅ ՆՈՒՊԱՐ

մահը որ տեղի ունեցած է Ժընեւ, Օգոստոս 19ին:

Յուղարկաւորութիւնը կը կատարուի այս չորեքշաբթի Օգոստոս 24, Ժընեւի մէջ:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Ֆ. Կապ. Խաչի Սէն Ժեռմէի մասնաճիւղը շնորհակալութեամբ ստացած է Պ. Վարդան Փափազեանէ 20 ֆրանք, Պ. Րաֆֆի Սվաճեանէ 10 ֆր., ողբացեալ Սաթենիկ Փափազեանի (ծնեալ Պօյաճեան) մահուան առթիւ:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ՀԱՄԱԽԱՐԲՑ. Հայր. Միութեան Մարսէյլի մասնաճիւղի ընդհ. անդամական ժողովը այս շաբաթ ժամը 21ին, սովորական հաւաքատեղին: Օրակարգ՝ տեղւոյն վրայ:

Վարչութիւնը կը խնդրէ իր բոլոր անդամներէն ներկայ գտնուիլ տարւոյս վերջի այս կարեւոր ժողովին:

ԴՊՐՈՑԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Դպրոցասէր Տիկնանց վարժարանին 1963 – 1964 տարեշրջանի արձանագրութիւնները սկսած են: Անոնք որոնք կը փափաքին ղրկել իրենց զաւակները պէտք է այժմէն իսկ դիմում կատարեն հաստատութեան տնօրէնութեան:

Ա.— ՖՐԱՆՍԱԿԱՆԸ, որ տասացի կերպով կը հետեւի պետական լիսէններու արդիական բաժնի պաշտօնական ծրագրին — անգլերէն եւ սպաներէն լեզուներով —:


Բ.— ՀԱՅԿԱԿԱՆԸ, որ կ'օժտէ սանուհիները հայադիտական ծանօթութիւններով, հայ լեզուի, գրականութեան, հայ կրօնքի եւ պատմութեան, Հայաստանի աշխարհագրութեան մարզերուն մէջ:

Աշակերտուհիներ կ'ընդունուին ութ տարեկանէն սկսեալ: Մանրամասնութեանց համար դիմել հաստատութեան տնօրէնութեան:

1, Bd. du Nord, LE RAINCY (S. et O.)
Tél : 927-01-72

Դպրոցասէրի ուսման ծրագիրը կ'ընդգրկէ երկու ուրոյն բաժիններ:

ԱՐՋԱԿՈՒՐԴԻ ԱՌԹԻՒ
ՅԱՃԱԽԵՑԷՔ



ՃՕՇԿՈՒՆԵԱՆ-ՈՐԴԻ
ՄԱՐՍԷՅԼԻ ԾԱՆՕԹ ՃԱՇԱՐԱՆԸ

Ուր պիտի գտնէք արեւելեան համադամ կերակուրներ եւ մասնաւորաբար

ՏԷՕՆԷՐ – ՔԷՊԱՊ

եւ արեւելեան զանազան խմորեղէններ

RESTAURANT DJOCHGOUN
4. Rue de la Butte, MARSEILLE 2°
(Place Jules Guesde)

Շ. ՄԻՍԱՔԵԱՆ

Օրեր եւ Ժամեր

Լոյս Տեսաւ



Մատենաշար — ՅԱՌԱՋ — Կեդրոնավայր
ԳԻՆ
Ֆրանսա՝ 15 Ֆր.

— Առանձին առաքումի ծախքը —

«ՅԱՌԱՋ»

ՀԱՅ ԲՈՅԺ

ԺՈՂ. ԱՄՍԱԹԵՐԹ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ

խմբագիր՝ Շ. ՆԱՐԴՈՒՆԻ

Խմբագրին երկար բացակայութեան պատճառաւ, լոյս տեսած չեն ՀԱՅ-ԲՈՅԺի 1962 եւ 1963 տարիներու թիւերը:

Խմբագիրը, որ նոր վերադարձաւ Ամերիկայէն, գործի ձեռնարկած է արդէն: Ծրագրած է հրատարակել երկու բացառիկ թիւեր, իւրաքանչիւրը 150 էջ: Առաջինը պիտի կրէ 1962 թուականը, երկրորդը՝ 1963 թուականը: Այս երկուքը մէկ տարի հաշուելով՝ անոնք որ վճարած են 1962, վճարած կ'ըլլան նաեւ 1963 տարին:

Այս ձեւով, խմբագիրը կը խորհի ՀԱՅ-ԲՈՅԺի հրատարակութիւնը ամբողջացնել եւ կանոնաւորել մինչեւ յառաջիկայ տարի, եւ 1964 տարուան թիւերը լոյս ընծայել ամսէ ամիս՝ Յունուարէն սկսեալ:

Ամերիկայի նոր բաժանորդները եւս, որոնք վճարած են այս տարուան համար (1963), պիտի ստանան ՀԱՅ-ԲՈՅԺի 1962 եւ 1963 թիւերը:

Այն բաժանորդները, որոնք յետնեալ պարտք ունին, թող բարի ըլլան իրենց վճարումը հասցնել մինչեւ տարեվերջ: Հին պարտքերուն հետ՝ ներկայ տարին եւս վճարողներն են միայն, որ պիտի ստանան ՀԱՅ-ԲՈՅԺի բացառիկները, խմբագրուած բժշկական, գրական, պատմական, շատ հետաքրքրական եւ ճոխ բովանդակութեամբ,— արդէն տպագրութեան յանձնուած:

Այս առթիւ շնորհակալութիւն այն հաւատարիմ բաժանորդներուն, որոնք ՀԱՅ-ԲՈՅԺի հրատարակութիւնը ընդհատուած ըլլալով հանդերձ՝ խմբագրին բացակայութեան պատճառաւ, վճարումները կատարած են օրը օրին ի վկայութիւն իրենց բարեկամութեան եւ վստահութեան:

Կը խնդրուի Հայրենիք, Ասպարէզ, Արմենիա, Ազատ Օր, Յուսաբեր, Ազդակ, Այգ, Ալիք թերթերու խմբագրութիւններէն, ինչպէս և Սիոն, Հասկ, Հայ կեդրոն, Կիլիկիա, Հայաստանեայց եկեղեցի պարբերականներէն, որ հրատարակեն այս յայտարարութիւնը գէթ 2 – 3 անգամ:

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Մարսէյլի մէջ Դաշնակցութեան Օրը կը տօնուի Հոկտեմբերի 5ին Սալըն Ալհամպրա:

ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ

Կապոյտ Խաչի Վիէնի մասնաճիւղի տարեկան դաշտահանդէսը տեղի կ'ունենայ Սեպտեմբեր 1ին, առաւօտէն մինչեւ երեկոյ «Իւ–Էս–Ա.»ի մարզադաշտին վրայ (Թանըրիին քով):

Գեղարուեստական ճոխ բաժին: Բանախօսութիւն, երգ, արտասանութիւն եւ հայկական պարեր:

Ճոխ պիւֆէ. աղանդերներ եւ շամփուրով խորոված:

Սիրով կը հրաւիրուի գաղութի հայութիւնը:

Անձրեւի պարագային «Խաժակ» սրահը:

ՕՐ. ԱՆԺԷԼ ՊԻՉԱՔՃԵԱՆ
Պ. ԼԵՒՈՆ ԱՒԱԳԵԱՆ
Ամուսնացած
Կնքահայրութեամբ
Տէր եւ Տիկին Միքայէլեանի
ԺԱԼԻԷՕ Յուլիս 1963 ԿՐԸՆՈՊԼԸ

Imprimerie Speciale
du Journal « Haratch »
32, Rue de Trévise, Paris (9e)

ՀՐԱՆՏ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

51, Rue Monsieur-le-Prince, PARIS - 6e — Chèque Postal : 1278-35

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՇԻՐՎԱՆԶԱԴԷ, Երկերի ժողովածու, 10 հատոր լաթակազմ	70 Ֆր.
ՍՏԵՓԱՆ ԶՕՐԵԱՆ, Երկերի ժողովածու, 7 հատոր, լաթակազմ	56 Ֆր.
ՍՏԵՓԱՆ ԶՕՐԵԱՆ, Պապ թագաւոր, լաթակազմ	10 Ֆր.
ՍՏԵՓԱՆ ԶՕՐԵԱՆ, Հայոց բերդը, լաթակազմ	8 Ֆր.
ՎԱՀԱՆ ՏԷՐԵԱՆ, Երկերի ժողովածու, 2 հատոր լաթակազմ	14 Ֆր.
ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՒԻԹ, մեծադիր, գունաւոր նկարներով, լաթակազմ	10 Ֆր.
Վ. ԱՆԱՆԵԱՆ, Հայաստանի կենդանական աշխարհը, Բ.	8 Ֆր.
ԱՐՍԷՆ ՏԷՐՏԷՐԵԱՆ, Երկեր (Աբովեան Պռօշեան, Պարոնեան)	17 Ֆր.
ՄՈՒՐԱՑԱՆ, Պատմուածքներ, գունաւոր նկարներով	5 Ֆր.
ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑԻ մասին յիշողութիւններ. լաթակազմ	7·50 Ֆր.
ՄԻՔ. ՇԱԹԻՐԵԱՆ. Գարունը նորից եկաւ. 296 էջ.	5 Ֆր.
ԱԲԳԱՐԵԱՆ. Մատենադարան(անգլ.) 18 գունաւոր մանրանկարներ	3 Ֆր.
ՀԵՆՐԻԿ ԹՈՒՄԱՆԵԱՆ. Երգի ծնունդը. բանաստեղծութիւններ	3·85 Ֆր.
Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ. Տաղեր, 200 էջ. լաթակազմ	3·50 Ֆր.
ՍՈՎԵՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ. Ա. 800 էջ. լթկզմ.	16 Ֆր.
ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ, Անլռելի զանգակատուն, Պէյրութ, 1963	10 Ֆր.

Առաքման ծախքը գնողին վրայ

ԳՐԱՏՈՒՆՍ ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻՆ Է
ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՁԱՅՆԱԳՐԵԱԼ ԲՈԼՈՐ ԵՐԿԵՐՈՒՆ
ՃՈԽ ՄԹԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԵՒ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆՑ

ԼՈՅՍԸ ԳՈՅՆ Է.... ԳՈՅՆԸ ԼՈՅՍ Է
ՁԵՐ ՏԱՆԸ ԼՈՅՍ ՏՈՒԷ՛Ք.... ԹՈՄԼԱՔԻ ԳՈՅՆ ՏՈՒԷ՛Ք

Ձեր բնակարանը կը լուսաւորուի
Եթէ ներսը եւ դուրսը

ՎԵՐԱՆՈՐՈԳԷՔ – ԶԱՐԴԱՐԷՔ – ՆԵՐԿԷՔ

ԹՈՄԼԱՔ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐՈՎ

PEINTURES THOMLAC

16 bis, Bd. Sébastopol, Paris 4e

Tél. ARC 26-61 – Métro : Halles et Chatelet

136, RUE DES BOURGUIGNONS — ASNIERES - BOIS COLOMBES (Seine)
Tél : GRE. 09-47

11, BD. DE LA REPUBLIQUE — LA GARENNE (Seine)
Tél. : STA. 19-06

ԱՆՄՐՑԵԼԻ ԳԻՆԵՐՈՎ

Ամէնէն արդիական, նուրբ եւ ընտիր ճաշակով պատրաստուած՝ առաջնակարգ ներկեր: Բնական եւ արուեստական բազմերանգ գոյներու մեծ ընտրութիւն: Նորոյթ խաղաներկեր, պատի գեղեցիկ թուղթերու ճոխ ընտրութիւն: Գետնի համար՝ ամէն տեսակ — լինոլէոմ եւ փլասթիք — ծածկոցներ.—

Tapiflex — Tapisom — Carpette

Ձեր բնակարաններուն արտաքին եւ ներքին խնամքներուն համար անհրաժեշտ բոլոր նիւթերը:

Ամէն գնորդի կը նուիրուի յատուկ տետրակ մը, որու շնորհիւ կրնայ 10–30 առ հարիւր զեղչ ունենալ:

ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐ

52, RUE CHALON, PARIS 12e — 64, BLD. DE BELLEVILLE, PARIS 20e
166, AV. ARISTIDE BRIAND — PAVILLONS - SOUS-BOIS (Seine)
4 bis, RUE PAUL VAILLANT COUTURIER — ARGENTEUIL (S. et O.)
24, RUE PAUL VAILLANT-COUTURIER — ALFORTVILLE (Seine)
48 bis, RUE DALAVRAC — FONTENAY - SOUS - BOIS (Seine)

ՅԱՌԱՋ

Օ Ր Ա Թ Ե Ր Թ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

Le PREMIER QUOTIDIEN ARMENIEN en EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction et Administration : 32, Rue de Trévise - PARIS-9e

Fondé en 1925 — Téléph. : PRO. 86-60

R. C. Seine 57 A 2731 — C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա՝	Տար. 50 Ֆ.	Վեցամսեայ՝	27 Ֆ.
Արտասահման՝	Տար. 60 Ֆ.	Հատը	0.30 Ֆ.

ՇԱԲԱԹ 24 ՕԳՈՍՏՈՍ

SAMEDI 24 AOUT 1963

LE NUMERO : 0,30 FR.

39րդ ՏԱՐԻ — Թիւ 9690

Fondateur : SCHAVARCH MISSAKIAN

39e ANNÉE — N° 9690

ՆԵՐԳԱՂԹԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

(Ի՞նչ կը գրեն Հայաստանի... դռնապանները)

Բ.

Ըստ Պայքարի, ազգահաւաքման ձեռնարկին ստեղծած «տաղնապին», պարզելով՝ ողբերգութեա՛ն գլխաւոր պատճառն այն է որ ներգաղթը կատարուած է գնդուածային ձեւով։ Եւ Հայաստան մտնելու փութկոտութեամբ՝ շատեր խըռնուած են կարաւանը, խճողում տեղի ունեցած է Հայաստանի դռներուն առջեւ։

Այս պատճառաբանութենէն մեկնելով, Պայքար կը գտնէ ազգահաւաքում կատարելու լաւագոյն եղանակը.— Շարունակական ներգաղթ։

Ի՞նչ կը նշանակէ այս բացատրութիւնը։

«Շարունակական ներգաղթ կ'ենթադրէ բաց դուռ հայրենիք մտնելու եւ հոն հաստատուելու»։ Հայերէնը հայերէն չէ, բայց Պայքարի ընթերցողը, երբ քիչ մը ճնշէ իր խելքին, կը հասկնայ անոր։ Եւ կրնայ հետեւցնել, ինչպէս աթերթն ալ կ'ըսէ, թէ «երբ հայրենի դուռը մշտաբաց է, պատճառ չկայ որ անոր առջեւ խճողում տեղի ունենայ»։

Մեր կարգին, մենք ալ զօռ տալով մեր խելքին, կը հետեւցնենք այս շատ խոր իմաստութենէն, թէ որեւէ տաղնապ տեղի չունենար այլեւս, երբ ներգաղթը կատարուի օ ռալանքի, այսինքն յամրաքայլ, կամաց կամաց։ Աւելցնենք՝ կաթիլ առ կաթիլ, եւ ոչ թէ հեղեղի պէս։

Այս հաշւով՝ ազգահաւաքումը կը ստանայ շարունակական ներգաղթի ձեւը։

Ամէնքին ծանօթ է Լենինեան յեղափոխութեան նկարագիրը, որ շատ քննադատուեցաւ ոչ ըստ էութեան, այլ ըստ եղանակին։ Յեղափոխութիւն բառին յեղաշրջում մըն է որ կը կատարուի կարճ ժամանակի մը մէջ, մինչդեռ ահա 45 տարիէ ի վեր կը շարունակուի ռուսական յեղաշրջումը՝ յեղափոխութեան տալով աւետարանական եղանակ մը։

Նոյն ձեւով, «հայրենի պատկան իշխանութիւնները», ինչպէս կ'ըսէ Պայքար, «շարունակական ներգաղթի դրութիւնը որդեգրելով», ազգահաւաքումին կուտան խճճանակաճ ձեռնարկի մը ձեւը։

Ամէն տարի՝ քանի մը հազար հոգի, միաժամանակ՝ քանի մը հազար թըմբուկ, թէ «ներգա՞ղթ կը կատարուի», եւ ամէնքը երգ մըն ալ՝ «համբերէ՛, հոգիս, համբերէ՛», — կը կարծէ՞ք թէ գաղութ կը փրկուի, այսպէս օ ռալանքի։

Եթէ տարեկան 5.000 հոգի փոխադրուի Հայաստան, 200 տարի պէտք է Հայաստան փոխադրելու համար 1.000.000 հոգի։ Անշուշտ եթէ այս միլիոնը չաւելնայ բնական ծնունդներու աճով։ Ճիշդ է թէ 200 տարին շատ է, երբ ձուլումը արագ կատարուի։ Կամ թէ 200 տարին ի՞նչ է՝ եթէ «հայրենիք ընդունուելն այն չափով միայն որ տրամադրելի բնակարաններ գոյութիւն ունին հայրենի հողին վրայ»։

Պիտի կրնայ առարկել թէ ներգաղթը կապուած է բնակարանային շինարարութեան։ Դռնապանները կը վկայեն թէ գնդուածային ներգաղթին բերմամբ յառաջացած բնակարանային տաղնապը ամէնէն աւելի ցաւ ու մտահոգութիւն պատճառեց հայրենի պատկան մարմիններուն, որոնք ծանր զգացին իրենց ուսերուն վրայ բեռցուած պատասխանատուութիւնը»։

Հիմա, երբ Պայքար հրապարակ նետած է «շարունակական ներգաղթի դրութիւնը», զոր «որդեգրեր են հայրենի պատկան մարմինները», վստահ կարելի է ըլլալ թէ «մինդամ ընդմիշտ առաջքն առնուած կ'ըլլայ նոր բնակարանային տաղնապի մը»։

Ուրեմն, այս հոգն ալ վերցաւ։

Կը մնայ խորհիլ ուրիշ ցաւի մը մասին։

«Հայաստանի մէջ այն կարծիքը կար թէ ներգաղթողները Երեւան կամ Երեւանի շրջակայքը բնակութիւն հաստատելու են»։

Ինչո՞ւ։ Այս մասին բացատրութիւն մը չկա՞յ «հայրենի ներկայացուցիչներու յայտարարութեանց» մէջ։

Պայքարի գիտցածն այն է միայն թէ «այդ տեսակէտն ալ խճողումի եւ դժուարութիւններու տեղի տուաւ»։ Ու կը շարունակէ.— «Այդ մասին բազմիցս արտայայտուած ենք, ըսելու համար թէ հայրենի քաղաքներն ու գիւղերը նո՛յնքան թանկարժէք են որքան մայրաքաղաք Երեւանը»։

Եւ Պայքար կը յայտարարէ թէ «ուրախ եւ հպա՛րտ է», որ «Հայաստանի ղեկավարութիւնն ու ներգաղթի պատուիրակներն ալ այժմ միեւնոյն կերպով կը մտածեն»։

Հայաստանասէր չըսեն ատոնց՝ ուրիշ ի՞նչ ըսես։ Աւելի ճիշդ է ըսել «Հայաստանի առաջնորդներ, արտասահմանէ՛ն ղեկավարելու պայմանով, արտասահմանէ՛ն թելադրանքներ ղրկելու համար «հայրենի երկրին»։

Ահա «Եգիպտոսէն հայրենադարձի լիազօր պատուիրակ Ռուբէն Թումանեան միեւնոյն գաղափարն է որ կ'արտայայտէ տպաւորիչ ազդուութեամբ.— Մենք չենք ցանկանում միայն Երեւան կառուցանել, այլ ցանկանում ենք Հայաստա՛ն կառուցանել»։

Այնպէս որ, այժմ «շարունակական ներգաղթի դրութեան որդեգրումը կարելի կը դարձնէ նաեւ հայրենադարձներու տեղաւորումը զանազան մեծ ու պզտիկ քաղաքներու մէջ, ինչպէս Լենինական, Կիրովական, Ղափան, Հրազդան, Ալավերդի, Լուսաւան»։

Ոսկի՛ կ'արժէ «շարունակական ներգաղթի դրութիւնը», որովհետեւ, ինչպէս Պայքար կը հաստատէ, այս դրութիւնը կ'ենթադրէ նաեւ հոգեկան անդորրութիւն մը, որ կարելի չէ ստորագնահատել»։

Ի՞նչ «հոգեկան անդորրութիւն» է ատիկա։

Հրամմեցէք.—

«Հայահոծ գաղութներու մէջ կան հօծ թիւով Հայեր, որոնք սկզբունքով համաձայն են հայրենադարձի, բայց լուրջ պատճառներով չեն կրնար անմիջապէս իրականացնել իրենց բաղձանքը։ Այդպիսիներ յուսահատելու չեն, որովհետեւ հայրենի դռները ընդմիշտ բաց են ներգաղթել փափաքող բոլոր Հայերուն առջեւ։ Անմիջապէս ներգաղթել չկրցողները այլեւս ո՛չ միայն յանցապարտութեան բարդոյթ կ'ունենան (Խմբ.— Ճիշդ այսպէս գրուած), այլ պատեհութիւն կ'ըն– ծայեն անմիջապէս ներգաղթել կրցողներուն՝ անյապաղ իրականացնելու իրենց երազը։ Հայաստանի պատկան մարմիններն ալ շատ դժուարութիւններէ զերծ կը մնան, փոքր թիւով հայրենադարձներուն թէ՛ բնակարան եւ թէ գործ գտնելու կարելիութիւն ունենալով»։

Առաւելութիւն մը եւս ունի «շարունակական ներգաղթը», ատիկա կը կայանայ «ազգային կենսունակութեան մէջ», որ յատուկ է այս դրութեան։ Արդարեւ, ներկայ դարուս քաղաքակրթութեան պատմութեան ուսումնասիրութիւնը ո– րոշապէս ցոյց կուտայ թէ քաղաքական ապահովութիւն վայելող եւ քաղաքակըրթական բարձր մակարդակի վրայ գտնուող ժողովուրդները միայն ի վիճակի են շարունակական ներգաղթ կազմակերպելու»։

Ըսողներ կան թէ դաշնակցական եւ ռամկավար թերթերը շուն ու կատու դարձած են։ Սխալ կարծիք։ Ահաւասիկ տեսէք, դաշնակցական թերթ մը իր խմբագրական սիւնակին մէջ կը հիւրասիրէ ռամկավար թերթի մը խմբագրականը։

Անշուշտ, Պայքար այդ խմբագրականը շարադրած է իմաստութիւն ծախելու համար, իսկ Յառաջ կը հիւրասիրէ... զուարճանալու համար։

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ԾԱՆՐ ԿԱՑՈՒԹԻՒՆ ՎԻԷԹ-ՆԱՄԻ ՄԷՋ

ՀԱԶԱՐ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Մինչ ամերիկացի դեսպանը Սայկոն կը ժամանէր, կառավարութիւնը յայտարարութիւն մը կը հրապարակէր ուր ի մէջ այլոց կը շեշտէր.—

«Պիտի չհանդուրժենք կրօնական ոչ մէկ չահագործումի՝ քաղաքական նպատակներու համար, ոչ ալ կրօնքներու օգտագործման՝ անհարեկչական քարոզչութեան կամ պետութեան դէմ դաւելու համար։ Բոլոր անոնք որոնք կը վնասուին պաշարման վիճակի առաջին միջոցներէն, լաւ վերաբերում կը վայելեն։ Ազատութիւնը կը վերադտնեն այնքան շուտ որքան շուտ վերջանայ երկրայինին եւ երկնայինին շփոթութիւնը»։

«Ազգային քաղաքականութիւնը կը ձգտի ստեղծելու ամէնէն նպաստաւոր պայմանները Սահմանադրութեան ոգիին իրագործման եւ օրէնքին գործադրութեան համար առանց դասակարգի, ցեղի կամ կրօնքի խտրութեան։ Այս քաղաքականութիւնը պիտի գործադրուի պուտտայական հարցին մէջ։ Անոնք որոնք խ– կալէս զուած են Պետութեան ապահովութեան դէմ, զինուորական արդարութեան Ատեանին առջեւ պիտի քաշուին»։

Սայկոն պաշարման վիճակի մէջ ապրող քաղաքի մը պատկերը կը պարզէ։ Ժամը 9ին ճաշարան, սրճարան, թատրոն, սինեմա, բոլորն ալ կը փակուին։ Ժողովրդական թաղերու մէջ խանութները փակ կը մնան նոյնիսկ օրուան մէջ։

Ամերիկեան աղբիւրէ հասած լուրերու համաձայն, հազար հոգի ձերբակալուած է, պատերազմական վիճակի հռչակման օրէնքէն ի վեր, ատոնց մէջ է նաեւ Վիէթ-Նամի պուտտայականներու գերագոյն պետը՝ Զիչ-Թին Խիէթը։ Կ'ըսուի թէ այս ձերբակալուածներուն մէջ կան նաեւ համայնավար գործակալներ, որոնք սակայն կը զատուին պուտտայականներէն, որպէսզի Զինուորական Ատեան քաշուին։ Ուաշինկթընի մէջ կը յայտարարեն թէ ոչ մէկ լուր ունին այս մասին։

Լոնտոն գտնուող երկու վիէթնամցի եպիսկոպոսներ յայտարարած են թէ կռիւը միայն կառավարութեան եւ պուտտայականներու միջեւ է։ Շատ ազդուած վերջին դէպքերէն, երկու կրօնաւորները շեշտած են.— «12 միլիոն բնակիչի վրայ, մէկ միլիոն 400 հազար կաթողիկէ կայ։ Ուրեմն փոքրամասնութիւն մըն ենք անոնց դէմ, զորս առանց պէչ իմաստի հեթանոս կը կոչեն։ Ֆրանսայի մէջ չեն գիտեր յաճախ, բայց կռիւը կառավարութեան եւ պուտտայականութեան միջեւ է, ոչ՝ պուտտայականներուն եւ կաթողիկէներուն»։

Օսսեռվաթոռէ Ռոմանօ որ Վատիկանի բերանը կը նկատուի, կը գրէ թէ Կաթողիկէ Եկեղեցին կը դատապարտէ բոլոր բռնատիրական արարքները, ուրկէ ալ գան անոնք»։

× Ուաշինկթընի վիէթնամցի դեսպանը հրաժարած է իր պաշտօնէն, տարակարծիք ըլլալով իր կառավարութեան հետ։

Ամերիկեան բովանդակ մամուլը շատ դժգոհ է Վիէթնամի դէպքերէն եւ ընդհանուր կարծիքն այն է որ Տիէմ չի կրնար յաւիտենապէս իշխանութեան գլուխ մնալ եւ Ամերիկացիներու կոթնիլ եթէ իր մեթոտները չփոխէ։

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԱՆԳԼԻԱՅԷՆ կը հաղորդեն որ Մայիս 21ի ձախողած պետական հարուածին 1459 ամբաստանեալներու դատավճիռը պիտի տրուի Սեպտեմբեր 11ին։

ՄԱՐՈՔԻ Թագաւորը դահաժառանգ մը ունեցած է առջի օր։ Հասան Բ.ի երկրորդ զաւակն է։ Առաջինը՝ աղջիկ մըն էր որ Հռոմ ծնաւ անցեալ տարի։

ԻՆԹԵՐՓՈԼԻ (միջազգային ոստիկանութեանց ցանց) 32րդ համագումարը բացուած է առջի օր Հելսինքիի մէջ։

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ կառավարութիւնը յայտարարեց թէ Չինաստան չի կրնար հիւլէական զէնքեր արտադրել առանց վըտանգելու իր տնտեսութիւնը։

ՖՐԱՆՍԱՅԻ ճամբաներուն վրայ 142 մեռեալ եւ 4520 վիրաւորներ եղած են Օգոստոս 11էն 15։

ՔՈՐՍԻՔԱՅԻ բանտարկեալ մը, ներշնչուելով Վիէթնամի քուրմերէն, ուզած է ողջ-ողջ այրիլ, իշխանութեանց ու– շադրութիւնը հրաւիրելու համար կըղզիին տնտեսութեան վրայ։ Բարեկամներ տարհամոզած են զինքը եւ մանաւանդ տեղատարափ անձրեւ մը, որ թրջած էր խարոյկը, արգելք եղած է այդ փորձին։

ՌԻՕ-ՏԷ-ԺԱՆԷՐԻՕՅԻ մէջ Ժօրժ Պիտօ «Պատուոյ վկայական» մը ստացած է Պրազիլի Համալսարանի Խորհուրդի անդամ Օսքար Սթիվընսընէ։ Այդ վկայականը տրուած է ի յարգանս նախկին վարչապետին գործունէութեան «Ֆրանսական դիմադրութեան գլուխը նացի բռնակալութեան դէմ պայքարին մէջ»։ Ժօրժ Պիտօ իր շնորհակալութեան խօսքին մէջ յայտարարած է. «Բռնութեան առաքեալ մը չեմ, բայց ուր որ բռնութիւն կայ, դիմադրութիւն կայ»։ Այս ընդունելութեան առթիւ կը հերքուի որ Պիտօ Տոքթոր Հոնորիս Քաուզայի տիտղոս ստացած ըլլայ։ Կը ճշդուի նաեւ թէ կատարուած արարողութիւնը անհատական նախաձեռնութիւն մըն է։

ԽՐՈՒՇՉԷՎ չորս ժամ պըտըտած է Սկիւպի աւերակներուն մէջ։

ՓԱՐԻԶԻ կաթողիկէ Հիմնարկութեան մէջ հրդեհ մը ծագած է առջի օր։ Քննութիւնը թոյլ տուած է ճշդելու թէ յիմարի մը ոճրային արարքն է, բայց կարելի եղած է արագօրէն առաջքը առնել հրդեհին։ Այդ հաստատութիւն մըն է բարձրագոյն ուսումի, հիմնուած 1875ին։ 50 ազգի պատկանող 7000 ուսանողներ կը յաճախեն այս հաստատութիւնը, որու գրադարանը 500 հազար հատոր ունի։

ՄԵՐ ԱՅՑԵԼՈՒՆԵՐԸ

Խմբագրատուն այցելեցին Լոս-Անճելըսի մեր ընկերներէն Տէր եւ Տիկին Տէրտէրեան եւ զաւակը, որոնք երեք ամիս շրջագայութիւն մը կատարելէ ետք Յունաստան, Իտալիա եւ Ֆրանսա, կը վերադառնան իրենց բնակավայրը։

ՌՈՒՄԱՆԻԱ

ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԵԱՆ «ՓՈՐՁԱՆՔ ՈՐԴԻ»

ԽՄԲ.— Միջազգային փաստագրութեանց պարբերաթերթ «*Փրէօվ – դ'էնֆորմասիոն*»ի Օգոստոս 13ի թիւին մէջ, Անտոէ Կարման շատ առարկայական ուսումնասիրութիւն մը ստորագրած էր՝ խորհրդային շուք ու մութին մէջ, իր ճամբան փնտռող արդի Ռումանիոյ քաղաքական եւ տնտեսական պայմաններուն վրայ: Ստորեւ, լայն քաղուածք մը այդ գրութենէն.—

Այն պահուն, երբ Փեքինի եւ Մոսկուայի միջեւ գաղափարաբանական տագնապը իր սաստկութեան կէտին կը հասնէր, ռուսական ճակատին մէջ անսպասելի տեղատուութիւն մը երեւան եկաւ՝ Ռումանիոյ տատամսումը: Խորհրդային կալանաւորհի բոլոր թերթերէն միայն ռումանական Կոմկուսի պաշտօնաթերթն էր, որ Յունիս 20ի իր թիւին մէջ հրատարակեց չինական Կոմկուսի նշանաւոր նամակը, որ 25 կէտերու մէջ կը ձաղկէր Խրուշչեւի քաղաքականութիւնը. մասնաւորաբար՝ խաղաղ համակեցութեան եւ ապաստալինացման քաղաքկնութեան դէմ արտայայտուող գլուխները: Գրեթէ միեւնոյն թուականին, Ռումանիոյ ժողովրդավար հանրապետութեան գլխաւոր ղեկավարը՝ Կէօրկիու–Տէյ, իր բացակայութեամբ կը փայլէր Արեւելեան Պերլինի մէջ Խրուշչեւի կազմակերպած խորհրդակցական ժողովէն:

Այդ յանդգնութիւնը ա՛լ աւելի զարմանալի թուեցաւ, որովհետեւ Ռումանիան եղած էր Խորհ. Միութեան ամէնէն հլու դաշնակիցներէն մին: Այնուհանդերձ, անցեալ տարիէն ի վեր Պուքրէշ զգալի կերպով հեռացած էր Մոսկուայէն: Նախ եւ առաջ խոր տարակարծութիւններ ծընած էին Կոմէքոնի (արեւելեան պլոքի Հասարակաց Շուկան) կազմակերպութեան մէջ պարտադրութեանց եւ իրաւասութեանց բաշխումին առընչութեամբ: Ապա, Խորհ. Միութեան մէջ հրատարակուած պատմութեան գիրք մը (որ կ'ըսէր թէ Ռումանիա իր ազատագրումը կը պարտէր կարմիր բանակին, եւ սոխտոյն դեր մը կը վերապահէր Ռումանիոյ Կոմկուսին) պատճառ դարձաւ պատմաբաններու միջեւ վէճի մը: Պուքրէշի մէջ ընդվզումը այնքան բուռն եղաւ, որ Մոսկուա ներողութիւն խնդրեց: Անցեալ գարնան՝ Պուքրէշ ինքնագլուխ նախաձեռնութեամբ վերահաստատեց իր դիւանագիտական յարաբերութիւնները Ալպանիոյ հետ: Ռումանական քոփերաթիվներու *համագումարին հրաւիրուեցաւ ալպանական պատուիրակութիւն մը: Վոլէպոլի ռումանական խումբ մը մասնակցեցաւ Ալպանիոյ մէջ կազմակերպուած մրցաշարքի մը: Միեւնոյն ատեն Պուքրէշ կը մօտենար Փեքինի: Առեւտրական, մշակութային եւ* թեքնիք *գործակցութեան (ի մասնաւորի՝ քարիւղի չինական ճարտարարուեստի օժանդակութեան վերաբերեալ) համաձայնութիւններ կնքուեցան Ռումանիոյ եւ Չինաստանի միջեւ:*

Այս բոլորը կարելի է մասամբ բացատրել այն իրողութեամբ, որ Ռումանիոյ մէջ ապաստալինացման շարժումը գրեթէ անտեսուած է, որովհետեւ Կէօրկիու–Տէյ համայնավար արդի ղեկավարներէն ամէնէն հինն է ու սկիզբէն ի վեր կուրօրէն կիրարկած է ստալինական մեթոտները: Սակայն, կարելի չէ ըսել որ Ռումանիոյ Կոմկուսի ղեկավարը չինական գաղափարաբանութեան ջերմ կողմնակից է: Փեքինի հետ մերձեցումը, Պուքրէշի համար պատրուակ մըն է՝ Մոսկուայէն կարգ մը զիջումներ ձեռք ձգելու համար:

Արդարեւ, մինչ շատ դէտեր ուշի ուշով կը նշէին ռումանեւչինական մերձեցումը, շատ քիչեր կը նշէին նաեւ այն իրողութիւնը, որ Ռումանիա յատկանշական կերպով կը մերձենար Արեւմուտքին: Մեծ զարկ տրուած է արեւմտեան երկիրներու հետ առեւտրական փոխանակութեանց. յաճախ նախընտրութիւն կու տայ Արեւմուտքէն ներմուծուած ապրանքներու եւ նախանիւթերու, անվարան քննադատելով Չեխոսլովաքիայէն գընուած արտադրութեանց թերիները: Արեւմտեան Եւրոպայի զանազան երկիրներէն եկած հարիւրաւոր մասնագէտներ կ'աշխատին Ռումանիոյ մէջ եւ զանոնք ուղարկող կազմակերպութիւնները կը մասնակցին Ռումանիոյ ճարտարարուեստի վերելքին:

Խորհ. Միութենէն եւ Չեխոսլովաքիայէն ետք, Արեւմտեան Գերմանիա երրորդ տեղը կը գրաւէ Ռումանիոյ արտաքին առեւտուրին մէջ: Վերջերս, նոր մղում տրուեցաւ Իտալիոյ հետ առեւտրական փոխանակութեանց: Անցեալ Ապրիլին կնքուած համաձայնութեան հիման վըրայ, այս փոխանակութիւնները 40 առ հարիւր յաւելում պիտի կրեն: Յուլիսի սկիզբները Պուքրէշ այցելեց նաեւ Աւստրիոյ Արտաքին նախարարը՝ առեւտրական համաձայնութիւն մը կնքելու համար: Այս այցելութեան առթիւ Արտաքին նախարարը դասախօսութիւն մը տուաւ Պուքրէշի Համալսարանի Իրաւաբանական դպրոցին մէջ յայտարարելով, ի մէջ այլոց, թէ համայնավար ղեկավարները պէտք չէ այնպէս կարծեն որ եւրոպական Հասարակաց Շուկան Ատլանտեան Ուխտի տնտեսական մասնաճիւղն է:

Աւելցնենք նաեւ, որ Միացեալ Նահանգներու Ազգային Տօնին օրը, Յուլիս 4ին, ռումանական ձայնասփիւռը ամերիկեան երաժշտութեան յայտագիր մը ներկայացուց, իսկ պատկերասփիւռը՝ ամերիկեան փաստանկար մը:

Ռումանիոյ ինքնավար քաղաքականութեան արտաքին երեւոյթներուն շարքին պէտք է դասել նաեւ Եուկոսլաւիոյ հետ վերջերս կնքուած համաձայնութիւնը, որ կը նախատեսէ միացեալ ճիգերով, զօրաւոր ջրելեկտրական կայանի մը կառուցումը՝ Դանուբի վրայ:

Արեւմտեան երկիրներու հետ Ռումանիոյ առեւտրական եւ տնտեսական գործակցութիւնը կը բացատրուի այն հսկայական յառաջդիմութեամբ, զոր Ռումանիա վերջին տարիներու ընթացքին իրագործեց՝ տնտեսական մարզին մէջ:

Եւ ճիշդ այս տնտեսական հրաշքն է, որ պէտք է նկատել ռուսեւռումանական տարակարծութեան բուն պատճառը: Ռումանացիները, բնականաբար, կ'ուզեն իրենց վերապահել իրենց արդիւնաբերական ճիգին շահը: Արդ, անցեալ տարի Մոսկուայի մէջ որոշուած Կոմէքոնի ծրագիրները Ռումանիոյ համար կը նախատեսէին ո՛չ թէ արդիւնաբերական վերելք, այլ վերադարձ իր անցեալի հողագործական կոչումին, անտեսելով ճարտարարուեստական մարզը՝ բացի քարիւղի արդիւնաբերութենէն: Օրինակ, ելեկտրականացման ծրագիրին մէջ, Կոմէքոն կը նախատեսէր, կ'որոշէր 1980ի համար, անձլուելս 40.000 քիլովաթ ժամուժ Չեխոսլովաքիոյ համար, եւ միայն 5000 քիլովաթ ժամուժ՝ Ռումանիոյ համար: Այս որոշումը Ռումանիոյ մէջ այն տպաւորութիւնը ձգեց, որ կ'ուզեն իրենց երկիրը տնտեսապէս թերաճ եւ ուրիշներու ի սպաս նախանիւթեր արտադրող երկրի մը վիճակին մէջ պահել:

Կոմէքոնի ծրագիրը մշակողները, նըկատի առնելով «աշխատանքի ընկերվարական բաժանումը», նախատեսած էին իւրաքանչիւր երկրի համար յատուկ մասնագիտական արդիւնաբերութիւն մը, տնտեսութեան որոշ ճիւղերու մէջ: Ինչ կը վերաբերի Ռումանիոյ, հետեւանքը շատ ծանր պիտի ըլլար, քանի որ երկիրը պիտի ստիպուէր հրաժարիլ կարգ մը արդիւնաբերական ծրագիրներէ՝ ի շահ արդէն իսկ զարգացած ճարտարարուեստի տէր երկիրներու, ինչպիսին են Չեխոսլովաքիա եւ Արեւելեան Գերմանիա: Անմիջական հետեւանքը այն պիտի ըլլար, որ Ռումանիա պիտի մատնուէր տնտեսական տագնապի ու վարչակարգը պիտի վտանգուէր:

Կոմէքոնի 1962 Յունիսի նստաշրջանին առաջին մէկ օրէն, ռումանական պատուիրակութիւնը հակառակեցաւ խորհրդային ծրագրին գործադրութեան: Կողմնակի բանակցութիւնները ապարդիւն մընալով, տարակարծութիւնը հետզհետէ հրապարակուեցաւ: Այսպէս է, որ ճակատագրական պահուն, Ռումանացիները ճարպիկ կերպով օգտուիլ փորձեցին ռուսեւչինական մրցակցութենէն:

Մոսկուայի մէջ սկսած ռուսեւչինական խորհրդաժողովին յետաձգումէն եւ Յուլիսի վերջը դարձեալ Մոսկուայի մէջ գումարուած Կոմէքոնի նստաշրջանէն ի վեր, այնպէս կը թուի թէ ռուսեւռումանական տնտեսական անհամաձայնութիւնը հարթուելու վրայ է: Ռուսերը տեղի տուած են, ինչպէս կը թուի, քանի որ այլեւս չի խօսուիր Կոմէքոնի կեդրոնական միակ մարմնի մը մասին, այլ՝ անոր անդամ երկիրներու ազգային ծրագիրները հասարակաց յայտարարի մը վերածելու մասին: Միւս կողմէ, Ռումանիա պիտի շարունակէ իր արդիւնաբերական ճիգը եւ խրախուսանք ստացած է երկրորդ պողպատաշինարան մը եւս կառուցանելու: Ասոր փոխարէն, ռումանական Կոմկուսի պաշտօնաթերթը հրատարակեց Խրուշչեւի պատասխանը Փեքինի, եւ հրատարակեց «Խաղաղ համակեցութիւն» վերնագիրը կրող գրքոյկ մը, որ կը պաշտպանէ Խրուշչեւի տեսակէտները:

Ընդհանուր հաշուով, ուրեմն, ռումանական «անմիաբանութեան» ամբողջ հարցը ուրիշ բան չէր, եթէ ոչ ռուսական խնամակալութեան դէմ ազգային հակազդեցութեան մը արտայայտութիւնը. ճիշդ այնպէս, ինչպէս նախապէս սկսած էին պալքանեան միւս անմիաբանութիւնները՝ Եուկոսլաւիոյ եւ Ալպանիոյ մէջ:

Համայնավարութեան ծոցը ինկած, սլաւ տարրի տիրապետութեան տակ ինկած Ռումանիոյ՝ այս լատին ազգին ըմբոստ վրդովումը ունի եւ բոլորովին իրեն յատուկ պատճառներ: Այսուհանդերձ, դեռ քանի մը տարի առաջ անհաւատալի պիտի ըլլար մտածել իսկ, որ Ռումանիոյ պէս փոքր երկիր մը կրնար այդպէս ապարդէն կարդալ այսօր Խորհ. Միութեան, եթէ համայնավար աշխարհը ըլլար այն միաքար հսկան՝ որ էր երէկ:

Քաղեց Շ. Ք.

ԲԱՐԻՔՆԵՐ ՈՒ ԿԱՐԻՔՆԵՐ ՋԵՐՄՈՒԿՈՒՄ

(Բ. եւ վերջին մաս)

ՋԵՒՈՎ՝ ՆՈՐ, ԷՈՒԹԵԱՄԲ՝ ՀՆԻՑ ԱՅ ՀԻՆ

Քաղաքի առողջարանների վարչութիւնում զոլեստով են խօսում այցելու բուժման ուղեգրերով եկածներին նոր ձեւով սպասարկելու մասին.

— Տեսե՞լ էք միջնակարգ դպրոցի շէնքը: Այո՞: Այն դարձրել ենք հանրակացարան: Մէկ հերթում 150 մարդու ենք տեղաւորում:

— Կարելի՞ է մտնել ներս:

— Ինչո՞ւ չէ, խնդրե՛մ, — եւ ուղեկցում են:

Շքամուտքից մինչեւ ննջասենեակները կեղտ է ու փոշի: Միջանցքների ծայրերին՝ աղբակոյտեր ու ճանճերի միլիոն բզզոց: Իւրաքանչիւր սենեակում 10-15 մահճակալ է դրուած: Չկան զգեստապահարաններ:

— Զլանում են զոնէ ստղիս զնել, — դժգոհում են Սեւանի գործադիր սարքերի գործարանի բանուոր Արզինեւը:

— Ո՞ւմ պէտքն է:

Լրացնողը Երեւանի թիւ 2 գիշերօթիկ դպրոցի ուսուցչուհի Լ. Անանիկեանն է:

— Համարեա 25 օր է, սպիտակեղէն չեն փոխել: Եփում, թափում ու լուանում ենք այնտեղ, ուր ճաշում ու քնում ենք: Սենեակում նստել չի լինում: Մշակութային ոչ մի միջոցառում չեն անցկացնում: Առաւօտեան ժամը 6ին զուրգալը եւ գիշերուայ 11ին վերադառնալը բուժուողների տանջանքի «պարտադիր նուագացոյն չափն է»:

ՀԱՄԱՅՆԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԴԵՐԸ

ՌՈՒՍԵՒԹՈՒՐՔ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆՑ ՄԷՋ

1919–1922

«Այնքան ատեն որ կը շարունակուի Թուրքիոյ անկախութեան համար սկսած ազգային շարժումը, մենք՝ Համայնավարներս, պէտք է օժանդակենք անոր, քանի որ (Դաշնակիցներու) Համաձայնութեան եւ աշխարհակալներու կործանումը սկզբնաւորութիւնը պիտի ըլլայ՝ որեւէ սարկութիւն ջնջող համաշխարհային յեղափոխութեան»:

Զինովիեւ, ինքն ալ համամիտ եղաւ՝ աշխարհակալութեան դէմ ուղղուած որեւէ խռկական յեղափոխութեան օժանդակելու: Ժիւլիէն, Ֆրանսայի պատգամաւորը, հետեւեալ կարծիքը յայտնեց (1).—

«Պէտք է հսկենք ազգային այս շարժումներուն՝ առանց զանոնք վհատեցնելու, առաջին օրէն: Պէտք է ղեկավարենք զանոնք, որպէսզի, պատեհ պահուն, ազատագրական շարժումը շարունակուի ազգայնական ղեկավարներու տեղը՝ համայնավարներու առաջնորդութեամբ»:

Անատոլուի մէջ համայնավար բջիջներ կազմելու համար Թուրք համայնավարներու ամէնէն փոքրիկ փորձերն իսկ չէզոքացնելով հանդերձ, Մուսթաֆա Քէմալ օգտակար կը նկատէր համայնավարներու բառամթերքը գործածել: Այդ ոգիով պէտք է կարդալ «ընկեր Լենինին» ուղղած 1922 Ապրիլ 10 թուակիր իր նամակը (2).—

«Կը համարիմ թէ մեր երկու երկիրները աւելի քան երբեք հաստատուն պլոք *մը պէտք է կազմեն այժմ՝ աշխարհակալ եւ դրամատէր երկիրներու գործադրած նոր մեթոտներուն դիմաց: Քանիցս Ռուսիոյ կողմէ մեզի տրուած օգնութիւնը մասնաւոր կարեւորութիւն մը կը ստանայ մեր աչքին»:*

Համայնավար Միջազգայինի Դ. Համագումարին մէջ մտքերու փոխանակութենէն առաջացած այս գաղափարաբանութիւնը փոխանցուած էր 1922 Նոյեմբերին հրաւիրուած Դ. Համագումարին: Այնտեղ՝ ոգեւորուեցան Մուսթաֆա Քէմալի տարած յաղթանակով, զոր յօժարութեամբ կը նկատէին խորհրդային քաղաքականութեան մէկ յաղթանակը: Շարունակեցին իրենք զիրենք օրօրել՝ միեւնոյն ձեւով Թուրք բուրժուազիայի *ալ դէմ յաղթանակ արձանագրելու յոյսով: Թէեւ՝ այս յոյսը որոշ չափով տկարացած կը թուի Ռատէքի հետեւեալ խօսքերուն մէջ (3).—*

«Թուրքիոյ համայնավարնե՛ր, ներկայ վայրկեանիս բնա՛ւ մի՛ մոռնաք մօտաւոր ապագան: Տակաւին աւարտած չէ Թուրքիոյ անկախութեան պաշտպանութիւնը, որ միջազգային յեղափոխական տեսակէտէն կարեւոր է: Պէտք է դիմադրէք ձեր զաւթիչներուն, գիտնալով հանդերձ, թէ ազատագրման պայքարին մէջ նետուելու պահը դեռ չէ հասած: Ընդհակառակն, կարելիք երկար ճամբայ մը ունիք Թուրքիոյ յեղափոխական տարրերուն հետ, որոնք բիւրեղանալու վրայ են: Հարիւր հազարաւոր մարդիկ այսօր կը պոռան՝ «Կեցցէ՛ Մուսթաֆա Քէմալ» եւ «Կեցցէ՛ Խորհրդային Ռուսաստան»: Այս վայրկեանէս սկսեալ, կատարելիք հրակայական աշխատանք ունիք՝ Արեւելքի երկիրներու քաղաքական կազմակերպութեան առընչութեամբ՝ Արեւելքի մէջ Համայնավար Միջազգայինի համար զօրաւոր յենակէտներ ստեղծելով»:

1922 Դեկտեմբեր 5ին քուէարկուեցաւ հետեւեալ բանաձեւը (4).—

«Թուրքիոյ մէջ, աւատապետ հողատէրերու դէմ գիւղացիութեան պայքարը պիտի սկսի այն պահուն, երբ վերջ գըտած ըլլայ ազգային անկախութեան պայքարը, Անգլիոյ եւ Ֆրանսայի դէմ մըղուած պայքարը»:

Ճիշդն ըսելով, այս բանաձեւով ալ վերջ գտաւ քէմալականութեան հանդէպ ռուսական քաղաքականութեան ունեցած երկերեսութիւնը: Քանի որ այնուհետեւ, Գ. Միջազգայինը Նարկոմինտէլին բոլորովին ռուսեւթուրք բարեկամութենէն ծագած հարցերուն լուծման հոգը:

ԿՈԹԹՀԱՐՏ ԵԱՇՔԷ

(10 եւ վերջ)

1) Անդ, էջ 1034:

2) *Տի Վէլթ տէս Իսլամս*, հատոր Զ., էջ 210–211:

3) *Փրոթոքոլ տէս Ֆիրթէն Քոնկրէսսէս տէր Կոմ. Ինթերն.*, Համպուրկ, 1923, էջ 630, 631, 634:

4) Անդ, էջ 830, 963:

ՀԻՒՐԱՆՈՑԸ ԵՒ ՆՐԱ ՏԻՐՈՒՀԻՆ

…փոքր է քաղաքային հիւրանոցը՝ 33 …ձնակալով: Խնդիր է դրուած 150 տեղանոց մէկ ուրիշը կառուցել, բայց նախագիծն անգամ պատրաստ չէ:

«Ո՞ւր գնալ, ի՞նչ անել», — յուսահատւում է այցելուն՝ լսելով հիւրանոցի աշխատակցուհու միալար պատասխանը:

— Տեղ չունենք, գիշերեցէք մասնաւոր տներում:

Անհիւրընկալ այդ հիւրանոցում այս օրերին հանելուկային ինչ-որ բաներ են կատարւում: 52-53 հոգեկներ գիշերում են, այդ թւում՝ 7 ընտանիք: Ննջասենեակի է վերածուել անգամ ապակեպատ պատշգամբը, ուր տեղաւորուել են ոչ թէ մահճակալներ, այլ ցանցեր: Այսպէս գիշերելու իրաւունք է տրւում ա-…նց «սեւերի խորականութեան»:

Ստեղծուած վիճակը «տխրութիւն» է պատճառում նաեւ հիւրանոցի վարիչ …լանի Արուշնեանին: Նա ժպտում է …ազուադէպ, չար լեզուների վկայութեամբ՝ այն ժամանակ միայն, երբ յա-…ղում է 2 մահճակալից 3ի վարձ գանձել: Մի անգամ միայն գիւղատնտեսական մթերքների արտադրութեան ու մթերումների նախարարութեան հողաշինարարական խմբի ղեկավար Մ. Գէորգեանը փորձեց Արուշնեանի խօսքը «գետին …ցնել», բայց այնպիսի տհաճ միջադէպի …ջ ընկաւ, որ ընդունեց իր պարտութիւնը…:

…նչեց հեռախօսի զանգը: Հիւրանոցի …րուհին վերցրեց խօսափողը:

— Գրիգորեանն է, քաղսովետի հա-…յնքային բաժնի վարիչը, — լսուեց խօսափողից, — շտապ կարգով ազատիր …րդ յարկի 11րդ սենեակը եւ սպասիր …հիւրերի: Ընտանիք է. կոմունալ տնտեսութեան նախարարութիւնից Յակոբեանն է ուղարկել:

«Տիրուհին» էլ այդ էր պէտք: Գէորգեանին կանչեց իր մօտ.

— Իսկոյն սենեակն ազատիր:

— Իսկ ո՞ւր գնամ, գործուղման մէջ եմ:

— Իմ գործը չէ… Կ'ուզես՝ հէնց Երեւան:

— Կը բողոքեմ կոմունալ բաժին, քաղսովետ:

— Իմացիր, որ սա կատարում եմ նրանց գիտութեամբ…:

Ամենեւին էլ չենք կասկածում, որ հիւրանոցի վարիչի քմահաճոյքներին տեղ…ակ են նրա անմիջական վերադասները: Չէ՞ որ Գրիգորեանն ամէն օր գալիս է հիւրանոց, իջնում ճաշարան, «բարի …» մաղթում ու հեռանում:

ԲԱՒԱՐԱՐՈՒԵՆՔ ՄԻԱՅՆ ՄԱՏՆԱՑՈՅՑ ԱՆԵԼՈՎ

— Ջերմուկը Հայաստանի առողջարանների փառքն է: Եւ մարդիկ չեն հաշտւում այն ամէնի հետ, ինչը վնասում է այդ փառքին: Հաճելի չէ տեսնել, որ դեռ եւս Ցունուարին օգտագործման յանձնուած թիւ 4 առողջարանի հոյակապ շէնքի բակն աւերականոցի տպաւորութիւն է թողնում:

— Մարդկանց ձանձրոյթ են պատճառում առողջարանի երեկոները: Դրանք տխուր են, որովհետեւ մշակութային ձեռնարկներ չեն անկացւում, թիւ 1 եւ 3 առողջարանների մշակութային կազմակերպիչներին մշտապէս կարելի է տեսնել ձեռքները «կանթած», փողոցում կանգնած:

— Աններելի է, որ քաղաքային բաղնիքն ամարանոցային այս եռուն ժամանակամիջոցում շարունակում է շաբաթուայ մէջ աշխատել միայն երկու օր, որ տեւականօրէն փակ է լինում միակ դեղատունը:

ԹՈ՛Ղ ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐՆ ԱՆԻ ԱՅՆ, ԻՆՉ ՊԱՐՏԱՒՈՐ Է

Ջրաբուժարանի, առողջարանների եւ հանգստեան տների վարչութիւնն անհաշուենկատութիւն չցուցաբերի ուղեգրերի վաճառքի մէջ: Հայաստանի Առողջապահութեան նախարարութիւնը մի անգամ ընդմիշտ վերջ տայ բժիշկների ու բուժքոյրերի հոսունութեանը: Առողջարանների վարչութիւնը վճռապէս բարելաւեն սննդի գործը, իսկ Ջերմուկի կենցաղային սպասարկման կէտերում բնական կարգ ու կանոն հաստատելու համար:

Ժ. ՋՐԲԱՇԵԱՆ
եւ
Կ. ԱՋԱՐԵԱՆ

ԱԶԳ. ԿԵԱՆՔԸ ԿԻՊՐՈՍԻ ՄԷՋ

ՆԻԿՈՍԻԱ (Յառաջ). — Կիրակի Յուլիս 28ին, առաւօտ կանուխ, Հ. Ե. Մ.ի շէնքին առջեւէն ճամբայ ելաւ օթոքառը: Պատուհաններէն դուրս՝ կը ծածանէին երկու եռագոյններ:

Կիպրահայ գաղութն ալ կը տօնէր Խանասորայ հերոսներուն յիշատակը: Արդէն հոս սովորութիւն դարձած է լեռնագնացութիւն մը կատարել Յուլիս 25ի մերձաւոր կիրակին: Թէեւ բազմութեան մեծամասնութիւնը անձնական կառքերով կ'երթայ, երիտասարդութիւնը սակայն չուզեր զրկուիլ հաւաքական ճամբորդութեան հաճոյքէն:

—Յեղափոխական երգերը, որոնք անբաժանելի մասը կը կազմեն մեր խրախճանքներուն, արի զգացումներով տոգորուած երիտասարդներուն կողմէ կ'երգուէին ճամբու ընթացքին:

Նախաճաշը «Փլաթանիոյ» լեռնային կայանը առնելով, ուղղուեցան դէպի «Փաշա Լիվատի», ուր պիտի հաւաքուէին բոլորը:

Խանդավառութիւնը անսահման էր: Ահա քանի մը տղաք, հաստ ճիւղ մը ճարելով, զայն հաստատեցին ծառերու շուքին տակ եւ վրան ալ հպարտօրէն պարզեցին հայ ժողովուրդին նուիրական դրօշը՝ սրբազան Եռագոյնը:

Բազմութիւնը տակաւ առ տակաւ կ'աւելնար, եւ խումբ առ խումբ տեղ կը գրաւէր մայրիներու հովանիին տակ: Օրուան հանդիսութեանց մէջ, տեղ արդուած էր նաեւ գեղարուեստական համեստ յայտագրի մը:

Ճիշդ կէսօրին, օրուան նախագահը, Պ. Ղազարոս Յակոբեան, հրաւիրեց ներկաները ոտքի յոտնկայս երգեն «Կարկուտ տեղաց»ը: Մինչ բազմութիւնը կը հնչեցնէր յեղափոխութեան փառաբանանքը, Եռագոյնի ծածանումին հետ կը դղրդային հողիներն ալ:

Բացման խօսքը կը պատկանէր Պ. Յակոբեանի, որ ոգեկոչեց յիշատակը Արշաւանքի ղեկավարներուն՝ հրամանատար Վարդանին եւ յխնապետ Թումանի: Շեշտեց նաեւ թէ Խանասորի դէպքը կարեւոր անկիւնադարձ մը եղաւ մեր վերջին վեց դարերու պատմութեան մէջ, ուր հայ ժողովուրդը ինքնապաշտպանութենէ անցաւ յարձակողականի:

Բացման խօսքէն ետք Պ. Գէորգ Մահտեսեան իր զգայուն ձայնով երգեց «Պախրա»ն: Ապա Ն. Թէրզեան (փող) եւ Յ. Յարութիւնեան (ձեռնադաշնակ) նուագեցին «Սէրս գաղտնի թող մնայ»ն:

Պ. Յակոբեան հրաւիրեց օրուան բանախօսը՝ Անանիա Մահտեսեան, որ նախ նկարագրեց արշաւանքը, որ կազմակերպուած էր Հ. Յ. Դաշնակցութեան «Ապառաժ»ի կոմիտէի կողմէ, ապա վերջացնելով իր խօսքը ըսաւ. «Խանասորի Արշաւանքը կուսակցութեան յաղթանակը ըլլալէ աւելի, պարծանք մըն է համայն Հայութեան»:

Մեներգէ եւ նուագէ ետք Պ. Յակոբեան փակեց յայտագիրը:

Ճաշէն ետք հայկական երգերու գեղահնչուն եղանակները կը լեցնէին Կիպրոսի այս գեղատեսիլ հովիտը: Մինչ կայպէքը կուգար անոր զարդը ամբողջացնելու: Գաւաթներ կը բարձրանային Խանասորի հերոսներուն ի պատիւ: Փաշա Լիվատիի առուակը, ի տես այս հայկական խրախճանքին, աւելի ուրախ կը գլգլար:

Շնորհաւորելի էր լեռնագնացութեան կազմակերպիչը՝ Հայ Երիտասարդաց Միութիւնը, որ արժանի է գնահատանքի եւ քաջալերութեան, քանզի գիտէ յարգել Հայութեան փառքը կերտող հերոսներուն սրբազան յիշատակը:

ԹՂԹԱԿԻՑ

ԹՈՒՐՔԻԱ

ՊԷՅՔՈԶԻ ՊՈՒՐԱԿԸ ԻՆՉՈ՞Ւ ՆՈՒԷՐ ՏՐՈՒԱԾ Է ՀԱՄԻՏԻՆ

Պոլսոյ ճայնասփիւռը կիրակի առաւօտները կը ներկայացնէ «Եօթը Բլուրներէն Արձագանգներ» անուն յայտագիր մը եւ կը ծանօթացնէ Պոլիսը եւ անոր պատմական գեղեցկութիւնները:

Վերջին կիրակի օրուան յայտագրին մէջ, յայտագրի հեղինակը՝ Պաքի Սահախիպօղլու, ներկայացուց Աբրահամ փաշայի Պէյքոզի պուրակին մասին հետեւեալ շահեկան տեղեկութիւնները. —

Աբրահամ փաշա Պէյքոզի մէջ հիմներ է շատ գեղեցիկ պուրակ մը, Եւրոպայէն տունկեր բերել ու կառուցանել տուեր է գեղեցիկ աւազաններ: Այս պուրակին մէջ կը գտնուէին մեծ թիւով թռչուններ եւ որսորդութիւնը արգիլուած էր: Նշանաւոր եղած են մանաւանդ սոխակները եւ շատեր Պէյքոզ կուգային այդ թռչուններու դայլայլը լսելու համար:

Սօսին (չընար) առաջին անգամ Թուրքիա բերողը Աբրահամ փաշան եղած է: Ան զանոնք Ֆրանսայէն բերած ու տնկած է իր պուրակին մէջ: Աբրահամ փաշա գեղեցիկ ճամբայ մըն ալ շինել տուած է, սակայն իր թշնամիները անմիջապէս Ապտիւլ Համիտ Բ.ի դիմելով տեղեկացուցած են թէ փաշան դէպի Ռուսիա տանող ճամբայ մը կը շինէ…

Ապտիւլ Համիտ իր մօտ կանչած է Աբրահամ փաշան ու բացատրութիւն պահանջած:

Աբրահամ փաշա կռահած է թէ այս գործը իր գլխուն փորձանք պիտի բանայ, հետատեսութեամբ մը պուրակը Թագաւորին կը նուիրէ: Ասոր փոխարէն Ապտիւլ Համիտ Աբրահամ փաշայի նուիրած է Պիւյիւքտէրէի Պիլէզիկճի ագարակը:

Աբրահամ փաշա, որ եղած էր ծառերու մեծ սիրահար մը, մեռած է թշուառութեան մէջ:

ԻԶՄԻՐԻ ՄԷՋ 67 ԱՄԵԱՅ ԿԻՆ ՄԸ Կ'ԱՄՈՒՍՆԱՆԱՅ 17 ԱՄԵԱՅ ՊԱՏԱՆԻԻ ՄԸ ՀԵՏ

Պոլսոյ թրքական թերթերը հետեւեալ տարօրինակ լուրը կուտան. —

Իզմիրի Զինէ գաւառակին էլտիրի գիւղը բնակող 67 ամեայ Հաթիճէ Մէմիշ եւ նոյն գիւղը բնակող 17 ամեայ Աքիֆ Քաբաթաշ պաշտօնապէս ամուսնացան:

Ամուսնական արարողութենէն ետք Թոռան տէր մեծ մայրիկը եւ երիտասարդը հրաւիրեալներուն շմորուն ակնարկներուն ներքեւ իրենց տունը գացին: Հաթիճէ Մէմիշ յայտնեց որ ինքզինքը 15 ամեայ մանկամարդուհիի չափ առոյգ կը զգայ:

«ՅԱՌԱՋ»Ի ԹԵՐԹՕՆԸ (212)

ԵՂԼՏՐՋԻ ՊՈՄՊԱՆ

ՀԱԶԱՐ ԻՆԸ ՀԱՐԻՒՐ ՉՈՐՍ

— Համաձայն ո՛չ կը, մըլտաց Ապտիւլ Համիտ, վա՛յ անցնին այդ սրիկաները…

Սայիտ փաշա դուրս ելաւ Հիւնքեարի դահլիճէն եւ վերադարձաւ Նշան Թաշ, իր ապարանքը:

Ապտիւլ Համիտ, նոյն օրը, պալատ կանչեց Քեամիլ փաշան, անոր կարծիքը առնելու համար ստեղծուած տագնապին կացութեան հանդէպ:

Ջանց պիտի ընեմ նկարագրելու այդ ժամանակի տեսակցութիւնները, որոնց անմիջական արդիւնքը ծանօթ է արդէն ընթերցողներուս, ա՛յնքան մօտիկ են դէպքերը:

ԺԹ.

Ապտիւլ Համիտի երեսուն երկու տարիներու բռնապետական լուծին տակ հեծող ու տառապող ժողովուրդին կարօտագին աչքերուն առջեւ նոր կեանքի մը հորիզոնը կը բացուէր, պայծառ, վարդագոյն, ծիծաղադեղ ու զուարթ:

Ազգերուն կեանքը կազմող Լոյսը, որ դարերէ ի վեր փոխադրուած էր Արեւելքէն Արեւմուտք, վերստին պիտի դառնար իր նախկին հայրենիքը. եւ Դժոխք-Թուրքիան պիտի վերածուէր Դրախտ-Թուրքիոյ մը, ուր նոյն անարդ լուծին տակ չարչարուած, նոյն հողին, նոյն ջուրին ու նոյն օդին ծոցը սնած, զարգացած զանազան ժողովուրդները, իրենց գերութեան շղթաները կոտրելով, պիտի ձեռք կարկառէին իրարու, ողջունելու համար վերածագող արեւը՝ Սահմանադրութիւնը, որ իրեն հետ կը բերէր բոլոր տեղերուն, բոլոր կրօնքներուն եղբայրակցութիւնը, — Ազատութեան, Արդարութեան եւ Հաւասարութեան հովանիին տակ:

Ալպանիոյ ու Մակեդոնիոյ խորերէն պայթած ամեհի փոթորիկը պիտի աւլէր, պիտի մաքրագործէր հրապարակը բոլոր սողուններէն, որոնք ինկած մարդկութիւնը կը ներկայացնէին, Ապտիւլ Համիտի պէս անմրցելի բռնաւորի մը պաշտպանութեան տակ…:

Սահմանադրութիւնը հռչակուած, կամ աւելի ճիշդը, դիակը Բորենիին բերնէն փրցուած, մէկ րոպէի մէջ, համբաւը հասաւ երկրագունդին ամէնէն հեռաւոր անկիւնները:

Արտասահմանէն սկսաւ ներգաղթը, վերադարձը կամաւոր աքսորեալներուն, փախստականներուն, եւ մանաւանդ, տարիներէ ի վեր բերդերու մէջ արգելափակ թշուառներուն, որոնք իրենց խաւարամած խորշին մէջ յանկարծ արթնցած, լսած էին բարի լուրը:

Պիտի չպատմեմ թէ ի՛նչ ցնծում ու դղրդում առաջ բերաւ Սահմանադրութիւնը ժողովուրդի բոլոր խաւերուն մէջ: Պիտի չյիշեմ հոս, թէ Ապտիւլ Համիտի թեւովը թռչող սինլքոր պաշտօնեաներ, լրտեսներու երամակ մը, ծակամուտ եղան, ո՛չ սիրական պալատականներուն փախուստը պիտի պատմեմ, ոչ ալ էպիւլ Հիւտաներու, Չէքիներու, Գարա Թահսիններու սեւ չարքերուն ապաշխարութիւնները, իրենց սահմանուած քաւարաններուն (՛) մէջ…

Ջանց պիտի ընեմ նկարագրելու զանազան հանդէսները, որոնք իրարու յաջորդեցին Ազատութեան այն առաջին ամիսներուն մէջ, ոչ խրախճանքները՝ զանազան հաստատութիւններու մէջ կազմակերպուած, ոչ շղենաւային անտառները, որոնք ծածկեցին Մարմարան ու Վոսփորը, ոչ հեռաւոր ծովերէն ու աքսորավայրերէն վերադարձող սիրելիներուն ընդունելութեան առթիւ սարքուած տօները, ոչ հրապարակներու մէջ, սեւ զանգերու վրայ բարձրացած հռետորներու ճառերը, ոչ ալ թերթերուն զինովութիւնները, ոչ երեսփոխանական ընտրութեանց առթիւ տեղի ունեցած համախմբումները, ոչ ալ ընտրուած երեսփոխաններուն ժամանումները ողջունելու կամ զանոնք դէպի Խորհրդարան առաջնորդելու առթիւ կատարուած արտակարգ հանդիսութիւնները, ո՛չ մէկը՝ գինովութեան շրջանի այդ երանելի՛ տեսարաններէն…

Եւ արդէն ի՞նչ հարկ կայ կրկնել մեզի այնքան մօտիկ եւ դեռաթարմ դէպքերուն շարքը, որոնց մանրամասնութիւնները հրատարակուեցան, օրը օրին, մայրաքաղաքի բոլոր օրաթերթերուն ու պարբերականներու սիւնակներուն մէջ…:

Այս ամէնը տեղի պիտի ունենար:

Պէտք էր որ գինովնար ժողովուրդը, պէտք էր որ Հայ եւ Թուրք պագնուէին, եկեղեցիներուն եւ մզկիթներուն մէջ: Պէտք էր որ վարդապետ ու խոճա, գըրկախառնուած, ժողովուրդին իրենք տային եղբայրութեան հաշտութեան անդրանիկ օրինակը:

Պէտք էր որ երեսփոխաններուն ի պատիւ կազմակերպուած թափօրներուն, նոյն կառքին մէջ քով քովի բազմէին հայ քահանան ու Թուրք մոլլան, յոյն վարդապետն ու խլամ կրօնաւորը:

ՍՄԲԱՏ ԲԻՒՐԱՏ

(Շար.)

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ՀԱՄԱԽԱՐԲՑ. Հայր. Միութեան Մարսէյլի մասնաճիւղի ընդհ. անդամական ժողովը այս շաբաթ ժամը 21ին, սովորական հաւաքատեղին: Օրակարգ՝ տեղւոյն վրայ:

Վարչութիւնը կը խնդրէ իր բոլոր անդամներէն ներկայ գտնուիլ տարւոյս վերջի այս կարեւոր ժողովին:

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Փարիզահայ Տիկնանց Միութեան յիսնամեայ յոբելեանը կը տօնուի Հոկտեմբեր 13ին, Սալ տը լա Շիմի:

ԿԵԱՆՔԻ ՈՒՂԻՆԵՐՈՎ

Գ. Հատոր

Շուտով լոյս կը տեսնէ Ս. Վրացեանի ԿԵԱՆՔԻ ՈՒՂԻՆԵՐՈՎ (Գ. Հատորը), շուրջ 300 էջ, պատկերազարդ եւ լաթակազմ:

Երրորդ հատորը կը բովանդակէ Ս. Վրացեանի յուշերը կամաւորական շարժման, ինչպէս նաեւ դէմքեր, դէպքեր եւ տպաւորութիւններ՝ մօտիկ անցեալէն:

ԴՊՐՈՑԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Դպրոցասէր Տիկնանց վարժարանին 1963 – 1964 տարեշրջանի արձանագրութիւնները սկսած են: Անոնք որոնք կը փափաքին ղրկել իրենց զաւակները պէտք է այժմէն իսկ դիմում կատարեն հաստատութեան տնօրէնութեան:

Ա.— ՖՐԱՆՍԱԿԱՆԸ, որ տասացի կերպով կը հետեւի պետական լիսէներու արդիական բաժնի պաշտօնական ծրագրին — անգլերէն եւ սպաներէն լեզուներով —:

Բ.— ՀԱՅԿԱԿԱՆԸ, որ կ'օժտէ սանուհիները հայադիտական ծանօթութիւններով, հայ լեզուի, գրականութեան, հայ կրօնքի եւ պատմութեան, Հայաստանի աշխարհագրութեան մարզերուն մէջ:

Աշակերտուհիներ կ'ընդունուին ութ տարեկանէն սկսեալ: Մանրամասնութեանց համար դիմել հաստատութեան տնօրէնութեան:

1, Bd. du Nord, LE RAINCY (S. et O.)

Tél : 927-01-72

Դպրոցասէրի ուսման ծրագիրը կ'ընդգրկէ երկու ուրոյն բաժիններ:

ՀԱՅ ԸՆԾԱՅԱՐԱՆ

ԲԱՑՈՒԱԾ ԵՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ուսումնական 1963–1964 Տարեշրջան

Կ'ընդունուին 10–12 տարեկան բարեկիրթ եւ ուսումնասէր աշակերտներ, որոնք ունին իրենց տարիքին համապատասխան նաեւ ուսումնական աստիճան:

Արձանագրութեան եւ լուսաբանութեանց համար դիմել՝

Direction du Petit Séminaire Arménien

3, Av. de Grandchamp, LE PECQ (S. et O.)

Tél. 963.01.72

ՍՏԱՑԱՆՔ

ԻՆՉՊԷՍ ՏԵՍԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԸ

(Տպաւորութիւններ)

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Գրեց՝

Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

ՆԿԱՐՆԵՐՈՎ ՃՈԽԱՑԱԾ ԱՅՍ ԳՐՔՈՅԿԸ ԿԱՐԺԷ ՄԻԱՅՆ 3 Ն. Ֆ.

Առաքումով՝ 4 Ն. Ֆ.

Դիմել՝

« Յ Ա Ռ Ա Ջ »

IMPRIMERIE SPECIALE
DU JOURNAL « HARATCH »
32, Rue de Trévise, PARIS (9e)

Շ. ՄԻՍԱՔԵԱՆ

Օրեր եւ Ժամեր

Լոյս Տեսաւ



Մատենաշար — ՅԱՌԱՋ — Կեդրոնավայր

ԳԻՆ

Ֆրանսա՝ 15 Ֆր.

— Առանձին առաքումի ծախքը —

« Յ Ա Ռ Ա Ջ »

ՀԱՅ ԲՈՅԺ

ԺՈՂ. ԱՄՍԱԹԵՐԹ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ

խմբագիր՝ Շ. ՆԱՐԴՈՒՆԻ

Խմբագրին երկար բացակայութեան պատճառաւ, լոյս տեսած չեն ՀԱՅ-ԲՈՅԺի 1962 եւ 1963 տարիներու թիւերը:

Խմբագիրը, որ նոր վերադարձաւ Ամերիկայէն, գործի ձեռնարկած է արդէն: Ծրագրած է հրատարակել երկու բացառիկ թիւեր, իւրաքանչիւրը 150 էջ: Առաջինը պիտի կրէ 1962 թուականը, երկրորդը՝ 1963 թուականը: Այս երկուքը մէկ տարի հաշուելով՝ անոնք որ վճարած են 1962, վճարած կ'ըլլան նաեւ 1963 տարին:

Այս ձեւով, խմբագիրը կը խորհի ՀԱՅ-ԲՈՅԺի հրատարակութիւնը ամբողջացնել եւ կանոնաւորել մինչեւ յառաջիկայ տարի, եւ 1964 տարուան թիւերը լոյս ընծայել ամսէ ամիս՝ Յունուարէն սկսեալ:

Ամերիկայի նոր բաժանորդները եւս, որոնք վճարած են այս տարուան համար (1963), պիտի ստանան ՀԱՅ-ԲՈՅԺի 1962 եւ 1963 թիւերը:

Այն բաժանորդները, որոնք յետնեալ պարտք ունին, թող բարի ըլլան իրենց վճարումը հասցնել մինչեւ տարեվերջ: Հին պարտքերուն հետ՝ ներկայ տարին եւս վճարողներն են միայն, որ պիտի ստանան ՀԱՅ – ԲՈՅԺի բացառիկները, խմբագրուած բժշկական, գրական, պատմական, շատ հետաքրքրական եւ ճոխ բովանդակութեամբ,— արդէն տպագրութեան յանձնուած:

Այս առթիւ շնորհակալութիւն այն հաւատարիմ բաժանորդներուն, որոնք ՀԱՅ-ԲՈՅԺի հրատարակութիւնը ընդհատուած ըլլալով հանդերձ՝ խմբագրին բացակայութեան պատճառաւ, վճարումները կատարած են օրը օրին ի վկայութիւն իրենց բարեկամութեան եւ վստահութեան:

Կը խնդրուի Հայրենիք, Ասպարէզ, Արմենիա, Ազատ Օր, Յուսաբեր, Ազդակ, Այգ, Ալիք թերթերու խմբագրութիւններէն, ինչպէս և Սիոն, Հասկ, Հայ Կեդրոն, Կիլիկիա, Հայաստանեայց եկեղեցի պարբերականներէն, որ հրատարակեն այս յայտարարութիւնը գէթ 2 – 3 անգամ:

ՍԱՄՈՒԷԼ ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ՆՈՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Իրենց զաւակները արձանագրել փափաքող ծնողքները պէտք է փութան դիմել տեսչութեան հասցէին:

COLLÊGE ARMÉNIEN SAMUEL MOORAT

26, Rue Troyon, SEVRES (S. et O.)

Tél. : OBS. 18-28

Եւրոպայի մէջ, հայ մանչերու համար հիմնուած, ֆրանսական եւ հայկական ուսումնական կատարեալ ծրագիրներով օժտուած մեծագոյն եւ ծաղկեալ ուսումնարանն է Սեւրի Սամուէլ Մուրատեան վարժարանը, ուրուն սեմէն ներս հայ մանուկին հոգին, միտքը եւ մարմինը կը մեծնայ, կը ծաղկի եւ կ'ընդլայնի բաղձալի համեմատութիւններով:

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

ԼԻՈՆ.— Ֆր. Կապ. Խաչի Օրը կը տօնուի մեծ պատրաստութեամբ, 27 Հոկտ. Մոլիէրէի շքեղ սրահին մէջ:

ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ

Կապոյտ Խաչի Վիէնի մասնաճիւղի տարեկան դաշտահանդէսը տեղի կ'ունենայ Սեպտեմբեր 1ին, առաւօտէն մինչեւ երեկոյ «Իւ–Խա–Ա.»ի մարզադաշտին վրայ (Թանըրիին քով):

Գեղարուեստական ճոխ բաժին: Բանախօսութիւն, երգ արտասանութիւն եւ հայկական պարեր:

Ճոխ պիւֆէ. աղանդերներ եւ շամփուրով խորոված:

Սիրով կը հրաւիրուի գաղութի հայութիւնը:

Անձրեւի պարագային «Խաժակ» սրահը:

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Մարսէյլի մէջ Դաշնակցութեան Օրը կը տօնուի Հոկտեմբերի 5ին Սալոն Ալհամպրա:

×

Հ. Բ. Ը. Միութեան Տիկնանց յանձնախումբը կը խնդրէ կազմակերպութիւններէն նկատի ունենալ հետեւեալ թուականները.—

ՀՈԿՏԵՄԲԵՐ 1, Երեքշաբթի երեկոյ Տիկնանց յանձնախումբի կազմութեան Գ. տարեդարձին առթիւ գեղարուեստական երեկոյթ:

ՀՈԿՏԵՄԲԵՐ 19, ցուցահանդէս հայ արուեստագէտներու նկարիչ, արձանագործ եւ փորագրիչներու գործերուն:

Հայկական Թանգարանը, 52 Ավընիւ Ֆոշ, (Փարիզ 16):

ԴԵԿՏԵՄԲԵՐ 7, 8, 9, 10, «Բարենպատակ վաճառք»:

Յառաջիկային պիտի տրուին մանրամասնութիւններ:

ՀՐԱՆՏ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

51, Rue Monsieur-le-Prince, PARIS - 6e — Chèque Postal : 1278-35

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ


ՇԻՐՎԱՆԶԱԴԷ, Երկերի ժողովածու, 10 հատոր լաթակազմ	70 Ֆր.
ՍՏԵՓԱՆ ԶՈՐԵԱՆ, Երկերի ժողովածու, 7 հատոր, լաթակազմ	56 Ֆր.
ՍՏԵՓԱՆ ԶՈՐԵԱՆ, Պապ թագաւոր, լաթակազմ	10 Ֆր.
ՍՏԵՓԱՆ ԶՈՐԵԱՆ, Հայոց բերդը, լաթակազմ	8 Ֆր.
ՎԱՀԱՆ ՏԷՐԵԱՆ, Երկերի ժողովածու, 2 հատոր լաթակազմ	14 Ֆր.
ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՒԻԹ, մեծադիր, գունաւոր նկարներով, լաթակազմ	10 Ֆր.
Վ. ԱՆԱՆԵԱՆ, Հայաստանի կենդանական աշխարհը, Բ.	8 Ֆր.
ԱՐՍԷՆ ՏԷՐՏԷՐԵԱՆ, Երկեր (Արովեան Պռօշեան, Պարոնեան)	17 Ֆր.
ՄՈՒՐԱՑԱՆ, Պատմուածքներ, գունաւոր նկարներով	5 Ֆր.
ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑԻ մասին յիշողութիւններ. լաթակազմ	7.50 Ֆր.
ՄԻՔ. ՇԱԹԻՐԵԱՆ. Գարունը նորից եկաւ. 296 էջ.	5 Ֆր.
ԱԲԳԱՐԵԱՆ. Մատենադարան (անգլ.) 18 գունաւոր մանրանկարներ	3 Ֆր.
ՀԵՆՐԻԿ ԹՈՒՄԱՆԵԱՆ. Երգի ծնունդը. բանաստեղծութիւններ	3.85 Ֆր.
Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ. Տաղեր, 200 էջ. լաթակազմ	3.50 Ֆր.
ՍՈՎԵՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ. Ա. 800 էջ. լթկզմ.	16 Ֆր.
ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ, Անլռելի զանգակատուն, Պէյրութ, 1963	10 Ֆր.

Առաքման ծախքը գնողին վրայ

ԳՐԱՏՈՒՆՍ ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻՆ Է

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՁԱՅՆԱԳՐԵԱԼ ԲՈԼՈՐ ԵՐԿԵՐՈՒՆ

ՃՈԽ ՄԹԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԵՒ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆՑ



ՃԱՇԱՐԱՆ

ԵԱՐ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԹԵՒԱՆԵԱՆ

Եւրոպական, հայկական եւ կովկասեան ընտիր ճաշեր:

Առաջնակարգ կովկասեան խորովածներ:

ՀԱՃԵԼԻ ՄԹՆՈԼՈՐՏ

AU CŒUR MÊME DES CHAMPS-ÉLYSÉES

4, RUE ROBERT-ESTIENNE
(coin Rue Marbeuf) PARIS-8e
Téléph. : BAL. 31-21 et 30-84
Métro : F. D. Roosevelt

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

Le PREMIER QUOTIDIEN ARMENIEN en EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction et Administration : 32, Rue de Trévise - PARIS-9e

Fondé en 1925 — Téléph. : PRO. 86-60

R. C. Seine 57 A 2731 — C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա՝ Տար. 50 Ֆ. — Վեցամսեայ՝ 27 Ֆ.

Արտասահման՝ Տար. 60 Ֆ. — Հատը 0.30 Ֆ.

ԿԻՐԱԿԻ 25 ՕԳՈՍՏՈՍ

DIMANCHE 25 AOUT 1963

LE NUMERO : 0,30 FR.

39րդ ՏԱՐԻ — ԹԻՒ 9691

Fondateur : SCHAVARCH MISSAKIAN

39e ANNÉE — Nº 9691

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

...ՊԻՏԵՆԱԿԱՆ „ՀԻՒԱՆԴ ՄԱՐԴԸ"

...չի ճանչնար զայն։ ...երէկ «Եւրոպայի հիւանդ մարդն» էր։ ...մեծ պետութիւնները տարիներով ա... ...մահամերձի անկողին վրայ կը հըս... ...իրարու ձեռքէն խլելու համար ա... ...բաժինը, երբ անիկա փչէր վերջին ...ունչը։

...առաջին աշխարհամարտը մահացու ...հարուածը տուաւ օսմանեան կայսրու... ...թեան։ Յաղթականները կտոր կտոր ըրին ...եւ հասան իրենց նպատակին։

...Եւ սակայն հիւանդ մասերը կարելի ...եղաւ ուսցին ողջնցնել զայն, իւրաքան... ...իւր իրեն յատուկ զաղտնի նպատակ... ...ով։

...Աւելի քան չորս տասնեակ տարիներէ ...ի վեր արեւելքէն արեւմուտքը ձեռք ձեռ... ...տուած կ'աշխատին կրկին կեանքի կո... ...չել զայն։ Շնորհիւ տարուած տրտակարդ ...ջանքերուն, անիկա պահ մը կենդա... ...նութեան որոշ նշաններ սկսաւ ցոյց տալ։ ...Սակայն ի վերջոյ մէջտեղ ելան բոր... ...բոքուած քրոնիկ ախտեր։

...Մէկ տեսակ չէ հիւանդութիւնը։ Ախ... ...տավարակ է ամբողջ մարմինը։ Անբու... ...ժելի հիւանդ մը, զոր դարմանելու իրենց ...անկարողութիւնը սախպուած են խոստո... ...վանիլ աշխարհի ամէնէն ճարտար բժիշկ... ...ները։

...Երէկուան «Եւրոպայի հիւանդ մարդը» ...այսօր դարձած է ամբողջ արեւմտեան ...աշխարհի, Ատլանտեան Ուխտի, Հասարա... ...կաց Շուկայի «հիւանդ մարդը»։

...Ցաւխտենական հիւանդը։

...Մոսկուայի անհաշիւ ռուբլիները, ...Ուաշինկթընի միլիոնաւոր տոլարները ...չեն փրկել զայն քաղաքական եւ տըն... ...տեսական սնանկութենէ։

...Քեմալ Աթաթիւրք տապալեց սուլթա... ...նութիւնն ու խալիֆայութիւնը եւ Համ... ...պետութիւն հռչակեց։ Սակայն փոխա... ...րէն ժողովրդավար կարգեր հաստատե... ...երկաթեայ թաթով կառավարեց ...երկիրը։

...Ապա չատ լաւ կը ճանչնար իր ...— Թուրքը ո՛վ էր, ժողովրդավարու... ...իւն ուր։

...էր մէկ օրէն միւսը փոխել ...ցեղին գլուխը։ Իսմէթ շարունակեց ...միակուսակցութեայ թաթի քաղաքականութիւնը՝ ...Աթաթիւրքի հիմնած միակ կու... ...սակցութեան՝ Հալքի վրայ։

...Հանրապետութիւնը հոմանիշ դարձաւ ...բռնատիրութեան։ Թուրքիա մնաց ան... ...դամալոյծ հիւանդը։ Հասաւ սնանկութեան ...եզրը։

...«Ազատ աշխարհի» Վարդապետութիւն»ը սահ... ...մանուած էր նոր շէնքով ներարկելու հի... ...ւանդին, զայն ոտքի կանգնեցնելու եւ ...ազատ աշխարհի յետսապահ պա... ...շտպան դարձնելու յոյսերով։

...նոր կուսակցութիւններ կեանքի կոչ... ...ւեցան՝ երբեւ թէ ժողովրդավարական ...սկզբունքներով՝ փոշի ցանելու համար ...Ամերիկացիներու աչքին։

...Դեմոկրատ կուսակցութիւնը սկիզբէն ...իսկ ապատական վարչաձեւէն ձերբա... ...զատուեցաւ չուտով։ Մենատէրն դարձաւ ...ինքն մենատէր, փնտռել տալով Աթա... ...թիւրքն ու Ինէօնիւն։ Ընդդիմադիրները ...ենթարկուեցան դատապարտութեան։ Մամուլը ...կաշկանդուեցաւ։ Լրագրողները բանտ ...նետուեցան։ Փոքրամասնութեանց դէմ ...ջարդեր սարքուեցան։ 1955 Սեպտեմ... ...բերին եղերելի նախճիրը սարքուեցաւ։ ...Թուրքիոյ հարցը պատրուակ դարձաւ ...դէպքին աղդայնամոլական ոգին ար... ...թնցնելու։

...Մենդերէս, Պայեար եւ ընկերները այս ...անգամ կ'ընէին՝ ծածկելու համար եր...

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ԿԱՑՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԾԱՆՐԱՆԱՅ ՎԻԷԹՆԱՄԻ ՄԷՋ

ԱՐՏԱՔԻՆ ՆԱԽԱՐԱՐԸ ԿԸ ՀՐԱԺԱՐԻ

Վիէթնամի Արտաքին նախարարը հրաժարած է իր պաշտօնէն, ամբողջովին ածիլած է գլուխը եւ որոշած պուտտայական ուխտագնացութիւն մը ընել։ Ասիկա խիկական ապտակ մը կը նկատուի Տիէմի ընտանիքին դէմ, որ արդէն պատակ-տուած է վերջին օրերու դէպքերուն առթիւ։ Շուօնկ, որ դեսպան էր Ուաշինկթըն եւ հրաժարած իր պաշտօնէն, յայտարարած է.— «Հարիւրէն մէկ յոյս չկայ յաղթանակ տանելու, հակառակ օրական մէկ միլիոն տոլարին զոր նախագահ Տիէմ կը ստանայ Միացեալ Նահանգներէն։ Այդ դրամը արդէն չի ծառայեր Համայնավարութեան դէմ պայքարելու այլ՝ ամրապնդելու Տիէմի ամենազօրութիւնը և վարչակարգին սանձարձակութիւնը»։

Սայկոնի մէջ, ըստ հասած լուրերուն, կացութիւնը շփոթ է եւ շատ յայտնի չէ թէ ո՞ւր ձեռքն է իշխանութիւնը։ Կ'ըսուի թէ Տիէմ այլեւս չատ տկար նկատուած է իր շրջապատին կողմէ եւ իր եղբայրն ու անոր կինը բուն տէրերը դարձած են երկրին։

Նախագահ Քենըտի կը հետեւի դէպքերու ընթացքին, Քապոթ Լոճի ղրկած առաջին տեղեկագրերէն։ Ամերիկեան դեսպանը մերժած է իշխանութեանց յանձնել դեսպանատունը ապաստանած երկու քուրմեր, «հողային անձեռնմխելիութիւնը» առարկելով։

Ձերբակալութիւններն ու խուզարկութիւնները կը շարունակուին։

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՄՈՍԿՈՒԱՅԻ Իզվեստիան կրկին կը յարձակի Չինացիներուն վրայ, որոնց ղեկավարները Ճենկիս Խանին եւ Հիթլէրին կը նմանցնէ։

ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ նիստէն քանի մը ժամ առաջ, Սուրիան ընդունեցաւ ՄԱԿի դէտերու քննութիւնը, բայց նիստին ընթացքին Իսրայէլացիներն ու Սուրիացիները ծանր բախումներ ունեցան եւ ՈՒ Թան հանդարտութեան կոչէ մը ետք, նիստը երեքշաբթի օրուան յետաձգեց։

ՔԵՆԸՏԻ անակնկալի եկաւ Ներկայացուցչական Ժողովին որոշումէն։ Արդարեւ, երեսփոխանները պակսեցուցին աւելի քան մէկ միլիառ տոլար Ամերիկայի օժանդակութիւնը արտասահմանի 188ի դէմ 222 ձայնով։ Նախագահը յոյսը դրած է Ծերակոյտին վրայ, որպէսզի անոր մէկ տարբեր որոշումը առնէ ե-

ՏԻԿԻՆ ՆՀՈՒ

ՕՐՈՒԱՆ ԴԷՄՔԵՐԸ

Ընտանիքին բուն այր մարդը կը նկատուի այս կինը, որ 1943ին երբ միայն 16 տարեկան էր կ'ամուսնանար լուրջ երիտասարդի մը հետ։ Այս միութիւնը կը նշանակէր մեծ զործատիրութեան եւ արքունի ազնուականութեան միութիւն մը։ Շուօնկի աղջիկը պուտտայական էր ծընունդով, բայց դաւանափոխ կ'ըլլար եւ կ'ընդունէր իր կաթողիկէ ամուսնոյն կըրօնքը։ Տարիներ ետք — այսօր — իր կրօնական թունդ մոլեռանդութիւնը կըրնայ յիշեցնել գինիէն դարձած թունդ քացախը։ Զօրս զաւկի տէր, այս երիտասարդ կինը ամբողջ Վիէթնամը կը կառավարէ «քաղաքական խորհրդատու» իր ամուսնոյն եւ մենատէր իր տաքրոջ միջոցաւ։ «Անուշիկ է, կ'ըսէ Ժան Լաքութիւռ, Լը Մոնտի մէջ, աւելի ճիշդ անուշիկ էր եւ կրնար ալ դեռ ըլլալ, եթէ նայուածքը այդքան խիզախ չըլլար, ժպիտը այդքան թթու, շեշտը այդքան հրամայական, շարժուձեւը այդքան չոր եւ կըտրուկ։ Ճիշդ է որ 10 տարի իշխանութիւն ունենալ չի կրնար գեղեցկացնել ամէնէն կատարեալ բնութիւնները, մանաւանդ երբ իշխանութիւնը թէ՛ բացարձակ է եւ թէ մասամբ գաղտնի»։

Տասը տարուան ընթացքին, այս կինը «առաջին տիկին»ի դերէն անցաւ Պետութեան առաջին անձնաւորութեան դերին։ Ամերիկեան Թայմ շաբաթաթերթը կը փորձէ պատկերացնել կացութիւնը սա նախադասութեամբ.— «Կը վարէ մարդիկը որոնք կը վարեն երկիրը»։ Թէեւ, իր հեղինակութիւնը աւելի ուղղակի կը գործադրուի քան ինչ որ կարծել կուտայ այդ բացատրութիւնը։ Սայկոնի երեսփոխանները կ'ըսեն թէ երբ փոքրիկ Տիկին Նհուն բեմ կը բարձրանայ, այն ատեն կը զգան ամբողջ իշխանութեան ծանրութիւնը իրենց վրայ։

Ճափոնական զրաւման ատեն հայրը՝ «անկախ» Վիէթնամի առաջին Արտաքին նախարարն էր, թէեւ յետագային կրցաւ Ամերիկացիներուն «վստահելի մարդը» ըլլալ, եւ Ուաշինկթընի դեսպան նշանակուեցաւ աւելի ետք։ (Անցեալ օր հրաժարեցաւ համաձայն չըլլալով իր աղջըկան ու փեսին եղբօր վարած քաղաքականութեան)։

Ամուսնութենէն 10 տարի ետք կը պատահի ճակատագրական պատերազմը՝ Տիէն Պիէն Ֆուն։ Պարտուած Արեւմուտքը կը փորձէ համայնավարութեան ա-

րեսփոխաններուն վերաքննել իրենց վճիռը։

ՎԵՆԵՏԻԿԻ մէջ բացուեցաւ Շարժանկարի տարեկան փառատօնը, բրիտանական՝ «Թոմ Ճոնս» ֆիլմով։ 500 թղթակիցներ ներկայ են այս միջազգային հանդիպումին։

ՊՈՆԷՆ կը հաղորդեն որ Դաշնակցային Հանրապետութիւնը որոշած է 160 միլիոն մարքի փոխառութիւն մը ընել Եւրոպայի «հիւանդ մարդուն», աւելի ծանօթ Թուրքիա անունին տակ։

ՎԻՇԻԻ մէկ կարեւոր գոհարավաճառներէն մէկուն խանութէն 1 միլիոն ֆրանքի (100 միլիոն հին ֆր.) գողութիւն մը եղած է։

ՖՐԱՆՍԱ ԵՒ ԳԵՐՄԱՆԻԱ մերժած են խորհրդային նոր ծանուցագիրը Ֆրանքօ-գերմանական դաշնագրին վերաբերեալ։

ՆՈՐՎԵԿԻՈՅ մէջ, 28 տարիէ ի վեր առաջին անգամ ըլլալով, կառավարական տագնապ մը ծագած է։

կրի ներքին փտութիւնը։ Հիւանդին վիճակը կը ծանրանար հետզհետէ։ Թուրքիա կը խեղդուէր պարտքերու տակ։ Դեմոկրատ նախարարներն ու երեսփոխանները զեղծարարութեամբ կը հարստանային, մինչ ժողովուրդը անօթի էր։

Դժգոհութիւնը քաղաքացիներէն անցաւ զինուորականներուն։ Բանակը ապստամբեցաւ։ Պալարը պայթեցաւ։

1960 Մայիս 27ի զինուորական յեղափոխութիւնը վերջ տուաւ Դեմոկրատներու մենատիրութեան։

Սակայն Թուրքիա մնաց յաւիտենական «հիւանդ մարդը»։

ՀՐԱՆՏ – ՍԱՄՈՒԷԼ

ՉԱՐԵՆՑԻՆ

Քեզ սիրեցի,և իմ սէրը դարձաւ մորմոք,
Եւ իմ սէրը դարձաւ վախ,
Իմ սրտում կար մի երկնային երգի որոտ
Բայց դարձայ լուռ, գլխակախ։

Հաւատում եմ, հաւատում եմ, որ
կը գայ մեծ
Քո յարութեան օրն արդար,
Եւ դու նորից յաղթանակով կը յառնես,
Ու ոսոխդ կ'ընկնի վար։

Որքա՜ն մարդիկ պիտի փութան
ամբիոններ՝
Առաջինը յուզուելով,
Եւ անիծեալ իրենց անցեալը օծեն
Յիշատակիդ լոյսերով։

Բայց մենք կը գանք դահլիճներով
խուռներամ
Ու քայլերով անվհատ,
Եւ քո բոլոր դահիճներին ոճրագործ
Պիտի զարկենք պատէ պատ։

Եթէ նոյնիսկ ես չհասնեմ այդ օրուան,
Եթէ մնամ կէս ճամբին,
Վաղուայ փառքիդ շքամուտքով ներս
կը գամ,
Աշակերտի պէս անբիծ։

ԽԱՉԻԿ ԴԱՇՏԵՆՑ

1939

ռաջքը առնել, մէջտեղ դնելով միապետական կաթողիկէներ։ Սկիզբը դժուար կ'ըլլայ Թաղաւորին մեքենայութիւններուն դէմ պայքարը։ Այդ շփոթ մթնոլորտէն սակայն դուրս կուգայ այս փոքր կինը, որու քաղաքական վարդապետութիւնը կ'ամփոփուի չորս կէտերու մէջ.— կնապաշտութիւն — կաթողիկէութիւն — ամօթխածութիւն եւ հակահամայնավարութիւն։ Կնապաշտ է կատաղի կերպով, անխնայ կուռելով «Վիէթնամցի Կիներու Համախմբութեան Շարժումին» գլուխը եւ ամէն վայրկեան յիշեցնելով թէ՝ եթէ Ֆրանսան Ժանն տ'Արքն ունեցած է, Վիէթնամը երկու հերոսուհի ունեցած է յանձինս Թրունկ քոյրերու, որոնք եղերական մահ մը ունեցած են Ժ.Դ. դարուն Չինացիներուն դէմ կռուելով։

Ամօթխածութիւնը առակի կարգ անցած է եւ պոռնկութեան դէմ իր պայքարները համբաւաւոր են։ Իր այս ընթացքը չատ խօսիլ կուտայ իր վրայ։ Երբ Խորհրդարանին կ'առաջարկէ որ օրէնք մը քուէարկէ թաքսի-կըլերու արհեստին եւ թանկոյի դէմ, մէկ կամ միւս պարագային մէջ, ատոր նպատակն է չպառել ուժեր, որոնք պէտք է լրիւ նըւիրուին համայնավարութեան դէմ պայքարին։

Գալով իր կաթողիկէութեան, իր տաքրերուն նման, աւելի մօտ է մոլեռանդ սպանացի Թորքուէմատայի կաթողիկէութեան քան՝ Յովհաննէս ԻԳ.ի, եւ պիտի չքաշուէր խարոյկներ վառելէ եթէ իր թշնամիները չգրկէին իրեն ատկէ, իրենք զիրենք ողջ-ողջ վառելով։

Իր մէկ վերջին խօսքը կրնայ գաղափար մը տալ իր կրօնական տեսակէտներուն մասին։ Երբ Քոլոմպիա Պրոտքաթինկի մէկ թղթակիցը կը հարցնէր իրեն թէ ի՞նչ կ'անցնի կը դառնայ պուտտայական կառոյցներուն մէջ, պատասխանած է.— «Պարպըքիուէ կ'անցընեն իրենց քուրմերը» (պարպըքիուն ամերիկեան խորովածի ճաշն է)։

Վախ կայ սակայն որ այս խօսքը բախտ չբերէ Հարաւային Վիէթնամի առաջին անձնաւորութեան, կ'եզրակացնէ Մոնտի աշխատակիցը։

ԱՐՍԷՆԸ ԱՐՍԷՆԻՆ ԴԷՄ

Քաջք ընդ քաջս ելեալ···
ԵՂԻՇԷ

Ե.

Աթէնքի արեւը, Փիւռոս, եւ ճարտասա-
նութեան արեւը, Դեմոսթենէս, բեմ
բարձրացան միաժամանակ, ինչպէս սո-
վորութիւն էր, վասնզի Հելլէան դատել
կը սկսէր՝ երբ արեւը ծագէր:

Մարդկային ծո՞վ մըն էր կազմուեր
արդէն՝ ճաղատ եւ հերարձակ գլուխնե-
րու ալեկոծութեամբ, բացօթեայ դատա-
րանին մէջ (Հելլէա), լոյսի չկամօրուս
տատուածութեան աղնտուքին տակ:

Դեմոսթենէս պահ մը սեւեռեց իր աչ-
քերը Լիւդոսին վրայ, արձան մը գայլի
գլուխով, միա'կ զարդը հելլենական դա-
տարաններու մէջ, յետոյ գայլի նման
յարձակելէ առաջ իր որսին վրայ,
յանկարծ ուզեց խաղալ միսթոտոս
բառին շուրջ, ոչ թէ պատանե-
կան օրերու իր թոթովախօսու-
թիւնը յիշեցնելու ձեւով, այլ արտասա-
նական թերութեամբ մը՝ շեշտի տեղա-
փոխութիւն կատարելով, ընդոստ ար-
թնցնելու համար քերականագէտները
եւ, բարձրաձայն ու միաբերան, սրբա-
գրութեան փութացող ժողովուրդին ա-
ղաղակով՝ շփոթութեան մատնելու հա-
մար մեղադրեալը, դատաւորները եւ ա-
տենակալը (*):

Արդարեւ, բառերը, Հոմերոսի լեզուին
մէջ, ինչպէս Վիրգիլիոսի լեզուին մէջ,
իմաստ կը կորսնցնեն սխալ շեշտադրու-
թեամբ եւ իմաստ կը փոխեն համաձայն
ժամանակին՝ որ կը տրուի վանկերուն:
Լատիներէնի մէջ, օրինակ, փալուս կը
նշանակէ ձող՝ երբ երկար է առաջին
ձայնաւորը, բայց կը նշանակէ ճահիճ՝
երբ երկար է վերջին ձայնաւորը:

Ահա թէ ինչո'ւ, ժամանակ մը, բառերը
կը գրուէին շեշտերով բեռնաւորեալ(**),
աչքը տանելով ականջին ծառայութեան,
խուսափելու համար իմաստի շփոթութե-
նէ: Այդ շեշտերը ականջին այբուբենը
կը համարուէին: Բայց ականջը··· կոյր
է: Այնպէս որ, յետագային, Լեթէի ծոցը
նետեցին այդ բոլոր շեշտերը, իբրեւ
անօգուտ բեռ:

Այնուհետեւ աչքն էր, որ մինակը շա-
րունակեց տառերն ու բառերը քալեցնել
դէպի յաւիտենականութեան դարպաս-
ները:

Ձայնագրութիւն չկար այն օրերուն,
ձայնապահարան չկար այն օրերուն: Ի՞նչ
կրնար ընել աչքը, մինակը: Մանաւանդ
«աղուաշ» արեղաներու ճղոտ աչքերով:

Ու կորսուեցա՛ն ձայները, մոռցուեցան
առոգանութեան կանոնները, անհետ
թաղուեցան կարճ եւ երկար ձայնաւոր-
ներու վարժութիւնները: Եւ ինչ որ կ'ը-
սէ, հիմա, Հ. Վարդան Հացունի, պատ-
րանք է միայն: Մեռելը տուն կանչել է
պարզապէս: Եւ ուրիշ ոչինչ: Ապացոյցը

այն որ, այժմ, մենք չենք գիտեր թէ, ի
հնումն, ի՛նչպէս կ'արտասանուէր զենուլ
բային սահմանական եղանակ անկատա-
րը.— Զենոյի, յետագային գրուած՝ զե-
նուի: Կամ հեղուլ բային սահմանական
եղանակ անկատարը.— Հեղոյի, յետա-
գային գրուած՝ հեղուի: Հնագոյն այս
ձեւով՝ առնոյիք մը կը գտնէք Ամովսի
գրքին մէջ (Գլ. Ե. 11, — Բագրատունիի
հրատարակութիւն, այլ հրատարակու-
թեանց մէջ՝ առնուիք): Կարելի՞ է հար-
ցնել թէ ոսկեդարեանք ի՛նչպէս կը կար-
դային սա բառերը. «Ոյք երդնոյին»
(Ամովս, Ը. 19): Կամ սա բառերը. «Եւ
արդեւոյին զմեզ խօսել» (Ա. Թես. Բ.
16): Վերջապէս ո՞վ կրնայ գուշակել թէ
Յոյն անունը Յոյն ազգին անունը չէ, այլ
Իոն սատուածուհիին անուան հայացուած
ձեւն է, գրուած նաեւ Յովն, բայց ի՞նչ-
պէս կը կարդացուէր, ի՞նչպէս:

Թէ աչքը ամէն բան չէ՝ ո՞վ կ'ուրա-
նայ: Օրինակ, առնենք սա բառը, զլա-
ցող: Խնդրեմ, ըսէք, ի՞նչպէս կարդանք.
— Զըլացո՞ղ թէ ըզլացող, բայց չէ՞ որ
տարբեր են նշանակութիւնները՝ ըստ
արտասանութեան: Կը յիշէ՞ք վէճը թէ
ո'րն է ուղիղ ընթերցանութիւնը, ըզնա՞
թէ զընա, նկատի ունենալով որ այս եր-
կու ձեւով գրչութիւններն ալ կան շա-
րականներու մէջ:

Բայց ակա՛նջը, ակա՛նջը, ո՞ւր մնաց
իր ժառանգը: Արդարեւ, ի՛նչ ձայն մնա-
ցած է, ի՛նչ արտասանութիւն, ի՛նչ ուղ-
ղախօսութիւն, — ամէն բան տարա՛ւ···
սատանան, Հայր Վարդան (***):

Հարկ է, այլեւս, ընդունիլ թէ մեռած
է պատմական հնչաբանութիւնը, եւ ինչ
որ կ'ըսեն, այսօր, այդ ուսման հետե-
ւորդները, կը մնայ փանթէզի:

Հայերէն տառադարձութի՛ւնն իսկ կը
տառապի այս ցաւով, — արեւելեան աշ-
խարհաբարին մէջ տառաձայները ռուս-
սական առոգանութեան ենթակայ, ա-
րեւմտեան աշխարհաբարին մէջ տառա-
ձայները թրքական առոգանութեան են-
թակայ, աւա՜ղ:

Թէ աչքը շատ մեղք գործած է՝ ո՞վ
կ'ուրանայ, բայց թէ շատ բան փրկած
է, պէտք չէ ուրանալ: Ականջը ի՞նչ կըր-
նայ ընել, օրինակ, սա երկու բառերուն
իմաստը գտնելու համար.— Համբաւայլ
եւ յամբաւայլ: Նմանաձայն բառերու
զատորոշութիւնը կարելի է կատարել ա-
կանջով, յաճախ մեկնելով նախադասու-
թեան պարփակած գաղափարէն, բայց
ականջը ափազի սեմանթիքի կը մատնուի
այս երկու բառերուն առջեւ, չի կրնար
իմաստ հանել նոյնիսկ նախադասութեան
ամբողջութենէն: Առաջին բառը ական-
ջային իմաստաբանութեան յատուկ է,
որովհետեւ կը նշանակէ ա փա փէօթռէ,
այսինքն քալուածք մը, որ ոչ իսկ լսո-
ղական տպաւորութիւն կը գործէ, մինչ
երկրորդը, որ շարժումի մը կշռոյթով
կը բացատրուի, ակնային իմաստաբա-
նութեան յատուկ է, որովհետեւ կը նշա-
նակէ ա փա լան, այսինքն քալուածք մը,

որ տեսողական տպաւորութեամբ միայն
զգալի է:

Ահա թէ ինչո'ւ ձայն, շեշտ եւ հնչա-
բանական որեւէ հնարք անօգուտ են: Պայ-
ման է աչքին միջամտութիւնը: Գիրը,
այժմ, կ'իշխէ: Գիրը, որ նիւթ է, տեսակ
մը արձան՝ բառերու ծագման եւ ինքնու-
թեան վկայութեան համար, տեսակ մը
նշան՝ լեզուին յաւերժացման եւ յաւի-
տենականութեան, կը ծիծաղի՛ ձայնին
վրայ, որ օդ է միայն, փոփոխական՝
եղանակին ու ժամանակին համաձայն:

Ընդհակառակն մեռեալ լեզուները, օ-
րինակ՝ հիթիթերէն կամ սումերական,
զորս ոչ ոք լսած է գերեզման դրուելէ
ետք, յարութիւն կ'առնեն շնորհիւ տա-
ռանշաններու:

Ուստի մերժելով կը մերժեմ բառերու
ուղղագրութեան տալ.

1.— Այն ձեւը, որ կը հիմնուի ձե-
ռագրական վկայութիւններու վրայ:

Օրինակ, ոմանք յոբելեան կը հոլովեն
յոբելինի, «որպէս թէ ուղղականն իցէ
յոբելէն»: Բայց, եղբարք ի Քրիստոս,
ամէն գրուած է նաեւ ամայն, միշտ հին
ձեռագիրներու մէջ:

2.— Այն ձեւը, որ կը հիմնուի հնչա-
բանական պայմաններու վրայ:

Օրինակ, Հ. Վարդան Հացունի ամէն
կը հոլովէ ամենէն, իբրեւ թէ վերջա-
վանկի բաց տառը վանկին յաւելմամբ
կը փոխուի փակ տառի, երկար տառը՝
սուղ տառի: Բայց Հացունի մեզ կը տա-
նի, այս առաջնորդութեամբ, դէպի նոյն
խորխորատը, ուր Ղազիկեանը դարձած է
Ղազիկենի:

Ի՞նչ է, ուրեմն, իմ պահանջածս: Պի-
տի ներկայացնեմ յաջորդիւ, օգնու-
թեամբ Այտընեան Հայր Արսէնի:

Շ. ՆԱՐԴՈՒՆԻ

(*) «Զվարձկանն կամ վարձաւոր՝ հել-
լէն լեզու շեշտոլոր ձայնիւ միսթոտո'ս
ասէ: Բայց աւանդի ի հինգ մեկնչաց թէ
Դեմոսթենէս խորամանգ խորհրդով ի
հարցման անդ այլափոխեալ իցէ զայն ի
նախայարաշեշտոլոր, եւ հնչեալ յատենի
անդ մի'սթոտոս, որպէսզի դատաւորք եւ
ժողովուրդն, թէեւ ոչ ի վկայութիւն ի-
րացն նշմարտութեան, զէթ առ ուղղելոյ
զվրիպակ ատենախօսին, որպէս սովոր
էին, ընդոստուցեալ աղաղակեսցեն միա-
բարբառ.— Միսթոտո'ս, միսթոտո'ս»
(Բագր.):

Շեշտադրութիւնը առանձին ուսում մըն
է քերականութեան մէջ, անշուշտ հայ-
կականը յունականէն տարբեր: Մեր մէջ
երեքի կը բաժնուին շեշտաւորման ձեւե-
րը.— Շեշտը, որ կը դրուի բառերու
վերջին վանկին վրայ, ինչպէս սովորա-
բար կոչականին եւ բայերու հրամայա-
կանին վրայ, կը կոչուի շեշտոլոր: Երբ
կը դրուի բառերու երկրորդ վանկին վը-
րայ (ետեւէն առաջ), կը կոչուի յարա-
շեշտ կամ յարաշեշտոլոր: Իսկ նախա-
յարաշեշտ կամ նախայարաշեշտոլոր կը
կոչուի, երբ կը փոխադրուի վանկ մը եւս
աւելի առաջ:

Շեշտադրութիւնը եղբայր է երաժշ-
տութեան, իր ուսումը եւս երկար դա-
սախօսութեան կարօտ: Բաւ է այսքանը:

Յունարէնի մէջ միսթոտոս բառը կ'առ-
նէ շեշտոլոր, — կը զարնուի վերջին
վանկին վրայ: Բագրատունի թարգմա-
նաբար ընտրած է եռավանկ վարձաւոր
բառը, իմաստով եւ վանկերով համապա-
տասխան յունարէն բառին: Դեմոսթենէս,
դիտմամբ, նախայարաշեշտի կը փոխէ՝
զարկը փոխադրելով երկու վանկ առաջ,
որպէսզի ժողովուրդը եւ դատաւորները,
շեշտը իր տեղը փոխադրելու փորձով,
պոռան միաբերան.— Վարձաւո՛ր կամ
վարձկա՛ն: Դեմոսթենէսի ուզածն ալ
ա՛յդ էր արդէն, պահ մը շփոթութիւն
ստեղծել՝ այդ մեղադրական բառը ար-
տասանել տալով ժողովուրդին եւ դատա-
ւորներուն:

Այժմ, «այս ամենայն շեշտք··· ոչ եր-
բեք ի գիր անցանեն, եւ աւելորդ իսկ
են», կը գրէ Բագրատունի:

(**) Եբրայերէնի մէջ, մասորական եր-
շանագրութեանց մտերիմ ընթերցողը
ծանօթ է, անշուշտ, այն շեշտերուն,
ինչպէս եւ համր տառերուն, որոնք կը
ծառայէին բառերու արտասանութեան:
Թէ որքան կարեւոր էին՝ կը վկայէ Ս.
Յերոնիմոս, որ կը գրէ թէ միայն իրենց
յատուկ շեշտով կը զանազանուէին խոտ
(կը նշանակէ՝ կին) եւ խոտ (կը նշանա-
կէ՝ կ'առնէ) բառերը: (Տես վերը՝ փա-
լուս բառին մասին գրուածը): Ոմանք կը
կարծեն թէ այդ կարգի քերականական
հնարքներու կամ նշաններու կ'ակնարկէ
Յիսուս, երբ կը խօսի «նշանախեցի մը»
մասին (Ղուկ. ԺԶ. 17), այլ տեղ՝ «յով-
տի մը կամ նշանախեցի մը» մասին
(Մատթ. Ե. 18), — այս երկու բառերէն
մէկը էնթէռփոլասիոն է, յաւանցքէն
ներս մտած: Նշանախեց կոչուած անոր
համար որ չէր գործածուեր իբրեւ ձայն,
գիր էր՝ բայց ոչ տառ: Արդարեւ, յովտ
համր գիր է, — եբրայերէն կը կոչուի
խոտ, զոր մենք կը գրենք դասական տա-
ռադարձութեամբ՝ յովտ, (այս անուա-
նագրութեան մէջ, նոյնպէս, համր գիր
մըն է մեր վէվը): Բայց նոյն համր գիր
ձայնաւոր է երբեմն, ու նաեւ··· բաղա-
ձայն, նիշդ ինչպէս մեր վէվ տառը՝ ժա-
մանակին, թէ' բաղաձայն, թէ' ձայնա-
ւոր, յունարէն օմեղային արտասանու-
թեան օգնական: Նման համր գիր մը եւս,
եբրայերէնի մէջ, հէթ գիրը, գործած-
ուած՝ իբրեւ վերջադիր (փարակոժէը),
նիշդ ինչպէս մեր յ տառը, որ տաղաչա-
փական նշան եւս է, գործածուած «աչքի
յանգ» շինելու համար, միշտ վերջադիր:

Այս համր գիրերը կը կոչուէին «մայր
վերծանութեան», որովհետեւ կը ծառա-
յէին ընթերցանութեան, բայց ոչ կար-
դացուելու կամ իրենց յատուկ ձայն մը
տալու:

Այս նշաններէն զատ, եբրայերէնը ու-
նէր շեշտերու անօրինակ հարստութիւն

ՍԱՅԱԹ – ՆՈՎԱՅԻ
ԾՆՆԴԵԱՆ 250 ԱՄԵԱԿԸ

ՄԵԾ ԸՂՁԱՒՈՐՆ ՈՒ ԲԵԶԱՐԱԾԸ

Սայաթ-Նովայի ժամանակ աշուղների
համար վաղուց ընդունուած կարգ էր օ-
տար մականուն ընտրելը: Եթէ չլինէր
այս անգիր օրէնքի թելադրանքը՝ Սա-
յաթ-Նովան կարող էր իրեն մականուն
դարձնել իր մայրենի լեզուից մի բառ՝
այժմ, ցաւօք սրտի, արդէն համարեա թէ
անգործածելի, բայց շատ իմաստալից ու
պերճախօս եւ նոյնքան էլ անթարգմանե-
լի մի բառ՝ Աստղիկ: Եւ կամ՝ Շնորհալի,
եթէ Սայաթ-Նովայից վեց հարիւր տարի
առաջ այս մականունը կպած չլինէր Ներ-
սէս Կլայեցուն, որ նոյնպէս ոչ միայն
բանաստեղծ, այլեւ մեծ երաժիշտ, եր-
գիչ ու նուագածու էր, իր այս շնորհա-
լիութեամբ ինքը միայն կարող էր դառ-
նալ Սայաթ-Նովայի հոգեւոր հայրը:

Ուրիշ էին ժամանակները, եւ Արու-
թինն իրեն վերանուանեց Սայաթ-Նովա՝
մի մականուն, որ բանասէրների կողմից
մեկնաբանուել է բազմաթիւ ձեւերով,
բայց նրա համար դրանցից միայն մէկն
է ըստ էութեան ամէնից վայելուչ (չեմ
ասում՝ ճիշդ). ա՛յն, որ թարգմանւում
է իբրեւ «երգի եւ ներդաշնակութեան
արքայ»:

Այդ մասներն այլեւս չկան, բայց նաեւ
կան, որքանով որ փոխանցուել են այն
նուագածուներին, որոնք այսօր էլ Սա-
յաթ-Նովայական անմոռաց եղանակներն
են հնչեցնում համերգային մեծ ու փոքր
դահլիճներում, ինչպէս նաեւ ռադիո-
ալիքներով:

Սայաթ-Նովան մարդկանց է գերել
նաեւ իր ձայնալարերով՝ սկսած վրայ
թաղաւորներից ու թագուհիներից եւ
հասնելով մերօրեայ նախարարներին:
Այդ ձայնալարերն էլ չեն հատուել, այլ
վերափոխուելով հնչում են նաեւ այժմ
ու պիտի հնչեն այսուհետեւ էլ՝ Սայաթ-
Նովայական երգերը դարձնելով երեք եւ
աւելի ժողովուրդների առօրեայի մի մա-
սը, համեմունքն այն հոգեւոր սննդի, որ
հանապազօրեայ է, ուրեմն եւ անփոխա-
րինելի:

Աւանդութիւնն ասում է նաեւ, որ նոյն
այս Սայաթ-Նովան՝ դեռ Արութին ե-
ղած օրերին, կարճ ժամանակում ոչ մի-
այն ջուլհակութիւն է սովորել, այլեւ
հնարել է մի մեքենայ: Սրա՛ն էլ հաւա-
տացէք՝ յիշելով··· Վերածննդի մարդ-
կանց: Հաւատացէ՛ք, որովհետեւ, որքան
ճիշդ է, թէ «կարկուտը ծեծած տեղն է
ծեծում», նոյնքան էլ ճիշդ է, թէ «Աստ-
ուած որ տուեց՝ էլ չափը չի հարցնում»:

Բայց Սայաթ-Նովան՝ այս ամէնից ա-
ռաջ ու յետոյ՝ անցած ու գալիք ժամա-
նակների դէմ-յանդիման կանգնում է իր-
րեւ բանաստեղծ: Համալսարանի անուն
իսկ չլսած, ինչ-որ վանքում ինչ-ինչ
գիտելիքների աղ ծամած այդ պատանին
տիրապետեց չորս լեզուի, եւ այնպէս,
որ ստեղծագործե՛ց այդ լեզուներով, եւ
այնպէ՛ս ստեղծագործեց, որ մտաւ երեք
ժողովրդի գրականութեան մէջ: Ոչ թէ
գրականութեան պատմութեա՛ն, այլ
գրականութեա՛ն մէջ՝ կենդանի եւ ապ-
րող, կարդացուող ու երգուող, միշտ
ճարուող, բայց միշտ էլ փնտռուող գրա-
կանութեան մէջ: Մտաւ իբրեւ աղ:

Այսքանով էլ՝ Սայաթ-Նովան անհատ
չէ, թէկուզ եւ մե՛ծ անհատ, այլ ժամա-
նակ լցնող չունչ է, տարածութիւն լըց-
նող օդ, եւ այսպիսին մնում է մինչեւ
հիմա, երբ Խաղաղութեան համաշխար-
հային Խորհրդի որոշմամբ բովանդակ
աշխարհը տօնում է նրա ծննդեան 250
ամեակը:

×

Սայաթ-Նովան համալսարան չի աւար-
տել: Համալսարաններ կային նրա հայ-
րենիքում, բայց··· նրանից հինգ-վեց
հարիւր տարի առաջ: Սելջուկեան, մոն-
ղոլական, ապա եւ Թուրքական հրոսակ-
ների նժոյգները Թուրանական անապատ-
ների աւազախառն փոշով ծածկեցին ի-
րենց իսկ փլատակած համալսարաններ-
աւերակները: Երբեմնի բարձր քաղաքա-
կրթութիւնը, որ հրաշագործում էր ա-
տեղ՝ քարը քանդակ դարձնելով, կաշ-
ջնարակած ամանեղէն, կաշին ու որդա-
կարմիրը՝ մանրանկար ու բանաստեղ-
ծութիւն, — Թուրանական կիսավայրենի
ցեղերի դարաւոր ասպատակութիւններից
համարեա թէ չքացել էր: Ինչ չէր հա-
ջողում անել բարբարոսի թուրը՝ անում
էր մոլեգնող սպիտակ սպանդը՝ պան-
դխտութեան ու տարագրութեան
համաճարակը, որ երկիրը դատարկում
էր իր բնիկներից՝ նրանց նետելով աշ-
խարհի չորս ծագերը:

Պարսկաթուրքական տիրակալները
չունէին կրկնելու Լուդովիկոս ԺԴ-
ծանօթ խօսքը («Պետութիւնը ես եմ»),
քանի որ դարաւոր եւ ամէնօրեայ ճշ-
մարտութիւն էր դա:

Մի՛ մոռացէք, որ թուրք սուլթաններ
բարձրագոյն տիտղոս – պատուանուն
(հիւնքեար – խոնդկար) պարզապէս նշա-
նակում էր մարդասպան-արիւնահեղ:

ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ

(Շար. – 1)

...ՑԻՋԱԿԸ ԽՍՏՈՒՏԻԿ»

...փոխիզում լոյս է տեսել սփիւռքահայ ...եւ հասարակական գործիչ Յակոբ Տէր-Յակոբեանի «Պարտիզակը խատու – ...ծթ պատմա–բանասիրական աշխատու – ...թիւնը: Օգտագործելով Պարտիզակի մա–...ին Ա. Զօպանեանի, Գ. Մխալեանի, Կ. ...Ա. Պեռիկեանի, Մ. Գաս–...նի, Հ. Ալոջեանի եւ շատ ուրիշ – ...աշխատութիւններն ու յօդուածնե–...ը, 19րդ դարի 50ական թուականներից ...մամուլի լոյս ընծայած փաս–...տաւեալները, ինչպէս նաեւ ան–...վաւերագրեր, զրոյցներ, պատում – ...եւ այլ նիւթեր, հեղինակը յօրինել ...արժէքաւոր աշխատութիւն, որն աչքի ...տեղ է գրաւում այդ գաւառակի ...վերջին քառասուն տարիների ըն–...թացքում ստեղծուած բաւական հարուստ ...թեան մէջ:

...Յակոբ Տէր-Յակոբեանն իր աշխատու–...թեան առաջին գլխում տալիս է էջեր ...Պարտիզակի հայ գաղթականութեան ...թիւնից: Անդրադառնալով գա – ...առաջին բնակիչներին, նա յան–...է այն եզրակացութեան, որ նրանք ...գաղթականներ են, անոնց վրայ ապա ...ներ եղած են Ակնայ շրջա – ...»: Այդ մասում օգտագործուած են ...(1766–1833 թթ.) եւ Կարապետ (1790-1850 թթ.) Պարտիզակցի քահանա–...ների օրագրերը, որոնք անհետ կորել են ...թեան հետեւանքով: 1908–14 ...թուերին, պետական կառավարչի պաշ–...տօնով Պարտիզակում գտնուելու պատե–...հութեամբ, հեղինակն իր ձեռքի տակ է ...ունեցել դրանք եւ կատարել ընդարձակ ...քաղուածքներ, որոնք նոյնութեամբ ա–...ռաջ են բերուած աշխատութեան մէջ: ...Հեղինակն առաջ է բերում նաեւ փաս – ...տական հարուստ նիւթեր Պարտիզակի

մշակութային, ազգային – հասարակա – կան եւ տնտեսական կեանքի մասին, քա–ղելով 19րդ դարի առաջին կէսին Պոլսում եւ այլուր լոյս տեսած հայ պարբերական մամուլից:

Իր աշխատութեան երկրորդ՝ «Ազգա – գրական» վերնագրուած մասը, որտեղ ամփոփուած են Պարտիզակի բազմաթիւ զրոյցներ, աւանդավէպեր, հէքեաթներ, երգեր, գաւառային բառեր եւ այլ նիւ – թեր, հեղինակը կազմած է եղել տակա–ւին Պարտիզակում գտնուած ժամանակ. նա նշում է, որ Պարտիզակցիներ «...ա–մէն օր կը հայթայթէին ինչ որ երգ էր, առակ, առած, բառ ու սովորութիւն, եւ իրենց չգիտցածը կը լրացնէին գրագի–ներու օժանդակութեամբ»: Անկասկած, Նիկոմեդիայի շրջանի Հայութեան անզիր բանահիւսութիւնը կորստից փրկելու ուղղութեամբ կարեւոր ներդրում կը լինէր, եթէ Յակոբ Տէր-Յակոբեանն իր գրի առած մի քանի տասնեակ հէքեաթ – ներն ու զրոյցները գրական մշակման չենթարկէր, այլ պահպանէր դրանց լեզ–ուական, ոճական եւ յղացման առանձնա–յատկութիւնները: Այդ տեսակէտից բա – բերախտ վիճակում են գտնուում առած – ները, ասացուածքները եւ երգերը: Հար–սանեկան, երգիծական, աշխատանքի, ողբի եւ այլ երգերում, պահպանուած է ոչ միայն լեզուական, այլեւ հնչարանա–կան հարազատութիւնը:

Աշխատութեան վերջում զետեղուած են Պարտիզակի գաւառաբարբառի, այդ թը–ւում նաեւ բուսանունների ճոխ բառա – ցանկ եւ հետաքրքրական ծանօթութիւն – ներ նրա քերականութեան կանոնների մասին:

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ»

...ը, — կէտ-ձայնաւորներու դրութիւնը: ...չենք բաքելոնեան դրութիւնը, որ կէտ-...ձայնաւորները կը դնէր գիրերու վրայ, ...ուրիշ դրութիւն մը կէտ-ձայնաւորը ...կը զետեղէր գիրերու ծոցը, այս վերջին-...ները կը կոչուէին *տակէշ*: Հիւս. Պաղես-...տին ունէր եօթը կէտ-ձայնաւոր, յիշենք ...մէկը՝ *քամէց*, որ կը ծառայէր ձայ-...նաւորումը երկարելու եւ շատ բարդ ...գործածութիւն մը ունէր զանազան դա – ...սակարգութիւններով:

(***) Այս դժուարութիւնները յատուկ ...են միայն մեր լեզուին: Լատինագէտնե-...րը ո՛րքան կը վիճին այն մասին, թէ ...ինչպէս կ'արտասանուէր *կեսար* բառը ...կեսարներու օրով, ինչպէս բազմաթիւ ...այլ բառեր՝ Կիկերոնի օրով: Եւ մտածել ...թէ Հ. Վարդան Հացունի եներ կը խօսի ...մէկն բառին հոլովաձեւերուն արտասա-...նական, հնչաբանական նրբութիւններուն ...մասին,— Տէ՛ր ողորմեա, Տէր ողորմեա:

Շ. Ն.

ԱՆՑՐԵՒԻՑ ՅԵՏՈՅ

Անձրեւից յետոյ Հայոց սարերում
Արեւը այնպէս քաղցր է, դուրեկան
Արեւը այնքան անուշ է, սիրուն,
Ասես նման բան չի եղել, չկայ:

Թէ ծիլ, թէ ծաղիկ, թէ ծերպ, թէ ծմակ,
Ժայռերը անգամ, քարերը անգամ,
Անտառ ու պուրակ, ձորերը համակ
Լեզու են առնում ուժով մոգական:

Աղբիւրներն ամէն ձայնով են իրար,
Ծափում, ծիծաղում, զուարթ ու զնգուն,
Եւ առուակն անզուսպ, եւ առուն վարար
Աղբիւրների հետ կանչում են, երգում

Ու բոլորն ասես շունչ, հոգի առած,
Նուիրուածութեան սիրով անսահման,
Բնութեան առաջ սրտերը բացած՝
Ողջոյն են տալիս արեւին վառման:

Անձրեւից յետոյ Հայոց սարերում
Արեւը այնպէս վառ է, դիւթական,
Արեւը այնքան անուշ է, սիրուն
Որ ժպտում են մութ անդունդներն
անգամ:

ՍԱՐՄԷՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ՄԵԾ ՊԵՏՈՒԹԵԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ (1)

Այս աշխատութիւնը, որու հեղինակն է Տոքթ. Ֆրանչեսքօ Սիտարի, վերլուծում մըն է մեծ պետութիւններու քաղաքական արեւելեան խնդիրներուն ամէնէն փա – փուկներէն մէկուն, Հայկական Հարցին (Պերլինի ժողովին փակումէն մինչեւ 1923ի Լօզանի դաշինքը, էջ Ժ. 322, աշ–խարհագրական երկու գունատիպ տախ–տակներով, 36 փաստաթուղթերով, եւ կը կամէ Փատովայի համալսարանի քաղա – քական գիտութիւններու բաժնին 8րդ հատորը): Զգալի էր կարեւորութիւնը այս խնդրին ողջմիտ, արդարադատ ամ–բողջական ուսումնասիրութեան, վասնզի եղան օրեր՝ որ ծանր դժուարութիւննե–րու մատնեց միջազգային դիւանագիտու–թիւնը, եւ շատ անգամ վրդովեց ու յու–զեց հասարակաց կարծիքը:

Հատորը կը բացուի կարճ ներածու – թեամբ մը Ռուսիոյ եւ Թուրքիոյ Հայե – րուն կացութեանը վրայ, մինչեւ 1878ի Պերլինի դաշնագրութիւնը, կը պարզէ Հայկական հակազդեցութիւնը դաշինքին նկատմամբ, յեղափոխական շարժումնե – րը, եւ հետեւանքը Թրքական ջարդերուն քաղաքականութեան, շրջափակելով այս բոլոր դէպքերը մեծ պետութիւններու եւ ցարական Ռուսիոյ Միջին Արեւելքի քա–ղաքական խաղերուն մէջ:

Քննութեան կ'ենթարկէ հայ ժողովուր–դին նոր կացութիւնը «Երիտասարդ Թուրքերու» յեղափոխութենէն ետքը ստեղծուած: Մանրամասն կը քննէ հե–ղինակը ռուս եւ եւրոպական քաղաքակա–նութիւնը 1913–14ի բարենորոգումներու ծրագրին մէջ, որ կը հաստատէր հայ ազգին ամէնէն տարրական ազատութիւնը ձեռք ձգելը, թէեւ երբե՛ք իրականացած գործնականին մէջ օսմանեան կայսրու – թեան կողմէ, վերահաս առաջին համաշ–խարհային պատերազմին պատճառով, որ տակնուվրայ ըրաւ հայ ժողովուրդը եւ իր բաղձանքները: Հեղինակը այս բոլոր դէպքերը կը յիշէ փաստացի քննութեամբ պետութիւններու գործադրած քաղաքա – կանութեան:

Կը քննէ դարձեալ Անդրկովկասի եւ յատկապէս ռուսական Հայաստանի կա–ցութիւնը, ցարական իշխանութեան ան–կումով, հայ անկախ հանրապետութեան ծնունդով, համաշխարհային պատերազ–մին վերջանալով, կը կցէ քննութիւն մը խաղաղութեան ժողովին եւ մեծ պետու–թիւններու Հայոց նկատմամբ բռնած քա–ղաքականութեան Մուտրոսի զինադա – դարէն մինչեւ Սեւրի դաշինքը: Այս քըն–նութիւնը կը տեսնէ որ հեղինակը նկա–տի առնէ Հայերուն կացութիւնը Անդր–կովկասի եւ օսմանեան կայսրութեան մէջ, վերջին դէպքերուն եւ երկիրներու ու Միջին Արեւելքի քարիւղին տիրապե – տելու քաղաքականութեան լոյսին տակ:

Ուսումնասիրութեան յատուկ նիւթ կ'ըլլայ Կովկասի մէջ անգլիական եւ ի–տալական քաղաքականութիւնը, ինչպէս նաեւ դաշնակից պետութեանց քաղաքա – կանութիւնը Լոնտոնի եւ Սան-Ռեմոյի ժողովներուն մէջ: Վերոյիշեալ քննու – թիւնը կ'ամբողջանայ վերլուծումով մը ընդհանուր ուրուագիծերու մէջ, Իտա – լիոյ, Ֆրանսայի, Անգլիոյ եւ Ամերիկայի քաղաքական ըմբռնումին եւ վերաբերու–մին Հայկ. հարցերուն մասին: Այնուհետեւ Ռուսիոյ համայնավար քաղաքականու – թիւնը, մրցակցութիւնը դաշնակից պե – տութիւններուն, Քէմալի ազգայնական Թուրք նոր քաղաքականութիւնը հայկա – կան հարցին նկատմամբ, եւ Լօզանի դա–շինքը կը դառնայ գրքին վերջին մասին նիւթը:

Հեղինակը կը գրադի զանազան տեսակէտ–ներով, եւ կը դատէ արդէն իսկ հրա – տարակուած բամաթիւ դէպքեր: Կ'ընդ–գծէ Հայերուն երբեմն բաղձանքներուն յարուցած կասկածները, եւ օսմանեան կայսրութեան ձգձգող անտեղի քաղաքա–կանութիւնը փոքրամասնութիւններու հանդէպ: Զանազան տեսակէտներու մէջ կը ցայտէ, իբր վարիչ թել եւ իբր հա–տատուն հիմնակէտ, մեծ պետութիւննե–րուն հայկական հարցին ու դատին ստո–րադասութիւնը, կառավարութիւններու յատուկ նպատակներուն ու մրցակցու – թիւններուն խաղով:

Այս գիրքը ընթերցողին կը հայթայթէ գրական կէտեր պատմաքաղաքագիտա – կան գիտողութիւններ, եւ նիւթեր խոր – հրդածելու կառավարութիւններու եւ ժողովուրդներու ունեցած պատասխանա–տուութեան:

Ցաւելուած մը Թուրք փաստաթուղթե–րու կ'ամբողջացնէ այս ուսումնասիրու–թիւնը, որու սկիզբը համառօտ ցու–ցակ մը կը դիւրացնէ քննութիւնը:

1) Auteur : Dr. Francesco Sidari, Venezia.
Editeur : C. E. D. A. M., Padova (Italie).

ԻՄ ԿՌԱԿՆԵՐԸ

Իմ կռակները երբեք չեն մարի
Ես յաւերժական հրից եմ վառել,
Իմ գետերն երբեք ցամաք չէք տեսնի
Մեր ձիւներից են նրանք վարարել:

Շատ գիշերներ եմ տեսել իմ կեանքում
Որբութեան ցաւով, կսկիծներով լի,
Բայց հիւսիսը լոյսը շողացել է միշտ
Եւ հոգիս երբեք դեռ չի խաւարել

ՍԱՐՄԷՆ

«ՅԱՌԱՋ»Ի ԹԵՐԹՕՆԸ (213)

ԵՐԼՏՐՋԻ ՊՈՄՊԱՆ

ՀԱԶԱՐ ԻՆԸ ՀԱՐԻՒՐ ԶՕՐՍ

Պէտք է որ կրօնքներուն ու ցեղերուն եղբայրակցութիւնը նուիրագործուէր «հանդիսաւորապէս», պէտք էր որ հին ա–ռելութիւնները մեռնէին նոր կեանքի մը զարդեւած սէրերուն մէջ. պէտք էր վեր–ջապէս, որ Ապտիւլ Համիտ, ակամայ սահմանադրական Խալիֆան, այս երկ – բորդ — առաջինը բացած ու գոցած էր — որդէն — Խորհրդարանին բացումը կա–տարէր եւ գահաճառը կարդալ տար: Պէտք էր որ բոլոր այս ուրախութիւննե–րու սպասուը ապրէր բովանդակ օս – մանեան ժողովուրդը, որպէսզի յետոյ, ...թ ամիս վերջ, Մարտ 3 ը գար, Շէ – յխութի վերաբերութին տակ...:

Միամի՛տ Երիտասարդութիւն, որ կարծեցիր պահ մը թէ երեսուներեք տա–րիներու Բռնաւոր մը, մէկ օրուան մէջ հրաշքով մը պիտի դառնար սահմանա – դրական կայսր մը, նոր ռէժիմին՝ նոր Սուլթան մը կը վայելէր...:

Այս ճշմարտութիւնը չկրցան ըմբ – բռնել մեր հայրենիքին ճակատա – գիրը վարելու կոչուած հայրենաէր Երի–տասարդները. ընդհակառակն, Երլտըրզ, կայսերական հացկերոյթին վաղեցին ա–նոնք, ազգին ներկայացուցիչները, եւ ի–րենց ծառայական հնազանդութեան եւ հաւատարմութեան ուխտը կրկնեցին Տիեզերքի Խալիֆային (´) ոտքը, անոր, որ ազգը կը ծախէր ու մահու չափ կ'ա–տէր Սահմանադրութիւնը:

Արդարութիւնը սակայն կը պահանջէր որ պատժուէր այդ չարաչուք մարդը, որ ամբողջ երեսուներեք տարիներ, իր սե–փական ընտանիքէն սկսեալ, միլիոնաւոր ժողովուրդներու արիւնը քամած էր եւ երկիրը վերածած էր իրական դժոխքի մը:

Եթէ, Յուլիսի 10ին, Սահմանադրու – թեան հրատարակման անմիջապէս յա – ջորդէր այդ արիւնկզակ աւազակին գա–հընկեցութիւնը, եթէ, առաջին օրէն, իր կամարիլլային պէս, զինք ալ դուրս քը–շէին իր որջէն, հոգ չէ թէ շնորհէին իր կեանքը, անոր որ հարիւր հազար կեան–քերու տխրահռչակ Դահիճը հանդիսա – ցած էր, ա՛խ, եթէ այլեւս վնասելու ան–կարող դիրքի մը մէջ դրուէր ան, տա – րաբախտ Թուրքիան պիտի չունենար ո՛չ Մարտ 31ը, ո՛չ ալ Ատանա՛ն...:

Ի.

1909 Մարտի 31ը...

Երլտըրզէն բխած կայսերական գաղտնի իրատէի մը համաձայն, Հինքեարին ջերմեռանդ արբանեակները, անխոնջ գործակալները, ոսկիներով լեցուն քը – սակներ ծոցերնին, զօրանոցները սողոս–կած ու յաջողած էին զինուորները գրգը–ռել եւ մղել անոնք ապստամբութեան, Սահմանադրութիւնը ջնջել տալու եւ նախկին բռնապետական ռեժիմը վերա – կանգնելու անխոստովանելի դիտումով:

Մայրաքաղաքը դողի ու սոսկումի մէջ, զօրանոցներէն դուրս կը խուժէին ըմ – բոստ զինուորները, որսորդ վաշտերէն բոլորը, որոնք իրենց սպաները փական–քի տակ դրած եւ իրենք զինուած, խումբ խումբ սկսան Թափառիլ փողոցէ փողոց:

Խորհրդաւոր, ահաւոր բան մը կը դառ–նար օդին մէջ:

Արդէն, մէկ քանի ամիսներէ ի վեր, հին ռեժիմ հոտող հրատարակութիւններ սկսած էին երեւնալ միամիտ, տգէտ, մո–լեռանդ ամբոխի մը կիրքերը գրգռելու եւ միտքերը թունաւորելու բնոյթ ունե – ցող աղտոտ յօդուածներ, Շէյխ Վահաէ–թիի եւ սոր հաւասարող կամ նուազ արժէքով (´) հրապարակագիրներու (´) կողմէ, որոնք Երլտըզէն վարձուած եւ խիստ առատօրէն, այդ օրերուն մէջ, կացութեան բացարձակ տէրերը կը նը – կատուէին, միեւնոյն ժամանակ հրապա–րակը կ'ողողէին եւ Շէրիաթի պաշտպա – նութեան անունով, ինքնակոչ փաստա – բաններ կը հանդիսանային Խալիֆային, կամ, իրենց բացատրութիւնը կրկնելու համար, խալիֆայութեան դատին, որուն իրաւունքները բռնադատուած եւ իրա – ւասութիւնները սեղմուած ու սահմանա – փակուած կը նկատէին Սահմանադրու – թեան հռչակումէն ի վեր:

— Մեծազօ՛ր Խալիֆա, Սատւե՛ր Ա – տուծոյ, կը պոռչտար Շէյխ Վահաէթի, դուն չե՞ս տուիչը, պարգեւիչը Սահմա – նադրութեան, երբ որ կամիս, կրնաս ետ առնել զայն...

Եւ մամուլին մէջ երեւցած էին միա – միտ հրատարակութիւններ այդ խիստ սրտառու (´) նորութիւնը դրուատող...:

Այսպէս, հին ռեժիմը վերականգնանա – ցած, սկսած էր խլրտալ եւ Վեհափառ Սուլթանին հաղարումէկ սորողեալները դարձեալ երեւան ելած, գործածուիլ սկսած էին թերթերուն եւ մանաւանդ աղերսագիրներուն մէջ:

ՍՄԲԱՏ ԲԻԻՐԱՏ

(Շար.)

ՕՐ. ԵՒԳԻՆԷ ԶԱՐԻՖԵԱՆ
Պ. ԺԻՐԱՅՐ ՂԱՐԻԲԵԱՆ

Ամուսնացած

Օգոստոս 21, 1963, Թեհրան

ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ՏԱՆ

Վիէնէն Տէր եւ Տիկին Ա. Մալաքեան, Տիկին Նարդուհի Գալայճեանի մահուան առթիւ փոխան ծաղկեպսակի կը նուիրեն 20 ֆր. Շ. Միսաքեան սրահին:

×

ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ ԵՒ ՆՈՒԷՐ

Վալանսէն Գ. Քիրէճեան ընտանիքը խոր ցաւով տեղեկացած է իր սիրելի ազգականներէն՝ Տէր եւ Տիկին Արամ Թէրզեանի մահուան եւ այս տխուր առթիւ իր ցաւակցութիւնը յայտնելով Ռընէ (Քրիս) Թէրզեան, Հրանդ Սէտէֆ, Հայկ Թէրզեան եւ Վեհանուշ Տուկլա ընտանիքներուն, փոխան ծաղկեպսակի 100 ֆրանք կը նուիրէ Մշակոյթի Տան Շաւարշ Միսաքեան սրահին: (Ստանալ «Յառաջ»էն):

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՕՐԸ Փարիզի մէջ կը տօնուի 26 Հոկտ. շաբաթ գիշեր մինչեւ լոյս, 6րդ Թաղամասի քաղաքապետարանի սրահներուն մէջ:

★

Փարիզահայ Տիկնանց Միութեան յիսնամեայ յոբելեանը կը տօնուի Հոկտեմբեր 13ին, Սալ տը լա Շիմի:

ԴՊՐՈՑԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Դպրոցասէր Տիկնանց վարժարանին 1963 – 1964 տարեշրջանի արձանագրութիւնները սկսած են: Անոնք որոնք կը փափաքին ղրկել իրենց զաւակները պէտք է այժմէն իսկ դիմում կատարեն հաստատութեան տնօրէնութեան:

Ա.— ՖՐԱՆՍԱԿԱՆԸ, որ տառացի կերպով կը հետեւի պետական լիսէներու արդիական բաժնի պաշտօնական ծրագրին — անգլերէն եւ սպաներէն լեզուներով —:

Բ.— ՀԱՅԿԱԿԱՆԸ, որ կ'օժտէ սանուհիները հայագիտական ծանօթութիւններով, հայ լեզուի, գրականութեան, հայ կրօնքի եւ պատմութեան, Հայաստանի աշխարհագրութեան մարզերուն մէջ:

Աշակերտուհիներ կ'ընդունուին ութ տարեկանէն սկսեալ: Մանրամասնութեանց համար դիմել հաստատութեան տնօրէնութեան:

1, Bd. du Nord, LE RAINCY (S. et O.)
Tél : 927-01-72

Դպրոցասէրի ուսման ծրագիրը կ'ընդգրկէ երկու ուրոյն բաժիններ:

ՍՏԱՑԱՆՔ

ԻՆՉՊԷՍ ՏԵՍԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԸ
(Տպաւորութիւններ)
Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Գրեց՝
Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

ՆԿԱՐՆԵՐՈՎ ՃՈԽԱՑԱԾ ԱՅՍ ԳՐՔՈՅԿԸ Կ'ԱՐԺԷ ՄԻԱՅՆ 3 Ն. Ֆ.
Առաքումով՝ 4 Ն. Ֆ.

Դիմել՝
«ՅԱՌԱՋ»

IMPRIMERIE SPECIALE
DU JOURNAL « HARATCH »
32, Rue de Trévise, PARIS (9e)

Շ. ՄԻՍԱՔԵԱՆ

Օրեր եւ Ժամեր

Լոյս Տեսաւ



Մատենաշար — ՅԱՌԱՋ — Կեդրոնավայր
ԳԻՆ
Ֆրանսա՝ 15 Ֆր.
— Առանձին առաքումի ծախքը —
«ՅԱՌԱՋ»

ՀԱՅ ԲՈՅԺ

ԺՈՂ. ԱՄՍԱԹԵՐԹ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ

խմբագիր՝ Շ. ՆԱՐԴՈՒՆԻ

Խմբագրին երկար բացակայութեան պատճառաւ, լոյս տեսած չեն ՀԱՅ-ԲՈՅԺի 1962 եւ 1963 տարիներու թիւերը:

Խմբագիրը, որ նոր վերադարձաւ Ամերիկայէն, գործի ձեռնարկած է արդէն: Ծրագրած է հրատարակել երկու բացառիկ թիւեր, իւրաքանչիւրը 150 էջ: Առաջինը պիտի կրէ 1962 թուականը, երկրորդը՝ 1963 թուականը: Այս երկուքը մէկ տարի հաշուելով՝ անոնք որ վճարած են 1962, վճարած կ'ըլլան նաեւ 1963 տարին:

Այս ձեւով, խմբագիրը կը խորհի ՀԱՅ-ԲՈՅԺի հրատարակութիւնը ամբողջացնել եւ կանոնաւորել մինչեւ յառաջիկայ տարի, եւ 1964 տարուան թիւերը լոյս ընծայել ամէն ամիս՝ Յունուարէն սկսեալ:

Ամերիկայի նոր բաժանորդները եւս, որոնք վճարած են այս տարուան համար (1963), պիտի ստանան ՀԱՅ-ԲՈՅԺի 1962 եւ 1963 թիւերը:

Այն բաժանորդները, որոնք յետնեալ պարտք ունին, թող բարի ըլլան իրենց վճարումը հասցնել մինչեւ տարեվերջ: Հին պարտքերուն հետ՝ ներկայ տարին եւս վճարողներն են միայն, որ պիտի ստանան ՀԱՅ – ԲՈՅԺի բացառիկները, խմբագրուած բժշկական, գրական, պատմական, շատ հետաքրքրական եւ ճոխ բովանդակութեամբ,— արդէն տպագրութեան յանձնուած:

Այս առթիւ շնորհակալութիւն այն հաւատարիմ բաժանորդներուն, որոնք ՀԱՅ-ԲՈՅԺի հրատարակութիւնը ընդհատուած ըլլալով հանդերձ՝ խմբագրին բացակայութեան պատճառաւ, վճարումները կատարած են օրը օրին ի վկայութիւն իրենց բարեկամութեան եւ վստահութեան:

Կը խնդրուի Հայրենիք, Ասպարէզ, Արմենիա, Ազատ Օր, Յուսաբեր, Ազդակ, Այգ, Ալիք թերթերու խմբագրութիւններէն, ինչպէս և Սիոն, Հասկ, Հայ Կեդրոն, Կիլիկիա, Հայաստանեայց եկեղեցի պարբերականներէն, որ հրատարակեն այս յայտարարութիւնը գէթ 2 – 3 անգամ:

ՍԱՄՈՒԷԼ ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ՆՈՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Իրենց զաւակները արձանագրել փափաքող ծնողքները պէտք է փութան դիմել տեսչութեան հասցէին:

COLLÈGE ARMÉNIEN SAMUEL MOORAT
26, Rue Troyon, SEVRES (S. et O.)
Tél. : OBS. 18-28

Եւրոպայի մէջ, հայ մանչերու համար հիմնուած, ֆրանսական եւ հայկական ուսումնական կատարեալ ծրագիրներով օժտուած մեծագոյն եւ ծաղկեալ ուսումնարանն է Սեւրի Սամուէլ Մուրատեան վարժարանը, որուն սեմէն ներս հայ մանուկին հոգին, միտքը եւ մարմինը կը մեծնայ, կը ծաղկի եւ կ'ընդլայնի բաղձալի համեմատութիւններով:

ԿԵԱՆՔԻ ՈՒՂԻՆԵՐՈՎ

Գ. Հատոր

Շուտով լոյս կը տեսնէ Ս. Վրացեանի ԿԵԱՆՔԻ ՈՒՂԻՆԵՐՈՎ (Գ. Հատորը), շուրջ 300 էջ, պատկերազարդ եւ լաթակազմ:

Երրորդ հատորը կը բովանդակէ Ս. Վրացեանի յուշերը կամաւորական շարժման, ինչպէս նաեւ դէմքեր, դէպքեր եւ տպաւորութիւններ՝ մօտիկ անցեալէն:

ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ

Կապոյտ Խաչի Վիէնի մասնաճիւղի տարեկան դաշտահանդէսը տեղի կ'ունենայ Սեպտեմբեր 1ին, առաւօտէն մինչեւ երեկոյ «Իւ–էս–Ա.»ի մարզադաշտին վրայ (Թանըրիին քով):

Գեղարուեստական ճոխ բաժին: Բանախօսութիւն, երգ, արտասանութիւն եւ հայկական պարեր:

Ճոխ պիւֆէ. աղանդերներ եւ շամփուրով խորոված:

Սիրով կը հրաւիրուի գաղութի հայութիւնը:

Անձրեւի պարագային «Խաժակ» սրահը:

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Մարսէյլի մէջ Դաշնակցութեան Օրը կը տօնուի Հոկտեմբերի 5ին Սալոն Ալհամպրա:

×

Հ. Բ. Ը. Միութեան Տիկնանց յանձնախումբը կը խնդրէ կազմակերպութիւններէն նկատի ունենալ հետեւեալ թուականները.—

ՀՈԿՏԵՄԲԵՐ 1, Երեքշաբթի երեկոյ Տիկնանց յանձնախումբի կազմութեան Գ. տարեդարձին առթիւ գեղարուեստական երեկոյթ:

ՀՈԿՏԵՄԲԵՐ 19, ցուցահանդէս հայ արուեստագէտներու նկարիչ, արձանագործ եւ փորագրիչներու գործերուն:

Հայկական Թանգարանը, 52 Ավընիւ Ֆոշ, (Փարիզ 16):

ԴԵԿՏԵՄԲԵՐ 7, 8, 9, 10, «Բարենպատակ վաճառք»:

Յառաջիկային պիտի տրուին մանրամասնութիւններ:

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

ԼԻՈՆ.— Ֆր. Կապ. Խոչի Օրը կը տօնուի մեծ պատրաստութեամբ, 27 Հոկտ. Մոլիէրէի շքեղ սրահին մէջ:

ԼՈՅՍԸ ԳՈՅՆ Է.... ԳՈՅՆԸ ԼՈՅՍ Է
ՁԵՐ ՏԱՆԸ ԼՈՅՍ ՏՈՒԷ՛Ք.... ԹՈՄԼԱՔԻ ԳՈՅՆ ՏՈՒԷ՛Ք

Ձեր բնակարանը կը լուսաւորուի
Եթէ ներսը եւ դուրսը

ՎԵՐԱՆՈՐՈԳԷՔ – ԶԱՐԴԱՐԷՔ – ՆԵՐԿԷՔ

ԹՈՄԼԱՔ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐՈՎ

PEINTURES THOMLAC

16 bis, Bd. Sébastopol, Paris 4e

Tél. ARC 26-61 – Métro : Halles et Chatelet

136, RUE DES BOURGUIGNONS — ASNIERES - BOIS COLOMBES (Seine)
Tél : GRE. 09-47

11, BD. DE LA REPUBLIQUE — LA GARENNE (Seine)
Tél. : STA. 19-06

ԱՆՄՐՑԵԼԻ ԳԻՆԵՐՈՎ

Ամէնէն արդիական, նուրբ եւ ընտիր ճաշակով պատրաստուած՝ առաջնակարգ ներկեր: Բնական եւ արուեստական բազմերանգ գոյներու մեծ ընտրութիւն: Նորայթ իւղաներկեր, պատի գեղեցիկ թուղթերու ճոխ ընտրութիւն: Գետնի համար՝ ամէն տեսակ — լինոլէոմ եւ փլասթիք — ծածկոցներ.— TAPIFLEX — TAPISOM — CARPETTE

Ձեր բնակարաններուն արտաքին եւ ներքին խնամքներուն համար անհրաժեշտ բոլոր նիւթերը:

Ամէն գնորդի կը նուիրուի յատուկ տետրակ մը, որու շնորհիւ կրնայ 10–30 առ հարիւր զեղչ ունենալ:

ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐ

52, RUE CHALON, PARIS 12e
64, BLD. DE BELLEVILLE, PARIS 20e
166, AV. ARISTIDE BRIAND PAVILLONS - SOUS-BOIS (Seine)
4 bis, RUE PAUL VAILLANT COUTURIER — ARGENTEUIL (S. et O.)
24, RUE PAUL VAILLANT-COUTURIER — ALFORTVILLE (Seine)
48 bis, RUE DALAVRAC — FONTENAY - SOUS - BOIS (Seine)

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ
Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

Le PREMIER QUOTIDIEN ARMENIEN en EUROPE
HARATCH
Directrice : ARPIK MISSAKIAN
Rédaction et Administration : 32, Rue de Trévise - PARIS-9e

Fondé en 1925 — Téléph. : PRO. 86-60
R. C. Seine 57 A 2731 — C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա՝ Տար. 50 Ֆ. — Վեցամսեայ՝ 27 Ֆ.
Արտասահման՝ Տար. 60 Ֆ. — Հատը 0.30 Ֆ.

ԵՐԵՔՇԱԲԹԻ 27 ՕԳՈՍՏՈՍ
MARDI 27 AOUT 1963
Le Numero : 0,30 Fr.

..րդ ՏԱՐԻ — ԹԻՒ 9692
Fondateur : SCHAVARCH MISSAKIAN
39e ANNÉE — No 9692

ՆԵՐԳԱՂԹԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

(Ի՞ՆՉ ԿԸ ԳՐԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ... ԴԻՆԱՊԱՆՆԵՐԸ)

Գ.

...կարծէք թէ քննադատել չեն գիտեր ...ները: Բայց քննադատելէ ա– ...կը խմբագրէն խրթին փիլիսոփա– ...թիւն մը, որուն միտքն այն է թէ ի՛նչ ...որ չվստահին «հայրենի պատկան ...իշխանութիւններուն»:

...վկայ է որ ամէն բանին լաւ ...ալ կայ, գէշ կողմն ալ կայ: Այս– ...եւ «չարունակական ներգաղթին» ...կողմն ալ կայ, գէշ կողմն ալ կայ: ...գրութիւն, կը փիլիսոփայէ ...Պայքար, որ ունի իր առաւելութիւնները, ...միաժամանակ իր անպատեհութիւն– ...ները:

...Սակայն, չըլլայ թէ ընդհանրացնէք ...փիլիսոփայութիւնը եւ հետեւցնէք ...բոլշեւիկեան վարչակարգը, որուն վը– ...հիացողներու խումբին կը պատկա– ...Թամկավարները, իր լաւ կողմն ալ ...գէշ կողմն ալ ունի: Մեղա՛յ քեզ, ...կամ... Խրուշչեւ: Բայց եւ այն– ...կը չարունակէ «Շարունակական ...ներգաղթին» տեսաբանը, «անոնք որոնք ...կ'ըլլան իրենց արտայայտու– ...մէջ, առաւելութիւններուն կամ ...անպատեհութիւններուն վերաբերմամբ, ...որ անոնք գոյութիւն չունին, ...(ԽՄԲ.— Ներողութի՛ւն, առաւելութի՞ւն ...անպատեհութիւն), իրականութեան ...իրենք չեն տեսներ կամ չեն ուզեր ...գանոնք: Բացարձակապաշտու– ...(ԽՄԲ.— ի՛նչ խոշոր բառ) ակէտ– ...նախասիրած վարդապետութիւնն ...է»:

...կ'երեւայ թէ Պայքարի խմ– ...կ'աշակերտէ... Օրմանեանի: ...այս հռչակաւոր պատրիարքը, որ ...ճարտասանական կարողութեան ...ընելու նպատակով, կ'ըսէ թէ ...որ Աստուծոյ գո– ...նոյն ձեւով կրնամ հաստատել ...Աստուած չկայ»: Պայքար, թուելէ ...«չարունակական ներգաղթին» առա– ...ութիւնները, այժմ կը պատրաստուի ...անպատեհութիւնները:

...անպատեհութիւնը, կ'ըսէ ...կուգայ այն իրողութենէն որ, ...բոլոր հայահոծ գաղութները ...կացութեան մէջ չեն գտնուիր: ...ոմանք կը վայելեն գոհացուցիչ ...ներ, որոնցմէ զրկուած են կամ ...զրկուելու վրայ են ուրիշներ: ...զրկանքները կը վերաբերին մէկէ ա– ...ներու.— Անհատական ազա– ...պակաս կամ անբաւարարու– ...քաղաքական անապահովութիւն, ...գժուարութիւններ»:

...«անհատական ազատութենէ ...ները» զրկել Հայաստան, բառ– ...համար անպատեհութիւն մը:

...« Նիւթական դժուարու– ...», այլ խօսքով՝ « տնտեսական ...» պատճառաւ, « Հաւաքական ...մը գոյութիւն ունի արտա– ...հայ իրականութեան մէջ: Ա– ...համար յանցաւորներ փնտռելու կա– ...քանի որ գտնուելու պարա– ...ոչ բնոյթ, ոչ ալ տարո– ...կը փոխէ »:

...ի՛նչ բարեկրթութիւն: Ինչո՞ւ ...փնտռելու կարիք չկայ»: ...է յանցաւորը, — առաջին ան– ...ամկավար խմբագիր մը գա– ...կ'ըլլայ եւ կը մերժէ յանցաւոր ...Հ. Յ. Դաշնակցութիւնը: Հիմա

ի՞նչ պիտի ըսէ «հայրենի իշխանութիւ–նը»: Բայց չարունակենք.—

« Ստեղծուած խուճապին բերումով, Հայեր առաւել բուռն տենչ մը կը զգան ներգաղթելու: Շարունակական ներգաղ–թի ներկայ դրութեամբ, սակայն, յա–րաբերաբար քիչ թիւով Հայերու կարե–լութիւն կը տրուի այս տարի ներգաղ–թելու: Իսկ միւսնե՞րը, ներգաղթի ար–ձանագրուածնե՞րը...»:

Մենք ալ կը կրկնենք այս հարցումը.— Իսկ միւսնե՞րը, ներգաղթի արձանագրը–ուածնե՞րը:

Նկատի առէք որ «խուճապային մտայ–նութիւնն ու հոգեվիճակը անոնց մէջ տկարացուցած են ՀԱՄԲԵՐԵԼՈՒ ուժը եւ ՍՊԱՍԵԼՈՒ քաջութիւնը»:

Արդարեւ, «չարունակական ներգաղ–թը», կրնանք նաեւ ըսել «յաւիտենական ներգաղթը» այն մեծ անպատեհութիւնն ունի, որ տեսաբանն իսկ կը հրաժարի եւ կը խնդրէ «հայրենի իշխանութիւննե–րէն», միշտ պահելով հանդերձ «չարու–նակական ներգաղթի դրութիւնը», բա–ցառութիւն մը ընեն «այն գաղութներուն, ուր ՋԱՆԳՈՒԱԾԱՅԻՆ եւ ԱՆՄԻՋԱԿԱՆ հայրենադարձը անհրաժեշտ կը նկատուի ազգապահպանման տեսակէտով»:

Եւ Պայքար «այս էական կէտը» եւս կը յանձնէ անմիջական ուշադրութեանը հայրենի պատկան իշխանութեանց, ո–րոնք լրջօրէն մտածելու են բացառիկ մի–ջոցառումներու շուրջ, աշխարհացրիւ Հայութիւնը ստոյգ ձուլումէ փրկելու համար: Այս կէտը կը չեշտենք, կ'ըսէ ռամկավար թերթը, որովհետեւ գաղութ փոխող Հայերը ազգապահպանման տե–սակէտով ցարդ ապահով նկատուած գա–ղութէ մը ընդհանրապէս կ'երթան ուրիշ մը, որ, այդ տեսակէտէն եթէ նոյնիսկ անյոյս չէ, անստոյգ է անտարակոյս»:

Այս ամէնէն ետքը, քանի մը փոքրիկ դիտողութիւններ եւս.— «Շարունակա–կան ներգաղթը, ըսինք, կ'ենթադրէ բաց դուռ Հայաստան մտնելու եւ հոն հաս–տատուելու: Այս հաստատումը չի նշա–նակեր, սակայն, անխտրութիւն»: Եւ հիմա տեսէք այս փոքրիկ դիտողութեան մէջ դրուած փուշը.— «Հայրենադարձ Հայը որոշ պայմաններու տակ եւ որոշ թուականի պիտի ներգաղթէ: Ուրեմն, այդ պայմաններն ու թուականը նախըն–տրելի է որ ծանօթ ըլլան ներգաղթող–ներուն, որոնք արդէն բազմատեսակ դժուարութիւններու եւ հոգեկան ալեկո–ծումներու կը մատնուին այդ օրերուն, հետեւաբար չարունակական անստուգու–թիւն մը ծանր կը ճնշէ անոնց վրայ: Գա–լով խոստումներուն, անոնք արժէք կը ներկայացնեն՝ երբ իրականանալի են»:

Այստեղ արդէն Պայքար իրապէս պայ–քարողի անուն կ'ուզէ շինել, յայտնելով որ անխտրութիւն կը տիրէ ներգաղթի կազմակերպչական գործին մէջ, ներգաղ–թի լիազօրներ կը ղրկեն, որոնք չարու–նակ կը փոխուին, ներգաղթի թուական կ'որոշեն, որ չի յարգուիր, ներգաղթի խոստումներ կ'ընեն, որոնք իրագործուե–լիք չեն, եւ վերջապէս ներգաղթ մը, որ կը կատարուի կաթիլ կաթիլ, ոչ միայն կը սպառէ համբերութիւնը, այլ եւ տակնուվրայ կ'ընէ ժողովուրդ մը, որ կ'ուզէ այլեւս հաստատուիլ հողի մը վը–րայ, նախընտրաբար հայրենի հողին վրայ, եւ ոչ թէ օրօրուիլ ծովերու վրայ, թափառիլ երկրէ երկիր:

Այժմ կը մնայ խօսեցնել Հայաստանի լիազօրները:

ՕՐՈՒԱՆ ԴԵՊՔԵՐԸ

ՑՈՅՑԵՐ ԵՒ ՄԻՋԱԴԵՊԵՐ ՍԱՅԿՈՆԻ ՄԷՋ

ՀԱՄԱԼՍԱՆՆԵՐՆ ՈՒ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԸ ՓԱԿՈՒԱԾ

Սայկոնի մէջ կացութիւնը հեռու է կարգադրուելէ: Ցոյցերն ու ձերբակա–լութիւնները կը չարունակուին, այս ան–գամ ուսանողներն էին, գլխաւորաբար, որոնց համախմբումներու երեք փորձերն ալ ձախողեցան: Այս բախումներու ըն–թացքին քանի մը երիտասարդներ վիրա–ւորուեցան ծանրօրէն:

Ուսանողները կ'ուզեն բողոքել կառա–վարութեան բռնած ընթացքին համար, պուտտայականներու նկատմամբ: Մօտ հազար ուսանողներ, հրաժարեալ Արտա–քին Նախարարին ներկայութեամբ (որ գլուխը ածիլած է ի նշան սուգի), բա–նաձեւ մը պատրաստած են ուր կը պա–հանջեն.— ձերբակալուած պուտտայա–կաններու անմիջական ազատութիւնը եւ կոատուներու ազատ մուտքը: Ուսանող–ները բուռնցք բարձրացուցած, պահան–ջած են նաեւ Տիէմի հրաժարումը եւ ծանրօրէն յարձակած են անոր եղբօր վը–րայ: Զինուորական ձայնասփիւռը այս ցոյցերէն քիչ ետք, կը յայտարարէ թէ զինուորական կառավարիչ՝ Թուն Թաթ Տհինի հրահանգով Սայկոնի համալսա–րանը եւ բոլոր երկրորդական վարժա–րանները կը փակուէին ցնոր տնօրինու–թիւն:

Ուաշինկթընի մէջ, նախագահ Քենըտի Վիէթնամի թղթածրարը կ'ուսումնասի–րէ: Ամերիկեան քաղաքական շրջանակ–ները չատ զգոյշ են եւ չեն ուզեր մեկնել Սայկոնէն հասած կարգ մը լուրեր, ըստ որոնց նախագահ Տիէմ տեղի տուած է ընտանեկան ճնշումներու եւ իշխանու–թիւնը իր եղբօր՝ Տինհ Նհուիի ձեռքն է:

Ամէն պարագայի մէջ, կացութիւնը միշտ նոյնքան չփոթ է եւ կարելի չէ գա–ղափար մը ունենալ դէպքերու ընելիք վաղուան ընթացքին մասին:

ՊՈԼՍՈՅ ԵՐՋԱՆԿԱՅԻՇԱՏԱԿ ԳԱՐԵԳԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՇԻՐԻՄԻՆ ԲԱՑՈՒՄԸ

Անցեալ երկուշաբթի (Մեռելոց) Շիշ–լիի գերեզմանատան մէջ կատարուած է Պոլսոյ երջանկայիշատակ Գարեգին Պատ–րիարքին շիրիմի հանդիսաւոր բացումը:

Այս արարողութեան, որուն հանդիսա–պետն էր Ծնորհք Պատրիարք Հայրը, մասնակցեցան հիւրաբար Պոլիս գտնուող Եգիպտոսի Հայոց Առաջնորդ Մամբրէ Արք., Սահակ, Շահան, Խորէն վար–դապետները եւ բոլոր քահանայ հայրերը եւ բազմաթիւ դպիրներ:

Հաւատացեալներու խուռներամ բազ–մութիւն մը հակառակ տիրող սաստիկ տաքին, կանուխէն շրջապատած էր ար–դէն Երանաշնորհ Գարեգին պատրիարքի նորակառոյց շիրիմը եւ կը սպասէր հան–դիսութեան:

Ժամը 18,15ին գերեզմանատան դրան մօտ կազմուեցաւ հանդիսաւոր թափօր գլխաւորութեամբ զոյգ Սրբազաններու: Ցանուն, Ցունաց պատրիարքարանի այս հանդիսութիւններուն կը մասնակցէին Էմիլիանոս Սրբազան եւ յոյն վարդապետ մը: Ներկաներուն մէջ կը նշմարուէին նաեւ Գալֆայեան Տան քոյրերը, Կիւլ–պէնկեան Հիմնարկութեան Պոլսոյ ներ–կայացուցիչ Ժաք Ապրէվանէլ, խնամա–կալութիւններու, թաղականութիւններու եւ այլ պաշտօնական մարմիններու ներ–կայացուցիչներ:

Հանդիսաւոր թափօրը գերեզմանատան կեդրոնը ընդհանուր հոգեհանգստեան մասնաւոր արարողութիւնները կատարե–լէ ետք հասաւ Գարեգին պատրիարքի շիրմին առջեւ, որ ծածկուած էր ճերմակ սաւանով մը:

Հոգեհանգստեան կանոնական արարո–ղութիւններէն ետք Շիրիմի Շինութեան Ցանձնախումբի անունով Մինաս Տիար–պէքիրլեան կարդաց ուղերձ մը: Ցետոյ խօսեցաւ Եգիպտոսի Հայոց Առաջնորդ Մամբրէ Սրբազան որ արտայայտուեցաւ Հոգելոյս պատրիարքի արժանիքներուն մասին: Ամէնէն ետք խօսեցաւ նաեւ Պատրիարք Հայրը:

Աւելի ետքը, Պատրիարք Հայրը կտրեց ժապաւէնը եւ կատարեց մարմարաշէն շի–րիմին բացումը:

Կանոնական աղօթքներէն եւ պահպա–նիչէն ետք բոլոր ներկաներուն երգած « Հայր մեր »ով վերջ գտաւ Հոգելոյս Պատրիարքի շիրիմին բացման հանդիսու–թիւնը:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՔԱՐԱՔԱՍԻ մէջ ծայրայեղ ձախ կազ–մակերպութիւն մը առեւանգած է հա–մաշխարհային համբաւի տէր ֆութպոլի ախոյեանը՝ Տի Ստեֆանօ: Ռէալ տը Մատրիտի յառաջապահ՝ Ալֆրետօ Տի Սթեֆանօ, ծագումով Արժանթինցի, բայց սպանահպատակ է եւ Քարաքաս կը գտնուէր իր խումբին հետ, բայց ոչ մէկ մրցումի մասնակցած էր, սիաթիքէ տա–ռապելով: Առեւանգողները քանիցս հե–ռաձայնած են, յայտնելու համար թէ գործողութիւնը միայն քաղաքական նը–պատակ ունի եւ մղուած է Պէթանքուրի վարչակարգին դէմ: Այս շարժումը, Քասթրոյէն ներշնչուած, ուզած է այս ձեւով ուշադրութիւն գրաւել եւ իրենցմէ–քին վրայ խօսեցնել տալ: Առեւանգողնե–րը յայտնած են թէ Տի Սթեֆանօ իր պանդոկը պիտի վերադարձուի երկու–չաբթի կէսօրէ ետք:

ՄՈՍԿՈՒԱ նոր դժուարութիւններ ըս–տեղծեց նախագահ Քենըտիի, պաշտօնա–կան մէկ ծանուցագիրով, որու մէջ կը յայտնէ թէ Փանքօվ նոյն իրաւունքներն ունի քան Պոն: Այս ծանուցագիրը, Մոս–կուայի հիւլէական զաշնագրին ընդդի–մադիրներուն ջաղացքին բաւական ջուր կը բերէ:

ՆԱՍԸՐ–ԱՐԷՖ խօսակցութիւնները վերջ գտած են յոռետես մթնոլորտի մէջ: Ա–սոնց նպատակն էր հաշտեցնել Նասըրը Պաասական կուսակցութեան հետ: Իրաքի վարչապետը Դամասկոս մեկնեցաւ ուր պիտի պարզէ Նասըրի հետ ունեցած խօ–սակցութեանց արդիւնքը:

ԵՄԷՆԻ նախագահը՝ Սալալ որ միշտ Աղեքսանդրիոյ մէկ հիւանդանոցն է, բա–ւական ծանր վիճակի մէջ է, ըստ եմէն–եան աղբիւրի լուրերու: Նախագահը ծանր վէրք մը ունի ձախ ուսին վրայ որ ցարդ գոցուած չէ եւ արեան շրջանի խանգարումներ յառաջ բերած է:

ՓՐԱՒՏԱ խիստ յարձակումներ կ'ընէ Ֆրանսայի արտաքին քաղաքականութեան վրայ: «Կոլեան մամուլը երբ երբ ողջու–նեց չին ղեկավարներու դիրքը» կը գրէ համայնավար պաշտօնաթերթը:

ՊԵՆ ՊԵԼԼԱ յայտարարած է մամուլի քուպական «Փրէնսա Լաթինա» գործա–կալութեան թէ Ալժերիա արտակարգ կա–րեւորութիւն մը ունի ափրիկեան դէպ–քերու զարգացման մէջ: Ալժերիոյ վար–չապետը ըսած է նաեւ.— «Ընկերվարու–թիւնը լայն հովահար մըն է որ Ֆիտլպէր Եուլուէն Քասթրօ կ'երթայ: Մենք Ֆիտէլ Քասթրօն ընտրած ենք»:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ՊԵՐԼԻՆԷՆ ԼՕԶԱՆ

Յուլիսին լրացաւ Լօզանի դաշնագրին քառասնամեակը: Պարտուած Թուրքիան յաղթականներուն պարտադրեց Թուրք Հանրապետութեան «ազգային ուխտը»: Հինգ դարէ ի վեր յաղթանակէ յաղթանակ, ապա անկումէ անկում դիմող կայսրութիւնը անդամահատուելով կը պահէր կորիզը ընդարձակ սահմանի մը մէջ: Կ'ազատագրուէին ոչ-թուրք տարրերը եւրոպական պետութեանց հողատարութեան ենթարկուելով:

Անցեալ տարուան վերջերը Փատովայի Համալսարանին Քաղաքական Գիտութեանց Ամպիոնը հրատարակեց «Հայկական հարցը մեծ պետութեանց քաղաքականութեան մէջ» հատորը՝ հեղինակութեամբ Ֆրանչեսքօ Սիտարիի, որ օգտագործած է նորագոյն աղբիւրները: Կ'ամփոփէ Պերլինի վեհաժողովէն մինչեւ նախորդ աշխարհամարտը հարցին փուլերը եւ լայն տեղ կուտայ դիւանագիտական պայքարին, զոր պետութիւններ մղեցին բաժնելու համար Փոքր Ասիան:

Պետութեանց պայքարը վերջին դարու մէջ չէ, դարաւոր է, որովհետեւ աշխարհագրական դիրքով տարանցիկ ճամբաներու վրայ, Հայաստան երեք աշխարհներու եւ երեք ցամաքամասերու քառուղիին վրայ կը գտնուի: Արշաւանքները կը դադրին, հզօր կայսրութիւն մը կը հաստատուի Բիւզանդական կալուածներու վրայ, Հայաստան կը պահէ անունն ու ժողովուրդը, որ կը ցրուի աշխարհի ամէն մէկ անկիւնը, երկրին մէջ կը մնայ նուաղեաց եւ հողագործ՝ ենթակայ վաչկատուն դրացիին աւատապետութեան եւ հարստահարութեան: Վերջին դարուն իր վիճակին գիտակցութիւնը կ'ունենայ եւրոպական գաղափարներու թափանցումով եւ ազգութեանց զարթօնքին հետեւելով:

Ռուս յաղթանակները Կովկասի մէջ եւ Պալքաններու, Պուլկարներու ազատագրումը կը քաջալերեն, Հայերն ալ Ռուսիայէն խնդրելու արեւելեան նահանգներու համար ալ բարենորոգումներու իրագործումը: Ընդունելով Մարսէլ Լէարի (Գր. Զօհրապ), Մանտելսթամի եւ Պեպարի գաղափարը, կը գրէ. «Թուրք թելադրութեամբ, Ներսէս Պատրիարք դիմեց մեծ դուքս Նիքոլայի վարչական ինքնօրինութիւն խնդրելու: Անգլիական նաւատորմին Պոլիս գալը եւ վստահ ըլլալով որ Ռուսիա նպատակ չունի Հայաստան գրաւելու՝ Թուրք կառավարութիւնը ետ կեցաւ իր որոշումէն»: Հեղինակներու գաղափարը անորոշ է, Ազգ. Ընդհ. Ժողովը աւելի առաջ պահանջած էր բարենորոգումներ եւ Թուրք դիւանագիտութիւնը ետ չկեցաւ իր որոշումէն: Պերլինի մէջ ինքնավարութիւն պիտի ուզէն, որոշ սահմանի մը մէջ, որու քարտէսը ներկայացուցին: Պատրիարքը ժողովին մէջ կը յայտարարէր. «Թուրք պատուիրակութիւնը հրահանգ ստացած չէր ընդդիմանալու մեր ծրագրին»: Ծածկագիր հեռագրային թղթակցութիւնները կը կատարուէին Խաչիկ Օտեանի միջոցով, որ անդամ էր Թուրք պատուիրակութեան: Սան Ստեֆանոյի դաշնագիրը մտահոգեց Անգլիան: Խաղաղասէր Տերպի հրաժարեցաւ եւ անգլիական կայսրութեան պաշտպան Սալզպըրի Արտաքին նախարարութեան կոչուեցաւ: Առաջին հակազդեցութիւնը սկսաւ նախարարին Մայիս 30ի շրջաբերականով եւ նոյն օրը Սալզպըրի-Շուվալոֆ համաձայնութիւնը կնքելով: Այդ բաւարար չգտնելով կը կնքէր Կիպրոսի Համաձայնագիրը (1878 Յունիս 4) վեհաժողովի բացումէն ինը օր առաջ միայն (Յունիս 13), բայց զինուորական խարիսխ մը ունենալու մտածումն ու հետազօտութիւնը պատերազմին սկիզբէն ի վեր էր: 16րդ յօդուածով Ռուսիա պիտի հսկէր բարենորոգումներու վրայ, Սալզպըրի – Շուվալոֆ համաձայնութեամբ Անգլիա պիտի գործակցէր, Կիպրոսի Համաձայնութեամբ Թուրքիա պիտի կատարէր բարենորոգումներ «քրիստոնեաներու եւ ուրիշներու» արեւելեան նահանգներու մէջ, Պերլինի դաշնագրով հարցը միջազգային կ'ըլլար: «Անգլիա եւ Ռուսիա կը պայքարէին Փոքր Ասիոյ համար Հայերու կռնակէն» կը գրէր Պուրֆուան եւ Քեմպրիճի պատմաբան Հ. Թեմփըրլի պիտի գրէ. «Ս. Ստեֆանոյի բանակցութեանց ընթացքին եւ Պերլինի վեհաժողովին մէջ Հայերը պիտի ըլլան անգլեւռուս հակամարտութեան խաղին մէջ փիոն մը»: Պիսմարք տեսական կը նկատէր 61րդ յօդուածը, որ գործնական արդիւնք մը չէր կրնար ունենալ. «Մեծ պետութիւններ իրաւարարութիւն կը կատարէին վտանգաւոր խաղի մը, որուն կը մասնակցէին Հայերը առանց իրազեկ ըլլալու»:

Սան Ստեֆանոյով պարտադրուած, Կիպրոսի Համաձայնագրով ընդունուած եւ Պերլինի մէջ պետութիւններէն երաշխաւորուած բարենորոգումները պիտի հանդիպէին Թուրք վարչութեան ընդդիմութեան, որովհետեւ կը հաւատար, թէ բարենորոգուած գաւառները պիտի ձգտէին ինքնավարութեան եւ ապագային Փոքր Ասիոյ անդամահատութեան: Սալզպըրի հրաժարումով իշխանութեան կը հասնէր ապագային մեծ հայասէր Կլատըթոն, որ մտածեց չեղեալ նկատել Կիպրոսի Համաձայնագիրը, բայց հանդիպեցաւ Վիքթորիա թագուհիի բուռն ընդդիմութեան եւ միւսներուն հետ Դրան ներկայացուց 1880 Սեպտեմբեր 7ի հաւաքական ծանուցագիրը՝ թէեւ վստահ էր որ ապարդիւն պիտի մնար:

Տարիներ կը սահին, Թուրք վարչութիւնը ներքին բաժանումներ կը կատարէ Հայերը փոքրամասնութեան վերածելու համար, կը կազմուին կուսակցութիւններ բարենորոգումներու իրագործումը պահանջելու համար եւ վերջապէս կը բացուի հարցը Սասունի դէպքերով: Քամպոն կը գրէ Արտաքին Նախարարին (1894 Փետրուար 20). «Բարձրաստիճան Թուրք պաշտօնեայ մը երկու տարի առաջ կ'ըսէր հայկական հարց չկայ, բայց մենք պիտի ստեղծենք զայն, նախատեսութիւնը իրականացած է, հայ հարցը գոյութիւն ունի այսօր»: Ռուսիա հակառակ էր բարենորոգումներու, որովհետեւ ազատագրուած ժողովուրդները ապերախտ գտնուած էին, կը փակէին իր ճամբան դէպի ներքին ծովը, միակ ուղին կը մնար Մերձաւոր Արեւելքը: Բարենորոգումները սկիզբը պիտի ըլլային ինքնավարութեան եւ յետոյ անկախ Հայաստանի մը ստեղծումին, որուն միանալ պիտի ուզէր Կովկասի Հայութիւնը: Ժամանակը բարեդէպ էր Թուրք վարչութեան համար, կոտորածներով փոքրամասնութեան մէջ ձգելու արեւելեան նահանգներու Հայերը:

Կլատսթոնի կը յաջորդէ Սալզպըրի ժառանգելով ազատական Րոզպըրիի քաղաքականութիւնը, կը պահանջէ հիմնական կարգադրութիւն մը օսմանեան կայսրութեան, կը վերադառնայ Նիքոլայի ծրագրին. «Կը ցաւիմ որ արեւմտեան պետութիւններ մերժեցին Նիքոլա Ա.ի ծրագիրը՝ Օսմ. կայսրութեան բաժանման»: Սալզպըրի կը յաջորդէր Րոզպըրիի 1895 Յունիսին, երբ մայիսեան ծրագրի շուրջ կը բանակցէին Պոլսոյ երեք դեսպանները Բարձր. Դրան հետ: Բաժանման ծրագիրը կը ներկայացնէր Յուլիսի վերջերը, Օգոստոս 9ին կը տեսակցէր Վիլհելմ կայսեր հետ, որ կը մերժէր առաջարկը, Սեպտեմբեր 4ին Գում Գափուի ցոյց եւ Հոկտեմբերին կոտորած, Ռուսիա կը մերժէր միջամտել կոտորածներուն վերջ տալու համար: Ռուս տարագիր պատմաբան Կրիւնուալտ կ'արդարացնէ Լոպանովի քաղաքականութիւնը. «իրապաշտ քաղաքականութեան հետեւեցաւ Թուրքիոյ բաժանումն արգիլելով»: Իտալացի հեղինակը կը յիշէ Հիկ Փրելէրի գործը՝ «Թրքական Հարցը 1895ին», որ քննադատութիւնն է գերման նշանաւոր պատմաբան Մայնեքէի «Անգլեւգերման յարաբերութիւնները 1890–1900» գիրքին:

Գերմանիա զանց առնելով Աւստրիոյ պալքանեան շահերը՝ կը ջանար մերձենալ Ռուսիոյ: Անգլիոյ եւ ցամաքային պետութեանց միջեւ կը մղուէր դիւանագիտական բուռն պայքար մը, Անգլիա կ'աշխատէր զինակիցներ գտնել, Գերմանիա կ'աշխատէր ցամաքային զինակցութիւն մը կազմել Անգլիոյ դէմ, որովհետեւ կը վախնային որ Անգլիոյ հաշւոյն կրնան ցամաքային պատերազմ մղել: Համիտ ըմբռնեց կացութիւնը եւ սարքեց «ամէնէն սարսափելի, կատարեալ ոճիրի բարեկենդան մը»: Կրէյ կը գրէ. «Համիտ կատարելապէս ըմբռնած էր պետութեանց դիրքաւորումը, արտաքին եւ ներքին ուժերը, որոնցմով շրջապատուած էր եւ գիտէր զանոնք գործածել իր սեփական նպատակներուն»: Սալզպըրի կը մտածէր նաւատորմը ղրկել Տարտանէլ, բայց ծովակալութիւնը կը դժէր, յայտնելով թէ Պոլիս ղրկուած նաւատորմը կրնար պաշարուիլ Ֆրանսական եւ ռուս տորմիղներէն: Աւստրիա կ'ուզէր միանալ Անգլիոյ ձեռնարկին, բայց Գերմանիա կ'ընդդիմանար: Պետութիւնները ներհակ շահեր ունէին Օսմ. կայսրութեան մէջ եւ կը մտածէին այդ շահերը պաշտպանել: Կոտորածներու նպատակն էր «ջնջել Հայերը ջնջելու համար հայկական հարցը, անգործադրելի դարձնելու բարենորոգումները»: Անգլիոյ նախարարը կը մնար մինակ եւ ձեռնթափ կ'ըլլար թէեւ հանրային կարծիքը բուռն կերպով կը բողոքէր եւ կը պահանջէր սուլթանին գահընկէցութիւնը: Քերթողներն ալ, Ուիլեըմ Էլան կ'երգէր. «Զենք վախնար ո՛չ Ֆրանսայէն, ո՛չ Մոսկովէն, երբ ազատութիւնը մեզ կը կանչէ, մենք պիտի կռուինք անգլէկ եռանդով, դադրեցուցէք ձեր աղօթքները, լեցուցէք ձեր հրացանները, իրենց ձայնը մեզ կը յիշեցնէ մեր առաքելութիւնը, եկած է օրը Ալպիոնի զաւակներուն համար գրաւելու Տարտանէլը»:

ԽՈՐԷՆ ԳԱԲԻԿԵԱՆ

(Շար. – 1)

ՑԵՂԱՅԻՆ ԽՏՐՈՒԹԻՒՆԸ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՄԷՋ

Ցեղային խտրութիւնը դաւանական խտրականութեան չափ խոր, դժբախտ պարագայ մըն է դարձած Միացեալ Նահանգներու հարաւի կարգ մը շրջաններու մէջ:

Տասներիններորդ դարու սկիզբը եղածին պէս, մէկուկէս դար ետք, դարձեալ երբեմնի Համադաշնակցութեան մաս կազմող նահանգներ՝ Ֆլորիտա, Ճորճիա, Ալապամա, Հիւսիսային Քարոլին, Հարաւային Քարոլին, Միսուրի, Լուիզիանա, Թեքսաս, Արքանսաս, Թենըսի եւ Վիրճինիայէն որոշ մաս մը, — կ'ընդդիմանան սեւամորթներու՝ իրենց զաւակներուն հետ համալսարան յաճախելուն:

Խտրական ոգին այն աստիճան չէ–տուած է Հիւսիսի մեծ Հանրապետութեան հարաւի այդ շրջաններուն մէջ, որ անախորժ բախումներ կը մնան սովորական երեւոյթ:

Պատմութենէն ծանօթ է որ 19րդ դարու սկիզբէն իսկ խոր հակակրութիւն կը տիրէր Հիւսիսի Մաքրակրօններու ժողովրդավար տեսակէտներուն եւ Հարաւի հողագործներու կարծեցեալ ազնուապետական հակումներուն միջեւ: Մաքրակրօններ կը պահանջէին սեւերու գերութեան ջնջումը: Հարաւը կը սպառնար բաժանման գնով անջատուիլ Հիւսիսէն, եթէ փորձուէր գերութիւնը վերցնել:

Հարաւն էր որ առեն մը տուած էր հասարակաց հայրենիքին ֆրանսական Յեղափոխութեան ազատական գաղափարներով սնած մեծ նախագահ մը, յանձին Թ. Ճեֆըրսընի, որ կը մերժէր Նորին Գերազանցութիւն տիտղոսը եւ կ'ուզէր, որ իր հայրենակիցները կոչէին զինք պարզապէս Պ. Ճեֆըրսըն: Կը սիրէր գլուխ գլխի խօսակցութիւններ ունենալ ժողովրդական համեստ խաւերու պատկանող մարդոց հետ. կը յորդորէր սիրել իրենց նմանները:

Հանդէպ սեւամորթներու ատելութիւնը եւ թշնամանքը սակայն ծայրայեղութեան հասաւ իր անունը կրող Հարաւի շրջանին ուրիշ նախագահ մը՝ Ճեֆըրսըն Տէյվիսի օրով:

Երկիրը բաժնուած երկու մասի, մղեց կատաղի պատերազմ մը 1861ին, երբ Հիւսիսի մէջ նախագահութեան գլուխը կը գտնուէր Աբրահամ Լինքըլն, մէկը գերութեան ջնջումի կատաղի կողմնակիցներէն:

Հարաւի տասնըմէկ նահանգներու պարտութեամբ, վերջ տրուեցաւ գերութեան:

Այդ օրերուն իր ազնուական խառնուածքով գրագիտուհի մը՝ Տիկին Պիչըր Սթաու, գրեց համաշխարհային գրականութեան մէջ հիւմանիստական իր ոգիով ու բովանդակութեամբ հռչակուած գիրք

ՍԱՅԱԹ – ՆՈՎԱՅԻ ԾՆՆԴԵԱՆ 250 ԱՄԵԱԿԸ

ՄԵԾ ԸՂՁԱՒՈՐՆ ՈՒ ԲԵԶԱՐԱԾԸ

Գոհացէ՛ք սակայն, որ իսլամական օրէնսդրութիւնը «խեղճ» հիւնքեար-խոնդկարի իրաւունքը սահմանափակել էր՝ նրան թոյլ տալով... օրական սպանել ոչ աւելի, քան տասնչորս հոգի...: Վերյիշեցէ՛ք, որ միապետը (ինչպէս Թուրքաց սուլթանը, այնպէս էլ Պարսից շահը) իր բոլոր հպատակների ոչ միայն գոյքի, այլեւ կեանքի տէրն էր:

Եւ այս՝ ոչ միայն 14–15–16–17րդ դարերում, այլ նաեւ... 18րդ դարում:

Իսկ 18րդ դարը դարն էր մեծագոյն յեղաշրջումների, միջնադարեան կապանքներից ի վերջոյ ազատուելու, աւատական կացութաձեւի փլատակման: Իսկ 18րդ դարը դարն էր Վոլտէրի ու Ռուսոյի, Դիդրոյի ու Դալամբէրի, Եումի ու Պոպի, Լեսինգի ու Հերդէրի:

Մինչ Անգլիայում (դեռեւս 1675 թուականին) ուժի մէջ էր մտել անձի անձեռնմխելիութեան օրէնքը («Հապէաս Քորփուս», մինչ բովանդակ Եւրոպան զբաղուած էր «Հասարակական դաշինք»ի եւ «Օրէնքների ոգի»ի ընթերցմամբ ու վերընթերցմամբ, մինչ իրար յետեւից լոյս էին տեսնում աշխարհահռչակ «Հանրագիտարան»ի հատորները, եւ լեսինգեան «Նաթանն» էր բեմադրւում, — Արեւելքում շարունակւում էր ոչ միայն ճորտատիրութիւնը, այլեւ դեռ այնքան էր յարգի ստրկավաճառութիւնը, որ նոյնիսկ «ալլահի տեղապահ» սուլթաններն էլ վերջին հաշւով կիսաստրուկներ էին, քանի որ, իբրեւ կանոն, ծնւում էին ստրկուհուց...:

Մինչ այնտեղ գրգռւում էր ֆրանսիական Մեծ Յեղափոխութիւնը, եւ մարդ գաղափարը լայնանում էր քաղաքացի ըմբռնողութեամբ ու խորանում անհատ հասկացողութեամբ, նոյն այդ ժամանակ այստեղ կեանքն ընթանում էր ըստ ֆրանսիական առածի. «Որքան աւելի էր փոխւում, այնքան մնում էր նոյնը», ուստի եւ մարդկային ամենատարրական օրէնքներն իսկ դեռ շատ պիտի սպասէին իրենց գրառմանը:

Մինչ այնտեղ մի Վոլտէր պետութիւնների հիմքեր էր սասանում իր գրչով՝ անցնելով երկրից երկիր եւ ամենուրեք իրեն զգալով ոչ միայն ինչպէս իր տանը, այլեւ իբրեւ տանտէր, այստեղ մի Սայաթ-Նովա՝ չունենալով հայրենի պետութիւն, ծնւում էր օտար մի երկրում, եւ ծնւում... կիսաճորտ...:

Ահա թէ ինչո՛ւ Սայաթ-Նովան ոչ մի համալսարան չի աւարտել: Նա ընդամէնը սովորել է ինչ-որ մի վանքում, սովորել այն, ինչ կարելի էր սովորել վանքում, չունկնդրելով ո՛չ Եումին, ո՛չ Գիբբոնին, ո՛չ էլ Կանտին: Բայց...

Եւ հէնց այս բայցն է, որ յաճախ խախտում է պատմութեան ոչ միայն ժամանակագրութիւնը, այլեւ տրամաբանութիւնը:

Պասթիյի անկումով ու «Մարդու եւ քաղաքացու իրաւունքների յայտարարութեամբ» Եւրոպայում մարդն ազատուած էր հոգեւոր ու մարմնաւոր ճնշումներից, միջնադարեան զսպաշապիկներից, ինկվիզիցիայի (հաւատաքննութիւն), ինչպէս եւ աուտոդաֆէի մղձաւանջային [illegible]չողութիւններից: Որոշակի էին դարձել մարդու պարտականութիւններն ու իրաւունքները՝ նրան դարձնելով որքան հանրութեան անդամ, նոյնքան էլ անհատ:

ՓԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ

(Շար. – 2)

ԿԱՐԴԱՑԷՔ ՏԱՐԱԾԵՑԷՔ «ՅԱՌԱՋ»

— Աղբար Թովմասի տնակը, որ ան– ընդունելութիւն մը գտաւ ա– կողմ:

Ջուրեր սահած են Միացեալ պատմութեան կամուրջ – տակէն՝ այդ օրերէն այս կողմ: դարու սկիզբի չորս Մ. Նահանգները այսօր դար– երկու հարիւր միլիոննոց պետութիւն, որուն խօսքը է այլեւս աշխարհի հզօրներուն

Հանդէպ սեւամորթներու տակա– չարունակուի ատելութիւնն ու երկրին հարաւի տասնէ ա– նահանգներուն մէջ, ուր իշխողները դարձեալ մեծ կալուածատէրեր: ատելութեան իբրեւ հետեւանք, մը օր առաջ ճերմակներու կողմէ երիտասարդ սեւամորթ մը, Մեկտար Էվերս, որուն մահը է ամբողջ երկրին հանրային կար–

աւելի քան պախարակելի է Ափրիկէի մէջ գրեթէ Միացեալ նախաձեռնութեամբ ստեղ– Լիպերիան, որուն քաղաքացի – կազմելու համար՝ Ուաշինկ– հայրենակիցները 19րդ դարուն փրկագիններով պատանդապերծե – ազատեցին 60·000 Այսպէս հիմը դրուեցաւ այդ հանրապետութեան: Աւելի քան մէ– դար եւ քը, աններելի եղոյթնե – աշխարհի աչքերուն առջեւ Հարաւի կը գործեն իրենց երկրին վարկաբեկող արարքներ:

կեցուածքը զոր ցոյց կուտան Նահանգներու սպիտակամորթ իրենց պէս կարմիր ա– ունեցող սեւամորթներու հանդէպ, չունի:

մեղաւոր է մանուկ մը, որ է սեւամորթ մօրմէ մը:

յանցանք ունի անմեղ փոքրիկ մը, նախնիքները խլուած իրենց բնա– (Ափրիկէ), չղթայակապ բեր– են զոյգ Ամերիկաները, ու հրա– վրայ ղրասոի պէս վաճառ– են հանուած:

որ խորթ աչքով եւ հակակրան– կը նային համաքաղաքացի սեւերու կը մոռնան, որ հիւսիսէն հարաւ, Ամերիկաները արդաւանդ դաշտերու ծուած են քրտինքով մարդկային այդ բազմութիւններուն: Բաղ– փիններ, որոնք իրենց ապրած եր – պաշտպանութեան համար աչ – եւ քանի մը պատերազմներու մէջ են Թափեր:

Վերջին քանի մը տարիներու ընթաց – քաղաքակիրթ մարդկութեան աչքե– առջեւ հակասեւամորթ պայքարի բարբարոսութեամբ կը չարունակուի:

Հարաւայիններ օգտուելով երկրին սահմանադրութեան մէջ նահանգային որոշ իրաւունքներու տրամադրու– կը չարունակեն մերժել երկսեռ մանել իրենց աթոռանեղները, յաճախած Թատրոնները, ճաշա – զբօսավայրեր, եւայլն:

արկային այս արգելքներով ա– կը խորացնեն ցեղային ատելու – ու Թշնամանքը տարամորթ գան – մէջ:

կայութեան զգացումը կ՚աշխա– խորացած տեսնել մարդկային բաղ – բազմութիւններու մէջ, որոնց մեղքը իրենց սեւ մորթ ունենալն է: որ երկրին իբրեւ քաղաքացիներ, կը խօսին պետութեան լեզուն, տուրք կը վճարեն, կը կատա– իրենց զինուորական պարտականու – եւ ճերմակներու հաւասար կը իրենց արիւնը հայրենիքին հա– մղուած պատերազմներու մէջ:

Երբ Միացեալ Նահանգներու հիւսի – եւ արեւմտեան շրջանի նահանգ – դար մը եւ աւելի առաջ կրցած են ամօթալի գերութեան եւ եթէ լայնախոհութեամբ ու արժանապատուութիւնը չփի– կեցուածքով կողք կողքի կ՚ապ– իրենց սեւամորթ հայրենակիցներուն լայնախոհութեամբ եւ առաքինի նոյնը պիտի կրնային ընել եւս:

Միաց. Նահանգներու հարաւի Նահանգներու կեցուածքը հե– մարդկային ըլլալէ, կը դառնայ նոր

ՁԵԿՈՅՑ
Գ. ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Ստորեւ կը հաղորդենք ցուցակը ներկայ տարւոյ առաջին վեցամսեային ընթացքին Հիմնարկութեանս կողմէ կատարուած յատկացումներուն, կրթական, մշակութային եւ բարեսիրական մարզերուն մէջ: Այդ յատկացումներուն գումարը կը հասնի 288·900 տոլարի:

1· Ամառնային մանկավարժական դասընթացք Սեւռի մէջ (Ֆրանսա) 10·000 տոլար:

Այս դասընթացքը կազմակերպուած է Սեւռի Միջազգային Մանկավարժական կեդրոնին մէջ եւ անոր կը մասնակցին Միջին եւ Մերձաւոր Արեւելքի հայկական վարժարաններու ֆրանսերէնի 30 ուսուցիչներ: Դասընթացքը, որուն տեւողութիւնը մէկ ամիս է, նպատակ ունի ծանօթացնել օտար վարժարաններու մէջ ֆրանսերէնի ուսուցման մեթոտները:

Այս ծրագրին յատկացուած է 10·000 *տոլար:*

2· Ս·Թարգմանչաց վարժարանի (Պաղտատ) հանդիսասրահի սարքաւորում: 8·400 տոլար:

8·400 *տոլարի գումար մը յատկացուեցաւ կահաւորելու եւ սարքաւորելու համար հանդիսասրահը Պաղտատի Ս· Թարգմանչաց վարժարանին որ վերանորոգուած է Հիմնարկութեանս կողմէ:*

3· Ի նպաստ երեք համալսարաններու հայագիտական ամպիոններուն: 15·000 տոլար:

Երեք համալսարաններու մէջ հայագիտական ուսմանց ամպիոններուն օժանդակելու նպատակով յատկացուեցաւ 15 *հազար տոլար:*

ա) *Սան Փաւլոյի (Պրազիլ) համալսարանին նորահաստատ հայագիտական ամպիոնին համար* 5·000 *տոլար:*

բ) *Քոլոմպիա համալսարանին (Միացեալ Նահանգներ) հայկ· գրադարանին անհրաժեշտ գիրքերու եւ հրատարակութիւններու գնման համար յատկացուեցաւ* 5·000 *տոլար:*

գ) *Սպահանի համալսարանին հայագիտական ամպիոնին օժանդակելու համար յատկացուեցաւ* 5·000 *տոլար:*

4· Յատկացում Թեհրանի հայ համալսարանականներու Ընկերակցութեան: 5·000 տոլար:

Թեհրանի հայ համալսարանականներու Ընկերակցութեան յատկացուեցաւ 5·000 *տոլարի գումար մը, նոյն Ընկերակցութեան բուժարանին սարքաւորումը բարելաւելու համար:*

5· Երկամեայ օժանդակութիւն Ս· Խաչ Լիսէին (Պոլիս): 30·000 տոլար:

Այս վարժարանին, որ անցեալին մէջ Հիմնարկութեան մասնաւոր օժանդակութեան առարկան եղած է, կատարուեցաւ տարեկան 15·000 *տոլարի յատկացում մը* 1963–64 *եւ* 1964–65 *տարեշրջաններուն համար:*

6· Եռամեայ միանուագ յատկացում յապաղած հայ աշակերտներու յատուկ դասարանի մը ստեղծման համար: 4·000 տոլար:

«Խուլերու համար Հոլանտեւլիրանեան Միսիոն»ի հիմնած վարժարանին մէջ (Պուրճ–Համուտ, Պէյրութ), ուր կը դաստիարակուին ֆիզիքական անբաւարարութեան հետեւանքով յապաղած աշակերտներ, որոշուեցաւ ստեղծել դասարան մը, սահմանուած հայ աշակերտներու, որոնք նոյն պատճառներով յապաղում կրած են իրենց ուսման մէջ եւ որոնք ի վիճակի չեն ուրիշ տեղ գտնելու նման աջակցութիւն մը: Այս օժանդակութիւնը սահմանափակուած է երեք տարուան շրջանի մը միայն, այն հասկացողութեամբ որ այնուհետեւ պիտի շարունակուի տեղական համայնքին կողմէ կամ նպաստաւորուող տղայոց ընտանիքներու միջոցով:

7· Յաւելուածական յատկացում Սելանիկի (Յունաստան) մէջ յիսուն տարագիր Հայերու բնակութեան սահմանուած «Նանսէնեան Հոմ»ի շինութեան: 19·000 տոլար:

Այս տան շինութեան ծրագիրը կազմուեցաւ «Տարագիրներու տարուան Նորվեկիական կոմիտէ»ին եւ Հիմնարկութեանս կողմէ միասնաբար եւ հաւասար մասնակցութեամբ, իբր յարգանքի արտայայտութիւն մը իր ծննդեան հարիւրամեակին առթիւ Ֆրիտիոֆ Նանսէնի, որուն մարդասիրական եւ հայանպաստ գործունէութիւնը հանրածանօթ դարձուցած է զինքը: Այս նպատակին նախապէս Հիմնարկութեանս կողմէ տրամադրուած էր 79·000 *տոլար, որու վրայ կ՚աւելցուի* 19·000 *տոլարի նոր գումար մը, համաձայն շինութեան պէտքերուն:*

8· Մեծն Բրիտանիոյ մէջ երեք տարուան ամառնային դասընթացք Միջին եւ Մերձ· Արեւելքի հայկ· վարժարաններու տնօրէններու եւ անգլերէնի ուսուցիչներու համար: 23·000 տոլար:

Ծրագիր մը կազմուեցաւ յաջորդաբար երեք տարի Մեծն Բրիտանիոյ մէջ կազմակերպելու ամառնային դասընթացքներ, որոնց պիտի մասնակցին վերոյիշեալ երկիրներու հայ դպրոցի տնօրէններ եւ անգլերէնի ուսուցիչներ, կատարելագործելու համար իրենց մանկավարժութիւնը:

9· Զօհրապ Նայիրի վարժարանին (Թեհրան) վերաշինութեան համար յատկացում: 33·000 տոլար:

Տրուած ըլլալով Թեհրանի հայկ· վարժարաններու աշակերտութեան մեծ եւ յարաճուն թիւը, որոշուեցաւ ընդարձակելով վերաշինել այս վարժարանը, 33 *հազար տոլար յատկացնելով սոյն նպատակին, որուն տեղական համայնքը եւս կը մասնակցի* 27·000 *տոլարով:*

10· Յատկացում Ներսէսեան նախակրթարանի (Պոլիս) վերաշինութեան: 10 հազար տոլար:

Որոշուեցաւ վերաշինել Հասգիւղի (Կ· Պոլիս) այս հարիւրամեայ վարժարանը որ ի վիճակի պիտի ըլլայ ընդունիլ աշակերտներ ուրիշ վայրերէ եւս: 10·000 *տոլար յատկացուեցաւ այս նպատակին, որուն նաեւ իր մասնակցութիւնը կը բերէ վարժարանին հոգաբարձութիւնը հաւասար գումարով մը:*

11· Յատկացում Երուսաղէմի Պատրիարքարանի շրջափակին մէջ պատսպարուած գաղթականներուն պէտքերուն: 11 հազար 200 տոլար:

Շարունակելով Ս· Յակոբեանց վանքին կատարած իր օժանդակութիւնը յօգուտ այնտեղ պատսպարուած գաղթականներուն, Հիմնարկութիւնը որոշեց 1963–64 *տարեշրջանին համար անոր յատկացնել* 11·200 *տոլարի գումարը:*

12· Յատկացում Հալէպի (Սուրիա) հայ բողոքական համայնքին, ընդարձակուած «Այրիներու Տան» շինութեան համար: 5·300 տոլար:

Այս հաստատութիւնը ապաստան կուտայ այրիներու, առանց յարանուանական խտրութեան եւ տեղւոյն մէջ իբր այդ, միակն է որ գոյութիւն ունի: Հիմնարկութիւնը 5·300 *տոլարով կը մասնակցի նոր շէնքին կառուցման որ պիտի արժէ մօտաւորապէս* 18·500 *տոլար:*

13· Յատկացում Հալէպի (Սուրիա) հայ դպրոցականներու խումբի մը ատամնաբուժական խնամքին կազմակերպութեան: 15·000 տոլար:

Իբր հետեւանք Հովարդ Գարակէօզեան Հիմնարկութեան կողմէ այս նպատակին համար կատարուած քննութիւններու արդիւնքին, որոշուեցաւ 15·000 *տոլար յատկացնել 3 տարի խումբ մը դպրոցականներու ատամնաբուժական խնամքը կազմակերպելու գործին: Յարմարագոյն համախմբումը ներկայացնող թաղի մը մէջ, ատամնային բուժարան մը իր քննութեան եւ խնամքին բովէն պիտի անցընէ երկու, երեք հազար աշակերտութիւն: Այս ծրագրին նպատակն է ոչ միայն ներկային մէջ ապահովել տղոց առողջութեան կարեւոր մէկ պայմանը, այլ եւ անոնց ներշնչել կենցաղային եւ առողջապահական լաւ ունակութիւններ:*

14· Յաւելուածական յատկացում 1963–1964 տարեշրջանի համալսարանական կրթաթոշակներուն համար: 50·000 տոլ·:

Այս նոր գումարը կ՚աւելնայ նախապէս յատկացուած վարկին վրայ որ կը հասնէր 140·000 *տոլարի: Գոյացած* 190·000 *տոլարի ամբողջական գումարը կարելի պիտի դարձնէ գոհացում տալ ամէն կողմէ հասնող արժանաւորագոյն թեկնածութիւններուն, որոնց թիւը կ՚աւելնայ հետզհետէ:*

15· Յաւելուածական յատկացում հայ երկրորդական վարժարաններու բնագիտական, բնալուծական եւ կենսաբանական աշխատանոցներու սարքաւորման ծրագրին: 50·000 տոլար:

Նախապէս 50·000 *տոլար յատկացում մը կատարուած էր հայ երկրորդական վարժարաններու գիտական աշխատանոցներու սարքաւորումը ստեղծելու կամ ամբողջացնելու նպատակին: Իբր հետեւանք կատարուած քննութիւններու եւ հետազօտութիւններու, անհրաժեշտ նկատուեցաւ հաւասար գումար մը եւս յատկացնել այս ծրագրին:*

Գումար՝ ընդհանուր յատկացումներու 288·900 *տոլար:*

ՄԻՆՉԵՒ ԱՅՍՕՐ ԿԱՏԱՐՈՒԱԾ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԵՒ ՅԱՏԿԱՑՈՒՄՆԵՐՈՒ ՑՈՒՑԱԿԸ

Հիմնարկութեան ստեղծումէն մինչեւ 1962 *Դեկտեմբեր* 31, 4·620·515 *տոլար:*

1963 *Յունուար 1էն Յունիս* 30, 288·900 *տոլար:*

Համագումար բոլոր յատկացումներու մինչեւ 1963 *Յունիս* 30, 4·909·415 *տոլ·:*

Այս ընդհանուր գումարին մէջ չեն մտներ Հիմնարկութեան կողմէ հայկական նպատակներու յատկացուած երկու ուրիշ կարեւոր գումարներ:

Ինչպէս ծանօթ է, մեր Հիմնադիրը իր կտակին մէջ փափաք յայտնած է 300–400 *հազար տոլարի գումար մը յատկացնել, ի յիշատակ իր ծնողաց, Ս· Էջմիածնի Մայր Տաճարին վերանորոգման, դրամական եւ շինարարական գործողութիւնները Ն· Վեհ· Ամենայն Հայոց Կաթողիկոսին հետ համախորհուրդ յառաջ տանելու պայմանով:*

Հիմնարկութեան Վարչ· Խորհուրդը ձեռնարկեց կտակով յայտնուած սոյն փափաքին գործադրութեան, մանրամասներու հսկողութեան տակ եւ միշտ շփման մէջ մնալով Նորին Վեհափառութեան հետ: Ներկայիս իր վերջին փուլին հասած է վերանորոգութիւնը, որուն համար մինչեւ այսօր վճարուած էր 270·000 *տլ·:*

Փափաքելով իր ամենալայն սահմանով մեկնել Հիմնադրին կամքը, Վարչ· Խորհուրդը վերջին կարգադրութեամբ մը որոշեց, համաձայնութեամբ Ամեն· Հայոց Վեհ· Կաթողիկոսին, յատկացնել 400 *հազար տոլար Մայր Աթոռի Տաճարին վերանորոգութեան:*

Այս հիման վրայ, վերջերս Ս· Էջմիածին փոխանցուեցաւ 65·000 *տոլարի գումարը, խկ մնացեալ* 65·000 *տոլարը պիտի փոխանցուի յառաջիկայ Յունուարին:*

Վերոյիշեալ ընդհանուր գումարը չի բովանդակեր նաեւ 100·000 *սթերլինի գումարը զոր Հիմնարկութեան Վարչական Խորհուրդը տրամադրեց Ս· Յարութիւն Տաճարին վերանորոգութեան գործին, իբրեւ մասնակցութիւն սոյն վերաշինութեան ծախքերուն Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան ինկած բաժնին:*

ԳԱԼՈՒՍՏ ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ
ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ

Լիզպոն, Օգոստ· 1963

թիւթ մը, որ ամբողջ սեւամորթ Ափրիկէն իր 200 միլիոնի մօտեցող ազգաբնակչութեամբ լուելեայն ակռայ կճրտէ ու թշնամական զգացումներ տածէ սպիտակամորթ մարդկային զանգուածներու դէմ:

Աշխարհի խաղաղութենէն ճառող մարդիկ պէտք է մտածեն այս բոլորի մասին:

Ցեղային պայքարը քաղաքական տարբեր համոզումներով, ներհակ շահերով ու դաւանանքներով մարդկային բազմութիւններու, — ընենք ազգերու պայքարէ հեռու, համաքաղաքացիներու մորթային գոյնի պայքարին վերածելը՝ դարձած է պարզապէս այլանելի արարք մը այլեւս:

Երբ այդ պայքարին լծուած է մանաւանդ Միացեալ Նահանգներու նման յառաջադէմ երկրի մը քաղաքացիներուն մէկ մասը, ան կը դառնայ իրապէս ողբերգական:

Կը թուի թէ Հիւսիսի մեծ Հանրապետութեան սահմանադրութեան մէջ փոփոխութեան արժանի կէտեր կան, որոնց սրբագրութեամբը միայն վերջ պիտի դրուի երկրին բարոյական վարկը յաչս աշխարհի վարկաբեկող տմարդի արարքներու:

«ԱՐՄԵՆԻԱ»

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՕՐԸ Փարիզի մէջ կը տօնուի 26 Հոկտ. շաբաթ գիշեր մինչեւ լոյս, 6րդ Թաղամասի քաղաքա – պետարանի սրահներուն մէջ:

★

Փարիզահայ Տիկնանց Միութեան յիս – նամեայ յոբելեանը կը տօնուի Հոկտեմ – բեր 13ին, Սալ տը լա Շիմի:

Շ. ՄԻՍԱՔԵԱՆ

Օրեր եւ Ժամեր

ԴՊՐՈՑԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Դպրոցասէր Տիկնանց վարժարանին 1963 – 1964 տարեշրջանի արձանագրու – թիւնները սկսած են : Անոնք որոնք կը փափաքին ղրկել իրենց զաւակները պէտք է այժմէն իսկ դիմում կատարեն հաստա – տութեան տնօրէնութեան :

Ա.— ՖՐԱՆՍԱԿԱՆԸ, որ տառացի կեր – պով կը հետեւի պետական լիսէններու արդիական բաժնի պաշտօնական ծրա – գրին — անգլերէն եւ սպաներէն լեզու – ներով — :

Բ.— ՀԱՅԿԱԿԱՆԸ, որ կ'օժտէ սանու – հիները հայագիտական ծանօթութիւննե – րով, հայ լեզուի, գրականութեան, հայ կրօնքի եւ պատմութեան, Հայաստանի աշխարհագրութեան մարզերուն մէջ :

Աշակերտուհիներ կ'ընդունուին ութ տարեկանէն սկսեալ: Մանրամասնու – թեանց համար դիմել հաստատութեան տնօրէնութեան :

1, Bd. du Nord, LE RAINCY (S. et O.)
Tél : 927-01-72

Դպրոցասէրի ուսման ծրագիրը կ'ընդ – գրկէ երկու ուրոյն բաժիններ :

ՀԱՅ ԸՆԾԱՅԱՐԱՆ

Կը փնտռուի հայ տիկին մը Հաստա – տութեանս մէջ իբր խոհարարի օգնական: Մանրամասն տեղեկութիւններու համար դիմել գրաւոր կամ անձամբ՝

École Apostolique Arménienne
3, Av. de Grandchmp
LE PECQ (S. et O.) Tél. 963-01-72

ՏՍԱՑԱՆՔ

ԻՆՉՊԷՍ ՏԵՍԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԸ

(Տպաւորութիւններ)

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Գրեց՝

Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

ՆԿԱՐՆԵՐՈՎ ՃՈԽԱՑԱԾ ԱՅՍ ԳՐ – ՔՈՅԿԸ ԿԱՐԺԷ ՄԻԱՅՆ 3 Ն. Ֆ.
Առաքումով՝ 4 Ն. Ֆ.

Դիմել՝
« Յ Ա Ռ Ա Ջ »

FOURRURES

Roger YOPIAN


PRIX INTERESSANTS
NEUF et REPARATION

84, Boulevard de Stalingrad, 84
— CHOISY-LE-ROI (Seine) —

Autobus : de la Porte de Choisy, descendre 3 Communes ou Rue du Docteur-Roux.

IMPRIMERIE SPECIALE
DU JOURNAL « HARATCH »
32, Rue de Trévise, PARIS (9e)

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ



Մատենաշար — ՅԱՌԱՋ — Կեդրոնավայր
Գին
Ֆրանս՝ 15 Ֆր.
— Առանել առաքումի ծախքը —
« Յ Ա Ռ Ա Ջ »

ՀԱՅ ԲՈՅԺ

ԺՈՂ. ԱՄՍԱԹԵՐԹ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ
Խմբագիր՝ Շ. ՆԱՐԴՈՒՆԻ

Խմբագրին երկար բացակայութեան պատճառաւ, լոյս տեսած չեն ՀԱՅ – ԲՈՅԺի 1962 եւ 1963 տարիներու թիւերը:

Խմբագիրը, որ նոր վերադարձաւ Ամե – րիկայէն, գործի ձեռնարկած է արդէն : Ծրագրած է հրատարակել երկու բացա – ռիկ թիւեր, իւրաքանչիւրը 150 էջ : Ա – ռաջինը պիտի կրէ 1962 թուականը, երկ – րորդը՝ 1963 թուականը: Այս երկուքը մէկ տարի հաշուելով՝ անոնք որ վճա – րած են 1962, վճարած կ'ըլլան նաեւ 1963 տարին :

Այս ձեւով, խմբագիրը կը խորհի ՀԱՅ – ԲՈՅԺի հրատարակութիւնը ամբողջա – ցնել եւ կանոնաւորել մինչեւ յառաջիկայ տարի, եւ 1964 տարուան թիւերը լոյս ընծայել ամսէ ամիս՝ Յունուարէն սկըս – եալ :

Ամերիկայի նոր բաժանորդները եւս, որոնք վճարած են այս տարուան համար (1963), պիտի ստանան ՀԱՅ–ԲՈՅԺի 1962 եւ 1963 թիւերը:

Այն բաժանորդները, որոնք յետնեալ պարտք ունին, թող բարի ըլլան իրենց վճարումը հասցնել մինչեւ տարեվերջ : Հին պարտքերուն հետ՝ ներկայ տարին եւս վճարողներն են միայն, որ պիտի ստանան ՀԱՅ – ԲՈՅԺի բացառիկները, խմբագրուած բժշկական, գրական, պատմական, շատ հետաքրքրական եւ ճոխ բովանդակութեամբ,— արդէն տը – պագրութեան յանձնուած :

Այս առթիւ շնորհակալութիւն այն հա – ւատարիմ բաժանորդներուն, որոնք ՀԱՅ – ԲՈՅԺի հրատարակութիւնը ընդհատուած ըլլալով հանդերձ՝ խմբագրին բացակա – յութեան պատճառաւ, վճարումները կա – տարած են օրը օրին ի վկայութիւն ի – րենց բարեկամութեան եւ վստահու – թեան :

Կը խնդրուի Հայրենիք, Ասպարէզ, Արմենիա, Ազատ Օր, Յուսաբեր, Ազ – դակ, Այգ, Ալիք թերթերու խմբագրու – թիւններէն, ինչպէս և Սիոն, Հասկ, Հայ Կեդրոն, Կիլիկիա, Հայաստանեայց եկե – ղեցի պարբերականներէն, որ հրատարա – կեն այս յայտարարութիւնը գէթ 2 – 3 անգամ :

ԿԵԱՆՔԻ ՈՒՂԻՆԵՐՈՎ
Գ. Հատոր

Շուտով լոյս կը տեսնէ Ս. Վրացեանի ԿԵԱՆՔԻ ՈՒՂԻՆԵՐՈՎ (Գ. Հատորը), շուրջ 300 էջ, պատկերազարդ եւ լաթա – կազմ:

Երրորդ հատորը կը բովանդակէ Ս. Վրացեանի յուշերը կամաւորական շարժ – ման, ինչպէս նաեւ դէմքեր, դէպքեր եւ տպաւորութիւններ՝ մօտիկ անցեալէն:

ՍԱՄՈՒԷԼ ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ
ՆՈՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Իրենց զաւակները արձանագրել փափա – քող ծնողքները պէտք է փութան դիմել տեսչութեան հասցէին :

COLLÈGE ARMÉNIEN SAMUEL MOORAT
26, Rue Troyon, SEVRES (S. et O.)
Tél. : OBS. 18-28

Եւրոպայի մէջ, հայ մանչերու համար հիմնուած, ֆրանսական եւ հայկական ուսումնական կատարեալ ծրագիրներով օժտուած մեծագոյն եւ ծաղկեալ ուսում – նարանն է Սեւրի Սամուէլ Մուրատեան վարժարանը, որուն սեմէն ներս հայ մա – նուկին հոգին, միտքը եւ մարմինը կը մեծնայ, կը ծաղկի եւ կ'ընդլայնի բաղ – ձալի համեմատութիւններով :

ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ

Կապոյտ Խաչի Վիէնի մասնաճիւղի տարեկան դաշտահանդէսը տեղի կ'ունե – նայ Սեպտեմբեր 1ին, առաւօտէն մինչեւ երեկոյ «Իւ–էս–Ա.»ի մարզադաշտին վրայ (Թանըրիին քով):

Գեղարուեստական ճոխ բաժին: Բանա – խօսութիւն, երգ, արտասանութիւն եւ հայկական պարեր:

Ճոխ պիւֆէ. աղանդերներ եւ շամփու – րով խորոված:

Սիրով կը հրաւիրուի գաղութի հա – յութիւնը:

Անձրեւի պարագային «Խաժակ» սրահը:

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

ԼԻՈՆ.— Ֆր. Կապ. Խաչի Օրը կը տօն – ուի մեծ պատրաստութեամբ, 27 Հոկտ. Մոլիէրի շքեղ սրահին մէջ:

×

Հ. Բ. Ը. Միութեան Տիկնանց յանձ – նախումբը կը խնդրէ կազմակերպութիւն – ներէն նկատի ունենալ հետեւեալ թուա – կանները .—

ՀՈԿՏԵՄԲԵՐ 1, Երեքշաբթի երեկոյ Տիկնանց յանձնախումբի կողմութեան Գ. տարեդարձին առթիւ գեղարուեստական երեկոյթ :

ՀՈԿՏԵՄԲԵՐ 19, ցուցահանդէս հայ արուեստագէտներու նկարիչ, արձանա – գործ եւ փորագրիչներու գործերուն :

Հայկական Թանգարանը, 52 Ավընիւ Ֆոշ, (Փարիզ 16):

ԴԵԿՏԵՄԲԵՐ 7, 8, 9, 10, «Բարենպա – տակ վաճառք »:

Յառաջիկային պիտի տրուին մանրա – մասնութիւններ :

×

Մարսէյլի մէջ Դաշնակցութեան Օրը կը տօնուի Հոկտեմբերի 5ին Սալոն Ալ – համպրա:

ՍԱԿԱԳԻՆ ԸՆԹԱՑԻԿ ԱԶԴԵՐՈՒ

ՄԷԿ ԱՆԳԱՄՈՒԱՆ ՀԱՄԱՐ

ՄԱՀԱԶԴ	35 Ֆ.	մինչեւ 1/4 սիւնակ
ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ	15 Ֆ	մինչեւ 1/8 սիւնակ
ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ	10 Ֆ.	» » »
ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ	20 Ֆ.	» » »
ՀԱՐՍԱՆԻՔ, ՆՇԱՆՏՈՒՔ	20 Ֆ.	» » »
ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ	10 Ֆ.	» » »
ԾՆՈՒՆԴ	20 Ֆ.	» » »
«ՓՈԽԱՆ ԾԱՂԿԵՊՍԱԿԻ»	10 Ֆ.	» » »
«ԿԸ ՓՆՏՌՈՒԻ»	5 Ֆ.	» » »
ԾԱԽՈՒ Է	20 Ֆ.	» » »

Այս գիները մէկ անգամ հրատարակելի եւ նշանակուած ծաւալով ազ – դերու համար են, չորրորդ էջը :

Կանխիկ վճարումը պարտաւորիչ է:

Առեւտրական կամ այլ ազդերու մասնաւոր պայմաններուն համար դիմել վարչութեան :

ՀՐԱՆՏ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

51, Rue Monsieur-le-Prince, PARIS - 6e — Chèque Postal : 1278-35

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՇԻՐՎԱՆԶԱԴԷ, Երկերի ժողովածու, 10 հատոր լաթակազմ	70 Ֆր.
ՍՏԵՓԱՆ ԶՈՐԵԱՆ, Երկերի ժողովածու, 7 հատոր, լաթակազմ	56 Ֆր.
ՍՏԵՓԱՆ ԶՈՐԵԱՆ, Պապ թագաւոր, լաթակազմ	10 Ֆր.
ՍՏԵՓԱՆ ԶՈՐԵԱՆ, Հայոց բերդը, լաթակազմ	8 Ֆր.
ՎԱՀԱՆ ՏԷՐԵԱՆ, Երկերի ժողովածու, 2 հատոր լաթակազմ	14 Ֆր.
ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՒԻԹ, մեծադիր, գունաւոր նկարներով, լաթակազմ	10 Ֆր.
Վ. ԱՆԱՆԵԱՆ, Հայաստանի կենդանական աշխարհը, Բ.	8 Ֆր.
ԱՐՍԷՆ ՏԷՐՏԷՐԵԱՆ, Երկեր (Արովեան Պռօշեան, Պարոնեան)	17 Ֆր.
ՄՈՒՐԱՑԱՆ, Պատմուածքներ, գունաւոր նկարներով	5 Ֆր.
ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑԻ մասին յիշողութիւններ. լաթակազմ	7.50 Ֆր.
ՄԻՔ. ՇԱԹԻՐԵԱՆ. Գարունը նորից եկաւ. 296 էջ.	5 Ֆր.
ԱԲԳԱՐԵԱՆ. Մատենադարան (անգլ.) 18 գունաւոր մանրանկարներ	3 Ֆր.
ՀԵՆՐԻԿ ԹՈՒՄԱՆԵԱՆ. Երգի ծնունդը. բանաստեղծութիւններ	3.85 Ֆր.
Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ. Տաղեր, 200 էջ. լաթակազմ	3.50 Ֆր.
ՍՈՎԵՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ. Ա. 800 էջ. լթկզմ.	16 Ֆր.
ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ, Անլռելի զանգակատուն, Պէյրութ, 1963	10 Ֆր.

Առաքման ծախքը գնողին վրայ

ԳՐԱՏՈՒՆՍ ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻՆ Է
ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՁԱՅՆԱԳՐԵԱԼ ԲՈԼՈՐ ԵՐԿԵՐՈՒՆ
ՃՈԽ ՄԹԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԵՒ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆՑ

ՅԱՌԱՋ

Le PREMIER QUOTIDIEN ARMENIEN en EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction et Administration : 32, Rue de Trévise - PARIS-9e

Fondé en 1925 — Téléph. : PRO. 86-60

R. C. Seine 57 A 2731 — C. C. P. Paris 15069-82

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա՝ Տար. 50 Ֆ. — Վեցամսեայ՝ 27 Ֆ.

Արտասահման՝ Տար. 60 Ֆ. — Հատը 0.30 Ֆ.

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 28 ՕԳՈՍՏՈՍ

MERCREDI 28 AOUT 1963

LE NUMERO : 0,30 FR.

39րդ ՏԱՐԻ — Թիւ 9693

Fondateur : SCHAVARCH MISSAKIAN

39e ANNÉE — No 9693

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ՊԱՆՔ ՕԹՈՄԱՆ

Ա.

Հայ յեղափոխութեան պատմութեան մէջ եզակի դէպք մըն է Պոլսոյ Օսմանեան Դրամատան գրաւումը, բուռ մը անձնազոհ երիտասարդներու կողմէ 1896 Օգոստոս 14-26ին:

Հ. Յ. Դաշնակցութիւնը հինգ տարե – կան էր տակաւին: Սակայն արդէն ունէր ամէնէ կազմակերպութիւն մը օսմանեան կայսրութեան մայրաքաղաքին մէջ:

Հակառակ սուլթան Համիտի անթիւ լրտեսներուն, կուսակցութիւնը յաջողած էր «սուրբ գործին» շուրջ համախմբել մեծ թիւով հայ երիտասարդներ, որոնց շարքին գաւառական ուսանողներ եւ աշխատելու համար գաւառէն Պոլիս եկած «պանդուխտ»ներ:

Դաշնակցական առաջին գործիչն էր Յովհաննէս Եուսուֆեան, որ կարեւոր դեր մը կատարած էր Ամերիկայի մէջ կուսակցութեան մասնաճիւղեր կազմելու համար եւ գաղտնօրէն մտած Պոլիս:

Անձնուէր գործիչներ, գաղափարական ուսանողներ Համիտեան բռնակալութեան ամէնէն դաժան օրերուն մահը աչք առած վտանգի ափերուն վրայ նուիրուած էին կուսակցական աշխատանքի: Յիշենք քանի մը անուններ.— Բաբգէն (Փարեան), Ա. Վռամեան (Օննիկ Դերձակեան), Արտաշէս Դեւեան (Եգիպտացի), Վարդգէս (Յովհ. Սէրէնկիւլեան), Յակոբ Գարակէօզեան (Ջաւէն), Տիգր. Գեւոնեան (Փաւքալ), Սարգիս Մինասեան, Վռամշապուհ Քէնտիրեան, եւայլն, շատեր կեդրոնական վարժարաններէն:

1895ին եւ 1896ին համատարած ջարդեր կազմակերպուած էին հայաբնակ քաղաքներու մէջ, Տրապիզոնէն մինչեւ Ակն, հայկական վեց նահանգներէն մինչեւ Կիլիկիա:

Պերլինի դաշնագրի 61րդ յօդուածին երաշխաւոր վեց մեծ պետութիւնները 1895ին Ապտիւլ Համիտին ներկայացուցած էին Բարենորոգումներու ծրագիր մը, որ ծանօթ է «Մայիսեան Ծրագիր» անունով:

Կարմիր սուլթանը այդ Ծրագրին պատասխանեց ջարդերով, մեղսակցութեամբ մեծ պետութեանց,— հաւանաբար նաեւ անոնցմէ ոմանց քաջալերութեամբ:

1895ի աշնան ապստամբութեան դրօշ էր պարզած հերոս Զէյթունը, պարտութեան մատնելով թրքական բանակը:

Մէկ կողմէ պետութեանց մրցակցութիւնը քաղաքական դետնի վրայ, միւս կողմէ Ապտիւլ Համիտէն հասութթարեր նոր մենաշնորհներ կորզելու ընչաքաղցութիւնը աւելի դաժան կը դարձնէին արիւնարբու Համիտը, որ անպատիժ կը շարունակէր իր ջարդի քաղաքականութիւնը:

Մէկուկէս տարուան ընթացքին երեք հարիւր հազար Հայեր կը ջարդուէին Եւրոպայի հիւպատոսներու աչքերուն առջեւ: Անտարբեր կը մնային երաշխաւոր մեծ պետութիւնները: Լորտ Սալըզպըրի Գլատսթոնի նման ձեռքերը կը լուար՝ անզգուշօրէն յայտարարելով թէ իրենն վեհափառութիւն Վիկտորիա թագուհիի մարտանաւերը չէին կրնար Արարատի վրայ բարձրանալ...

Մեծ պետութեանց անհոգութեան եւ Ապտիւլ Համիտի անպատիժ գործունէութեան վերջ տալու, քաղաքակիրթ աշխարհի ուշադրութիւնը հրաւիրելու եւ հայկական բարենորոգումներու գործադրութիւնը պարտադրելու նպատակաւ էր, որ Հ. Յ. Դաշնակցութեան գերագոյն

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՔԵՆԸՏԻ ԿԸ ԳՐԷ ՏԻԷՄԻ

ՄԻՆՉ ՆՈՅՆ ՇՓՈԹ ՎԻՃԱԿԸ

Քապոթ Լոճ որ ամերիկեան նոր դեսպանն է Սայկոնի, ընդունուեցաւ նախագահ Տիէմի կողմէ եւ անոր յանձնեց Քենըտիի մէկ անձնական նամակը: Նոր դեսպանը թէեւ ոչ մէկ յայտարարութիւն ըրած է, բայց Սայկոն ապրող Ամերիկացիներուն կարծիքով Քապոթ Լոճ քիչ մը ուշ ընդունուած է. այլ խօսքով՝ Տիէմ ոչ մէկ փութկոտութիւն ցոյց տուած է ընդունելու համար Ամերիկացին: Այս կը նշանակէ նաեւ թէ իշխանութիւնները որոշ հեռաւորութիւն մը կ՚ուզեն պահել Ուաշինկթընէն: Ըսուեցաւ նաեւ թէ Ամերիկա վերջնագիր մը տուած է Տիէմի յայտնելով թէ անմիջապէս պիտի դադրեցնէ իր ամենօրեայ օժանդակութիւնը եթէ Տիէմ չփոխէ իր քաղաքականութիւնը:

Ֆրանսա ապրող Վիէթնամցի պարագլուխ մը յայտարարեց թէ համայնավարները կը յաղթեն, եթէ Տիէմ իշխանութեան գլուխ մնայ: «Բացի իր ընտանիքէն, Տիէմ ոչ մէկու համար վստահելի է: Ութ տարիէ կը թունաւորէ Միացեալ Նահանգները»:

Սայկոնի արքեպիսկոպոսը հովուական թուղթի մը մէջ որ հրատարակուած է Օգոստոս 15ին, կը յայտնէ թէ քրիստոնեայ եւ պուտտայական իրենք զիրենք պիտի պաշտպանեն համայնավարութեան դէմ:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՏԻ ՍԹԵՖԱՆՕ աղատ արձակուեցաւ փոքր յապաղումով մը: Մամուլի ասուլիսի մը ընթացքին ֆութպոլի ախոյեանը յայտարարեց թէ քաղաքականութեամբ չի զբաղիր այդ պատճառաւ չուզեր բացատրել թէ ինչո՞ւ զինքը առեւանգած են: Շեշտած է թէ շատ լաւ վարուած են հետը:

100.000 ՍԵՒԵՐ «Ազատութեան տողանցքը» պիտի կատարեն Ուաշինկթընի վրայ: Անձնաւորութեանց կարգին կը յիշուին Ժոզէֆին Պէյքըր, Պըրթ Լանքասթըր: 10.000 ոստիկաններ պիտի ջանան «կառավարել» այս ցոյցը, որպէսզի միջադէպեր չպատահին:

ԼՈՆՏՈՆԷՆ արեւելեան Պերլին մեկնած է աշխարհահռչակ երգիչը՝ Փօլ Ռոպսոն: Ծանօթ է որ համայնավարամիտ այս արուեստագէտը վերջերս յայտարարութիւններ ըրած էր, իր յուսախաբութիւնը յայտնելով խորհրդային վարչակարգէն (յիշած էր նոյնիսկ Հայերը...): Իր խորհրդաւոր մեկնումը Լոնտոնէն, կնոջը հսկողութեան տակ, առեւանգումի տպաւորութիւն մը թողած է եւ Փօլ Ռոպսոնի յայտարարութիւնը որ կը հերքէ նման վարկած մը, շատ չի համոզեր:

ԵՐԿԱԹՈՒՂԻԻ ծանր արկած մը պատահած է Լիոնի մօտ փապուղիի մը մէջ: 8 մեռեալ եւ մօտ 20 վիրաւոր կայ:

մարմինը որոշած էր գրաւել Պանք Օթոմանը:

Աննախընթաց սխրագործութիւն մը, որ կոչուած էր հարուածելու միջազգային դրամատիրութիւնը եւ ցնցելու Եւրոպայի խիղճը:

ՀՐԱՆՏ - ՍԱՄՈՒԷԼ

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ

ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁԻ ՊԱՏՈՒԻՐԱԿԻՆ ՀԵՏ

ԽՄԲ.— Այժմ կը ներկայացնենք տեսակցութիւն մը, զոր ունեցած է ռամկավար թերթերու թղթակիցը՝ Գահիրէի մէջ: Այս տեսակցութեան մէջ շատ հետաքրքրական են հարցումները, որոնք բանաձեւուած են քննադատական ոգիով:

Այս տարի հայրենիք մեկնիլ ծրագրողները սկսած էին անհամբերութեան նշաններ ցոյց տալ, նկատելով որ կ՚ուշանար հայրենադարձի լիազօր պատուիրակը: Սկսած էր տիրել անորոշութեան մթնոլորտ մը. որովհետեւ, եթէ Սեպտեմբերին պիտի մեկնի հայրենադարձի կարաւանը, ներգաղթողները գոնէ վեց ամիս ժամանակի պէտք պիտի ունենան՝ իրենց անձնական եւ ընտանեկան գործերը կարգադրելու եւ անցագրի ու տուրքերու ձեւակերպութիւնները լրացնելու համար:

Երկար սպասումէ ետք, բարեբախտաբար հասաւ հայրենադարձի պատուիրակը եւ վերջ տուաւ այս անորոշ կացութեան: Իր ժամանումը իմանալով՝ փութացինք իր մօտ, լուսաբանութիւններ խնդրելու իրմէ՝ այս տարուան կարաւանին եւ ընդհանրապէս հայրենադարձի շարժումին մասին: Պ. Ռուբէն Թումանեան սիրայօժար պատասխանեց մեր հարցումներուն:

ՀԱՐՑՈՒՄ.— Պ. Թումանեան, դուք այս տարի առանձի՞ն պիտի տանիք հայրենադարձի աշխատանքները:

ՊԱՏԱՍԽԱՆ.— *Ինձ հետ ճանապարհ ելաւ նաեւ մի ուրիշ ընկեր,, Աշոտ Նանաղիւլեան, որ նաեւ մէջ անհանգստանալով իջաւ Պուլկարիոյ Վառնա քաղաքը: Յոյսով եմ որ նա շուտով կը լաւանայ եւ կը հասնի Գահիրէ: Մինչ այդ, սակայն, մենք կը սկսենք մեր աշխատանքներին:*

Հ.— Մեծ երջանկութիւն է ողջունել ձեզ որպէս հայրենադարձի պատուիրակ: Սակայն, ԱՒԵԼԻ ՅԱՐՄԱՐ ՉԷ՞Ր ՈՐ ԱՄԷՆ ՏԱՐԻ ՆՈՅՆ ՊԱՏՈՒԻՐԱԿԸ ԳԱՐ, ՈՐՊԷՍԶԻ ԳՈՐԾԻՆ ԳԼՈՒԽԸ ՏԵՂԵԱԿ ՄԷԿԸ ԳՏՆՈՒԷՐ: Այսօր, դուք ստիպուած էք սկիզբէն ուսումնասիրել այն բոլոր աշխատանքները, զորս Պ. Պ. Շահինեան եւ Մելքումեան արդէն կատարած էին անցեալ տարի:

Պ.— *Ի հարկէ էդպէս աւելի յարմար կը լինէր: Սակայն, ընկ. Շահինեանի գործերը թոյլ չտուեցին, որ նա գործուղուի արտասահման:*

Հ.— Դուք ի՞նչ մասնագիտութիւն ունիք:

Պ.— *Ես քիմիագէտ եմ եւ յատկապէս ձգախէժի մասնագէտ: Իսկ պաշտօնով՝ Գերագոյն Խորհուրդի մէջ ժողովրդային տնտեսութեան վարիչն եմ:*

Հ.— Ձեր մասնագիտութիւնը ի՞նչ ձեւով կը կապուի հայրենադարձին: (ՅԱՌԱՋ.— Հետաքրքրական է հարցումը, զոր կարելի է ընդունիլ նաեւ իբրեւ հեգնանք):

Պ.— *Չէ՞ որ ես ժողովրդային տնտեսութեան վարիչ եմ եւ հետեւաբար ինծի լաւ ծանօթ է մեր երկրի տնտեսութիւնը: Ուրեմն, լաւ եմ իմանում թէ ո՛ւմ ո՛ր քաղաքում եւ ի՛նչ գործի մէջ պէտք է տեղաւորել: Մեր պետական աշխատողների մօտ սահմանափակում չկայ, մէկը կարող է մի մարզի մէջ մասնագէտ լինել, սակայն տեղեակ կը լինի երկրի ամբողջ տնտեսութեան: Հետեւաբար, կարող է նաեւ իմանալ թէ ի՛նչպէս հարկ է տեղաւորել հայրենադարձները:*

Հ.— Ի՞նչ օտար լեզու գիտէք բացի ռուսերէնէն (ՅԱՌԱՋ.— *Այսինքն գիտէ՞ք օտար լեզու մը՝ երբ կուգաք աշխատիլ օտար երկրի մէջ*):

Պ.— *Բառարանի օգնութեամբ կարող եմ հասկանալ գերմաներէն: Ուրիշ լեզու չգիտեմ: Մեր սերունդը համընկնեց պատերազմների շրջանին եւ մեզ համար հնարաւոր չեղաւ ամէն ինչ սովորել: Այժմ նոր սերունդը սովորում է անգլերէն, ֆրանսերէն, գերմաներէն եւ այլ լեզուներ: Իմ երեխէքը իմանում են անգլերէն լեզուն:*

Հ.— Այս տարի քանի՞ հոգի պիտի տանիք Հայաստան:

Պ.— *Ստոյգ թիւ չեմ կարող որոշել ներկայումս: Արձանագրուողներ շատ կան: Պէտք է իւրաքանչիւր ընտանիքի պարագան նկատի ունենալ եւ տեսնել թէ ո՛րտեղ կարելի է տեղաւորել նրան: Գուցէ ես կամ ընկերս, մի քանի օրով մեկնենք Հայաստան եւ այդ ստուգումները կատարենք: Կարող է պատահել նաեւ, որ այդ գործը կատարենք փոստով: Մեր մտահոգութիւնը այն է, որ հայրենադարձները հէնց առաջին օրից ունենան բնակարան եւ գործ: Այս տուեալներով էլ՝ ինչքան կարող ենք, պիտի տանենք: Այս տարի հաւանաբար աւելի մեծ թիւով հայրենադարձներ լինեն: Հայրենադարձը չի կասելու, ամէն տարի լինելու է եւ ամէն տարի՝ աւելի մեծ թիւով լինելու է:*

(Մնացեալը յաջորդով)

ԱՆՔԱՐԱՑԷՆ կը հաղորդեն որ Օգոստոս 18ին ձերբակալուած 17 հոգիներուն վրայ, վեց հոգի զինուորական ատեան պիտի քշուին:

ՆԱԽԱԳԱՀ ՏԸ ԿՈԼ Թեհրան պիտի երթայ Հոկտեմբեր 16ին: Պաշտօնական հիւրերու կարգին Պարսից Շահը պիտի ընդունի նաեւ Հոլանտայի Ժիւլիանա թագուհին եւ ամուսինը, Հայրիխ Լիւպքէ՝ Դաշնակցային Հանրապետութեան նախագահը եւ Բրեժնեւ՝ Խորհ. Միութեան նախագահը:

ՖՐԱՆՍԱՅԻ վարչապետը որ Քովէնհակ է քանի մը օրէ, յայտարարեց թէ միացեալ Եւրոպա մը անհրաժեշտ է: Վարչապետը Փարիզ կը վերադառնայ այսօր:

ՄԵՐ ԱՅՑԵԼՈՒՆԵՐԸ

Խմբագրատուն այցելեցին.— Ընկ. Յովհաննէս Թորիկեան, *ծանօթ դեղագործարանատէրը, որ քանի մը օր անցընելէ ետք Փարիզի մէջ, մեկնեցաւ Պէյրութ, ազգականներուն մօտ, — կը վերադառնայ Սեպտեմբերի կիսուն, Փարիզի վրայով, իր բնակավայրը Քուինզ Վիլէճ (Ամերիկա):*

Սարգիս Տէյիրմէնճեան, *ֆութպոլի միջազգային իրաւարար, որ Պէյրութէն անցած է Պոլիս կարճ սքաժի մը համար եւ Սեպտ. 21էն 29 պիտի ըլլայ Նափոլի, մասնակցելու համար միջերկրականեան ողիմպիական խաղերուն:*

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ՊԵՐԼԻՆԷՆ ԼՕԶԱՆ

Ռուս արտաքին նախարար Լոպանով կը պատասխանէ. «Անգլիա կ'ուզէ գրաւել բոլոր դռները, բայց այդ մէկը պիտի չունենայ»: Կանխելու համար անգլիական գրաւում մը՝ դեսպան Նելիտով մաքոքի նման պիտի բանի Պոլսոյ եւ Փեթերպուրկի միջեւ Ռուսիոյ Սեւ Ծովու նաւատորմը Պոլիս բերելու համար: Մայրաքաղաքին մէջ նոր շարժում մը պատրուակ պիտի ըլլար Վոսփորը գրաւելու: Նոր Արտաքին նախարար Մուրաւիեւ Փարիզ կ'երթար Հանոթոն համոզելու, բայց Ֆրանսայի Արտաքին նախարարը կ'ընդդիմանար, կ'անցնէր Պերլին, ուր Վիլհելմ կայսրը կը հաւաստէր, թէ համաձայն էր արեւելքի ղոյավիճակի պահպանման: Նելիտովի առաջարկը կը մերժուէր եւ արդէն 1898ին կը հեռացուէր Պոլսէն հաւատարիմ գործակից Մաքսիմովի հետ:

Քննելի են երկու կէտեր՝ «ցարը համամիտ էր Նելիտովի ծրագրին»: Երբ Նիքոլա Անգլիա այցելեց, Վիքթորիա թագուհին եւ Սալզպրի Պալմորալի մէջ առաջարկեցին համաձայնութեան մը գալ, պահընկէց ընել սուլթանը եւ նեղուցներու հարցը կարգադրել, Նիքոլա մերժեց: Պէտք չկար Սեւ Ծովու տորմիղը շարժման մէջ դնելու:

Հաւատալի չէ որ Նելիտով «համոզուած պաշտպանն ըլլայ ռուս միջամտութեան անհրաժեշտութեան՝ հայկական հարցի մէջ»: Թուրքեւռուս հաշտութեան նախագիծը պատրաստուած էր Նելիտովի կողմէ եւ յանձնուած Բ. Դրան, երբ Իկնատիեւ Փեթերպուրկ մեկնած էր: Պատրիարքը յայտարարեց ընդհ. ժողովին մէջ. «Նախագիծին մէջ Հայերուս համար տրամադրութիւն մը չկար, սրբազան եղբայրներուս հետ խորհրդակցելով գործի ձեռնարկեցինք»: Իկնատիեւ վերադարձին ցաւ յայտնեց, որ առանց իր ներկայութեան նախագիծը յանձնուած է: Պատրիարքը դիմեց «դաշնակար» Մեծ Դուքսին եւ Իկնատիեւ ստիպուեցաւ հեռագրով ցարին հաւանութիւնը ստանալ յօդուած մը զետեղելու համար: Հաւանական է, որ Նելիտով եւ Մեծ Դուքսը ընդդիմացած ըլլան եւ տեղի տուած՝ Իկնատիեւի պնդումին եւ ցարին հաւանութեան: Հեռագրին պատճէնը հրատարակուած չէ: Դեսպան Քամպոն կը կասկածէր Նելիտովի յաճախակի պալատ այցելելէն: Ռուս հրապարակագիր մը Նելիտովի կը վերագրէր «Զարդէ՛ վեհ, Տէր» խօսքը և Լէօ կ'աւելցնէր թէ մինչեւ այսօր հերքուած չէ վերագրումը:

Համիտ տեղի տալով Սելանիկի շարժումին, ստիպուեցաւ հռչակել միտհատեան սահմանադրութիւնը: Քրիստոնեաներ եւ իսլամներ ողջագուրուեցան եկեղեցիներու եւ մզկիթներու մէջ: Ցնծութեան տօն էր բովանդակ կայսրութեան մէջ: Սահմանադրական դրօշը կը ծածանէր ամենուրեք, «Ազատութիւն, Հաւասարութիւն, Եղբայրութիւն, Արդարութիւն» վերտառութեամբ: Ազատութիւն՝ մամուլի եւ խօսքի, հաւասարութիւն՝ ցեղերու, արդարութիւն՝ ամէն անհատի, օրէնքի առջեւ ամէնուն հաւասարութիւնը որպէս քաղաքացի, ո՛չ տիրող, ո՛չ հպատակ: Հայերը հաւատացին, թէ Թուրքիա պիտի ըլլար խոստացուած դրախտավայրը: Յուսախաբ եղան, երբ Ատանայի կոտորածը տեղի ունեցաւ: Երիտասարդ Թուրքերը սկսան քաղաքական միութեան աշխատիլ, թրքացնել այլատարր ժողովուրդները, կեդրոնացնել կառավարութիւնը, մինչդեռ կայսրութիւնը բաղկացնող տարրերէն ոչ մէկը կը մտածէր հրաժարիլ ազգութենէն. իւրաքանչիւրն ունէր իր աւանդութիւններն ու դաւանանքը: Աւստրիա գրաւեց Պոսնիան, Իտալիա՝ Թրիփոլին, Պալքանները շարժեցան եւ Թուրքիա պարտուեցաւ: Երիտասարդ Թուրքերը Եւրոպայէն հեռանալով դարձան արեւելք, Համիտի օրերը վերադարձան:

1912ի սկիզբը Էջմիածնի կաթողիկոսը Պօղոս Նուպար փաշայի պաշտօն տուաւ պետութեանց մօտ դիմումներ կատարելու, բարենորոգումներու իրագործման ռուս հակակշռին տակ: 1912 Նոյեմբեր 26ին Պոլսոյ ռուս դեսպանն ալ Սազոնովին կը գրէր Հայերու տխուր կացութիւնը յայտնելով, թէ «Հայերուն աչքերը դարձած են Ռուսիոյ, հիւպատոսներ կը վկայեն Հայերու հոգեկան վիճակը, կը խնդրեն բարենորոգումներ ռուս հակակշռին տակ, նոյնիսկ ռուսական գրաւում»: Դեսպանին համաձայն, հայկական հարցը կարեւոր էր Ռուսիոյ համար, ուստի ռուս կառավարութիւնը ստանձնելու էր բարենորոգումներու նախաձեռնութիւնը, իսկ եթէ անիրականալի ըլլային՝ պատրաստուելու էր գրաւելու հայկական հողամասը: Սազոնով կը հրահանգէր դեսպանին դիմել Բ. Դրան եւ յայտնել թէ հայկական հարցը չլուծուելու պարագային, եւրոպական միջամտութիւն մը կրնար տեղի ունենալ եւ սահմաններուն վրայ խռովութիւններ ծագելու պարագային ալ «անբաղձալի ընթացումներ» կը ստեղծուէին: Ժամանակը յարմար չէր Ռուսիոյ համար, միջազգային ձեռնարկ մը կատարելու համար: Ռուս դեսպանը կը թելադրէր ռուսահայ Տոքթ. Զաւրիեվի. «Կայսերական կառավարութիւնը կը հետաքրքրուի Հայաստանի ճակատագրով, սակայն Հայերը աչքէ հեռացնելու չեն ներկայ վայրկեանի բացառիկ պայմանները, ծանրացնելու չեն կացութիւնը անխոհեմ գործերով, անհրաժեշտ է որ Հայերը մնան Թուրք կամայականութեան զոհեր, գրգռելու չեն Թուրքերը, Եւրոպայի ներկայացնելու չեն ոչ մէկ տեսակի քաղաքական պահանջներ»:

Նոյն խորհուրդը կու տայ Փարիզի դեսպան Իզվոլսքի Պօղոս Նուպարի: Նախաձեռնութիւնը Ռուսիոյ մնալու էր եւ ոչ թէ Եւրոպայի, Հայերը սպասելու էին ռուսական կարգադրութեանց: Հեղինակը կ'ենթադրէ, թէ հայկական շարժում մը միջազգային միջամտութեան պատճառ պիտի ըլլար կամ Ռուսիոյ համար ծանր աղէտ մը պիտի ըլլար, եթէ հայկական լաւ առաջնորդուած ըմբոստութիւն մը պատճառ ըլլար արեւելեան սահմաններուն վրայ ինքնավար Հայաստանի մը ստեղծումին: Մուխթար փաշա կը կարծէր, թէ «Ռուսիա կը փափաքէր օգտուիլ Թուրքիոյ տագնապալի կացութենէն եւ տկարութենէն՝ պահանջելու համար Պերլինի դաշնագրով արեւելեան նահանգներու վերաբերեալ բարենորոգումներու իրագործումը»:

Լոնտոնի Թուրք դեսպան Թեւֆիք փաշա Անգլիոյ կը դիմէր՝ խորհրդականներ տրամադրելու արեւելեան վերակազմութեան համար: Լուրը բուռն յուզում կը պատճառէր Փեթերպուրկի մէջ: Լոնտոնի ռուս դեսպան Պենքենտորֆ անգլիական կառավարութեան կը յայտնէր, թէ ռուս կառավարութիւնը անտարբեր չէր կրնար մնալ ռուս կայսրութեան սահմաններուն մօտ կատարուելիք բարենորոգումներուն: Սազոնով կը զարմանար, որ անգլեւթուրք ուղղակի համաձայնութիւն մը տեղի կ'ունենար, մինչդեռ Փոքր Ասիոյ հարցերը կարգադրուելու էին ընդհանուր շրջանակի մը մէջ: Սազոնով կը մտահոգուէր, որ Թուրքիոյ հաւանութեամբ Անգլիա կը ստանձնէր բարենորոգումներու իրագործումը եւ Պերլինի դաշնագիրը ստորագրող պետութեանց կը դիմէր հաւանաբար քննելու բարենորոգումներու հարցը, Հայերով բնակուած Թուրք նահանգներու մէջ անդորրութիւնը հաստատելու համար: Ֆրանսայի Արտ. նախարար Փիշոն Լոնտոնի ֆրանսական դեսպան Քամպոնի միջոցով կը հաղորդէր Արտաքին նախարար Կրէյի, թէ համաձայն է Անգլիոյ կողմէ ոստիկանական կազմակերպութեան արեւելեան նահանգներու մէջ, իսկ Ֆրանսա պիտի ղրկէ ելմտական խորհրդականներ, մերժումի պարագային Թուրքիա կրնայ դիմել Գերմանիոյ:

Ռուսիա պիտի մերժէր երկուքին մասնակցութիւնը եւ չէր հաւատար, որ Թուրքիա Գերմանիոյ կը դիմէ:

Իրականութեան մէջ Սազոնով ուզած էր Թուրքիոյ հետ ուղղակի բանակցութեամբ կարգադրել Նեղուցներու հարցը եւ Թուրքիա հաղորդելով Լոնտոնի ռուս առաջարկը՝ փափաքած էր վերանորոգել Կիպրոսի Համաձայնագիրը: Ինչպէս 78ին եւ 95ին, այս անգամ ալ Ռուսիա կ'ընդդիմանար անգլիական միջամտութեան: Լոնտոնի եւ Փարիզի դեսպաններուն միջոցով կը հաղորդէր, թէ Կիպրոսի Հայերուն խոստացած էր պաշտպանել Թուրքիոյ Հայերը: Սազոնով կը յայտնէր անգլիական դեսպանին. «Եթէ խռովութիւններ կամ կոտորած ծագին արեւելեան նահանգներու մէջ, Ռուսիա պիտի միջամտէ, պիտի չկրկնէ Լոպանովի սխալը 1895ին, երբ անտարբեր մնաց Հայերու կոտորածներուն հանդէպ»: Հրահանգեց Պոլսոյ դեսպանատան 1895ի մայիսեան ծրագիրը հիմ ունենալով պատրաստել բարենորոգումներու ծրագիր մը եւ ներկայացնել անգլիական եւ ֆրանսական դեսպաններուն եւ անոնց հաւանութիւնը ստանալէ ետք ներկայացնել միւս պետութեանց:

ԽՈՐԷՆ ԳԱԲԻԿԵԱՆ

(Շար. – 2)

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ԳԱՐԵԳԻՆ Ծ. Վ. ՍԱՐԳԻՍԵԱՆԻ ՀԵՏ

Ա.

Անթիլիասի Դպրեվանքի վերատեսուչ Գարեգին Ծ. վարդապետ Սարգիսեան, որ Քանատա գացած էր իբրեւ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան պատգամաւոր մասնակցելու Եկեղեցիներու Համաշխարհային Ժողովին, քանի մը շաբթուան համար Քանատայէն անցած է Միացեալ Նահանգներ: «Հայրենիք»ի խմբագրութիւնը շահեկան տեսակցութիւն մը ունեցած է Հայր Սուրբին հետ: Կուտանք նոյնութեամբ.—

Հ.— Ի՞նչ է ձեր վերջին առաքելութեան նպատակը:

Պ.— Միացեալ Նահանգներ այցելութիւնս պաշտօնական ոչ մէկ առաքելութիւն կ'ենթադրէ: Եկած էի պաշտօնական առաքելութեամբ մը՝ Քանատա, ուր, Մոնթրէալի մէջ, մասնակցեցայ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի «Հաւատք եւ Կարգ» կոչուած շարժումի կողմէ գումարուած Համաշխարհային ժողովին, որպէս պատգամաւոր Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան: Մոնթրէալէն Ամերիկա անցայ, անձամբ տեսնելու համար մեր կաթողիկոսութեան ենթակայ ազգային թեմի եկեղեցական կեանքի գլխաւոր երեսներն ու յատկանշական երեւոյթները՝ կարգ մը կեդրոններու մէջ, ինչպէս Նիւ Եորք, Ֆիլատելֆիա եւ Պոսթոն:

Հ.— Մոնթրէալի Համաժողովին օրակարգը ի՞նչ գծով կը շահագրգռէ Հայց. Եկեղեցին:

Պ.— Անհրաժեշտ կը զգամ նախ քանի մը բառերով ուրուագծել միայն նկարագիրն ու օրակարգը ժողովին:

«Հաւատք եւ Կարգ» անունին տակ ծանօթ շարժումը Ի. դարու եկեղեցական կեանքին մէջ միջազգային տարողութեամբ այն շարժումն է, որ որպէս նպատակ ունի համայնական, հասարակաց ճիգով ուսումնասիրութիւնը աստուածա-

ՍԱՅԱԹ – ՆՈՎԱՅԻ ԾՆՆԴԵԱՆ 250 ԱՄԵԱԿԸ

ՄԵԾ ԸՂՁԱՒՈՐՆ ՈՒ ԲԵՋԱՐԱԾԸ

Բայց անհատի եւ անհատականութեան բուռն զարգացման այդ ամբողջ շրջանում եւրոպական բազմալեզու բանաստեղծութիւնն ընթացաւ մի այնպիսի ուղղութեամբ, որ առաջին պահ առնուազն տարօրինակ է թւում: Այդ դարում, դարի մանաւանդ առաջին կէսում (որ համապատասխանում է Սայաթ-Նովայի ստեղծագործական կեանքին), բանաստեղծութեան յատկանիշներից գործում էր միայն մէկը՝ յանգաւոր չափածոն: Իսկ պոէզիայի տեսակարար շարժառիթը, որ ներշնչանք է կոչւում, ոչ միայն մոռացուել, այլեւ խայտառակ վռնտուել էր՝ ֆրանսիացի Բուալոյի եւ անգլիացի Պոպի օրերից սկսած: Բանաստեղծելիս աշխատեցնում էին մկանները, մինչդեռ պէտք է աշխատէին ջղերով: Գործում էր ուղեղը, մինչդեռ հոգու մասնակցութիւն էր հարկաւոր: Ողեշնչման տեղը գրաւել էին զատողութիւն ու սրամտութիւնը, պատկերաւորութեան տեղը բռնել էր պճնազարդ արհեստականութիւնը, տաղանդի տեղը՝ ստացական գիտելիքը:

Ինչքա՜ն ուզէք՝ խրատ ու քարոզ, խորհուրդ ու բարոյախօսութիւն: Որքա՜ն սրտներդ տայ՝ չափածոյ հռետորութիւն ու յանգաւոր հրապարակախօսութիւն, ցամաք ու երկարաբան նկարագրութիւններ, լաւագոյն դէպքում՝ սերովբէական երազկոտութիւն ու սալոնային լալկանութիւն, բայց ո՛չ ճշմարիտ արուեստի յաճախանք, բայց ո՛չ հոգու խռովք ու ոգու թեւաբախում:

Արդար ու խելացի, փայլուն ու հանճարեղ, սրամիտ ու խայթիչ, քնքոյշ ու նրբաշինող հազա՜ր մտքեր, խօսքեր, բայց... Բայց եթէ վերակենդանանար Դանըմարքայի Համլէտ կոչուած արքայազնը եւ, անգիր իմանալով իր արարչի «Սոնետներ»ը, սրանց հետ համեմատէր չափածոյ այն արտադրանքը, որ երեւան էր եկել Շէքսփիրեան «Սոնետներ»ից մէկուկէս-երկու դար յետոյ, — Համլէտն անկասկած կը կրկնէր իր հռչակաւոր խօսքը. «Բառե՛ր, բառե՛ր, բառե՛ր»...:

Եւ որքան հաւաստի է այս երեւոյթը, նոյնքան եւ առաւել հետաքրքրական է: Անհատի եւ անհատականութեան դարում անհատները ամբողջովին նուիրուած էին հանրայինին, հանրայինով էին ըղբաղուած այնպէս եւ այնչափ, որ սա-ղանցք իսկ չէր մնում անհատականի համար, առանց որի չի եղել ու չի կարող լինել ճշմարիտ ու մնայուն պոէզիա:

Դարն էր այդպիսին: Հարիւրամեակների ընթացքում կաշկանդուած մարդկային միտքը՝ այլեւս ազատուած կապ ու կապանքից, արդէն թօթափած հաւատալիք ու սնոտիք՝ գրաւել էր մարդու հոգեւոր կեանքի նոյնիսկ այն բնագաւառը, որ իրենը չէր: Կործանել էր պէտք ու կառուցել: Եւ այդ էլ անում էին՝ նաեւ չափածոյով: Հռետոր էր պէտք եւ ոչ թէ բանաստեղծ: Գործ էր պէտք եւ գործել էր հարկաւոր: Եւ գործում էին. աւելի գործում, քան... ստեղծագործում:

×

Իրաւացի են, ի հարկէ, գրականութեան պատմագիրները, երբ գրական դէմքերին նայում ու գրական դէպքերը դիտում են ակնոցով այն ժամանակների, որոնց ծնունդն են այդ դէմքերն ու դէպքերը:

Բայց արդէն անցեալ դարձած, այլեւս անցեալին պատկանող գրողներին, խակապէս ասած, այդ ակնոցն անկարող է օգնել, որովհետեւ մարդկանց կենդանութիւնը որոշւում է ոչ թէ ակնոցով, այլ աչքով. ա՛յն աչքով, որն ունի ընթերցողը՝ թէկուզ նոյնիսկ կարճատես, բայց ողջ ու կենդանի, առողջ ու ապրող ընթերցողը:

Ահա այսպէս՝ ոչ թէ ակնոցով, այլ աչքո՛վ նայելիս մենք նշմարում ենք վիթխարի համարուող մեծութիւններ, որոնք այլեւս պատկանում են գրականութեան պատմութեանը, այսինքն՝ [illegible], եւ ընդհակառակն՝ տեսնում ենք այն երջանիկներին, որոնք չեն տեղաւորւում գրականութեան պատմութեան պարունակի մէջ, ինչպէս ծառը՝ ջերմոցում, այսինքն՝ [illegible] են աչքի ներկայութեան մէջ:

Առաջինները նման են այն [illegible] տաճարներին, որոնց մէջ այլեւս ոչ ոք չի աղօթում: Դրանք սրբութեամբ պահպանւում են եւ պիտի պահպանուեն [illegible] միայն «պետութեան կողմից», այլեւ [illegible] լորիս, որ ժողովուրդ ենք [illegible] Պիտի՛ պահպանենք, բայց եւ [illegible] անժխտելին. հաստատենք, որ այնտեղ այլեւս չեն աղօթում:

Իսկ վերջիններս նման են այն [illegible] բաններին, որտեղ ապրում ենք՝ [illegible] խանում ու վշտանում, [illegible] յուսախաբւում: Ժամանակ առ ժամանակ նրանք պէտք են զգում ընդամէնը «[illegible] նորոգման», որ ինքներս ենք անում, [illegible] որից թարմանում են նրանք ու [illegible] կեանքը:

ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ

(Շար. – 3)

...բանական այն տարբերութիւններուն, որոնք եկեղեցիներու պառակտումի դժբախտ իրականութեան գոյառումին եւ զարգացման մէջ կարեւոր դեր են ունեցած պատմութեան մէջ, եւ ունին՝ մինչեւ այսօր: Վարչական, կազմակերպչական, ընկերային հարցերէն անդին՝ վարդապետական հարցերով զբաղող այս շարժումը, առհասարակ կը կոչուի համաձայն բացատրութեամբ մը, «Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի Ու-ըղը,— խորհող ու վերլուծող ուժը ամբողջ եկեղեցական միութեան (Էքիւմէնիքըլ մուվմընթ)» շարժումին:

Մոնթրէալի Համաժողովը չորրորդ համաշխարհային ժողովն էր այս շարժումին (Ա.ը գումարուած՝ Լօզանի մէջ, 1927ին, Բ.ը՝ Էտինպուրկ, 1937ին, Գ.ը՝ Լունտ, Շուէտ, 1952ին):

Առաջին երեք ժողովներուն՝ Հայց. Եկեղեցին դիտողներ էր ղրկած: Իսկ այս Դ. ժողովին՝ պաշտօնական ներկայացուցիչներ, պատգամաւորներ: Էջմիածնի կաթողիկոսութեան կողմէ ներկայ էր Գեր. Տ. Տիրան Արք. Ներսոյեան, եւ Կիլիկիոյ կաթողիկոսութեան կողմէ՝ ես, անձնապէս:

Մոնթրէալի Համաժողովի օրակարգը չեմ կրնար ներկայացնել իր մանրամասնութեանց մէջ: Այդպիսի փորձ մը՝ ձեր օրաթերթին բոլոր սիւնակները կրնար խճողել: Գլխաւոր նիւթը՝ Ս. Գիրքի եւ Աւանդութեան, Քրիստոսի եւ Եկեղեցւոյ յարաբերութեան հարցն էր, ինչպէս նաեւ պաշտամունքի եւ արդի աշխարհին եկեղեցւոյ նուիրապետութեան տարբեր հասկացողութեանց ու յատկապէս Մկրտութեան եւ Հաղորդութեան խորհուրդներու նոր ըմբռնողութեանց երեւոյթները, որոնք բազմաթիւ յատկանշական կողմեր կը պարզէին եկեղեցիներու միջեւ փոխադարձ հասկացողութեան եւ մերձման տեսակէտէն:

Գալով ձեր հարցումի բուն կէտին, կրնամ պատասխանել՝ ըսելով որ Հայց. Եկեղեցին, իր աստուածաբանական դարաւոր աւանդութեամբ, իր տեսակէտները յայտնելու առիթը ունեցաւ այս ժողովին՝ Արեւելեան քոյր եկեղեցիներու կողքին: Նման խօսակցութիւններ եւ յարաբերութիւններ առիթ կ'ընծայեն Հայց. Եկեղեցիին՝ ուղղակի հաղորդակից դառնալու նոր շարժումներու եւ իր անցեալը վերակենդանացնելու, եւ վերարժեւորելու զայն հարազատօրէն, պատկերացնելով միջազգային եկեղեցական ժողովներու մէջ:

Ի. դարը՝ կղզիացումի դար չէ, եւ Հայց. Եկեղեցին պէտք է քայլ պահէ ընդհանուր քրիստոնէութեան ընթացքին հետ, առանց չեղելու իր հայրերու աւանդութեան ոսկեծիր գիծէն:

Հ.— Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդը բաղկացուցիչ ազգերով կամ յարանուանական պատկերով ի՞նչ նկարագիր կը կրէ: Ի՞նչ կը մտածէ առհասարակ Եկեղեցիի դերին մասին՝ Խորհ. Միութեան մէջ: Ի՞նչ կը մտածէք դուք, անձնապէս:

Պ.— Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդը պաշտօնական ոչ մէկ վարդապետութիւն եւ յստակ տեսակէտ կը մշակէ եկեղեցւոյ դերի մասին, այն իմաստով, որով կազմակերպութիւն մը իր բաղկացուցիչ մարմիններու անունով կը մշակէ իրեն յատուկ ուղղութիւն մը: «Ե. Հ. Խ.»ը կը խուսափի դառնալ եկեղեցիներու վրայ կեցող հաստատութիւն կամ հեղինակութիւն: Ան կը ծառայէ եկեղեցիներուն որպէս հանդիպման վայր: Կազմակերպութիւնը գործնական նկարագիր ունի անոր մէջ. այսինքն՝ եկեղեցիները իրարու քով խմբելու եւ համագործակցութիւն առաջացնելու միտքով կը հասկնայ ան իր գոյութեան պատճառը: Առիթ կուտայ, որ եկեղեցիները բացուին իրարու, սերտանան կապերը եւ Ի. դարու հետզհետէ միջազգայնացող կեանքին մէջ՝ եկեղեցիները միասնական ճակատով եւ համայնական ճիգերով լսելի դարձնեն Աւետարանի ձայնը:

Այս նկարագրով կազմակերպութիւն մը ըլլալով՝ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդը պաշտօնական ոչ մէկ տեսակէտ յայտնած է եւ կ'ուզէ յայտնել Խորհրդային Միութեան մէջ կրօնքի ազատութեան հարցի առնչութեամբ: Ներկայիս, Խորհ. Միութեան երկիրներէն ներս գտնուող եկեղեցիներ անդամ են (1961էն սկսեալ) այս շարժումին: 201 անդամ եկեղեցիներու մէջ՝ փոքրամասնութիւն մըն են անոնք: Բայց, կը մասնակցին եկեղեցիներու միջեւ հետզհետէ իրագործուող այս մերձեցման շարժումին որպէս եկեղեցիներ: Անտարակոյս, եկեղեցիները տեւական հսկողութեան տակ են Խորհ. Միութենէն ներս: Բայց նոյնքան ճիշդ է նաեւ, որ հակառակ հալածանքին, թշնամութեան եւ վարկաբեկումի մոլեգին ճիգին, կրօնքը ջնջուած չէ Խորհ. Միութենէն ներս եւ չի կրնար ջնջուիլ: Ազգութեան գաղափարի պարագան նոյնն է որոշ չափով եւ դուք ինձմէ լաւ գիտէք որ հակառակ բուռն պայքարին կարելի չեղաւ Խորհ. Միութենէն ներս ազգային տարբերութիւնները նիւթապաշտական վարդապետութեան մը հասարակաց յայտարարին տակ լուծել եւ ջնջել: Իմ անձնական տեսակէտս այն է որ եկեղեցիներուն տրուած սահմանաւոր, հակակշռուած «ազատութիւն»ը փաստն է որ կրօնքի ուժին դէմ Խորհ. Միութեան պայքարը չէ հասած իր նպատակին եւ ես կը հաւատամ որ չի կրնար ալ հասնիլ:

ԽԱՓՇԻԿԵԱՆ ԱՌԱԾՆԵՐ

— Ծոյլին համար ամէն օր կիրակի է:

— Առաւօտեան մէկ ժամը երեկոյեան երկու ժամէն աւելի լաւ է:

—Եթէ կ'ուտես՝ ծամէ, եթէ կը խօսիս՝ մտածէ:

ՃԷՄՊՈՐԻՆ ՎԵՐՋԱՑԱՒ

ՀՌՈԴՈՍԻ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

Մարաթոնի միջազգային ճամբարը վերջացաւ: Մեծ յաջողութիւն Յունաստանի համար, որ կրցաւ 14.000 սկաուտներ համախմբել՝ միջազգային այս եղբայրութեան բանակավայրին մէջ: Հայ Արիներու Միութեան Մարսէյլի եւ Փարիզի Շրջանները, այս անգամուն ճամբարին մասնակցեցան 25 հոգիով:

Ճամբարէն ետքը, Ֆրանսայի միութեան ընդհ. պետ Գուրգէն Մեծատուրեան եւ Գործադիր Խորհուրդի անդամներ Սերոբ Ֆարչեան եւ Գէորգ Աւագեան մեկնեցան Հռոդոս կղզին, ուր տեղի ունեցաւ 19րդ համաշխարհային սկաուտական համագումարը՝ ներկայութեամբ 300 պատուիրակներու, 58 ազգերէ:

Հայկական պատուիրակութիւնը մաս կազմեց Թեքնիքի Յանձնախումբին, իսկ Միութեան ընդհ. պետը նախագահեց Ընտրութիւններու Յանձնախումբին: Համաժողովը տեւեց ութ օր, սկաուտական ամբողջ յայտագիրը քննուեցաւ եւ շատ մը փոփոխութիւններ եղան ի նպաստ սկաուտական շարժման: Տեղի ունեցան նաեւ պաշտօնական ընդունելութիւններ, Հռոդոսի քաղաքապետին, դահճառանդ իշխանին եւ միջազգային կոմիտէին կողմէ: Ընտրուեցաւ նաեւ համաշխարհային սկաուտական կոմիտէն, որու մէջ կան Հայ Արիներու Միութեան հաւատարիմ բարեկամները:

Ճամբարին մասնակցող Հայ Արիներու խումբը վերադարձաւ Աթէնք եւ տասը օր հիւր եղաւ Աթէնքի հայ գաղութին: Տղաքը բնակեցան հայկական դպրոցին մէջ: Տեղի ունեցան շատ մը հանդէսներ, բանակումի կրակներ, հաւաքոյթներ, որոնց ընթացքին մեր տղաքը եղբայրացած Լիբանանի եւ Յունաստանի հայ սկաուտներու հետ, խանդավառեցին հայ գաղութը:

Առաջնորդ Սրբազանը, Կայտոյա Խաչը, դպրոցական մարմինները, սկաուտական վարչութիւնը բոլորն ալ իրենց կարելին ըրին մեր տղաքը հիւրասիրելու: Բոլորն ալ խանդավառուած էին հայկական պատուիրակութեամբ, եւ Մարսէյլի շրջանի խմբապետ Կարօ Յովսէփեան եւ խմբապետուհի Ալիս Շամիրեան իբրեւ պատուիրակութեան պետեր, կրցան տիպար բանակավայր մը ունենալ, եւ մեր բոլոր հայրենակիցներուն ցոյց տուին Ֆրանսահայ նոր սերունդին հայրենասէր ոգին:

Հրաժեշտի հաւաքոյթը տեղի ունեցաւ Օգոստոս 21ի երեկոյեան, նախագահութեամբ Գ. Մեծատուրեանի: Յուզիչ էր մեր տղոց եւ յունահայ հայրենակիցներուն բաժանումը:

«Ազատ Օր» իր էջերը լայնօրէն բացաւ ճամբարին եւ Հայ Արիներու, եւ մեծապէս նպաստեց ստեղծուած խանդավառութեան:

Ճամբարին մասնակցող Հայ Արիները հոգեպէս հարստացած կը մեկնին Յունաստանէն. շատ բան սորվեցան եւ աւելի կապուած սկաուտութեան եւ Հայութեան:

Գալով յունահայ գաղութին, բոլորն ալ միաձայն են թէ Հայ Արիներու այցելութիւնը հայկական նոր շունչ մը ստեղծեց գաղութին մէջ, լեցուն հպարտութեամբ եւ լաւատեսութեամբ՝ Հայ նոր սերունդին ապագային:

ՀԱՅ ԱՐԻ

ՀԱՅԱՍՏԱՆ

Երեւան թերթը (14 Օգոստոս) կը գրէ.

— 1346 թուականին է: Սեբաստիոյ մօտիկ Գրօ անապատը (վանք): Կիսախաւար խցիկի մը մէջ Գրիգոր քահանայ կ'ընդօրինակէ նախահարց իմաստութիւնները: Դաժան տարիներ են, — ընդօրինակութիւնը անոր համար որ եթէ մէկը փճանայ, միւսը կը հասնի ապագայ սերունդներուն: Այսպէս է մտածեր վանականը՝ ընդօրինակելով Նարեկացիի Ողբերգութեան մատեանը, Ն. Շնորհալիի չափածոյ գործերը, ինչպէս եւ Գրիգոր Մագիստրոսի, Յովհաննէս Պլուզի եւ այլ նշանաւոր մատենագիրներու վաստակը:

Դարերու արհաւիրքը պատճառ դարձեր է որ ձեռագիր ժողովածուն թափառի հայ մարդուն հետ: Էջուջեան ընտանիքի հետ է հասեր Ռոստով:

Ի վերջոյ, 1963ին, արհաւիրքներէն փրկուած, օտար աշխարհ թափառած այս ժողովածուն եկաւ դտաւ իր հարազատ անկիւնը, Մեսրոպ Մաշտոց մատենադարանը, Երեւանի մէջ:

Այս տարի մատենադարանին հին ձեռագիր դանձերուն թիւը աւելցած է 11 կտոր: Արժէքաւոր նորութիւններ են ԺԴ. դարու մեծ մտածող Գրիգոր Տաթեւացիի քարոզներու ժողովածուն, ընդօրինակուած՝ ԺԷ. դարու մէջ: Աստուածաշունչ մը, ԺԴ. դարու ընդօրինակութիւն: Ժըժմըշկարան մը ԺԸ. դարու ընդօրինակութիւն: Ղունկիանոս երգիչին հայատառ թուրքերէնով գրուած, 140 բանաստեղծութիւններով կազմուած ինքնագիր ժողովածուն:

Կ'ԱՐԺԷ ԳԻՏՆԱԼ

Սիպիու քաղաքին (Ռումանիա) Պրուքենթալ թանգարանին մէջ կը գտնուի չորցած բոյսերու հաւաքածոյ մը (Հերպարիւմ), որ 230 տարուան հնութիւն ունի: Այս հաւաքածոն կը պարունակէ մօտաւորապէս 1000 բոյսեր:

«ՅԱՌԱՋ»Ի ԹԵՐԹՕՆԸ (214)

ԵՐԼՏՐՁԻ ՊՈՄՊԱՆ

●●●

ՀԱԶԱՐ ԻՆԸ ՀԱՐԻՒՐ ՋՈՐՍ

Ազատութիւնը սանձարձակօրէն կ'արշէր: Օրուան Դահլիճին, օրուան կառավարութեան, մասնաւորապէս Իթթիհատ վէ Թէրագգըը կոմիտէին դէմ դժգոհութիւնները հետզհետէ աղաղակող համեմատութիւններ կ'առնէին:

Սրճարաններուն, գինետուններուն եւ հանրային հաւաքավայրերուն մէջ յանդուգն եւ համարձակօրէն կը խօսուէր երիտասարդ Թուրքերու հետեւած քաղաքականութեան դէմ եւ կը յանձնարարուէր արձանագրուիլ Իթթիհատը Մուհամմէտիին, որուն հիմնադիր հերոսներէն (՛) էր շէյխ Վահտէթտին:

Ճիշդ այդ օրերուն էր որ մայրաքաղաքին մէջ, Գարաքէօյի կամուրջին վրայ, Սէրպէսթիի խմբագիր Հասան Ֆէհմին կը սպաննուէր անծանօթի մը գնդակով, եւ այս ոճիրին քաղաքական գոյն մը տրուելով, վեհօրէն տխուր յուղարկաւորութիւն մը կատարուէր տասնեակ հազարներու թափօրի մը կողմէն, օսմանեան այլազան տարրերու խմբակցութիւններէն բաղկացած, որոնք կը շրջապատէին Իթթիհատի հակառակորդ խմբապետին դագաղը, եւ ասիկա բողոքի ցոյց մըն էր օսմանեան կոմիտէին դէմ, եւ գործուած այդ վատ սպանութեան դրդապատճառը կ'ամբաստանուէր:

Ահա՛ այս քաղաքական դէպքերը, Ելտըզի ներքին աշխարհին մէջ դարբնուած, սահմանուած էին կարապետելու Մարտ 31ը:

Ապտիւլ Համիտ խաւարի մէջ կը գործէր, իր նոր արբանեակներուն ձեռքով, որոնք օգտուելով Իթթիհատին եւ Ահրարին միջեւ գոյութիւն ունեցող եւ հետզհետէ վտանգաւոր համեմատութիւնը մը ստացող անհամաձայնութիւններէն, կը փորձէին շահագործել խուժանի մը մոլեռանդութիւնը, եւ զայն ընդվզեցնել Սահմանադրութեան դէմ:

Երեւոյթները շատ նպաստաւոր կը թուէին Բռնաւորին, տապալելու համար Յուլիս 10ին վերածնած եւ հազիւ ութ ամիս ապրած Մանուկ – Սահմանադրութիւնը. ան իր յոյսը դրած էր իր Կրեսոսեան գանձերուն վրայ, որոնց շնորհիւ կը խորհէր անպատիժ կրկնել մահաբեր հարուածը, որով յաջողած էր իր գահակալութեան առաջին տարին իսկ տապալել Միթհատեան անդրանիկ Սահմանադրութիւնը, թէեւ գահը բարձրանալէն առաջ, երդումով ուխտած էր անոր անվթար պահպանութիւնը...:

Ապստամբութեան նախազգաբար նշանը տուին որսորդ վաշտերը, անոնք որ հաւատարմութիւն ուխտած էին Սահմանադրութեան: Ելտըզէն վարձուած հոճաներ ու սոֆթաներ, ինչպէս նաեւ բռնապետական կառավարութեան նախկին պաշտօնեաներ — որոնք դուրս հանուած էին գատրոյէն — սողոսկեցան զօրանոցներէն ներս, հասարակ օնպաշիները, չավուշները, եւ ալայլը սպաները կաշառեցին համիտեան ոսկիներով եւ այս անգիտակից, կոյր ուժերը գինեցին մէֆբէպլիայինքն Արեւմուտքի գաղափարներով թունաւորուած (՛) սպաներու դէմ: Ալ դիւրին է դուշակել հետեւանքները, որոնք ծանօթ են արդէն բոլոր ընթերցողներուն.— Օսմանեան Խորհրդարանին պաշարումը՝ ապստամբ զինուորներու վաշտերէն, որոնք մայրաքաղաքի զանազան զօրանոցներէն, վերէն արձակուած գաղտնի հրամանի մը համաձայն, հոն համախմբուած էին, նախարարի եւ երեսփոխանի վայրագ սպանութիւնները, Իթթիհատի աչքառու պետերուն փախուստը կամ ծակամուտ ըլլալը, մայրաքաղաքին վերեւ սաւառնող սարսափը, գիշերները անդուլ անդադար շառաչող գնդակները, փողոցներուն մէջէն ապրստամբ զինուորներուն սուինամերկ, արձակ համարձակ անցքը, բովանդակ ընակչութեան այդ օրերուն մէջ ապրած մահուան տագնապները, հին ռեժիմի ուրուականին այսպէս յանկարծօրէն տեսարանին վրայ վերերեւումը, կատաղի, անզսպելի, վայրենի զինուորներու դէպի Ելտըզ գնացքը, «փատիշահըմ չօք եաշա» աղաղակները, զօրանոցներուն մէջ փողոցներու անկիւնները, կամուրջին վրայ, ամէն տեղ, ծովային ու ցամաքային համիտապաշտական վաշտերուն սպանական գործունէութիւնը. մէկ խօսքով՝ դարչելի բռնապետութեան վերադա՛րձը...:

Եւ բոլոր այս յետաշրջական շարժումին մեքենավարը, Ոըջին մէջ նստած, կ'երազէր այն երջանիկ օրը, ուր Սահմանադրութիւնը ջնջուած, պիտի կրնար ինք դարձեալ ձեռք առնել իր կառավարելու նախկին մեթոտը. — Բանտ, աքսոր, ջարդ, եւայլն, եւայլն...:

ՍՄԲԱՏ ԲԻՒՐԱՏ

(Շար.)

Շ. ՄԻՍԱՔԵԱՆ

Օրեր եւ Ժամեր

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Աղքատախնամի տարեկան պարահանդէսը՝ ժորժ Ե·ի շքեղ սրահներուն մէջ, Հոկտեմբեր 27ին, ժամը 16էն 24:

ՅԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

Մարսէյլի Վասպուրականի Հայրենակցական Միութիւնը իր ցաւակցութիւնը կը յայտնէ Տէր եւ Տիկին Գաբիկ Շալջեանի եւ Պօյաճեան ընտանիքին, Սաթենիկ Փափազեանի *(ծնեալ Պօյաճեան) կսկծալի մահուան առթիւ:*

ԿԸ ՓՆՏՌՈՒԻՆ

Տէր–Յովհաննէսեան Յովհաննէս, հօրը անունը Պետրոս, մօրը անունը Սալլի, քրոջը անունը Հերմոն· ունի երկու եղբայրներ՝ Սահակ եւ Մուխէս: Կը բնակէին Էրզրումի Պատիչէն գիւղը: Իրենցմէ լուր կ'ուզէ իրենց հօրեղբայր Կարապետի աղջիկը՝ Վարդանոյշ, մօրը անունը Մանեայ:

Հասցէն է.— Երեւան, Արաբկիր, 8րդ փողոց, թիւ 5 տուն, խորհ· Միութիւն:

Կ'ՈՒԶՈՒԻՆ

ՍՏԻՊՈՂԱԲԱՐ

Կրթական հաստատութեան մը մէջ աշխատելու համար կ'ուզուին.—

ա) *Միջին տարիքի կին մը՝ ներքին մաքրութեան եւ տնական գործերու համար:*

բ) *Այր մարդ մը ճաշարանը ծառայելու համար:*

ԱՆՁԱՄԲ դիմել Յառաջի վարչութեան:

ԴՊՐՈՑԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Դպրոցասէր Տիկնանց վարժարանին 1963 – 1964 *տարեշրջանի արձանագրութիւնները սկսած են: Անոնք որոնք կը փափաքին ղրկել իրենց զաւակները պէտք է այժմէն իսկ դիմում կատարեն հաստատութեան տնօրէնութեան:*

Ա.— ՖՐԱՆՍԱԿԱՆԸ, որ տառացի կերպով կը հետեւի պետական լիսէներու *արդիական բաժնի պաշտօնական ծրագրին — անգլերէն եւ սպաներէն լեզուներով —:*

Բ.— ՀԱՅԿԱԿԱՆԸ, որ կ'օժտէ սանուհիները հայագիտական ծանօթութիւններով, հայ լեզուի, գրականութեան, հայ կրօնքի եւ պատմութեան, Հայաստանի աշխարհագրութեան մարզերուն մէջ:

Աշակերտուհիներ կ'ընդունուին ութ տարեկանէն սկսեալ: Մանրամասնութեանց համար դիմել հաստատութեան տնօրէնութեան:

1, Bd. du Nord, LE RAINCY (S. et O.)
Tél : 927-01-72

Դպրոցասէրի ուսման ծրագիրը կ'ընդգրկէ երկու ուրոյն բաժիններ:

ՍՏԱՑԱՆՔ

ԻՆՉՊԷՍ ՏԵՍԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԸ

(Տպաւորութիւններ)

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Գրեց՝

Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

ՆԿԱՐՆԵՐՈՎ ՃՈԽԱՑԱԾ ԱՅՍ ԳՐՔՈՅԿԸ ԿԱՐԺԷ ՄԻԱՅՆ 3 Ն. Ֆ.

Առաքումով՝ 4 Ն. Ֆ.

Դիմել՝

« Յ Ա Ռ Ա Ջ »

Լոյս Տեսաւ



Մատենաշար — ՅԱՌԱՋ — Կեդրոնավայր
ԳԻՆ
Ֆրանսա՝ 15 Ֆր.
— Առանց առաքումի ծախքը —

« ՅԱՌԱՋ »

ՍԱՄՈՒԷԼ ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ՆՈՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Իրենց զաւակները արձանագրել փափաքող ծնողքները պէտք է փութան դիմել տեսչութեան հասցէին:

COLLÈGE ARMÉNIEN SAMUEL MOORAT
26, Rue Troyon, SEVRES (S. et O.)
Tél. : OBS. 18-28

Եւրոպայի մէջ, հայ մանչերու համար հիմնուած, ֆրանսական եւ հայկական ուսումնական կատարեալ ծրագիրներով օժտուած մեծագոյն եւ ծաղկեալ ուսումնարանն է Սեւրի Սամուէլ Մուրատեան վարժարանը, ուրուն սեմէն ներս հայ մանուկին հոգին, միտքը եւ մարմինը կը մեծնայ, կը ծաղկի եւ կ'ընդլայնի բաղձալի համեմատութիւններով:

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

ԼԻՈՆ.— Ֆր. Կապ. Խաչի Օրը կը տօնուի մեծ պատրաստութեամբ, 27 Հոկտ. Մոլիէրէի շքեղ սրահին մէջ:

×

Հ. Բ. Ը. Միութեան Տիկնանց յանձնախումբը կը խնդրէ կազմակերպութիւններէն նկատի ունենալ հետեւեալ թուականները.—

ՀՈԿՏԵՄԲԵՐ 1, *Երեքշաբթի երեկոյ Տիկնանց յանձնախումբի կազմութեան Գ. տարեդարձին առթիւ գեղարուեստական երեկոյթ:*

ՀՈԿՏԵՄԲԵՐ 19, *ցուցահանդէս հայ արուեստագէտներու նկարիչ, արձանագործ եւ փորագրիչներու գործերուն:*

Հայկական Թանգարանը, 52 Ավընիւ Ֆոշ, *(Փարիզ 16):*

ԴԵԿՏԵՄԲԵՐ 7, 8, 9, 10, *«Բարենպատակ վաճառք»:*

Յառաջիկային պիտի տրուին մանրամասնութիւններ:

×

Մարսէյլի մէջ Դաշնակցութեան Օրը կը տօնուի Հոկտեմբերի 5ին Սալոն Ալհամպրա:

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՕՐԸ Փարիզի մէջ *կը տօնուի 26 Հոկտ. շաբաթ գիշեր մինչեւ լոյս, 6րդ Թաղամասի քաղաքապետարանի սրահներուն մէջ:*

★

Փարիզահայ Տիկնանց Միութեան յիսնամեայ յոբելեանը կը տօնուի Հոկտեմբեր 13ին, Սալ տը լա Շիմի:

ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ

Կապոյտ Խաչի Վիէնի մասնաճիւղի տարեկան դաշտահանդէսը տեղի կ'ունենայ Սեպտեմբեր 1ին, առաւօտէն մինչեւ երեկոյ «Իւ–Էս–Ա.»ի մարզադաշտին վրայ (Թանըրիին fով):

Գեղարուեստական ճոխ բաժին: Բանախօսութիւն, երգ, արտասանութիւն եւ հայկական պարեր:

Ճոխ պիւֆէ· աղանդերներ եւ շամփուրով խորոված:

Սիրով կը հրաւիրուի գաղութի հայութիւնը:

Անձրեւի պարագային «Խաժակ» սրահը:

FOURRURES
Roger YOPIAN
PRIX INTERESSANTS
NEUF et REPARATION
84, Boulevard de Stalingrad, 84
— CHOISY-LE-ROI (Seine) —
Autobus : de la Porte de Choisy, descendre 3 Communes ou Rue du Docteur-Roux.

ՍԱԿԱԳԻՆ ԸՆԹԱՑԻԿ ԱԶԴԵՐՈՒ

ՄԷԿ ԱՆԳԱՄՈՒԱՆ ՀԱՄԱՐ

ՄԱՀԱԶԴ	35 Ֆ.	մինչեւ 1/4 սիւնակ
ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ	15 Ֆ	մինչեւ 1/8 սիւնակ
ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ	10 Ֆ.	» » »
ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ	20 Ֆ.	» » »
ՀԱՐՍԱՆԻՔ, ՆՇԱՆՏՈՒՔ	20 Ֆ.	» » »
ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ	10 Ֆ.	» » »
ԾՆՈՒՆԴ	20 Ֆ.	» » »
«ՓՈԽԱՆ ԾԱՂԿԵՊՍԱԿԻ»	10 Ֆ.	» » »
«ԿԸ ՓՆՏՌՈՒԻ»	5 Ֆ.	» » »
ԾԱԽՈՒ Է	20 Ֆ.	» » »

Այս գիները մէկ անգամ հրատարակելի եւ նշանակուած ծաւալով ազդերու համար են, չորրորդ էջը:

Կանխիկ վճարումը պարտաւորիչ է:

Առեւտրական կամ այլ ազդերու մասնաւոր պայմաններուն համար դիմել Վարչութեան:

ԼՈՅՍԸ ԳՈՅՆ Է···· ԳՈՅՆԸ ԼՈՅՍ Է
ՁԵՐ ՏԱՆԸ ԼՈՅՍ ՏՈՒԷ՛Ք···· ԹՈՄԼԱՔԻ ԳՈՅՆ ՏՈՒԷ՛Ք
Ձեր բնակարանը կը լուսաւորուի
Եթէ ներսը եւ դուրսը
ՎԵՐԱՆՈՐՈԳԷՔ – ԶԱՐԴԱՐԷՔ – ՆԵՐԿԷՔ

ԹՈՄԼԱՔ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐՈՎ

PEINTURES THOMLAC

16 bis, Bd. Sébastopol, Paris 4e

Tél. ARC 26-61 – Métro : Halles et Chatelet

136, RUE DES BOURGUIGNONS — ASNIERES - BOIS COLOMBES (Seine)
Tél : GRE. 09-47

11, BD. DE LA REPUBLIQUE — LA GARENNE (Seine)
Tél. : STA. 19-06

ԱՆՄՐՑԵԼԻ ԳԻՆԵՐՈՎ

Ամէնէն արդիական, նուրբ եւ ընտիր ճաշակով պատրաստուած՝ առաջնակարգ ներկեր: Բնական եւ արուեստական բազմերանգ գոյներու մեծ ընտրութիւն: Նորոյթ խղաներկեր, պատի գեղեցիկ թուղթերու ճոխ ընտրութիւն: ծածկոցներ· — Գետնի համար՝ ամէն տեսակ — լինոլէոմ եւ փլասթիf —

TAPIFLEX — TAPISOM — CARPETTE

Ձեր բնակարաններուն արտաքին եւ ներքին խնամքներուն համար անհրաժեշտ բոլոր նիւթերը:

Ամէն գնորդի կը նուիրուի յատուկ տետրակ մը, որու շնորհիւ կրնայ 10-30 առ հարիւր զեղչ ունենալ:

ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐ

52, RUE CHALON, PARIS 12e — 64, BLD. DE BELLEVILLE, PARIS 20e
166, AV. ARISTIDE BRIAND — PAVILLONS - SOUS-BOIS (Seine)
4 bis, RUE PAUL VAILLANT COUTURIER — ARGENTEUIL (S. et O.)
24, RUE PAUL VAILLANT-COUTURIER — ALFORTVILLE (Seine)
48 bis, RUE DALAVRAC — FONTENAY - SOUS - BOIS (Seine)

IMPRIMERIE SPECIALE DU JOURNAL « HARATCH »
32, Rue de Trévise, PARIS (9e)

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ
Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

Le PREMIER QUOTIDIEN ARMENIEN en EUROPE
HARATCH
Directrice : ARPIK MISSAKIAN
Rédaction et Administration : 32, Rue de Trévise - PARIS-9e
Fondé en 1925 — Téléph. : PRO. 86-60
R. C. Seine 57 A 2731 — C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա՝ Տար. 50 Ֆ. — Վեցամսեայ՝ 27 Ֆ.
Արտասահման՝ Տար. 60 Ֆ. — Հատը 0.30 Ֆ.

ՀԻՆԳՇԱԲԹԻ 29 ՕԳՈՍՏՈՍ
JEUDI 29 AOUT 1963
LE NUMERO : 0,30 FR.

39րդ ՏԱՐԻ — ԹԻՒ 9694
Fondateur : SCHAVARCH MISSAKIAN
39e ANNÉE — No 9694

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ՊԱՆՔ ՕԹՈՄԱՆ

Բ.

Հ. Յ. Դաշնակցութեան Պոլսոյ Կեդրոնական Կոմիտէն մանրամասնօրէն պատրաստած էր Օգոստոս 27ին (հին տոմարով Օգոստ. 14) տեղի ունենալիք գործողութիւնները :

1. Ժամը ճիշդ 12ին 75 հոգի 200 ռումբերով զինուած պիտի գրաւէին Պանք Օթոմանը :

2. Նոյն ժամուն Սամաթիոյ ընկերները Գումգափի, Սուրէնի (Արտաշէս Անդրէասեան) եւ Միսաքեանի ղեկավարութեամբ ռումբերով պիտի յարձակէին տեղւոյն ոստիկանատուներուն վրայ եւ պիտի սպանէին զօրքը, որ փողոց ելլէր, երբ նախապէս պատրաստուած զիրքերէն ռումբի տարափ պիտի տեղար անոնց վրայ :

3. Հինգ ընկերներ ամերիկահայ Եղիշէ Գարթի ղեկավարութեամբ պիտի սպասէին Ղալաթիոյ կամուրջին վրայ եւ երբ Իլտըզ-պալըքքոսի կառքն անցնէր, ռումբի հարուածներով պիտի ոչնչացնէին զայն :

4. Զորս կէտերու վրայ ընկերներ պատուհաններէն ռումբեր պիտի տեղային Պանք Օթոման գացող զինուորներուն վրայ :

5. Երկու Մշեցի տղաք խոշոր ռումբեր պիտի նետէին Կալաթա-Սէրայի վրայ, երբ զինուորները փողոց ելլէին :

Սկիւտարի գաղտնի ձուլարանին մէջ պատրաստուած չորս հարիւր ղատարկ ռումբեր ութ օրուան մէջ փոխադրուած Բերայի արհեստանոցը, Օր. Իսկուհիի տունը, ուր լեցուելէ վերջ բաժնուած էին զանազան ընկերներու տունը, տասնեակ մը երիտասարդ ուսուցիչներու եւ ուսանողներու կողմէ, որոնց մէջ երեք աղջիկներ :

Ցոյցի ղեկավարման մասնակցող ընկերներն ժամադրավայր նշանակուած էր Պանք Օթոմանի մօտակայ անգլիական դեղատունը, որ արձակուրդի առթիւ պարապ էր : Այնտեղ մնացած էր միայն զանազան Ցանէսը, Դաշնակցական.

Համիտի խաֆիէները որոշ տեղեկութիւններ կրցեր էին քաղել կատարուելիք գործողութեանց մասին : Այդ պատճառաւ ալ ձախողեցաւ Սամաթիոյ ծրագիրը : Հարիւր յիսուն եւ չորս ռումբեր լեցուած էին զանազան տեղեր : Ընկերները եկեղեցի պիտի հաւաքուէին : տանիքին վրայ յարձակում պիտի գործէին պժոխային մեքենայով :

Հաւաքը տարածուած ըլլալով, Սամաթիոյ ընկերները Սան Սթեֆանօ փախած էին : ոստիկանները պաշարած Միսաքեաններու տունը եւ Գնունին Վեց հոգի — մէկը Միսաքեաններու մայրը՝ որ առաջին ռումբը — հերոսաբար կռուեցան մին -

քաանեւվեց ընկերներ Բաբգէն առաջնորդութեամբ կը գրաւէին Պանք Օթոմանը : Մուտքի դրան առջեւ Սիւնի՝ ռումբերը Արմէն Գարօ կը ստանձնէ գործողութեանց ղեկավարութիւնը : Դրամատան 150 պաշտօնեաներն ու քանի մը յաճախորդներ կ'արգելափակուէին սենեակներու մէջ :

Զինուորները պատուհաններէն ռումբեր տեղացնէին շէնքը պաշարող զինուորներուն եւ ամբոխին վրայ՝ ամէն տասնեակներ գետին փռելով : անկարող կ'ըլլայ ներս մտնել :

Համիտ անիծէն կ'օգտուի ջարդ կազմակերպելու համար մէջ, Բարենորոգումներու երաշխաւոր վեց մեծ պետութեանց դեսպաններու քիթին տակ : Անոնց մէկ պարզ սաստը բաւական էր վերջ տալու ջարդին : Բոլորն ալ Վոսփորի մէջ ունէին իրենց պահականաւերը՝ թնդանօթներով զինուած : Սակայն ո՛չ մէկը տեղէն շարժեցաւ՝ սպառնալու համար ոմբակոծել Եըլտըզի պալատը՝ եթէ չարունակուէին ջարդերը :

Չար բերաններ կ'ըսեն նոյնիսկ, որ ռուսական դեսպանատան աւագ թարգման Մաքսիմով քաջալերած է Կարմիր Սուլթանը, խորհուրդ տալով անոր .—

Massacrez Majesté, massacrez !..

Այս նոյն Մաքսիմովն է, որ յանուն վեց մեծ դեսպաններուն, Բ. Դրան ներկայացուցիչին եւ Պանք Օթոմանի տնօրէնին հետ բանակցութիւններ վարեց Պանք Օթոմանը գրաւող Դաշնակցական ֆետայիներու պարագլուխ Արմէն Գարոյի (Գարեգին Փաստրմաճեան) եւ Հրաչի (Հայկ Թիրեաքեան) հետ :

Պանքայի գրաւումէն վերջ Լեւոն Նէվրուզ վեց դեսպաններուն յանձնած էր Հ. Յ. Դ. Կեդրոնական Կոմիտէի Պահանջնագիրը : Միւս կողմէ Արմէն Գարօ Պանք Օթոմանի տնօրէն Օպլինոյի եւ Մաքսիմովի տուած էր վերջնագիր մը՝ սպառնալով օդը հանել շէնքը՝ եթէ անմիջապէս չդադրին ջարդերը, չդադրի Պանքայի վրայ զինուած յարձակումը եւ երաշխիքներ չտրուին Հայկ. Բարենորոգումներու գործադրութեան համար :

Բանակցութիւնները տեւեցին մինչեւ առտուան դէմ, երբ 19 ֆետայիներ յաղթական դուրս ելան շէնքէն, հաւատալով Մաքսիմովի խաբերայի խոստումներուն : Եօթը հերոսներ նահատակուած կամ ծանրապէս վիրաւորուած էին : Թուրք հրամանատարը հարցուցեր է թէ ո՞ւր են միւսները : Կը կարծէ եղեր, որ Պանքան գրաւողները երկու հարիւր հոգի էին... :

Անգլիական Մօրնինկ Փոսթ թերթը գրեց, որ 450 Թուրք սպաներ եւ զինուորներ սպաննուած կամ ծանրապէս վիրաւորուած էին Պանք Օթոմանի գրաւման առեն :

Յեղափոխական խիզախ ձեռնարկ մըն էր, որ տեղի ունեցաւ 67 տարի առաջ Վոսփորի ափերուն վրայ, օսմանեան կայսրութեան մայրաքաղաքին մէջ : Մեծ եղաւ տպաւորութիւնը Թրքական եւ օտար շրջանակներու վրայ :

Սուլթան Համիտ վերջ տուաւ իր ջարդի քաղաքականութեան : Նոյնիսկ 1905ին Եըլտըզի ռմբային առթիւ չհամարձակեցաւ ջարդի հրաման տալ :

Սակայն չգործադրեց խոստացուած բարենորոգումները, ապահովելով երաշխաւոր պետութեանց անտարբերութիւնը :

ՀՐԱՆՏ — ՍԱՄՈՒԷԼ

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՎԻԷԹՆԱՄ

ԱՄԵՐԻԿԱՑԻՆԵՐԸ ՇԱՏ ԴԺԳՈՀ ԵՆ

Քապոթ Լոճ ի վերջոյ յաջողեցաւ տեսնուիլ Վիէթնամի նախագահին եղբօր՝ Տինհ Նհուի հետ : Նախապէս տեսնուած էր նաեւ նախագահ Տիէմի հետ եւ յետագային խորհրդակցութեան պիտի կանչուէր Արտաքին նախարարին փոխանորդին կողմէ : Միւս կողմէ, մինչ Ուաշինկթըն կը փորձէր փրկել Վիէթնամի բանակին պատասխանատուութիւնը անցած-դարձածին մէջ, Վիէթնամի բանակին սպայակոյտը յատուկ զեկոյցով մը կը հերքէր ամերիկեան Արտաքին նախարարութեան յայտարարութիւնը զոր «ծայրայեղօրէն եւ բացարձակապէս սխալ» կ'որակէր : Արդարեւ Ամերիկացիք ըսած էին թէ պատերազմական վիճակի առթիւ ձեռք առնուած բոլոր միջոցները գործադրուած էին «մասնաւոր ուժերու խումբերու կողմէ, որոնք ենթակայ չեն բանակի ընդհանուր հրամանատարին» : Այս զեկոյցին առթիւ է որ Վիէթնամի բանակը կը ճշդէ .— «Բանակին բոլոր պատասխանատու պետերը, միաձայնութեամբ, առաջարկած ու ձեռք ձգած են պատերազմական վիճակի հաստատումը եւ անոր հետ կապ ունեցող ձեռք առնուելիք միջոցները :

Ցարդ յայտնի չէ թէ ի՞նչ ըսուած է Վիէթնամցիներու եւ Ամերիկացիներու միջեւ : Ուաշինկթընի մէջ կ'ըսուի թէ Ամերիկացիք շատ կտրուկ եղած են եւ իրենց վճռական տեսակէտը յայտնած նախագահ Տիէմի ձախաւեր քաղաքականութեան համար պուտտայականներու նկատմամբ :

Ուաշինկթընի մէջ ուրիշ կարծիք մըն ալ կը տիրէ : Արդարեւ, Ամերիկացիք անհանդուրժելի կը գտնեն որ Տիէմի եղբայրը (գլխաւոր պատասխանատուն նկատուած այս դէպքերուն) գործի գլուխ մնայ տակաւին : Ուաշինկթընի մէջ շատ գոհ կ'ըլլան եթէ Տիէմ ազատի քիչ մը եղբօրը «հողատարութենէն» եւ մօտենայ բանակին :

Ամէն պարագայի մէջ, Ամերիկացիք պէտք է անելէն դուրս ելլեն : Իրենց գլխաւոր զէնքն է՝ տարեկան 500 միլիոնի օժանդակութիւնը զոր կ'ընեն Վիէթնամի :

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԱՍԻԶԻԻ մէջ, Գերապայծառ Քափովիլլա դասախօսութիւն մը ըրած է եւ կարգ մը յայտնութիւններ ըրած Յովհաննէս ԻԳ.ի մասին : Գերպ. Քափովիլլա որ անձնական քարտուղարը եղած է վախճանեալ Պապին, յիշած է թէ 1962 Դեկտ. 26ին, ան իր յուշատետրին մէջ գրած է .— Առջի գիշեր, կարդալէ ետք ռուսերէն գրականութեան մը յառաջաբանը, ամբողջ էութիւնս Տիրոջ նուիրեցի որպէսզի բովանդակ Ռուսիան կաթողիկէ դառնայ : Քարտուղարը կարգ մը բացատրութիւններ ալ փորձած է տալ Աճուպէյի ընդունելութեան մասին : Բոլոնդական մամուլը կ'ողջունէ այս լուրը բացի Իլ Թէմփոյէն որ չի մոռնար թէ Յովհաննէս ԻԳ.ի յայտարարութիւնը մէկ միլիոն ձայն շահիլ տուած է համայնավարութեան, Իտալիոյ մէջ :

ԳԵՐՄԱՆԻՈՅ Դաշնակցային Հանրապետութեան նախկին նախագահը՝ Թէոտոր Հօյս անդամահատուեցաւ ձախ սրունքէն :

ԴԱՄԱՍԿՈՍԻ մէջ Իրաքի եւ Սուրիոյ ղեկավարները սկսան իրենց խօսակցութիւնները, որոնց կը մասնակցին նաեւ երկու երկիրներու կարգ մը նախարարներ : Ըստ սուրիական Ալ Քիփաճ օրաթերթին, Սուրիա եւ Իրաք կը խորհին հասարակաց սպայակոյտ մը ստեղծել :

ԱՆՔԱՐԱՅԷՆ կը հաղորդեն որ Էքրէմ Ալիքան, փոխ-վարչապետ եւ Նոր-Թուրքիա կուսակցութեան նախագահ, յայտարարած է թէ կը հրաժարի այս զոյգ պաշտօններէն :

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ 6 միլիոն 856 հազար տոլար կուտան Իրաքի, վերադարձնելիք 19 տարուան ընթացքին, ըստ առջի օր ստորագրուած համաձայնութեան մը :

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁԻ ՊԱՏՈՒԻՐԱԿԻՆ ՀԵՏ

(Բ. եւ վերջին մաս)

Հ.— Անցեալ տարի Պ. Անդրանիկ Շահինեանը մեզի անձամբ յայտնեց, թէ այս տարի Յունուար կամ Փետրուար ամսուն հայրենադարձի պատուիրակը պիտի հասնի Գահիրէ, որպէսզի Մայիս եւ Սեպտեմբեր ամիսներուն երկու կարաւաններ մեկնին հայրենիք : Սակայն, արդէն Յուլիս ամսուան վերջերուն կը գտնուինք եւ նոր բախտը կ'ունենանք ընդունելու ձեզ մեր մէջ : Աւելի լաւ չէ՞ որ ներգաղթողները սկիզբէն յստակօրէն գիտնան իրենց ընելիքը եւ մեկնելիք թըւականը :(Ցաւալ.— Հարցումը թթու է) :

Պ.— Ի հարկէ լաւ կը լինի որ սկզբից ամէն ինչ յստակ լինի, ներգաղթողներին խնայելու համար աւելորդ դժուարութիւններ, սակայն պիտի ասել որ ինձնից առաջ մի ուրիշ պատուիրակ պիտի գար, որոշ աշխատանքներից յետոյ, հրաժարուեց նա : Անմիջապէս ինձ նշանակեցին, անցագիրս ձեւակերպեցի եւ եկայ : Ուրեմն սա է պատճառը ուշացման :

Հ.— Ե՞րբ պիտի մեկնի կարաւանը :

Պ.— Կարաւանը պէտք է մեկնի Սեպտեմբերի 15-30 : Չենք ուզում աւելի ուշ ճանապարհ դցել հայրենադարձներին, որպէսզի տաք երկնից յանկարծ ցրտի մէջ չընկնեն :

Հ.— Ո՞ր շրջանները պիտի տեղաւորուին այս տարուան հայրենադարձները :

Պ.— Նախատեսել ենք այս տարուան հայրենադարձները տեղաւորել Լենինականում, Կիրովականում, Ղափանում, Հրազդանում, Ալավերդիում, Լուսաւան եւ այլ շրջաններ, նայած մեկնողների մասնագիտութեան, ինչպէս նաեւ գործի ու բնակարանի յարմարութիւններին : Մենք չենք ցանկանում միայն Երեւան կառուցանել, այլ ցանկանում ենք Հայաստա՛ն կառուցանել : Հայաստանի բնակչութեան մի ստուար մասը ապրում է Երեւանում ու Երեւանը դնալով գերբնակուած քաղաք է լինում : Շրջաններում ապրողները ոչ մի ձեւով չեն զրկուի ապրուստի եւ վայելքի հնարաւորութիւնից եւ հարկ չեն զգայ անպայման բնակուելու Երեւանում :

Հ.— Գահիրէի մէջ, պետական պատկան իշխանութեանց հետ շփում հաստատեցի՞ք :

Պ.— Այո, ես եղել եմ Ներքին նախարարութեան անցագրային բաժնում : Շնորհակալ եմ որ ինձ նկատմամբ սիրալիր ընդունելութիւն ցուցաբերեցին եւ խոստացան օժանդակել մեզ նախորդ տարուան նման : Անցագրի եւ այլ գործողութիւնները պիտի ընթանան անցեալ տարի հաստատուած կերպով : Ուրեմն, ներգաղթողները պիտի աշխատեն անցեալ տարուան ձեւով :

Հ.— Ուրիշ ո՞ր երկիրներէն հայրենադարձ պիտի կազմակերպուի :

Պ.— Այս տարի հայրենադարձներ են լինելու Յունաստանից եւ Կիպրոսից : Պարբերական հայրենադարձը շարունակւում է միշտ Իրանից : Իմ նաւով Կիպրոս գնացին հայրենադարձի լիազօր պատուիրակներ Եղիշէ Յովհաննիսեանը եւ Հայկ Շահինեանը : Յունաստանի պատուիրակներ Զամչեան եւ Մելքոնեան արդէն կը գտնուին Աթէնքի մէջ :

Հ.— Ո՞րքան ատեն պիտի տեւէ հայրենադարձի շարժումը :

Պ.— Հայրենադարձի շարժումը պիտի շարունակուի եւ գնալով աւելի լայն ծաւալ ստանայ, այնքան ատեն որ հայրենիք վերադառնալ ցանկացող Հայեր լինեն : Ամէն տարի նոր բնակարաններ ենք կառուցանելու, որպէսզի լաւ պայմաններով ընդունենք հայրենադարձներին :

ԿԻԼԻԿԵԱՆ ՅՈՒՇԵՐ

ԳՆԴԱՊԵՏ ՊՌԷՄՈՆԻ ՀՐԱԺԵՇՏԸ

Գնդապետ Պռէմոնը Ատանա ժամանեց 1919 Յունուար 30ին իբր Վարչական Հակակշռի Պետ: Այդ պաշտօնը վարեց մինչեւ Սեպտեմբեր 1920, երբ Մարդպան զօր. Կուռոյի հրամանով Ֆրանսա վերադարձաւ:

Զօր. Կուռոյի տուած որոշումին պատճառը առաջին օրէն իսկ յայտնի էր: Փօլ տիւ Վէու զայն բացէն կը յիշէ «Լա Փաւրոն տը լա Սիլիսի»ի մէջ:

Գնդապետին ընդհանուր քարտուղարն էր պահեստի տեղակալ Խաքանի:

Երկուքին միջեւ ծայրայեղ պժտութիւն ծագեցաւ: Ըստ Փօլ տիւ Վէուի՝ Խաքանի կ'ամբաստանուէր իբր ղեղծարար եւ ձերբակալուելու վտանգի մէջ էր: Յամենայն դէպս ստոյգ է որ Խաքանի ձեռք անցուց գնդապետին մէկ գրութիւնը, ուր գնդապետը զօր. Կուռոյի վերաբերմամբ աննպաստ դատողութիւններ կ'ընէր եւ որ անձնական խորհրդակով Ֆրանսա պիտի ղրկուէր: Իսկոյն, Խաքանի չունչը Պէյրութ առաւ եւ այդ գրութիւնը զօր. Կուռոյին յանձնեց: Արդէն հինուց զօրավարը եւ գնդապետը փոխադարձ համակրութիւն չէին տածեր: Արդիւնքը եղաւ անմիջական՝ գնդապետ Պռէմոնի հեռացումը: Խաքանի Կիլիկիա չվերադարձաւ:

Հնազանդելով, գնդապետ Պռէմոն անմիջապէս պատրաստուեցաւ մեկնելու եւ այդ առթիւ պաշտօնէութեան ուղղեց հրաժեշտի յայտարարութիւն մը, որուն թարգմանութիւնը կուտանք իբր պատմութեան նիւթ:

Ատանա, 4 Սեպտեմբեր 1920

« Առաջին զօրաբաժնի զօրավարը (1) թիւ 975 Գ. 4 Սեպտեմբեր 1920 թուակիր նամակով ինծի կը յայտնէ թէ Մարզպանը, նկատի ունենալով որ աւելի քան 19 ամիս անցուցած եմ Արեւելքի մէջ, որոշած է որ վերադառնամ Ֆրանսա անհրաժեշտ տեղեկութիւններ տալու համար՝ Կիլիկիոյ մէջԹուրքիոյ հետ հաշտութեան դաշնագրի գործադրութեան վերաբերմամբ»:

« Շնորհակալ եմ, ի խորոց գինուորականի սրտիս, բոլոր անոնց, մեծ ու պզտիկ, որոնք աշխատակիցներս եւ օգնականներս եղան մեր ծանր ձեռնարկին մէջ, որ այնչափ տաժանելի դարձաւ այս տարուան սկիզբէն ի վեր:

« Անոնք վստահ կրնան ըլլալ թէ պիտի յիշեմ զիրենք հաւատարմօրէն, եւ ուրախ պիտի ըլլամ իրենց կրկին հանդիպելու իմ ճամբուս վրայ:

« Եթէ այդ ճամբան երբեմն ընդհատեցաւ, եթէ անոր վրայ գտանք խիճեր, փուշեր եւ ալրեր, դուք զայն պիտի շարունակէք անխոնջ, աչքի առջեւ ունենալով միայն Ֆրանսայի մեծութիւնը: Քանի՛ քանինե՛ր անոր կը զոհեն իրենց կեանքը ամէն օր, անշուք եւ անչշուկ: Ի՞նչ են մեր տառապանքները անոնց չիրիմներուն առջեւ:

« Մեծատարած գործ մը կատարեցինք Կիլիկիոյ մէջ: Ճշմարտութիւնը ի վերջոյ միշտ կը շողայ: Յետ Զարչարանաց Յուդա ինքինքը կը կախէ:

« Ամէն կողմէ ծանր փորձանքներ դեռ կը սպառնան ֆրանսական ձեռնարկին՝ Կիլիկիոյ մէջ: Վստահ ըլլանք որ քաջութիւնները հաւասար պիտի ըլլան դժուարութեանց:

« Անգամ մը եւս բոլորս միասին կրկնենք.— Կեցցէ՛ Ֆրանսան:

« 4 Սեպտեմբեր 1920 թուականին հրամանատարութիւնը կը փոխանձեմ հազարապետ Հաւլէրին »:

ԳՆԴԱՊԵՏ ՊՌԷՄՈՆ

Կիլիկիոյ Վարչ. Հակակշռի Պետ

(Հաղորդել ամբողջ անձնակազմին):

Այսպէս մեկնեցաւ գնդապետ Պռէմոն:

Հազիւ ոտք կոխած էր Ֆրանսա, որ իր թշնամիներէն ներշնչուած յարձակումներ տեղ գտան մամուլին մէջ: Նախորդ յօդուածով մը Փարիզի «Պոնսուար» օրագրի ելոյթը յիշեցինք (2): Յաջորդով կուտանք Մարսէյլի «Սէմաֆոռ»ի գրութիւնը, որուն այս անգամ՝ գնդապետ Պռէմոն անձամբ պատասխանեց:

Վ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

1) Տիւֆիէօ, որ Կիլիկիոյ զինուորական հրամանատար էր:
2) Յառաջ, 22 Օգոստոս 1963:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ՊԵՐԼԻՆԷՆ ԼՕԶԱՆ

Անգլիացիներ եւ Ֆրանսացիներ կը վախնային, որ Ռուսերը չարժեն Հայերը, զինուորապէս միջամտելու համար: Գերման դեսպան Վանկենհայմ 1913 Յունիս 10ին կը գրէր Արտաքին Նախարարութեան. «Հայկական հարցը բանալին է որ Ռուսիոյ առջեւ պիտի բանայ Նեղուցները»:

Անգլիոյ առաջարկով ռուս դեսպանը պիտի ներկայացնէր ծրագիրը անգլիական եւ ֆրանսական դեսպաններուն, մինչդեռ ռուս դեսպանատան պաշտօնեայ Մանտելստամ կը ստանձնէր պատրաստութիւնը, եւ ներկայացնելով պաշտպանելու պաշտօնը: Ռուս դեսպանը կը յայտարէր, թէ «ծրագիրը Փեթերպուրկի տեսակէտը չէր ներկայացներ եւ իր պաշտօնեային անձնական գործն էր»: Չէ՞ր մտածեր արդեօք, թէ անգլեւֆրանսացի պաշտօնակիցները այնքան միամիտ չէին դիւանագիտական խաղը հասկնալու չափ:

Վերջապէս Համաձայնականները համաձայնեցան ծրագիրը ներկայացնելու Երրեակ Զինակցութեան դեսպաններուն: Դժուարին կէտը ռուս առաջարկն էր՝ վեց նահանգներու մէկ նահանգի մը վերածումը Եւրոպայի կամ քրիստոնեայ օսմանցի ընդհանուր կառավարչի մը վարչութեան տակ:

Լոնտոն եւ Փարիզ համոզուած չէին ռուս դիտաւորութեանց բարութեան մասին, յայտնի էր որ Ռուսիա կ'ուզէր ինքնավար Հայաստան մը ստեղծելու պատրըւակին տակ անդամահատել Փոքր Ասիան: Անգլիոյ Նախարար Նիքոլսըն իր մտահոգութիւնը կը յայտնէր Քամպոնի: Գերմանիա պիտի ուզէր փոխարինութիւն մը եւ արդէն Պոլսոյ դեսպանը յայտնած էր, թէ իր կառավարութիւնը համաձայն է ընդլայնելու սահմանները եւ կը հետաքրքրուի «բոլոր Հայերով մեծ թէ փոքր Հայաստանի»:

Վերջապէս Լոնտոն եւ Փարիզ Գերմանիոյ կը թողուն ռուս ծրագրին ընդդիմանալու գործը եւ կը մշակուի Դրան կողմէ ընդունելի ծրագիր մը ռուս-թուրք եւ գերմանեւռուս համաձայնութիւններով:

Զկար պետութիւն մը որ համաձայն ըլլար ռուս ծրագրին, նոյնիսկ Ռուսիա անկեղծ չէր: Մեծ պատերազմը կը պատրաստուէր, Գերմանիա կ'ուզէր զինակից ունենալ Թուրքիան, որպէսզի փակէր Նեղուցները, արգիլելու համար Ֆրանքեւռուս յարաբերութիւնները: Ռուս դիւանագիտութիւնը երբեք չէր տարակուսեր, թէ պատերազմը կրնար երկար տեւել, Ռուսիա երկար պատերազմի մը չէր կրնար տոկալ եւ հայկական բարենորոգումները աղետաբեր պիտի ըլլային, ցարական ռեժիմին համար:

×

Համաձայնական պետութիւնները Փոքր Ասիան բաժնեցին ազդեցութեանց գօտիներու, կը մնար Պոլսոյ եւ Նեղուցներու հարցին լուծումը: Կրէյ կը հեռագրէր Փեթերպուրկի անգլիական դեսպանին. « Միակ քաղաքականութիւնը որ կրնանք ունենալ, սախկան Թուրքիոյ բաժանումէն կամ քայքայումէն խուսափիլն է » (1913 Յուլիս 4): Պոլսոյ դեսպան Լուի Մալէ գրած էր. « Տարբեր քաղաքականութիւն մը Պոլսոյ հարցին համար հաւանաբար եւրոպական պատերազմ յառաջ բերէ » (Յունիս 12):

Ռուսիա կը սպասէր պատերազմի գալուստին, որովհետեւ Ներատովի, ռուս Արտաքին Նախարարութեան խորհրդականին համաձայն, « Նեղուցներու հարցը կը լուծուի ընդհանուր պատերազմով »: Թուրքիա կը մտնէր կրկէսին մէջ. Գերմանիոյ եւ Աւստրիոյ կողքին, Անգլիա անմիջապէս կը հրատարակէր իր խնամակալութիւնը Եգիպտոսի վրայ: Սազոնով ի փոխարինութիւն կը պահանջէր Պոլիսն ու Նեղուցները: Լոնտոնի ֆրանսական դեսպան Կրէյի կ'առաջարկէր բանակցութեան սկսիլ անգլեւֆրանսական շահերը ճշդելու համար Փոքր Ասիոյ մէջ:

Գէորգ Ե. կը դիմէր Կովկասի փոխարքային, խնդրելով որ Հայերուն ապահովուի լաւագոյն ճակատագիր մը: Յաջորդ ֆրանսական դեսպան Մօրիս Փալէօլոկի հետ խօսելով կ'ըսէր. «Փոքր Ասիոյ մէջ բնականաբար նկատի պիտի ունենամ Հայերու հարցը: Կարելի չէ անոնք ձգել թուրք լուծին տակ: Կցե՞լ եմ Հայաստանը, այդ պիտի ընեմ, եթէ Հայերը խնդրեն, այլապէս իրենց պիտի տամ ինքնավար վարչութիւն մը»: Կովկասի Հայերուն մէջ եռանդուն գործունէութիւն մը կը տիրէ, կամաւորական գունդեր կը կազմուին, ռուս կառավարութիւնը կասկածանքով կը դիտէր այդ շարժումները: Թուրք բանակին առաջին պարտութիւններ ալ Թուրքերէն կը վերագրուէր հայ կամաւորներու գործունէութեան, Հայրենադաւութիւն կը նկատուէր ատիկա, արեւելեան նահանգներու կացութիւնը խիստ կը ծանրանար: Կոտորած չեղաւ պատերազմէն առաջ, որովհետեւ Թուրք կառավարութիւնը խիստ միջոցներ ձեռք առաւ Քիւրտերու դէմ, վախնալով որ Թուրքեւհայ միջադէպեր անմիջական միջամտութեան պատճառ կ'ըլլան Կովկասի բանակին կողմէ: Պիթլիսի ռուս հիւպատոսը աշխատեցաւ չարժել Քիւրտերը, կոտորած պատճառել եւ միջամտութեան պատրուակ ունենալ: Վալին հրամայեց ձերբակալել պետերը, որոնք ապաստանեցան հիւպատոսարան, յետոյ անցան Կովկաս:

Սուլթանը սրբազան պատերազմ կը հռչակէ Անգլիոյ եւ Ֆրանսայի դէմ ըմբոստութեան հրաւիրելով իսլամները: Անգլիա եւ Ֆրանսա կը յայտարարեն թէ չեն պատերազմիր խալիֆայութեան եւ իսլամութեան դէմ, այլ հաւատուրաց Երիտասարդ Թուրքերու դէմ. պատերազմին գլխաւոր նպատակն է ազատագրել փոքրամասնութիւնները, մասնաւորաբար Հայերը, թուրք բռնակալութենէն: Երիտասարդ Թուրքերն ալ կ'որոշեն ձերբազատուիլ Հայերէն, տարագրելով, կոտորելով:

Էնվէր եւ Թալաաթ գերման դեսպանին կը յայտնեն իրենց ծրագիրը՝ օգտուելով ընդհանուր պատերազմէն՝ արմատապէս վերջացնել ներքին թշնամիներու գործը առանց խանգարուելու արտաքին քաղաքականութեան միջամտութենէն: Գերման դեսպան կոմս Մեթերնիխ կը միջամտէ Թալաաթի մօտ, բայց ի զուր: Ոչ մէկ դիմում նկատի կ'առնուի Երիտասարդ Թուրքերու կողմէ: Թալաաթ կ'ըսէ ամերիկեան դեսպան Մորկենթաուի. « Դուն Հրեայ ես, ինչո՞ւ կը պաշտպանես այս քրիստոնեաները »: Յետոյ կը բացատրէ. « Հայերը հարստացած են ի վնաս Թուրքերուն, կ'ուզէին բաժնուիլ օսմանեան կայսրութենէն եւ հիմնել անկախ պետութիւն մը, քաջալերեցին մեր թշնամիները, միանալով Ռուսերուն՝ պատճառ- ...

ՍԱՅԱԹ - ՆՈՎԱՅԻ ԾՆՆԴԵԱՆ 250 ԱՄԵԱԿԸ

ՄԵԾ ԸՂՁԱՒՈՐՆ ՈՒ ԲԵՋԱՐԱԾԸ

Սայաթ-Նովան այն երջանիկներից է, որոնց նայում են աչքով եւ ոչ թէ ականջով:

Սայաթ-Նովան անուխտաւոր տաճար չէ, այլ մշտարենակ կայարան, եթէ կ'ուզէք՝ մի մեծ իջեւան, որովհետեւ այնտեղ չի բնակւում միայն մէկ ընտանիք, այլ առնուազն երեք ժողովուրդ՝ իր մեծ ու փոքրով...:

Իսկ ո՞րն է զաղտնիքը: Գաղտնիքն ա՛յն բանի, որ կարող է կոչուել յարատեւութիւն կամ մնայնութիւն:

Չէ՞ որ, իրօք, աշխարհահռչակ քանի՛ անուններ կան (չտանք այդ անունները բարձրաձայն, բայց վերյիշենք մտքերնիս մէջ), որոնք այսօր էլ տակաւին մընում են մեծութեան խորհրդանիշ, սակայն ոչ երբեք ապրող - կենդանի մեծութիւն: Եւ գաղտնիքն ա՞յն չէ արդեօք, որ նրանց պակասել է որքան մեծ, առաւել հաղուադիւտ մի շնորհ (Սայաթ-Նովայի լեզուով ասած՝ մի մաքահ բան)՝ գրող լինելով մարդ մնալու շնորհը, որ ճակատագիրը յաճախ զլանում է տալ «հանճար» կոչուածներին անգամ:

Սայաթ-Նովան ունէր շնորհը:

Բանաստեղծների մեծամասնութիւնը, նոյնիսկ ականաւոր բանաստեղծների, իրենց ստեղծագործական կեանքում չըրջում են կեղծամով, որ այս դէպքում պիտի հասկանալ ոչ թէ բառացի, այլ փոխաբերաբար. կեղծամ, որ կա՛մ զըրքայնութիւն է (բառիս ոչ վատթար իմաստով), կա՛մ ծածկամտութիւն, այսինքն՝ անկեղծութեան եւ անմիջականութեան պակաս:

Սայաթ-Նովան այն հազուադիւտներից է, ովքեր կեղծամ չեն դնում, եթէ մինչեւ իսկ ճաղատ - հերաթափ են:

Ահա թէ ինչո՛ւ այսօր էլ, երկու հարիւր տարի անց, նա թւում է ոչ միայն ապրող-կենդանի անձնաւորութիւն, այլեւ ժամանակակից ու հասակակից: Իւրաքանչիւր նորեկ սերնդի հետ նա խօսում է «ես»ով, դիմում է «դու»ով, եւ նրան պատասխանելիս «դուք»ի անհրաժեշտութիւն չի զգացւում:

Մեր հաւատացեալ պապերի համար որքան անհրաժեշտ, նոյնքան էլ հեշտ բան էր մահից առաջ խոստովանելը: Այդ կարող էին անել բոլորը: Բայց մեծերին, միա՛յն մեծերին է տրուած ոչ միայն մահից առաջ, այլ մահից յետոյ էլ խոստովանելու դժուարին բախտաւորութիւնը:

Եւ ահա, աւելի քան 200 տարի, Սայաթ-Նովան խոստովանում է ոչ թէ ինչ-որ մէկի, այլ մի ամբողջ ժողովրդի: Ո՛չ. երե՛ք ժողովրդի:

Եւ խոստովանում է ոչ այլ ինչ, քան իր միակ եւ մեծագոյն մեղքը՝ սէրը:

Սէրն է. ինչպէս, նրա երկրորդ «ես»ը, Հռոմէացիների ասած «ալտէր-էգօ»ն: Ուստի եւ Աւետարանի յայտնի տողը նա կը սրբագրէր այսպէս. «Ի սկզբանէ էր Սէրն», ուրեմն եւ «ամենայն ինչ նովաւ եղեւ, եւ առանց նորա եղեւ եւ ոչինչ, որ ինչ եղեւն»:

Սիրոյ այս առաջնութիւնը (Եւրոպացու ասած պրիմատը) նորութիւն չէր Հայոց բազմադարեան բանաստեղծութեան մէջ: Տակաւին Նարեկացին՝ հայ քնարերգութեան մեծագոյն հանճարը, Սայաթ-Նովայից 800 տարի առաջ, սիրոյ ծագումը տեսնում էր «արեւելքից էլ վեր» եւ «առաւօտից առաջ»:

Հայոց միջնադարեան տաղերգութիւնը, որ (համաշխարհային պոէզիայի մեծ գիտակ, ռուս ականաւոր բանաստեղծ Վ. Բրիւսովի արդար բնորոշմամբ) «մէկն է մարդկային ոգու այն սքանչելի յաղթանակներից, ինչպիսիք գիտի բովանդակ աշխարհի տարեգրութիւնը», կտակել է սքանչելի շատ էջեր, որոնց մէջ սիրոյ ճառագայթումը նոյնպէս սկզբնային է, Նարեկացու բառով՝ «յառաւօտէ»: Իսկ մեր ժողովրդի ստեղծած այն հրաշալիքի մէջ, որ վերագրւում է Նահապետ Քուչակին, իրեն սիրոյ սկիզբ կամ արարիչ համարելը դառնում է արդէն որոշիչ բնորոշում.

Երբ սէրն ի յաշխարհս եկաւ,
Եկաւ իմ սիրտս բնակեցաւ.
Հապա իմ սրտէս ի դուրս՝
Երկրէ երկիր թափեցաւ...:

Այս բնաբանի տակ կ'առնուի Սայաթ-Նովայի ամբողջ սիրերգութիւնը:

Սակայն Սայաթ-Նովայի սիրերգութիւնը մի վճռական - շրջադարձային կէտում տարբերւում է ոչ միայն Նարեկացու եւ միջնադարեան տաղերգուներից, այլ եւ քուչակեան «հայրէններից» ու Յովնաթանի երգերից:

Իրենց սիրերգութեամբ Քուչակն ու Յովնաթանը շատ բանով յիշեցնում են ֆրանսիական թրուպատուրներին, որովհետեւ նոյնպէս այնքան էին զոհ աշխարհային համարում էին, որ երկինքին նայելը միայն խեղճ ու կրակ արեգակների գեղեցկութեան ներկայութիւնն էր: Օր ցերեկով ու բոլորի «քուչեկը» պաշտած Քուչակի փափաքն էր, ինչպէս որ Յովնաթանի ցանկութիւնն էր այնպէս սիրել, որ «աշխարհ-ալամ իմանայ»: Նրա պէս էլ թրուպատուրն էր սիրածից հրապարակում ամենամեծ պարգեւը՝ հրապարակային համբոյրը:

ՓԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ

(Շար. - 4)

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ԳԱՐԵԳԻՆ Ծ. Վ. ՍԱՐԳԻՍԵԱՆԻ ՀԵՏ

Բ.

Հ.— Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան, Դպրեվանքի եւ առհասարակ ազգային – եկեղեցական կեանքի մասին կրնա՞ք սեղմիւ տեղեկութիւններ տալ մեզի:

Քանի՞ եպիսկոպոս, քանի՞ վարդապետ, քանի՞ աբեղայ, քանի ուսանող ունի Դպրեվանքը:

Դպրեվանքի ուսման ծրագիրը վերջնական ի՞նչ ձեւ ստացաւ: Քանի՞ տարի մատենագրութիւն եւ գրականութիւն կ'ուսանին, ի՞նչ միջոցներով կը խորացնեն իրենց ծանօթութիւնները:

Պ.— Այս հարցումը բնականօրէն սըրտիս ամէնէն մօտիկ հարցումն է, որովհետեւ զիս կը հրաւիրէ խօսելու իմ հարազատ հոգեւոր տանս մասին, ուրկէ մէկ ամիսէ ի վեր բաժնուած եմ եւ կարօտի զգացումն է որ կ'արթննայ մէջս ձեր այս հարցումով:

Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը ներկայիս ունի հինգ թեմակալ եպիսկոպոսներ (երեք արքեպիսկոպոս եւ երկու եպիսկոպոս), տասներկու վարդապետներ եւ 12 աբեղաներ, որոնք որպէս ուխտեալ Միաբանները Կիլիկեան Աթոռին, բոլորուած նորընտիր Վեհ. Հայրապետին շուրջ, լծուած են Աւետարանի եւ Հայ ժողովուրդի ծառայութեան, կաթողիկոսութեանս իր թեմերուն եւ Անթիլիասի Մայրավանքին մէջ:

Դպրեվանքը ունի 60 ուսանողներ: Վերջին երեք տարիներուն՝ այս թիւը մնայուն թիւը եղաւ Դպրեվանքի ուսանողութեան: Անոնցմէ վերջ կուսակրօնութեան ուխտը բրած սարկաւագներ են արդէն որոնք ընծայարանի մէջ եռամեայ աստուածաբանական ուսումները կ'ընեն ներկայիս եւ հինգը քահանայից դասընթացքի մէջ են եւ մէկ տարիէն կը ղըրկուին հայ ժողովուրդի հովուական ծառայութեան հոգեւոր եւ ազգային սպասարկութեան: Մնացեալները ժառանգաւոր սաներն են Դպրեվանքի, Հայց. Եկեղեցւոյ եւ հայ ազգի մշակութային ըստեղծագործութեանց մէջէն ճշմարտութեան բացուող եւ դէպի առաքելութեան թրծուող պատանի հոգիներ:

Դպրեվանքի կրթական ծրագիրը հիմնական փոփոխութիւններ չկրեց: Գլխաւոր երկու ուղղութիւնները կը մնան նոյնը — Կրօնագիտական եւ Հայագիտական, լեզուական, ուսողական, գիտական, երաժշտական դասերէն վեր:

Իմ համոզումովս՝ Դպրեվանքի կրթական ծրագրին մէջ հետզհետէ աւելի խորութիւն եւ ընդարձակութիւն պէտք է ստանան այս երկու ուղղութիւնները: Ներկայիս հայ մատենագրութիւնն ու գրականութիւնը, գրաբարի ու աշխարհաբարի ուսուցումներէն զատ երեք տարիներու ընթացքին կ'աւանդուին: Հետապնդուած մեթոտը այն է, որով ուսանողները ուղղակի, անձնական շըփման մէջ կը բերուին սկզբնաղբիւրներուն հետ, այսինքն հաղորդակից կը դառնան մատենագիրներու եւ արդի հայ գրողներու գործերու բովանդակութեան եւ անոր մէջէն բացուող հոգիի ու միտքի աշխարհին հետ:

Կը կրկնեմ. հետզհետէ պէտք է երթալ դէպի խորացում, մատենագիտական պրպտումի ճամբով:

Հ.— Կը մտածուի՞ Կիլիկիոյ Կաթողիկոսարանին մէջ ստեղծել բանասիրական պրպտումներու հնարաւորութիւն մը, որպէսզի արտասահմանէն սրոշ մարդիկ, կաթողիկոսարանի նախաձեռնութեամբ, լծուին մատենագրական, բանասիրական, գրական աշխատանքներու, տարբեր խօսքով՝ Կաթողիկոսութիւնը կը մտածէ՞ պատմագիտական աշխատանքներու ատակ մտաւորականներու հոյլ մը տեւաբար պահել Անթիլիաս եւ զանոնք լծել գործի, մշակութային կորիզ մը ստեղծելով Աթոռին շուրջ:

Պ.— Այս կէտը շատ փափուկ խնդիր մըն է եւ ես ներկայիս ի վիճակի չեմ յստակ պատասխան մը տալու: Հսկայ գործ է ձեր հարցումին մէջէն երեւակայելի գործը եւ ես անձնապէս անկարող եմ յանուն կաթողիկոսարանի, յստակ խօսք մը ըսելու այդ մասին: Ինչ որ անհրաժեշտ կը նկատեմ ըսել այն է, որ պէտք է խորապէս ուսումնասիրուի հարցը, երկարօրէն ծրագրուի աշխատանքը եւ լրջօրէն ձեռնարկուի որեւէ գործի որ նման պատասխանատու դեր մը ունի սփիւռքեան հայ մտաւորական կեանքին համար:

Կաթողիկոսարանը անկէ երկու տարիներ առաջ 15–20 հայ երիտասարդ մտաւորականներու համար « Շաբաթ » մը կազմակերպեց որ բացառիկ յաջողութիւն մը եղաւ ներքին մտաւորական ամրապնդումի եւ լրջութեան տեսակէտէն: Կաթողիկոսարանը պատրաստ է այդ մըշակութային առաքելութիւնը շարունակելու:

Հ.— Ի՞նչպէս կ'ըմբռնէք կուսակրօն հայ հոգեւորականութեան տեղը՝ անկախաբար հովուական սահմանափակ աշխատանքներէ: Չէ՞ք կարծեր, որ անոնք առաւելապէս մշակութային, հոգեւոր եւ բարոյական առաքելութիւն մը ունին՝ հանրային գծով:

Պ.— Հայ կուսակրօն հոգեւորականութիւնը Սփիւռքի մէջ, իմ պարզ հասկացողութեամբս, պէտք է լծուի առաւելապէս հոգեւոր կրթութեան, մշակութային գործունէութեան եւ հայ տոհմիկ դաստիարակութեան կենսական գործին: Մեր եկեղեցւոյ նուիրապետական դրութիւնը ինքնին յստակ բաժանում մը կը գծէ հովուական գործին եւ մտաւորական գործունէութեան միջեւ: Հովուական գործը, ծխական մակարդակի վրայ հայ քահանային է վիճակուած, իսկ մտաւորական ու կրթական գործը հայ վարդապետին, վանական կազմակերպութեան մէջէն ինքզինք արտայայտող: Մեր եկեղեցւոյ պատմական կեանքին մէջ վարդապետներու դասը մտաւորական ջիղն է եղած հայ մշակոյթին: Այսօր Սփիւռքի պայմաններուն մէջ ինքզինք ամբողջութեամբ ընծայել գիտցող վարդապետը պէտք է իր գործունէութեան առանցքը ընէ քրիստոնէական ճշմարտութեանց եւ հայ արժէքներու փոխանցումը հայ նոր սերունդին խօսքի ու գիրի ճամբով, զանոնք խորապէս իւրացնելէ ետք միայն:

…ցին մեր ձախողութիւնները »:

Թուրքիա կը սպառնայ առանձին հաշտութիւն մը կնքել, եթէ Գերմանիա եւ Աւստրիա միջամտեն իր ներքին գործերուն, այնքան ատելութիւն կուտակուած էր Հայերու հանդէպ: Ժամանակը նպաստաւոր էր սպառնալիքը գործադրելու համար: Ռուս սպայակոյտի պետ Զօր. Ալեքսիեւ համաձայն է առանձին հաշտութիւն կնքելու Թուրքիոյ հետ 1915 Հոկտեմբեր 21ին, Պուլկարիոյ պատերազմի մուտքին առիթով, որովհետեւ Գերմանիա ուղղակի հաղորդակցութիւն հաստատելով Թուրքիոյ հետ, պարէն, զօրք եւ հում նիւթեր պիտի ղրկէր, դիմադրելու կարողութիւնը պիտի զօրացնէր: Թուրքիոյ ճակատներուն վրայ գտնուող ուժեր կարելի պիտի ըլլար փոխադրել Գերմանիոյ դէմ, Կովկասի բանակը ազատ պիտի ըլլար, Նեղուցներու բացումով կարելի պիտի ըլլար հաղորդակցութիւն հաստատել զինակիցներու հետ, կարելի պիտի ըլլար արմտիք արտածել, զէնք ներածել, եւ վերջապէս աւելի շուտ եւ հեշտ գերման զինուորական ուժը խորտակել:

Անգլիա կը կասկածէր, թէ ռուս նաւատորմը անմիջապէս գործողութեան պիտի անցնէր Վոսփորի դէմ, եթէ Թուրքիա չէզոք ալ մնացած ըլլար, երբ պատերազմը ծագէր Երրեակ Զինակցութեան դէմ: Ծովակալ Մէլն չհետապնդեց Կէօբէն եւ Պրեսլաու մարտանաւերը:

ԽՈՐԷՆ ԳԱԲԻԿԵԱՆ

(Շար. – 3)

ՍՏԱՑԱՆՔ

«ՈՍԿԻ ԱՇՈՒՆ», բանաստեղծութիւններ. գրեց՝ Մ. Իշխան, Պէյրութ 1963:

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ, թատերախաղ հինգ արար, գրեց Գէորգ Դարֆի, Թեհրան, 1963:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԻԼԻԿԻՈՅ (Ա. հատոր), Ռուբինեանց Հարստութիւն, 1080–1375:

ՆԵՐՍԷՍ ՊԱՏՐԻԱՐՔ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ, գրեց՝ Լեւոն Տ. Ճերահեան (32 պկս, Պուլվար տէ Ֆօվէթ, Պոմն – Մարսէյլ):

Կ'ԱՐԺԷ ԳԻՏՆԱԼ

Մ. Նահանգներու մէջ պատրաստեցին նոր տեսակի կերպընկալ բաղադրութիւն մը, որ ունի հետաքրքրական յատկութիւն մը. լոյսի ճառագայթներուն տակ ան կը ստանայ տարբեր գոյն, իսկ մութին մէջ կ'առնէ իր սովորական գոյնը: Կը մտադրեն օգտագործել լուսամուտներու փեղկերուն համար, որոնք արեւոտ օրերուն ստանալով աւելի գոց գոյն, թոյլ չեն տար արեւի ճառագայթներուն թափանցումը, իսկ ամպոտ օրերուն վառ լոյս կ'արձակեն սենեակին մէջ:

×

Լեհ ճարտարագէտ մը՝ Զ. Փթասնիսքի գտած է երկաթ պատրաստելու նոր եղանակ մը: Ըստ յիշեալ մասնագէտին, ջերմելեկտրակայաններու մէջ ստացուած մոխիրը կը պարունակէ 5 առ հարիւր երկաթ: Այս երկաթը կարելի պիտի ըլլայ մոխիրէն զատել՝ օգտագործելով ելեկտրամագնիսական անջատիչներ:

×

Միջերկրական ծովի լիբանանեան ափերուն մօտ գտնուեցան նաւերու բեկորներ, որոնց մասին մասնագէտները կ'ենթադրեն թէ մնացորդներն են Մեծն Աղեքսանդրի այն նաւատորմին, որ Ք. Ա. 332ին մասնակցեցաւ Տիրոս քաղաքի պաշարումին: Գտնուեցան նաեւ նոյն ժամանակաշրջանին պատկանող փիւնիկեան եւ յունական առագաստանաւերու մնացորդներ:

×

Հունգարացի ճարտարապետներ նախագծեցին ինքնատիպ քաղաք մը: Ամբողջ քաղաքը պիտի բաղկանայ միակ շէնքէ մը, որ ունի 3000 մեթր երկարութիւն եւ 100–120 մեթր բարձրութիւն: Այս քաղաք շէնքին միջանցքները պիտի կազմեն փողոցներ՝ իրենց երկայնքին ունենալով խանութներ, դպրոցներ, շարժանկարի սրահներ, պետական հաստատութիւններ, ճաշարաններ եւայլն: Այս նախագիծը իրականութիւն դառնալու պարագային, իւրաքանչիւր յարկաբաժնի շինութեան 40 առ հարիւր խնայողութիւն մը պիտի կատարուի:

×

Միայն Չինաստանի մէջ կը ցանեն աւելի քան 20 միլիոն հեկտար բրինձ: Բրինձի մշակութիւնը մեծ տարածութիւններ կը բռնէ նաեւ Վիէթնամի, Ճափոնի եւ Ծայրագոյն Արեւելքի այլ երկիրներուն մէջ: Բայց բրինձի ջուրով լեցուած դաշտերուն մէջ ցանք կատարելը դժուար է ու շատ ժամանակ կը խլէ: Ուստի շատ կարեւոր է բրինձի ցանքին մեքենայացումը: Չինացի բժիշկ մը՝ Տայ Մաօյեան հնարած է բրինձի պարզ մեքենայ մը: Այս նոր մեքենան շինուած է միայն փայտով, առանց մետաղի եւ ամէն գիւղացի կրնայ շինել այս ձեւի մեքենայ մը: Մեքենան կ'աշխատի առանց քարշակի (թրաքթէօր), սովորական հեծելանիւի ոտնակներու (փետալ) միջոցաւ:

«ՅԱՌԱՋ»Ի ԹԵՐԹՕՆԸ (215)

ԵԸԼՏԸԶԻ ՊՈՄՊԱՆ

ՀԱԶԱՐ ԻՆԸ ՀԱՐԻՒՐ ՉՈՐՍ

Յետաշրջական շարժումին առաջին յաջողութենէն շլացած եւ ախորժակը սըրուած, Ապտիւլ Համիտ կը մտածէր ընդարձակել իր աշխարհաւեր գործողութիւններուն շրջանակը. մայրաքաղաքէն դուրս, նահանգներուն ու գաւառներուն մէջ, նաեւ գաւառակներուն ու գիւղերուն խորերը, իր կայսրութեան մերձաւոր թէ հեռաւոր անկիւնները, ամէն տեղ, ամէն խաւերու մէջ կը խորհէր վառել հրդեհը. երեսուն երեք տարիներու փորձառութիւնը գրաւական մըն էր իրեն համար, յաղթահարելու ամէն խոչընդոտ...:

Կը մնար հիմակ աչքէ անցընել կուսակալներուն, կառավարիչներուն, գայմագամներուն, գիւղախումբի տնօրէններուն, ժանտարմայի եւ կանոնաւոր զօրաբանակներու հրամանատարներուն ցանկը, որուն մէջէն ընտրելու էր իրեն հաւատարիմ մնացած, իր կայսերական անհուն (՛) շնորհներով լիացած, երախտաւորեալ արբանեակները, որոնք ընդունակ էին կէտ առ կէտ գործադրելու իր դժոխային ծրագիրը:

Այդ յղի օրերուն մէջ էր, կայսրութեան զանազան անկիւններէն, նոյնիսկ մայրաքաղաքէն, ժուռնալներ կը տեղային Եըլտըզ, Խալիֆայութեան դէմ ըսպառնացող Երիտասարդ Թուրքերու կառավարութիւնը դատափետող ժուռնալներ, որոնք ոչ նուազ կ'ազդէին Բռնաւորի եղեռնասուն ուղեղին վրայ:

Աւելին կայ: Նոր թիկնապահները, նոր սենեկապետները, նոր քարտուղարները, նոր պալատականները, որոնք Էպիւլ Հիւտաներու, Գարա Թահսիններու, Իզզէթ Ալփաններու, Մէլհամէներու, եւայլն, եւայլն փախուստէն, ձերբակալումէն կամ արտաքսումէն ետքը մուտք գտած էին Եըլտըզ՝ Իթթիհատի պետերուն յանձնարարութեամբը, գրեթէ առանց բացառութեան, բոլորը տակաւ ընտելացած էին Եըլտըզի ներքին կեանքին, որ հոն կը տիրապետէր քառորդ դարէ աւելի ժամանակէ ի վեր. ասոնք, մեծ մասը կարծեցեալ յեղափոխականներ, Ապտիւլ Համիտի ոսկիներու ծուղակին մէջ ինկած էին շուտով, եւ օսմանեան նորածին Սահմանադրութեան դէմ պատրաստուող դաւերուն մէջ անգիտակից գործիքներ կ'ըլլային դժբախտաբար. այնպէս որ, Սահմանադրութենէն ասդին իրարու յաջորդող դահլիճները չէին կրնար թափանցել Եըլտըզի մէջ լարուած դաւերուն մեքենայութիւնները, տեղի ունեցած հայրենադաւ խորհրդակցութիւնները եւ, հետեւաբար, Օսմանցիներու Սահմանադրական Կայսրը (՛) որ Ապտիւլ Համիտը պիտի ըլլար, մէկ երկու ամսուան ընթացքին, կարողացած էր առաջ քշել իր ծանօթ ծրագիրը, առանց մատնուելու, չթերանալով միեւնոյն ժամանակ քաջալերելու ժուռնալներու երամակը, որ երթալով կ'ապացուցանէր իր վերածնունդը եւ կ'աճէր ու կը ստուարանար:

Վալիներու եւ միւթէսարըֆներու ցանկը, որուն մէջէն պիտի ընտրէր ամէնէն ատակները, ծայրէ ծայր աչքէ անցուցած եւ գտած էր առաջին շարքին մէջ երկու արժանաւորներ, որոնք պիտի կրնային առանց դժուարութեան գլուխ հանել գործը: Այդ երկու հանուած պաշտօնեաները ծանօթ էին արդէն իրենց... անցեալ գործունէութեամբ. Ատանայի կուսակալ Ճէվատ պէյը եւ Ճէպէլի Պէրէքէթի կառավարիչ Ասաֆ պէյը. առաջինը՝ Քիւչիւք Ճէվատ պէյ, իր անձնական քարտուղարներէն եղած էր, Սիւրէյա փաշայի շրջանին. իսկ երկրորդը՝ Եըլտըզէն սիրուած անբաղդատելի հայատեաց մըն էր:

Ուստի, որոշեց սկսիլ Ատանայէն, ուրկէ ստացած էր արդէն քանի մը ժուռնալներ, հայկական իշխանապետութիւն (՛) մը հիմնելու գաղափարը վերագրելով Կիլիկիոյ Հայերուն, որոնք Սահմանադրութեան հռչակումէն ի վեր, երկրին բացարձակ տէրերը (՛) կը հռչակէին (՛) իրենք զիրենք, եւ Օսմանեան կայսրութիւնը բաղկացնող միւս տարրերէն աւելի, խանդավառ ցոյցերով տօնած էին Յուլիս 10ի Մեծ Օրը...: Եւ ասիկա բաւական չէ՞ր միթէ բնաջինջ ընելու համար այդ վայրերու հայ տարրը...:

Միհանն ու Ջահանը ներկող հայ արիւնը, որ հոսեցաւ Կիլիկիոյ մէկէ աւելի բարգաւաճ քաղաքներուն ու գիւղերուն մէջ, Օսմանեան Սահմանադրութեան պարտուց էջին մէջ անջնջելիօրէն արձանագրուած պիտի մնայ կարմիր թուանշաններով, ոչ միայն իբրեւ Մեծ Մարդասպանի վայրագ վրէժխնդրութեան վերջին կօթողը, այլ նաեւ Սահմանադրական Ռեժիմին անունով կառավարողներու երեսին շպրտուած թուք մը...:

ՍՄԲԱՏ ԲԻՒՐԱՏ

(Շար.)

ՍԱՄՈՒԷԼ ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ՆՈՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Իրենց զաւակները արձանագրել փափաքող ծնողները պէտք է փութան դիմել տեսչութեան հասցէին :

COLLÈGE ARMÉNIEN SAMUEL MOORAT
26, Rue Troyon, SEVRES (S. et O.)
Tél. : OBS. 18-28

Եւրոպայի մէջ, հայ մանչերու համար հիմնուած, Ֆրանսական եւ Հայկական ուսումնական կատարեալ ծրագիրներով օժտուած մեծագոյն եւ ծաղկեալ ուսումնարանն է Սեւրի Սամուէլ Մուրատեան վարժարանը, ուրուն սեմէն ներս հայ մանուկին հոգին, միտքը եւ մարմինը կը մեծնայ, կը ծաղկի եւ կ'ընդլայնի բաղձալի համեմատութիւններով :

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Աղքատախնամի տարեկան պարահանդէսը՝ Ժորժ Ե·ի *շքեղ սրահներուն մէջ, Հոկտեմբեր 27ին, ժամը 16էն 24 :*

ՄՕՏ ՕՐԷՆ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԷ

ՀԱՅ ԲՈՅԺ

ԺՈՂ· ԱՄՍԱԹԵՐԹ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ

խմբագիր՝ Շ· ՆԱՐԴՈՒՆԻ

1962 *տարուան բացառիկ հատորը,* 128 *էջ գրական, պատմա – բանասիրական, բժշկական այլազան եւ հարուստ բովանդակութեամբ, կարգ մը քլիշէներով :*

1963 *տարուան բացառիկ հատորը, նոյնքան բովանդակալից, յանձնուած է մամուլին :*

Այս երկու հատորները պիտի ղրկուին միայն պարտաճանաչ եւ հաւատարիմ բաժանորդներուն :

1964*էն սկսեալ ՀԱՅ-ԲՈՅԺ կը ստանայ պարբերաթերթի իր նախկին դիմագիծը :*

Բաժնեգինը մինչեւ տարեվերջ՝ կը մնայ նոյնը, 15 *նոր Ֆրանք Ֆրանսայի համար : Ամերիկա* 5 *տոլար :*

Դիմել Յառաջի *խմբագրատան հասցէով, (միշտ* Յառաջ *գրել հասցէին վրայ·, եւ* Հայ-Բոյժ*ի խմբագրին անունով (Գրել*

Ch. Aïvazian

ուղղագրութեամբ) ·—

32, Rue de Trévise, Paris (9e)

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

ԼԻՈՆ ·— Ֆր· Կապ· Խաչի Օրը կը տօնուի մեծ պատրաստութեամբ, 27 Հոկտ· Մոլիէրէի շքեղ սրահին մէջ :

×

Մարսէյլի մէջ Դաշնակցութեան Օրը կը տօնուի Հոկտեմբերի 5ին Սալոն Ալ – համպրա :

Շ. ՄԻՍԱՔԵԱՆ

Օրեր եւ Ժամեր

Շ. ՆԱՐԴՈՒՆԻԻ

ՀԻՆ ՈՒ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

	ֆր·
Մեղեդիներ, մեղեդիներ	20
Բանե՛ր, բանե՛ր, ի՛նչ բաներ	15
Առաջնորդ Մայրերու	10
Լուսեղէն Շիրիմներ	10
Կանաչ Բաժակով	7,50
Ջրվէժ	7,50
Վարդամատեան	7,50
Ծաղկամատեան	7,50
Նիզակամարտ Շաւարշանայ դաշտին վրայ	5
Ո՞ւր ես մայր իմ	3
Մեղուին ճառը	3
Ոգին Հայկազանց	3
Մատեան Հայկազանց	3
Բաժակ ի ձեռին	3
Որդիք ցասման	3

Առաքման ծախքը գնողին վրայ :
Դիմել հեղինակին Յառաջի *հասցէով*

Կ'ՈՒԶՈՒԻՆ

ՍՏԻՊՈՂԱԲԱՐ

Կրթական հաստատութեան մը մէջ աշխատելու համար կ'ուզուին ·—

ա) *Միջին տարիքի կին մը՝ ներքին մաքրութեան եւ տնական գործերու համար :*

բ) *Այր մարդ մը ճաշարանը ծառայելու համար :*

ԱՆՁԱՄԲ դիմել Յառաջի *վարչութեան :*

ԿԸ ՓՆՏՌՈՒԻՆ

Տէր-Յովհաննէսեան Յովհաննէս, հօրը անունը Պետրոս, մօրը անունը Սալվի, քրոջը անունը Հերմոն· ունի երկու եղբայրներ՝ Սահակ եւ Մովսէս : Կը բնակէին Էրզրումի Պասինէն գիւղը : Իրենցմէ լուր կ'ուզէ իրենց հօրեղբայր Կարապետի աղջիկը՝ Վարդանոյշ, մօրը անունը Մանեայ :

Հասցէն է ·— Երեւան, Արաբկիր, 8րդ փողոց, թիւ 5 տուն, խորհ· Միութիւն :

ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ

Կապոյտ Խաչի Վիէնի մասնաճիւղի տարեկան դաշտահանդէսը տեղի կ'ունենայ Սեպտեմբեր 1ին, առաւօտէն մինչեւ երեկոյ «Իւ-Էս-Ա·»ի մարգագետին վրայ (Թանըրիին քով) :

Գեղարուեստական ճոխ բաժին : Բանախօսութիւն, երգ, արտասանութիւն եւ հայկական պարեր :

Ճոխ պիւֆէ· աղանդերներ եւ շամփուրով խորոված :

Սիրով կը հրաւիրուի գաղութի հայութիւնը :

Անձրեւի պարագային «Խաժակ» սրահը :

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՕՐԸ Փարիզի մէջ *կը տօնուի 26 Հոկտ· շաբաթ գիշեր մինչեւ լոյս, 6րդ Թաղամասի քաղաքապետարանի սրահներուն մէջ :*

★

Փարիզահայ Տիկնանց Միութեան յիսնամեայ յոբելեանը կը տօնուի Հոկտեմբեր 13ին, Սալ տը լա Շիմի :

FOURRURES

Roger YOPIAN

PRIX INTERESSANTS
NEUF et REPARATION

84, Boulevard de Stalingrad, 84
— CHOISY-LE-ROI (Seine) —

Autobus : de la Porte de Choisy, descendre 3 Communes ou Rue du Docteur-Roux.

ՍԱԿԱԳԻՆ ԸՆԹԱՑԻԿ ԱԶԴԵՐՈՒ

ՄԷԿ ԱՆԳԱՄՈՒԱՆ ՀԱՄԱՐ

ՄԱՀԱԶԴ	35 Ֆ·	մինչեւ 1/4 սիւնակ
ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ	15 Ֆ	մինչեւ 1/8 սիւնակ
ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ	10 Ֆ·	» » »
ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ	20 Ֆ·	» » »
ՀԱՐՍԱՆԻՔ, ՆՇԱՆՏՈՒՔ	20 Ֆ·	» » »
ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ	10 Ֆ·	» » »
ԾՆՈՒՆԴ	20 Ֆ·	» » »
«ՓՈԽԱՆ ԾԱՂԿԵՊՍԱԿԻ»	10 Ֆ·	» » »
«ԿԸ ՓՆՏՌՈՒԻ»	5 Ֆ·	» » »
ԾԱԽՈՒ Է	20 Ֆ·	» » »

Այս գինները մէկ անգամ հրատարակելի եւ նշանակուած ծաւալով ազդերու համար են, չորրորդ էջը :

Կանխիկ վճարումը պարտաւորիչ է :

Առեւտրական կամ այլ ազդերու մասնաւոր պայմաններուն համար դիմել Վարչութեան :

ԼՈՅՍԸ ԳՈՅՆ Է···· ԳՈՅՆԸ ԼՈՅՍ Է

ՁԵՐ ՏԱՆԸ ԼՈՅՍ ՏՈՒԷ՛Ք···· ԹՈՄԼԱՔԻ ԳՈՅՆ ՏՈՒԷ՛Ք

Ձեր բնակարանը կը լուսաւորուի
Եթէ ներսը եւ դուրսը

ՎԵՐԱՆՈՐՈԳԷՔ – ԶԱՐԴԱՐԷՔ – ՆԵՐԿԷՔ

ԹՈՄԼԱՔ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐՈՎ

PEINTURES THOMLAC

16 bis, Bd. Sébastopol, Paris 4e

Tél. ARC 26-61 – Métro : Halles et Chatelet

136, RUE DES BOURGUIGNONS — ASNIERES - BOIS COLOMBES (Seine)
Tél : GRE. 09-47

11, BD. DE LA REPUBLIQUE — LA GARENNE (Seine)
Tél. : STA. 19-06

ԱՆՄՐՑԵԼԻ ԳԻՆԵՐՈՎ

Ամէնէն արդիական, նուրբ եւ ընտիր ճաշակով պատրաստուած՝ տաւլնա - կարգ ներկեր : Բնական եւ արուեստական բազմերանգ գոյներու մեծ ընտրութիւն : Նորոյթ իւղաներկեր, պատի գեղեցիկ թուղթերու ճոխ ընտրութիւն· — Գետնի համար՝ ամէն տեսակ — լինոլէոմ *եւ* փլասթիք *— ծածկոցներ· —*

TAPIFLEX — TAPISOM — CARPETTE

Ձեր բնակարաններուն արտաքին եւ ներքին խնամքներուն համար անհրաժեշտ բոլոր նիւթերը :

Ամէն գնորդի կը նուիրուի յատուկ տետրակ մը, որու շնորհիւ կրնայ 10–30 առ հարիւր զեղչ ունենալ :

ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐ

52, RUE CHALON, PARIS 12e — 64, BLD. DE BELLEVILLE, PARIS 20e
166, AV. ARISTIDE BRIAND — PAVILLONS - SOUS-BOIS (Seine)
4 bis, RUE PAUL VAILLANT COUTURIER — ARGENTEUIL (S. et O.)
24, RUE PAUL VAILLANT-COUTURIER — ALFORTVILLE (Seine)
48 bis, RUE DALAVRAC — FONTENAY - SOUS - BOIS (Seine)

ՀՐԱՆՏ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

51, Rue Monsieur-le-Prince, PARIS - 6e — Chèque Postal : 1278-35

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՇԻՐՎԱՆԶԱԴԷ, Երկերի ժողովածու, 10 *հատոր լաթակազմ*	70 Ֆր·
ՍՏԵՓԱՆ ԶՕՐԵԱՆ, Երկերի ժողովածու, 7 *հատոր, լաթակազմ*	56 Ֆր·
ՍՏԵՓԱՆ ԶՕՐԵԱՆ, Պապ թագաւոր, լաթակազմ	10 Ֆր·
ՍՏԵՓԱՆ ԶՕՐԵԱՆ, Հայոց բերդը, *լաթակազմ*	8 Ֆր·
ՎԱՀԱՆ ՏԷՐԵԱՆ, Երկերի ժողովածու, 2 *հատոր լաթակազմ*	14 Ֆր·
ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՒԻԹ, *մեծադիր, գունաւոր նկարներով, լաթակազմ*	10 Ֆր·
Վ· ԱՆԱՆԵԱՆ, Հայաստանի կենդանական աշխարհը, Բ·	8 Ֆր·
ԱՐՍԷՆ ՏԷՐՏԷՐԵԱՆ, Երկեր (*Արովեան Պռօշեան, Պարոնեան*)	17 Ֆր·
ՄՈՒՐԱՑԱՆ, Պատմուածքներ, գունաւոր *նկարներով*	5 Ֆր·
ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑԻ մասին յիշողութիւններ· *լաթակազմ*	7·50 Ֆր·
ՄԻՔ· ՇԱԹԻՐԵԱՆ· Գարունը նորից եկաւ· 296 *էջ·*	5 Ֆր·
ԱԲԳԱՐԵԱՆ· Մատենադարան(*անգլ·*) 18 *գունաւոր մանրանկարներ*	3 ֆր·
ՀԵՆՐԻԿ ԹՈՒՄԱՆԵԱՆ· Երգի ծնունդը· բանաստեղծութիւններ	3·85 Ֆր·
Մ· ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ· Տաղեր, 200 էջ· *լաթակազմ*	3·50 Ֆր·
ՍՈՎԵՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ· Ա· 800 *էջ· լթկզմ·*	16 Ֆր·
ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ, Անլռելի զանգակատուն, *Պէյրութ*, 1963	10 Ֆր·

Առաքման ծախքը գնողին վրայ

ԳՐԱՏՈՒՆՍ ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻՆ Է
ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՁԱՅՆԱԳՐԵԱԼ ԲՈԼՈՐ ԵՐԿԵՐՈՒՆ
ՃՈԽ ՄԹԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԵՒ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆՑ

IMPRIMERIE SPECIALE DU JOURNAL « HARATCH »
32, Rue de Trévise, PARIS (9e)

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

Le PREMIER QUOTIDIEN ARMENIEN en EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction et Administration : 32, Rue de Trévise - PARIS-9e

Fondé en 1925 Téléph. : PRO. 86-60
R. C. Seine 57 A 2731 C. C. P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա՝	Տար. 50 Ֆ.	Վեցամսեայ՝ 27 Ֆ.	
Արտասահման՝	Տար. 60 Ֆ.	Հատը	0.30 Ֆ.

ՈՒՐԲԱԹ 30 ՕԳՈՍՏՈՍ

VENDREDI 30 AOUT 1963

LE NUMERO : 0,30 FR.

39րդ ՏԱՐԻ — Թիւ 9695

Fondateur : SCHAVARCH MISSAKIAN

39e ANNÉE — No 9695

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ՓՈԹՈՐԻԿԸ ԱՆԽՈՒՍԱՓԵԼԻ

Բանակը հեռու պէտք է մնայ քաղաքականութենէ։

Այսպէս կը պահանջեն ժողովրդավարութեան սկզբունքները։

Բանակը ենթակայ է քաղաքային իշխանութեան — կառավարութեան։ Պարտականութիւնն է ազգային պաշտպանութիւնը։

Երբ երկրի մը մէջ կառավարութեան ղեկը կ'անցնի բանակին ձեռքը, արձակուրդ կը տրուի ժողովրդավարութեան։

Ներկայիս արեւմուտքի եւ արեւելքի զանազան երկիրներուն մէջ իշխանութիւնը կը գտնուի զինուորականներու ձեռքը։

Խախտած են ժողովրդավարութեան հիմնական սկզբունքները։

Թուրքիա, որ անպարարութեամբ անդամ գրաւած է ժողովրդավար Արեւմուտքի զանազան կազմակերպութեանց մէջ, ամէնէն յետադիմական երկիրներէն մէկն է, ուր «ժողովրդավարութիւն»ը դատարկ բառ մըն է լոկ։

1960 Մայիս 27ի զինուորական յեղափոխութիւնը՝ տապալելով դեմոկրատներու մենատիրական վարչաձեւը, հաստատեց յետաշրջական կարգեր։

Հանրապետութեան նախագահի պաշտօնին կոչուեցաւ զինուորական մը — Զօր. Ճեմալ Կիւրսէլ։ Տարիներէ ի վեր վարչապետի աթոռին կառչած է յետադիմական զինուորական մը — Իսմէթ Ինէօնիւ։ Յեղափոխութեան մասնակից զինուորականները ի պաշտօնէ անդամ նշանակուած են Խորհրդարանին — ծերակուտական։ Հանրապետութեան նախագահը ինք կը նշանակէ կարգ մը ծերակուտականներ։ Վարադոյրի ետեւէն բանակն է, որ ուղղութիւն կու տայ քաղաքականութեան։

Նոր Սահմանադրութիւնը ժողովրդավարութեան անունին տակ ամէնէն խիստ վարչակարգ մը հաստատած է երկրին մէջ։

Մայիս 21ի վիժած յեղափոխութիւնը պատրուակ բռնելով, կառավարութիւնը պաշարման վիճակ յայտարարած է Պոլսոյ, Անգարայի եւ Իզմիրի մէջ։

Աւելի քան չորս միլիոն անգործներ հաց ու գործ կը պահանջեն։

Ձախակողմեան տարրեր կը շահագործեն բանուորներու անօթութիւնն ու երկրին ընդհանուր թշուառութիւնը՝ «ընկերվարական» շարժում կազմակերպելու համար։

1960 Մայիս 27ի յեղափոխութենէն ետք հանգստեան կոչուած եօթը հազար սպաներ դժգոհներու բանակ մը կը կազմեն։

Իշխանութեան տենչացող բարձրաստիճան զինուորականներ կառավարութիւնը տապալելու փորձեր կը կատարեն։

Անգարայի զինուորական վարժարանի տնօրէն գնդապետ Թալէաթ Այտէմիր 1962 Փետր. 22ի անյաջող փորձէն ետք, այս տարուան Մայիս 20–21ին երկրորդ ձեռնարկ մըն ալ կատարեց, բազմաթիւ կողմնակիցներու հետ։

Ծեր աղուէս Ինէօնիւն այս փորձն ալ ձախողեցուց, շնորհիւ բանակին, որ հաւատարիմ կը մնայ իրեն։

Սակայն երկիրը չէ խաղաղած։ Կառավարութեան դէմ դժգոհութիւնը աւելի համեմատութիւններ է առած։ Գնդապետ Այտէմիրի համամիտ տարրերը [...] գործունէութեան լծուած՝ մտահոգութիւն կը պատճառեն Իսմէթի[...]։ Խառն կառավարութեան բաղկացուցիչ տարրերն ալ դիրք ճշդած են [...] դէմ։ Վարչապետը անհնարին կ'ընէ միասնականութիւնը պահ–

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

" ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՏՈՂԱՆՑՔԸ "

Անցեալ դարէն ի վեր զանազան առիթներով, Ուաշինկթըն թատերաբեմը եղած է բազմաթիւ տողանցքներու։

1894ին, անգործներն էին որոնք մեծ ծրագրի մը գործադրութիւնը կը պահանջէին։ 1913ին, «սիւֆրաժէթ»ները կը քալէին Ուաշինկթընի վրայ՝ պաշտպանելու համար իգական քուէարկութեան դատը։

1925 Օգոստոսին «Քլու Քլուքս Քլան»ի անդամներն էին որոնք մասնաւոր քառասուն կառախումբերով կ'անցնէին Ուաշինկթընէն։ Այս գաղտնի կազմակերպութիւնը սեւերուն եւ կաթոլիկներուն դէմ է։ Ասոնք մասնաւորաբար Հարաւային նահանգներէն կուգային եւ ամբողջ գիշեր մը փայտէ հսկայ խաչ մը վառած էն Փոթոմաքի վրայ։ Քանի հատ ալ «սովի տողանցքներ» եղած են եւ այդ առթիւ միայն երգուած է «Միջազգային»ը։

«Վեթերաններու արշաւը», այլ խօսքով՝ նախկին ռազմիկներու, որ տեղի ունեցած է 1932ին, ամէնէն յիշատակելին եղած է։ Ասոնք «պարգեւ» մը կ'ուզէին նախագահ Հուվըրէն, զոր ստացան չորս տարի ետք միայն։

Եւ վերջապէս 1963 Օգոստոս 28ին, 100 հազար սեւեր կը նախատեսուէին, Ուաշինկթընի վրայ քալելու համար։ Արդարեւ ազատութեան եւ ժողովրդավարութեան ախոյեանի անուն հանած Ամերիկան, ցեղային խտրականութեան ծանր հարցը չէ կրցած լուծել եւ յաճախ բախումներ, ծանր դէպքեր տեղի կ'ունենան։

Զորեքշաբթի օրուան արշաւին մասնակցողներու ճշգրիտ թիւը կարելի չէ գիտնալ։ Ամէն պարագայի մէջ, մասնակցողներուն 90 առ հարիւրը սեւերէ բաղկացած էր։ Թղթակիցները կը յայտնեն թէ ասոնց մէջ «արհեստաւոր» ալ կան, այսինքն մարդիկ որոնք բոլոր տողանցքներուն կը մասնակցին, առանց հետաքրքրուելու նպատակով։ Այս պարանքը կայ արդէն բոլոր երկիրներու մէջ։

Այս տողանցքին ընդհանուր բանաձեւը եղած է՝ մինչեւ ծայրը տանիլ պայքարը։ Վեց սեւ եւ չորս ճերմակ պարագլուխներ ընդունուած են Սպիտակ Տան մէջ, նախագահ Քենըտիի եւ փոխ-նախագահ Լինտոն Ճոնսոնի կողմէ։

Նախագահ Քենըտի յայտարարած է թէ սեւերու ձեռք ձգած շահերը 1963ին երբեք պիտի չկորսուին։

պանելու համար։ Ատալէթ կուսակցութիւնը աւելի քան երբեք անհաշտ կեցուածք ցոյց կու տայ իբրեւ ընդդիմադիր։

Միւս կողմէ քրտական հարցն ալ լրջօրէն կը զբաղեցնէ կառավարութիւնը։ Մոսկուայի ազդարարութիւնը յատկանշական երեւոյթ էր։ Անքարա պատասխանեց թէ մտադիր չէ միջամտելու Իրաքի Քիւրտերու գործերուն։ Սակայն փաստ է, որ թուրք զինուորներ համախմբուած են Իրաքի սահմանին վրայ եւ Թուրքիոյ քրտաբնակ շրջանները խիստ հսկողութեան տակ են։

Վերջին օրերու զանգուածային ձերբակալութիւնները, պաշարման վիճակի երկարաձգումը մինչեւ Հոկտեմբեր, տնտեսական – ելմտական կացութեան ծանրացումը, ընկերային շարժումներն ու ներքին խլրտումները նախանշաններ են նոր փոթորիկի մը, որ անխուսափելի պիտի դառնայ եթէ հրաշք մը չպատահի։

ՀՐԱՆՏ – ՍԱՄՈՒԷԼ

Օրէ Օրին

«ՈՉ ՄԻԱՅՆ ՀԱՑԻՒ...»

Ոչ հացիւ միայն կեցցէ մարդ,
այլ ամենայն բանիւ Աստուծոյ։
ՂՈՒԿ. Դ. 4

Լենինաշունչ վարդապետութեան մեր օրերու մարգարէն, վարչապետ Նիքիթա Սերգիեւիչ Խրուշչեւ Աստուածաշունչ մատեանը անտեսող մը չէ։

Աւետեաց կարմիր աշխարհի տէրն ու տիրականը անտեղեակ չէ Աւետարանի առակներուն՝ ըստ Մատթէոսի, Մարկոսի, Ղուկասի եւ Յովհաննէսի։ Ընդհակառակն։

Իր կամ ուրիշի տան մէջ, իր խօսած ճառերուն ընթացքին Աւետարանէն փոխառեալ առակներու մէջբերումէն դատելով, Ս. Գիրքը իր բարձին տակ առած՝ պառկող սատանաներէն է։

Խօսքի ու խոստումի վարպետ, շատ դիւրաւ կը խօսի ուրիշին բերնով։ Դըժուարը իր բերնով խոստացածին տէր ըլլալն է։ Եւ ասոր մէջ բախտ չունի։ Խօսողն ու խոստացողը երկու լարախաղացներ են, որոնք նոյն լարին վրայ չեն կրնար խաղալ։

Ո՞վ չի յիշեր հէքեաթ դարձած Խրուշչեւի հաւկիթը (*Յառաջ*, 13 Մարտ 1962)։ Եւ ո՞վ չի գիտեր այսօր՝ թէ այդ հաւկիթը դեռ չեն ածած «կոլխոզացած» ու «սովխոզացած» հաւերը։

Անցեալ տարի, Զատկի նախօրեակին, «Կենտկոմ»ը իր մէկ լիակատարը գումարեց։ Եւ լիակատարը ծնաւ հաւկիթն չնչին։ Վարչապետը, իր 6 ժամ տեւող տեղեկագիրը եզրակացուց, ամէն Ռուսի՝ ամէն օր հաւկիթ մը խոստանալով... ի փառս համայնավար անհաս գիւղատնտեսութեան։ Արար աշխարհ պէտք է իմանար, թէ շուտով համայնավար աշխարհի մէջ ամէ՛ն օր Զատիկ պիտի ըլլար, եւ խորհրդային մարդը պիտի ունենար իր խորհրդաւոր կարմիր հաւկիթը հանապազորդ։

Ի դէպ, այդ օրէն, չըսելու համար 40 տարիներէ ի վեր, ինչպէս հաւը երազը կորկոտ է տեսեր, Ռուսն իր առօրեայ հաւկիթը երազին մէջ կը տեսնէ։

Ըսենք թէ այդ խոստումը հին պատմութիւն է, անցուկը մոռցուկ է, եւ գանք նորին։

Անցեալ շաբթու, Եուկոսլաւիոյ մէջ, մարած բանուորները խանդավառելու համար, առակաւէր վարչապետը կ'ըսէր. — Երկինքէն մանանա՞յ կը սպասէք, կ'ըսուի թէ Քրիստոս պատառ մը հացով 40.000 (՞՛) հոգի կերակրած է։ Ոչ ոք կ'ըսէ թէ անոնք կշտացած էին։ Եթէ յագեցած ըլլային, Պաղեստինէն գաղթած պիտի չըլլային...։ Ա՛յս, ըստ վարչապետին։

Ըստ Մատթէոսի (ԺԵ. 34–38) եւ միւս աւետարանիչներուն, բազմապատկութեան հրաշքին ներկայ էին շուրջ 4.000 հոգի եւ սկզբնական ուտելիքն էր՝ 7 հաց եւ ձուկ։ Ամէնքն ալ կերան ու կշտացան, եւ աւելցած կտորներով եօթը զամբիղ լեցուն տարին։

Աւետարանիչին առակը ո՛ւր, այս նոր աւետարանախօսին բամբը ո՛ւր։

Դարերու ընթացքին այս առակը, գիտցողին ու չգիտցողին բերնով, առաւել կամ նուազ սրամիտ տարբերակներու տեղի տուած է։

Օր մը, Իտալիոյ կորսուած գիւղերէն մէկուն ժողովրդապետը, լեզուի վրիպակով մը, առակը հակոտնեայ կը պատմէ. — ... Եւ Քրիստոս, շուրջ 4.000 հացով եւ ձուկով 7 հոգի կերակրեց ու կշտացուց։ Ներկաներուն բարձրաձայն հազէն ու մեղմիկ քրքջոցէն անդրադառնալով կատարած սխալին, քարոզիչը անայլայլ կը շարունակէ. — Այո՛, սիրելի հաւատացեալներ, 4.000 հացն ու ձուկը՝ 7 հոգիի կերցուց. կերան եւ չպայթեցան, ահա՛ հրաշքը։

Se non è vero, e ben trovato !

Վոլկայէն ասդին՝ հրաշքի այդ ձեւն ալ կայ։ Անդին՝ անոր խօսքն անգամ չկայ։

Զարմանալի՛։ Վարչապետ Խրուշչեւի լեզուն առաւելաբար կը հակի Աւետարանի ուտիքի առակներուն վրայ, հոգ չէ թէ թիւր կամ խոտոր ձեւով։ Ինչո՞ւ։ Արդեօ՞ք որովհետեւ լեզուն ցաւած ակռային կողմը կ'երթայ, եւ սովը մեծագոյն ցաւն է սովետական վարչաձեւին։

Կրեմլինի պալատականները կուշտ են, անօթին ժողովուրդն է։ Եւ կուշտն անօթին բառ է փչրեր։

Ո՛րքան ալ համով ըլլան կարմիր աւետարանի առակները, չորս հազար բառով իսկ եօթը հոգի կշտացնելու հրաշքին հետքը չկայ այնտեղ։

Հրաշքով թէ նակտի քրտինքով, հացի բազմապատկութիւնը կենսական է։ Եւ Ղուկասի խօսքը շրջաբանելով, տեղին է իբրեւ հուսկ բան ըսել. —

Ոչ միայն բանիւ...։

ՇԱՀԷՆ

ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Թղթատարական նախարարութիւնը, մերժելով Մամուլի Ընկերակցութեան դիմումը, որով խնդրուած էր մամուլը չենթարկել թղթատարական ծախքերու նոր եւ յանկարծական յաւելման, Սեպտեմբեր 1էն սկսեալ հարիւրին 400 համեմատութեամբ յաւելում մը կը կատարէ թերթերու առաքման գինին վրայ, անտանելի տնտեսական ծանր եւ նոր բեռ մը ստեղծելով, մանաւանդ այն թերթերուն համար, ինչպէս Յառաջի, որոնց ընթերցողներուն մեծադոյն մասը բաժանորդ է եւ ոչ հատավաճառ, ինչպէս ֆրանսական մամուլը։

Ծանօթ է որ Օգոստ. 1էն Մամուլի Ընկերակցութիւնը բարձրացուց օրաթերթերու գինը։ Յառաջ, ինչպէս յայտարարած էր այդ թուականին, որոշած էր մինչեւ Դեկտեմբեր 31 պահել իր բաժանորդագրութեան գինը, բայց այս անակնկալ եւ ծանր յաւելումը անկարելի կը դարձնէ անխախտ պահել այդ որոշումը։ Ուստի նախատեսուած յաւելումը կը ստիպուինք կատարել Հոկտեմբեր 1էն սկսեալ, մէկ ամսուան բացառիկ պայմանաժամ մը տալով մեր բաժանորդներուն՝ կարգադրելու համար իրենց առկախ հաշիւները։

Այն բաժանորդները, որոնք մինչեւ Սեպտեմբեր 30 չեն վճարած ընթացիկ տարուան (1963) բաժնեգինը, այդ թուականէն ետք կը վճարեն նոր սակով։

Հոկտեմբեր 1էն, Յառաջի բաժանորդագրութեան պայմաններն են. —

ՖՐԱՆՍԱ

Տարեկան 60 *Ֆրանք*
Վեցամսեայ 35 *Ֆրանք*

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ *միայն տարեկան՝* 75 *Ֆ.*։

Շնորհակալութիւն մեր այն բոլոր բաժանորդներուն, որոնք իրենց կանխիկ *եւ կանոնաւոր վճարումներով կը դիւրացնեն Յառաջի վարչական ծանր գործը։*

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՍԻԼՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԷՆ ՆԵՐՍ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԷՆ ԴՈՒՐՍ

ԽՄԲ.— «Յառաջ»ի վաղեմի աշխատակիցներէն ընկ. Հ. Կոսոյեան ամենայն խամբերութեամբ կրկին կարդացեր է Սիլվա Կապուտիկեանի մէկ յօդուածը, որ տպուած է «Զարթօնք» ռամկավար օրաթերթին մէջ (Պէյրութ) եւ միաժամանակ «Սովետական Հայաստան» պաշտօնաթերթին մէջ (Երեւան): Մեր ընկերը իրեն բան գործ ըրեր է բաղդատել «Զարթօնք»ի մէջ տպուածը «Սովետական Հայաստան»ի մէջ տպուածին հետ: Եւ ի՞նչ տեսնէ, Հայաստանի մէջ կացինով ջարդուած յօշոտուած է Սիլվա Կապուտիկեանի յօդուածը, որ կը կրէ «Աշխարհի ամենամեծ քաղաքն է Երեւանը» խորագիրը: Զարմանալի ոչինչ կայ, ոչ միայն Երեւան, այլեւ բովանդակ խորհ. Միութիւնը սովորութիւն ըրած են իրենց արտադրութիւնը բաժնել երկու խումբի, մէկ խումբը ներքին սպառումի համար, երկրորդ խումբը արտածման համար: Հայրենասիրութիւնը, եկեղեցասիրութիւնը, էջմիածնասիրութիւնը արտածման ապրանքներ են: Այս է որ կը հաստատէ ընկ. Կոսոյեան, իր բաղդատական քաղուածքով, Թեհրանի «Ալիք»ին մէջ.—

Մի՛ արկանէք զմարգարիտս ձեր
առաջի խոզա՛ց:
(Մատթ. է. 6)

Բնարերգու շնորհալի բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկեանը ներկայ տարեսկզբի ամիսներին, յատուկ առաքելութեամբ, Երեւանից ճամբորդեց հայկական արտասահմանեան մի կարգ երկիրներ, այցելութիւն տալու հայահոծ գաղութներին: Նրա այդ առաքելութիւնը թոյլատրուած էր Խորհ. իշխանութեանց կողմէ, մասնայատուկ նպատակադրումներով, որոնք մասնակի չափով աքօղուած էին:

Բանաստեղծուհին 70 օրեր առիթ ունեցաւ շփման մէջ մտնելու իր այցելած վայրերի հանրային–հասարակական եւ մշակութային կեանքի հետ: Ընդ սմին միշտ խուսափեց մեր ազգային–եկեղեցական իշխանութիւն ներկայացնող մարմիններին եւ հաստատութեանց մօտենալուց:

Նա եղաւ Պէյրութ, Զահլէ, Տրիպոլի, Դամասկոս, Հալէպ, Գահիրէ, Աղեքսանդրիա եւ ապա Փարիզ, որտեղից վերադարձաւ Երեւան: Խորհրդային աշխարհից եկող մայրենաշունչ բանաստեղծուհին իր հանդիպած բոլոր վայրերում Հայութեան բոլոր դասերի կողմից ջերմօրէն ընդունուեց, մեծարուեց ըստ արժանւոյն: Նա կենդանի աչքերով տեսաւ եւ հմայուեց ցուցաբերուած անշահախնդիր ընդունելութիւնից: Բանաստեղծի հայրենաշունչ զգայնութեամբ ապրեց եւ տեսաւ իր արիւնակիցների կեանքը հեռաւոր ափերի վրայ: Տեսաւ, կշռադատեց եւ ինչպէս ինքն է բնորոշում, «մեծագոյն յարգանքի եւ հիացմունքի արժանի է ընդհանուր նկարագիրը մեր ա՛յն հատուածի, որ թէեւ տեղահան իր պապենական օջախից եւ սփռուած օտար հողերի վրայ, կարողացաւ արագօրէն ոտքի կանգնել, հաւաքել իրեն թէ՛ հոգեպէս եւ թէ՛ ֆիզիքապէս, ապրել որպէս հայ բնաշխարհի մի կեդրոնաձիգ ուժով եւ որպէս իր ազգային գոյութեանը հետամուտ ժողովրդի»:

Եւ երբ բանաստեղծուհին «այդ զարմանալի ժողովրդի ամենազարմանալի հատուածին իր տուած այցելութիւնը» աւարտած համարեց եւ իրեն թոյլատրուած շրջապտոյտի ժամանակամիջոցը փակուած, նա վերադարձաւ Մայր Հայրենիք, Երեւան, ուր պարտք ունէր մեր երկրաբնակ արիւնակիցներին պատմելու հարազատօրէն: Պատմել առանց վերադիրների, նամանաւանդ առանց յապաւումների եւ կացնահարումների:

Ու նա կատարեց այդ, իր արձակ բանաստեղծի զեկուցումով: Գրուած տողերով:

Ապրիլ 28ին, Հայկ. Գիտութիւնների մեծ դահլիճում Սիլվա Կապուտիկեանը ամբողջ երեք ժամ տեւողութեամբ ներկայացրեց իր տպաւորութիւնները: Դեռ շատ թարմ, դեռ շատ տպաւորիչ, Միջին Արեւելքում կատարած ուղեւորութիւնից վերջ պատմեց իր ազգակիցների կեանքի եւ ձգտումների մասին: Ներկաները լարուած ուշադրութեամբ երեք ժամ գամուած իրենց տեղերում, լսեցին բանաստեղծուհու խօսքերը:

Սիլվա Կապուտիկեանի երեք ժամ տեւող բանախօսութեան համառօտ շարադրանքը լոյս տեսաւ Պէյրութի «Զարթօնք» օրաթերթի Յուլիս 7 եւ յաջորդական թիւերում, ընդամէնը 7 յօդուած, վերնագիրը՝ «Աշխարհիս ամենամեծ քաղաքն է Երեւանը»:

Ապրիլ ամսու 28ին Երեւանում կատարուած այդ ելոյթը «Սովետական Հայաստան»ի խմբագրութիւնը տեղ է տալիս միայն Յուլիս 18ին: Ուրեմն լրիւ երկու ամիս քսան օր *անց, երբ Պէյրութում «Զարթօնք»ը դայն լոյս էր ընծայել Յուլիս 7 թուի մէջ եւ աւարտել Յուլիս 14ի համարում:*

Մինչդեռ սպասելի էր, որ «Սովետ. Հայաստան» աւելի շուտ պիտի հրատարակէր, քան իր հոգեղբայր՝ ռամկավար օրգանը Պէյրութում:

Բանից դուրս է գալիս «Սովետական Հայաստան»ը տպագրում է 80 օր ուշացումով, ամենախոշոր չափի վրայ յապաւումներով, որոնք ըստ ամենայնի, գրական կացնահարման նման երեւոյթ ունին, *յօշոտելով յօդուածը, խոշտանգելով բանաստեղծուհու հոգին:*

Թերեւս կարելի է խորհել, որ Երեւանեան խորհրդային քաղաքչութիւնը եւ կոմունիստական գրաքննութիւնը թոյլ են տուել որ «Աշխարհիս ամենամեծ քաղաքն է Երեւանը» թղթատարական ճամբով անցնի արտասահման՝ Սփիւռքի համար հարազատ *բովանդակութեամբ լոյս ընծայուելու: Իսկ Հայաստանի մէջ հրատարակել* խոշորագոյն կրճատումներով, *որոնք անթոյլատրելի են Հայաստանցիների համար, որպէս արգիլեալ պտուղի եւ դէմ* սոցիալիստական ռէալիզմի *ադանդաւորութեան:*

Կարծում ենք ուրիշ մեկնաբանութիւն տալ կարելի չէ:

Գրական բարոյականի այս խաչելութեան արժանացած են բանաստեղծուհի Սիլվան եւ իր «Աշխարհիս ամենամեծ քաղաքն է Երեւանը» ելոյթ յօդուածաշարքը:

Թէ՛ Սփիւռքում լոյս տեսած եւ թէ «Սովետ. Հայաստան»ում տպագրուածը ունին նոյն վերնագիրը եւ նոյն ստորագրութիւնը՝ Սիլվա Կապուտիկեան:

Սակայն բովանդակութիւնը մէկ տեղ (Հայաստանում) այլ, միւսում (արտասահմանում) խեղումներով, ընդարձակ յապաւումներով: Ոչ մասնակի չափով, այլ մեծածաւալ կրճատումներով, որի հետեւանքով էլ առաջացել է անկապակցութիւն շարադրանքի պարբերութեանց մէջ:

Որպէս օրինակ յիշատակենք մի քանի նմոյշներից միայն հետեւեալը, համեմատութեան դնելով դէմ առ դէմ:

Ա.— «Զարթօնք»*ի մէջ տպուածը.—*

Ահա ես գնում էի այդ զարմանալի ժողովրդի ամենազարմանալի մի հատուածին այցելութեան: Ես գնում էի հիւր լինելու Թէքէեան Մշակութային Միութեան կազմակերպած Մեսրոպեան Փառատօնին, որ նպատակ ունէր մի անգամ եւս ոգեկոչել Մեսրոպի անունը, մի առիթով եւս արծարծել հայրենասիրութեան կրակը հայրենակարօտ հոգիներում:

«Սով. Հայաստան»*ի մէջ տպուածը.—*

Ահա ես գնում էի այդ զարմանալի ժողովրդի ամենազարմանալի մի հատուածին այցելութեան: Ես գնում էի հիւր լինելու Թէքէեան Մշակութային Միութեան կազմակերպած Մեսրոպեան Փառատօնին, որ նպատակ ունէր *խրախուսանքի մրցանակներ շնորհելով Սփիւռքի լաւագոյն արուեստագէտներին՝* մի անգամ եւս ոգեկոչել Մեսրոպի անունը, մի առիթով եւս արծարծել հայրենասիրութեան կրակը *օտարների* հոգիներում:

Սա միակ օրինակը չէ: Կան ուրիշներ էլ, որոնք հարկ չենք համարում մէջ բերել: Անցնենք լայն յապաւումներին:

Բ.— Վերի մէջբերուած հատուածից անմիջապէս ետքը հետեւում է Ս. Կապուտիկեանի խօսքը Մեսրոպեան փառատօնի կապակցութեամբ, ի ներկայութեան 2000ի հասնող ունկնդիր բազմութեան: Նրա ճառ–խօսքը բռնում է 130 լրագրային սիւնակնոց տողեր, որոնք աւարտւում են հետեւեալ բառերով.—

«... Հայ ժողովուրդը ապրել է, հայ ժողովուրդը ապրում է, հայ ժողովուրդը պիտի ապրի»:

Ահա բանաստեղծուհու փառատօնի ճառը, 130 տողերի մէջ ամփոփուած ու վերջաբանով, *բացակայում է «Սովետ. Հայաստան»ի էջերից: Գրական այս կացնահարումը կատարել է «Սովետ. Հայաստան»ի խմբագրութիւնը: Կատարել է մեղանչելով գրական բարոյականութեան դէմ, հաւատարիմ մնալու կոմունիստական* ռէալիզմի *գծին:*

Բանաստեղծուհին, երբ ճառն աւարտած իջնում է բեմից, արժանանում է որոտընդոստ ծափահարութեան, ջերմ ովացիաների *եւայլն:*

Մինչդեռ «Սովետ. Հայաստան», մոռնալով որ յապաւել է բանաստեղծու ճառը, նրա առաջ բերած որոտընդոստ ծափահարութիւնները եւ ովացիաները *դընում է... ինքնաթիւից իջած պահին: Բոլորովին անկապ եւ անիմաստ:*

Գ.— Մէկ այլ յապաւումն, որ երեւում է կատարել է այս անգամ «Զարթօնք»ի խմբագրութիւնը՝ որպէս հակաբաբական անբաղձալի մի արտայայտութիւն.

« Հալէպում «Քարուն» հիւրանոցի դըրան առջեւ, ասում է բանաստեղծուհին, հաւաքուած հայ բազմութիւնը ինձ ճամբայ էր դնում դէպի օդանաւակայանը: Բազմութեան մէջ էր պատառոտուած հագուստով, ցաք ու ցրիւ մազերով, սիրունադէմ մի պատանի: «Անունդ ի՞նչ է» դիմեցի ես նրան: Հարցս չհասկանալով պատանին տարակուսած ինձ նայեց: «Անիկա Հայ չէ» բացատրեցին ինձ ուղեկիցները մի այնպիսի ժպիտով, որ նշանակում էր «Դեռ լաւ չէք գիտեր Սփիւռքը, Տիկին Կապուտիկեա՛ն, Հայերը մուրացիկ չունին»:

«Այո՛, Հայերը մուրացիկ չունեն, եւ դա այնպիսի երկրներում, ուր ամէն քայլափոխում հանդիպում ես անպատմելի չքաւորութեան եւ խեղճութեան բեւեռային հակադրութիւնների, ուր արաբ մանուկը մինչեւ գլխերուան կէսը ապառում է քապարէի *դրանը, որպէսզի այնտեղից ելնող հարբած այցելուների առջեւ բացի ինքնաշարժի դուռը եւ մի քանի ղուրուշ ստանայ: Երբ Լուքսորի փարաւոնների դամբարանները տեսնելու եկած շքեղաշուք տիկիններին տասացի շուրջկալում են կիսամերկ, ճանճակալած աչքերով երեխաները եւ օդում ճանճի բըզզոցի պէս կանչում է նրանց անընդհատ կրկնուող հաղադը՝* «պախշի՛շ, պախշի՛շ, պախշի՛շ...» *(«Ս. Հ.» 18 Յուլիս):*

Մենք բաւականանում ենք մատնանշել վերի պարբերութեան յապաւումն, որ իր հերթին կատարել է «Սովետ. Հայաստան»ի լաւեղբայր «Զարթօնք»ը:

Շարունակենք «Սովետ. Հայաստան»ի անխորհուրդ յապաւումների շարքը:

Գ.— Բանաստեղծուհին այցելում է Հալէպի ծերանոցը եւ սրտցաւ գրիչով պատկերացնում է ընթերցողին.— «Ես այցելեցի Հալէպի ազգային ծերանոցը: Անկարելի էր առանց յուզումի նայել այդ՝ ով գիտէ ի՛նչ արիւն ու տառապանք տեսած հայ մամիկներին ու պապիկներին, որոնք այսուամենայնիւ, պատուած են ապահով յարկի տակ, որ գիտական յարմարութիւններով օժտուած, մաքուր ու լուսաւոր քառայարկ շէնքերում: Տարուան մէջ մօտ 200 ծերունիները ապահովուած են նուէր–ճաշով: Ես շրջեցի ծերանոցի սենեակները, որոնք բոլորն էլ մաքուր էին ու կոկիկ: Իւրաքանչիւր սենեակի ճակատին կար փոքրիկ ցուցանակ, որտեղ գրուած էր անուն–ազգանունն ու ծննդավայրը: Այդ նշանակում է տուեալ անձի նուիրատուութեամբ կահաւորուած ու պահւում է տուեալ սենեակը: Յիշում եմ մի արձանագրութիւն. «Նուէր Թ. Թ.էն իր յիշատակ ծերութիւն չունեցող իր ծնողաց՝ Աննա եւ Պետրոս Թերճանեանների սրբութ...» (Կիւրիւնցի): Մեր ժողովրդի պատմութիւնն ու ճակատագիրը կայ այս փոքրիկ մակագրութեան մէջ, իր անհամա...

ՍԱՅԱԹ – ՆՈՎԱՅԻ
ԾՆՆԴԵԱՆ 250 ԱՄԵԱԿԸ

—o—

ՄԵԾ ԸՂՋԱՒՈՐՆ ՈՒ ԲԵՋԱՐԱԾԸ

—o—

Թրուպատուրներին նման էր Սայաթ–Նովան էլ, բայց միայն իր կրակուած ու վառվռուն սրտով: Նման էր նաեւ իր պատկերաւոր ոճով, իր արուեստի դեղեցկութեամբ ու երաժշտականութեամբ: Բայց իր սիրոյ էութեամբ, *իր* հոգեկանութով *նա տարբերւում էր ինչպէս իր ազգակից Քուչակից ու Յովնաթանից, նոյնպէս ալ ֆրանսիացի թրուպատուրներից: Այս իմաստով նա աւելի յիշեցնում է գերմանացի* մայստերզինգերներին, *որոնց սէրն ասպետական էր այնքան, որ սրբապղծութիւն էր համարւում սիրածի նոյնիսկ անունն ասելը:*

Սայաթ–Նովան հանճարեղ երգիչն է անյոյս *սիրոյ: Բայց նա մի սովորական* ձախողած *չէ սիրոյ մէջ: Սայաթ–Նովան ունի իր արժանիքների խորին գիտակցութիւնը: «Ցիս է՛ն Սայաթ–Նովասին չիմ, որ աղի վրայ հիմնանամը», — բացականչում է նա մի արժանապատուութեամբ, որի աստառը հպարտութիւն է: «Կու մեռնեմ, չի՛ս տեսնի Սայաթ–Նովու պէս», — դառնացած գոչում է նա մի ուրիշ անգամ եւ կրկնում մի երրորդ անգամ: Հաւք–Թռչունի պատկերին էլ է դիմում՝ վրացերէն, նկատելով որ «մէկը թութակ կուլի, մէկն էլ մէ բլբուլ», իսկ աղբեջաներէն ճչում է իր ո՛վ լինելը սիրածի համար. «Ցիս բլբուլ իմ, ուրիշ հաւք չիմ քիզ համա»:*

Հոմերոսին ու յունական դիւցաբանութեան բոլորովին անծանօթ Սայաթ–Նովան երեւակայութեան ուժով ստեղծել է մի պատկեր, որ ցոյց է տալիս իր սիրածի ամենազօրութիւնը եւ (անդրադարձ ապացուցման օրէնքով) վկայում է նաեւ Սայաթ–Նովայի զօրութիւնը: «Դուն է՛ն հուրին իս, վուր դէմի (նաւ) կու գութէ» — ասում է բանաստեղծն իր սիրածին եւ ասածը պատճառաբանում գիտէ՞ք թէ ինչպէս. «Զունքի (որովհետեւ) ի՛նձ գաւթեցիր *խափով նազանի»: Հասկանալի՞ է: Ա՛յն «նազանին», որ կարողացել է գրաւել–*առնել *բանաստեղծի նման* անառիկ *մէկին, պիտի որ լինի մի գերբնական էակ, ծովում նաւե՛րը գերող մի գերբնական արարած (հուրի), — ահա եզրակացութիւնը:*

Բայց այս եզրակացութիւնից չի փոխւում եղբը՝ այն իրողութիւնը, որ բանաստեղծը (Քուչակեան պատկերով ասած) գետնից կուտ չուտող ու երկնքում ճախրող թռչունի պէս՝ սիրոյ ծովի մէջ լարուած ակնատ–թակարդն է ընկնում ոչ միայն «երկու ոտքով», այլ «թեւն էլ աւելի»:

Բազմաչարչար Ոդիսեւսի նաւը, վերջ ի վերջոյ, ազատուեց յաւերժահարս Կալիպսէից ու կիկլոպ Պոլիֆեմից, կախարդուհի Կիրկէից ու սիրէններից, Սկիլլայից ու Խարիբդայից, ինչպէս նաեւ արքայադուստր Նաւզիկէից: Ազատուեց, որովհետեւ Ոդիսեւսին հովանաւորում եւ օգնում էին աստուածները: Սայաթ–Նովայի հանդէպ աստծոյ կա՞մքն էր ուրիշ, թէ Վրաց արքայադուստր Աննան զօրեղ էր առասպելական Նաւզիկէից, — այս հարցերի պատասխանը ոչինչ չի փոխելով՝ մի անանցանելի սահման է դառնում դիւցաբանութեան եւ իրականութեան միջեւ:

Իսկ իրականութիւնն այն է, որ Սայաթ–Նովայի նաւը չազատուեց գերութիւնից:

ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ

(Շար. – 5)

ՉՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ ՁԵՌԱԳԻՐՆԵՐԸ ՉԵՆ ՎԵՐԱԴԱՐՁՈՒԻՐ:

ԵՐԿԱՐԱԿԵՑՆԵՐԸ

...— Պուքրէշի Երկարակեցութեան ...տնօրէնուհի Փրոֆ. Աննա Ասլան, «Ֆլաքըրա» շաբա–...թերթին մէջ կուտայ հետեւեալ լու–...սաբանութիւնները երկարակեցութեան ...մասին.—

...Երկրագունդի ամբողջ տարածութեան վրայ կը հանդիպինք երկարակեացներու — մարդիկ, որոնք կը մօտենան, հասած ...կամ նոյնիսկ անցած 100 տարին: Այս երկարակեացներու վրայ կատարուած ուսումնասիրութիւնները ցոյց կուտան, թէ անոնց յառաջացած տարիքը սերտ կապուած է շրջապատող միջավայրին եւ անոնց ապրելակերպին: Կը միջամտեն ...երեւն, աշխարհագրական տարրերը, ժառանգականութիւնը: Հաստատուած է, թէ ամէնէն շատ երկարա–...կեացներ կը գտնուին Խորհ. Միութեան լեռնային եւ բլրային շրջաններուն մէջ: Ամբողջ Խորհ. Միութեան մէջ, ըստ 1959ի մարդահամարին, կային 29.000 հարիւրամեայ մարդիկ: Տաղստանի մէջ անոնց թիւը համեմատաբար աւելի շատ է. մէկ միլիոն ազգաբնակչութեան մէջ կան 2548՝ հարիւր տարեկան մարդիկ: Միացեալ Նահանգներուն մէջ մէկ միլիոն բնակչութեան դէմ կան 32 մարդիկ, որոնք հարիւր տարեկան են, Հունգարիոյ մէջ 13, Իտալիոյ մէջ՝ 6,7, Տանըմարքայի մէջ՝ 4, Հոլանտայի մէջ՝ 6,6, ...ստանի մէջ համրուած են 55.361 մարդիկ, որոնք անցած են 80 տարեկանը, ինչ որ կը ներկայացնէ ամբողջ բնակչութեան 1,36 առ հարիւրը:

Ընդհանրապէս, այս մարդիկը կը վարեն առողջ, գործունեայ, հաւասարակշռուած կեանք մը, սնանելով մասնաւորապէս կաթնեղէնով, եգիպտացորենի ա–...ով, փոքր քանակութեամբ միսով եւ ...նիւթերով: Երկարակեացները, ինչպէս մեր երկրի այլ նման շրջաններու ազգաբնակչութեան մեծ մասը, Պուլկա–...րիոյ, Եուկոսլաւիոյ կամ աւելի հեռաւոր երկիրներու ժողովուրդները, ինչպէս Իրանի ժողովուրդը կ'ամրապնդուին

րուն խսկ իրենց վարած կեանքով: Անոնք կը կատարեն ֆիզիքական աշխատանք, ամառ ու ձմեռ կը քնանան ազատ օդի մէջ, հագնելով միշտ թեթեւ հագուստ ու կը վարժուին դիմանալ եղանակներու փոփոխութիւններուն: Երկարակեցութեան կարեւոր մէկ գործօնն է, ապահովաբար, նաեւ ժառանգականութիւնը: Հաստատուած է, թէ երկարակեցութիւնը մաս կը կազմէ, ընդհանրապէս, այն ընտանիքներուն, որոնց մէջ ապրած է երկարակեացը մինչեւ իր յառաջացած տարիքը:

Մեծ նմանութիւն մը կայ 140 տարեկան ծերունիի մը, որու այցելութիւն տուի քանի մը տարի առաջ Քլուժի շրջանին մէջ եւ Իրանի լեռնադաշտերուն վրայ ապրող ծերունիին միջեւ, որուն մասին կ'ըսուի թէ 160 տարեկան է: Երկուքն ալ փայտ կը կոտրէին, ծանր գերաններ կը կրէին մինչեւ խոր ծերութիւն, ամառը կը քնանային բացատներու մէջ, իսկ ձմեռը՝ կրկին բացօթեայ եւ կը սնանէին տաւարի կամ նուազ չափով նման սննդեղէններով:

Մեր երկրին (Ռումանիոյ) մէջ կան 460 երկարակեացներ: Երկարակեցութեան ուսումնարանին ընկերային բաժանմունքը, օժանդակութեամբ շրջանային ժողովրդական խորհուրդներու, բաշխած է է այս ծերունիները ձրի դարմանատուներու վրայ, ուր ամխէ ամիս քննութեան կ'ենթարկուի անոնց առողջական վիճակը: Այս ուսումնասիրութենէն ետքը պիտի հրատարակուին, անտարակոյս, նախազգուշական կարեւոր տուեալներ:

ՓՐՈՖ. ԱՆՆԱ ԱՍԼԱՆ

...րերի կռիւը՝ պայքարելու եւ յարատեւելու ազգակ դարձնող ժողովրդի նկարագիրը»:

...Այս գեղեցկահիւս պատկերումը ...վերջի գրքից, «Սովետ. Հայաստան»ը ...պատմումներով դուրս է նետել իր ...էջերից: Կարիք չկայ հարցնելու ...ինչո՞ւ: Կատարել է, որ Հայաստանցիները իրաւել չգտնեն նման բա–...ներ հաստատութեանց գոյութեանը ...փիւռքում, այն էլ առանց պետական ...կազմակերպութեան:

Հ. ԿՈՍՕՅԵԱՆ

(Մնացեալը յաջորդով)

ՀԱՅԵՐԸ ԱՒՍՏՐԱԼԻՈՅ ՄԷՋ

Աւստրալական թերթ մը կը գրէ.—

Բազմաթիւ տարիներէ ի վեր Հայերը աչքառու եւ ճարպիկ վաճառականի համբաւը ունեցած են: Ներկայիս այնպէս կը թուի, թէ նորէն նոյն դիրքին մէջ են:

Աւստրալիոյ մէջ գտնուող ափ մը Հայութիւնը (մօտ 1000 հոգի, որուն կէսը կը բնակի Սիտնիի եւ 200ը Մելպուրնի մէջ) արդէն գլխաւոր յաղթանակ մը տարած է «Ներգաղթի Գրասենեակ»ի մէջ: Այս գրասենեակը ընդառաջելով հայ համայնքի ղեկավարներու խնդրանքին եւ պահանջին, թոյլատրած է Գահիրէէ ապրող հազարաւոր Հայերու ներգաղթը դէպի Աւստրալիա:

Մելպուրնի մէջ ապրող Հայերը ուրախ են այժմ լսելով կառավարութեան որոշումը: Անոնք ոչ մէկ դժուարութիւն պիտի ունենան գործ գտնելու կամ տեղական լեզուին վարժուելու: Անոնք մեծ դիւրութիւններ – ունին օտար լեզուներ սորվելու: Միջին Արեւելքի Հայութեան գրեթէ ամբողջութիւնը երեք կամ չորս լեզուներ կը խօսի:

Իրենց հոս հաստատուիլը աւելի դիւրին պիտի ըլլայ, մանաւանդ հիմա, երբ Սիտնիի եւ Մելպուրնի հայ համայնքները ունին իրենց եկեղեցիները: Մելպուրնի եկեղեցին մէկ տարի առաջ շինուեցաւ եւ ըստ անոր անդամներու, արդէն մեծ ազդեցութիւն գործած է իրենց կեանքին վրայ:

Եկեղեցին շատ կարեւոր է Հայուն համար: Բազմաթիւ հեղինակութիւններ կ'ըսեն, թէ եկեղեցիի միջոցով է, որ Հայերը պահած են իրենց ազգային գիտակցութիւնը, եւ վերջերս, անիկա ծառայած է որպէս ազգային –միութեան ազդակ՝ աշխարհի բոլոր անկիւններուն մէջ ցրուած Հայութեան համար:

Ժամանակին, Հայերուն համար դժուար էր արտայայտել իրենց ազգային միութեան զգացումը: Քրիստոսէ բազմաթիւ դարեր առաջ երկարող իրենց պատմութեան ընթացքին այս փոքրիկ ազգը նուաճուած է տասնեակ մը կայսրութեանց կողմէ, ճնշուած, պառակտուած, վերակազմուած ու շատ քիչ անդամներ միայն ինքն իր ճակատագրին տէրը եղած:

Հայաստան խիստ ու լեռնային երկիր մըն է, Ասիոյ ծայրամասին վրայ: Անոր սահմաններն են արեւմուտքէն՝ Թուրքիա, հարաւէն Իրան, արեւելքէն՝ Ատրպէյճան, իսկ հիւսիսէն՝ Վրաստան: 1922էն ի վեր ան մաս կը կազմէ Խորհ. Միութեան:

Իր պատմութեան վաղագոյն շրջանը կը սկսի անկախութեան համար նախ Պարսիկներու եւ Ասորեստանցիներու, ապա հռոմէական կայսրութեան դէմ մղուած պայքարներով:

1878ին ռուսեւթուրք պատերազմը յանկարծ մեծ պետութիւններու դիրկը նետեց զայն: Ու ստեղծուեցաւ հայկական հարց մը, զոր Անգլիա ծառայեցուց իր նպատակներուն՝ Ռուսերը Միջին Արեւելքէն հեռացնելու եւ Հնդկաստանի իր ճամբաները ապահովելու համար:

Թրքական տիրապետութիւնը վերջ գտաւ 1916ին, երբ Ռուսիա գրաւեց Հայաստանը՝ յայտարարելով թէ այլեւս ազատագրուած է «թրքական լուծէն»: Մէկ երկու տարի ետք՝ բոլշեւիկ վարչակարգը եկաւ նուիրագործելու Ռուսիոյ այս յաղթանակը, հակառակ զայն ետ առնելու Թուրքիոյ զինեալ փորձերուն:

Ներկայիս Հայաստան այնքան լուռ գոյութիւն մը ունի, որ հաւանաբար շատ մը արեւմտեաններ պիտի չգիտնային նոյնիսկ, թէ ո՛ւր կը գտնուի ան, եթէ ամերիկեան զինուորական օդանաւ մը չմօտենար անոր սահմաններուն կամ մէկը չյիշեցնէր որ Խրուշչեւի աջ բազուկը՝ Միկոյեան, ժամանակին զուրգ ծախող մը եղած է Հայաստանի մէջ:

ԻՒԱՆ ՄՔ' ՖԱՐԼԻՆԿ

ԼՐԱՏՈՒ ԱՐՈՒԵՍՏԻ

ԺԱՆ-ԺԱՔ ՎԱՐՈՒԺԱՆ

Յառաջիկայ Սեպտեմբեր 7ին, ժամը 21ին, ֆրանսական Պատկերասփիւռը պիտի ներկայացնէ (ուղղակի) Ժան–Ժաք Վարուժանի նորագիր թատերախաղը՝ ՋՈՒՐ ԳՈՂՈՒՆԻ (Լէ գ'Օ տեռօպէ):

Հեղինակը՝ Վարուժան Ուզունեան (Ժան–Ժաք Վարուժան) ծանօթ է մեր ընթերցողներուն: Զաւակը ողբացեալ դերասան Յովսէփ Ուզունեանի, կանուխէն մտած է թատերական կեանքի մէջ:1961ին Անկէնի Թատերական Արուեստի մրցանակը ստացաւ Ֆաստ անուն թատերգութեան համար: Իր ուրիշ մէկ թատերգութիւնը՝ Քոնչերթօ, ներկայացուած է Օէօվրի թատրոնին մէջ, Փիէռ Ֆրէնէի խաղարկութեամբ:

Ներկայիս իբրեւ լրագրող կ'աշխատակցի Փարիզիէն Լիպեռէի, «ընթերցող» է նաեւ ծանօթ հրատարակչական տան մը մէջ:

Ժան–Ժաք Վարուժան 35 տարեկան է և ամուսնացած Ֆրանսուա Փերիէի քրոջ հետ:

Սեպտեմբեր 7ին ներկայացուելիք թատերգութեան նիւթն է.–Արամ Մաթէոսեան, ֆրանսահայ երիտասարդ մը, կը տառապի, որովհետեւ չէ ճանչցած իր հայրը: Այս վերջինը 20 տարի առաջ մեկնած է հայրենիք մը գտնելու համար, ջարդերու վաղորդայնին: Արամ մօրը հետ ապրած է, հայերէն չէ սորված: Հայրենախիղ մըն է: Երջանիկ չէ ապրելուն, որովհետեւ ոչ մէկ բան զինքը կը կապէ հոն ուր է, ոչ ոքի կրնայ կապուիլ:

Իր մէկ ֆրանսացի ընկերոջ գործած ոճիրը կարծես առիթ պիտի տայ իրեն որ որոշէ ըլլալ մարդը որ ցարդ չէ յաջողած ըլլալ: Բայց այդ դէպքին հետ միաժամանակ կը պատահի ուրիշ մը, որու վրայ այլեւս չէր հաշուեր.— հօրը՝ Հայկ Մաթէոսեանի վերադարձը:

Միասին կ'ուզեն վերադտնել կորուսեալ ժամանակը, բայց կարելի չէ: Հայկ կը գտնէ իր տղուն մէջ այն երիտասարդը, որ է՛ր 20 տարի առաջ: Կը թողու որ Արամն ալ մեկնի, ինչպէս ինք ըրած է ժամանակին, գիտնալով հանդերձ թէ ոչ մէկ բան կայ գտնելիք, ոչ մէկ տեղ: Բայց պէտք է բաներ կատարել ու ապրիլ զանոնք ճանչնալու համար:

Հեղինակը կը ճշդէ թէ բնագրին մէջ Արամի մայրը միայն հայերէն կը խօսի, բայց պատկերասփիւռի թատերական տնօրէնութեան դիմումին ընդառաջելով, այդ մասը թարգմանած է աւելի հասկնալի դարձնելու համար, ընդհանուր կերպով, հազիւ քանի մը բառ մնացած է հայերէն...:

ԵՐԼՏՐՁԻ ՊՈՄՓԱՆ

ՀԱԶԱՐ ԻՆԸ ՀԱՐԻՒՐ ՁՈՐՍ

...Կիլիկեան Երեկորնեայքը, քամնելի ...անհրաժեշտութիւններով այնքան հա–...րուստ, հայկական ժամանակակից մար–...տիրոսութեան թերեւս ամէնէն զարհուրելի դրուագը, եթէ ոչ բոլորովին անծանօթ, ...թերի, տաժանելի պիտի ըլլար, մամուլի ազատութեան ներկայ պայմաններուն ...տակ, պատկերացնել իր արհաւիրքովը ...ազատութեան համար պատմական վէպիս ...էջերին մէջ. վէրքը դեռ թարմ է Ցեղին ...հոգւոյն դալարուող յիշողութիւններու ...մէջ...:

...Տարիներ ու տարիներ պէտք է անցնին, ...պէտք է սերունդ մը վերանորոգուի, ...պէտք է Սահմանադրութիւնը զօրանայ, ընդհանրանայ, արմատանայ ժողովուրդի բոլոր խաւերուն մէջ. պէտք է Օսմանեան Հայրենիքը նոր ուժերով օժտուի, նոր հայրենասէր ծնունդներով, որոնք զերծ ըլլան կանխակալ կարծիքներէ, հնապաշտ մոլորութիւններէ, ցեղային զզուելի ատելութիւններէ, կրօնային վտանգաւոր մոլեռանդութիւններէ. պէտք է ազգը մարդեր հասցնէ, որոնք գիտնան յարգել իւրաքանչիւր տարրի ինքնուրոյն գոյութիւնը, անհատական ազատութիւնները, մանաւանդ պէտք է ժամանակին հոլովումովը, մոցուին ատելութիւնները, մարին ոխերը, փարատին կասկածները, եղբայրանան մտածումները, զրկախառնուին զգացումները. մէկ խօսքով, պէտք է ընկերային սանդուխի բարձրագոյն աստիճանէն մինչեւ պատուանդանը, բոլոր դասակարգերը, բոլոր յարանուանութիւնները, բոլոր կրօնքները, իբրեւ միեւնոյն մօր զաւակներ, շըրջապատեն հասարակաց հայրենիքը, անոր փառքին, անոր երջանկութեան եւ անոր խաղաղութեան նուիրեն իրենց բոլոր կարողութիւնները...: Ահա՛ այդ բարեբաստիկ զարագլուխը պէտք է բացուի, որպէսզի կարելի ըլլայ լսեցնել Ազատութեան համար թափուած արիւնին ձայնը, եւ որպէսզի կարելի ըլլայ վերապրեցնել եւ ապագայ սերունդին երակներուն մէջ հոսեցնել Կիլիկեան Արհաւիրքին սարսունե՛րը...:

ԻԱ.

Մինչդեռ մայրաքաղաքի փողոցներուն մէջ սխալ ըմբռնուած, կամ աւելի ճիշդը, չարամտօրէն թիւր մեկնուած Շէրիաթին ինքնակոչ պաշտպանները, իրենց գլուխ ունենալով չէյխ Վահտէթինի օրակէն հրապարակագիրներ ու Միզանի համբաւաւոր (´) խմբագիր Մուրատ պէյի պէս ամբոխավարներ կ'ահաբեկէին խաղաղ ժողովուրդը, մինչդեռ օսմանեան Խորհրդարանի շէնքին առջեւ կը սպաննուէր Լաթաքիոյ երիտասարդ երեսփոխան էմիր Ասլանը, մինչդեռ ապստամբած զօրքեր, զինուած, սուինամերկ, խումբ խումբ կը վազվզէին Բ. Դրան պողոտայէն վեր վար, հետապնդելու եւ տեղն ի տեղը սպաննելու համար Երիտասարդ Թուրքերը, որոնք Սահմանադրութիւնը մտցուցած էին Ապտիւլ Համիտի երկիրներուն (´) մէջ, մինչդեռ մայրաքաղաքէն դուրս, Ատանան ու շըրջակայ գիւղերն ու քաղաքները կ'ողողուէին հայկական անմեղ արիւնի հեղեղներով, անդին, Եւրոպական Թուրքիոյ մեծագոյն նաւահանգիստին՝ Սելանիկի մէջ, արտասովոր շարժում մը կը տեսնուէր, մասնաւորապէս «Օսմանեան Միութեան եւ Յառաջդիմութեան Կոմիտէ»ի Կեդր. Քլիւպին շրջակաները, քարափին վրայ:

Ցերեկուընէ արդէն, պատերուն վրայ ազդեր փակուած էին ծանուցանող թէ Սելանիկի երեսփոխան Մանուէլ Գարասօէֆէնտին եւ ուրիշ քանի մը կարեւոր անձնաւորութիւններ, բանախօսութիւններ պիտի ընէին այն գիշերը, Կոմիտէին քարափի քլիւպին մէջ: Տակաւին քաղաքին մէջ չէր տարածայնուած Մարտ 31ին արձագանգը. Իթթիհատի անդամներէն մէկ քանիները միայն աղօտակի իմացած էին թէ Պոլսոյ մէջ յետաշրջական շարժում մը տեղի ունեցած էր, եւայլն:

Բանախօսութիւնները, ինչպէս որ ցոյց կուտային պատերուն ազդերը, եւ կարեւոր անձերու զրկուած հրաւիրագրերը, իրիկուան աղօթքէն ետք, ժամը 3ի ատենները տեղի պիտի ունենային, սակայն ժողովուրդին մէջ զարմանալի փութկոտութիւն մը կը տեսնուէր. խմբովին ամէն թաղերէ, մերձաւոր թէ հեռաւոր վայրերէ կը վազէին հոն, քարափի քլիւպը, եւ իրիկուան ժամը 1–2ի ատենները, երկսեռ ամբոխ մը կը խռնուէր անոր ընդարձակ սրահին մէջ:

ՍՄԲԱՏ ԲԻՒՐԱՏ

(Շար.)

ԿԱՐԴԱՑԷՔ ՏԱՐԱԾԵՑԷՔ «ՅԱՌԱՋ»Ը

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Տէր եւ Տիկին Ժիրայր Փափազեան եւ զաւակները, Պ. Կարպիս Փափազեան, Տէր եւ Տիկին Կարպիս Պետրոսեան շնորհակալութիւն կը յայտնեն բոլոր անոնց, որոնք անձամբ, գրաւոր կամ ծաղկեպսակով ցաւակցութիւն յայտնեցին իրենց մօր՝

ՀԻՊԵՐԻԿ ՓԱՓԱԶԵԱՆԻ

կսկծալի մահուան առթիւ:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

ԼԻՈՆ.— *Այրի Տիկին Մելքուհի Սողոմոնեան եւ ընտանեկան պարագաները կը ծանուցանեն թէ հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի իր ամուսինին՝*

ԳԱՐԵԳԻՆ ՍՈՂՈՄՈՆԵԱՆԻ

մահուան քառասունքի առթիւ այս կիրակի, Ս. Յակոբ եկեղեցիին մէջ:

Կը հրաւիրուին ողբացեալին յիշատակը յարգողները:

Հ. Բ. Ը. Միութեան Տիկնանց յանձնախումբը կը խնդրէ կազմակերպութիւններէն նկատի ունենալ հետեւեալ թուականները.—

ՀՈԿՏԵՄԲԵՐ 1, *Երեքշաբթի երեկոյ Տիկնանց յանձնախումբի կազմութեան Գ. տարեդարձին առթիւ գեղարուեստական երեկոյթ:*

ՀՈԿՏԵՄԲԵՐ 19, *ցուցահանդէս հայ արուեստագէտներու նկարիչ, արձանագործ եւ փորագրիչներու գործերուն:*

Հայկական թանգարանը, 52 Ավընիւ Ֆոշ, (*Փարիզ* 16):

ԴԵԿՏԵՄԲԵՐ 7, 8, 9, 10, «*Բարենպատակ վաճառք*»:

Յառաջիկային պիտի տրուին մանրամասնութիւններ:

Շ. ՆԱՐԴՈՒՆԻ

ՀԻՆ ՈՒ ՆՈՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

	փր.
Մեղեդիներ, մեղեդիներ	20
Բանե՛ր, բանե՛ր, ի՛նչ բաներ	15
Առաջնորդ Մայրերու	10
Լուսեղէն Շիրիմներ	10
Կանաչ Բաժակով	7,50
Զրվէժ	7,50
Վարդամատեան	7,50
Ծաղկամատեան	7,50
Նիզակամարտ Շաւարշանայ դաշտին վրայ	5
Ո՞ւր ես մայր իմ	3
Մեղուին ճառը	3
Ոգին Հայկազանց	3
Մատեան Հայկազանց	3
Բաժակ ի ձեռին	3
Որդիք ցասման	3

Առաքման ծախքը գնողին վրայ:
Դիմել հեղինակին Յառաջի հասցէով

ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ

Կապոյտ Խաչի Վիէնի մասնաճիւղի տարեկան դաշտահանդէսը տեղի կ'ունենայ Սեպտեմբեր 1ին, առաւօտէն մինչեւ երեկոյ «Իւ-էս-Ա.»ի մարզադաշտին վրայ (Թանըրիին քով):

Գեղարուեստական ճոխ բաժին: Բանախօսութիւն, երգ արտասանութիւն եւ հայկական պարեր:

Ճոխ պիւֆէ. աղանդերներ եւ շամփուրով խորոված:

Սիրով կը հրաւիրուի գաղութի Հայութիւնը:

Անձրեւի պարագային «Խաժակ» սրահը:

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Ազքատախնամի տարեկան պարահանդէսը՝ փորձ Ե.*ի շքեղ սրահներուն մէջ, Հոկտեմբեր 27ին, ժամը 16էն 24:*

Կ'ՈՒԶՈՒԻՆ

ՍՏԻՊՈՂԱԲԱՐ

Կրթական հաստատութեան մը մէջ աշխատելու համար կ'ուզուին.—

ա) *Միջին տարիքի կին մը՝ ներքին մաքրութեան եւ տնական գործերու համար:*

բ) *Այր մարդ մը ճաշարանը ծառայելու համար:*

ԱՆՁԱՄԲ *դիմել* Յառաջի *վարչութեան:*

ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԱՌԹԻՒ
ՅԱՃԱԽԵՑԷՔ



ՃՕՇԿՈՒՆԵԱՆ-ՈՐԴԻ
ՄԱՐՍԷՅԼԻ ԾԱՆՕԹ ՃԱՇԱՐԱՆԸ

Ուր պիտի գտնէք արեւելեան համադամ կերակուրներ եւ մասնաւորաբար

ՏԷՕՆԷՐ – ՔԷՊԱՊ

եւ արեւելեան զանազան խմորեղէններ

RESTAURANT DJOCHGOUN
4. Rue de la Butte, MARSEILLE 2'
(Place Jules Guesde)

ՅԱՌԱՋ

ԿԱՐԴԱՑԷ՛Ք, ՏԱՐԱԾԵՑԷ՛Ք ԱՅՍ ԳԻՐՔԵՐԸ

Շ. ՄԻՍԱՔԵԱՆ	Օրեր եւ ժամեր
Ժ. ՄԻՍԱՔԵԱՆ	Բուռ մը Տոմս
Բ. ԹԱՇԵԱՆ	Ներածութիւն Հայ Գրականութեան Պատմութեան Լեզուական Հարցեր Լսարան Հայ Լեզուի
ՇԱՀԱՆ ՇԱՀՆՈՒՐ	Նահանջը առանց երգի Յարալէզներու Դաւաճանութիւնը
Մ. ԻՇԽԱՆ	Ոսկի Աշուն (*Բանաստեղծութիւն*)
Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ	Ինչպէս տեսայ Հայաստանը
ՎԱՀԷ ՔԱՋԱ	Կարթը

ԱՌԱՔՈՒՄԻ ՀԱՄԱՐ ԱՒԵԼՑՈՒՑԷՔ 1 ՖՐԱՆՔ

ՅԱՌԱՋ

ՍԱԿԱԳԻՆ ԸՆԹԱՑԻԿ ԱԶԴԵՐՈՒ

ՄԷԿ ԱՆԳԱՄՈՒԱՆ ՀԱՄԱՐ

ՄԱՀԱԶԴ	35 Ֆ.	մինչեւ 1/4 սիւնակ
ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ	15 Ֆ	մինչեւ 1/8 սիւնակ
ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ	10 Ֆ.	» » »
ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ	20 Ֆ.	» » »
ՀԱՐՍԱՆԻՔ, ՆՇԱՆՏՈՒՔ	20 Ֆ.	» » »
ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ	10 Ֆ.	» » »
ԾՆՈՒՆԴ	20 Ֆ.	» » »
«ՓՈԽԱՆ ԾԱՂԿԵՊՍԱԿԻ»	10 Ֆ.	» » »
«ԿԸ ՓՆՏՌՈՒԻ»	5 Ֆ.	» » »
ԾԱԽՈՒ Է	20 Ֆ.	» » »

Այս գիները մէկ անգամ հրատարակելի եւ նշանակուած ծաւալով ազդերու համար են, չորրորդ էջը:

Կանխիկ վճարումը պարտաւորիչ է:

Առեւտրական կամ այլ ազդերու մասնաւոր պայմաններուն համար դիմել Վարչութեան:

ԼՈՅՍԸ ԳՈՅՆ Է.... ԳՈՅՆԸ ԼՈՅՍ Է

ՁԵՐ ՏԱՆԸ ԼՈՅՍ ՏՈՒԷ՛Ք.... ԹՈՄԼԱՔԻ ԳՈՅՆ ՏՈՒԷ՛Ք

Ձեր բնակարանը կը լուսաւորուի
Եթէ ներսը եւ դուրսը

ՎԵՐԱՆՈՐՈԳԷՔ – ԶԱՐԴԱՐԷՔ – ՆԵՐԿԷՔ

ԹՈՄԼԱՔ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐՈՎ

PEINTURES THOMLAC

16 bis, Bd. Sébastopol, Paris 4e

Tél. ARC 26-61 – Métro : Halles et Chatelet

136, RUE DES BOURGUIGNONS — ASNIERES - BOIS COLOMBES (Seine)
Tél : GRE. 09-47

11, BD. DE LA REPUBLIQUE — LA GARENNE (Seine)
Tél. : STA. 19-06

ԱՆՄՐՑԵԼԻ ԳԻՆԵՐՈՎ

Ամէնէն արգիական, նուրբ եւ ընտիր ճաշակով պատրաստուած՝ առաջնակարգ ներկեր: Բնական եւ արուեստական բազմերանգ գոյներու մեծ ընտրութիւն: Նորոյթ իւղաներկեր, պատի գեղեցիկ թուղթերու ճոխ ընտրութիւն: Գետնի համար՝ ամէն տեսակ — լինոլէոմ *եւ* փլասթիք *— ծածկոցներ. —*

TAPIFLEX — TAPISOM — CARPETTE

Ձեր բնակարաններուն արտաքին եւ ներքին խնամքներուն համար անհրաժեշտ բոլոր նիւթերը:

Ամէն գնորդի կը նուիրուի յատուկ տետրակ մը, որու շնորհիւ կրնայ 10–30 առ հարիւր զեղչ ունենալ:

ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐ

52, RUE CHALON, PARIS 12e — 64, BLD. DE BELLEVILLE, PARIS 20e
166, AV. ARISTIDE BRIAND — PAVILLONS - SOUS-BOIS (Seine)
4 bis, RUE PAUL VAILLANT COUTURIER — ARGENTEUIL (S. et O.)
24, RUE PAUL VAILLANT-COUTURIER — ALFORTVILLE (Seine)
48 bis, RUE DALAVRAC — FONTENAY - SOUS - BOIS (Seine)

ՀՐԱՆՏ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

51, Rue Monsieur-le-Prince, PARIS - 6e — Chèque Postal : 1278-35

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՇԻՐՎԱՆԶԱԴԷ, Երկերի ժողովածու, 10 *հատոր լաթակազմ*	70 Ֆր.
ՍՏԵՓԱՆ ԶՕՐԵԱՆ, Երկերի ժողովածու, 7 *հատոր, լաթակազմ*	56 Ֆր.
ՍՏԵՓԱՆ ԶՕՐԵԱՆ, Պապ թագաւոր, լաթակազմ	10 Ֆր.
ՍՏԵՓԱՆ ԶՕՐԵԱՆ, Հայոց բերդը, *լաթակազմ*	8 Ֆր.
ՎԱՀԱՆ ՏԷՐԵԱՆ, Երկերի ժողովածու, 2 *հատոր լաթակազմ*	14 Ֆր.
ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՒԻԹ, *մեծադիր, գունաւոր նկարներով, լաթակազմ*	10 Ֆր.
Վ. ԱՆԱՆԵԱՆ, Հայաստանի կենդանական աշխարհը, Բ.	8 Ֆր.
ԱՐՍԷՆ ՏԷՐՏԷՐԵԱՆ, Երկեր (*Արովեան Պռօշեան, Պարոնեան*)	17 Ֆր.
ՄՈՒՐԱՑԱՆ, Պատմուածքներ, գունաւոր *նկարներով*	5 Ֆր.
ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑԻ մասին յիշողութիւններ. *լաթակազմ*	7.50 Ֆր.
ՄԻՔ. ՇԱԹԻՐԵԱՆ. Գարունը նորից եկաւ. 296 *էջ.*	5 Ֆր.
ԱԲԳԱՐԵԱՆ. Մատենադարան(*անգլ.*) 18 *գունաւոր մանրանկարներ*	3 փր.
ՀԵՆՐԻԿ ԹՈՒՄԱՆԵԱՆ. Երգի ծնունդը. բանաստեղծութիւններ	3.85 Ֆր.
Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ. Տաղեր, 200 էջ. *լաթակազմ*	3.50 Ֆր.
ՍՈՎԵՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ. Ա. 800 *էջ. լթկզմ.*	16 Ֆր.
ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ, Անլռելի զանգակատուն, *Պէյրութ*, 1963	10 Ֆր.

Առաքման ծախքը գնողին վրայ

ԳՐԱՏՈՒՆՍ ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻՆ Է

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՁԱՅՆԱԳՐԵԱԼ ԲՈԼՈՐ ԵՐԿԵՐՈՒՆ

ՃՈԽ ՄԹԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԵՒ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆՑ

IMPRIMERIE SPECIALE DU JOURNAL « HARATCH »
32, Rue de Trévise, PARIS (9e)

ՅԱՌԱՋ

Le PREMIER QUOTIDIEN ARMENIEN en EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction et Administration : 32, Rue de Trévise - PARIS-9e

Fondé en 1925 — Téléph. : PRO. 86-60

R. C. Seine 57 A 2731 — C. C. P. Paris 15069-82

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա՝ Տար. 50 Ֆ. — Վեցամսեայ՝ 27 Ֆ.

Արտասահման՝ Տար. 60 Ֆ. — Հատը 0.30 Ֆ.

ՇԱԲԱԹ 31 ՕԳՈՍՏՈՍ

SAMEDI 31 AOUT 1963

LE NUMERO : 0,30 FR.

39րդ ՏԱՐԻ — Թիւ 9696

Fondateur : SCHAVARCH MISSAKIAN

39e ANNÉE — Nº 9696

... ՍՈՒՔԸ

ՆՍՏՈՒԿ ԻՄԱՍՏՈՒՆՆԵՐ

—o—

...Հայկական Արտասահմանի մէջ, թէր – ...ու ոչ մէկ դասակարգ այնքան մանր, ...ընավոր ճակատներու բաժնուած է, ...ան մտաւորականը:

...ար համար ալ, հետզհետէ աւելի ...ան, երբեմն պատկեր մը կը ներկա– ...մէ մեր հանրային կեանքը:

...ուշտ կան գործօն տարրեր, անդամ ...ուսեկից՝ զանազան կազմակերպու– ...թեանց:

...կան «բոլորտիքեաններ» ալ, որոնք ո– ...դեր կը կատարեն, թեւ տալով իրենց ...ակբած հոսանքին:

...նք յաճախ կը նպաստեն բարեխառ– ...ու մթնոլորտը, երբ տաք ու պաղ ի– ...ր խառնուին:

...ին կը մնան բազմաթիւ զրոյց–բրոյց– ...ր, որոնք ոչ ներկայ են, ոչ բացակայ: ...ու չկան:

...րելի էր երկու մասի բաժնել այս ...ակարգը, — 1. Երկչոտներ. — 2. ...ուկ իմաստուններ:

...որդ ալ կը ճանչնաք երկչոտները ...նք անուանել նաեւ ձեռնպահներ):

...նք յաճախ զոհերն են իրենց բնա– ...թեան կամ ընկալեալ սովորու– ...թեանց:

...ընդհանրապէս մեղմաբարոյ, կը խու– ...ին հանրային գործունէութեան մը – ...ն: Կը զժկամակին պարտականու– ...ներ, պատասխանատուութիւններ ...ձնել:

...թէ ձեռներէցութեան ոգի ալ ունե – ...ն, նեցուկի մը, անթացուպի մը կա– ...ը կը զգան, ասպարէզ նետուելու ...ար: Կը վախնան որ կէս ճամբան կը ...ն, ծանր բեռի մը տակ ինկնալով:

...նան օժտուած ըլլալ սուր տրամա – ...ութեամբ. սակայն ի վիճակի չեն ար– ...լու զայն, իրենց իսկ խառնուած – ...բերումով:

...թէ փորձէք ասպարէզ քաշել, հազ – ...է որ յարատեւեն: Ինքնավստա– ...թեան եւ հաւատքի պակասը շուտ կը ...ն իրենց թեւերը:

...եմն կը նախընտրեն մեկուսի, կրա– ...կան դիրքը, հակառակ իրենց բոլոր ...նքներուն:

...աւելի բացասական պատկեր մը ...ներկայացնեն երկրորդ շարքին ներ– ...բացականները:

...նք ունին ե՛ւ համարձակութիւն ե՛ւ ...րութիւն՝ դեր կատարելու համար ...րային կեանքին մէջ: Յաճախ տոկուն ...անք ալ ունին:

...յց, — կա՛մ իրենք զիրենք շատ վեր ...մարեն այս ժողովուրդէն, — անոր ...որ մակարդակէն:

...ւ կամ, կը նախընտրեն զոհարատու – ...ու մէջ պահել իրենց իմաստութիւնը: ...խնան զայն փորձել հանրային գոր– ...ութեան կրակին մէջ:

...եմն բացակայ են գիտակցօրէն: ...ակ իրենց բոլոր բարձրաթռիչ յա– ...թեանց:

...րեւ նստուկ իմաստուններ, անոնք ...ալ կը նախընտրեն պատուհանէն ...աշխարհն ու իր անցուդարձը:

...նք վստահ ըլլալ թէ քիչերն են որ ...ն պաշար ունին, — գիտութիւն եւ ..., սեղծագործ միտք:

...թէ փորձէք իրենց թառէն իջեցնել, ...պաւորութիւնը պիտի կրէք թէ ան– ...ն զոհողութիւն մը կը կատարեն: ...ախ անմէջ ինքնահաւանութիւնն է ... կուտայ իրենց շարժուձեւերուն: ...ի, ոչ հետքեր, ակօսներ կրնան ...իրենց անցած ճամբաներուն վր – ..., ոչ ալ իրենց աւելի կամ նուազ վա– ...կան արժանիքներէն բաժին հանել

հանրութեան:

Բաւական պատկառելի համրանք մը կը կազմեն երկչոտներն ու նստուկ իմաստունները, բոլոր գաղութներուն մէջ:

Երկուքին մէջ ալ, կան բազմաթիւ պի– տանի տարրեր, որոնք ասպարէզ նետ – ուելով, գործելով միայն կրնան փրկուիլ:

Իրենց շատ մը մեղքերն ալ շարժումով միայն կրնան շտկուիլ:

Կա՞յ հրաշագործ միջոց մը, այդ շար– ժումը ստեղծելու համար: Ե՛ւ իրենց ե՛ւ հանրութեան բարիքին համար:

Ժամանակները մեզի չեն սպասեր, ի– մաստութեան տուփերը բանալու եւ բեռ չալկելու համար:

Ի՛նչ դաւանանք ալ ունենայ, ոեւէ ու– սումնական այնքան կ՚արժէ որքան ըն – դունակ է տրամադրուելու հանրօգուտ ծառայութեան:

1950 — Շ.

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՏԸ ԿՈԼ՝ ՎԻԷԹՆԱՄԻ ԿՈՂՔԻՆ

—o—

ՆԱԽԱԳԱՀԻՆ ԱՆՍՊԱՍԵԼԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Նախարարաց Խորհուրդէն ետք, Փէյր– ֆիթի տուած զեկուցումը բաւական զար– մանք պատճառեց քաղաքական շրջանակ– ներու մէջ: Արդարեւ կառավարութեան բանբերը յայտնեց թէ Վիէթնամի ծանր դէպքերը ուշադրութեան եւ յուզումի ա– ռարկայ եղած են Փարիզի մէջ: Այն գոր– ծը զոր Ֆրանսա կատարած է Քոչինչի – նի, Աննամի եւ Թոնքինի մէջ, այն կա– պերը զորս պահած է երկրին ամբողջու– թեան մէջ, այն հետաքրքրութիւնը զոր կը բերէ անոր բարգաւաճման, կը մղեն զինքը լաւ հասկնալու վիէթնամցի ժո – ղովուրդին տառապանքը: Միւս կողմէ, շարունակած է Նախարարը, այն ծանօ – թութիւնը զոր Ֆրանսա ունի այդ ժողո– վուրդէն, իրեն կը պարզէ թէ ի՛նչ դեր կրնայ խաղալ Ասիոյ ներկայ կացութեան մէջ իր հարազատ զարգացման համար, ի շահ միջազգային հասկացողութեան, այն վայրկեանէն երբ կրնայ իր գործու – նէութիւնը վառնել անկախութեան մէջ դուրսի նկատմամբ, ներքին խաղաղու – թիւն եւ միութիւն ու համերաշխութիւն դրացիներուն հետ: «Այսօր աւելի քան երբեք, այս է որ Ֆրանսա կը մաղթէ Վիէթնամի: Անշուշտ, կ՚աւելցնէ Տեղե – կատուութեան Նախարարին կարդացած զեկոյցը, իր ժողովուրդին կը պատկանի եւ միայն անոր, ընտրելու այն միջոցնե– րը, որոնցմով հոն կը հասնին: Բայց որեւէ ազգային ճիգ որ կը կատարուի Վիէթնամի մէջ, Ֆրանսան պատրաստ պիտի գտնէ իր հարազատ կարելիու – թեանց սահմանին մէջ, այդ երկրին մէջ սիրալիր գործակցութիւն մը կազմակեր– պելու»:

Այս յայտարարութիւնը անշուշտ բա – ւական աղմուկ պիտի հանէ աշխարհի մէջ եւ դժգոհութիւն պատճառէ բոլորին՝ աջէն ձախ:

Տը Կոլի այս յայտարարութիւնը կրնայ զանազան հարցեր մէջտեղ դնել: Նախ երկրին վերամիացում մը կը նախատես – ուի որ 1954ի Ժընեւի համաձայնութեանց մէջ նախատեսուած էր: Դատապարտումն է նաեւ օտար միջամտութեանց՝ չինական եւ ռուսական՝ հիւսիսային կողմը եւ ամերիկեան՝ հարաւային: Կոչ մըն է նաեւ ժողովուրդին ազգայնական զգա – ցումներուն. ժողովուրդ մը որ լաւ չի հանդուրժեր օտար հովատարութիւննե – րը, բայց որուն ընտրանին կապուած կը մնայ Ֆրանսական մշակոյթին:

Ուաշինկթընի մէջ, հաւանաբար շատ գոհ չըլլան: Արդարեւ, մինչ Ամերիկա այնքան դժուարութեանց կը բախի Վիէթնամի մէջ վերջին դէպքերուն առ– թիւ, Ֆրանսայի անսպասելի միջամտու – թիւնը շատ տարօրինակ տպաւորութիւն կը թողու: Առաջին առթիւ «ոչ մէկ մեկ– նաբանութիւն» յայտարարած էր Ուա – շինկթընի Արտաքին Նախարարութեան բանբերը: Պաշտօնական շրջանակներն ալ չեն ուզեր արտայայտուիլ, բայց յստակ է որ երբ Տը Կոլ կ՚ըսէ թէ Վիէթնամ անկախ պէտք է ըլլայ դուրսի նկատ – մամբ, բացէ ի բաց ապտակ մըն է Նա– խագահ Քենըտիի արտաքին քաղաքակա– նութեան:

×

Ֆրանսայի Նախարարաց Խորհուրդը իր այս կարեւոր նիստէն զատ կարգ մը ո– րոշումներ տուած է ձայն–պատկերա – սփիւռի սպասարկութեանց վերաբերեալ: Այսպէս՝ Փիէռ տը Պուատըֆէռ ձայն – պատկերասփիւռի տնօրէն նշանակուած է ոլրացեալ Ժիլսոնի տեղը: Կարգ մը այլ նշանակումներ ալ տեղի ունեցած են այս մարզին մէջ:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԱՆԳԱՐԱՅԷՆ կը հաղորդեն որ ութ հարիւր կիներ ու երախաներ որոնք Պար– զանիի ցեղախումբին կը պատկանին, Թուրքիա ապաստանած են:

ՈՒՈՇԻՆԿԹԸՆԻ Արտաքին Նախարա – րութեան ծերակուտական յանձնախումբը 1ի դէմ 16 ձայնով վաւերացուց Մոս – կուայի հիւլէական դաշինքը: Այս հար – ցին շուրջ Ծերակոյտը իր նիստերը կը սկսի Սեպտեմբեր 9ին:

ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ առջի օր քննած է Իսրայէլեան եւ սուրիական բողոքները: Ամերիկացի պատուիրակը յայտարարած է թէ «Երկու Իսրայէլացի– ներու մահը խիստ դատապարտում մը կը պահանջէ»: Մարոքի եւ Սուրիոյ ներկա– յացուցիչները դէմ արտայայտուած են եւ այդ պատճառաւ ալ Իսրայէլի ներկայա – ցուցիչը մասնաւոր շնորհակալութիւն յայտնած է Սթիվընսընի յայտարարու – թեան համար, որ կարծել կուտայ թէ «Խորհուրդը դրական կերպով պիտի տնօրինէ»:

ԱԼԺԵՐԻՈՅ մէջ Ընկերվարական Յե – ղափոխական Կուսակցութիւնը արգիլուե– ցաւ: Վերջերս Թռուցիկներ բաժնած էին Պեն Պելլայի կառավարութեան դէմ:

ՖՐԱՆՍԱՅԻ մշակութային Նախարարը՝ Ա. Մալրօ Ֆինլանտա հրաւիրուած է Սեպտեմբեր 15էն 21:

ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

—o—

Թղթատարական նախարարութիւնը, մերժելով Մամուլի Ընկերակցութեան դիմումը, որով խնդրուած էր մամուլը չենթարկել Թղթատարական ծախքերու նոր եւ յանկարծական յաւելման, Սեպ – տեմբեր 1էն սկսեալ հափիւրին 400 հա – մեմատութեամբ յաւելում մը կը կատարէ թերթերու առաքման գինին վրայ, ան – սպասելի տնտեսական ծանր եւ նոր բեռ մը ստեղծելով, մանաւանդ այն թերթե– րուն համար, ինչպէս Յառաջի, որոնց ընթերցողներուն մեծագոյն մասը բա – ժանորդ է եւ ոչ հատավաճառ, ինչպէս ֆրանսական մամուլը:

Ծանօթ է որ Օգոստ. 1էն Մամուլի Ըն– կերակցութիւնը բարձրացուց օրաթեր – թերու գինը: Յառաջ, ինչպէս յայտա – րարած էր այդ թուականին, որոշած էր մինչեւ Դեկտեմբեր 31 պահել իր բա – ժանորդագրութեան գինը, բայց այս ա– նակնկալ եւ ծանր յաւելումը անկարելի կը դարձնէ անխախտ պահել այդ որո – շումը: Ուստի նախատեսուած յաւելումը կը ստիպուինք կատարել Հոկտեմբեր 1էն սկսեալ, մէկ ամսուան բացառիկ պայմա– նաժամ մը տալով մեր բաժանորդներուն՝ կարգադրելու համար իրենց առկախ հա– շիւները:

Այն բաժանորդները, որոնք մինչեւ Սեպտեմբեր 30 չեն վճարած ընթացիկ տարուան (1963) բաժնեգինը, այդ թը – ւականէն ետք կը վճարեն նոր սակով:

Հոկտեմբեր 1էն, Յառաջի բաժանոր – դագրութեան պայմաններն են.—

ՖՐԱՆՍԱ

Տարեկան 60 Ֆրանք

Վեցամսեայ 35 Ֆրանք

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ միայն տարեկան՝ 75 Ֆ.:

Շնորհակալութիւն մեր այն բոլոր բա– ժանորդներուն, որոնք իրենց կանխիկ եւ կանոնաւոր վճարումներով կը դիւրացնեն Յառաջի վարչական ծանր գործը:

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԼԻԲԱՆԱՀԱՅ ԿԵԱՆՔ

ՄԵՍՐՈՊ Ծ. Վ. ԹԷՐԶԵԱՆԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՕԾՈՒՄԸ

—o—

Կիրակի Օգոստոս 25ի երեկոյեան ժա – մը 4ին, Զմմառու Հայ Կաթողիկէ վան– քի նորակառոյց Ընծայարանի բացօթեայ բակին մէջ, հանդիսաւոր արարողու – թեամբ Եպիսկոպոս ձեռնադրուեցաւ Մեսրոպ Ծ. Վրդ. Թէրզեան, ձեռամբ՝ Իգնատիոս – Պետրոս ԺԶ. Կաթողիկոս– Պատրիարքի Մեծի Տանն Կիլիկիոյ, որ իր կողքին ունէր Հալէպի Կաթողիկէ Հա– յոց Առաջնորդ Գէորգ Արքեպ. Լայլեքեան եւ Եգիպտոսի Կաթողիկէ Հայոց Առաջ – նորդ Ռափայէլ Եպիսկ. Պայեան:

Ներկայ էին Լիբանանի Հանրապետու – թեան նախագահի ներկայացուցիչ՝ Ար– դարութեան նախարար Ֆուատ Պութրոս, Պուրճ – Համուտի քաղաքապետ Յակոբ Աչճեան, պետական երեսփոխաններ եւ բարձրաստիճան անձնաւորութիւններ:

Ներկայ էին նաեւ Լիբանահայոց Առաջ– նորդ Տաճատ Արքեպ. քոյր եկեղեցինե – րու առաջնորդներ, բարձրաստիճան ե – կեղեցականներ, մայրապետներ եւ հա – ւատացեալներու խուռներամ բազմութիւն մը:

Կարգապահութեան կը հսկէին Կաթո – ղիկէ հայ սկաուտներ: Ոստիկան զօրաց ջոկատ մը պատուոյ յարգանք կը մա – տուցանէր: Ս. Փրկիչ եկեղեցւոյ փողե – րախումբը մէջ ընդ մէջ կը նուագէր, ա– ռաւել փայլ մը տալով Զմմառու շրջա – փակի հանդիսաւոր շքեղանքին:

Արարողութիւնը, որ կը ձայնասփռուէր Լիբանանի ռատիօկայանէն, խմբերգուե– ցաւ քառաձայն Ս. Փրկիչ եկեղեցւոյ երգչախումբին կողմէ, ղեկավարու – թեամբ Հայր Մանուէլ Վ. Պաթագեանի:

Պատարագի ընթացքին, կանոնական ծիսակատարութեամբ տեղի ունեցաւ Ե– պիսկոպոսական տպաւորիչ օծումը:

Յաւարտ պատարագի, կարդացուեցաւ Վատիկանէն ստացուած Օգոստ. 24 թը – ւակիր հեռագիրը, որով Պապը, Արհ. Թէրզեան Գերապայծառի Եպիսկոպոս օծման ուրախ առթիւ, իր հայրական ա– ռաքելական օրհնութիւնը կուտար Պա– թանեան Կաթողիկոս – Պատրիարքին, նորօծ Եպիսկոպոսին եւ հաւատացեալ ժողովուրդին:

Ապա տեղի ունեցաւ դաւաթ մը գինիի հիւրասիրութիւն եւ շնորհաւորական ա– ջահամբոյր:

Այժմ, Մեսրոպ Եպիսկոպոս Թէրզեան տիտղոսաւորն է Կոմանայի Հայոց եւ Ընդհ. Փոխանորդ Պէյրութի Պատրիար – քական Թեմին:

ՍԻԼՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԷՆ ՆԵՐՍ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԷՆ ԴՈՒՐՍ

(Բ. եւ վերջին մաս)

Դ.— Կայ աւելի անիմաստ եւ չարամտօրէն կատարուած կացնահարում հայ դպրոցների եւ հայկական մանկապարտէզների մասին, որոնք հայրենաշունչ գրչով պատկերում է բանաստեղծուհի Ս. Կապուտիկեանը:

«Իսկ հապա դպրոցները: Ամէն մի ժողովրդի համար դպրոցը, ինչպէս Սփիւռքում են ասում, վարժարանը մի վայր է, որտեղ երեխան ստանում է գիտելիքներ եւ ընդհանուր դաստիարակութիւն: Սփիւռքահայի համար վարժարանը նաեւ հայրենիք է:

«Հալէպի մի շարք դպրոցները կոչւում էին հայրենի վայրերի անունով՝ Կիլիկեան վարժարան, Այնթապի վարժարան, Մարաշի վարժարան եւայլն: Կորաւ Կիլիկիան եւ մնաց օտար հողի վրայ՝ հայրենիք դարձած Կիլիկեան վարժարանը: Ամայացան Մարաշն ու Այնթապը, բայց գաղթի առաջին օրերից հիմնուեցին Մարաշի Մեսրոպեան եւ Այնթապի Կրթասիրաց վարժարանները: Ու վարժարանը ջանում է հայ մանուկի համար փոխարինել հայրենիքին: Աւելի ճիշդ՝ կառուցել մանուկ հոգու մէջ հայրենիքի զգացողութիւնը, հայրենիք: Ես զգացի, թէ ի՛նչ վիթխարի ճիգ ու ջանք են գործադրում դրա համար ուսուցիչն ու պարտիզպանուհին, տնօրէնութիւնն ու հոգաբարձութիւնը:

«Մանկապարտէզից են սկսում այդ կառուցումը: Կառուցանում են յամառութեամբ, սիրով: Համբերութեամբ տեղ են բացում մանուկի հոգում, դնում հիմնաքարերը:

«Գահիրէում եմ, Մերճանեան մանկապարտէզում: Ընդարձակ սրահում, փոքրիկ աթոռակների վրայ նստել են «Ծիլ», «Բողբոջ», «Կոկոն» եւ «Ծաղիկ» դասարանների երեխաները: Նրանք երգում, արտասանում, պարում են: Ահա առաջ է գալիս մի սիրունիկ մանչուկ: Հազիւ 4–5 տարեկան է, բայց արտասանում է մեծի ինքնավստահութեամբ, լարուած ու տենդոտ.

Հայ եմ ես, Հայ եմ ես,
Դուք լաւ նայէք իմ երես,
Հայաստանը ազատող
Քաջ Վարդանի թոռն եմ ես:

«Դամասկոսի Բարեգործականի Սահակեան վարժարանում մանկապարտէզի սանուհիները իրենց մէջ են առել ընկերուհուն, սեւաչեայ ու վառվռուն Նեկտարին, որի ձեռքին տիկնիկ կայ: Գնում է մօքերի աշխոյժ փոխանակութեան՝ չափածոյի վերածած: Բազմաթիւ օտար անուններ քննութեան չեն դիմանում ու մերժւում են: Վերջում ընտրում են հայկականը՝ Հայարփի: Եւ ամուր գրկած տիկնիկին, փոքրիկ Նեկտարը ոգեւորուած բացագանչում է.

Օր մըն ալ մեզ եթէ նամբայ տան,
Պուպրիկս կ'առնեմ կ'երթամ Հայաստան:

Ահա մէջ բերուած մօտ 75 տող կազմող սքանչելի հատուածը իր հայրենաշունչ իմաստով, հայ մանկական աշխարհի աննենգ ձգտումներով գեղազարդուած Սիլվայի ներկայացմամբ, ամենայն բըռտութեամբ «Սով. Հայաստան»ը կացնահարել է: Տեղ չի տուել իր էջերում: Ինչո՞ւ, որովհետեւ Երեւանի հայ մանուկների հոգին կ'աղճատի:

Որովհետեւ Երեւանցիք լծուած են կոմունիզմի կառուցման բանդագուշանքով: Այդ գործին կապել են մանկապարտէզը, դպրոցներն ու ծնողները: Վերեւում ներկայացուածը դուրս են նետել, որ Հայաստանաբնակ ծնողքները, մանուկ սերունդը եւ ընթերցողները անհաղորդ մընան հայ ժողովրդի բիւրեղացած իղձերին:

Բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկեան իր հանդիսաւորապէս ունեցած ելոյթի ժամանակ բաւական հանգամանօրէն անդրադառնում է «Ազդակ» օրաթերթում տպուած Բժ. Երուանդ Խաթանասեանի բաց նամակին, որն ուղղուած էր իրեն: Նաեւ նոյն ձեւի անդրադարձում «Հայրենիք»ի խմբագիր Ռ. Դարբինեանի յօդուածի առթիւ՝ բանաստեղծուհու առաքելութեան նպատակի շուրջ:

Մեր նպատակը չէ զբաղուել բանավէճի բնոյթ ստացած այդ խնդիրներով: Դա վերաբերում է Բժ. Ե. Խաթանասեանին եւ Ռ. Դարբինեանին, որոնք ի վիճակի են զբաղուել, եթէ անշուշտ յարմար կը համարեն:

Իմ ակնարկը կը շօշափի այն կէտը, որ «Ս. Հայաստան» տեղ տալով Կապուտիկեանի ելոյթին՝ ի մասին Բժ. Խաթանասեանի բաց նամակին, յապաւել է հետեւեալ կարեւոր հատուածը, միշտ առաջնորդուած քարոզչական մտահոգութիւններից, կամ նման անմաքուր դիտումներից:

Մէջ բերենք Կապուտիկեանի խօսքը, որի չարադրանքը կայ եւ «Ս. Հայաստան»ում եւ «Զարթօնք»ի մէջ.—

«Ազդակ» թերթի մէջ կարդացել էի դաշնակցական պարագլուխներից մէկի՝ Բժ. Խաթանասեանի ինձ ուղղած բաց նամակը: Պ. Խաթանասեանը չափազանց վրդովուած իմ՝ Փառատոնի խօսքին մէջ օգտագործած մայրական կաթի համեմատութիւնից, աշխատում էր ապացուցանել, որ նրանք երբեք էլ հայ մանուկին չեն զրկել իրենց Մայրիկի՝ Մայր Հայաստանի կաթից»:

Ահա սոյն պարբերութիւնից ետքը, «Ս. Հայաստան»ը չարամիտ դիտումներով դուրս է ձգել ստորեւ մէջ բերուած տողերը, իբրեւ բացայայտ ճշմարտութիւններ.—

«Պ. Խաթանասեանը, ասում է Կապուտիկեան, մի ամբողջ լրագրային երեք սիւնակ սէր է բացատրում Սով. Հայաստանի ստեղծած մշակոյթի հանդէպ եւ ստացւում է այն տպաւորութիւնը, որ իր կուսակցութեան վերջի 40 տարիների գործունէութիւնը հիմնականում հետապնդել է բանասիրակա՛ն նպատակներ, որ էչքէֆիէի ակումբի ժողովականները հաւաքուել են ոչ թէ Հայաստանաէր անձանց դէմ հալածանքի ծրագիրներ կազմելու, այլ Հայաստանի Ակադեմիայի հրատարակած «Անձնանունների բառարանը» ուսումնասիրելու: Եւ որ Սփիւռքի բոլոր ակումբներում՝ Սահակեան սրահում, Թէքէեան Մշակ. Միութեան կամ «Գրական շրջանակի» մէջ անվերջ անտեսուե՛լ է Հայաստանի երգն ու խօսքը, եւ միա՛յն «Համազգայինի» բոլոր մասնաճիւղներն են, որ աշխարհասփիւռ մամուլով ամենուր, Հեռաւոր Արեւելքից մինչեւ Ամերիկա, տարածում են խորհրդահայ գրողների հայրենաշունչ եւ իրաւ հայրենական բանաստեղծութիւնները, հայ երգահանի սրտի տաքուկ բաբախումները, Հայաստանի կերպարուեստի ազգային նորագոյն ցայտաքերը եւ ներկայացնում հանրութեան, իբրեւ առկայծումը՝ հայ տաղանդի զարթօնքի, եւ մարմնացումը՝ հայ հոգու»:

Ապա շարունակում է Սիլվան.—

«Մենք ամբողջ սրտով ողջունում ենք Պարոն Խաթանասեանին եւ նրա կուսակցութեան այս նոր, նախորդներից շատ աւելի արդիւնաւէտ առաքելութիւնը: Բայց եթէ նոյնիսկ այս նոր դիրքաւորումը իրօք գոյութիւն ունենար, դարձեալ Մեսրոպեան Փառատօնին ասուած իմ խօսքը մնում է ուժի մէջ»:

Կապուտիկեանի յիշեալ մէջբերում խօսքը «Ս. Հայաստան» կացնահար յապաւելուց ետք կրճատել է նաեւ բանաստեղծուհու մէկ այլ արտայայտութիւնը, որ թւում է չի բաժանում «Ս. Հայաստան»ի խմբագրութիւնը:

Դա հետեւեալ կարճ պարբերութիւնն է.—

«Ես (իմա Սիլվա Կապուտիկեան) Պարոն Խաթանասեանին որպէս հօրս նախկին ընկերոջը (կարծում եմ, եթէ հայրս կենդանի մնար՝ պիտի հաւանութիւն տար այս նախկին ածականին) կարող եմ խոստովանել, որ այնքան էլ համամիտ չեմ մի քանի հրապարակագիրների հայհոյալից թօնին, երբ նրանք գրում են Դաշնակցութեան եւ նրա ղեկավարների մասին»:

Այսպիսով կրճատման, յապաւումկացնահարութեանց ու խեղումների, նաեւ գրական բարոյականութեան ըմբռնումների ոտնահարման մի խրատեսակ խառնուրդ շարադրանք է «Ս. Հայաստան»ում լոյս ընծայուածը:

Եւ մեր խորին համոզմամբ, գրական այդ խմբագրական շահատակութեանց դէմ առաջին ծառացողը ինքը, հեղինակը, բանաստեղծուհին է լինելու:

Ամէն բանից առաջ Սիլվա Կապուտիկեան ինք է որ համակերպելու չէր իր գրաւոր ելոյթի կոմունիստական կացնահարման ապաբարոյութեան հետ:

Այս պարագային տեղին է թադաւորի աւետարանական այն գեղեցիկ դարձուածք – խօսքը:

Խորապէս ցաւալի է, որ Սիլվա Կապուտիկեանի «Աշխարհիս ամենամեծ քաղաքն է Երեւանը» գեղուցում յօդուածը այդ դէշ ճակատագրին ենթարկուած է «Ս. Հայաստան»ի մէջ:

Մեղքը բանաստեղծուհու ճտին է նաեւ:

Հ. ԿՈՍՈՅԵԱՆ

Ց. Գ.— Պարտք կը համարեմ աւելցնել նաեւ այն, որ իմ հայրենակից Սիլվա Կապուտիկեան արդարեւ շնորհակալ գործ է կատարել Սփիւռքի Միջին Արեւելքի հայ գաղութներին տուած իր այցելութեամբ: Շատ եւ շատ ցանկալի է, որ նրա այդ այցելութիւնը չլինէր վերջին: Այլ դառնար շարունակական, դէպի հայ ժողովուրդի մի շատ ստուարաթիւ համբանք, որպէս խորհրդային Սփիւռք, որ տարտղնուած է խորհրդային կայսրութեան այս եւ այն երկրամասերում: Դժբախտաբար տարէց տարի ներկայ Հայաստանից դուրս են գալիս նորանոր հաղարեակներ, որոնք, եւ ինչպէս հինները, ուծացման ամենակուլ ախտին ենթակայ պայմանների հոգեվիճակումն են գտնւում:

Եթէ ճիշդ է Սիլվայի այն պատկերաւոր արտայայտութիւնը՝ ուղղուած Բժ. Խաթանասեանին, որ իբրեւ թէ հիւանդ երեխան բուժուել, մեծացել, աւարտել է դպրոց եւ համալսարան, առաւօտից մինչեւ երեկոյ ոգեւորուած աշխատում, կառուցում է տներ եւ քաղաքներ, ծաղկեցնում ամայի եւ խոպան հողեր եւայլն, եւայլն, ցաւալի է սակայն որ բանաստեղծը չտեսնելու է տալիս, որ մօտ մէկ միլիոնի հասնող մի թիւ Մայր հողից կտրուած է, մայրական հարազատ կաթից զրկուած: Ռուսականութեան տիրքերի կաթով է սնւում, մեծանում: Հալւում է եւ անէանում բոլշեւիկ ռուսականութեան պղտոր յորձանուտներում: Արդեօ՞ք սա առողջացումն է:

Ահա, պայմանների սոյն իրադրութեան բերումով, Սիլվա Կապուտիկեան եւ ընկ., հարկ է այց տան նաեւ ռուսական

ՍԱՅԱԹ – ՆՈՎԱՅԻ
ԾՆՆԴԵԱՆ 250 ԱՄԵԱԿԸ

———o———

ՄԵԾ ԸՂՋԱՒՈՐՆ ՈՒ ԲԵՋԱՐԱԾԸ

———o———

×

Անհնարին է վերախառնել մարդկային խառնուածքը: Եթէ Սայաթ-Նովան ունենար, ըսենք Քուչակի խառնուածքը, ապա օրերից մի օր կը բացականչէր.

Ա՛յ, գնա, չի պիտիս դու ինձ
Լուկ պեզար իմ սիրտս ի քենէ,
Ձերա խոցեցիր դու զիս՝
Լուկ վերցաւ սրտիկս ի քենէ:
Թէ գան ու զքեզ ջուր ասեն,
Կամ ջրի նարակն ի քենէ՝
Տարեկ մի ծարաւած կենամ,
Չի խմեմ կաթիլ մի քենէ:

Սակայն Սայաթ-Նովան իր ամենակարող նախորդին կարող էր պատասխանել՝ այս դէպքում փոքր-ինչ այլ իմաստ տալով իր նշանաւոր տողին. «Իմ ջուրըն ո՛ւրիշ ջրէն է» եւ կամ թէ. «Քու աածըն ո՛ւրիշ դիզ է, ո՛ւրիշ դիզ»: Թո՛ղ որ Քուչակը Սայաթ-Նովային խրատէր սրա իսկ տողով. «Ամէն մարթ իր բարին բարեբար կուլի» (այսինքն՝ իրեն հաւասարին կը հաւասարուի): Բայց պատասխան ունի եւ Սայաթ-Նովան. «Ամէն մարթ իր սրտի՛ն հաւասար կուլի»:

Եւ քուչակեան դեղը Սայաթ-Նովային ապաքինել չէր կարող հէնց ա՛յս պատճառով: Ա՛յն պատճառով, որ ինչպէս էլ «ամէն մարթ իր սրտի՛ն հաւասար կուլի»: Իսկ Սայաթ-Նովան այն մարդկանցից էր, որոնց կրծքավանդակի լայնութիւնը ցոյց տալով՝ ասում են. «Այստեղ թոք չկա՛յ — համատարա՛ծ սիրտ է»:

Շէյքսփիրն է ասել, որ «ով դաւաճանում է ինքն իրեն՝ աշխարհում չի սիրում ոչ ոքի»: Նոյնքան անդաւաճան ինքն իր հանդէպ՝ Սայաթ-Նովան, լայն կրծքավանդակով մէկ համատարածուած այդ սիրտը, լեփ-լեցուն էր որքան անդաւաճան, նոյնքան էլ անյոյս մի սիրով: Այս պատճառով էլ Սայաթ-Նովայի սիրոյ բառարանը հանրագիտարանային չէ: Նրա սիրոյ բառարանը առաւել հոմանիշային է, ուստի եւ նրա սէրը կարող է արտայայտուել հոմանիշներով միայն մէ՛կ բայի («չսիրուել»), միայն մէ՛կ ածականի («անյոյս»), միայն մէ՛կ եւ այն էլ վերացական գոյականի («կարօտ»): Ըստ այսմ էլ նրա սիրոյ համար տեսակարար ու յայտարար է մէ՛կ ձայնաւորութիւն («ախ») եւ մէ՛կ շաղկապ («բայց»)...:

Բայց հոմանիշային նրա բառարանն ունի մի այնպիսի հարստութիւն, որի հաշուետարն են դարձել մինչեւ անգամ օտարները: Վ. Բրիւսովը, իբրեւ օրինակ, հէնց այդ էր անում, երբ Սայաթ-Նովայի խաղերում գտնում էր աչքեցուցիչ «բազմազանութիւն միանմանութեան մէջ» եւ նրանց հեղինակին հանձար համարելով՝ խրատմբ կոչում էր «երանգների բանաստեղծ», ա՛յն երանգների, որոնց պահանջատէրն ու վճարողը պիտի աշխարհ գար Սայաթ-Նովայից 100 տարի ետք ու կոչուէր Վեռլէն:

(«Pas la couleur, rien que la nuance»).

Այդ երանգների բազմապիսութիւնից, զգացմունքային այդ հոմանիշների անսպառ հարստութիւնից, մեղեդիական միեւնոյն թեման անսահմանօրէն փոփոխակելու կարողութիւնից զգում ես մի գլխապտոյտ, որ ծանօ՛թ, շա՛տ ծանօթ է Սայաթ-Նովայի այս առումով ամէնից աւելի յիշեցնող բանաստեղծն էլ գրել է հայերէն եւ կոչւում է Նարեկացի:

Ինչպէս որ սա՝ Սայաթ-Նովայից 800 տարի առաջ՝ իր մէկ եւ նոյն զգացմունքի համար Արարչին էր դիմում հազար ու մէկ ձեւերով, գտնելով հազար ու մէկ դիմառնութիւն եւ կոչական, մակդիր ու ածական, ճիշդ այնպէս էլ Սայաթ-Նովան իր մէկ եւ նոյն զգացմունքի համար իր Եարին է դիմում՝ գտնելով հազար ու մէկ բոլորովին այլ դիմառնութիւն ու կոչական, ածական ու մակդիր: Ու եթէ «մեղաւոր» Նարեկացին քաւութեան իր մոլեգին ձգտումի մէջ Աստծուն հաւասարեցնում է Սիրոյ, ապա բոլորովին այլապէս «մեղաւոր» ու «ջրատար» Սայաթ-Նովան էլ իր Սէրն է հաւասարեցնում Աստուածութեան: Իրենց թէ՛ ներբողման եւ թէ՛ վերըլացման մէջ նրանք հասնում են մի բախտաւորութեան, որ քչերին է տրուած. եթէ բառերը ոչ երի կապակցութիւններ չեն, այլ իրերի, զգացմունքների ու գաղափարների շիրմաքարեր, ապա բանաստեղծների գոյքի համար աշխարհում կատարւում է այն, ինչ պիտի իբրեւ թէ կատարուէր Յայտնութեան օրը — ճաքում են բառերի տառէ շիրմաքարերը, բացւում են նրանց դարաւոր գերեզմանները, վերըստանում միս ու մարմին, վերածնւում այնպիսի կենդանութեամբ ու շարունակութեամբ, որից շնչահեղձւում են բանաստեղծներն իրենք եւ գլխապտոյտ պատճառում իրենց ընթերցողներին, մի գլխապտոյտ, որ բուդդայականները կոչում են նիրվանայ, քրիստոնեաները երանութիւն:

ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ

(Շար. – 6)

ՀԱՅԱՍՏԱՆ

ՍՓԻՒՌՔԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԸ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ

«Երեւան» թերթը կը գրէ թէ Օգոստոս 18ին օդանաւով Օտեսայէն Երեւան հասան 18 հայ ուսուցիչներ (Լիբանանցի, Թուրքիացի եւ Եթովպիացի): Օդանաւակայանին մէջ ջերմօրէն ընդունուեցան ուսուցիչներու կատարելագործման ուսումնարանին եւ արտասահմանեան երկիրներու հետ մշակութային կապի ընկերութեան պատասխանատուներու կողմէ:

Երկու օր առաջ Երեւան հասած էին երկու հայ ուսուցիչներ Կալկաթա քաղաքէն (Հնդկաստան) եւ Մարսէյլ քաղաքէն (Ֆրանսա):

Սփիւռքի հայ ուսուցիչները Հայաստան պիտի մնան մինչեւ Հոկտեմբեր ամսուն վերջը, եւ առիթ կ'ունենան ծանօթանալու երկրին կրթական աշխատանքներուն, ինչպէս եւ արդիւնաբերական ու գիւղատնտեսական ձեռնարկներուն, որոնց կարգին՝ գիտութեան նուաճումներուն: Անոնք պիտի պտըտին նաեւ քանի մը գաւառական քաղաքներ եւ տեսարժան վայրեր:

Այս ուսուցիչներուն համար կազմակերպուած են մասնաւոր դասախօսութիւններ մանկավարժական կարեւոր հարցերու շուրջ:

ՔԻՄԻԱԳԷՏՆԵՐՈՒ ԱՌՈՂՋԱՐԱՆԸ

Երեւանէն 50 քիլոմեթր դէպի հիւսիս, Հրազդանի շրջանին Աղվերան լեռնահովիտին մէջ, երկու տարի առաջ՝ աշնան հիմը դրուեցաւ մասնաւոր առողջարանի մը, որ յատկացուած է քիմիագէտներուն:

Դարաւանդին երկու կողմերուն վրայ կը հանդչին առողջարանին երկյարկանի չորս շէնքերը, որոնք կառուցուած են տուֆ քարով եւ ինքնատիպ ճարտարապետութեամբ:

Առողջարանին շուրջ գօտի մը կը հիւսեն անտառները, որոնց լանջերուն վրայ ալիք ալիք կը ծփան լեռնային հազարագոյն ծաղիկներ՝ ինչպէս ծով մը: Բնութեան այդ հրաշապատում համանուագին մաս կը կազմէ լեռնային առողջարար օդը, որ մագնիսի պէս կը քաշէ հարիւրաւոր հոգեկներ:

Առողջարանին տնօրէնը, Ա. Յովհաննիսեան, կը յայտնէ թէ չորս շէնքերուն մէջ կրնան բնակիլ 160 հոգի: Երբ ամէն շինութիւն աւարտի, կրնայ պատսպարել մինչեւ 300 հոգի:

Առողջարանը ունի լողարան, 150 հոգինոց ճաշարան, բաղնիք, բուժարան եւ մրզատան:

ՁԱՅՆԱԴԱՐԱՆ

Երեւան եւս ունի իր ձայնապահարանը (фонотеկ): Եթէ հայ մատենադարաններուն մէջ փոշիներէն, պատմութեան արհաւիրքներէն եւ ժամանակին թշնամութիւններէն կը պաշտպանուին ու կը պահպանուին մագաղաթներ, հին մատեաններ, որոնք կը պատմեն մեր ժողովուրդին հերոսական գործունէութիւնն ու ստեղծագործութիւնները, նոյն ձեւով այս ձայնապահարանին մէջ ապաստանած են երաժշտական ու թատերական արուեստի ձայնաւոր նմոյշներ:

Ընդարձակ ու լուսաւոր դահլիճ մըն է, ուր մինչեւ առաստաղը, դարակներու մէջ, դիզուած են ժապաւէններ, սկաւառակներ, հայ ժողովուրդին երաժշտական վաստակը: Այս ձայնական գանձարանին մէջ պահուած է աւելի քան 28 հազար երաժշտական ստեղծագործութիւն, որոնց մէջ պատկառելի տեղ մը կը գրաւէ անմահ Կոմիտասի ժառանգութիւնը, — Լոռուայ հորովելը, Կալի երգը, Լօրիկը, Լուսնակն անուշը, Լօ-լօն: Հարուստ է հայ դասական երաժշտութեան բաժինը, որու կողքին՝ ռուսական, եւրոպական, ասիական ժողովրդական երգեր:

Ձայնադարաններու մէջ խնամքով կը պահպանուին նաեւ մեծանուն երաժիշտներու, արուեստագէտներու, ատմունքի վարպետներու ձայները: Այստեղ կը գտնէք աշխարհահռչակ Իմա Սումակի, Բենիամինօ Ջիլլի, Տ. Գոբբի, Տ. Սկիպայի, Ֆ. Շալիապինի, ինչպէս նաեւ Կարա Մուրզայի, Ա. Տահմուրազեանի եւ այլոց ձայները:

Այս ձայնադարանէն է որ կուգան եւ իրենց ձայնը լսելի կը դարձնեն Հրաչեայ Ներսէսեան (Պաղտասար աղբար), Վաղարշ Վաղարշեան (Բուլըչով), Վահրամ Փափազեան (Օթելլօ), Աւետ Աւետիսեան (Վաշխառու Զամբախով), ինչպէս նաեւ Յասմիկ, Արուս Ոսկանեան, Ռուզաննա Վարդանեան:

Այս ձայնադարանին մէջ կը գտնուին նոյնպէս արտասահմանեան արուեստագէտներ, ինչպէս Շարլ եւ Այդա Ազնաւուրեան, Սեդրակ եւ Վարդուհի Վարդանեան, Սիւզան եւ Քաջունի Դաւիթ Յովհաննէսեան, Կարպիս Զոպեան, Խաչատուր Փիլիկեան եւ ուրիշներ:

Վերջերս ստացուեցան Աշոտ Պատմագրեանի, Համբարձում Գրիգորեանի, Հրաչեայ Եաղուպեանի, Արման Թոքաթլեանի, Համբարձում Պէրպէրեանի ձայները:

«ԱՐԵՒԻՆ ԼԻՃԸ»

Բարձրացէք Արովեան պուրակէն վեր՝ ոլորապտոյտ ճամբով: Ձեր ձախ կողմը կը փռուի Հայաստանի քաղաքամայրը, հին ու նոր Երեւանը: Կանանչ ու վարդագոյն է քաղաքին պատկերը: Աւելի հաճոյալի է այդ տեսարանը՝ «Ցաղթանակ» զբօսական այգիին ճամբէն: Վարդագոյն շէնքեր, կարմրաւուն տանիքներ, ու ծառե՛ր, ծառե՛ր, ալիք ալիք ծաղիկնե՛ր, կպրապատ պողոտաներ ու փողոցներ:

Ահա արդէն հասած էք «Ցաղթանակ» հանրային պարտէզը: Երեւանի բնակչութիւնը շատ կը սիրէ այս վայրը, հանգստանալու եւ հաճելի ժամեր անցընելու համար: Ամրան տաքերուն՝ զով է այստեղ, մշտադալար դարուն: Զբօսական այլազան յարմարութիւններ ստեղծուած են ամէն անկիւն, — ճօճանակ, կառքեր, գրադարան, խաղատուն:

Բայց մեծագոյն նուէրը «Արեւին Լիճն» է, որ պատրաստութեան մէջ է: Լիճը պիտի ունենայ 11 հազար քառակուսի մեթր տարածութիւն, 170 մեթր երկարութիւն, լայնքը՝ 70 մեթր: Լիճին մէջ պիտի գործեն ինքնաշարժ նաւակներ:

Լիճին մէջ պիտի թոյլատրուին նաեւ լողալու մրցումներ:

...տարածքներու վրայ ցրուած հայկական
...իւս Սփիւռքին, ճիշդ այնպէս, ինչպիսին
...կատարուեց Միջին Արեւելքի Հայ Գաղութներին: Եւ պիտի տեսնուի բեւեռից
բեւեռ ա՛յն տարբերութիւնը, որ կայ երկուսի միջեւ, այն աղքատութիւնը, հոգեւոր, ազգային և մշակութային, որոնցից զուրկ, ձինհալքի մէջ են հոծ համախմբումներ խորհ. երկրներում: Ապա
...ածուի գրիչը ձեռքին, դնէր դայն
իր խղճի վրայ, հրապարակէր ելոյթ...ները, ցոյց տալու համար որ հայրենիքը յենարան ունենալու գիտակցութիւնը բացակայում է եւ տակաւ առ տակաւ
...ւում են հոգեւոր միասնութեան կապերը, ի հետեւանս չիլ մի վարդապետութեան ապաբերիչ ուսմունքի:

Նաւ բաղձալի է մեզ, արտահայաստանցիներիս համար, որ Սիլվան (եւ իր
...նները) այդ առաքելութեան ճամբի
...րայ կանգնած, շարունակի իր այցելութիւնները: Թերեւս առիթ ունենայ տեսնելու ուծացման վատթարագոյն իրականութիւնը: Աչօք բացօք չօշափի այն, որ
...տարեց Արտասահմանում, որից յետոյ
...վի դայ ասելու թէ ո՞վ է որ աղի եւ
...ի է ծծում հարազատ մօր ստինքնե-
...րէն... եւ որ «Աշխարհիս ամենամեծ քաղաքն է խորհրդային Երեւանը», այս
...արձակի տակ գիտուած:

Հասատո՞լ արդեօք: Հրաշքի դարը վաղուց անցել է, մանաւանդ աթէիստական Հայաստանում:

Հ. Կ.

ՀԱՅ ԱՐԻՆԵՐԸ ՎԵՐԱԴԱՐՁԱՆ

Հայ Արիներու Միութեան Փարիզի եւ Մարսէյլի շրջանի սկաուտները, խմբապետները եւ խմբապետուհիները, որոնք մասնակցեցան մարաթոնի Ճամբարին եւ Հռոդոսի Համաժողովին, վերադարձան Ֆրանսա, մէկ ամսուան բացակայութենէ մը ետք:

Ճամբարէն եւ Համաժողովէն ետքը Հայ Արիները տասը օր հիւր եղան Աթէնքի հայ գաղութին: Իրենց համար կազմակերպուած էին պտոյտներ, ընդունելութիւններ եւ հանդէսներ: Երեք չորս թուական ընթացքին ստեղծուած էր այնքան սիրալիր եւ տաք մթնոլորտ մը որ բաժանումը շատ տխուր եղաւ:

Աթէնքի մէջ վերջին երեկոն, հաւաքոյթի մը ընթացքին, գաղութին կազմակերպութեանց անդամները հրաժեշտ առին Հայ Արիներէն, երգերով, սիրալիր խօսակցութիւններով եւ բոլորն ալ խոստացան դարձեալ միասին հանդիպումներ ունենալ:

Յունաստանի Առաջնորդ Սրբազանը, մասնաւորապէս այցելեց Հայ Արիներուն բարի ճանապարհ մաղթելու:

Հայ Արիներու Միութեան ընդհանուր պետը, հրաժեշտի այցելութիւններ ըրաւ «Ազատ Օր»ին, Առաջնորդին եւ զանազան ազգային մարմիններու, որոնք բոլորն ալ գուրգուրացին Հայ Արիներու վրայ:

Գալով ճամբարին յաջողութեանը, մեծ եղաւ Հայ Արիներուն համար: Յունաստանի Թագաւորը, գահաժառանգ իշխանը իրենց շնորհաւորութիւններն ու գոհունակութիւնը յայտնեցին Հայ Արիներու Միութեան մասնակցութեան համար Միութեան ընդհանուր պետին, իսկ յունական կառավարութեան Կրթական նախարարը, որ ներկայ եղաւ Հռոդոսի Համաժողովին ամբողջ տեւողութեան, երկար եւ մտերիմ խօսակցութիւն մը ունեցաւ հայ պատուիրակներուն հետ, իր ուրախութիւնը յայտնելով հայկական պատուիրակութեան մասնակցութեան եւ մանաւանդ այն մեծ խանդավառութեան համար, որ Հայ Արիները ստեղծեցին Յունաստանի հայ գաղութին մէջ:

Ճամբարին մասնակցող Հայ Արիները մեծապէս օգտուեցան անկէ, նախ ճանչնալով յունահայ գաղութը, եւ յետոյ՝ ցոյց տալով որ իրենք ալ չեն օտարացած: Մեր տղաքը խօսեցան եւ երգեցին հայերէն. հպարտ էին հայ սկաուտութիւնը ներկայացնելու եւ իրենց վարքով և գործունէութեամբ բոլորն ալ միայն գովասանք ստացան ամէնէն:

Եղբայրական սիրալիր մթնոլորտ մը ստեղծուեցաւ նաեւ Հայ Արիներու Միութեան Մարսէյլի եւ շրջանի սկաուտներուն եւ խմբապետներուն միջեւ: Բոլորն ալ հպարտ էին Միութեան այս մեծ յաջողութեան համար, և յառաջիկայ տարուան համար կազմեցին արդէն գործունէութեան ընդարձակ ծրագիր մը:

Բոլորն ալ վերադարձան հիմա, առողջ եւ առոյգ, լեցուն գունագեղ յիշատակներով եւ պատրաստ, շարունակելու իրենց սկաուտական գործունէութիւնը նոր եռանդով եւ շատ մը ուրիշ յաջողութիւններու հեռանկարով խանդավառուած:

ՀԱՅ ԱՐԻ

«ՅԱՌԱՋ»Ի ԹԵՐԹՕՆԸ (217)

ԵԸԼՏԸԶԻ ՊՈՄՊԱՆ

ՀԱԶԱՐ ԻՆԸ ՀԱՐԻՒՐ ՉՈՐՍ

Սրահը շատ նեղ պիտի գար. որոշեալ ժամանակէն առաջ արդէն գրաւուած էին ...տարանները. Հետզհետէ հասնողներն ու ներս մտնողները կը ստիպուէին մնալ ոտքի վրայ, սպասելով բանախօսութեան ժամուն, որ սակայն կ'ուշանար, վայրկեանները դանդաղասահ կը թուէին. ...մութիւնը մեծ անհամբերութիւն մը ցոյց կու տար. ամէնքը կազմ ու պատրաստ, իրենց աչքերով կ'որոնէին բանախօս Գարասօ էֆէնտին, որ սակայն ...ճշդ երեւար, տակաւին չէր եկած:

Եւ ահա՛ շառաչեցին ծափերը, աղաղակները բարձրացան.— «Կեցցէ՛ մեր երեսփոխանը, կեցցէ՛ Սահմանադրութիւնը»:

Եւ այս որոտաղոչ ծափերու ու խանդավառ գոռում-գոչումներու մէջէն առաջացաւ Սելանիկի հրեայ երեսփոխանը, եւ բեմ բարձրացաւ:

Վերստին դղրդեցաւ քլիւպի սրահը, ներկաներու բուռն ծափերէն ու աղաղակներէն:

Եւ տեւեց շարունակ հինգ վայրկեան:

Երկսեռ բազմութիւնը, սեղմ սեղմ ծափերով ու ընդմիջումներով կը ջղայնացնէր բանախօսը, որ իր կարգին, ունկնդիրներուն կը պաղատէր թողուլ շարունակելու իր ճառը:

Գարասօ էֆէնտին կը մագնիսէր քլիւպին մթնոլորտը, իր յանկուցիչ պերճախօսութիւնը, իր շարժուձեւերը, իր ձայնը, բոլորը գրաւիչ էր. լոյսերու ցոլքերուն մէջէն, ուր կը շողային մարդկային հազարաւոր գլուխները, կը շողար անոր՝ Սելանիկի երեսփոխանին ճակատը, Սահմանադրութեան բարիքները կը թուէր ան. միեւնոյն ժամանակ, իր կուռ ճառին մէջ կը վերապրեցնէր մօտիկ անցեալի մը սարսուռները, զորս ապրեցան յեղափոխութեան նուիրուած հոգիները, մինչեւ որ, անփոխարինելի զոհաբերութիւններէ ետք, իրենց աչքերով տեսան Օսմանեան Հայրենիքին Ազատութիւնը, որուն համար մաքառեցաւ ազգին մտաւորականութիւնը, այնքան տարիներէ ի վեր...:

Ծափերը, խանդավառ կեցցէները, հակառակ բանախօսին պաղատագին բողոքներուն, կը թնդացնէին քլիւպը:

Գարասօ էֆէնտին իր բանախօսութիւնը վերջացուց Սելանիկ քաղաքին ներբողականովը, հռչակելով զայն Ազատութեան վառարանը, ուրկէ բռնկեցաւ բարբարոս, կենդանատու կրակը, սորկացած ժողովուրդներու սառած ու մեռած սրտերուն մէջ, հոն վերածնելով Սահմանադրութեան անխառն ու անարատ սէրը, որով պիտի տոգորուէին Օսմանցիները...:

Գարասօ էֆէնտին ծափերու եւ կեցցէներու տարափին տակ բեմէն վար իջաւ:

Երկրորդ բանախօս մը, հարիւրապետ Ք., կը պատրաստուէր բեմ բարձրանալ, երբ ունկնդիր բազմութեան մէջ փսփսուքներ սկսան շրջան ընել:

Բեմը պահ մը պարապ մնաց:

Նոյն պահուն, երկսեռ ամբոխին ալիքները ճեղքելով դէպի բեմին կողմը կը յառաջանար հեռագրատան ցրուիչ պաշտօնեայ մը եւ մօտենալով նախագահին, ձեռքի հեռագիրը կը յանձնէ անոր: Այս վերջինը հեռագիրը կարդալէ ետք կ'երկընցնէ զայն Գարասօ էֆէնտիին, որ երբ հազիւ թէ սկսած էր կարդալ զայն, կրակ կտրեցաւ, հեռագիրը ձեռքէ ձեռք կ'անցնէր:

Ցուցումը կ'աւելնար երթալով, բազմութիւնը կը պահանջէր հեռագրին ընթերցումը, կ'ուզէր վերահասու ըլլալ անոր պարունակութեան:

Սակայն կոմիտէին անդամները շուարած կը թուէին, պիտի չկրնային գաղտնի պահել զայն:

Աղաղակները բարձրացան.

— Կարդացէք հեռագիրը...:

Կոմիտէի անդամները, Մանուէլ Գարասոյի եւ ուրիշ քանի մը կարեւոր անձնաւորութիւններու հետ, ուզեցին առանձնանալ քանի մը վայրկեան խորհրդակցութեան համար:

Բազմութիւնը կ'աղաղակէր շարունակ.

— Պէտք է կարդացուի հեռագիրը...

Այս խառնաձայն ժխորին մէջ, յանկարծ սպայ մը բեմ բարձրացաւ եւ դառնալով ունկնդիրներուն.

— Հայրենակիցնե՛ր, ըսաւ, կ'աղաչեմ, պահեցէք ձեր պաղարիւնը, քիչ մը մեզի միջոց տուէք խորհրդակցելու, խնդիրը շատ լուրջ է, կենսական է, պիտի կարդացուի հեռագիրը, սակայն պէտք է սպասէք քանի մը վայրկեան:

— Ո՛չ, ո՛չ, կ'աղաղակէին ամէն կողմէ. պէտք է կարդացուի հեռագիրը եւ հիմա՛...

Դժուար էր խեղդել ամբոխին աղաղակը, որ կը թնդացնէր սրահը:

ՍՄԲԱՏ ԲԻՒՐԱՏ

(Շար.)

ՖՐ. ԿԱՊՈՅՏ ԽԱՉ

Հայկազունի 200 ֆրանք կը նուիրէ Կապոյտ Խաչի օղափոխութեան կայանին։ (Ստանալ «Յառաջ»էն)։

ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

Մարսէյլի Հայ Արենոյշներու խմբապետական Խորհուրդը իր խորին ցաւակցութիւնները կը յայտնէ Տէր եւ Տիկին Գաբրիկ Շալճեան եւ Պօյաճեան ընտանիքներուն, Տիկին Սաթենիկ Փափազեանի (ծնեալ Պօյաճեան) կսկծալի մահուան առթիւ։

ՍԱՄՈՒԷԼ ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ՆՈՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Իրենց զաւակները արձանագրել փափաքող ծնողքները պէտք է փութան դիմել տեսչութեան հասցէին ։

COLLÈGE ARMÉNIEN SAMUEL MOORAT
26, Rue Troyon, SEVRES (S. et O.)
Tél. : OBS. 18-28

Եւրոպայի մէջ, հայ մանչերու համար հիմնուած, ֆրանսական եւ հայկական ուսումնական կատարեալ ծրագիրներով օժտուած մեծագոյն եւ ծաղկեալ ուսումնարանն է Սեւրի Սամուէլ Մուրատեան վարժարանը, որուն սեմէն ներս հայ մանուկին հոգին, միտքը եւ մարմինը կը մեծնայ, կը ծաղկի եւ կ'ընդլայնի բաղձալի համեմատութիւններով ։

ԿԵԱՆՔԻ ՈՒՂԻՆԵՐՈՎ

Գ. Հատոր

Շուտով լոյս կը տեսնէ Ս. Վրացեանի ԿԵԱՆՔԻ ՈՒՂԻՆԵՐՈՎ (Գ. Հատորը), շուրջ 300 էջ, պատկերազարդ եւ լաթակազմ։

Երրորդ հատորը կը բովանդակէ Ս. Վրացեանի յուշերը կամաւորական շարժման, ինչպէս նաեւ դէմքեր, դէպքեր եւ տպաւորութիւններ՝ մօտիկ անցեալէն։

ԴՊՐՈՑԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Դպրոցասէր Տիկնանց վարժարանին 1963 – 1964 տարեշրջանի արձանագրութիւնները սկսած են ։ Անոնք որոնք կը փափաքին ղրկել իրենց զաւակները պէտք է այժմէն իսկ դիմում կատարեն հաստատութեան տնօրէնութեան ։

Դպրոցասէրի ուսման ծրագիրը կ'ընդգրկէ երկու ուրոյն բաժիններ ։

Ա.— ՖՐԱՆՍԱԿԱՆԸ, որ տառացի կերպով կը հետեւի պետական լիսէններու արդիական բաժնի պաշտօնական ծրագրին — անգլերէն եւ սպաներէն լեզուներով — ։

Բ.— ՀԱՅԿԱԿԱՆԸ, որ կ'օժտէ սաները հայադիտական ծանօթութիւններով, հայ լեզուի, գրականութեան, հայ կրօնքի եւ պատմութեան, Հայաստանի աշխարհագրութեան մարզերուն մէջ ։

Աշակերտուհիներ կ'ընդունուին ութ տարեկանէն սկսեալ։ Մանրամասնութեանց համար դիմել հաստատութեան տնօրէնութեան ։

1, Bd. du Nord, LE RAINCY (S. et O.)
Tél : 927-01-72

ՄՕՏ ՕՐԷՆ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԷ

ՀԱՅ ԲՈՅԺ

ԺՈՂ. ԱՄՍԱԹԵՐԹ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ

Խմբագիր՝ Շ. ՆԱՐԴՈՒՆԻ

1962 տարուան բացառիկ հատորը, 128 էջ գրական, պատմա – բանասիրական, բժշկական այլազան եւ հարուստ բովանդակութեամբ, կարգ մը քլիշէներով։

1963 տարուան բացառիկ հատորը, նոյնքան բովանդակալից, յանձնուած է մամուլին։

Այս երկու հատորները պիտի ղրկուին միայն պարտաճանաչ եւ հաւատարիմ բաժանորդներուն։

1964էն սկսեալ ՀԱՅ-ԲՈՅԺ կը ստանայ պարբերաթերթի իր նախկին դիմագիծը։

Բաժնեգինը մինչեւ տարեվերջ՝ կը մնայ նոյնը, 15 նոր ֆրանք Ֆրանսայի համար։ Ամերիկա 5 տոլար։

Դիմել Յառաջի խմբագրատան հասցէով, (միշտ Յառաջ գրել հասցէին վրայ), եւ Հայ-Բոյժի խմբագրին անունով (Գրել

Ch. Aïvazian

ուղղագրութեամբ) .—

32, Rue de Trévise, Paris (9e)

Հ. Բ. Ը. Միութեան Տիկնանց յանձնախումբը կը խնդրէ կազմակերպութիւններէն նկատի ունենալ հետեւեալ թուականները .—

ՀՈԿՏԵՄԲԵՐ 1, Երեքշաբթի երեկոյ Տիկնանց յանձնախումբի կազմութեան Գ. տարեդարձին առթիւ գեղարուեստական երեկոյթ ։

ՀՈԿՏԵՄԲԵՐ 19, ցուցահանդէս հայ արուեստագէտներու նկարիչ, արձանագործ եւ փորագրիչներու գործերուն ։

Հայկական Թանգարանը, 52 Ավընիւ Ֆոշ, (Փարիզ 16)։

ԴԵԿՏԵՄԲԵՐ 7, 8, 9, 10, «Բարենպատակ վաճառք »։

Յառաջիկային պիտի տրուին մանրամասնութիւններ ։

ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ

Կապոյտ Խաչի Վիէնի մասնաճիւղի տարեկան դաշտահանդէսը տեղի կ'ունենայ Սեպտեմբեր 1ին, առաւօտէն մինչեւ երեկոյ «Իւ-Էս-Ա.»ի մարզադաշտին վրայ (Թանըրիին քով)։

Գեղարուեստական ճոխ բաժին։ Բանախօսութիւն, երգ արտասանութիւն եւ հայկական պարեր։

Ճոխ պիւֆէ. աղանդերներ եւ շամփուրով խորոված։

Սիրով կը հրաւիրուի գաղութի Հայութիւնը։

Անձրեւի պարագային «Խաժակ» սրահը։

Կ'ՈՒԶՈՒԻՆ

ՍՏԻՊՈՂԱԲԱՐ

Կրթական հաստատութեան մը մէջ աշխատելու համար կ'ուզուին.—

ա) Միջին տարիքի կին մը՝ ներքին մաքրութեան եւ տնական գործերու համար։

բ) Այր մարդ մը ճաշարանը ծառայելու համար։

ԱՆՅԱՊԱՂ դիմել Յառաջի վարչութեան։

ՅԱՌԱՋ

ԿԱՐԴԱՑԷ՛Ք, ՏԱՐԱԾԵՑԷ՛Ք ԱՅՍ ԳԻՐՔԵՐԸ

Շ. ՄԻՍԱՔԵԱՆ	Օրեր եւ ժամեր
Ժ. ՄԻՍԱՔԵԱՆ	Բուռ մը Տոմս
Բ. ԹԱՇԵԱՆ	Ներածութիւն Հայ Գրականութեան Պատմութեան Լեզուական Հարցեր Լսարան Հայ Լեզուի
ՇԱՀԱՆ ՇԱՀՆՈՒՐ	Նահանջը առանց երգի Յարալէզներու Դաւաճանութիւնը
Մ. ԻՇԽԱՆ	Ոսկի Աշուն (Բանաստեղծութիւն)
Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ	Ինչպէս տեսայ Հայաստանը
ՎԱՀԷ ՔԱՉԱ	Կարթը

ԱՌԱՔՈՒՄԻ ԾԱԽՔԸ ԳՆՈՐԴԻՆ ՎՐԱՅ

ՅԱՌԱՋ

ՆՈՐ ՍԱԿԱԳԻՆ ԸՆԹԱՑԻԿ ԱԶԴԵՐՈՒ

ՄԷԿ ԱՆԳԱՄՈՒԱՆ ՀԱՄԱՐ

ՄԱՀԱԶԴ	40 Ֆ.	մինչեւ 1/4 սիւնակ
ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ	20 Ֆ.	մինչեւ 1/8 սիւնակ
ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ	15 Ֆ.	» » »
ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ	20 Ֆ.	» » »
ՀԱՐՍԱՆԻՔ, ՆՇԱՆՏՈՒՔ	20 Ֆ.	» » »
ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ	10 Ֆ.	» » »
ԾՆՈՒՆԴ	20 Ֆ.	» » »
«ՓՈԽԱՆ ԾԱՂԿԵՊՍԱԿԻ»	10 Ֆ.	» » »
«ԿԸ ՓՆՏՌՈՒԻ»	5 Ֆ.	» » »
ԾԱԽՈՒ Է	25 Ֆ.	» » »

Այս գիները մէկ անգամ հրատարակելի եւ նշանակուած ծաւալով ազդերու համար են, չորրորդ էջը ։

Կանխիկ վճարումը պարտաւորիչ է ։

Առեւտրական կամ այլ ազդերու մասնաւոր պայմաններուն համար դիմել Վարչութեան ։

ԼՈՅՍԸ ԳՈՅՆ Է.... ԳՈՅՆԸ ԼՈՅՍ Է
ՁԵՐ ՏԱՆԸ ԼՈՅՍ ՏՈՒԷ՛Ք.... ԹՈՄԼԱՔԻ ԳՈՅՆ ՏՈՒԷ՛Ք

Ձեր բնակարանը կը լուսաւորուի
Եթէ ներսը եւ դուրսը

ՎԵՐԱՆՈՐՈԳԵՑԷՔ – ԶԱՐԴԱՐԵՑԷՔ – ՆԵՐԿԵՑԷՔ

ԹՈՄԼԱՔ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐՈՎ

PEINTURES THOMLAC

16 bis, Bd. Sébastopol, Paris 4e

Tél. ARC 26-61 – Métro : Halles et Chatelet

136, RUE DES BOURGUIGNONS — ASNIERES - BOIS COLOMBES (Seine)
Tél : GRE. 09-47

11, BD. DE LA REPUBLIQUE — LA GARENNE (Seine)
Tél. : STA. 19-06

ԱՆՄՐՑԵԼԻ ԳԻՆԵՐՈՎ


Ամէնէն արդիական, նուրբ եւ ընտիր ճաշակով պատրաստուած՝ առաջնակարգ ներկեր ։ Բնական եւ արուեստական բազմերանգ գոյներու մեծ ընտրութիւն։ Նորոյթ իւղաներկեր, պատի գեղեցիկ թուղթերու ճոխ ընտրութիւն։ Ծածկոցներ. — Գետնի համար՝ ամէն տեսակ — լինոլէոմ եւ փլասթիք —
TAPIFLEX — TAPISOM — CARPETTE

Ձեր բնակարաններուն արտաքին եւ ներքին խնամքներուն համար անհրաժեշտ բոլոր նիւթերը ։

Ամէն գնորդի կը նուիրուի յատուկ տետրակ մը, որու շնորհիւ կրնայ 10–30 առ հարիւր զեղչ ունենալ ։

ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐ

52, RUE CHALON, PARIS 12e — 64, BLD. DE BELLEVILLE, PARIS 20e
166, AV. ARISTIDE BRIAND — PAVILLONS - SOUS-BOIS (Seine)
4 bis, RUE PAUL VAILLANT COUTURIER — ARGENTEUIL (S. et O.)
24, RUE PAUL VAILLANT-COUTURIER — ALFORTVILLE (Seine)
48 bis, RUE DALAVRAC — FONTENAY - SOUS - BOIS (Seine)



ՃԱՇԱՐԱՆ

ԵԱՐ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԹԵՒԱՆԵԱՆ

Եւրոպական, հայկական եւ կովկասեան ընտիր ճաշեր ։

Առաջնակարգ կովկասեան խորոված ։

ՀԱՃԵԼԻ ՄԹՆՈԼՈՐՏ

AU CŒUR MÊME DES CHAMPS-ÉLYSÉES

4, RUE ROBERT-ESTIENNE
(coin Rue Marbeuf) PARIS-8e
Téléph. : BAL. 31-21 et 30-84
Métro : F. D. Roosevelt

IMPRIMERIE SPECIALE DU JOURNAL « HARATCH »
32, Rue de Trévise, PARIS (9e)